Dr 75

2004

4990 694-ԱՀ
264 / Ժ-21

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԵԿԵՂԵՑՒՈՅ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԸՍՏ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ԵՒ ԱՅԼՈՑ

ՍՐԲՈՑ ՀԱՐՑ ՄԵՐՈՑ

Ի ՏՕՆԷ ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՄԻՆՉԵՒ Ց[illegible]ԵՐՈՐԴ

[illegible] [illegible]ԱՍՆՈՐԴԱՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
4/448-68

Ի ՎԻԷՆՆԱ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

1839 ՌՄՁԸ.

4990-



# ԿԱՆՈՆ
# ԱՒԱԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ
## ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ
## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ա.Ձ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ երգ նոր Ա՛յ փրկչին մերոյ. որ փրկեացն ի թշնամւոյն ծառայութենէ ըզմեզ. հզօրն իւր կարողութեամբ. և ապրեցոյց փառաւորեալն փառօք։ Դու յանձն առեր Ք՛ս եղանել ի խաչ վասն մեր. եւ ընդ նմին թաղել ըզհնութիւն մեղաց մերոց. վասն որոյ երկրպագեմք. և վերօրհնեմք ըզքո զանճառ խոնարհութիւնդ։ Զոր ընտրեաց Ք՛ս յամենայն ազգաց երկրէ ծնանիլ ի նմանէ. ապրեցուցանել ըզմեզ կռոցն ի պաշտելութենէ. որպէս զԱ՛ծածին միշտ փառաւորեսցուք։

ՆԱՅ. Լայեցայ ես յամենազօր ի քո տնօրէնութիւնդ. եւ երկնայինք փառաւորեցին ըզքեզ Քրիստոս։ Ի խաչելոյն քո մեռուցեր ըզմահ. և յաղբերէ կողէ քո տեղեղերայ արբուցեր զանմահութիւն։ Ա՛ծածին անարատ կոյս առ քեզ աղաչենիմք. բարեխօսեա առ Ք՛ս վասն անձանց մերոց։

ԳԻՀ. Հրով ածութեանդ քո Ք՛ս այրեցեր ըզդրունս դըժոխոց և լուծեր ըզմահ. և անմահութեան պարգևեցեր ազգի մարդկան։ Յայգւոյդ անմահութեն ճաշակեցաք և տեսաք. զի քաղցր և ազէղ ես Տր. և վասն ամենեցուն փրկութեն եկիր

յաշխարհս։ Սրբուհւոյ Ածածնին բարեխօսութեամբ
պարգեւեա երկրպագուացս ամենայն Երրորդու-
թեանդ. զյարութիւն յաւոյ կենացն յաւիտենից։

ԺԱՆ. Զանձինս ընդ քեզ Քս թագաւոր յաւի-
տենից. և տեսաք ընդ քեզ իշխան մահու և կե-
նաց. զի դու ես Տէր և չիք այլ ոք բաց ի
քէն։ Աջով քո բարձրելոյ առցես ընդ վրէժս ի
թշնամեացն. և նետք քո արբցեն զարիւն նր.
զի դու ես Տէր և չիք այլ ոք բաց ի քէն։
Որ յարեար ի մեռելոց նորոգեցեր զազգս մարդ-
կան. սրբուհւոյն աղաչանօք հաստատեա զհիմունս
եկեղեցւոյ սրբոյ քո. զի դու ես Տէր և չիք այլ
ոք բաց ի քէն։

ՀԱՄ. Համբարձութիւն իմ լեր Տէր. որ յաղթող
խաչիւ քո ընդդժոխս աւերեցեր. քանզի յարեար ե-
րեքօրեայ. զանկեալսն կանգնեցեր զԱդամ։ Օգ-
նեա փրկիչդ Աստուած. պարծելոցս ի խաչ քո
յուսացելոցս ի քեզ Տր. և փրկեա միայն բարե-
րար ի վտանգէ զանձինս մեր։ Այժմ օրհնեալդ
ի կանայս. մայր և միշտ կոյս և խնամակալ լուսոյ.
ծնող արարչին մերոյ անդադար բարեբանեսցուք։

ԳԻՐ. Ի գիշերայ կանխելով վերօրհնեմք ըզ-
քեզ Քս Աստուած. որ վասն մեր խոնարհեցար.
յանձն առեր զամենայն և խաչի համբերեցեր։
Լուսաւորեցուք ի հրամանաց քոց թագաւոր թա-
գաւորաց Աստուած. որ ըզմահու լուծեր զիշխա-
նութիւն. յանձն առեր զամենայն և խաչի համ-
բերեցեր։ Բարձրեալական թեւօք պարածածկեա-
ցուր. սրբուհւոյ Ածածնին. կոյս և մայր և բնակա-

րան անծնութեն․ վերօրհնեալ յամենայն առաքե-
լական քարոզութեանց։

ՏԱՂ․ Յոյս և յարութիւն ազգի մարդկան Քրիստոս Աստուած․ զհիւանդութիւն Հոգւոյ իմոյ կենդանացո․ որպէս երբեմն զՂազարն կինայն։ Օ չարչարանս և ըզմահ յանձն առեր․ կենդանատու ամենեցուն․ զհիւանդութիւն Հոգւոյ իմոյ առողջացո․ որպէս երբեմն զՇնացեալ կինայն։ Առ քեզ ապաւինիմք․ խորան և տաճար Աստուծոյ Բանին․ Մարիամ մայր և կոյս․ բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց։

ՕՐՀ․ Օփառաւորեալն յամ արարածոց․ և ի ծագաց մինչ ի ծագս երկրի զերկրպագեալն․ զմարմնացեալ Բանն ի կուսէն ձայնիւ երգով օրհնեսցուք։ Որ դիմեալ գայ յԵդովմայ բարձրացեալ փառօք․ յարուցեալ ի պատերազմ ընկղմեաց զաներեւոյթն ամաղէկ․ զիջեալ Բանն ի դժոխս ձայնիւ երգով օրհնեսցուք։ Զհամագոյն ի Հօրէ փառակից սուրբ Հոգւոյն․ կենդանութիւն ազգի մարդկան․ որ յարեան այսօր ի մեռելոց․ զհամբարձեալ Բանն ի յերկինս ձայնիւ երգով օրհնեսցուք։

ՆՍՂ․ Որ լուար Աստուած զձայնն Յովնանու յորովայնէ կիտին․ ապրեցո և զիս յաներեւոյթ թշնամւոյն փրկիչ գոլով․ որ նստիս ի քրովբէական յաթոռ։ Որ ընտրեցեր քեզ վերստին քարոզող Նինուէացւոցն զյափշտակեալն ի կետէն երեքօրեայ իջմամբ ի դժոխս․ և զիս ըզբազմամեղս արձակեա ի կապանաց մահու ի կեանսն յաւիտենից։ Եկեալդ ի փրկութիւն ըստեղծուածոց քոց․ պատկերակից եղեր Հողեղէն մարդոյն

ըզմե՛ղըս սպանե՛ր. և զմահու գերեալսն ազատե-ցե՛ր ի մեղաց։

ՏՐ: Հիացա՛ն զօրք երկնից ընդ քո՛ յանձն առնուլ ըզծառայի ըզկերպ. և մարգարէն զարհուրեալ ասէր. լըւայ ըզլուր քո և երկեայ. նայեցայ ի գործս քո՛ և զարհուրեցայ։ Քանզի դու որ յառաջ քան զյա-ւիտեանս Որդի Հօր և Հոգւոյն փառակից. եկեալ ի մէջ երկուց կենդանեացն երեւեալ. բարձրացար ի խաչին առնելով զհեծեծելոյն փրկութիւն. քանզի լու-ծեալ եղեն երկունք մահու։ փառք Հօր։ Յերեւե-ցար ի փրկութիւն ըստեղծուածոց քոց. ոչ մեկնելով ի Հօրէ յանձն առներ կամաւ զխաչն և զթաղումն. և յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ. քան-զի լուծեալ եղեն երկունք մահու։ Այժմ և միշտ։ Աստուածն ամենօրհնեալ սրբուհի. ըզքեզ աղաչեմք անդադար ձայնիւ. որ զէակ Բանն Հօր ի քեզ կրեցեր. և ծնար անճառապէս. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

ԱԿ

Երգեցէք Տեառն երգ նոր. և օրհնեցէք զանուն նորա յաղթական օրհներգութեամբ. զի նա փառօք է փառաւորեալ։ Որ սեամբ հրոյ և ամպոյ ա-ռաջնորդեաց ժողովրդեանն Իսրայէլի ի յանա-պատ. և ընկղմեաց զփարաւոն զօրօքն իւրովք ի ծով կարմիր. Երգեցէք Տեառն երգ նոր. զի նա փառօք է փառաւորեալ։ Ըզքեզ աղաչեմք հա-նապազ ս՚բ Աստուածածին. բարեխօսեա Քնի Աստուծոյ մերոյ փրկել ըզմեզ ի փորձութենէ. և յամենայն վտանգից մերոց։

ՆՐՑ. Նայեցարուք ժողովուրդք ի սքանչելիս Աստուծոյ մերոյ. ամենքընդիր լերուք հաւատացեալք Քրիստոսի եւ ի միտ առէք զարդարութիւն ճշմարտութեան. զի նա է յոյս հաւատացելոց: Էութիւն անեղ անքննելի Բանն Աստուած. կամաւորութեամբ յանձն էառ ըզմահ խաչի. եւ թաղեցաւ ի նոր ի գերեզմանի. եւ յարութեամբն իւրով շնորհեաց մեզ կենդանութիւն: Որպէս լեր մայր անձառ լուսոյ Մարիամ սուրբ Աստուածածին. քանզի ի քեզ կրեցեր ըզհուր աստուածութեանն լուսեղէն տաճար Աստուծոյ Բանին. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

ՕՐՀ. Հուր բորբոքեցաւ ի զօրութենէ խաչի քո Քրիստոս. կիզելով ըզթշնամին ի վերայ երկրի. որ հակառակէր ըստեղծուածոց ձեռին քո: Իջանելով քո ի դժոխըս գերապանծ իշխանութեամբ. յաղթեցեր մահու հզօր զօրութեամբ. կենդանագործելով զմեռեալսն առ ի նմանէ: Ծանուցար տիեզերաց Աստուած եւ մարդ գոլով. մարմնացար ի սուրբ կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան. միշտ փառաւորեալ յանմարմնոց զինուորութեանց:

ՕՐՆ. Ի սուրբ Երրորդութենէն ծանեաք. որ յառաջ քան ըզյաւիտեանըս Բանն Աստուած. ի հայրական ծոցոյ խոնարհեցաւ վասն մեր. եւ ոչ ոք իցէ այլ Աստուած բայց ի նմանէ: Որ բարձրացեալ բազկաւ ի վերայ խաչին. խորտակեաց զապըստամբ ըզթշնամին. իջանելով ի ստորինս ազատութիւն շնորհեաց նըստելոցն ի խաւարի. եւ ոչ ոք իցէ այլ Աստուած բայց ի նմանէ: Անարատ տաճար Աս-

տուծոյ չանելին. որ ըղձախառնորին Աստուծոյ զանէծ-սըն բարձեր անճառելի ծընընդեամբն ի քէն. առ նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց:

ՀԱՍ. Սերտ իմ հաստատեցաւ ի քեզ հաւատով Քրիստոս Ածն. եւ բարձրացաւ յոյս իմ ի փառըս քո. որ յանճառելի ծոցոյ Հօր խոնարհեցար ի վարըն մեր. եւ երեւեցար մարդ ճշմարտապէս: Որ զկենդանարար մարմին և զարիւնըդ քո բաշխեցեր քաղցելոց. եւ ի խաչին բացեր ըղկողահոս աղբերըդ արբուցանելով տիեզերաց զանմահութի. ի ճաշակմանէ մահաբեր պտղոյն: Սնոյր Քնի եւ բնակարան Բանին Աստուծոյ. անհասութեան խորհըրդոյն ըսպասաւորեցեր. միջնորդ եղեր Աստուծոյ եւ մարդկան. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

ԳԻՐ. Լոյս ճշմարիտ Քնի Ածն. առ քեզ հոգի իմ առաւօտէ ի յերկրի երեւեցո ինձ զերեսըս քո: Բոյոյ պատուական խաչիւ Քնի Ածն. եւ հրաշափառ քո առաւօտու. յարութեամբդ երեւեցո ինձ զերեսըս քո: Հոգւոյն ըղթքեւ հովանացեալ միայն սրբուհի. ծընար ըզԲանն Ածն զանճառելոյ Հօր ծընունդ. եւ յայտնեցաւ միութիւն Երրորդութեանն:

ԽԵՍ. Աղաչեցի ըղբաղձումն իմ Աստուած. եւ լուաւ ձայնի խընդրուածոց իմոց. նուաղեցան աչք իմ ի տեսանելոյ. եւ յինէն փարատեցին զցաւս անձին իմոյ: Օ թագաւորին Քնի բարեբանեցէք. որ 'ի յանձն էառ ըղմահ խաչի և խափանեաց ըղմահու թագաւորութիւն. եւ յինէն փա

բառնացոյց զցաւս անձին իմոյ: Փութացի՛ր յօգնութիւն ո՜վ Աստուածածին. եւ աղաչեա զնա ի քէն ըզմարմնացեալ Բանն Աստուած. զի յահաւոր եւ ի միւսանգամ գալստեանն իւրոյ. պարգեւեսցէ մեզ ըզկեանսն յաւիտենից:

ՕՐՀ. Աստուած երեւեցաւ մարմնով. ապրեցուցանել զազգս մարդկան կռոցն ի պաշտօնէութենէ. Նմա միայնոյ երգեսցուք: Քրիստոս բեւեռեցաւ ի խաչին. եւ ելոյծ ըզդատապարտութիւն Ադամայ նախաստեղծին. Նմա միայնոյ երգեսցուք: Քրիստոս յարեաւ ի մեռելոց. եւ յարոյց ընդ իւր զԱդամ. զանկեալն ի պատրանաց. Նմա միայնոյ երգեսցուք:

ՆՍՏ. Աստուած զքեզ փառաւորեմք որ ի յերկնից խոնարհեցար. ծառայի տեսք ըզկերպարան. եւ ըզտիեզերս ազատեցեր ի մեղաց: Զմարգարէն ապրեցուցեր Տէր ի կիտէն ով մարդասէր. որ նըշանակէր ըզքո ի մեռելոց զեռեքօրեայ յարութիւնդ: ԶՀայր փառաւորեսցուք եւ Որդւոյ երկրպագեսցուք. եւ որ զՀոգին հաւատացեալքս ամենեքեան օրհնեսցուք:

ՏՐՆ. Որ անքննելի ես յէութեան ընդ Հօր անբաժանելի Բանդ Աստուծոյ խոնարհեցար ի լրումն օրինաց եւ մարգարէից. եւ ի մէջ երկուց կենդանեացըն բարձրացեալ եղեր ի վերայ խաչին. զոր յառաջն երգեաց մարգարէն Ամբակում: Փառք Հօր: Որ ի կառս քերովբէականս վերանըստեալ հանգչէիր ընակակից Հօր եւ սուրբ Հոգւոյն. հաճեցար նստանել ի կառս հողեղէնս. եւ հեծելութեամբըդ քո փրկեցեր ըզտիեզերս. վերական-

գնելով զանկումն Ադամայ։ Այժմ և միշտ։ Որ առաքեցեր զերփվարըս քո սուրբ ընդ մարգարէսն. ուսուցանել ընկենաւոր տնօրէնութիւնդ քո ի սրբոյն կուսէն. և երևեցար մարդ ճշմարտապէս։

ԻԶ

Օրհնեսցուք զՏէր. որ օրհնեացըն զԻսրայէլ. և փրկեաց ըզժողովուրդն ի ձեռաց փարաւոնի. ամենայնօր բարձրացեալ փառօքն իւրովք։ Տէր խորտակէ զպատերազմունս Տէր է յոյս անուն նորա. որ փրկեաց զամենեսեան ի ձեռաց նեղչաց իւրեանց. ամենայնօր բարձրացեալ փառօքն իւրովք։ Բարեխօսեա վասըն մեր Ածածին Մարիամ. որ ծընար զՏր Աստուած որ հովուէրըն զԻսրայէլ. ամենայնօր բարձրացեալ փառօքն իւրովք։

ՆԱՑ. Աստուած խօսեցաւ ի բարձանց. լուարուք բընակիչք երկրի. որ եկն և փրկեաց զամենայն արարածս. զի զանուն Տն կարդասցուք. և տուք օրհնութիւն ի բարձունս։ Նոր Իսրայէլ կոչեցայք ի Քն. եղաք բաժին Տն և ժառանգակից Քի. զի զանուն Տն կարդասցուք. և տուք օրհնութիւն ի բարձունս։ Ի վիմէն կենդանութեն ճաշակեցայք զի քաղցր է Տէր. և յետ սըրբութեան ծնայք հաստատել. զի զանուն Տն կարդասցուք. և տուք օրհնութիւն ի բարձունս։ Ի քեզ եմք ապաւինեալ. որ մայրդ ես և աղախին Քի. լեր բարեխօս վասըն մեր. զի զանուն Տն կարդասցուք և ըզքեզ մեծարեալ պատուեսցուք։

ՕԻՀ. Սքանչելի հուր ածութեն քո Տր տարածեցաւ առ հասարակ ընդ տիեզերս. և հրդեհեալ

բոցակիզեալ ընդ պատրանս նախաստեղծին․ զի զա-մենեսեան վերակոչեաց ի մահուանէ յանմահութիւն։ Յայգւոյդ անմահութեան ճաշակեցին սուրբ առա-քեալքն․ և լցին ըզտիեզերս աւետեօք նոր յա-րութեան․ զի ընդ նոսին վայելեսցուք յանվախճան ուրախութիւն։ Որ ըզհուրն Աստուծոյ յորովայնի քում ընկալար․ և ծնար անճառապէս զկենագործօղն ամենեցուն․ բարեխօս ըզքեզ անձինք որ երա-նեալդ ես ի կանայս։

ԶԱՆ․ Օրհնեմք ըզքեզ Տէր էակից Հօր և Հոգ-ւոյն որ վասն մեր խոնարհեցար ի յերկնից․ ծա-նեա՞ք ոչ այլ Աստուած բայց ի քէն։ Օրհնեմք ըզքեզ Քրիստոս․ որ ի խաչին բեւեռեցար․ և Հեղմամբ արեանդ քո փրկեցեր ըզտիեզերս․ ծա-նեա՞ք ոչ այլ Աստուած բայց ի քէն։ Որ զթա-գաւորն ամենեցուն յորովայնի քում կրեցեր․ սրբուհի մայր և կոյս․ և աղախին Բանին․ բարե-խօսեա՞ դու Տէր վասն մերոյ փրկութեան։

ՀԱՄ․ Համառօտեցաւ միտք իմ ի Տր՝ և բարձրա-ցաւ յոյս իմ ի փառըս քո․ որ նըստիս ի քրով-բէական աթոռ․ Հաստատեա՞ տունէ իմ լեր Տէր քոյով յարութեամբ։ Որ զամպրաւտ բազմակերպ քո տարածեցեր ի վերայ խաչին․ ժողովել ըզհեռացեալսն ամենա-կարող զօրութեամբ․ Հաստատեա՞ տունէ իմ լեր Տէր քոյով յարութեամբ։ Յոյս մեր և ապաւէն մայր Տն և կոյս Ն՛ր․ որ Հօր ածոււն ոչ բոցակիզեալ զքո Ն՛ր զո-րովայն․ բարեխօսեա՞ դու Տէր վասն մերոյ փրկութե՛։

ԳԻՐ․ Ի գիշերայն կանխեցից փառաւորել ըզքո անդ Աստուծ․ որ վասն իմ խոնարհեցար ի յերկնից․ ա-

բարեա՞ր խաղաղութի՛ ի յերկինս եւ ի յերկրի։ Տէ-ւօղ խաղաղութե՛ Ք՛ն. որ զդատաւորքն մահու լու-ծեր ի վերայ սբ խաչին. եւ հաշտեցուցեր ըզ-ա՛յր ընդ արարածս. արարե՞ր խաղաղութի՛ ի յերկինս եւ ի յերկրի։ Փառաւորանակից Հօր եւ սբ Հոգւոյն. որ լուսաւորեալ յարութեամբդ քո կենդանացուցեր զազգս մարդկան. տուր մեզ Տէ՛ր զքո զխա-ղաղութիւնդ։

ՆՄՆ. Զաղեկխայլն քե՛ղ մաղթեմ հառաչ-մամբ սրտի իմոյ. որ վ՛ն իմ խոնարհեցար ի յեր-կնից. յոյս կենդանութե՛ եւ փրկութե՛ իմոյ Տր։ Որ ի խաչին բարձեր զդատակնիք մահու. տարա-ծելով զբազուկս քո. արձակեա եւ զիս ի կապա-նաց բանսարկուին. յոյս կենդանութե՛ եւ փրկ-կութե՛ իմոյ Տէր։ Որ յամ ազգաց երանեցար սրբուհի եւ կոյս Մարիամ. աղաչեա զաս ի քէն ըզմարմնացեալն Ք՛ն. ապրեցուցանե՛լ ըզմեզ ի սատանայական գեհենոյն։

ՕՐՀ. Զեկեալն ի փրկութի՛ մեզ ըզՄանն Ք՛րծ. խոնարհեցո՛վ անօրէնութի՛ ընտ՛ր երգով օրհնես-ցուք զանուն նր. զի ի բարձունս է փառաւորեալ յանմարմնոց։ Զխաչեցելոյն պատմեսցուք զքա-ջութի՛ որ գոչմա՛մբ ձայնի զպատերազմն չարին վանեաց. եւ մահուամբ ըզմահացեալսն կենա-գործեաց. զնջեցեալն ի դժոխս վերածեաց զհոգիսն։ Աւրախացան զօրք երկնից ի վերուստ. քանզի ցօղն անապական ի քէն հեղեալ. ըմպի՛չու կոյս. եւ Մայր Ք՛անին տնտեսութե՛ լուսածին անմ ծագե-լով ի մեզ զարդարութե՛ արեգակն։

ՆՍԳ. Ի նեղութեան իմում աղաղակեցի առ տըւօ-ղըն կենդանութեան եւ լուաւ ձայնի աղօթից իմոց. եւ եհան ըզկեանս իմ յապականութենէ: Յորժամ ընկլայ ես ի խորս անդընդոց. ըմբըռնեցայ ի ժանիս վիշապին. եւ փրկեաց զիս փրկիչն աշխարհի. եւ եհան ըզկեանս իմ յապականութենէ: Անիայն օրհնեալ սրբուհիդ ի կանայս. բնակարան եւ առագաստ արարչին. բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց. զի փրկեսցէ ըզմեզ ի սպառնալեաց գեհենոյն:

ՏՐԼ. Լուայ ըսքանչելի տնօրէնութեան քո ըզլուր քանզի անճառ Բանդ Ա՟ծ մարմնացար ի կուսէն. ըվեր՟րածեր ըզբեկումն Ադամայ. եւ զարմացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ: Փառք Հօր: Արդարէին ձայնեալ ըզքո քաջութիւնդ. ասէ ելեր դու ի կառս քո փրկութեան եւ խաչիւըն ջախջախեալ ըզգլուխ վիշապին. որ յարութեամբդ ըզմեզ կենագործեցեր: Այժմ եւ միշտ: Ուրախացիր սրբուհի եւ միշտ կոյս. քանզի որ ի քէն մարմնացաւ ըզդժոխս աւերեաց. որ եւ անհամեմատդ ի կանայս բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց:

ԻԿ

Փարաւոնն հանդերձ կառօքն ընկըղմեցաւ ի հոսանս ջուրց. եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաքն ի մէջ ծովուն: Յորժամ հերձեաց Մովսէս խաչանիշ գաւազանաւն. պատառեցան անդունդք. եւ առաջնորդէր նոցա անմեկնելի լոյսն: Սա է Բանն Աստուած որ յառաջ քան զյաւի-

տեանս. անձնաւորելն գալըստեամբն իւրով յայտ-նեցաւ տիեզերաց ծնեալն ի կուսէն:

ՆՃՅ. Ի յերկնից խոնարհեցար եւ նայեցաք ի սքանչելիս օրինաց քոց Տէր. կենդանութեանց տուող ամենայն մարդկան: Նոր փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան յայտնեցաւ տիե-զերաց. եկեր կամաւ ի խաչ փայտ արարածոց փրկութեան: Սորա էր Մարիամ նորատունկ բու-րաստան. երկնաբերձ աշտանակ ձոյլ ոսկի եւ ձեռամբ Բանին Աստուծոյ:

ՕԺԶ. Հրով աստուածութեամբդ քո Քրիստոս իջեր ի սուրբն վայրըս մահու. եւ ըմբռնեցեր դժոխոցն այրեցեր հրեղօրէնապէս. զքեզ բարեբանեմք ընդ հրեղինացն օրհնաբանովն: Որ տնկեցար յերկիր որթ ճշմարիտ եւ ճիւղեցար ի խաչին ողկոյզ ան-ըսպառ յուրախութիւն ամենայն տրտմեցելոց. զքեզ բարեբանեմք ընդ հրեղինացն օրհնաբանովն: Որ ըզհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր անբոցակէզ մարմնի. դառնաճաշակ պտղոյն քաղցրացուցիչ. ըզքեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց:

ՕՃՆ. Դու ես Աստուածածին անձամբ ծանուցար մար-գարէից. եւ միայնոյ քեզ ճշմարտի եւ ան-մահի. միշտ երկրպագեն ամենայն հաւատա-ցեալք: Որ զօրութիւն բարձրելոյ քո խնդրեցեր ըղ-ձեւս յատկելոց. եւ հաստատեցեր զհաւատա-ցեալս ի քեզ նշանաւ խաչիդ ազատեցեր յա-ւիտենից ի մահուանէն: Արդ խնդրեմք ի քէն թագաւոր փառաց Քրիստոս. աղաչանօք սրբուհ-

ւոյ անարատ ըմբր քո եւ կուսի. ապրեցո զմեզ յաւիտենից ի մահուանէն:

ՀԱՅ. Հաստատութիւն իմ լեր Տէր եւ յոյս փրկութեան. որ զառաջին Ադամն ազատեցեր ի մեղաց. նորոգեա եւ զիս զապականեալս մեղօք: Որ յատենի կացեր անպարտ կողին պատրանօք. եւ արբուցեր մեզ ի կողահոս աղբերէդ. նորոգեա եւ զիս զապականեալս մեղօք: Ածածին անարատ մայր Տն. եւ կոյս Մարիամ. որ եղեր ընդունող Բանին Այ. բարեխօսեա առ Տր վասն մերոյ փրկութեան:

ԳԻՐ. Ի գիշերաց կանխեալ վերօրհնեմք զանճառ անորէնութիւն քո խորհրդոյ. որ վասն մեր խոնարհեցար ի յերկնից. խաղաղացո զեկեղեցիս մեր միայն մարդասէր: Որ բարձրացար ի խաչին յաղագս դատապարտութեան Ադամայ, եւ բարձեր զփշաբեր անիծադրութի հեղմամբ արեամբ քո սրբոյ. խաղաղացո զեկեղեցիս մեր միայն մարդասէր: Որ ի վեր քան զքերովբէսն երեւեցար Աստուածածին Մարիամ. տանելով յորովայնի զանհասանելի զբնութիւն. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան:

ՆԱՐ. Անմահ թագաւոր որ կամիս զկեանս ամ մարդկան. որ կարդաս առ քեզ. լուր աղաչանաց մերոց եւ նորոգեա հոգւով գիտութեան: Որ զառժամանակեայ ըզգացումն բարձեր ի մարմնոյն Եզեկիայ. մինչ որ ընծայենաւոր ցուցանելով նորա զհոգեւորական առողջութի. լուր աղաչանաց մերոց եւ նորոգեա հոգւով գիտութեան: Աներախական եւ բարեգութ. բարեխօսութեամբ [illegible] անարատ

ԶՍՍՌ-Ավա ... ИМ. А. МЯСНИКА ՄԱՍՆԻԿԵԱՆԻ ԱՆՎԱՆ

ըմպէր քո եւ կուսի. լո՛ւր աղաչանաց մերոց եւ նորոգեա՛ հոգւո՛վ գիտութեան:

ՕՐՀ. Օրհնեն ամենեցուն օրհնեն սրբասաց բանական կենդանիք. յաղթական երգով եւ մեք օրհնեսցուք զանուն նորա: Որ ի վերայ խաչին դատապարտեաց ըզբանսարկուին ըզբռնութիւն. յաղթական երգով եւ մեք օրհնեսցուք զանուն նորա: Ընտրեալ տաճար անմարմնական Բանին Ա.Յ. Մարիամ ս.բ կոյս. բարեխօսեա առ Տ.ր վասն մերոյ փրկութեան:

ՆՇԴ. Ընդպահպանութեան անզբեր եւ ի մանկուկեանք. ըզքեզ ծանեան հրանիւթիւքն սեռքն եւ բանական կենդանիք. որ զչորեքեան ի կետէն կոչեաց աշտարակեցեր. գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան նախամարգարեացն Բանին Աստուծոյ: Յանապատաբերէր արմատ փայտին մակադրեալ ըզքեզ անհրապելի հրամանի եւ սեւեռեալ բեւեռօք. եւ ի հրացայտ կողէ քո ի ձեռն զինու տիգի հոսանս վտակացն գործեցեր. գովասանական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան նախամարգարեացն Բանին Աստուծոյ: Ի մանանայն բանաւոր տախտակի անտամազգելի տառիցըն մովսիսական օրինաց. որ զԱ.ծն ամենեցուն խոնարհեալ մարմնով ի գիրկս քո բարձեր Մարիամ. ներբողական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհնութեան. ամենօրհնեալդ ի կանայս:

ՏՐԴ. Ընդ զին եղեալ մարդ տեսեալ զարմանայր մարգարէն. եւ հեղուսեալ բեւեռօք զմարմինն ի խաչին ներգործեալ ի մէջ երկուց կենդանեաց:

Պատմեսցեն երկինք ըզվայելչութիւն փառաց Քնի · և ընկալեալ լուսաձեւ տարերցն ըզշ ինթս արևան աներևին · և օրհնութիւն խաչելոյն լցան տիեզերք : Զուարթեալ ոչ միայն ի վերին բանաւորք արմատոյն · այլ քրովբէական կառօքն բարօրիջեալ ի դըժոխս · կենագործեաց հըզօրեղապէն զերամն արդարոց : փառք Հօր : Աղաղակէր անձայնն բարբառովն Տէր Յն ի խաչին · և ընդդէմ անօրինաց կընքէր հրացեալ աստուածային որ ձեռօքն · և բարկութիւն զայրացեալն ի վերայ խաւարասէր իշխանին : Այժմ և միշտ : Տիրուհի անարատ մայր Տեառն և կոյս Մարիամ · քրովբէական աթոռ ըզքեզ տեսաք ի յերկրի · բարեխօսեա առ Տր փառըն մերոյ փրկութեան :

Գ·Ձ

Օ՛գնական ընդունելի · եղեւ իմ Տէր ինձ ի փրկութիւն · սա է իմ ԱԾ և փառաւորեցից ըզսա : Ի խաչին բևեռեցաւ · և զդըժոխոցն ելոյծ ըզըմբռնութիւն · սա է իմ ԱԾ · և փառաւորեցից ըզսա : Որ մահուամբն եղծ ըզմահ · և յարութեամբն զնախահօրըն ջնջեաց ըզմեղս · սա է իմ ԱԾ և փառաւորեցից ըզսա : Ածածին դու ես կոյս և ապաւէն խոստովանողացս ըզքեզ · Որդւոյ քո և Աստուծոյ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ :

ՆԱՅ · Նայեցարուք երկինք և խօսեցայց · և վերօրհնեցից զՔրիստոս փառաց թագաւորն : փառըք քեզ · որ յարեար ի մեռելոց Քն · պարգեւեցեր ըզմեզ ըզկեանսըն յաւիտենից : Նորե-

խօսեա անդադար առ Որդիդ քո և Աստուած ըմեր . ծընօղ և աղախին Տեառն ։

ՉԱԽ· Ածայրին հօւր կենդանի զօրութիւն ո՛ր Հոգւոյն · այրեաց զգրոյնըս դըժոխոց · և զարգելեալսն ի նմա կորզեաց ի կեանս և պարգևեաց մեզ կենդանութիւն ։ Յանմահական ի յայգւոյն ճաշակեցին որք առաքեալքն · և ըղհրաբաժակ գանուծթե այրմանն ընկալեալ Աստուծով ի յաւուրըն տօչորման ։ Ի բարեխօսութիւն փուծացիր մեզ ո՛ր Ածածին · առ ի փրկել ըղժողովուրդս ի մեղաց և յապականութենէ ։

ԾԱՆ· Ի ո՛ր Նըրօրդութենէն ծանեաք ըզՏէր մեր Յս· Քս · ըզԱն Ած · որ ի ծոցոյ Հօր յառաջ քան զյաւիտեանս Որդի · փառաւորեմք · որ եկիր ի փրկել զարարածըս քո ։ Ամէն տնօրէնութիւ ի մէշտ կուսէն զանիծից բարձեր ըզդատապարտութիւն · և կամաւոր խաչելութե քո Տէր կեանըս շնորհեցեր անխափան փրկիչ · առաւել վերօրհնեմք և երկրպագեմք որ ուրախութիւնդ ես երկնի և երկրի Քս թագաւոր ։ Ապաւինիմք ի քո բարեխօսութիւն Ածածին Աարիամ · մայր Տն և կոյս սուրբ · հարսն երկնից և դուռըն կընքեալ · զո՜ր մարգարէքն տեսին ։

ՃԱՄ· Համառօտեցաւ սիրտ իմ ի Տր · և բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած իմ · զի փառաւոր յարութիւն իւրով աւերեաց ըզդըժոխս ։ Անդարձակեցաւ բերան իմ Տէր ի վերայ թըշնամեաց իմոց · քանզի հարեր ըզպատերազմ քո հըզօր զօրութեամբդ ։ Որ տարար ըզՇանն Ած յարգանդի

քում. եւ ծնար զԲան մարմնով ապրեցուցիչ Աստուածածին. բարեխօսեա կեցուցանել զմեզ:

ԳԻՇ. Օրհնի իմ յամենայն ժամ զքեզ փառաւորէ Տէր. վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի: Օրհնի քո որ եւ բարի. զէն ինձ Քո եղիցի յամենայն ժամ. ընդդէմ թշնամւոյն հակառակողին: Օրհնութիւն սրբոյ հովանացեալ զքեզ Աստուածածին. մարմնացեալ Հօր հաճութեամբ զՈրդին միածին մեզ ի փրկութիւն:

ԵՍԱ. Համաշէնցի զանլուծելի ընդհանուրութիւն առ բարեգործութեան Աստուծոյ. եւ լուսոյ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ. եւ եհան զկեանս իմ յապականութենէ: Աւետեաց զհամահօր կարողութիւն. որ խաչեցաւ վասն մեր. եւ յարեաւ ի մեռելոց որպէս յամենայնի կարող. փրկելով զկեանս իմ յապականութենէ: Աստուած է որ ծնաւ ի միշտ կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան. լուսաւորելով զտիեզերս ի գիտութիւն ճշմարտութեան. եւ բարեբանեալ՝ք զնոր բարեգթութիւնն: Զանապականն օրհնեսցուք զԱստուածածինն. որ կոյս մնաց յետ ծննդեան. եւ տաճար յորովայնի զանտանելին ամենեցուն. զհամամիակիցն Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն:

ՕՐՀ. Յօրհնութիւն նոր օրհնեսցուք զՏէր. որ ի վերայ քերովբէիցն հանգչի. եւ ի զօրաց երկնաւորաց փառաբանի սրբասաց ձայնիւ: Որ կամաւոր խաչելութեամբ իւրով. աւերեաց զզօրութիւն մահու. եւ երեքօրեայ յարութեամբ իւրով պարգեւեաց մեզ կենդանութիւն: Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ. եւ

ի միւսանգամ գալըստեանն իւրոյ նորոգեսցէ ի փառս։

Ն.Ե.Գ.· Օ՜Հրաշալի խորհրդ. տնօրէնութե՟ քո Տ՟ր ցուցանելով մարգարէի՟ն. ի փոր կէտին լինել զերիս տիւս և զերիս գիշերս. պահելով ի խաղաղութի։ Համանգոյից հաստիչ գոլով խոնարհեցար յերկնից և խաչեցար կամաւ Հօր փառըն մե՟ր. թաղելով ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս. պահելով ի խաղաղութի։ Այլ մեք ձայնիւ վերնոց փառաւորեսցուք ըզքեզ Ք՟ն. որ համանգոյդ ես Հօր և Ս՟բ Հոգւո՟յն. զի միաբանեսցես զեկեղեցի քո սուրբ. պահելով ի խաղաղութի։

ՏՐԼ.· Տէր ըզլուր քո լուայ ես. և զարհուրեալ զողացայ յոյժ. նայեցայ ի գործըս քո. և փառաւորեցից ըզքեզ Ք՟ն ընդ մարգարէն։ Փառք Հօր։ Օ՜ի աղբերըն կենաց Ք՟ն անապական մարմնացաւ ի քէն կոյս. ըզմեղս մեր բոցակիզեալ շիջոյց. վ՟ն որոյ ըզքեզ անդադար բարեբանեսցուք։ Այժմ և միշտ։ Օ՜ի ի քէն ցընծուն ծընաւ տիեզերաց նախայաւիտենին Բանն. փառակից Հօր և Ս՟բ Հոգւոյն. ըզնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց։

Գ.Կ

Երգեցէք Տեառն երգ նո՟ր ձայնիւ ցընծութե՟. որ խոնարհեցաւ ի հայրական ծոցո՟յ փրկել զարարածս. օրհնութիւնք նմա յաղթական երգով։ Որ բաժանեաց ըզծով անշխարհի՟ խաչին խորհրդով. և ազատեաց յանմարմին փարաւոնէ՟ ըզնորս Իսրայէլ. օրհնութիւնք նմա յաղթական երգով։ Ածածքին սիւն լուսո՟յ ամպ հովանաւոր. և

բնակարան Բանին որ բանիւ հովանէր զկուսութէ·
բարեխօսեա նովա վն անձանց մերոց:

ՆԱՅ· Նայեցարուք ժողովուրդք ի սքանչելիս
փրկութեն մերոյ· որ մարդասիրապէս Բանն ի Հօ-
րէ որպէս ցօղ խոնարհեալ յերկիր· տուք օր-
հնութի Տն Աստուծոյ մերոյ: Որ զաննարան բա-
զուկս իւր միածինն տարածեաց ի վր խաչին· և
ըղձաժանեալ որդիսն Ադամայ ժողովեաց ընդ
թևօքն իւրովք· տուք օրհնութի Տն Աստուծոյ
մերոյ: Զանմատչական կոյսն Մարիամ Ածածին
խոստովանիմք որ եկեղեցի· ուստի տուաւ հացն
անմահութե և բաժակ մեզ ուրախարար· տուք
օրհնութիւնս նովա հոգևոր երգով:

ՁԿՀ· Որ ըղձօր անձութե քո Բ՟Ն· բոլորաքեցեր
ընդ տիեզերս ամենայն՟ին· բացակայեալ ըղձխնու-
թե թըշնամւոյն: Ի յայրգւոյն անմահութե Եդե-
մայ· ճաշակեցին զպտուղ առաջնոցն· զբաժակ կե-
նաց քոց Տր և մեզ արբուցին: Զտաճար անմա-
պական Բանին Հօր· բարեբանեն զպտուղ հոգեղի-
նացն· զոր և մեք ձայնակցելով երկնայնոցն:

ՕԿՆ· Որ յանըսկզբնական Հօրէ ծնեալ նախ
քան զյաւիտեանս Որդի· և ծանուցար մարգա-
րէիւք Աստուած ընդ Հօր գոլով· ըղբերգ օրհնեմք
զեկեալդ ի փրկութի արարածոց քոց Տէր: Որ
ի խաչին մարմնով պատարագեալ հեղեր զարիւն
քո՟որ· և արբուցեր ըղձնեալ քո յարևան խաղ-
ղաղութեն մերոյ· ըղբերգ օրհնեմք զեկեալդ ի
փրկութի արարածոց քոց Տէր: Որ ըղձօրն Ած
ի քեզ կրեցեր մարմնի անկիզելի· զանմահա-

շանկ պղտորեալն քաղցրացուցիչ անճառելի քոյին ծննդեամբդ ի քէն հայցեմք. մաղթեա փրկել ըզմեզ ի հրոյն յաւիտենից։

ՀԱՍ· Հաստատեցան սիրտք մեր առ քեզ փառաց Թագաւոր. որ ի յերկնից խոնարհեալ իջեր փրկել զարարածս։ Պահեա ըզմեզ նշանաւ յաղթող խաչի քո Քրիստոս. յոր բարձրացար կամաւ Հօր. բարձեր զանէծս Ադամայ։ Որ զնախամօրըն զյանցանս լուծեր ծննդեամբ քո որ կուսէ. բարեխօսեա անդադար վասն մերոյ փրկութեան։

ԳԻՐ· Յիսուս որ ընդ Հօր նախ քան զյաւիտեանս. եկիր լուսաւորել ըզխաւար մեղաց աշխարհի. ծագեալ ի սմա ըզլոյս հրամանի. առ քեզ հոգի իմ առաւօտէ։ Կենդանի ի կենաց և լոյս յարութեան. որ արարեր խաչիւ քո զխաղաղութիւն յերկինս և յերկրի. տուր մեզ Տէր զքո զխաղաղութիւնդ. որպէս սրբոց քոց առաքելոց։ Զմայրըդ լուսոյն Բանին Աստուծոյ. որ եղեր արեւելք արեգականն ի մեզ ծագող. բարեխօս ունիմք փրկել ըզմեզ ի փորձութենէ։

ՆՄԱ· Զ[illegible]զեկեալն քեզ մաղթեմ փրկիչ. որ կենարար բանիւ քո լուծեր զերկունս մահու. փարատեա և զիմ զհիւանդութիւնս. լոյս կենդանութեան մեր կեցո ըզմեզ։ Որ անմահարար քո մեռելութեամբն. աներեւոյթ ըզդրունս դժոխոց մեռուցեր ըզմահ. կենդանարարեա և զիս զմեղօք ըզմեռեալս. լոյս կենդանութեան մեր կեցո ըզմեզ։ Անքոյր եւ անբիծ կոյս յետ ծննդեան. որ միածնով ծնար զարձակողն ի կապից մահու. բարեխօս լեր վասն անձանց մերոց. փրկել ի սպառնալեաց գեհենոյն։

ՕՐՀ. Զփառաւորեալն ի հրեշտակաց զամենա-տէր զերրորդութիւն. օրհնեցէ՛ք. ի սրբութեան նորա դասք հոգեղինաց յօրհնութիւն ի նոր : Զյաղթողն ի մարտ պատերազմի դիմեալ կամաւ ի մահ խաչին. գովեցէ՛ք. որ եառ աւար բաշ-խեաց որդւոց մարդկան բարձրացեալ փողով : Սքանչելի երկնի եւ երկրի ամպ թեթեւ ցօղեալ ի մէջ զարդարութեան. բարեբանեցէ՛ք. զբղխեալն ի քէն մարմնով յարմատոյն Յեսսեայ դալարն ծաղկեալ :

ՆՄԱ. Ընդ Յովնանու անձն իմ ծփեալ յալիս մեղաց ծովու. աղաղակեմ. ի նեղութեան իմում առ փրկողդ եւ Տէր յոյս. լուր ձայնի իմում : Որ փրկեցեր ըզմարգարէն յորովայնէ կիտին. ապրե-ցո. եւ զըմբռնեալս ի ժանեաց չար վիշապին կենարար խաչիւդ : Բարեխօսեա առ միածինն յարուցեալ ի մեռելոց. մայր Աստուծոյ. փրկել զանձինս մեր ի յաւիտենից ի հրոյն. ա-ղաչեմք ըզքեզ :

ՏՐԱ. Որ յանքննին ծոցոյ Հօր խոնարհեալ Որդի. երեւեցար ի մէջ երկուց կենդանեաց. զոր նախագուշակ տեսեալ ծանոյց մարգարէն : փառք Հօր : Որ յաթոռս հրակերպեանս բազ-մէիր ընդ Հօր. բարձրացար կամաւ ի կառս խա-չին. եւ հեծելովքն քո ապատեցեր ըզգերեալսն : Այժմ եւ միշտ : Որ կուսական ծննդեամբ ի փրկութիւն յայտնեալ. եւ առաքեցեր զերկա-րըս քո քարոզս. աւետարանել ըզկենարար յարութիւնդ :

ԴԶ

Օրհնեսցուք զՏէր եւ զյաղթող զօրութիւն նորա․ փառօք երգեսցուք նմա․ զի փրկիչ և ապաւէն և օգնական մեր է։ Սա է Աստուած մեր․ որ յաղթեաց փառաց ընդ ջուր յերկրի երեւեալ առասպ. սովք․ սմա փառօք երգեսցուք․ զի փրկիչ և ապաւէն և օգնական մեր է։ Յաղթական օրհներգութիւնքն․ որ ապրեցոյցն զիսրայէլ ի ձեռաց փարաւոնի․ Քնի փրկչին մերոյ ամենեքեան երգեսցուք․ զի փառաւորեալ է։ Որ մինչեւ խաչին իւրոյ կենդանացոյց զմահացեալսն․ եւ մարմնոյն իւր բեւեռմամբ զկապանս մինչեւ ելոյծ․ ամենեքեան երգեսցուք․ զի փառաւորեալ է։ Որ տարար յորովայնի զանտանելին ամենեցուն․ եւ ծնար անձառապէս․ զՔն յոյս ազգի մարդկան․ անա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ։ Զկառս փարաւոնի․ եւ զզօրութիւն նորա Տէր ընկեց ի ծով կարմիր․ այն որ հզօրն է կարողութ՛․ նմա փառօք երգեսցուք․ զի փառաւորեալ է Տէր։

ՆՄՑ․ Նայեցան զինուորութիւնք երկնայինք․ յահաւո՞ր անօրէնութ քո խորհուրդ․ և փառաւորեցին զանպատում սքանչելիս քո մարդասիրութեանդ։ Նորով սրտմտութ՛ք քո Քն․ ի խաչին կիզեր զզանսարկուին բռնութիւն․ և կենարար յարութ՛ք քո զեկեղեցի քո փրկեալ․ փառըս քեզ վերառաքեալ ուսուցեր։ Տեսին զանք խմանալի զօրութեանց զԱստուածս մարմնով առ ի քէն ծնեալ․ իսկ եկեղեցի Աստուծոյ քո Աստծն զքեզ խոստովանի․ որ միայն կուսութեանց ես մայր։

ՉԿՀ. Ածայլն բարկութիւն հրոյ քո Քս. կիզեր ըզդժոխս. եւ ըզդատարկինս արձակեցեր ըզմերանեալսն առ ի նմանէ. ըզքեզ օրհնեմք թագաւոր յաւիտենից: Որ փոխանակ դառնութեն տընկոյն Եդենայ. ըզխաչ քո ետուր մեզ Քս. եւ արբուցեր ի կողահոս աղբերէդ. զանըսպառ եւ զանվախճան ուրախութիւն: Աստուածածին ապաւէն մեր եւ յոյս. բարեխօսեա առ Որդիդ քո միածին. զի փրկեսցէ ըզմեզ ի հրոյն տանջանաց. եւ պարգեւեսցէ մեզ զերկնից արքայութիւն:

ԳՄՆ. Տեսեալ ըզքեզ մահու լուծաւ. եւ դժոխոց սարսեալ դողային. որ ըզմահ մահուամբ ծանուցեր մահ: Որ Հոգւովդ քո սուրբով. ծանուցեր քո արարածոց. որ էինդ եւ եղեալդ. եւ էդ Աստուած: Հովանացեալ որ Հոգւոյն ի վերայ քո որ կոյս Մարիամ. որ ծընար մարմնացեալ ըզԲանն Աստուած:

ՀՄՍ. Աղեղըն հզօրաց նըւաղեցան. եւ որք ի նըւաստութեանն էին ակարքն զգեցան զօրութի. վասն այնորիկ հաստատեցաւ սիրտ իմ եւ խորհուրդ իմ ի Տէր իմ: Զէն ընդունելութեն Տն մեք ընկալաք. որ ըզխաչ քո նշան անպարտելի զօրութի. վասն այնորիկ հաստատեցաք մեք ի յօրհնել ըզքո սուրբ ըզչարչարանս: Զդրունըս դըժոխոց պղընձիս խորտակեցեր Քս. յորժամ յարեար ի մեռելոց հըզօր զօրութի. վասն այնորիկ հաստատեցաք մեք ի յօրհնել ըզքո ըզյարութիւնդ:

ԳԻՐ. Որ բանիւ հրամանի քո հաստատեցեր

զերկինս եւ զերկիր· արարիչդ ամ էղանութեանց· վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի: Որ ի ձեռըն փրկական խաչի քո· լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի· և նորա պարիսպ ամրութե հաստատեցելոց· վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի: Որ եկիր ի կատարումն կանխաւոց մարգարէից· յանձն առեր մարմնանալ ի սրբոյ կուսէն մարդ ճշմարտապէս· վասն զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի:

ՆԱՐ· Յոյս կենդանութե՛ և փրկութե՛ իմոյ Տէ՛ր Աստուած իմ· յիշեա զիս ող երբեմն զաւազակն· և դարձո զհոգի իմ ի դրաց դժոխոց: Որ կամաւոր մահուամբ քո մեռուցեր զմահ· Քրիստոս Աստուած· և լուսափայլ յարութեամբ քո կենդանագործեցեր զաշխարհս· կենդանագործեա և զիս ո զմեղօք մեռեալս: Առ քեզ ապաւինիմք սուրբ Աստուածին· բարեխօսեա անդադար առ Որդիդ քո և Աստուած մեր· փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ՕՐՀ· Զանճառըդ քո Տէ՛ր փառաւորեմք զմարդանալդ· ի գըլխոց լերանց հրապարակեմք զքո քաջութիւնդ· քանզի հարեր զպատերազմ· եկեալդ ի փրկութիւն մեր: Զյաղթողդ քո Տէ՛ր գովեմք զզօրութիւնդ· քանզի վանեցեր զընդդիմամարտ թշնամին· եւ դարձուցեր զգերութի· եկեալդ ի փրկութիւն մեր: Ուրախացաւ երկիր զողորմութիւն և նորոգեցաւ զօրհնութի· քանզի Աստուած ծնընդեամբ ի միշտ կուսէն ի փրկութի մեզ յայտնեցաւ· աւերեաց զդժոխս:

ՆՍԴ. Որ լուսոյ Ա՛րծ մարգարէին ձայնի՛ գոչ-մամբն. և ես նովին ձայնիւ գոչեմ. Եւ զիս մի անտես առներ. այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քո։ Որ քո՛յին հրամանաւդ ընդմահու լու-ծեր զնշխանութիւն. և անիծիցն եղեր քակ-տումն. Եւ զիս մի անտես առներ. այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քո։ Որ իջեր ի յեր-կնից և մարմնացար ի՛ նոր կուսէն. անճառելի քոյին ծնընդեամբդ. Եւ զիս մի անտես առներ. այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քո։

ՏՐԼ. Տէր ընդո՛ւր քո լուսոյ. վերօրհնեալդ ի բարձ-ունեայս. և տեսաք ընդերք մարմնով ի վերայ խաչին. ի մէջ երկուց կենդանեաց. զոր երգեա՛ց Ամբակում նախախնամ սուրբ հոգւովն։ փառք Հօր։ Հեծելութիւնն քո ՔՍ փրկութիւն եղև ազանց. յեղանակըն քո ի կառըս զուարճացուն արարածք. և օրհնութեամբ նոր երգով լըցան տիեզերք։ Այժմ և միշտ։ Աշխեցար ի փրկութիւն նախա-հօրն Ադամայ. Եւ առաքեցեր զերիվարըս քո քա-րոզս աշխարհի. աւետաւոր յարութեան. որք ընդ հանուր պատմեցին ընձիւսանդամ քո գալստեան։

Գ.Կ

Յաղթական քեզ օրհնութիւնք Տէր որ ընդխո-րոց ծովուն հերձե՞ր ընդջուրն. զի ի նմա զընտանւո-րին ջախեցեր ըզզօրսն. և զարգելեալսն ի ձեռըն խաչի քո. վերածեր ի կեանս։ Կամաւոր մա-հուամբդ ի քէն Տէր արձակեցեր զհոգի զօրուն. ի մէջ մահու զմահ անեղեալ վանեցեր. և զարգե-լեալսն ի ձեռըն խաչի քո վերածեր ի կեանս

Միայնոյ քեզ ի կամաց կոյս յետ ծննդեան եր-գեմք զօրհնութիւն. զի լոյս ի լուսոյ քեւ յայտ-նեցաւ աշխարհի. և զնախամօրն եբարձ զանէծս անձաւ ծննդեանն ի քէն։

ՆԱՅ. Նայեցարուք ի բարբառ մարգարէին և ի պատգամս կենդանիս. որ քարոզեաց մեզ ըզցօ-ղըն կենաց ի յերկնից։ Զիջումն քո Քն գու-շակեաց մեզ մարգարէն. եւ զկամաւոր չարչա-րանըս խաչին գոչէր ասելով. տարածեաց զթեւս իւր ընկալեալ ըզնա. եւ բարձեալ բերէ ի փրկու-թիւն աշխարհի։ Քեզ միայնոյ մարմնացելոյդ ի սբ կուսէն. օրհնութիւն ի բարձունըս վերերգեմք ասելով. փառք քեզ Քրիստոս. որ եկիր կամաւ Հօր կեցուցանել ըզմեզ։

ԶԻԷ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. և օր-հնեցէք զՏէր. զի հուրն Տէր Բանըն մարմնացաւ ի կուսէն. աւերեաց ըզդըժոխս և զզօրութիւն մահու եղծ։ Ընկալեալ ըզբաժակն ուրախութեան յայ-գւոյն յանմահութեան սրբոց առաքելոցն. որք ընդ հանուր ընթացան ընդ տիեզերս. լուսաւորեցին հրաւիրելով յերկնից յարքայութիւն։ Յաւուր վրի-ժուց հատուցման ամբարշտաց. վերածիցես ըզմեզ ընդ հոգեղինաց դասն. ի տեղի անկելոց հրեշտա-կաց. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին։

ԶԱՆ. Ծանեաք ըզքեզ Քն փառակից Հօր և Հոգւոյն. նախապատմեալ մարգարէիցն ըզխոնար-հելըն քո յերկնից. ծանիրուք և տեսէք զի զսքանչելիս արար Տէր։ Յարեւելից մեզ փայլեաց արեգակն արդարութեան. իշխանութիւն բազմեալ տե-

սաք ըզնա ի կառըս խաչին . ծանուցաք և տեսէք զի սքանչելիս արար Տէր ։ Որում Երկինք և Երկիր . ոչ բաւէին տանել լուսոյն . ընակարան ընութեան Բանին ըսպասաւորեցար . աղաչեա վասըն մեր ըզմիածին քո զՈրդին ։

ՀԸԱ . Հաստատեցան սիրտք մեր առ քեզ Քրիստոս Աստուած . և ուրախացաք մեք ի փրկութեան քում . ընկալ զաղաչանըս մեր միայն մարդասէր ։ Որ պատրաստեցեր քո խնամութեամբ ըզգիտութիւն յարարածս . և ծանուցեր քո յարութեամբ ըզյարութիւն մեր . ընկալ զաղաչանըս մեր միայն մարդասէր ։ Խնդա Մարիամ . որ եղեր մայր Քրիստոսի . և աղաչեա զնա ի քէն ըզմարմնացեալ Բանն Աստուած . զի փրկեսցէ ըզմեզ ի փորձութենէ ։

ԳԻԸ . Ի գիշերաց կանխեալ աղաղակեմք առ քեզ Տէր . վասն զի բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր ։ Տուր մեզ Տէր զքո զխաղաղութիւն . և փրկեա ի ձեռաց անօրինաց . խստաց ապըստամբողաց . վասն զի բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր ։ Բարեխօսութեամբ ծընողի քո և միշտ կուսի . հայցեմք ի քէն Քրիստոս փրկիչ աշխարհի . վասն զի բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր ։

ՆԻԱ . Ի վերանալ յինէն աւուրց իմոց . Տէր Աստուած իմ . օգնեա ինձ միայն մարդասէր ։ Զչարչարանըս խաչի և մահու յանձն առեր . Տէր Աստուած իմ . օգնեա ինձ միայն մարդասէր ։ Բարեխօսութեամբ որ Աստուածածնի և միշտ կուսի . Տէր Աստուած իմ . օգնեա ինձ միայն մարդասէր ։

ՕՐՀ. Ամենայն նորոգութեանդ երկրպագեմ զօրք երկնայինք. եւ սանդուածք անմարմին ձեւանց. փառաւորելով զտէրութիւնդ քո հանապազ: Ամենայն որ խաչի քո Տէր երկրպագանեցուք. որով բարձեր ըզգայականեք մահուան քո աւարածոց. փառաւորելով ըզտէրութիւնդ քո հանապազ: Ամենօրհնեալ ածածնիր Մարիամ. քերովբէական աթոռ աշտարակին մերոյ տընօրէնութեան. զոր երանեմըն ամենայն ազգք հանապազ:

ՆՍԴ. Մարգարէն. ի փորոյ կէտին աղաղակէր եւ ասէր. Տէր Աստուած. նայեաց յիս եւ մի տար զիս հրոյ զորս այս: Զայն բարձի. ի խորոց անդընդոց առ Աստուած աղաղակեմ. եւ ամենայն ձայն աղաղակի իմոյ հասցէ ի լսելիս քո Տէր: Նորեխօսութիւն սուրբ Աստուածածնի եւ միշտ կուսի աղաչեմ. Տէր Աստուած. փրկեա զիս ի յորդայութէ անհրաժեշտ թշնամեաց:

ՏՐԼ. Լուսոյ զաւակ անօրէնութեան քո ըղձեր. քանզի յերկնից խոնարհեալ մարմնացար ի ս՛բ կուսէն և խաչեցար ընդ աւազակն. և զմարհուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մարդասիրութիւնդ: Փառք Քեզ: Ողորմութեամբ դթութեանց գթակեաց մեզ Մարգարէն. ասէ եղբ՛ր դու ի կարս քո. հեծելութեանց քո Քրիստոս փրկութեան եղբայր յերանելին քո: Այժմ և միշտ: Երնեւցար ի փրկել զարարածս ի մահուանէ. եւ զըժոխք հիացեալ սասանեցան ի յահէ ամենազօրիդ փառաց քոց:

# ՀԱՄԲԱՐՁԻՆ
# ԿԻՒՐԱԿԷԻՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԸԶ

Ա. Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն ի խնկել զանապական մարմինն։ Եւ գտին զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին. եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց զմահ։ Եւ հանդիպեալ քո Տէր առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար. առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց։

Բ. Փառք յարութեան քո Տէր։ Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն. եւ յարութեամբ միածնիդ զգեցաք զանմահութիւն. փառք յարութեան քո Տէր։ Խաբանօք փայտին ճաշակեցաք զմահ. եւ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան. փառք յարութեան քո Տէր։

Գ. Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմք կենդանիդ յաւիտենից Քն ընկալ և զմերս. փոխանակ խնկոցն զօրհնութիւնս։ Փոխանակ որ աւետաւոր զուարթնոյն զխնդութի քո մեզ հանդիպեցի յուսով գիտութեան. մխիթարել զհոգիս եւ լուսաւորել։ Ընդ նոսին աւետարանութեամբ քարոզեսցուք. զքեզ միայն զսքանչելի լինել. որ յարեար ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ։

Դ. Որ անճառ էութեամբ Հօրդ ես փառակից հաւասարել մարմնով յանձն առեր փառքն մեր միշտըն-

ջենաւոր օրհնութիւն ի հրեշտակաց օրհնեալ ես Տէր։ Որ էակից ես ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. խաչեցար եւ թաղեցար կամաւ Հօր փառքն մեր. մըշտընջենաւոր օրհնութիւն ի հրեշտակաց օրհնեալ ես Տէր։ Որ միւսանգամ գալոց ես հայրենի փառօք. շնորհելով ամծապէս յարութիւն տիեզերաց. յամենայն արարածոց յաւիտենից օրհնեալ ես Տէր։

Ե. Սոսկալի տեսիլ հրեշտակին ի փառաւոր քո գերեզմանին. ըզպահապանսըն զարհուրեցոյց։ Եմանալն մարմնական ձայնիւ բարբառէր առ որ կանայսն. փարատեցոյց զսուգ եւ զտրտմութի։ Ով կանայք ըզգաստք ածասէրք զամենեցուն ըզյոյսն եւ զյարութի. ընդ մեռեալս զի խնդրէք։

Զ. Փայլականաձեւ հրեշտակն իջեալ յերկնից զարհուրեցոյց ըզպահապանսն. եւ սուրբ զկանայսըն խընդութեամբ լցոյց։ Ածասէր կանայք ցընծացէք այսօր յարեաւ Քս ի մեռելոց. եւ լոյս մեծ աշխարհի ծագեաց։ Աւետիս լուեալ ի նոր հրեշտակէն ընթանային առ աշակերտսըն. պատմելով նոցա զյարութիւնըն Տեառն։

Ը.Ա

Ա. Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան օրհնեմք ըզքեզ որ Աստուած։ Ի գերեզմանին իջեր թագաւոր անմահ. եւ ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ որ Աստուած։ Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս եւ ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած։

Բ․ Յարուցեալ Տէրն ի գերեզմանէն միածինն որպէս փայլակն եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս․ եւ երկինք եւ երկիրս ցնծային։ Մեծ է յարութիւն Աստուածորդւոյն քանզի դրունք երկնից բացեալ եղեն եւ հոտ անոյշ բուրեաց յաշխարհս եւ լցոյց զարարածս ամենայն։ Զօրք երկնից իջեալ էին եւ բանակեալ շուրջ զգերեզմանաւն եւ հոգեգէն բարբառով երգէին․ Տէր օրհնեալ է քո յարութիւնդ։

Գ․ Սքանչելի հրեշտակքն ցնծութեամբ իջեալ ի գերեզմանն հարկանէին․ փառք յարութեանդ Տեառն։ Ի հարկանել փողոյն պահապանքն զարհուրեցան եւ եղեն որպէս մեռեալ։ Զայն եղեւ ի հրեշտակէն բարբառ եղեւ ուրախութեան Տէր յարեաւ․ փառք յարութեանն Տեառն։ Դրօքն փակելովք երեւեալ Յիսուս աշակերտացն եւ ասէր․ խաղաղութիւն ընդ ձեզ։

Դ․ Հրաշալի է յարութիւն Աստուածորդւոյն․ այսօր տեսեալ առաքելոցն եւ բազմութիւնք հրեշտակացն երգէին երգ նոր անլռելի ձայնիւ։ Զայն ահեղ զարթնելեան փողոյն․ այսօր գոչէր աւետարանէր աւետիք են աշխարհի․ երգէին երգ նոր անլռելի ձայնիւ։ Լոյս մեծ եւ ահաւոր այսօր ծագեաց սուրբ եկեղեցւոյ յարուցեալ ի մեռելոց Քրիստոս․ երգեսցուք երգ նոր անլռելի ձայնիւ։

Ե․ Երգեսցուք քեզ ընդ հրեշտակս յաղթական օրհներգութիւնս։ Որ մահուամբ քո մեռուցեր զմահ եւ յարութեամբ պարգեւեցեր հողանիւթ բնութեանս․ Երգեսցուք քեզ ընդ հրեշտակս յաղ-

թական օրհնութեան։ Որ ցուցեր մեզ ճանապարհ նորոգման և մաքրեցեր զաղտեղութե՛ յանցանացըն զոր պատրեալ թըշնամին. Երգեսցուք քեզ ընդ հրեշտակս յաղթական օրհնութեան։

Զ. Կանխեցին կանայքն իւղաբերք ի գերեզմանն և տեսին զյարութիւն Տեառն։ Նոյնպէս զօրն յարուցեալ գերեզմանին կնքելոյ. ընդ ծագելոյ արեգական։ Յարեալ Տէր ի մեռելոց հրաշք զօրութեամբ հաստատելոց զհիմունս եկեղեցւոյ սրբոյ։

ԻԶ

Ա. Ի գերեզմանն քո կանխեցին կանայքն զեւղ և զխունկս բերին. ի պատիւ թաղման քո զի զմեղս ըղձողացեալս մեռեալք ի կենաց։ Փոխանակ իւղոյն զհաւատս անուշս և զաղաչանս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ. որք զոգւոյն կենաց լուան Աւետիս ուրախութեան։ Այսօր աւետիս առաքելոցն յարեան յարուցիչն մեր ամենեցուն ըղձալին. և զթըշնամին կապեալ ի յանդունդս կապանս

Բ. Աջակից գերեզմանին աւետաւոր կանայքն. յօժարեալ խընդրել զանապական մարմինն։ Պատուիրեն հրեշտակքն քաջալերէր ըղձոնս անեղին. ցընծացէք յարեաւ որպէս յառաջն ասաց։ Աւետել ի հրեշտակէն զանեղին յարութեան. պատմեցին աշակերտացն եթէ յարեաւ Քրիստոս։

Գ. Զայնպէս որ հրեշտակին զուարճացեալ զառաքեալսն կանայքն զՏէրն պատմէին ըղձալին։ Ով յուսահատք տխրածեալք այլ ցընծացէք երկրեալք. խընկագեղեացք ածողին և փափագողք յարութեանն։ փութացարուք ի Գալիլեա ա-

Աւետարանեցէք աշակերտացն. եթէ յարեաւ Քս եւ խափանեցաւ դժոխք։

Դ. Այսօր զուարճացան տիեզերք ամենայն ազգ-մարդկան յարութեամբ Ածորդւոյն. քանզի զդժոխս աւերեաց եւ զգերեալս զարգելեալս ի նմա։ Այսօր լուսափայլեալ մեծապայծառ ծագմամբ հրեշտակապետն ի վերայ վիմին կանանցն աւետէր ասելով. զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս։ Այսօր բերկրեցան կանայքն իւղաբերք աւետեօք յարութեան Ածորդւոյն. գտեալ յառաքելոցն ասելով յարեաւ Քս։

Ե. Սքանչելի կանայքն աներկիւղ եկին ի տեսանել զգերեզմանն. զի կատարեալ սէրն մերժեաց զերկիւղն։ Եկին ի խնկել զանապական մարմինն եւ տեսին յարուցեալ ի գերեզմանէն. եւ վերստին լոյսն ծագեաց յաշխարհս։ Բարբառեաց հրեշտակն զյարութիւն Տն. եւ բացան գերեզմանք ննջեցելոց. եւ յարութիւն Տն յաղթեաց մահու։

Զ. Կանխեցին որ կանանցն ընդ առաւօտն ի գերեզմանն. եւ զաւետիս յարութեն ընկալան ի հրեշտակէն լուսոյ. եթէ յարեաւ Քս։ Թողեալ զտրտմութիւն երկրաւոր եւ որ կանանցն. եւ խնդութիւն ընթանային պատմել աշակերտացն. եթէ յարեաւ Քս։ Օրհնեալ եւ զհրաշափառ զյարութիւն Քնի. առաքեալքն աստուածայինս ասելով. ընդ համայն քարոզէին. եթէ յարեաւ Աստուածն։

ԲԿ

Ա. Բա՜ յարութեանդ փառք փայլէ երկնայնոց Տէր։ Օրհնեալ է քո յարութիւնդ

Աստուած որ ըղձմամբ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր։ Գոչումն ահեղ հրեշտակին ի վիմին որ քարոզէր առ որ կանայսն յարեաւ Տէրն ի մեռելոց. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր։

Բ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ընդ արշալուսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Եւ առ նոսա ասէր հրեշտակն զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Փութացարուք ով որ կանայք եւ պատմեցէք աշակերտացն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

Գ. Առաւօտեան սբ կանայքն հանդերձ իւղովք եւ խնկովք. եկին ի սբ գերեզմանն. եւ ողբալով խնդրէին զանմահ փառաց թագաւորն։ Եւ ի ձայնէ հրեշտակին զուարճացան տրտմագնեացք առաւօտեան սբ կանայք. զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. յարեաւ փառաց թագաւորն։ Աստուածասէր սբ կանայք փութացարուք հետեւեալ. պատմող լինել Պետրոսի եւ Յովհաննու սիրելւոյ. յարեաւ փառաց թագաւորն։

Դ. Կանխեցին կանայքն ընդ առաւօտն ի գերեզմանն հանդերձ խնկովք։ Ներբելով զլոյս անուշունս ի յօծումն կենարար մարմնոյ փրկչին մերոյ։ Եւ հրեշտակն զօրութեամբ գոչելով աղաղակէր յարեաւ Քրիստոս։

Ե. Զյարութիւն Քսի ամենեքեան օրհնեսցուք. զի նա միայն Աստուած փառաւորեալ յաւիտեան։ Ըզձա-

ռանգայթ յարուցին անսասանելով հրեշտակին. նա զօրանայր ի պատմել ընկենաւորեր յարուցին: Զայն աւետեաց լուսին առաւօտեան որ կանայքն. ի հրեշտակէն զանոնայլին ուրախութիւն յառաքելոյն:

Զ. Օտենզերական խնդութեան աւետիքս երանե-լի կանանցն ռուսեալք ի հրեշտակէն. աներկիւղ խըն-դութիւ և բերկրանօք ուրախութեամբ ընթանային պատմել աշակերտացն ամ սեղ լով: Օր մահուն երկիւղիւ ընդ մեռելոյս համարեալ կարծէաք նա ինքն իշխանութիւն յարուցեալ զմահու եղծ զիշ-խանութի և կենդանութիւն պարգեւեաց ամ զգի մարդկան: Այլ ի բաց եդեալ ընդհրէական եր-կիւղին ըզկարծիսն. նախաժամանեցին ի պատիւ այնորիկ. որ մահուամբն եղծ ըզմահ և անմա-հուի պարգեւեաց ամ զգի մարդկան:

Գ.Զ

Ա. Իւղաբերք եւ սուրբ կանայքն ողբալով փու-թացեալ եկին ի գերեզման քո Տէր. ի խնկել զանապական մարմինդ: Քաջաբան աւետաւոր հրեշ-տակին որ գոչէր առ երջանիկ կանայսն. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. քանզի յա-րեաւ Տէր եւ աւերեաց ըզդըժոխս: Պատմեալ ե-րանելի կանանցն զյարութիւն Տն աշակերտացն ուրախացեալք ընթանային Պետրոս և Յովհաննէս ի կենսատու գերեզմանն:

Բ. Այսօր յարութիւ Քնի տօնեցէք հաւատա-ցեալք ի մի Աստուած Հայր ամենակալ: Այսօր եւ կանայքն իւղաբերք աւետիս տալով առաքե-լոցն. օրհնեն զԱստուած զՀայր ամենակալ: Այ-

որ և հրեշտակք ի յերկինս հոգեւոր հրճուանօք երգով. օրհնեն զՔ. արարած զհօր անմահական։

Գ. Ի խաչանիշ փայտէն զեղերգեցան զծածուկք. զօրութիւն որ Հօրդ նորոգեցաւ երկիր. սա է սա որ խափանեաց զմահ։ Հրեշտակն աւետէր կանանցն Մարիամու. սա է ի սկզբանէ Բանն որ յառաջ քան զյաւիտեանս Աստուածն. սա է Թագաւորն որ խափանեաց զմահ։ Յարուցեալն յաւուր երրորդի. վէմք պատառեցան երկիր շարժեցաւ սասանեցան զդժոխք. սա է կենդանին յաւիտենից Քրիստոս։

Դ. Փառաւորեալ է քո յարութիւնդ։ Որ յարեար ի մեռելոց յաւուր երրորդի Քրիստոս Որդի Աստուծոյ. փառաւորեալ է քո յարութիւնդ։ Որ յահեղ բարբառով յարութեան քո Տէր երկիր շարժեցաւ. վէմք պատառեցան Քրիստոս Որդի Աստուծոյ. փառաւորեալ է քո յարութիւնդ։

Ե. Ի ձայն ահեղ յարութեան քո Տէր զարհուրեցան զինուորացն զամբոխն. յափշտակեալ հրեշտակին իջմանն և գլորմամբ շարժեցաւ երկիր։ Նահատակին որ կանանցն զինեալով բաղխափոր զերեզմանն. ընթերով զվէմս անմատչին ի յծնունդն կենարար մարմնոյն անապարագիր կականութեան։ Զի տեսեալ ընդերկրեայն զհրաշատեսն ի վիմին. տարփածեալ սպասաւորն ասէ զօրհնիր այժմ դու փառաց. քանզի յարեաւ որ յառաջն առաջ։

Զ. Հրաշալի յարութիւն ընդարձակապատնուքն զարհուրեցոյց. և հրեշտակն ի յերկնից իջեալ ի

ձայն անշեղ յարութեն ածորդւոյն. կանանցն աւետէր յարեան Տեառն։ Ի ձայնէ հրեշտակին զուարճացան ողբամանգեալ կանայքն. և դարձան խնդութեամբ ի տանէ աւետիս առաքելոցն. եթէ յարեաւ՝ նախաձայնապատմելին։ Եկայք ընտանեգեալք յօրհնութի նոր օրհնեսցուք զՏէր. քանզի մարմինն որ ի մէնջն էառ ի հրեշտակաց երկրպագութիւն առնու ի սրովբէից և ի քրովբէից։

Ե. Տօնք ընդխառնս ի բարձունս թագաւորին յաւիտենից. որ փրկեաց զազգս մարդկան ի ծառայութեան թշնամւոյն. օրհնութի առաքողին ի բարձունս։ Նա ի նկրն իշխանութեամբ բազմեցաւ ի վերայ խաչին կապեաց զիշխանսն մեղաւանէր. զմահու զերեւորն յԱդամայ կենդանագործեաց ի կեանս անմահս. օրհնութի առաքողին ի բարձունս։ Նախայայտնեալն Որդին փառաւորեց զՀայր և նա զՈրդին. զինքն ի նոր զերեզմանի. նոր նորոգեաց զմեզ ընդհնացեալս մեղօք. օրհնութի առաքողին ի բարձունս։ Զօրութեանն սերովբէն նուագէր ի վերայ վիմին. հարկանէր փող յարութեանն Տեառն. պակուցելոյ պահապանացն յահէն եղեն որպէս մեռեալ. օրհնութիւն առաքողին ի բարձունս։ Զաղօթս ասա և զմեզ Տէր ընդ սրբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել ընդ քեզ ի յարութեանն քո. արժանաւորեա Տէր տեսանել ընդ քեզ ի միւսանգամ քո գալստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։

Գ.Կ

Ա. Յարեաւ Տէրըն ի գերեզմանէն: Ընդ յառնել փրկչին մերոյ երկիր շարժեցաւ. վէմք պատառեցան: Ծառայութեամբ լոյսն ի վերայ վիմին զարհուրեցոյց ըզպահապանսն առ դրանն գերեզմանին:

Բ. Զածայն ըզգերեզմանաւն բոլորեալ դասք հրեշտակաց աւետէին ըզՏէրըն յա-րուցեալ ի գերեզմանէն: Ծնաւէր կանայքն ե-կին ի գերեզման փրկչին անուշ իւղօք եւ խըն-կօք. յօծանել զմարմինըն տէրունական: Լու-սապայծառ հրեշտակն. նըստէր ի վր՝ վիմին աւետարանէր կանանցն. յարեաւ փրկի-չըն տիեզերաց:

Գ. Եղբարք յարուցեալ օրհնեմք մարդասէր. ա-ղաղակելով Տէր փառք քեզ: Զօր օրհնեն սե-րովբէքն եւ գովեն քերովբէքն. աղաղակելով Տէր փառք քեզ: Անդադար բերանով անհանգիստ բարբառով. աղաղակելով Տէր փառք քեզ:

Դ. Առեալ եւ մեր զօրհնութիւնս հրեշտակացն երգեմք եւ ասեմք փառք յարութեան քո Տէր: Որ խաչեցար վասն մեր թաղեցար եւ յա-րեար ապրեցեր ի մեղաց: Սուրբ Աստուած եւ հզօր սուրբ անմահ թագաւոր:

Ե. Տեսեալ փայլակնաձեւ զուարթնոյն ի վիմին հընչեցեալ առ խընկաբերեանց կանանցն. փարա-տեցոյց ըզերկիւղալից տըրտմութիւն: Պահապանքըն պակուցեալ անհարեկ լինէին. եւ կանանցն աւե-տարանեալ մահ մինչեւ յաղթեաց և ծանուցաւ

մնաց: Դարձոյց առաքելով առ Երջանիկ առաքեալսն. փութացարուք ի Գալիլեա եւ տեսանիցէք զկենդանագործօղն ըզՔրիստոս:

Զ. Յանճառ փառաց խոնարհեցար եւ ըզգեցար ըզհողեղէն բնութիւս. վերստեղծ զանկեալն ի գլորմանէ յանմահական ի կեանս. ընդ երգ օրհնեմք անապական ըզանունդ Տէր Աստուած: Անպարտականելոյդ մահու դատապարտեալ ի վերայ խաչին. որ փոխանակ դառնութեան պտղոյն արբուցեր մեզ ի տնկականաց կողէդ. ընդ երգ օրհնեմք անապական ըզանունդ Տէր Աստուած: Համբերեցեր ի դժոխս ցուցանելով ըզզօրութիւն աստուածութեանդ. ջախջախեցեր ըզգլուխ խարդախողին խափանեցեր ըզզօրութիւն մահու. ընդ երգ օրհնեմք անապական ըզանունդ Տէր Աստուած:

Դ·Զ

Ա. Փառաւորակցին Հօր Որդի որ վասն մեր խաչեցար. ըզդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի. փառք յարութեան քո Տէր: Հրեշտակապետին ի ձայնէն որ ըզպահապանսն երկիւղին. զարհուրեցոյց առ դրանն գերեզմանին. փառք յարութեան քո Տէր: Եւ ըզքանչելին որ կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարուցիչն մեռելոց. փառք յարութեան քո Տէր:

Բ. Կանանցն կանխելով ի թաղումն կենդանաւոյն տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ: Թափուր ըզգերեզմանն եւ ըզնոյն տեսանէին եւ զյարութիւն լուսոյն յաւետարանէին: Անդր խաչե-

ցեղոյն զի՛ լոյս տիրամայրդ ծնեցեալ . քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ ։

Գ. . Ահագին ձայնիւդ քո Քս՟ ի վերայ խա-չին գոչեցուցեր զարարածս ամենայն . զերկնայինս եւ զերկրաւորս ըմբռնութեամբ ։ Ահագին երեւմամբ հրեշտակին զարհուրեցոյց ըզկանայսն ասելով . զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս ։ Եւ յահէ զօրութե՟ Ածորդւոյն զարհուրեցան կապապետք դժոխոցն ասելով . համբարձէք իշխանք ըզդրու-նս ձեր ի վեր ։

Դ. . Որ ի վերդ ես քան ըզմիտս եւ զխորհուրդս համագոյակա՟ն Եղելոցս արարող . ի Հօրէ առա-քեցար վասըն մեր եւ մարմնացար ի մ՟ր ի կուսէն ։ Անքննելի ի յէութեն Այծ անփոփոխեցար յարգանդի կուսին . ապրեցուցանել զնախաստեղծին ծնունդս եւ վերստին նորոգել ի փառս ։ Մեծ չարացար մարդ եղանիլ Այծ . այլ եւ խաչի համբերեալ ըզ-թաղումն յանձն առեր զերեքօրեայ եւ յարու-ցեալ նորոգեցեր զաշխարհս ։

Ե. . Զյարութիւն Ածորդւոյն հրեշտակապետն այսօր աւետէր կանանցն ասելով . յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ։ Ընթացեալ կանանցն խնդութեամբ պատմէին աշակերտացն ասելով . յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ։ Նմին որպ եւ մեք ընդ հրեշտակին գոչեսցուք զյարութիւնն Քսի . որ փրկեաց զմեզ ի ձեռաց մահու ։

Զ. . Փառաւորեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի ։ Որ կամաւ Հօր եւ Հոգւոյն ի վերայ քահանայութեան պատարագեալ գառն Այ . փառաւո-

րեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի ։ Քս
անմահ թագաւորն հետազօտեալ ի դժոխս . կա-
պեաց զիշխանն մեղսասէր զմահու գերեալսն յԱ-
դամայ կենագործեաց ի կեանս անմահ . փառաւո-
րեալ անճառելի յարութիւնն Քրիստոսի ։

Ա. Օ անճառելի յարութիւնն հրաշացեալ
հրեշտակըն գոչէր առ կանայսն ասելով . յարու-
ցեալ է Տէրն ի գերեզմանէն ։ Եւ եկիցք եւ
ընդ Նոր զահաւոր յարութիւն քո ի գերեզ-
մանէն . սքանչանեալ կանայքն խնդութեամբ մի
քարոզէին ։ Յարեաւ Տէրն ի մեռելոց . եւ ըզզօ-
րութիւնս դժոխոց խորտակեաց . եւ զարգելեալսն
ի նմա կորզեաց ըսքանչելի յարութիւն իւրով ։

Գ.Կ

Ա. Յորժամ եկին ի գերեզմանն իւղաբեր
կանայքն . եւ բերին ըզխունկս ի խնկել զանա-
պական մարմինն ։ Յայնժամ հրեշտակն աւե-
տարանէր յարութիւն Քրիստոսի . պատմեցէք առա-
քելոցն զյարութիւն Տեառն ։ Իսկ նոցա զար-
հուրեալ վասն ահագին տեսլեանն . պատմէին ա-
շակերտացն զահագին տեսիլն ։

Բ. Էջ հրեշտակն յերկնից աւետաւոր եր-
ջանիկ եւ որ կանանցն քարոզէր ասելով . է
ձեզ վերբերութիւն լոյսն ծագեալ ի յաշխարհ ։
Այսօր տեսիլ ահեղակերպ հրեշտակապետին
մերձեալ ի գունդ զինուորացն . այսօր սրտաբե-
կեալ պահապանացն զարհուրեալ մեռանէին .
է ձեզ վերբերութիւն լոյսն ծագեալ ի յաշխարհ ։
Այսօր ցնծայ Երուսաղէմն վերին . այսօր ցըն-

ծայ Սիովն մայր եկեղեցի. քանզի փրկիչն մեր յարեաւ և աւերեաց ըզդժոխս. եւ մեզ զվերըն-տին լոյսըն ծագեաց ի հօրէ։

Գ. Հրեշտակացըն դասքն. յերկնից ի յերկիր վայրաբերեալ ի սպաս Որդւոյն Աստուծոյ։ Հրեշտակին ձայնիւ. ցընծայր կոյսըն սուրբ եւ ընթացեալ առ աշակերտսըն պատմէր։ Կենդանին յարեաւ. զերկունս մահու ելոյծ և կեանս պարգեւեաց աշխարհի։

Դ. Հրեշտակ քո Տէր. որ զյարութիւնըն քարոզեաց։ Զպահապանըն զարհուրեցոյց. զկանայսըն լուսաւորեաց ասելով։ Զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. չէ աստ այլ յարեաւ։

Ե. Փառք յարութեան քո Տէր։ Խաչիւ ի յանձն առեր գըթած եւ ըզմահ ճաշակեցեր. զամենեսեան յարուցեր զհաւատացեալսն ի քեզ որք աղաղակէին ասելով. փառք յարութեան քո Տէր։ Մեք պատուեցաք ի խաչելութեան քո Տէր. եւ գերեզմանք բացան դժոխք զարհուրեցան և մեռեալք յարուցեալ աղաղակէին ասելով. փառք յարութեան քո Տէր։

Զ. Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ահեղակերպ փայլմամբ. պատառեցան վէմք. եւ երկիր սասանեցաւ. ի յահեղ բարբառոյ մեծ կարապետին։ Իջ հրեշտակն ի յերկնից ի գերեզմանըն Տն. հընչեցուցանէր. ըզձայն ահեղ դոչման փողոյն. ի վերայ գերեզմանին։ Իսկ եկեալ սուրբ կանանցն ի խնդրել ըզմարմինըն Տեառն. եւ լըսեալ ի հրեշտա-

կէն. եթէ յարեաւ ի մեռելոց. կենդանին յաւիտենից։

Ա.. Փառք Քեզ ամենազօր յարութեան։ Քեզ ամենազօր յարութեան երկրպագեն քերովբէքն. և վեցթեւեանն սերովբէքն հոգեւորական հրնչմամբ երգեն ասելով. փառք Քեզ ամենազօր յարութեան։ Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային նք կանայքն. տեսանելով զհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ ի վր վիմին գոչէր ասելով. փառք Քեզ ամենազօր յարութեան։ Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն. և վերընտրին նորոգմամբ յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք. փառք Քեզ ամենազօր յարութեան։

Բ. Խաչաբերից կանանցն եկեալ. ի սուրբ գերեզմանն. եւ զահաւոր ընդհրեշտակապետին ընձայնելն լուեալ. ով մարդք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն։ Արփիահրաշ լոյս մեծ ծագեալ. ի սուրբ գերեզմանն. եւ զարհուրեալ պահապանացն երկիւղալից ըմբռնանէին. այլ քաղցր հրեշտակապետին որ գոչէր առ կանայսն. ով մարդք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն։ Ընթացեալ Պետրոս եւ Յովհաննէս. ի սուրբ գերեզմանն. եւ հանդիպեալ վարշամակին եւ սուրբ կտաւոցն. այլ քաղցր հրեշտակապետին որ գոչէր առ նոսա. ով մարդք զխաչելեալն խնդրէք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն։

# ԿԱՆՈՆ
# ՀԱՄՕՐԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ
## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԱՁ

ԺՈՂՈՎԵԱ՛ԼՔՍ ի յիշատակ սրբոց մարտիրոսացն. միաբան նուագի երգելով. օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին: Քանզի հեղմամբ արեան սոցա պարտեցաւ թշնամին. եւ մեծարեալ պսակի Սիոնի երգելով. օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին: Կատարեցելոցն ընդ զօրս վերին զուարթնոցն. յիշատակաւ բերկրեալ ի սրբութիւն սոցա երգեսցուք օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին:

Որք ըմպհանդէս նահատակութեան առ բռնաւորսըն ցուցին. եւ յաղթեցին հաւատով երրեակ լուսոյն եղեն մեզ առիթ. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Որք ըզխաւար կռապաշտութեանցն վանեալ հերքեցին. եւ կանգնեցին մեզ նշան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Եւ հրաշափառ ծննդոցն պատերազմեալք ի յերկրի. վերհամբարձեալք երկնայնոց դասուցն եղեն երգակից. աղաչանօք սոցա կեցո զմեզ:

Որք զանձինս իւրեանց քեզ Տէր ընծայեցին. եւ Որդւոյ քում Քի եղեն խաչակից. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Որք ըզմարմինս իւրեանց քեզ տաճար մաքրեցին. եւ Հոգւոյդ սրբոյ եղեն օթեվան. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Որք ըզկեանս

խրեանց քեզ փոխանակեցին. և երկնից արքայութեան եղեն ժառանգորդ. աղաչանօք սոցա կեցո զմեզ:

Պատուական վկայից զինուորութեան զէն դոքին. համաձայնեալ ընդ երկնային զօրսն երգեն ասելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս: Կարծրագոյն տանջանօք լուծին զկամս մարմնոյ. և բացայայտ փայլմամբ հոգւոյն երգեն ասելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս: Համաձայնեալ ընդ նոսին արժանաւոր սիրով. ի տաճարի ճրագնաւորացն երգեմք ասելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս:

Առաքինասէր վարուք հաճոյացան որ վկայքն. և ընտրեցան կամաւոր մահուամբն խրեանց. և հրաւիրեցան ի կոչումն արքայութեանն երկնից: Որք մատնեցին զանձինս խրեանց ի փորձ սրոյ և հրոյ. և հեղմամբ արեամբն խրեանց եղեն վկայք Քրիստոսի. և հրաւիրեցան ի կոչումն արքայութեանն երկնից:

ԻԸ. ՅՈՎ: Պատկերակից եղեր հողեղէն բնութեան տնօրինեցար յարգանդի կուսին Բանդ Հօր. ըզմեզ Քրիստոս վերանորոգել պատկեր: Մերկացեալ ի ճաշակմանէ նախաստեղծին ըզփառս. միւսանգամ վերըստին շնորհելով. ըզմեզ Քրիստոս վերանորոգել ի փառս: Մկրտեալդ ի Յորդանան ի Յովհաննէ. աստուածային բնութ մարմնովդ զոր ի մէնջն էառ. ըզմեզ Քրիստոս լուսաւորելով աստուածային ծագմամբն:

ԳԸ. ԱՐԳ.. Ազգս առեալ մարգարէիցն հրաշալի ձայնիւ անդադար օրհնաբանեն ըզմարմնացեալդ ի սուրբ կուսէն. որ երեւեցար մեզ ի փրկութիւն:

Զնեղութիւն եւ զչարչարանըս յանձն առին կա-մաւորապէս. ժուժկալեալ համբերեցին վասն ա-նուանըն Տեառն. որ երեւեցաւ մեզ ի փրկութիւն: Աներկիւղ քարոզեցին յաշխարհի ընծայութեամբ մարդեղութիւն միածնածնին ի սուրբ կուսէն. որ երեւեցաւ մեզ ի փրկութիւն:

ԻԸ. ՆՈ․․ Որք ի սկզբանէ պատուեալ եղեն ի սէր բոլորից Հօր. առաքելական կոչմամբ ընտրեցեր հրաւիրեցին յուսով հասանել մասին. վարդապետութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք ըզՏէր: Որք ականատեսք եւ սպասաւորք եղեն միածնե-լոյ Բանին. զեր ի վերոյ անմարմնոց դասուցն հան-դիպելով շնորհի. վարդապետութեամբ սոցա ա-մենեքեան օրհնեսցուք ըզՏէր: Որոց դասադրական թոռ ահեղ ատենին հանդերձեալ մնայ. կատարել ի մեզ դատաստան ըստ գործոյն. առ սոսա անկցուք զըղջացեալ անձամբ պաղատելով. հաշտեցուցանել սոքօք ընդ մեզ զահաւոր: Գովեալ զդատաւորն:

ԻԹ. ԳՊ․․ Որ շնորհօք որ Հոգւոյն բարձեր ըզ-խաւարն փրկչական յորդեցուցեր շնորհս. ով սուրբ հայր Ներսէս. արժանաւոր երկնային կոչմանն ի հրեշ-տակական դասակցութիւն. օրհնեա մեզ միշտ սուրբ զԵրրորդութիւնն: Այսօր եւ մանկունք սուրբ ե-կեղեցւոյ տօնեն ըզխաչակրօն քո որ ըզյիշա-տակս. ով սուրբ հայր ծննդաւորաց. զի ընկալցին զանձակական պարգեւսն ի Քրիստոսէ Այ մերմէ. օրհնեա մեզ միշտ սուրբ զԵրրորդութիւնն: Զամենա-տապարտեա վերընկալեալ ըզփառս յաջակողմանն Բանի ընդ նմանութեան կուսանոն. հայցեսցես ի Բանէ

ըզթողութի մեղուցելոցս. ի լսել ըզձայնն եթէ ե-
կայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք ըզկեան-
սըն յաւիտենից:

Հգ. Որ ի քրովբէական կառսըդ հանգչիս. այսօր ի-
ջեր յերկնից ի գաւառ առաքելոցըն ս՝բ Հոգի. օրհնեալ
ես Թագաւոր անմահ: Որ գընաս ի վերայ Թեւոց
հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հան-
գեար յառաքեալսըն ս՝բ Հոգի. օրհնեալ ես Թա-
գաւոր անմահ: Որ խնամես տեսչութեամբ զքո զա-
րարածս. այսօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո
ս՝բ Հոգի. օրհնեալ ես Թագաւոր անմահ:

Հն. Զհոգիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ
ի գաւառ անդրանկաց գրելոց ի յերկինս: Ընկալ
վասըն սոցա ըզբանաւոր պատարագս ի մէնջ. եւ
շնորհեա նոցա ըզթողութիւն գտանել յաւուրըն
յետնում: Հաշտեա ի ձեռըն սբ մարմնոյ և արեան
քո Տր. եւ պարգեւեա նոցա դասել յաջակողմեա-
նըն քո:

Մօ. Յանճառ փառաց խոնարհեցար ի մեր բը-
նութիւնս. Բանդ Ած եւ մարմնացար ի սրբոյ
կուսէն: Եւ ծնար ի սուրբ կուսէն անապական մար-
մնով ըզքեզ անդադար բարեբանեալ մեծացու-
ցանեմք: Այսօր զեկեալդ ի փրկութիւն ազգի
մարդկան. միաբանութեամբ ամենեքեան մեծա-
ցուցանեմք:

Խզ. Երանելին Ածասէր սբ ղր Հեղինէ. եկեալ
ի քաղաքն Երուսաղէմ. խնդրէր ըզփրկական
ծագումըն մեծի փայլմանն. եւ քարոզէր նոցա
զմորենին վառեալ որ ոչ այրէր. մեծացուցանե-

լով ըզծընեալըն ի կուսէն: Այս խոշտանգեալ ըզգանըս Հրէիցն. խոստովանէր Յուդա. եկեալ ի տեղին գողգոթայ հաւատով. եւ քարոզէր նոցա զդուռն ընդ որ եմուտ Բանն Աստուած. մեծացուցանելով ըզծընեալըն ի կուսէն: փառք Հօր: Այս համբարձեալ ըզձայնըն Յուդայի խընդրելով ի Տեառնէ ըզտենչալին ամենեցուն որ ըզխաչըն. եւ հաւատով գոչէր եկայք երկրպագեսցուք ածային սուրբ նըշանիս. մեծացուցանելով ըզծընեալըն ի կուսէն:

Այժմ և միշտ: Աղօթիւք սոցա եւ բարեխօսութեամբ պարգեւեա մեզ Քս մասն և բաժին ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

Ա.Կ

Յամենայն ժամ օրհնեմք ըզքեզ. որ մարդասէրդ ես կեցո ըզմեզ: Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք ըզՏէր. զի նա է փառաւորեալ յամենայն սրբոց իւրոց: Օրհնեալ է այն որ արժանի արար ըզմեզ հասանել ի մասըն ժառանգութեան սրբոցն ի լոյս:

Զօրութիւնք երկնայինք. եւ անմարմնոց զինուորութիւնք օրհնեն ըզքեզ ասելով սուրբ Աստուած: Եկեղեցիք արդարոց և ժողովք մարտիրոսաց գովեն ըզքեզ ասելով սուրբ Աստուած: Ազգ մարդկան կենդանեաց. սաղմոսիւք եւ օրհնութեամբ աղաղակեն ասելով սուրբ Աստուած:

Զինուորք Քո հեղմամբ արեան ձերով ըզկռապաշտութիւն բարձէք յաշխարհէ. եւ ի ճանապարհս արդարութեան դարձուցէք ըզմոլորեալս:

Ճշմարտութեան քարոզք եւ լուսաւորիչք տիեզերաց էք պարծանք եկեղեցւոյ. եւ մեզ հաւատացելոց: Համբերութեամբ ձերով ընկալայք ի ՔՍԷ ըզպսակս անապական. եւ դասաւորեցայք ի յերկինս ընդ անմարմնոցն դասս:

Յաղթօղ նահատակքն ՔՍԻ՝ որք քաջութեամբ մարտեան ընդ թշնամւոյն. եւ զբռնութիւն լուծին ըզտանջանաց. զի զանտանելի ըզվէրսն ի յանձն առին: Այս փառաց փարէր ըզնոքօք եւ հրեշտակք ի յերկինս ուրախանան. զի կարապետք եղեն տիեզերաց եւ լուացողք մեղաւորաց: Դասք անմարմնոցն աղաղակեն եւ ասեն. փութացարուք ըղհետ կոչմանն ՔՍԻ. եւ խընկաղգեացք վայելեցէք յաւիտենից ի յարքայութիւնն:

Պարծանք հաւատոյ սուրբ ծըղնաւորաց. որք ըզմարմինս իւրեանց ի վերայ քո պատարագեցին. եւ հեղմամբ արեանն իւրեանց նորոգեցին զաշխարհս: Դասաւորեալք ընդ անմարմնոց բազմութիւնսն. փայլեն ոպ զարեգակն ի մէջ աստեղաց. զի զհոգիս մարդկան լուսաւորեցին աւազանին լուսով:

Ի․Ծ․ Գ․Ր․ Այսօր ընդ երկնային զուարթունսն ժողովուրդք Հայաստանեայց. տօնելով ըզմեծապատիւ սուրբ հայրապետաց շնորհալից սրբոյն Գրիգորի. օրհնեցէք ըզՀայրն երկնաւոր: Այսօր որդիք Թորգոմայ ծնեալք աւազանաւն յորդիս Սիոնի. Ի յիշատակի հարցն սրբոց որդւոց մեծի լուսաւորչին. գովեցէք զՈրդին մեծին: Այսօր երկնաւոր քահանայութեան հաղորդ քահանայք սուրբ եկեղեցւոյ. ընդ քահանայապետս ածայրին օրհնօք

պատուեալս բարերանեցէք զՀոգւոյն ճշմարտի. եր-գելով ըզփառս ի բարձունս:

Գ. Ձ. ՄՐԳ. Որ առաքեցեր նախընթաց քում գալըստեանն սուրբ ըզմարգարէսն. աւետարանել տիեզերաց զի ջրումըն քո ի հայրական ծոցոյ ի փըրկութիւն հեթանոսաց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Որ խոնարհեցար յանպատում փառաց Որդի Աստուծոյ. եւ եկիր ի կատարումըն մարգարէիցըն նախաձայն քարոզութեանցն անճառ խորհրդով. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Որ լուծեր կենարար մահուամբ քո Տէր զերկունըս մահու. իջանելով ի դըժոխըս՝ վերածեր ընդ քեզ զհոգիս արդարոց մարգարէիցն ի լոյսն անըստուեր. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ:

Ն. Ձ. Ա. Ո. Ի մաքրագործ Հոգւոյն անօթ ընտրեալ եւ ձրինափայլ. թագաւորք երկրի իշխանք աշխարհի անպակաս գանձուց բաշխօղ Յակովբ Ալփեան Յուդա Յակովբեան. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Երեքսըրբեան միութեան խորհուրդ կամաց եւ հաշտարապետք փողոց հընչմունք բարբառք աւետեաց ընդ ամ երկիր սրբդ Շմաւոն եւ Մատաթիա. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Բանին կենաց կանուխ քարոզ եւ աւետարանիչ. երգ փըրկութեան հընչումն աշաւոր. ազգի մարդկան պարծանք սրբդ Մատթէոս. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Շ. Ա. Ր. Ա. ՏՈ. Աղաչեմք զքեզ Տէր բարեխօսութեամբ սըրբոց Ատոմանց. որք նահատակեցան ի

ճակատամարտ պատերազմի · յաղթող գտան ընդ-դէմ թշնամւոյն · բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ : Որք առին ըզսպառազինութիւն ըզզօրաւոր հաւատոյ սրտից իւրեանց · եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փրկութեան ըզնշան խաչին · սուսեր ընդ մէջ ածեալ ըզճշմարիտ բան Հոգւոյն · բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ : Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանեղ քում սրբոյ · եւ բուրեցին հոտ անուշութեան զողջակէզս իւրեանց · ի տեղւոջ հեղման արեան իւրեանց · բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ :

Հգ · Որ յերկնային զօրս անմարմնոցն նախ հեղեր առատապէս Հոգւոյդ ճշմարտի · զածային եւ զգերագոյն քո իմաստութիւն · լինել փառաբանիչ ն՛ր Երրորդութեանդ · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ : Որ զկերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեան խորհրդակցութեամբ · զարդարեցեր փրկմամբ շնորհաց քոց կենդանարար · եւ ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք եւ մարգարէիւք · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ : Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քում էանցին · մտեալ ի վերնատունն դրօքն փակելովք · շնորհելով ըստ առաջին փրկչմանն ըզքեզ մեծամանիցն · առաքելոցն սոցա առէք Հոգի սուրբ · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ :

Հն · Յորժամ յերկնից գայցէ փառօք ազդեցուի ձայնելով տիեզերաց ի դատաստան ահաւոր · յայնժամ

աւուր յահեղին մինչև Տեառն և ողորմեա զննջեցեալսն. և հանգո ընդ սուրբս քո: Յորժամ ճառագայթք ածութեանըդ փայլեն ի յարեւելից. և դըպըրունք հրաշիցըն բանին յայնժամ աւուր յահեղին մինչև Տեառն և ողորմեա զննջեցեալսն. և հանգո ընդ սուրբս քո: Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սրովբէագոչ փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնժամ աւուր յահեղին մինչև Տեառն և ողորմեա զննջեցեալսն. և հանգո ընդ սուրբս քո:

Ա՞Օ.. Որ նախախնամող իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սրբ եկեղեցւոյ. խորանացըն երկնային հիմունս հաստատութեան ըզգաստ արդարոց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ զօրհնութիւն նախաստեղծիցն աստուածազգիդ արուաց և իգաց. պայծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ և ի յԱննա. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ ըզխոստումն Աբրահամու նահապետին մեր ըստ հոգւոյ. քահանայական և թագաւորական զաւազանացըն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

ԽՁ. Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբն իւրով. խորտակեաց ըզթշնամին և նենգ ըզդաստակնիք. անուանեալ փայտըն կենաց ի փրկութիւն տիեզերաց: Սեր առեալ ցընծան երկինք և երկիր ուրախանայ. ընդ յայտնել սըրբոյ խաչին սեռակնաձեւ քառաթեւին. որ զաշխարհըս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք:

փառք Հօր։ Ընծայեալ Երուսաղէմ. բերկրեցան հաւատացեալք. նորահրաշ զարդարեցան քանզի ոսկի զյաղթող նշանն. որարանք ամենայն ի լուսոյն պայծառացան։

Այժմ և միշտ։ Արդ եկայք ժողովուրդք Այ եւ հաւատացեալք Քնի. ի ձեռն սրբոց մարտիրոսացն առաքեսցուք գոհութիւն փառք ի բարձունս Աստուծոյ։

ԲՁ

Օրհնեն զքեզ Ած զօրք ամ հրեշտակաց. արդարոց անձինք և հոգիք ամ սրբոց։ Գովեն զքեզ Քն մարտիրոսացն ժողովք. դասք մարգարէից և գունդք ամենայն սրբոց։ Բարեբանեն զքեզ որ Հօրդ որ միայնդ ես հզօր. եւ պահես զօրացեալ զյուսացեալս ի քեզ։

Տօն ծննդաւորացն այսօր. եկայք հաւատացեալք օրհնեցէք զԱծ յիշատակի սրբ վկայիցն։ Որք ընդ մահու խրեանց կանգնեցին յերկրի աշտարակ հզօր յոր ապաւինեալքս ամենեքեան. եկայք հաւատացեալք օրհնեցէք զԱծ յիշատակի սրբ վկայիցն։ Հեղմամբ արեան սոցա մաքրեցան ըզտեղերս յանօրէն կռապաշտութեանց. եւ խառնեաց ըզմարդիկ ընդ երկնային զօրութիւնսն. եկայք հաւատացեալք օրհնեցէք զԱծ ըզբնակեալն ի մէջ սրբոց։

Որ օրհնիս յանմարմնական զինուորութենէ. վերադարձեալք առ քեզ Տէր. աղօթիւք սրբոց մարտիրոսաց խնայեա ի ժողովուրդս քո միայն մարդասէր։ Զորս ընտրեցեր յամենայն ազգաց երկրէ լուսաւորել զոգիս մարդկան. աղօթիւք սրբոց մարտի-

րոսաց խնայեա՛ ի ժողովուրդըս քո՛ միայն մարդա-
սէր։ Որ զամս հայրական իշխանութեամբ պըսակել
ըզտարըս քո՛. աղօթի՛ւք սըրբո՛ց մարտիրոսաց փըր-
կեա՛ ըզմեզ ի հրոյն յաւիտենից միա՛յն մարդասէր։

Զքե՛զ Տէր օրհնեն զամըք սըրբո՛ց մարտիրոսաց.
քաղցըր ձայնի՛ւ հնչմամբ. քե՛զ երգեն. փա՛ռըք
քե՛զ փա՛ռըք քե՛զ Աստուած։ Որք քաջութեամբ
համբերեցի՛ն բըռնաւորա՛ցն ըսպառնալեաց. եւ
ընդ անմարմնոցըն դա՛սակցեալ քե՛զ երգեն. փա՛ռըք
քե՛զ փա՛ռըք քե՛զ Աստուած։

Բ.Ձ. Ա.Ն.Տ. Պարծանք եկեղեցւո՛յ եւ ուրախութի՛
հրեշտակաց. ո՛վ սուրբ հայր Անտոն. զաղաչանըս
մեր հանապազ մատո՛ սուրբ Երրորդութեա՛ն։ Որ ի
մարմնի կառուցեալ եւ զանմարմնոցըն բերելով ի
քեզ ըզվարս. ո՛վ սուրբ հայր Անտոն. զաղաչա-
նըս մեր հանապազ մատո՛ սուրբ Երրորդութեա՛ն։
Բաժա՛կ հոգեւորական լըցեալ ածայնին ուրախու-
թեամբըն. ո՛վ սուրբ հայր Անտոն. զաղաչանըս մեր
հանապազ մատո՛ սուրբ Երրորդութեա՛ն։

Գ.Ձ. Գ.Բ.Խ. Ով երջանիկ տէր սուրբ Գրիգոր սըրբու-
թեա՛ցըն պաշտօնեայ. եւ առաջնորդ բանաւոր հօտի։
Ընդ քե՛զ ունիմըք բարեխօս առ Յիսուս միածինն.
եւ աղաչօղ վասըն քո՛ ուխտաւորացս։ Կանխեա՛
խընդրե՛ա ըզթողութիւն յանցանաց. ի քէն աշա-
կերտելո՛ցս։

Ն.Ձ. Խ.Տ.Ճ. Յաւուրց վերջին ժամանակի շինեաց
իւր տուն եկեղեցի. զօրըն գըթած երկնաւորի ի-
մաստութի Բան և Որդի. եւ ըզմարմին իւր ի զեն-
լի զգենի արեանն ի խառնելի. ըստ մին հրաշից ներ-

գործողն տուք օրհնութիւն յամենայնի։ Մեր և զծնաւղս իւր առաքեաց ի խառնելոյն հրաւիրեաց. զքաղցեալս ի հաց մարմնոյն կոչեաց՝ զգինի արեանն եւ ծարաւեաց. յայս կոչմանէս ապստամբեաց՝ ազգ հիւսիսոյ Հայաստանեայց. այն որ ընդհրաշս այս ներգործեաց մեզ նորագոյն յայս հաստատեաց։ Հաւատարիմ և իմաստուն Գրիգորիոս անուն արթուն. նման խաչին մահուամբ Որդւոյն չարչարանօք իւր սուրբ մարմնոյն. զարգելս Հայոց կոչեաց ի նոյն զանս և հարուածս եւ խրատագոյն. միայն Բանին Հօր իմաստուն տուք օրհնութիւն զօրըք հրաքուն։

ՇԱՐ․ ԳՐԻ․ Որ լուսով անճառին Բանին զմարդարենցն զեկեղեցի եւ զխաւարն անգիտութեան հալածեցեր յոգւոց մարդկան. ով Տէր սր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանին Հօր։ Որ զհամագոյ ընութեան միասնական Երրորդութեանն. յայտնեցեր եկեղեցւոյ խոստովանել միութեան. ով Տէր սր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանին Հօր։ Որ ընդփրկական տնօրէնութեան մարդացելոյն վասն մեր. ուսուցեր մեզ յերկնից նոր միաւորութեան ընքանչելի. ով Տէր սր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանին Հօր։

ՀԳ․․ Սարսափելի հողմոյ նման ահեղագոչ սաստիկ հնչմամբ. երեւեցար ի վերնատանն՝ Հոգիդ գաւառն երկնաստան. որք առ ի քէն մկրտեցան որպէս զոսկի՝ հրով մաքրեցան. մաքրեալ ի մէնջ ընդմէջ մեղաց եւ ընդգեցոյ ընդլոյս փառաց։ Նկեր

յերկիր անստուածաբար դատել զաշխարհս իշխանաբար. ընդ արդարութեան և ընդ մեղաց՝ և ընդ չարին դատաստանաց. բացեր ըզգանձդ անհիւթական՝ պարգևս ետուր որդւոց մարդկան. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց և ըզգեցո ըզլոյս փառաց: Սէրն ի սիրոյ զուէրդ առաքեաց յինքըն զանդամս իւր քև յօդեաց. զեկեղեցի իւր զոր շինեաց եօթըն սեամբ քո հաստատեաց. տընտես ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք քո զարդարեաց. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց և ըզգեցո ըզլոյս փառաց:

Հն. Հրեշտակային ձայնիւն օրհնեսցուք զամենասուրբ զերրորդութիւնըն. փառաւորելով ըզՀայր. որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն: Երգեցէք Տն երգ նոր եկեղեցիք սըրբեցելոց. Քրիստոսի երկրպագելով. որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն: Սրբասաց ձայնիւն օրհնեսցուք. հոգևորական հնչմամբ գովեսցուք. սուրբ զՀոգին փառաւորելով. որ վերահանգոյց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն:

Մծ. Սուրբ և Ածածին Մարիամ ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան. մայր և աղախին մեծացուցանեմք: Անկէզ մորենի և տաճար ընդհանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութիւն. մայր և աղախին մեծացուցանեմք: Խորհուրդ կենաց և մայր կենդանութեան և առագաստ հրափայլ ծագմամբ. մայր և աղախին մեծացուցանեմք:

ԽԶ. Այսօր խնդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթայ ի ձեռն աստուածասէր դշխոյին. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս: Այսօր ընծայէ Գողգոթայ ըզծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն երանելւոյն Յուդայի. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս: Փառք Հօր: Այսօր ի ձեռըն փրկական սբ խաչին կենդանագործի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր. իսկ մեք Քսի հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սբ նշանիս:

Այժմ եւ միշտ: Այսօր ցընծայ վերինն Երուսաղէմ. ընդունելով ըզսուրբ յարկսըն լուսեղէն. ուրախանան եւ հրեշտակք ասելով. փառք քեզ փառք քեզ Աստուած:

ԻԿ

Շնորհեա մեզ Քսի թագաւոր՝ կատարել ի հաճոյս քո զյիշատակ սրբոցն եւ օրհնել զանուն քո սուրբ: Որք հեղման քո սուրբ արեան. եւ չարչարանաց քոց եղեն հաղորդ սբ վկայքն. եւ լուսաւորիչք աշխարհի: Որոց միշտ աղաչեմք. եւ փառաւորեմք անդադար երգով օրհնութեամբ սուրբ զերրորդութիւնդ համագոյ:

Ախարքան ամենեքեան զսբ ծն աստուծոյ. օրհնեցէք ձայնիւ սրբասացութեան ըզպսակիչըն սրբոց: Զթագաւորըն փառաց Քրիստոս զէակից Հօր եւ Հոգւոյն. գովեցէք ձայնիւ սրբասացութեան ըզպսակիչըն սրբոց: Զբաշխողըն պարգեւաց սբ Հո-

գլ՛ն ճշմարտութե՛ բարեբանեցէք ձայնիւ սրբասա-ցութե՛ ընդ պսակակիցն սրբոց։

Այսօր տօնեմք զտօն սրբոց վկայիցն. որ ա-րեա՛մբ նահատակեալ փոխեցան ի գո՛րս վերին զը-ւարթնոցն։ Արիաբար մարտեան ընդդէմ խրոխտ թագաւորաց. զյաղթողակա՛ն ընկալեալ զպը-սակ. փոխեցան ի գո՛րս վերին զուարթնոցն։ Եղեն օթեւանք նը Երրորդութե՛ն. զանճառակա՛ն ընկալեալ զկեանսն. եւ բարեխօսեն առ Տէր վս անձանց մերոց։

Ով երանեալ նը վկայք. որք արժանի եղէ՛ք մարմնով եւ արեամբ դասակից լինել զուարթնոց երկնից։ Քաղաքավարեալք ի մարմնի եւ հետե-ւողք Որդւոյն Աստուծո՛յ. մարմնով եւ արեամբ դասակից լինել զուարթնոց երկնից։ Լուսաւո-րեալք ի Հօրէ. պայծառացեալք ի Հոգւոյն սըր-բո՛յ. բարեխօսեցէք առ Տէր վս անձանց մերոց։

Յիշեա զմեզ Տէր փրկիչ մեր. յորժամ գաս թագաւորութեամբըդ քո. կեցո զմեզ բարեխօ-սութեամբ սրց քոց։ Շնորհեա մեզ թողութիւն երկնաւոր թագաւոր. ընկալ զաղաչանս մեր կեցո զմեզ բարեխօսութեամբ սրց քոց։ Յօրհնու-թիւն ի նոր օրհնեցուք զքեզ Քրիստոս թա-գաւոր. որ վասն մեր մարմնացար կեցո զմեզ բա-րեխօսութեամբ սրց քոց։

ԲՈՀ. ՀՐՀ. Որ յանէից ստեղծեր զպաշտօ-նեայս քո ի հուր կիզելոյ. հուրդ անեղական. ընդ նոսին օրհնեմք զքեզ եւ մեք հողեղէնքս։ Որ բանիւ գոյացուցեր զիննեակ դասս հրեղինաց.

Բանդ ի նկըղըանէ․ ընդ նոսին գովեմք ըզքեզ եւ մեք հօղեղէնքս․ Որ արարեր յոգիս ի մանալի ըզհրեշտակըս քո Հոգի Աստուծոյ․ ընդ նոսին բարեբանեմք ըզքեզ եւ մեք հօղեղէնքս։

Գ.Ը. Յ.Վ.Ն. Ապաշխարութեամբ ապրեցաւ քաղաքըն Նինուէացւոց․ ի լըսել ձայնի մարգարէին եղեւ թողութիւն մեղաց։ Ի հրամս բանին առ թագաւորն․ պատուէր տայր ժողովըրդեանն․ լըսել ձայնի մարգարէին․ եղեւ թողութիւն մեղաց։ Ի բերանոց մանկանց տըղայոց․ զարքայն երկնից յօգնութիւն կոչէին․ ի լըսել ձայնի մարգարէին եղեւ թողութիւն մեղաց։

Ն.Ը. Ն.Ա.Բ. Որ ըզլոյս աննման շնորհաց՝ աւձայրն քո գիտութեանդ․ ծագեցեր յաշխարհս Հայաստանեայց․ գըթած Հայր երկնաւոր՝ գըթա ի մեղուցեալըս։ Որ ընտրեցեր յորովայնէ զմաքրեալն հոգւով սուրբըն Ներսէս․ ժառանգել ըզվերնական հայրենիսն․ հովուել արդարութեամբ եւ իրաւամբք։ Որ օրինօք ճըշմարտութեան զարդարեաց զեկեղեցի․ կարգաւորեալ բարեպաշտութեամբ․ սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս։

Ը.Ա.Բ. Ա.Ի.Ն. Ըզյիշատակ վըկայիցն սըրբոյն մեծին Աինասայ․ Երմոգինեայ Գըրաբոսի յաւուր եկայք տօնեսցուք։ Ով սուրբ վըկայ Քրիստոսի քաղցրաբարբառըդ Աինաս․ արագահաս օգնական յաւուր ըզքեզ խընդրողացս։ Ի տաճարի հանգըստեան սըրբոյն մեծին Աինասայ․ Եկայք հաւատացեալք յաւուր երկըրպագեսցուք։

Հգ․ Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգմանն․ քանզի նորոգօղն էից Հոգին էջ ի նոր վերնատանն․ որով նորոգեցան տաճարք առաքելոցն։ Այսօր հողանիւթեայ բնութիւն ցնծայ ընդ Հօր հաշտութեան․ քանզի որ երբեմն զՀոգին ի մարդկանէ մարմին եղելոց․ դարձեալ վերստին ըզնոյն պարգեւէ։ Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զգալուստ նոր Հոգւոյն․ որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս եւ գերապայծառս․ երգեն ընդ սրովբէիցն զերեքսրբեանն։

Հն․ Գալոց է միածինն փողով եւ փառօք Հօր եւ ըզհողեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ։ Լուսաւոր են ճանապարհք արդարոց․ եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց ամպովք ընթանան։ Ի վերին Երուսաղէմ թռչին ամպովք ընդ առաջ Տեառն յօդս․ եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին։

Սօ․ Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս․ որ ցուցեր ի մեզ ըզցօղն երկնային․ զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս․ քանզի պըտուղըն կենաց ի քէն տուաւ մեզ․ զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս․ որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր․ զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։

ԽԶ․ Ճառագայթ փառաց Հօր Որդի միածին․ որ ըզլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ․

այսօր ի թագաւորէն փառաց փայլեցեր։ Որ աննիւթ սրովբէից անհաս ի վեր քան ըզգան. ծածուկ կերպիւ պարածածկեալ ըզլոյսդ անըստուերն. այսօր ի թագաւորէն փառաց փայլեցեր։ Փառք Հօր։ Որ հրեղինացն անմերձենալի հուր աստուածութիւնդ. ի հողեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի թագաւորէն փառաց փայլեցեր։

Այժմ և միշտ։ ԶՀայր և զՈրդի և ըզՍուրբ Հոգիդ փառաւորեմք ասելով. երեքսրբեան տէրութիդ կեցո ըզմեզ բարեխօսութեամբ սրբոց քոց։

Գ·Զ

Ցարխական մահ սրբոց քոց Քս՝ ընդ երկնային զօրսն այսօր երգակցեալ տօնեմք. որք հանդիսացան ընդդէմ բռնութեն թշնամւոյն։ Անմարմինք ի մարմնի ցուցան գեր ի վերոյ սրոյ և հրոյ տանջանաց. զպատուական մահս իւրեանց ընծայեցին քեզ Քրիստոս բանաւոր զենմունք։ Նահատակեալք ճգնութեամբ ի փորձ զանազան տանջանաց. համբերութեամբ վանեալ ըզթշնամւոյն պատերազմ. փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն։

Սքանչելի ո՛ք հայրապետք չարչարեալք վասն Քն համբերեցէք. յաղթելով բռնաւորին դասակից եղէք վերնոցն։ Ընդնեալ նահատակեցայք յերկրի. յաղթօղք ի պատերազմի. կոխելով ըզսատանայ դասակից եղէք վերնոցն։ Լուսաւորեալք երկնային լուսովն պայծառացեալք ի Հոգւոյն սրբոյ. բարեխօսեցէք առ Տէր վս անձանց մերոց։

Սքանչելի որ՝ հայրապետք. որք կամաւ չարչարեցայք յանձն առէք զհամբերութի. յարժանաւոր

աղօթըս ձեր յիշեսջիք զանձինս մեր։ Փոխանակ արեանըն Տեառն ձեր արբէանդ հեղման յերկրի. եւ հոտ անուշ բուրեալ յաշխարհ. յարժանաւոր աղօթըս ձեր յիշեսջիք զանձինս մեր։ Փոխանակ անցաւորիս ձեզ անանցն է պատրաստեալ պըսակ փառաց ի Քնէ. յարժանաւոր աղօթըս ձեր յիշեսջիք զանձինս մեր։

Ընդ վերին զուարթունսն բարեբանեմք ըզքեզ Տէր. սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ։ Յիշատակաւ սրբոց մարտիրոսաց գոհաբանեմք ըզքեզ Տէր. սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ։ Երեքսրբեան ձայնիւն աղաղակեմք առ քեզ Տէր. սուրբ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ։

Զանյաղթելի ճըգնաւորացն ըզյիշատակս. Եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք։ Քանզի մարմին ունելով զանձն նման արհամարհեցին. նըմանօղք լինելով չարչարանաց փրկչին. Եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք։

ԻԸ. ՑԿԻ. Հայրապետ սուրբ եւ անբիծ և ընտրեալ յորովայնէ. սքանչելագործ վըկայ եւ պարծանք ազգի մարդկան. առ Քս բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս։ Հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. լուսաւորիչ տիեզերաց սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցւոյ. առ Քս բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս։ Հաստատութիւն հաւատոյ պըսակ ի գլուխ եկեղեցւոյ. պայծառ քարոզ տիեզերաց եւ պարծանք ազգի մարդկան. առ Քս բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս։ Ի տաճարի քում սըր-

րութեն երկրպագեմք քո նշխարաց. փառաւո-րեմք զօր յիշատակի կատարման քո հանգստեան. առ Քս բարեխօսեա վասն մեր քո տօնողացս:

Գ.Ր.. ՀԱՅՐ. Ժողովեալ սուրբ հայրապետքն հրաւիրմամբ Հոգւոյն սրբոյ. վերնատին հաստատեցին զառաքելական քարոզութիւն. ի վերայ վիմի հաւատոյ հիման որ եկեղեցւոյ: Որք զընու Հոգւոյն նոյ աթոռ արար պատերազմեալք. վանեցին զընդդիմամարտ մոլութիւ հերձուածողացն. որպէս հովիւք քաջք հներքեցին ըղգայլսն ի հօտէ գառանց: Եւ ըղհաւատոյս ճշմարտութես սուրբ Երրորդութեան. ընդ հանուր քարոզեցին յեկեղեցիս ուղղափառաց. հաւատով ի Հայր եւ յՈրդի եւ յամենասուրբ Հոգի:

ԵՐ.. ԱՈ.. Զառաջնորդս և զվարդապետս եկեղեցւոյ քում սրբոյ. յիշատակաւ պատուեմք այսօր բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Դուք մշակք անպարտելի կաթողիկէ եկեղեցւոյ. եւ պսակ պարծանաց հաւատացելոց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Հազարապետք ածային խորհրդոցն. եւ բացօղք դրան արքայութե երկնից. բարեխօսեցէք առ Տէր վն անձանց մերոց:

ԲԱՐ. ԱՍԿ. Որք արժանաւորեցայք կոչել յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի. եւ Լուսաւորչին հրով մաքրութեն ոսկի փորձեալ գտայք ի բնակարանս հրեշտակաց. ով երանելի սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզմեղս ի մեղաց մերոց: Որք անհրաժեշտ դաւանութեամբ քա-

բողոքեցէք ընդ Քս ի դրունս թագուհւոյն. մկրտելով ընդ քաջ նահատակսն. ի յակունս Եփրատայ ի ծաղկազարդ վայելչութեան. ով երանելի սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել զմեզ ի մեղաց մերոց: Որք անպարտելի մնացէք ի հրապուրանաց որդւոյ թագաւորին. չարչարեալք վասն Քրիստոսի. արտաքոյ խողխողեցայք պատարագ ընդունելի. ով երանելի սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Հգ. Արեգակն արդարութեան Քս ծագեալ յաշխարհս հալածեաց զխաւարն անգիտութեան. եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. վասն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ: Որ փոխանակ ծոցածին բանին որ ել յերկինս. առաքեցաւ առաքելոցն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց եւ հրաշալեաւ զընտրեալ դասս առաքելոցն. վն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ: Այսօր տրտմականն եւ գիշերայինն լուծան երկունք ծննդեան նախամօրն. քանզի զծնեալսն մարմնով ի մահ եւ յապականութիւն. վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ:

Հն. Յահաւոր քո գալստեանն յորժամ գաս

Տո՛ւր ի յերկնից Ածային քո զօրութեդ. եւ նշան որ խաչին պայծառանայ ի մէջ երկրի։ Դողդողին տարերք երկրի ի ձայնէ հնչման փողոյն. որ գոչէ զկենդանութի. ասէ արիք եկայք Տէր կենդանեաց եւ մեռելոց։ Շնորհեա մեզ Տէր ողորմութի ի ծագել սրբոյ խաչին. որով եղեւ մեզ փրկութի. զի նովաւ ելցուք ընդ առաջ Ածորդւոյդ որ ի յերկնից։

Մ. օ. Զանճառելի լուսոյ Մայր եւ զբնակարան անսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զանհաս տնօրէնութեն Մայր. եւ զանձնաւոր տաճար ԱՅ Բանին օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զբոլորից փրկութեան Մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. բնաւ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

ԽԶ. Գ. եղ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ շնորհողի. զյաղթական զպատուական զաստուածընկալ սուրբ նշանս մատուցանեմք զօրհներգութիւն միշտ ի բարձունս։ Այո կամաւ քո Քրիստոս եւ թեւօք ամենազօր սուրբ Հոգւոյն. եւ զամուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի. ի լուսոյն վերագոյն բնակեալ ի նմա։ փառք Քեզ։ Եկայք ժողովուրդք երկիր պագեսցուք աստուածային սուրբ նշանիս. համբարձէք միաբան զձեռս ձեր ի սրբութի. եւ բնակեալքն ի սմա միշտ փառաւորեսցուք։

Այժմ և միշտ։ Գանձի անսպառ եղեն հրեշտակաց եւ մարդկան. զյաղթութեն պսակին ի Քէն ընկալան. եւ բարեխօսեն առ Տէր վս անձանց մերոց։

Գ.Կ

Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ուրախանան ի վերայ ճըգնութեան սրբոյն: Այսօր ճըգնազգեաց սրբոց դասքն ի յերկրի պըսակեցան երկնային ածեղէն փառօքն: Այսօր անմարմնոց զինուորութիւնքըն մեծապէս տօնեն. քանզի երկրաւոր զինուորաց բազմութիւնքն ընծայեցան ի խորանն սրբութեան երկնից:

Սուրբ Աստուած Հայր անսկիզբն որ փառաւորեալ ես ի մէջ սրբոց քոց. օրհնեմք զքեզ ընդ զուարթունս երկնից: Սուրբ Աստուած Որդի միածին. որ պահեցեր յաղթող ըզճըգնութիւն սրբոց քոց. գովեմք զքեզ ընդ զուարթունս երկնից: Սուրբ Աստուած Հոգի ճըշմարիտ. որ նորոգեցեր ըզտեղերըս ճըշմարիտ երկրպագութեամբ որ Երրորդութեանդ. բարեբանեմք զքեզ անլռելի ձայնիւ:

Ճըգնաւորական աշխատութեանց համբերեցին որ մարտիրոսքն. եւ ըզպատերազմըն չարին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Որք հեղին զարիւնս իւրեանց փոխանակ արեան քո Տր. եւ ըզբըռնութիւն հրապուրողին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Եւ ըզպըսակս անապական ընկալան ի քէն Քս. եւ դասաւորեցան ի դաս վերին զուարթնոցն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ:

Նահատակք յաղթողք քաջք ի մարտի. երանելի սուրբ մարտիրոսք որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք: Հրեշտակացըն դասքըն տօնակից

են մեզ. եւ ջոկք ամթառօցըն զուարճացեալ բեր-կրին. ընդ վարդագոյն ձեր հեղմամբ արեան. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք: Անթառամ պըսակըն ձեզ աւանդեալ մընայ. քան զակունս պատուականս գերագոյն հրաշիւք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք:

Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ բեր-կրին ընդ առաջ Տեառն Քսի որդւոյն Աստուծոյ: Զայն ի յերկնից վըկայեալ ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգորդք երկնից խորանացն:

ԲՈՂ. ԱՏ. Առաքեա ի մեզ Տէր ըզողորմութիւն գըթու-թեան քո զողորմութիւն. բարեխօսութեամբ սըրբոյ նախավըկային քո եւ որոց ընդ նմա: Որում զերկնայինըն բացեր ըզդուռն. ցուցանելով զանձառելի խոր-հուրդ. սորին աղաչանօք խընայեա ի մեզ Տէր եւ որոց ընդ նմա: Որ աղօթանուէր հայցմամբ ըզթողու-թիւն խընդրելով ի քէն. անօրէն ըսպանողաց իւ-րոց. սորին աղաչանօք խընայեա ի մեզ Տէր եւ ո-րոց ընդ նմա:

ԳՈՂ. ԳՐԻ. Խոստովանող Քսի ճըշմարիտ վըկայ. բազմաչարչար նահատակ տէր Գրիգորիոս. զպակա-սութի չարչարանաց Տեառն ի մարմնի քում կրե-ցեր. որով ցընծայ եկեղեցի ի փառս որդւոց Արմէ-նի: Ունօղ հոգեւոր անձանման սիրով. գործովա-գութ հայր պարծանաց տէր Գրիգորիոս. չարչա-րանօք մարմնոյդ մաքրեցեր ըզմեզ ի յաղտոյ մե-ղաց. եւ ծընար որդիս լուսափայլ բանիւդ: Կեր-պարան փառաց միածնի Որդւոյն. մարտիրոս յաղ-թօղ տէր Գրիգորիոս. բեւեռս երկաթիս ընկա-

լան երկնագնացց թմբք ոտից քոց սուրբ. զի ըն-ւեռեսցես ընդմեզ յերկիւղն Աստուծոյ:

ՆԸ. ՆԵՐ. Այսօր ցնծայ եկեղեցի ընդ անմար-մնոցն դասակցեալ տօնելով զյիշատակս քո տէր սուրբ Ներսէս. որ ի Հոգւոյն սրբոյ աղա-ւնակերպ իջմամբ վկայեցար. բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց: Քահանայապետ ընտրեալ արժանապէս շնորհօք Հոգւոյն բաշ-խեցեր զփրկական մարմին և զարիւնն Տեառն յորում հրեղէն սիւն ի յերկնից իջեալ. բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց: Արդ աղաչեմք ըզքեզ լուսաւորիչ հոգւոց մերոց նմա-նեալ Մովսէսի նախամարգարէին մեծի. լուսա-փայլեալ դիմօք ածահրաշ տեսլեամբ. բարեխօ-սեա առ Քրիստոս վն անձանց մերոց:

ՇԱՐ. ԳՈՎ. Այսօր ընդ անմարմնոցն դասս պա-րեն. որք ի Սեբաստիա ճգնութեամբ պատերազմեալք յաղթեցին թշնամւոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Ըզմոլութիւն անօրէն բռնաւորին. ածային սիրութբ վանեալ. տարեալ ժուժկալութբ համբերեցին տանջանացն. բարե-խօսութբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Ի ձմե-րեն պատուականն մարտիրոսն ի դժընդակ օդոյն. տագնապէին ի լճին սառուցելոյ անտանելի տան-ջանացն. զաչս ի յերկինս համբարձեալ եւ զօգ-նութիւն ի քէն խնդրէին. որ յոյս և ապաւէնդ ես քոց սրբոց խնայեա ի մեզ:

ՀԳ. Զանսկզբնաբար բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ զՀոգին ճշմարիտ. որ հրնչմամբ

ձայնի էջ ի վերնատունն այսօր նման սաստիկ հողմոյ. զոր փառաւորեմք հոգեւոր երգով: Զհամագոյակիցդ Հօր եւ Որդւոյ զբաշխօղդ շնորհաց. որ ի հրեղէն լեզուս բաժանեալ զբանն ընտրութեան լեզուաց շնորհեաց սուրբ առաքելոցն. զոր փառաւորեմք հոգեւոր երգով: Զաղբերն իմաստութեան ըզկատարեալն անձնաւորութեամբ. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս. զոր փառաւորեմք հոգեւոր երգով:

Հն. Փառք քեզ Տէր փառաւորեալ յաւիտեան. որ կենարար ես մարմնոց. եւ գոյացուցիչ հոգւոց մեր նորոգելոց: Որ բարձրացար ի խաչին վասն Ադամայ նորոգման. եւ իջանելով քո ի դըժոխս աւար առներ ըզգերեալսն: Ըզգինս արեան քո յիշեա կենագործօղ աշխարհի. եւ հանգըստեան արժանաւորեա Երուսաղէմին վերին:

Մծ. Զաստուածածինն և զմիշտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց: Խնդա եւ ուրախ լեր ամենօրհնեալ մայր. քանզի որ ի քէն ծնաւ միշտ Աստուած ի փրկութիւն անձանց մերոց: Զանձ անապական գտար սուրբ Ածածին բարեխօսեա վասն Այ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

ԽՉ. Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք թագաւորին վասն հաստատեցեալ ժողովրդեան: Որ եկն ի լուսաւորել զընտրեալ նր զընկենեցի. եւ պսակեաց նր խաչին. Նմա ըզփառս երգեսցուք: Փառք Հօր: Այսօր

Եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուցցուք փառք եւ պատիւ յաւիտեան։

Այժմ և միշտ։ Լցէք զտեղի անկելոցն՝ ապըստամբողական թշնամւոյն. որ ի յերկնից վայր անկեալ։

ԴԶ

Այսօր յիշատակ սրբոցն. և փայլեն նշխարք սոցա ի մէջ եկեղեցւոյ. աղաչեսցուք զՏէր սոցա խնայել ի մեզ։ Զեղմամբ արեան սոցա մեծարի մայր սոցա իմանալի Սիոն. աղաչեսցուք զՏէր սոցա խնայել ի մեզ։ Տաճար են սուրբ Հոգւոյն կենդանի ոսկերքս սոցա հիւանդաց բժիշկ. աղաչեսցուք զՏէր սոցա խնայել ի մեզ։

Այսօր ծննդեամբ սրբոցն զուարճանայ եկեղեցի ուրախութեամբ մեծաւ. հանդերձ որդւովք իւրովք տօնելով զյիշատակ սոցա։ Սոքա են զեղ կենաց պարգեւեալ մեզ ի Քնէ ի բժշկութիւն պատուական որ արեամբն իւրեանց։ Իշխանութիւն ունին ի Հոգւոյն Սբյ առաջնորդել մեզ յԵրուսաղէմն վերին. ի քաղաքն կենդանեաց ի մեծն Սիոն։

Որք զառ ի Քրիստոս զչարչարանս յանձն առեալ համբերեցէք. ով աստուածասէր հայրապետք. եւ արժանի եղէք զերկնայինն առնուլ պսակ։ Որք փորձեցայք շիջանելոյ հրով ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւն. համարձակութիւն ունիք բարեխօսել առ Տէր վս անձանց մերոց։ Որք զհամբերութեամբն վանեցէք զկռապաշտութիւն ով ածասէր հայրապետք. հայ-

ստատութիւն ի Քնէ հայցեցէք անդադար նոր եկեղեցւոյ։

Յարութիւն է այսօր հրեշտակաց և մարդկան. զի զխորտակեցեալ ըզթշնամին մանեալ խորտակեցին սուրբ վկայքն. և եղեն յաղթօղք ի պատերազմի։ Անձամբ և արեամբ մարտեան ընդդէմ զինու. վիրաւորեալք ի մարմնի վիրաւորեցին ի մահ ըզբելիար. և տանջանօքն պարծանք յաւիտենականն։ Նշանաւորեալք ի հոգեղէն զուարթնոց. և բարեբանեալք ի դասուց մարմնաւորաց սուրբ վկայքն. անեղին աջովն պսակեալ եղեն։

Յիշատակ է այսօր քաջ նահատակաց Քնի սրբոց վկայիցն. Եկայք ժողովուրդք ցնծութեամբ տօնեսցուք։ Զանեղի տեսօղք ի տանջանս և յաղթօղք ի մարտի և պսակեալք ի Քէ. Եկայք ժողովուրդք ցնծութեամբ տօնեսցուք։

ԻԳ. ՁԻԳ. Որ ի հրեղէն զօրաց երկնից փառաբանիս Աստուած. որով զերկնային անմահական ածային ըզշնորհս հեղեր յորդիս Աստուծոյ. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած։ Նորոգելով հոգեղինացս անհիւթականքն ի ձեռն մարմնոյ. որք և ծանուցին մարգարէիցն ըզխորհուրդ քո գալըստեանդ բազմապատիկ տեսլեամբք օրինակելով. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած։ Ընծայելի տնօրէնութեանդ քո աւետարանք առաքեցան Գաբրիէլ և Միքայէլ. անմարմնական դասուքն իւրեանց յերկիր սպասաւորելով. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած։

Գ.Ր.* ՄՐԳ.* Որ զյառաջագոյն ընտրեալսն առաքեցեր յաշխարհս սուրբ զմարգարէսն. աւետարանել ըզքո գալուստդ անթարգմանելի անճառելութեամբ. սոքօք շնորհեա հաստատութիւն եկեղեցւոյ քում սրբոյ։ Որոց նոյնուր իշխանութեամբ բացատրեցեր զխորհուրդն քո յաշխարհս. առաքելոց կատարեցեր զմարգարէիցն ըղձանութիւն. սոքօք շնորհեա հաստատութիւն եկեղեցւոյ քում սրբոյ։ Որ ըզմահ գերի առնելով մահուամբ ըզմահ կոխեցեր. արձակելով զերամս մարգարէիցըն յանըստուէր քո հանգիստդ. սոքօք շնորհեա հաստատութիւն եկեղեցւոյ քում սրբոյ։

ՆՐ.* ՌՈ.* Նմանեալք հաւատոյ այսօր փայլեն Հայր սուրբ ի քո որ եկեղեցւոջ. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա։ Բարեխօսութեամբ պետրոսի և պօղոսի քո սուրբ առաքելոցն. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա։ Լուսաւորեալք ի սոցա դպրութենէս փառաւորեմք որ զերրորդութիւնդ. երկոքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա։

ՏՂՄ.* ԽԳՆ.* Որ հրաւիրեցեր զյառաջագոյն ընտրեալսն ճշմարտեան աշխարհի. ի հարսանիսն մնայականն. կոչելով յուրախութիւն ընդ բազմելոցն յառագաստին զուարճացուցողացն. աղաչանօք սոցա կեցո՝ ըզմեզ փառաց թագաւոր։ Որ յաթոռս քերովբէականս վերանստեալ հանգչէիր Որդի Աստուծոյ. հանգեար խոնարհութեամբ բանիւ ի գիրկս յորդւոյ Ադամայ. աղաչանօք սոցա կեցո՝ ըզմեզ փառաց թագաւոր։ Որ ըղ-

բաժակ անմահութեան սիրոյ քո արբեալ երանելին Իգնատիոս. որպէս ցորեան աստուածային գազանաց մանրեալ ժանեօք հաց մի գտաւ Աստուծոյ. աղաչանօք սորա կեցո ըզմեզ՝ փառաց Թագաւոր։

Ձգ.. Նաւքելոյ առաւելոյ. իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրաղինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։ Նոյնե-Թական առաւելի. անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զանհասն և զգ-միասնագամ զալուստն. զոր քարոզեցին համագոյական։ Օրհնութիւն ի բարձունս. եղողին ի Հօրէ և յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն. և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

Զն. փառք քեզ Հայր. որ կենարարդ ես մարմնոց և գոյացուցիչ հոգւոց. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։ Մարդասիրէ Հօր Որդի. որ պատկերակից եղեր հողեղինացս և խաչեցար. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։ Ամենազօր մի Հոգի որ անդորրիչ ես նեղելոց և մխիթարիչ հոգւոց. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։

Ասօ.. Ծագումն հրաշալի որ անյայտ էր ի մեզ. և Բանին հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ և ի մարմնի բնակեցար. անմենաս պահելով զպարարանս ամենայն։ Ծագումն

հրաշագործ որ ի կուսէն ծագեցար. ծնընդ-եամբդ զարարածս ամենայն. երկինք ցնծային և երկիրս ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ: Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի. գերագոյն և հրաշալի եւ բաշխօղ բարութեանց. աղբեւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ աստուածային Բանին:

ԽԶ. Քրիստոս Աստուած մեր շնորհեա մեզ ընդ Պետրոսի եւ ընդ որդւոցն Զեբեդեայ. արժանաւորել քում ածային տեսլեանդ: Համբարձցես ըզմեզ Տէր առաւել քան ըզգզգալի զԹաբօրական ըզլեառն. յերկնաւորս եւ յիմանալի խորանս փառաց քոց: Վասն որոյ եւ մեք ըղձականելիս մեր յարմարեսցուք քեզ հոգեւորական տաղաւար. ուր միայնոյ մարդասէր եւ փրկիչ:

Այժմ և միշտ: Լուսաւորեալք ի յերկրի. պայծառացեալք ի յերկինս. եւ զուարթացեալք ընդ հրեշտակս. եկայք ժողովուրդք ցնծութեամբ տօնեսցուք:

Գ·Կ

Ի յիշատակս վկայից քոց Քրիստոս պարգեւեա մեզ օրհնել ըզքեզ արժանապէս: Կամաւ մատուցին զանձինս իւրեանց քեզ պատարագ արեամբն իւրեանց. և այն ունէին պսակիլ ի քէն Տէր: Սոցա աղօթիւք փրկիչ խնայեա ի սուրբ եկեղեցի քո. զոր ըստացար պատուական արեամբն քո սուրբ:

Այսօր յիշատակ սրբոց քոց. որք տանջանաց

անօրինացըն համբերեցին . և դասակից եղեն վերին զուարթնոցն : Այսօր եւ հրեշտակք ուրախանան ընդ կամաւոր չարչարանըս ծրգնաւորացն . որք յաղթեցին անօրէն բռնաւորացն : Սուրբ ես թագաւոր յաւիտենից որ նստիս ի վեր չորեքկերպեան կենդանեաց . և ի սրբոց քոց փառաւորանիս :

Փառք քեզ Հայր Երկնաւոր որ նստիս ի Քրովբէս . եւ բարեբանիս ի դասուց Սերովբէից : Ըզքեզ գովեմք թագաւոր փառաց Քս . համաձայնեալ ընդ սրբս քո յեկեղեցիս արդարոց : Սրբեա զանձինս մեր եւ տաճարացո սուրբ Երրորդութեանդ . կենդանարար սուրբ Հոգի :

Պարծեցին սուրբքըն փառօք եւ ցնծայցեն ի հանդիստս իւրեանց քանզի ընդ հուր եւ ընդ սուր անցուցին զմարմինս իւրեանց : Սուրբ զարիւնս իւրեանց հեղին չարչարանացըն համբերեցին . եւ զսպառնալիս բռնաւորաց անարգեցին յաշխարհի : Որդ եկայք հաւատացեալք կատարեսցուք ըզյիշատակ սոցա քանզի սոքա են մեզ բարեխօսս յարքայութեանն Աստուծոյ :

Աջ Տեառն ի վերայ սրբոց իւրոց եւ փառք իւր հանգուցեալ է յոսկերըս սոցա . եւ հոգիք սոցա դասաւորեալ ընդ հրեշտակս ի յերկինս : Բանակք հրեշտակաց Տն շուրջ են զնոքօք . եւ երգակից են միմեանց յօրհնութիւնս Աստուծոյ . եւ հայցեն միաբան զխաղաղութիւն ամենայն աշխարհի :

ԻԸ . ՀԻԸ . Այսօր ուրախացեալ որ եկեղեցի

Քսի . տօնէ խնդութեամբ զտօն վերինն Ե-
րուսաղէմի . սրբասաց ձայնիւ փառաւորելով
ըզՔրիստոս : Այսօր համաձայնեալ որդիք Սի-
ոնի երկրայնոյ տօնիւ զուարճանան որդւոց ան-
դրանկաց վերին Սիոնի . սրբասաց ձայնիւ
փառաւորելով ըզՔրիստոս : Այսօր դասք անմար-
մնոց երգս առեալ պարեն ընդ մարդկան զերգըս
հոգեւորս յանմահ փեսային յառագաստ . սըր-
բասաց ձայնիւ փառաւորելով ըզՔրիստոս :

Գ.Ձ. ԱՐԳ. Այսօր ցնծայ զուարճացեալ եկե-
ղեցի հեթանոսաց . տօնելով զյիշատակ մեծի
նահապետին եւ հօրըն հաւատոց Աբրահամու . օրհ-
նեցէք մանկունք Սիովնի զաշայրըն լուսոյ անլը-
ռելի : Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալ մարգարէ-
իւքն առ Աստուած . տօնեա ցնծութեամբ ըզտօն հօ-
րուացն Իսրայէլին առաջնոյ . գովելով ըզգլուխ
անկեան երկուց որմոց յարմարութեան : Այսօր
ի գլուխըս լերանց տուն Աստուծոյ հաստատեալ.
որ եւ յաւէտ առողիս յամպոց Հոգւոյն ածարուղի
առատահոս անձրեւօք . բարեբանեա զաղբերըն
կենաց զարբուցանօղն ծարաւեաց :

Ն.Ձ. ԱՌ. Այսօր երկնայնոցըն վայր իջեալ
տօնեն ընդ հողեղէնս . զյիշատակ նը առաքե-
լոցն Քսի որք դասեցին ըզմարդիկ ընդ հրեշտակս
փառաւորելով նը զերրորդութիւնըն համագոյ :
Այսօր պայծառակերպ ներեալ վերնոցն որդիք նոր
Սիովնի . ի յիշատակի լեզուացն հրեղինաց . որովք
եղեն ըզգեցեալք ըզՔրիստոս . փառաւորելով
նը զերրորդութիւնըն համագոյ : Այսօր քա-

Հանեայք և պաշտօնեայք սուրբ եկեղեցւոյ տօնախմբեն զյիշատակ լուսոյն ծագողաց. որով մաքրեալք օծութեամբ սուրբ Հոգւոյն. փառաւորելով զերրորդութիւնն համագոյ:

ՇԱՐ. ՀԱՑԻ. Աստուածային հաւատոյ հարցըն սրբոց դաւանութեամբ. ծաղկեցաւ քեւ ընդ համայն լոյս Հայաստանեայց սուրբ Արիստակէս. անդադար բարեխօսեա վն անձանց մերոց: Բանաւոր հօտի Քի ընտրեալ հովիւ թէ քաջ. ի Հօրէն լուսոյ բղխեալ շնորհիւ բարի տէր Վրթանէս. անդադար բարեխօսեա վն անձանց մերոց: Պսակեալդ ի վկայս Հօրըն մեծի համաձայն նմին քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերն տէր սուրբ Յուսիկ. անդադար բարեխօսեա վն անձանց մերոց: Պաշտօնակցեալ անմարմնոցն մաքուր կուսութեամբ. ճշմարիտ քահանայապետ վկայ Քրիստոսի սուրբ Գրիգորիս. անդադար բարեխօսեա վն անձանց մերոց: Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ. յանդիմանելով ըզթագաւորըն կատարեցար վն անուանըն Տեառն սուրբ Դանիէլ. անդադար բարեխօսեա վն անձանց մերոց:

ՀԳ. Ի հոյլապաշար ամբոխէն անհաւատահօրդ-վտանգ. կենդանարար սր Հոգի. օրհնեալ ես լոյս ճշմարիտ: Այսօր ի սր վերնատանն եկեալ Ած ճշմարիտ. հրաշագործեաց զառաքեալսն ի լոյս փառաց քոց Հոգի: Հրձուածական խնդութեամբ առաքելոցըն լցեալ. փառաւորելով երգէին. օրհնեալ ես լոյս գերագոյն:

Հն․ Որ ի Հօրէ առաքեցար մարդասէր կարող փրկիչ․ եւ ըզմեղուցեալ ըզմարդըն բըժըշկեցեր․ ողորմեա Տէր հրաժարելոյս․ զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Որ ի խաչին բեւեռեցար մարդասէր կարող փրկիչ․ եւ ըզցօղ անապական արեանըդ ցօղեցեր տիեզերաց․ ողորմեա Տէր հրաժարելոյս․ զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Որ ըզդըժոխս աւերեցեր եւ ըզգերեալսն փրկեցեր․ եւ զարգելեալսըն վերածեր ի յոյս կենացըն յաւիտենից․ ողորմեա Տէր հրաժարելոյս․ զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։

Մ՞Օ․․ Աստուածածին սուրբ Կոյս ամենօրհնեալ Մարիամ․ որ օրհնեալդ ես ի կանանս․ զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ Անապական տաճար եւ առանցարատ լուսոյ․ որ ի քեզ փեսայացեալ Բանըն կենաց բնակեցաւ․ զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ Հուրըն կենդանի որ ի մորենին վառեցաւ․ զոր անվնաս յարգանդի քում կրեցեր եւ ծընար Աստուած եւ մարդ․ զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։

Խչ․ Խաչի քո Քս երկրպագեմ արարածք ամենայն․ որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ․ սատանայի նեղիչ մեզ պահապան յաղթող․ ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա բարձրացար բարձրօղդ անիծից․ որ փառաւորեալդ ես ընդ Հօր․ ժողովել ըզցրուեալըսն կենսաբեր փայտիւն․ ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Փառք Հօր։ Այժմ եւ յա-

սաւորեցան արարածք ամենայն. ամա՞ սպասէին արգելեալքն ի մեղսասէր բանտին որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին:

Այժմ և միշտ: Բազում համարձակութիւն է առ Տէր բարեխօսութեամբ սոցա. և թողութիւն է մե- ղաց մերոց. որք կատարեն ըզյիշատակս սոցա:

## Հ Ա Ր Ց Վ.
## Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ա Ց

ՀԱՐՑ ԱՋ:

ՕՐՀՆԵՑ ամբ և ուղիղ դատաւոր ի մէջ սրբոց քոց բարեբանիս. հայրըն մերոց Աստուած օրհնեալ ես յաւիտեան: Աղքեղ որ ի հնոցն իջեր ապաւէն. խոնարհեալ ի գունդըս մարտիրոսաց գովիս. հայրըն մերոց Աստուած օրհնեալ ես յաւիտեան: Աղքեղ որ աչաւոր թագաւոր յաւիտենից. այսօր ընդ դասս վկայից քոց բարեբանեալ. հայրըն մերոց Աստուած օրհնեալ ես յաւիտեան:

Գ. Աշտեր օրհնեցէք. բարձր արարէք զնա յաւիտեան: փառք Հօր: Անբաւելին երկնից և հրեղինաց ի հողեղինաց համեցաւ ընտրել իւր զենաւորս. բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Աստի և մեք հաւատացեալքըս Քրիստոսի Աստուծոյ. ընդ նոսին խնդրելով ըզթողութիւն մեղաց մերոց. բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱՋ:

Յանձառ փառաց խոնարհեցար ի մեր ըզնութիւնըս. Բանդ Աստուած և մարմնացար ի սրբոյ կուսէն:

փառք Հօր։ Եւ ծնար ի սուրբ կուսէն անապական մարմնով ըզքեզ անդադար բարեբանելով մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Այսօր զեկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան. միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք։

Ողորմեա Ա․Զ։

Ժողովեալքս ի յիշատակ սրբոց քոց Քրիստոս աղաչեմք ըզքեզ. սոցա բարեխօսութեամբ ողորմեա։ փառք Հօր։ Երկրպագեմք առաջի բեմի քո Քրիստոս. ընկալ զքո գթութեամբդ զաղաչանս մեր. սոցա բարեխօսութեամբ ողորմեա։ Այժմ և միշտ։ Զօրս հոգւով և մարմնով որպէս զանմարմինն. անարատ ի գալուստ քո պահեսցես մարդասէր փրկիչ. սոցա բարեխօսութեամբ ողորմեա։

Տէր յերկնից Ա․Զ։

Ա․ Ժողովեալքս ի յիշատակ սրբոց մարտիրոսացն. միաբանութեամբ երգելով. օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին։ փառք Հօր։ Քանզի հեղմամբ արեան սոցա պարտեցաւ թշնամին. եւ մեծարեալ պարծի Սիոն երգելով. օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին։ Այժմ և միշտ։ Կամակցելոցն ընդ զօրս վերին զուարթնոցն. յիշատակաւ բերկրեալ ի սրբութիւն սոցա երգեսցուք. օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին։

Բ․ Որք ըզհանդէս նահատակութեան առ բռնաւորսն ցուցին. եւ յաղթեցին հաւատով Երրեակ լուսոյն եղեն մեզ առիթ. աղաչանօք սոցա կեցո ըզմեզ։ փառք Հօր։ Որք ըզխաւար կռապաշտութիւնն

վանեալ հերքեցին. եւ կանգնեցին մեզ նշան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Այժմ եւ միշտ: Ի՛ հրաշափառ ծննդ-նութի պատերազմեալք ի յերկրի. վերհամբարձեալք երկնայնոց դասուցն եղեն երգակից. աղաչանօք սոցա կեցո զմեզ:

Գ. Որք զանձինս իւրեանց քեզ Տէր ընծայեցին. եւ Որդւոյ քում Քսի եղեն խաչակից. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Փառք Հօր: Որք զմարմինս իւրեանց քեզ տաճար մաքրեցին. եւ Հոգւոյդ սրբոյ եղեն օթեվան. աղաչանօք սոցա կեցո զմեզ: Այժմ եւ միշտ: Որք ըզկեանս իւրեանց քեզ փոխանակեցին. եւ երկնից արքայութեան եղեն ժառանգորդ. աղաչանօք սոցա կեցո զմեզ:

Դ. Պատուական վկայից զինուորութեցն դասքն. համաձայնեալ ընդ երկնայինն զօրսն երգեն աւելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս: Փառք Հօր: Կարծրագոյն տանջանօք լուծին ըզկապ մարմնոյ. եւ բացարձակ փայլմամբ հոգւոյն երգեն աւելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս: Այժմ եւ միշտ: Համաձայնեալ ընդ նոսին արժանաւոր սիրով. ի տաճարի ծննդաւորացն երգեմք աւելով. սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս:

Ե. Առաքինասէր վարուք հաճոյացան որ վկայքն. եւ ընտրեցան կամաւոր մահուամբն իւրեանց. եւ հրաւիրեցան ի կոչումն արքայութեանն երկնից: Փառք Հօր: Որք մատնեցին զանձինս իւրեանց ի փորձ սրոյ եւ հրոյ. եւ հեղմամբ արեանն իւ-

րեանց եղեն վկայք Քնի. եւ հրաւիրեցան ի կոչումն արքայութեանն երկնից: Այժմ և միշտ: Աղօթիւք սոցա եւ բարեխօսութեամբ պարգեւեա մեզ Քս մասն և բաժին ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

Ա. ՀԱՐՑ ԱԿ:

Սուրբ Աստուած արարիչ յաւիտենից. որ նըստիս ի Քերովբէս խնայեա յարարածս քո. Աստուած հարցըն մերոց: Սուրբ Աստուած Թագաւորըդ մեր Քրիստոս որ իջեր ի Հօրէ. և մարմնացար ի սրբոյ Կուսէն. Աստուած հարցըն մերոց: Սուրբ Աստուած. որ աղբիւրդ ես անըսպառ. լըցուցեր ըզմարգարէսն և զառաքեալսն առատանել ըզքեզ. Աստուած հարցըն մերոց:

Գ. Հայր անըսկիզբն. որ խնամես զքո զարարածս. գործըք քո ըզքեզ օրհնեն և առաւել բարձրացուցանեն զահաւոր անուն քո սուրբ: փառք Հօր: Որդիդ միածին. էակից Հօր և Հոգւոյ. գործըք քո ըզքեզ օրհնեն եւ առաւել բարձրացուցանեն զահաւոր անուն քո սուրբ: Այժմ և միշտ: Հոգիդ ճըշմարիտ. փառակից Հօր եւ Որդւոյ. գործըք քո ըզքեզ օրհնեն և առաւել բարձրացուցանեն զահաւոր անուն քո սուրբ:

Մեծացուսցէ ԱԿ:

Որպէս լեր Ածածին տաճար անխախտելի. ըզքեզ մեծացուցանեմք: փառք Հօր: Յըղացար անարատաբար. եւ զԱծ վայելչապէս ծընար. որպէս լեր Ածածին տաճար անխախտելի. ըզքեզ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Նորգէ մարգա-

րէն սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ եւ գովուն երկնային. ուրախ լեր Աստուածածին տաճար անխախտելի. զքեզ մեծացուցանեմք:

Սաղմոս Ա.Կ:

Խնդրեմք ի քէն բարերար. ողորմեա անձանց մերոց: Վասն սրբոց քոց մարտիրոսաց Տէր ընկալ զաղաչանս մեր: փառք Հօր: Որ գթածդ ես յամենայնի. Տէր կեցո զանձինս մեր: Այժմ և միշտ: Սուրբ ես Տէր զօրութեանց բնակեալդ ի լոյս յանմատոյց. ճգնութեամբ սրբոց քոց լուր Տէր եւ ողորմեա:

Տէր յերկնից Ա.Կ:

Յամենայն ժամ օրհնեմք զքեզ. որ մարդասէրդ ես կեցո զմեզ: փառք Հօր: Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք զՏէր. զի նա է փառաւորեալ յամենայն սրբոց իւրոց: Այժմ և միշտ: Օրհնեալ է այն որ արժանի արար զմեզ հասանել ի մայրն ժառանգութեան սրբոցն ի լոյս:

Բ. ՀԱՐՑ Ա.Կ:

Որ բարձրեալդ ես և ի սուրբս հանգուցեալ. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Որ ըզսփռելիս քո զերիս մանկունս անապականս պահեցեր ի հրոյն. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Որ ցուցեր զզօրութիւն Աստուածութեանդ քո չար և անօրէն թագաւորին. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան: փառք Հօր: Որք մատնեցին զանձինս իւրեանց տանջանաց. եւ դասակից եղեն վերին

զբուարթնոցն ընդ նոսին զՏր օրհնեցէք և բա՛րձրացուցէ՛ք ընդ յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Ընդ կամաւոր չարչարանըս սրբոց վկայիցն. քահանայք ժողովրդեան օրհնեցէք զանմահ թագաւորն ընդ Տն. և բարձր արարէ՛ք ընդ յաւիտեանս։

Մեծացուսցէ Ա Կ։

Անարատ տաճար բնակարան անբաւ Բանին Այ. Մարիամ որ Կուսդ ես. զքեզ և ըզծընեալն ի քէն մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Յարգանդի կրեցեր որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ըզԲանն եւ ծընար մարմնով. զքեզ և ըզծընեալն ի քէն մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Աղ խընդրեմք ի քէն անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց. առ Որդին քո միածին փըրկել ըզմեզ ի փորձանաց և յամ վըտանգից մերոց։

Ողորմեա Ա Կ։

Զյիշատակ սրբոց մարտիրոսացն. այսօր տօնէ եկեղեցի հրճուակելով ըզծրգնութի սոցա Հայր երկնաւոր. աղօթիւք սոցա ողորմեա։ Փառք Հօր։ Համբերողք և պայծառ առաքինութի քարոզեցին ըզքեզ տիեզերաց. քանզի իջեր ի Հօրէ և մարմնացար ի սրբոյ Կուսէն Որդի Ադ միածին. աղօթիւք սոցա ողորմեա։ Այժմ և միշտ։ Անուշահոտ բուրմամբըդ քո լցին ըզտիեզերս կենսաբեր աւետեօք. եւ ընդ վերին զուարթութի սըն համաձայնեալ բարեբանեն ըզքեզ Հոգիդ ճըշմարիտ. աղօթիւք սոցա ողորմեա։

Տէր յերկնից Ա Կ։

Ա. Օրհնութիւք երկնայինք. եւ անմարմնոց զի-

նուորութիւք օրհնեն ըզքեզ ասելով սուրբ Աստուած։ փառք Հօր։ Եկեղեցիք արդարոց և ժողովք մարտիրոսաց գովեն ըզքեզ ասելով սուրբ Աստուած։ Այժմ և միշտ։ Ազգ մարդկան կենդանեաց. սաղմոսիւք և օրհնութեամբ աղաղակեն ասելով սուրբ Աստուած։

Բ. Ճըգնաւորք Քսի՝ հեղմամբ արեան ձերով զկռապաշտութիւն բարձէք յաշխարհէ. և ի ճանապարհս արդարութեան դարձուցէք զմոլորեալս։ փառք Հօր։ Ճշմարտութեան քարոզք և լուսաւորիչք տիեզերաց էք պարծանք եկեղեցւոյ. և յոյս հաւատացելոց։ Այժմ և միշտ։ Համբերութեամբ ձերով ընկալայք ի Քսէ զպսակս անապական. և դասաւորեցայք ի յերկինս ընդ անմարմնոցն դասս։

Գ. Յաղթող նահատակքդ Քսի՝ որք քաջութեամբ մարտեան ընդ թշնամւոյն. և զբռնութի լուծին զտանջանաց. զի զանտանելի զվէրսն ի յանձն առին։ փառք Հօր։ Լոյս փառաց փառէր ըզնոքօք և հրեշտակք ի յերկինս ուրախանան. զի կարապետք եղեն տիեզերաց և լուացօղք մեղաւորաց։ Այժմ և միշտ։ Դասք անմարմնոցն աղաղակեն և ասեն. փութացարուք ընդհետ կոչմանցն Քսի. և խընկազգեաց վայելեցէք յաւիտենից ի յարքայութեանն։

Դ. Պարծանք հաւատոյ սուրբ ճգնաւորաց. որք ըզմարմինս իւրեանց ի վերայ քո պատարագեցին. և հեղմամբ արեանն իւրեանց նորոգեցին զաշխարհս։ փառք Հօր։ Դասաւորեալք ընդ անմարմնոց բազ-

մութենոյն. փայլեն ոպ զարեգակն ի մէջ աս-
տեղաց. զի զՀոգիս մարդկան լուսաւորեցին առա-
զանեն լուսով։ Այժմ և միշտ։ Արդ եկայք ժո-
ղովուրդք Այ և Հաւատացեալք ·Քսի· ի ձեռն
սրբոց մարտիրոսացն առաքեսցուք գոՀութի
փառք ի բարձունս Աստուծոյ։

## Ա. ՃԱՇՑ ԻԶ։

Անոխակալ և բարեգութ մեծ ցրեր զուխտս
քո. մի մերժեր ըզմեզ յողորմութենէ քումմէ
Տէր Աստուած Հարցըն մերոց։ Նախաստեղծին այցող
փրկիչ փրկեած զմեզ յարժանաՀաս նեղչաց
մերոց վասն ընտրելոց քոց սրբոց. Տէր Աստուած Հար-
ցըն մերոց։ Առաւել փառաւորեալ ի տաճարի
սրբոց քոց վկայից. մի անտես առներ զաղա-
նեալքս ի քէն. Տէր Աստուած Հարցըն մերոց։

Գ. ԶՏէր օրՀնեցէք և բարձր արարէք ըզնա յա-
ւիտեան։ Փառք Հօր։ Ընդ ապրեցելոցն ի Հնոցին
երգակցելով գոչեսցուք. օրՀնեցէք ամենայն գոր-
ծըք զՏէր. և բարձր արարէք ըզնա յաւիտեան։
Այժմ և միշտ։ Ի վկայարանս սրբոց քոց ըն-
թացուք անսելով. արժանաւորեա և ըզմեզ Հա-
սանել ·Քս· մասին ժառանգութեան սրբոցն ի լոյս.
և առաւել բարձրասցի անուն քո ամենայն յա-
ւիտեան։

## ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԻԶ։

Սուրբ և Աստուածածին Մարիամ ցանկալի կուսից
և պարծանք ազգի մարդկան. մեք և արդ խին
մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Անկէզ մորենի և
տաճար ընդՀանուր լուսոյն. անարատ և անխախ-

տեղի կուսութիւն. մայր և անաղա՜խն մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Խորհուրդ կենաց ես. մայր կենդանութեան և առագաստ հրափայլ ծննդեանն. մայր և անաղա՜խն մեծացուցանեմք։

Ողորմ— ԻԶ։

Հեղմամբ արեան սրբոց վըկայիցն հաշտեաց ընդ մեզ Քրիստոս. և փրկեա՛ յամենայն փորձութենէ։ փառք Հօր։ Որք նահատակեցան վասն քո ի մահ. վերաւորեալք յաղթեցին թըշնամւոյն. սոցին աղաչանօք հաշտեաց ընդ մեզ Քրիստոս. և փրկեա՛ յամենայն փորձութենէ։ Այժմ և միշտ։ Որք միացան ի սէր ահաւոր քո Տէրութեանդ. և մատուցին զանձինս իւրեանց պատարագ քեզ և զենումն. սոցին աղաչանօք հաշտեաց ընդ մեզ Քրիստոս. և փրկեա՛ յամենայն փորձութենէ։

Տէր յերկնից ԻԶ։

Օրհնեն զքեզ Ած զօրք ամ հրեշտակա՜ց արդարոց անձինք և հոգիք ամ սրբոց։ փառք Հօր։ Գովեն զքեզ Քն մարտիրոսացն ժողո՜վք. դասք մարգարէից և գունդք ամ սրբոց։ Այժմ և միշտ։ Բարեբանեն զքեզ ո՛ր Հօր ի ո՛ր միայնդ ես հզօ՜ր. և պահես զօրացեալ զյուսացեալս ի քեզ։

Ի․ ՀԱՐՑ ԻԶ։

Ընդ սուրբս քո բարեբանեմք զքեզ Քրիստոս Աստուած հարցն մերոց։ Որք խաչակից քեզ գոլով յօժարութեամբ յանձն առին զդժընդակ տանջանս. ընդ նոսին օրհնեմք զքեզ Քրիստոս Աստուած հարցն մերոց։ Որք մեռան ընդ քեզ և

կենդանացման. եւ թագաւորեալք վայելեսցեն քո փառս. ընդ նոսին կենդագործեալ ըզմեզ Քրիստոս Աստուած հարցըն մերոց:

գ. ԸզՏէր օրհնեցէք. գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք Հօր: Որ սըրբոցն է բնակարան եւ ի նըսա հանգուցեալ. օրհնեցէք. գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ նըստի ընդ աջմէ Հօր եւ բարեբանի ի դասուց մարտիրոսաց. ամենեքեան միաբան. օրհնեցէք. գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Ր·Զ:

Զքեզ Հայր յաւէժ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն եւ աղաղակեն. Աստուած աստուածոց եւ Տէր տերանց փրկիչ գոլով: փառք Հօր: Աղաչեցեր զքո միածինդ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ անարատ ծընանիլ յորովայնէ անապականն բանալով ըզմեր նեղութիւնս. Աստուած աստուածոց եւ Տէր տերանց փրկիչ գոլով: Այժմ եւ միշտ: Շնորհք բարի յերուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տըղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ. Աստուած աստուածոց եւ Տէր տերանց փրկիչ գոլով:

ՈՂՈՐՄԵԱ Ր·Զ:

Աղբիւր կենաց Աստուած եւ բըղխումն ողորմութեան. խընդրեմք ի քէն ըզթողութիւն մեղաց. որ միայն ես մարդասէր: փառք Հօր: փափագանօք մերձենամք առ սուրբըս քո. հաշտեաց ընդ մեզ սոցին բարեխօսութեամբ. որ միայն ես մարդա-

սէր։ Այժմ և միշտ։ Որ ապաւէնդ ես կենաց և փրկութեան մերոյ. խաղաղացո ըզկեանըս մեր երկնային քո խաղաղութեամբդ. որ միայնդ ես մարդասէր։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԲՁ։

Ա. Տօն ծնընդաւորացն այսօր. եկայք հաւատացեալք օրհնեցէք զՏ՚ր ծ յիշատակի ն՚ր վկայիցն։ Փառք Հօր։ Որք ընդ մահու խուրեանց կանգնեցին յերկրի աշտարակ հզօր յոր ապաւինեալքս ամենեքեան. եկայք հաւատացեալք օրհնեցէք զՏ՚ր ծ յիշատակի ն՚ր վկայիցն։ Այժմ և միշտ։ Հեղումն արեան սոցա մանկըրեանց ըղտրեղերըս յանօրէն կռապաշտութեանց. և խառնեալ ընկալան ընդ երկնային զօրութիւնս. եկայք հաւատացեալք օրհնեցէք զՏ՚ր ծ ընդունակեալն ի մէջ սրբոց։

Բ. Որ օրհնիս յանմարմնական զինուորութեանց. վերագոչեմք առ քեզ Տէր. աղօթիւք սրբոց մարտիրոսաց խնայեա ի ժողովուրդս քո միայն մարդասէր։ Փառք Հօր։ Զօրս ընտրեցեր յամենայն ազգաց երկրէ լուսաւորել զոգիս մարդկան. աղօթիւք սրբոց մարտիրոսաց խնայեա ի ժողովուրդս քո միայն մարդասէր։ Այժմ և միշտ։ Որ դաս հայրական իշխանութեամբ պսակել ըզսուրբըս քո. աղօթիւք սրբոց մարտիրոսաց փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից միայն մարդասէր։

Գ. Զքեզ Տէր օրհնեն դասք սրբոց մարտիրոսաց. քաղցր ձայնիւ հնչմամբ քեզ երգեն. փառք քեզ փառք քեզ Աստուած։ Փառք Հօր։ Որք քաջութեամբ համբերեցին բռնաւորացն ըն-

պատանեկեաց. եւ ընդ անմարմնոցըն դասակցեալ քեզ երգեն. փառք քեզ փառք քեզ Աստուած: Այժմ և միշտ: Այսօր ցընծայ վերինն Երուսաղէմ. ընդունելով ըզսոսա յարկսըն լուսեղէն. ուրախանան և հրեշտակք ասելով. փառք քեզ փառք քեզ Աստուած:

Ա. ՀԱՐՑ ԲԿ:

Օրհնեմք ըզքեզ Տէր անըսկիզըն Հայր Աստուած հարցըն մերոց: Պաշտեմք ըզքեզ Տէր. միածին Որդի. Աստուած հարցըն մերոց: Բարեբանեմք ըզքեզ Տէր ճըշմարիտ սբ Հոգի. Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Զոր փառաւորեն զօրք երկնաւորաց զուարթնոցըն բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Որում երկրպագեն դասք հողեղինաց ընդ վեհայիցըն. բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ ԲԿ:

Ըզքեզ Ածածին որ վերօրհնեալ ի զօրաց հրեշտակաց. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: փառք Հօր: Ըզքեզ բնակ հրեղէն Աստուածութեան յիմանալի զօրացն երանեալ. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Ըզքեզ մայր Էմմանուէլի մարգարէին յառաջ գուշակեալ. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք:

Ողորմեա ԲԿ:

Եկեալ եմք ի տեղի վըկայից. և աղաչեմք ըզքեզ Աստուած ողորմեա: փառք Հօր: Զաղաչա-

նըս մեր մի՛ անտես առներ. բարեխօսութեամբ սըր-
բոց քոց և ողորմեա՛։ Այժմ և միշտ։ Փրկեա
զմեզ յարենէ. և ի նեղչաց մերոց. բարեխօսու-
թեամբ սըրբոց քոց և ողորմեա՛։

## ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԲԿ։

Շնորհեա՛ մեզ Քրիստոս թագաւո՛ր կատարե՛լ ի հաճոյս
քո՛ զյիշատակ սըրբոցն և օրհնե՛լ զանուն քո սուրբ։
Փառք Հօր։ Որք հեղման քո սուրբ արեան. և
չարչարանաց քոց եղեն հաղորդ նոր վկայքն. և
լուսաւորիչք աշխարհի։ Այժմ և միշտ։ Որոց
միշտ աղաչեմք. և փառաւորեմք անդադար երգով
օրհնութեամբ սուրբ զերրորդութիւնդ համագոյ։

## Ի․ ՀԱՐՑ ԲԿ։

Որք ի մարտի անօրինացըն յաղթեցին արիաբար
թշնամւոյն. աղաչանօք սոցա կեցո՛ ըզմեզ փրկիչ
Աստուած հարցըն մերոց։ Որք վասըն քո ըզկեանս
իւրեանց փոխանակեցին՝ սոսկալապէս համբերելով.
աղաչանօք սոցա կեցո՛ ըզմեզ փրկիչ Աստուած
հարցըն մերոց։ Աւստի և մեք հաւատացեալքըս
ժողովեալքս ի յիշատակ սըրբոցն հայցեմք. աղա-
չանօք սոցա կեցո՛ ըզմեզ փրկիչ Աստուած հարցըն մերոց։

Գ․ ԸզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզ-
նա յաւիտեան։ Փառք Հօր։ Ընդ երկնային
զինուորութիւնսն ըզթագաւորըն Քրիստոս գովե-
լով. օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւի-
տեան։ Այժմ և միշտ։ Ընդ դասս երանելի վը-
կայիցն ըզպըսակիչըն սըրբոց. բարեբանելով օր-
հնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուցէ Բ Կ:

Ամպդ լուսոյն Մարիամ ամենօրհնեալ. օրհնեալդ ի կանայս: փառք Հօր: Զլոյսն անստուեր յարգանդի կրեցեր. օրհնեալդ ի կանայս: Այժմ եւ միշտ: Մի դադարեր վասն մեր բարեխօսել. օրհնեալդ ի կանայս:

Ողորմեա Բ Կ:

Որք զանձինս իւրեանց ընծայեցին քեզ Քս հաղորդելով քո չարչարանաց բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ Աստուած: փառք Հօր: Որք մեծապէս կանգնեցին զխաչն հաւատոյ. եւ հեղմամբ արեանն իւրեանց նորոգեցին զաշխարհս. բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ Աստուած: Այժմ եւ միշտ: Որք տենչացան ընդհետ երանաւէտ ձայնին. եւ յաւիտենից կենացն արժանաւորք եղեն. բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ Աստուած:

Տէր յերկնից Բ Կ:

Ա. Միաբան ամենեքեան զԱծն աստուածոց. օրհնեցէք ձայնիւ սրբասացութեան ընդ պսակակիրսն սրբոց: փառք Հօր: Զթագաւորն փառաց Քրիստոս զէակից Հօր եւ Հոգւոյն. գովեցէք ձայնիւ սրբասացութեան ընդ պսակակիրսն սրբոց: Այժմ եւ միշտ: Զբաշխողն պարգեւաց որ զՀոգին ճշմարտութ բարեբանեցէք ձայնիւ սրբասացութեան ընդ պսակակիրսն սրբոց:

Բ. Այսօր տօնեմք զտօն սրբոց վկայից. որ արեամբ միահամակեալ փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն: փառք Հօր: Արիաբար մարտեան ընդ-

դէմ խրոխտ թագաւորաց. զյաղթողական ըն-
կալեալ ըզպըսակ. փոխեցան ի զօրս վերին զուարթ-
նոցն: Այժմ և միշտ: Եղեն օթեվանք որ Եր-
րորդութեն. զանձառական ընկալեալ ըզկեանս.
եւ բարեխօսեն առ Տէր վասն անձանց մերոց:

Գ. Ով երանեալ որ վկայք. որք արժանի եղէք.
մարմնով եւ արեամբ դասակից լինել զուարթնոց
երկնից: Փառք Հօր: Բազմաքաւարեալք ի մար-
մնի եւ հետեւօղք Որդւոյն Աստուծոյ. մարմնով
եւ արեամբ դասակից լինել զուարթնոց երկնից:
Այժմ և միշտ: Լուսաւորեալք ի Հօրէ. պայ-
ծառացեալք ի Հոգւոյն սրբոյ. բարեխօսեցէք
առ Տէր վասն անձանց մերոց:

Դ. Յիշեա զմեզ Տէր փրկիչ մեր. յորժամ գաս
թագաւորութեամբդ քո. կեցո զմեզ բարեխօ-
սութեամբ սրբոց քոց: Շնորհեա մեզ թողութիւն
երկնաւոր թագաւոր. ընկալ զաղաչանս մեր կեցո
զմեզ բարեխօսութեամբ սրբոց քոց: Փառք Հօր:
Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք զքեզ Քրիս-
տոս թագաւոր. որ վասն մեր մարմնացար կեցո
զմեզ բարեխօսութեամբ սրբոց քոց: Այժմ և միշտ:
Զհայր և զՈրդի և զսուրբ Հոգին փառաւորեմք
ասելով. Երեքսրբեան տէրութիւն կեցո զմեզ
բարեխօսութեամբ սրբոց քոց:

Ե. Որ պսակիչ ես ամենայն մարտիրոսաց. եւ
յաղթող պահեցեր զհաւատացեալսն ի քեզ Քրիս-
տոս փառաց թագաւոր. բարեխօսութեամբ սրբոց
մարտիրոսաց պարգեւեա զխաղաղութիւն երկրր-
պագուացս ամենասուրբ Երրորդութեանդ: Փառք

Հօր: Որք մատնեցին զանձինս իւրեանց տանջանաց եւ մահու. եւ հեղմամբ արեանն իւրեանց եղեն վկայք քո կամաւոր մահուանն. բարեխօսութեամբ նոցա մարտիրոսաց պարգեւեա զխաղաղութիւնդ երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ: Այժմ եւ միշտ: Որք ընդխաւար կռապաշտութեանցն վանեցին յաշխարհէ. եւ ենթադրեալ կործանեցին ըզբելիար պատերազմեալք ի հանդիսի. բարեխօսութեամբ նոցա մարտիրոսաց պարգեւեա զխաղաղութիւնդ երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ:

Ա. ՀԱՐՑ ԳՁ:

Որք ըզտանջանս յանօրինաց վասն քո յանձն առին այսօր նոր վկայքն. ըզճըգնութիւնըս սոցա բարեխօս քեզ ունիմք. կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որք եւ ըզմահըս դըժընդակըս բերելով արիաբար հանդիսացեալ ի մարտի. ըզճըգնութիւնըս սոցա բարեխօս քեզ ունիմք. կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Ի տաճարի ճըգնաւորաց հանդըստեան քաղցրաձայն հընչմամբ երգելով. ըզճըգնութիւնըս սոցա բարեխօս քեզ ունիմք. կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք. բարձր արարէք քաղցրաձայն հընչմամբ զԱստուած յաւիտեան: Փառք Հօր: Զյաղթանակ մարտ վկայիցըն պատուելով այսօր ընդ զօրս անմարմնոցն առաւել բարեբանելով քաղցրաձայն հնչմամբ զԱստուած յաւիտեան: Այժմ եւ միշտ: Քահանայք եւ պաշտօնեայք տօնելով այսօր ըզմեծ սոցա ըզճը-

գնութիւնս․ առաւելուլ բարեբանելով քաղցրաձայն հընչմամբ զԱստուած յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Զ։

Ածածին երկնայի՛ն գունդ ա՛ծային ձայնի՛ւն աւետարանէր հրեշտակն․ ուրախ լե՛ր բերկրեա՛լդ Տէր ընդ քե՛զ։ Փառք Հօր։ Ի քերովբէս բազմեա՛լ ընդ Հօր անմարմնական բնութե՛ն հաճեցաւ ի քում յորովայնի․ ուրախ լե՛ր բերկրեա՛լդ Տէր ընդ քե՛զ։ Այժմ և միշտ։ Որ բոցեղէն սրովբէիւք շուրջանփակեալ պահէր․ այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղէնի յայտնեցաւ․ ուրախ լե՛ր բերկրեա՛լդ Տէր ընդ քե՛զ։

Ողորմեա Գ.Զ։

Որք ի մարմնի զանմարմնականացըն բերելով արութի հաւատոյ․ պատերազմեցան ընդդէմ թշնամւոյն քո՛ ճշմարիտ վկայքն․ բարեխօսութեամբ սոցա Քրիստոս ողորմեա մեզ։ Փառք Հօր։ Որք ըզսպառնալիս բռնաւորացն մահուամբ սրոյ և հրոյ համբերութեամբ յանձն առին․ յաղթեցին առաքինաբար քո՛ ճշմարիտ վկայքն․ բարեխօսութեամբ սոցա Քրիստոս ողորմեա մեզ։ Այժմ եւ միշտ։ Որք ի զօրաց երկրաւորաց․ զինուորեալ քեզ երկնաւոր թագաւորիդ․ դասակարգեցան ընդ հրեշտակս ի յերկինս քո՛ ճշմարիտ վկայքն․ բարեխօսութեամբ սոցա Քրիստոս ողորմեա մեզ։

Տէր յերկնից Գ.Զ։

Օծրիական մահ սրբոց քոց Քս․ ընդ երկնային զօրսն այսօր երգակցեալ տօնեմք․ որք հանդի-

տացան ընդդէմ բռնութեան թշնամւոյն ։ Փառք Հօր ։ Անմարմինք ի մարմնի ցուցան գեր ի վերոյ սրոյ և հրոյ տանջանաց․ զպատուական մահս խոցեանց ընծայեցին քեզ Քրիստոս բանաւոր զենմունք ։ Այժմ եւ միշտ ։ Նահատակեալք ճգնութեամբ ի փորձ զանազան տանջանաց․ համբերութեամբ վանեալ զթշնամւոյն պատերազմ․ փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն ։

Բ․ ՀԱՐՑ Դ․Ձ ։

Որ զանչափ քո զբարերարութիւնդ շնորհեցեր քո արարածոց բարեգութ Աստուած․ զքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց ։ Որ ի ձեռն երանելի հայրապետացն բարձեր զխաւար կռապաշտութեան ազգի մարդկան․ զքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց ։ Այսօր եւ մանկունք որ եկեղեցւոյ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն երգարանեն բերկրական ձայնիւ․ զքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց ։ Գ․ Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան ։ Փառք Հօր ։ Որք անցուցին զմարմինս խոցեանց ընդ հուր եւ ընդ սուր․ եւ դասակից եղեն վերին զօրացն․ ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան ։ Այժմ եւ միշտ ։ Քահանայք եւ պաշտօնեայք համօրինակ ձայնիւն․ ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան ։

Մեծացուսցէ Դ․Ձ ։

Զանճառելի լուսոյ Մայր եւ ըզբնակարան անըսկըզբնակից Որդւոյն․ օրհնութեամբ մեծացուցա-

նեմք։ փառք Հօր եւ։ Զանհաս տնօրէնութեան Մայր. եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Զբոլորից փրկութեան Մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. ընդ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Գ.Զ։

Զանմարմնոցն ըղձաքրութիւնսըն մարմնական կրիւք. տարեալ ի յանձինս իւրեանց քաջ եւ յաղթօղ երանեալ սուրբ հայրապետք. որոց բարեխօսութեամբ ողորմեա մեզ Աստուած։ փառք Հօր։ Ընդհանրական եւ պայծառ առաքինութեամբ. հերքեցին զիշխանն անօրէն իւրեանց գործակցօք ճգնօղ հայրապետք. որոց բարեխօսութեամբ ողորմեա մեզ Աստուած։ Այժմ եւ միշտ։ Հրեշտակք երկնից փափագեն հանդիսի կատարման սոցա. որք ի մահուն իւրեանց կենդանացան. ելին ի կամարն երկնից. խառնեցան ի գունդս զուարթնոցն. որոց բարեխօսութեամբ ողորմեա մեզ Աստուած։

Տէր յերկնից Գ.Զ։

Ա. Երանելի դ՛ք հայրապետք չարչարեալք վասն Քո համբերեցիք. յաղթելով բռնաւորին դասակից եղէք վերնոցն։ փառք Հօր։ Որդնեալ նահատակեցայք յերկրի. յաղթօղք ի պատերազմի. կռուելով ընդսատանայի դասակից եղէք վերնոցն։ Այժմ եւ միշտ։ Լուսաւորեալք երկնային լուսոյն պայծառացեալք ի Հոգւոյն սրբոյ. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Բ․ Երանելի եք՝ հայրապետք․ որք կամաւ չարչարեցայք յանձն առէք զհամբերութի․ յարժանաւոր աղօթիւս ձեր յիշեսջիք զանձինս մեր։ Փառք Հօր։ Փոխանակ արեանըն Տն ձեր արիւնդ հեղաք յերկիր․ եւ հոտ անոյշ բուրեաց յաշխարհս․ յարժանաւոր աղօթիւս ձեր յիշեսջիք զանձինս մեր։ Այժմ եւ միշտ։ Փոխանակ անցաւորիս ձեզ անանցն է պատրաստեալ պսակ փառաց ի Քնէ․ յարժանաւոր աղօթիւս ձեր յիշեսջիք զանձինս մեր։

Գ․ Ընդ վերին զուարթունսըն բարեբանեմք զՔեզ Տէր․ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո զմեզ։ Փառք Հօր։ Յիշատակաւ սրբոց մարտիրոսաց գոհաբանեմք զՔեզ Տէր․ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո զմեզ։ Այժմ եւ միշտ։ Երեքսրբեան ձայնիւն աղաղակեմք առ Քեզ Տէր․ սուրբ սուրբ ես Տէր զօրութեանց կեցո զմեզ։

Դ․ Զանյաղթելի ճգնաւորացն զյիշատակս․ եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք։ Փառք Հօր։ Անզէն մարմին ունելով զտանջանս արհամարհեցին․ նմանողք լինելով չարչարանաց Փրկչին․ եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք։ Այժմ եւ միշտ։ Անզէն տեսարան եղեն հրեշտակաց եւ մարդկան․ զյաղթութեան պսակն ի Քնէ ընկալան․ եւ բարեխօսեն առ Տէր վս անձանց մերոց։

Ե․ Զպսակիչըն սրբոց եւ զհանգուցեալն ի քերովբէս․ անդադար ձայնիւ երգելով օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր։ Փառք Հօր։ Այսօր տօնէ եկեղեցի զյիշատակ սրբոց մարտիրոսացն․

ընդ որս եւ մեք ձայնիւ երգելով. օրհնեսցուք ըզՏէր յօրհնութիւն ի նոր: Այժմ և միշտ: Որ անթառամ փառօք պըսակէ ըզսուրբս իւր. եւ ի գաւիթս լուսեղէնըս վերացոյց. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր:

ՁԱՅՆ Գ.Կ:

Զինուորութիւնքդ հրեշտակաց օրհնեն ըզքեզ. իմանալի ձայնիւն ըզքեզ փառաւորեն Աստուած հարցըն մերոց: Իշխանութիւնք և պետութիւնք սերովբէք և քերովբէք փառաւորեն սուրբ զանունդ քո. Աստուած հարցըն մերոց: Ազգ մարդկան հողեղինաց գնդուց մարտիրոսաց երկրպագեն տէրութեդ քո. Աստուած հարցըն մերոց:

ԸզՏէր օրհնեցէք. բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Որ փառաբանեն ի բարձունս իմանալի զօրութիւնքըն. ժողովուրդք օրհնեցէք. բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Որում երկրպագեն գովելով դասք սըրբոց մարտիրոսացըն. քահանայք օրհնեցէք. բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Գ.Կ:

ԶԱստուածածին և զմիշտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց: Փառք Հօր: Խընդա եւ ուրախ լեր ամենօրհնեալ Մայր. քանզի որ ի քէն ծընաւ ըմեղ Աստուած ի փրկութիւն անձանց մերոց: Այժմ եւ միշտ: Գանձ անապական գըտար սուրբ Ածածին. բարեխօսեա փրկչի ԱՅ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

### Ողորմեա Գ.Կ:

Նայեա՛ ի մեզ և՛ ողորմեա մեզ Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն: Փառք Հօր: Որ Հայրդ ես որբոց, և՛ դատաւոր այրեաց Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն: Այժմ և միշտ: Որ պսակիչդ ես սրբոց, լուր և մեզ աղօթիւք սոցա Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն:

### Տէր յերկնից Գ.Կ:

Ա. Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ուրախանան ի վերայ ծնընդութեան սրբոցն: Փառք Հօր: Այսօր ծննդագեաց սրբոց դասքն ի յերկրի պսակեցան երկնային անեղէն փառօքն: Այժմ և միշտ: Այսօր անմարմնոց զինուորութիւնքն մեծապէս տօնեն, քանզի երկրաւոր զինուորաց բազմութիւնքն ընծայեցան ի խորան սրբութեան երկնից:

Բ. Սուրբ Ած Հայր անսկիզբն որ փառաւորեցար ես ի մէջ սրբոց քոց, օրհնեմք զքեզ ընդ զուարթունս երկնից: Փառք Հօր: Սուրբ Ած Որդի միածին, որ պահեցեր յաղթող զծնընդութիւն սրբոց քոց, գովեմք զքեզ ընդ զուարթունս երկնից: Այժմ և միշտ: Սուրբ Ած Հոգի ճշմարիտ, որ նորոգեցեր զտօնեզերբս ճշմարիտ երկրպագութեամբ ի Երրորդութեանդ, բարեբանեմք զքեզ անլռելի ձայնիւ:

Գ. Ճգնաւորական աշխատութեանց համբերեցին որ մարտիրոսքն, և զպատերազմն չարին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խը-

նայեա ի մեզ ։ Փառք Հօր ։ Որք հեղին զարեանս իւրեանց փոխանակ արեան քո Տր. և ըզբըռնութիւն հրապուրողին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ ։ Այժմ և միշտ ։ Նա ըզպըսակս անապական ընկալան ի քէն Քս. և դասաւորեցան ի դասս վերին զուարթնոցն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ ։

Դ. Նահատակք յաղթողք քաջք ի մարտի. երանելի սուրբ մարտիրոսք որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք ։ Փառք Հօր ։ Հրեշտակացըն դասքըն տօնակից են մեզ. և ջոկք աթոռոցըն զուարճացեալ բերկրին. ընդ վարդագոյն ձեր հեղուած արեան. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք ։ Այժմ և միշտ ։ Անթառամ պըսակըն ձեզ աւանդեալ մընայ. քան զականս պատուականս գերագոյն հրաշիւք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցէք ։

Ե. Այսօր մարտիրոսացդ դասքըն ցընծացեալ բերկրին ընդ անուշ Տեառն Քսի որդւոյն Աստուծոյ ։ Փառք Հօր ։ Ձայն ի յերկնից վըկայեալ ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգորդք երկնից խորանացն ։ Այժմ և միշտ ։ Ելցէք ըզտեղի անկելոցն ապըստամբողական թըշնամւոյն. որ ի յերկնից վայր անկեալ ։

Ա. ՀԱՐՑ Դ.Զ ։

Յուսացեալքն յանուն քո սուրբ պատերազմեալք յաղթեցին թըշնամւոյն. սոցին աղաչանօք խնայեա ի մեզ. Աստուած հարցըն մերոց ։ Որք

կամաւն իւրեանց անցին ընդ հուր եւ ընդ ջուր, Եւ դասակից եղեն վերին զուարթնոցն. որոց աղաչանօք խնայեա ի մեզ. Աստուած հարցն մերոց: Արդ խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց, աղաչանօք սրբոց վկայիցն խնայեա ի մեզ. Աստուած հարցն մերոց:

Գ.. Զգեցեալք ի վերնական զօրութենէ քումմէ պատերազմեալք յաղթեցին թշնամւոյն. և դասակցեալք վերին զօրացն օրհնեն զքեզ գովեն և փառաւորեն: Փառք Հօր: Եւ քաջութեամբ արիաբար ճգնեալ արհամարհելով զսուր տանջանս և զմահ. Եւ ձայնակցեալ երից մանկանցն օրհնեն զքեզ գովեն և փառաւորեն: Այժմ եւ միշտ: Ուստի եւ մեք հաւատացեալքս ի քեզ կատարեսցուք զյիշատակ սրբոց վկայիցն. և ընդ նոսին համաձայնեալք օրհնեմք զքեզ գովեմք և փառաւորեմք:

Մեծացուսցէ Դ.Զ:

Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ զանճառն Աստուած յարգանդի կրեցեր սրբուհի անարատ. եւ անճառապէս ծնար զվերանձգօղն երկնից. զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Որ էից լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկս. եւ արեգական արդարութեան եղեր արեւելք. զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Որք զբաժակ մահու ընդ քեզ արբին. եւ մկրտութեամբ արեան ընդ քեզ մկրտեցան.

սրբոց աղաչեմք ողորմեա: փառք Հօր: Որք և ընդ-խաչս իւրեանց բարձին ընկնել քո. և անձկնելք սիրով ընդ քեզ խաչակցեցան. սրբոց աղաչեմք ողորմեա: Այժմ և միշտ: Որք խնկապէս շիջու-ցին ըստորանկեալ փայլակն. և հրեշտակա-ցեալք ի դասս նորին վերակարգեցան. սրբոց ա-ղաչեմք ողորմեա:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Դ.Ձ:

Այսօր յիշատակ սրբոցն. և փայլեն նշխարք սոցա ի մէջ եկեղեցւոյ. աղաչեսցուք զՏէր սրբոց խնայեա ի մեզ: փառք Հօր: Հեղմամբ ա-րեան սոցա մեծարի մայր սոցա իմանալի Սիոն. աղաչեսցուք զՏէր սրբոց խնայեա ի մեզ: Այժմ և միշտ: Տաճար են սուրբ Հոգւոյն. կենդանի ոս-կերք սոցա հիւանդաց բժիշկ. աղաչեսցուք զՏէր սրբոց խնայեա ի մեզ:

Բ. ՀԱՐՑ Դ.Ձ:

Սուրբ ես Տէր զօրութեանց. որ յանմարմնական զօրացն գովիս սրբասաց ձայնիւ. ընդ քեզ օր-հնեմք Աստուած հարցն մերոց: Որ ետուր զօ-րութիւն մարդասէր քո ծննդաւորացն յաղթել չարին ընդդիմամարտութեան. ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց: Ընկալ այսօր զբարեխօ-սութիւն քաջ նահատակաց քո վկայիցն. ողոր-մելով տօնողացս զյիշատակ սոցա. ընդ քեզ օր-հնեմք Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս: փառք Հօր: Ընդ երկնային զօ-րացն միաձայնելով. զպսակիչն սրբոց բարե-

բանելով օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս : Այժմ եւ միշտ : Զամենակալն այսօր ի միջատակին քաջ եւ յաղթող սուրբ նահատակացն. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Դ.Զ :

Անարատ կոյս ծնօղին Մարիամ սրբուհի եւ մայր Քրիստոսի. յարգանդի տաճար զանտանելին ամենեցուն. օրհնութեամբ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Փառք Հօր : Զքեզ երկնային դուռն զոր տեսանէ Եզեկիէլ. եւ զոր ծանեաւ Գեդէոն. սերովբէ հողեղէն վեհագոյն քերովբէից. օրհնութեամբ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Զերկս խորհուրդս անսկզբնս ի քեզ տեսանի Աստուածածին. յղութիւն անսերմնական ծնունդ անարատ. կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. օրհնութիւն զքեզ Աստուածածին մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Զքեզ սիրողաց Որդի Աստուծոյ պատուելոց ըզյիշատակս արժանի արա. եւ աղօթիւք սոցա ողորմեա մեզ: Փառք Հօր: Որք փորձեցան ի փորձ սրոյ եւ հրոյ. եւ ի քո պատուիրանաց երբեք ոչ խոտորեցան. աղօթիւք սոցա ողորմեա մեզ: Այժմ եւ միշտ: Ազգեն տաճար սրբութեան անմահ բանին. եւ ըզգանձս հոգեւորս աստանօր պատրաստեցին. աղօթիւք սոցա ողորմեա մեզ:

Տէր յերկնից Դ.Զ:

Այսօր ճգնութեամբ սրբոցն ըզուարճանայ եկեղեցի ուրախութեամբ մեծաւ. հանդերձ որդւովք

իւրովք տօնելով զյիշատակ սոցա։ Փառք Հօր։ Սոքա են դեղ կենաց պարգեւեալ մեզ ի ·ՔՆԷ ի բժշկութիւն. պատուականն որ արեամբն իւրեանց։ Այժմ եւ միշտ։ Իշխանութիւն ունին ի Հոգւոյն սրբոյ առաջնորդել մեզ յերուսաղէմն վերին. ի քաղաք կենդանեաց ի մեծն Սիոնի։

Գ․․ ՀԱՐՑ Դ․Զ։

Որք հաղորդեցան չարչարանաց քոց Քրիստոս որ հայրապետքն եւ վերաբերեալ պայծառացան ընդ անմարմնին բազմութեանն. սոցին աղաչանօք խընայեա ի մեզ Աստուած հարցըն մերոց։ Որք ի սկզբանէ պատուեալ եղեն ի սէր բոլորից Հօրն եւ զտիեզերս հրաւիրեցին յորդեգրութեն շնորհս. սոցին աղաչանօք խընայեա ի մեզ Աստուած հարցըն մերոց։ Որք զընթացս իւրեանց կատարեցին հաճոյիւք քո Քրիստոս. եւ ըզպըսակս անապական ի քէն ընկալան. սոցին աղաչանօք խընայեա ի մեզ Աստուած հարցըն մերոց։

Գ․․ ԶՏէր օրհնեցէք. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զէակիցըն Հօր եւ Հոգւոյն. որ բնակեալ է ի լոյս յանմատոյց եւ բարեբանի սրբասաց ձայնիւ. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Զերկրպագելին ի սրբոց հայրապետաց. որք հեղմամբ արեանն իւրեանց նըմանօղք եղեն փրկողին զինքեանըս. բարձր արարէք ըզնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՑԷ Դ․Զ։

Ուրախացիր Ածածին վերօրհնեալդ ի սրովբէից. ծագեցելով ի քէն մեզ լոյս մայր եղեր վերաձգողին.

ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք ։ Փառք
Հօր ։ Զիմ եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հոգ-
ւոյն սրբոյ ․ Ի հրեշտակաց սպասաւորեալ Գաբ-
րիէլ քեզ աւետեաց ․ ազգ և ազինք ըզքեզ մե-
ծացուցանեմք ։ Այժմ և միշտ ։ Տեսանեմք ըզսու-
կալի՛ զհրաշալի՛ խորհուրդ յայտնեալ ․ Ի Հոգւոյն
սրբոյ յղացեալ զԲանն Ած մարմնով ծնար ․
ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք ։

Ողորմեա Դ.Զ ։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ի յիշատակի
սր հայրապետացն ։ Փառք Հօր ։ Որք յանուն քո
ս՛ր գործեցին զաշխարհս կարգն ի պաշտելութէ ․
աղօթիւք սոցա ողորմեա մեզ ։ Այժմ և միշտ ։
Սոքա արժանի եղեն ընդունել ի քէն զանթառամ
փառաց պսակն ․ աղօթիւք սոցա ողորմեա մեզ ։

Տէր յերկնից Դ.Զ ։

Ա․ Որք զառ ի Քրիստոս զչարչարանս յանձն
առեալ համբերեցէք ․ ով աստուածասէր հայրա-
պետք ․ և արժանի եղէք զերկնային անուն
պսակն ։ Փառք Հօր ։ Որք փորձեցայք շիջանուս
հրով ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայու-
թիւն ․ համարձակութիւն ունիք բարեխօսել առ
Տէր վս անձանց մերոց ։ Այժմ և միշտ ։ Որք
զամբարշտութեանցն վանեցէք զկռապաշտութիւն
ով աստուածասէր հայրապետք ․ հաստատութի ի Քսէ
հայցեցէք անդադար սր եկեղեցւոյ ։

Բ․ Ցընծութիւն է այսօր հրեշտակաց և մարդկան ․
զի զխրոխտացեալ ըզթշնամին վանեալ խորտա-
կեցին սուրբ վկայքն ․ Եւ եղեն յաղթօղք ի

պատերազմի ։ փառք Հօր․ Մարմնով և արեամբ
մարտեան ընդդէմ զինու․ վիրաւորեալք ի մար-
մնի վիրաւորեցին ի մահ ըզբելիար․ Եւ ստա-
ցան պարծանս յաւիտենական ։ Այժմ և
միշտ ։ Նշանաւորեալք ի հոգեղէն զօրութեանց․
Եւ բարեբանեալք ի դասուց մարմնաւորաց սուրբ
վկայքն․ անեղին աջովն պսակեալ եղեն ։
Գ․ Յիշատակ է այսօր քաջ նահատակաց Քի
սրբոց վկայիցն․ Եկայք ժողովուրդք ցնծու-
թեամբ տօնեսցուք ։ փառք Հօր․ Բանդի տեւօղք
ի տանջանս Եւ յաղթօղք ի մարտի Եւ պսա-
կեալք ի Հօրէ․ Եկայք ժողովուրդք ցնծու-
թեամբ տօնեսցուք ։ Այժմ և միշտ ։ Լուսաւոր-
եալք ի յերկրի․ պայծառացեալք ի յերկինս․ Եւ
դասակցեալք ընդ հրեշտակս․ Եկայք ժողովուր-
դք ցնծութեամբ տօնեսցուք ։

Ա․ ՀԱՐՑ Դ·Կ ։

Առ քեզ Աստուած հարցն մերոց խոնարհեալ
անձամբք պաղատիմք․ մի անտես առներ Տէր․
որ փառաւորեալդ ես յաւիտեան ։ Յիշեա զուխտն
Աբրահամու ըզԻսահակայ և զՅակոբայ․ և զնեղե-
լոց անձանց պաղատանս․ մի անտես առներ
Տէր․ որ փառաւորեալդ ես յաւիտեան ։ Խոր-
հեա Տէր խնդրողացս ի քէն ըզթողութիւն մեղաց․
ի տաճարի քում սրբութեան․ բարեխօսութիւ
սրբոց քոց․ որ փառաւորեալդ ես յաւիտեան ։
Գ․ ԸզՏէր Օրհնեցէք ըզՏէր երկինք և երկնա-
յին զօրութիւնք․ սերովբէք և քերովբէք զԱստու-
ածն աստուածոց․ բարձր արարէք ըզնա յաւի-

տեան։ Փառք Հօր։ Ի՛զՏէր Օրհնեցէք զՏէրն ե-
կեր և որ ի սմա են կենդանիք. համբառնալով ի
վեր զձայնս. եւ երգով հոգեւորով բարձր արա-
րէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Ի՛զՏէր
Օրհնեցէք զՏէր. գամք հրեշտակաց եւ մարդ-
կան զարարիչն արարածոց միաբանութեամբ երգով
բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.կ։

Ի քեզ եմք ապաւինեալ. Քնի մայր Աստուծոյ
մերոյ։ Փառք Հօր։ Որ քան զերկինս բարձրա-
գոյն Մարիամ. պարծանք եկեղեցւոյ. Քնի մայր
Աստուծոյ մերոյ։ Այժմ և միշտ։ Որ քանզարեգ-
ակըն պայծառագոյն Մարիամ. մի դադարեր բա-
րեխօսել վասըն մեր. Քնի մայր Աստուծոյ մերոյ։

Ողորմեա Գ.կ։

Ողորմութեան քո զդուռն բաց մեզ Տէր. և ար-
ժանի արա զմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սուրբս
քո։ Փառք Հօր։ Ի պատրաստեալ քո յօթե-
վանըս սրբոց քոց. ընկալ եւ զմեզ փրկիչ յոր-
դեգրութեն ի դրկրութեն կենաց։ Այժմ և միշտ։
Ի նըստեալ քո յաթոռ դատաւոր ահեղ խնայեա
յարարածըս քո. բարեխօսութեամբ և աղօթիւք նր
ճըգնաւորացն։

Տէր յերկնից Գ.կ։

Ի յիշատակըս վկայից քոց Քրիստոս պարգեւեա
մեզ օրհնել զքեզ արժանապէս։ Փառք Հօր։
Կամաւ մատուցին զանձինս իւրեանց քեզ պա-
տարագ արեամբն իւրեանց. և այն ունէին պը-
սակիւ ի քէն Տէր։ Այժմ և միշտ։ Սոցա ... ա-

զօթիւք փրկիչ խնայեա ի սուրբ եկեղեցի քո. զոր ընտրեցեր պատուական արեամբքդ քո սրբոյ:

Բ. ՀԱՐՑ Դ.Կ:

Որ ընդ հրաշափառ քո զօրութիւնդ ծանուցեր ազգի մարդկան. ցուցանելով յաղթող զնոսա զվկայսն ի պատերազմի. վասն անուան քո Տէր Աստուած հարցն մերոց: Որք ի մարմնի անմարմնոյ նման գեր ի վերոյ քան զբնութիւնս. արհամարհելով անարգեցին զչար տանջանս եւ զմահ. եւ եղեն վկայք քո կամաւոր մահուանն. Տէր Աստուած հարցն մերոց: Հանդիսացեալ այսօր եւ մեք տօնեմք զյիշատակ սուրբ վկայիցն. խաղաղացո զեկեղեցիս մեր աղօթիւք նոցա. եւ փրկեա զմեզ ի նեղութեանց մերոց. Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Որ փառացն իւրոց տեսող զվկայսն արժանի արար. եւ երգակից անմարմնական զօրացն. օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ. Որ սուրբ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան ի գիտութիւն ճշմարտութեան. եւ հրաւիրեաց յերկնից յարքայութիւն. օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Դ.Կ:

Որ զանճառելին ծնար. սուրբ Աստուածածին կոյս. օրհնեալ ես յաւիտեանս: Փառք Հօր: Որ զարարչակիցն Հօր. զի սկզբանէ Բանն Աստուծոյ. յորովայնի քում կրեցեր. օրհնեալ ես յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Զքեզ Եզեկիէլ դուռն

Երկնային դուռն. և հայրն անխորձ. օրհնեալ ես յաւիտեանս:

Ողորմեա Դ.Կ:

Զյիշատակս վկայից քոց տօնեմք այսօր Քրիստոս Թագաւոր. աղաչանօք սոցա ողորմեա: փառք Հօր: Որք յաղթեցին անօրէն բռնաւորաց հեղմամբ արեանն իւրեանց. եւ դասակից եղեն վերին զուարթնոցն: Այժմ և միշտ: Նոքա ընկալան ըզպըսակս անապականս յանըստուեր լուսոյն եւ միշտ ուրախանան ընդ հրեշտակս ի յերկինս:

Տէր յերկնից Դ.Կ:

Ա. Այսօր յիշատակ սրբոց քոց. որք տանջանաց անօրինացըն համբերեցին. և դասակից եղեն վերին զուարթնոցն: փառք Հօր: Այսօր եւ հրեշտակք ուրախանան ընդ կամաւոր չարչարանըս ճըգնաւորացն. որք յաղթեցին անօրէն բռնաւորացն: Այժմ և միշտ: Սուրբ ես Թագաւոր յաւիտենից որ նըստիս ի վերա չորեքկերպեան կենդանեաց. և ի սրբոց քոց փառաւորեալ ես:

Բ. Փառըք քեզ Հայր Երկնաւոր որ նըստիս ի քրովբէս. եւ բարեբանիս ի դասուց սերովբէից: փառք Հօր: Զքեզ գովեմըք Թագաւոր փառաց Քս. համաձայնեալ ընդ սըրբըս քո յեկեղեցիս արդարոց: Այժմ և միշտ: Սրբեա զանձինս մեր եւ տաճարացո սուրբ Երրորդութեանդ. կենդանարար սուրբ Հոգի:

Գ. Պարծեցին սուրբքըն փառօք եւ ցնծան սգեն ի հանգիստս իւրեանց քանզի ընդ հաւր եւ ընդ սուր

անցուցին զմարմինս իւրեանց: փառք Հօր: Սուրբ զարիւնս իւրեանց հեղին չարչարանացըն համբերեցին. եւ զըսպառնալիս բռնաւորացն անարգեցին յաշխարհի: Այժմ եւ միշտ: Արդ եկայք հաւատացեալք կատարեսցուք ըզյիշատակ սոցա քանզի սոքա են մեզ բարեխօսն յարքայութեանն Աստուծոյ:

Դ. Աջ Տեառն ի վերայ սրբոց իւրոց եւ փառք իւր հանգուցեալ է յոսկերս սոցա. եւ հոգիք սոցա միշտ դասաւորեալ ընդ հրեշտակս ի յերկինս: փառք Հօր: Բանակք հրեշտակաց Տն շուրջ են զնոքօք. եւ երգակից են միմեանց յօրհնութիւնս Աստուծոյ. եւ հայցեն միաբանն զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Այժմ եւ միշտ: Բազում համարձակութի է առ Տէր բարեխօսութեամբ սոցա. եւ թողութի է մեղաց. որք կատարեն ըզյիշատակս սոցա:

Ե. Աստուած բարձրեալ և ի սուրբս հանգուցեալ և ի սրբոց վերօրհնեալ. մաղթելով հայցեմք ի քէն տուող բարեաց. բարեխօսութբ սրբոց մարտիրոսացն հաշտեաց ընդ մեզ Քրիստոս: փառք Հօր: Որք կործանեցին զանօրինացն ըզպատկերսն. եւ յիշատակ քաջութեն թողին յաշխարհի. բարեխօսութբ սրբոց մարտիրոսացն հաշտեաց ընդ մեզ Քրիստոս: Այժմ եւ միշտ: Պատարագ անուշահոտ մատուցին քեզ ըզմարմինն եւ զարիւն. համբերելով չարչարանաց վասն անուանդ քում Տր. բարեխօսութբ սրբոց մարտիրոսացն հաշտեաց ընդ մեզ Քրիստոս:

# ՍՈՒՔԻԱՍԵԱՆՔ ԵՒ ՀԱՄԲԱՐՁԵԱՆՔ
# ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

### Օրհնութիւն ԽԲ:

Զ.Օ.Ր.Հ.Ն.Ո.Ւ.Թ.Ի.Ւ.Ն սրբոց քոց Քրիստոս տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն. քեզ երգեմք անլռելի զօրհնաբանութիւն: Փառք Հօր: Մերկացեալք ըզմարդկային տըկարութեան ըզգեստ համաստուածային վառեալ ըզգեստուք. յաղթեցէք հակառակամարտիցն ի պատերազմի: Այժմ եւ միշտ: Մըկըրտեալք ընդ Քրիստոսի հեղմամբ արեանն ի մահ. Աստուածութեանըն գոլով հրաշակերտք. շինեալ էք ի վայելչութիւն Տէր արքայութեանն:

### Համբարձի ԽԲ:

Ա. Պարծեսցին սուրբքն փառօք. եւ ցընծասցեն յաւիտենականն ի վաստակս իւրեանց յաւուր գալստեան փրկչին. յորժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: Փառք Հօր: Սիրէ Տէր զերկիւղածս իւր եւ պահէ զնոսա. և բնակէ ի հեզս և ի խոնարհս ի գալստեան իւրում. յորժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: Այժմ եւ միշտ: Փոխանակ ճըգնութեան համբերողաց՝ մատուցանէ իւրաքանչիւր զանթառամ պսակ. փայլեն որպէս զարեգակն. յորժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սըրբոց իւրոց:

Բ. Յընծացեալ բերկրի Սիոն վերինն Երուսաղէմ. ժողովարան միաբանութեան ընդունել յարկ-

սըն յաւիտենից. յորժամ գայ փառօք Հօր փա-
ռաւոր լինել ի մէջ սըրբոց իւրոց: Փառք Հօր:
Ուրախ լեր հանապազ սուրբ եկեղեցի. և ցըն-
ծա ի փառս եւ ի պատիւ փեսայացեալ Բանին. յոր-
ժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սըր-
բոց իւրոց: Այժմ եւ միշտ: Ընդ վերին զօրսըն
դասակցեալ եւ ըզգեցեալ ըզլոյս. և զանմահութեն
լուեալ ըզձայն կենարարին. ասելով եկայք վերօր-
հնեալք ի Հօրէ. ժառանգեցէք զանպատում ըզ-
կեանսն:

Մանկունք ԸԿ:

Զըգնաւորեալք Քրի. մաքրելոցս առաջնորդք:
Փառք Հօր: Աղբիւր կենաց էք յաշխարհի. հեղ-
մամբ սուրբ արեան ձերոյ: Այժմ եւ միշտ: Ո՛ւ
որըք կատարեն ըզյիշատակըս ձեր արբցեն յաղ-
բերէն կենաց:

Համբարձի ԸԿ:

Ի տաճարի հանգըստեան սըրբոց վերնոյին. զա-
ղաչանըս մեր մի անտես առներ որ կարդամք առ
քեզ Տէր. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ:
Փառք Հօր: Որք վն անուանըդ քո հեղին ըզպա-
տուական ըք զարիւնս իւրեանց. արիաբար մար-
տեան ընդդէմ թըշնամւոյն եւ զօրացան ի պատե-
րազմի. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ:
Այժմ և միշտ: Պարծեցին սըրբք քո Տէր ի հան-
գիստս իւրեանց. որք տանջանաց անօրինացըն
համբերեցին. և անապական պըսակացն արժանի
եղեն. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ:

### Մանկունք ԲՁ:

Փառաւորեալդ փառօք Նորոգողութեան սուրբ. փառաց արժանի արա՛ ըղձընեալս աւազանաւն. երկնային քո՛յ ժառանգութեան: Փառք Հօր: Արեամբ նահատակացըն բերկրեալ սոցի՛ն բարեխօսութեամբ փառաց արժանի արա՛ ըղձընեալս աւազանաւն. երկնային քո ժառանգութեան: Այժմ եւ միշտ: Ի սրբութեան քում բարեբանեմք զքեզ. աղաչանօ՛ք որ Ածածնին. փառաց արժանի արա՛ ըղձընեալս աւազանաւն. երկնային քո՛յ ժառանգութեան:

### Համբարձելի ԲՁ:

Ուրախանան հրեշտակք ի յերկինս ընդ չարչարանըս ծըգնաւորացն. եւ հրաշանան արարածք ընդ յաղթութիւնըս սըրբոց: Փառք Հօր: Մեծապէս պատերազմեալք զառաքինութեան ըզհանդէս. պըսակեցան ի Քրիստոսէ ընդ վերին զըւարթունսն: Այժմ եւ միշտ: Ցընծայ կաթուղիկէ. զուարճանան հաւատացեալք. աղաչակեն ամենայն փառըք քեզ Աստուած:

### Մանկունք ԲԿ:

Ի փառըս պարծեցին մանկունք սիրեցեալք ի Տեառնէ. որք արժանի եղեն առնուլ զհայրական ըզպըսակն: Փառք Հօր: Որք ըզտանջանս եւ ըզմահ վասն անուան Տեառըն յանձն առին. և արժանի եղեն առնուլ զհայրական ըզպըսակն: Այժմ եւ միշտ: Եւ զօրութեամբ որ Հոգւոյն եղեն յաղթօղք ի պատերազմի. եւ արժանի եղեն առնուլ ի Հօրէ ըզպըսակն:

### Համբարձի ՐԿ:

Զօրացեալ ճգնութեամբ պատերազմեալք ընդդէմ թշնամւոյն. եւ արիաբար վառեալք զինու սուրբ Խաչին. յաղթեցէք անօրինացն. Ով սուրբ վկայք. ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց: Անտանելի չարչարանացն եղէք վկայք ճշմարտութեան. եւ խաչակիցք եղէք Որդւոյն Աստուծոյ. ըզբաժակ մահու արբէք ուրախութեամբ. Ով սուրբ վկայք. ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց: Փառք Հօր: Յաղթանակ համբերութեամբ. կատարեցէք զընթացս ձեր. եւ փոխեցայք յերկրայնոցս ի յերկինս. ընկալայք ի Քրիստոսէ ըզպսակս անապականս. Ով սուրբ վկայք. ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց: Այժմ եւ միշտ: Արդ եկայք հաւատացեալք կատարեսցուք զյիշատակ սրբոց վկայից. զի ի ձեռն նոցա բացցի մեզ դուռն ողորմութեան ունելով միշտ բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց:

### Սանիկան Գ.Զ:

Այսօր յիշատակ սրբոց մարտիրոսաց մանկունք նոր եկեղեցւոյ ընդ զօրս երկնից տուք օրհնութիւն ի բարձունս նոր Երրորդութեանն: Փառք Հօր: Այսօր ճգնութիւն սրբոց մարտիրոսաց. զուարճանան բանակք անմարմնոցն. եկեղեցիք ընտրելոց. տուք օրհնութիւն ի բարձունս նոր Երրորդութեանն: Այժմ եւ միշտ: Այսօր շնորհեցան մեզ քարոզք եւ վկայք. ի խաւարէ կռապաշտութեան եւ անածութեան ածեալ ի լոյս զամ արտ-

րամբ. տուք օրհնութիւն ի բարձունս որ նորոգ. գութեանն:

Համբարձի Գ.Զ:

Պայծառացիր եկեղեցի Աստուծոյ ընդ ծննդութեանն սրբոց վկայիցն. որք նահատակեցան ի յերկրի. և ի յերկինս պսակեցան: փառք Հօր: Ուրախանան և հրեշտակք ի յերկինս ընդ ծննդութեանն սրբոց վկայիցն. որք նահատակեցան ի յերկրի. և ի յերկինս պսակեցան: Այժմ և միշտ: Համաձայնեալ ընդ նոսին այսօր և մեք տօնեմք ըղձալի տօնիւ սրբոց վկայիցն. որք նահատակեցան ի յերկրի. և ի յերկինս պսակեցան:

Մանկունք Գ.Կ:

Ընդ զուարթունս երկնից օրհնեցէք զՔրիստոս թագաւորն: փառք Հօր: Ընդ դասս երանելի սրբոցն գովեցէք յօրհնութիւն ի նոր զՔրիստոս թագաւորն: Այժմ եւ միշտ: ԶՔրիստոս թագաւորն բարեբանեցէք. զի ողորմեսցի բարեխօսութեամբ սրբոցն:

Համբարձի Գ.Կ:

Երկնաւորք ճշմարիտք եւ վկայք Քրիստոսի. որք զչարչարանս եւ ըղձամբ յանձն առէք վասն նորին. ըզձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց: փառք Հօր: Քանզի հեղմամբ արեան ձերոյ պայծառացան սուրբ եկեղեցիք. եւ զստուերամած խաւար կռապաշտութեանցն բարձիք. ըզձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց: Այժմ և միշտ: Երկնային զօրքն իջեալ ի պատիւ պատարագի մահուան ձե-

րդ․ Եւ զպսակս անապական առնելով ի Հօրէ լուսոյ․ ընդ ձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց։

Մանկունք Գ․Զ։

Ո՛գքեղ կարգային յօգնութիւն սուրբ մարտիրոսքն եւ ամէքին, որ ի բարձունս բնակեալք էք խնդայեամ ի մեզ։ Փառք Հօր։ Դու ես զուարթնութեան լուսոյ․ դու պսակ պարծանաց ի քեզ յուսացելոց․ որ ի բարձունս բնակեալք էք խնդայեամ ի մեզ։ Այժմ եւ միշտ։ Օրհնեալ գովեալ եւ ի սուրբս հանգուցեալ․ Եւ դու ես ընդունող հոգւոց մերոց, որ ի բարձունս բնակեալք էք միշտ եւ յաւիտեան։

Համբարձի Գ․Զ։

Զօրութիւնք սրբոց քոց Քրիստոս հաստատեցին զհիմունս սուրբ եկեղեցւոյ․ կանգնելով ի նմա զնշան յաղթութեան։ Փառք Հօր։ Եւ հեղմամբ սուրբ արեանն իւրեանց ազատեցին զտիեզերս ի դիւապաշտ մոլորութենէ․ եւ եղեն յաղթօղք ի պատերազմի։ Այժմ եւ միշտ։ Ընդ որս եւ մեք աղաչեմք Քրիստոս ընկալ եւ զմեզ յերկնային խորանս ի լուսեղէն տանդամատին․ բարեխօսութեամբ եւ աղօթիւք նոցա ծնընդաւորացն։

Մանկունք Գ․Կ։

Մեք եկեալ եմք ի պատուել զյիշատակ սուրբ վկայիցն․ անցուք ըսկիզբն ըղձօնութեան․ աղաղակելով առ Քս Տէր փառք քեզ փառաւորեալ քեզ Տէր Աստուած։ Փառք Հօր։ Ահաւոր ես հրեշտակաց անհաս ի սերոբէից․ եկիր երեւեցար մարմնով․ ուսուցեր մեզ ասել Տէր փառք քեզ փառա-

որք քեզ Տէր Աստուած ։ Այժմ և միշտ ։ Յանմարմնոց ես վերօրհնեալ. ի մարդկանէ երկրպագեալ. քեզ փառք վայելէ պատիւ յամ ժամ առնել Տէր փառք քեզ փառք որք քեզ Տէր Աստուած։

Համբարձէ Դ.Կ ։

Ա. Աստուածութեանն սիրով անձինք յաղթօղ վկայիցն. արժանաւորք ընդունելոյ ի յանապական լուսոյ ։ փառք Հօր ։ Ո՛ի զառաջին մեղացն ըզգրոց արեամբն իւրեանց շիջուցին. եւ ըզտիեզերս հրաւիրեցին յօրհնաբանութիւն ։ Այժմ և միշտ ։ Հեղմամբ արեանն իւրեանց մեզ ճանապարհ հորդեցին. եւ առ Քրիստոս մեզ դուռն կենաց բացին ի յերկինս ։

Բ. Այսօր եկեղեցի Քրիստոսի պայծառանայ յիշատակաւ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ Տէր վասն մեր ։ փառք Հօր ։ Այսօր ի հեղմանէ արեան սոցա գտաք հրեշտակաց խոնարհեալ միաբանութեամբ տօնեն ընդ մարդկան ։ Այժմ և միշտ ։ Եկայք եւ մեք Քրիստոսի հաւատացեալքս. կատարեսցուք ըզյիշատակ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ Տէր վասն մեր ։

---

ՀԱՄԲԱՐՁԻ
# ԿԻՐԱԿԱՄՏԻՑ
ԱՁ

Սուրբ ես Տէր զօրութեանց. որ բնակեալդ ես ի յերկինս. եւ բարեբանիս ի սրբոց քոց ։ Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք. անդադար օրհնեն սուրբ զանուանդ քո ։ Քահանայք

ընդ նոսի՛ն պաշտօնեայք և ժողովուրդք. երկրպագեսցո՛ւք տէրութեանդ քո՛։

Լո՛յսդ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար. եւ լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեա՛լ ես Թագաւոր յաւիտենից։ Որ ըղձիւն ի սկզբանէ հաստատեցեր վերնատին. եւ զխաւարն անգիտութեան յարութեամբդ քո հալածեցեր. օրհնեա՛լ ես Թագաւոր յաւիտենից։ Ուստի եւ մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն. երգեսցուք ցնծութիւ ի յարութեն երեկոյիս. օրհնեա՛լ ես Թագաւոր յաւիտենից։

Հետեւոյ Շարականս։

Ա. Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծ ի ծնունդըս կանանց. քարոզէր յանապատի անդ արարօղ բարբառովն. ըղձագումըն լուսոյ արեգական արդարութեան։ Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրօղ Որդւոյն Աստուծոյ. յառաջընթացն կարապետ և պատմօղ աստուածային օրինացն. հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից։ Զանօրէն գինարբուսըն մոլեգնեալ Հերովդիադայ. ի պարգեւի մասին խնդրէր ըզգլուխ մարգարէին. շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն։ Փառք Հօր։ Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենայն Երրորդութեանդ զյարութիւն յուսոյ կենացըն յաւիտենից։ Այժմ եւ միշտ։ Զհաւատացեալ ժողովուրդըս սուրբ Երրորդութեանդ. եւ զապաւինեալս ի խորան փառաց քոց. պահեա անխռով ի խաղաղութեան։

Բ. Ի՛ քէն հայցեմք բազմողորմ ի ձեռն սրբոց քոց առաքելոցն. խնայեա Տէր ի յանձինս մեր։ Զօրս ընտրեցեր յառաջգիտութեամբ զարմանացուցելոցն անձինս. որ պատուեցեր ի նոսա զհոգի շնորհաց քոց. որով վառեալ հերքեցին զապստամբ թշնամին. բարեխօսութեամբ սոցա. խնայեա Տէր ի յանձինս մեր։ փառք Հօր։ Որք զխաւարն անգիտութեան մերկացին ի յամենայն ազգաց. զգեստաւորեալ զհեթանոսս. առաքելական կոչմամբ ի լոյս կենացն յաւիտենից. բարեխօսութեամբ սոցա. խնայեա Տէր ի յանձինս մեր։ Այժմ և միշտ։ Վասն որոյ եւ մեք հաւատացեալքս կատարեսցուք զյիշատակ սրբոց առաքելոցն. աղաչեմք զքեզ որ միայն գթած ես առատաձեռնեալ ի մեզ զմեծ քո զողորմութիւնդ. Տէր որ կեցուցանես զամենայն արարածս։

Գ. Օրհնաւորին Բանի ի Հօրէ առեալ պարգեւս, յանճառունակ ի դրախտէն ծագեցաւ մեզ շնորհիւ, որ է զէն յուսոյ փրկութեան հաւատոյ։ փառք Հօր։ Իսկ երանելին վկային Բանի զօրանայր ի նոյն Հոգւոյն զէն զերանութեանցն առնոյր ընդ շնորհս ողորմութեան, որ է զէն յուսոյ փրկութեան հաւատոյ։ Այժմ և միշտ։ Սա արանջէք զյիշատակ սրբոյն Սարգսի զօրավարին. որ է դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան. եւ մեզ զէն յուսոյ փրկութեան հաւատոյ։

# ԿԱՆՈՆ
# ՄԱՐԳԱՐԷԻՑ

Օրհնութիւն Ա.Կ:

Որ զամենայն զօրութիւնդ քո ծանուցեր հո-գւոյդ ճշմարիտ. բաշխելով իշխանաբար ըզ-պարգեւս քո. ուսանողաց մարգարէիցն ի սկըզ-բանէ. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ: Որ մաքրեցեր բնակարան ա՟ծութեանդ քո զըղմար-գարէսն. եւ աղբերաբար հեղեր յանձինս նոցա. զանսպառ եւ զերկնային շնորհաց քոց բըղխումն. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ: Որ յայտ-նեցեր ըզծածկեալ խորհուրդ քոյոց սիրողաց. եւ անճառելեաց աստուածայնոց պատմօղս արարեր. անօրէնութեան քում էակցի Բանիդ Աստուծոյ. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ:

† Որ առաքեցեր նախընթացս քում գալըստեանդ սուրբ ըզմարգարէսն. աւետարանել ամենեցուն զիջումն քո ի հայրական ծոցոյ ի փրկութիւն հեթանոսաց. բարեխօսութեամբ սոցա Քրիս-տոս խնայեա ի մեզ: Որ խոնարհեցար յանպա-տում փառաց Որդի Աստուծոյ. եւ եկիր ի կա-տարումն մարգարէիցըն նախաձայն քարոզու-թեանցն անճառ խորհրդով. բարեխօսութեամբ սո-ցա Քրիստոս խնայեա ի մեզ:

ՅՈՎ. Ճրագ օրինացըն Մովսիսի լուսաւոր տանն Իսրայէլի եւ իմանալի արեգականն յառաջընթաց առ ի յերկիր ծագմանն ի կուսէն առ. Քն բարե-

խօսեա վասն անձանց մերոց: Մըկըրտեալ ըղըրո-
րից Աձն առ քեզ եկեալ հրաժարէիր. տեսանելով
զգերաշպայծառ լոյս Աստուածութեն ընդ հողեղէն
բնութեն իս պարունակեալ. առ Քն բարեխօսեա
վասն անձանց մերոց: Յորժամ էջ ի Յորդանան
հուրն Աստուած ի քէն մըկըրտել. վերնական իշ-
խանութիւնքըն զահի հարեալ զարմանային նո-
րա հրաշ տեսլեամբըն. առ Քն բարեխօսեա վասն
անձանց մերոց:

ԱՈ·· Ի յանսահման ծովէն Հօր գըթութեանց բըղխ-
մունք եւ որ առաքեալք. անդրանիկ խորհուրդ եւ
լոյս գերազանց երկոտասան ազգաց պըսակն որ եկե-
ղեցւոյ. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց
մերոց: Աշխարհակիր Անին բազկաց եղեալ հի-
մունք սըրբոյն Սիովնի. լերինք անշարժք հովիւք
ծաղկածինք հարազատք վէմ հաւատոյ պետրոս
եւ Անդրէաս. բարեխօս լերուք առ Տէր վասն ան-
ձանց մերոց: Ի բարերուն Հոգւոյն վըտակք եւ
որոտմունք տիեզերաց. ցոլմունք հրեղէնք ա-
տեղք լուսաբերք. Յովի Թագաւորին վակաս լանջաց
որ Յովհաննէս եւ Յակոբոս. բարեխօս լերուք առ
Տէր վասն անձանց մերոց:

ՀԱՅՐ· Որ հրաւիրեցեր զորդիս մարդկան յոր-
դեգրութի Հօր քո Որդի Աստուծոյ. եւ կոչեցեր
յարքայութե քո ժառանգութի ի ձեռըն որ հայրա-
պետաց. աղօթիւք սոցա ողորմեա: Որ լուսաւորեցեր
զեկեղեցիս Հայաստանեայց լուսով քով Քրիստոս
եւ զարդարեալ նորացուցեր պայծառ ծագմամբ
շառաւիղօք սըրբոյն Գրիգորի. աղօթիւք սոցա ո-

ղորմեա։ Որք զընթացս իւրեանց կատարեցին ըստ հաճոյից կամաց քոց Քրիստոս. նահատակեալք ճգնութեամբ ընդդէմ թշնամւոյն. և փոխեցան երկնից յարքայութիւն. աղօթիւք սոցա ողորմեա։

ՄԱՐՏ. Ըզյիշատակ սրբոց մարտիրոսացն. այսօր տօնէ եկեղեցի հռչակելով ըզճգնութի սոցա Հայր երկնաւոր. աղօթիւք սոցա ողորմեա։ Հրաշազարդ և պայծառ առաքինութի քարոզեցին ըզքեզ տիեզերաց. քանզի իջեր ի Հօրէ և մարմնացար ի սրբոյ Կուսէն Որդի միածին. աղօթիւք սոցա ողորմեա։ Անուշահոտ բուրմամբ ըզքո լոյսն ըզտիեզերս կենսարեր անտեսօք. եւ ընդ վերին դասակարգութիւնսն համաձայնեալ բարեբանեն ըզքեզ Հոգիդ ճշմարիտ. աղօթիւք սոցա ողորմեա։

ՀԳ. Որ առաքեցար ի Հօրէ Հոգիդ անեղ եւ համագոյ. աղաչանօք տնօրինաբար քում Ամկցին. լինել մխիթարիչ սուրբ առաքելոցն. աղաչեմք ըզքեզ ողորմեա։ Որ իջեր տիրաբար յերկնից սաստիկ հողմոյ նման Ած յայտնապէս. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի գլուխս առաքելոցն. աղաչեմք ըզքեզ ողորմեա։ Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն. որք արբուցին ըզտամեցելոց որդւոց Ադամայ ըզբաժակն ուրախարար յայգւոյն Եդեմայ. աղաչեմք ըզքեզ ողորմեա։

ՀՆ. Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութի անձնելով տիեզերաց ի դատաստանն ահաւոր. յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզհո-

ջնջեալսն. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։ Յորժամ ճառագայթք Ա̃ծութեանդ փայլեն ի յարեւելս եւ դըպրուհիք հրաշիցն բանին յայնժամ առ կ յանհեղին յիշեա Տէ՛ր եւ ողորմեա ննջեցելոց եւ հանգո ընդ սուրբս քո։ Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սրովբէաձգոյ փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնժամ առուր յանհեղին յիշեա Տէ՛ր եւ ողորմեա ննջեցելոց. եւ հանգո ընդ սուրբս քո։

ՄՕ. Որ նախի միոյ իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ ս̃բ եկեղեցւոյ. խորհրդոյն արկեալ հիմունս հաստատութեան ըզգաստ արդարոց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։ Որ զօրհնութիւն նախաստեղծիցն ածազոյգ առուաց եւ իգաց. պայծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի յԱննա. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։ Որ ըզխոստումն Աբրահամու նահապետի մեր ըստ հոգւոյ. քահանայական եւ թագաւորական գաւազանացըն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։

ԽԶ. Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց եւ մարգարէից. շինեցեր ըզքո ս̃բ եկեղեցի. և ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ հրեշտակս. փառաւորելով զս̃բ զԵրրորդութիւնդ։ Տեղի ապաւինի և ժողովարան բանաւոր հօտի. ընդունարան հրեշտակաց նաւահանգիստ արդարոց եւ մեղաւորաց քաւարան. զարդարեալ առաքելովք եւ մարգարէիւք։ փառք Հօր։ Ընդն Ա̃ծ և ծած-

կեալ խորհրդոյն յաւիտենից. իջեալ ի յերկնից մարմնացեալ ի կուսէն խաչեալ յերկրի և թաղեալ ի նոր ի գերեզմանի. եւ յարուցեալ յերրորդ աւուր. զի զմարգարէիցն ըղձանսն կատարեսցէ։

Այժմ և միշտ։ Որ լուծեր կենարար մահուամբ քո Տէր զերկունս մահու. իջանելով ի դժոխսն վերածեր ընդ քեզ զհոգիս արդարոց մարգարէիցն ի լոյսն անսպառ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ։

Ա. ՀԱՐՑ ԴՁ։

Որ ընդ հողեղէն բնութեան մերում խառնեցեր ըզբանական հոգիս. ունել զօրութիւն ընդունելոյ զաստուածային և զհոգևոր ըզշնորհս իջեալ ի վերուստ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ շնորհեցեր մաքուր հոգւոց յիւրայինն զհոգի մարգարէութեան որով ծանուցեր զառաջագոյն բազմապատիկ օրինակօք զանճառելի խորհուրդ քո մարդեղութեանդ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ զանեղ գոյիւ լինելութի ծերև զեղեալ տեսանէին. յառաջնորդական միտքս նոցա արտաւորեալ Հոգիդ ըզկերպարան իրին գերագոյն հրաշիւք ի վեր քան ըզբան. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Ընդ անտուորսն յառաջագոյն փրկութեան մերոյ. ծափս հարէք եկեղեցիք հեթանոսաց. աղաղակելով ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Ընդ տեսանողաց մարգարէից հինն Աս-

բայլել· քահանայք նորոյ ուխտիս սպասաւորք· ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ·Ձ։

Որ ի բարձրութիւնս երկնից բարձրը բանիւք բարեբանիս սրբովք· ի Սիրանոնէ գիմեալ հարսն ըզգեցեալ այսօր զարեգակն արկեալ ըզքեւ· և ընդ ոտիւք զլուսինն ըստորերատեսակ· օրհնութբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծննդեանն քո ի մօրէ։ փառք հօր։ Անհագոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից տիրամայր Աստուածածին· տապանակ կտակի սափոր ոսկի խորհրդաւոր խորանն Բանին հօր բարձրելոյ· օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծննդեանն քո ի մօրէ։ Եւ այժմ և միշտ։ Մարգարէից հանդիսարան և գրաւական կենաց մարդկան Մարիամ Աստուածածին· ընդունարան եօթնարփին շնորհացն· խարիսխ յուսոյ հաստատութեան· զուգաթիւ աւուրց գարուցս անցաւորաց· օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծննդեանն քո ի մօրէ։

Ողորմեա Դ·Ձ։

Որ աւետաւոր քում գալստեանդ առաքեցեր յաշխարհ ըզդաս մարգարէան· եւ եկեալ խոնարհութբ նոր օրինօք զթերին լցեր ի գիրս օրինաց եւ մարգարէից· բարեխօսութբ սոցա Քրիստոս ողորմեա մեզ։ փառք հօր։ Որ կոչեցեր մարգարէիւք յառաջագոյն ըզհեթանոսս քեզ նոր ժողովուրդ· եւ ըզդուստրն Սիոնի զեկեղեցի հեթա-

նոսանց հարսըն սիրելի անմահ փեսային. բարեխօսութեամբ սրբոյ Կարապետին ողորմեա մեզ: Այժմ և միշտ: Որ ընդփառըս տաճարիս զոր շինեցեր շինողդ էից ի վերայ վիմին. բարձրագոյն քան զառաջինն. և գերազարդ վայելչութեամբ տեսանողքըն ծանուցին իմաստուք Հոգւոյն. բարեխօսութեամբ սրբոյ Կարապետին ողորմեա մեզ:

Տէր յերկնից Դ.Զ:

Այսօր ժողովուրդք որք ի հեթանոսաց. հրաւիրեալք յառաջագոյն մարգարէիւք. գալ առ Ածն Աբրահամու յերկրպագութիւն. օրհնեցէք զՏէր յերկինս ընդ երկնաւորացն: փառք Հօր: Այսօր որդիք դըստեր վերին Սիովնի. շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. որք և ըմպէք զաստուածաբուղխ վտակ Հոգւոյն ի յաղբերացն Խորանին յեկեղեցիս սրբոց. օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր: Այժմ և միշտ: Այսօր վերին զօրացըն համաձայնեալք. դասք նահապետաց և մարգարէից. երգեն Այ զերգըս հոգևորս. ի յիշատակի սրբոյ երգենք և մեք ընդ փառս ի բարձունս:

Մեծացուսցէ Դ.Կ:

Այսօր ցընծայ զուարճացեալ եկեղեցի հեթանոսաց. տօնելով զյիշատակ մեծի նահապետին և հօրըն հաւատոյ Աբրահամու. օրհնեցէք մանկունք Սիովնի զՀայրըն լուսոյ անլռելի: փառք Հօր: Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալ մարգարէիւքն առ Ած. տօնեա ցընծութեամբ ընդ տօն հօրն Իսրայէլին առաջնոյ. գովելով ընդ գլուխ անկեան եր-

կուց որմոց յարմարութեան: Այժմ և միշտ: Այս-
օր ի գլուխըս լերանց տուն Աստուծոյ հաստա-
տեալ. որ և յաւէտ ոռոգիս յամպոց Հոգւոյն ածա-
բուղխ առատահոսս անձրևօք. բարեբանեալ զաղ-
բերըն կենաց զարբուցանողն ծարաւեաց:

Բ. ՀԱՐՑ ԱՁ:

Որ յերկնային զինուորութեանցդ անդադար ձայ-
նիւ. երեքսրբեան օրհներգութեամբ փառաւորեա-
նիս. հարցըն մերոց Աստուած օրհնեալ ես յաւի-
տեան: Որ շնորհեցեր` մարգարէիցն. աւետա-
րանել ըզկենսաբեր տնօրէնութիւնդ քո ի մեր
կուսէն. հարցըն մերոց Աստուած օրհնեալ ես
յաւիտեան: Որ պարգևեցեր նոր Հոգւոյդ վերա-
փոխեցեր ըզսխրելիսըն քո յերկնային խորանն.
հարցըն մերոց Աստուած օրհնեալ ես յաւիտեան

Գ. Ազգեր օրհնեցէք. բարձր արարէք ըզնա
յաւիտեան: Փառք Հօր: Եկեղեցիք հեթանո-
սաց կոչեցեալք ի Քրիստոս յազգերաց խորայ-
լի. օրհնեցէք ըզՏէր և բարձր արարէք ըզնա յա-
ւիտեան: Այժմ և միշտ: Քահանայք եւ պաշ-
տօնեայք ընդ վերին զուարթունսն հոգևոր հընչ-
մամբ երգով գովեցէք ըզՏէր և բարձր արարէք
ըզնա` յաւիտեան:

Մեծացուսցէ ԱՁ:

Ազքեղ երևեալ դուռն առ Եզեկիէլ մարգա-
րէիւ. ընդ որ ոչ ոք էանց եթէ ոչ Ած միայն.
Ածածին կոյս. օրհնութեամբ մեծացուցանեմք:
Փառք Հօր: Ազքեղ որ ի մորենւոջն առ Մովսէս
մարգարէիւ` ըզնոր խորհուրդ կուսի յայտնեցեր

մարդկան ազգի․ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Աղքեղ որ ի Հօրէ անժամանակապէս եւ ի մօրէ անթարգմանաբար․ ի ժամանակի ծնընդեան ի բոլորից փրկութիւն յայտնեցար Որդի Բարձրելոյն․ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Ա.Զ։

Որ ըղձածկեալ խորհուրդ կենաց անօրէնութեանն ընդ քեզ Քրիստոս․ ընդ հանուր ազգի մարդկան յայտնեցեր մարգարէիւք․ ըղձագունքն լուսոյ արեգականդ արդարութեան։ փառք Հօր։ Որք ուսուցին Եսայեան երկրպագել քում տէրութեանդ․ և յայտնի քարոզեցին ըղփրկութիւն հեթանոսաց․ եթէ գայ Մեսիան թագաւոր Իսրայէլի։ Այժմ և միշտ։ Որք տաճարի նըմանութեան ցուցին զարգանդ սբ Կուսին․ ուստի ծագեալ եղև մեզ հաց կենաց անմահութեան․ զոր օրհնեն անդադար երկնային զինուորութիւնքն։

Տէր յերկնից Ա.Զ։

Աչօք առեալ մարգարէիցըն հրաշալի ձայնիւ անդադար օրհնաբանեն ըզմարմնացեալն ի սուրբ Կուսէն․ որ երեւեցաւ մեզ ի փրկութիւն։ փառք Հօր։ Զնեղութիւն եւ զշարչարանըս յանձն առին կամաւորապէս․ ժուժկալեալ համբերեցին վասն անուանըն Տեառն․ որ երեւեցաւ մեզ ի փրկութիւն։ Այժմ և միշտ։ Աներկեւղ քարոզեցին յաշխարհի ըզճըշմարիտ մարդեղութիւն մարմնացելոյն ի սուրբ Կուսէն․ որ երեւեցաւ մեզ ի փրկութիւն։

Մանկունք Գ.Զ։

Որ զյառաջագոյն ընտրեալսն առաքեցեր յաշ-

խա՛րհս սուրբ զմա՛րգարէսն. աւետարանե՛լ ըղձա՛գալուստդ անթա՛րգմանելի տնօրէնութեամբ. սո՛քօք շընո՛րհեա՛ հաստատուն եկե՛ղեցւո՛յ քո՛ւմ սըրբո՛յ: փառք Հօր: Որոց ե՛տուր իշխանութի՛ն բացատրե՛լ զխջումն քո յաշխա՛րհս. ամենայնօ՛ր կատա՛րեցեր զմա՛րգարէիցն ըղձտեսութի՛ւն. սո՛քօք շընո՛րհեա՛ հաստատուն եկե՛ղեցւո՛յ քո՛ւմ սըրբո՛յ: Այժմ և միշտ: Որ ընդմա՛հ գերի առեալ մահուամբ ընդմա՛հ կոխեցե՛ր. արձակե՛լո՛վ զերամբս մարգարէիցըն յանըստուե՛ր քո՛ հանգի՛ստդ. սո՛քօք շընո՛րհեա՛ հաստատութի՛ւն եկե՛ղեցւո՛յ քո՛ւմ սըրբո՛յ:

## ԿԱՆՈՆ
## ՊԱՀՈՑ
### ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ

---

Ա.Ձ

ՀԱ՛ՅՐ բազումողո՛րմ. խոստովանի՛մ առ քեզ ո՛րպէս զանա՛ռակ ո՛րդին. Թո՛ղ ի՛նձ ըզմե՛ղս ի՛մ. Եւ ողո՛րմեա՛: Տէր որ գըթացա՛ր ի կի՛նըն քանանացի. գըթա եւ յի՛ս ի մե՛ղաւո՛րս և ողո՛րմեա՛: Տէր ո՛ր դարձո՛ւցե՛ր ըզմա՛քսաւո՛րն ի գիտութի՛ ճըշմարտութ՛. դա՛րձո և զիս ըզմո՛լորեա՛լս. Եւ ողո՛րմեա՛: Աստուած բազո՛ւմո՛ղո՛րմ. խընայեա՛ յարարածըս քո՛ Հա՛յր ամենակա՛լ. Եւ ողո՛րմեա՛: Արեգա՛կն արդա՛րո՛ւթե՛ ծա՛գեա՛ ի հոգի՛ս մեր ըզլո՛յս ճըշմարտութեա՛ն. Եւ ողո՛րմեա՛: Տո՛ւր մեզ Տէ՛ր զխա՛ղա՛ղո՛ւթի՛. Եւ փըրկեա՛ ի նեղչա՛ց մերո՛ց Հոգի՛դ ճըշմա՛րտութե՛. Եւ ողո՛րմեա՛:

Ի նեղութեան ժամու օգնեա ինձ Տէր. որ երբեմըն Յովնանու և ողորմեա: Ի յանցանաց իմոց մաքրեա զիս Տէր. որ երբեմն ըզմաքսաւորն. և ողորմեա: Ի նենգաւոր շըրթանց փրկեա զիս Տէր. և յարենէ ապրեցո. և ողորմեա:

Զըղջըման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո Քրիստոս. թող ինձ ըզմեղս իմ. որ երբեմն ըզպոռընկին. որ միայն ես բազմագութ: Ընկենիմ առաջի քո Քրիստոս. որ հովիւդ ես բանաւոր հօտի. խնդրեա և զիս ըզմոլորեալս. որ միայն ես բազմագութ: Ըզմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս. որ բըժիշկդ ես հոգւոց և Տէր կենաց. բըժըշկեա և զիմ զհիւանդութիս. որ միայն ես բազմագութ:

Մըտանջիմ ի բազմութէ մեղաց իմոց. Ած խաղաղութե օգնեա ինձ: Ընկըծիմ հողմով անօրէնութե իմոյ. թագաւոր խաղաղութե օգնեա ինձ: Ի խորըս մեղաց ծովու տարաբերեալ ծըփիմ. նաւապետ բարի փրկեա զիս:

Ողորմեա ինձ Աստուած: Ի լըսել ըզձայն փողոյն յահագին աւուրն. յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոչէ ի դատաստան. ողորմեա ինձ Աստուած: Ի նըստել քո յաթոռն դատաւոր ահեղ. յորժամ առնես հրապարակութի ըզքըննութի որդւոց մարդկան. ողորմեա ինձ Աստուած:

Որ առ ի քէն երկրորդ Ադամ վն առաջնոյն յանցանաց. բնութի մերոյ պահնորդ. զմահաբեր պըտղոյն լուծեալ զպատուհաս. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ: Փառք Հօր:

Արդ աղաչեմ մայր Աստուծոյ ընծայեալդ ի քէն վասն մեր զի ընդ նմին պաշտելով․ որ յարութեան նորա նորոգեսցուք․ առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ։

Այժմ և միշտ։ Ի միասնական գովաբանեան Աստուածորդւոյն․ սուրբ խաչն երեւի եւ լուսաւորէ․ զի նա է լոյս հաւատացելոց։

ԱԿ

Ծով կենցաղոյս համապազ զիս ալեկոծէ։ Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ։ Նաւապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն։

Ահա եմ յընկղմել օգնեա ինձ նաւապետ բարի․ քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց։ Ա՛հ յօգնել ինձ փութա քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս․ այլ դու նաւապետ լեր և ինձ ձեռնտու։ Փրկեա ի վտանգէ ըղձաւորեալս ի յալեաց ծովէ․ քանզի կործանիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ։

Աղաչեմ զքեզ Տէր պարգեւեա ինձ․ ապաշխարութեամբ լուանալ զմեղս իմ․ և ողորմեա։ Զարտասուս իմ և զհառաչանս սրտի իմոյ․ մարդասիրութիւնդ քո ընկալ Տէր․ և ողորմեա։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր․ բարերարութիւնդ քո խնայեա յիս և ողորմեա։

Աղաչեմ զքեզ Հայր երկնաւոր․ մի դարձուցաներ զերեսս քո յինէն․ զի նեղեալ եմ ես վաղվաղակի լուր ինձ Տէր։ Մոլորեալ անձն իմ անօրէնութեամբ․ մի կորուսաներ զիս Տէր ընդ անօրէնութեան իմոյ․ որ խնդրողդ ես մոլորելոց աշխարհի։

Ծանրացեալ մեղօք ընկղմի անձն իմ. ընկալ զիս որպէս երբեմն ըզՊետրոս. որ ծփիմս ա-լեկոծեալ յանցանօք։

Մեղայ Տէր բազումողորմ Աստուած. մեղայ ողորմեա։ Մեղայ Տէր և անկանիմ առաջի քո. մեղայ ողորմեա։ Մեղայ Տէր խոստովանիմ ըզ-յանցանս իմ. մեղայ ողորմեա։

Մեղաւոր քեզ Տէր քաւեա զիս։ Մեղաք անօրէ-նեցաք ամենեքեան ոչ պահեցաք ըզպատուիրա-նըս քո. մեղաւոր քեզ Տէր քաւեա զիս։ Դար-ձիր Տէր ի բարկութենէ քումմէ. անցո ի մէնջ ըզ-ցասումն քո. մեղաւոր քեզ Տէր քաւեա զիս։

Որ ըզԲանն անեղական զէակն էից գոյացուցեր. անձառաբար ծընար մարմին եղեալ ի փրկութիւն եղականացս. առ նա միշտ բարեխօսեա վն ան-ձանց մերոց։ Փառք Հօր։ Որ ըզպըտուղն ի քէն կենաց ընծայեցեր մեռելոյն Ադամայ. զորոյ պա-հօք քառասնօրեայ քաւեաց զպըտղոյն ճաշակումն և յանվախճան ըզնոյն վերածեաց ի կեանս. առ նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց։

Այժմ և միշտ։ Ի միւսանգամ քո գալըստեա-նըն յերևել ս՟ր նըշանին. արժանի արա ըզծա-ռայս քո վերըստին նորոգմանն. զի դու միայն ես Թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։

ԻԶ

Դարձո զցասումն քո ի մէնջ յաղաղակել հողեղինացս. բազմագութ Տէր խնայեա և մի կորուսաներ։ Կանգնեա զանկեալս ի գլորմանէ զվերաւորեալս ի թըշնամւոյն. որ բըժըշկդ ես

հիւանդաց բըժըշկեա՛ զիմ զհիւանդութիւնս: Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ գոչեմ որպէս ըզմաքսաւորն. Աստուած քաւեա՛ զիս ըզմեղաւորս:

Անբաւութեց քըննող գաղտնեաց բըժըշկեա՛ զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն. և կեցո՛ միայն մարդասէր: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան ողորմեա՛ անձին իմոյ բազմամեղի. և կեցո՛ միայն մարդասէր: Ամենաբաւական ողորմութեան շնորհս պարգևեա՛ ինձ յահագին աւուրն ըզթողութիւն. և կեցո՛ միայն մարդասէր:

Բազում են քո գթութիւնքդ բազմամեղ անձին իմոյ. ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ: Ո՛վ քեզ անյիշաչար Տէր մեղայ չարին խաբմամբ. ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ: Ի քո ի միւսանգամ գալըստեանն յորժամ գաս դատել զերկիր. ողորմեա՛ Աստուած քաւիչ իմ:

Անղաք մինչև յերկինս և զարդար ըզցասումն քո շարժեցաք ի մեզ. Տէր ըստ մեծի քում ողորմութեանդ ողորմեա՛ մեզ: Իջաք մինչ ի դըժոխս ընկըղմեալք յանօրէնութեան մերում. Տէր յիշեա՛ ըզգթինս արեան Որդւոյ քո և ողորմեա՛: Հալածեա՛ ի մէնջ Տէր նըշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն. և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Տաճար լուսոյ անըստուերին և առագաստ անճառ Բանին. որ ըզնախնւոյ մօրն Եւայի բարձեր զանէծսըն տըրտմալի. հայցեա՛ յՈրդւոյ քո միածնի Հօր հաշտութեանըն միջնորդի. բառնալ ի

մէնջ ըղխումութիւն և տուր զօգուտ խաղաղութեան։ փառք Հօր։ Ածածին ամենօրհնեալ յերկրէ երկնից հարսն ընծայեալ. յորժամ բազմիս լուսոյ նըման քո միածնի՛դ յաջակողմն. յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն փրկել ըզմեզ յահեղ բոցոյն. հա... մադասել ընդ արդարոցն երգել ըզփառս ընդ երկնայնոցն։

Այժմ և միշտ։ Երևեալ աղխսանդման ակըն պատուական ի ձեռս խաչին. հեղձանելով ըզծովըն կարմիր առաջնորդելով ժողովրդեանըն սեաւմբ ամպոյ ըլոյսն անմեկնելի ... որ ձեւացոյց մեզ սովաւ մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։

ԻԿ

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են ի մեղաց իմոց սուրբ արա զիս Տէր։ Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ աղաչեմ ըզքեզ թող ինձ Տէր։ Արտասուաց իմոց մի լռեր Տէր զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի։

Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա ինձ. զի անպատասխանի եմ յամենայնի թող ինձ Տէր։ Ճանապարհըք քո ուղիղ են ես միայն մոլորեցայ դարձո զիս և ողորմեա ինձ Աստուած։ Դատաստանըք քո արդար են ես միայն եմ մեղուցեալ քաւեա զիս և ողորմեա ինձ Աստուած։

Յոյս իմ ես դու Տէր քաւիչ յանցանաց իմոց. մի անտես առներ զըղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ Աստուած։ Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին. Հայր մեղայ յերկինս

և առաջի քո. ողորմեա ինձ Աստուած: Փրկեա զիս Աստուած ի բազում մեղաց իմոց. արա արժանի քոյին նը արքայութեանդ. ողորմեա ինձ Աստուած:

Մեղք իմ բազում են յոյժ ծանր են քան զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Բաց Տէր ըզդուռն ողորմութեան որ ողբալով կարդամ առ քեզ. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Հեղ յիս ըզգթութիւնդ քո բազումողորմ և մարդասէր. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Մեղայ քեզ Տէր. մեղայ ողորմեա: Մեղայ անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէն թշնամւոյն. արդ անկեալ աղաչեմ թող ինձ Տէր: Քան զամենեսեան առաւել մեղայ Տէր իմ գըթած. քան զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէն թըշնամւոյն. արդ անկեալ աղաչեմ թող ինձ Տէր:

Եկեսցէ Տէր ի վերայ մեր ողորմութիւն քո. և բան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր ի մեղաց: Ողորմութիւն քո և ճշմարտութիւն քո և լոյս երեսաց քոց առաջնորդեսցէ մեզ ի յարդարութիւն: Որ ողորմածդ ես գթած և երկայնամիտ Տէր ընկալ զաղաչանս մեր. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին:

Տէր ըզօր միւսանգամ քո գալստեանն լուսոյ և երկնից. զի ուսայ ի նըց պատուիրանաց եթէ գաս դու ի դատել զերկիր: Տէր յիշեցի ըզչար ըզգործս իմ և զարհուրեցայ. զի ծանեայ ճշմար-

տութեամբ զահաւոր եւ զանաչառ ըղ քո դատաստանն։ Տէր յիշեցի եւ ըզգութ արարչական սիրոյ քո առ քո արարածս. եւ ի քո գըթութիդ ապաւինեալ աղաչեմ. ողորմեա ինձ յաւուր յայնմիկ Քրիստոս արդար դատաւոր։

Աղաչանօք Աստուածածնին անապական քում ծընողին. զիմանալի աչըս սրտից մերոց բացցես ողորմութիւն Հայել ի լոյս քո Քրիստոս։ Փառք Հօր։ Մարիամ կոյս անարատ զանապական փեսայդ աղաչեա. զի Հաշտեսցի ընդ այրի եղեալ Հոգիս եւ միաւորեսցի դարձեալ սիրով ընդ Հեռացեալս ի նմանէ։

Այժմ եւ միշտ։ Յորժամ յարեւելից փայլես անձառ լուսով լուսաւորես զՀաւատացեալս. եւ դատապարտես զազգըն Հրէից անՀաւատից ով սուրբ քահանայութեան. եւ զիս լուսաւորեա ըզխաւարեալըս մեղօք. եւ դասակարգեա ի դասս մատենագրի յանձառ երկնից արքայութեանդ. զի անդադար օրՀնաբանիս եւ քո են փառք յաւիտեանս ամէն։

Գ.Ձ

Զերծո զիս յորոգայթէ որսողին. եւ յամենայն վտանգից ապրեցո. եւ ողորմեա։ Յաներեւոյթ թշնամւոյն եւ ի դառնի նետից բանսարկուին պաՀեա եւ ողորմեա։ Փրկեա զիս ի յանցանաց մեղաց իմոց. եւ նորոգեա զիս Հոգւով գիտութեան. եւ ողորմեա։

Ծով մեղաց իմոց զիս ալեկոծէ. որ ես նաւապետ բարի. շնորՀեա ինձ նաւաՀանգիստ Հայր

ամենակալ: Խորհուրդք պատրանաց զիս կորուսանեն. այլ դու նաւապետ բարի. շնորհեա ինձ նաւահանգիստ Հայր ամենակալ: Որ միայն իշխանդ ես թողուլ զմեղս. եւ ես աղաչեմ զքեզ Տէր թող ինձ զմեղս իմ Հայր ամենակալ:

Մերձեալ է օր գալստեան քո Տէր լուր ձայնի աղօթից իմոց որ կարդամս առ քեզ. և ողորմեա: Բանից իմոց ունկն դիր Տէր եւ ի միտ առ զաղաչանս իմ. զառաւօտուն որ կարդամս առ քեզ. և ողորմեա: Որ ընկղմեալս եմ ի խորս չարեաց. որ զՈրդիդ քո առաքեա առ իս որ կարդամս առ քեզ. և ողորմեա:

Ողորմեա ինձ Աստուած զի քեզ միայնոյ մեղայ: Բուժեա լուսով զիս ի տրտմոյ յանցանաց աղբեւր բժշկութեան. եւ ողորմեա: Յարենէ փրկեա զիս որ հոգւոց և մարմնոց ունիս իշխանութիւն. եւ ողորմեա:

Վիրաւորեալ յանցանօք անձն իմ առ քեզ Տէր համբարձի զաչս իմ. Թող ինձ զմեղս իմ միայն բարեգութ. Եւ ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում: Կործանեաց զիս չարագործ թշնամին և կամի իսպառ զիս որսալ. Հայր բարեգութ բժշկեա զվիրաւորեալս. Եւ ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում: Անդունդք մեղաց պաշարեցին զիս զի բազում են քան զաւազ ծովու. առ քեզ Տէր պաղատիմ փրկեա ի վտանգէս. Եւ ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում:

Զանապական զհոգեւոր զզգեստն յապակա-

նացու կենցաղըս ծախեցի . այլ առ քեզ միայն պաղատիմ բարերար փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս : Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարոյական որթ . այլ առ քեզ միայն պաղատիմ բարերար փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս : Ստամբանց եղէ ես որ զարմանենի՝ պտղաբերողս որպէս ձիթենի . այլ անյիշաչար եւ անոխակալ փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս :

Անտանելոյն տաղաւար բարձող էիցըս բարձողին . որ ծընար զԲան մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր . բարեխօսեա վասըն մեր անծածկին Մարիամ : Փառք Հօր : Որ վառեցար ի յարփւոյն և ոչ կիզար ըստ մորենւոյն . այլ ետուր զհացըն կենաց կերակուր բանաւորաց . բարեխօսեա առ Քրիստոս ջընջել ըզգիր մեղաց մերոց :

Այժմ և միշտ : Զկենդանագիր անարատ ծընողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեան քո . յորժամ գաս փառօք Հօր դատել ըզթշնամին խաչի քո . ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի . աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սըրբոյ :

Գ.Կ

Քրիստոս Աստուած աստուածոց . ողորմեա : Անօրէնութեամբ ի մեղս երկնեաց զիս մայր իմ . աղաչեմ փրկիչ ողորմեա : Վիրաւորեալ մեղօք անկանիմ առ քեզ փրկիչ . մի անտես առներ . ողորմեա :

Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին էառ ըզթո-

ւութի. Նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած։ Աւազակն աղաղակէր ի խաչին յիշեա զիս Տէր. Նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած։ Անառակ որդին աղերսանօք աղաչէր ըզքեզ. Հայր մեղայ յերկինս և առաջի քո. Նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած։

Շնորհեա մեզ Տէր ընդ աղքատաց օրինակին Ղազարու ժուժկալութի. զի կամաւոր աղքատութի արքայութենդ երկնից ընդ նմին լիցուք արժանի. լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։ Որ փոխանակ հացին կարօտութեան զհացն անմահութեան նմա շնորհեցեր և ընդ մեծատանն անգթութեն ի գոգն Աբրահամու ըզնա ընկալար. լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։ Լուսաւորեա զաչըս սրտից ստանալ մեզ ողորմութեամբ ի քէն Տէր զողորմութիւն. զի մի ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին ծարաւ մատին ջուր ի զովացումն. լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։

Զանըսկիզբն Աստուած զՀայրն ամենակալ. բարեբանեցէք ընդ զուարթունս երկնից։ Զառ ի Հօրէ ծնեալ զՈրդին միածին բարեբանեցէք հրեշտակային ձայնիւ։ Եւ զնորոգօղ նոր զՀոգին ձայնիւ ցնծութեամբ. բարեբանեցէք անլռելի ձայնիւ։

Անըսկիզբն Աստուած և թագաւոր երկնաւոր. բարեբանեալ ի զօրաց անմահից երկնաւորաց. ըզքեզ օրհնեմք Հայր անըսկիզբն։ Խոնարհեցար ի բարձանց վասն մերոյ փրկութեն. անձակիչ կալե-

լոյս և բժիշկ հոգւոց մերոց. ընդ քեզ գովեմք Որդի Միածին: Որ էակից ես ընդ Հօր և փառակից Միածնի. բաշխօղ պարգևաց և տուօղ ողորմութեան. ընդ քեզ բարեբանեմք սուրբ Հոգի ճշմարիտ:

Որ ըղձիս ածայի՞ն քո բանի՝ ծագեցեր յաշխարհշամած խաւարին անգիտութեա՞ն. լուսաւորեա՛ և զմեզ Հօր խնամութեամբ: Որ զհամօրէն դատաստանի՞ն օրինակ. նշանակեցեր առ մեծատունն և Պաղտո՞ս. ներհակաբար տալով զոր առ ընկալա՛ն: Մի՛ որոյ աղաչեսցո՞ք ըզքեզ Տէր փրկել ըզմեզ ի հրոյ մեղաց և տանջանա՞ց. հանգչել ի գոգ նահապետին արդարոյ: Որով և մեք ընդ հրեշտակաց ըն դասուց. անբաժանելի՛ ՍԲ Երրորդութեա՞ն. համաձայնեալ երգեմք ըզփառս ի բարձունս:

Ուրախացիր Բարձրելոյն հովանացեալ զօրութե՛. և բնակարան ՍԲ Հոգւոյն որով ծնար զԲանն Ած. բարե՞խօսեա վասն մեր Աստուածածին Մարիա՞մ: փառք Հօր: Աղբիւր կենաց բղխեալ յԵդեմայ ՍԲ Ածածին. որով արբեցաւ երկիր ծարաւեալ Հոգւոյն խնամովք. տա՛լ մեզ մաղթեա՛ աղբիւրս արտասուաց մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց: Այժմ և միշտ: Պ.և ցընծան բատրայինքս ամենայն ի միասնգամ քո գալստեանն. և յաւէժ զուարճանա՞ն դասք անմարմնոցն առ էիցս:

ԴՁ

Յանձնանիմ առ քեզ Տէր զանձս ի՛մ նայեա՛ յիս գըթութեամբդ քո. և ողորմեա: Դու ես

յոյս և ապաւէն իմ. զերծո զիս յորոգայթէ մեղաց. եւ ողորմեա: Ապրեցուցիչ իմ եւ փրկիչ իմ. ապրեցո զիս յորոգայթէ մեղաց. և ողորմեա:

Բազմութբ յանցանօք ծանրաբեռնեալ է անձն իմ. միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ ողորմեա ինձ Աստուած: Բղխմամբ արտասուաց եւ հառաչանօք սրտի իմոյ. անդադար հայցեմ բազմամեղութբ քաւեա զիս Աստուած: Բազմագութ մարդասէր շնորհեա զթողութի իմոյ յանցանաց. զի առ քեզ միայն պաղատիմ քաւեա զիս Աստուած:

Ածմարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր քաւեա զիս ըզմեղաւորս: Որ քղանցիւ հանդերձի քո ըզմերձեցեալն ի քեզ բժշկեցեր. քաւեա զիս ըզմեղաւորս: Որ բանիւ հրամանի քո զանդամալոյծն առողջացուցեր. քաւեա զիս ըզմեղաւորս:

Որ զաղաղակ կընոջն այլազգւոյ առընկալեալ փրկիչ մարդասիրապէս. եւ զիս ապաշխարութն արա արժանի ըղձայն մեղուցելոյս ընդունող: Որ հառաչմամբ ձայնի աղախնոյն. ոչ լռեցեր փրկիչ ընդունակ մեղաւորաց. եւ զիս ապաշխարութն արա արժանի ըղձայն մեղուցելոյս ընդունող: Որ զառաջնապարգեւի քո նըշխար. ոչ խնայեցեր ընձեռել շանըն հոլովասիրի. եւ զիս ապաշխարութն արա արժանի ըղձայն մեղուցելոյս ընդունող:

Անկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութի յանցանաց իմոց. մի անտես առներ Հայր զաղաչանս իմ: Աղաղակեմ որպէս մաքսաւորն. և

հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս պոռնիկն. մի՛ անտես առներ Հայր զաղաչանս իմ: Յանեռեւոյթ թշնամւոյն պարտեցայ. և ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ. մի՛ անտես առներ Հայր զաղաչանս իմ:

Ընկանիմ առաջի քո Թագաւոր Տէր. բազմամեղիս ողորմեա: Աղաղակեմ առ քեզ Փրկիչ քանանացւոյն ըղձայն. բազմամեղիս ողորմեա: Մաքսաւորին հառաչմամբ. կարդամ առ քեզ Քրիստոս Փրկիչ և բարերար. բազմամեղիս ողորմեա:

Ողորմեա ինձ Քրիստոս ողորմութեամբդ քո մեծաւ. զի կարօտ եմ ես շնորհի քո և ողորմութեան. ողորմեա և լուր ինձ բազմամեղիս: Լուր Տէր ձայնի ողբալւոյս և ցաւագին պաղատանացս. որ ամօթով կամ առաջի քո իմ չարաչար վարուքս. ողորմեա և լուր ինձ բազմամեղիս: Ընկալ Տէր զաղաչանս իմ եւ զհառաչանս սրտի իմոյ. որ աղաղակեմ որպէս կինըն քանանացի. ողորմեա և լուր ինձ բազմամեղիս:

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու. եւ կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր զմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ: Փառք Հօր: Որ անապական ծննդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն՝ Մարիամ մայր Աստուծոյ բարեխօսեա առ միածին Որդին լուծանել զկապանս մեղաց մերոց. և աղաչեա փրկել զանձինս մեր ի փորձութենէ:

Այժմ և միշտ: Բանն անեղ համագոյ որ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. երեւեալ ի յերկրի պայծառացան արարածք. հրճօրին կարողութեամբ և ընդմէջ վերամբրեաց յորդնորդութեան շնորհս:

Գ.Կ

Քրիստոս Աստուած յոյս անպատճառողաց. շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց: Առ քեզ բազմագութ ամենիշեալ կարդամք. մի մերժեր ընդմէջ յողորմութենէ քումմէ: Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ. յիշեա եւ զիս Տէր ի քում արքայութեանդ:

Ընդմէջ իմ խոստովան լինիմ առ քեզ Քս. որ միայնդ ես բազմագութ թողութիւն. ողորմեա ինձ Աստուած: Դու Տէր որ ճշմարտութեանց ես սիրող. եւ քննես զծածուկս գաղտնեաց սրտի իմոյ. ողորմեա ինձ Աստուած: Տուր ինձ զընծայութիւն փրկութեան. և Հոգւով տէրութեանդ քո հաստատեա զիս. եւ ողորմեա ինձ Աստուած:

Ալեք յանցանաց զիս ալեկոծեն. և մեղք իմ բազում զիս յանդիմանեն: Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս. որ չեմ ապրելոց յահագին հրոյն: Մեղայ քեզ Քրիստոս Որդի Այ. շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց:

Տէր որ ի մէջ լերինն աղբերացուցեր զջուրն ի վիմէն: Տէր ի սրտէ իմմէ հան ինձ արտասուս ապաշխարութեան: Զի կեցից և ապաշխարութիւն ապրեցայց ի հանդերձեալ քոց դատաստանաց:

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ Հայր երկնաւոր. օգնեա ինձ ի նեղութեանս. որ մեղօքս

եմ մեռեալ օգնեա՛ ինձ: Վիրաւորեցայ ես յաներեւոյթ թշնամւոյն. բըժիշկ հիւանդաց բըժըշկեա՛ զիմ զհիւանդութիւնս. որ մեղօքս եմ մեռեալ օգնեա՛ ինձ: Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրո՛ղ գերելոց խնդրեա՛ զիս ըզմոլորեալս. որ մեղօքս եմ մեռեալ օգնեա՛ ինձ:

Մեղայ քեզ Տէ՛ր քաւեա՛ զիս. եւ ողորմեա ինձ Աստուած: Ոչխար եմ բանաւոր հօտի քո եւ առ քեզ ապաւինիմ հովիւ բարի. խնդրեա՛ զիս ըզմոլորեալս. եւ ողորմեա ինձ Աստուած: Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ Եւ առ քեզ աղաղակեմ նաւապետ բարի. փրկեա՛ զիս ի վտանգէս. եւ ողորմեա ինձ Աստուած:

Ով որ անարատ մայր Աստուծոյ Մարիամ. զմիածին քո զորդին զի շնորհեսցէ ըստ աւազակին. ժառանգել վերըստին մեզ ըզդրախտին վայելչութիւն: Փառք Հօր: Ցընծա Մարիամ արեգակնն արդարութեան արեւելք. Եւ աղաչեա՛ զնա ի քէն ծնեալն Աստուած վասըն մեր. զի դարձուսցէ վերըստին զմեզ ի դրախտին ժառանգութիւն:

Այժմ եւ միշտ: Յաղթող զօրութիւն խաչի քոյ պահեա ըզմեզ Քս Աստուած որ տարածեցեր ըզձեռս քո ի նմա. Եւ լուծեր զկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թըշնամւոյն:

# ՀԵՐՑԴ
# ՃԱՇՈՅ

## Ա. ՀԱՐՑ ԱՁ:

Որ հայես քաղցրութեամբ յարարածըս քո Հայր ամենակալ. օրհնեալ ես Աստուած հարցըն մերոց: Որ իջեր ի փրկել զարարածըս քո Որդիդ միածին. օրհնեալ ես Աստուած հարցըն մերոց: Որ խնամես տեսչութեամբ զարարածըս քո Հոգիդ ճշմարիտ. օրհնեալ ես Աստուած հարցըն մերոց:

Գ. ԱզՏէր. ամենայն գործըք քո ընդ քեզ օրհնեն: Փառք Հօր: Որ յոչընչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր. յիշեա զմեզ Տէր մարդասիրութեամբդ քո. ամենայն գործըք քո ընդ քեզ օրհնեն: Այժմ եւ միշտ: Որ անդադար փառաբանիս ի քո արարածոց. ընկալ զաղաչանըս որ եկեղեցւոյ քո. ամենայն գործըք քո ընդ քեզ օրհնեն:

## ՄԵԾԱՑՈՒՑԷ ԱՁ:

Յանճառ փառաց խոնարհեցար ի մեր բնութիւնըս. Բանդ Աստուած եւ մարմնացար ի սրբոյ Կուսէն: Փառք Հօր: Եւ ծնար ի սուրբ Կուսէն անապական մարմնով. ընդ քեզ անդադար բարեբանեալ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Այսօր զենկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան. միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք:

## ՈՂՈՐՄԷ ԱՁ:

Հայր բազումողորմ. խոստովանիմ առ քեզ որպէս զանառակ որդին. թող ինձ ըզմեղս իմ. եւ

ողորմեա։ փառք Հօր։ Տէր որ գթացար ի կինըն քանանացի. գթա եւ յիս ի մեղաւորս և ողորմեա։ Այժմ և միշտ։ Տէր որ դարձուցեր ըզմաքսաւորն ի գիտութիւն ճշմարտութեան. դարձո և զիս ըզ-մոլորեալս. եւ ողորմեա։

### ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԱՁ։

Տր որ ի վերայ քերովբէից փառաբանիս. քաղցրութեամբ խոնարհեալ ընկալ զաղաչանս մեր։ փառք Հօր։ Տր որ շնորհեցեր ողորմութի ազգի մարդկան. քաղցրութեամբ խոնարհեալ ընկալ զաղաչանս մեր։ Այժմ և միշտ։ Տր որ ուսուցեր մեզ յամ ժամ փառս տալ անուանդ քում սրբոյ. քաղցրութեամբ խոնարհեալ ընկալ զաղաչանս մեր։

### Բ. ՀԱՐՑ ԱՁ։

Որ համագոյից ես հաստիչ հարցըն մերոց Աստուած. տուր մեզ անդադար օրհնել զահաւոր անուն քո սուրբ։ Որ երգեցողացն աղօթիւք հրաշացուցեր ի մէջ հնոցին ըզքո զանչափ զօրութիւդ. տուր մեզ անդադար օրհնել զահաւոր անուն քո սուրբ։ Որ ապրեցուցեր զերիս մանկունսն ի մէջ հրոյն բորբոքեալ բոցոյն. տուր մեզ անդադար օրհնել զահաւոր անուն քո սուրբ։

Գ. ԸզՏր օրհնեցէք։ Միաբանութեամբ բարձր արարէք յաւիտեան զԱստուածն Աբրահամու։ փառք Հօր։ Զանբաւելին ի յէութե երկրաւորքս ընդ երկնայինսըն. միաբանութեամբ բարձր արարէք յաւիտեան զԱծն Իսահակայ։ Այժմ և միշտ։ Զանհասն ի բարձրութե քահանայք և

ժողովուրդք միաբանութեամբ բարձր արարէք յաւիտեան զԱծն Իսրայէլի:

Մեծացուսցէ ԱՁ:

Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար ուրախ լեր․ բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Փառք Հօր: Անսկիզբըն Բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն ըսկիզբըն ի կուսէդ․ Քրիստոս Աստուած թագաւորն յաւիտենից: Այժմ և միշտ: Աղաչեմք ըզքեզ ո՛վ Ածածին առ Քս բարեխօսեա փրկել զժողովուրդս իւր զոր գնեաց արեամբն իւրով:

Ողորմեա ԱՁ:

Աստուած բազումողորմ․ խնայեա յարարածս քո Հայր ամենակալ․ և ողորմեա: Փառք Հօր: Արեգակն արդարութեան․ ծագեա ի հոգիս մեր ըզլոյս ճշմարտութեան․ և ողորմեա: Այժմ և միշտ: Տուր մեզ Տր զխաղաղութիւն․ և փրկեա ի նեղեաց մերոց Հոգիդ ճշմարտութեան․ և ողորմեա:

Տէր յերկնից ԱՁ:

Քեզ վայելէ Աստուած օրհնութիւն զօրհնապանց: Փառք Հօր: ԶՀայր և զՈրդի և ըզսուրբ զՀոգին գոհութեամբ բարեբանեսցուք: Այժմ և միշտ: ԶԵրրորդութիւն միաբանական գովեմք․ և ըզմի Ածութիւն:

Գ․ ՀԱՐՑ ԱՁ:

Որ յամի ես կարող օրհնեմք ըզքեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ անապական քոյով զօրութեամբ պահեցեր զյուսացեալսն ի քեզ սուրբ ըզմանկունսն․ փրկեա և ըզմեզ մարդասէր Տէր

Աստուած հարցըն մերոց: Բարձրացուցանեմք գովելով զանուն քո սուրբ. Թագաւոր որ յաթոռ փառաց նստիս. օգնեա մեզ ի նեղութե մերում. Աստուած հարցըն մերոց:

Գ. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ. եւ առաւել բարձր արասցէ ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Զ:

Մեծացուցանեմք ըզքեզ որ ի Հօրէ Անեղ և անճառելի ծընունդ. որ ի կուսէն մարմնացար ցուցար մեզ: Փառք Հօր: Մեծացուցանեմք ըզքեզ որ կոխեցեր ըզմահ աստուածապէս և լուծեր զկնիք մահու. որ ի խաչին բարձրացար կամաւ Հօր: Այժմ և միշտ: Մեծացուցանեմք ըզքեզ որ թաղեցար ի նոր ի գերեզմանի. եւ յերրորդ աւուր յարեար որ ի յերկինս համբարձար փառօք Հօր:

Ողորմեա Ա.Զ:

Ի նեղութեան իմում օգնեա ինձ Տէր. ոպ երբեմն Յովնանու և ողորմեա: Փառք Հօր: Ի յանցանաց իմոց մաքրեա զիս Տէր. որպէս երբեմն ըզմաքսաւորն. և ողորմեա: Այժմ և միշտ: Ի նենգաւոր շըրթանց փրկեա զիս Տէր. և յարենէ ապրեցո. և ողորմեա:

Տէր յերկնից Ա.Զ:

Ամենայն զինուորութիւնք հրեշտակաց անդադար ձայնիւ օրհնեն ըզքեզ Հայր. ամենակալ Աստու-

ւած եւ միայն մարդասէր: փառք Հօր: Նոր օր-հնութիւն քեզ երկրածինս երգեսցուք. առաքեալ ի Հօրէ Որդիդ միածին. ամենակալ Աստուած եւ միայն մարդասէր: Այժմ և միշտ: Ուրախութեամբ ընդ-քեզ գովեն արարածք բաշխօղ պարգեւաց որ Հո-գիդ ճշմարիտ. ամենակալ Ած եւ միայն մարդասէր:

Գ. ՀԱՐՑ ԱՁ:

Բարեբանեալ ես Թագաւոր անմահ. Ած հար-ցըն մերոց: Հաստատեցեր ուխտս ընդ ծառային քում Աբրահամու. Ած հարցըն մերոց: Բար-ձրացուցեր ըզմանկունս եկեղեցւոյ սրբոյ քո. Ած հարցըն մերոց:

Գ. ԸզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզ-նա յաւիտեան: փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ. եւ առաւել բարձր արասցէ ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱՁ:

Ըզքեզ երեւեալ դուռն առ Եզեկիէլ ըմարգա-րէիւ. ընդ որ ոչ ոք էանց եթէ ոչ Ած միայն. Ածածին կոյս. օրհնութեամբ մեծացուցանեմք: փառք Հօր: Ըզքեզ որ ի մորենւոջն առ Մովսիսիւ ըմարգարէիւ. ըզնոր խորհուրդ կուսի յայտնեցեր մարդկան ազգի. օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Ըզքեզ որ ի Հօրէ անժամանակա-պէս եւ ի մօրէ անթարգմանաբար. ի ժամանակի ծնընդեան ի բոլորից փրկութիւն յայտնեցար Որ-դի Բարձրելոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ողորմեա Ա.Ձ:

Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց. Տէր խաղաղութեան օգնեա՛ ինձ: Փառք Հօր: Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ. Թագաւոր խաղաղութեան օգնեա՛ ինձ: Այժմ և միշտ: Ի խորոց մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ. Նաւապետ բարի փրկեա՛ զիս:

Տէր յերկնից Ա.Ձ:

Որ բնակեալդ ես ի յերկինս օրհնեմք զքեզ: Փառք Հօր: Զօրհանապազ օրհնեսցուք զանուն սուրբ քո: Այժմ և միշտ: Բարձր արարէք զՏէր Աստուած մեր:

Ե. ՀԱՐՑ Ա.Ձ:

Բարեբանեալ ես ի յաւիտեան Տէր Աստուած հարցն մերոց: Որ բացեր մաներ ի մէջ ողորմութիւն քո Տէր Աստուած հարցն մերոց: Ըստ ողորմութեան քում փրկեա զմեզ ի նեղչաց մերոց. Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Զնստեալն ի քերովբէական աթոռ. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Զթագաւորըն Քրիստոս և զԱստուած խաղաղութեան. օրհնեցէք ժողովուրդք և բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Զոր փառաբանեն զօրք անմարմնոց հրեշտակաց. քահանայք աստուածաբանելով ժողովուրդք առաւել բարձրացուցէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Ձ:

Որ զԲանն Աստուած բաւական եղեր ընդունել

յորովայնի միշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Փառք Հօր: Որ էիցդ լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի գիրկըս քո մարմնով. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Այժմ և միշտ: Անարատ տաճար տնօրէնութեան կոչեցար Հոգւոյն սրբոյ միշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս:

Ողորմեա Ա.Զ:

Խ·ի՛ւնս: Ողորմեա ինձ Աստուած: Փառք Հօր: Ի լուսեղէն ընձայուն փողոյն յարհաւիրս ահաւորին. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան. ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ. Ի նըստել քո յաթոռն դատաւոր ահեղ. յորժամ առնես հրափորձութիւն ըզքննութիւն որդւոց մարդկան. ողորմեա ինձ Աստուած:

Տէր յերկնից Ա.Զ:

Ի բարձանց: փառք քեզ Աստուած: Փառք Հօր: Երկնային զինուորութիւնքն հրաշալի ձայնիւ. փառաբանեն ասելով. որ նըստիս ի քերովբէս. փառք քեզ Աստուած: Այժմ և միշտ: Երկրածին որդիք մարդկան սաղմոսիւք և օրհնութեամբ. աղաղակեն ասելով. Երրորդութիւն անբաժանելի. փառք քեզ Աստուած:

Ա. ՀԱՐՑ Ա.Կ:

Զանուն քո Տէր օրհնեմք. փառաւորեմք ըզքեզ Աստուած հարցն մերոց: Ի ջերմ հնոցին ի Բաբելոնի. փառաւորեմք ըզքեզ Աստուած հարցն մերոց: Ափրկեցեր զերիս մանկունսն ի հրոյն բռնութենէ. փառաւորեմք ըզքեզ Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: փառք Հօր: Հրեշտակն Հօր իջեալ ի հնոցն և թօթափէր զհուրն ի նոցանէ. և անկէզ պահեաց զմանկունսն ի հրոյն. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Նոյն մանկունքն ի հնոցին գոհաբանէին. որ պահեցեր զմեզ ի հրոյս արժանի արարեր օրհնել զքեզ Աստուած և գովել զանուն քո յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՑԷ Ա.Կ:

Որպէս լեր Աստուածածին տաճար անխախտելի. զքեզ մեծացուցանեմք: փառք Հօր: Յղացար անարատութեամբ. եւ զԱստուած վայելչապէս ծնար. որպէս լեր Աստուածածին տաճար անխախտելի. զքեզ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Երգէ մարգարէն սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ եւ դուռն երկնային. որպէս լեր Աստուածածին տաճար անխախտելի. զքեզ մեծացուցանեմք:

ՈՂՈՐՄԵԱ Ա.Կ:

Ձօնեմ կենդանարարիդ հանապազ զեւս մատուցանէ: փառք Հօր: Աներկեալ մեզ թշնամին ինձ յարուցանէ: Այժմ և միշտ: Նմանապէս բարի լեր անձին իմոյ ապաւէն:

ՏԵՐ ՅԵՐԿՆԻՑ Ա.Կ:

Ի համբառնալ իմում առ քեզ զաչս իմ ողորմեա ինձ Տէր: փառք Հօր: Ի յօրհնութիւն նոր օրհնեսցուք զքեզ Քրիստոս փրկիչ մեր: Այժմ և միշտ: Այցելու մեր և փրկիչ կեցո զանձինս մեր:

Ի· ՀԱՐՑ ԱԿ:

Ո՛ր խոնարհեցար ի տկարութիւնս մեր մարդասէր Տէր· օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց: Եւ բարձեր զմեղս մեր չարչարանօք քո· շնորհեա բանաւոր հօտի օրհնել զանուն քո անդադար· Աստուած հարցն մերոց: Ո՛ր արարեր զքանչելիս ի հնոցին առ ի մեզ զողորմութի՛ քո մարդասէր· Աստուած հարցն մերոց:

գ·· Իջեր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան: փառք Հօր: Եցէք· Ո՛ր զհուր հնոցին շիջոյց և զմանկունսն ապրեցոյց ի բո-ցոյն· բարձր արարէք զնա յաւիտեան, Այժմ և միշտ: Եսցէ: Զօրութի որ Հոգւոյն փրկեցան Անանիանքն· և երգէին միաբանութեամբ· բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱԿ:

Անարատ տաճար բնակարան անբաւ Բանին Այ· Մարիամ որ կոյս· զքեզ և զծնեալն ի քէն մեծացուցանեմք: փառք Հօր: Յարգանդի կրեցեր որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ զԲանն. եւ ծնար մարմնով· զքեզ և զծնեալն ի քէն մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Արդ խնդրեմք ի քէն անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց· առ Որդին քո միածին փրկել զմեզ ի փորձանէ և յամ վտանգից մերոց:

Ողորմեա ԱԿ:

Մերձ եմ յընկղմել օգնեա ինձ նաւապետ բարի· քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց: փառք Հօր: Ած յօգնել ինձ փութա

քանզի խորըք չարեաց ընկղմեն զիս յանդունդս. այլ դու նաւապետ լեր և ինձ ձեռնտու: Այժմ և միշտ: փրկեա ի վտանգէ ըղձաւորեալս ի յալեաց ծովէ. քանզի կործանիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ:

Տէր յերկնից Ա.Կ:

Բարձրեալ ահաւոր Տէր փառըք քեզ: Բարձրեալ վն վերին աթոռոյն. ահաւոր վն ահեղ ատենին. բարձրեալ ահաւոր Տէր փառըք քեզ: Փառք Հօր: Բարձրեալ ես դու յերկինս Աստուած. յամ երկրի են փառըք քո. բարձրեալ ահաւոր Տէր փառըք քեզ: Այժմ և միշտ: Զի դու բարձրացար ըզմեզ փրկեցեր. նստար ընդ աջմէ Հօր մեզ կեանըս շնորհեցեր. բարձրեալ ահաւոր Տէր փառըք քեզ:

Գ. ՀԱՐՑ Ա.Կ:

Աստուած հարցըն մերոց բարեբանեալ է անուն քո յաւիտեան: Աստուն ուխտի հարցըն մերոց Տէր. մի մատներ իսպառ վասն անուանըդ քում սրբոյ: Առաւել փառաւորեալ է անուն փառաց քոց ամենայն յաւիտեան:

Գ. ԸզՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ. եւ առաւել բարձր արասցէ ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Կ:

Մեզ գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ հոտ

անմահութեան ծնընդոցս Եւայի յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութիւն ըզքեզ մեծացուցանեմք: փառք Հօր: Դու լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի որով հերքեաւ խաւարն առաջին. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Զքեզ ունիմք բարեխօս կոյս ամենօրհնեալ. մայր անարատ Էմմանուէլի տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Ա.Կ:

Աղաչեմ ըզքեզ Տէր պարգեւեա ինձ. ապաշխարութեամբ լուանալ ըզմեղս իմ. եւ ողորմեա: փառք Հօր: Զարտասուս իմ եւ զհառաչանս սրտի իմոյ՝ մարդասիրութիւնդ քո ընկալ Տէր. եւ ողորմեա: Այժմ եւ միշտ: Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տր. բարերարութիւնդ քո խնայեա յիս եւ ողորմեա:

Տէր յերկնից Ա.Կ:

Տուք փառս Այ բընակելոյն ի յերկինս միաբանութեամբ: Բնակելոյն ի սրբութեան մատուսցուք զաղօթս մեր. եւ խնդրեսցուք ողորմութիւն ի բարերար Տեառնէ մերմէ: փառք Հօր: Յանձառ փառաց խոնարհեցաւ վասն փրկութեան մերոյ. զի դարձուսցէ ըզմոլորեալս ի գիտութիւն ճշմարտութեան: Այժմ եւ միշտ: ԶԱստուած օրհնեսցուք ի սրբութեան անձանց մերոց գոհաբանելով. եւ խնդրեսցուք ողորմութիւն ի բարերար փրկչէն մերմէ:

Դ․ ՀԱՐՑ ԱԿ։

Օրհնեա՜լ և փառաւորեա՜լ Աստուած հարցըն մե-րոց։ Արդա՜ր ես յամենայնի՜ Տէր կեցո՛ զանձինըս մե՛ր։ Եւ մինքն ոչ դադարեի՛ն զորս արկեալ էր և գնային ի մէջ հնոցի հրոյն․ զԱստուած փառաւորեի՛ն։

Դ․ Ըզտէր օրհնեցէք բա՜րձր ամբարձէ՛ք ըզնա յաւիտեա՛ն։ փառք Հօր։ Իջմամբ Որդւո՛յն Աս-տուծո՛յ բոց հնոցին ցօղանայր․ անդադա՛ր գովե-լով բա՜րձր ամբարձէ՛ք ըզնա յաւիտեա՛ն։ Այժմ և միշտ։ Յաղթօղ զօրութեամբ զօրհնաբանեալս ա-պրեցոյց․ ընդ նոսին գովելով բա՜րձր ամբարձէ՛ք ըզ-նա յաւիտեա՛ն։

Մեծացուսցէ ԱԿ։

Զանճառելի ըղձի՜ս Աստուածութեան․ ան-նորինաբար կրեցեր ի քում յորովայնի Մարիամ մայր և կոյս․ օրհնութեամբ ըզքեզ մեծացու-ցանեմք։ փառք Հօր։ Ի միմնաւոր լուսոյն զար-հուրեցան դասք առաքելոցն․ այլ ի քեզ բովան-դակ կրեցեր ըզհուր Աստուածութեանըն Մարիամ մայր և կոյս․ օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Առաքելոցըն հովանացեալ ամպ լուսեղէն․ զներգոյն քեզ Հոգւոյն սրբոյ․ և զօրութիւն բարձրելոյն հովանաւորեալ սուրբ Աս-տուածածին․ օրհնութիւն ըզքեզ մեծացուցանեմք։

Ողորմեա ԱԿ։

Աղաչեմ ըզքեզ Հայր երկնաւոր․ մի դարձու-ցաներ զերեսըս քո յինէն․ զի նեղեալ եմ ես վաղվաղակի լո՜ւր ինձ Տէր։ փառք Հօր։ Սուր-

եալ անձն իմ անօրէնութեամբ. մի կորուսաներ զիս Տէր ըստ անօրէնութեան իմոյ. որ խնդրողդ ես մոլորելոյ ոչխարիս։ Այժմ և միշտ։ Ծանրացեալ մեղօք ընկղմի անձն իմ. ընկալ զիս որպէս երբեմն զմեղաւորն. որ ծնփիմս աղէկոծեալ յանցանօք։

Տէր յերկնից ԱԿ։

Փառք պատիւ և գոհութիւն Տէր անուանդ քում սրբոյ։ Փառք Հօր։ Քում սրբոյ տէրութեանդ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն։ Այժմ և միշտ։ Օրհնեալ Տէր բարերար որ ուսուցեր մեզ յամ ժամ փառս տալ անուանդ քում սրբոյ։

Ե. ՀԱՐՑ ԱԿ։

Զանճառ էութիւն և զմի Աստուածութիւն բարեբանեմք Տէր Աստուած հարցն մերոց։ Որ վասն հարցն մերոց իջեր ի փրկել զարարածս քո Աստուած հարցն մերոց։ Որ նստիս ի քրովբէս և հայիս քաղցրութեամբ յարարածս քո Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Տիւք և գիշերք զՏէր օրհնեցէք. և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Խորայէն զՏէր օրհնեսցէ և առաւել բարձր արասցէ զնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԱԿ։

Որ զկեանքն անմահարար մահկանացու բնութեան ի քեզ կրեցեր ո՛վ կոյս Մարիամ. որով մեռեալքս որք յԱ. դամայ կենդանացաք յուսով յարութեան.

առ Նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց : Փառք Հօր : Որ զբանն անեղական զէակն էից գոյացութեանց . անճառաբար ծընար մարմին եղեալ ի փրկութիւն աշխարհացս. առ Նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց : Այժմ և միշտ : Որ զպտուղն ի քէն կենաց ընծայեցեր մեռեալն Ադամայ . զորոյ պահօք քառասնօրեայ քաւեաց զպտղոյն ճաշակումն և յանվախճան զնոյն վերածնեաց ի կեանս. առ Նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց :

ՈՂՈՐՄ— Ա.Կ :

Թ.իւնս իմ: Մեղայ քեզ Տր քաւեա զիս : Փառք Հօր : Մեղաք անօրինեցաք ամենեքեան ոչ պահեցաք զպատուիրանս քո. Մեղայ քեզ Տր քաւեա զիս : Այժմ և միշտ : Դարձիր Տր ի բարկութենէ քումմէ . անցո ի մէնջ զցասումն քո. Մեղայ քեզ Տր քաւեա զիս :

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Ա.Կ :

Որ Տէրդ ես երկնի և երկրի զքեզ օրհնեն զուարթունք երկնից հոգեւոր երգով : Փառք Հօր : Օրհնեմք զքեզ Քրիստոս փառաց թագաւոր. որ շնորհեցեր մեզ ձայնակից լինել զուարթնոց երկնից: Այժմ և միշտ : Ամ Երրորդութիւն անմահ . աղօթիւք սրբոց քոց կարդամք առ քեզ լուր ձայնից մերոց :

Ա. ՀԱՐՑ ԻԶ :

Օրհնեալ Տէր Ած հարցն մերոց : Որ իջեր ի մէջ հնոցին և փրկեցեր զերիս մանկունսն . ընդ քեզ օրհնեմք անդադար Ած հարցն մերոց : Միասնական սբ Երրորդութիւն որ յաւէտ ես բարե-

բանեալ. ընկալ ըզմեր օրհներգութիւնս Տէր հարցըն մերոց։

Գ. ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Փառք Հօր։ Ամենայն ժողովուրդք միաբան երգով բարեբանեցէք. և բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Զարարիչն ի վեր քերովբէից. քահանայք դուք առաւել բարեբանեցէք. և բարձր արարէք ըզնա յաւիտեանս։

## Մեծացուսցէ ԻԶ։

Սուրբ եւ Ածածին Մարիամ ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան. մայր և աղախին մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Անկէզ մորենի և տաճար ընդհանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութիւն. մայր և աղախին մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Խորհուրդ կենաց եւ մայր կենդանութեան. և առագաստ հրաշալի ծագմանն. մայր և աղախին մեծացուցանեմք։

## Ողորմեա ԻԶ։

Դարձո զցասումն քո ի մէնջ յաղաղակել հողեղինացս. բազմագութ Տէր խնայեա և մի կորուսաներ։ Փառք Հօր։ Կանգնեա զանկեալս ի գլորմանէ զվիրաւորեալս ի թշնամոյն. որ բժիշկդ ես հիւանդաց բժշկեա զիմ զհիւանդութիւնս։ Այժմ և միշտ։ Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ գոչեմ որպէս ըզմաքսաւորն. Աստուած քաւեա զիս ըզմեղաւորս։

## Տէր յերկնից ԻԶ։

Որ ի վերդ ես քան զամ ըզմիտս և զխորհուրդս. փառաց թագաւոր խնայեա ի մեզ։ Որ միայն

ունիս զանմահութի և զանեղութիւն. փառաց թագաւոր խընայեա ի մեզ: Փառք Հօր: Որ նըստիս ի քրովբէս Երրորդութի անբաժանելի. փառաց թագաւոր խընայեա ի մեզ. Այժմ և միշտ: Որ երկրպագեալդ ես ի հրեշտակաց և ի մարդկանէ. փառաց թագաւոր խընայեա ի մեզ:

Բ. ՀԱՐՑ ԻԶ:

Ուղիղ են ճանապարհըք քո յամի արդար. Տէր Աստուած հարցըն մերոց: Ըզբանաւոր պատարագս յան-ձանց խոնարհաց ընկալ. Տէր Աստուած հարցըն մերոց: Ի տաճարի սըրբութեան փառաւորութի մատու-ցանեմք քեզ. Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ. Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ: Քահանայք ան-դադար բարեբանեցէք զանքննելի և զյայտնի Աստուածութիւնն. և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՑԷ ԻԶ:

Ըզկուսութիւնդ քո Աստուածածին անարատ զոր ոչ բա-ցակիզեաց հուր Աստուածութեանն մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ յարգանդի քում անապականաբար բնա-կեցաւ Քրիստոս Աստուած. և փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Անհա-սանելի տէրունական յայտնութիւն աշխարհի ծա-գեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Ողորմեա ԻԶ:

Մեղաք մինչև յերկինս և զարդար ըզցասումն քո շարժեցաք ի մեզ. Տէր ըստ մեծի քում ողորմութեանդ ողորմեա մեզ: Փառք Հօր: Իջաք մինչ ի գերժոխս ընկղմեալքս յանօրէնութեան մերում. Տէր յիշեա ըզգթոյս արեան Որդւոյ քո և ողորմեա: Այժմ և միշտ: Հալածեա ի մէնջ Տէր նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներևոյթ գազանն. և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս:

Տէր յերկնից ԻԶ:

Համբարձման ի փողոյ սաղմոսարանաւ և քնարիւ. օրհնեցէք ըզՏէր ի յերկինս: Փառք Հօր: Որդիք Սիոնի ցընծացիք և ուրախացիք. գովեցէք զՈրդին միածին: Այժմ և միշտ: Նոր զՀօրին ամ շուրջ բարբառանեցէք. երգով և ձայնիւ ցընծութեան:

Ա. ՃԱՇՈՒ ԻԿ:

Որ հարցըն մերոց Աբրհ փառաւորեալ յաւիտեանս: Արարչակից Հօր Որդիդ միածին կենդանարար Տէր և լոյս աշխարհի: Ըստ ողորմութեան քում կեցո զմեզ փրկիչ. և մեք զանուն քո փառաւորեսցուք:

Գ.. ԸզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ: Զթագաւորն ամենեցուն ամենայն ժողովուրդք. օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ ԲԿ:

Սիոն լուսոյ և ամպ հովանի սուրբ կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Ածածին կոյս: Փառք Հօր: Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պտուղըն կենաց ի քէն տուաւ մեզ. զքեզ բարեբանեմք Ածածին կոյս: Այժմ և միշտ: Անիծից լուծիչ եւ քակիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտանելին յեղից ի գիրկըս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Ածածին կոյս:

Ողորմեա ԲԿ:

Թիւնս իմ: Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա ինձ. զի անպատասխանի եմ յամի թող ինձ ՏԷՐ: Փառք Հօր: Տառապեալ Ճանապարհըք քո ուղիղ են ես միայն մոլորեցայ. դարձո զիս և ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ: Թեւան քո Դատաստանըք քո արդար են ես միայն եմ մեղուցեալ. քաւեա զիս և ողորմեա ինձ Աստուած:

Տէր յերկնից ԲԿ:

Յորժամ գայցես բազում հրեշտակօք ՏԷՐ ի դատել զերկիր: Փառք Հօր: Յայնժամ շարժին զօրութիւնք երկնից ՏԷՐ ի յահէ քումմէ: Այժմ և միշտ: Եւ յայնմ աւուր լեր իմ օգնական ՏԷՐ իմ և Աստուած իմ:

Բ. ՀԱՐՑ ԲԿ:

Մանկունքըն գերեալք ի մէջ հնոցին ըզքեզ օրհնէին Աստուած հարցըն մերոց: Խոստումն Աբրահամու զոր խոստացար Ած. առաքեա և փրկեա զապաւինեալըս ի քեզ. Աստուած հար-

ցըն մերոց։ Ուղիղ են ճանապարհք քո Աստուած մեղուցելոյ յանցաւորացս ողորմութի շնորհեա Աստուած հարցըն մերոց։

Գ.. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Տիւք և գիշերք զՏէր օրհնեցէք. եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Իսրայէլ զՏէր օրհնեսցէ եւ բարձր արասցէ զնա յաւիտեան։

Մեծացուսցէ ԲԿ։

Որ ողորմեցար ի մեղս ծնելոյ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ նոյն բնութեանս այսօր պարգեւ զկոյսըն սուրբ զծնող Որդւոյդ միածնի. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։ Փառք Հօր։ Որ ցուցեր ի մեզ յամլոյ ծրինաց Որդիդ այսօր զկոյսըն Մարիամ. յորմէ ծնեալ մարմնով և բարձեր նովաւ զմեղս նախաստեղծին Ադամայ. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ մաքրեցեր Հոգիդ սուրբ զախտ և զարգանդ մօր քո փառակցին. այսօր ամուլ ծնողաց նորին նոյն զմայր Բանին զօրհնիչ Եսայի. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։

Ողորմեա ԲԿ։

Յոյս իմ ես դու Տէր քաւիչ յանցանաց իմոց. մի անտես առներ զողորմութիւն արտասուաց իմոց. ողորմեա ինձ Աստուած։ Փառք Հօր։ Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին. Հայր մեղայ յերկինս և առաջի քո. ողորմեա ինձ Աստուած։ Այժմ և միշտ։ Փրկեա զիս Աստուած ի

բաղում մեղաց իմոց. արա՜ արժանի քոյին նը ար-քայութեանդ. ողորմեա՛ ինձ Աստուած:

Տէր յերկնից ԲԿ:

Ընդ առաւօտս կանխեցից յանդիման լինել քեզ Թագաւո՛ր իմ և Աստուա՜ծ իմ: Փառք Հօր: Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում Տէր Թագաւոր իմ և Աստուա՜ծ իմ: Այժմ և միշտ: Ես ընդ քեզ աղաչեմ Տէր նայեա յաղօթս իմ. Թագաւո՛ր իմ և Աստուա՜ծ իմ:

Ա. ՀԱՐՑ Գ.Ձ:

Փառաւորեալ անուն քո յաւիտեան. Տէ՜ր Ա՛ծ հարցըն մերոց: Վասն անուան քո մեծի. մի՜ մատներ ըզմեզ իսպառ. Տէ՜ր Ա՛ծ հարցըն մերոց: Բարձրացուցանեմք գովելով զանուն քո սուրբ. Տէ՜ր Ա՛ծ հարցըն մերոց:

Գ.. ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզ-նա յաւիտեան: Փառք Հօր: Որ ի յերկրէ ի յերկինս համբարձաւ. ի վեր Թևոց հողմոց. ժո-ղովուրդք օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ նստի ի բար-ձունս յաթոռ ընդ աջմէ Բարձրելոյն. քահա-նայք օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յա-ւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՑԷ Գ.Ձ:

Ածածին երկնային դռան անձայնին ձայնին ա-ւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: Փառք Հօր: Ի քերովբէս բազ-մեալ ընդ Հօր անպատմանաբար բնակել հաճե-ցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ

Տէր ընդ քեզ: Այժմ և միշտ: Որ բոցեղէն սրովբէիւք շրջափակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ:

Ողորմեա Գ.Ձ:

Զերծո զիս յորոգայթէ որսողին. և յամենայն վտանգից ապրեցո. և ողորմեա: Փառք Հօր: Յաներևոյթ թշնամւոյն և ի գազանի նենգից բանսարկուին պահեա և ողորմեա: Այժմ և միշտ: Փրկեա զիս ի յանցանաց մեղաց իմոց. և նորոգեա զիս հոգւով գիտուն. և ողորմեա:

Տէր յերկնից Գ.Ձ:

Արքային երկնաւոր օրհնեցէք ընդ հրեշտակս որ միայն է թագաւոր փառաց: Փառք Հօր: Զորդին միածին գոհութեամբ բարեբանեցէք որ եկն և փրկեաց զմեզ: Այժմ և միշտ: Զմխիթարիչ սր Հոգին ամ շնչոք բարեբանեցէք որ լուսաւորեաց զմեզ:

Ա. ՀԱՐՑ Գ.Ձ:

Փառաւորեալ է անուն քո յաւիտեան. Աստուած հարցն մերոց: Վս Աբրահամու սիրելւոյ քո. մի մերժեր զմեզ ի սպառ. Աստուած հարցն մերոց: Ի տաճարի քում խնդրեմք ի քէն. մի անտես առներ զմեզ. Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Որ փառաբանի յանմարմնոց հրեշտակաց. ամենայն ազինք գովելով բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ

երկրպագի ի դասուց քերովբէից. քահանայք օրհնելով ժողովուրդք առաւել բարձր արարէք զնա յաւիտեանս։

### ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Գ.Զ։

Զանճառելի լուսոյ Մայր եւ զընծայաբեր անըսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Զանհաս տնօրէնութեան Մայր, եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զբոլորից փրկութեան Մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

### ՈՂՈՐՄԵԱ Գ.Զ։

Ծով մեղաց իմոց զիս ալէկոծէ. որ ես նաւապետ բարի. շնորհեա ինձ նաւահանգիստ Հայր ամենակալ։ փառք Հօր։ Խորք պատրանաց զիս կորուսանեն. այլ դու նաւապետ բարի. շնորհեա ինձ նաւահանգիստ Հայր ամենակալ։ Այժմ և միշտ։ Որ միայն իշխանդ ես թողուլ զմեղս. եւ ես աղաչեմ զքեզ Տէր թող ինձ զմեղս իմ Հայր ամենակալ։

### ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Գ.Զ։

Օրհնեմք զքեզ անսկիզբն Աստուած ընդ հրեշտակըս քո ի յերկինս։ փառք Հօր։ Զօրհնաբանող օրհնեսցուք զմիայն օրհնեալ թագաւորդ. զի դու միայն ես փառաւորեալ Տէր յարարածոց քոց։ Այժմ և միշտ։ Ըստ արժանի սրբութեան քում հանապազ քեզ վայելէ օրհնութիւն զի դու միայն ես փառաւորեալ փառօք քեզ Աստուած.

### Գ. ՀԱՐՑ Գ.Ձ։

Հարցըն մերոց Աստուած ըզքեզ բարեբանեմք. որ օրհնեալ ես ի յաւիտեան։ Վասն ուխտի հարցըն մերոց մի մերժեր ըզմեզ ի քո բազում գթութեանցդ. որ օրհնեալ ես ի յաւիտեան։ Յահաւոր ատենին յահեղ յայնըմ աւուր ողորմեա անձանց մերոց. որ օրհնեալ ես ի յաւիտեան։

Գ. Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Նոցէք Նորէք մանկունքն ի հնոցին միաբանութեամբ երգէին ասելով։ Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Նոցէ Նոյ զայն տեսեալ անօրէն արքային զի ոչ այրէին մանկունքն ի հնոցին. զահի հարեալ ասելով եւ նա բարեբանեմ զանմահ Թագաւորն։

### Մեծացուսցէ Գ.Ձ։

Սուրբ զԱստուածածինն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր. ըզծնեալ Փրկիչն ի սրբոյ կուսէն։ Այժմ եւ միշտ։ Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

### Ողորմեա Գ.Ձ։

Ողորմեա ինձ Աստուած զի քեզ միայնոյ մեղայ։ փառք Հօր։ Առաւել լուա զիս ի տղմոյ յանցանաց աղբեւր բժշկութեան. եւ ողորմեա։ Այժմ եւ միշտ։ Յարենէ փրկեա զիս որ հոգւոց եւ մարմնոց ունիս իշխանութիւն. եւ ողորմեա։

### Տէր յերկնից Գ.Ձ։

Առաւօտ խաղաղութեան ծագեա ի մեզ մարդա-

սէր եւ կեցո։ փառք Հօր։ Խնամօղ լուսովդ քո փրկիչ. լուսաւորեա ըզմեր ըզհոգիս եւ կեցո։ Այժմ եւ միշտ։ Եւ յամ ի վտանգէ ամրացո ըզմեզ ընդ հովանեաւ աջովդ քո սրբոյ եւ կեցո։

Դ.. ՀԱՐՑ Դ.Զ։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Վասն ուխտի քո առ հարսըն. փրկեա զմեզ ի հրոյն եւ ի բորբոքեալ բոցոյն ապրեցո զմեզ. Աստուած հարցըն մերոց։ Որ նըստիս ի քրովբէս եւ բարձրանիս ի սերովբէից. յանձանց խոնարհեցեր ընկալ ըզբանաւոր պատարագս ի մէնջ. Աստուած հարցըն մերոց։

Գ.. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Գիշերք ըզՏէր օրհնեցէք։ Զթագաւորըն յաւիտենից զԱստուած արարիչ. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Աղբերք ըզՏէր օրհնեցէք։ Զէակիցըն Հօր եւ Հոգւոյ. ըզմիածին Որդին գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ։ Զփառակիցըն Հօր եւ Որդւոյ զնորոգօղ ըն զՀոգին բարեբանեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Դ.Զ։

Անսկզբնական Բանին Հօր բընակարան. տաճար եւ առագաստ տեղի անտանելի լուսոյն. զքեզ ըմեծացուցանեմք արժանապէս երգով Աստուածամայր եւ կոյս։ փառք Հօր։ Յորմէ կենդանատուն ըզծնեալք յանեղէն հաստեցան ամենայն եղականքս. անսկզբնապէս տըղայ-

ացաւ յորովայնի քում. և ծնեալ առ ի քէն մարմնացեալ Աստուածըն ըմբռնելից. զքեզ ընծայեցուցանեմք արժանապէս երգով Աստուածամայր և կոյս: Այժմ և միշտ: Յորմէ զարհուրեալ դողային դասք վերին զուարթնոցն. տղայապէս առընկալեալ բարձեր ի գիրկս. և արբուցեր ոչ մայր ըստացողին ըզքեզ ըզկուսական քո սուրբ ըզկաթն. զքեզ ընծայեցուցանեմք արժանապէս երգով Աստուածամայր և կոյս:

Ողորմ Գ.Զ:

Զանապական ըզշնորհս ըզգանձըն յապականացու կենդանըս ծախեցի. այլ առ քեզ միայն պաղատիմ բարեխօս փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս: Փառք Հօր: Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարունակ որթ. այլ առ քեզ միայն պաղատիմ բարեխօս փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս: Այժմ և միշտ: Ոստաքանց եղէ ես ոչ զարմաւենի՝ պտղաբերողս որպէս ձիթենի. այլ անյիշաչար և անոխակալ փրկիչ խնայեա ի մեղուցեալ ծառայս:

Տէր յերկնից Գ.Զ:

Աջովդ քո Աստուած ընկալ զիս և կեցո: Փառք Հօր: Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք ըզքեզ Քրիստոս փրկիչ մեր: Այժմ և միշտ: Ի սրբութեան քում բարեբանեմք ըզքեզ Քրիստոս Աստուած մեր:

ՀԱՐՑ Գ.Կ:

Աստուած բարձրեալ անհաս և սքանչելագործ արարիչ անձանց մերոց. օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց: Որ իջեր ի մէջ հնոցին և փրկեցեր մեծ

ըսքանչելեօք զերիս մանկունսն. Օրհ. հարցըն մերոց: Քեզ հրեշտակք երկիր պագանեն և սերովբէք սըրբասաց ձայնիւ օրհնեն ըզքեզ. Օրհ. հարցըն մերոց:

Գ.. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ: Ամենայն ժողովուրդք երգով օրհնութեամբ. և բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Գ.Կ:

Մայր և կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ա՛մ ազինք: Փառք Հօր: Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ. տաճար և աթոռ Այ Բանին. քեզ երանեն ա՛մ ազինք: Այժմ և միշտ: Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս. և քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ երանեն ա՛մ ազինք:

ՈՂՈՐՄԵԱ Գ.Կ:

Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին էառ ըզքաւութիւն. նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած: Փառք Հօր: Աւազակն աղաղակէր ի խաչին յիշեա զիս Տէր. նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ: Անառակ որդին աղերսանօք աղաչէր ըզքեզ. Հայր մեղայ յերկինս և առաջի քո. նովին ձայնիւն և ես գոչեմ ողորմեա ինձ Աստուած:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Գ.Կ:

Անսկիզբն Ած և թագաւոր երկնաւոր. բարե-

բանեալ ի զօրաց անմահից երկնաւորաց. ըզքեզ օրհնեմք Հայր անսկիզբն: Փառք Հօր: Խոնարհեցար ի բարձանց վասն մերոյ փրկութեան. արձակել զկապեալս եւ բժշկել հոգւոց մերոց. ըզքեզ գովեմք Որդիդ միածին: Այժմ եւ միշտ: Որ էակից ես ընդ Հօր եւ փառակից Միածնիդ. բաշխող պարգեւաց եւ տուող ողորմութեան. ըզքեզ բարեբանեմք որ Հոգիդ ճշմարիտ:

Ա. ՀԱՐՑ Դ.Զ:

Զհարցըն մերոց Աստուած. որ ապրեցուցեր զերիս մանկունսն ի հնոցին. փառաւորեալ յաւիտեան: Երգէին մանկունքն ի հնոցին անեծլով. օրհնեալ ես Թագաւոր անմահ. փառաւորեալ յաւիտեան: Իջուցին ըզբոց հրոյն բորբոքելոյ. ձայնիւ քաղցրութեան երգէին. փառաւորեալ յաւիտեան:

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Զթագաւորըն Քրիստոս հրեշտակային օրհնութեամբ. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Քահանայք ծառանելով ժողովուրդք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Դ.Զ:

Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ ըզԲանն Աստուած յարգանդի կրեցեր սրբուհի անարատ. եւ անճառապէս ծնար ըզվերաձգօղն երկնից. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Որ էից լուսոյն արժանի եղեր բանալոյ ի քո գիրկս. եւ արեգական

արդարութեան ճշմ՛ր արեւելք. ըզքեզ օրհնու-թեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Զ։

Համբառնամ առ քեզ Տէր զանձն իմ նայեաց յիս գթութեամբդ քո. եւ ողորմեա։ փառք Հօր։ Դու ես յոյս եւ ապաւէն իմ. զերծո զիս յորոգայթէ մեղաց. եւ ողորմեա։ Այժմ եւ միշտ։ Ապրեցուցիչ իմ եւ փրկիչ իմ. ապրեցո զիս յորոգայթէ մեղաց. եւ ողորմեա։

Տէր յերկնից Դ.Զ։

Տէր երկնի եւ երկրի արարող եւ յոյս մեր։ փառք Հօր։ Խոնարհեաց յանձինս մեր Քս թագաւոր երկնի եւ երկրի։ Այժմ եւ միշտ։ Աղաչեմք ըզքեզ այց արա փրկիչ յուսացելոցս ի քեզ։

Ի. ՀԱՐՑ Դ.Զ։

Հարցն մերոց Ած. որ ի նեղութեան կեցուցես ըզմեզ. առաւել փառաւորեալ յաւիտեան։ Յաղթօղ զօրութի քո Քս. ի հուրն ընկեցեալ պահէին մանկունքն. որ զերկին զօգնութին ցօղով օրհնութեան։ Ընկուցին ըզերց հրոյն ըզը-սպառնալիսն արհամարհեցին ըզըռնաւորին. ընդ չորրորդ հրեշտակին օրհնաբանէին։

Գ. Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւի-տեան։ փառք Հօր։ Տիւք եւ գիշերք ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Իէլ ըզՏր օրհնեսցէ։ Օ.Ր.ծըն յաւիտենից բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Զ։

Անարատ կոյս ածածին Մարիամ սրբուհի եւ մայր

ղեի․ յարգանդի տարար զանտանելին ամենեցուն․ օրհնութեամբ ընդ քեզ Աստուածածին մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Զքեզ երկնային դուռըն զոր ետես Եզեկիէլ․ եւ սարըն զոր ծանեաւ Գեդէոն․ սերովբէ հողեղէն վեհագոյն քերովբէից․ օրհնութեամբ ընդ քեզ Աստուածածին մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Երիս խորհուրդըս սոսկալիս ի քեզ տեսանի Աստուածածին․ յղութի անսերմնական ծնունդ անարատ․ կուսութի յետ ծննդեան մնալով անապական․ օրհնութեամբ ընդ քեզ Աստուածածին մեծացուցանեմք։

Ողորմեա Դ․Զ։

Բազմութեամբ յանցանօք ծանրաբեռնեալ է անձն իմ․ միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ ողորմեա ինձ Աստուած։ Փառք Հօր։ Բղխմամբ արտասուաց եւ հառաչանօք սրտի իմոյ․ անդադար հայցեմ բազմամեղութեամբ քաւեա զիս Աստուած։ Այժմ եւ միշտ։ Բազմագութ մարդասէր շնորհեա զթողութի իմոյ յանցանաց․ զի առ քեզ միայն պաղատիմ քաւեա զիս Աստուած։

Տէր յերկնից Դ․Զ։

Որ ի բարձունս բնակեալդ ես եւ ի քեզ եմք ապաւինեալ․ արարածք ամենայն օրհնեն զքեզ։ Փառք Հօր։ Որ մոլորելոց հովիւդ ես դարձո ի մէնջ ըզցասումըն քո․ արարածք ամենայն օրհնեն զքեզ։ Այժմ եւ միշտ։ Որ ծարաւելոց աղբիւրդ ես եւ քաւիչ ես մեղաւորաց․ արարածք ամենայն օրհնեն զքեզ։

Գ․ ՀԱՐՑ Դ․Զ։

Որ յամի ցուցեր ըզքո սքանչելիսդ․ եւ ի բո-

ըրից փառաւորեցար երրեակ միութիւն. զքեզ ընդ օրհնաբանողն բարեբանեմք: Որ ընդօրորքեալ ընդհուպն ի ցօղ փոխեցեր. և զարգելեալսն ի նմին պահպանեցուցեր. զքեզ ընդ օրհնաբանողն բարեբանեմք: Որ ըմբոստութի թագաւորին խորտակեցեր. Եւ զյուսացեալսն ի զօրութիւնդ քո փառաւորեցեր. զքեզ ընդ օրհնաբանողն բարեբանեմք:

Գ. Գործք Տեառն զՏէր օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Գիշերք զՏէր օրհնեցէք: Ընդլսանեալն ի յաթոռ փառաց ընդ բերանեալն ի հրեշտակաց. զնա անդադար օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ զՏէր օրհնեսցէ: Որ յահէ փառաց Էութեն դողան զուարթունք երկնից. զՏէր օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Զ:

Սրբախացիր Աստուածածին որ կուսանց ես պարծանք և մայր հաստատութե մարդկան. օգնական և շնորհ աշխարհի Մարիամ մայր և աղախին փրկչին մերոյ: փառք Հօր: Երանելիդ ամենեցուն զԱստուած տանելով զբնութեամբ անտանելի. զամենեցուն ամենակալն արժանի եղեր կրել յորովայնի որ երեւեցաւ ազգի մարդկան: Այժմ և միշտ: Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին. ի գիրկըս բառնալով զԱստուածն ամենեցուն որ նստի ի քերովբէս. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

Ողորմեա Դ.Զ:

Որ զանազանակ կենօքն այլազգուց առընկալեալ

փրկիչ մարդասիրապէս. Եւ զի՛մ ապաշխարութիւն՝ արա արժանի ըզձայն մեղուցելոյս ընդունող։ Փառք Հօր։ Որ հառաչմամբ ձայնի աղախնոյն. ոչ լը-ռեցեր փրկիչ ընդունակ մեղաւորաց. Եւ զի՛մ ապաշխարութիւն՝ արա արժանի ըզձայն մեղուցելոյս ընդունող։ Այժմ և միշտ։ Որ զառաջնապար-գևի քո նըշխարս. ոչ խնայեցեր ընձեռել շնորհն հովուասիրի՝. Եւ զի՛մ ապաշխարութիւն՝ արա արժանի ըզձայն մեղուցելոյս ընդունող։

## ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Դ.Զ.

Երկնայի՛ն զօրութիւնըն զնորոգութիւնն. քե՛զ երեքսըրբենիք կան յանդադար փառաբանութիւն. Փառք Հօր։ Սերովբէք և մարգարէիցըն դասք. փառաբանեն անլռելի. փա՛ռք վերածագո-ղին ի զօրս։ Այժմ և միշտ։ Եւ մե՛ք հանդի-սակից ընդ նոսին. փառաբանեմք ընդ ըմբերին զօրուըն ըզգաշելով անմացոք. փա՛ռք ի բարձունս Աստուծոյ։

## Դ. ՃԱՇՈՑ Դ.Զ.

Ճշմարտապէս գոհանամք ըզքեն. Տէ՛ր Աստ հարցըն մերոց փառաւորեալ յաւիտեան։ Որ եր-կայնամիտ ես յամէ. խնայեա՛ ի մեզ Տէ՛ր Աստ հարցըն մերոց փառաւորեալ յաւիտեան։ Ի տանջանաց քում խնդրեմք ի քէն մի՛ անտես ա-ների ըզմեզ. Տէ՛ր Աստ հարցըն մերոց փառաւո-րեալ յաւիտեան։

Դ. Ըզտէր Ըզքո՛ պետութիւնդ հանապազ օր-հնաբանեմք։ Փառք Հօր։ Որ իջեր ի՛ հոգըն փրկեցեր զմանկունսն ի ձեռաց անօրինացն. շի-

ջուցեր ըզհուրըն հողմմրեր ցողովն. ըզքո տէրու-
թենէդ հաստատող օրհնաբանեմք։ Այժմ և միշտ։
Աշխարհին մանկունքն ի մէջ հնոցին սաղմոսիւք եւ
օրհնութեամբ. գովէին ըզքեզ թագաւոր փառաց.
ըզքո տէրութենէդ հաստատող օրհնաբանեմք։

Մեծացուսցէ Դ.Զ։

Սրբուհի էիր Մարիամ որ Ածածին. զի ի տաճա-
րին մաքրեցելոյ յանկարծակի եկըն Տէր. ըզքեզ
օրհնութեամբ մեծացուցանեմք։ Փառք Հօր։
Սրբուհի էիր դուռըն փակեալ ընդ որ ոչ ոք մը-
տեալ. բայց Տէր Ած Իսրայելի. ըզքեզ օրհնու-
թեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Սը-
րբուհի էիր աղբիւր կենդանի ջրոյն կենդանութեան.
զոր ծարաւելոյ բնութեանս ետուր ի յորդութեան.
ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Զ։

Անկանիմ առաջի քո և խնդրեմ զթողութիւն յան-
ցանաց իմոց. մի անտես առներ Հայր զաղաչանս
իմ։ Փառք Հօր։ Աղաղակեմ որպէս մաքսաւորն. և
հեծեմ զարտասուս իմ առաջի քո որպէս պոռնիկն.
մի անտես առներ Հայր զաղաչանս իմ։ Այժմ
և միշտ։ Զաներեւոյթ թշնամւոյն պարտեցայ. և
ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ. մի
անտես առներ Հայր զաղաչանս իմ։

Տէր յերկնից Դ.Զ։

Օրհնեցէք ըզՏէր յերկինս զօրք և ամ հրեշ-
տակք. որ հզօրք էք հարկաւորութեան սպա-
սաւորիչք Տեառն։ Օրհնեցէք ըզՏէր յերկրէ
կէտք և ամ կոյտանք. որ ահաւորք էք բանաւոր

հօտի փառաբանիչք Տեառն։ Փառք Հօր։ Օրհնութիւն նոր երգեցէք Տեառն եկեղեցիք սրբոց. որ որդիքդ էք վերին Սիովնի օրհնաբանիչք Տեառն։ Այժմ եւ միշտ։ Զանապական օրհնեմք ըզքեզ անհասանելի փրկիչ. որ միայնդ ես փառաւորեալ Տէր յարարածոց քոց։

Ն. ՀԱՐՑ Դ.Ձ։

Տէր Աստուած մեր որ հաստատեցեր ըզլոյս եւ զլուսաւոր ի սկզբանէ. օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց։ Մարգարէն Դանիէլ աղօթէր առ Տէր Աստուած ապրեցուցանել զերիս մանկունսն ի հնոցին ի Բաբիլոնի։ Բարձր արարէք զԱստուած հարցն մերոց յաւիտենից. որ ապրեցոյց զօրհնաբանսն ի ձեռաց մահու։

Գ. ԸզՏէր ըզնա անդադար բարձրացուցանեմք։ Փառք Հօր։ Որ ի տուէ օրհնի անդադար ձայնիւ սրովբէիւք եւ մարդկամբ. ի գիշերի եւ յամ ժամու. ըզնա անդադար բարձրացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Զբորբոքեալ ըզհուրն շիջուցին աղօթիւք սուրբ մանկունքն ի հնոցին. եւ ըզհրաշալի ըզձայնն ընդ հրեշտակս երգէին ասելով. ըզնա անդադար բարձրացուցանեմք։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Դ.Ձ։

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի սրովբէից. ծագելով ի քէն մեզ լոյս մայր եղեր վերաձգողին. ազգ եւ ազինք ըզքեզ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Հիմն եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հոգւոյն սրբոյ. ի հրեշտակաց սպասաւորեալ Գաբրիէլ քեզ աւետեաց. ազգ եւ ազինք ըզքեզ մե-

ծացուցանեմք: Այժմ և միշտ: Տեսանեմք ըղտա-կալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Հոգւոյն սրբոյ յղացեալ զԲանն Ած մարմնով ծնանի. ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Անկանիմ առաջի քո Տէր. բազմամեղս ողորմեա: Փառք Հօր: Աղաչեմ առ քեզ փըր-կիչ քանանացւոյն ըղձաւ. բազմամեղս ո-ղորմեա: Այժմ և միշտ: Անքաւորին հառաչմամբ կարդամ առ քեզ փրկիչ և բարերար. բազմամեղս ողորմեա:

Տէր յերկնից Դ.Զ:

Օրհնեմք ըզքեզ Հայր սուրբ. ի յամե-նայն ժամ: Փառք Հօր: Գովեմք ըզքեզ Որդի միածին. ի յամենայն ժամ: Այժմ և միշտ: Բարեբանեմք ըզքեզ Հոգի ճշմարտ-րիտ. ի յամենայն ժամ:

Ա. ՀԱՐՑ Դ.Կ:

Աստուած Հարցըն մերոց ողորմեա: Երեք ման-կունքն ի հնոցին երգէին. Հայր անըսկիզբըն քեւ պարծեցին անձինք մեր: Իջանէր ամպ ցօղացին և հովանի լինէր նոցա. որ Հոգին քա-ջալերէր ասէր ես ընդ ձեզ եմ յաւիտեան:

Գ.. Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Օծակից Բանըն Հօր. որ երեւե-ցաւ ի մէջ հնոցին. օրհնեցէք ամենայն ազինք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Ընդ զօրս հրեշտակաց. միաբանական օրհնութիւն բարեբանեցէք զի վերայ քերովբէիցն. և բարձր

արարէք ընդ նմա յաւիտեան: Այժմ և միշտ: Ընդ երկնային մանկանցն. զհամարնակիցն Հօր անդադար բարեբանեցէք քահանայք ժողովուրդք. առաւել բարձր արարէք ընդ նմա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ·Կ:

Ածածին մայր եւ կոյս. ծագօղ արեգական արդարութեան. որ լուսաւորեացն ըզմեզ. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմեծածին քո զԱրդին: Փառք Հօր: Այլայծ զօրէնըս բնութեան մարդկան. հրաշափառ քո ծընընդ. եւ զկուսութիւն բնութեանն ամբողջ պահեալ. եւ կուսութեանդ քո ոչ խախտեցան կընիք. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմեծածին քո զԱրդին: Այժմ և միշտ: Զքեզ մորենի անկէզ լեառն վիմածին դուռն փակեալ եւ աղբիւր կնքեալ. նախատեսացն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմեծածին քո զԱրդին:

Ողորմեա Դ·Կ:

Ի՛ն Աստուած յոյս անպաշխարողաց. շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց: Փառք Հօր: Առ քեզ բազմագութ ապաւինեալ կարդամք. մի մերժեր ըզմեզ յողորմութենէ քումմէ: Այժմ և միշտ: Որպէս զաւազակն աղաղակեմ առ քեզ. յիշեա եւ զիս Տէր ի քում արքայութեանդ:

Տէր յերկնից Դ·Կ:

Յիշեա զմեզ Տէր յորժամ գաս թագաւորութեամբդ քո: Փառք Հօր: Շնորհեա մեզ Տէր

զթողութիւն բազում յանցանաց մերոց։ Այժմ և միշտ։ Ուսո՛ մեզ Տէր փառըս տալ մեծի տէրութեանըդ քո։

Բ. ՀԱՐՑ Դ.Կ.։

Հարցըն մերոց օրհնեալ ես Տէր. ուղիղ են ճանապարհըք քո։ Արդար ես դու Տէր ուղիղ են ճանապարհըք քո. Ած երկայնամիտ խընայեա յարարածըս քո։ Որ յաւիտենից ես առաւել բարձրացեալ. աղաղակեմք Ած երկայնամիտ խընայեա յարարածըս քո։

Գ. Զտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Տիւք և գիշերք ըզՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Խորայէծմն ըմ զՏէր օրհնեսցեմ։ Օյ. սաղւածծ. Տէր և արարիչ ամենայնի. ամ գործք օրհնեցէք. և բարձրացուսցէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Կ.։

Զքեզ Ածածին աղբեւր անըսպառ լուսոյն. որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Դու պարծանըք կուսութեան մարդկան. դու ուրախութիւն հրեշտակաց. դու բարձօղ անիծիցն. վա որոյ ըզքեզ Ածածին մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Դու ճըշմարիտ արեւելք արեգական արդարութեան. յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Կ.։

Ալք յանցանաց զիս ալէկոծեն. և մեղք իմ

բազմում զես յանդիմանեն : Փառք Հօր : Արդ զինչ արարից մեղուցեալ անձամբս . որ չեմ ապրելոց յաՀագին Հըրոյն : Այժմ և միշտ : Մեղայ քեզ Քրիստոս Որդի Այ . շնորՀեա զթողութիւն բազում յանցանաց իմոց :

Տէր յերկնից Դ·Կ :

Օրհնեմք զքեզ անսկիզբն Հայր . որ յամ ժամ օրՀնիս ի դասուց քերովբէից : Փառք Հօր : Գովեմք զքեզ միածին Որդի . որ անդադար փառաբանիս ի դասուց սերովբէից : Այժմ և : Անդադար բերանով անՀանգիստ բարբառով . բարեբանեմք զՀոգիդ որ փառակից ես Հօր և Որդւոյ :

Գ· ՀԱՐՑ Դ·Կ :

Օրհնեալ Տէր Այծ օրՀնեալ : Օրհնեալ Տէր Այծ որ ցօղեցեր երից մանկանցն . օրՀնեալ Տէր Աստուած օրՀնեալ : Զթանձրացեալ Հուրըն շիջոյց զօրորիքեալ բոցոյն . ծանուցեալ բըռնաւորին ա[illegible]սէր . և ես բարեբանեմ զքեզ Տէր Աստուած օրՀնեալ :

Գ· Զտէր օրՀնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս : Փառք Հօր : Գիշերք զՏէր օրՀնեցէք և առաւ[illegible] և բարձր արարէք զնա յաւիտեանս : Այժմ և միշտ : Իսրայէլ զՏէր օրՀնեսցէ : Տէր որ ի Բաբիլոնի առաքեցեր զմիածին Որդիդ . և [illegible] զՀուր Հընոցին շիջուցեր յերից մանկանցն . ընդ նոսին օրՀնեմք զքեզ գովեմք և փառաւորեմք :

Մեծացուսցէ Դ·Կ :

Ածածին և սրբուՀի . որ զԲանն Այծ անսերմն

յղութեամբ յարգանդի կրեցեր. անդադա՛ր երգով մեծացուցանեմք: փառք Հօր: Զքեզ մայր կուսութեան և յղութեան լուսոյ. և առագաստ անճառելւոյ ընծայողին ի քեզ փեսայացելոյ Բանին. անդադա՛ր երգով մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Քեւ լուծան կնիք դատապար-տութեան. եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս. ան-դադա՛ր երգով մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.Կ:

Տէր որ ի մէջ լերինն աղբերացուցեր ըզջուրն ի վիմէն: փառք Հօր: Տէր ի սրբոյ խմբէ՝ հան ինձ արտասուս ապաշխարութեան: Այժմ և միշտ: Զի կեցից և ապաշխարութեամբ ապրեցայց ի հան-դերձեալ քոյ դատաստանիդ:

Տէր յերկնից Գ.Կ:

Մի Աստուածութիւն երրորդութեան անբաժանելի. որ ի հրեշտակաց անդադար օրհնաբանիս: Անմար-մնոց զինուորութիւնք փառաբանեն ըզքեզ իշ-խան Հայր Աստուած: փառք Հօր: Զօրեքկեր-պեան կենդանիքն վայելուչ աղաղակեն առ քեզ իշխանակից Որդի եւ Բանդ Աստուած: Այժմ և միշտ: Իշխանութիւնք աթոռոց գովեն ըզքեզ. ամենասուրբ Հոգի և բոլորից Աստուած:

Գ. ՀԱՐՑ Գ.Կ:

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. Աստուած հարցն մե-րոց: Քանզի նուաղեցաք մեք քան զամենայն հեթանոսս. վասն անուան սրբոյ քո կեցո ըզ-

մե՛զ. Աստուա՜ծ հա՜րցն մերո՛ց: Օրհնեա՛լ ես Տէ՛ր որ նըստիս ի քրովբէս և հայիս յանդունդս թագաւոր յաւիտենից. Աստուա՜ծ հա՜րցն մերո՛ց:

Գ. Զ՛Տէր օրհնեցէք. Ե՛ւ բարձր արարէք ըզ-նա՜ յաւիտեան: Փառք Հօր: Որ յոչընչէ արար զամենայն արարածս. Ե՛ւ զարդարեաց բանիւ. օրհնեցէ՛ք Ե՛ւ բարձր արարէք ըզնա՜ յաւիտեան: Այժմ և միշտ: Զօր անդադար օրհնեն ա՛մ ա-րարածք. քահանայք առաւել գովեցէք. Ե՛ւ բարձր արարէք ըզնա՜ յաւիտեան:

Մեծացուցէ Դ.Կ.:

Ո՞ր զանճառելին ծընար սուրբ Աստուածածին կոյս. օրհնեա՛լ ես յաւիտեան: Փառք Հօր: Ո՞ր զարարչակիցն Հօր. զի՛ սկըզբանէ Բանն Ած. յորովայնի քո՛ւմ կրեցե՛ր. օրհնեա՛լ ես յաւի-տեան: Այժմ և միշտ: Զքե՞զ Եզեկիէ՛լ ետես Երկնային դուռն և հա՛րսն անփորձ. օրհնեա՛լ ես յաւիտեան:

Ողորմեա Դ.Կ.:

Ա՛նզուցեալ անձամբ կարդամ առ քե՛զ Հա՛յր երկնաւոր. օգնեա՛ ինձ ի նեղութեան. որ մեղօք եմ մեռեալ օգնեա՛ ինձ: Փառք Հօր: Վիրաւո-րեցայ ես յաներևոյթ թշնամւոյն. բըժի՛շկ հիւան-դաց բըժշկեա՛ զիմ զհիւանդութիւնս. որ մեղօք եմ մեռեալ օգնեա՛ ինձ: Այժմ և միշտ: Մո-լորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խընդրո՛ղ գերելոց խընդրեա՛ զիս ըզմոլորեալս. որ մեղօք եմ մեռեալ օգնեա՛ ինձ:

Տէր յերկնից Դ.Կ.։

Օրհնեմք զքեզ անեղ անսկիզբն Հայր. անհասանելի և փառաւորեալ յանմարմնոց զինուորութեանց։ փառք Հօր։ Գովեմք զքեզ Որդի Հօր արարչակից Բանդ. նորոգող և կեանք ազգի մարդկան. Թագաւոր յաւիտենից։ Այժմ և միշտ։ Զքեզ բարեբանեն ամենայն ազինք. մշտընջենաւորուղդ անըսպառ աղբիւր որ Հոգիդ ճըշմարտութեան։

# ՄԱՆԿՈՒՆՔ ԵՒ ՀԱՄԲԱՐՁԻՔ

## ՊԱՀՈՑ

---

Մանկունք Ա.Զ։

ԶԱՌԱՒՕՏՈՒ զօրհներգութիւնս մարդասիրութիւնդ քո ընկալ Թագաւոր փառաց. և զմանկունս եկեղեցւոյ քո պահեա ի խաղաղութեան։ փառք Հօր։ Որ տեսողդ ես խոնարհաց յերկնից ի յերկիր և տուող ողորմութեան ազգի մարդկան. ըզմանկունս եկեղեցւոյ քո պահեա ի խաղաղութեան։ Այժմ և միշտ։ Ընդ սերովբէսըն սրբասաց համաձայնեալ քեզ երգեմք երեքսրբեան տէրութիւն խնայեա քաղցրութի յարարածըս քո. և զմանկունս եկեղեցւոյ քո պահեա ի խաղաղութեան։

Համբարձի Ա.Զ։

Ինձ օգնութիւն ի Տեառնէ ԱՅ Իսրայէլին եկեսցէ։ Նա որ պահէն զԻսրայէլ աջով իւրով. ինձ օգ-

նութիւն ի Տեառնէ Այ Փրկչին եկեսցէ։ Օրհնեալ է Տէր տէրանց և Ած յաւիտենից. ինձ օգնութիւն ի Տեառնէ Այ Փրկչին եկեսցէ։

Համբարձի զաչս իմ առ քեզ որ թագաւորդ ես թագաւորաց. փրկեա՛ զմեզ և պահեա՛ յաներևոյթ թշնամւոյն։ Փառք Հօր։ Արեգակն արդարութեան յէից լուսոյդ ծագեա մեզ փրկող. փրկեա՛ զմեզ և պահեա՛ յաներևոյթ թշնամւոյն։ Այժմ և միշտ։ Անձն իմ առ քեզ պաղատի՝ կարդամ առ քեզ Հայր բազմագութ. փրկեա՛ զմեզ և պահեա՛ յաներևոյթ թշնամւոյն։

ՄԱՆԿՈՒՆՔ ԱԿ։

Լոյս փառաց Բանդ Ած որ ծագեցեր ի մեզ ըղձալոյս գիտութեան. կարդամք առ քեզ Տէր առաւօտու աղօթք մեր հաճոյասցին քեզ։ Փառք Հօր։ Յանմարմնոց վերօրհնեալ ի մարդկանէ երկրպագեալ. բնակեալդ ի լոյս անմատոյց. կարդամք առ քեզ Տէր առաւօտու աղօթք մեր հաճոյասցին քեզ։ Այժմ և միշտ։ Երրեքսրբեան տրութի միասնական Ածութի. բնակեալդ ի լոյս անմատոյց կարդամք առ քեզ Տէր առաւօտու աղօթք մեր հաճոյասցին քեզ։

ՀԱՄԲԱՐՁԻ ԱԿ։

Օգնական մեր լեր Տէր և ապաւէն յամենայն ժամ. ամրացո՛ աներկիւղ զհաւատացեալքս ի քեզ։ Հայր բազումողորմ որ խնամօղդ ես յամե. շնորհեա մեզ խաղաղութի հասանել ի նաւահանգիստ։ Փառք Հօր։ Որդիդ միածին որ ի կառադ ես քերովբէից. շնորհեա մեզ յաջակողմանն դա-

սի՛լ ընդ նորըս քո։ Այժմ և միշտ։ Հոգի՛դ ճըշմարիտ որ միշտ յանճառ փառօք բարեբանիս. ընկա՛լ ըզմեր օրհներգութիւս ի ժամ երեկոյիս։

Մանկունք ԻԶ։

Մանկունք եկեղեցւոյ փառաբանիչք նոր նորոգութեան. օրհնեցէ՛ք ըզՀայրն երկնաւոր անդադա՛ր երգով։ Փառք Հօր։ Պաշտօնեայք Բանի՛ լուսաւորեալք նոր աւազանաւն. գովեցէ՛ք զՈրդին միածին անդադա՛ր երգով։ Այժմ և միշտ։ Քահանայք հոգևոր երգով ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն բարեբանեցէ՛ք զՀոգին ճըշմարիտ անդադա՛ր երգով։

Հարանց ԻԶ։

Համբառնալով զաչս մեր կարդամք առ քեզ մարդասէր. որ յահեղակերպ աթոռըդ նըստիս։ Փառք Հօր։ Ընդ հրեղինաց աջոյ քո պահեա՛ ըզմեզ բազմագութ. որ յանմարմնական զօրացըդ գովիս։ Այժմ և միշտ։ Փա՛ռք քեզ Սըբ փառաւորեա՛լ յամենայն. փա՛ռք ամենազօր տէրութեանըդ քո։

Մանկունք ԻԷ։

Արթունք եւ պատրաստք եղերուք Տեառն Այ մերոյ։ Փառք Հօր։ Երգե՛լ եւ սաղմոս ասե՛լ Տեառն Այ մերոյ։ Այժմ և միշտ։ Ո՞վ նման է Տէր Աստուած մեր. փրկէ ըզմեզ եւ կեցուցանէ։

Հարանց ԻԷ։

Յօգնութիւն մեզ ժամանեա՛ կարող Տէր առաքեա՛ ի բարձանց քո զխնամակալութիւնդ. եւ պահեա՛ զքո յուսացեալս ալէլուիա։ Փառք Հօր։ Ապաւէն մեր և

փրկիչ հզօր Թագաւոր. ընդ նշան յաղթութեան խաչի քո առաքեա առ մեզ. Եւ պահեա զքո յուսացեալս ամենօրհնեալ: Այժմ եւ միշտ: Մեք երգեմք քեզ ի բարձունս ընդ անմարմնոց բազմութեան. զաղաչանս մեր զերեկոյիս ընկալ քո բարերարութեամբ. Եւ պահեա զքո յուսացեալս ամենօրհնեալ:

Մանկունք Դ.Զ:

Ըզքեզ [illegible]զ բարերանեն մանկունք եկեղեցւոյ: փառք Հօր: Արեգակն արդարութեան լոյս ճշմարտութեան Քրիստոս Աստուած. ըզքեզ [illegible]զ բարերանեն մանկունք եկեղեցւոյ: Այժմ եւ միշտ: Յարեւելից եւ յարեւմտից ի հիւսիսոյ եւ ի ծովէ. քեզ երկրպագեն ամ քո արարածք. եւ զքեզ [illegible]զ բարերանեն մանկունք եկեղեցւոյ:

Համբարձ Դ.Զ:

Օրհներգութիւնս բանաւոր պատարագ քեզ ի մտանել արեգականս վեր առաքեմք Թագաւոր յաւիտենից: Յամ փորձութեց թշնամւոյն ամենակարող աջով քո պահպանեա զմեզ Թագաւոր յաւիտենից: Ի մշտնջենաւոր քո լերանցս օրինադրեցաք փառաւորել սուրբ զԵրրորդութիւնդ Թագաւոր յաւիտենից:

Պաղատանս խնդրեմք ի քէն Քրիստոս մի անտես առներ այլ շնորհեա խնդրողացս ի քէն զամենայաղթ զօրութիւն որ խաչի քո յօգնութիւն անձանց մերոց: փառք Հօր: Այլ մի տար սասանութեան զոտս մեր փրկիչ այլ ամրացո հաստատուն հաւատով զանձինս մեր. զյոյս զսէր եւ զհաւատս մինչեւ յաւիտեան: Այժմ եւ միշտ: Աղե-

բացուցես ի մեզ ըղձնորհս քո զողորմութեն. Տէր Ած խոստովանեսցուք հաւատով՝ մք զերրորդութիւնդ. զՀայր եւ զՈրդի և ըզՍուրբ զՀոգիդ յաւիտեանս ամէն:

Մանկունք գ.կ:

Օրհնեցէք ըզՏէր և օրհնեցէ՛ք զանուն նորա: փառք Հօր: Գովեցէք ըզՏէր և բարեբանեցէ՛ք զանուն նորա: Այժմ և միշտ: Աւետարանեցէք օրըստօրէ՛ զփրկութիւն նորա:

Համբարձից գ.կ:

Տուր մեզ Տէր զօգնութիւն ի նեղութեան զի օրհնեսցուք հանապազ զանհաւոր անուն քո սուրբ: Պահեա զմեզ Տէր յամ փորձութեան յաներեւոյթ թշնամւոյն և ի գաղտնի նետից նորա: Դու յոյս մեր և ապաւէն յամ ժամանակի որ օրհնիս հանապազ ի քոյոց արարածոց:

Հովանի աջոյ ձեռին քո Տէր պահեսցէ զմեզ. եւ ոչ նիրհեսցէ որ հովուէրըն զիսրայէլ: փառք Հօր: Զօրութիւն սրբոյ խաչի քո Քրիստոս պահեսցէ զմեզ. և եղիցի մեզ պահապան ի տուէ և ի գիշերի: Այժմ և միշտ: Լուր երկիւղածաց քոց նըշան եւ զէն յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն:

Մանկունք դ.Զ:

Մանկունք ըզՏէր օրհնեցէք որոյ անունն որ էն. եւ միշտ եղիցի անուն Տեառն օրհնեալ: փառք Հօր: Օանդամամբ լուսոյ զարդարեաց զազգըս մարդկան թագաւորըն Քս. եւ միշտ եղիցի անուն Տեառն օրհնեալ: Այժմ և միշտ: Որդիք լուսոյ

տուք ընդ փառօք Հօրն լուսոյ. Որդւոյն միածնի և որ Հոգւոյն յաւիտենանս ամէն։

Համբարձի Դ.Զ.

Զքեզ կարդամք յօգնութիւն որ անքուն աչօք պահես զնորայնեալ. և զիս փրկեա ի փորձութենէ. ալէլուիա ալէլուիա։ Փառք Հօր։ Զքեզ աղաչեմք Տէր անսասանելի պահեա զոտս մեր ի քո որ ի պատուիրանին. ալէլուիա ալէլուիա։ Այժմ և միշտ։ Զքեզ փառաւորեմք Տէր որ նստիս ի վերայ չորեքկերպեան կենդանեաց. և հայիս քաղցրութեամբ յարարածս քո. ալէլուիա ալէլուիա։

Մանկունք Դ.Կ.

Ի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչև յաւիտեան։ Փառք Հօր։ Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչև յաւիտեան։ Այժմ և միշտ։ Փառաւորեալ անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչև յաւիտեան։

Համբարձի Դ.Կ.

Ուղղեսցին աղօթք իմ Տէր ի տաճար սուրբ քո և առաքեա ի մեզ Տէր զօգնութիւն ի լեռնէ սրբոյ քումմէ։ Փառք Հօր։ Հովանասցի աջ քո Տէր ի վերայ ստեղծուածոց քոց. և առաքեա ի մեզ Տէր զօգնութիւն ի լեռնէ սրբոյ քումմէ։ Այժմ և միշտ։ Երբեկցի աղօթս մեր ընկալ Տէր բարեխօսութեամբ ծնողին քո. և առաքեա ի մեզ Տէր զօգնութիւն ի լեռնէ սրբոյ քումմէ։

# ՀԱՐՑՔ
# ՀԱՆԳՍՏԵԱՆ

---

## ՀԱՐՑ ԱՁ:

ՕՐՀՆԵԱԼ ես դու Քրիստոս. որ յարեարդ ի մեռելոց ողորմած և կոխեցեր զմահ. Տէր Աստուած հարցն մերոց: Որ մահկանացուացս կեանքդ ես. շնորհես ննջեցելոց մեր ընկալ. Տէր Աստուած հարցն մերոց: Զորս փոխեցեր յաշխարհէս կենդանեաց. հանգստեան արժանաւորեա. Տէր Աստուած հարցն մերոց:

Գ.. ԶՏէր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Նցէք: Որ գալոցն ես զօրութեամբ բազմաւ. ազդմամբ ձայնի կենդանարարդ զննջեցեալսն. զՏէր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Նսցէ: Աղաչեմք զքեզ բարերար. հանգո զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո օրհնեսցուք և բարձր արասցուք զանուն քո յաւիտեան:

## Մեծացուսցէ ԱՁ:

Յարուցելոյն ի մեռելոց բնակարան մայր և կոյս. որ զննջեցեալսն յԱդամայ կենդանարարէ անապական. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Փառք Հօր: Արարողին երկնի և երկրի եղեր տաճար և առագաստ. որ զննջեցեալսն մեր հրեշտակն նորոգէ. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Այժմ և միշտ: Կերակրողին տիեզերաց արբուցեր զքո ծծ զկաթն.

որ ըղնընջեցեալըն մե՛ր վերըստի՛ն նորոգէ՝. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։

Ողորմեա Ա.Չ։

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո Տէ՛ր պատուեցե՛ր ըզմեզ. ընկալ և այժմ ըզնընջեցեալսն ի քեզ ուղի՛ղ հաւատով. ըստ մեծի քում ողորմութեան։ փառք Հօր։ Որ շնորհօք սր Հոգւոյն լուսաւորեցե՛ր. յիշատակի խուրեանց զհոգիս նջ ընկալ մարդասէ՛ր. ըստ մեծի քում ողորմութեան։ Այժմ և միշտ։ Որք հաղորդեցան մարմնոյ և արեան քո Տէր հանգո զհոգիս նջ ընդ սրբս քո Քրիստոս Ա՛ծ. քանզի գիտենք զի արեան քո են։

Տէր յերկնից Ա.Չ։

Ա. Զքեզ վայելէ Ա՛ծ օրհնութի. որ յարութիւնդ ես ձայնիւ յաւիտենից ննջեցելոց. թագաւոր և իշխան վերօրհնեմք ըզքեզ։ փառք Հօր։ Ի միւսանգամ գալըստեանըն քո Քնի փառաց թագաւոր. ի ձայն փողոյ նորոգին հոգիք ննջեցելոցն. և յառնեն ի մեռելոց անապական մարմնով։ Այժմ և միշտ։ Վասն որոյ և մեք ըզքեզ աղաչեմք Հայր երկնաւոր. դասաւորեա ըզնընջեցեալըն մեր ի վերինըդ քո Երուսաղէմ. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս։

Բ. Զայն արկեալ կենարարին աստուածային բարբառովն. ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք պատրաստեալ ձեզ ըզկեանսն ի հանդերձեալ երկրին. փառք Հօր։ Ընդ առաջ ելանել քեզ հաւատով ի յօդըս վերինս. աստուածազգեաց լուսով պայծառացեալ ի դասս անմար-

մեռելոցն. ի լսել ըղձային երանաւէտ կոչմանն: Այժմ և միշտ: Ընդ աջմէ քումմէ կացո ընդ իմաստուն ն՝ք կուսանսն. ի լուսեղէն առագաստին պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս:

Գ. Օծողքիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ ի դասս անդրանկաց գրելոց ի յերկինս: Փառք Հօր: Ընկալ վասն սոցա ըղղանաւոր պատարագս ի մէնջ. եւ շնորհեա նոցա ըզթողութիւն գտանել յաւուրն յետնում: Այժմ և միշտ: Հաշտեա ի ձեռըն սր մարմնոյ և արեան քո Տր. եւ պարգևեա նոցա դասել յաջակողմեանսն քո:

Գ. Որ անճառ տնօրէնութեամբ ի փրկութիւն ազգի մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած. այսօր հանգոլմ՟ և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր: Որ անչարչարելիդ մարմնով եկիր կամաւ ի չարչարանս. եւ ի խաչին բեւեռեցար հեղեր զարիւնդ ի փրկութիւն. այսօր հանգոլմ՟ և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր: Փառք Հօր: Որ թաղմամբն երեքօրեայ ըզբռնութիւն մահու լուծեր. եւ կոխեցեր զիշխանն մահու եւ վերածեր ըզննջեցեալսն. այսօր հանգոլմ՟ և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր: Այժմ և միշտ: Որ հրաւիրեցեր յանմահութիւն զազգս մարդկան. անմահութեանց բաշխող Քրիստոս. աղաչանօք Աստուածածնին. այսօր հանգոլմ՟ և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր

## ՀԱՐՑ ԱԿ։

Գոհանամք զքեզ յաղթական երգով Թագաւոր փառաց որ կամաւոր խոնարհութեամբ քո իջեր ի փրկել զապականեալսն ի ձաղանկմանէ. օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։ Որ լուծեր զմահ և վերածեր զննջեցեալսն ի դժոխոց. անշիջութեամբն քո ի վերայ խաչին. և իջանելով քո ի գերեզման Թագաւոր անմահ. օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։ Որ նստար ընդ աջմէ Հօր. և հրաւիրեցեր առ քեզ զզաւանողս քո. արժանաւորեա և զմեր ննջեցեալսն դասակից լինել սրբոց քոց. օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։

Գ. Ազգեր օրհնեցէք. բարձր արարէք զնա յաւիտեան։ Որ փառօք Հօր հանդերձեալ է գալ ի դատել զերկիր. և բիւրաւոր բանակք վերին զուարթնոցն կարապետք լինին գալստեան նորա. բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ահագին գոչմամբ զարհուրեցուցանէ զարարածս ի գալստեան իւրում. եւ քաջահնչող ձայնիւ փողոյն համահաւաքէ զննջեցեալսն որ յԱդամայ. բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Աղաչեսցուք զկենարարն մեր որ դատաւոր է կենդանեաց եւ մեռելոց. զի արժանի արասցէ զննջեցեալսն մեր մտանել ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն. բարձր արարէք զնա յաւիտեան։

## Մեծացուսցէ ԱԿ։

Անմատոյց տաճար բնակարան անբաւ Բանին Այ.

Մարմնով որ կոչեցեալս. զքեզ և ըզծընեալն ի քէն մեծացուցանեմք: փառք Հօր: Յարգանդի կրեցեր որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ըղ-բանն. և ծընար մարմնով. զքեզ և ըզծընեալն ի քէն մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Աղ-խընդրեմք ի քէն անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց. առ Որդին քո միածին փըր-կել ըզմեզ ի փորձութենէ և յամ մեղանացն մերոց:

Ողորմեա Ա.Կ:

Արարիչ Աստուած և ըստեղծիչ ազգի մարդ-կան. մի անտես առներ ըզնընջեցեալսն մեր. այլ Հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո: փառք Հօր: Որդի միածին յարութեան տիեզերաց. մի անտես առներ ըզնընջեցեալսն մեր. այլ Հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո: Այժմ և միշտ: Հոգի ճըշմարիտ մըխիթարիչ սըգաւո-րաց. մի անտես առներ ըզնընջեցեալսն մեր. այլ Հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Տէր յերկնից Ա.Կ:

Ա. Ձեռըք քո արարին և ըստեղծին զիս ի Հո-ղոյ. ի յօրհնել ըզքեզ Աստուած յաւիտեան: փառք Հօր: Ընդ պատրանօք բանսարկուին խա-փանեցայ յանճառ լուսոյն և դարձայ անդրէն ի Հող յորմէ ստեղծայ: Այժմ և միշտ: Մխի-թարիչ սուրբ Հոգի լուսաւորեա զմեր ննջե-ցեալսն. և Հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Բ. Հայր անժամանակ և բարեգութ. մաղթելով Հայցեմք ի քէն վասն մեր ննջեցելոցն արժանաւո-րել Հանգըստեան օթեվանի սըրբոցն: փառք Հօր:

Անճառ ծնունդ Հօր Որդի․ որ մահկանացուացս կեանքդ ես․ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ․ եւ արժանաւորեա հանդերձեալ օթեվանի սրբոցն։ Այժմ եւ միշտ։ Եւ նորոգօղ սուրբ Հոգի յորժամ նորոգես զապականեալսն յայնժամ շնորհեա եւ մեր ննջեցելոցն արժանաւորել հանդերձեալ օթեվանի սրբոցն։

Գ․․ Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութեան առնելով տիեզերաց ի դատաստան ահաւոր․ յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր զմեր զննջեցեալսն․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Փառք Հօր։ Յորժամ ճառագայթք Աստուածութեանդ փայլեն ի յարեւելից․ եւ դպրունիքք հրաշիցն բանին յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր զմեր զննջեցեալսն եւ հանգո ընդ սուրբս քո։ Այժմ եւ միշտ։ Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սրովբէագոչ փողոյն․ յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան․ յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր զմեր զննջեցեալսն․ եւ հանգո ընդ սուրբս քո։

ՀԱՐՑ ԻԶ։

Որ Թագաւորդ ես Թագաւորաց․ եւ բաշխող կենդանութեան ազգի մարդկան․ այսօր մարդասիրութեամբդ քո զննջեցեալսն մեր ընկալ․ եւ հանգո ընդ սուրբս քո Աստուած հարցն մերոց։ Որ յահաւոր եւ յամպախաղաց գալստեան քո Տէր զարթուցանես զննջեցեալսն ի բարբառ փողոյն․ յայնժամ երանաւէտ կոչմամբ զննջե-

ցեալսն մեր ընկալ. և հանգո ընդ սուրբըս քո Աստուած հարցըն մերոց։ Եւ յահագին ձայնէ գուսմանըն զարհուրին գերեզմանք ունայնացեալք. յայնժամ աստուածային լուսով պայծառացո զննջեցեալսըն մեր և հանգո ընդ սուրբըս քո Աստուած հարցըն մերոց։

Գ.. Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զառաքեալն ի Հօրէ զմխիթարիչ հոգւոց հանգուցելոց. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց. միաւորէ զհաւատացեալս անուան իւրոյ. դասաւորելով յաջակողմեան դասուն. և բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Բ։

Զքեզ ամենօրհնեալ Աստուածածին. մայրդ լուսոյ և առագաստ Աստուծոյ Բանին մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Զքեզ պայծառ երկինք եւ ամպ լուսեղէն. ծնող արարչին և մորենի անկիզելի. մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զքեզ դուռն երկնից և ճանապարհ արքայութեան. բարձող անիծից և սրովբէ հողեղէն մեծացուցանեմք։

Ողորմեա Բ։

Որ կոչեցեր առ քեզ Տէր ըզտիեզերս ամ. ընկալ ըզմեր ըզննջեցեալսն ի գոգ նահապետին Աբրահամու. ողորմած Տէր փրկիչ և բարերար։ Փառք Հօր։ Որ թողութեան ես տուօղ Աստուած. թող ըզմեղս մեր ննջեցելոցըն. կարող յամե-

նայնի և հզօր՝. ողորմած Տէր փրկիչ և բարե-
րար: Այժմ և միշտ: Որ լուսատու ես տիեզե-
րաց Քս Ած՝. լուսաւորեա և ըզմեր ըննջե-
ցեալսըն լուսով երանաւէտ զուարթնոցն. ողոր-
մած Տէր փրկիչ և բարերար:

### ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԲՁ:

Ա. Հրեշտակային ձայնիւն օրհնեսցուք զամենա-
սուրբ զերրորդութիւնըն. փառաւորելով ըզհայր.
որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմա-
հութիւն: Փառք Հօր: Երգեցէք Տն երգ նոր եկե-
ղեցիք սրբեցելոց. Քրիստոսի երկրպագելով. որ
վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմա-
հութիւն: Այժմ և միշտ: Սրբասաց ձայնիւն
օրհնեսցուք. հոգևորական հնչմամբ գովեսցուք.
սուրբ զհոգին փառաւորելով. որ վերահանգոյց
զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն:

Բ. Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ հոգիք
զարթիցեն կալ ի դատաստանի քում Քրիստոս
Աստուած մեր: Փառք Հօր: Յորժամ հնչէ
բարբառն ահագին. և հարկանի փող յարութեան
մեռելոց. եւ մեք գոչելով ասեմք փառք գալըս-
տեան քո Տէր: Այժմ և միշտ: Յորժամ առ-
նես հատուցումըն Տէր և որք քո պարծեսցին ի
քեզ. եւ մեզ շնորհեսցես փրկիչ կալ ի յաջմէ
քումմէ:

Գ. Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մար-
դասիրութեամբ քո խոնարհեալ յանձինըս մեր. ստեղ-
ծիչ կենդանեաց և հանգուցիչ ննջեցելոց:
Փառք Հօր: Ի խաչին բեւեռեցար. զմահու լուծեր

զիշխանութիւն․ յաւիտենից զննջեցեալսն վերածեր յանմահ ի կեանս․ ստեղծի՛չ կենդանեաց և հանգուցի՛չ ննջեցելոց։ Այժմ և միշտ։ Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա՛ զմեր զննջեցեալսն․ յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս ե՛ւ մեր ննջեցելոցն շնորհեա՛ դասի՛լ ընդ սուրբս քո։

ՀԱՐՑ ԻԿ։

Արարիչ և մարդասէր Տէր․ որ վն մեր զմահ ճաշակեցեր․ Տէր Ա՛ծ հարցն մերոց։ Որ խոստացար հաւատացելոց ննջեցելոց յանուն քո զկեանս․ Տէր Ա՛ծ հարցն մերոց։ Արդ խնդրեմք ի քէն մարդասէր Տէր․ զհոգիս ննջեցելոց դասեա՛ ընդ սուրբս քո Տէր Ա՛ծ հարցն մերոց։

Գ․ ԶՏէր օրհնեցէք․ բարձր արարէք զնստեալն ի յաթոռ փառաց․ անդադար հոգևոր երգով։ Փառք։ Որ գալոցն է ընդ ամպս երկնից ի նորոգել զերկինս երկրի․ բարձր արարէք զնստեալն ի յաթոռ փառաց անդադար հոգևոր երգով։ Այժմ և միշտ։ Ի գոչել ահագին փողոյն․ զարթուցանէ զննջեցեալսն հանդերձ կենդանեօք․ բարձր արարէք զնստեալն ի յաթոռ փառաց անդադար հոգևոր երգով։

ՄԵԾԱՑՈՒՑԷ ԻԿ։

Մայր լուսոյն Մարիամ ամենօրհնեալ․ օրհնեալ ի կանայս։ Փառք։ Որ լոյսն անստուեր յարգանդի կրեցեր․ օրհնեալ ի կանայս։ Այժմ և միշտ։ Մի՛ դադարեր վասն մեր բարեխօսել․ օրհնեալ ի կանայս։

Ողորմեա Բ.Կ.:

Որ որդիդ ես և Բանդ Աստուծոյ. հաւասարակից ընդ Հօր յէութեն. առ քեզ կարդամք մարդասէր. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սուրբս քո: Փառք Հօր: Որ իջեր յերկնից վասն մեր զառաջինն առեր զյանցանսն Ադամայ. մերով բնութեամբ բարձեր ի վեր խաչին անարատ ձեռօք. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սուրբս քո: Այժմ և միշտ: Որ լուծեր զիշխանութիւն մահու կամաւորական մահուամբ քո Քրիստոս բանաւորաց զաղաչանս առաջի քո հեղեալ մաղթեմք. հանգո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սուրբս քո:

Տէր յերկնից Բ.Կ.:

Ա. Գովել վայելէ Աստուծոյ օրհնութիւն որ յանմատոյց աթոռ անմահից փառաբանիս ի բարձունս զննջեցեալսն յանուն քո ընկալ յերկնային քո սուրբ յառագաստ. որ միայնդ ես մարդասէր: Փառք Հօր: Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սիրողաց. որ միայնդ ես մարդասէր: Այժմ և միշտ: Որ յաւէտ ես օրհնեալ Տէր. արժանի արա ըղձանալս քո վերստին նորոգման. ի լսել ըղձային ձայնին փողոյն ընդ առաջ ելանել քոց փառացդ. որ միայնդ ես մարդասէր:

Բ. Թագաւոր խաղաղութեան որ քաղցրութեամբ խնամես զքո զարարածս. յիշեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ սրբս քո. և դասաւորեա ի յա-

ւուրն այցելութեան: Փառք Հօր: Որ կոչեցեր ի դրանց մահու ըզսիրելին քո զԼազարոս. եւ ծանուցեր զԱծութիւնդ ընդհանուր տիեզերաց. լուսաւորեա Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ սուրբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Այժմ եւ միշտ: Ի տաճարի քում սրբութեան մատուցանեմք քեզ պաղատանս արտասուալից. պայծառացո Տէր զհոգիս ննջեցելոցն ընդ սուրբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան:

Գ. Ի գիշերաց կանխեալ սաղմոսիւք եւ արտասուօք հայցեմք ի քէն Քրիստոս. յիշեա զննջեցեալսն ի տր անուանդ քո. եւ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո: Փառք Հօր: Որ յանմարմնոց վերօրհնիս. առ քեզ կարդամք եւ պաղատիմք Քս. յիշեա զննջեցեալսն ի տր անուանդ քո. եւ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո: Այժմ եւ միշտ: Որ մարմնացար վասն մեր աղաչանօք Աստուածածնին. Քս յիշեա զննջեցեալսն ի տր անուանդ քո. եւ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

Դ. Որ հայրդ ես բարեխնամ. գթա ի մեր ննջեցեալսն. եւ պարգեւեա մեզ. փառս տալ անուանդ քում սրբոյ: Փառք Հօր: Որ հրաւիրօղդ ես կոչեցելոց. ընդ աջմէ դասելոցն կարգեա եւ զմեր ննջեցեալսն. եւ պարգեւեա մեզ. փառս տալ անուանդ քում սրբոյ: Այժմ եւ միշտ: Որ նորոգօղդ ես ազգի մարդկան. արա արժանի եւ զմեր զննջեցեալսն ընդ բազմելոցն Աբրահամու. փառս տալ անուանդ քում սրբոյ:

Ե. Գովելոց է միածինն փառօք եւ փառօք Հօր.

եւ ըզհողեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ։ Փառք Հօր։ Լուսաւոր են ճանապարհք արդարոց. եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց ամպովք ըն-թանան։ Այժմ եւ միշտ։ Ի վերինն Երուսաղէմ թռուչին ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին։

Զ. Զուարթ ունելով հոգի խաղաղութեան. երթ-առ արարիչըն հայցելով. Աստուած իմ հանգո։ Փառք Հօր։ Որ ետուր հոգի Յն. ըղձամ պահեա. զի քո խաչի եւ յարութեանդ հաւատամ. Թա-գաւոր երկնաւոր. հանգո զհոգի սորա. յիշելով սորա զհաւատս։ Այժմ եւ միշտ։ Ի քաղաք Տեառն զօրութեանց եւ ի քաղաք Թագաւորին մեծի. ուր ժո-ղովք սրբոցն են ի խաղաղութեան. գնասցես յու-սով եւ հանգիցես ընդ հրեշտակաց դասս. տեսա-նել զլոյսն յաւիտենից։

Է. Արձեցաւ անձն իմ ի հող յորմէ առեղծեր զիս. եւ հոգւոյս մեկնեալ յինէն. Տէր զապաւի-նեալս յիշեա ի քում գալստեանն։ Փառք Հօր։ Ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց մի անտես առներ. այլ խնայեա յիս յահաւորին աւուրն. Տէր զապաւինեալս յիշեա ի քում գալստեանն։ Այժմ եւ միշտ։ Յորժամ գաս փառօք Հօր՝ դա-տել ըզտիեզերս ամ. եւ հարկանի փող հնչման յարութեան. Տէր զապաւինեալս յիշեա ի քում գա-լստեանն։

Ը. Ի գալստեան Տեառն զօրութիւնք երկնից բա-նիւն. եւ ճառագայթիւք անճառ լուսով ըզ խաչն երեւի։ Փառք Հօր։ Յերեւման Տեառն ըն-

բինըք հայի՛ն. և ի յահէ փառաց նորա շարժին
զօրութիւնք: Այժմ և միշտ: Աւետեօք Տեառն
մեռեալք յառնեն. և որք ամենայն անճառ
փառօք զարդարին:

Թ. Կայ զօրութեանց թագաւորն ի նորոգել զա-
րարածս. ի ձայն աւետեաց բարբառոյ զարթուցանէ
զննջեցեալսն: Կոչման երկինք և երկիր՝ յահէ
փառաց Տեառն. հուր բորբոքեալ ընթանայ. բոցա-
կիզէ զմեղաւորսն: Փառք Հօր: Լուսափետուր զար-
դարին դասք սրբոց կուսանացն. ուրախութեամբ մը-
տանեն ի յառագաստ փեսային: Այժմ և միշտ:
Ի քեզ եմք ապաւինեալ ամենօրհնեալ սըր-
բուհի. լեր բարեխօս անդադար վասն մերոյ
փրկութեան:

Ժ. Սարսափելի որոտմամբ՝ եւ ահագին զօրութեամբ.
գալոց է փրկիչն յաշխարհս յարուցանել զմե-
ռեալսն: Ահեղ և մեծ բարբառով հրեշտակապե-
տըն գոչէ. արիք ասէ մի ննջէք ահա եհաս ձեզ
փրկիչ: Որոտմամբ սըրտիք յարուցեալ՝ եւ ըն-
թանան առաջի. եւ տեսանեն զփրկիչն եկեալ
փառօք ի յաշխարհս: Կանոնի գործոցըն ծանուկք
յայտնի ի մեծ հրապարակին. եւ դողալով ընթա-
նան ի յանդիմանն ի տանջանս: Փառք Հօր:
Ի յօթեանսն Հօրն իւրոյ կոչէ զդասս արդարոցն.
Եւ յանպատում ի բարիս զոր խոստացեալ է նո-
ցա: Այժմ և միշտ: Սերոյ անմահ փեսային եղեր
դու մայր Մարիամ. բարեխօսեա վասըն մեր ի
յայնմ աւուր ահեղին:

## ՀԱՐՑ Գ.Զ:

Օրհնեմք ըզքեզ Հայր անըսկիզբըն ստեղծիչ ամ-
ենեցուն. զխոստովանողս որ անուանելոյդ քո ըզնըն-
ջեցեալըն հանգո յորդեգրութեան քում. Աստ-
ուած հարցըն մերոց: Գովեմք ըզքեզ անճառ
ծնունդ Հօր անըսկըզբընակից Որդի. որ մարմնով խա-
չի համբերեցեր վասըն մեր. ըզնըննջեցեալսն ի քեզ
ուղիղ հաւատով պայծառացո ընդ որս քո. Աս-
տուած հարցըն մերոց: Բարեխնամ Հոգի
փառակից Հօր և Որդւոյ. հայցեմք ի քէն ըզնըն-
ջեցեալսըն ճըշմարիտ հաւատով որ Երրորդութեանդ.
ի միաւանդամ նորոգմանըն դասել ի դաս ընտրե-
լոց քոց. Աստուած հարցըն մերոց:

Գ.. Երգեցէք զՏէր Միածնական ձայնիւ. ժողովուրդք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք Հօր: Որ գալըստն է փառօք Հօր միածին Որդին ձայնիւ անձայն փողոյն. ամենայն մարմին յարութիւն որդւոց մարդկան. միածնական ձայնիւ. ժողովուրդք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ամենայն հատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց՝ դատաւորըն կենդանեաց եւ մեռելոց. եւ փառաւորէ ըզսիրելիս իւր. պայծառացեալ ի կամարս լուսեղէնս. քահանայք ժողովուրդք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

### Մեծացուսցէ Գ.Զ:

Մայրըդ Աստուածածին. օրհնութեամբ մեծացուցանեմք: փառք Հօր: Ամենատուր հրեշտակն աւետարանէր. ըզծընեալըն փրկիչն ի սըրբոյ

կուսէ՛ն ։ Այժմ և միշտ ։ Ա՛սէ ուրախ լեր բեր-կրեա՛լդ ․ քանզի Տէ՛ր տերանց է ընդ քե՛զ ։

Ողորմեա Գ․Զ ։

Հա՛յր բարերգութ որ գըթացար ի յազգս որդ-ւոց մարդկա՛ն․ առաքեցեր ըզմիածի՛նդ ի փրկու-թի․ յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց և հանգո՛ ընդ ս՛րբս քո՛ ։ Փառք Հօր ։ Որդի՛դ միածի՛ն որ յարեարդ ի մեռելոց․ ի միասնգամ գալըստեանըն քո՛ յարութի մեզ խոստացար․ յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց և հանգո՛ ընդ ս՛րբս քո՛ ։ Այժմ և միշտ ։ Հոգի՛դ ճըշմարիտ մըխիթարիչ սըգա-ւորաց․ աղաչանօք ս՛ր Ածածնին և ամենայն քոց ս՛րց՝․ յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց և հան-գո՛ ընդ ս՛րբս քո՛ ։

Տէր յերկնից Գ․Զ ։

Ա․ Ի ձայն մեծի զուարթնոյն և ի հընչումն հրա-շալի փողոյն․ ո՛ւր հողացեալ մարմինք մարդկան նորոգին․ յայնմ աւուր ահեղին յիշեա Տէ՛ր և ըզմե՛ր ըզննջեցեալսն․ և՛ հանգո՛ ընդ սուրբս քո՛ ։ Փառք Հօր ։ Յորժամ նըշան տէրունեան ճառագայթիւք փայլէ․ և թագաւորըդ թագա-ւորաց փառօք տեսանիս․ յայնմ աւուր ահեղին յիշեա Տէ՛ր և ըզմե՛ր ըզննջեցեալսն․ և՛ հան-գո՛ ընդ սուրբս քո՛ ։ Այժմ և միշտ ։ Յորժամ ատեան դատաստանի՛ն դը՛նի․ և դըպրութիւնք հրաշիցըն բանին․ յայնմ աւուր ահեղին յիշեա Տէ՛ր և ըզմե՛ր ըզննջեցեալսն․ և՛ հանգո՛ ընդ սուրբս քո՛ ։

Բ․ Որ երկայնամիտդ ես Տէր․ քաղցր և անոխա-

կալ․ հանգո՛ զհոգի քո ծառայից․ զի՛ մի՛ դարձցի՛ տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենի՛ն ։ փառք Հօր ։ Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս․ եւ զուխտըս մեր ընկալ՝ որպէս զԱբէլին զնուէրն և զԱբրահամուն․ զի՛ մի՛ դարձցի՛ տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենի՛ն ։ Այժմ և միշտ ։ Ի խորան քում սիրողաց հանգուցես ըզծառայս քո․ եւ զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբըս քո․ զի՛ մի՛ դարձցի՛ տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենի՛ն ։

Գ․ Որ խոնարհեցար յերկնից Բանդ Աստուած և առեր մարմին ի սրբոյ կուսէն․ յիշեա ըզննջեցեալսըն մեր յորժամ գայցես անճառ փառօք․ զի դու ես Տէր ամենայն երկրի ։ փառք Հօր ։ Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց․ և խաչիւդ քո լուծեր զերկունըս մահու․ յիշեա ըզննջեցեալսըն մեր յորժամ գայցես անճառ փառօք․ զի դու ես Տէր ամենայն երկրի ։ Այժմ և միշտ ։ Ի նստել քո յատենի դատաւոր ահեղ․ աղաչանօք սուրբ Աստուածածնին յիշեա ըզննջեցեալսըն մեր․ յորժամ գայցես անճառ փառօք․ քանզի քո են փառք յաւիտեանս ամէն ։

Դ․ Արարչագործ Աստուած․ զարարածըս քո մի անտես առներ այլ դթա ի ննջեցեալսըն մեր․ եւ հանգո ընդ սուրբըս քո ի խորան քում սիրողաց ։ փառք Հօր ։ Արարչակցի Հօր Որդի․ ի միւսանգամ քո գալըստեանն անդատապարտ պահեա ըզննջեցեալսըն մեր․ եւ հանգո ընդ սուր-

բըս քո ի խորան քում սիրողաց։ Այժմ և միշտ։ Կենդանարար սուրբ Հոգի․ յորժամ նորոգես զերեսս երկրի․ նորափետուր զարդարեա ըզննջեցեալսն մեր․ և հանգո ընդ սուրբըս քո ի խորան քում սիրողաց։

Ե․ Արարչագործ Աստուած․ որ յոչընչէ գոյացուցեր զերկինս և զերկիր․ օրհնեմք ըզքեզ․ որ հանգուցիչդ ես ննջեցելոց Հայր ամենակալ։ փառք Հօր։ Բանդ Աստուած և համագոյ փառաց Հօր պատկեր․ գովեմք ըզքեզ որ յարութիւնդ ես ննջեցելոց Որդիդ միածին։ Այժմ և միշտ։ Աղբիւր անսպառ յորմէ բաշխի անեղերական շնորհք․ բարեբանեմք ըզքեզ․ որ նորոգօղդ ես ննջեցելոց Հոգիդ ճշմարիտ։

Զ․ Յահաւոր քո գալստեանն յորժամ գաս Տէր ի յերկնից ահագին զօրութեամբ․ և նշանն քո խաչին պայծառանայ ի մէջ երկրի։ փառք Հօր։ Ննջեցին տարերք երկրի ի ձայնէ հնչման փողոյն․ որ գոչէ զկենդանութիւն․ ասէ արիք եկն Տէր կենդանեաց և մեռելոց։ Այժմ և միշտ։ Շնորհեա մեզ Տէր ողորմութիւն ի ծագել սրբոյ խաչին․ որով եղև մեզ փրկութիւն․ զի նովաւ ելցուք ընդ առաջ Աստուածորդւոյդ որ ի յերկնից։

ՀԱՐՑ Գ․Կ։

Բանդ Աստուած որ ի ծոցոյ Հօր․ վասն մերոյ փրկութեան ի յերկնից խոնարհեցար․ զի ըզմեզ նորոգեսցես ի կեանս․ Աստուած հարցըն մերոց։ Որ հանգերձեալ ես գալ փառօք Հօր․ զարթուցանել ըզննջեցեալսն ի նոր անուանդ քո․ նորոգեա և ըզմեր ննջեցեալսն․

Ա՛ծ հա՛րցըն մերո՛ց։ Ա՛նմահութե՛ց տուող Քս և պա՛րգևիչ կե՛նդանութե. Ի միասա՛նգամ գա՛լըս–տեանն եւ յաշխա՛րհական ատենին. Թողութի շնորհեա մեր ննջեցելոցն. Ա՛ծ հա՛րցըն մերո՛ց։

Գ.. Զտէր օրհնեցէք բա՛րձր ա՛րարէք ըզնա յա՛–ւիտեան։ փառք Հօր։ Որ նըստի ընդ աջմէ Հօր ծը–նողի իւրոյ. և մա՛րդասիրապէս խը՛նամէ զա՛րարա–ծըս. բա՛րձր ա՛րարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ ըզհողացեալ բնութի մա՛րդկան նորոգէ իւր Ածութբն. Եւ կենագործէ ի կեանս անմահ. բա՛րձր ա՛րարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ.

Լեառըն վիմածին աղբեւր յորդառատ. բա–րունակ ծա՛ղկեալ այգի վայելչուչ սրովբէ հողե–ղէն. բարունեալ Բանին տուն անօրէնութե տա–ղաւար Հոգւոյն. առ ծընեալըն ի քէն միշտ բարեխօ–սեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութի մեր ննջեցելոցն։ փառք Հօր։ փափկութե դրախ–տին բացօղ բանալի. Քնի բարձօղ ներմանող եր–կնից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ. տաճար լուսոյ մայր. առ ծընեալըն ի քէն միշտ բարեխօսեա ան–դադար հայցմամբ. շնորհել զթողութի մեր ննջ–ջեցելոյն։ Այժմ և միշտ։ Հօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն. նիւթեղէն սրովբէ գեղ մարգրտափայլ հիմն եկեղեցւոյ. մաքուր անա–նի ամպ հովանաւոր ը՝ք կոյս Մարիամ. առ ծըն–եալըն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայց–մամբ. շնորհել զթողութի մեր ննջեցելոցն։

Ողորմեա Գ.Կ:

Յանըսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ Բա-
նըդ մարմնացար ի կուսէն վասն փրկութեան մե-
րոյ. աղաչեմք ընդ քեզ զննջեցեալսն մեր ի քեզ
ուղղեա հաւատով. յիշեա Տէ՜ր յորժամ գաս
թագաւորութեամբ քո: Աննախակալ քաղցրութեամբ
Որդի Աստուծոյ. հածեցար բառնալ զմեղս աշխար-
հի քո խաչելութեամբդ. աղաչեմք ընդ քեզ զննջե-
ցեալսն մեր ի քեզ ուղղեա հաւատով. յիշեա
Տէր յորժամ գաս թագաւորութեամբ քո: Կա-
մաւորական մահուամբ քո լուծեր զերկունս մա-
հու. և արժանի արարեր թողութեան յանցանաց
քաւիչ քո արեամբ. աղաչեմք ընդ քեզ զննջեցեալ-
սն մեր ի քեզ ուղղեա հաւատով. յիշեա Տէր
յորժամ գաս թագաւորութեամբ քո: Փառք Հօր:
Որ փոխանակ մեղաւորաց ըզմեռանել յանձն առեր.
իջանելով ի դժոխս փրկեցեր ի մեղսասէր բան-
տէն ըզգերեալսն. աղաչեմք ընդ քեզ զննջեցեալ-
սն մեր ի քեզ ուղղեա հաւատով. յիշեա Տէր
յորժամ գաս թագաւորութեամբ քո: Այժմ և
միշտ: Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրու-
թիւնդ. որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութիւն
պարգևեցեր աշխարհի. աղաչեմք ընդ քեզ զնըն-
ջեցեալսն մեր ի քեզ ուղղեա հաւատով. յիշեա
Տէր յորժամ գաս թագաւորութեամբ քո:

Տէր յերկնից Գ.Կ:

Ա. Այսօր ի լուսոյդ զմեզ լուսաւորեա. որ փառօք
Հօր հանգերձեալ ես գալ ի դատել զերկիր. արժա-
նաւորեա՛ և ըզմեր ըզննջեցեալսն անձանց խոստ-

մանց քոց ընդ սրբս քո։ Փառք Հօր։ Հօր եւ Որդւոյ համագոյակից. ի տիեզերական ահեղ ատենին. արժանաւորեա եւ զմեր զննջեցեալսն անձառ խոստմանց քոց ընդ սրբս քո։ Այժմ եւ միշտ։ Երկնի եւ երկրի արդար դատաւոր. յորժամ հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց. արժանաւորեա եւ զմեր զննջեցեալսն անձառ խոստմանց քոց ընդ սրբս քո։

Բ. Որ արարիչդ ես հրեղինաց եւ հողեղինաց. եւ միշտ ընդունիս փառաբանութիւն ի բանաւոր պաշտօնէից. ի քէն հայցեմք թողութիւն շնորհեա ննջեցելոց մերոց։ Փառք Հօր։ Որ ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան բնակեցար. և անմահութիւն պարգեւեցեր մեզ մահացելոցս. ի քէն հայցեմք թողութիւն շնորհեա ննջեցելոց մերոց։ Այժմ և միշտ։ Յորժամ նստցիս յաթոռ փառաց դատողական իշխանութեամբ. և փառաւորես որ ի քէն փառօք զգեցնես արեան քո Տէր. ի քէն հայցեմք թողութիւն շնորհեա ննջեցելոց մերոց։

Գ. Որ անբաւ քո մարդասիրութեամբդ գթացար յազգս մարդկան ծնեալ ի կուսէն. զծնեալս սուրբ աւազանաւն. զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո թագաւոր յաւիտենից։ Փառք Հօր։ Որ ի վերայ խաչին զենեալ որպէս գառն եւ զմարմին և զարիւնդ քո բաշխեցեր ի փրկութիւն աշխարհի. զհաղորդեալս մարմնոյ քո և արեան. զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո թագաւոր յաւիտենից։

Այժմ և միշտ: Որ ըստ նմանութեան մահու քո ընկալեր զմեզ արարեր. և երկնից արքայութեանդ ժառանգորդ լինել խոստացար. զհաւատացեալս ի գալստեան քո Տէր. զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո թագաւոր յաւիտենից:

Գ. փառք քեզ Ամէն փառաւորեալ յաւիտեան. որ կենդանարար ես մարմնոց. և գոյացուցիչ հոգւոց մեր ննջեցելոց: փառք Հօր: Որ բարձրացար ի խաչին վասն Ադամայ նորոգման. և իջանելով քո ի դժոխս աւեր առներ զգերեալսն: Այժմ և միշտ: Ազգինս արեան քո յիշեա կենդանարարօղ աշխարհի. և հանգստեան արժանաւորեա յԵրուսաղէմին վերին:

Ե. Ընդ զուարթունս երկնից օրհնեցէք զնստեալն ի յաթոռ փառաց. զի հանգուսցէ զննջեցեալ ծառայս իւր յաւիտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալստեանն: փառք Հօր: Ընդ սերովբէիցն սրբասաց ձայնիւ գովեցէք զՈրդին միածին. զի հանգուսցէ զննջեցեալ ծառայս իւր յաւիտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալստեանն: Այժմ և միշտ: Ընդ քերովբէիցն փառաբանութեանց բարեբանեցէք զՀոգին ճշմարիտ. զի հանգուսցէ զննջեցեալ ծառայս իւր յաւիտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալստեանն:

ՀԱՐՑ ԴԶ:

Որ փառօք Հօր հանդերձեալ ես գալ ի դատել զերկիր արեգակն արդարութեան. զի զհողեղէն զբնութիւնս մեր վերստին նորոգեսցես ի

կեանս. ընդ աջմէ քո Տէր Աստուած հարցըն մե-
րոց: Որ ածային բարկութիւն ըդատիս ըզհընդհացեա-
լըս մեղօք լուսատու տիեզերաց. լուսաւորեա և
ըզմեր ըզնընջեցեալսն անձառելի ածային լուսովդ.
ընդ աջմէ քո Տէր Աստուած հարցըն մերոց:
Որ նստիս ի վերայ բազմաչեայ քերովբէից թա-
գաւոր խաղաղութեան. հանգո և ըզմեր ըզնընջե-
ցեալսն ի վերինըդ քո Երուսաղէմ. ընդ աջմէ
քո Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք
ըզնա յաւիտեան: փառք Հօր: Որ յանհեղա-
կերպ հայրենի կամս. ընդ Հօր փառակից կեն-
դանին յաւիտենից. և իշխանութիւ դատիս զա-
մենայն արարածս. օրհնեցէք եւ բարձր արա-
րէք ըզնա յաւիտեան: Եւ այժմ և միշտ: Որի-
բան հայցեմք ի քէն որ Հօրդ կենդանարար.
աղաչանօք սուրբ Աստուածածնին արա արժանի
և ըզմեր ըզնընջեցեալսըն մըտանել ի յերկնային
քո սուրբ առագաստ. և ընդ վերին զօրսն օր-
հնեսցուք սուրբ զԵրրորդութիւնդ:

Մեծացուսցէ Դ.Զ:

Նախամերամք վեհագունիցըն հրեղէն յոգնա-
խոռումբս եղանակեսն. երգս առեալ մատուցա-
նեն զերաժըշտականաց զերանաւէտ զհոգեղէն
հընչմունս. քեզ Աստուածածնի Անմանուէլ. որ ծընար
տըղայաբար և վերածեր զաղգըս մարդկան Հօր
յորդէգրութիւն. աղաչանօք հայցեմք ի քէն
ըզնընջեցեալսըն մեր ընդ սուրբըս քո հանգո:
փառք Հօր: Գնեցեղեալ գովեն ըզքեզ գերապայ-

ծառագունդք հոգեղինացն. հեզաբար թեւապա-րել պարունակեալ ծածկեն ըզդէմս յահէ փա-ռաց քոց քեզ զԷմմանուէլ. որ ծընար տըր-զայարար և վերածեր զազգըս մարդկան հօր յորդէ գրութիւն. աղաչանօք հայցեմք ի քէն ըզնընջեցեալսըն մեր ընդ սուրբըս քո հանգո։ Այժմ և միշտ։ Օնոյն և մեք երգեմըք քեզ բա-րունական ձայնիւ զերգըս հոգևորս. պարե-րելով քեզ պատարագ ոսկի կընդրուկ զմուռ-ն և զհալուէս. քեզ զԷմմանուէլ. որ ծընար տըրզայարար և վերածեր զազգըս մարդկան հօր յորդէ գրութի. աղաչանօք հայցեմք ի քեն ըզ-նընջեցեալսըն մեր ընդ սուրբըս քո հանգո։

Ողորմեա Գ.Զ։

Յորժամ հարկանի փող գալըստեան քո Տէր. յայնժամ զարհուրեալ դողան արարածք ի յահէ քումմէ. աղաչեմք ըզքեզ փրկիչ. հանգո և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբըս քո. որ միայնդ ես բազումողորմ։ փառք Հօր։ Յահարեկ լուսոյ ծագման քո Տէր. ցընծան դասք առաքինեացն ի վերայ լու-սեղէն ամպոյն. աղաչեմք ըզքեզ փրկիչ. հանգո և ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբըս քո. որ մի-այնդ ես բազումողորմ։ Այժմ և միշտ։ Անախական բազմագութ ողորմած Տէր. մի անտես առներ ըզ-մեղուցեալքըս յահագին աւուրն. որ միայնդ ես բազումողորմ։

Տէր յերկնից Գ.Զ։

Ա. Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից թագաւոր փառաց. ամենակալ ամենակարօղ թող

ըզմեղըս մեր ննջեցելոցն. և հանգո՛ ի խորանի՛ քում ի յարքայական ի՛ հանգըստեան: Փառք Հօր: Որ ի նախնումն ըզմարգարէն Մովսէս լուսաւորեցեր անծայրին փառօք անսկզբեամբ Էութեանդ քո. լուսաւորեա՛ և ըզմեր ըզնընջեցեալսն և հանգո՛ ի խորանի՛ քում ի յարքայական ի՛ հանգըստեան: Այժմ և միշտ: Նախախօսութեամբ ս՛բ Աստուածածնի՛ ծընողի և մօր քո յիշեա՛ զգինս արեան քո Տէր. և դասաւորեա՛ յերանաւէտ յանթառամ և յանտըրտում ի կեանսդ. ի յարքայական ի՛ հանգըստեան:

Բ. Փառըք քեզ Հայր. որ կենարարդ ես մարմնոց և գոյացուցիչ հոգւոց. ընկա՛լ զօրհնաբանօղ հոգիս յանմահական քո հանգիստդ: Փառք Հօր: Անարգասիրի Հօր Որդի. որ պատկերակից եղեր հողեղինացս և խաչեցար. ընկա՛լ զօրհնաբանօղ հոգիս յանմահական քո հանգիստդ: Այժմ և միշտ: Անարատ ս՛բ Հոգի. որ անդորրիչ ես նեղելոց և մխիթարիչ հոգւոց. ընկա՛լ զօրհնաբանօղ հոգիս յանմահական քո հանգիստդ:

Գ. Ի հանգիստ քո Տէր ուր ա՛մ ս՛րբք քո հանգչին. հանգո՛ զհոգիս ծառայից քոց ընդ ս՛րբս քո մարդասէր: Փառք Հօր: Դու Աստուած. որ իջեր ի դժոխս. զերկունս մահու լուծեր ըզկապեալսն արձակեցեր և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ ս՛րբս քո մարդասէր: Այժմ և միշտ: Ընդ հոգւոցն արդարոց կատարելոց. և զհոգիս ծառայից քոց հանգո ընդ ս՛րբս քո մարդասէր:

Դ․ Ժամանակ դարձի իմոյ եհաս ի յերկիր․ արդ Տր ընկալ ըզծառայս քո․ և հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։ Փառք Հօր։ Խոստովանող հոգիս․ որ ելից զունայնութիւն ընթացս աշխարհի․ արդ Տր ընկալ ըզծառայս քո․ և հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։ Այժմ և միշտ։ Ի վերջնում աւուր մեծի․ յորժամ առնես զայցելութիւն քոյոց սիրողաց․ յայնժամ խնայեա ի ծառայս քո․ եւ հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Ե․ Գթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն եւ յիշեա ողորմութբ․ քանզի գինք սուրբ արեան քո են․ ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն․ եւ կան առաջի ահաւոր քո բեմին։ Փառք Հօր։ Զընկղմեալքս յահագին մեղաց ծովուս․ ապրեցո ի գեհենոյն ըզդաւանողս սուրբ Երրորդութեանդ․ ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն․ եւ կան առաջի ահաւոր քո բեմին։ Այժմ և միշտ։ Զլուսաւորեալքս ծննդեամբ նր աւազանին․ մի բարկութեամբ խրատեր․ և մի սրտմտութբ քո յանդիմաներ․ ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն․ եւ կան առաջի ահաւոր քո բեմին։

Զ․ Բարձրեալ թագաւոր յաւիտենից Հայր անսկիզբն․ որ զմիածինդ առաքեցեր ի փրկութի ազգի մարդկան․ աղաչեմք ըզքեզ յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց․ և հանգո ի քում

արքայութեանդ: Փառք Հօր: Բանդ Աստուծոյ երևեալ մարմնով յերկրի քահանայապետ ճշմարիտ. որ ի վերայ խաչին պատարագեալ բարձող մեղաց գառն անարատ. աղաչեմք ըզքեզ յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ի քում արքայութեանդ: Այժմ և միշտ: Սրբանկան շնորհաց բաշխօղ սուրբ Հոգիդ ճշմարիտ. որ վերնատանն ծնընդեամբ առաքելոցն կոչեցեր յորդեգրութիւն ըզտոհմն երկրիս. գթութեամբդ քո նորոգեա զհոգիս ննջեցելոց մերոց. և հանգո ի քում արքայութեանդ:

Է. Հայր անըսկիզբն արարիչ յաւիտենից. առ քեզ կարդամք և պաղատիմք. հանգո զննջեցեալսն մեր ի սուրբ անուն քո: Փառք Հօր: Որդի միածին. էակից Հօր և Հոգւոյ. ի միասնական քո գալստեանն. հանգո զննջեցեալսն մեր ի նոր անուն քո: Այժմ և միշտ: Հոգի ճշմարիտ փառակից Հօր և Որդւոյ. աղաչանօք Աստուածածնին. հանգո զննջեցեալսն մեր ի նոր անուն քո:

Ը. Որ հայրական իշխանութեամբ և փառօք գալոց ես Տէր ննջեցելոց ես դատաւոր հանդերձեալ քո առաքելովք. և անձինս ըզհաւատացեալսն քո Աբրահամու ծոցս: Փառք Հօր: Որ լուսափայլ ճառագայթիւք նշանաւ սրբոյ խաչին յաղթեցեր բանսարկուին. եւ ընտրեալս զոգիս յայտնեաց. և անձինս ըզհաւատացեալսն քո Աբրահամու ծոցս: Այժմ և միշտ: Արդ աղաչեմք ըզքեզ Քրիստոս Որդի Աստուծոյ. հանգո զմեր ննջեցեալսն ի վերին նորա Երուսաղէմ. զի մի դարձցի տրտմանք ամաչեցեալ ի յաւուրն ահեղ ատենին:

Թ․․ Ժողովեալքս ի տաճար փառաց սրբութեանդ. խոնարհեալ անձամբք պաղատիմք. դատաւո՛ր կենդանեաց եւ մեռելոց Քրիստոս Որդի Աստուծոյ. յայնմ աւուր յահեղին լուսազարդեալ պայծառացո զհոգիս մեր ննջեցելոցն. ի վերինն Երուսաղէմ ի յաջակողմեան դասուն։ Փառք Հօր։ Մեծ եւ ահեղ է օր գալստեան քո Տէր յորժամ շարժին զօրութիւնք երկնից. արեգակնակերպ ճառագայթիւք փայլես ի յարեւելից. յայնմ աւուր յահեղին լուսազարդեալ պայծառացո զհոգիս մեր ննջեցելոցն. ի վերինն Երուսաղէմ ի յաջակողմեան դասուն։ Այժմ եւ միշտ։ Յորժամ հարկանի փող գալստեան քո Տէր. ի յայնժամ եւ երկիրս դողդողեալ վերաբերէ զննջեցեալսն որ յԱդամայ. յայնմ աւուր յահեղին լուսազարդեալ պայծառացո զհոգիս մեր ննջեցելոցն. ի վերինն Երուսաղէմ ի յաջակողմեան դասուն։

Ժ․․ Ահագին համբաւ գալստեան քո Տէր զմտաւ ածեմք. զարհուրիմք ի յերկիւղէն ի սպառնալեաց գեհենոյն. աղաչեմք զքեզ փրկիչ. հանգո եւ զմեր զննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միանգամ ես բազումողորմ։ Փառք Հօր։ Յորժամ Գաբրիէլ հարկանէ զտիեզերալուր զբարբառ փողոյն. եւ նորոգին հոգիք նկատեն զիւրաքանչիւր տեղիսն. աղաչեմք զքեզ փրկիչ. հանգո եւ զմեր զննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միանգամ ես բազումողորմ։ Այժմ եւ միշտ. Ատեանն դնի եւ դը-

պրուեթիւք հրաշիցըն բանին. եւ դատաւորն ամենեղ յանկարկելն իւր յարարածս հատուցանէ վարձս ըստ գործոց իւրաքանչիւրոցն. աղաչեմք ըզքեզ փրկիչ. հանգո եւ ըզմեր ըզննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայն ես բազումողորմ։

ԺԱ. Ահագին է օրըն դատաստանին եւ դողումն առաջի բեմին. սարսափին հրեշտակք սոսկան երկիւր. ըզննջեցեալսն մեր մի անտես առներ յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Փառք Հօր։ Բանին դրունք երկնից բարբառին հրեշտակք. բանին գերեզմանք բորբոքի գեհեն. ըզննջեցեալսն մեր մի անտես առներ յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Այժմ եւ միշտ։ Գալարին երկինք որպէս մագաղաթ. գերագոյն գոչէ փող Գաբրիէլեան. գերապանծ լուսով զարդարին արդարքն. ըզննջեցեալսն մեր մի անտես առներ յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

ԺԲ. Մերձեցայ ես ի դուռըն գերեզմանի. եւ եհաս ինձ ժամանակ մտանել ի յարգանդ երկրի. յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան. բժիշկ իմաստուն եւ ճարտարապետ. բժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն. արարող եւ յոյս փրկութեան մերոյ։ Եղիցի ձեռըն քո պահապան անձին իմոյ. եւ աջ քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յարդարութիւն. բժիշկ իմաստուն եւ ճարտարապետ. բժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն։

արարող և յոյս փրկութեան մերոյ։ Փառք Հօր։ Ողորմեցես առ իս ըզգութ մարդասիրութեանդ. Եւ յաղբերէդ կենաց լուասցես զմեղս անձին իմոյ. բժիշկ իմաստուն և ճարտարապետ. բըժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն. արարող և յոյս փրկութեան մերոյ։ Այժմ և միշտ։ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզքեզ զամ աւուրս կենաց իմոց եւ առ քեզ ապաւինիմ հոգւով բանաւոր հօտի. դարձո զմոլորեալս ի հօտ քո Քրիստոս. բժիշկ իմաստուն և ճարտարապետ. բժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն. արարող և յոյս փրկութեան մերոյ։

Ժ.Գ. Անսկիզբն Ա.Ծ սկիզբն արարչութեան ի հողոյ ստեղծեր ըզմարդն առաջին. գործել եւ պահել յանպատում ի կեանս. իսկ ի սահմանազանցել հրամանի քո Տէր. ըզվճիռ մահու ի վերայ եդեալ. հող էիր անդրէն և ի հող դարձցիս. և այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից. ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս. յաւիտենականն լուսեղէն խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեան յերկնից բարութեան։ Փառք Հօր։ Ոսկի եղեալքս անպիտանացան գեղեցկայարմար շինուածոյս քակտումն. իմաստունըս յիմարեցայ ի յաղեաց մեղաց որ ընկըղմեցայ. և այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից. ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս. յաւիտենականն լուսեղէն խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեան յերկնից բարութեան։ Այժմ և միշտ։ Կուսն նշան փեսին կո-

չողին. կոչնատէրն ահեղ կոչօղն ահաւոր. դատաւորն անաչառ դատաստանին արդար. Հրեշտակք անմարմին դասին զմեղաւորս. և այժմ աղաչեմք զատեղծօղդ ամենից. ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս. յեօթնատեղեան լուսեղէն խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութե յերկնից բարութեանն:

Ժ·Գ·. Մեծ եւ ահեղ է օրըն դատաստանին. եւ դողումն առաջի բեմին. ի լսել ըզձայն փողոյն և ըզհընչումն ահագին հրոյն: փառք Հօր: Սարսափմամբ սասանի երկիր եւ դողան արարածք. եւ Գաբրիէլ հընչեցուցանէ՝ ըզտիեզերական ըզփառաւորեալ փողոյն. և հոգիքն ըզգենուն զանապական մարմինսն: Այժմ և միշտ: Խաչըն փայլէ յարևելից եօթընպատիկ պայծառ քան զարեգակն. պայծառանան արդարքն. և մեղաւորքըն ծածկին յանըստուեր լուսոյն. եւ ճառագայթ սուրբ խաչին առաջի քո դայ մաքրէ տեղի քեզ իջեվանի. ի յայնմ աւուր ահեղին ողորմեա հոգւոց մեր ննջեցելոցն:

ՀԱՐՑ ԴԿ:

Ցամփոփնից Քս և արարիչ ամենայնի. որ մահկանացուցս կեանքդ ես և անմահութի. ըզքեզ բարեբանեմք Քս հարցըն մերոց: Որ սպասաւորեալդ ես ի սերովբէից. զգեցար զծառայի կերպարանս. եւ խոստացար հանգուցանել ննջեցելոց յանուն քո ըզկեանս. ըզքեզ բարեբանեմք Քս հարցըն մերոց: Արդ խնդրեմք ի քէն Քս արարչակից Հօր եւ սուրբ Հոգւոյն. որ դատաւորդ ես

կենդանեաց եւ մեռելոց. զհոգիս ննջեցելոց դասեալ ընդ արդարս քո. ըզքեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։

Գ.. ԶՏէր օրհնեցէք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ գալոցն ես ընդ ամպս երկնից ի նորոգել զերեսս երկրի. եւ զարթուցանել զննջեցեալսըն հանդերձ ամենայն սըրբովք. առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Անարատն աղաչեսցուք ըզթագուհին մեր Քրիստոսի. զի արժանի արասցէ զննջեցեալսըն մեր. մտանել ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն. առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ։

Աստուածածին մայր եւ կոյս. ծագող արեգականն արդարութեան. որ լուսաւորեացն ըզմեզ. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին։ Փառք Հօր։ Եղծ զօրէնըս բնութեան մարդկան. հրաշափառ քո ծընընդ. եւ զէութիւն բնութեան ամբողջ պահեալ. եւ կուսութեամբ քո ոչ խախտեցան կղպիք. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին։ Այժմ եւ միշտ։ Զքեզ մորենի անկէզ լեառըն վիմածին դուռըն փակեալ եւ աղբիւր կնքեալ. նախատեսացըն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին։

Ողորմեա Գ.Կ։

Ա. Որ թագաւորդ ես յաւիտենից Քրիստոս Աստուած.

ընկալ ըղձմունս քո ի բարի․ Եւ շնորհեա ի յաջակողմն քում դասել։ Փառք Հօր։ Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց․ հանգո ըզհոգիս քոց ծառայից․ Եւ շնորհեա ի յաջակողմն քում դասել։ Այժմ և միշտ։ Յորժամ կարգիս աթոռ տէրութեան քո և հաստատես ատեան դատաստանին․ յայնժամ խնայեա ի ծառայս քո․ Եւ շնորհեա ի յաջակողմն քում դասել։

Բ․ Ողորմութեանց տուող Քրիստոս ի միւսանգամ քո գալստեանն․ շնորհեա և մեր ննջեցելոցն կալ ի յաջմէ քումմէ․ որ ողորմածդ ես յամենայնի։ Փառք Հօր։ Յորժամ զամենահանութիւն կենաց շնորհեսցես․ և ի կեանս հրաւիրեսցես․ ընդ կամարարս անուանելոց քո ըզննջեցեալսն մեր դասաւորեա․ որ ողորմածդ ես յամենայնի։ Այժմ և միշտ։ Ընդ սուրբս քո դասեա․ և ընդ արդարսն պսակեա․ ի տեղի անկելոց հրեշտակաց ըզննջեցեալսն մեր կարգաւորեա․ որ ողորմածդ ես յամենայնի։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Դ․Կ։

Ա․ Հայր անսկզբըն բարեխնամ մարդասէր․ որ ստեղծիչդ ես հոգւոց և մարմնոց․ յիշեա զննջեցեալսն մեր․ Եւ հանգո ընդ սուրբս քո։ Փառք Հօր։ Որդի միածին․ որ գթածդ ես առ ամենեսեան․ Եւ խաչիւ և արեամբ գնեցեր ըզքո ժողովուրդս․ յիշեա զգինս արեան քո Տէր․ Եւ հանգո ընդ սուրբս քո։ Այժմ և միշտ։ Հոգիդ ճշմարիտ․ որ աղբիւրդ ես անսպառելի․ Եւ լըցուցիչ ամենայն բարութեանց․ յիշեա զննջեցեալսն մեր․ Եւ հանգո ընդ սուրբս քո։

Բ․․ Խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց փառա-ւորեալդ ի զուարթնոց․ ըզննջեցեալսըն մեր ըն-կալ մարդասէր Տէր․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Փառք հօր։ Յորժամ գաս փառօք հօր դատել զերկիր արդարութեան արեգակն․ ըզննջեցեալ-սըն մեր ընկալ մարդասէր Տէր․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Այժմ եւ միշտ։ Ի նստել քո յա-տենի դատաւոր ահեղ Քն փրկիչ մեր եւ յոյս․ ըզննջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր․ եւ հանգո ընդ սուրբս քո։

Գ․․ Որ արարիչդ ես արարածոց հանգուցեալդ ի հրեղէն կառս․ յիշեա զհոգիս ննջեցելոց մե-րոց․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Փառք հօր։ Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան․ եւ ներող յան-ցանաց մերոց․ յիշեա զհոգիս ննջեցելոց մե-րոց․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Այժմ եւ միշտ։ Որ միասնագամ գալոցդ ես հայրենի փառօք նորո-գել զնախաստեղծին ծննդ․ յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց․ եւ հանգո ընդ սուրբս քո։

Գ․․ Թագաւոր փառաց Քրիստոս անմահութենց բաշխօղ․ ի փառաւորեալ գալըստեանըն քո․ ար-ժանաւորեա ըզննջեցեալսըն մեր․ դասակից լի-նել սրբոց քոց․ մարդասիրապէս որ ես միշտ ի յաթոռ փառաց։ Փառք հօր։ Զորս հաւատա-ցեալ ընդ սուրբս քո․ հաղորդել մարմնոյ եւ ա-րեան քո Տէր․ այսօր ընկալեալ հանգո զհոգիս նոցա․ կենագործելով ի կեանըդ յաւիտենից․ մարդասիրապէս որ ես միշտ ի յաթոռ փառաց։ Այժմ եւ միշտ։ Յորժամ առնես զհատուցու-

մին Տէր. և որդք քո պարծեսցին ի քեզ. յայնժամ խնայեա ի դաւանօղըս քո. դասաւորելով յաջակողմեան դասուն. մարդասիրապէս որ ես միշտ ի յաթոռ փառաց:

Ե. Թագաւոր փառաց Քրիստոս յոյս ազգի մարդկան. անհասանելի քո զօրութիւնդ՝ իջեր ի յերկնից կենագործելով զանարատ ձեռաց քոց ստեղծուածս. զապաւինեալսն ի քեզ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ յանտրտում ի կեանսդ. որ օրհնիս երգով ի հրեղէն զուարթնոցն: Փառք Հօր: Ի յերեւել հրաշիցն արփիահրաշ փայլմամբ. ի քառակերպեան նշանի քո Տէր. եւ զօրք երկնից ի յերկիր ծաւալին. զապաւինեալսն ի քեզ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ յանտրտում ի կեանսդ. որ օրհնիս երգով ի հրեղէն զուարթնոցն: Այժմ և միշտ: Ի հարկանել փողոյ հրեշտակապետին մեծի. ի բանալ գերեզմանացըն զարթիցեն մեռեալքն անապական մարմնով. զարդարին ընդ առաջ քո Տէր. զապաւինեալսն ի քեզ զհոգիս ննջեցելոց մեր ընկալ յանտրտում ի կեանսդ. որ օրհնիս երգով ի հրեղէն զուարթնոցն:

Զ. Որ ի Հօրէ առաքեցար մարդասէր կարող փրկիչ. եւ ըղմեղուցեալ ըզմարդըն բըժըշկեցեր. ողորմեա Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Փառք Հօր: Որ ի խաչին բեւեռեցար մարդասէր կարող փրկիչ. եւ ըզցօղ անապական արեանըդ ցօղեցեր տիեզերաց. ողորմեա Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր: Այժմ և միշտ: Որ ըզդըժոխս աւերեցեր.

և ըղձերեալսն փրկեցեր. և զարգելեալսըն վերածեր ի յոյս կենացըն յաւիտենից. ողորմեա Տէր հրաժարելոյս. զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր:

Ե. Նա անանցի Տէր ողորմեա հոգւոյ իմոյ բազմամեղի. որ բնակեալդ ես ի յերկինս և յանմարմնոց փառաբանիս. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Պակասեցայ յազգատոհմէ. լքեալ թողի զկեանս աշխարհի. և մարմին ունայնութե դարձաւ ի հող ուստի առեղծաւ. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Յաւուր յայնմիկ մատնեցայ ի ձեռս ահեղ հրապարակին. և առ քեզ ապաւինիմ ստեղծող բնաւից Տէր բոլորից. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Հայեցայ ի բարձունս առ քեզ կարօղ յամի. ընկալ զիս յարկս արդարոց ամրածածուկ աջովըդ քո. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Փառք Հօր: Ահա ի խաղաղութի դարձայ ի հող յորմէ ստեղծայ. Նորոգող ճարտարապետ պարգեւատու ողորմութե. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Այժմ և միշտ: Այլ կենդանիքս օրհնեմք զքեզ Քրիստոս թագաւոր յաւիտենից. որ փառօք փառաւորիս ի յերկնայնոց և յերկրայնոց. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ:

# ՄԱՆԿՈՒՆՔ

# ԽԱՉԻ

## ՅԱՒՈՒՐՍ ՈՒՐԲԱԹՈՒՑ

ԱՁ

Ա. Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած ի նըշան յաղթութեն տուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա: փառք Հօր: Որ զաշխարհ հակեցոյց բազկատարածութի խաչի քո Քրիստոս Աստուած. գաւազան զօրութեն տուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա: Այժմ և միշտ: Որ ըզմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց. կենաց փայտիւն կենագործեցեր. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

Բ. Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս. գաւազան զօրութեան ի յերկրի երեւեալ. Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: փառք Հօր: Զոր Հրէիցըն ծածկեալ զանթաքչելի ըզգանձըն. փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Այժմ և միշտ: Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. անխոյեան և կնիք յաղթող ընդդէմ թըշնամւոյն. Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Գ. Ի տաճարի սրբութեն փառաց քոց Քրիստոս. զոր ի յերկնից լուսաւորեցեր ածային ծագմամբ. ի սմա ըզքեզ անդադար բարեբանեսցուք: փառք

Հօր։ Որ ըղխորհրդովս փրկականս ածգիտութեան. շնորհեցեր մեզ ի ձեռըն քահանայապետին քո և վէկայի. նորին աղաչանօք խընայեա ի մեզ։ Այժմ և միշտ։ Օհաւատացեալ ժողովուրդըս սուրբ Երրորդութեան և զպատուիրանեալս ի խորան փառաց քոց պահեա անխըռով ի խաղաղութեան։

Ը.Կ

Ա. Նըշանաւ ամենայաղթ խաչիւըդ քով Քրիստոս. պահպանեա զմեզ մարդասէր յաներևոյթ թըշնամեայն. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկըս քո և հեղեր զարիւնդ ի փրկութիւն տիեզերաց. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Այժմ և միշտ։ Ի միասնգամ քո գալըստեանըն յերևել սուրբ նըշանիս. արժանի արա ըղծառայս քո վերըստին նորոգման. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։

Բ. Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբն իւրով. խորտակեաց ըզթըշնամին և եղծ ըզդատակնիք. անուանեալ փայտըն կենաց ի փրկութիւն տիեզերաց։ Փառք Հօր։ Սէր առեալ ցընծան երկինք և երկիր ուրախանայ. ընդ յայտնել սուրբ խաչին սեռակնաձեւ քառաթեւին. որ զաշխարհըս լուսաւորեաց ըզերգականակերպ ճառագայթիւք։ Այժմ և միշտ։ Ցընծացաւ Երուսաղէմ. բերկրեցան հաւատացեալք. նորահրաշ զարդարեցան քանզի տեսին զյաղթօղ նըշանն. արարածք ամենայն ի լուսոյն պայծառացան։

Գ. Սեղան քո Տէր զօրութեանց հաւատով կանգնեցաւ ի խորանի քում. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Փառք Հօր: Վէմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Այժմ և միշտ: Ի սմա մատուցանի ճշմարիտ պատարագ և զենումն անապական. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

ՐԶ

Ա. Որ նշանաւ ամենայաղթ խաչի քո Քրիստոս. բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Փառք Հօր: Որ շնորհեցեր մեզ յաղթանակ ընդդիմամարտութեան. վանել զզօրութիւնս թշնամւոյն: Այժմ և միշտ: Սովաւ ըզկեանս մեր խաղաղացո միայն բարեգութ. և փրկեա յամենայն փորձութենէ:

Բ. Այսօր խորհուրդ պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթայ ի ձեռն աստուածասէր դըշխոյին. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս: Փառք Հօր: Այսօր ընծայէ Գողգոթայ ըզծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն երանելւոյն Յուդայի. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս: Այժմ և միշտ: Այսօր ի ձեռըն փրկական սուրբ խաչին կենդանագործի պատանին մեռեալ. և ողբոյ սատանայ ընկերծանումն էր. իսկ մեք Քնի՝ հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս:

Գ. Աշակերտեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից.

որ Նստուր մեզ պահապան յաղթօղ ընդդէմ Թըշ-
նամւոյն. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա
զանձինըս մեր: Բարձրեալ Թագաւոր որ վասըն
մեր ելեր ի խաչ. և բարձեր սուրբ զյանցանս
նախաստեղծին Ադամայ. աղաչեմք սուրբ փըր-
կիչ պահպանեա զանձինըս մեր: Գլուխ որ հա-
ւատոյ և փայտ կենաց մարդկան յայտնեցար. զոր
տեսեալ այսոյն պըղծոյ կործանեցաւ անկանգնե-
լի. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինըս
մեր: Փառք Հօր: Գողացաւ Թըշնամին ընդ յայտ-
նել սրբոյ խաչին. և ի յահէ փառաց նորա կոր-
ծանեցաւ յանդունդս երկրի. աղաչեմք սուրբ փըր-
կիչ պահպանեա զանձինըս մեր: Այժմ և միշտ:
Երկինք ցընծային և երկիրս ուրախանայր. քան-
զի փրկիչ ցուցաւ որ խաչն և լուսաւոր տեղե-
րաց. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զան-
ձինըս մեր:

ԲԿ

Ա. Խաչին կենարար որ եղև ըմեզ փրկութի. սովաւ ամենեքեան երգեսցուք բարեբանեմք: Փառք Հօր: Որ ի Հօրէ լուսոյ լոյս ծառագայթեալ ի յերկրի. և գաւազան զօրութե հաւատացելոց. սովաւ ամենեքեան երգեսցուք բարեբանեմք: Այժմ և միշտ: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըմեզ ցուցաւ. ի յօգնութի ընդդէմ Թըշնամւոյն. սովաւ ամենեքեան երգեսցուք բարեբանեմք:

Բ. Ընդ երևումն քո ի Թաղմանէ ով սուրբ քառաթև. ի յահէ քումմէ կորեան գունդքն

զօրաց բանաւորկուբին և ընդ յառնել պատանւոյն զուարճացան հաւատացեա՟լք. քեզ երկրպագեմք յօգնութի մեզ ժամանեա յե՟լս եւ ի մուտս. փառք Հօր: Ի յերկրէ երկինք և ի յերկինքս մեզ անբարբառ բարեխօս ով սուրբ քահանայութե. ի՟ յաշխարհ և ի հրացայտ փայլմանըն կարապետ գոլով և նախագուշակ գալստեան Որդւոյն Աստուծոյ. քեզ երկրպագեմք յօգնութիւն մեզ ժամանեա յե՟լս եւ ի մուտս: Այժմ և միշտ. Յորժամ յարևելից փայլեա անճառ լուսով լուսաւորես զհաւատացեալսն. եւ դատապարտես զազգըն Հրէից անհաւատից ով սուրբ քահանայութե. ե՟ւ զիս լուսաւորեա ըզխաւարեալս մեղօք. և դասակարգեա ի դասս մատենագրի յանճառ երկնից արքայութեանդ. զի անդադար օրհնաբանիս և քո են փառք յաւիտեանս ամէն:

Գ. Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո նոր զեկեղեցի. ըզսա պահեա ի խաղաղութե: փառք Հօր: Որ շնորհեցեր ողորմութի ի բնակարանս հրեշտակաց եւ մարդկան քաւարան. տուր սըմա զանշարժ քո զխաղաղութի: Այժմ և միշտ: Ի տաճարի փառաց սրբութե քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութի:

Գ.Զ

Ա. Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն ըզՔրիստոս պտղաբերեցեր. պայծառապէս պահեա զուխտս հաւատացելոց: փառք Հօր: Դ. Եւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց. ի սրովբէափակ պահպանութենէն. պայծառապէս պահեա

զուխտս հաւատացելոց ։ Այժմ և միշտ ։ Որեւ
ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն.
եւ քեզ երկրպագեն ա՞մ հաւատացեալք. պարըս-
պեալ պահեա զուխտս հաւատացելոց ։

Բ. Անուանեալ փայտ գիտութեան. ըղձեմք ի կե-
նացըն հանեալ արտաքսեցոյց. որով յանցեաւ
մայրն Եւա եւ պատրեաց ըզնախահայրն ։ Փառք
Հօր ։ Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան
զօրութեան կենաց մարդկան եւ յոյս հաստատութեան.
առաջնորդ եղև մեզ ի կեանսըն յաւիտենից ։
Այժմ և միշտ ։ Տուր մեզ նշան յաղթող
սուրբ զխաչ քո. զի սովաւ մտցուք ընդ նեղ դուռն
անձկացեալ ճանապարհին. որում ցանկային եր-
կրածին որդիք մարդկան ։

Գ. Հրաշափառ տեսութիւն ի կաթուղիկէ եկե-
ղեցւոյ տեսանի. գործարան մահու մահուամբ
առիթ գոլ կենաց. և մահացուցիչ նախաստեղծին
մահուամբ գոլ շնորհօղ յարութեան ։ Փառք
Հօր ։ Պարգեւ գերագոյն պարգեւի այսօր հաւա-
տացելոց. և մահացուն ի կենաց առնու իւր զօրըս
վերելեակս. և թռուցեալ վերադայի ըրնակել ի
տեղւոջըն սրբութեան ։ Այժմ և միշտ ։ Եկայք
ժողովուրդք ընդ հոգեղինացըն սպասաւորեսցուք.
երկրպագեսցուք ա՛ծային նը նշանիս. փառա-
ւորեսցուք ըզհրաշագործ պարգեւաց տըւօղն ։

գ.կ

Ա. Ո՛վ քաւութեան լուսածին գերապանծ նիշ
կանգուցօղ կենացն ամենից. միշտ բազկատարած
առ քեզ էն ։ Փառք Հօր ։ Պատանեալ ազանց

հովանի՝ և պահպանեա՛ն ի յելս և ի մուտս. փրկեա՛ ի յայսոց եւ պարիսպ ամրութեան: Այժմ և միշտ: Դրոշմ ըզգայութեան եւ կնիք ի դէմս ամենից. դու եւ յաստուածայինսն կատարիս խորհրդոց. յորմէ արեգակնային փայլեն ճառագայթք:

Բ. Ով պահապան որ ծագեցար յԱդեմայ. նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Փառք Հօր: Դու փակելոյ դրախտին բացող եւ առաջնորդ աւազակին. որ զբոցեղէն սուրբն կապտեաց անեղին հրամանաւ: Այժմ և միշտ: Որ եւ ցընծան ըստորայինքս ամենայն ի միաւանգամ քո գալստեանն. եւ յաւէժ ըղձաւոր ճայնեան դասք անմարմնոցն առ էիցս:

Գ. Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք: Փառք Հօր: Որ եկն ի լուսաւորել զընտրեալ իւր զեկեղեցի. եւ պսակեաց զնա խաչիւն. նմա ընդփառս երգեսցուք: Այժմ և միշտ: Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուցուք փառս եւ պատիւ յաւիտեան:

ԴՁ

Ա. Զօրութիւն ո՛չ խաչի քո Տէր որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա ի պահեսցէ զմեզ յամ փորձութենէ: Փառք Հօր: Որ անձի ի սմա բարձրացար Աստուած. եւ ի սմա հեղեր զպատուական ո՛ զարիւնդ. սա ի պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ: Այժմ և միշտ: Եւ զքո միաւանգամ զգալուստդ. նշանաւ խաչի

քո՛ ցուցեր անշխարհի. սա՛ պահեսցէ ըզմեզ յամ փորձութէ։

Բ. Ի ստունդանելըն Ադամայ ի կենագործ ի դրախտին. խաբմամբ պատրանօք փայտին ծառոյն գիտութեն. օձաջամբ պատրանօքըն ճաշակեալ ի պտղոյն. և նզեւ վտարանդակեալ մայրաքաղաքն Երուսաղէմ։ Փառք Հօր։ Արեւելք ի դրախտին ընծայեցին ըզփայտ խաչին. և եկեալ կատարէր ի տեղւոջ կառափելման. բարձրանայր ի գիտին տարրեղէն փայտակներտըն. սուրբ քառաթեւըն պահապան անձանց մերոց։ Այժմ և միշտ։ Բանն անեղ համագոյ որ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. Արեւեալ ի յերկրի պայծառացան արարածք. հըզօրին կարողութեամբն եւ ըզմեզ վերածրեաց յորդեգրութեան շնորհս։

Գ. Լուսաւորեա Տէր զարդարեա զամուրըս քո. քանզի մերձեցաւ առ քեզ փեսայն երկնաւոր. փրկութի քեզ շնորհելով պըսակեածց անքննելի փառօքն իւրովք։ Փառք Հօր։ Այսօր ծագեաց քեզ դըշխոյ դուստր Սիովնի. որդւութեն արեգակըն Քն. և սփռեցան ըզքեւ շնորհըք ընդ Հոգւոյն մեծապէս պարգեւօք։ Այժմ և միշտ։ Այսօր ցընծա ընդ Սիովն մայր եկեղեցի. փայլեցո զմանկունըս քո որպէս զարեգակըն. զի անձամբ խընդութ լցոյց ըզքեզ Քրիստոս Թագաւորն։

Դ.Կ

Ա. Պարունակեալ պահէին յանեղանէն դրախտին ըզճանապարհըս ծառոյն կենաց. քրով-

բէականն հուրբըն բոցեղէն սրովբէիւք. այսօր արտափայլեալ ցուցար յերկրի անծագարդ փայտ կենաց եւ փրկութեան. զքեզ օրհնեն մանկունք նոր եկեղեցւոյ: փառք Հօր: Սաբեկայ ծառոյն վերաբերեալ խոյ յողջակէզ փոխանակ Իսահակայ. այլ ի վերայ քո զենեալ գառն անարատ. ի հաշտութիւն Հօր եւ ի բառնալ զմեղս մեր. զքեզ օրհնեն մանկունք նոր եկեղեցւոյ: Այժմ եւ միշտ: Պարծանք պօղոսեան. դաւանեալ զքեզ անծայրին Բանին տեղի եւ զենարան. քանզի քեւ ապրեցաք ի խածանող եւ յանմարմին գազանէն. եւ ի վերայ քո հեղեալ շիթք անապական արեանն կուսածնին ջնջեաց զմեղս. զքեզ օրհնեն մանկունք նոր եկեղեցւոյ:

Բ. Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ. որով դատապարտեալ պարտեցաւ թշնամին: փառք Հօր: Սովաւ պահպանեա զժողովուրդս քո Քս. որով երկրպագեմք քեզ ընդ Հօր եւ Հոգւոյն: Այժմ եւ միշտ: Ի քեզ ապաւինիմք Քրիստոս. որ գալոց ես խաչիւ. որպէս զի փրկեսցես զմեզ յայնմ աւուր ահեղ ատենին:

Գ. Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա. ձայնիւք հնչեցին սանդարամետք անդնդոց: փառք Հօր: Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի. պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային: Այժմ եւ միշտ: Եկայք շինեսցուք նոր զխորանն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

# ԽՐԱՏՔ

Վասն տօնից տէրունականաց և Աստուա-
ծածնի և Սրբոց. և վասն աւուրց Կիւրակէից,
Կերակրաւորաց և Պահոց, որ որոց չէք այլ
ինչ նշանակեալ:

---

## Ա. Վասն տօնից տէրունականաց և Աստուա-
ծածնի:

Ի ԳԻՇԵՐԻՆ, Օրհնութիւն ըստ պատշաճի աւուր ընթանա-
լեալն: Ապա Մաղթանք փառք հրաշափառ (ըստ աւուր
պատշաճի) տես երես 100: Քարոզ, Աղօթք ըստ յայնմ.
101: Աւետարան. 106. ըստ աւուր պատշաճի:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ, Առաւօտու երգ պատշաճն ասա. 145:
Քարոզ Մայր սուրբ. 149. և կամ թէ գանձ լինիցի: Քա-
րոզ Խնդրեսցուք. Աղօթք Զքում ամենազօր (ըստ
պատշաճի) 159:

ՅԵՐԵԿՈՅԻՆ, Մնեւերեք 213. ըստ աւուրն պատշաճի:
Քարոզ Մայր սուրբ. 149. կամ գանձ: Իսկ զինի Հաւատար-
մայն Քարոզ Սուրբ զԱստուածածինն: Կեցո. Աղօթք
Ընկալ Տէր. 265:

## Բ. Վասն տօնից սրբոց:

Ի տօնս սրբոց ընթանալեալն շաբաթուն յետերեկոյ տեսլեան
ասա. եթէ ոչ լինի աւուրն ինչ գրեալ,

Ի ԳԻՇԵՐԻՆ, Օրհնութիւն մարտիրոսաց ասա 310, է
յայնմ: Իսկ ի տօնս մարգարէից ասա Օրհնութիւն ԱԿ.
Որ զաստուածայինն. 387: Ապա Մաղթանք Բարեխօ-
սութեամբ Սրբուհւոյ. և Քարոզ և Աղօթք 100, և
թէ կամաւոր յաւետեան մարտիրոսաց 116. ասա, որ յայն ի
լինի. և Մաղթանք:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ, Առաւօտեան երգ 147. Քարոզ 151 ըստ տօնին պատշաճի: [illegible] մարտիրոսաց 378 ըստ ձայնին: Իսկ է տօն [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] *Յիշատակ Քրիստոսի* 513: Օրհնեալ [illegible] Քարոզ *Մեծ խաղաղութեան*. Ա[illegible] *Սուրբ ես Տէր*. 161: Փոխ *Միրեցի զի լուսոյ*. 162: Ն[illegible] [illegible] *Արարչական*. 170, յոր օր և ընթեր: [illegible] *Քրիստոս Աստուած մեր*: Քարոզ. *Սուրբ ճգնաւորօքն*: Ա[illegible] *Պսակիչ որոց կամ Որ ընտրեցեր*, ըստ պատշաճին. 163: *Հայր մեր*: Ն[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

ՅԵՐԵԿՈՅԻՆ, [illegible] 215. և [illegible] մարտիրոսաց. 378. է յայնե: Իսկ եթե [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]: Քարոզ *Մեծ խաղաղութեան*. Ա[illegible] *Հայր գթած*: Փոխ *Որ ընակեալն է*. 220: [illegible] *Օրհնեալն* *զՔրիստոս*: Քարոզ *Սուրբ միաբան*: Ա[illegible] *Յոյս կենաց*. 222: *Հայր մեր*: Ն[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

## Գ. Մ[illegible] [illegible]:

Յ[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible],

Ի ԳԻՇԵՐԻՆ, Օրհնութիւն յԱ[illegible] Օրհնութեանց [illegible] 267. յոր յայն ե[illegible] [illegible]: Ն[illegible] [illegible] Փառք *հրաշափառ*. 100: Քարոզ, Ա[illegible] 101 և Ա[illegible] Յարութեան 109, է յայնեն:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ, [illegible] [illegible] Քարոզ *Մեծ խաղաղութեան*: Ա[illegible] *Դու ես թագաւոր*. Ն[illegible] *Օրհնեցի անուն Տեառն*. 133: [illegible] [illegible] ըստ յայնին. 134: Փառք *յարութեան*. 139. Քարոզ *Օրհնեալ առաքելոյ*: [illegible] *Անձնակեցաց ճգնաւորք*. 141: Առաւօտեան երգ Յարութեան. 146. ըստ յայնին. Քարոզ *Աստուածոյ*. 150: Օրհնեալ [illegible] [illegible] [illegible] [illegible]. *Օրհնեցէք*: Փոխ *Օրհնեցէք մանկունք*: Ա[illegible]

[illegible] . 156. [illegible] *Աստուածածնայ*: [illegible] *Խնդրեսցուք*: *Կեցո*: [illegible] *ամենագօր*. 159:

ՅԵՐԵԿՈՅԻՆ, [illegible] . 295. [illegible]

[illegible] *Խնդրեսցուք*. *Կեցո*. [illegible] *Թագաւոր*:

## [illegible]

Ի ԳԻՇԵՐԻ ԵՒ ՅԱՌԱՒՕՏՈՒՆ [illegible]:

ՅԵՐԵԿՈՅԻՆ [illegible] *Լոյս զուարթ*. 212: [illegible] *Սիրեցի զի լուիցէ*. *Օ՜ն խոնարհեցայց*. 215: [illegible] *Սուրբ ես Տէր*, 384. [illegible] 385. [illegible] 386. [illegible] 386: [illegible] *Հայր գթածն* [illegible] *օրհնեցէք ամենայն ծառայք*. 223: [illegible] *Խնդրեսցուք*. *Կեցո*, [illegible] *Թագաւոր խաղաղութեան*. 224: *Հայր մեր*:

## Ե. Վասն աւուրց պահոց:

Յամենայն աւուրս պահոց, որ լինին ՚ի չորեքշաբթի, յուրբաթի և ՚ի շաբաթապահս [illegible] յայլ պահս,

Ի ԳԻՇԵՐԻՆ Օրհնութիւն ՚ի պահոց Օրհնութեանցն 396 [illegible] ՚ի յայնէն [illegible]: Մաղթանք, Քարոզ և Աղօթք: Թագաւոր Աստուածութեան [illegible]. 120:

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ, ՚ի չորեքշաբթի և ՚ի շաբաթապահս [illegible] պահոց [illegible] ՚ի [illegible]: Իսկ յամենայն [illegible] [illegible] [illegible]: Իսկ լինի յայն

| | | |
|---|---|---|
| Ա.Ձ | [illegible] | Գ.Ձ |
| Ա.Կ | „ „ | Գ.Կ |
| Բ.Ձ | „ „ | Գ.Ձ |
| Բ.Կ | „ „ | Բ.Կ |
| Գ.Ձ | „ „ | Բ.Ձ |
| Գ.Կ | „ „ | Ա.Կ |
| Դ.Ձ | „ „ | Ա.Ձ |
| Դ.Կ | „ „ | Դ.Կ |

Առաւօտու երգ պահոց. 148 [illegible] յամենայն պահս, և Քարոզ *Փառաւորեցուք*. 154: Մաղթանք [illegible] ՚ի չորեքշաբթի և ՚ի շաբաթապահս պահոց. 451. [illegible] յայնէն: Իսկ յուրբաթի Մաղթանք Խաչի 492 է յայնէն: Յետ *Սուրբ ես Տէրին* յամենայն պահս փոխ *Նանից [illegible]*. 168. [illegible]: Երգ *Արարչական*. Մաղթանք *Խաչ քո եղիցի*: Քարոզ *Աղաչեսցուք*: Աղօթք *Օգնեա մեզ*: *Յիշեա Տէր զպաշտօնեայս. Բարերար և բազումողորմ*: *Հայր մեր*. 178:

ՅԵՐԵԿՈՅՆ, Մնացեալ Աղօթ. 216. է յայնէն. և Հանգստեան պահոց 451 [illegible] յայնէն և էջս: Աղօթք Քարոզ *Վասն խաղաղութեան* 220. և այն [illegible] [illegible] տօնից [illegible]:

# Ա. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ

Ս. Հռիփսիմեանց: Ըկ:

---

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—ըէ Գ.Կ:

ԱՆՁԻՆՔ նուիրեալք սիրոյն Քի. երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք. ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ. մայր Սիոն դըստերօքն իւրովք: Նորբանոք երկնաւորօք լըցին զերկիր. քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քս. ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեն. և որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ: Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեն ձերոյ. յիմարեցոյց զթագաւորըն և պակեան հեթանոսք. ի գեղ ըսքանչելի ածատուր կուսանացն. տարփացեալ զուարթունքն ընդ մարդկան տօնեցին: Դարձեալ վերըստին արարչագործ զօրութի. և դարձեալ Եդեմ ածատունկ զարդարի. քանզի ծառըն կենաց տընկեցաւ ի դրախտին. բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ: Երկունք մահաբերք անիծիցըն լուծան. և Եդեմ վերըստին ածակերպ ճոխանայ. փոխանակ Եւայի դըստերըք նորա. մարտիրոսք եւ կուսանք ընծայեալք Աստուծոյ: Զօրըք հրեշտակաց ընդ մարդկան տօնեցին. և կանայք ի յերկինս գրեցան զինուորք. կուսութեամբ ընդ մահու պատերազմեալք յաղթեցին. խաչակից լինելով կուսածին արարչին: Ո՜վ զարմացումն և ի վեր քան ըզհրաշս. խոր-

հրոգոց և բանից հրեշտակաց և մարդկան. քանզի էին Ած ամենազօր զօրութիւն. խոնարհեալ տեսանէր ընդհանդէս կուսանացն: Ընկերք միամիտք մարմնական կենցաղոյս. նահատակք հաւասարք եւ հոգւով միացեալք. միաբան ընթացեալք ի տեղի ճակատու. զինեալն հաւատով և կացին յանդիման: Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց. և տըկար կանայքն վառեցան զինու. Թագաւորքն պերճացեալ զօրութբ և փառօք. ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր: Ժողովեալ բազմութիւն ազգաց և ազանց. ոչ զօրէին առ մի նահատակ. քանզի հասեալ ի թիկունս աներեւոյթ օգնութի. խորտակեաց յայտնապէս ըզգաղտնի պատերազմն: Ի վերայ միոյ պատուական մարգարտի. խաղացին ցընծալով ամենայն հեթանոսք. արեւմուտըք յարեւելս ընթացեալք հասին. քարոզել յայտնապէս ըզշըքնաղ տեսութիւնն: Լուան թագաւորք և լըցան խընդութբ. որսալ յանձն առին ըզգաղտնի մեծութիւն. պարգեւել իրերաց խոստանային բանիւք. եւ ծածուկ հընարիւք գողանալ ի միմեանց: Խորհուրդք հոգեւորք յըղութեանցըն յայտնէր. եւ երկուորք փրկութեան աշխարհի ճեպէին. քանզի կամըք վերին հրամանին քաղցըրացեալք. իջուցին ի վերուստ ըզպարգեւս փըրկութեան: Ծընան կուսանք աղջըկս բազումս. եւ մարք մանկունք ըզհրապարակս ծերոց. ի գիրկըս սըրբութեան աղօթից և պահոց. աճեցին հաւատով զարգացեալք ի Քրիստոս: Կանայք պատուականք քաղաքաւ և ազգաւ. վաճառականք

ատամբք անյայտ մարգարտին. եղին զանձինս գրաւականս բազմաց. եւ եղեն փրկանք անծանօթ աշխարհին: Հոլովեալ մեծ խորհուրդ եւ անհուն ցանկալի. ընտրեալ ի յերկրէ եւ դասեալ ընդ հրեշտակս. եղեն օրինակ սրբութեան կուսանաց. վարդապետութիւն արանց արդարոց: Ձեզ նմանել կարօտին ամենայն հոգիք. միացեալք սրբութեամբ եւ սիրովն Քի. զի մահուամբ ձերով մեզ ճանապարհ հորդեցէք. եւ լանել ամենայն մարդոյ առ Աստուած: Պսակաւորք ճարտարք հոգեւոր հմտութեամբ. թեթեւաբեռն մարմնով եւ մտօք սլացեալք. ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս. անվրդովս նաւեցէք եւ հասէք առ Քրիստոս: Ճշմարիտ որթոյն Քրիստոսի շառաւիղք. եւ ողկոյզք ճմլեալք երկնաւոր մրջակին. կոխեցայք ճգնութեամբ ի հնձանս ձեր. զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն: Մերժեցին ընկալեալ մարմնական կենցաղոյս. զի ծանեան եթէ նրաց է եւ սուտ պաճուճանք. ոչ հեշտացան ի գրգանս փափկութեան. իմացան եթէ անտի է անցաւոր մեծութիւնս: Յանդաստանս հոգեւորս աղօթից եւ պահոց. վաստակեալք յուսով զամենայն ժամանակս. ժուժկալեալք փորձութեանց եւ պէսպէս լլկանաց. եւ եղեալք ժառանգորդք անթառամ պսակին: Նախանձելի յօրինեցին զառաքինի կուսութեան. նոր նորոգեալ արեամբ եւ հրով. մատնեցին զանձինս սուսերաց եւ ջահից. եւ անշէջ լապտերօքն հետեւեալ մտին յառագաստն:

Շինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք. եւ արձանք լուսեղէնք ի յերկինս կանգնեալք. ինքեանք եղեն եւ այլոց ցուցին. ըղձանապարհըս ցանկալի զվերինն Երուսաղէմի: Ով ըզգաստութեան իմաստուն կուսանացն. որոց ոչ յաղթեաց հեղգութիւն եւ քուն. այլ արթունք եւ պատրաստք մընալով երկնաւոր հարսանեացն. զի մտցեն ի յառագաստ անմահ փեսային: Չունի ոք ի նոսա անուն չարութեան. եւ ոչ նախատինս յիմար կոչելոյ. քանզի միով պընդութեամբ հոգւով արութեան. միաբան քաջացան առ հասարակ ցընծացեն: Պարակցեալք քաջաղէն բընութեան. ի յերկրէ ի յերկինս տարադէմ գընացին փախըստեայք. ինքեանք եղեն եւ մեզ ուսուցին. բաղձում նեղութեամբ մըտանել յայն հանգիստ: Գերմեռանդն աղօթիւք եւ սիրովն առ Ած. հայցեցին ըզհընարըս փըրկութեան. բառնալով ըզխաւար դիւապաշտ մոլորութեան յաշխարհէ. պայծառացեալք լուսովն որ ի Հօրէ ծագեցաւ: Ուահըս յոլովս առաքինութեան յայտնեցին որդւոց մարդկան վերանալ յաշխարհէ. անըստերբիւր հոգեւորական վարուք. ելանել ի բանակս երկնաւորս անմարմին հրեշտակացն: Սոքա են քարինք սուրբք հիմնեցեալք ի յերկրի. զոր կանխաւ տեսեալ գուշակեաց մարգարէն. ի նոյն ի նիւթոյ շինեցաւ կաթողիկէ եկեղեցի. բարձրացեալ փառօք ի պարծանըս խաչին: Վասըն ձեր երանեալ նահատակք. զօրըք հրեշտակաց անմարմին զուարթ-

նոցն. ի յերկնից ի յերկիր հեղան. և մարդիկ խառնեցան ի գունդս զինուորաց Քնի Աստուծոյ: Տօնեսցուք ըստուգութբ ի հընձանս նոցունց. զի որբեալք լիցուք անմահական բաժակաւն. քանզի բաշխեն ըզըմբոշխնութի հոգւոց և մարմնոց. եւ զպարգեւս երկնաւորս սիրողաց իւրեանց: Բարունեայն հրամանաւ աներեւոյթ ազդմամբ. յարեւմտից յարեւելս եկեալ հասին. զի լուսով հրեշտակական վարուք կուսութեն. փարատեցին ըզխաւար դիւապաշտ մոլորութեանցն: Ցընծութեամբ տօնեսցուք ըզյիշատակս նոցունց. զի և նոցին հաղորդեսցուք փրկութեն. խնդրելով յարարչէն ըզպարգեւս երկնաւորս. և զդասելն ընդ նոսին ի յարկսն լուսեղէն: Խոծեալք մաշեցան յուսացեալք ի մեծութի. և կանայք վեհաղինք գերազանցեալք յաղթեցին. բուրուառք ոսկեղէնք հրով Հոգւոյն վառեցան. ջահազգեստեալք ի Քրիստոս և դասեալք ընդ հրեշտակս:

Հգ.․ Աղբեւր կենաց բաշխող շնորհաց Հոգիդ իջեալ ի բարձանց. զանազանական պարգեւօքս քո բաժանեցեր յառաքեալսն: Որ ի վ̄ր ջուրցըն գոլով սաւառնէիր զարարածս. իջեալ ի ջուրս աւազանին ծնանիս որդիս Աստուծոյ: Որ զարդարեալ նորոգես միշտ ըզնոր քո զեկեղեցի. պէսպէս շնորհաց քոց պարգեւօք փայլեն մանկունք սորա:

Հն.․ Խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց փառաւորեալդ ի զուարթնոց. ըզնընջեցեալսն մեր ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո ընդ սուրբս

քո։ Յորժամ գաս փառօք Հօր դատել զերկիր արդարութեամբ արեգակն․ ըզննջեցեալսն մեր ընկալ մարդասէր Տէր․ եւ հանգո ընդ սուրբս քո։ Ի նստել քո յաթոռն դատաւոր անհեղ Քս փրկիչ մեր եւ յոյս․ ըզննջեցեալսն մեր ընկալ մարդասէր Տէր․ եւ հանգո ընդ սուրբս քո։

ՄԾ․․ Հոյլք վերին զօրացն իջեալ շուրջ ըզկուսիւն պար առեալ․ զերգս օրհնութեան՝ եղանակեալ քաղցր ձայնիւ ակումբ առեալ․ զեռանհիւսեակն նուագեալ զմի տէրութիւն երգաբանեալ։ Զայնակից նոցին եղեալ դասք երջանիկ պետացն ընտրեալ․ ի Հոգւոյն վերաբերեալ որք ընդ հանուր աշխարհ սփռեալ․ անմարմնոցն համաձայնեալ ըզկոյսըն սուրբ երգաբանեալ։ Ղամբարափայլ ջահիւք լուցեալ որք կուսանաց գումար առեալ․ զերգս օրհնութեան նուագեալ ի պատիմօրն ամենօրհնեալ․ բարեբանեալ ես կոյս գովեալ յորմէ Աստուած Բանն ծնեալ։

ԽԶ․ Խաչի քո Քն երկրպագեն արարածք ամենայն․ որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ․ սովաւ եղիցի մեզ պահապան յաղթօղ․ ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից․ որ փառաւորեալդ ես ընդ Հօր․ ժողովել ըզհեռացեալսն կենսաբեր փայտիւն․ ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն․ սովաւ սպասէին արդարեալքն ի մեղսանէր բանտին որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։

փառք Հօր: փառաց ի փառըս բարձրացեալ պար-ծին. ի պատիւ նու ի փառս երեսուն եւ եօթեանքն. քանզի այս է թիւ Երանեալ կուսանացն. որք անթառամ պսակեցան յանվախճան յաւի-տեանն: Այժմ եւ միշտ: Քեզ որ ցընծութիդ ես Քրիստոս Ած. եւ ուրախութի ամենայն արդա-րոց. քաղցրացոն վայրն մեր աղաչանօք սըր-բոցն. շնորհելով զթողութի մեր բազում յան-ցանացն:

Մաղթանք. Նարեխօսութի սրբուհւոյ:
Թագաւոր յաւիտենական մարդասիրացդ է յայնէն:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Դ.Կ:

Այսօր զանյաղթելի սըրբոյն Հռիփսիմեայ ըզյիշատակըս տօնէ նոր եկեղեցի. բարեբանելով ընդ անմարմնական զինուորութիւն. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց: Այսօր հրաւիրեցաւ յերկնից արքայութիւնն սուրբըն Հռիփսիմէ. եւ արիաբար ընդդիմամարտեալ յաղթեաց բռնաւորին. խոստովանելով ըզՔրիստոս թագաւորն. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց: Այսօր պայծառացեալ ի կամարըս լուսեղէնըս սուրբըն Հռիփսիմէ. եւ հիւսիսականաց տօնողաց ուսոյց փառաւորել զերրորդութիւն. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց:

Դ. Որ զՏէր ըզՔրիստոս թագաւորն օրհնեցէք ընդ նոր երգով օրհնութեամբ: փառք Հօր: Որ պայծառացեաց վայելչութի պսակեաց ըզսուրբըն Հռիփսիմէ եւ զԳայիանէ. օրհնեցէք ընդ նոր երգով օրհնութեամբ: Այժմ եւ միշտ: Որոց վարդագոյն հեղ-

մամբ որ արեանցն. Նորոգեաց զաշակերտեալսն ի ձեռըն սրբոյն Գրիգորի. օրհնեցէք ըզնա նոր երգով օրհնութեամբ:

Մեծացուսցէ Գ. Կ:

Ըզքեզ Աստուածածին անճառելի լուսոյն. որ լուսաւորեց զհաւատացեալս. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք: փառք Հօր: Դու պարծանք կուսութեան մարդկան. դու ուրախութիւն հրեշտակաց. դու բարձօղ անիծիցն. վասն որոյ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Դու ճշմարիտ արեւելք արեգականն արդարութեան. յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:

Ողորմեա Գ. Կ:

Քրիստոս Աստուած բացեր ըզդուռըն հաւատոյ սրբոյն Հռիփսիմեայ. խոստովանել զԱստուածութիւն քո մարտիրոսութեամբ ի մէջ Հայաստանեայց: փառք Հօր: Յաղթող զօրութեամբ պայծառացեալ ի կամարըս լուսեղէնըս ընդ անմարմնոց բազմութիւնսն. խոստովանելով ըզՔրիստոս թագաւորն: Այժմ և միշտ: Ժողովեալքս հայցեմք բարեխօսութեամբ սրբոց Հռիփսիմեանց. ընկալ եւ ըզմեզ փրկիչ յորդեգրութիւն ի դըպրութիւն կենաց:

Տէր յերկնից Գ. Կ:

Պարկեշտ կանայքըն որըն Հռիփսիմեանք. եղեն սիրողք Քրիստոսի և ընկալան զանապական ըզպըսակն: փառք Հօր: Եղեն տաճար սըրբութեան Որդւոյն Աստուծոյ. շինեալք ի վերայ հիմանն առաքելոց և մարգարէից: Այժմ և

միշտ։ Առաւելն քան զլուսաւորս ի մէջ աստե-ղաց. փայլեալն ի գումարս հրեշտակաց դըստերք վերինն Երուսաղեմի։

Առաւօտու Երգ։

Առաքեա մեզ Տէր ըզլոյս քո եւ զճշմարտութիւնս քո. ցոյց մեզ Տէր զողորմութիւն. եւ քո ծառայից լեր օգնական. բարեխօսութեամբ սրբոց մարտիրոսացն որոց այսօր է յիշատակ։

Զի սուրբ առաջնորդեալ եկեսցուք ի լեառն քո եւ ի յարկս քո. մտցուք առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւնս իմ. ցոյց մեզ Տէր զողորմութիւն. եւ քո ծառայից լեր օգնական. բարեխօսութեամբ սրբոց մարտիրոսացն որոց այսօր է յիշատակ։

Ողորմ. Աստուած մեծ։

Մանկանց Գ.Կ։

Յիշատակ Քրիստոսի սրբոց վկայիցն. եկայք հաւատացեալք ընդ երգնութիւնս սոցա հրճուեսցուք. եւ օրհնութեամբ զԱստուած փառաւորեսցուք։ Փառք Հօր։ Զուարճացիր Հոփփիմէ քոյին սուրբ ընկերօք. զի ի տեղւոջ հեղման արեան ձերոյ գումք հրեշտակաց տօնեն ընդ մեզ. եկայք հաւատացեալք ընդ երգնութիւնս սոցա հրճուեսցուք. եւ օրհնութեամբ զԱստուած փառաւորեսցուք։ Այժմ եւ միշտ։ Ի տաճարի Հոփփիմեանց մեծ վկայուհեաց. եկեղեցիք սուրբ պայծառազարդեալ վայելչութեամբ տօնեն այսօր. եկայք հաւատացեալք ընդ երգնութիւնս սոցա հրճ-

չածկեսցուք. և օրհնութեամբ զԱստուած փառաւորեսցուք:

Օրհնէ խանխանցն ·Բըդ. Կամն խաղաղ. Ա.Դ. Սուրբ ես: փոխ. Սիրեցի զի: Եւ այլ Երգ Աշխարհական: Սաղմոս ·Բ. Աստուած մեր. ·Բըդ. Սուրբ ծագնաւորօքն. Ա.Դ. Պսակիչ մեզ: Հայր մեր:

---

### ՅԵՐԵԿՈՅԻ

Մեսեդէ խորհրդական է քայլէն Ա.Կ:

Համբարձէ Դ.Կ:

Անսկիզբըն Բանն Ած որ վն մեր համբեր մահու. բառնալով ըզդատակնիք անիծից առ ի մէնջ. գերապանծ մաքրութեամբ ըզմարդիկ վերագրեաց. խաչակից իւր եւ վկայք կամաւոր մահուամբն իւրեանց: Դիմամարտ գոլով սիրոյն ընդ կռապաշտ պաշտամունսն. երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք. զի զԱստուած բոլորից տիրաբար սիրեցին. եւ կեցին Հօր հետևեալ ստացան ըզթագըն պարծանաց: Անթագրեալք զմահու խորհուրդն ընդդէմ մեղացըն վառեցան. թողեցան յերկունս գանից գեր ի վերոյ քան ըզբնութիւն. ժուժկալեալք ի փորձ բանտից գելարանաց և կապանաց. ի մըրցմունս գազանաց սրոյ և հրոյ մենամարտեալք: Նշկանօք և քերանօք զարեան վտակսըն հոսեցին. խորհրդոց ոչ խոտորումն և ոչ փոխադրութիւն բարուց. ծաղիկքըն նուխեղէնք յաննիւթ ծաղիկըն յօդեցան. կատարեալք քաջութեամբ զչարին մուրհակսըն կապտեցին: Հրով հոգւոյն զինու վառեալ ըզհալածիչսըն վանեցին. ձօնեցան զենմամբ սրոյ ի բանաւոր ողջակիզումն.

զմխարմամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարա-
տեցին . ճոխաբար հետեւեցան լուսաշաւիղ ընդ
պողոտայն ։ Մերժեցին կործանեցին ըզմահահոտ
ըզմեքենայսն . յաղթեցին կարեաց մարմնոյ և հեշ-
տալի գըրգանաց . նաւարկեալք հըմտաբար ընդ
զհեղեղն կռապաշտութեան . շնորհաղարդ փայլ-
մամբ փայլեալք ի յերկնային նաւահանգիստն ։
Որոշեալք ի կրից կարեաց և ի Քն արձանացեալք .
չարաչար չարչարանօք զչարին մուրհակսըն կապ-
տեցին . պատրաստեալք չարադիւթիցն զհրեղէն
գետոցն ըզկիզմունս . ջրոյն կենաց գետահետեալք
բըղխեցին մեզ յորբուցումն ։ Այսօր գործեալք ի
լուսաձեւ յածակերտ ի խորանս . սըրբափայլ
զգեստուք պըճնեալք ըստ զարդու նոր Սիոնի .
վեր առեալ վըկայօրէն ըզմարգարէտըն հաւատոյ .
տենչացեալ անձառ լուսոյն վերամբարձան ի կեանս
անմահս ։ Փառք Հօր ։ Րաբունեացըն հըրաշալեաց
գըտցուք և մեք աշակերտեալք . ցօղեսցին մեր ար-
տասուք ընդ ցօղ արեան նահատակացն . լուսես-
ցին թելք հոգւոց ընդ հիւսից պըսակելոցն . փայ-
լեսցին գործք բարեաց ընդ լուսաթոյր մարտի-
րոսացն ։ Այժմ և միշտ ։ Քնի պըսակօղին զաղօ-
թանուէր ըզմաղթանս . զերանեալ նահատակացըն
մատուցօք ի յընծայումն . զի հաճութեամբ խո-
նարհեալ ընկալցի վասըն մեր . Թողութի շնոր-
հեսցէ մեր բազում յանցանացն ։

Փառք Սն խաղաղութեն ։ Անդէ Հայր գթած ։
Փառք Որ ընակեալն է ։ Ամենայն Օրհնեալն ։
Փառք Դու մեք միաբան ։ Անդէ Այս կենաց ։
Հայր մեր ։ Ա— — —

# Ա. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Գայիանեանց։ ԲՁ։

Ամենայն ինչ շարականացն ասա Եսայց ձայն Աստուածոյ Երգ Պարծեսցին։

# Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։ ԲԿ։

ԻԳԻՇԱՏԻ Օրհ. պահ. ՚ի յայնէն Յամժամ. 401։ Ողորմեա պահոց. ԲԿ. Խաղաղութեց տուող։ Թագաւոր յաւէտեան Աղաչեաւորելէ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց պահոց ԱՁ։ Որ հայիս. 412։ Աստուածոյ Երգ Նա ասացի, Տէր։ Բերդ. փառաւորեսցուք։

Ողորմեա պահ. ՚ի յայնէն ԲԿ. Արթունք. 453։ Զ.Նչէ Ճանկանց. Բարեր Ս. զան խաղաղութեան. Ալօէլ Սէ ես Տէր. փխ. Բանից իմոց. Ողոր-մեա Խաչ քո եղեցի. Բարեր Աղաչեսցուք. Ալօէլ Օգնեա մեզ։

ՅԵՐԵԿՈՅԻ Մեթեթէ պահոց ՚ի յայնէն ԲԿ։ Համբարձէ պահ. է յայնէն. Յօգնութի. 453։

# Ա. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Յովհաննու Կարապետին և Աթա-նագինեայ եպիսկոպոսին։ ԳՁ։

ԻԳԻՇԱՏԻ

Օրհնութեն Գ.Ձ։

Զմարգարէ Բարձրելոյն և զԹագաւորին զե-նաւոր. որ և ի ծննդոց կանանց մեծ կոչեցաւ.

յօրհնութիւն Հոգւոյդ պատուեսցուք։ Զլիա-ծնին կարապետ եւ ըզղանին ըզձայն. որ յորո-վայնէ զՔն յառաջ գուշակեաց. յօրհնութիւն Հոգւոյդ պատուեսցուք։ Զյանապատի բընա-կիչ եւ շնորհացըն քարոզող. որ եւ ի դժոխս ըզփըրկութեան քարոզեաց. յօրհնութիւն Հոգւոյդ պատուեսցուք։

ԴԿ

Որ յորովայնէ ընտրեցար յԱստուծոյ. քարո-զող ճըշմարիտ Որդւոյն Աստուծոյ. տէր Յովհան-նէս. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց։ Որ յանապատէ կոչեցար ի Տեառնէ. մըկըր-տել ըզբոլորից բարձօղըն մեղաց. տէր Յովհաննէս. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց։ Որ զմարգարէիցն ընկալար ըզպատիւ. եւ ըզշնորհըս ճըշմարիտ առաքելոցն. տէր Յովհաննէս. անդա-դար բարեխօսեա վասն անձանց մերոց։ Որ մա-քրութեանըն Հերովդիայ ընկալար ըզվաճան. եւ ի դասըս հըրեշտակաց վերակարգեցար. տէր Յովհաննէս. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց։

ՀՐԳ. Այսօր ուրախացեալ են եկեղեցի Քի. տօնէ խընդութեամբ զտօն վերին Երուսաղէմի. սըրբասաց ձայնիւ փառաւորելով ըզՔրիստոս։ Այսօր համաձայնեալ որդիք Սիոնի երկրայնոյ. տօնիւ զուարճանան որդւոց անդրանկաց վերին Սիոնի. սըրբասաց ձայնիւ փառաւորելով ըզ-Քրիստոս։ Այսօր դասք անմարմնոցն երգս առնեն պարէն ընդ մարդկան զերգըս հոգեւորս յանմահ

փեսայի՟ն յառագաստ. սիրողաց ձայնիւ փա-ռաւորելո՟վ զՔրիստոս:

ՄՐԳ.. Այսօր ցընծայ զուարճացեալ եկեղեցի հեթանոսաց. տօնելով զյիշատակ մեծի նահա-պետին և հօրըն հաւատոց Աբրահամու. օրհնեցէք մանկունք Սիօնի զհայրըն լուսոյ անլռելի: Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալ մարգարէիւքն առ Ած. տօնեմ ցընծութեամբ ընդտօն հովուացն Իս-րայէլին առաջնոյ. գովելով զգլուխ անկեան երկուց որմոց յարմարութեան: Այսօր ի գլու-խըս լերանց տուն Աստուծոյ հաստատեալ. որ և յաւէտ առողջ յամպոց Հոգւոյն ծածկաբուղխ ա-ռատահոս անձրևօք. բարեբանեա՛ զաղբիւրըն կե-նաց զարբուցանօղըն ծարաւեաց:

ԳՐԲ. Այսօր զիմանալի լուսոյն ծագօղն ի խաւա-րի նըստելոցս. զԳրիգորիոս սր հայրապետն. ե-կայք վերապատուեսցուք: Այսօր զանապական Հոգւոյն պարգևւան բաշխօղ որդւոց Թորգոմայ. յորդիս լուսոյ նորաւ ծընեալքս. եկայք վերապա-տուեսցուք: Այսօր զձայնի՛ն Բանին պատմօղ ի Հայաստանեայց աշխարհի. աշակերտեալ նորա ման-կունք. եկայք վերապատուեսցուք: Այսօր եր-գէ եկեղեցի՛ որդւովք իւրովք ընդ հրեշտակս. յիշատակի լուսաւորչի՛ն փառք ի բարձունս Աս-տուծոյ:

ՄՂՑ. Նորանելի՟ք սր մանկունքն ուղ քաջ նա-հատակք ետուն զանձինս իւրեանց ի մահ. փո-խանակ Որդւոյն Աստուծոյ: Նաւ զիակունք սր մանկանցն՝ որպէս ըզծաղիկ նըռնենեաց հա-

բեալ ի կարկտէ. և անկեալ ի սուրբ Ռնթ-ղեհէմ։ Եւ հոգիք որ մանկանցն որպէս զե-րամս աղաւնեաց թռուցեալ ի յերկինս. և զամեալ ընդ զուարթունս երկնից։

ԺԳ․ Աղբեւր կենաց բաշխող շնորհաց Հոգիդ ի-ջեալ ի բարձանց. զանապական պարգևս քո բաժանեցեր յառաքեալսն։ Որ ի վե ջուրցն դո-լով ստեղծանէիր զարարածս. իջեալ ի ջուրս ա-ւազանին ծնանիս որդիս Աստուծոյ։ Որ զար-դարեալ նորոգես միշտ զնոր քո զեկեղեցի. պէս-պէս շնորհաց քոց պարգևօք փայլեն մանկունք սորա։

ԺԴ․ Որ ի Ժօրէ առաքելոցն. մարդասէր կարող փրկիչ. և զմեղուցեալ զմարդըն բժշկեցեր. ողորմեա Տր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Որ ի խաչին բևեռեցար. մարդա-սէր կարող փրկիչ. և զգող անապական արեա-նըդ ցօղեցեր տիեզերաց. ողորմեա Տր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Որ զդը-ժոխս աւերեցեր. և զգերեալսն փրկեցեր. և զարդարեալսն վերածեր ի յոյս կենացն յաւիտե-նից. ողորմեա Տր հրաժարելոյս զոր հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։

ԺԵ․ Ընդ քեզ Ածածին. աղբիւր անսպառ լու-սոյն. որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանա-կան ձայնիւ երգով մեծացուցանեմք։ Դու պար-ծանք կուսութե մարդկան. դու ուրախութի հրեշ-տակաց. դու բարձող անիծից. վն որոյ ընդ քեզ Ածածին. մեծացուցանեմք։ Դու ճըշմարիտ ա-

րեւելք արեգականն արդարութեան. յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:

Խչ. Սուրբ զխաչ քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ քում սրբոյ. որով դատապարտեալ պարտեցաւ թշնամին: Սովաւ պահպանեա ըզժողովուրդս քո Քս՝. որով երկրպագեմք քեզ ընդ Հօր և Հոգւոյն: Փառք Հօր: Ի քեզ ապաւինիմք Քրիստոս որ գալոցդ ես խաչիւ. որպէս զի փրկեսցես ըզմեզ յայնմ աւուր ահեղ ատենին:

Այժմ և միշտ: Որ մարգարէիցն իջելոց ի դըժոխս. աւետարանեցեր ըզգալուստ Որդւոյն Աստուծոյ. տէր Յովհաննէս. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Թագաւոր յաւիտենական [illegible] Գ.Զ:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Զ:

Զուարճանայ այսօր եկեղեցի քո Քրիստոս. ի տօնախմբել զօր յիշատակի կարապետին քում Յովհաննու. սովաւ ըզքեզ միշտ օրհնեմք Ածդ հարցըն մերոց: Որ մեծ ի ծնունդըս կանանց ի քէն վկայեցաւ. ի յորովայնէ յառաջ գուշակեաց զանձառ քո զմարդեղութիւն. սովաւ ըզքեզ միշտ օրհնեմք Ածդ հարցըն մերոց: Յոր վեցթեւեան սրովբէքն ոչ իշխէին հայել ի փառս քո Քրիստոս. սա արժանապէս ձեռնադրեաց ըզքեզ ի յորձանսըն Յորդանանու. սովաւ ըզքեզ միշտ օրհնեմք Ածդ հարցըն մերոց:

Գ․․ ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Զկարապետին Յովհաննու կատարելով զպաշտօնս․ անդադար ձայնիւ զՔս Հայր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք Հօր։ Զերանելեալ մկրտչին մեծարելով զտօնս․ հոգևորական ձայնիւ զՔս Թագաւորն․ օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Յանապատի բարբառոյ ձայն․ եւ աւետաւոր արքայութեան․ ընդ նորին զմըր-մարտին սբ Հոգին․ օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ․Զ։

Ածածին երկնային դուռն ածային ձայնիւ աւետարանէր հրեշտակն․ ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Փառք Հօր։ Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակել հաճեցաւ ի քում յորովայնի․ ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Այժմ և միշտ։ Որ բոցեղէն սրովբէիւք շուրջափակեալ պահէր․ այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեալ․ ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։

Ողորմեա Գ․Զ։

Ճրագ ճշմարտութեան սբ Յովհաննէս մկրտիչ․ որ ծագեցաւ ի յերկրի․ աղօթիւք սորա Տր լեր մեզ և ողորմեա։ Փառք Հօր։ Մարգարէ և առաքեալ Ածորդւոյդ․ և ձայն բարբառոյ ազդ արարող տիեզերաց․ աղօթիւք սորա Տր լեր մեզ և ողորմեա։ Այժմ և միշտ։ Որպէս զարուսեակըն ծագեալ ի յերկրի․ եղեւ կարապետ արեգ-

ականդ արդարութեան. աղօթիւք սորա Տր լուր մեզ և ողորմեա:

Տէր յերկնից Գ.Ձ:

Առաքեալն ԱՅ կարապետն մեծն ի մարդա-ծնեալս մկրտիչն Յովհաննէս. պատրաստէր ճա-նապարհս թագաւորին յաւիտենից: Փառք Հօր: Ակնկալեաց եւ ասէ՝ չեմ ես Քն. այլ առաքեալ եմ առաջի նորա. և հարսին եկեղեցւոյ փեսայ Քրիստոս է արքայն երկնից: Այժմ և միշտ: Տեսանէր ըզՅս զի գայր առ նա. աղաղակեաց և ասէ. ահա գառն ԱՅ որ եկն ի բառնալ ըզմեղս աշխարհի:

Առաւօտու Երգ. Դու մանուկ մարգարէ Բար-ձրելոյն կոչեսցիս. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա:

Տալ ըզգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ. ի թողութիւն մեղաց մերոց:

Մանկանց և Հարանց Գ.Կ:

Մարգարէից գերագոյն եւ մեծ ի ծնունդս կա-նանց. որ ըզտնօրէնութիւն Աստուածորդւոյն ի Յոր-դանանի ծանեար Հոգւովն. աղաչեա զԱծ վասն մանկանց եկեղեցւոյ: Փառք Հօր: Յորովայնէ յո-րովայն երկրպագող Քնի. որ ըզհուրն Ածն մերով բնութբ մկրտեցեր ի Յորդանան. աղաչեա զԱծ վասն մանկանց եկեղեցւոյ: Այժմ և միշտ: Կա-տարումն օրինաց եւ նախասկիզբն շնորհաց. որ հոգւոյն ի դժոխս քարոզեցեր ըզփրկութիւն գալստեանն Քնի. աղաչեա զԱծ վասն ման-կանց եկեղեցւոյ:


ՍԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՈՑ

# Ա. ՈՒՐԲԱԹ

Պահոց։ Գ.Կ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհն. պահոց Գ.Կ. Քն Ըծ. 405։
Թագաւոր Աղաչխարութեան։

ՃԱՇԱՏՕՍԻ Հարց Հանգ. Ըկ. Գոհար. 460։
Առաւօտու Երգ Անցեն աղօթք։ Տէր Ըծ։
Ողորմեա խաչէ է յայնէն Գ.Կ. 497։

ՅԵՐԵԿՈՅԻ Համբարձէ պահոց է յայնէն Գ.Կ. 455։

# Ա. ՇԱԲԱԹ

Ս. Գրիգորի լուսաւորչի ելն 'ի վիրապէն։
Գ.Ջ։

Ի ԳԻՇԵՐԻ
Օրհնութիւն Ըջ։

Ո՛վ երջանիկ տէր սուրբ Գրիգոր սրբութեանցըն պաշտօնեայ. եւ առաջնորդ բանաւոր հօտի։ Ընդ քեզ ունիմք բարեխօս առ Յիսուս միածինն. եւ աղաչօղ վասըն քո ուխտաւորացս։ Կանխեա խընդրեա ըղթողութիւն յանցանաց. ի քէն աշակերտելոցս։

Ո՛վ երանելի տէր ոք Գրիգոր. ընդ քեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց։ Որ ի մոլութեանց բռնաւորին ոչ զանգիտեցեր. ընդ քեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց։ Որ ընդ անմարմնոցըն դասս վերակարգեցար. ընդ քեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց։

Դ·Կ

Արմատ ճշմարիտ ծայլին օրհնութեանցն. եւ հաստատութիւն հաւատոյ ազգի մարդկան. տէր սուրբ Գրիգոր. ի մաղթողական աղօթս քո հայցեա վասն մեր ի Քրիստոսէ: Նորոգեալ յԱծ քահանայապետ ճշմարիտ. եւ հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. տէր սուրբ Գրիգոր. ի մաղթողական աղօթս քո հայցեա վասն մեր ի Քրիստոսէ: Պսակ վայելչութեան եկեղեցւոյ Քրիստոսի. եւ առաջնորդ կենացն յաւիտենից տէր սուրբ Գրիգոր. ի մաղթողական աղօթս քո հայցեա վասն մեր ի Քրիստոսէ:

✝ Որ քանուէր կոչմամբքն ծագեցար որպէս արեգակն. եւ լուսաւորեցեր ըզՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ. տէր սուրբ Գրիգոր. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց: Որ քոյին առաքինասէր ճգնութեամբ. վերափոխեցար ի լուսեղէն յերկնային խորանսն. տէր սուրբ Գրիգոր. անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

ԴՆԴ· Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ. պայծառացուցեր զեկեղեցի հեղմամբ արեան սրբոց. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց. եւ ողորմեա քո արարածոց: Պանծալի են զաւակք հովիւքն զուարթունք. հրով Հոգւոյն շիջուցին զբոցն ըզկրակապաշտ պարսիցն. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց. եւ ողորմեա քո արարածոց: Պարթեւական տեսանողին յա-

ռաջագոյն ազդեցութբ · զհաւատոյ որդիս սրբոյն Գրիգորի պսակազարդ տեսեալ · մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարեաց · և ողորմեա քո արարածոց ։

Գ.Բ. Որ կոչեցեր ընդհանրացեալքս ի հարսանիս քո Սիոնին · ըմպել զբաժակն իմաստութեան ի ձեռըն սրբոյն Գրիգորի · բարեխօսութբ սորա ողորմեա մեզ Աստուած ։ Որ գերագոյն քան ըզ-բնութիւն չարչարանօք քո ընտրելոյն · դարձուցեր ըզմոլորեալքս ի գիտութիւն ճշմարտութեան · բարեխօ-սութբ սորա ողորմեա մեզ Աստուած ։ Որ ի վի-րապն անդընդայոյն ջաղխեր նովաւ զգլուխ վիշապին · ի գբի ներքնումն իջմամբ նորին բարձրացուցեր զմեզ ի յերկինս · բարեխօսութբ սորա ողորմեա մեզ Աստուած ։

ՀԳ. Ի համբառնալ Բանին յերկինս և ի նըստել ընդ աջմէ Հօր · զուարճացեալ առաքելոցն եր-կըրպագէին · օրհնելով ըզՀայր զառաքօղ Հոգ-ւոյն ։ Համահաւասարեալ գունդըք սրբոցն ի վեր-նատունըն խորհրդոյն · համբարձմամբ աջոյ սպա-սէին Հոգւոյն · օրհնելով ըզՀայր զառաքօղ Հոգ-ւոյն ։ Յանկարծահաս հընչմամբ հեղեալ կենդան-արար աղբիւր լուսոյ · անմահական կենաց լուսով զարդարեալ · որք օրհնէին ըզՀայր զառաքօղ Հոգւոյն ։

ՀՆ. Խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց փառա-ւորեալդ ի զուարթնոց · ըզննջեցեալսըն մեր ըն-կալ մարդասէր Տէր · և հանգո ընդ սուրբս քո ։ Յորժամ գաս փառօք Հօր դատել զերկիր ար-

դարութեան արեգակն. ըզննջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր. և հանգո ընդ սուրբս քո։ Ի նստել քո յատենի դատաւոր ահեղ Ք՛ս փրկիչ մեր և յոյս. ըզննջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր. և հանգո ընդ սուրբս քո։

Մ՛օ. Ա՛ծածին որ կոյս անապական տաճար. անպարագիծ Ա՛յին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի. այսօր ընդ բնակարան զուարթնոյն կրեցեր աւետեօք զՏէրըն տերանց ի քեզ. ա՛ռ որ մաղթեմք բարեխօսել վասըն մեր անլռելի ձայնիւ։ Յիմանալի վտակաց տանն Աստուծոյ հոսմանց. վիճակեալ տեսանողացըն ձայնիւ արբմամբ ըղձմըլեցար. այսօր զանթառամըն ծաղկեցար ըղծաղիկ ի ժամու տալով զպտուղ. ա՛ռ որ մաղթեմք բարեխօսել վասըն մեր անլռելի ձայնիւ։ Այսօր ի քեզ լըցեալ անմահականին բարբառ. որ ի փրկութիւն հասարակաց տուեալ նշան բնութեան ազգի մարդկան. աղա՛ կոյս յղացի և ծընեցի որդի զԸնդ մեզ յայտնեալըն Ա՛ծ. ա՛ռ որ մաղթեմք բարեխօսել վասըն մեր անլռելի ձայնիւ։

Խղ. Էջ միածինն ի հօրէ և լոյս փառաց ընդ նըմա. ձայնք հընչեցին սանդարամետք անդընդոց։ Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի. պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային։ փառք հօր։ Եկայք շինեսցուք ս՛բ ըզխորանըն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի։

Այժմ և միշտ։ Քեւ պայծառացան եկեղեցիք Քրիստոսի. փառաւորելով ըզմիասնական որ

զԵրրորդութիւնն. Տէ՛ր մեր Գրիգոր. անդադար բա-րեխօսեա վասն անձանց մերոց:

Թագաւոր խաղաղութեան է քայնէն:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց ԲՋ:

Որ առաքեցեր ըզսիրելին եւ զհաւատարիմ քո պաշտօնեայն ըզսուրբ Գրիգոր. եւ ի ձեռն նորա լուսաւորեցեր ըզՀայաստան աշխարհս. ըզքեզ միշտ օրհնեմք Տէր հարցն մերոց: Որ ետուր համբերութիւն անտանելի չարչարանաց սրբոյն Գրիգորի. եւ նորին ժուժկալութեամբն լուսաւորեցեր ըզՀայաստան աշխարհս. ըզքեզ միշտ օրհնեմք Տէր հարցն մերոց: Որ նորին սբ աղօթիւք բարձեր զխաւար կռապաշտութեան ի Հայաստան աշխարհէ. եւ արարեր երկրպագուս ամենասուրբ Երրորդութեանդ. ըզքեզ միշտ օրհնեմք Տէր հարցն մերոց:

Գ. Ազգեր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Արդ եկայք հաւատացեալք եւ կոչեցեալք յորդեգրութիւն սրբոյն Գրիգորի. օրհնեցէք. եւ բարձր արարէք զԱրարիչն ամենեցուն: Փառք Հօր: Ցնծութեամբ տօնեսցուք ըզյիշատակ հայրապետին մերոյ. եւ ընդ նմին գովեսցէք. եւ բարձր արարէք ըզթագաւորն մեր Քրիստոս: Այժմ եւ միշտ: Քահանայք եւ պաշտօնեայք հոգեւորական հնչմամբ գովեսցէք ընդ սրբոյ հայրապետին, եւ բարձր արարէք սբ զՀոգին ճշմարտութեան:

Մեծացուսցէ Բ.Ձ:

Ազկուսութիւնդ քո Ածածին անարատ զոր ոչ բոցանկիզեաց հուր Ածունըն մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ Քրիստոս Աստուած. և փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Անհասանելի տէրունական յայտնութիւն աշխարհի ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Ողորմեա Բ.Ձ:

Թ.ի ւնս իմ: Բարեխօսութեամբ քահանայապետին քո և վկային. կեցո զմեզ բազումողորմ: Փառք Հօր: Աղաչանօք սրբոյն Գրիգորի լուր մեզ. որ միայնդ ես բազումողորմ: Այժմ և միշտ: Նորին աղօթիւք որով ուսաք ճանապարհ կենաց. քաւեա Տէր զյանցանս մեր:

Տէր յերկնից Բ.Ձ:

Առաջնորդ հաւատոյ և լուսաւորիչ անձանց մերոց տէր սուրբ Գրիգոր. Եկայք հաւատացեալք ի ձեռն նր հանցուք Աստուծոյ գոհութիւն: Փառք Հօր: Մեծ խոստովանողըն Քրիստոսի և ըզչարչարանըս յանձն առող վասըն մեր տէր սուրբ Գրիգոր. Եկայք լուսաւորեալք ի ձեռըն նորա հանցուք Աստուծոյ գոհութիւն: Այժմ և միշտ: Քահանայապետ Աստուծոյ և պատմող ածային օրինաց տէր ն՟բ Գրիգոր. եկայք աշակերտեալք ընդ նըմա երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ:

Մանկունք Գ.Ձ:

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող. որ յառաջգիտութեամբ ըզփրկութի Հայաստանեայց

ըսկըզբնաւորեալ. ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեան սորա փրկիչ կեցո ըզմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն: Փառք. Հօր: Հրաշալի զարմացմամբ երանելին նա Գրիգոր. զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ. և երիւք հընգօք ամօք ի մէջ թունաւորացն բնակէր անգընդային տանջանօքն ի վիրապին. վասն որոյ բարեխօսութեան սորա փրկիչ կեցո ըզմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն: Այժմ և միշտ: Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմութեամբդ. եղեալ ըժըշկէր ըզհարուածեալսն ի դիւահարաղս սաստիցն. երկրպագօղս տանելով զամենեսեան սուրբ Երրորդութեանդ. վասն որոյ բարեխօսութեան սորա փրկիչ կեցո ըզմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն:

---

ՑԵՐԵԿՈՅԻ

ՆՂԴ Լոյս զուարթ: Մեղեդի Հրաշափառ Միքայէլի:
Համբարձէ Գ.Զ:

Որ կոչեցար յորդեգրութիւն. Հօրն երկնաւորի ով երանելի տէր սուրբ Գրիգոր. եւ եղեր վկայ ճշմարիտ Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն որոյ ժողովրդեան քո հայցեա ի Տեառնէ ըզքաւութիւն: Որ համբերութեամբդ քո. ստացար քեզ ժողովուրդս սեպհական եւ ընտրեալս. եւ նորափետուր զորդեգրեցեր ծընընդեամբ սուրբ աւազանին. վասն որոյ ժողովրդեան քո հայցեա ի Տեառնէ ըզքաւութիւն: Որ մեռելոցս ի խաւարի. բացեր զդուռն լուսոյ ճշմարտի

ածգիտութն. եւ արժանաւորս արարեր ըզ-մեզ ժառանգորդ լինել կենացն յաւիտենից. վասն որոյ ժողովրդեան քո հայցեմք ի Տեառնէ ըզքաւութի:

Հերնալ Շարական Գ.Զ:

Որ եկիր ի փրկութի մարդկան ծնընդեամբ կուսին Մարիամու եւ կենդանարար քո յարութբդ. հրաւիրեցեր ըզմահացեալքս ի յարութի անմահութն. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ: Փառք Հօր: Որ անապական ծնընդեամբդ քո լուծեր զերկունս նախամօրն Մա-րիամ մայր Աստուծոյ. բարեխօսեա առ միածին որդին լուծանել զկապանս մեղաց մերոց և աղա-չեա փրկել զանձինս մեր ի փորձութենէ: Այժմ և միշտ: Բանն անեղ համագոյ որ ընդ Հօր եւ Սբ Հոգւոյն. երեւեալ ի յերկրի պայծա-ռացան արարածք. Հզօրին կարողութեամբ և ըզմեզ վերագրեաց յորդեգրութեան շնորհս:

Փրղ. Վասն խաղաղ. Աղ. Հայր գթած: Փխ. Ասա օրհնեցէք: Ողջ: Փրղ. Խնդր. Կեցո յոյժ—: Աղ. Թագաւոր խաղաղ: Հայր մեր:

# Թ. ԿԻՒՐԱԿԷ

## ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ

### Տօն Եկեղեցւոյ: Գ.Կ:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնեալ է Գ.Զ:

ՈՒՐԱԽ լեր սբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պըսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո

զքանչելի փառօքն իւրովք: Խնդա յոյժ դուստր Սիովնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ. և Թագաւորն երկնաւոր հանգեաւ բնակել ի քեզ: Ընդ դաս երկնաւոր զօրացըն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիս. ուրախ լեր հարսն անարատ անքըննին քո խորհըրդով:

Խորան սրբութեան կանգնեցաւ որ Եկեղեցի. եւ Քրիստոս Թագաւորն ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երգեսցուք Քրիստոսի երգ նոր: Դասք հրեշտակացըն վայր իջեալ յերկնից երգեն ասելով. հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ:

Այսօր հրեշտակաց բազմութիւքըն տօնակից լինին ընդ մեզ. քանզի երկնաւոր Թագաւորն եկաւորի ի սուրբ Եկեղեցի: Խնդա և զուարճացիր հարսնացեալդ Այ Եկեղեցի. քանզի ըզքեզ Տէրըն վերանց ընտրեաց և հանգեաւ բնակել ի քեզ: Լուսաւորեա լուսաւորեա կաթուղիկէ եկեղեցի. քանզի ի քեզ շող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց. և լուսաւորեաց ըզմանկունս քո:

Որք արժանաւորեցաք ի կոչումըն փառաւորութեան Քրիստոսի Այ մերոյ. Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէ՛ք զանուն նորա ձայնիւ ցընծութեամբ յօրհնութիւն ի նոր: Զօրացեալքս ի քեզ Քս ժողովուրդք հաւատացելոց. ճըշմարիտ խոստովանութեամբ.

օրհնեմք զխորհուրդ ածային կենսաբեր տնօրէնութեան քո․ փառաւորեմք զահաւոր և զսքանչելի անուն քո Տէր Տէր մեր մեծ ի վերայ ամ երկրի: Ուրախ լեր եկեղեցի որ հարսն երկնաւոր խորհրդոյն․ ի փառս ամենասուրբ Երրորդութեան․ որ համագոյ իշխանութեամբ իւրով զարդարեաց ծաղմամբ լուսով պսակեաց զքեզ ի պատիւ ամենայն սրբովք իւրովք:

Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո․ զարդարեա զամուրս քո․ և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի: Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիովն․ և քեզ մատուսցին աղօթք Երուսաղէմ: Գովեա Երուսաղէմ զՏէր և օրհնեա զԱստուած քո․ ընտիր ժողովուրդ դշխոյ դուստր Սիովնի:

Այսօր Աստուածութիւն զուարճանայ նոր հաստատելով զերկիր․ պարեն սուրբ փառաբանեն զուարթնոց․ և մեք ձայնիւ օրհնութեան զարդարեսցուք սուրբ զտօնս: Այսօր և մեք ցնծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ․ մեծապէս փայլմամբ երևեցաւ յաշխարհի․ առ Աստուած գոհութիւնք ընթանան․ պատմեն անդադար զբան կենդանի: Խնդա և զուարճացիր եկեղեցի․ կոյս որ ես հարսն երկնաւոր փեսային․ ահա տեսանեմք զծնեալն զՔրիստոս․ գոլով առ քեզ լոյսն հեթանոսաց:

Հրաշափառ տեսութիւն ի կաթուղիկէ եկեղեցւոյ տեսանի․ գործարան մահու մահուամբ առիթ գոլ կենաց․ և մահացուցիչ նախաստեղծին

մահուամբ գով շնորհօղ յորդութեան։ Պարգե-գերագոյն պարգևել այսօր հաւատացելոց. և մահացուն ի կենաց առնու խւր զօրըս վերևլեակս. և թռուցեալ վերագայի բընակել ի տեղւոջըն սըրբութեան։ Եկայք ժողովուրդք ընդ հոգեղէնացըն սպասաւորեսցուք. երկրպագեսցուք ածային նընշանիս. փառաւորեսցուք ըզհրաշագործ պարգևաց տուօղըն։

ՀԳ. Առեգակն արդարութեան՝ քն ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեն. և յետ մահու և յարութեն համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. վասն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճըշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին բանին որ էր յերկինս. առաքեցաւ աւետիքըն Հօր ի բարձանց Հոգին ճըշմարտութեն. մխիթարել զորս յԱդամայ տըրտմեցելոց և հրաշինել զընտրեալ դասս առաքելոցն. վն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճըշմարտութբ։ Այսօր տըրտմական և գիշերային լուծան երկունք ծնընդեան նախամօրն. քանզի զծընեալըն մարմնով ի մահ և յապականութի. վերըստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճըշմարտութեամբ։

ՀՆ. Որ երկայնամիտդ ես Տէր. քաղցր և անոխակալ. հանգո զհոգի քո ծառայից. զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յանդուրն աչեղ անունին։

Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս. եւ զուխտըս մեր ընկալ որպէս զԱբէլին զնուէրն եւ զԱբրահամուն. զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յուսոյն ահեղ ատենին: Ի խորան քում սրբոյ հանգուցես ընծայեալս քո. եւ զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբս քո. զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յուսոյն ահեղ ատենին:

Մծ. Զանճառելի լուսոյ Մայր եւ ըղձնակարան անըսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք: Զանհաս տնօրէնութեան Մայր. եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր: Զբոլորից փրկութեան Մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. ըղձեալ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

Այժմ եւ միշտ: Ուրախ լեր բերկրեա հարսնացեալ որ Եկեղեցի. պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն. ծագողին զշող լուսոյ ի քեզ Մայր Եկեղեցի:

Ալէլու. Սիրեցի զի լուիցէ ձայնի. Դ.Կ. Տէր ող. 115:

---

ՑԱՐՈՒԱԿՕՏՈՒ

Ձայն Գ.Զ:

Այսօր պայծառ եւ սուրբ լուսոյ լցեալ տաճարն շնորհիւ սուրբ Եկեղեցի. ի սմա ըզքեզ օրհնեմք Ած հարցն մերոց: Հարսնարան արանց արդարոց. եւ ի սմա շող Ածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեալ. ի սմա ըզքեզ օրհնեմք Ած հարցն մե-

րոց: Տըւօղ ողորմութեան. Տէր տուր սըմա զանշարժ քո զխաղաղութիւդ. Ի սմա ըզքեզ օրհնեմք Ա՟ծ հարցըն մերոց:

Գ.. ԸզՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Ընդ անմարմնական բազմութեան ըզՔրիստոս Թագաւորն. որ եկաւորէ այսօր ի սուրբ եկեղեցի. ա՟մ ազինք գովեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Եկայք հաւատացեալըք սուրբ Երրորդութեան. յեկեղեցիս օրհնեցէք զԱ՟ծ. արարէք տօնս ուրախութեան մինչև յանկիւնըս եզանոյ. և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Գ.Զ:

Անըսկըզբնական Բանին Հօր բընակարան. տաճար եւ անապատ տեղի անստանելի լուսոյն. զքեզ ըմեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածածնի եւ կոյս: Փառք Հօր: Յորմէ կենդանաստեղծեալըք յանեղէն հաստեցան ամենայն էղականըս. անսերմնապէս տղայացաւ յորովայնի քում. և ծընաւ առ ի քէն մարմնացեալ Աստուածըն ըմոլորից. զքեզ ըմեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածածնի եւ կոյս: Այժմ և միշտ: Յորմէ զարհուրեալ դողային դասք վերին զօրութեանց. տղայապէս առընկալեալ բարձեր ի գիրկս. եւ աղօթեցեր որպէս մայր ըստացողին ըզքեզ ըզկուսական քո սուրբ ըզկանութիւն. զքեզ ըմեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածածնի եւ կոյս:

Ողորմեա Գ·Զ։

Օրըս ըստ պատկերի քում ըստեղծեր. նորոգելով քեզ տաճարացուցեր. զնորոգեալս ի մէնջ ըղտաճաճաԶԶՄԶ։ՄՄԶ։ԻՄ Մ րս ընկալ քեզ ի բնակութիւն։ Որ շնորհես մեզ կենաց տըւող զկենդանարար քո ծառայական կերպի. բերելով ըզըոլորից ըզվերբերերօԶԶՄԶ։ՄՄԶ։ԻՄ Մ ղդ ի փառըս սուրբ Երրորդութեանդ։ Փառք Հօր։ Կեցո զորդի ծառայի քո զոր ի Հռովմայ գահիցըն վերապատուեցեր. ուր եղին ըզվէմըն համատոԶԶՄԶ։ ՄՄՄ։ԻՄ Մ։ յ հիման սուրբ եկեղեցւոյ։ Այժմ և միշտ։ Որ ըզվերջինըս զայս հրաշազարդեցեր. քեւ չափ բնակցութիւ ըՀիմընափայլեցեր. ըզպանծալի և ըզփայլեալ ըզփառըս տանս աԶԶՄԶ։ ՄԶ։ԻՄ Մ յս վերջինըս քան զառաջինն։

Տէր յերկնից Գ·Զ։

Որ զարդարեաց մեծայայծառ փառօք սուրբ զեկեղեցի. եւ լուսաձեւմ բնակարան կարգեաց. խորան դասուց հրեշտակաց. ըզընա ՄՄՐ ամենայն արարածք օրհնեցէք։ Փառք Հօր։ Որ Ինքնագոյ հրաշիւքըն հիմնեցոյց ի վէմ հիման սուրբ առաքելոցն եւ շնորհեաց քաւութիւն ի սմա որդւոց մարդկան վերագասել ընդ վերին զուարթունսն. ըզընա ՄՄ ամենայն արարածք օրհնեցէք։ Այժմ և միշտ։ Որ ամենակարող զօրութեամբ Իւրով անճառելի ծագմամբ. անծապէս առատաձեռնեաց ազգի մարդկան. եւ պարգեւեաց շնորհս անապական ըզգեստըս պայծառըս զարդս. եւ բոլորեան պըսակըս յանմատոյց

լուսոյն. ընդ նմին մեք ամենայն արարածք օրհնեցէք ։

Առաւօտու Երգ Եկեղեցւոյ Տան քում վայելէ ։
Պարզ Ասացուք խաղ գանձ Եկեղեցւոյ ։
Զկնի Սուրբ Աստուածին Եկեղեցին խաչն և Աւետարանն և ամ պատարագ է գաւորս, ապա

Շարական Դ.Կ ։

Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա. ձայնիւք հրճուեցին սանդարամետք անդնդոց ։ Տեսեալ բռնեալ մեծ հայրապետին Գրիգորի. պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային ։ Եկայք չնսեսցուք ընդ խորհուրդն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի ։

Սաղմոս ՃԺԷ ։

ԿԶ. Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք 'ի սմա ։

Փխ. Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցէ տունն Իսրայէլի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ասասցեն երկիւղածք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա ։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ յանդորր ։

Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ ։

Տր է իմ օգնական, եւ ես տեսից 'ի թշնամիս իմ ։

Բարի է յուսալ 'ի Տր՝ քան յուսալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի Տէր քան յուսալ յիշխանս ։

Ամենայն ազինք շրջեցան զինեւ, եւ անուամբ Տեառն յաղթեցի նոցա ։

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս 'ի միասին. եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Շրջեցան զինեւ որպէս մեղուք, վառեցան, բորբոքեցան ոպ փուշք 'ի հուր. եւ անուամբ Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեցայ, եւ եղէ մերձ 'ի գլորել. եւ Տէր ընկալաւ զիս:

Զօրութի̃ իմ եւ օգնութի̃ իմ Տր̃, եւ եղեւ ինձ 'ի փրկութի̃:

Ձայն ցնծութե̃ փրկութե̃ 'ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութի̃, աջ Տեառն բարձր արար զիս. եւ աջ Տեառն արար զօրութի̃:

Ոչ մեռայց այլ կեցից՝ եւ պատմեցից զգործս Տն̃:

Խրատելով խրատեաց զիս Տէր. եւ 'ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ եւ խոստովան եղէց Տեառն:

Այս դուռն Տն̃ է, եւ արդարք մտանեն ընդ սա:

Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լուար ինձ. եւ եղեր ինձ 'ի փրկութիւն:

Վէմ՝ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան:

Ի Տեառնէ եղեւ այս. եւ է սքանչելի յաչս մեր:

Այս օր է զոր արար Տէր. եկայք, ցնծասցուք եւ ուրախ եղիցուք 'ի սմա:

Ո Տր̃ փրկեա՛ ո Տր̃ առաջնորդեա՛. օրհնեալ որ գալոցդ ես յանուն Տեառն. եւ օրհնեցաք զքեզ յանուանէ Տեառն:

Տր̃ Ած̃ մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութե̃ կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Ած̃ իմ ես դու՝ խոստովան եղէց քեզ. Ած̃ իմ ես դու՝ եւ բարձր արարից զքեզ:

Խոստովան եղէց քեզ Տր̃ զի լուար ինձ. եւ եղեր ինձ 'ի փրկութի̃:

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութի̃ նորա:

Ընթերցուած յԱռակաց: Թ.. 1:

Իմաստութիւն շինեաց իւր տուն, և կանգնեաց սիւնս եօթն: Զենն զզենլիս իւր, և խառնեաց 'ի խառնելիս զգինի իւր, և պատրաստեաց զսեղան իւր: Եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութ՟բ 'ի խառնելիս իւր: Եւ ասէ՝ որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս. և ցպակասամիտսն ասէ: Եկայք՝ կերայք 'ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ: Թողէք զանզգամութ՟ի, և կեցջիք. խնդրեցէք զիմաստութ՟ի, զի ապրեսջիք. և ուղղեցէք գիտութ՟բ զհանճար. և ուղիղ ճանապարհաւ իմացարո՛ւք զխրատ: 6:

Ընթերցուած ի Զաքարիայ մարգարէէ: Գ.. 7:

Այսպէս ասէ Տէր ամենակալ եթէ 'ի ճանապարհս իմ գնասցես. և զհրամանս իմ պահեսցես. դու դատեսցիս զտուն իմ. և եթէ պահեսցես ըզսրահս իմ, տաց քեզ որ շրջիցին 'ի մէջ դոցա՝ որ կանդ աւադիկ: Լուր լուր Յեսու քահանայ մեծ, դու և մերձաւորք քո՝ որ նստին առաջի քո. զի արք կիւսահմայք են: Զի ահաւասիկ ես ածեմ զծառայ իմ զծագումն: Զի զվէմն՝ զոր եդու առաջի երեսաց Յեսուայ, 'ի վ՟ր վիմին եւթն աչք են. ահաւասիկ ես փորեցից խորխորատ՝ ասէ Տ՟ր ամենակալ. և շօշափեցից զա՟մ անօրէնութ՟իս երկրին այնորիկ յաւուր միում: Յաւուր յայնմիկ ասէ Տէր ամենակալ, կոչեսջիք ամենեքեան զընկեր իւր ընդ որթով և ընդ թզենեաւ: Եւ դարձաւ հրեշտակն որ խօսէր ցիս. և զարթոյց զիս՝ զոր օրինակ յորժամ զարթնուցու այր 'ի քնոյ իւրմէ. և ասէ ցիս. զի՞նչ տեսանես դու. և ասեմ. տեսանեմ ահա՝ աշտանակ ոսկի ձոյլ, և դունտ 'ի վ՟ր ն՟ր, և եօթն ճրագ 'ի վ՟ր ն՟ր, և եօթն բերանք ճրագացն՝ որ 'ի վ՟ր ն՟ր: Եւ երկու ձիթենիք 'ի վ՟ր նորա. մի ընդ աջմէ գնտին լուցելոյ, և մի ընդ ահեկէ: Հարցի, և ասեմ ցհրեշտակն՝ որ խօսէր

ցիս․ զի՞նչ են այդոքիկ Տր̅։ Պատասխանի ետ հրեշտակն՝ որ խօսէր ցիս՝ և ասէ ցիս ո՞չ գիտես զինչ են այդոքիկ․ և ասեմ, ո՛չ Տր̅։ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցիս․ այս բան Տեառն է առ Զօրաբաբէլ․ ասէ, ո՛չ զօրութբ̅ մեծաւ և ո՛չ ուժգնութբ̅, այլ հոգւով իմով ասէ Տէր ամենակալ։ Ո՞վ ես դու լեառն մեծ կանգնել առաջի Զօրաբաբելի․ և հանից զվէմն ժառանգութե̅․ զհաւասարութի̅ շնորհաց շնորհել նմա։ Եւ եղև բան Տեառն առ իս՝ և ասէ։ Ձեռք Զօրաբաբելի հիմն արկին տանդ այդմիկ, և ձեռք նր̅ կանգնեսցեն զդա․ և ծանիցես՝ թէ Տէր ամենակալ առաքեաց զիս առ քեզ։ Դ․ 9։

Պօղոսի Առաքելոյն Յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս։ Թ․ 1։

Ունել ունէր և առաջինն իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւն։ Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս․ յորում աշտանակն՝ և սեղանն, և հացն նուիրաց՝ որ սրբութի̅ կոչէր։ Եւ յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ կոչէր սրբութի̅ սրբութե̅ց։ Յորում կայր բուրվառն ոսկի, և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով․ յորում սափորն ոսկի լի մննանայիւ, և գաւազանն Ահարոնի՝ որ ծաղկեցաւ․ և տախտակք կտակարանացն։ Եւ 'ի վերայ նր̅ քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին 'ի վր̅ քաւութե̅ն․ վս̅ որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ Եւ այն ա̅մ իբրև այնպէս հանդերձեալ կայր, յառաջին խորանն յա̅մ ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կատարել։ Բայց յերկրորդն մի անգամ 'ի տարւոջն քահանայապետն, և զայն ոչ առանց արեան, զոր մատուցանէր վս̅ իւր, և վս̅ ժողովրդեանն անգիտութե̅։ Զայս ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչ չև յայտնեալ էր ճանապարհի սրբութե̅ցն․ քանզի դեռ առաջին խորանն ունէր

զհաստատութի. որ է առակ ժամանակին, որ առաջի կայր. յորում պատարագքն և զոհքն մատչէին, որք ոչ կարէին ըստ մտաց կատարել զպաշտօնեայսն. բայց միայն կերակրովք և ըմպելեօք, և պէսպէս մկրտութիք՝ մարմնոյ արդարութիքն. որ մինչև 'ի ժամանակս ուղղութեն 'ի վր կային: 10:

Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

Որպէս սիրելի են յարկք քո Տէր զօրութեց, ցանկայ և փափագէ անձն իմ 'ի գաւիթս քո:

ԶՔՆԷ ԱՐԹԻ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ժ. 22:

Տէրն մեր Յս Քս

Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, և ձմեռն էր: Եւ շրջէր Յս 'ի տաճարին՝ 'ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և ասեն. մինչև յե՞րբ թափես զոգիս մեր, եթէ դու ես Քսն՝ ասա մեզ համարձակ: Պատասխանի ետ նց Յս և ասէ. ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վս իմ: Այլ դուք ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց: Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնս, և զկնի իմ գան. և ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս. և մի կորիցեն 'ի յաւիտեան. և մի ոք յափշտակեսցէ զնս 'ի ձեռաց իմոց: Հայրն իմ՝ որ ետ ինձ զնս, մեծ է քան զամ, և ոչ ոք կարէ յափշտակել 'ի ձեռաց Հօր իմոյ: Ես և Հայր իմ մի եմք: 30:

Եւ տեառնագրեն զանդաստանն և զաշխարհն:

Քարոզ Սբ խաչիւ: Ալէլու Պահպանեա: Եւ աղօթքն է Գերերկնային և ասանքն Հանգստեան:

Շարական Դ.Կ:

Ա. Թագաւոր փառաց Քրիստոս անմահութեանց բաշխօղ. ի փառաւորեալ գալստեանն քո. ար-

ժամանաւորեա ննջեցելոցն մեր. դասակից լի-
նել սրբոց քոց. մարդասիրապէս որ ես միշտ
ի յաթոռ փառաց։ Զօրս հաւասարեցեր ընդ սրբոս
քո. հաղորդել մարմնոյ և արեան քո Տէր. այսօր
ընկալեալ հանգո զհոգիս նոցա. կենագործելով ի
կեանսդ յաւիտենից. մարդասիրապէս որ ես
միշտ ի յաթոռ փառաց։ Յորժամ առնես զհա-
տուցումն Տէր. և սրբք քո պարծեսցին ի քեզ.
յայնժամ խնայեա ի դաւանօղս քո. դասաւո-
րելով յաջակողմեան դասուն. մարդասիրապէս
որ ես միշտ ի յաթոռ փառաց։

Բ. Ծածկին որ կոյս անապական տաճար. անպա-
րագիծ Էին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի.
այսօր ընդ բերկրական զուարթնոյն կրեցեր աւե-
տեաց զՏէրըն տերանց ի քեզ. ո՜վ որ մաղթեմք
բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ։ Յիմա-
նալի վտակաց տանն Աստուծոյ հոսմանց. վիճա-
կեալ տեսանողացն ձայնիւ արբմամբ ըղձմբլե-
ցար. այսօր զանթառամըն ծաղկեցար ըղծաղիկ
ի ժամու տալով զպտուղ. ո՜վ որ մաղթեմք բա-
րեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ։ Այսօր ի
քեզ լցեալ ամոլածնին բարբառ. որ ի փրկու-
թի հասարակաց տուեալ նշան բնութե ազգի
մարդկան. աչա կոյս յղասցի և ծնցի որդի
զնդ մեզ յայտնեալն Ած. ո՜վ որ մաղթեմք
բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ։

Գ. Որ յանըսկիզբն յէէն անսերմապէս ծնեալ.
և սրովբէականըն ծածկէիր թեւօք. այսօր ըղ-
պարանգրեալն մարմնով ցուցեր զԱծութեան քո

զփառս աշակերտաց քոց Տէր. քո՛ ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա՛ մեզ Աստուած: Փառք Հօր: Որ զստուերական օրէնս մովսիսական տառիցն ի սինէական խօսէիր լերին. այսօր ըզՄովսէս և զՀեղիաս ածեալ ի մեռելոց և կենդանեաց ի տեսիլ փառաց քոց. քո՛ ամենապայծառ ծագմամբդ ողորմեա՛ մեզ Աստուած: Այժմ և միշտ: Որ զօրինակ մեծի գալստեան քո Տէր ի Թաբորականըն ծանուցեր լերին. քանզի տեսին դասք առաքելոցն ըզնախահարսն եկեալ փառօք խօսէին զելիցն յԵրուսաղէմ զխորհուրդ. քո՛ ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա՛ մեզ Աստուած:

### Սաղմոս ՃԻԹ:

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր. Տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս քննես Տէր, Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի ՚ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր, համբերէր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ՚ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչև յերեկոյ, ՚ի պահէ առաւօտու յուսասցէ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, և ՚ի նմանէ է փրկութիւն. և նա փրկեաց զԻէլ յամ նեղութեանց նր:

Եւ Քարոզն Աւետարան Հանգստեան:

Սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի: Ժ.Գ. 31:

Տէրն մեր Յս Քս

Այլ առակ արկ առ նս՝ և ասէ. Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում: Որ փոքր է քան զամ սերմանիս. և յորժամ աճիցէ, մեծ է քան զամ բանջարս. և լինի ծառ՝ մինչև գալ թռչ-

չնոց երկնից և հանգչել յոստս նր՟: Այլ առակ խօսեցաւ ընդ նս՟ և ասէ. Նման է արքայութի՟ երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թաքոյց ՚ի գրիւ երիս ալեր՝ մինչև ա՟մ խմորեցաւ: Զայս ա՟մ խօսեցաւ Յս՟ առակօք ընդ ժողովուրդսն. և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նս՟: Զի լցցի ասացեալն ՚ի մարգարէէն. բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն ՚ի սկզբանէ աշխարհի: 35:
Մաղթանք Հոգւոցն հանգուցելոց. Քրզ. Մասն հոգւոցն հան: Աղօ. Քս՟ Որդի: Նա է պատարագն ամէն նորաստեղծեալն: Քրզ. Խնդրեսցուք. Կեցո. Աղօ. Քսուս ամենազօր:

---

### ՅԵՐԵԿՈՅԻ

Ի Ժ. ժամու ժողովքն է պատանքն Աքեղքեցւոյն և օխտնէն Սաղմոս ՃԺԱ:

ԿՑ. Այսօր է զօր: փխ. Խոստովան եղերուք: 537:
Գէրք և Ա․․ ․․․ է. և Եղանէն խօսք և Աւետարան.

Շարական Դ․Կ. Ի՜ջ միածինն ի Հօրէ և լոյս: 537:

ԶՃՆԷ Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: ԻԴ. 27:

Տէրն մեր Յս՟ Քս՟ ասէ.

Զի որպ՟ փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք: Եւ վաղվաղակի յետ նեղութե՟ աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վե՟ ամպոց երկնից զօրութե՟ և փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր՟ ՚ի չորից հող-

մոց՝ 'ի ծագաց երկնից մինչեւ 'ի ծագս նց։ Ի թզե-նւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Այնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամ, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամ եղիցի։ Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի անցցեն։ 35։

Եւ փոխանակ երգէն զընդառաջն։ Յորդ. Մխ. խաչեւս։ Անդէն Պահպանեա։ Եւ է կանոնն յեկեղեցւոյն Խոնարհեցո եւ Ապրեցո։

Մեղեդի Եկեղեցւոյ։ Յորդ. Ասացուք կամ գանձ. Գանձ բաղձալի։

Համբարձէ Գ.Զ։

Որ զարդարեաց մեծապայծառ փառօք նր։ 536։

Յորդ. Մխ. եկեղեցեաւս։ Կեցո։ Աղ. Առ գրան։

# Բ. ԿԻՐԱԿԻ ՇԱԲԱԹԻ

## Ա. Անմեղ մանկանցն Բեթղեհեմի եւ Ակակիոսի վկային։ ԱԶ։

Ի ԳԻՇԵՐԻ ՕՐՀ. ԱԶ. Ժողովեալքս ի յիշ։ 310։

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ։

Այսօր անմեղ որ մանկունքն ի տըղայական հա-սակի. նախամվախճան չարչարանօք վըկայ եղեն քո մարդեղութեանդ. Տէր Ա.ծ հարցըն ըմերոց։ Գեռաբոյսք ի մօրէ նորաբողբոջք ի հասակի. նահատակեալք ի պատերազմի. եւ ընկալան ըզ-չարչարանս. վասըն քո համբերելով. Տէր Ա.ծ հարցըն ըմերոց։ Արդ բարեխօս առ քեզ ունիմք զերանելի որ նահատակսն. որք վասըն քո չար-

չարեցան՝ ի Բեթղեհէմ նահատակեալք. վասն քո համբերելով. Տէր Ած հարցն մերոց:

Գ․․ Իշ Տէր օրհնեցէք Ժողովուրդք Ած՝ յիշատակի սոցա բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Անապականութեանն նահատակք ի տղայական երամոց. սրախողխող եղեալ ի գիրկս մարցն կատարեցան. Ժողովուրդք Ած՝ յիշատակի սոցա բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Ընծայաւոր գառինք ի տանէն Եփրաթայ. որք մատուցան իբր պատարագ ի Հերովդէ՝ որպէս զԱբէլ ի Կայենէ. Ժողովուրդք Ած՝ յիշատակի սոցա բարձր արարէք զնա յաւիտեան:

Ածածին Դ.Ձ:

Ուրախացիր Ածածին որ կուսանաց ես պարծանք և մայր հաստատութեան մարդկան. օգնական և շնորհ աշխարհի. Մարիամ մայր և աղախին փրկչին մերոյ: Փառք Հօր: Երանելիդ ամենեցուն զԱծ տանելով ըզըննութեամբ անտանելի. զամենեցուն ամենակալն արժանի եղեր կրել յորովայնի. որ երեւեցաւ ազգի մարդկան: Այժմ և միշտ: Քերովբէական աթոռ ցուցար Ածածին. ի գիրկս բառնալով զԱծն ամենեցուն որ նստին ի քերովբէս. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

Ողորմեա Գ.Ձ:

Այսօր տղայք ստընդեայք կոտորեալք ի Հերովդեայ. եղեն ճշմարիտ վկայք ծննդեան քո Տէր. բարեխօսութեամբ սոցա փրկիչ ողորմեա: Փառք Հօր: Այսօր կատարէր բան մարգարէին

որ անսէր. ձայն գուժեաց ի Հռամայ լալումն ողբումն եւ աշխարումն. բարեխօսութիւն սոցա փրկիչ ողորմեա: Այժմ և միշտ: Ողջունեցաւ Բեթղեհեմ հնչմամբ արեան նոր տղայոցն. բերկրեցաւ եւ Հռաքէլ անուշահոտ պատարագօք. բարեխօսութիւն սոցա փրկիչ ողորմեա:

Տէր յերկնից Գ.Զ:

Այսօր ընդ դաս հոգեղինաց երկնաւոր զօրացըն. վերատեալ տօնեմք զյիշատակս նոցա մանկանցն. որք կոտորեցան ի Բեթղեհեմ. եւ դասեցան ի դաս վերին զուարթնոցն: Մրտմտեալ Հերովդէս ցասմամբ մեծաւ եւ սպառնալեօք. քանզի ձայն լուեալ զարարչէն ի Բեթղեհեմ Հրեաստանի. զարհուրեալ դողացաւ ի նորածին թագաւորէն: Եւ բարկութեամբ զայրացեալ առաքէր ի Բեթղեհեմ. եւ զանօրէն ըզհրամանըն պատուիրէր զօրաց իւրոց. կոտորեցէք աստ անողորմ ըզնորահաս մանկունս: Եւ փութացեալ զինուորացն յարձակեցան ի Բեթղեհեմ. եւ շուրջ պատեալ անողորմ կոտորեցին յերկեմենից և ի խոնարհ. խառնելով ըզկաթըն ստեանցն ընդ արեան մանկանցն: Փառք Հօր: Խայտային նոր մանկունքն որպէս ըզգառինս ի մէջ հօտից. զի զվարդագոյն արիւնս իւրեանց փոխանակեցին փրկչին արեանն. վերծնեալ ընդ զուարթունսըն պըսակեցան ի Քրիստոսէ: Այժմ և միշտ: Իսկ Որդին միածին՝ անժամանակն Հօր. ըզվըճիռ չարաչար մահու ածեալ ի վը Հերովդէի. եւ զանձինս նոր մանկանցն ենթադրեաց ի գոգն Աբրահամու:

Մանկունս և համբարձէ Գ.Կ. ԱՏ:

*Սքանչելի որ մանկունքն ող քաջ նահատակք եղեն զանձինս խրեանց ի մահ. փոխանակ Որդւոյն Աստուծոյ: փառք քեզ: Սոյն գիտակցենք որ մանկանցն որպէս ընծաղէկ նորոնենեաց հարեալ ի կարկտէ. և անկեալ ի սուրբ Բեթղեհէմ: Այժմ և միշտ: Սոյն հոգիք որ մանկանցն որպէս զերամս աղաւնեաց թռուցեալ ի յերկինս. և դասեալ ընդ զուարթունս երկնից:*

---

# Բ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ս. Կուսանացն Նունեայ և Մանեայ: ԸԿ:

Օրհնութիւն և շարականքն նոցին տես: 505: Իսկ Աւետարան է Ղուկ. *Պարծեսցին.* և յերեկոյին համբարձէ Գ.Կ. Յիշատակ քոյ: 513:

---

# Բ. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց: ԲՁ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԲՁ. *Դարձո զգաս:* 399:
ՅԱՌԱՒՕՏՈՒ համբ ԱՁ. *Որ համագոյից:* 413:

---

# Բ. ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ս. Սարգսի և Բագոսի: ԲԿ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Մարտ. ԲԿ. *Շնորհեա մեզ:* 323:
ՅԱՌԱՒՕՏՈՒ համբ ԱՁ. *Զքեզ արդար:* 345:

---

# Բ. ՈՒՐԲԱԹ

Պահոց: ԳՁ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԳՁ. *Զերծո զիս:* 403:
ՅԱՌԱՒՕՏՈՒ համբ ԲՁ. *Որ թագաւորդ:* 462:

---

# Բ. Շ Ա Բ Ա Թ

## Ս. Մոկիմայ քահանային և Կոդրատո-սի զինուորին: Գ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Մարթէ. Գ.Կ. Այսօր հրեշ: 332:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Կ. Մի Ած արարիչ: 348:
ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուսցէ Միրեցի: Զի խոնարհեցոյց:
Համբ. Ա.Զ. Մի եւ Տէր. Խ. Երկնաքաղաք: 384:

# Գ. Կ Ի Ւ Ր Ա Կ Է

## ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ: Դ.Զ:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Դ.Զ:

ՕՐՀՆԵՍՑՈՒՔ զՏէր և զյաղթող: 288:
Աւետ. Յարութեան Դ.Զ. Պողոս: Ողորմութեամբ:

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Ա.Զ:

Որ եկիր ի փրկութիւն տիեզերաց Թագաւոր յաւիտենից Քրիստոս, զքեզ փառաւորեմք Ած հարցն մերոց: Յանձն առեր ըզչարչարանս կամաւորապէս, և ընդ մեզ ճաշակեցեր վասն մեր. զքեզ փառաւորեմք Ած հարցն մերոց: Կնքեցար վեմով ի գերեզմանի, և լուծեր ըզկնիք մահու յանցանաց. զքեզ փառաւորեմք Ած հարցն մերոց:

Գ.. Ո՛ զՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք Հօր: Զյարուցեալն ի մեռելոց Քրիստոս Աստուած. որ ըզմահ խափանեաց յարութեամբ իւրով. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Զանքննելի յարութիւնն

·Քնի Աստուծոյ. ամենայն ժողովուրդք բարեբանելով. բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱՁ:

Որ ընտրեցար ի սկզբանէ անապական կոյս Մարիամ. լինել տաճար սրբութեանն. անճառ լուսոյն որ ի Հօրէ. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ: Փառք Հօր: Որ առ ի քէն երկրորդ Ադամ վասն առաջնոյն յանցանաց. բնութիւ մերով պաշտելով. զմահաբեր պտուղն լուծեալ զպատուհասն. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ: Այժմ և միշտ: Արդ աղաչեա մայր Աստուծոյ զծնեալն ի քէն վասն մեր. զի ընդ նմին պաշտելով. որ յարութիւ նորա նորոգեցաք. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

Ողորմեա ԱՁ:

Բանդ որ ի Հօրէ իջեալ մարմնացար ի կուսէն. խաչեցար կամաւ Հօր վասն մեր զմեղս բարձեր. սուրբ Ած ողորմեա մեզ: Փառք Հօր: Որ յարարածոց ես անբովանդակելի. ի խաչափայտին բևեռելով զմահ կոխեցեր. սուրբ Ած ողորմեա մեզ: Այժմ և միշտ: Որ ի նախնումն դանկեալն ի ծառայութի մահու. պատուական մարմնով և արեամբդ քո ազատեցեր. սուրբ Ած ողորմեա մեզ:

Տէր յերկնից ԱՁ:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզման. ի խնկել զանապական մարմինն: Փառք Հօր: Եւ գտին զվէմն բարձեալ

*ի դրանց գերեզմանին. և լուեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քն և խափանեաց ըզմահ: Այժմ և միշտ: Եւ հանդիպեալ քո Տէր առաքելոցն և տուեալ ողջոյն կենդանարար. առաքեցեր զնա ի փրկութիւն տիեզերաց:*

---

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. ԴԶ. Ա. *փառաբանակից*: 305:

## Գ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Ս. *Եպիփանու կիպրացւոյն*: ԴԿ:

Զամենայն ինչ զԹարգմանչացն տուր: 565: Իսկ յերեկոյին Համբ. ԳԶ. *Նմանեալ*: 571:

## Գ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

### Ս. *Կոստանդիանոսի Թագաւորին և մօր նորա Հեղինեայ*: ԱԶ:

Զամենայն ինչ զԹէոդոսին տուր: 1074:

## Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### *Պահոց*: ԱԿ:

Ի ԴԻՇԵՐԻ Օրհ. Պահ. ԱԿ. *Նոյով կենդա*: 398:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԶ. *Որ յամի ես*: 414:

## Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Ս. *Թէոդոտոսի գաղատացւոյն և Թալէլէայ բժշկին և եօթն կուսանացն Անկիւրիայ*: ԲԶ:

Ի ԴԻՇԵՐԻ Օրհ. Մար. ԲԶ. *Օրհնեն զքեզ*: 319:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԶ. *Անոխակալ ես*: 352:

## Գ. ՈՒՐԲԱԹ

Պահոց։ ԲԿ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԲԿ. Յամ ժամ։ 401։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Արարիչ և մարդա։ 465։

## Գ. ՇԱԲԱԹ

Գիւտ նշխարաց Ս. Գրիգորի մերոյ Լու-
սաւորչի։ ԳՁ։

Ի ԳԻՇԵՐԻ

Հետեւեալ Շարական Գ.Կ։

Վերինք ամ այսօր ցընծացէք ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհոյ գերազանց լերինն՝. քանզի ի նմին բնակեցաւ սուրբըն Գրիգորիոս՝ սիւն լուսոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. որով ցընծան ի փառս վերնոյն Սիովնի։ Որ առաւել խորին խորհրդով խնդայ քան զարարատեանըն բարձըր Մասիս՝. քանզի ի նմին հանգեաւ սուրբըն Գրիգորիոս՝ տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան ազանց. որով փրկիմք միշտ ի ջուրց հոսանաց։ Գեղապանծ լուսով բերկրեալ զուարճանայ լեառըն Սեպուհոյ հանգոյն Սինայի՝. յորում եկաց կամօքըն ամպեղէն նրըն Գրիգորիոս՝. գերահրաշ լուսով զարդարեալ նըման Մովսէսի. որով փայլին երեսք շնորհօք սուրբ Հոգւոյն։ Օրօք հրեղինաց պարփակեալ պահի լեառըն հանգըստեան սրբոյն Գրիգորի տեսլեամբ Կարմեղին՝. զորըս պարըսպեն կառքըն կենդանի մաքրափայլ աղօթք նր լուսաւորչին հօրըն հոգեւոր. զոր առ Տր

ունիմք միշտ բարեխօս: Համանմանեալ ամով-
սածնին Եսայեայ կայծակնամաքուր սուրբ մարգա-
րէին տէր Գրիգորիոս. վեցթեւեան սրովբէից կե-
զէչ կենդանեաց եղեւ տեսանօղ հոգւով կենդա-
նին. զանդրընդանխոր ըղձօրն երկնից կամար յօ-
րինեաց: Շնորհաբաշխ աջովն Յնի պատուեցաւ
լեառըն Սեպուհոյ ի տեղ Սանիրայ եւ Ահերմոնի.
յորմէ բղխեաց աղբիւրըն լուսոյ ջուրըս բարե-
համն եւ վտակս յորդախաղաց հոսանօք. որով
ցընծայ երկիրս ի բերս արմըտեաց: Ծնընդեամբ
նք կուսին յայլըն Բեթղեհէմ յորդորեցան գըս-
տերքն Եւայի լինել կուսութեամբ ի մայր Քնի.
յորում ծագեաց խորհուրդըն պայծառ յերկնա-
նըման լերինն ի յայլըն Սանեայ մաքրական վա-
րուք. որով սըրբիմք միշտ ի յաղտոյ մեղաց:
Խորհուրդ խաչելոյն գեղահրաշ տեղւոյն Գողգո-
թայ ծածկապէս ի սմին լերին տեսանի. զէնն
արքայական սպանմանըն գործի կենաց արքային ի
կենաց գործիս նըւիրեալ. որով փրկեսցէ ըզմեզ
յաւիտենից մահուանէ: Օ խորհուրդ Սեպուհոյ
սեպհական փառաց Հոգւովըն սրբով մարգարէին
ծանուցեալ. որ եւ հարցանէր զխորանն Տն եւ զըլեռ-
ըն Տեառն թէ ով բնակիցէ. զոր եւ տեսաք առ
նըրըն Գրիգոր կատարեալ: Ընծըն վարուք ար-
դարըն հոգւով բանիւ ճըշմարիտ եւ նըրըն սըրտի
տէր Գրիգորիոս. որում ցանկացան զօրքըն սրով-
բէից բերանք հրեղէնք յերկնից յերկիր խոնար-
հեալ ի տեսս մարմնով ծընդողին. որ եւ պատիւ
տեղւոյն անուամբըն կոչի: Համօրէն հրակողն ճըշ-

մարիտ և քաջ հովուին պատկերի հովիւքն եղեն հետևօղք. զոր ամփոփեցին զմարմինըն մաքուր մերձ ի յայրըն Անանայ մեզ դեղ ախտից մաքրութեան. որով սրբիմք հոգւով ի թունից վիշապին:

Օրհնութիւն ԲՁ:

Ով երջանիկ, Եւ Արմատ ճշմարիտ, Էջ առաջին: 523:

# Դ. ԿԻՐԱԿԷ

ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ. Գ.Ա:

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Կ:

ԵՐԳԵՑԷՔ Տեառն երգ նոր ձայնիւ: 284:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱՁ:

Պայծառացիր եկեղեցի հեթանոսաց. յարութ՛ն Քսի. որ յարեաւ այսօր ի մեռելոց. պսակեաց զքեզ խաչիւն իւրով. Արծ հարցըն մերոց: Այսօր ողբայ յինքեան ընդկործանումն իւր մահ. քանզի որ յԱդամ մեռեալքն էին. կենդանացան յարութ՛ն Քրիստոսի. Ած հարցըն մերոց: Այսօր ցընծան մանկունք առաքելոց. քանզի Քն յարուցեալ փարատեաց զսուգ եւ զտրտմութիւն եւ լուսաւորեաց զաշխարհս. Արծ հարցըն մերոց:

Գ.. Որդւոց օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս: փառք Հօր: Այսօր է զոր արար Տր եկայք ցնծասցուք. տօնեցէք ուրախութ՛ մինչև յանկիւնըս սեղանոյն. բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Բարձրացուցէք ըզՏր Ած

մեր գոչէ մարգարէն. երկրպագեցէք պատուանդանի ոտից նորա. որ եբարձ ըզդատակնիք մահու ի մէջ նոցա. բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուցէ Ա.Ձ:

Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար ուրախ լեր. բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Փառք Հօր: Անըսկիզբըն Բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբըն ըսկիզբըն ի կուսէդ. Քրիստոս Աստուած Թագաւորն յաւիտենից: Այժմ և միշտ: Աղաչեմք ըզքեզ ո՛վ Ածածին առ Քն բարեխօսեա փրկել զժողովուրդս իւր զոր գնեաց արեամբն իւրով:

Ողորմեա Ա.Ձ:

Թ. ինա իմ: Ողորմեա ինձ Աստուած: Փառք Հօր: Լուսեղէն արա ինձ Տր ըզձայն յարութեան. ամենասուրբ հրեշտակին որ քարոզեաց ըզյարութիւն. ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ: Որ յարեար ի մեռելոց Քն Ած և մեզ կեանս շնորհեցեր. պարգևատու ամենեցուն. ողորմեա ինձ Աստուած:

Տէր յերկնից Ա.Ձ:

Փառաւորեմք յարութեան քո Տէր: Փառք Հօր: Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն. իսկ յարութեամբ միածնիդ ըզգեցաք զանմահութիւն. փառաւորեմք յարութեան քո Տէր: Այժմ և միշտ: Խաբանօք փայտին ճաշակեցաք ըզմահ իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ամենեքեան. փառաւորեմք յարութեան քո Տէր:

ՅԵՐԵԿՈՅԻ Ժամք. Գ.Կ. Ա. Յարեաւ Տէրն: 304.

# Դ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Ներսիսի հայրապետին և Խադայ եպիսկոպոսին: Դ.Զ:

---

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—ըէ Ի.Կ:

Որ ըղձիւ անճառ շնորհաց՝ ածային քո գիտութեանդ. ծագեցեր յաշխարհս Հայաստանեայց. գթած Հայր երկնաւոր՝ գթա ի մեղուցեալքս: Որ ընտրեցեր յորովայնէ զմաքրեալն Հոգւով սուրբըն Ներսէս. ժառանգել ըղձեմակ հայրենի. հովուել արդարութեամբ եւ իրաւամբք: Որ օրինօք ճշմարտութեան զարդարեաց զեկեղեցի. կարգաւորեալ բարեպաշտութեամբ. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս:

† Որ յերջանիկ ընտրեալ սրբոց հայրապետացըն ժողովոյն. գերագոյն փառօք պատուեցաւ որըն Ներսէս. դաւանեալ Ած զՀոգին ճըշմարիտ ընդ Հօր եւ Որդւոյ: Որ ըղծածկեալ խորհուրդ ապագայից ժամանակաց. յայտնեցեր սրբոյն Ներսեսի. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս:

ՀԱՐ. Անդադար յերկինս օրհներանօղք Հօրն երկնաւորի զօրք լուսեղինաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս: Քաղցրաձայն երգով գոհաբանօղք Որդւոյն միածնի դասք հրեշտակաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս: Անլռելի հընչմամբ բարեբանօղք Հոգւոյն ճշմարտի հոյլք

հոգեղինաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս։ Երեքսրբեան ձայնիւ փառաբանօղք սուրբ Երրորդութեանն գունդք սերովբէից. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս։

Թ.Գ.Ր. Ով երանելիդ ամենեցուն տիեզերական իշխանութեամբ ընկալեալ ի Քնէ ըզթագ պարծանաց. ո՜վ Թէոդոս մեծ թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։ Որ քոյին նըաղօթիւքըդ վանեցեր ըզթշնամին. կոխելով ըզսատանայ ընդ երկնայինսըն դասեցար. ո՜վ Թէոդոս մեծ թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։ Աստի և մեք հաւատացեալքս տօնեմք զքո յիշատակս. օրհնութի առաքելով ըզքեզ պսակողին. ո՜վ Թէոդոս մեծ թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։

Ե.Լ.Ա. Որ ըզհուր սիրոյ քո Քն բորբոքեցեր յոգիս արդարոց. որով վառեալ իմաստութբ երանելին Եւստատիոս. ընծայեաց զանձն ողջակէզ քեզ կամաւոր բարեխօսութբ սորա շնորհեա մեզ տօնողացս ըզքաւութիւն։ Որ զարքայութեն քո Քն տարածեցեր ըզլոյս յաշխարհի. որում տեսչացեալ փափագեաց հոգւով երանելին Մաքսենտիոս. ըզբաժակն արեան արբեալ ուրախութբ ընդ քեզ միակրօնելով. բարեխօսութբ սորա շնորհեա մեզ տօնողացս ըզքաւութիւն։ Որ ըզլոյս փառաց քոց Քն ծաւալեցեր ընդ տիեզերս. որով ըզլապտեր հաւատոյ լուցեալ երանելին Եւգենիոս. հետեւեաց լուսաշաւիղ քեզ ի յեր-

կենս արեամբ մահու. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ըզքաւութիւն: Որ զնշան խաչին քո Քն եդուր մեզ զէն յաղթութեան. որով զինեալ ընդդէմ մահու երանելին սուրբն Ովրեստէս. բոցակէզ պատարագաւ քեզ խաչանկեցաւ. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ըզքաւութիւն: Որ ըզբան կենաց քոց Քրիստոս սերմանեցեր յերկիր բանաւոր. զոր ընկալեալ պտղաբերեաց յինքեան երանելին Մարդարիոս. ի մարմնի անմարմնաբար չարչարելով պսակեցաւ. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ըզքաւութիւն:

ՄՐՏ. Յիշեա զմեզ Տէր փրկիչ մեր. յորժամ գաս թագաւորութեամբդ քո. կեցո զմեզ բարեխօսութեամբ սրց քոց: Շնորհեա մեզ թողութիւն երկնաւոր թագաւոր. ընկալ զաղաչանս մեր կեցո զմեզ բարեխօսութեամբ սրց քոց: Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք զքեզ Քրիստոս թագաւոր. որ վասն մեր մարմնացար կեցո զմեզ բարեխօսութեամբ սրց քոց: Զհայր և զՈրդի և ըզՍուրբ Հոգին փառաւորեսցուք ասելով. երեքսըրբեան տէրութիւն կեցո զմեզ բարեխօսութեամբ սրբոց քոց:

ՀԳ. Որ զմիաբանեալսն յաշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց. այսօր զբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի նոյն վերնատունն. ամենայն հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ: Որ էջ Հոգին Սբ և առաջնորդեաց երկոտասան ցեղիցն Իսրայէլի ի յանապատին. այսօր երկոտա-

սան առաքելոցն առաջնորդէ ի յաւետարանն . ամենայն հոգիք օրհնեցէ՛ք զՀոգին Աստուծոյ : Որ ելից Հոգին Տեառն ըզՆեան լինել ճարտարապետ խորանին . այսօր շինէ զմարդիկ խորան սուրբ Երրորդութեանն . ամենայն հոգիք օրհնեցէ՛ք զՀոգին Աստուծոյ :

Հն . Գալոց է միածինըն փողով և փառօք Հօր . Եւ ըզհողեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ : Լուսաւոր են ճանապարհք արդարոց . եւ ի բիւրաւոր բանակըս հրեշտակաց ամպովք ընթանան : Ի վերինն Երուսաղէմ թըռչին ամպովք ընդ առաջ Տեառըն յօդս . եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառըն լինին :

Մօ . Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին . եւ նուէր բնութեանս այսօր պարգեւ ըզկոյսըն սուրբ ըզծնօղ Որդւոյդ միածնի . մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա : Որ ցօղեցեր ի մեզ յամպոյ օրինաց Որդիդ այսօր զկոյսըն Մարիամ . յորմէ ծընար մարմնով և բարձեր նովաւ ըզմեղս նախաստեղծին Ադամայ . մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա : Որ մաքրեցեր Հոգիդ սր ըզսիրտ և զարգանդ մօր քո փառակցին . այսօր ամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր Բանին զօրհնիչ Եւայի . մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա :

ԽԶ . Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո սր զեկեղեցի . ըզսա պահեա ի խաղաղութեան : Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանըս հրեշտակաց եւ մարդկան քաւարան . տուր սըմա զանշարժ

քո զխնամողութիւն։ Փառք Հօր։ Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութիւն։

Այժմ և միշտ։ Որ ի վերայ պատուիրանաց Թագաւորին երկնաւորի. ընդդէմ մահու ընկալան ի Թագաւորէն. և փոխեցան ի յերկինս ի լուսեղէն յառագաստն։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ։

Այսօր տօնէ եկեղեցի ըզյիշատակ սրբոյն Ներսեսի. Հայաստանեայց լուսաւորչի. որ և քաջ հովուապետի ընտրեալ ի գլուխ հօտին Քրիստոսի. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ յարմատոյն Աբրահամու վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ. սուրբըն Ներսէս սիւն Հայաստանեայց. շառաւիղ անմահ տընկոյն պտղով լուսոյ սուրբ լուսաւորչին. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ օրհնիս ի հրեղինաց անլռելի ձայնիւ հընչմամբ. շնորհեցեր մեզ դեղ կենաց զանմարմնական վարուք մաքրեալն ընդ հողանիւթ նըշխար սրբոյն Ներսեսի. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։

Դ. ԸզՏէր օրհնեցէք բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Որ յայտնեացն այսօր զգանձն ածային. Հայաստանեայց որ եկեղեցւոյ զհայրն երկնաւոր. օրհնեցէք բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ծագեցն այսօր լոյս խաւարելոց.

ի յորդւոց Հօրըն լուսոյ. զՈրդին միածին գովեցէք. բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Եկայք մանկունք նոր եկեղեցւոյ. զարդարեալք ի շնորհաց Հոգւոյն. զՀոգին ճշմարիտ բարեբանեցէք. բարձր արարէք զնա յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Դ.Զ:

Ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր: Որ ըզԲանն Աստուծոյ յարգանդի կրեցեր սրբուհի անարատ. եւ անճառապէս ծնար ըզվերաձգօղն երկնից. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Որ Էին լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկս. եւ արեգականն արդարութեան եղեր արեւելք. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

ՈՂՈՐՄԵԱ Դ.Զ:

Որ առաքեր ողորմութեամբ շինել զաշխարհս ի սկըզբանէ. ողորմելով որդւոց Արամայ ետուր յազգէն Արշակունեաց հովիւն ընտրեալ զսուրբըն Ներսէս. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Որ ի ստունգանել թագաւորացն մեծային քո օրինաց. ընդպատուհաս բարկութեան մերոյ յառաջագոյն ժամանակօք յայտնեալ ցուցեր սրբոյն Ներսեսի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Այժմ եւ միշտ: Որ պատուական արեամբըդ քո ազատեցեր զաշխարհս յանիծիցն. փրկեա զմեզ ի նեղչաց մերոց եւ ազատեա յանօրինաց. բարեխօսութեամբ սրբոյն Ներսեսի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած:

### Տէր յերկնից Գ.Ձ:

Այսօր զուարճացեալ տօնեն երկնայինքն ընդ մարդկան. պարակից եղեալ փրկութեան մերոյ. քանզի յայտնեցաւ մեզ հոգևոր գանձըն լուսոյ. արևելեան արեգականըն ճառագայթ սուրբըն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր պարգևեա զխաղաղութիւն համայն աշխարհի: փառք Հօր: Այսօր վերուստին նորոգեցաւ քահանայական դասուցն. գեղեցկապէս ծաղկեալ պայծառութիւն. քանզի շնորհեցաւ հովիւըն քաջ բանաւոր հօտի. յարմատոյ լուսաւորչին բողբոջ բուսեալ սուրբըն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր հաստատեա զխաղաղութիւն հայրապետական աթոռոյ: Այժմ և միշտ: Այսօր մեծապէս փառօք ցնծայ թագաւորական դասուցն. ընդ հաշտութեան սիրոյ որ հայրապետին. քանզի եհաս ի յօգնութիւն օրինադրողըն թագաւորաց. մարտակից զինուորական դասուն սուրբըն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր բարձրացո զխաղաղութիւն թագաւորական աթոռոյ:

### Մանկունք և Համբարձի Դ.Ձ:

Որ ընտրեցար յԱստուծոյ հովիւ բանաւոր հօտին ով երանելի տէր սուրբ Ներսէս. արժանաւոր օծման սուրբ Հոգւոյն աղաւնակերպ իջմամբ որպէս Յորդանան. վասըն ժողովրդեան քո խնդրեա ի Քրիստոսէ զթողութիւն: փառք Հօր: Որ յարմատոց բղխեալ բարեաց ծաղիկ սուրբ հաւատոյ ով երանելի տէր սուրբ Ներսէս. լուսաւորեցեր իմաստութեամբ զեկեղեցիս Հայաս-

տանեայց ըստ սրբոյ Հօր լուսաւորչին. վասն որոյ ժողովրդեան քո խնդրեմք ի Քրիստոսէ զթողութիւն: Այժմ և միշտ: Որ յանդիմանելով զթագաւորն հանգոյն մեծին Յովհաննու ով երանելի տէր սուրբ Ներսէս. և ի վերայ պատուիրանաց զբաժակ մահու արբեալ ընդ անմահիցն դասս վերակարգեցար. վասն որոյ ժողովրդեան քո խնդրեմք ի Քրիստոսէ զթողութիւն:

## Գ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ա. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն: Դ.Կ:

Ի ՅԻՇԱՏԱԿԻ Օրհ. ԱԿ. Որ զանձայն: 387:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԿ. Որ բարձրեալդ: 349:
Իսկ Ողորմեա և Տէր յերկնից Դ.Զ. Որ աւետ: 392: և Այսօր ժողով: 393: Առաջնոյն Այսօր ցնծայ: 393:
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Դ.Զ. Որ զյառաջագոյն: 395:

## Դ. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց: ԱԶ:

Ի ՅԻՇԱՏԱԿԻ Օրհ. ԱԶ. Հայր բազումողորմ: 396:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱԶ:

Երգէին մանկունքն ի հնոցին և ասէին. Տէր Աստուած հարցն մերոց օրհնեալ ես յաւիտեան: Մի մատներ զմեզ ի սպառ ըստ անօրէնութեան մերում. վասն Աբրահամու սիրելւոյ քո. օրհնեալ ես յաւիտեան: Իջեալ հրեշտակն յերկնից և զհուր հրոյն շիջոյց. և փրկեաց զօրհնաբանսն ի ձեռաց մահու՝. օրհնեալ ես յաւիտեան:

Գ․․ ԸզՏէր Ալէլուիա․ և բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ փառք Հօր։ Զօրեքկերպեան կենդանիք փառաբանեն ի բարձունս․ փառըք քեզ Հայր ալէլուիա․ և բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Վեցթեւեան սերովբէքն աղաղակեն ասելով․ սուրբ սուրբ սուրբ Տէր ալէլուիա․ և բարձր արարէ՛ք ըզնա յաւիտեանս։

Մեծացուսցէ ԱԶ։

Որ ըզհրեշտակին ըզձայնն լուեալ հիացեալ բերկրեցար․ բարեխօսեա՛ վասն մեր․ մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։ փառք Հօր։ Որ ըզհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր անկիզելի մորենի․ բարեխօսեա՛ վասն մեր․ մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։ Այժմ և միշտ։ Որ զանշօշափելին յեկից ի գիրկս քո բարձեալ դիեցուցեր կաթընասուն․ բարեխօսեա՛ վասն մեր․ մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։

Ողորմեա ԱԶ։

Զըղջըման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո Քրիստոս․ թո՛ղ ինձ ըզմեղս իմ․ որպէս երբեմն ըզպոռընկին․ որ միայն ես բազմագութ։ փառք Հօր։ Անկանիմ առաջի քո Քրիստոս․ որ հովիւ ես բանաւոր հօտի․ խնդրեմ և զիս ըզմոլորեալս․ որ միայն ես բազմագութ։ Այժմ և միշտ։ Ըզմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս․ որ բըժիշկ ես հոգւոց և Տէր կենաց․ բըժըշկեա և զիմ զհիւանդութիւնս․ որ միայն ես բազմագութ։

Տէր յերկնից Ը.Զ:

Զաղբն խորայելի. ամենեքեան օրհնեսցուք և փառըս տացուք նըմա: Փառք Հօր: Միածնի և անմահի՝ երկիւղիւ երկիր պագցուք և փառըս տացուք նըմա: Այժմ և միշտ: Մեք զԾնօղին ճըշմարտութեն գոհութեք մեծացուսցուք. և փառըս տացուք նըմա:

## Դ. ՀԻՆԳԵՐՈՐԴԻ

### Ս. Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ:

Ըկ:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Ըկ:

Որք զարդարեցին անօրինաբար զմիմասոս անեղին. հաստատելով յերկրի ըզգիր կենդանի հովուել ըզհօտ նոր խորանէին. Երգով քաղցրութեն հընչմամբ զԱստուած օրհնեսցուք: Որ զերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին. ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝ անձամբ բանին արժանի եղեն. Երգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեսցուք: Որ զօրութեամբ Հօր իմաստութեան լուսոյն անեղի. հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի թարգմանութեամբ նըշանագրութեն. Երգով քաղցրութեն հընչմամբ զԱստուած օրհնեսցուք: Որ նորափետուր բանիւ զարդարեալ պայծառազգեցան. Եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռըն սրբոյն Սահակայ. երգով քաղցրութեն հընչմամբ զԱստուած օրհնեսցուք:

† Որ թագաւորաց ազգաց և ազանց գերագոյն

ցուցին՝. արփիափայլ զերգըս հոգեւորս ընտրեալ դասուց վերին Սիովնի. անմատոյց լուսոյն երկրըպագեսցուք: Որ խորհրդեամբ ճըշմարիտ լուսոյ փառաց անեղին. նըկարագրեցաւ մեզ դիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Սերովպայ. անմատոյց լուսոյն երկրըպագեսցուք: Որ ըղձածկեալ խորհուրդ ածգիտութե. տընօրինաբար յայտնեալ ծանուցին՝ հանգոյն սըրբոյ մեծին Մովսէսի՝. անմատոյց լուսոյն երկրըպագեսցուք: Որ յօրինակ ճըշմարիտ սիրոյ ո՛ր առաքելոցն. աղբերաբար ի ձեզ էանցաւ հոգի շնորհաց ըղխումն անըսպառ. անմատոյց լուսոյն երկրըպագեսցուք:

ՐՈ․․ Ի մաքրագործ հոգւոյն անօթ ընտրեալ եւ ձինափայլ. Թագաւորք երկրի իշխանք աշխարհի անպակաս գանձուց բաշխող Յակոբ Ալփեան Յուդա Յակոբեան. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Երեքսըրբեան միատէրութե խորհուրդ կամաց եւ հաղորդակիցք փողոց հըրնչմունք բարբառք աւետեաց ընդ ամ երկիր սուրբըդ Շմաւոն եւ Մատաթիա. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Բանին կենաց կանոնս քարոզ եւ աւետարանիչ. երդ փրկութե հընչումն ահաւոր. ազգի մարդկան պարծանք սուրբըդ Մատթէոս. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

ՀՐՑՐ․ Այսօր ընդ երկնային զուարթունսն ժողովուրդք հայաստանեայց. տօնելով ըզյիշատակ սուրբ հայրապետաց շնորհալից սըրբոյն Գրիգորի. օրհնեցէք զՀայրն երկնաւոր: Այսօր որդիք

Թորգոմայ ծընեալք աւազանաւն յորդիս Սիոնի. ի յիշատակի հարցըն սրբոց որդւոց մեծի լուսաւորչին. գովեսցէք զՈրդին միածին: Այսօր երկնաւոր քահանայութեն հաղորդ քահանայք սուրբ եկեղեցւոյ. ընդ քահանայապետս ածային օրհնօք պատուեալըս. բարեբանեցէք զՀոգին ճշմարիտ. երգելով ըզփառս ի բարձունս:

Թ.Գ.. Որ զարդարեալ գեղապանծ վայելչութեամբ սուրբ զԵկեղեցի. պըսակեցեր առաքելովք եւ մարգարէիւք. եւ հաստատեալ ամրացուցեր նք թագաւորօք. բարեպաշտութեան սորա Քրիստոս խընայեա ի մեզ: Որք զինու զօրութեան Հոգւոյն վառեալք ի պատերազմի. վանեցին ըզմոլութիւն հերձուածողաց. եւ ի հաւատս ճշմարիտս հաստատեցին ըզտիեզերս. բարեպաշտութեան սորա Քրիստոս խընայեա ի մեզ: Որ շնորհեցեր յաշխարհի թագաւորել մեծին Թէոդոսի. եւ կատարեալ ըզկեանըս հաւատով ուղղափառութեան. վերափոխեցեր այսօր յերկնից թագաւորութիւն. բարեպաշտութեան սորա Քրիստոս խընայեա ի մեզ:

Ա.ՏՄ. Աղաչեմք ըզքեզ Տէր բարեխօսութեամբ սրբոց Վարդանանց. որք նահատակեցան ի ճակատամարտ պատերազմի. յաղթօղ գըտան ընդդէմ թշնամւոյն. բարեխօսութեան սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Որք առին ըզպսակաւորութեան ըզբոհըս հաւատոյ սրբոյն ի երեանց. եւ ընկալան ի գլուխ անթառամ փառակութեան ըզերջան խաչին. սուսեր ընդ մէջ ածեալ ըզճշմարիտ նք Հոգւոյն. բարեխօսութեան սոցա Քրիստոս խընայեա ի մեզ:

Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանոյդ քում սրբոյ․ և բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իւրեանց․ ի տեղւոջ հեղման արեան իւրեանց․ բարեխօսութեամբ սոցա Ք՟ս խնայեա ի՟՟ մեզ։

ՀԳ․․ Որ յերկնային զօրս անմարմնոցն նախ հեղեր առատապէս Հոգիդ Ճշմարիտ․ զնծային և զգերագոյն քո իմաստութիւնդ․ լինել փառաբանիչ մի Երրորդութեանդ․ ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ։ Որ զկերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեանդ խորհրդակցութեամբ․ զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար․ և ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք և մարգարէիւք․ ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ։ Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քում Էակցին․ մտեալ ի վերնատունն դրօքն փակելովք․ շնորհելով ըստ առաջին փչմանն ըղքեղ մետասանիցն․ առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ․ ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ։

ՀԵ․ Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութեան անկելով ոտնեղերաց ի դատաստանն ահաւոր․ յայնմ աւուր յահեղին մինչև Տէր և ըզմեր ննջեցեալսն․ և հանգո ընդ սուրբս քո։ Յորժամ ճառագայթք Աստուածութեանդ փայլեն ի յարևելից․ և դղրդութիւնք հրաշիցն բանին յայնմ աւուր յահեղին մինչև Տէր և ըզմեր ննջեցեալսն և հանգո ընդ սուրբս քո։ Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սրովբէագոչ փողոյն․ յորժամ հարկանէ հրեշտակապետն և

կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնժամ ատեան յաջողին յիշեա Տէր եւ զմեր ըզննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

Աօ. Ո՛վ գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ. հոտ անմահութեան ծնընդոցս Ադամի. յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութիւն ըզքեզ մեծացուցանեմք: Դու լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճշմարտի. որով հերքեաւ խաւարն առաջին. օրհնութիւն ըզքեզ մեծացուցանեմք: Ըզքեզ ունիմք բարեխօս կոյս ամենօրհնեալ. մայր անարատ Էմմանուէլի տաճար Բանին հօրն երկնաւորի. օրհնութիւն ըզքեզ մեծացուցանեմք:

Խշ. Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բոցանիշ փայլմամբն իւրով. խորտակեաց ըզթշնամին և եղծ ըզդատակնիք. անուանեալ փայտըն կենաց ի փրկութիւն տիեզերաց: Սերաբեալ ցընծան երկինք և երկիր ուրախանայ. ընդ յայտնել սըրբոյ խաչին սեւակնաձեւ քառաթեւին. որ զաշխարհըս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք: Փառք հօր: Ընծայեաց Երուսաղէմ. բերկրեցան հաւատացեալք. նորահրաշ զարդարեցան. քանզի տեսին զյաղթող նշանն. արարածք ամենայն ի լուսոյն պայծառացան:

Այժմ և միշտ: Որ երկոքումբք որ լուսաւորչօք տանըս Թորգոմայ. հաստատեցեր զեկեղեցիս հայաստանեայց. զլոյս իմաստից ի մեզ ծագելով. մաղթանօք սոցա Քրիստոս խնայեա ի մեզ:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Դ.Ձ:

Սքանչելագործ Ա՟ծ· որ ցուցեր զսքանչելիս քո ազգի մարդկան՝· օրհնեմք զքեզ Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց: Որ ի ձեռն երանելի վարդապետին արարեր ողորմութիւն ազգի մարդկան· օրհնեմք զքեզ Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց: Որ սովաւ լուսաւորեցեր զտիեզերս՝· սորին բարեխօսութեամբ պահեա զմեզ· օրհնեմք զքեզ Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց:

Դ. Իզ՟Տի. Ամենայն գործք Ա՟յ և ա՟մ արարածք օրհնեցէք· ո՛րք և խոնարհ սրտիւք գովեցէք· և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան: Հրեշտակ երևեցար ի յերկրի և վարս ունէիր Ա՟յ հաճոյական՝· յիշեսջիր զմեզ անդադար երանելի ո՛վ վարդապետ· որ ընդ հրեշտակս օրհնես զԱ՟ծ յաւիտեան: փառք Հօր: Ստացող եղեր պատուիրանաց ս՟ր Հոգւոյն· և ապրեցար ի հաղբից հրապուրողին· կատարեցեր զառաքինութիւն· և փոխեցար ի հանգիստն յաւիտենից: Այժմ և միշտ: Արդ եկայք ամենեքեան միաբան· առցուք յօրինակ ճգնութեան զերանելին՝· զի նմանեսցուք վարուց նորա· և փոխեսցուք ի կեանսն յաւիտենից:

### Մեծացուսցէ Դ.Ձ:

Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: փառք Հօր: Որ զԲանն Աստուած յարգանդի կրեցեր սրբուհի անարատ· և անճառապէս ծնար զվերանձգօղն երկնից· զքեզ օրհնութեամբ մեծա-

ցուցանեմք։ Այժմ և միշտ։ Որ էիցդ լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկս. և արեգականն արդարութեան եղեր արեւելք. ընդ քեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Զ։

Որ ընդհանուրս ածային առ ի վերուստ իջեալ յերկնից՝. պարգեւեցեր հիւսիսականացս ի ձեռըն ո՞ր վարդապետին՝. աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած։ Փառք Հօր։ Որ զանմարմին պարունակօղ բանի՝ ընդգրաւորական զիմաստս Հոգւոյն շնորհեցեր որդւոց Թորգոմայ. յայտնեալ տեսլեամբ ի ձեռըն սուրբ վարդապետին՝. աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած։ Այժմ և միշտ։ Որ զգիտութի քո զերկնային եւ զհոգևոր զիմաստութի. առատապէս ծաւալեցեր՝ յեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռըն սրբոց Թարգմանչացն՝. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած։

Տէր յերկնից Դ.Զ։

Աննմանելի շնորհօք լցեալ ի յիշատակի սբ վարդապետին՝. խնդրեմք ի քէն. Տէր կեցո զանձինս մեր։ Փառք Հօր։ Եւ ընդգնութի սոյն վարդապետին ընկալցուք ի սիրտս մեր հաւատով. բարեխօսութի սորա. Տէր կեցո զանձինս մեր։ Այժմ և միշտ։ Պսակեալ ընդ անմարմնական բազմութիւն՝. եւ ի սրբոյ Հոգւոյն է պսակեալ. ի ձեռըն սորին բարեխօսութե. Տէր կեցո զանձինս մեր։

Ամենակալ Գ.Զ։

Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ. բերե-

լով ըզգիր օրինաց ի Հայաստան աշխարհ. ո-
րովք լուսաւորեցան ազգք որդւոց Թորգո-
մայ: Փառք Հօր: Բանին նա արժանաւորեցաւ
կալ ի սինէական փառաւորանութեն. Եւ ընկա-
լաւ պատգամս կենդանիս տայր խորայելեան
բանակին. որովք լուսաւորեցան ազգք որ-
դւոց Յակովբայ: Այժմ և միշտ: Արդ աղա-
չեմք ըզքոյին հեզութիւնդ տէր վարդապետ. բա-
րեխօսեա առ Հայր ի յերկինս վասն քո
տօնողացս. քանզի քեւ լուսաւորեցան ման-
կունք սուրբ եկեղեցւոյ:

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձի Գ.Կ:

Որ յարմատոց հարցըն սրբոց մեզ գաւազան
բղխեցեր. ըզխաչանիշ սուրբ հայրապետ հո-
վուել ըզհօտ քո Քրիստոս: Փառք Հօր: Որ
ըզխաւարն անգիտութեան Հայաստանեայցըս լու-
ծեր. զիմաստութեան ծագեալ ըզլոյս սովաւ որ-
դւոց Թորգոմայ: Այժմ և միշտ: Որ զհանդեր-
ձեալ խորհուրդ քո Տէր տեսլեամբ սրբոյն ծա-
նուցեր. յիշատակի սորա ընկալ ըզտօնողացս ա-
ղաչանս:

## Դ. ՈՒՐԲԱԹ

Պահոց: ԻԶ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԻԶ. Դարձո զգաստութ: 399:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Համբ Գ.Զ. Օրհնեմք զքեզ: 470:

# Գ. Շ Ա Ր Ա Ք

## Ա. Զաքարիայ մարգարէին և Ոնափրիոսի սուրբ հօրն։ ՃԿ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհն. ԱԿ. Որ զանձայնն։ 387։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԶ. Որ յերկնային։ 394։

Իսկ Ողորմեա և Տէր յերկնից զԱստուածն ....։

Ողորմեա ԱԶ։

Որ անմարմնական վարուք պայծառացեալ ի մարմնի զօրացեալ տերամբ. ով սուրբ Հայր Անտոնիոս. եղեր օրինակ բազմաց եղեր դուռըն մտից կենաց ճանապարհին. յիշեսջիր ըզմեզ առաջի Քրիստոսի քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։ Փառք Հօր։ Որ առեր ըզլուծ խոնարհութեան համբերող խըստամբերութեամբ. և պարակցեալ օրհնութեամբ ընդ հրեշտակս. նա խաչակրօն անդադար սաղմոսերգութեամբ. յիշեսջիր ըզմեզ առաջի Քրիստոսի քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։ Այժմ և միշտ։ Ած որոյ և մեք այսօր տօնեմք ըզհանգըստեան որ յիշատակի քո. անմոռաց յիշմամբ հայցեսցես ի Քրիստոսէ ըզմեծ ողորմութիւն. քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։

Տէր յերկնից ԱԶ։

Որ շնորհօք նր Հոգւոյն բարձեր ըզխաւարն փրկչական յորդեգրութեան շնորհս. ով նր Հայր Անտոնիոս. արժանաւոր երկնային կոչմանն ի հրեշտակական դասակցութիւն. օրհնեմք միշտ սուրբ զքո բարեխօսութիւնն։ Փառք Հօր։ Այսօր և մանկունք նոր եկեղեցւոյ տօնեն ըզխաչակրօն քո նոր զյիշատակս. ով սուրբ Հայր ծննդաւորաց. զի ընկալցին զանա-

պսակաւն պարգևեալն ի Քրիստոսէ Այ մերմէ. օրհնեմք միշտ սուրբ ըզԵրրորդութիւնն: Այժմ և միշտ: Զմիամտապարգևս վերընկալեալ ըզփառս յաջակողմանն Քնի ընդ իմաստուն կուսանսն. հայցեսցես ի Քնէ ըզթողութի մեղուցելոցս. ի լըսել ըզձայնն եթէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք ըզկեանսըն յաւիտենից:

Առաւօտու Երգ Մարգարէից:
Մանկունս Գ.Ձ. Որ զլուսաւորագոյն ընտրեալսն: 395:

ՅԵՐԵԿՈՅԻ Համբարձի Ա.Ձ. Սուրբ ես Տէր և Երկնաքաղաքացին: 384:

# Ե. Կ Ի Ւ Ր Ա Կ Է

## ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ: Գ.Ձ:

### Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Ձ:

ՕԳՆԱԿԱՆ ընդունելի եղև իմ Տէր: 281:

### Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

Հարց Ա.Կ:

Որ եկիր ի փրկութիւն մեր ազգի մարդկան. ըզքեզ անդադար բարեբանեմք Այծ հարցըն մերոց: Յանձն առեր ըզչարչարանս և խաչի համբերեցեր. ըզքեզ անդադար բարեբանեմք Այծ հարցըն մերոց: Կընքեցար վիմով յարուցիչըդ մեռելոց. ըզքեզ անդադար բարեբանեմք Այծ հարցըն մերոց:

Գ. ԸզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք Հօր: Որ անմահըն՝ մարմնով վասըն փրկութեան մերոյ ըզմահ ճաշակեաց. և խա-

փանեաց զմահու թագաւորութիւն. բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ յաւէժ կենդանութեան առհաւատչեայ զյարութիւն ածային մարմնոյն պարգեւեաց մարդկան. եւ եւս առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Կ:

Որ զկեանքն անմահարար մահկանացու բնութիւն ի քեզ կրեցեր տ՛ր կոյս Մարիամ. որով մեռեալքս որք յԱդամայ կենդանացաք յուսով յարութեան. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց: Փառք Հօր: Որ զԲանն անեղական զէակն էից զգոյացութեանց. անճառաբար ծնար մարմին եղեալ ի փրկութիւն եղականացս. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց: Այժմ եւ միշտ: Որ զպտուղն ի քէն կենաց ընծայեցեր մեռելոյն Ադամայ. զորոյ պահք քառասնօրեայ քաւեաց զպտղոյն ճաշակումն եւ յանվախճան զնոյն վերածեաց ի կեանս. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Ողորմեա Ա.Կ:

Սուրբ Տէր որ վասն մեր զմահ ճաշակեցեր. եւ յերրորդ աւուր յարեար զօրութեամբ: Փառք Հօր: Սուրբ Տէր որ զդժոխս աւերեցեր. եւ զգերեալսն փրկեցեր ի նմանէ զօրութեամբ: Այժմ եւ միշտ: Սուրբ Տէր որ ի յերկինս համբարձար. ընդ աջմէ Հօր նստար ի բարձունս զօրութեամբ:

Տէր յերկնից Ա.Կ:

Առաքեցար ի Հօրէ Բանդ Տէր ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած: Փառք Հօր: Ի գերեզման իջեր Թագաւոր ան-

մահ. և ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած: Այժմ և միշտ: Ի յերրորդ աւուր յարեար ածապէս և ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած:

---

ՅԵՐԵԿՈՅԻ ԺԱՄՔ. Գ.Զ. Ա. Իւղաբեր ե: 301:

# Է. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## Ս. Տրդատայ թագաւորին և Աշխէն տիկնոջ և Խոսրովիդխտոյ: Գ.Կ:

Զամենայն ինչ զԹ.Լուսաւորին տաս: 1074: Իսկ

Առնելոյն ի Համբերելոյն Դ.Զ:

Որ գերագոյն քան ըզըմբռնութիս հրաշագործեցեր Որդի Աստուծոյ. առ թագաւորըն Հայաստանեայց. գաւազանաւ քո բարկութեան զյիմարութիւնն յիմաստ փոխարկեալ. վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն ըզքեզ Տէր: Փառք Հօր: Որ համանման Բաբելացւոցըն բռնաւորին. ի յանբանից փոխեալ կերպարան. յանբանական բռնութենէն նըւաճեալ զարքայն մեծ Տրդատ. վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն ըզքեզ Տէր: Այժմ և միշտ: Որ ի ձեռըն մաղթանաց սրբոյն Գրիգորի. ի մարդկային բնութիս դարձուցեր. յանասնեղէն ի բնութենէն նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ. վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն ըզքեզ Տէր:

# Ե. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Հայրապետացն որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի լուսաւորչի, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի: Գ.Ձ:

Ի ԳԻՇԵՐԻ ՕՐՀ. Գ.Կ: Արմատ ճշմարիտ: 524:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Ա.Կ:

Որ ըզլոյս ա՟ծային քո գիտութեան հիւսիսական ազանց ծագեցեր. և ի խաւարէ կռապաշտութեան վերածեր ըզմեզ ի ձեռըն սուրբ լուսաւորչին. օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց: Որ վերըստին զարդարեցեր զեկեղեցիս Հայաստանեայց. արփիափայլ ճառագայթիւք լուսազարդեալ շառաւիղօք սրբոյն Գրիգորի. օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց: Որ ըզբան քո հրամանի քարոզեցին հաւատացելոց. յանդիմանելով ըզյոռութիւն թագաւորաց. և ի վերայ ա՟ծային քո օրինաց նահատակեցան. օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ըզ Տ՟ր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Որ գերագոյն հնոյ օրինաց քահանայութեան ըզնորս զարդարեաց. եկեղեցիք հեթանոսաց ըզնորոգող բնութեան Քրիստոս. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Զքահանայապետըն ճշմարիտ ըստ կարգին Մելքիսեդեկի. ի յիշատակի քահանայապետացս աստուածայնոյ

քաջանայք հոգեւոր երգով. օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ նմա յաւիտեանս:

Մեծացուսցէ Ա.Կ:

Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ. հօտ անմահութեան ծնընդոց Եւայի. յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Փառք Հօր: Դու լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն Ճշմարտի. որով հերքեաւ խաւարն առաջին. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Ըզքեզ ունիմք բարեխօս կոյս ամենօրհնեալ. մայր անարատ Էմմանուէլի տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Ա.Կ:

Որ հրաւիրեցեր զորդիս մարդկան յորդեգրութիւն Հօր քո Սրբոյ Աստուծոյ. եւ կոչեցեր յարքայութեան քո ժառանգութիւն ի ձեռն ընտիր հայրապետաց. աղօթիւք սոցա ողորմեա: Փառք Հօր: Որ լուսաւորեցեր զեկեղեցիս Հայաստանեայց լուսով քով Քրիստոս. եւ զարդարեալ նորացուցեր պայծառ ծագմամբ շնորհիւք սրբոյն Գրիգորի. աղօթիւք սոցա ողորմեա: Այժմ եւ միշտ: Որք զընթացս իւրեանց կատարեցին ըստ հաճոյից կամաց քոց Քրիստոս. նահատակեալք ճգնութեամբ ընդդէմ թշնամւոյն. եւ փոխեցան յերկնից արքայութիւն. աղօթիւք սոցա ողորմեա:

Տէր յերկնից Ա.Կ:

Այսօր ընդ երկնային զուարթունսն ժողովուրդք Հայաստանեայց. տօնելով ըզյիշատակ սուրբ հայ-

րապետաց շնորհաբաշխ սրբոյն Գրիգորի . օրհնե-
ցէք ընդ հայրն երկնաւոր : Փառք Հօր : Այսօր որդիք Թորգոմայ ծնեալք աւազանաւն յորդւոյ Սիոնի . ի յիշատակի հարցըն սրբոց որդւոց մեծի լուսաւորչին . գովեցէք զՍ՛որդին միածին : Այժմ և միշտ : Այսօր երկնաւոր քահանայութեան հաղորդ քահանայք սուրբ եկեղեցւոյ . ընդ քահանայապետս աստուածային օրինօք պատուեալքս . բարեբանեցէք զհոգին ճշմարիտ . երգելով ըզփառս ի բարձունս :

Առաւօտու Երգ . Քահանայք քո զգեցցին : 147 :

Մանկունք ի Համբարձէ Դ.Կ :

Աստուածային հաւատոյ հարցըն սրբոց դաւանողացն . ծագեցաւ քեզ ընդ հանուր լոյս Հայաստանեայց սուրբ Արիստակէս . անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց : Բանաւոր հօտին Քրիստոսի ընտրեալ հովիւ վիճակաւ քաջ . ի Հօրէն լուսոյ բղխեալ շնորհաւոր բարի տէր Վրթանէս . անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց : Գովեալդ ի վկայս հօրըն մեծի համանմանն քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերն տէր նոր Յուսիկ . անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց : Փառք Հօր : Դասակցեալ անմարմնոցն մաքուր կուսութեամբ . ճշմարիտ քահանայապետ վկայ Քրիստոսի սուրբ Գրիգորիս . անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց : Այժմ և միշտ : Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճըգնութեամբ . յանդիմանելով ըզթագաւորըն կատարեցար վասն անուանըն Տեառն սուրբ Դանիէլ . անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց :

## Ե. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։ ԴԿ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահոց ԴԿ. Քո Ած յոյս։ 410։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԶ. Բարեբանեալ։ 416։

## Ե. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Եղիսէի մարգարէին։ ԱԶ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որ զԱծային։ 387։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴԶ. Որ ընդ հողեղէն։ 391։

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. ԴԶ. Որ զյառաջագոյն։ 395։

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց։ ԱԿ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԱԿ. Ծովու կենցաղոյս։ 398։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴԿ. Բանդ Ած որ։ 473։

## Ե. ՇԱԲԱԹ

Ս. Երկոտասանից և գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ ԲԶ։

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութ. ԴԶ։

Ցնծայ այսօր եկեղեցի Քի. յիշատակաւ ձր առաքելոցդ. հաստատեալ ի վէմ վիմի հաւատոյ. զարդարեալ ի փառս մարմնացելոյ Բանին։ Որ զէութիւն անճառելւոյ Միածնին յայտնութեամբ Հօր ի վերուստ դաւանեցէք. եւ երանականն արժանացեալ շնորհին. վէմ անվանելի ի դրանց դժոխոց։ Որ անմարմնոց դասուց հրեղինաց հոգեղէն բնութեամբ գերազանցեցէք. և բարձրացեալ ի յերկնային խորհրդոյն. անճառ Բանին արժանաւորեցէք։

† Որ գերագոյն ընտրելոց առաքելոցըն դասուց․ անուանեցեր լինել զերանելին ըզՊետրոս․ զլուխ որ հաւատոյ հիմն եկեղեցւոյ։ Որ յառաջագոյն կոչմամբ առաքեցեր զանօթն ընտրութեան․ յայտնելով աշխարհի զանճառ տնօրէնութեան քո խորհուրդ․ յօրհնաբանութիւն կոչել զհեթանոսս։

ՁՐԳ․ Անմահ արքային անարուեստ աթոռք․ բազմաչեայ քերովբէք սրբասաց ձայնիւ սրովբէք․ առաջին յերկինս քահանայապետք․ բարեխօս լերուք առ Տէր վասն եկեղեցւոյ։ Բարձրելոյն փառաց բարձօղ տէրութիւնք․ անյաղթելի զօրութիւնք․ վեհագոյն իշխանութիւնք․ երկրորդին դասու քահանայապետք․ բարեխօս լերուք առ Տէր վասն եկեղեցւոյ։ Գերագոյն աթոռն պետութիւնք վերին․ հրեշտակապետք երկնաւորք․ հրեշտակաց զինուորութիւնք․ երրորդի յերկինս քահանայապետք․ ձեզ համաձայնեալ երգեմք զփառս ի բարձունս։

Գ․Կ․Թ․․ Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր․ քանզի ծագեալ մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի կեցուցանել զմեզ կամեցաւ․ օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր։ Դաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ․ Դաւիթ մարգարէն․ և ի նորին շառաւիղէ առաքեալըն Յակոբոս ականատես եւ պաշտաւոր Բանին Աստուծոյ․ օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր։ Եկեղեցիս օրհնեցէք զՏէր․ որ երկոքումբք ընտրելովք՝ առաքելովքըն Յակոբաւ և մարգարէիւքըն Դաւթիւ՝ հաստատեաց զհիմունս սուրբ

եկեղեցւոյ․ օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր:

ՑՈԿ․ Այսօր ցընծան հրեշտակք ի յերկինս․ յիշատակաւ հողանիւթ հրեշտակին․ որք համադասեալք ձայնիւն բարբառոյն․ երգեն զօրհնութիւնս Հօր ի բարձունս: Այսօր ցընծան հոգիք արդարոց․ նահապետաց և մարգարէից․ ձայնակից լինել մեծին ի ծնունդըս կանանց․ երգեն զօրհնութիւնս Որդւոյն միածնի: Այսօր ցընծան դասք առաքելոց․ առնախըմբելով զյիշատակ մեծի Մկրտչին․ որ առաքելոց է սկիզբն և մարգարէից լըրումն․ ընդ նոսին և մեք բըղխեցելոյն ի Հօրէ և յՈրդւոյ երգեմք ըզփառս ի բարձունս:

Գ․Բ․Խ․ Հրաշափառ Ած ես միշտ բարեխնամօղ․ որ յառաջ գիտութեամբ ըզփըրկութիւն Հայաստանեայց ըսկըզբնաւորեալ․ ի պարթևականն մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր․ վասն որոյ բարեխօսութեամբ սորա փըրկեա կեցո ըզմեզ․ այժմ և ի քո յահաւոր գալըստեանն: Հրաշալի զարմացմամբ երանելին սբ Գրիգոր․ զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ․ և երիւք հընգօք ամօք ի մէջ Թունաւորացըն բնակէր անդընդային տանջանօքն ի վիրապին․ վասն որոյ բարեխօսութեամբ սորա փըրկեա կեցո ըզմեզ․ այժմ և ի քո յահաւոր գալըստեանն: Հրաշագործ քո բանիւդ ես մեծ ողորմութեամբդ․ եկեալ բըժըշկէր ըզհարուածեալն ի դիւամբաղխ սաստիցն․ երկըրպագուս առնելով զամենեսեան սուրբ Երրորդութեանդ․ վասն որոյ

բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո զմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն։

Հգ.. Կենդանարար Աստուածն մարդասէր Հոգի. ըզժողովեալսըն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղէն նոքօք լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ։ Զուարճացան քո գալստեամբն սուրբ առաքեալքն. կոչելով ի միասին զցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ։ Հոգևորական սուրբ մկրտութեամբ զարդարեցեր նորօք զորդեգիրս. ի զգեստս լուսափայլս և նորափետուրս. վասն որոյ և մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ։

Հն. Որ հայրական իշխանութեամբ և փառօք գալոց ես Տէր. նստելոց ես դատաւոր հանդերձ քո առաքելովք. և առնես զհատուցումն քո արդարոց։ Որ լուսափայլ ճառագայթիւք նշանաւ սրբոյ խաչին յահաւոր բեմին բազմիս. և ընտրես զօդիս յայծեաց. և առնես զհատուցումն քո արդարոց։ Արդ աղաչեմք զքեզ Քրիստոս Որդի Աստուծոյ. հանգո զմեզ ընդ ննջեցեալսն ի վերինն Երուսաղէմ. զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ ի յաւուրն ահեղ ատենին։

Աօ.. Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին. երանելի առաքեալքն և ե կուսանքն. ջահազգեստուք պայծառացեալ լուցանէին զլապտերս իւրեանց. և միաձայնեալ ասէին օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս։ Այսօր գտնելով զլոյս

կուսն առ դրանըն գերեզմանին. սպասէին և ակն ունէին Տեառն իսկ ինքնին գոլով. գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. և նոցա միաձայնեալ ասէին օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս: Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թռուցեալ յօդս. և ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. և նոցա միաձայնեալ ասէին օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս: Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթեւեան սրովբէսն. մտանելով յեօթնաստեղեան խորանսն. տեսանելով զանազան աթոռսըն զոր պատրաստեալ է քեզ տէրունեայդ. երգեմք և մեք ասելով օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս:

ԽԶ. Քրիստոս Ած մեր շնորհեա մեզ ընդ պետրոսի և ընդ որդւոցըն զեբեդեայ. արժանաւորել քում աթոռին տեսլեանդ: Համբարձցես ըզմեզ Տէր առաւել քան զըզգալի զթաբօրական ըզլեառըն. յերկնաւորն և յիմանալի խորանդ: փառք Հօր: Նաև որդւոյ և մեք ըզքանկանելիս մեր յարմարեսցուք քեզ հոգևորական տաղաւար. ոչ միայնոյ մարդասիրի և փրկչի:

Այժմ և միշտ: Որ երկոքումբք ընտրելովք լուսաւորչօքն աշխարհիս. հաստատեցեր զեկեղեցի քո Քրիստոս. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ:

Որ խոստացար տալ ըղձականս արքայութեան երկնից երանելոյն Պետրոսի. որ հրաւիրեաց ըզմեզ ի լոյս կենացըն յաւիտենից. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ ընտրեցեր ի մարդկանէ հաւատարիմ սուրբ զառաքեալըն քո. որոշելով յաւետարանըն լինել քեզ խոստովանող. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Փակօղն արքայութեանն երկնից սուրբ առաքեալըն Պետրոս. արութեամբ ժուժկալեալ քեզ խաչակցեցաւ. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք յաղթողական ձայնիւ ըզընակեալըն ի մէջ սրբոց: Փառք Հօր: Որ ընտրեաց զերանելի առաքեալսն. ամոլք հաւատոյ սիւնք եկեղեցւոյ. ի տիեզերական ի հրապարակին զդատողական աթոռսըն շնորհելով. բարձր արարէք յաղթողական ձայնիւ ըզընակեալըն ի մէջ սրբոց: Այժմ և միշտ: Նըմանեալ աղաւնւոյ արծաթապատ թեւօքն ի գոյն ոսկւոյ Ճշմարիտ սուրբ Հոգին. եւ լուսազարդ փայլմամբ փարէր ըզնոքօք. բարձր արարէք յաղթողական ձայնիւ ըզընակեալըն ի մէջ սրբոց:

Մեծացուսցէ Դ.Զ:

Աստուածածին գերագոյն երկնից ցուցար խորան եւ առագաստ. քանզի ծագեալ լոյսն ի Հօրէ.

բնութեանց էից անտանելին պարագրեցաւ ի քում յորովայնի․ Հոգևոր երգով ըզքեզ ըստ շատ մեծացուցանեմք ։ Փառք Հօր ։ Դուռըն փակեալ ըզքեզ Եզեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս անարատ․ ընդ որ եմուտ անճառն յէից․ Բանն անմարմին որ ի Հօրէ և ել մարմնով անխառնելի միալով կուսութեամբ․ Հոգևոր երգով ըզքեզ ըստ շատ մեծացուցանեմք ։ Այժմ և միշտ ։ Աներափոխեալ ըզքեզ ի յերկնային խորանսն այսօր Որդիդ քո միածին․ ուստի եւ դասք առաքելոցն․ եւ խմբստուն որք կուսանացըն միաձայնելով գովէին ըզքեզ մայր ամենօրհնեալ․ Հոգևոր երգով ըզքեզ ըստ շատ մեծացուցանեմք ։

Ողորմեա Դ.Զ ։

Մոլէք Հաւատոյ այսօր փայլեն Հայր սուրբ ի քո որք եկեղեցւոջ․ մարգարէք փրկիչ տօնողացս ողորմեա ։ Փառք Հօր ։ Բարեխօսութեամբ Պետրոսի և Պօղոսի քո սուրբ առաքելոցն․ մարգարէք փրկիչ տօնողացս ողորմեա ։ Այժմ և միշտ ։ Լուսաւորեալք ի սոցա դրդրութենէս փառաւորեմք որք զերրորդութիւնդ․ երկրպագանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա ։

Տէր յերկնից Դ.Զ ։

Սրբանքն որք առաքեալքն․ որպէս զարեգակն ծագեցան ի յերկրի․ արձակելով ըզճառագայթս ընդ տիեզերս․ լուսաւորեցին զաշխարհս ամենայն ։ Փառք Հօր ։ Ի մերմէ ի հողեղէն բնութէս․ չարչարեցան վասն Քրիստոսի․ եղեն լուսատուք տիեզերաց․ և հրաւիրեցին զերկիրս ի

յերկինս։ Ռ.յժմ և միշտ։ Զարչարեցան վասն քո. զնա արարին իւրեանց յոճս. հեղին զարիւնս իւրեանց ի յերկիր. և պսակեցան յանմահ արքայէն։

Առաւօտու Երգ. Ոչ են բանք և ոչ են խօսք։ 147։

Մանկունք Գ.Կ. ՄՏ։

Որ արփիահրաշ լուսով ծագմամբ. պայծառացոյց ըզտիեզերս անճառապէս. լոյս որ ի Հօրէ առաքեցաւ. առաքելական քարոզութեամբ սրբոյն պետրոսի. հրաւիրելով ի լոյսն անըստուեր։ Փառք Հօր։ Որ ի հեղձական մեղաց ծովէս. վերաբերեալ ըզհողեղէնս բնութիւնս ի կեանս. Ձայնն որ ի յերկրի երևեցաւ. ուռկանաւ աւետարանի սրբոյն պետրոսի. հրաւիրելով ի լոյսն անըստուեր։ Ռ.յժմ և միշտ։ Որ յառաջ գուշակեցաւ. մահուն խորոյ լինել կործանող արեամբ խաչին. գառն որ եբարձ ըզմեղս մեր. ըմպել զբաժակ չարչարանաց սրբոյն պետրոսի. ժառանգելով ըզկեանսն անվախճան։

---

ՑԵՐԵԿՈՅԻ

Համբարձէ Գ.Կ. ՄՏ։

Որ անպարագիրն է յէութեն. պայծառածկեալ արփիափայլ ճառագայթիւք. լոյս որ պայծառ քան զարեգակն. արտափայլեալ շուրջանակի սրբոյն պօղոսի. հրաւիրելով ի լոյսն անըստուեր։ Փառք Հօր։ Որ գերագոյն քերովբէից. վերամբարձեալ ի յերրակի խո-

րանս երկնից . Եւ հրաշհոսան վտակացն մրրմամբ զմայլեալ . Երրորդութեանն արժանաւորելով տեսլեան սուրբն Պօղոս . Հրաւիրելով ի լոյսն անստուեր: Այժմ և միշտ: Որ անօթ հոգւոյն ընտրեալ . քարոզելով զանունըն Տեառն ի հեթանոսս . Եւ կատարեալ զընթացսն հաւատոյ . պսակեցաւ հեղմամբ արեանն իւրոյ ի Քրիստոսէ . ժառանգելով ըզկեանսն անվախճան :

Յայսմ աւուր ի 24 Յունիսի յոր օր և հանդիսի, է

# ԾՆՈՒՆԴ

## Յովհաննու Կարապետին:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԿ:

ԱՐԵԳԱԿԱՆՆ արդարութեան ծագմանն արուսեակդ առաւօտեալ . Նախընթաց ճանապարհի Որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս . առ Քս բարեխօսեա վս անձանց մերոց : Բարձրելոյն անճառ խորոց տեսանօղ իմաստիւք հոգւոյն . ի յորովայնէ մայրեան տաճար Աստուծոյ և բնակարան սուրբ Երրորդութեան . առ Քս բարեխօսեա վս անձանց մերոց: Գաբրիէլ հրեշտակապետն առաքեալ առ Զաքարիաս . աւետարանել ըզհրաշալի ծնունդ քո որ յամուլ ծերոյն Եղիսաբեթէ . առ Քս բարեխօսեա վս անձանց մերոց : Դասապետն երկնից զօրացն երևեալ քահանայապետին . յորժամ մը-

տանէր ի սրբութի՛ սրբո՛ցըն խընկարկելով ըստ օրինացն ի տաճարին. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Եւ տեսեալ զանհիւթականն ի ձեւ մարմնոյ յաջմէ սեղանոյն. պակուցեալ յերկիւղ մահու սասանելով եւ հաստատէր բանիւ հրեշտակին. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Ծերագոյն քան ըզբնութի՛ լուեալ զեղանակ ծննդեանըն քո. սոսկացեալ հիանայր Զաքարիաս եւ համրացեալ պատժէր պապանձեալ լեզուաւ. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Էակից Բանն ի Հօրէ իջեալ յերկնից ըզկընի ձայնիդ. ուստի Գաբրիէլ վերառաքէր զկոյսըն Մարիամ առ ամլութի յղացեալն ըզքեզ յորովայնի. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Ընդ ժամանել ձայնի ողջունին Մարիամու առ Եղիսաբեթ. խայտացեր ձայնիդ ընդ առաջ Բանին Աստուծոյ յորովայնէ ամինն երկրպագելով. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Թագաւորըն բոլորից պարածածկեալ յարգանդի կուսին. զոր ծառայդ հաւատարիմ տեսեալ Հոգւովըն սրբով եւ բերանով մօր քո օրհնաբանէիր. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Ժառանգաւոր հին օրինացն արդարութե՛ ընդ մարգարէիցն. եւ նախաշաւիղ հնաւողաց անձուկ ճանապարհին նոր օրինացս ընդ առաքելոցն. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն անձանց մերոց։ Ի յանապատի հրեշտակական վարուք բնակեցար ըստ Եղիայի. կերակրելով մարախ եւ մեղր վայրենի՝ հին եւ նոր պատուիրանաց օրինակաւ. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վն

անձա՛նց մե՛րոց։ Լուսապայծառ շնորհօք Հոգւոյն զարդարեալ ըստ ներքին մարդոյն. իսկ արտաքուստ անմաքրական ստուերն ծածկեալ ըստ տըխրագոյն զգեստու նախահօրն. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Խորհրդով մաքրագունիւ արդարապէս արփացեալ. ի յօրինակ մեռելութեն գօտի մաշկեղէն ընդ մէջ ածեալ քո երեւեցար. առ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Ծնընդեան Հոգւոյն սրբոյ զօրս յԱդամայ յորդիս Աստուծոյ. ի քէն ըսկիզբն եւ օրինակ եղեալ ի Յորդանան մկրտութեամբն յապաշխարութի. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Կարապետ թագաւորին երկնաւորի առաքեցար. պատրաստել ըզճանապարհս Նորա՛ յոգիս մարդկան ըստ Եսայեայ քարոզելոյն. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Հուր կիզանող զմեղս մարդկան գուշակեցեր զառաջին գալըստեան Տեառն. իսկ դատողական հեծանոցաւ մաքրել ըզկալ աշխարհի ընդհանրական գալըստեան խորհըրդն. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Զայն բարբառոյ յանապատէ ըզքեզ անուանեաց Եսայիաս. եւ հրեշտակ Տեառն առաջի առաքելով ծանոյց Հոգւովն Մաղաքիաս. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վս անձա՛նց մե՛րոց։ Պետական քահանայութեն յԱհարոնէ ի քեզ կատարեցաւ. եւ ճշմարիտ քահանայութեանն որ ի Քրիստոսէ ի քէն ըսկիզբն հաստատութեն. ա՛ռ Քս բարեխօսեա՛ վասն անձա՛նց մե՛րոց։ Զբարձ օրինացըն Մովսիսի լուսատու ամէնն խորայլեալ. եւ իմանալի

արեգականըն յառաջընթաց ով ի յերկիր ծագմանն ի կուսէն. ով Քն բարեխօսեա վասն անձանց մերոց։ Մերկերեալ ըզբոլորից Աստուածն ով քեզ նկեալ հրաժարէիր. անսանելով զգերապայծառ լոյս Աստուածութեանն ընդ հողեղէն բնութեան պարունակեալ. ով Քն բարեխօսեա վասն անձանց մերոց։ Յորժամ էջ ի Յորդանան հուրն Աստուած ի քէն մկրտել. վերնականն իշխանութիւնքըն զահի հարեալ զարմանային նորահրաշ անսլեամբն. ով Քն բարեխօսեա վասն անձանց մերոց։ Նոր Եղիաս նախ գալստեանն քարոզ ըստ հրեղէն որ ի յերկրորդին. արժանի եղեր լսել հայրական ձայնին ըզմիածնէն դա է Որդի իմ սիրելի. ով Քն բարեխօսեա վն անձանց մերոց։ Աներհատուն արարածոց որ ի Հօրէ Հոգին ճըշմարիտ. աղաւնակերպ անսլեամբ քեզ երեւեցաւ զԱստուածութիւն իւր էակցին յայտնեալ աշխարհի. ով Քն բարեխօսեա վն անձանց մերոց։ Որ ըզխորացս անճառելի անօրէնութեանըն Քնի ոչ լուծանէիր. զհամագոյ Երրորդութեան անձնաւորութի անսանել ի Յորդանան արժանի եղեր. ով Քն բարեխօսեա վն անձանց մերոց։ Զոր իշխանըն խաւարին յաշխարհական մեղաց ծովէս. հալածեցաւ ջրովըն Յորդանանու մկըրտեալըն ի քէն ըզգլուխ վիշապին ի նմա խորտակեաց. ով Քն բարեխօսեա վն անձանց մերոց։ Պայծառագլուխ մարգարէիցն օրինադրէր զգառն օրինակին. իսկ դու ըզճշմարիտ ծնեալն ըզՔրիստոս անուանեցեր գառն Աստուծոյ եւ բարձօղ մեղաց. ով Քն բա-

բեխօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Դու՛ր մաքրութե՛ն ի քէն մերկացելո՛ցն յարբուա՛ծ իմաստից. ապըս-տամբացն յերկի՛ւղ հա՛ստամբ տա՛պարին և խո-նա՛րհացն ի խրա՛տ իմա՛ստութե՛ն. ա՛ռ ՔՍ բարե-խօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Աւա՛հ լուսո՛յ արդա-րութե՛ն եղեր անձրե՛ւ ճա՛նա՛պա՛րհաւն. առաջնոր-դեցե՛ր որդւոց մա՛րդկա՛ն ելանե՛լ յե՛րկինս անմա-հա՛կան վարո՛ւց քո՛յ օրի՛նակաւ. ա՛ռ ՔՍ բարե-խօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Արո՛յ անմահ ե՛ւ երկնաւոր սուրբ փեսայի՛ն ե՛կե՛ղե՛ցւո՛յ. փեսա-ւէր և հրաւիրա՛կ առա՛քե՛ցար հարսին որդւո՛յ թա՛-գաւո՛րին. ա՛ռ ՔՍ բարեխօսեա՛ վն անձա՛նց մե՛-րո՛ց։ Վա՛րդապետի՛ն տիեզերաց ա՛ւանդեցե՛ր զքո՛ աշա՛կե՛րտեալսն. և ըղձի՛ւ գիշերա՛յի՛ն ծրա՛գի քո՛ բա՛նի հա՛մապայծառ ա՛րեգակա՛նն ա՛ւետարա՛նի. ա՛ռ ՔՍ բարեխօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Տիրակա՛ն նը օրինացն եղեր քարո՛զ ա՛ռ օրի՛նազանցսն. ո-րով մատնեալ բա՛նտի՛ց եւ կա՛պանաց մոլեգնու-թեա՛մբըն Հերո՛վդի՛այ. ա՛ռ ՔՍ բարեխօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Բա՛մեալ խընձո՛յս արբեցութե՛ն յա՛ւուր ծնընդեա՛ն մա՛հարե՛րին. ըղքեղ որ խայ-տալո՛վ ծընար տա՛տրա՛նկը ա՛նա՛պա՛տի կաքաւելո՛վ խընդրեա՛ց ի՛ մահ գո՛ւսար Հերովդիա՛դայ. ա՛ռ ՔՍ բարեխօսեա՛ վն անձա՛նց մե՛րո՛ց։ Ցընծութե՛ն աւե-տաբեր եղեր հօգւո՛ցն ո՛ր ի՛ դըժո՛խս. կարապե՛տ կըրկին իջմա՛ն Տեա՛ռն ի ստո՛րին կո՛ղմ երկրի ո՛րով լուծա՛ն երկունը՛ք մա՛հու. ա՛ռ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձա՛նց մե՛րո՛ց։ Խ՛ւթակա՛ն մարմնով յերկրի յա՛շակերտա՛ց քո՛յ պարածա-

ծնեալ · և աննիւթական հոգւով ընդ Քրիստոսի յարքայութիւն երկնից վերափոխեցար · առ Քս բարեխօսեա վն անձանց մերոց ։

Հգ․ · Որ յերկնային զօրս անմարմնոցըն նմա հեղեր առատապէս Հոգիդ ճշմարիտ · զմեծային և զգերագոյն քո խնամատարութիդ · լինել փառաւորանիչ ծը Նորոգութենդ · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ ։ Որ զկերպարանն ծածուկին ստեղծեալ Նորոգութեանդ խորհրդակցութեբ · զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար · և ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք և մարգարէիւք · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ ։ Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քում էանկցին · միաւեալ ի վերնատունն դրօքըն փակելովք · շնորհելով ըստ առաջին փչմանն ըղբեղ մեծամանեցն · առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ · ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ ։

Հն · Յորժամ յերկնից գոչէ փողն աղաղակեցութի առնելով տինզեռաց ի դատաստան ահաւոր · յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր և ըզմեր ըղննջեցեալսն · և հանգո ընդ սուրբս քո ։ Յորժամ ձայնագոյթք Նծութեանդ փայլեն ի յարեւելից · և զըպրութերք հրաշիցըն բանին յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր և ըզմեր ըղննջեցեալսն և հանգո ընդ սուրբս քո ։ Զօրհնութեան գողան սրբանք ի ձայնէ սրովբէական փողոյն · յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան ·

յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզնընջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո։

ՄՕ. Որ առաքեցեր զՄիածինդ ի փրկութիւն տիեզերաց. անեղ էութեամբ եղանիլ մարմին ի նր կուսէն Հայր երկնաւոր. զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։ Որ զնախագրեալսն առ ի քէն մարգարէիւք եկիր կատարել. անմայր ի Հօրէ անըսկըզբնաբար լինել անհայր ի սրբոյ կուսէն. զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։ Որ ի լուսոյ անճառից ի քէն յայտնեալ ծագեալ խորհրդոյ. ի քէն մաքրելոյ երջանիկ կուսին Հօր զօրութիւն հովանաւորեալ. զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։ Որ զնախամօրն անիծից երկանց լուծեր ըզդատակնիք. որ ըզտըրտմական սահմանեաց ծընունդ անախտաբար ծնանելով ի քէն. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

ԽԶ. Որ իսկզբանէ իմաստութիւն հաստատեցեր զեկեղեցի Հօր իմաստութիւն. զոր նախանըկար տեսութիւն նըշանակեաց Մովսէս խորանաւն երկնահանգոյն ի Սինա լերին. լուսաւորելով փառօքն Աստուծոյ։ Որ ըզխորհուրդ անապական տնօրէնութեանդ քո ի սրբոյ կուսէն. տըպաւորելով տապանակին ածայլին ուխտին կտակարանաց Բանիդ Աստուծոյ. փառաց անեղիդ տեղի հանգըստեան։ Որ ի կենաց վերադարձի բնութիւն դարձմամբ Յորդանանու օրինակեցեր. եւ ըզըրընութիւն մահու և գըժոխոց կործանմամբն Երիքովի տապա-

նակաւ խաչին հրաշագործեալ նոր Իսրայէլն. օրհնութիւն քեզ Տէր երգեցեն մանկունք։

Փառք Հօր։ Փութացիր մեզ յօգնութիւն առ ի վերուստ սուրբ Յովհաննէս. առաքեալ և մարգարէ եւ կարապետ եւ մկրտիչ Որդւոյն Աստուծոյ. առ Քն բարեխօսեա վասն անձանց մերոց։

Այժմ և միշտ։ Քահանայապետին Քնի որ ի խաչին պատարագեալ. քահանայդ ինքնանուէր մատո զպաղատանս երգաբանիս եւ տօնողաց շնորհեա զքաւութիւն. առ Քն բարեխօսեա վասն անձանց մերոց։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ։

Որ աւետաւոր քում դալստեանդ առաքեցեր զհրեշտակապետն Գաբրիէլ. աւետարանել զԶաքարիայ զաւետեօք ծննդեանդ յառաջընթացի կարապետին քում Յովհաննու. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ յարգանդին լցեալ Հոգւով երկրպագեաց քեզ յորովայն սրբոյ կուսին. զոր Եսայեայ վերագոչեաց ձայն բարբառոյ յանապատէ որ պատրաստեաց զեկեղեցի հարսն մաքուր սուրբ փեսային. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ բոցեղէն հոյլք քրովբէիցն ոչ իշխէին հայել ի փառս Աստուածութեանդ. սա հողանիւթեայ գոլով բնութեամբ մկրտեաց ըզքեզ մարմնով ի ջուրսն Յորդանանու. աղաչանօք սորա կեցո զմեզ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան: Որ անմատչելի գաղտնեան Բանին. առաքեցաւ ձայն յանապատէ. ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան: Փառք Հօր: Որ սըրբութեանց սուրբ կուսածին Որդին. ի յամլորդւոյն հայցէր մաքրել Յորդանանու. ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան: Այժմ և միշտ: Որ զծածկեալ խորհուրդ նոր Երրորդութեան. կատարեալ յայտնեալ Հոգին աղաւնակերպ իջմամբ. ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Զ:

Առաւօտ խաղաղութեան և արուսեակ զուարթարար. այսօր Մարիամ սրբուհին ի փառս քո Քս ծագեաց մեզ լոյս յորդւոցն օրինաց. անդադար երգով սաղմոսք ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք: Փառք Հօր: Դրախտ Աստուածային և արեւելք իմանալի. այսօր Մարիամ հրաշագեղ ծնեալ ի յԱննայէ ի մայրութի քո հրաւիրեալ Քս Որդի Աստուծոյ. անդադար երգով սաղմոսք ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Տապանակ սրբեցուցիչ և տաղաւար Աբրահամեան աստուածընկալ. այսօր Մարիամ լուսապայծառ միածին ծընունդ յայտնեալ ծնողաց. ի ծնողութի քո կոչեցեալ միածին Որդի Աստուծոյ. անդադար երգով սաղմոսք ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Երկնաւոր փեսայ անըստուեր լոյս իմանալի. որ ի յերկնից իջեր ի սէր հարսին քո եկեղեցւոյ. զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրըն

քո Յովհաննէս. սորին մաղթանօք ողորմեա։ Փառք Հօր։ Բոցակերպիցն անհասս և անտես ի սերովբէից. սրբութեանց որ և Տէր բոլորից. խոնարհեցար ի Յորդանան. հայցելով ի ծառայէն. մաքրութի ջրոյ ի լուանալ զմեղս Ադամայ. սորին մաղթանօք ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ յամլորդւոյն վկայեցար գառն Աստուծոյ բարձօղ մեղաց. զոր գերագոյն արդարոց. ծանուցեր մեծ ի ծնունդս կանանց. և ճրագ օրինաց. որ և ի դժոխս զփրկական գալուստն քո քարոզեաց. սորին մաղթանօք ողորմեա։

Տէր յերկնից Գ. Ձ.

Այսօր ցնծան հրեշտակք ի յերկինս. յիշատակաւ հողանիւթ հրեշտակին. որք համադասեալք ձայնին բարբառոյ. երգեն զօրհնութիւնս Հօր ի բարձունս։ Փառք Հօր։ Այսօր ցնծան հոգիք արդարոց. նահապետաց և մարգարէից. ձայնակից լինել մեծին ի ծնունդս կանանց. երգեն զօրհնութիւնս Որդւոյն միածնի։ Այժմ և միշտ։ Այսօր ցնծան դասք առաքելոցն. տօնախմբելով զյիշատակ մեծի Մկրտչին. որ առաքելոցն է սկիզբն և մարգարէից լրումն. ընդ նոսին և մեք բղխեսցուք ի Հօրէ և յՈրդւոյ երգեմք զփառս ի բարձունս։

Առաւօտու Էրգ. Դու մանուկ մարգարէ Բարձրելոյն կոչեսցիս. գնասցես առաջի Տեառն պատրաստել զճանապարհս նորա։

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ ի թողութիւն ամենայն մեղաց մերոց։

Բարեաւ գտանք առ քեզ Աստուած մեծ:

Մանկանց եւ Համբարձի ԴԿ:

Մարգարէից գերագոյն եւ մեծ ի ծնունդս կանանց. որ ըզանօրէնութիւն Ածորդւոյն ի յարգանդի ծանեար Հոգւովն. աղաչեա զՏէր վասն մանկանց եկեղեցւոյ: Փառք Հօր: Յորովայնէ յորովայն երկրպագող Բանի. որ ըզՀօրն Ած մերոյ բնութիւն մկրտեցեր ի Յորդանան. աղաչեա զՏէր վասն մանկանց եկեղեցւոյ: Այժմ եւ միշտ: Կատարումն օրինաց եւ նախասկիզբըն շնորհաց. որ Հոգւովն ի դըժոխս քարոզեցեր ըզփրկութիւն գալըստեամբըն Բանի. աղաչեա զՏէր վասն մանկանց եկեղեցւոյ:

## Գ. ԿԻՒՐԱԿԷ

ԶԿՆԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ: ԲԿ:

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն ԲԿ:

ԱՌԱՒՕՏՆ Հանդերձ կանոնքն: 277:

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

Հարց ԱԿ:

Որ վասն մերոյ փրկութեան իջեր ի յերկնից. միածին Որդի Քրիստոս փրկիչ մեր. փրկեա զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Ի խաչին բեւեռեցար Բանդ ըմբռնելի մարմնով. եւ ընծեր ըզկապանըս մեղաց Քրիստոս փրկիչ մեր. փրկեա զմեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ երեքօրեայ թաղմամբ քո մեռուցեր ըզմահ. եւ յարութեամբըդ քո կենագործեցեր զաշխարհս.

առաւել գովեալ Քրիստոս փրկիչ մեր. փրկեա զմեզ Տէր Աստուած հայրցն մերոց։

Գ. Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Որ ըսպան ըզմահ թաղմամբն իւրով. եւ յարութեամբն իւրով մեզ կեանս պարգեւեաց. միաբան հաւատացեալք. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ նըստի ընդ աջմէ Հօր ծընողի իւրոյ. եւ մարդասիրապէս խընամէ զարարածըս. քահանայք հոգեւոր երգով. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

## ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Ա.Կ։

Նոր խորանիդ արեգականն արդարութեան նոր օրհնութիւն տամք. և անդադար բարեբանեսցուք։ փառք Հօր։ Նոր տաճարիդ անճառ լուսոյն որ ի Հօրէ նոր երգս երգեսցուք. և անդադար բարեբանեսցուք։ Այժմ և միշտ։ Զնոր միաբանըդ հրաշալի նոր միաւորման Բանին եւ մարմնոյ. հոգեւոր երգով բարեբանեսցուք։

## ՈՂՈՐՄԵԱ Ա.Կ։

Դու ես Քրիստոս. կեանք և յարութիւն ազգի մարդկան. ողորմեա։ փառք Հօր։ Դու յարուցեալ նորոգեցեր ըզտիեզերս. ողորմեա։ Այժմ և միշտ։ Յոյս յարութեան մերոյ. աղբիւր կենաց և փրկութեան. ողորմեա։

## ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Ա.Կ։

Յարուցեալ Տէրն ի գերեզմանէն. միածինն որպէս փայլակն. եւ լոյս փառաց ծագեաց յաշխարհս. եւ երկինք և երկիրըս ցընծային։ փառք Հօր։

Մեծ է յարութիւն Ածորդւոյն․ քանզի դրունք երկնից բացեալ եղեն․ և հոտ անոյշ բուրեաց յաշխարհս․ եւ լցոյց զարարածս ամենայն։ Այժմ և միշտ։ Զօրք երկնից իջեալ էին եւ բանակեալ շուրջ ըզգերեզմանաւն․ եւ հոգեղէն բարբառով երգէին․ Տէր օրհնեալ է քո յարութիւնդ։

---

ՅԵՐԵԿՈՅԻ ժամք․ ԻԿ․ Ա․ Վ․ յարութեամբդ։ 299։

---

Յայս շաբաթս փոխք ոչ լինին, զի շաբաթապահք են։

---

## Զ․ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Պահոց։ Գ․Ձ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ պահ․ Գ․Ձ․ Զերծո զիս։ 403։
ՅԱՌԱՒՕՏՈՒ ժամուց Ա․Ձ․ Բարեբանեալ ես։ 417։

---

## Զ․ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։ Գ․Կ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ պահ․ Գ․Կ․ Վր Աստուած։ 405։
ՅԱՌԱՒՕՏՈՒ ժամուց Ա․Կ․ Զանուն քո Վե։ 418։

---

## Զ․ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։ Գ․Ձ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ պահ․ Գ․Ձ․ Համբառնամ։ 407։
ՅԱՌԱՒՕՏՈՒ ժամուց Ա․Կ․ Որ խոնարհեցար։ 420։

---

## Զ․ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Պահոց։ Գ․Կ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ պահ․ Գ․Կ․ Վր Ած յոյս։ 410։
ՅԱՌԱՒՕՏՈՒ ժամուց Ա․Կ․ Ած հարցն մերոց։ 421։

## Զ. ՈՒՐԲԱԹ.

Պահոց: ԸԶ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԸԶ. Հայր բազում: 396:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Որ փառօք Հօր: 477:

## Զ. ՇԱԲԱԹ

Տօն Տապանակին Տեառն: ԸԿ:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—ըէ ԸԿ:

ԶՕՐԵՂ քաղաք ԱՅ եւ տաճար անապական. ծաղկազարդ եւ լուսազգեստ անվախճան փառօքըն պըսակեաց սուրբ Հօգին. եւ յաւէժ ուրախանան միշտ հաւատացեալք: Ի քեզ ծագեալ ի Համագոյից ԱՅ արդարութեան արեգակն. որ լուսաւորեալ փարատեաց ի քէն ըզխաւարն անգիտութեն եւ հաստատեաց ըզհիմունս քո. ի վէմ հիման առաքելոց և մարգարէից: Ի քեզ կանգնեալ սեղան սրբութեն և ըղխեալ աղբիւր անապական. որ յորդառատ վտակօք արբուցանէ յաւէտ ըզտիեզերըս գեղեցկապէս ըղխեալ ըզբողբոջս անուշից. եւ յաւէժ ուրախանան միշտ հաւատացեալք:

† Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց եւ մարգարէից. շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի. և ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ հրեշտակս. փառաւորելով զքեզ զԵրրորդութիւնդ: Տեղի ապաւինի և ժողովարան բանաւոր հօտի. բնակարան հրեշտակաց նաւահանգիստ արդարոց եւ մե-

ղաւորա՛ց քաւարան. զարդարեալ առաքելովք եւ մարգարէիւք:

ՑԱՐ. Այսօր նոր ժողովուրդք ընդ երկնայնոց լուսեղինացըն համաձայնեալք. նորոգողին ազգի մարդկան վերերգեսցուք. որ վասըն մեր մեռաւ եւ յարեաւ. ասելով փառաւորեալ է քո յարութիւնդ: Այսօր որդիք Սիոնի ծընեալք աւազանին շնորհօք յորդիս Աստուծոյ. ի նաւակատիս տաճարի բնութեան մերոյ գովեսցէք զփեսայն ելեալ յառագաստէ նոր գերեզմանին. ասելով փառաւորեալ է քո յարութիւնդ: Այսօր մանկունք հաւատոյ կատարելով զնաւակատիս վերին Երուսաղէմի. նորոգեսցէք ըզպատմուճան հոգւոց ձերոց. եւ ընդ որդւոց լուսոյ նոր Սիոնի. բարեբանեսցէք զՔրիստոս Թագաւորն. ասելով փառաւորեալ է քո յարութիւնդ:

ԱԳ. Որ անմարմնոց հոգեղինաց դասակցեցեր զքո սբ զեկեղեցի. որք ընդ նոսին համաձայնեալ փառաւորեմք սբ զերրորդութիւնդ սրովբէական սրբասացութեամբ. երգելով ըզփառս ի բարձունս: Որ յաղթեցեր մերով բնութեամբ ի փորձութեան կամակոր օձին. որով ետուր իշխանութիւն որդւոց Ադամայ կոխել ըզգլուխ չար վիշապին. եւ ընդ երկնայնոցն երգել ըզփառս ի բարձունս: Որ գալստեամբ քո վերածեր ըզմեզ յաշխարհական մեղաց ծովէս. տըպաւորեալ լըրմամբ ուռկանի վիմին հաւատոյ զոր ի ծովուն հրաշագործեցեր. երգեմք քեզ ըզփառս ի բարձունս:

ՑԱՐ. Թագաւորեաց Տէր ի վերայ հեթանոսաց.

և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի. Ժողովուրդք ընդ Քրիստոսի բարեբանեսցեք: Օգնեցաւ Տէր զօրութեամբ ընդ մէջ իւր ածաւ. քանզի չիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբով. Ժողովուրդք ընդ Քրիստոսի բարեբանեսցեք: Յարեաւ Տէր և տիեզերք ամ նորափետուր զարդարեցան. և մանկունքն հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին. Ժողովուրդք ընդ Քրիստոսի բարեբանեսցեք:

Ծն. Որ նախ իմաստութեամբ անօրինեցեր զխորհուրդ որ եկեղեցւոյ. խորագոյն արկեալ հիմունս հաստատութեան ընդդասս առաքելոց. աղաչանօք սրբոց խնայեա ի մեզ: Որ զօրհնութիւն նախաստեղծիցն ածազոյգ արուաց եւ իգաց. պայծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի յԱննա. աղաչանօք սրբոց խնայեա ի մեզ: Որ ըստ խոստման Աբրահամու նահապետին մեր ըստ հոգւոյ. քահանայական և թագաւորական գաւազանացն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ. աղաչանօք սրբոց խնայեա ի մեզ:

Հր. Որ յերկնային զօրս անմարմնոցն նախ հեղեր անսպառապէս Հոգւոյդ ճշմարտի. զածային և զգերագոյն քո իմաստութիւնդ. լինել փառաբանիչ որ Երրորդութեանդ. ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ: Որ զկերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեանդ խորհրդակցութեամբ. զարդարեցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար. եւ ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք եւ մարգարէիւք. ընդ նոսին փառաւորեմք զերրեակ

միութիւնդ։ Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քում էանցին. մնացեալ ի վերնատունն դրօքըն փակելովք. շնորհելով ըստ առաջին փչմանն ըզքեզ մետասանիցն. առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ. ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ։

ՀՆ. Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութի անելով տիեզերաց ի դատաստան ահաւոր. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըզմեր ըզնըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբըս քո։ Յորժամ ճառագայթք Ծնութեանըդ փայլեն ի յարեւելից. եւ դըպրութիւնք հրաշիցըն բանին յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըզմեր ըզնըննջեցեալսն եւ հանգո ընդ սուրբըս քո։ Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սոսկալէատու փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըզմեր ըզնըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբըս քո։

ԱՕ. Նոր խորանիդ արեգականն արդարութեան նոր օրհնութիւն տացուք. և անդադար բարեբանեսցուք։ Նոր տաճարիդ անճառ լուսոյն որ ի Հօրէ նոր երգս երգեսցուք. և անդադար բարեբանեսցուք։ Զնոր մտարանըդ հրաշալի նոր միաւորման Բանին եւ մարմնոյ. հոգեւոր երգով բարեբանեսցուք։

ՄՁ. Սեղան քո Տէր զօրութեանց հաւատով կանգնեցաւ ի խորանի քում. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։ Սէմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք ժողովուրդք երկր-

պագնեցուք: Փառք Հօր: Ի սմա մատուցման ճըշմարիտ պատարագ և զենմամն անապական. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Այժմ և միշտ: Բանն Ած և ծածկեալ խորհուրդըն յաւիտենից. իջեալ ի յերկնից մարմնացեալ ի կուսէն խաչեալ յերկրի և թաղեալ ի նոր ի գերեզմանի. եւ յարուցեալ յերրորդ աւուր. զի զմարգարէիցն ըղձանսըն կատարեսցէ:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հ՟րց Գ.Ձ:

Այսօր ցընծան դասք հրեշտակաց ի նաւակատիս Քսի որ եկեղեցւոյ. բարեբանելով զՏէր Ած հարցըն մերոց: Այսօր տօնեն դասք որք առաքելոցն ըղձօն վերինն Երուսաղէմի. յիմանալի տաճարին մատուցանեն զերգըս հոգևոր երգով. Տէր Ած հարցըն մերոց: Այսօր երգս առեալ գոչեն դասք հաւատացելոց. միաբանութեամբ արժանի արա ըզմեզ ի տաճարի քում սըրբութեն փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւն. զՏէր Ած հարցըն մերոց:

Գ.. Ըզ Տէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ լուսաւորեաց զկաթուղիկէ մայր որ եկեղեցի անծայրին լուսովն. ամ ազինք գովեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ բարձրացոյց զմանկունս որ եկեղեցւոյ. ի դասս վերին զօրացն. քահանայք օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

### Մեծացուսցէ Գ.Զ։

Զանճառելի լուսոյ մայր եւ ըղձանկարան անըսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Զանհաս տընօրէնութեան մայր. եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զբոլորից փրկութեան մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. ընդ նմա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

### Ողորմեա Գ.Զ։

Լուսաւորեալ Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո. զարդարեալ զամուրս քո. և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի։ փառք Հօր։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիոն. եւ քեզ մատուսցին աղօթք յԵրուսաղէմ։ Այժմ և միշտ։ Գովեա Երուսաղէմ ըզՏէր եւ օրհնեա զԱստուած քո. ընդ որ ժողովուրդ դըշխոյ դուստր Սիոնի։

### Տէր յերկնից Գ.Զ։

Այսօր Ածութիւն զուարճանայ նոր հաստատելով զերկիր. պարեն սուրբք փառաբանեն զուարթնոց. եւ մեք ձայնիւ օրհնութեան զարդարեսցուք զօր ըղտօնս։ փառք Հօր։ Այսօր եւ մեք ցնծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երեւեցաւ յաշխարհի. առ Ած գոհութիւնք ընթանան. պատմեն անդադար զբան կենդանի։ Այժմ և միշտ։ Խընդա և զուարճացիր եկեղեցի. կոյս որ եւ հարսն երկնաւոր փեսային. ահա տեսանեմք

զօծեալն ընդ Երրորդութեանս. գոլով առ քեզ լուսոյն հեթանոսաց:

Առաւօտու Երգ. Արի Տէր ի հանգիստ քո. դու և տապանակ կտակի սրբութեան քո:

Յիշեա Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա:

Քարոզ Ասասցուք ձայն գ․:

Մանկանց Ակ:

Որ իսկզբանէ իմաստութեամբ հաստատեցեր զեկեղեցի հօր իմաստութիւն. զոր նախանկարեր տեսութեամբ նշանակեաց Մովսէս խորանաւն երկնահանգոյն ի Սինա լերին. լուսաւորելով փառօքն Աստուծոյ: Փառք հօր: Որ ըստ խորհուրդ անապական տնօրէնութեանդ քո ի սրբոյ կուսէն. տպաւորելով տապանակն ծածկեալն ուխտին կտակարանաց Բանիդ Աստուծոյ. փառաց աներեւոյթ տեղի հանգստեան: Այժմ և միշտ: Որ ի կենաց վերադարձի բնութեան դարձմամբ Յորդանանու օրինակեցեր. եւ զօրութիւն մահու և զժոխոց կործանմամբն Երիքովի տապանակաւ խաչին հրաշագործեալ նոր Իսրայէլի. օրհնութիւն քեզ Տէր երգեսցեն մանկունք: Զկնի Մանկանցն Քարոզ Սուրբ եկեղեցեաւս: Կեցո: Ող. Առ դրան սուրբ:

---

## ՅԵՐԵԿՈՅԻ

Փառ. Լոյս զուարթ: Մեսեդի Ընծայեցաւ. Քարոզ Ասասցուք ձայն գ․:

[illegible]

[illegible] Ա.Ձ :

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր . [illegible]

[illegible]

[illegible] խնդրեսցուք : Կեցո Տէր : [illegible] Թագաւոր խաղաղութեան : Հայր մեր :

[illegible]

# Է. ԿԻՐԱԿԷ

## ՕՐՆ Ի ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ: ՂԸ:

# ՎԱՐԴԱՎԱՌ

## Ի ԳԻՇԵՐԻ

[illegible]

[illegible] Գ.Ձ :

ՑՆԾԱ՛Յ այսօր փառօք միածնին լեառն Թաբոր հանդերձ Հերմոնիւ . բարձրացեալ գերագոյն Սիոնի . և էջք Աստուծոյ դուռն երկնից ի նմա : Ցնծան այսօր լերինք Աստուծոյ . արարողին եղեալք ընդ առաջ . պարակցին յաւիտենական լերանց . դաշտք առաքելոց և մարգարէից : Ցնծայ այսօր լեառն վերին Սիոն . հարսնարան անմահ արքայութեան . տեսանելով զերկնաւոր փեսայն . զարդարեալ լուսով հայրական փառօք :

[illegible]

[illegible] Ա.Ձ :

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զա̃ծային

քո՛ զօրութի՛դ. զքե՛զ փառաւորե՜մք իմանալի լո՜յս։ Որ ըղձառագայթ փառաց քոց ցուցեր արեգ-ակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս։ Որ աչագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն. ի թըմբրութիւն հրաշիցն ի սէր անծայլին փառաց քոց. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս։

† Երեւի երբեմն աշակերտացըն հրաշալի տեսլեամբ պայծառացեալ ի Թաբօր լերին։ Եւ զերրեակ միութեն զանտանելի ըզլոյսն. տեսանելով կենդա-նւոյն մահացան։ Հանդիպեալ նախահարցըն տե-սութեամբ հայցէին ի Տեառնէ. ասեն բարւոք է մեզ աստ լինել։

Ի տաճարի սրբութեան փառաց քոց Քրիստոս. զոր ի յերկնից լուսաւորեցեր անծայլին ծագմամբ. ի սմա ըզքեզ անդադար բարեբանեսցուք։ Որ ըզխորհուրդըս փրկականս աստուածգիտութեան. շնորհեցեր մեզ ի ձեռըն քահանայապետին քո եւ վերկայի. նորին աղաչանօք խընայեա ի մեզ։ Զհա-ստատեցեալ ժողովուրդըս սուրբ Երրորդութեանդ եւ զապաւինեալս ի խորան փառաց քոց. պահեա անխըռով ի խաղաղութեան։

Այսօր զանըսկիզըբն Բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք. քրովբէական ձայնիւ օրհնեսցուք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։ Այսօր յաւանակ քերովբէ եւ ողջոյն Եբրայեցւոց բարբառնն օրհնութիւն որդւոյն Դաւթի. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։ Այսօր զուար-ճացան տիեզերք գալըստեամբ Աստուածորդւոյն

յԵրուսաղէմ և գոչէին հրճուանօք երգով. օր-
հնեալ եկեալ անուամբ Տեառն:

ՅԱՐ. Օ՛թագաւորըն փառաց Քրիստոս որ վն մեր մարմնացար ի սրբոյ կուսէն և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք: Որ ըղթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութբ. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք: Կարողապէս ըղդրունըս դը-
ժոխոց խորտակեաց. եկեղեցւոյ խորհուրդ զգեցոյց զմեծ վայելչութ. միաբանութեամբ երգով բարե-
բանեսցուք:

Օ՛փառաւորեալըն յամ արարածոց. և ի ծագաց մինչ ի ծագս երկրի զերկրպագեալըն. զմարմնա-
ցեալ Բանն ի կուսէն ձայնիւ երգով օրհնեսցուք: Որ դիմեալ գայ յԵդովմայ բարձրացեալ փառօք. յարուցեալ ի պատերազմ ընկղմեաց զաներևոյթն Ամաղէկ. զիջեալ Բանն ի դժոխս ձայնիւ երգով օրհնեսցուք: Զանգուամն ի Հօրէ փառակից սուրբ Հոգւոյն. կենդանութիւն ազգի մարդկան. որ յա-
րեաւ այսօր ի մեռելոց. զհամբարձեալ Բանն ի յերկինս ձայնիւ երգով օրհնեսցուք:

Ուրախ լեր յոյժ դուստր Սիովնի. պայծառա-
ցիր Երուսաղէմ զարդարեա զդրունս քո քա-
ղաքդ Աստուծոյ: Քանզի Քն որ էնն ի յաթոռ փառաց. այսօր մտանէ ի քեզ նստեալ ի վերայ յաւանակի նորոյ: Ծերք եւ տղայք ոստովք ձիթենեօք միաբանութեամբ երգէին. օրհնութի որդւոյ Դաւթի օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Հգ. Որ ի քրովբէական կառսըդ հանգչիս. այսօր ի-

ջեր յերկնից ի դաս առաքելոցն ո՛վ Հոգի․ օրհնեալ ես Թագաւոր անմահ։ Որ գնաս ի վերայ Թեւոց Հողմոց․ այսօր ի Հրեղէն լեզուս բաժանեալ Հանգեար յառաքեալսն ո՛վ Հոգի․ օրհնեալ ես Թագաւոր անմահ։ Որ խնամես տնտեսութեամբ զքո զարարածս․ այսօր եկիր ի Հաստատել զեկեղեցի քո ո՛վ Հոգի․ օրհնեալ ես Թագաւոր անմահ։

Հն․ Զայն արկեալ կենարարին աստուածային բարբառովն․ ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ․ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ ըզկեանսն ի Հանդերձեալ երկրին։ Ընդ առաջ ելանել քեզ Հաւատով ի յօդս վերինս․ աստուածազգեաց լուսով պայծառացեալ ի դաս անմարմնոցն․ ի լսել ըզձայն երանաւէտ կոչմանն։ Ընդ աջմէ քումմէ կացո ընդ իմաստունն ո՛վ կուսանսն․ ի լուսեղէն առագաստին պայծառացեալ ի դաս անմարմնոցն․ ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս։

Մօ․․ Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան Բանդ․ այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս․ վասն փրկութեան Հեթանոսաց։ Որ յանարուեստ աթոռ Նստիս բարեբանեալդ ի Հրեշտակաց․ այսօր ի Սիմէոնէ բառնալով ի գիրկս․ որ ընծայեսցես ըզմեզ ի կեանսդ յաւիտենից։ Փառք Հօր։ Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն․ այսօր Հայցմամբ ծերունւոյն արձակեա եւ զիս ըզբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից։

Այժմ եւ միշտ։ Արասցուք երիս տաղաւարս

Տեառն և Մովսէսի և Եղիայի․ և փառաւորեսցուք հանապազ զերրեակ միութիւնն։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա․

Քո են երկինք և քո է երկիր․ զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր։

Զհիւսիս և զհարաւ դու արարեր․ Թաբօր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա․

Փ․ Բարձրութիւնք լերանց նորա են, նորա է ծով, և նա արար զնա․ և զցամաք ձեռք նորա ստեղծին։

Եկայք երկիր պագցուք նմա․ անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ։

Փառք և․ այժմ և․ ալէլուիա։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱԿ։

Զանճառելի խորհուրդ որ Երրորդութեանդ․ այսօր ի լերինն երևեցուցեր աշակերտացն քոց Տէր․ Աստուած հարցն մերոց։ Աստուածային հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր․ այսօր տեսեալ առաքելոցն յօրինէին քեզ տաղաւար․ Աստուած հարցն մերոց։ Հովանացեալ ի վերայ լուսեղէն ամպոյն․ և ձայն ի յերկնից հայրական որ ասէ դա է Որդի իմ սիրելի․ Աստուած հարցն մերոց։

Գ․ Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս։ Փառք Հօր։ Գովեցէք զարփիական զլոյսն երևեալ ի Թաբօր լերինն․ և բարձր արարէք զնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Բարեբանեցէք զԾնօղն երևումն աշակերտացն յայտնեալ․ և բարձր արարէք զնա յաւիտեանս։

Մեծացուսցէ Ա Կ։

Զանճառելի ըզլոյս Աստուածութեանն. տնօրինաբար կրեցեր ի քում յորովայնի Մարիամ մայր եւ կոյս. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Ի մասնաւոր լուսոյն զարհուրեցան զաչք առաքելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր ըզհուր Աստուածութեանն Մարիամ մայր եւ կոյս. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Առաքելոցն հովանացեալ ամպ լուսեղէն. գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ. եւ զօրութիւն Բարձրելոյն հովանաւորեաց սուրբ Աստուածածին. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք։

Գէղէւրէ. Ցընծայ Թաբօր Հերմոնիւ. եւ առաքեալքն ի հայրական ձայնէն թմբրեցան։ Եւ կենդանեաց եւ մեռելոց Տէր ծանուցին զքեզ Մովսէս եւ Եղիա։

Ողորմեա Գ Զ։

Ի Թաբօր ի լերին ձեւացուցեր զքո բնութիւն անտանելի գոյացութիւն. ընդ որս եւ մեք ցնծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։ Աշակերտքն հիացեալ բարբառէին զխորհուրդս ի տագնապել սրտից իւրեանց. ընդ որս եւ մեք ցնծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։ Սքանչելի մեծ խորհուրդ զնորոգութիւնդ քոյ որոց առաքելոցն ծանուցեր բարերար. ընդ որս եւ մեք ցնծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։ Փառք Հօր։ Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր. առաքելոցն տեսեալ յօրինէին քեզ տաղաւար. ընդ որս եւ մեք ցնծու-

Թեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։ Այժմ և միշտ։ Հովանացեալ ամպ լուսեղէն և ըզհայրականըն լուեալ ըզձայն. եթէ դա է Որդի իմ սիրելի. ընդ որս և մեք ցնծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր։

Եւ յառաջ քան զՏէր յերկնից [illegible] [illegible], և ելանեն խաչն և աւետարանն, ճրագեղինօք և խնկօք և ամենայն զարդուք ՚ի դուռն։ Եւ ՚ի գնալն ասեն

Տէր յերկնից Դ.Զ։

Ա. Քրիստոս Աստուած մեր շնորհեա մեզ ընդ Պետրոսի և ընդ որդւոցըն Զեբեդեայ. արժանաւորել քում աստուածային տեսլեանդ։ Համբարձցես ըզմեզ Տէր առաւել քան ըզգագաթն զԹաբօրական ըզլեառըն. յերկնաւորըն և յիմանալի խորանդ։ Վասն որոյ և մեք ըզքանկանելիս մեր յարմարեսցուք քեզ հոգեւորական տաղաւար. ով միայնդ մարդասէր և փրկիչ։

Բ. Այսօր ըզխորհուրդ քո կըրկնակի գալըստեանն. աշակերտաց քոց յայտնեցեր Քրիստոս ի Թաբօր լերինն։ Փառք Հօր։ Այսօր ըզփրկական քո վասն աշխարհի ըզմահ վըկայեալ. քեզ երեւեցան Մովսէս և Եղիա։ Այժմ և միշտ։ Սըրբեա Տէր զմեղուցեալ քո ծառայիցըս ըզգայարանս. և շնորհեա տեսանել ըզքեզ և լսել ըզհայրական ըզձայնն. եթէ դա է Որդի իմ սիրելի։

Եւ դադարեն ՚ի տեղւոջ իւր պատշաճաւոր, մինչև ասէ Աստուածն երգ. Քո են երկինք. 146. Քրղ. Ասասցուք յամ գանձ.

Ետ տաղ Եղանէն 'ի Եպիփանութեան տեղէ և տօնէն
Շարական ԱԶ:

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր: 608:

Առ Սաղմոս ՂԷ:

Կց· Լերինք ցնծասցեն առաջի Տն, զի գայ և հասեալ է Տր ի դատել զերկիր:

Փխ· Օրհնեցէք զՏր յօրհնութի նոր· զի սքանչելիս արար:

Փրկեաց նմա աջ իւր· և բազուկ սր իւր:

Ցոյց Տր զփրկութի իւր· առաջի ազգաց յայտնեաց զարդարութի իւր:

Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ· ճշմարտութբ իւրով զտունն Իսրայելի· և տեսին ամ ծագք երկրի զփրկութի Այ մերոյ:

Աղաղակեցէք առ Տր ամ երկիր· օրհնեցէք՝ ցնծացէք և սաղմոս ասացէք:

Սաղմոս ասացէք Այ մերում օրհնութեամբ· օրհնութբ՝ և 'ի ձայն սաղմոսաց:

Ի ձայն օրհնութե կառաց փողոյ· օրհնութբ ցնծութբ և 'ի ձայն եղջեր փողոյ· աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն:

Խռովեսցի ծով լրիւ իւրով՝ տիեզերք և ամ բնակիչք նր· և գետք ծափս հարցեն 'ի միասին ձեռամբ:

Լերինք ցնծասցեն առաջի Տն, զի գայ և հասեալ է Տր 'ի դատել զերկիր:

Դատէ զաշխարհս արդարութբ· և զժողովուրդս իւր ուղղութբ:

Ընթերցուած յԱռակաց: ԺԱ· 9:

Ուրախ լեր երիտասարդ 'ի մանկութե քում· և զուարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուրս մանկութե քոյ· և գնա դու 'ի ճանապարհս սրտի քոյ անբիծ, և 'ի տեսիլ աչաց քոց· և գիտասցես թէ վասն այսր ամենայնի ածցէ զքեզ Ած 'ի դատաստան: Եւ 'ի բաց արա զբարկութի 'ի սրտէ քումմէ, և

անցս զչարութիւն ՚ի մարմնոյ քումմէ. զի մանկութիւն և անմտութիւն ընդունայնութիւն է։ Եւ յիշեա՛ դու զայն որ հաստատեաց զքեզ յաւուրս մանկութեան քոյ. մինչև հասեալ իցեն աւուրք չարութեան, և հասցեն ամք, յորս ասասցես, թէ ոչ են կամք իմ ՚ի դոսա։ Մինչ չև խաւարեալ իցեն արեգակն և լոյս՝ և լուսին՝ և աստեղք. և դարձցի ամպ զկնի անձրևաց։ Յաւուր յորում շարժեսցին պահապանք տանն, և թիւրեսցին արք զօրութեանց. և դատարկացան աղօրիք՝ զի նուաղեցան. և խաւարեսցին որք տեսանեն ընդ ծակս։ Եւ փակեսցեն զդրունս ՚ի հրապարակս ՚ի տկարութէ ձայնի աղօրւոյն, և յարիցեն ՚ի ձայն հաւուն, և նկուն լիցին դստերք երգոց։ Եւ ՚ի բարձունս հայեսցեն. և ապշութիւն ՚ի ճանապարհին. և ծաղկեսցի նշին, և թանձրասցի մորախն, և տարածեսցի կապարն. զի գնաց մարդ ՚ի տուն իւր յաւիտենից, և շուրջ եղեն կոծօղք ՚ի հրապարակս։ Մինչ չև կործանեալ իցէ լար արծաթոյն, և խորտակեալ մանեակ ոսկւոյն. և մանրեալ սափորն յաղբերն, և ընկրկեալ անիւն ՚ի գուբն։ Եւ դարձցի հողն յերկիր՝ ուր և էրն, և հոգին դարձցի առ Ած, որ ետ զնա։ ԺԲ. 7։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԼԳ. 20։

Ահաւասիկ Սիոն քաղաք փրկութեան մերոյ. աչք ձեր տեսցեն զԵրուսաղէմ քաղաք մեծացեալ, խորանք որ ոչ շարժեսցին. և մի շարժեսցին ցիցք խորանի նորա յաւիտեանս ժամանակաց, և մի խզեսցին ապաւանդակք նորա. զի անուն Տն մեծ է ՚ի ձեզ։ Ձեզ լիցի տեղին յորում գետքն և ջրադարձք լայնք և ընդարձակք՝ ոչ երթիցես ընդ այն ճանապարհ, և մի գնասցեն նաւք քո վարեալք. զի Ած իմ մեծ է, և ոչ արասցէ զանց զինև. Տր հայր մեր. Տր դատաւոր մեր. Տր իշխան մեր. Տր թագաւոր մեր. Տէր փրկիչ մեր՝ և նա փրկեսցէ զմեզ։ 22։

Պետրոսի առաքելոյն ի կաթուղիկեայց երկրորդ Թղթոյն է ընթերցուածս։ Ա. 12։

Որով պատրաստեցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վս սոցին, թէպէտ եւ գիտակացն եւ հաստատելոցն եկեալ հասեալ ճշմարտութեն։ Բայց իրաւունս համարիմ մինչդեռ եմ 'ի մարմնի աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք։ Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս. որպէս եւ Տէր մեր Յս Քս եցոյց ինձ։ Այլ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել. զի եւ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այսոցիկ։ Բայց զի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏն մերոյ Յսի Քսի զզօրութի, եւ զգալուստն. այլ մեզէն եղեալ ականատեսք նր մեծութեն։ Բայց առեալ յԱյ հօրէ զփառս եւ զպատիւ. եկեալ այնպիսի բարբառոյ՝ մեծվայելչութեն փառաց անտի. եթէ դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։ Այլ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք 'ի սր լերինն։ Այլ ունիմք հաստատագոյն զբանսն մարգարէականսն, որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք. իբրեւ ճրագի՝ որ տայցէ լոյս 'ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ տիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն ծագեսցէ 'ի սիրտս ձեր։ 19։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Բարձրութիւնք լերանց նր են. նր է ծով եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նր ստեղծին։

Որթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ Ը. 27։

Տէրն մեր Յս Քս

Ել Յս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ. եւ 'ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն 'ւ ասէր. զո՞ ասեն զինէն մարդիկն՝ թէ իցեմ։ Նոքա ետուն պատասխանի եւ ասեն՝

զՅովհաննէս մկրտիչ, և այլք զԵղիա, և այլք՝ զմի ոք 'ի մարգարէից անտի: Ասէ ցնս. իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ: Պատասխանի ետ Պետրոս, և ասէ ցնա. դու ես Քն: Եւ սաստեաց 'ի նոսա՝ զի ումեք մի՛ ասիցեն զնմանէ: Եւ սկսաւ ուսուցանել զնս, թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, և անարգել յերիցանց և 'ի քահանայապետից և 'ի դպրաց, և մեռանել. և յերիր աւուր յառնել: Եւ համարձակ զբանն խօսեցաւ: Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա: Եւ նա դարձաւ ետես զաշակերտսն. սաստեաց Պետրոսի և ասէ. երթ յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս դու զԱստուծոյն՝ այլ զմարդկանս: Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. եթէ ոք կամի գալ զկնի իմ՝ ուրասցի զանձն իւր, և բարձցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ: Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վն աւետարանին, ապրեցուսցէ զնա: Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ ամ շահեսցի, և զանձն իւր տուժեսցի: Կամ զինչ տացէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ: Զի որ ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ 'ի շնացող և 'ի մեղաւոր ազգիս յայսմիկ, և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք հօր իւրոյ և հրեշտակաց սրբոց: Եւ ասէ ցնս. ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւն Այ եկեալ զօրութբ: Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղև առաջի նոցա: Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել: Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յսի: Պա-

տասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցՅս. ռաբբի՝ բարւոք է մեզ աստ լինել. եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի: Քանզի ոչ գիտէր զինչ խօսէր, զի զարհուրեալ էին: Եւ եղեւ ամպ մի հովանի 'ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյ անտի՝ եւ ասէ. դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք: Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅս ընդ իւրեանս: Եւ մինչդեռ իջանէին 'ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց յորժամ որդի մարդոյ 'ի մեռելոց յարիցէ: Եւ նոքա զբանն 'ի միտ ունէին, եւ խնդրէին ընդ միմեանս՝ թէ զինչ իցէ 'ի մեռելոցն յառնել: Հարցին ցնա եւ ասեն. զինչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարտ է գալ: Նա պատասխանի ետ նց եւ ասէ. Եղիա նախ եկեալ յարդարեսցէ զամ. իսկ զիարդ գրեալ է զորդւոյ մարդոյ. զի բազում ինչ չարչարեսցի եւ անարգանեսցի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ Եղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան. որպէս եւ գրեալ է վասն նորա: Թ. 12:

Սարկաւագն ասէ. Վասն 'ի վերուստ խաղաղութեան: Եւ [illegible]: Օրհնեա Տէր. Ամ. խաչիւ: Աղ. Պահպանեա: Եւ 'ի [illegible] Շարական

Մանկունք Գ.Կ. ՄՏ:

Երինջք ցընծասցեն առաջի քո Տր. որ երեւեցար ի փառս Աստուծոյ Հօր. միւսանգամ գուշակելով զգալուստն. վասն որոյ աստուածային լուսով. զարդարեալ ըզքեզ հրաշալի ձայնիւ. ընդ երկնային նոյն երկրածինքս ըզքեզ բարեբանեմք ըզթագաւոր լերինն: Օր տեսեալ սոսկալի զանճառական լուսոյն ծագումն. յոյլա-

կերպելոյն քո Քրիստոս Որդի Աստուծոյ. առաքելոց եւ մարգարէիցըն պակուցեալ ըղձարհուրեցան. վասն որոյ աստուածային լուսոյն. զարդարեալ ըզքեզ հրաշալի ձայնիւ. ընդ Երկնայինսն Երկրածինքս ըզքեզ ըբարեբանեմք ըզԹաբօր լերինն:

Որ զանճառելի խորհուրդ Երրորդութեանդ. Սիմոնի վիմի ծանուցեր. Երրակի տաղաւարացըն յօրինմամբ. Եւ սիրելի ի Հօրէ վըկայեալ ճըշմարիտ միածին Որդի. վասն որոյ աստուածային լուսոյն. զարդարեալ ըզքեզ հրաշալի ձայնիւ. ընդ Երկնայինսն Երկրածինքս ըզքեզ ըբարեբանեմք ըզԹաբօր լերինն:

Զ. Խէ Նորաստեղծեալ: [illegible] Աղ. ԿՑ. Երինք ցնծացեն: [illegible] տեղծեալն: Քրզ. Խնդրեսցուք: Կեցո: Ա. Զ. Բռամ ամենազօր և հրաշալի պայծառակերպութեանդ:

---

ՏԵՐԵԿՈՅԻ

[illegible]

ԿՑ. Երինք ցնծա: Փխ. Օրհնեցէք զՏր: 615: Գ.էր [illegible]:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա.

Քո են երկինք և քո է երկիր. զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր:

Որթիւ

Արքս Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գլ. 14:

Ա. Տէրն մեր ՅՍ ՔՍ

Եւ իբրև եկին 'ի ժողովուրդն, մատեաւ այր մի 'ի ծունր իջանէր և ասէր. Տէր ողորմեաց որդւոյ

*խմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի 'ի հուր՝ և երբեմն 'ի ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել: Պատասխանի ետ Յս և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առ իս: Եւ սաստեաց 'ի նա Յս՝ և ել 'ի նմանէ դևն, և բժշկեցաւ մանուկն 'ի ժամէն յայնմանէ: Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: Եւ նա ասէ ցնս. վս թերահաւատութե ձերոյ: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչինչ անհնարին լիցի ձեզ: Բայց այս ազգ ոչ իւիք ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք: 20:*

Եւ ապա ելանեն խաչիւ և Աւետարանաւ և ամենայն պարգևօք 'ի Տաճար, ասելով

Շարական ԱՁ:

*Որ 'ի լերինն այլակերպեցաւ ցուցեր:* 608:

Եւ է ճանապարհին յամէն հանգիստ տօնի մի աւետարան կարդան:

*Որթիւ*

*Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ը. 39:*

*Տէրն մեր Յս Քս*

*Եւ ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութի ԱՅ եկեալ զօրութբ: Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղև առաջի նոցա: Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել: Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ Յսի: Պա-*

տասխանի ետ Պետրոս եւ ասէ ցՅս․ րաբբի՝ բարւոք է մեզ աստ լինել․ եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի․ Քանզի ոչ գիտէր զի՞նչ խօսէր․ զի զարհուրեալ էին։ Եւ եղեւ ամպ մի հովանի ՚ի վերայ նոցա․ ձայն եղեւ յամպոյ անտի եւ ասէ․ դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Եւ յանկարծակի հայեցեալ այսր անդր ոչ եւս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅս ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի ումեք պատմեսցեն զոր տեսին, բայց յորժամ որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ։ Եւ նոքա զբանն ՚ի միտ ունէին եւ խնդրէին ընդ միմեանս թէ զինչ իցէ ՚ի մեռելոց յառնել։ Հարցին զնա եւ ասեն․ զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն եթէ նախ Եղիայի պարտ է գալ՝ Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ․ Եղիա նախ եկեալ յարդարեսցէ զա՛մ․ իսկ զիա՞րդ գրեալ է զորդւոյ մարդոյ․ զի բազում ինչ չարչարեսցի եւ անգոսնեսցի։ Այլ ես ասեմ ձեզ․ եթէ Եղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան․ որպէս եւ գրեալ է վասն նորա։ Թ․ 12։

Դարձեալ շաբաթն Դ․Զ։ Ի Թաբօր։ 613։

Աւթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Է․ 1։

Տէրն մեր Յս Քս

Եւ յետ այսորիկ շրջէր Յս ՚ի Գալիլեա․ քանզի ոչ կամէր ՚ի Հրէաստանի շրջել զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել։ Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց։ Ասեն ցնա եղբարքն նր․ գնա աստի եւ երթ ՚ի Հրէաստան․ զի եւ աշակերտքն քո տեսցեն զգործս քո՝ զոր գործես։ Զի ոչ ոք է՝ որ ՚ի ծածուկ ինչ գործէ՝ եւ խնդրէ ինքն համարձակ լինել․ եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի։ Քանզի եւ եղբարքն իւր չէին հաւատացեալ ՚ի նա։ Ասէ ցնս Յս․ ժամանակ իմ չեւ է

հասեալ. բայց ձեր ժամանակ յամ ժամու պատ-
րաստ է։ Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն
իւր չարութեան են։ Դուք երթայք ՚ի տօնն յայն, ես ոչ
երթամ ՚ի տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լցեալ։
Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց անդէն ՚ի Գալիլեա։
Իբրեւ ելին եղբարքն նորա, ապա եւ ինքն ել ՚ի տօնն,
ոչ յայտնի, այլ իբրեւ ՚ի ծածուկ։ Եւ Հրեայքն
խնդրէին զնա ՚ի տօնի անդ՝ եւ ասէին, ուր իցէ նա։
Եւ քրթմնջիւն էր զնմանէ ՚ի ժողովուրդսն. կէսքն
ասէին՝ թէ բարւոք է. այլք ասէին. ոչ, այլ մոլո-
րեցուցանէ զժողովուրդն։ Եւ ոչ ոք համարձակ
խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին Հրէից։ 13։

Յար. Մասն ՚ի վերուստ։ Եւ [illegible]
[illegible]։

Յար. Մի խաչիւ։ Ող. Փառաւորեա։ Եւ [illegible]
[illegible]. Եւ ես
խաղաղութեան։ Յահանայն Օրհնութիւն եւ փառք։
Եւ [illegible] եւ [illegible] Խոնարհեցո եւ
Ապրեցո։

Աւետարան Յարութեան. ԻԲ. Տէր թագաւորեաց։ 214։

Յարութ. Ասասցուք [illegible]։

Հարցումն ԴԿ։

Այսօր ի լերինն Թաբօր ցուցեր ընտրելոց քոց
ի փառաց քոց Որդի Աստուածոյ. օրհնեմք
զքեզ ի փառս Հօր. որ ես Տէր կենդանեաց
եւ մեռելոց։ փառք Հօր։ Այսօր յայտնեցար ա-
ռաքելոցն. ի խօսելն Մովսէսի եւ Եղիայի. վասն
ելիցն քոց յԵրուսաղէմ. Որդի Աստուածոյ.
օրհնեմք զքեզ ի փառս Հօր. որ ես Տէր
կենդանեաց եւ մեռելոց։ Այժմ եւ միշտ։ Այսօր
եւ բարբառ ի վերուստ յԱստուծոյ Հօրէ. որ
քո հրեշտակաց յայտարարեալն. ասէ դա է իմ Որդի՝

զմիմ լռեալ լռութ. օրհնեմք զքեզ ի փառս Հօր. որ ես Տէր կենդանեաց եւ մեռելոց:

ՕՐՀՆԷ ՀԱՄԲԱՐՁՄԱՆՆ ԹԱՐԳՄ. Սաղմոս խաղաղ: Առաջին Հայր գթած: Առաւօտ է լոյս:

ՍԱՂՄՈՍ ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ ոչ պակասեսցի:

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, եւ առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վն անուան իւրոյ:

Թէպէտ եւ գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես:

Յուպ քո եւ գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո ոյց անապակ արբեցոյց զիս:

Ողորմութի քո Տր զհետ իմ եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան Տն ընդ երկայն աւուրս:

Ընթերցուած յԵլից: ԻԴ. 12:

Եւ ասէ Տէր ցՄովսէս. ել առ իս 'ի լեառնն, եւ անդ լինիջիր, եւ տաց քեզ տախտակս քարեղէնս եւ օրէնս եւ պատուիրանս զորս գրեցի լինել նց օրէնսդիր: Յարեաւ Մովսէս եւ Յեսու պաշտօնեայ նր, եւ ելին 'ի լեառնն Այ. եւ ասէ ցծերսն, դադարեցէք այդր մինչեւ դարձցուք առ ձեզ. եւ ահա Ահարոն եւ Ովր ընդ ձեզ են, եթէ ուրուք դատաստան ինչ լինիցի, երթիցեն առ նոսա: Եւ ել Մովսէս 'ի լեառնն եւ ծածկեաց ամպն զլեառնն, եւ իջին փառքն Այ 'ի լեառնն Սինա, եւ ծածկեաց զնա ամպն զվեց օր: Եւ կոչեաց Տէր զՄովսէս յաւուրն եօթներորդի 'ի միջոյ ամպոյն. եւ տեսիլ փառացն Տն իբրեւ զհուր բորբոքեալ 'ի վր գլխոյ լերինն յանդիման որդւոցն Իսրայելի: Եւ եմուտ

Մովսէս 'ի մէջ ամպոյն, և ել 'ի լեառնն, և էր Մովսէս 'ի լերին անդ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։ 18։

Ընթերցուած յԵրրորդ Թագաւորութեանց։ ԺԹ. 11։

Եւ ասէ, ելցես դու վաղիւ և կայցես 'ի լերինդ անդ առաջի Տեառն, և ահա Տէր անցցէ, և հողմ մեծ ուժգին որ զլերինս քակիցէ և զվէմս խորտակիցէ առաջի Տեառն և ոչ 'ի հողմն Տէր. և յետ հողմոյն շարժումն, և ոչ 'ի շարժմանն Տէր. և յետ շարժմանն հուր, և ոչ 'ի հուրն Տէր, և յետ հրոյն ձայն մեղմոյ օդոյ, և անդ Տէր։ Եւ եղև իբրև լուաւ Եղիա՝ ծածկեաց զերեսս իւր մաշկեկաւն. և ել և եկաց 'ի ներքոյ այրին. և ահա բարբառ առ նա և ասէ, զի՞ ես դու աստ Եղիա։ Եւ ասէ Եղիա, Նախանձեցայ զնախանձ Տեառն ամենակալի, զի թողին զուխտ քո որդիքն Իսրայելի, զսեղանս քո քակեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով, ես միայն մնացեալ եմ, և խնդրեն զանձն իմ առնուլ զնա։ Եւ ասէ ցնա Տէր, գնա և դարձիր զճանապարհ քո, և երթիցես զճանապարհ անապատին Դամասկեայ, և երթիցես և օծցես զԱզայէլ 'ի թագաւոր Ասորւոց։ Եւ զՅէու որդին Նամեսսեայ 'ի թագաւոր 'ի վերայ Իսրայէլի. և զԵղիսէէ որդի Սափատայ յԱբելմաուլայ օծցես 'ի մարգարէ փոխանակ քո։ 16։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ Խ. 9։

Ել 'ի վե՛ր լերինդ բարձու՝ աւետարանիչդ Սիոնի. բարձրացո՛ զօրութ̃բ զբարբառ քո՝ աւետարանիչդ Երուսաղէմի, բարձրացուցէք, մի՛ երկնչիք. ասա՛ ցքաղաքդ Յուդայ։ Ահաւասիկ Ա̃ծ ձեր՝ ահաւասիկ Տ̃ր, Տ̃ր գայ զօրութ̃բ և բազուկն տէրութ̃բ իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր, և գործք առաջի ն̃ր։ Իբրև հովիւ մի հովուեսցէ զխաշինս իւր. և բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս, և 'ի ծոց իւր

կրեսցէ զնոսա, և մխիթար լիցի յղեաց։ Ո՞չա-փեաց ափով իւրով զջուրս. և զերկինս թզաւ, և զերկիր ա՛մ քլաւ. ո՞ կշռեաց զլերինս կշռով, և զդաշտս կշռորդօք։ Ո՞ գիտաց զմիտս Տն, և ո՞ եղև նմա խորհրդակից՝ եթէ խելամուտ արասցէ զնա։ Կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ և արար զնա խելամուտ. կամ ո՞ եցոյց նմա զդատաստան՝ և զճանապարհ իմաստութե՛ն, կամ ո՛ ետ նմա փոխ յառաջագոյն՝ և հատուցանիցէ նմա։ Եթէ ա՛մ հեթանոսք իբրև զկաթիլ մի 'ի դուլէ են, և իբրև զմէտ մի 'ի կշռոց համարեցան, և իբրև շիթք 'ի բերանոյ համարեսցին։ Եթէ Լիբանան չէ բաւական յայրումն, և ա՛մ չորքոտանիք չեն բաւական յողջակէզս. և ա՛մ հեթանոսք ոչինչ են, և յոչինչ համարեցան նմա։ 17։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ըն-թերցուածս։ ԺԲ. 18։

Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի՝ որ հրովն վառեալ էր, և միգով, և մառախղով, և խաւարաւ, և մթով։ Ուր փողն հնչէր և բարբառ պատգամացն, ուստի որք լուանն հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ նոսա բանն։ Քանզի ոչ հանդարտէին հրամանին, թէպէտ և գազան մերձենայր 'ի լեառն՝ քարկոծ լինէր։ Եւ այնպէս ահագին էր տեսիլն. զի և Մովսէս ասէր. եթէ զահի հարեալ եմ, և դողամ։ Այլ մատուցեալ էք 'ի Սիոն լեառն և 'ի քաղաք Այ կենդանւոյ յԵրէմ՝ յերկինս. և 'ի բիւրաւոր բանակս հրեշտակաց. և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս. և առ դատաւորն ամենեցուն Այ. և յոգիս արդարոց կատարելոց. և 'ի նորոց կտակարանաց միջնորդն Յս. և 'ի հեղումն արեանն, որ առաւել խօսի քան զԱբէլին։ Զգոյշ լերուք գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր.

ծրչափ ես առաւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, եւ այժմ խոստացեալ է՝ եւ ասէ. միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր այլ եւ զերկինս. այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն՝ իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն։ 27։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Քո են երկինք եւ քո է երկիր, զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր։

Որթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու։ Թ. 18։

Տեառն մերոյ Յնի Քնի

Եւ եղեւ 'ի կալն նորա յաղօթս առանձինն, էին ընդ նմա եւ աշակերտքն նորա. եհարց զնոսա եւ ասէ. զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ։ Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն. զՅովհաննէս մկրտիչ, եւ այլք զԷղիա, իսկ այլք թէ մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ։ Ասէ ցնոսա. դուք զո՞վ ոք ասէք զինէն, թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս եւ ասէ. զՔՆ ԱՅ։ Նա սաստեաց 'ի նոսա, եւ պատուիրեաց մի ումեք ասել զայն. եւ ասէ, թէ պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարել եւ անարգել 'ի քահանայապետից եւ 'ի ծերոց եւ 'ի դպրաց, եւ սպանանել՝ եւ յերիր աւուր յառնել։ Եւ ասէր առ ամենեսին. եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն՝ եւ առցէ զխաչ իւր հանապազ՝ եւ եկեսցէ զհետ իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր վն իմ՝ կեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։ Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ եւ Հօր՝ եւ հրեշտակաց սրբոց։

Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք 'ի դոցանէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն ԱՅ: Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել 'ի լեառն կալ յաղօթս: Եւ 'ի կալն նմա յաղօթս եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ, և փոխեցաւ հանդերձ նր՝ և եղև սպիտակ փայլուն: Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա. որ էին Մովսէս և Եղիա, երևեալ փառօք. և ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ: Իսկ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝ զարթեան, տեսին զփառսն նորա՝ և զերկուս արսն որ կային առ նմա: Եւ եղև 'ի մեկնելն նոցա 'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅս. վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի՝ քեզ, և մի՝ Մովսեսի, և մի՝ Եղիայի, և ոչ գիտէր զինչ խօսէր: Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հովանի եղև 'ի վերայ նոցա. և երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն: Ձայն եղև յամպոյն և ասէ. դա է որդի իմ ընտրեալ, դմա լուարուք: Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յս միայն. և ինքեանք լռեցին. և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչինչ՝ յորոց տեսինն: 36:

Յետ այսորիկ ասէ Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏէր աղաչեսցուք Երէցն. Եւ գ. Տէր ողորմեա 'ի Ըն- Սարկաւագն Եւս և խաղաղութեան: Քահանայն Օրհնութիւն և փառք:

Եւ ապա խորհրդոյն աղօթս Ս. Բարսղի հայրապետին արարեալ վասն Այլակերպութեանն Քրիստոսի:

Օրհնեալ ես Տր Այ ամենակալ՝ Որդի և Բանդ Այ՝ էակից և արարչակից Հօր. գոյակից և համաբնակից Հոգւոյդ: Անայլայլելի, անփոփոխելի, անսահմանելի, անպարագրելի, անհասանելի, անըմբռնելի: Անպատճառ, անժամանակ, անմահ, ան-

ճառելի, անպատմելի, անբաւելի, ծնունդ անթար-
գմանելի, ծոցածին Որդի Հօր անսահման և Բան,
և փառակից ընդ Հոգւոյդ, իմաստութի և զօրութի.
ճառագայթ և կերպարան, ըստ էութեանդ զու-
գեալ. հաւասարութի և գործակցութի ընդ Հօր
և ընդ Հոգւոյդ. մի յերրեակ կատարեալ անձանց
'ի մի բնութի 'ի ընդ Երրորդութեդ ճանաչիս. 'ի
հրեղինաց և 'ի հողեղինացս՝ Աձ և Տր ծանուցար
կենդանեաց և մեռելոց. Աձ աստուածոց, և Տէր տե-
րանց՝ որ միայն ունիս զանմահութի բնակեալ 'ի
լոյս անմատոյց: Որ յոչընչէ բանիւ քով ածեր 'ի
լինելութի զամ արարածս հաճութի Հօր՝ և գոր-
ծակցութի Հոգւոյդ արարչագործեալ զերկինս և
զերկնայինսն. զերկիր և որ 'ի սմա են կենդա-
նիք առկայացեալ: Հաստիչ լուսոյ և խաւարի,
և բովանդակիչ ամ երևելեաց և աներևութից:
Զերկինս գործականեցեր անճառապէս ջրային
սեռաձեւ ամպայարմար՝ իբրև զառագաստ ինչ
տարածեալ. ընդ յօդս հովանաւորեալ ամի որ
ընդ երկնաւս իցեն. և ջուրն որ 'ի վերոյ եր-
կնից՝ որ ամենագէտ հաստողէդ հաստատեցան,
կոչի հաստատութի. յորոյ վն հանգչի անբաժա-
նելի ընդ Երրորդութիդ: Եւ ըստ բաժանելոցն իւ-
նական զայքն բազմահոյլ զուարթունքն՝ որ զեր-
կինս տոլցեալ ունին. փառաբանիչս ամենասբ Եր-
րորդութեդ զնս յօրինեալ: Եւ զլուսաւորսն մասն
ինչ յառաջին լուսոյն գոյացելոյ թաղանթապա-
տեալ. իբրև յաման ինչ արկեալ և կառուցեալ 'ի
պարունակս երկնի. զի անդադար ընծայեցուսցեն
երկրի զարարչիդ իւրեանց զխնամարկութին: Որ
զշրջանս եղանակաց որ յարեգակնէ և 'ի լուսնոյ
և յաստեղաց ծանուցեալ լինի, նաև զերկիր ամ
հրաշատեսակութի յօրինեցեր լերամբք և բլրօք և
զանազան դաշտօք և ինքնաբոյս բուսովք և բե-
րովք լցուցեր, առ 'ի բնակութի լինել գազանաց

և անասնոց և սողնոց և թռչնոց: Զի անխափան յերկրէ մատակարարեալ վայելեսցեն, որ կերակրես զամենեսեան քաղցրութ՟բ կամօք քովք: Եւ զծովս 'ի քումմէ հրամանէդ որոշեալ 'ի տեղիս տեղիս ոչ ունայն և թափուր թողեր. այլ և զն՟ա լցուցեր բազմազան կենդանեօք: Զի ամենայնի երևեսցիս Տ՟ր և արարիչ և դատաւոր և դարմանիչ բոլորեցունց եղականացս: Եւ Տ՟ր և թագաւոր 'ի վ՟ր այսոցիկ զմարդն արարեր. զոր առեալ հող ստեղծեր կենդանի փառազարդ և լուսազգեաց գեղազանութ՟բ, երևակի և պայծառ տեսակաւ, և զիշխանական պատկեր պարգևեցեր նմա շնորհօք. իշխան և իշխեցօղ 'ի վ՟ր երկրածնացս զնա կացուցեր: Եւ եդեր զնա 'ի դրախտին փափկութ՟ն որ 'ի քումմէ հրամանէդ տնկեցաւ անմահ և անթառամելի 'ի վայելումն նմա տուեալ: Կալ միշտ 'ի մէջ անմահ տնկոցն զանմահութ՟ի զգեցեալ. միայն պահել գեղեալ պատուիրանն՝ չուտել 'ի ծառոյն գիտութ՟ն բարւոյ և չարի: Զի և հրեշտակաց առաւել սարսափելի և սխրալի ցուցեր զպատիւ մարդոյն քան զերեանցն: Աստի նախանձեալ ընդ պատիւ մարդոյն բանսարկուն սատանայ՝ որ յայնժամ զհրեշտակականն ունէր զաստիճան, զի առաւել քան զինքն էր 'ի գերանակ փառսն և 'ի պայծառութ՟իս. մտեալ այնուհետև յիմաստուն գազանն այն՝ և նովաւ խօսէր ընդ նախաստեղծ կուսին որ անկիրթ էր բարուց նորա, զի նովաւ դիւրաւ պատրեսցէ զզուգակիցն նորա զԱդամ: Եւ ճաշակմամբն նոցա 'ի պտղոյն ուստի հրաման առին չուտել, դիւրաւ մերկացոյց 'ի նոցանէ զմեծահրաշ զարդարանսն ստախօսութ՟ն պատրեալք. ա՟ծք լինիցիք, ասէ, ճանաչել զբարի և զչար, ա՟ծութեն ոչ հասին այլ զբարին զչարն ողորմելիքն ծանեան: Աստի մերկացեալ 'ի փառացն և յանմահութ՟էն որոշեալք ողորմելի և եղկելի տեսակաւ պատառատուն տերևովն ծածկելով

զմերկութիւն խրեանց յամենագիտէդ թագչել կամելով ընդ վարսաւոր տնկովն պատճառելով զպատճառս մեղաց: Որոց արտամերժեալք յանմահացու դրախտէն արտաքոյ բնակելով տաժանելի և տարակուսելի կենօք: Եւ հրաման առեալ այնուհետև 'ի քումմէ բարերարութենէդ տրտմութ̃բ ծնանել և քրտամբք երեսաց ուտել զհաց և դառնալ անդրէն 'ի հող՝ ուստի առեղծան: Ս̃ որոյ թագաւորեալ մահ 'ի վ̃ր մարդկային բնութեանս ծառայելով մահու մեղաց և բանսարկուին կամացն հետևեալ 'ի չարին կամսն 'ի պէսպէս կռապաշտութիւս զմարդիկ ընկղմեաց, մինչև անուանեալ արարչական քո ս̃բ անուանդ 'ի վ̃ր քարանց և փայտից և ոսկերաց մեռելոտեաց. վ̃զի յոյժ սորջացեալ մեկնեցաւ քո նախախնամութիւնդ 'ի մերմէ բնութենէս, վ̃ն այնորիկ որդիք մարդկան դրաւեալք 'ի դժոխս և 'ի ստուերս մահու նստէին: Ապա խանդաղատեալ քո արարչական գթութիւնդ տեսանելով 'ի տառունս մեղաց պատեալ զքո անարատ ձեռինդ ստեղծուածս՝ ոչ անտես արարեր: Այլ 'ի յայց եկեալ նախախնամական սիրով 'ի դարս և 'ի ժամանակս երևեալ ետուր օրէնս, առաքեցեր մարգարէս որք կանխաւ յառաջագոյն աւետարանեցին զքո խոնարհումն 'ի մեր բնութիւս: Եւ վ̃ն զի յոյժ կարևոր խոցեալ էաք 'ի բանսարկուէն, ոչ օրէնք և ոչ մարգարէք կարացին փրկել 'ի մահու զօրութէ զմարդկային բնութիւս, այլ կարօտացաք քո մարդանալոյդ և մեռանելոյդ: Եւ վ̃ն զի յոյժ ողորմած ես և մարդասէր երկայնամիտ և քաղցր, ոչ խայաւ թողեր յապականութե զմեր բնութիւնս, ոչ ըստ մեղաց մերոց արարեր մեզ և ոչ ըստ անօրէնութե մերում հատուցեր մեզ: Այլ խոնարհեցուցեալ զերկինս իջեր 'ի յանարատ արգանդ ամենասուրբ կուսին Մարիամու առաքմամբ Հ̃օր և հաճութ̃բ ս̃բ Հ̃ոգւոյդ: Եւ զանխառնելի ա̃ծութիւնդ նոր խառնմամբ

խառնեցեր 'ի մեր բնութիւս: Եւ զանշօշափելի էաւորութիդ 'ի մարմնի թանձրացուցեալ լինելով Որդիդ Ա՛յ Որդի կուսին: Եւ անժամանակդ վ՛ն մեր բովանդակեցար ինննամսեայ յորովայնի կուսին անհաս տնօրէնութի: Եւ յետ այնորիկ ծնար անճառապէս յամենօրհնեալ Ա՛ծածնէ: Ծնունդ սբ և առանց արատոյ որ քում ածութենդ է գիտելի և ոչ մարդկան հասանելի: Եւ տղայական կերպարանաւ 'ի գիրկս ամենասբ կուսին բազմելով զկուսականն դիեցով զկաթն, սնար որպէս մանուկ մինչև յարբունս հասակի ընդ մարդկան շրջելով՝ որպէս զմի 'ի մարդկանէ: Եկիր երեսնամեայ 'ի Յորդանան գետն Ա՛ծ՝ որ բառնաս զմեղս աշխարհի կատարեալ հասակաւ ադամեան մարմնով զի զԱդամայ նեխեալ վէրսն լուասցես: Մկրտեալ 'ի Յորդանան 'ի Յովհաննէ ամլորդւոյն և 'ի միոյ բնութենէդ քումմէ 'ի Հօրէ վկայեալ սիրելի Որդի և Ա՛ծ կատարեալ: Ուստի և աղաւնակերպ իջմամբ Հոգւոյդ ս՛յ 'ի վ՛ր քոյ որ անմեկնելին է 'ի քէն բացայայտեաց տեսողացն զքեզ կատարեալ Ա՛ծ եկեալ 'ի խնդիր կորուսեալ ազգի մարդկան: Զի որք վերստին ծնանին 'ի կենդանի ջրոյն ուր ածախառն մարմինդ քո թաղեցաւ մկրտութիւն, զնոյն կատարեալ Հոգի շնորհաց առաքես 'ի վերստին ծնունդս մեր նոցին աներևոյթ տեսլեամբ 'ի լինել մեզ Որդիս Ա՛յ և ժառանգակից և մասնակից Ա՛ծութենդ: Եւ ապա անտի սկիզբն արարեալ առնել և ուսուցանել զմերոյ փրկութենս աւետարանութիւ, և ուսուցեր մեզ կալ հակառակ ընդդէմ հնարից չար դիւին որ մարտեաւ ընդ քեզ զկնի մկրտութեն: Զի որ ընդ Ադամայ մարտեաւ յայնժամ յԱ՛յդ կործանեցաւ յայնցանէ յորոց վ՛ր կոչեցեալ է անուն քո. զի զորոյ զփորձ առեր կարողես և փորձանաւորացս օգնական լինել. և շրջելով քո 'ի վ՛ր երկրի կերպիւ մարդկան և ճշմարիտ

մարմնազգեցութե՟ բովանդակապէս զմարդկային կերս 'ի քեզ կրեցեր զատ և որիշ 'ի մեղաց: Նացայայտելով զա՟ծահրաշ զօրութի՟դ առ ամենեսին 'ի պէս պէս ցաւս և յախտս որ 'ի մարդիկ, և իշխանական վարդապետութե՟ զբազումս արարեր քեզ աշակերտս: Եկեր ապա 'ի տեսիլ և 'ի յայտնումն ա՟ծութեդ և զկերպն զոր ցանկային գոնէ ընդ աղօտ տեսանել հրեշտակք այսօր 'ի մարմնի քում ցուցեր աշակերտաց քոց 'ի Թաբօր լերինն: Առեալ ընդ քեզ զերիս աշակերտացն քոց զՊետրոս զեկեղեցւոյ զվէմն, որում զփականս արքայութե՟ խոստացար, և զերկուս եղբարսն զՅակովբոս և զսիրելին քո զՅովհաննէս որք զբաժակ մահու ընդ քեզ խոստացան ըմպել առանձնացուցեալ զնս 'ի մարդահոյլ բազմութէ տանելով ընդ քեզ 'ի Թաբօր լեառն: Զի որոց զարքայութի՟ քո խոստացար տեսանել՝ 'ի մարմնի քում տեսցեն զԱդամայ զառաջին փառացն զպայծառութի՝ զոր մերկացոյց բանսարկուն, յադամազգեստ 'ի մարմնի քում ցուցեր նոցա և զկարծիս երկիւղին որ վասն մահուն քո ունէին այսօր փարատեալ հաներ 'ի մտաց նց՟: Վկայելով մարգարէիցն Մովսէսի և Եղիայի երևեալ ընդ քեզ 'ի փառսն քո և խօսէին զչարչարանացն քոց զոր կատարելոց էիր յԵրուսաղէմ, և զի Տր գոլով կենդանեաց և մեռելոց ոչ ամօթ համարեցար զկամաւոր մահն քո 'ի խաչին: Որոց զարհուրեալք 'ի փայլակնակայծակ ճառագայթիցն քոց կարծեալ սինքն յոյժ ահագնակի թմրեալք յերկիր կործանեցան: Զի տեսանէին զքեզ, ոչ որպէս երեկն և եռանդն, այլ ահագնակերպ ճառագայթատեսիլ նշուլիւք յաղօթս փոխակերպեալ զքեզ և զճառագայթս արեգականն արգելեալ. և որոց ոչ էին ծանօթ գլխաւորաց մարգարէիցն զնս տեսանէին, որք եկեալ կային 'ի սպաս փառաց քոց խօսակցելով ընդ քեզ սոսկալի տեսլեամբ: Եւ

մինչդեռ զայն ինչ մոռախորհ լինէին 'ի թերաբաց ա՟ծային փայլմանէն տարակուսեալք անշշունչ կային՝ յանկարծակի ամպ լուսաւոր եկեալ հովանաւորէր նո՟ց: Եւ ձայնն հայրական որ զքէն վկայէր, դա է Որդի իմ սիրելի, ո՟պ յայնժամ 'ի Յորդանան: Ապա այնուհետև դողացեալ 'ի հայրական ձայնէն և յերկիւղէն ոչ ևս գիտէին զկենդանութի եթէ ոչ ամենազօր զօրութիդ քո էր պահեալ զն՟ս զի մի մոռացումն լիցի ա՟ծահրաշ տեսլեանն մեռեալ քան թէ կենդանիք լինէին: Օ՜հ և պետրոս զխորհուրդ ն՟ր Երրորդութեդ 'ի զարհուրմանէն 'ի տաղաւարաշինութեանն բարբառէր, զի և մարգարէից ընդ քեզ թուակցելով որ զնոյն երրեակ անձնաւորութենդ ցուցանէր: Նաև թէ երրեակ աշակերտացն քոց որ ընդ քեզ իսկ էին 'ի ն՟րլերինն զԵրրորդութեանն բերէր զկերպ, զի յայնմ աւուր յայսց երից գաղափարակերպից հաստատեսցի անբաժանելի անձնաւորութիւն ն՟ր Երրորդութեդ: Արդ օրհնեալ են փառք քո Տ՟ր 'ի տեղոջ սրբութե քո որ եկիր 'ի լրումն օրինաց և մարգարէից ելանելով քո 'ի վ՟ր լերինն բարձու աւետարանիչդ Սիովնի: Օ՜հ քո են լերինք և քո են բարձունք, զաշխարհս լոյս իւրով դու արարեր, զծով և զցամաք դու ստեղծեր, Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն: Քանզի այսօր ցնծայ լեառն Թաբոր տեսանելով յինքն հրաշացեալ զերենեակ միաւորութիդ: Այսօր առաւել պարծի լեառըն Թաբոր, քան զսինէական լեառն քանզի 'ի նմա ամպ և մէգ և խաւար և մառախուղ և ծուխ և հուր և անարժանիցն ոտք արգելեալք լինէին ելանելով 'ի նմա: Իսկ սա զմարմնացեալ բանդ Ա՟ծ ճառագայթարձակ կերպիւ յայտնէ քոյոց աշակերտացն, և զբարբառ աւետեացն Հօր առ ա՟մ որդիացեալսն հնչեցուցանէ լուսաւոր ամպովք որ արդմոցն է պատրաստեալ յապառնիսն: Եւ ճա-

նապարհք և վերելք պատրաստեալ է ծմ մեղաւո-
րաց որք գան զհետ լուսաւոր հրամանաց քոց: Ո՜վ
որք այսօր ջերմեռանդն սրտիւ և հաւատով մերձե-
նան 'ի լեառն սրբութն քո դիւրաւ յերկրաւոր
ցածութէս յերկնաւոր բարձրութիւնդ ուղևորին:
Նայ արդ Տր բարերար և քաղցր անոխակալ և բա-
զումողորմ հայեաց հաշտ և բաց ականբ 'ի պատ-
րաստ բնակութէդ քումմէ 'ի լեառն սրբութն քո
'ի ժողովուրդս այս որք հետևեալ են ընդ հետիոտս
հանդիպել քեզ 'ի լեառն սրբութն քո և երկիր
պագանել 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք քո:
Թող զմեղս սց զկամայ և զակամայ: Տուր սց սիրտ
նր և խորհուրդ անզբաղելի և միտս զգաստս, հան
'ի սոցանէ զսիրտ քարեղէն և տուր սց սիրտ մար-
մնեղէն, և տուր սց զհոգիդ նր հեռացուցանելով
յծմ իրաց չարաց և մերձեցուցանելով յծմ գործս
բարիս: Գնալով 'ի զօրութէ 'ի զօրութի և յածայ-
ին տօնիցս 'ի մշտնջենաւորդ ժամանել: Յօ-
ղեա Տր զցօղ հերմոնական 'ի լերին Սիոնի` տալով
սց զթողութի մեղաց: Ահա թէպէտ և մեք բազմա-
ցուցաք զմեղս մեր օր ըստ օրէ, բայց դու մի ըստ
մեղաց մերոց արասցես մեզ և մի ըստ անօրէնութն
մերում հատուսցես մեզ: Մեք կաւ և դու ստեղ-
ծիչ մեր, և գործք ձեռաց քոց ամենեքեան: Մե-
ղաք անօրինեցաք յանցեաք և խոտորեցաք զոտս
մեր 'ի շաւղաց քոց խոտորեցուցաք զսիրտս մեր
չերկնչել 'ի քէն: Դարձ Տր վն մեծի փառաց քոց
գուցէ ոչ ժառանգիցեմք զլեառն սրբութն քո:
·Քանզի ոչ զոք ունիմք ապաւէն բայց միայն զար-
դարդ և զանարատդ և զքաւիչդ մեղաց մերոց: Մի
իսպառ բարկանար և մի թողուր 'ի ձեռաց քոց
զբանաւոր հօտս քո զգինս նր արեան քո` զոր սե-
փականեցեր քեզ ժողովուրդ: Ահա թէպէտ և մեք
գործովք մերովք բարկացուցաք զքո սուրբ ա-
նունդ` արագապէս ժամանեցին 'ի վր մեր հա-

րուածք ազգի ազգի, սով, սուր, գերութիւն, նեղութիւնք, հարուածք դիւականք, հիւանդութիւնք և պէս պէս ցաւք և ախտք տաժանելիք, վիշտք յերկնէ, վիշտք յերկրէ, մահք տարաժամք, ամք և օդք խռովարարք, զի կամ փակին բարկութեան և կամ բանին սաստկութեան, և պէս պէս պատահարք որ լինին 'ի մարդիկ և յանասուն և յանդաստանս մեր, և եղաք կոխան այնոցիկ որ զանուն քո սուրբ ոչ կարդան։ Այլ դու Տէր անոխակալ և մարդասէր, թէպէտ և մեք մեղաք սակայն 'ի քեզ անկաք յարգանդէ աւազանին, և ոչ գոյ մեզ Ած օտար, դու ես Հայր մեր և տեսուչ և հովիւ։ Դարձ առ մեզ Ած փրկիչ մեր, և դարձո զցասումն քո 'ի մէնջ․ զի թէ ըստ գործոց մերոց հատուցանես մեզ, մեք զօր հանապազ զճանապարհս մեր ապականեմք չար գործովք մերովք։ Այլ վն զի դու ես իշխան թողուլ զմեղս և մերժել զախտս և զհիւանդութիւնս և զհարուածս և զցաւս մեղաց 'ի մէնջ․ առ քեզ կարդամք զօր հանապազ։ Մեղաք յերկինս և առաջի քո․ Ած քաւեա զմեզ զմեղաւորքս։ Բաց մեզ զդուռն ողորմութեան աւուրս շնորհիւ, զի մի դարձցուք ամաչեցեալք՝ այլ իջցուք որպէս զմաքսաւորն արդարացեալք։ Եւ տուր մեզ զվարձս բարիս ընդ սրբս քո՝ որք 'ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ փրկչիդ Այ մերոյ․ զի ընդ նոսին արժանի եղիցուք փառաւորել զքո ահաւոր և գթաղցր անունդ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտ․

Խաղաղութիւն ամենեցուն․

Առաւելապէս գոհանամք և երկիրպագանեմք քեզ Տր Ած մեր, անշէջ ճառագայթ՝ որ ծագես զլոյս ածութեան քո 'ի սիրտս կամարարաց քոց և փառաբանչաց անուանդ քում սբյ։ Որ և զմեր անարժանութիւնս արժանի արարեր հասանել 'ի պատիւուրս այսորիկ մեծի և տօնակից լինել տօնասիրաց և ածասիրաց անձանց։ Անանուանդ սուրբ Հարցն

որք են տեղապահք և սպասաւորք սրբուհեացն որք են 'ի կատար լերինն Թաբօր, զի յաղօթից և 'ի խնդրուածոց նոցա մեզ և ամ՟ հաւատացելոց ողորմեսցիս։ Ընդ որս և մեք հանդիսացեալք տօնեմք, ոչ ըստ հնոյն մովսիսական տուչութեն վկայական խորանին զոր Բեսելիէլն շինեաց և Մովսէս կանգնեաց և աւանդեաց զօրս զայս տօնել իսրայելաթիւ տօհմին տօն տաղաւարահարութեն։ Անջինջ ունելով զյիշատակ խորանին զոր եառ 'ի քէն Մովսէս յօրինակէն և ետ օրինականին յօրինակ զի իբրև զտաղաւար շրջեցուցանէին ընդ իւրեանս զխորանն։ Այլ մեք տօնեմք զտօն պայծառակերպութեն քո՝ զոր ցուցեր ընտրելոց քոց 'ի Թբ լերինն. զի յետ կամաւոր խաչելութեն քո և կենդանի մեռելութեդ և կենդանարար յարութեն քո և Հոգւոյդ սրբ յառաքեալսն իջանելոյ, առաւել սարսափելի և սխրալի ցուցեր զաւուրս լուսաւորութի, և աղբեւր շնորհաց և դուռն կենաց զսա մեզ բացեր փոխարկելով զհինն 'ի նորս զստուերն 'ի ճշմարտութի։ Զօր 'ի ձեռն Հոգւոյդ սրբ յայտնեցեր առաքելոց քոց։ փոխանակ տաղաւարական խորանին, խորան զէկեղեցի քո շինելով՝ առաքելական և մարգարէական վիմին որոյ գլուխ անկեան զքեզ իսկ եդեր վէմ պատուական և անշարժելի, և փոխանակ սեղանոյն քաւութեն ուր անասնոցն մատչէր արիւն հաստատեցեր սեղան սրբարար, յորոյ վր պատարագիս անարատ գառնդ Այ որ բառնաս զմեղս աշխարհի։ Եւ փոխանակ սուսերակերպ քահանայութեն շնորհեցեր մեզ զքո ճշմարիտ քահանայութիւնդ։ Նորոգեցեր յառաջնորդութի վերակացութեն նոր ժողովրդեան քո զերանելին զյակովբոս զեղբայրն քո որ ձեռնադրեցաւ 'ի սմին աւուր 'ի սրբ առաքելոցն որք յամենայնի աջոյդ ընկալեալ էին զձեռնադրութի։ Եւ 'ի սմին աւուր պատարագեցար 'ի վր ածարեալ նորագիւտ սեղանոյն

'ի նոր զատակերտն: Ասացի և զաւք առաքելոցն յայտնապէս տեսին զՀոգին որ իջեալ 'ի սեղանն որ և 'ի պատարագեալդ 'ի վերայ նորա: Ով ցուցեր զաւետարեր զօրս զայս սկիզբն ուխտից և պատարագաց: Ընծայի սեղան նոր և պատարագ նոր և մատուցօղ պատարագի նոր որ պարգևեցաւ մեզ 'ի նորոգատուր աւուրս: Եւ աղ օրհնութեն հաստատեցեր մեզ որ է ճշմարիտ շնորհդ Հոգւոյդ սրբոյ, որ եւտուր բժշկութի նեղութեն մերում և ամ շնորհիւ որ 'ի հնումն և 'ի նորումն զարդարեցեր զօրս զայս, սովիմբ կերպիւ երևեցար առաքելոցն 'ի Գալիլեա, զի որք ոչ էին տեսօղք հրաշից այսմ աւուր նոքա յերկուացան: Եւ զմիւս անգամ գալուստն քո սովիմբ տեսութբ շնորհես այնոցիկ որք զքեզ սիրեցին զի զնոյն ողջոյն և խաղաղութի ընկալցին 'ի քէն: Եւ արդ Տր մեր և Աձ տուիչ բարեաց և պարգևատու առատ ողորմութեց: Տուր և այժմ քահանայական վերադիտողութենս առանց նենգութեն յիշատակ հայեցուածովք: Մի սրտիւ և կատարեալ հաւատով սպասաւորել սրբարար սեղանոյ քոյ և հաշտարար մարմնոյ և արեան քոյ հաղորդել և հաղորդեցուցանել արժանապէս զնորածնեալ զքո ժողովուրդս և հովուել զհօտ քո սրբութբ և արդարութբ զոր գնեցեր արեամբդ քով սրով: Ի վայրի գալարուջ բնակեցուցանել և առ ջուրս հանգստեան սնուցանել: Տր իմ Յս Քս մի հայիր յանարժանութիս իմ որ ամօթալից կամ առաջի քոյ իմ մեղապարտ անձամբս: Ով դու գիտես զյանցանս իմ որ քննես զսիրտս և զերիկամունս: Ով զյաճախութի մեղաց իմոց 'ի քէն ոչ կարեմ թագուցանել աղաչեմ զքեզ մարդասէր և քաղցր Տր ցոյց մեզ զմարդասիրութիդ քո և պարգևեա աւուրս շնորհիւ զթողութի մեղաց ինձ և ժողովրդեանս և ամենայն հաւատացելոց: Աղաչեմ զքեզ Տր բարեխօսութբ

Ընծանի անարատ ծնողի քոյ և Յովհաննու կարապետին և սրբոյն Ստեփանոսի նախավկային և սրբոց քոց առաքելոց և մարգարէից և աշակերտացն քոց որ ընդ քեզ խոկ էին ՚ի սուրբ լերինն: Եւ գլխաւորաց մարգարէիցն և ամենայն սրբոց և սրբոյն Յակոբայ և առաջին հայրապետին: Օրհնեա զժողովուրդս քո զփառաբանիչս անուանդ քոյ սրբոյ և կատարեա ՚ի բարի զխնդրուածս մեր: Հաստատեա զկաթողիկէ Եկեղեցի քո անշարժ և անվրդով ՚ի ներկայումս հանդերձ ուխտիւն իւրով զվիճակ քահանայական, զշնորհս վարդապետական, հանդերձ պայծառացեալ մանկամբս: Հրաշանորոգ պահեա ՚ի վերայ վիմի հաւատոյ զսուրբ Եկեղեցի քո յամենայն երևելի և աներևոյթ փորձանաց: Եւ զօրութիւն սուրբ և պատուական խաչի քոյ յորոյ վերայ մածեալ ես սուրբ արեամբդ անմեկնելի հեղուսմամբ: Պահեա ընդ հովանեաւ որ զամենայն հաւատացեալս ՚ի քեզ իւրաքանչիւր կարգի: Զեպիսկոպոսունս զերիցունս զսարկաւագունս և զբնաւ ուխտ Եկեղեցւոյ քում սրբոյ և տուր սոցա զբարի կարգաց յորդորումն: Զթագաւորս և զիշխանս և զզօրս նոցա ամրացո զօրութեամբ սուրբ խաչի քոյ յամենայն պատերազմաց: Եւ զթշնամիս սուրբ ուխտի քոյ լռեցո և հնազանդեցո ընդ ոտիւք սոցա: Զմիանձնացեալսն ճգնաւորական հանդիսիւ պարսպեա ՚ի հաղբից թշնամւոյն անյաղթելի պահելով մինչև ՚ի վախճան անարատ վարուք: Զամուսնացեալսն պահեա սրբութեամբ և արդարութեամբ կալ առ միմեանս սիրով Հոգւոյն և զորդիս նոցա սնո և աճեցո յերկիւղ քո և ՚ի սէր և ՚ի տղայական պատահարաց պահեա: Զծերոց շնորհեա հոգի զգաստութեան զելս ՚ի մտի դնելով և զհրաժարումն յաշխարհէս: Պահեա Տէր զամենեսին սուրբ խաչիւ և աւուրս շնորհիւ զհեռաւորս և զմերձաւորս և որք ՚ի ծովու են և յուղղեգնացութեան և որք ՚ի պէսպէս ցաւս և ՚ի վտանգս և ՚ի նեղութիւնս: Զգերելոցն դարձումն

շնորհեա Տէր բանտարգելոցն և կապելոցն զերծումն մեղաց լուծումն դիւաց հալածումն, պատերազմաց հաւատացելոց յաղթութիւն: Կարկեա Տէր զբերան հերձուածողաց շիջո զխռովութիւն յօտար թշնամեաց: Յետս ընդդէմ կործանեա զ'ի վերայ յարուցեալսն: Պահեա զբանաւոր հօտս քո 'ի գազանաց և 'ի սողնոց, 'ի թխնաւոր ճճեաց և 'ի գլորմանէ, յընկղմութենէ 'ի հրկիզութենէ, 'ի ջրահեղձութենէ 'ի սառնամանեաց, 'ի յաւազակաց, 'ի բռնութենէ հողմոց և յամենայն տարերց վնասակարաց զի ամենայն գոյակք քում հրամանի հնազանդին: Օրհնեա Տէր զամս զայս և զպտուղ տարւոյս այսորիկ անփորձ, պահելով յամ ցասմանէ: Լինելով աջ քո հանապազ 'ի վր մեր 'ի սկզբանէ տարւոյն մինչև ցկատարումն: Աքանչացո Տէր զշնորհ աւուրս այսորիկ 'ի մարդ և յանասուն 'ի կենդանիս և յանկենդանս: Յամպս յօդս 'ի բոյսս 'ի տունկս և յամ պատահարաց և 'ի փորձութեանց անվնաս պահեա, որ գան 'ի վր 'ի քումմէ հրամանէդ. սիրով և արդարութի և խաղաղութի յաջողեա զկեանս մեր ամ ուղղափառ դաւանութի կնքելով զվախճանն մեր, յիշեա Տէր զննջեցեալսն որք ուղիղ դաւանութի կատարեցին զկեանս իւրեանց և շնորհեա նց հանգիստ յարդարոցն օթևանս. ջնջելով զձեռագիր յանցանաց նց զկամայ և զակամայ, զգիտութն և զանգիտութն: Զի 'ի վերջնումն աւուրն 'ի հրաբորբոք գալստեան քո արժանաւորեսցես զամենեսեան լուսեղէն ամպովք թռչել ընդ առաջ քո Տր, և հանդիպել քեզ, 'ի վերինդ Սիոն ընդ սուրբս քո զեռահիւսակ սրբասացութի տնօրինելոյդ երգեսցուք ընդ Հօր և նր Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յ[illegible] Խնդրեսցուք
Կեցո [illegible]: Աղօթք Թագաւոր խա: Հայր մեր
[illegible]:

Իսայց ոմանց պէտք է Առեգաւորանն ընթերցուածով հանդերձ եւ զայս աղօթս յատուկ ՚ի Լուսօրին, զինչ տեառնագրութեանն։ Եւ ՚ի դասանալն ախտանին *Խոնարհեցո* եւ *Ապրեցո*։ Եւ զինչ համբարձյոյն Քր. *Խնդր*։ *Կեցո*։ Աղ. *Թագաւոր խա*։ Այլ ստոյգն այն է զոր գրեցաք։

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## Ի. ՕՐ ՎԱՐԴԱՎԱՌԻ. ԻԿ.

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԻԿ։

ՃԱՌԱԳԱՅԹ *փառաց Հօր Որդիդ միածին. որ ընդ լոյս անվայրափայլ մարմնով պարագրեալ. այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր։ Որ աննիւթ սրովբէից անհաս ի վեր քան զբան. ծառայի կերպիւ պարածածկեալ ընդ լոյս անըստուեր. այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր։ Որ հրեղինաց անմերձենալի հօր Էութեանդ. ի հողեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր։*

† *Որ գերագոյն փառօք պայծառացուցեր զԱդամն առաջին. որ ճաշակմամբ պտղոյն մերկացաւ ընդ փառս անպատմելս. այսօր վերստին փառօք զարդարեաց։ Որ ի նախնումն երեւեալ Մովսէսի ամպովքն ի Սինա. այսօր լուսափայլ ամպովք ի Թաբօր յայտնեալ վկայեաց դա է իմ Որդի դմա լուարուք։*

ԱԳ. *Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս. անսահման ժամանակաւ անղօթել միշտ առ Աստուած հող-*

ռով եւ մտօք։ Որ ըղձման քո՝ օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով ըղձիչերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ. բնութե՛ մերով անօրինաբար որում կրկնի ծունր ամենայն։ Նա որոյ եւ մեք պաղատեսցուք առ քեզ Քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս։ Աղաչանօք Աստուածածնին անապական քում ծնողին. զիմանալի աչօք սրտից մերոց. բացցես ողորմութե՛ հայել ի լոյս քո Քրիստոս։

Օրհնեցէք զՏէր ընդ երկնայինսն նմանեալ դասուց. նոր ժողովուրդք ասելով. քեզ Հօր տօւողին մեզ զկեանս փառք։ Երգեցէք Տն երգ նոր եկեղեցիք ընտրելոց որդիք Սիոնի ասելով. քեզ Որդւոյ շնորհողին մեզ զկեանս փառք։ Բարեբանեցէք զԱծ ի սքանչելիս սրբուն նորա ձայնիւ ցնծութեան ասելով. քեզ Հոգւոյդ պարգեւողին մեզ զկեանս փառք։

ՅԱՐ. Օրհնութիւն ի բարձունս. տնօրինեցելոյն ի կուսէն՝ թագաւորին մերոյ. ալէլուիա ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս. անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս. անբաժանելի և միասնական որ Երրորդութեն՝. ալէլուիա ալէլուիա։

Խոստովանութիւն իմ լեր Տր եւ յոյս փրկութեն. որ զառաջին Ադամ ազատեցեր ի մեղաց. նորոգեա և զիս զապականեալս մեղօք։ Որ յատենի կացեր անպարտ կողին պատրանօք. եւ ար-

բուցեր մեզ ի կողմնաս աղբերէդ. նորոգեա և զմեզ զապականեալքս մեղօք: Ածածին անարատ մայր Տեառն. և կոյս Մարիամ. որ եղեր ընդունող Բանին Այ. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան:

Հգ.. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից Հոգին էջ ի վերնատանն. որով նորոգեցան դասք առաքելոցն: Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցնծայ ընդ Հօր հաշտութիւն. քանզի որ երարձ զՀոգին ի մարդկանէ մարմին եղելոյ. դարձեալ վերստին ընդոյն պարգևէ: Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցնծութեամբ զգալուստ Հոգւոյն. որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս և գերապայծառս. երգեն ընդ սրովբէսն զերեքսրբեանն:

Հն. Գալոց է միածինն փառօք և փառօք Հօր. և ըզհողեղէն բնութիւնս հրեղէն նորոգէ: Լուսաւոր են ճանապարհք արդարոց. և ի բևեռաւոր բանակս հրեշտակաց ամպովք ընթանան: Ի վերինն Երուսաղէմ թռչին ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինին:

Մծ.. Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ. երկիր բանաւոր արեգականն օթարան. լեր բարեխօս վասն անձանց մերոց: Խորան տաճար Բանին Աստուծոյ. բարձող տրտմութեան նախամօրն Եւայի. լեր բարեխօս վասն անձանց մերոց: Ցնծա իմանալի արևելք. քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեւեալ Քրիստոս. լեր բարեխօս վասն անձանց մերոց:

ԽԶ. Եկայք ժողովուրդք ի տաճարի փառաց Քրիստոսի. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս: Գանզի Թագաւորըն ՔՍ պըսակեաց ըզսա սքանչելի փառօքն իւրովք. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս: Փառք Հօր: Ի սմա եւ զօրըք հրեշտակաց դասաւորեալ տօնեն ՏՆ. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս:

Այժմ եւ միշտ: Որ ի յերկինըս վերացուցց հրեղէն կառօք զԵղիա. այսօր վայրաբերեալ ի Թաբօր հանդերձ Մովսէսիւ. խօսէին զելիցն որ յԵրուսաղէմ:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նր, զի սուրբ է:

Մովսէս եւ Ահարոն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ որ կարդան զանուն նր:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Փ. Երկինք ցնծասցեն առաջի Տեառն զի գայ. եւ հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Դատէ զաշխարհս արդարութեամբ եւ զժողովուրդս իւր ուղղութեամբ:

Փառք եւ. այժմ եւ. ալէլուիա:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հրց ԿԶ:

Այսօր ըզխորհուրդ անճառելի Ածութենըդ քո Քրիստոս. ըզծածկեալըն նախըզքանէ յայտնեցեր աշակերտացն ի Թաբօր լերինն. օրհնեալ Տէր Ած հարցըն մերոց: Այսօր զառաքելումըն մարգարէիցն ի քեզ ծանուցեր առաքելոցն. ըզՄով-

սէս եւ զԵղիաս ածաբար կոչմամբ ի Թաբօր լերինն. օրհնեալ Տէր Ած հարցն մերոց։ Այսօր անհասն յէութեն Հայր ի բարձանց երեւելով. ըզծընեալն ի սրբոյ կուսէն դաւանեաց Որդի իւր սիրելի. օրհնեալ Տէր Ած հարցն մերոց։

Գ․․ ԸզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Որ փայլեցն այսօր ի կուսածին մարմնոյն. ըզգերապայծառ լոյս Ածութեն. ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ յայտնեցն այսօր ի Թաբօր լերինն. զմիութին որ Երրորդութեն. ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Որ զմիասանդամ խորհրդոյ գաղտնեանն իւրոյ. տըպաւորեաց ծագմամբ արփիական լուսոյն. ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԴՁ։

Առաւօտ խաղաղութե եւ արուսեակ զուարթարար. այսօր Մարիամ սրբուհին ի փառս քո Քս ծագեաց մեզ լոյս յորդւոցն օրինաց. անդադար երգով սոքօք ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Դրախտ ածային եւ արեւելք իմանալի. այսօր Մարիամ հրաշագեղ ծնեալ ի յԱննայէ ի մայրութի քո հրաւիրեալ Քն Որդի Աստուծոյ. անդադար երգով սոքօք ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Տապանակ ապրեցուցիչ եւ տաղաւար աբրահամեան աստուածընկալ. այսօր Մարիամ լուսապայծառ միածին ծընունդ

յայտնեալ ծնողաց. ի ծնողութենէ քո կոչեցեալ միածին Որդի Աստուծոյ. անդադար երգով սոքօք ըզքեզ ընդ միշտ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Որ զճառագայթս անծայրին ցուցեր այսօր մարգարէիցն. որոց ցանկային տեսանել զանհասն սերովբէից. լոյսդ անճառելի ողորմեա: փառք Հօր: Որ զդաւանութիւն Պետրոսի ըզքեզ Որդի Հօր Աստուծոյ. Հայր ի յամպոյն վկայեալ այսօր Որդի իւր դաւանէր. լոյսդ անճառելի ողորմեա: Այժմ և միշտ: Շնորհեա Տէր ի մեզ մեղաւորացս ի միւսանգամ քո գալստեանն. տեսանել ըզքեզ հայրական փառօք ի նորոգել ըղտին զերս. լոյսդ անճառելի ողորմեա:

Տէր յերկնից Դ.Զ:

Յընծայ այսօր փառօք միածնին լեառըն Թաբոր հանդերձ Հերմոնիւ. բարձրացեալ գերագոյն Սինայի. և էջք Աստուծոյ դուռն երկնից ի նմա: փառք Հօր: Յընծան այսօր լերինք Աստուծոյ. արարողին ելեալք ընդ առաջ. պարակցին յաւիտենական լերանց. դասք առաքելոց և մարգարէից: Այժմ և միշտ: Յընծայ այսօր լեառըն վերին Սիոն. հարսնարան անմահ արքային. տեսանելով զերկնաւոր փեսայն. զարդարեալ լուսով հայրական փառօք:

Բրդ. Աստացուք Քոն գանձ:

Մանկունք Բ.Կ. ԱՏ:

Օրհնեցէք մանկունք ընդ երկնայնոցն ըզՀայրն երկնաւոր. որ մարմնացեալ Բանին. վկայեաց յեր-

կնի՛ց այսօր ՚ի Թաբոր լերի՛նն: Փառք Հօր: Գովե-
ցէ՛ք ընդ սերովբէ՛ն զՈ՛րդի՛ն միածի՛ն. որ փայլեաց
մարմնով. զլոյս Ա՛ծութե՛ն այսօր ՚ի Թաբոր լերի՛նն:
Այժմ և միշտ: Բարեբանեցէ՛ք ընդ քերովբէ՛ն
զՀոգի՛ն ճշմարիտ. որ լուսափայլ ամպով. էա-
կցի՛ն հովանացեալ այսօր ՚ի Թաբոր լերի՛նն:

Օրհնէ մանկանցն ·Բր· Խնդր: Կեցո: Աղ. ·Բռում ամե:
Բայց սմանէ զձայնէ մանկանցն ասէն ·Բր· Մ ա խաւ. Աղ.
Ալ եւ: Նա խորհրդոյ զձայնն գիրքն և զաւետարանն:

Ընթերցուած Ելից: Ժ.Թ.. 9:

Եւ ասէ Տէր ցՄովսէս. էջ՝ դիր վկայութիւն ժողովրդեանն, և սրբեա զնոսա այսօր և վաղիւ, և լուասցեն զձորձս իւրեանց. և պատրաստեսցին աւուրն երրորդի. զի յաւուրն երրորդի իջցէ Տէր յանդիման ամենայն ժողովրդեանդ ՚ի լեառնդ Սինա: Եւ զատուսցես զժողովուրդդ շուրջ՝ և ասասցես. զգոյշ կացէք անձանց յելանելոյ ՚ի լեառն և մերձենալոյ ՚ի նա. զի ամենայն որ մերձեսցի ՚ի լեառնն՝ մահու սատակեսցի: Ոչ մերձեսցի ՚ի նա ձեռն. քանզի քարամբք քարկոծեսցի և նետիւք խոցոտեսցի՝ եթէ անասուն իցէ և եթէ մարդ՝ մի կեցցէ. այլ յորժամ ձայնքն և փողն և ամպն վերասցի ՚ի լեռնէ անտի՝ ելցեն նոքա ՚ի լեառնն: 13:

Ընթերցուած ՚ի Չորրորդ Թագաւորութեանց: Բ.. 9:

Եւ եղեւ ընդ անցանելն նոցա, ասէ Եղիա ցԵղիսէ, խնդրեա զինչ արարից քեզ մինչև վերացեալ իցեմ ՚ի քէն. և ասէ Եղիսէ, եղիցի կրկին ոգիդ քո ՚ի վերայ իմ: Եւ ասէ Եղիա դժուարինս խնդրեցեր. բայց եթէ տեսանիցես զիս յամբառնալն իմում ՚ի քէն՝ եղիցի այնպէս, ապա թէ ոչ՝ մի եղիցի: Եւ եղև մինչդեռ գնային նոքա և խօսէին երթային. և ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք, և անջրպետեցին ՚ի մէջ երկոցունց

և վերացաւ Եղիա շարժմամբ յերկինս։ Իսկ Եղիսէ հայեր եւ աղաղակէր, հայր, հայր, կառքդ Իսրայելի և հեծեալքդ նորա․ և այլ ոչ ևս ետես զնա․ և բուռն եհար զհանդերձից իւրոց և պատառեաց յերկուս ծուէնս։ 12։

Յովհաննու առաքելոյն 'ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Ե․ 9։

Սիրելիք եթէ զմարդկան ինչ վկայութի ընդունիցիմք՝ ապաքէն Ա՜Յ վկայութիւն մեծ իցէ։ Այս է վկայութիւն Ա՜Յ․ զի վկայեաց 'ի վ՜ր Որդւոյն իւրոյ։ Որ հաւատայ յՈրդին Ա՜Յ, ունի յանձին զվկայութի զայս․ որ ոչ հաւատայ Որդւոյ Ա՜Յ, սուտ առնէ զնա․ քանզի ոչ հաւատաց վկայութեն, զոր վկայեաց Ա՜Ծ 'ի վ՜ր Որդւոյ իւրոյ։ Եւ այս իսկ է վկայութիւն․ զի կեանս յաւիտենականս ետ մեզ Ա՜Ծ, և այս են կեանք՝ որ յՈրդին նո՜ր են։ Որ ընդունի զՈրդին, ընդունի և զկեանս․ և որ ոչ ընդունի զՈրդին Ա՜Յ, և ոչ զկեանս ընդունի։ 12։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա․

Բարձրութիւնք լերանց նո՜ր են․ նո՜ր է ծով․ և նա արար զնա․ և զցամաք ձեռք նո՜ր ստեղծին։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ա․ 1

Ի Հօրէն լուսոյ․

Ի սկզբանէ էր Բանն․ և Բանն էր առ Ա՜Ծ․ և Ա՜Ծ էր Բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Ա՜Ծ։ Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն։ Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան․ և լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու։ Եղև այր մի առաքեալ յԱ՜Յ․ անուն նմա Յովհաննէս։ Սա եկն 'ի վկայութի՝ զի վկայեսցէ վ՜ն լուսոյն․ զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն․ այլ զի վկայեսցէ վ՜ն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զա՜մ մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ

զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա, ետ ն՟ց իշխանութիւն որդիս Ա՟Յ լինել՝ որոց հաւատասցեն յանուն ն՟ր. Ոյք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն, այլ յԱ՟Յ ծնան։ Եւ Բանն մարմին եղև՝ և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս ն՟ր՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութե՟բ։ Յովհաննէս վկայէ վ՟ն ն՟ր, աղաղակեաց և ասէ. սա է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղև. զի նախ քան զիս էր։ Զի 'ի լրութենէ անտի ն՟ր մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց։ Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն և ճշմարտութիւն 'ի ձեռն Յ՟Ի Ք՟Ի եղեն։ 17։

ԵՐԳ Արարչական։ Բր. Խնդր։ Կեցո։ Աղ. Բռամ։

---

ՅԱՐԱԿՈՅՑ Մեղեդէ Յար. ԲԿ. Երգեցէք։ 214։
Համբարձի ԲԿ. ՍՏ։ Օրհնեցէք մանկունք։ 646։
Զ.Խ.Է համբարձման Բր։ Խնդրես։ Աղ. Թագաւոր։

---

# ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

## Գ. ՕՐ ԿԱՐԳԱԿԱՆՈՒ։ Գ.Ձ։

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Ձ։

ԱՅՍՕ՛Ր ո՛ր էն ի՛ յերկինս Բան ե՛ւ ծընունդ Հօր մի՛ածին. ըզծա՛ծկեալն ի յէից խորհուրդ յա՛յտնեաց աշակե՛րտացն. ծա՛ռայի՛ ըզկերպա՛րանըն ծա՛ծկելով Ա՟ծութեա՛մբն։ Այսօ՛ր հընչեա՛ց յա՛ռաքեալըն հա՛յրական բա՛րբառ յերկնից. ա՛սէ դա՛ է Որդի իմ սի՛րելի ընդ որ հա՛ճեցայ. ո՛ր ըզընութի՛ւնն ա՟ծային կե՛րպի՛ւ ծածկեալ ծառա՛յակա՛ն։ Այսօ՛ր վի՛մի՛ն հա՛ւատոյ յայտնեա՛լ

զխորհուրդ Երրորդութեան . եռակի յօրինմամբ տաղաչափացըն խորհրդոյ . որում ըզմեզ մաքրեսցես լինել տաճար Երրորդութեանն :

† Որ յանմարունեստ ի յաթոռ բազմեալ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն . անըսկիզբն Որդի Բանդ ի Հօրէ առաքեցար . ծառայի զգեցար ըզկերպարան ծածկելով զԱստուածութիւնդ : Այսօր ցուցեր ի Թաբօր զանտանելի լուսոյդ փայլումն . ծածկեցար աշխարհի արդարութեան արեգակն . յայտնելով աշակերտացն ըզպարագրեալ Աստուածութիւնդ :

ԱՊ· Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհս վերին . եւ ի նմա հաստատեցեր տընտես ըզպետըս հրեղինաց . որհնեմք զանհասանելի զօրութիւնդ : Որ տիրապէս մեծատունդ տեղծեր երկրորդ աշխարհս սգալի . եւ ի դրախտն որ յԱդենի տընտես եդեալ զմարդն առաջին . որհնեմք զանհասանելի զօրութիւնդ : Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ . եւ ի սմա կարգեալ տընտես զքահանայս Բանին ճըշմարտութեան . որհնեմք զանհասանելի զօրութիւնդ : Անտանելւոյն տաղաւար բարձրոց էիցըս բարձողին . որ ծընար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծընօղըն Հօր . բարեխօսեա վասըն մեր Աստուածածին Մարիամ :

ԱՊ· Որ տիրականս առ ի քէն կարգեալ տընտես բնութեան մերոյ . իմաստութիւն ըզպարտիս եթող քոյոց պարտապանաց . թող և ըզմեր ըզյանցանս ողորմութեամբդ քո Տէր : Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեր օծմամբ Հոգւոյն .

մերկացուք մեղօք ըստ նախահօրըն պատրանաց. զգեցո ըզնոյն վերըստին ողորմութեամբդ քո Քս: Հաճոյիցն կայծակունսն ի սրովբէիցն անհըպելին. անմարմնապէս մերձեցաք գոլ պատրաստական քում խորհրդոյն. շնորհեա ըզնոյն մաքրութիւն ի թողութիւն մեղաց մերոց: Որ վառեցար ի յարփւոյն և ոչ կիզար ըստ մորենւոյն այլ եւտուր զհացըն կենաց կերակուր բանաւորաց. բարեխօսեա առ Քս ջընջել ըզգիր մեղաց մերոց:

ՅԵՐ. Զթագաւորըն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամ երկիր: Արարողին երկնից և երկրի. մատուցէք երգով գոհաբանութիւն ամ երկիր: Խոնարհութեան և մեծ Ածութեան. մատուցէք պատիւ երկրպագութիւն յաւիտեանս ամէն:

ՕՐՀ. Հօրհնութիւն նոր օրհնեսցուք ըզՏէր. որ ի վերայ քերովբէիցըն հանգչի. և ի զօրաց երկնաւորաց փառաբանի սըրբասաց ձայնիւ: Որ կամաւոր խոնարհութեամբն իւրով. անեղեաց ըզզօրութիւն մահու. եւ եղեւ օրհնեալ յարութեամբ իւրով պարգեւեաց մեզ կենդանութիւն: Բարեխօսութեամբ Սբ Ածածնին պահպանեսցէ զեկեղեցի իւր սուրբ. եւ ի միւսանգամ գալըստեան իւրում նորոգեսցէ ի փառս:

ՀԳ.. Արեգակն արդարութեան Քս ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեան. եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծնեալ. որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. վասն որոյ և մեք Երկիր պագանեմք Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ: Որ փոխանակ ծոցածին Ա-

նին որ ե՛լ յերկինս. առաքեցաւ առաքելոցն քո ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց եւ հրաժարեալ զընտրեալ դասս առաքելոցն. վասն որոյ եւ մեք երկիր պագանեմք քո Հոգւոյդ եւ ճշմարտութեանդ:

Այսօր տրտմական եւ գիշերային լուծան երկունք ծննդեան նախամօրն. քանզի զծննեալսն մարմնով ի մահ եւ յապականութիւն. վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ քո երկնաւորի. վասն որոյ եւ մեք երկիր պագանեմք քո Հոգւոյդ եւ ճշմարտութեանդ:

Հ՟ն. Ի ձայն մեծի զաւրութեանն եւ ի հնչմանն հրաշալի փողոյն. որ հողացեալ մարմինք մարդկան նորոգին. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէ՟ր եւ ըզմեր ըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ նշան տէրունեան ճառագայթիւք փայլէ. եւ թագաւորդ թագաւորաց փառօք տեսանիս. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէ՟ր եւ ըզմեր ըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ ատեան դատաստանին դնի եւ դպրութիւնք հրաշիցս բանին. յայնժամ աւուր յահեղին մինչեւ Տէ՟ր եւ ըզմեր ըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

Մ՟Օ. Որ յէութենդ ես ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն անըսկզբըն Որդի. խոնարհեցար ի հայրական ծոցոյ. մարդ եղեալ մարմնացար ի կուսէն բառնալով զյաղթութիւն մահու յանցանաց նախահօրն. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հոգւոցն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան

Բա՛նդ։ Այսօր ծնեալ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի՝. ճառագայթ փառաց և ծագումն յանմեկնելի լուսոյն. աստղագուշակ տեսլեամբըն յայրին իջեվանի՝ և ի մըսուր յանբանից բազմեալ. քեզ երգեմք ընդ զօրըս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեա՛լ ես Քրիստոս Նախայաւիտեա՛ն Բա՛նդ։ Թագաւոր փառաց Քս եւ արարիչ բոլորից Ած հզօր իշխան հայր հանդերձեալ լուսոյն. մանուկ երևեալ այսօր անփոփոխելիդ ի յէութեան՝. քեզ երգեմք ընդ զօրըս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեա՛լ ես Քրիստոս Նախայաւիտեա՛ն Բա՛նդ։

ԽԶ. Այսօր ցընծան դասք հրեշտակաց ընդ հաստատել քո ի յերկրի. ո՜վ լուսեղէն խորան երկնանման եկեղեցի սուրբ՝. ուրախ լե՛ր վէմ պատուական հովանի մեր և յոյս։ Զուարճացիր հարսն անարատ ըզքօղ արկեալ վայելչապէս զարդարեալ հանդերձ փառօք և եկ ընդ առաջ երկնաւոր փեսային ուրախ լե՛ր ամուլ բազմածին՝ ահա փեսայն գայ առ քեզ։ Փառք Հօր։ Աստանօր նորոգեցաւ մեզ աւազան մկըրտութեան. յարգանդ մօր Հոգւոյն յղացեալ. ծնանելով վերըստին զհաւատացեալքս ի Քս. ուրախ լե՛ր անմայր յառաջնումն ահա Որդին գայ առ քեզ։

Այժմ և միշտ։ Յորմէ ահիւ զարհուրեալ ընտրեալ դասուց առաքելոցն. երրակի խորհրդով յօրինեալ քեզ տաղաւար. որով ըզմեզ սըրբեսցես լինել տաճար քեզ հոգևոր։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի, և բարձրութիւնք լերանց նորա են։

Նորա է ծով, և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Փ. Լերինք որպէս մոմ հալեցին յերեսաց Տն ամենայն երկիր։

Պատմեցին երկինք զարդարութիւն նր, և տեսին ամենայն ժողովուրդք զփառս նր։

փառք և. այժմ և. ալէլուիա։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Դ.Կ։

Այսօր ըզխորհուրդն անճառ զծածկեալն յաւիտենից եւ յազգաց. յայտնեցեր փառօք ի Թաբօր լերինն. Աստուած հարցըն մերոց։ Այսօր բըղխեալն մարմնով յարմատոյն Յեսսեայ գաւազան. ծաղկեցաւ լուսով ի Թաբօր լերինն. Աստուած հարցըն մերոց։ Այսօր անմահութեն հոտ անուշ բուրեաց ի Թաբօր. Թըլմբեալ ընդարմացելոց զգաստ առաքելոցն. Աստուած հարցըն մերոց։

Դ.. ԶՏր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Զլոյս փառացըն Հօր ծագեալ այսօր ի լերինն Թաբօր. ժողովուրդք բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ փառք Հօր։ Զամենասուրբ Հոգին. որ ի նմանութի լուսափայլ ամպոյն յայտնեցաւ ի Թաբօր. ժողովուրդք բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Զյաւիտենիցըն Հայր. որ երևեցաւն այսօր

յերկնից վկայեալ միածնին. քահանայք բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ. Կ.

Որ զանճառելին ծնար սուրբ Աստուածածին կոյս. օրհնեալ ես յաւիտեան: Փառք Հօր: Որ զարարչակիցըն Հօր. զիսկըզբանէ Բանն Աստուած. յորովայնի քում կրեցեր. օրհնեալ ես յաւիտեան: Այժմ և միշտ: Զքեզ զՆշեկինէլ նոնս Երկնային գունդ և հարսն անփորձ. օրհնեալ ես յաւիտեան:

Ողորմեա Դ. Կ.

Որ յանըսկիզըն յէէն անսկըզբնապէս ծընեալ. և սրովբէականքն ծածկէիր թեւովք. այսօր ըզպայծառագրեալն մարմնով ցուցեր զԱստուածութեան քո զփառս աշակերտաց քոց Տէր. քո ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Որ զըստուերական օրէնս մովսիսական տառից ի սինէականըն խօսէիր լերին. այսօր ըզՄովսէս և զԵղիաս ածեալ ի մեռելոց և կենդանեաց ի տեսիլ փառաց քոց. քո ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Որ զօրինակ մեծի գալստեան քո Տր. ի Թաբօրականըն ծանուցեր լերին. քանզի տեսին զայս առաքելոցն ըզնախահարսն եկեալ փառօք խօսէին զելիցն Յերուսաղէմ զխորհուրդ. քո ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա մեզ Աստուած:

Տէր յերկնից Դ. Կ.

Այսօր ընդ հրեշտակս ի բարձունս ցընծասցուք տօնիւս. ի ծագել իմանալի լուսոյ Աստուա-

ծնութեանդ. օրհնեմք զքեզ էակիցդ Հօր. որ եկիր ի փրկել ըզտիեզերս: Այսօր յայտնեցեր ի Թաբօր ընտրելոց դասուցն. առաքելոց եւ մարգարէից զաստուածային քո զփառս անճառելիս. օրհնեմք զքեզ էակիցդ Հօր. որ եկիր ի փրկել ըզտիեզերս: Փառք Հօր: Այսօր Հայր յամպոյն վկայեաց Էական Բանին. միացեալ ընդ կուսածին մարմնոյդ. ասէ դա է իմ Որդի ընդ որ հաճեցայ. օրհնեմք զքեզ էակիցդ Հօր. որ եկիր ի փրկել ըզտիեզերս: Այժմ եւ միշտ: Այսօր ըզծագումն արդարոցն արեգակնակերպ փայլմամբ. ծանուցեր ծագմամբ փառաց քոց Տէր յարքայութեանն. օրհնեմք զքեզ էակիցդ Հօր. որ եկիր ի փրկել ըզտիեզերս:

Մանկունք. Դկ. ԱՏ:

Երբեմն ամենայն. այսօր ցընծան ընդ նըմանել քո Տէր ի Թաբօր. յորում պարեն ընդ երկնայնոցն դասք առաքելոց եւ մարգարէիցն. ընդ որս եւ ըզմեզ արժանի արա. օրհնեմք յառաջ քան զարեւ ըզլոյսդ: Փառք Հօր: Որ յառաջն տեսանելով. մարգարէին զաստուածոր ծագումն լուսոյ քո Տր. զոր ասէր Թաբօր եւ Հերմոն ի յանուն քո ցընծասցեն. ընդ որս եւ ըզմեզ արժանի արա. օրհնեմք յառաջ քան զարեւ ըզլոյսդ: Այժմ եւ միշտ: Որ ցուցեր ի Թաբօր. զքեզ կենդանեաց եւ մեռելոց Տր եւ արարիչ. զՄովսէս եւ զԵղիա ի տեսիլ փառաց քոց կոչելով ընդ ընտրեալ քո առաքելոցն. ընդ որս եւ ըզմեզ արժանի արա. օրհնեմք յառաջ քան զարեւ ըզլոյսդ:

Քառ. Խնդրեսցուք: Ալ. Իսում ամե: Նոյյ ոմանք վէնէ մանկանց առէն Բրդ. Կ ա խաղա: Ալ. Մի նա: Ա– կարգադրան պճաշու Գ.կէրձն և պէ–էտաքրանն:

Ընթերցուած յԵլից: ԺԹ. 16:

Եւ եղև յաւուրն երրորդի ընդ առաւօտն. ձայնք և փայլատակունք և ամպ միգախառն 'ի վերայ լերինն Սինայի լինէին. և ձայն փողոյն հնչէր մեծաձայն: Եւ զարհուրեցաւ ամենայն ժողովուրդն որ էր 'ի բանակի անդ. և եհան Մովսէս զժողովուրդն ընդ առաջ Այ 'ի բանակէ անտի. և կացոյց շուրջ զստորոտով լերինն Սինայի: Եւ լեառն Սինա ծխէր առ հասարակ. քանզի իջեալ կայր Ած 'ի վն նր հրով. և ելանէր ծուխ նր իբրև զծուխ հնոցի. և զարհուրեցաւ ամ ժողովուրդն յոյժ. քանզի հասանէին ձայնք փողոցն 'ի բաց, յառաջեալք և սաստկացեալք յոյժ. Մովսէս խօսէր և Ած տայր նմա ձայն: Եւ էջ Տր 'ի լեառնն Սինա, 'ի գլուխ լերինն. և կոչեաց Տէր զՄովսէս 'ի գլուխ լերինն, և ել անդր Մովսէս: Եւ խօսեցաւ Ած ընդ Մովսիսի և ասէ, էջ, դիր վկայութիւն ժողովրդեանդ գուցէ մերձենայցեն հայել առ Ած և անկանիցին բազումք 'ի նոցանէ: 21:

Ընթերցուած յԵրրորդ Թագաւորութենց: ԺԹ. 11:

Եւ ասէ Տր ցԵղիա ելցես դու վաղիւ և: 625:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս: ԺԲ. 18:

Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի: 626:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Ամպ լուսաւոր հովանի եղև նմ̃ և ձայն 'ի վերուստ որ ասէ. դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ:

Արթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու: Թ. 27:

Տէրն մեր Յս̃ Քս̃ ասէ.

Բայց արդարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք 'ի դո–

ցանէ որ այդր կան՝ որք մի ճաշակեսցեն զմահ, մինչև տեսցեն զարքայութիւն Այ: Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել 'ի լեառն կալ յաղօթս: Եւ 'ի կալն նմա յաղօթս եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ, և փոխեցաւ հանդերձ նր՝ և եղև սպիտակ փայլուն: Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա. որ էին Մովսէս և Եղիա, երևեալ փառօք. և ասէին զելսն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ: Իսկ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝ զարթեան, տեսին զփառսն նորա՝ և զերկուս արսն որ կային առ նմա: Եւ եղև 'ի մեկնելն նոցա 'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅս. Վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, և արասցուք երիս տաղաւարս. մի՝ քեզ, և մի՝ Մովսեսի, և մի՝ Եղիայի, և ոչ գիտէր զինչ խօսէր: Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հովանի եղև 'ի վերայ նոցա. և երկեան 'ի մտանելն նոցա ընդ ամպովն: Ձայն եղև յամպոյն և ասէ. դա է որդի իմ ընտրեալ, դմա լուարուք: Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յս միայն. և նոքա անք լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչինչ՝ յորոց տեսինն: 36:

ՕՐՀՆԵՐԳ Եղական: Բար. Խնդր. Աղ. Վրուտ ամե:

ՅԱՐԱԿՈՑՆ ՄԵԾԵՏԷ Ցայգուրդ Գ.Զ: Եկայք: 214:
Համբարձի Գ.Կ. ՄՏ: Երկինք ամենայն այսօր: 656:
Բար. Խնդրեսցուք: Աղ. Թագաւոր:

# ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց: Գ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. Գ.Կ. Վրդ ԱԾ ա: 405:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Համբ Ա.Կ. Օրհնեալ և փառ: 423:

# ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Եսայեայ մարգարէին: Գ.Զ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որ զմեծային զօրու: 387:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԶ. Որ յերկնային: 394:
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Զ. Որ զյառաջագոյն: 395:

# ՈՒՐԲԱԹ

Պահոց: Գ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. Գ.Կ. Քն ԱԾ յղս: 410:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Յաւիտենից ԱԾ: 486:

# ՇԱԲԱԹ

Ս. Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին: ԱԶ:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութ. Գ.Զ.

Երանելի սուրբ առաքեալք հրաւիրեալք ի սկզբանէ և ընտրեալք յորովայնէ. սպասաւորք և բարեկամք եւ վկայք Աստուածորդւոյն. բարեխօսեցէք առ Տէր վն անձանց մերոց: Որք առիք իշխանութիւն ի վերայ ազգի մարդկան. կապել և արձակել ի յերկինս և ի յերկրի. արձակեցէք զմեզ ի կապանաց մեղաց մերոց: Խաչակցեալք ընդ Քի և ընդ Նորին թագաւորեալք. ի միւսանգամ գալստեանն Նորա նստելոց էք դատաւորք. թողութիւն շնորհեցէք եւ մեզ մեղաւորացս:

† Օրս առեալ ի ծովակէն արարեր որսորդս մարդկան. որսալ զամենեսեան յալքայական սեղանն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Որոց հրամայեցեր հօտ անոյշ լինել ընդ տիե-

զերս. ոմանց հոտ ի մահուանէ ի մահ և ոմանց ի կենաց ի կեանս. բարեխօսութ՟բ ս՟ց Քրիստոս խընայեա ի մեզ: Որոց խոստացար Նստել յաթոռ դատողական. դատել զազգն Իսրայէլի յայնմ աւուր յահեղին. բարեխօսութ՟բ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ:

† Զառաքինորդս և զվարդապետս եկեղեցւոյ քում սրբոյ. յիշատակաւ պատուեմք այսօր. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ: Քիր մշակք անպարտելի կաթողիկէ եկեղեցւոյ. Եւ պըսակ պարծանաց հաւատացելոց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խընայեա ի մեզ:

ՅՈՎ: Առաքեալըն յԱստուծոյ կարապետ. մեծն ի մարգարէս մկրտիչըն Յովհաննէս. պատրաստէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից: Վըկայեաց եւ ասէ՝ չեմ ես Քն. այլ առաքեալ եմ առաջի նորա. և հարսին եկեղեցւոյ փեսայ Քրիստոս է արքայն երկնից: Տեսանէր ըզՅիսուս զի գայր առ նա. աղաղակեաց և ասէ. ահա գառն ԱԾ որ եկն ի բառնալ զմեղս աշխարհի:

ԳՐԻ. Այսօր տօնէ՝ եկեղեցի ուրախութեամբ ըզյիշատակ սըրբոյն Գրիգորի. որով լուսաւորեալ պայծառացաւ վայելչապէս. ի հանդերձըս յոսկէհուռըս զարդարեալ եւ պըսակեալ. օրհնեցէք մանկունք զՔրիստոս Թագաւորին: Այսօր ցնծան նորածնեալ որդիք լուսոյ յիշատակաւ սուրբ լուսաւորչին. որով հրաւիրեցան ի հարսանիսն անմահական. մտանել ընդ փեսային երկնաւորի ի յառագաստըն լուսեղէն. օրհնեցէք

մանկունք զՔրիստոս Թագաւորն: Այսօր քա-
հանայք հոգեւոր պատարագին ըսպասաւորք վե-
րապատուեն ընդ քահանայապետին նը. որով եր-
կնայնոց քահանայութեանցն հաղորդեալք. յոր
վերափոխեալ այսօր մտանէ ի սրբութիւն սըր-
բոց միշտ բարեխօսել առ Տէր վասն մեր. օր-
հնեցէք մանկունք զՔրիստոս Թագաւորն:

ՀԱՅՐ. Խորհրդեալ սուրբ հայրապետքն հրաւիր-
մամբ Հոգւոյն սրբոյ. վերնատուն հաստատեցին
զառաքելական քարոզութիւնն. ի վերայ վիմի հա-
ւատոյ հիմն նը եկեղեցւոյ: Որք զինու Հոգւոյն
նըյ աներկբար պատերազմեալք. վանեցին զընդդի-
մամարտս մոլութի հերձուածողացն. որպէս հովիւք
քաջք հեռացուցին զգայլսն ի հօտէ դասուց: Եւ
ըզհաւատոյս ճշմարիտ սուրբ Երրորդութեան.
ընդ հանուր քարոզեցին յեկեղեցիս ուղղափառաց.
հաւատալ ի Հայր եւ յՈրդի եւ յամենասուրբ Հոգի:

ԱՌԿ. Որք արժանաւորեցայք կոչել յաշա-
կերտութիւն առաքելոյն Թադէոսի. եւ ածային
հրով մաքրութեան ոսկի փորձեալ գտայք ի բնակա-
րանս հրեշտակաց. ով երանելի սուրբ Ոսկեանք.
բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզմեղս ի մեղաց
մերոց: Որք անհրաժեշտ դաւանութեամբ քա-
րոզեցէք ըզԲանն ի դրունս Թագաւորին. մըկըրտե-
լով ըզքաջ նահատակսն. ի յակունս Եփրատայ
ի ծաղկազարդ վայելչութիւնս. ով երանելի սուրբ
Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզ-
մեղս ի մեղաց մերոց: Որք անպարտելի մնացէք ի
հրապուրանաց որդւոյ Թագաւորին. չարչարեա-

լեք վասն Քրիստոսի. արագապէս խողխողեցայք պատարագ ընդունելի. ով երանելի սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Հգ. Որ համագոյդ ես Հօր և Որդւոյ. անճառաբար բղխումն ի միշտ Էէն. այսօր. բղխեցեր ջուր կենդանի յԵրուսաղէմ. Հոգի Աստուծոյ ողորմեա: Որ աթոռակից ես Հօր և Որդւոյ. որով կենդանածնեալք ի ջուրս արարածք. այսօր. որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց. Հոգի Աստուծոյ ողորմեա: Որ փառակից ես Հօր և Որդւոյ. և քննես զխորս Աստուծոյ. այսօր խորագէտս իմաստից զյիմարս աշխարհի արարեր. Հոգի Աստուծոյ ողորմեա:

Հն. Արարչագործ Աստուած. զարարածս քո մի անտես առներ այլ գթա ի ննջեցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սերովբէից: Արարչակից Հօր Որդի. ի միասնական քո գալստեանն անդատապարտ պահեա զննջեցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սերովբէից: Կենդանարար սուրբ Հոգի. յորժամ նորոգես զերեսս երկրի. նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սերովբէից:

Աւ. Նորածնեալն ի սրբոյ կուսէն ընկալցուք ի սիրտս մեր հաւատով. որպէս երբեմն ի գիրկսն Սիմէոնի: Օրհնեսցուք զառաքեալն ի Հօրէ որ ի խանձարուրս պատեցաւ վասն մեր. և փրկեաց զմեզ յանիծիցն Ադամայ: Ուրախ

լեր անապատ ծառայէ և ծաղկեա հաւատով երա-
նութեան մի յայսօր հետէ. քանզի ՚ի քո յոյս
յայտնեցաւ հեթանոսաց։

ԽԶ. Այսօր որ էն ՚ի յերկինս Բան եւ ծընունդ Հօր
միածին. ընծայեալն ՚ի յէից խորհուրդ յայտնեաց
աշակերտացն. ծառայի ընկերպարանըն ծածկելով
Աստուածութեանն։ Այսօր հընչեաց յառաքեալըն հայ-
րական բարբառ յերկնից. ասէ դա է Որդի իմ
սիրելի ընդ որ հաճեցայ. որ ըղընութիւնն անծայ-
րին կերպիւ ծածկեալ ծառայական։ փառք Հօր։
Այսօր վեմն հաւատոյ յայտնեալ զխորհուրդ
Երրորդութեան. երրակի յօրինմամբ տաղաւարացըն
խորհըրդոյ. որում ընդմեզ մաքրեսցես լինել տա-
ճար Երրորդութեանն։

Այժմ և միշտ։ Հաղորդապետք անծայրին խոր-
հըրդոցն. եւ բացողք դրան արքայութեն երկնից.
բարեխօսեցէք առ Տէր վն անձանց մերոց։

---

ՅԱՌԱՒՕՏՍ

Հարց Ա։

Ծագեաց Բանըդ Հօր և Հոգւոյն. որ իջեր ՚ի յերկ-
նից ՚ի փրկութի ազգի մարդկան. Ալթ հարցըն
մերոց։ Որ պահեցեր յաղթօղ ընծըդնութի նոցա
առաքելոցն. այսօր և մեք ընդ նոսին ցընծութբ
օրհնեմք զքեզ. Ալթ հարցըն մերոց։ Որ առա-
ւել բարձրացեալդ ես յաւիտենից. այսօր ընդ
դասս վերայից քոց բարեբանեմք զքեզ. Ալթ
հարցըն մերոց։

Գ.. Այգն օրհնեցէք բազմըր արարէք զնա յա-

փոխեա՛ն։ Փառք Հօր։ Որ ընտրեաց զերանելի առաքեալսն եւ նոքօք որսաց ի հաւատս ըզտիեզերս Քրիստոս. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որք ըզխաւար կռապաշտութեանցըն վանեցին եւ ըզլոյս գիտութեան ընդ հանուր յերկիր ծաւալեցին. ընդ նոսին բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Ա.Ձ։

Այսօր ընկեր ժողովուրդք. ցընծասցէք ընդ գալըստ Հոգւոյն սրբոյ. մեծացուցանելով զելողըն ի Հօրէ եւ յՈրդւոյ։ Փառք Հօր։ Այսօր ցնծային առաքեալքն զարդարեալք ի շնորհաց Հոգւոյն սրբոյ. մեծացուցանելով զելողըն ի Հօրէ եւ յՈրդւոյ։ Այժմ և միշտ։ Այսօր ըզուարճացան արարածք. ճըշմարիտ դաւանութեամբ Հոգւոյն սրբոյ. մեծացուցանելով զելողըն ի Հօրէ եւ յՈրդւոյ։

Ողորմեա Ա.Ձ։

Տէր որ զգըթութիւնդ քո զառատ հեղեր յերկնից ի մէջ սրբոց առաքելոց քոց. աղաչանօք սոցա ողորմեա։ Փառք Հօր։ Որ ի ձեռըն սոցա սըփռեցան շընորհք Հոգւոյդ սրբոյ ընդ ամ երկիր. աղաչանօք սոցա ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ սոքօք լուսաւորեցեր մըկրտութեամբ աւազանին զեկեղեցի քո սուրբ. աղաչանօք սոցա ողորմեա։

Տէր յերկնից Ա.Ձ։

Ա· Որք ի սկզբանէ պատուեալ եղեն ի սէր բոլորից Հօր. առաքելականն կոչմամբ ըզտիեզերս հրաւիրեցին յօժարել հաւանել մասին. վարդապե-

տութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք զՏէր: Որք ականատեսք և սպասաւորք եղեն մարմնացելոյ Բանին. գեր ի վերոյ անմարմնոց դասուցն հանդիպելով շնորհի. վարդապետութիւն սոցա ամենեքեան օրհնեսցուք զՏէր: Որոց դատողական աթոռ ահեղ ատենին հանդերձեալ մնայ. կատարել ի մեզ դատաստան ըստ գործոց. առ սոսա անկցուք զղջացեալ անձամբ պաղատելով. հաշտեցուցանել սրբօք ընդ մեզ զահաւոր դատաւորն:

Բ. Առաքեալք Աստուծոյ սիւնք հաւատոյ կաթուղիկէ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ երկնաւոր վարդապետին աշակերտք. բարեխօսեցէք շնորհել զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Փառք Հօր: Ընտրեալք Քրիստոսի եւ հաղորդակիցք աստուածային խորհրդոցն. ընդունողք զբանն կենաց և լուսաւորիչք տիեզերաց. բարեխօսեցէք շնորհել զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Այժմ և միշտ: Դատաւորք ահեղ ատենին եւ դատապարտողք ըստ Քն ոչ խոստովանողաց. աղաչեմք ըզձեզ բարեխօսեցէք շնորհել զխաղաղութիւն ամենայն աշխարհի:

Մանկունք Դ.Կ:

Քեւ պարծի այսօր Տէր եկեղեցի. ով վըկայուհի Տէր Սանդուխտ. որ ըղձայրականըն քո թողեր զպաշտօն. վասըն Քրիստոսի հեղեր զարիւն քո Տէր: Փառք Հօր: Աշակերտեցար առաքելոյն Թադէոսի. եւ ի հաւատս ճըշմարտութեան հաստատեցար. ոչ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնն. արժանի եղեր վերա-

նաւ առ Հայր։ Այժմ և միշտ։ Որ ըզտիեզերութեանն քո թագեր ըզփառս. եւ ահաւորին փառօքն զարդարեցար. այսօր դասակցեալ ընդ զուարթունս երկնից. վասն մեր առ Տէր Աստուած մեր բարեխօսեա։

---

ՑԵՐԵԿՈՅԻ

Համբարձի Ա.Զ. Սբ ես Տր։ 384։ Հետեւոյ Շարական. Ի քէն հայցեմք։ 386։ Ա–

Սա համբարձեալ ըզձայնն Յուդայի խնդրելով ի Տեառնէ ըզտենչալին ամենեցուն որ ըզխաչն. եւ հաւատով գոչէր մեկամբ երկրպագեսցուք անձային սուրբ նշանիս մեծացուցանելով ըզծնեալն ի կուսէն։

# Ա. ԿԻՐԱԿԷ

ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ. ԱԿ.

---

ԻԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԿ։

ՕՐՀՆԵՑԷՔ Տեառն երգ նոր և օրհնեցէք։ 270

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բ.Զ։

Որ ի յերկնից իջեր անըսկիզբըն Ած Բանն եւ լոյս. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ած հարցըն մերոց։ Որ ի խաչին բեւեռեցար եւ հեղեր զարիւնդ ի փրկութիւն տիեզերաց. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ած հարցըն մերոց։ Որ ի գերեզմանի եդար եւ յարեար ի մեռելոց ըստ գրոց յաւուր երրորդի. զքեզ ամենեքեան օրհնեսցուք Ած հարցըն մերոց։

Գ․ Ըզձեր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Որ ի խաչին բեւեռեցաւ եւ ի գործոց ձեռաց իւրոց ապտակեցաւ․ եւ կերակուր ընկալաւ ըզլեղի․ ամենայն արարածք գովելով բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Փառք Հօր․ Ասօն որում մահուն արեգակն խաւարեաւ եւ ցելոյր վարագոյր տաճարին վերուստ ի վայր․ վէմք պատառեալ երկիր շարժեցաւ․ ամենայն արարածք գովելով բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Այժմ եւ միշտ։ Թաղեցաւ ի մէջ երկրի եւ ի յերրորդ աւուր յարեաւ ածապէս․ եւ ի յերկինս համբարձաւ Աստուած․ ամենայն արարածք գովելով բարձր արարէք ըզնա յաւիտեանս։

Մեծացուսցէ ԻԶ։

Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան ածային ներմարդութեան․ գոհաբանեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկօղ կենդանութեան ազգի մարդկան․ վասն որոյ ըզքեզ Ածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ։ Ծնունդն Հօր եւ հնաւուրց անժամանակն յաւիտենից․ ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ եւ ի Հօրէ ոչ մեկնեցաւ․ վասն որոյ ըզքեզ Ածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ։ Փառք Հօր։ Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ Հօր․ անարգեալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութեան երկրպագեալ․ վասն որոյ ըզքեզ Ածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ։ Այժմ եւ միշտ։ Զքեզ ոչ միայն որդիք մարդկան այլեւ վերին զօրութիւնք․

դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց ղուարթնոց եւ հրեշտակաց. գոհարանեն և վերօրհնեն և փառաւորեն ըզմայր և զաղախին փրկչին մերոյ:

Ողորմեա Բ.Ձ:

Իջեր յերկնից Որդի Ա՜յ ազատեցեր զարարածս. անկանիմ առաջի քո ողորմեա ինձ Աստուած: փառք Հօր: Ի խաչին բեւեռեցար Աստուած և ըզմարդն ի կապանաց մահու արձակեցեր. եւ զիս մի անտես առներ որ մեղօքս եմ մեռեալ: Այժմ և միշտ: Ծագումն Հօր յանմատոյց լուսոյն որ իջեր ի գերեզման. կենդանացուցեր զարարածըս քո. եւ զիս մի անտես առներ քանզի քեզ միայնոյ մեղայ:

Տէր յերկնից Բ.Ձ:

Ի գերեզման քո կանխեցին կանայքն՝ զիւղս և զխունկըս բերին. ի տապանի թաղման քո. զի զմեղօք ըզհողացեալըս վերածեր ի կեանս: փառք Հօր: Փոխանակ իւղոյն զհաւատս անբիծ՝ և զաղաչանըս մեր ընդ առաւօտեան կանանցն ընկալ. որք զողջոյն կենաց լուան Եւայի ունկամբըն: Այժմ և միշտ: Ետուն աւետիս առաքելոցն յարութեան յարուցիչըն մեր աւերեաց ըզդժոխս. եւ զթըշնամին կապեաց ի յանլոյծ կապանս:

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Ա.Կ. Ա. Առաքեցար: 296:

# Ա. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Շուշանայ դստեր մեծին Վարդանայ: Բ.Ձ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Բ.Ձ. Օրհնեն զքեզ Ա՜ծ: 319:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Ձ. Ընդ սուրբս քո: 353:

# Ա. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Կիպրիանոսի եպիսկոպոսին և Յուստինեայ կուսին: Բ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Բ.Կ. Շնորհեա մեզ Քն: 323:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Կ. Օրհնեմք զքեզ: 356:
Մանկունս ի Հանգ. Գ.Կ. Յիշատակ Քնի: 513:

# Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց: Գ.Զ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. Գ.Զ. Զերծո զիս: 403:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Ա.Կ:

Փառաւորեալ յաւիտեան Ած հարցըն մերոց կեցո ըզմեզ: Որ արարեր ողորմութիւն ի մէջ հնոցին. և կենարար ցօղով քո փրկեցեր զերիս մանկունսն: Զհուրըն բորբոքեալ մանկունքըն. հաւատովըն շիջուցին և պատկերի ոսկւոյ ոչ մատուցին խունկս. այլ քեզ Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Յօղէր ըզցօղ ողորմութեան երից մանկանցն ի հնոցին. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Բանն Ած լոյս ծագեալ ի հնոցն. ըզգալուստ միածնին երգէին մանկունքըն. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իջեալ առ նա կենարարըն հրեշտակն. զՀայր ի յերկինս տայր փառաւորել. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Կ:

Նոր խորանիդ արեգականն արդարութեան նոր

օրհնութի՛ւն տամցո՛ւք. և անդադա՛ր բարեբանե՛սցուք։ Փառք Հօր։ Նո՛ր տաճարիդ անձեռն լուսոյն որ ի Հօրէ՛ նո՛ր երգս երգեսցուք. և անդադա՛ր բարեբանե՛սցուք։ Այժմ և միշտ։ Զնո՛ր միարանեդ հրաշալի նո՛ր միաւորման բանին և մարմնոյ. հոգևոր երգով բարեբանե՛սցուք։

Ողորմեա Ա.Կ։

Մեղա՛յ Տէ՛ր բազումողորմ Աստուա՛ծ. մեղա՛յ ողորմեա՛։ Փառք Հօր։ Մեղա՛յ Տէ՛ր և անկանիմ առաջի՛ քո. մեղա՛յ ողորմեա՛։ Այժմ և միշտ։ Մեղա՛յ Տէ՛ր խոստովանիմ ընդյանցանս իմ. մեղա՛յ ողորմեա՛։

Տէր յերկնից Ա.Կ։

Ընդ երկնայի՛ն զօրութե՛նան օրհնեցէ՛ք ըզՏէ՛ր ամ երկիր. և՛ ամ բընակիչք երկրի՛։ Փառք Հօր։ Զանուն որ փառաց նորա՛ տուեցէք յերկրէ՛ որդիք մարդկան. իշխանք և դատաւորք երկրի՛։ Այժմ և միշտ։ Զայնիւ երգո՛վ ցնծութեան բարեբանեցէք զԾ ի սրբութեան. մանկունք եկեղեցւոյ սրբոյ։

## Ա. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Բառաստուն և հինգ վկայիցն, և Ս. կուսանացն Նափիմեայ և Պրիսաքինեայ։ Գ.Կ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Կ. Այսօր հրեշտակաց։ 332։
ՃԱՇԱՏՕՍԻ Համբ Ա.Կ. Որք 'ի մարտի։ 357։
Մանկունս և Համբ. Գ.Կ. Յիշատակ ·Քնի։ 513։

## Ա. ՈՒՐԲԱԹ

Պահոց։ Գ.Ձ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. Գ.Ձ. Համբառնամ։ 407։
ՃԱՇԱՏՕՍԻ Համբ Ա.Ձ. Օրհնեալ ես։ 457։

# Ա. Շ Ա Բ Ա Թ

Ս. Նախահարցն Ադամայ, Աբէլի, Սեթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Սահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, և այլոց նախահարցն: Գ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Ա.Կ. Որ զա̃ծային զօրու: 387:
ՅԱՌԱՒՕՏՍ Հարց Գ.Կ. Առ քեզ Ա̃ծ: 373:

Մեծացուսցէ Գ.Կ:

Նա̊հապետացն Աբրահամու Իսահակայ և Յակոբայ. պարգևեցար ի յԱ̃Յ կոյս Մարիամ դուստր նոցին. երանեն ազգ և ազինք այսօր ընծայեալդ ի յԱննայէ: փառք Հօր: Աղախին և մայր կենաց աջոյն ծնող Հօր միածնին. որ առ ի քէն մարմնով ընկեց զամբարտաւանըն յաթոռոյ. երանեն ազգ և ազինք այսօր ընծայեալդ ի յԱննայէ: Այժմ և միշտ: Որ բարձրացո̃ց զանկեալ բնութիւս ի քէն ծնընդեամբ Որդին յերկինս. ըղկարօտեալքս ելից հացիւ՝ և զմեծատունսն ելոյծ ունայն. երանեն ազգ և ազինք այսօր ընծայեալդ ի յԱննայէ:

Ողորմեա Գ.Զ. Որ աւետաւոր: 392: Տէր յերկնից Գ.Զ. Այսօր ժողովուրդք: 393: Մանկունք Գ.Կ. Այսօր ցնծայ: 393:

---

ՅԵՐԵԿՈՅԻ Հանգստեան Ա.Զ. Սբ̃ ես Տր̃. Երկնաքաղ: 384: Ողորմեա Հանգստեան ըստ Մանկանցն աւուրն Գ.Կ. Այսօր ցնծայ: 393:

# Բ. ԿԻՒՐԱԿԷ

## ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ։ ԱՁ։

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—ըէ ԱՁ։

ՕՐՀՆԵՍՑՈՒՔ *երգ նոր Աստուծոյ փրկչին*։ 267։

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԲՁ։

Անապական Բանդ Աստուած որ իջեր ի մէջ հնոցին. փրկեցեր զերիս մանկունսն ցօղով օրհնութեամբ. օրհնեալ ես Տէր Աստուած։ Որ ի Բաբելոնի ըզբոց հրոյն շիջուցեր. եւ զմանկունսն ապրեցուցեր եւ նոքա երեքեանն գովէին մեծալով. օրհնեալ ես Տէր Աստուած։ Որ յարգանդի կուսին բնակեցար՝ եւ ծնար որպէս մանուկ. որ ըզմահ կործանեցեր և զյարութիւն քո ցուցեր. օրհնեալ ես Տէր Աստուած։

Գ.. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք յաւիտեանս։ Զանըսկիզբըն զամենասուրբ զերրորդութիւն. որ նոյն ինքն իւր անեղ բնութեամբն գոյացոյց յոչընչէ զամ արարածս. ըզընա հոգևոր երգով օրհնեցէք եւ բարձր արարէք յաւիտեանս։ փառք Հօր։ Զհամագոյական էութեան Բանն ի Հօրէ. որ լոյս մեծ ծագեաց անճառելի ծագմամբ. որ հաստատեաց զերկինս եւ զիմանալի զօրըս հրեշտակաց. ըզընա հոգևոր երգով օրհնեցէք եւ բարձր արարէք յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Զանմահ զերկնաւոր զթագաւո-

րութին. որ արարչագործ ստեղծմամբ վայելչա-
ցոյց զերկինս եւ զերկիր. ի փառս ամենայն
Երրորդութեան. երեքսրբեան հրեշտակային օր-
հնութեամբ. ընդ նմա հոգեւոր երգով օրհնեցէք եւ
բարձրացուցէք յաւիտեան:

Մեծացուսցէ Բ.Ձ:

Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան ծնայլին: 667:

Ողորմեա Բ.Ձ:

Առաջին պտուղ առաջին ծառոյն ընդ նախաս-
տեղծըն մահացոյց. իսկ Որդին միածին եկն և
փրկեաց զմեզ: փառք Հօր: Զչարչարանս ի
յանձն առեր ընդ խաչի յարուցիչդ մեռելոց. ջնջ-
եաց զձեռագիր խոց յանցանաց: Այժմ և միշտ:
Կենդանութիւն ի գերեզմանի եդար դու ի հո-
ղոյ ստեղծեալ մարդոյն. ընդ մեզ մեռեալ զանձն
իմ կենդանացո:

Տէր յերկնից Բ.Ձ:

Եկին ի գերեզմանն առաւօտեան նոր կանայքն.
յօծանել խնկել զանապական մարմինն: փառք
Հօր: Գուշումն հրեշտակին՝ քաջալերէր ընդոստա-
մելով. ցնծացէք յարեաւ որպէս յառաջն ա-
սաց: Այժմ և միշտ: Լուեալ ի հրեշտակէն
զաւետիս յարութեանն. պատմէին աշակերտացն.
եթէ յարեաւ Քրիստոս:

ՅԵՐԵԿՈՅԻ Հանգ. ԱՁ. Բ. փառք յարութ: 295:

# Բ. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Ս. Սահակայ և Յովսեփայ: Ակ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Ակ. Յամ ժամ օրհնեմք: 314:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Ձ. Որք զտանջանս: 360:

## Բ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Երկոտասան Առաքելոցն Ովսէի, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Յովնանու, Նաւումայ, Ամբակումայ, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ, Մաղաքիայ: Բ.Ձ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Ա.Կ. Որ զա̃ծայինն զօրու: 387:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. Որ ընդ հողեղէն: 391:
Մանկանց Դ.Ձ. Որ զյառաջագոյն: 395:
ՅԵՐԵԿՈՑԻ Համբ. Դ.Կ. Այսօր ցնծայ: 393:

## Բ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց: Բ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Բ.Կ. Յա̃մ ժամ աղաչանք: 401:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Կ. Զանճառ էութի: 424:

## Բ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Աթանագինեայ եպիսկոպոսին, և տասն աշակերտաց նորա, և հինգ վկայիցն: Գ.Ձ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Ձ. Զարհական մահ: 327:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. Յուսացեալքն: 367:

## Բ. ՈՒՐԲԱԹ

Պահոց: Գ.Կ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. Գ.Կ. Ք̃ս Ա̃ծ աս: 405:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Կ. Գոհաբանեմք: 460:

## Բ. ՇԱԲԱԹ

Ս. Վկայիցն Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիկտոսի և Փոտինոսի: Գ.Ձ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Դ.Ձ. Այսօր յիշատակ: 336:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. Ա̃ ես Տ̃ր զօր: 369:

# Գշ. ԿԻՒՐԱԿԷ

## ԶԱՏԻԿ ՎԱՐԴԱՎԱՌԻ։ Դ․Կ։

---

Ի ԴԻՇԵՐԻ

Օրհնութիւն Դ․Կ։

ՅԱՂԹԱԿԱՆ քեզ օրհնութիւնք Տէր։ 291։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բ․Կ։

Որ յերկնային զինուորութեանցըդ միշտ երկրպագիս Քն թագաւոր․ ընդ հօր եւ սուրբ հոգւոյն․ օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ խոնարհեցար յանճառ փառաց եկեալ իշխանութեամբ ի մահ խաչին․ դղրդեցան դժոխք յահեղ փառաց քոց․ օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Եւ հրաշափառ քո յարութեամբդ կենագործեցեր զմեզ մեղօք ընդ մեռեալս․ եւ համբարձիր փառօք ի յերկինս․ օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ․ Ըզ Տէր ըզ Քրիստոս թագաւորըն քաղցրաձայն երգով օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք հօր։ Որ պատուական խաչելութեամբ հրաշագործեաց ըզփրկութիւն յաւիտենից ննջեցելոցն․ քաղցրաձայն երգով օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Զյարուցեալն իշխանութեամբ զփառակից հօր եւ Սր հոգւոյն․ ընդ վեցթեւեան սրովբէագունդ դասս․ գովեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Բ․Կ։

Ուրախ լեր մայր լուսոյ Մարիամ․ երկիր բանաւոր արեգականն օթարան․ լեր բարեխօս վասն

անձանց մերոց: Փառք Հօր: Խնդա տաճար Բանին Աստուծոյ. բարձօղ տիրամաւթեան նախամօրն Եւայի. լեր բարեխօս վասն անձանց մերոց: Այժմ և միշտ: Ցընծա իմանալի արեւելք. քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեւեաց Քրիստոս. լեր բարեխօս վասն անձանց մերոց:

Ողորմեա Իկ:

Թ.իւնս իմ: Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի յերկնից իջեր Բանդ Աստուած եւ վասն մեր մարմնացար ի սրբոյ կուսէն. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Որ ի խաչին տարածեցեր զանարատ բազուկս քո. եւ վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Փառք Հօր: Որ ի գերեզմանի եդար անապական և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա: Այժմ և միշտ: Որ ի յերկինս համբարձար ամենակարող. և ընդ աջմէ Հօր նըստար յաթոռ փառաց. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա:

Տէր յերկնից Իկ:

Քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր: Փառք Հօր: Օրհնեալ է քո յարութիւնդ Աստուած. որ ըզմահ մահու ծանուցեր քոյին կամաւոր մահուամբդ. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր: Այժմ և միշտ: Գոչումն ահեղ հրեշտակին ի վիմէն՝ որ քարոզէր առ ի կանայսն յարեալ Տէրն ի մեռելոց. քո յարութեանդ փառք վայելէ երկայնամիտ Տէր:

ՅԵՐԵԿՈՅԻ Ժամք. ԴԿ. Ի. Լոյս հրեշտակն: 307:

---

## Գ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Անկարայեցւոցն Եղիազարու քահանային և եօթն եղբարցն, և մօր նոցա Շամունեայ: ԱՁ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱՁ. Ժողովեալքս՝ի յիշ: 310:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամք ԴԿ. Առ քեզ Աձ: 373:

---

## Գ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Սոփիայ և երից դստերացն Պիստիսի, Եղպիսի և Ագապեայ: ԱԿ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Յամ ժամ օրհնեմք: 314:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամք ԴԿ. Որ զհրաշափառ: 375:
Միանձնանց Ժամերգէ ԴԿ. Յիշատակ Սրբ: 513:

---

## Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց: ԲՁ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. ԲՁ. Դարձո զմա: 399:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամք ԲՁ. Օրհնեալ Տր Աձ: 425:

---

## Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Քրիստափորի վկային և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակիւլինեայ: ԲԿ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԲԿ. Շնորհեա մեզ Քս: 323:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամք ԱՁ. Զքեզ արդար: 345:

---

## Գ. ՈՒՐԲԱԹ

Պահոց: ԳՁ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Պահ. ԳՁ. Զերծո զիս: 403:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամք ԲՁ. Որ թագաւորդ: 462:

---

# Գ. Շ Ա Բ Ա Թ

## Եփեսոսի Ս. ժողովոյն երկերիւր հայրապետաց: Գ.Կ:

### Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Ձ:

Այսօր սըրբոց հայրապետացըն ժողովեալք ի միասին. եդին հաստատութիւն ընդհիմունըս հաւատոյ. ի վերայ հիման առաքելոց և մարգարէից: Այսօր ըզԲանն ի սկըզըբանէ քարոզեցին սբ հայրապետքըն. յառաջ քան զյաւիտեանս ի հօրէ ծընեալ անճառ. արարիչ գոլով յաւիտեանց ընդ հօր էակից հոգւոյն: Այսօր զհոգին ճըշմարտութեան դաւանեցին սուրբ հայրապետքըն. ծագումն առ ի հօրէ յառաջ բըղխեալ անհամաբար. ընդ նըմին յաւէտ միշտընջենաւոր փառակից Որդւոյ:

† Ժողովեալ սուրբ հայրապետքըն հրամամբ հոգւոյն սըրբոյ. վերըստին հաստատեցին զառաքելական քարոզութիւնն. ի վերայ վիմի հաւատոյ հիման որ եկեղեցւոյ: Որք զինու հոգւոյն որք արիաբար պատերազմեալք. վանեցին զընդդիմամարտ մոլութիւն հերձուածողացն. որպէս հովիւք քաջք հերքեցին ըզգայլըն ի հօտէ գառանց:

Գ.ՐԻ. Այսօր տօնէ եկեղեցի ուրախութեամբ ընդ յիշատակ սըրբոյն Գրիգորի. որով լուսաւորեալ պայծառացաւ վայելչապէս. ի հանդերձըս ոսկեհուռըս զարդարեալ եւ պըսակեալ. օրհնեցէք մանկունք զՔրիստոս Թագաւորն: Այսօր ցնծան նորածնեալ որդիք լուսոյ յիշատակաւ

սուրբ լուսաւորչին. որով հրաւիրեցան ի հարսանիսն անմահական. մտանել ընդ փեսային երկնաւորի ի յառագաստն լուսեղէն. օրհնեցէք մանկունք զՔրիստոս թագաւորն: Այսօր քահանայք հոգևոր պատարագին բազմաւորք վերապատուեն ընդ քահանայապետին որ. որով երկնային քահանայութեանցն հաղորդեալք. յոր վերափոխեալ այսօր մտանէ ի սրբութիւն սըրբոց միշտ բարեխօսել առ Տէր վասն մեր. օրհնեցէք մանկունք զՔրիստոս թագաւորն:

ՆԱՐՍ. Այսօր զուարճացեալ տօնեն երկնայինքն ընդ մարդկան. պարակից եղեալ փըրկութեան մերոյ. քանզի յայտնեցաւ մեզ հոգևոր գանձն լուսոյ. արևելեան արեգականն ճառագայթ սուրբն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր պարգևեա զխաղաղութիւն հայաստանեայց աշխարհի: Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական դասուն. գեղեցկապէս ծաղկեալ պայծառութեամբ. քանզի շնորհեցաւ հովիւն քաջ բանաւոր հօտի. յարմարեալ լուսաւորչին բողբոջ բուսեալ սուրբն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր հաստատեա զիշխանութիւն հայրապետական աթոռոյ: Այսօր մեծապէս փառօք ցնծայ թագաւորական դասն. ընդ հաշտութեան սիրոյ որ հայրապետին. քանզի եհաս ի յօգնութիւն օրինադրողին թագաւորաց. մարտակից զինուորական դասուն սուրբն Ներսէս. բարեխօսութեամբ սորա Տէր բարձրացո զիշխանութիւն թագաւորական աթոռոյ:

ՅՎՐ. Հայրապետ սուրբ եւ անբիծ և ընտրեալ յորովայնէ. սքանչելագործ վըկայ եւ պարծանք ազգի մարդկան. առ Քն բարեխօսեա վասն մեր քո տօնողացս: Հովիւ հոգեւոր բանաւոր հօտի. լուսաւորիչ տիեզերաց սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցւոյ. առ Քն բարեխօսեա վասն մեր քո տօնողացս: Հաստատութի հաւատոյ պսակ ի գլուխ եկեղեցւոյ. պայծառ քարոզ տիեզերաց եւ պարծանք ազգի մարդկան. առ Քն բարեխօսեա վասն մեր քո տօնողացս: Ի տաճարի քում սրբութն երկրպագեմք քո նշխարաց. փառաւորեմք զօր յիշատակի կատարման քո հանգստեան. առ Քն բարեխօսեա վասն մեր քո տօնողացս:

ՄՐՏ. Զանմարմնոցն ըզմաքրութիւն մարմնական կրեաց. տարեալ ի յանձինս իւրեանց՝ քաջ եւ յաղթօղ երանեալ նր հայրապետք. որոց բարեխօսութեամբ ողորմեա մեզ Աստուած: Շնորհազարդ և պայծառ առաքինութբ՝ հերքեցին զիշխանն անօրէն իւրեանց գործակցօք ճգնող հայրապետք. որոց բարեխօսութեամբ ողորմեա մեզ Աստուած: Հրեշտակք երկնից փափագեն հանդիսի կատարման սոցա. որք ի մահուն իւրեանց կենդանացան՝ եղեն ի կամարն երկնից՝. խառնեցան ի դասս զուարթնոցն. որոց բարեխօսութբ ողորմեա մեզ Աստուած:

ՀԳ.. Որ ի թեւս թեթեւանիւթ սաւառնեալ եւ հրացայտ սերովբէից. վերանցեալ տեսչութեամբ խնամես զարարածս. Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց: Որ սքանչելա-

պայծառ հրաշալի ձայնիւ ընդ Հօր և ընդ Որդւոյ միշտ փառաբանիս․ Եւ քաղցրութեամբ հայցես յարարածս․ Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց։ Այսօր ամենայնի տեսչութիւ ի վերնատունըն հընչեալ հողմաձայն հընչմամբ․ և զառաքեալսն արբուցեալ բաշխեցար յարարածս․ Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց։

Հն․ Արարչագործդ Աստուած․ զարարածըս քո մի անտես առներ այլ գթա ի ննջեցելոցն մեր․ Եւ հանգո ընդ սուրբըս քո ի խորան քում սիրողաց։ Արարչակից Հօր Որդի․ ի միւսանգամ քո գալըստեանն անդամապարտ պահեա ըզննջեցեալսըն մեր․ Եւ հանգո ընդ սուրբըս քո ի խորան քում սիրողաց։ Կենդանարար սուրբ Հոգի։ յորժամ նորոգես զերեսս երկրի․ նորափետուր զարդարեա ըզննջեցեալսըն մեր․ Եւ հանգո ընդ սուրբըս քո ի խորան քում սիրողաց։

ՄԾ․ Սուրբ զԱստուածածինն․ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր․ ըզծընեալ փրկիչն ի սրբոյ կուսէն։ Ասէ ուրախ լեր բերկրեալդ․ քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

ԽԶ․ Այսօր ուրախացեալ ցընծան երկնից բազմութիւնքն․ ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ․ քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից․ ի լուսաւորել զկաթողիկէ սուրբ զեկեղեցի․ փառօք գալըստեանն քո Տէր։ Այսօր սիւն լուսոյ հովանի եղեւ ընդ մեզ ի բարձանց․ քանզի թագաւորն երկնաւոր եկաւորի ի սուրբ եկեղեցի

Եւ զօրութիւնք հրեշտակաց ծառայեալ տօնեն ընդ մարդկան. փառաւորութիւնք գալստեան քո Տէր։ փառք Հօր։ Այսօր քահանայապետն ճըշմարիտ աստուածային օրինօքն պատուեալ կանգնէ ըզքաւանկին սեղանն խաչին. արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնըն Տեառն. մաքրապէս մերձեցարուք փրկեալքդ նորոգ ժողովուրդք. եւ հայցեցէք ի Քրիստոսէ զի շնորհեսցէ ըզսա մեզ ընդ երկայն աւուրս։

Այժմ և միշտ։ Այս ըզհաւատոյս ճշմարիտս որ Երրորդութեանն. ընդ համօրէն քարոզեցին յեկեղեցիս ուղղափառաց. հաստատեա ի Հայր եւ յՈրդի եւ յամենասուրբ Հոգի։

---

## ՑԱՌԱՒՕՏՍ

### Հարց Գ.Զ.

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս անըսկիզբըն Որդի. ի յերկնից կամաւ Հօր իջեր ի փրկութիւն աշխարհի. օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ զանձառելի ծածկեալ խորհուրդ անպարագիր Աստուածութեանդ. հարսին եկեղեցւոյ ցուցեր ի ձեռըն սուրբ հայրապետացն. օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ իմանալի աստուածային ծաղկամբ ի շնորհաց Հոգւոյդ լըցեալք. լըցին ըզտիեզերս հաւատով Երրորդութեանդ. օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ. Ըզ Տէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան. Եկայք լուսաւորեալ ժողովուրդք հեթանոսաց. ի ձեռըն լուսաւորչին բըղխման յորդ-

տուած վտանգաց. բանի երանելի հայրապետացն. օրհնեցէք և բարձր արարէք ընդ ամենայն երկնաւորս փառք Հօր: Որք զանհասանելին անօրէնութիւն ներգործեալ Բանին յաշխարհ. ծանուցին տիեզերաց անհաս գոլով արարածոց. օրհնեցէք և բարձր արարէք զԲան թագաւորն: Այժմ և միշտ: Որք հրաշալի զօրութիւ Հոգւոյն նորոյ ըզխաւարն անգիտութեան յաշխարհէ փարատեցին. և ուղիղ հաւատոյ հիմամբ հաստատեցին զեկեղեցի. քահանայք և պաշտօնեայք օրհնեցէք և բարձր արարէք ըստ զՀոգին ճշմարտութեան:

Մեծացուսցէ Գ.Չ:

Աստուածածին երկնային դասուն առաջին ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: փառք Հօր: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր աննախապատկերաբար բնակել հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: Այժմ և միշտ: Որ բոցեղէն սրովբէիւք շուրջանփակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ:

Ողորմեա Գ.Չ:

Աստուածային ճառագայթ. որ ի Հօրէ մեզ ծագեցար. և լուսովդ քո լցեր ըզտիեզերս ի ձեռն նոր հայրապետացն. աղօթիւք սոցա Քրիստոս ողորմեա մեզ: փառք Հօր: Որք անբաժանելի ըզմիութիւն Երրորդութեանդ. ընդ հանուր քարոզեցին ուղղափառ դաւանութիւ. աղօթիւք սոցա Քրիստոս ողորմեա մեզ: Այժմ և միշտ: Ըս զանճառ-

ուն ղն տնօրէնութեամբդ քո խորհրդով. ուսուցին ազգի մարդկան զերադոյն քան զըղձնութիւնս. աղօթիւք սոցա Քրիստոս ողորմեա մեզ:

Տէր յերկնից Գ.Զ:

Հանդիսացեալք ընդ երկնայնոցն այսօր տօնեմք ըզյիշատակ սուրբ հայրապետացն. որք անձայինն առաքելապէս աւընկալեալ շնորհաց բաշխումն. ընդ հանուր ծաւալեցին յեկեղեցիս արդարոց. Օրհնեցէք զՏէր ընդ անմարմնոցն դասուց: Որք բանիւ զանճառելի տնօրէնութիւն Բանին Հօր քարոզեցին. և լուսով իմանալեաւ զարդարեցին ըզտիեզերս. ի շնորհս պանծալիս երկնաւորս պարգեւացն. Օրհնեցէք զՏէր ընդ անմարմնոցն դասուց: Փառք Հօր: Որք անձնաւոր զէութիւն բղխեցելոյն ի Հօրէ և յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ դաւանեցին. և նոյնագոյ բնութիւն Հօր և Որդւոյ հաւասարեալ. անորիշ բաժանմամբ համագոյ միութիւն. Օրհնեցէք զՏէր ընդ անմարմնոցն դասուց: Այժմ և միշտ: Այսօր անպատում գե-ղազարդեալ փառօք պայծառացեալ սուրբ եկեղեցի. բարձրաձայն հնչմամբ աւետարանչացն Աստուծոյ. յառաջադաս հրաւիրելով զմանկունս երկնաւոր փեսային. Օրհնեցէք զՏէր ընդ անմարմնոցն դասուց:

Մանկունք Գ.Զ:

Ով հրաշալի նախահարք միշտ յաղթողք ի մարտի. որք գումարեցայք ի Նիկիա գումար դասք երջանիկ դիտողացդ եղարանից. որք մերժեցէք զորոմն անպականութեան. սահմանեցէք

տառըս կանոնականս համանգամայն ազանց: Տեսի ես յայնմ առենի Բանն ծագեալ ի Հօրէ. գոյանի ծընունդ եւ ոչ արարած. միշտ համագոյակից ընդ Հօր եւ Հոգւոյն. եւ լուսաւորդ բանիւք հերքեալ զհերձուածս. Նորոգեցին զՏէրութիւն եւ զաւանդն իւր պիղծ: Արմատ անիծից կորկին ընձիւղեալ Սանկեղոն հայհոյիչ. գայլ ապականիչ յարձակեալ. խօսէր զխոտելի զընտրան ի հօտէ զառանց. եւ զանհաւէժ ցընդմամբ խարդաւանեալ ի վիհն. Նորոգեցին զՍանկեղոն զհայհոյիչ լեզուն: Փառք Հօր: Նա ի յեղանալ հանդիսին հերքեցին զչար հերձուածսն. եւ զաւանեցին սուրբ զՀոգին. Եւ լոյս ի Հօրէ եւ յԱրդւոյ էակից նոցանց. Եւ կենդանարար ազանց բոլորեցունց. Նորոգեցին զՍանկեղոն զհայհոյիչ լեզուն: Այժմ եւ միշտ: Բանըն Թանձրանայ ի մարմնի մարմնանայ անմարմինն. միաւորեալ ընութեամբ ի յերկուց. անխառակրեալ ի վերայ քառամթե խաչին եւ վեր առեալ ի Թաղմանէ անապական. Նորոգեցին ըզՆեստոր եւ զաւանդն իւր պիղծ:

---

ՅԵՐԵԿՈՅԻ

[illegible] ԳՁ. Հանգստեանք: 684:

[illegible]

[illegible]

որպէս զբօսան Ը, Ը կամ Գ, Գ փոխեա ընդ Ի, մէ աւարտեսցին: Իսկ ըստ այն դուրս շաբաթն աւելի լինի աւելորդ, որպէս յաւելորդացն առ և փոխեա մէ աղէղ պատահեսցէ:

Բայց այնպէս արա, մէ ՚ի բարեկենդանէ շաբաթին համառօտ մերձեցեալ Հայրապետացն փոխեսցես ա- ղօթամատ: Եւ ՚ի յաւելեալ շաբաթուն, ընդ առաջինն, վերջին շաբաթուն և առաջին շաբաթուն փոխե այլագնաւոր:

# Դ. ԿԻՒՐԱԿԷ

## ԴՁ.

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութեան ԴՁ:

ՕՐՀՆԵՍՑՈՒՔ զՏէր և զյաղթօղ զօրու: 288:

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԻԿ:

*Անսկիզբն Այծ և անժամանակ որ առաքեցեր զմիածին Որդիդ քո ի փրկութիւն մեր. օրհնեմք զքեզ Այծ հարցն մերոց: Զօրինակ ի Հօրէ անճառ միութեան ի կուսական որովայնէ երևեալ մարմնով ի փրկութիւն մեր. օրհնեմք զքեզ Այծ հարցն մերոց: Որ նստիս ի քրովբէս և յանմարմնոց վերօրհնիս Քրիստոս սրբասաց ձայնիւ· համբերեցեր չարչարանաց ի խաչին բարձրացեալ խորտակեցեր զզօրութիւն մահու. օրհնեմք զքեզ Այծ հարցն մերոց:*

Գ.. *Ազգեր Ամենայն ազինք զՔս գովեցէք· զյարուցեալն ի գերեզմանէն անապական մարմնով: Փառք Հօր: Զբարբառ հրեշտակին լուեալ կանանցն ընթացեալ պատմէին աշակերտացն ա-*

սելով յարեաւ Քրիստոս. Ամենայն ազինք զՔս գովեցէք. զյարուցեալն ի գերեզմանէն անապական մարմնով։ Այժմ և միշտ։ Եւ մեք ընդ նոսին երգակցեալ հանգոյն զօրհնութիւն. փրկողին ըղմեզ ասելով յարեաւ Քրիստոս. Ամենայն ազինք զՔս գովեցէք. զյարուցեալն ի գերեզմանէն անապական մարմնով։

### Մեծացուսցէ Բ.Կ։

Այգն լուսոյ և ամպ հովանի սուրբ կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Փառք Հօր։ Անկէզ մորենի և սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Այժմ և միշտ։ Անիծից լուծիչ և քաւիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։

### Ողորմեա Բ.Կ։

Իջեր Տէր և մարմնացար ի կուսէն. և զհողեղէն բնութիւն ազատեցեր ի մեղաց։ Ելեր Տէր բևեռեցար ի խաչին. ըզմեռեալն յանձն առեր կենդանատու մեռելոց։ Փառք Հօր։ Եդար Տէր ի նորափոր ի վիմի. և մատանեաւ կնքեցար գանձդ կենաց աշխարհի։ Այժմ և միշտ։ Յարեար Տր աւերեցեր ըզդժոխս. ի յերկինս համբարձար և ընդ աջմէ Հօր նստար։

### Տէր յերկնից Բ.Կ։

Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզմանն

*ամենօրհնեալ. ՔԷ յարևամուտ ի մեռելոց: փառք Հօր: Նո-ւ առ նոսա ասէր հրեշտակըն զի՞ խնդրէք ընկեն-դանին ընդ մեռեալս. ՔԷ յարևամուտ ի մեռելոց: Այժմ և միշտ: փութացարուք ով որ կանայք եւ պատմեցէք աշակերտացն ամենօրհնեալ. ՔԷ յա-րևամուտ ի մեռելոց:*

---

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Դ.Զ. Ր. Կանանց կանխեր 305:

---

# Դ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

## Պահոց: ԱԿ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԱԿ. Ծով կենցա: 398:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԶ. Օրհնեալ Տէր: 425:

---

# Դ. ՈՒՐԲԱԹ

## Պահոց: ԲԿ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. պահ. ԲԿ. Յամ ժամ: 401:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Արարիչ և մար: 465:

---

Եւ դարձեալ ծանիր, զի ըստ [illegible], գայ տարի յոր յայս [illegible] ի շաբաթն [illegible] հանդիպի, և գայ տարի յորում [illegible], մինչ 'ի միւս շաբաթն: [illegible]

---

# ԿԻՒՐԱԿԷ

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Զ:

*Փառաւորեմք ըզքեզ Տէր Աստուածհայրըն մե-րոց: Որ ըզգօղ անապական արեանըն ցօղեցեր*

տնկզերաց ի վերայ խաչին. օրհնեմք միշտ և փառաւորեմք: Որ Թաղմամբն երեքօրեայ յարուցեալ ըղձիս ծագեցեր տնկզերաց. օրհնեմք միշտ և փառաւորեմք:

Գ. Ըզձեր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ ի բարձունս եւ և գերեաց ըզգերութիւն. եւ ետ պարգեւս որդւոց մարդկան. օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Նա ի մեռեալս ազատ առանց օգնականի. քահանայք օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Ձ:

Զծածքին երկնային դրունք ծածկին ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ: Փառք Հօր: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անմատչականաբար ընակեալ հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ: Այժմ և միշտ: Որ բոցեղէն սրովբէիւք շուրջափակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղէնի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալ Տէր ընդ քեզ:

Ողորմեա Գ.Ձ:

Նախկին Հօր կամաւորութեամբ եկիր ի չարչարանս. զչարչարանս յանձն առեր. խաչի համբերելով իջեր ի գերեզման: Փառք Հօր: Ի նշանաբերիցն եկեալ ի գերեզման փրկչին. ըզուղս անդրէն բերին ի խնկել զանապական մարմինդ: Այժմ և միշտ: Աւետիս լուեալ ի հրեշտակէն որ ասէր. Տէր յարեաւ ի մեռելոց ձեզ կեանս պարգեւեաց:

Տէր յերկնից Գ.Զ:

Խաւարեր եւ որ կանայքն ողբալով փութային եկին ի գերեզման քո Տէր. ի խնկել զանապական մարմինդ: Փառք Հօր: Նորբեան աւետաւոր հրեշտակին որ գոչէր առ երջանիկ կանայսն. զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. քանզի յարեաւ Տէր եւ աներեւոյթ եղդըժողս: Այժմ և միշտ: Պատմեալ երանելի կանանցն զյարութիւն Տն աշակերտացն. ուրախացեալք ընթանային Պետրոս և Յովհաննէս ի կենդանատու գերեզմանն:

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բ.Զ:

Որ ապրեցուցեր զերիս մանկունսն ի հնոցին եւ զմեզ ապրեցո յահագին հրոյն. Տէր Աստուած հարցն մերոց: Որք երգով օրհնութեան զհուրն ի ցօղ փոխեցին եւ զթագաւորըն յամօթ արարին. ընդ նոսին օրհնեմք զքեզ. Տէր Աստուած հարցն մերոց: Աստուած հարցն մերոց գովեմք զքեզ և առաւել բարձրացուցանեմք, որ զՄիածինդ առաքեցեր փրկել զմեզ. Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք: Միաբանութեամբ տուք փառս եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Որ ի բարձունս բնակեալ է զխոնարհս տեսանողին. միաբանութեամբ տուք փառս եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Քահանայք եւ պաշտօնեայք երիտասարդք

եւ կուսանք. անդադար զԱստուածածին աստուծոյ գովեցէք եւ բարձր արարէք ընդ յաւիտեան։

Մեծացուսցէ ԻԶ։

Ըզքեզ կոյս և մայր և բնակարան աստուածային ներմարդութեան. գոհաբանեմք և վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեն ազգի մարդկան. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։ Ծնունդըն Հօր եւ հինաւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ և ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։ Փառք Հօր։ Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգեալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութեան երկրպագեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։ Այժմ և միշտ։ Ըզքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ և վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն և փառաւորեն ըզմայր և զաղախին փրկչին մերոյ։

Ողորմեա ԻԶ։

Աներեւութից քննօղ դատողնեաց բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւն. եւ կեցո միայն մարդասէր։ Փառք Հօր։ Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան ողորմեա անձին իմոյ բազմամեղի. եւ կեցո միայն մարդասէր։ Այժմ և միշտ։ Անբաւական ողորմութեան շնորհս պարգեւեա ինձ յահագին աւուրն ըզթողութիւն. եւ կեցո միայն մարդասէր։

Տէր յերկնից Բ.Ձ.

Օրհնեմք ըզքեզ անսկիզբըն Հայր. յամենայն ժամ օրհնութիւն ի բարձունս: Փառք Հօր: Գովեմք ըզքեզ միածին Որդի յամենայն ժամ գոհութիւն ի բարձունս: Այժմ և միշտ: Բարեբանեմք ըզքեզ սուրբ Հոգի. յամենայն ժամ փառըք քեզ Աստուած:

---

# ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բ.Ձ.

Որ ահաւոր քոյով զօրութեամբ յօդըս ցօղաւորըս փոխեցեր զզրոց հնոցին. ըզքեզ օրհնեմք անդադար Ած հարցըն մերոց: Որ ըզծառայս քո զվըտանգեալս ի հնոցին պահեցեր անապական. ըզքեզ ծանուցեր արարիչ և Տէր գոլով. ըզքեզ օրհնեմք անդադար Ած հարցըն մերոց: Ընդ երանելի մանկանցն երգեսցուք ի նեղչաց մերոց փրկեալ ըզմեզ. և մի իսպառ մատներ զի գինք արեան քո եմք. ըզքեզ օրհնեմք անդադար Ած հարցըն մերոց:

Գ.· ԶՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Զանբաժանելի սուրբ զԵրրորդութիւն արժանաւորք ձայնիւ. գովելով օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Զերկրպագեալըն յամ արարածոց համաբնական ձայնիւ. բարեբանելով օրհնեցէք և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Բ Ձ:

Բանն առաքեալ ի Հօրէ. որ վասն մեր մարմնացաւ. եւ ցնծութի աշխարհի յայտնեցաւ. ընդ քեզ բարեբանեմք Ածածին կոյս: փառք Հօր: Զի որում ոչըն հանդուրժէին. բոցանըշոյլ սերովբէքն. նա բնակեցաւ ի քում յորովայնի. ընդ քեզ բարեբանեմք Ածածին կոյս: Այժմ եւ միշտ: Յորմէ սարսեալ դողային. փայլակնացայտ ի լուսոյն. ի գիրկըս քո ըզնա ընկալար. ընդ քեզ բարեբանեմք Ածածին կոյս:

Ողորմեա Բ Ձ:

Բազում են քո գըթութիւնքըդ բազմամեղ անձին իմոյ. ողորմեա Աստուած քաւիչ իմ: փառք Հօր: Զի քեզ անյիշաչար Տէր մեղայ չարին խաբմամբ. ողորմեա Աստուած քաւիչ իմ: Այժմ եւ միշտ: Ի քո ի միասնական գալըստեանըն յորժամ գաս դատել զերկիր. ողորմեա Աստուած քաւիչ իմ:

Տէր յերկնից Բ Ձ:

Օրհնեսցուք եւ գովեսցուք առաւել բարձր արասցուք եւ բարեբանեսցուք զանուն քո. փրկիչ քեզ վայելէ փառք: փառք Հօր: Հրեշտակք եւ մարդիկ եւ ամ արարածոց լեզուք ընդ քեզ միայն օրհնեն. փրկիչ քեզ վայելէ փառք: Այժմ եւ միշտ: Երկնային զօրութիւնք անդադար օրհնութի մատուցանեն քեզ. փրկիչ քեզ վայելէ փառք:

## ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց:

Յաւուրս Հարց Բ Ձ. Ուղիղ են ճա: 427:

# ՃԻՆԳՏԱԲԱՐԻ

## Պահոց:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Բ.կ:

Հա՛րցըն մերոց օրհնեալ ես Տէր եւ փառաւո-րեալ յաւիտեան: Մի՛ ցրեր զուխտըս քո ի մերժեր ըզմեզ յողորմութենէ քումմէ: Բարձր ա-րասցուք զանուն քո սուրբ. Թագաւոր հզօր եւ սքանչելագործ:

Գ. ԸզՏէր Գործք քո օրհնեն ըզքեզ եւ առաւել բարձրացուցանեն: Փառք Հօր: Որ ըզհուրըն շի-ջուցեր եւ զմանկունսն ապրեցուցեր. գործք քո օրհնեն ըզքեզ եւ առաւել բարձրացուցանեն: Այժմ և միշտ: Օրհնութեալ աղքայն ընդ տե-սել հրեշտակին ձայնէր եկայք արտաքս ծա-ռայք Աստուծոյ. զի եւ ես ընդ ձեզ օրհնեմ զԹագաւորն անմահ:

### Մեծացուսցէ Բ.կ:

Ըզքեզ Աստուածածին որ վերօրհնեալ ի զօրաց հրեշտա-կաց. անդ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: Փառք Հօր: Ըզքեզ բնակ հրեղէն Աստուածու-թեանն յիմանալի զօրացն երանեալ. անդ մարդ-կան կենդանեաց մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Ըզքեզ մայր Էմմանուէլի մարգարէին յառաջ գուշակեալ. անդ մարդկան կենդանեաց մեծացու-ցանեմք:

### Ողորմեա Բ.կ:

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են ի մե-ղաց իմոց սուրբ արա զիս Տէր: Փառք Հօր:

Յանցանաց իմոց զարհուրի սիրտ իմ. աղաչեմ ըզքեզ Թող ինձ Տէր: Այժմ և միշտ: Արտասուաց իմոց մի լռեր Տէր. զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի:

Տէր յերկնից ՐԿ:

Անբաւանութեամբ տուք փառս ի բարձունս Թագաւորին յաւիտենից: փառք Հօր: Զի նա փառօք է փառաւորեալ ի յերկինս և ի յերկրի: Այժմ և միշտ: Լուսաւորեա Տէր զանձինս մեր լուսատու տիեզերաց:

# ՈՒՐԲԱԹ

Պահոց:

Յառաւօտուն Հարց Հանգստեան ըստ պատշաճի:

# ՇԱԲԱԹ

Տօն շողակաթին:

ԻԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ·Ձ:

ՈՒՐԱԽ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք: Խնդա յոյժ դուստր Սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ. և Թագաւորն երկնաւոր հանգեաւ բնակել ի քեզ: Ընդ դասս երկնաւոր զօրացըն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւն. ուրախ լեր հարսն անարատ անքընին քո խորհրդովն:

✝ Խորան սրբութեան կանգնեցաւ որ եկեղեցի եւ Քրիստոս թագաւորն ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երգեսցուք Քանի երգ նոր։ Դասք հրեշտակացն վայր իջեալ յերկնից երգեն ասելով. հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ։

ՅԱՐ. Այսօր հրեշտակաց բազմութիւքն տօնակից լինին ընդ մեզ. քանզի երկնաւոր թագաւորն եկաւորի ի սուրբ եկեղեցի։ Խնդա եւ զուարճացիր հարսնացեալդ Այ եկեղեցի. քանզի ընդ քեզ Տէրն տերանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակել ի քեզ։ Լուսաւորեալ լուսաւորեա կաթողիկէ եկեղեցի. քանզի ի քեզ շող ածեղէն ի յօրէ լուսոյ ծագեալ. եւ լուսաւորեաց զմանկունս քո։

Որք արժանաւորեցայք ի կոչումն փառաւորութեան Քրիստոսի Այ մերոյ. եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք զանուն նորա ձայնիւ ցնծութեան յօրհնութիւն ի նոր։ Զօրացեալքս ի քեզ Քրիստոս ժողովուրդք հաւատացելոց. ճշմարիտ խոստովանութեամբ. օրհնեմք զխորհուրդ ածային կենսաբեր տնօրէնութեան քո. փառաւորեմք զահաւոր եւ զսքանչելի անուն քո Տէր Տէր մեծ ի մէջ ամ երկրի։ Ուրախ լեր եկեղեցի որ հարսն երկնաւոր խորհրդոյն. ի փառս ամենասուրբ Երրորդութեան. որ համագոյ իշխանութիւն իւրով զարդարեաց ծագմամբ լուսով պսակեալ զքեզ ի պատիւ ամենայն սրբովք իւրովք։

ԱԳ. Լուսաւորեալ Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո.

զարդարեա զամուրըս քո. և փառօք Տեառն ի վեր քո ծագեսցի։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիովնէ. Եւ քեզ մատուսցին աղօթք Երուսաղէմ։ Պա-վեա Երուսաղէմ ըզՏէր եւ օրհնեա զԱստուած քո. ընդ որ ժողովուրդ դիմեն դուստրը Սիովնի։

Այսօր Ածութիւն զուարճանայ նոր հաստատելով զերկիր. պարըք սուրբք փառաբանեն զուարթնոց. Եւ մեք ձայնիւ օրհնութեան զարդարեսցուք նոր ըզտօնս։ Այսօր եւ մեք ցընծամք տօնիւս ընդհանուր հրեշտակօք. մեծապէս փայլմամբ երևեցաւ յաշխարհի. առ Աստուծ գոհութիւնք ընթանան. պատմէն անդադար զբան կենդանի։ Խընդա և զուարճացիր եկեղեցի. կոյս որ եւ հարսն երկնաւոր փեսային. անհաս տեսանեմք զծնեալն ըզՔրիստոս. գոլով առ քեզ լոյսըն հեթանոսաց։

Ա.Գ. Որ արարեր զօրութեամբ զհիմնարկեալսն աշխարհս վերին. եւ ի նմա հաստատեցեր տըն-տես ըղպետըս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ սգալի. եւ ի դրախտն որ յԵդեմի տընտես եդեալ զմարդն առաջին. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. Եւ ի սմա կարգեալ տընտես զքահանայս Բանին ճըշմարտութ. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Աննմանելոյն անճառաբար բարձրօղ էիցըս բարձրոյն. որ ծընար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր. բարեխօսեա փառըն մեր Աստուածածին Մարիամ։

ՀԳ․ Որ ի թեւըս թեթեւաննիւթ սաւառնեալ եւ հրացայտըդ սերովբէից․ վերանըստեալ տեսչութեամբ խնամես զարարածս․ Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց։ Որ պաշտելապայծառ հրաշալի ձայնիւ ընդ Հօր և ընդ Որդւոյ միշտ փառաբանիս․ եւ քաղցրութեամբ հայիս յարարածս․ Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց։ Այսօր աստուածային տեսչութեամբ ի վերնատունըն հընչեալ հողմաձայն հընչմամբ․ եւ զառաքեալսն արբուցեալ բաշխեցեր յարարածս․ Հոգիդ սուրբ օրհնեալ ես յարարածոց քոց։

ՀՆ․ Որ երկայնամիտդ ես Տէր․ քաղցր և անոխակալ․ հանգո զհոգի քո ծառայից․ զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին․ Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս․ եւ զուխտըս մեր ընկալ որպէս զԱբելին զՆոյին և զԱբրահամուն․ զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին։ Ի խորան քում սրբազնոյն հանգուցես ըզծառայս քո․ եւ զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբըս քո․ զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին։

ՄԾ․ Սուրբ զԱստուածածինն․ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր․ ըղծընեալ փրկիչն ի սրբոյ կուսէն։ Փառք Հօր։ Ասէ ուրախ լեր բերկրեալդ․ քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

Այժմ և միշտ։ Ուրախ լեր բերկրեալ հարսնացեալ դու եկեղեցի․ պայծառացո զմանկունս քո

յօրհնաբանութիւն. ծագողին ընդ լուսոյ ի քեզ մայր եկեղեցի։

Ալէլու– Ալէլուիայ ՚ի յայնէն։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Ձ։

Ուրախ լեր այսօր նոր եկեղեցի. եւ տօնեա ընդ տօն ՚ի քո գաւառդ Սիոնի. քանզի ի քեզ հաճեցաւ ՚ի բնակել. Տր Ած հարցըն մերոց։ Ուրախ լեր դշխոյ գաւառդ Սիոնի. եւ ցնծա վերին Երուսաղէմ. քանզի Քն արքայն երկնից գայ առ քեզ. Տր Ած հարցըն մերոց։ Ուրախ լեր Սիոն մայր եկեղեցի. քանզի ի քեզ շող ածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց. Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ.. ԸզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Որ պըսակեաց այսօր նոր զեկեղեցի. նշանաւ խաչին իւրով. ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Որ վերըստին ծնընդեամբ նոր աւազանին. լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան. երգով ըզՏր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Ձ։

Աստուածածին գերագոյն երկնից ցուցար խորան եւ առագաստ. քանզի ծագեալ լոյսն ի Հօրէ. բնութեց էից անտանելին պարագրեցաւ ի քում յորովայնի. հոգեւոր երգով ըզքեզ միշտ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Դուռըն փակեալ զքեզ Եզեկիէլ յառաջագոյն ծանոյց կոյս անարատ.

ընդ որ եմուտ անհաւան յէից. Զանուն անմահութեան որ ի Հօրէ և էր մարմնով անխառնելի միացեալ կուսութեանդ. Հոգևոր երգով զքեզ միշտ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Վերափոխեալ զքեզ ի յերկնային խորանսն այսօր Որդին քո միածին. ուստի եւ դասք առաքելոցն եւ խմբական որ կուսանացըն միաձայնելով գովեն զքեզ մայր ամենօրհնեալ. Հոգևոր երգով զքեզ միշտ մեծացուցանեմք:

### Ողորմեա Դ.Զ:

Որ հաստատեցեր բանիւ. զեկեղեցի քո Քրիստոս. ի վերայ առաքելական վիմի. երգել ի սմա զերգըս հոգևորս: Փառք Հօր: Կանգնեալ ի սմա սեղան սրբութեան. բաշխէ զմարմին իւր և զարիւն. եւ տայ ի սմանէ մեզ նորոգումն. ի թողութիւն մեղաց մերոց: Այժմ և միշտ: Իջեալ Հոգւոյն սրբոյ. աղաւնակերպ երևմամբ. ի վերայ մարմնոյ և արեանըն Տեառն. ի բժշկութիւն հոգւոց մերոց:

### Տէր յերկնից Դ.Զ:

Լուսաւորեա Երուսաղէմ զարդարեալ զամուրըս քո. քանզի մերձեցաւ առ քեզ փեսայն երկնաւոր. փրկութիւն քեզ շնորհելով պսակեալ զքանչելի փառօքն իւրովք: Փառք Հօր: Այսօր ծաղկեաց քեզ դշխոյ գաւառըդ Սիովնի. արդարութեան արեգակըն Քրիստոս. և սփռեցան ընդ քեզ շնորհըք սբ Հոգւոյն մեծապէս պարգևօք: Այժմ և միշտ: Այսօր ցընծայ սուրբ Սիովն մայր եկեղեցի. փայլեցոյ զմանկունըս քո որպէս

զարմացեալն․ զի անճառ ծնունդ խնդութեամբ ըզ ցոյց ընդ երգ Քրիստոսի թագաւորին:

Առաւօտու Երգ Տան քում վայելէ: 147:

Բոլ․ Գանձ Եկեղեցւոյ ձայն Առասցուք:

Մանկանց Դ․Կ:

Այ՝ մանկտին ի հօրէ և լոյս փառաց ընդ նմին․ ձայնք հընչեցին սանդարամետս անդընդոց: փառք հօր: Տեսանել ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի․ պատմէր ըզընծայութեամբ հանապազորդ արքային: Այժմ և միշտ: Եկայք շնորհեսցուք զի ըզխորանըն լուսոյ․ քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի հայաստան աշխարհի:

Օրհնի Մանկանցն Բոլ․ Մէ եկեղեցեաւս: Կեցո յայտնէ: Ան․ Առ դրան:

ՑԵՐԵԿՈՅԻ

Փառք Լոյս զուարթ: Եւ մաղթանօք և խնկօք շարք զան զեկեղեցեաւն մինչև առ Լոյս զուարթն: Մեծարէ Եկեղեցւոյ: Առա օրհնեցէք: Ո կայք'ի տանն: 215: Բոլ․ Գանձ բարձրալ ձայն Առասցուք:

Եւ 'ի Համբարձին զգեստուն մատան քահանայքն, և յատեան եղանէն խաչն և աւետարանն, խնկօք և մաղթանօք և ամենայն զարդուք, և ասեն

Համբարձի Դ․Զ: Այսօր ժողովեալ սուրբ: 702:

Օրհնեա շարականն նա ասա: Եւ երեք անգամ խնկարկեն զեկեղեցին, մինչև առ Համբարձն:

Եւ զնի հայր Գրեթէն նախատօնակ ասեն, և ասեն զձայնն Դ․Զ․ Որ զնախամօրն: 707 էր առօրն:

Եւ յառաջին Բոլ․ Մէ զՆածածին: Կեցո: Ան․ Ընկալ Տէր: Հայր մեր:

# ԿԻՐԱԿԷ
## ՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

### Ի ԳԻՇԵՐԻ

[illegible]
[illegible] Գ.Կ. Արևելք գերարփին։ 720.
[illegible] Այսօր զանճառելի։ 719։

[illegible]

Օրհնութիւն Գ.Ձ։

ԱՅՍՕՐ ժողովեալ սրբոցն ի միասին. երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն. ջահազգեստ՝ ստուք պայծառացեալք լուցանէին ըզլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին. օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս։ Այսօր դնելով ըզքեզ կոյսդ առ դրանն գերեզմանին. սպասէին և ակն ունէին Տեառն իսկ ինքնին գալով. գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. եւ նոքա միաձայնեալ ասէին. օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս։ Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսն թռուցեալ յօդս. եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. և նոքա միաձայնեալ ասէին. օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս։ Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթեւեան սրովբէսն. մտանելով յանթնամատեղեան խորանսն. տեսանելով

զանազան աթոռսն զոր պատրաստեալ է քեզ տէրունւոյդ · երգեմք և մեք ասելով · օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս ։

† Այսօր զազատիչն յանցանաց նախամօրն ըղկուսութեանց մայրն փոխադրեաց Որդին Աստուած յերկնայինսն դասելով յաթակերտ խորանս և յանպատում ի կեանս · վասն որոյ հրճուաղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ ընդունիր զօրհնաբանութիւն ։ Այսօր տիրամայր սրբուհի կոյսն · աւանդեալ ընդ երբանեալ հոգին ի ձեռսն հրեշտակական դասուց · որպէս գերարփի փայլեալ ահեղեցն նմանեալ հրեղինաց դասուցն · վասն որոյ հրճուաղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ ընդունիր զօրհնաբանութիւն ։ Այսօր վերամբարձեալ ըղմաքրական մարմինն Աստուածամօր կուսին · անմարմինն զուարթնոցն ամփոփեալ ի տեղի գերակայիցն · յերևելի ըղձայութենցս անձառիցն առնել հաղորդս · վասն որոյ հրճուաղական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ ընդունիր զօրհնաբանութիւն ։

Այսօր հրաշափառ կոչմամբ Աստուծոյն ժողովեալ սրբոց առաքելոցն և իմաստունն սուրբ կուսանացն · պայծառացեալք իմաստութեամբ ի յերկնային փոխումն Աստուածամօրն · և համաձայնեալք անմարմնոցն · օրհնէին զամենօրհնեալ սրբուհին ։ Այսօր տեսեալ հրակերպ դասուք վայր իջեալ յերկնից զՈրդին միածին · ափիփափեալ հրաշալի փառօք · գերապայծառ մաքրեալ Աստուծոյն յաւանդումն ամենասուրբ ծննդին իւրոյ · և

համաձայնեալք անմարմնոցն. օրհնէին զամեն-
օրհնեալ սրբուհին: Այսօր ըղձակարան հո-
գւոյն սրբոյ վերնական հրաւէրն սենեկըն փոխա-
դրեալ յերկինս. մտանելով ի վերին Երուսա-
ղէմ. ի յառագաստն անապական յանմահանելին
նշանակմանցս ընդ Երրորդութեան. և համաձայ-
նեալք անմարմնոցն. օրհնէին զամենօրհնեալ
սրբուհին:

Այսօր ըղձախառնօրն երկանց բարձողըն կուսա-
կան ծննդեամբ զամենօրհնեալ մայրն. միածին
իջեալ փառօք փոխադրեաց յիմանալի և յանպա-
տում գերագոյն բնութիւս. վասն որոյ սրովբէա-
կան ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց տէր. ողոր-
մի շտ փառաւորանութիւնս: Այսօր ըղհողեղէն
բնութիւս տեսեալ հրեղինացըն սոսկացեալ դասք.
մարմին հրանիւթ կառօք յանմարմնոց վերաբե-
րեալ ի յերկնային և յանմահից լուսեղէն խո-
րանս. վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ եր-
գեմք սրբութեանց տէր. ողորմի շտ փառաւորա-
նութիւն: Այսօր տօնակից հոգեղինաց գոլով
հարսնացեալ եկեղեցի տէր. տօնէ ուրախութեամբ
ըղձլիշատակ անապական անարատ կուսի Աստուա-
ծամօրն. վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ
երգեմք սրբութեանց տէր ողորմի շտ փառաւորանութի:

Որ ի բարձրութիւնս երկնից բարձրը բանիւք
բարեբանիս սրբուհի. ի Սիոնանէ դիմեալ
հարսն ըղձեցեալ այսօր զարեգակն արկեալ ըզքեւ
և ընդ ոտիւք զլուսին բստուերական. օր-
հնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր

տօնեն ըզյիշատակ ծննդեան քո ի մօրէ։ Մեհագոյն սերովբէից և բազմաչեայ քերովբէից տիրամայր Աստուածածին. տապանակ կտակի սափոր ոսկի խորհրդաւոր խորան Բանին Հօր բարձրելոյ. օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծննդեան քո ի մօրէ։ Մարգարէից հանդիսարան և գրաւական կենաց մարդկան Մարիամ աստուածամայր. ընդունարան եօթնարփին շնորհացն. խարիսխ յուսոյ հաստատութեան. զուգաթիւ աւուրց դարուցս անցաւորաց. օրհնութեամբ երգով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն ըզյիշատակ ծննդեան քո ի մօրէ։

Որպէս լեր Մարիամ նոր Աստուածածին. զի ի տաճարին մաքրեցելոյ յանկարծակի եկն Տէր. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Որպէս լեր դուռն փակեալ ընդ որ ոչ ոք մտեալ. բայց Տէր Աստուած Իսրայէլի. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։ Որպէս լեր աղբիւր կնքեալ ջրոյն կենդանութեան. զոր ծարաւելոյ բնութեանս նուէր ի յորդումն. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Այր լուսոյ Մարիամ նոր կոյս. որ ըզլոյսն առ ի Հօրէ ծնեալ մարմնով. եւ եղեր արեւելք արեգականն արդարութեան. հոգեւոր երգով ըզքեզ սրբուհի մեծացուցանեմք։ Քերովբէից գերագոյն էին աթոռ եւ ծառ կենաց անմահական պտղոյն. տապանակ կտակի Բանին և սափոր ոսկի երկնային մանանայի. հոգեւոր երգով ըզքեզ

սրբուհի մեծացուցանեմք։ Դու բացաւ սրովբէափակ դուռն դրախտին. և քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի նմա զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. հոգեւոր երգով ըզքեզ սրբուհի մեծացուցանեմք։

Անարատ կոյս ածածին Մարիամ սրբուհի և մայր Քրիստոսի. յարգանդի տարար զանտանելին ամենեցուն. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք։ Զքեզ երկնային դուռն զոր ետես Եզեկիէլ. և ասրն զոր ծանեաւ Գեդէոն. սերովբէ հողեղէն վեհագոյն քերովբէից. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք։ Զորս խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի Աստուածածին. յղութիւն անսերմնական ծնունդ անարատ. կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք։

Հգ. Առաքելոյդ աղաւնոյ. իջաներ մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրացեղինաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։ Աննիւթական աղաւնի. անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և ըզմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյականն։ Օրհնութիւն ի բարձունս. եղեալն ի Հօրէ և յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն. և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

Հն. Հայր անսկիզբն արարիչ յաւիտենից. առ

քեզ կարդամք և պաղատիմք. հանգո՛ զննջեցեալսն մեր ի սուրբ անուանըդ քո: Որդիդ միածին էակից Հօր և Հոգւոյ. ի միւսանգամ քո գալըստեանն. հանգո՛ զննջեցեալսն մեր ի նը անուանըդ քո: Փառք Հօր: Հոգիդ ճշմարիտ փառակից Հօր և Որդւոյ. աղաչանօք Աստուածածնին. հանգո՛ զննջեցեալսն մեր ի նը անուանըդ քո:

Այժմ և միշտ: Այսօր յուսապատար խնդութի՛ւ և յաւէժաբար հրճուանօք. նուագեմք քեզ հոգեղէնս ընդ հրաբուն սեռիցն. տօնախմբելով զյիշատակ կուսի աղախնոյ և մօր քո. վասն որոյ հրճուողական ձայնիւ քեզ երգէ եկեղեցի նոր ընծայիւր զօրհնաբանութիւն:

Ալէլու— Ծննդեան ի յոյնէն:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Զհարցն էր առօրն յաջեանն ասէն:

Հարց ԴՁ:

Որ ըզնախամօրըն զյանցանս երկանցն երարձ. և զՈրդիդ քո միածին մարմնով ծընար. այսօր առ ի մէնջ ի վերին զօրսըն փոխեցեր զնախաստեղծին ծընօղըն. զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ էակից ես Հօր և սուրբ Հոգւոյն. մարմնանալ ի յանձն առեր ի սրբոյ կուսէն. այսօր փոխադրեալ զանեցեր յերկնային խորանսն ըզքոյին ծընօղըն. զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ յամենայնի ես լցուցիչ բարեխնամ սուրբ Հոգի. այսօր պարգեւօք հանգուցեր յանպատում ի կեանս ըզ-

կուսութեանց ըզմայրըն . զոր միշտ ունիմք բա-
րեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ. ԸզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզծընօղ անտանելի Բանին ըզմիշտ կոյսն: փառք Հօր: Որ ի կուսական դասակցութենց և ի սոց ճգնաւորաց փառաւորանիս սըրբուհի. ուստի եւ մեք հաւատացեալքս վերապատումք ըզփոխումըն քո ի յերկինս. որ անուամբ բարձրացեալդ ես յաւիտեան: Այժմ և միշտ: Օրհնաբանեալդ անդադար միշտ ի վերին զօրաց. եւ ըզվերափոխեալդ ի դասս առաքելոց եւ մարգարէից. ընդ որս եւ մեք հաւատացեալքս վերապատումք ըզքոյին Ածածնիր ըզհանգըստեան տօնս. որ անուամբ բարձրացեալդ ես յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Զ:

Խորանայարկ կամարանըման յօրինեցար սուրբ կոյս Աստուածածին. զանհասանելին զԲանն Աստուած ընակութեամբ անսերմնաբար կրեցեր ի քում յորովայնի. անդադար երգով ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք: փառք Հօր: Դուռն երկնից ըզծագումն անճառելի անապական որ ի Հօրէ առաքեցաւ. ի գիրկըս քո բարձեալ կրեցեր. գինեցուցանելով մարմնացելոյդ ի քէն ըզկուսական քո սուրբ ըզկաթն. անդադար երգով ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Տեղափոխեալ ըզքեզ ի վերնական ի կառըս քերովբէական Աստուածամայր. սպասաւորեալդ ի սերովբէից. և երկրպագեալդ յանմարմնական զօրաց. անդադար երգով ըզքեզ ըմիշտ մեծացուցանեմք:

Գ.կշէրէ Փառաբան:

Կամք լուսեղէն զուարթնոցն սպասէին մեծի գալստեանն Տեառն: Նմա երգէին երգ նոր. օրհնեալ է քո սուրբ գալուստդ:

Ողորմեա Դ.Զ:

Որ ունիս իշխանութիւն մահու և կենաց. Քրիստոս Թագաւոր փառաց. ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Տօնելով ըզյիշատակ կուսի Աստուածածնի մօր. հրճուին հրեշտակք ի յերկինս և ցընծան դասք առաքելոց և մարգարէից ընդ կուսականն տօնս. ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Ընդ միայնոյ մօր և կուսի մաղթեմք հայցելով ի քէն. բարեխօսեա անդադար առ Որդին քո և Աստուած մեր. փրկել ըզմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Տէր յերկնից Դ.Զ:

Անըսկիզբն Աստուած անհասանելի բնութիւ և հանգուցեալ ի հրեղէն կառս. վասն որոյ գովելով ասեմք. օրհնեալ ես Հայր անըսկիզբն Աստուած: Փառք Հօր: Աներգարտանեալ և ծիրանազգեաց հրաշափառագոյն կոյս. զոր առեալ Որդւոյ վերափոխեալ դասեաց յանպատում ի կեանս. վասն որոյ գովելով ասեմք. օրհնեալ ես Որդի միածին Աստուած: Այժմ և միշտ: Անհասանելի Հոգւոյն զօրութիւն որով փարեալ համատարած լոյսն ըզկուսական անձամբն. վերափոխելով յանպատմելի և յանհասանելի և յանանց լոյսն. վասն որոյ բարեբանելով ասեմք. օրհնեալ ես Հոգի ճշմարիտ Աստուած:

Առաւօտու երգ. Արի՛ Տէ՛ր ի՛ հա՛նգի՜ստ քո՛. դու և տա՛պանա՛կ կտակի սրբո՛ւթեա՜ն քո՛։

Յի՛շեա՛ Տէ՛ր զԴա՜ւիթ, և զամե՛նա՛յն հե՛զու՛թիւն նո՜րա՛։

Քար. [illegible]

Օրհնէ [illegible]

[illegible]

Շարական Դ.Զ։ Այսօր ժողովեալ սրբոցն։ 702.

Օրհնէ Սաղմոս ՃԼԱ։

48. Արի Տր 'ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Փխ. Յիշեա Տր զԴաւիթ, և զամ հեզութիւն նր.

Որպէս երդուաւ Տն, և ուխտեաց Այ Յակոբայ.

Եթէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ, եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևա-նաց իմոց, կամ հանգիստ երանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակովբայ.

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ, և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։

Մտցուք 'ի յարկս նորա, երկիր պագցուք 'ի տե-ղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա։

Արի Տր 'ի հանգիստ քո, դու և տապանակ կտա-կի սրբութն քո։

Երիցունք քո զգեցցին զարդարութի. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն.

Վն Դաւթի սիրելւոյ քոյ, մի դարձուցաներ զե-րեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տր Դաւթի ճշմարտութբ՝ և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո.

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկա-յութիւնս իմ, զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, 'ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Զօրս սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ:

Զքահանայից սորա զգեցուցից զփրկութի. և սրք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից զեղջիւր 'ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց նր զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցէ սրբութի իմ:

Ընթերցուած յԵրգոց երգոյն Սողոմոնի: Դ. 9:

Սրտակալթ արարեր զմեզ քոյր մեր հարսն. սրտակալթ արարեր զմեզ միով ական քով, և միով քառամանեկաւ պարանոցի քոյ: Զինչ գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարսն. քանզի գեղեցկացան ստինք քո 'ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամ խունկս: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո՛ քոյր իմ հարսն. մեղր և կաթն 'ի ներքոյ լեզուի քոյ, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի: Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն, պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ: Պտղաբերութի քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղովք միրգաբերաց. կիպրոս հանդերձ նարդոսիւ: Նարդոս և քրքում, խունկեղէգն և կինամոմոն, հանդերձ ամենայն ծառօք Լիբանանու, զմուռս և հալուէ, հանդերձ ամ գլխաւոր խնկօք: 14:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: Է. 10:

Եւ յաւել Տր խօսել ընդ Աքազու և ասէ. խնդրեա դու քեզ նշան 'ի Տեառնէ Այ քումմէ 'ի խորութե կամ 'ի բարձրութե: Եւ ասէ Աքազ, ոչ խնդրեցից, և ոչ փորձեցից զՏր: Եւ ասէ, արդ լուարուք տուն Դաւթի. թեթեւ ինչ թուիցի ձեզ աշխատութի հաստուցանել մարդկան. և զիարդ հաստուցանէք աշ-

խատութի Տն: Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին նշան. ահա կոյսն յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նր Էմմանուէլ: Իւղ և մեղր կերիցէ. մինչ չև ինչ իցէ ծանուցեալ նր. կամ ախորժեալ յառաջագոյն զչարութի, ընտրեսցէ զբարին: Վն այնորիկ մինչ չև ծանուցեալ իցէ մանկանն զբարի կամ զչար, անարգեսցէ զչարն՝ և ընտրեսցէ զբարին. և մնասցէ երկիրդ՝ զորմէ դու կասկածես յերեսաց երկուց թագաւորացն: 16:

Պօղոսի առաքելոյն 'ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս: Գ. 29:

Ապա թէ դուք Քնի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն ժառանգք: Ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծառայն. թէպէտ և տէր իցէ ամենեցուն. այլ ընդ հազարապետօք է՝ և ընդ գաւառապետօք մինչև 'ի ժամանակակէտ հօրն: Նոյնպէս և մեք՝ մինչ տղայքն էաք, ընդ տարերբք աշխարհիս 'ի ծառայութեն կայաք: Այլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Ած զՈրդին իւր՝ որ եղև 'ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք. զի զնոսա՝ որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զորդեգրութի ընկալցուք: Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Ած զՀոգի Որդւոյն իւրոյ 'ի սիրտս մեր՝ որ աղաղակէ աբբա, հայր: Այսուհետև չես ծառայ այլ որդի՝ եթէ որդի և ժառանգ Այ: Դ. 7:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Հոգին որ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո:

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա. 26:

Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱՅ 'ի քաղաք մի Գալիլեացւոց, որում

անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ 'ի տանէ Դաւթի. և անուն կուսին Մարիամ: Եւ եկեալ առ նա՝ ասէ. ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովեցաւ, և խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յԱՅ: Եւ ահա յղասջիր՝ և ծնցես որդի. և կոչեսցես զանուն նորա ՅՍ: Նա եղիցի մեծ, և որդի Բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա ՏՐ ԱԾ զաթոռն Դաւթի հօր նորա. և թագաւորեսցէ 'ի վ(ե)ր(այ) տանն Յակոբայ 'ի յաւիտեանս, և թագաւորութեն նորա վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. զիարդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգի սբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութի Բարձրելոյն հովանի լիցի 'ի վ(ե)ր(այ) քո. քանզի և որ ծնանելոցն է 'ի քէն՝ սբ է, և որդի ԱՅ կոչեսցի: Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է 'ի ծերութեն իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ յԱՅ ամենայն բան: Եւ ասէ Մարիամ. ահաւասիկ կամ աղախին ՏՆ, եղիցի ինձ ըստ բանի քում. և գնաց 'ի նմանէ հրեշտակն: 38:

Քարոզէ սարկաւագն Եւ ես խաղաղ: Ա ՚ի վերուստ: Եւ [illegible]:

Զինէ Քր. Մի խաչիւս: Ըղ. Պահպանեա:

Եւ [illegible] ՚ի [illegible], և [illegible] ՚ի [illegible]. [illegible]:

Շարական Դ.Կ. ՍՏ:

Յիսուս միածին անմահութեանց պարգեւատուն երեւեցաւ ընդ մեզ. խափանեաց զզօրութիւն մահու: Ընդխմա մի արտասուաց Մարիամու և Մարթայի անկեալ առ ոտսն Տեառն. խնդրէին

զնորոգումն եղբօրն։ Բանիւ Բանն Ած կենագործեաց զԼազարոս ի թաղմանէն. և եկեալ արտաքս անապական։

ՄԶ. Դու ծաղիկ անթառամ տնկմի սեռի մարդկութեան. և շառաւիղ օրհնութեան նախնւոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա միածնին Ածածին մայր Բանին։ Երկնաւոր արքայի եղեր տաճար ըստ երգողին. յանկարծակի փեսային ի յառագաստ բաղձալ քոյին. բարեխօսեա միածնին Ածածին մայր Բանին։ Զօրք երկնից անմարմնոց իմանալեացըն զուարթնոց. իջեալ յերկնից ի յերկիր սպասաւորել մեծ արքային. բարեխօսեա միածնին Ածածին մայր Բանին։

ԽԳ. Այսօր նշան յաղթող երևեալ ի յերկրի. պայծառացոյց զգտիեզերս. զէն յաղթութեան ետուր զխաչ քո Տէր. անպարտեցուցանել զմեզ ի պատերազմաց թշնամւոյն։ Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց. յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սովաւ պահեսցէ զմեզ յամենայն վտանգից մերոց. անպարտեցուցանել զմեզ ի պատերազմաց թշնամւոյն։ Փառք Հօր։ Յաղթող զօրութիւն խաչի քո պահեա զմեզ Քս Ած. որ տարածեցեր զձեռս քո ի նմա. եւ լուծեր զկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. անպարտեցուցանել զմեզ ի պատերազմաց թշնամւոյն։

Այժմ և միշտ։ Ի հարկանել փողոյ հրեշտակապետին մեծի. ի բանալ գերեզմանացըն զարթիցեն մեռեալքն անապական մարմնով. զարդարսն ընդ աջմէ քո Տէր. զապաւինեալսն ի քեզ զհօ-

գիս ննջեցելոց մեր ընկալ յանտրտում ի կեանսդ. որ օրհնիս ներգով ի հրեղէն զուարթնոցն։

Սաղմոս ԽԹ.։

Կ3. Լուիցին անկանոչք։ փխ. Ի խորոց կարդա։ 543.
Առ խորհրդոյն անեղական հանգուցեալն ՚ի քոյինն, խամ պաղարն։

Որթիւ

Ամ Աւետարանին որ ըստ Յովհաննու։ ԺԱ. 1.

Ս͞ն փառաց Տ͞ն մերոյ Յ͞սի Ք͞սի։

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ՚ի Բեթանիայ, ՚ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռ նր։ Այս այն Մարիամ էր որ օծ զՏ͞ն իւղով, և ջնջեաց զոտս նր հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նր և ասեն. Տէր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։ Իբրև լուաւ Յ͞ս, ասէ. այն հիւանդութիւն չէ ՚ի մահ, այլ վ͞ն փառացն Ա͞յ. զի փառաւոր լիցի Որդի Ա͞յ այնուիկ։ Եւ սիրէր Յ͞ս զՄարթա և զքոյր նր զՄարիամ, և զՂազար։ Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցն͞ս. եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. ռաբբի, այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առնել. և դարձեալ երթաս անդրէն։ Պատասխանի ետ Յ͞ս. ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ՚ի տուընջեան՝ ոչ գայթագղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գնայ ՚ի գիշերի՝ գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցն͞ս. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։ Ասեն ցնա աշակերտքն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յ͞ս վ͞ն մահուն նր ասէր. նք͞ա այսպէս թուեցաւ՝ թէ վ͞ն ննջելոյ քնոյն

ասէ։ Յայնժամ ասէ ցնա Յս յայտնապէս։ Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ վս ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս անուանեալն երկուորեակ՝ ցաշակերտակիցսն. ոն եկայք և մեք՝ զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յս եգիտ զնա չորեքօրեայ 'ի գերեզմանի։ Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ, իբրև ասպարիսօք հնգետասան։ Բազումք 'ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և Մարիամ, զի մխիթարեսցեն զնս վս եղբօրն։ Մարթա իբրև լուաւ՝ թէ Յս գայ, ընդ առաջ գընաց նր. բայց Մարիամ նստէր անդէն 'ի տան։ Ասէ Մարթա ցՅս. Տէր՝ եթէ աստ լինեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ և արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱՅ տացէ քեզ ԱԾ։ Ասէ նմա Յս. յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մարթա. գիտեմ զի յարիցէ 'ի յարութեն յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յս. ես իսկ եմ յարութի և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ. և ամ որ կենդանի է՝ և հաւատայ յիս, մի մեռցի 'ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։ Ասէ ցնա. այո Տէր՝ ես հաւատացի՝ եթէ դու ես Քն Որդի ԱՅ, որ յաշխարհ գալոց էիր։ Եւ զայս իբրև ասաց, գնաց և կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն՝ և ասէ. վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ։ Նա իբրև լուաւ՝ յարեաւ վաղվաղակի, և եկն առ նա։ Չև ևս էր եկեալ Յս 'ի գեօղն. այլ էր անդէն 'ի տեղւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթա։ Իսկ Հրեայքն՝ որ էին ընդ նմա 'ի տան անդ՝ և մխիթարէին զնա, իբրև տեսին զՄարիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նր. համարէին թէ 'ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ։ Իսկ Մարիամ իբրև եկն ուր էրն Յս և ետես զնա, անկաւ առ ոտս նր և ասէ. Տէր՝ եթէ աստ էիր գիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն

խմ։ Յն իբրև ետես զնա զի լայր, և որ ընդ նմա էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ, և ասէ. ո՞ւր եդիք զնա։ Ասեն ցնա. Տէր՝ եկ և տես։ Եւ արտասուեաց Յն։ Ասէին Հրեայքն. տեսէք՝ որչափ սիրէր զնա։ Կէսքն ՚ի նոցանէ ասէին. ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի և սա մի մեռցի։ Յն դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ՚ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ՚ի վ՛ն ն՛ր։ Եւ ասէ Յն. ՚ի բաց արարէք զվէմդ։ Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր՝ արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։ Ասէ ցնա Յն. ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես զփառսն Այ։ Եւ իբրև ՚ի վեր առին զվէմն, Յն ամբարձ զաչս իւր ՚ի վեր, և ասէ. Հա՛յր գոհանամ զքէն, զի լուար ինձ. և ես գիտէի՝ զի յամ ժամ լսես ինձ. այլ վն ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս։ Զայս իբրև ասաց, ՚ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ՝ արի եկ արտաքս։ Եւ ել մեռեալն ոտիւք կապեալովք, և ձեռօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակապատօք։ Եւ ասէ ցնս Յն. լուծէք զդա՝ և թողէք երթալ։ Բազումք ՚ի Հրէիցն՝ որ եկեալ էին առ Մարեմանս, իբրև տեսին զոր արարն՝ հաւատացին ՚ի նա։ 45։

Եւ [illegible] Մ[illegible] Հոգւոց հանգուցելոց։ Քէ. Մասն հոգւոցն հան։ Աղ. Քն Որդի Այ։ Եւ ՚ի [illegible], [illegible]
Շարական Գ. 2։ Այսօր զաղաղակիչն յանցանաց։ 703։
Օրհն. Նորաստեղծեալ։ Քէ. Խնդրեսցուք Կեցո։ Աղ. Քում ամենազօր։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Ի [illegible] ՚ի [illegible], Եւ [illegible]

Սաղմոս ՃԼԱ:

Կց․ Արի Տր: փխ․ Յիշեա Տր զԴաւիթ: 710:

Գէջք պաշտօնէանն խորհրդ:

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա․

Հոգին սբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բար-
ձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո:

Որթիւ

Ալ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա․ 39:

Տերամբ մերով Յսիւ Քսիւ

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ: 729:

Եւ ելանեն խաչիւ և աւետարանաւ և ամ պաշտօ-
նէիւք, ասելով Շարա․ Գ․Զ․ Այսօր ժողով: 702:

Զկնի Սաղմոս Գ:

Կց․ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսս: փխ․ Ի կար-
գալ իմում լուաւ: 785:

Որթիւ

Ալ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: ԺԹ․ 25:

Վասն մարդութեան Տն մերոյ Յսի Քսի:

Եւ կային առ խաչին Յսի մայրն Նորա և քոյր մօր
Նր Մարիամ Կղէովպայ, և Մարիամ Մագդաղենացի:
Յն իբրև ետես զմայրն և զաշակերտն՝ զոր սիրէր,
զի կայր մօտ, ասէ ցմայրն, կին դու՝ ահա որդի քո:
Ապա ասէ ցաշակերտն․ ահա մայր քո: Եւ յայնմ
ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր: Յետ այ-
սորիկ իբրև գիտաց Յս, եթէ ահա ամ ինչ կա-
տարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ, ծարաւի
եմ: Եւ անդ կայր աման ինչ լի քացախով․ և նո-
ցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին 'ի բերան Նորա:
Իբրև առ Յս զքացախն հանդերձ լեղւովն ասէ․
ամ ինչ կատարեալ է: Եւ խոնարհեցուցեալ
զգլուխն՝ աւանդեաց զոգին: 30:

Եւ դառնան յեկեղեցին պատարագաւն և յաշխարհս: Քր․
Մի խաչիւս: Ա․Ղ․ Պահպանեա: Ապա սկսանին Մղ․

ԺԴ․Ր․ Նորանեալ են ամբիծք ։ 237։ Օձնի շարականին Աւետարան հանգա․ ՚ի Յովհաննէ․ Մաղթ․ Զօգւոցն հանգուց․ Քր․ Մ ն Հոգւոցն ։ Աղ․ Բն Որդի Ա․Յ ։

Եւ ՚ի դառնալն յեկեղեցին ասկանադն ժողովն Ես եւ խաղաղ․ Քարոզայն Օրհնութիւն եւ փառք ։

Եւ սկսանին զերեկոյին ժամն, եւ ասեն Խոնարհեցո եւ Ապրեցո։

Մեծացի ձայնիւ․ Տր ասաց ։ Ընդէր ։ Քարոզ․ Անյր սուրբ կամ գահդ ։

Համբարձի Դ․Զ ։ Այսօր զաղատիչն յանցանաց ։ 703։ Օձնի Համբարձման Քր․ Մ ամն խաղաղ ։ Աղ․ Հայր գթած ։ Եւ զկնի Հայր գթածին պձենան մեծամ ժահանայն եւ ելանեն յարեան խաչն եւ նշխարքն, եւ զատագէնուն առաջ պատշաճն ասեն նախատօնակ ասանելով որդեա ՚ի Ստանդեան ։

Շարական Դ․Կ ։ Այսօր զանձառելի ։ 719։ Խորհուրդն ։

Օձնի Քր․ Մի զԱծածինն ։ Կեցո ։ Աղ․ Ընկալ Տր ։

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ
## Բ․ ՕՐ ՓՈԽՄԱՆ

### Ի ԳԻՇԵՐԻ
Օրհնաբանէ Դ․Կ ։

Այսօր զանձառելի ծնընդեան քո Տէր ընդսպասաւոր խորհրդոյն․ ի հողանիւթ գոյացութեանց փոխադրեցեր ի յերկինս ։ Այսօր զանտանելի Բանին բարձօղն ընդքերովբէն հողեղէն․ բարձրացուցեր ի ստորնայնոցս գերակայիցն կայանս ։ Այսօր զանապական կոյսն որ ընդ քեզ մայր քո կաթամբ կերակրեաց․ ի զգայականս փոխեալ բնութեանց յիմանալեացն խորանս ։

† Լոյսն անքննելին ծածկեալ ի ծոց Հօր՝ որ ծագե-
ցար ի քէն Մայր եւ կոյս. այսօր իջեալ անմար-
մնական դասուք հրեղինացն. փոխադրեաց ըզ-
քեզ լուսափայլ ամպովք՝ ի լոյսն անստուեր:
Բանն անմարմին որ ի քէն մարմնացաւ. եւ ի գիր-
կս քո բարձեալ կրեցաւ Մարիամ. այսօր ե-
կեալ բազմութիւն զօրօք հրեշտակացն. վերացոյց
ըզքեզ հրակերպ կառօք ի լոյսն անստուեր:
Արեւելք գերարփին եւ օթարան լուսածին.
զանմայր ծնեալն առաջին՝ ծնար անհայր յեր-
կրորդին. բարեխօսեա միածնին Աստուածածին մայր
Բանին: Բանին Հօր մարմնարան եւ առագաստ
բնակութեան. որ կաթամբ կուսական կերակրեցեր
զէակըն Բան. բարեխօսեա միածնին Աստուածածին
մայր Բանին: Գերագոյն սրբութիւն եւ կուսական
մաքրութիւն. բարձեր զանհասն բնութիւն ի գիրկս
քո սրբընդեամբ. բարեխօսեա միածնին Աստուա-
ծածին մայր Բանին: Դու ծաղիկ անթառամ առհ-
մի սեռին մարդկան. եւ շառաւիղ օրհնութեան նախ-
նւոյ ծնողին մեր բնութեան. բարեխօսեա միա-
ծնին Աստուածածին մայր Բանին: Երկնաւոր արքային
եղեր տաճար ըստ երգողին. յանկարծակի փե-
սային՝ ի յառագաստ բազմեալ քոյին. բարեխօ-
սեա միածնին Աստուածածին մայր Բանին: Զօրք
երկնից անմարմնոց՝ իմանալեացըն զուարթնոց.
իջեալ յերկնից ի յերկիր՝ սպասաւորել մեծ ար-
քային. բարեխօսեա միածնին Աստուածածին մայր Բա-
նին: Այսօր եկն Բանն Հօր՝ պարագրեցաւ ի
մարմնի. լոյսըն ծնընդ ծագածին եկաւ զբնութի

Նախամատեղծին․ բարեխօսեա՛ միածնին՝ Ածածին մայր Բանին։ Ընտրեալ յառաջ քան զհիմունս՝ ի սկզբանէ աշխարհի․ տաճար անձեռն անքննին՝ և ամպ թեթև լուսածին․ բարեխօսեա՛ միածնին Ածածին մայր Բանին։ Թագ հիւսեալ երկնային՝ յեռեալ յականց անմարմնին․ բերեալ պըսակ որ կուսին՝ յորժամ փոխէր յաշխարհ վերին․ բարեխօսեա՛ միածնին՝ Ածածին մայր Բանին։ Ժողովեալ որ գնդին՝ երկոտասան դասուց խմբին․ սլացեալք որպէս զարծուին՝ յԵրուսաղէմ քաղաք հասին․ բարեխօսեա՛ միածնին՝ Ածածին մայր Բանին։ Նոյն եկեալ բազմութիւն աշակերտաց Նորին կտակին․ ի փոխումն Ածածնին՝ մարդարտափայլ սրբոյ կուսին․ բարեխօսեա՛ միածնին՝ Ածածին մայր Բանին։ Այս ի լուսոյ Հօր ծոցածին՝ իջեր յերկնից յաշխարհ ստորին․ դասք անմարմնոց ընդ քեզ իջին՝ ի պատիւ մօր քո և կուսին․ Ներբողեալ զայս ասէին՝ դու ես տաճար անեղ Բանին։ Խորին խորհուրդ անքննին՝ ծածկեալ յազգաց յաւիտենին․ յայտնեցաւ յամըս վերջին՝ ի փրկութիւն մարդկան սեռին․ զոր տեսանողքըն ծանուցին՝ կուսին ծընող լինել Բանին։ Ծածկեալ խորհուրդն յաւիտենին՝ լռեցելոյ՝ և անձառին․ ի հասանել ժամանակին՝ պարգևեցաւ մարդկան ազին․ Էական բնութիւն Բանին՝ խառնեալ անշփոթ ի մեր բնութիւն։ Կատարեալ տնօրէնութիւն քո ի յերկրի ներմարդկութիւն․ զոր ի վերջին դարուս վախճան՝ կատարեցեր վասըն մարդկան․ այսօր յերկնից իջեր Հօր Բան՝ ի յօր կուսին մօր քո ընդ-

ման։ Հոյլք վերին զօրացն իջեալ՝ շուրջ ըզկու-սուհին պար առեալ. զերգս օրհնութեան եղանակեալ քաղցր ձայնիւ՝ ակմամբ առեալ. զեռահիւսեակն նուագեալ՝ զմի տէրութիւն երգաբանեալ։ Զայնա-կից նոցին եղեալ՝ դասք երջանիկ պետացն ըն-տրեալ. ի Հոգւոյն վերնաբերեալ՝ որք ընդ համօր աշխարհ սփռեալ. անմարմնոցն համաձայնեալ ըզկոյսըն սուրբ օրհնաբանեալ։ Պսակաւորափայլ ջահիւք լուցեալ սուրբ կուսանացըն գումարեալ. զերգս օրհնութեան նուագեալ՝ ի պատիւ մօրն ա-մենօրհնեալ. բարեբանեալ ես կոյս գովեալ յոր-մէ Տէր Բանըն ծընեալ։ Համբառնալդ Հօր ծոցա-ծին՝ յորժամ ելեր առ Հայր յերկին. խոստա-ցայիր բանիւ քոյին՝ ի կատարումն Ածածնին. քեզ միայնոյ զօրօք քոյին տալ ի փոխումըն միշտ կու-սին։ Մարգարիտ լուսափայլ՝ Հոգւոյն սրբոյ տուն եւ տաճար. մարգարէից բանք նախաձայն՝ այսօր լցան ի քեզ գումար. Մովսէս դասուքն խորհրդք խորան՝ ի պատիւ քո անդ սըլանայր. Յարմարեալ ձայն ներբողի՝ յուրախութեան օր քո տօնի. հանդերձ նորոգ ներբողի՝ անուքելոց դասուց խմբի. անանդեցեր զքո որ զՀոգի ի ձեռն Որդւոյ քո միածնի։ Նորաքանչ անդ հրաշից՝ ներբակներտեալ ի յերկրի. քանզի պայ-ծառ քան զարփի փայլեալ սրբոյ կուսին հոգի. զոր զարհուրեալ զՏէր հարցանէր զխոր-հուրդն յայտնի։ Շնորհազարդ փառօք փայլեալ՝ որպէս ըզմայր քո միշտ գովեալ. ի մարդկանէ ով քատակեալ՝ հոգւով պայծառ արփւոյ նմանեալ.

որպէս փայլակըն բորբոքեալ՝ յերկնաւորաց վե-
րաքերեալ: Ով պետրէ լո՛ր ձայնի՝ զոր հարցա-
նե՞ս պատասխանի. լոյսն առաջին Հայր կոչի՝ և
յետ նորա որ ի կարգի. պայծառ զհոգիս մարդ-
կան սանդծի՝ որպէս ըզմօրս իմ զոր ցուցի: Զո-
րեքնիւթեայ բնութեամբ խառնեալ՝ շաղկապ ըզ-
շունչն ի մէջ եղեալ. զոր ի դրախտին զարդա-
րեալ փառօք եղի վայելեալ. և այժմ ըզնոյն ձեզ
շնորհեալ արեամբ իմով պայծառ մաքրեալ: Պար
առեալ անմարմնոցըն շնորհազարդ զուարթնոց.
ալլացեալ երկնայնոց զկոյսըն բարձեալ յերկրայ-
նոց. յոր վերակնեալ առաքելոց զերգս օրհնութե
հընչեն երգոց: Յանհամզդեստեալ սուրբ կուսիցն՝
համդերձ մաքուր դասուց խմբից. երկոտասան
սուրբ գընդից՝ և աշակերտք նոցին բանից. ձայ-
նակից եղեալ միմեանց՝ եղանակեն զերգս օրհնու-
թեան: Աւաղ լուսոյ սրբութե՝ հարդեալ զօրաց
անմարմնոց. եւ գունդք հրեղէն զուարթնոց՝ յա-
ռաջընթաց յաշխարհ վերնոց. հրաձուողական ձայ-
նիւ երգօց՝ գովեն ըզքեզ ուրդ սրբոց: Ամբով-
բէից գունդք հիացեալ յորժամ տեսին ըզՏէրն
իջեալ. ի փոխումն Ա՟ծածնին՝ անապական և միշտ
կուսին. զարհուրեալ զայս տեսին՝ օրհնեալ ես
սուրբ Ա՟ծածին: Անհագոյն սերովբէից և բար-
ձրագոյն քերովբէից. վերհամբարձար ի բարձունս՝
յետակնաց անհրպելին. փառաւորեալ ընդ միա-
ծնին՝ հրաձուողական ձայնիւ երգոց: Տէրութիւնք և
զօրութիւնք՝ իշխանութիւնք և պետութիւնք. հրեշտա-
կապետք եւ հրեշտակք եղանակեն զերգս օրհնութե.

օրհնեալ ես կոյս տաճար մաքրեալ՝ յորում ստեղծօղն էից բազմեալ։ Բարունեացըն խմբից՝ աշակերտացըն դասուց՝. բարձեալ զմարմինըն մաքուր ածարեալ նր բազկօք. Եդին ի դիր հանգստեան քաղցրաձայնեալ սաղմոսիւք։ Ցընծալից բերկրանօք՝ և յորդահոս արտասուօք. Եղանակէին քաղցր երգօք՝ երեքօրեայ խմբեալ պարուք. Բարդողիմէ յետոյ եկեալ՝ և զտենչալին իւր ոչ տեսեալ։ Խօսեալ բանից գանուց նրց՝ զըղձումն Եղբօրըն վճարեալ. բացեալ զտապանն ամենօրհնեալ և զըղձալին իւր ոչ գտեալ. քանզի եղև վերափոխեալ ի փառս անճառ նախ պատրաստեալ։ Փառըք Հօրըն էական պատիւ Որդւոյն իւր էակցի. ընդ Հոգւոյն համագոյի. որ զարդարեաց զկոյսն ի յերկրի՝. ժառանգել զանճառ բարիսն՝ զոր պատրաստեաց իւր միածինն։ Քանզի անճառ է խորհուրդ փառաց կուսին յանմարմնոց՝. զոր ի դարուցս վերջնոց՝ եհեղ մարդկան ըստորայնոց. զոր այժմ յուսով բերկրելոց յայնժամ շնորհէ յուսացելոց։

Կերտօղ բոլոր եղելոց՝ իմանալեաց և ստորայնոց՝. բարձն բարի անմարմնոց՝ առեր պատիւ յերկնայնոց. կուսական տօնիւ փոխմանս՝ որդեգրութեն լիցուք արժանիս։ Այսն ծրդի աղաչեա Աստուածածին մայր Բանին. բաժեալ զհոգի և զմարմինն՝ դարձեալ ի սէր փեսային. արժանի լիցուք պտղոյ դրախտին՝ երանաւէտ կենաց տընկին։

Հդ.. Ի համբառնալ Բանին յերկինս և ի նըստել ընդ աջմէ Հօր. զուարճացեալ առաքելոցն երկրպագէին. օրհնելով ըզՀայր զանապքօղ Հո-

գւոյն։ Համահաւասարեալ գունդք սրբոցն ի վեր-
նատանն խորհրդոյն. համբարձմամբ անճառ սպա-
սէին Հոգւոյն. օրհնելով ըզՀայր զանսկիզբն Հո-
գւոյն։ Յանկարծահաս հնչմամբ հնչեալ կենդան-
արար աղբիւր լուսոյ. անմահական կենաց լուսով
զարդարեալ. որք օրհնէին ըզՀայր զանսկիզբն
Հոգւոյն։

Հն. Խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց փա-
ռաւորեալդ ի զուարթնոց. ըզննջեցեալսն մեր
ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո ընդ սուրբս
քո։ Յորժամ գաս փառօք Հօր դատել զերկիր
արդարութեան արեգակն. ըզննջեցեալսն մեր
ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո ընդ սուրբս քո։
Փառք Հօր։ Ի նստել քո յաթոռն դատաւոր ա-
հեղ Տէր փրկիչ մեր եւ յոյս. ըզննջեցեալսն մեր
ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո ընդ սուրբս քո։
Այժմ և միշտ։ Ի տեսիլ հրաշից փառաց միա-
ծնին՝ զուարճացան դասք առաքելոցն. եւ ընդ վե-
րին զուարթունսն համաձայնեալ. նոր օրհնու-
թիւն քեզ եղանակէին՝ օրհնեալդ ի կանայս։
Ալէլու— Օրհնեցէք է յայտնեալն։

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ։

Որ զմիածնի Որդւոյ քո զընակարան՝ զնախա-
մօրն երկանց բարձօղն. այսօր դարձուցեր ի
փառս առաջին. ընդ քեզ բարեբանեմք Ածն հար-
ցըն մերոց։ Որ զի ծնեար Հօր լուսոյ ըզծագողն.
որ մարմնով ծընաւ ընդ քեզ. այսօր փոխեցեր ի
կեանս անապական. ընդ քեզ բարեբանեմք Ածն

հարցըն մերոց։ Ո՛ր զփառակցի Հօր Հոգւոյդ ընդ-տաճարն. զառ ի քէն հովանացեալն. այսօր հանգուցեր ի լոյսն անմատոյց. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։

Գ. Ընդ Տէր ընդ Որդւոյն միածնի զմայրն ամենօրհնեալ Մարիամ. գովելով բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Այսօր ընդ վերին զուարթնոցն երկնից. որք վայր իջեալ ընդ միածնին ի փոխումն Աստուածամօրն երգէին. օրհնեցէք ընդ Հայրն երկնաւոր. բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Փառք Հօր։ Այսօր ընդ դասուց սերովբէիցն. որք պարանկցեալ շուրջ ընդ գերեզմանաւ սրբոյ կուսին եղանակէին. գովեցէք զՈրդին միածին. բարձր արարէք ընդ նա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Այսօր ընդ հրեղէն քերովբէիցն. որք ընդ քերովբէն հողեղէն վեր համբարձին ձայնիւ փողոյ ի յերկինս. բարեբանեցէք զԾնօղին ճշմարիտ. բարձր արարէք ընդ նա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ։

Աստուածածին ամպ լուսաւոր. որ ըզցօղըն կենաց հեղեր յերկիր բանաւոր. և զնախամօրն շիջուցեր պարտեացն ըզհուր. անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք. և հոգևոր երգով մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Տեղի անտանելի Բանին. և երկիր վայրափակ յորում լոյսն ագանիցի. և արեւելք արեգականն արդարութեան. անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք. և հոգևոր երգով մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զքեզ կատարումն մարգարէից. կուսական քո ծնընդեամբ ա-

րով բնութեան քակտեցան օրէնք հրաշիւն սեռի-ցըն փոխադրեալ ի լուսաձեւ խորանն. անդա-դար ձայնիւ զքեզ բարեբանեմք. եւ հոգեւոր եր-գով մեծացուցանեմք։

Ողորմեա Գ. Կ։

Որ անմարմին բնութեամբ Աստուածութեան քո Տէր. միացար մարմնով յարգանդի կուսին անյե-ղապէս գոլով. այսօր փոխեցեր զուրախութիւն երկնի եւ երկրի յանտրրատում ի կեանս. աղա-չանօք մօր քո ողորմեա մեզ Որդի Աստուծոյ։ փառք Հօր։ Որ անապական մարմնով ծընար ի մէջ կուսէն. եւ ի խանձարուրս պատեցար արկող ըզլոյս եւ ի մսուր հանգեար. այսօր ըզկուսածնեց ըզմայրըն հանգուցեր ի լուսեղէն խորանս. աղա-չանօք մօր քո ողորմեա մեզ Որդի Աստուծոյ։ Այժմ եւ միշտ։ Որ ի քրովբէական աթոռ նըստիս ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. հանգեցար բանիւ մարմնով ի գիրկըս կուսին եւ կաթնասուն եղեր. այսօր քրովբէիւք վեր համբարձեր յաթոռ փառաց ըզհո-ղեղէն քրովբէն. աղաչանօք մօր քո ողորմեա մեզ Որդի Աստուծոյ։

Տէր յերկնից Գ. Կ։

Այսօր զըւարճացան հրեշտակք ի յերկինս. ընդունելով յերկրէ զմայր Բանին Աստուծոյ յիմանալի խորանս անմահից։ փառք Հօր։ Այսօր ցընծայան դասք առաքելոցն. տեսանելով զՏէրըն տերանց խոնարհեալ յաւանդումն ամենասուրբ Հոգւոյ ըզմօր եւ կուսին։ Այժմ եւ միշտ։ Այսօր եւ ման-կունք եկեղեցւոյ. ուրախութեամբ տօնեն յեր-

կրի ընդփոխումն կուսին յարուսաղէմ քաղաքին վերին։

Առաւօտու Երգ․ Իջցէ որպէս անձրեւ ի վերայ գեղման․ որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Ած զիրաւունս քո արքային տուր․ եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Կարգաւ Այր սուրբ չառ գանձ։

Օրհնի ՍԷ Ածին Սաղմոս ՀԱ։

կց․ Իջցէ որպէս անձրեւ ՚ի վՐ գեղման․ որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Փխ․ Ած զիրաւունս քո արքային տուր, եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Դատել զժողովուրդս քո արդարութբ, եւ զաղքատս քո իրաւամբք։

Առցեն լերինք զխաղաղութի ժողովրդեան, եւ բլուրք զարդարութի։

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, եւ կեցուսցէ զորդիս տնանկաց, եւ խոնարհեցուսցէ զամբաստանս։

Կացցէ եւ մնասցէ ընդ արեւու, յառաջ քան զլուսին յազգէ մինչեւ յազգ։

Իջցէ որպէս անձրեւ ՚ի վՐ գեղման, որպ ցօղ զի ցօղէ յերկիր։

Ծագեսցէ յաւուրս նր արդարութի բազում խաղաղութի մինչեւ կատարեսցի լուսին։

Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչեւ ՚ի ծով, ՚ի գետոց մինչեւ ՚ի ծագս աշխարհի։

Առաջի նորա նախ հնդիկք անկցին, եւ թշնամիք նորա հող կերիցեն։

Թագաւորք Թարսի եւ կղզեաց պատարագս մատուսցեն նմա․ թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա։

Երկիր պագցեն նմա ամ թագաւորք երկրի, եւ ամ ազգ ծառայեսցեն նմա։

Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ, զաղքատ և զտնանկ որոյ ոչ է իւր օգնական:
Խնայեսցէ նա յաղքատն և 'ի տնանկ, և զանձինս տնանկաց կեցուսցէ. 'ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա:
Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տացի նմա յոսկւոյն արաբացւոյն:
Յաղօթս կացցեն առ նա յա՟մ ժամ, և զօրհանապազ օրհնեսցեն զնա:
Եղիցի հաստատութիւն ընդ ա՟մ երկիր, և 'ի վ՟ր գլխոց լերանց:
Բարձրասցի քան զԼիբանան պտուղ ն՟ր. ծաղկեսցի 'ի քաղաքի տ՟ն որպ խոտ երկրի:
Եղիցի անուն տ՟ն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարև է անուն նորա:
Ի նա օրհնեսցին ա՟մ ազգ երկրի և ամենայն ազինք երանիցեն նմա:
Օրհնեալ Տէր Ա՟ծ Իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն ս՟բ փառաց ն՟ր յաւիտեան. լցցի փառօք ն՟ր ա՟մ երկիր. եղիցի եղիցի:

Որթիւ

Ա՟մ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա. 39:
Տերամբ մերով Յ՟սի Ք՟սի

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի քաղաքն Յուդայ: Եւ եմուտ 'ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի: Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի ն՟ր. և լցաւ Եղիսաբէթ Հոգւով սրբով. և 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Եւ ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր տ՟ն իմոյ առ իս: Զի ահաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի

խնում: Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա 'ի Տեառնէ: Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծացաւ հոգի իմ յԱծ փրկիչ իմ: Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ, զի ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամ ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն, և սբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայելի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս, և դարձաւ 'ի տուն իւր: 56:

Երգ Աւարչական Կանին: Եւ այլ Գր. Խնդրեսցուք: Կեցո: Ալ. Քում ամենա:

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեծացուցէ ձայնիւն. Մեծացուսցէ: Զի հայեցաւ: Գր. Այր որ կամ գանձ:

Համբարձի Գ.Կ: Այսօր զանճառելի ծննդեան: 719: Գր. Ա՛ խաղաղ: Ալ. Հայր գթած: Օրհնի Հայր գերածին պծնուան մարման. և յարտեան եղանին խաչի և միացինօք. և հրեշտակային աւանին, աւելով առաքելոց առաջ Շարականն Դ.Զ. Այսօր հրաշափառ կոչմամբ: 731: Եւր առօրն: Օրհնի Գր. Ա̃ զԱծածինն: Կեցո: Ալ. Ընկալ Տր:

# ԵՐԵՔՇԱԲԹԻ

## Գ․ ՕՐ ՓՈԽՄԱՆ

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնու—լէ Գ.Զ։

ԱՅՍՕՐ հրաշափառ կոչմամբ Հոգւոյն ժողովեալ սրբոց առաքելոցն եւ իմաստունն սուրբ կուսանացն. պայծառացեալք իմաստութեամբ ի յերկնային փոխումն Աստուածամօրն. եւ համաձայնեալք անմարմնոցն. օրհնէին զամենօրհնեալ սրբուհին։ Այսօր տեսեալ հրակերպ դասուք վայր իջեալ յերկնից զՈրդին միածին. արփիափայլ հրաշալի փառօք. գերապայծառ մաքրեալ Հոգւոյն յաւանդումն ամենասուրբ ծննդին իւրոյ. եւ համաձայնեալք անմարմնոցն. օրհնէին զամենօրհնեալ սրբուհին։ Այսօր զբնակարան Հոգւոյն սրբոյ վերնական հրաշքն սենեկին փոխադրեալ յերկինս. մտանելով ի վերին Երուսաղէմ. ի յառագաստն անապական յանմահանելին եղականացս ընդ Երրորդութեանն. եւ համաձայնեալք անմարմնոցն. օրհնէին զամենօրհնեալ սրբուհին։

† Այսօր զնախամօրն երկանց բարձողըն կուսական ծննդեամբ զամենօրհնեալ մայրն. միածինն իջեալ փառօք փոխադրեաց յիմանալի եւ յանպատում գերագոյն բնութիւն. վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց նր. զմիշտ փառաբանութիւն։ Այսօր զհողեղէն բնութիւն տեսեալ հրեղինացն ասկացեալ դասք. մարմին հրանիւթ կառօք յանմարմնոց վերաբե-

բեալ ի յերկնային և յանմատոյց լուսեղէն խորանս. վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց նր. ըզմիշտ փառաբանութիւն:

Նոր Սիոն ծընեալ մանկանց սուրբ աւազանին. շնորհազարդեալք Հոգւովն Աստուծոյ. օրհնեցէք զՏէրն երկնաւոր յաւուր ծնընդեան սըրբուհւոյ կուսին. յոր օրհնեցայք յանիծից նախնոյն: Արեամբ գառինն անարատի փրկեալ ժողովուրդք. յաւուր ծնընդեան մօր անտանելւոյն. գովեցէք ըզփառածինն որ հաճեցաւ առնուլ մարմին անսերմն ի նմանէ. յոր օրհնեցայք յանիծից նախնոյն: Յառատաբուղխ շնորհաց Հոգւոյն լուսազարդեալ ազգք հեթանոսաց. յաւուր ծնընդեան մօր Բանին ծնողին. ըզփառակից Որդւոյ զՀոգին բարեբանեցէք հոգեւոր երգով. որ մաքրազարդեաց զմարմնարան Որդւոյն:

Ուրախ լեր Մարիամ կոյս անապական. զի ի հայրական ծոցոյ անմեկնելի Որդին ի քո յանձն առնու բնակել յորովայնի: Ուրախ լեր երկին վեհագոյն քրովբէ հողեղէն. որ զանտանելին երկնից և հրեղինաց դասուցն ի քո ընկալար մաքրական որովայնի: Ուրախ լեր սիւն հրեղէն լուսոյն աշտանակ. որ զարարչականն եղականաց լուսոյ ի քեզ տանելով ծագեցեր խաւարելոց: Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին. որ զառ ի վերուստ իջեալ ըզմանանայն կենաց նորոյս պարգեւեալ կերակուր Իսրայէլի: Ուրախ լեր ամպ թեթեւ գեղմն իմանալի. որ ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց. արդիւնս ընդ գոր-

ծոց հաւատոյ պտղաբերեալ։ Ուրախ լեր դուստր լուսոյ մայր ամենօրհնեալ․ քանզի յղացելոյն ի քեզ համախմբեալ վերնոցն որդիք Սիովնի երգեն ըզփառս ի բարձունս։

Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ի մեզ․ եւ Բանըն հայրական անըմբըռնելի․ հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ․ անվընաս պահելով զարարածս ամենայն։ Ծագումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ․ ճառագայթելով զարարածս ամենայն․ երկինք ցընծային եւ երկիրս ուրախանայր․ եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ։ Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի․ գերագոյն եւ հրաշալի եւ բաշխօղ բարութեանց․ աղբեւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց․ եւ եղեր վերընկալ աստուածային Բանին։

Առաւօտ խաղաղութեան եւ արուսեակ զուարթարար․ այսօր Մարիամ սրբուհին ի փառս քո Քս ծագեաց մեզ լոյս յորդւոցն օրինաց․ անդադար երգով ոգւոք ըզքեզ միշտ մեծացուցանեմք։ Դրախտ ածային եւ արեւելք իմանալի․ այսօր Մարիամ հրաշագեղ ծնեալ ի յԱննայէ ի մայրուի քո հրաւիրեալ Քս Որդի Աստուծոյ․ անդադար երգով ոգւոք ըզքեզ միշտ մեծացուցանեմք։ Տապանակ ապրեցուցիչ եւ տաղաւար աբրահամեան աստուածընկալ․ այսօր Մարիամ լուսապայծառ միածին ծընունդ յայտնեալ ծնողաց․ ի ծնողութեն քո կոչեցեալ միածին Որդի Աստուծոյ․ անդադար երգով ոգւոք ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

Աստուածածին մայր լուսոյ սուրբ կոյս լուսեղէն տաճար. որում երկինք չէին բաւական առ ի բնակութիւն ի քէն մարմնացելոյն: Ազգիս ամենօրհնեալ որ միայնդ ի կանանց օրհնեալ. կրելով ի քեզ զանտանելի զբնութիւն. օրհնութեամբ մեծացուցանեմք: Ուրախ լեր աթոռ փրկութեան յոյս հաստատութեան մարդկան. միջնորդ օրինաց և շնորհաց. օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք:

Ուրախացիր Աստուածածին որ կուսանաց ես պարծանք և մայր հաստատութեան մարդկան. օգնական և շնորհ աշխարհի. Մխիթար մայր և աղախին փրկչին մերոյ: Երանելիդ ամենեցուն զԱստուած տանելով ընդընութեամբ անտանելի. զամենեցուն ամենակալն արգանդի եղեր կրել յորովայնի. որ երևեցաւ ազգի մարդկան: Քերովբէական աթոռ ցուցար Աստուածածին. ի գիրկս բառնալով զԱստուած ամենեցուն որ նստի ի քերովբէս. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

Ժգ. Անսկզբնական Աստուած ո՛վ Հոգի. զմարգարէութեանց նախագուշակութիւնս արտափայլեալ լուսաւորեցեր. անսպառապէս հեղեալ յառաքեալսն: Անժամանակ Որդի միածին. ընդխոստացեալ պարգևս աւետեաց ի վերնատանն աւարտեալ լցեր. անսպառապէս հեղեալ յառաքեալսն: Ամենակալ Հայր երկնաւոր. զանբաժանելի լուսոյդ ընծայգութիւն հոգեղէնացեալս շնորհեցեր. անսպառապէս հեղեալ յառաքեալսն:

Ժդ. Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից

թագաւոր փառաց. ամենակալ ամենակարող թող ըզմեղս մեր ննջեցելոցն. և հանդերձ ի խորանին քում ի յարքայական ի հանգստեան։ Որ ի նախնումն ըզմարգարէն Մովսէս լուսաւորեցեր աստուածային փառօք տեսլեամբ Աստուածութեան քո. լուսաւորեա և ըզմեզ ըզննջեցեալսն և հանդերձ ի խորանին քում ի յարքայական ի հանգստեան։ Փառք Հօր։ Բարեխօսութեամբ ո՛վ Աստուածածնի ծնողի և մօր քո յիշեա զգինս արեան քո Տէր. և դասաւորեա յերանաւէտ յանթառամ և յանտրտում ի կեանս. ի յարքայական ի հանգստեան։

Այժմ և միշտ։ Այսօր տօնակից հրեշտակաց գովեմ հարսնացեալ եկեղեցի նր. տօնէ ուրախութ ըզյիշատակ անապական անարատ կուսի Աստուածամօրն. վասն որոյ սրովբէական ձայնիւ քեզ երգեմք սրբութեանց որ ըզըմիշտ փառաբանութի։

Ալէլու՝ Ծննդեանն ՚ի յայտնէն։

## ՅԱՌԱՒՕՏՍ

### Ձայն ԴՁ։

Որ ըզդատակնիք երկանց անիծից նախամօրն Եւայի. միածնի Որդւոյ քո ծնընդեամբ կուսին Մարիամ. այսօր յառաջին յանպատում փառսըն դարձուցեր սովաւ ըզնախաստեղծըն. զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ ի Հօրէ անմարմնաբար ծընեալ Որդի նախ քան զյաւիտեանս. և մարմնով ծընար ի սրբոյ կուսէն. այսօր խոնարհեալ յերկնայինսըն փոխեցեր զանօրէնութի քո ըզնա-

կարանըն․ զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց։ Օ՜ր մաքրեցեր ի բնակութենէ քում էակցին Հոգւոյդ ճշմարտի․ և լցեր անճառելի եօթնարփեան շնորհօք․ այսօր գերագոյն հրեղինացըն դասեցեր ընդ հողեղէն բնութիւնըն․ զոր միշտ ունիմք բարեխօս առ քեզ Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ․ Ազգի օրհնեցէք Բարձր առաքեալք ընծայող իմանալի լուսոյն ընդ միշտ կուսին։ փառք Հօր։ Որ յանմարմնոց զինուորութենէ և ի դասուց հոգեղինաց վերհամբարձար այսօր Աստուածամայր ուստի և դասք հողեղինացըս փառաբանեմք․ ընծայող իմանալի լուսոյն ընդ միշտ կուսին։ Այժմ և միշտ։ Որ ի վեցթևեան սրովբէից և ի բազմաչեայ քրովբէից փառաբանիս երգով Աստուածածին․ ընդ որս և մեք համաձայնեալ բարեբանեմք․ ընծայող իմանալի լուսոյն ընդ միշտ կուսին։

Մեծացուսցէ Դ․Զ։

Աստուածածին գերագոյն երկնից ցուցար խորան և առագաստ․ քանզի ծագեալ լոյսն ի Հօրէ․ բնութենէ էից անտանելին պարփակեցաւ ի քում յորովայնի․ հոգևոր երգով զքեզ ընդ միշտ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Դուռըն փակեալ զքեզ Եզեկիէլ յառաջագոյն ծանեաց կոյս անարատ․ ընդ որ եմուտ անհասն յէից․ Բանն անմարմին որ ի Հօրէ և ել մարմնով անխախտելի մնալով կուսութեանդ․ հոգևոր երգով զքեզ ընդ միշտ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Վերափոխեալ զքեզ ի յերկնային խորանն այսօր Որդիդ քո մի-

ածին․ ուստի և զմեզ առաքելոցն և իմաստուն որ կուսանացըն միաձայնելով գովէին ըզքեզ մայր ամենօրհնեալ․ հոգւոր երգով ըզքեզ ըմբ շտ մե-ծացուցանեմք։

Ողորմեա Դ․Զ․

Որ խոնարհեցար յերկնից․ անմեկնելի ի Հօրէ Որդի Աստուծոյ․ և առեր մարմին ի սըր-բոյ կուսէն․ հայցմամբ ծաղողին լուսոյ և մեզ ողորմեա․ փառք Հօր․ Որ մահուամբ քով կեցուցեր ըզմեզ․ և յարուցեալ համբարձար առ Հայր ի յերկինս․ այսօր երկնաւոր զօրօք իջեր ի փոխումըն մօր քո և կուսին․ հայցմամբ ծա-ղողին լուսոյ և մեզ ողորմեա․ Այժմ և միշտ․ Որ յիմանալի խորանըդ․ բարձրացոյց ըզքեզ մայր Աստուծոյ․ անճառելի փառօք միածին Որդին․ առ նա միշտ բարեխօսեա վասն ան-ձանց մերոց․

Տէր յերկնից Դ․Զ․

Ուրախ լեր մայր անճառ լուսոյ ով Ածածին․ քանզի առ ի քէն ծագեաց մեզ լոյս ի լուսոյ․ և զխաւարն անգիտութեան փարատեաց ան-ըստուեր լուսովն իւրով։ փառք Հօր։ Ուրախ լեր կոյս անարատ մայր ամենօրհնեալ․ քանզի որ ի քէն ծընաւ Որդին միածին վայր իջեալ յերկ-նից այսօր վերածեաց ըզքեզ պանծելի փառօք․ Այժմ և միշտ։ Ուրախ լեր հարսն երկնային կոյս անապական․ քանզի երկնայնոցն ըզքեզ այսօր ընկալեալ տօնէին ուրախութեամբ․ ընդ որս և մեք երգեսցուք քեզ օրհնութիւն մայր Տեառն։

Առաւօտու Երգ․ Արի՛ Տէր ի՛ հա՛նգի՞ստ քո․ դու և տապանակ կտակի սրբութեա՞ն քո։

Յիշեա՛ Տէր ըզԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Բող․ Այր որ ոչ գնաց։

Սաղմոս Բ․

կգ․ Տր ասաց ցիս, որդի իմ ես դու․ և ես այսօր ծնայ զքեզ։

Փխ․ Ընդէր խռովեցան հեթանոսք․ և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։

Յանդիման եղեն թագաւորք երկրի․ և իշխանք ժողովեցան ՚ի միասին՝ վասն Տն և վս օծելոյ նր։

Խզեսցուք զկապանս նց․ և ընկեսցուք ՚ի մէնջ զլուծ նց։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք․ և Տր արհամարհեսցէ զնս։

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութբ իւրով․ և սրտմտութբ իւրով խռովեսցուսցէ զնս։

Ես կացի թագաւոր ՚ի նմանէ ՚ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա, պատմել ինձ զհրամանս Տն։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու․ ես այսօր ծնայ զքեզ։

Խնդրեա յինէն՝ և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութի, եւ իշխանութի քեզ զամ ծագս երկրի։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ․ ոպ զանօթ բրտի փշրեսցես զնս։

Արդ թագաւորք, զայս ՚ի միտ առէք․ խրատեցարուք ամենքեան՝ որք դատէք զերկիր։

Ծառայեցէք Տն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նր դողութբ։

Ընկալարուք զխրատ նորա․ զի մի բարկասցի Տէր, և կորնչիցիք ՚ի ճանապարհացն արդարութե։

Ի ժամանակի ոպ բորբոքեսցի բարկութի նր։

Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են ՚ի Տր։

Արթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու: Բ. 1:

Վասն ծննդեան Տն մերոյ Յսի Քսի:

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամ տիեզերս: Այս առաջին աշխարհագիր եղեւ 'ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ: Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի: Ել և Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ Նազարէթէ 'ի Հրէաստան 'ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա 'ի տանէ և յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ զոր խօսեալն էր նմա, և էր յղի: Եւ եղեւ 'ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա: Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց 'ի խանձարուրս՝ և եդ զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջավանին: 7:

Նրգ Ձայն: Քր. Խնդր: Կեցո: Ա.Ղ. Բռւմ:

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մնացեալ ժամերգութեանն. Իջցէ որպէս: Ածզիրաւունս: Քր. Անյր որ կամ գոնց:

Համբարձի Դ.Զ: Այսօր հրաշափառ կոչմամբ: 731: Քր. Մ̃ խաղա: Ա.Ղ. Հայր գթած: Օրհնէ Հայր գերամեծին ժողովեան յաւուրն Երանելին նախատօնակ առնել, և ասէն ճրագալոյցն առաւօտ Օրհնութեանն Դ.Զ. Այսօր ժողովեալ: 702: Հայր առաջ:

Օրհնէ Քր. Մի զԱծածինն: Կեցո: Ա.Ղ. Ընկալ Տր:

---

Բայց պարտ է յայն օր թողուլ զփոխումն Ս. Ածածնի, նախատօնակ առնելով, որ է բարեխօս մեր առ Քրիստոսին. և զայս անդադրում կատարել:

Եւ այն յայն օր, յառաւօտուն և յերեկոյին Քր. Անյր որ: Առաւօտու Արեգական Քր. Խնդրեսցուք: Ա.Ղ. Բռւմ ամենազօր: Եւ յերեկոյին Քր. Մի զԱծածինն: Կեցո: Ա.Ղ. Ընկալ:

Իսկ Առաւօտուն Երգ, Սաղմոս և Աւետարանն զոր պատ-կեր և ասեն, զայնր աւուր կատարեա: Եւ Համբար-ձի զանցեալ աւուր Օրհնութեան ասա: Եւ զատանգելեայ աւուր պատարագն նախատօնակ ասա, մինչև 'ի մի և ե-րեքշաբթւոյն:

Բայց ոմանք երեկոյ օր միայն նախատօնակ ասեն զայս աւուրս յերեկոյին Համբարձի զատանգելեայ աւուր Օր-հնութեան միայն ասեն:

## ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Դ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԱ. աւուրն ասա 702. բայց 'ի համբերել աւուր պատարագին: Նոյնպէս և յԸ. աւուր:

## ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ե. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԲ. աւուր ասա: 719:

## ՈՒՐԲԱԹ

Զ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԳ. աւուր ասա: 731:

## ՇԱԲԱԹ

Է. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԱ. աւուր ասա: 702:

## Ա. ԿԻՒՐԱԿԷ

ՕԿՏԱՒԻ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԲ. աւուր ասա: 719: Գտցես է Դասք *լուսանկարչէն*:

## Ա. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Թ. ՕՐ ՓՈԽՄԱՆ

Ամենայն ինչ զԳ. աւուր ասա: 731:

# Ա· ԵՐԵՔՇԱԲԹԻ

## Ս· Յովակիմայ և Աննայի, և կանանցն Իւղաբերից:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—լէ Ա.Կ:

Որ նախախնամող իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ մերոյ եկեղեցւոյ. խորագոյն արկեալ հիմունս հաստատութեան ընդդաս մարգարոց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ զօրհնութիւն նախաստեղծիցն ի ծագոյ արուաց եւ իգաց. պայծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի յԱննա. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ ընդխոստումն Աբրահամու նահապետին մեր ըստ հոգւոյ. քահանայական եւ թագաւորական զաւազանացն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

† Անըսկիզբն Աստուած անճառելի անբաւ զօրութի. որ յիսկզբանց յաւիտենից խնամարկեցեր զորդիս Ադամայ. գերագոյն այսօր շնորհիւ փայլեալ ցուցեր ծննդեամբ զմայր միածնին քո ընտրելոյ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ յանէից բանիւ գոյացուցեր զաշխարհս ամենայն. այսօր մարդասիրեալ տնօրինաբար ի յԱննայէ արկեր հիմունս նորոյ աշխարհի. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

ՅՈՎ. Թագաւորըն բոլորից պարածածկեալ յարգանդի կուսին. զոր ծառայդ հաւատարիմ տեսեալ Հոգւովըն սրբով եւ բերանով մօր քո

օրհնարանէիր. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց: Լուսանդաւոր հին օրինացն արդարութեն ընդ մարգարէիցն. և նախաշաւիղ հետևողաց անձուկ ճանապարհին նոր օրինացս ընդ առաքելոցն. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց: Ի յանապատի հրեշտակական վարուք բնակեցար ընդ Եղիայի. կերակրելով մարախ եւ մեղր վայրենի հին և նոր պատուիրանաց օրինակաւ. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց:

ՍՐԲ.. Որ զանձային զօրութիւնդ քո ծանուցեր Հոգիդ ճշմարիտ. բաշխելով իշխանարար ըղպարգեւս քո. տեսանողաց մարգարէիցն ի սկըզբանէ. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ: Որ մաքրեցեր բնակարան Ածութեանդ քո սբ ըզմարգարէսն. եւ աղբերաբար հեղեր յանձինս նոցա զանապական և զերկնային շնորհաց քո բըղխումն. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ: Որ յայտնեցեր ըղձանկեալ խորհուրդ քոյոց սիրողաց. եւ անճառելեաց ապագայից պատմօղս արարեր. տնօրէնութեն քում էակցի Բանիդ Աստուծոյ. բարեխօսութեամբ սոցա խնայեա ի մեզ:

ԱՌ.. Ի յանսահման ծովէն Հօր գըթութեանց բըղխմունք եւ որ առաքեալք. անդրանիկ խորհուրդ եւ լոյս գերազանց երկոտասան ազգաց պըսակ որ եկեղեցւոյ. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Աշխարհակիր Բանին բազկաց եղեալ հիմունք սրբոյն Սիովնի. լերինք անշարժք հովիտք ծաղկածինք հարազատք մեծ հաւատոյ Պետրոս եւ Անդրէաս. բարեխօս լերուք առ Տէր վասն ան-

ձայնց մերոց։ Ի բարերում Հոգւոյն վըտակք եւ որոտմունք տերեղերաց. ցոլմունք հրեղէնք աստեղք լուսարերք. Ցնի Թագաւորին փակաս լանջաց նը Յովհաննէս եւ Յակոբոս. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց։

ՀԸՅՐ. Որ Թագաւորաց ազգաց եւ ազանց գերագոյն ցուցին. արփիափայլ վերըգըս հոգեւորս ընտրեալ դասուց վերին Սիոնի. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։ Որ խորհրդեամբ ճըշմարիտ լուսոյ փառաց անեղին. նըկարագրեցաւ մեզ գիր կենդանի յորդանդ մաքուր մեծին Մեսրովպայ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։ Որ ըղծածկեալ խորհուրդ ածգիտուն. տընօրինաբար յայտնեալ ծանուցին հանգոյն սըրբոյ մեծին Մովսէսի. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։ Որ յօրինակ ճըշմարիտ սիրոյ նը առաքելոցն. աղբերաբար ի ձեզ եկացա Հոգի շնորհաց բղխումն անըսպառ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։ Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօք տանըս Թորգոմայ. հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց. զլոյս իմաստից ի մեզ ծագելով. մաղթանօք սոցա Քրիստոս խընայեա ի մեզ։

ՀԳ.. Որ յերկնային զօրս անմարմնոցըն նախ հեղեր առատապէս Հոգիդ ճըշմարիտ. զածային և զգերագոյն քո իմաստութիդ. լինել փառաբանիչ նը Երրորդութեդ. ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ։ Որ զերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեանդ խորհրդականցութիդ. զարդարեցեր փըշմամբ շնորհաց քոց կենդանարար. եւ

ընդ ծննդեանն առ ի նմանէ խօսեցար օրինօք եւ
մարգարէիւք. ընդ նորին փառաւորեմք զերրեակ
միութիւնդ: Որ յերկրորդի լինելութեանս յետ
յարութեան քում էանցին. մըտեալ ի վերնա-
տունն դրօքըն փակելովք. շնորհելով ըստ առա-
ջին փչմամբն ըզքեզ մետասանիցն. առաքելոցն
ասաց առէք Հոգի սուրբ. ընդ նորին փառաւո-
րեմք զերրեակ միութիւնդ:

Հն. Հայր անախական եւ բարերարութ. մաղթելով
հայցեմք ի քէն վասըն մեր ննջեցելոցն արժանաւո-
րել հանգըստեան օթեվանի սըրբոցն: Ծնեալ ծը-
նունդ Հօր Որդի. որ մահկանացուացս կեանք
ես. զհոգիս ննջեցելոց մեր ընկալ. եւ արժա-
նաւորեա հանգըստեան օթեվանի սըրբոցն: Ն-
նորոգօղ սուրբ Հոգի յորժամ նորոգես զապա-
կանեալըս յայնժամ շնորհեա եւ մեր ննջեցելոցն
արժանաւորել հանգըստեան օթեվանի սըրբոցն:

Մ՟օ. Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ
հոտ անմահութեան ծնընդոցս Եւայի. յորմէ սփռե-
ցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութեամբ ըզքեզ մեծա-
ցուցանեմք: Պտուղ լուծիչ երկանց բարձող անիծից.
ծագումն արեւու լուսոյն ճըշմարտի. որով հեր-
քեաւ խաւարն առաջին. օրհնութեամբ ըզքեզ մեծա-
ցուցանեմք: Ըզքեզ ունիմք բարեխօս կոյս ա-
մենօրհնեալ. մայր անարատ Էմմանուէլի տաճար
Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ ըզքեզ
մեծացուցանեմք:

ԽԶ. Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց եւ
մարգարէից. շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի. և

ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ հրեշտակս . փառաւորելով սբ զԵրրորդութիւնդ։ Տեղի ապաւէնի և ժողովարան բանաւոր հօտի . բնակարան հրեշտակաց նաւահանգիստ արդարոց եւ մեղաւորաց քաւարան . զարդարեալ առաքելովք եւ մարգարէիւք ։ փառք Հօր ։ Բանն Ած և ծածկեալ խորհրդոյն յաւիտենից . իջեալ ի յերկնից մարմնացեալ ի կուսէն խառնեալ յերկրի և թաղեալ ի նոր ի գերեզմանի . եւ յարուցեալ յերրորդ աւուր . զի զմարգարէիցն ըղձանսն կատարեսցէ ։

Այժմ և միշտ։ Ի յամենուր երկրէ այսօր բուսաւ մեզ բարեբեր բուսոյն բարի . շուշան հովտաց ծաղիկն դաշտաց . միամայրն Մարիամ արմատ տընկոյն անմահութեան . աղաչանօք սորա խնայեա ի մեզ ։

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴԶ ։

Որ ի վերայ քերովբէից նստեալ հանգչիս Բանդ Աստուած . այսօր հրաշափառ պարգեւօք ցուցեր ծննդեամբ ի յԱննայէ աթոռ փառաց յերկրի զԿոյսն Մարիամ . օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց ։ Որ ի լերինն Քորեբայ փայլատակեալ հուրդ ի ծայրին հողմով և շարժմամբ յայտնեալ ի պակուցմանն սուրբ մարգարէին . այսօր գթութեամբ եւ ողորմութեամբ յարմարեցեր տեղի իջման անճառելի խոնարհութեանն ի յօդ հանդարտ զօրինակեալըն Մարիամ . օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց ։ Որ ի կանուխ ժամանակաց ստորագրեցեր զանօրէնութեան քո ըղտեղի . տա-

ճար եւ քաղաք շինեալ բարձրոյն անուանեալ քում բարձրելոյ. այսօր ստուգապէս յայտնեալ ցուցաւ բնակարան Էութեան քո ո՛վ կոյսն Մարիամ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք զծնեալն այսօր ըղձալի մաքուր Կուսին ընդմիշտ կուսէն: փառք Հօր: Որ ի զօրաց հոգեղինաց երգարանի սրբուհին. զծնեալն այսօր օրհնեք բնութեան զմայլին Ա՛յ Կուսին ի վեր քան զբնութիւնս. բարձր արարէք զծնեալն այսօր ըղձալի մաքուր Կուսին ընդմիշտ կուսէն: Այժմ եւ միշտ: Որ ի դասուց մարգարէից եւ յերջանիկ առաքելոցն օրհնաբանեալ սրբուհին. զլուծիչ երկանցն Եւայի զմայրն կենաց ծնեալն այսօր ի յԱննայէ. բարձր արարէք զծնեալն այսօր ըղձալի մաքուր Կուսին ընդմիշտ կուսէն:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Գ.Զ:

Անուշահոտ խաղաղութեան եւ արուսեակ զուարթարար. այսօր Մարիամ սրբուհին ի փառս քո ՔՍ ծագեաց մեզ լոյս յորդւոցն օրհնաց. անդադար երգով աղօթք զքեզ ընդ միշտ մեծացուցանեմք: փառք Հօր: Դրախտ անծայրն եւ արեւելք իմանալի. այսօր Մարիամ հրաշագեղ ծնեալ ի յԱննայէ ի մայրութիւն քո հրաւիրեալ Քրիստոս Որդի Աստուծոյ. անդադար երգով աղօթք զքեզ ընդ միշտ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Տապանակ աղբերացուցիչ եւ տաղաւար սրբահամեմ աստուածընկալ. այսօր Մարիամ լուսապայծառ միածին ծնանիդ յայտնեալ ծնողաց. ի ծնողութիւն քո կո-

չեցեալ միածին Որդի Աստուծոյ. անդադար եր-գով սուրբ ընդ երգեղ ըմբ շտ մեծացուցանեմք:

### ՈՂՈՐՄԵԱ Դ.Զ.

Անճառելի Աստուած անզննական ի հրեղինաց. այսօր հաճեցար ի հողեղինաց յայտնել թաքուցեալ Աստուածութեան քո զմիշտ կոյսն Մարիամ. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Անժամանակ ծագոյ ծնունդ Հօր էական. այսօր սըր-բեցեր յորովայնէ ժամանակաւ մայր ի մօրէ ան-ճառ մարդեղութեամբ. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Յառաջ քան զարու-սեակ անմայր ծնունդ Հօր ի յերկինս. այսօր ըն-տրեցեր ի մայրութիւն մայր անարատ անհայր ծննդեան քո ի յերկրի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած:

### ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Դ.Զ.

Թագաւոր փառաց Աստուած Հօրիդ կենդանարար. ի շնորհաբաշխ աւուր մեծի ծննդեան Մարիամու. ցնծայր Դաւիթ թագաւորն. նորոգեա զկեն-դանութիւն մերոյ թագաւորին. զի օրհնեսցուք ընդ երգեղ Տէր այժմ և յաւիտեան: Փառք Հօր: Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Որդւոյ. ի յարմատոյն Յեսսեայ բղխման գաւա-զանի հանեալ ժամանս. շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ հայրապետին. զի օրհնեսցուք ընդ երգեղ Տէր այժմ և յաւիտեան: Այժմ և միշտ: Լուսոյ աշխարհի եւ ճառա-գայթ իմանալի Հօր սուրբ Աստուծոյ. ի ցըն-ծութեան աւուր լրման ամուսնութեան Յովակի-

մայ են Աննայիդ․ աղօթեսցեք սոցա լցն զպետս կարեաց Հայաստանեայց Եկեղեցւոյս․ զի օրհ-նեսցուք ընդ քեզ Տէր այժմ և յաւիտեան։

Առաւօտու Երգ․ Ով են բանք։ Ընդ ամ։
Գաղ․ Աստուած մեծ։
Մանկունք Աշակերտք Քրի։ 752։

ՅԵՐԵԿՈՅԻ Հարց․ Դ․ Կ․ ՍՏ․ Խաչարերից։ 309։

# Ա․ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ի․ Կ․ Որ հարցն մերոց։ 428։

# Ա․ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ս․ Բարսղի հայրապետին և երից աշա-կերտաց նորին։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․ Չ․ Որ զանչափ։ 362։

# Ա․ ՈՒՐԲԱԹ

Պահոց։

# Ա․ ՇԱԲԱԹ

Ս․ Եղիսէի մարգարէին։

ԻԳԻՇԱՅՐԻ Օրհ․ Ա․ Կ․ Որ զանձայն զօրու։ 387։
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա․ Ջ։ Որ յերկնային։ 394։
ՅԵՐԵԿՈՅԻ Հարցնայն Ա․ Ջ․ Ով են Տր․ Երկնա-քաղաքացին։ 384։

Իսկ տօն Գէորգայ Զօրավարին Ս․ Առաքելոծանէ յայս կիրակէ Եղբա որ կատարի ՚ի յոգոստոսի 31, ԵԸԵ կատա-տօնել տօնել։

# Բ. ԿԻՐԻԱԿԷ

## ԶԿՆԻ ՓՈԽՄԱՆ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ. Ձ.

Փառաւորեալ Որդի Աստուծոյ որ եկիր կամաւ ի չարչարանս Տէր Աստուած հարցն մերոց։ Տարածեցեր զամենազօր բազուկս քո ի վերայ խաչին և երկիրս հիմնեալ սասանեցաւ և դողալով երերէր. ի յահէ փառաց քոց. Տէր Աստուած հարցն մերոց։ Նա և տեսեալ արեգակն զարարիչն ի վերայ խաչին. չհանդուրժեալ չարչարանաց արարչին խաւարեցոյց զլոյսն ի միջօրէի. ի յահէ փառաց քոց. Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. [illegible] օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան։ Փառք Հօր։ Նա և զինուորըն գեղարդեամբըն յարձակեալ. խոցեաց զկող կենարարին. բարձր արարէք յաւիտեան։ Այժմ և միշտ։ Աստուածային կենդանարար բղխեալ. լուացեալ զախտերս ի մեղաց. բարձր արարէք յաւիտեան։

Մեծացուսցէ Գ. Ձ.

Զանձկալի լուսոյ մայր և ըղբնակարան անբովանդակելի Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Զանհաս անորոշնութեան մայր և զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Զերկրից փրկութեան մայր. որ զանտանելին յերից ի յարդարանգլի երկիրս. ըղձամ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

Ողորմեա Գ․Զ․

Յամենայնի բարձրողորմ Աստուած․ նայեա յիս գթութեամբ և խնայեա զի դու միայն ես մարդասէր։ Փառք Հօր։ Ես խաչելոյդ քո կենարարի պաշտեմ․ եւ յարութեամբդ քո փրկեա և ապրեցո․ զի դու միայն ես մարդասէր։ Այժմ և միշտ։ Ես ի միւսանգամ ի գալստեան քո Տէր․ վերըստին զիս նորոգեա և ապրեցո․ զի դու միայն ես մարդասէր։

Տէր յերկնից Գ․Զ․

Այսօր յարութիւն Քրիստոսի տօնեցէք հաւատացեալք․ ի մի Աստուած Հայր ամենակալ։ Փառք Հօր։ Այսօր եւ կանայքն իւղաբերք աւետիս տային առաքելոցն․ օրհնեսցուք զԱստուած զՀայր ամենակալ։ Այժմ և միշտ։ Այսօր և հրեշտակք ի յերկինս հոգեւոր հրճուանօք երգով․ օրհնեսցուք զԱստուած զՀայր ամենակալ։

## Բ․ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Ա․ Պիոնի քահանային և Արգիլմնեհի վկային և Ստեփանոսի ուլնեցւոյն։

ՅԱՌԱՋԱՒՈՐԱՑ Հարց Ա․Կ․ Մի Ա․Ծ արարիչ։ 348։

Աշխարհ Գ․Զ․

Յընծայ այսօր սուրբ եկեղեցի․ յիշատակաւ նորոց վկայից․ որք արիաբար մարտեան ընդդէմ բռնութեան չարին․ կատարեցան արեամբ վասն անուանն Տեառն։ Ընդ որոյն Ստեփանոսի մեծ նահատակին․ այսօր նմանեալ նախավկային․ զանուանակոչութիւն յինքեան բերեալ և զհանդէս մարտին․ պսակեցաւ նմանեալ նմին։ Փառք

Հօր։ Սրբոց տասանց եւ չորից ընտրելոցն ի Տր. նահատակեալք ի փորձ տանջանաց. եւ ընկալան ի Քէ զյաղթանակ մարտին. պարգեւել նոցա զանվախճան ըզկեանն։ Այժմ եւ միշտ։ Աղօթանօք հայցմամբ սուրբ Աստուածածնին. ընկալ Տէր զաղաչանս մեր. պարգեւելով ըզթողութիւն մերոց յանցանաց. բարեբար փրկիչ պարգեւաց տուօղ։

ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձէ Դ.Կ։

Ամրափրոս եւ վեհագոյն Քնի սուրբ Ստեփաննոս. որ ըզչարչարանս յանձն առեր. եւ երկնային դասուցն եղեր դասակից. աղաչեա զՏրն շնորհել մեզ ըզկեանս անվախճան։ Փառք Հօր։ Սուրբ անուան քո եղեր պսակ եկեղեցւոյ. եւ հաստատեցեր լուսաւոր ճանապարհին. եւ յորդորէ զմարտ ընտրելոցն ընդ քեզ սրբոց. աղաչեա զՏրն շնորհել մեզ ըզկեանս անվախճան։ Այժմ եւ միշտ։ Զընծութիւն եկեղեցւոյ ընտրեցար ի Հոգւոյն. եւ լուսաւորեցեր զորդիս Թորգոմայ. այսօր երկրին հաւատացեալք. եւ տօնեն ըզծերգնութեան քո զհանդէս. աղաչեա զՏրն շնորհել մեզ ըզկեանս անվախճան։

# Բ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Անդրէի զօրավարին եւ բանակի նորին, եւ Կաղինիկոսի վկային, եւ Գիտմիդեայ բժշկին։

ՅՈՒՈՒԻՕՏՈՒ Հարց Պ.Կ. Օրհնութիւնք։ 365։

# Բ․ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ․ Մանկունք գերեալք։ 429։

# Բ․ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ա․ Ադրիանոսի և կնոջ նորա Անատոլեայ, և Թէոդորոսի ստրատելատի, և Թիւրսոսի վկային։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԿ․ Որ բարձրեալդ ես։ 349։

# Բ․ ՈՒՐԲԱԹ

Պահոց։

# Բ․ ՇԱԲԱԹ

Ա․ Թովմայի առաքելոյն։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ ԳԶ․ Նորանեալ։ 659։ Ետ սաղմոսին։

Մանկանց ԱԿ։

Աշակերտք Քնի․ եւ առ ամենայն տիեզերս առաքեալք․ բարեխօսեցէք առ Տէր վասն մեր։ Փառք Հօր։ Որք առիք ընդպատուէր քարոզել աներկիւղ ըզԲանն կենաց յաշխարհի․ բարեխօսեցէք առ Տէր վասն մեր։ Այժմ և միշտ։ Որք արժանի եղէք տեսանել մարմնով զՈրդին Աստուծոյ յայտնապէս․ բարեխօսեցէք առ Տէր վասն մեր։

Յայս միջոցս հանապազ շաբաթ մի յաւելու և նուազէ․ Եթէ յաւելու, կարգաւ ըստ գրեցելումս տօնեա, և եթէ նուազէ, զերկուց շաբաթուց տօնս ՚ի մի միաբանեա։

# Գ. ԿԻՒՐԱԿԷ

## ԶԿՆԻ ՓՈԽՄԱՆ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ։

Անճառելի բնութիւն և բան Հօր. առաքեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն. սուրբ Ա՟ծ հարցն մերոց։ Եկեալդ ի փրկութիւն մեզ Թագաւոր անմահ, յանձն առեր ըզմահ խաչի. եւ իջեր ի գերեզման անապական. սուրբ Ա՟ծ հարցն մերոց։ Եւ յարուցեալ ի մեռելոց երեքօրեայ լոյս ծագեցար տիեզերաց. իշխանութեամբ լուծեր զերկունս մահու. սուրբ Ա՟ծ հարցն մերոց։

Գ.. ԸզՏէր օրհնեցէք բարձր արարէք զԹագաւորն ամենեցուն Իշխան Հայր միշտ եւ յաւիտեան։ Փառք Հօր։ Զյարուցեալն ի մեռելոց Ք՟ս Ա՟ծ. ժողովուրդք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ. Զանապական լոյսն ի Հօրէ և յՈրդւոյ ծագեալ ս՟բ զՀոգին. քահանայք ընդ սերովբէսն գովեսցէք. եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ։

ԶԱստուածածինն և զմիշտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց։ Փառք Հօր։ Խնդա եւ ուրախ լեր ամենօրհնեալ Մայր. քանզի որ ի քէն ծնաւ Էմ՟ղ Աստուած ի փրկութիւն անձանց մերոց։ Այժմ և միշտ։ Գանձ

անապական դրտար սուրբ Ածածին. բարեխօսեա Քսի Այ մերոյ կեցուցանել զանձինս մեր ։

Ողորմեա Գ.Կ ։

Որ յարեարդ ի մեռելոց Քս Ած. եւ մեզ կեանս շնորհեցեր՝ ողորմեա ։ փառք Հօր ։ Որ զանկեալն ի նախնումն ի մեղս՝ պատուական արեամբըդ քո կանգնեցեր. եւ մեզ կեանս շնորհեցեր՝ ողորմեա ։ Այժմ եւ միշտ ։ Եւ յարութեամբըդ քո զաշխարհս կեցուցեր. եւ ըզդրունս դժոխոց փըշրեցեր. եւ մեզ կեանս շնորհեցեր ողորմեա ։

Տէր յերկնից Գ.Կ ։

Յարեաւ Տէրն ի գերեզմանէն ։ Ընդ յառնել փրկչին մերոյ երկիր շարժեցաւ. վէմքն պատառեցան ։ Ճառագայթեալ լոյսն ի վերայ վիմին զարհուրեցոյց ըզպահապանսն առ դրանն գերեզմանին ։

Զօծայլն ըզգերեզմանաւըն բոլորեալ դասուք հրեշտակաց տեսանէին ըզՏէրըն յարուցեալ ի գերեզմանէն ։ փառք Հօր ։ Ածասէր կանայքն եկին ի գերեզման փրկչին անուշ իւղօք եւ խնկօք. յօծանել զմարմինըն տէրունական ։ Այժմ եւ միշտ ։ Լուսապայծառ հրեշտակն. նըստէր ի վերայ վիմին աւետարանէր կանանցն. յարեաւ փրկիչըն տիեզերաց ։



Մատիցուք համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց նր:

# Գ. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Ս. Թարգմանչացն, Մեսրոպայ վարդապետին և Եղիշէի, Մովսիսի քերթողի, և Դաւթի անյաղթին, և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսիսի Կլայեցւոյն, և Ներսիսի Լամբրոնացւոյն:

Զամենայն ինչ զԹարգմանչացն տես ի Ե. շաբաթն : 565:
ՅԵՐԵԿՈՅԻ Հանգ. Գ.Ձ. Նմանեալ: 571:

# Գ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ս. Մարգարէին Եզեկիէլի, Եղիէ, և Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Ա.Կ. Որ զանձայլն զօրուն: 387:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց. Դ.Ձ. Որ ընդ հողեղէն: 391:
Մեծացուսցէ Դ.Ձ. Անարատ կոյս Ածածին: 370:
Մանկունք Դ.Ձ. Որ զյառաջագոյն: 395:
ՅԵՐԵԿՈՅԻ Հանգ. Դ.Կ. Այսօր ցնծայ: 393:

# Գ. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Ը.Կ.:

Տէր Աստուած հարցըն մերոց. յամէն արդար ես և որ է քո տէրութիւնդ: Երեք մանկունքն ի հնոցին հրեշտակային ձայնիւն ընդ քեզ փառաւորէին: Նուագելով զայս ասէին. օրհնեալ է քո տէրութիւնդ օրհնեմք եւ փառաւորեմք:

Գ.. ԶՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ընդ յաւիտեան: փառք Հօր: Որ զայրեցող բնութիւն բոցոյն ի ցօղ փոխարկելով. ի տոչորմանէ հրոյն

զերիս մանկունս անկէզ պահեալ. եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Հրաշալի ձայնիւն տեսլեամբըն չորրորդին. բըռնաւորըն պակուցեալ զօրհնաբանսըն զուարճացոյց. և բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուցէ ԲԿ:

Սուրբն էր մայր լուսոյ Մարիամ. երկիր բանաւոր արեգական օթարան. էր բարեխօս վասն անձանց մերոց: Փառք Հօր: Խորան տաճար Բանին Աստուծոյ. բարձօղ տրտմութեան նախամօրն Եւայի. էր բարեխօս վասն անձանց մերոց: Այժմ և միշտ: Ցնծա իմանալի արեւելք. քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեսաց Քրիստոս. էր բարեխօս վասն անձանց մերոց:

Ողորմեա ԲԿ:

Մեղք իմ բազում են յոյժ ծանր են քան զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Փառք Հօր: Բաց Տէր ըզդուռն ողորմութեն որ ողբալով կարդամ առ քեզ. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ: Հեղ յիս զգթութիւնըդ քո բազումողորմ եւ մարդասէր. քանզի քեզ միայնոյ մեղայ ողորմեա ինձ Աստուած:

Տէր յերկնից ԲԿ:

Ամենայն երկիր տուք փառս Աստուծոյն որ եկն եւ փրկեաց զմեզ: Փառք Հօր: Ամենայն հոգիք ձայնիւ ցնծութեամբ բարեբանեցէք զՏէր: Այժմ և միշտ: Ով եցոյց մեզ Տէր զփրկութի և զկեանս յաղագս տանն Իսրայելի:

## Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Յովհաննու կարապետի, և յիշատակ Յովբայ արդարոյն:

Ի ԳԻՇԵՐԻ ՕՐՀ. Գ.Ձ. Զմարգարէ բարձրելոյն: 516: Ն. Գ.Կ. Որ յորովայնէ: 517: Իւր աւուրն:
ՅԵՐԵԿՈՅԻ Հարց. Գ.Կ. Մարգարէից: 522:

## Գ. ՈՒՐԲԱԹԻ

Պահոց:

## Գ. ՇԱԲԱԹԻ

Նիկիայ Ս. Ժողովոյն երեքհարիւր ութևտասն հայրապետաց:

Ի ԳԻՇԵՐԻ ՕՐՀ. Գ.Ձ. Այսօր սրբ հայ: 678: Իւր աւուրն:

ՄԱՆԿՈՒՆՔ: Գ.Ձ: Որ հրաշալի: 684: Օրհն:

ՃԱՇՈՒ Գ.Ձ:

Ի մ'ր Նորոգութեան ծանեաք զՏէր մեր Յ'ս Ք'ս զԼոյսն Ա.Ծ. որ ի ծոցոյ Հօր յառաջ քան զյաւիտեանս Որդի. փառաւորեմք որ եկիր ի փրկել զարարածս քո: փառք Հօր: Անճառ տնօրէնութբ ի միշտ կուսէն զանձինցն բարձեր ըղղատապարտութի. եւ կամաւոր խաչելութբ քո Տէր կենդանացուցեր անմահական փրկիչ. աւանդմամբ վերծնեալք և երկրպագեմք. որ ուրախութիւն ես երկնի և երկրի Ք'ս թագաւոր: Այժմ և միշտ: Ապաւինիմք ի քո բարեխօսութիւն Ա'ծածին Մարիամ. մայր Տ'ն եւ կոյս սուրբ. հարսն երկնից և դրուռըն կենդանի. զոր մարգարէն ասէ:

ՅԵՐԵԿՈՅԻ

Հարց. ԱՁ. Մի եւ Տր: 384: Կամ ԴՁ. Հան-դիսացեալք: 684:

# Դ. ԿԻՐԱԿԷ

## ԶԿՆԻ ՓՈԽՄԱՆ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԳԿ:

Զնախայաւիտեան Որդի փառակից Հօր եւ Սուրբ Հոգւոյն. որ միշտ յանճառ փառս բարեբանիս ի վերին զօրացդ. ընդ քեզ օրհնեմք Ածն հարցն մերոց: Եղեալ մարդ ճշմարիտ եկիր կամաւ ի չարչարանս. եւ բարձեր ընդ փայտ խաչին անպար-տականդ մահու. ընդ քեզ օրհնեմք Ածն հարցն մերոց: Ի գերեզմանի իջեր խափանիչ մահու. երեք-օրեայ յարուցեալ լոյս ծագեցեր ստուերանստա-ցս. ընդ քեզ օրհնեմք Ածն հարցն մերոց:

Դ. ԶՏր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Զթագաւորըն Քս. որ վասն մեր յանցանաց ընդ մահ ճաշակեաց. բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Զէակից Բանն Հօր. որ երեքօրեայ թաղմամբ զդժոխս աւերեաց. բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԳԿ:

Աստուածատունկ խնկաբեր ծառ յանուշահոտ բուրաստանէն. որ ի գնացս Հոգւոյն վտակաց տընկեցար. եւ զանմահութեան պտուղն ի ժա-մու ետուր մեզ. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ

միշտ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Զանապական բողբոջն յանծայրին դրախտէն յորովայն քո տըն-կեալ. բըղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծաղիկ. վայելուչ կուսական ծննդեամբ. վասն որոյ ամե-նեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Յարփւոյն լուսոյ ծագումն. ի քեզ վառեալ ըզճրագ մարմնոյն լոյս աշխարհի. որով գտեալ զպատկերն իւրական. զոր վերըստին նորոգեաց յառաջին կերպարանն. վասն որոյ բարեխօսեա նորոգել զմեզ ի հնութենէ մեղաց։

Ողորմեա գ.կ։

Անսկիզբն Բանդ անճառելի ծընունդ. որ ա-ռաքմամբ Հօր իջեր ի յերկնից վասն մերոյ փըր-կութեան. զքեզ աղաչեմք ողորմեա քո արա-րածոց։ փառք Հօր։ Որ անեղ Հօր և անփո-փոխելի բնութեան. ի կուսէն ծընար նախաստեղ-ծին կերպմամբ. և եկիր կամաւ ի չարչարանս. զքեզ աղաչեմք ողորմեա քո արարածոց։ Այժմ և միշտ։ Ի խաչին բևեռեցար կամաւ Հօր և սուրբ Հոգւոյն. և իջեր ի գերեզման ան-մահ բնութեամբ. և յարեար ի մեռելոց Քրիս-տոս. զքեզ աղաչեմք ողորմեա քո արա-րածոց։

Տէր յերկնից գ.կ։

Զքո յարութիւն օրհնեմք մարդասէր. աղաղա-կելով Տէր փառք քեզ։ Զօր օրհնեն սերովբէքն և գովեն քերովբէքն. աղաղակելով Տէր փառք քեզ։ Անդադար բերանով անհանգիստ բար-բառով. աղաղակելով Տէր փառք քեզ։

Առեալ եւ մեր զօրհնութիւնս հրեշտակացն երգեմք եւ ասեմք փառք յարութեան քո Տէր։ փառք Հօր։ Որ խաչեցար վասն մեր թաղեցար եւ յարեար ազատեցեր ի մեղաց։ Այժմ և միշտ։ Սուրբ Ած սուրբ եւ հզօր սուրբ անմահ թագաւոր։

---

Յայսմ աւուր ի Սեպտեմբերի ութն տօն է Ծննդեան, ամենօրհնեալ սրբոյ կուսին Աստուածածնին։

Յերեկոյին որ է Սեպտեմբեր եօթն նախատօնակ տանիցին։

Շարական Ակ։ Որ նախնեաց։ 741. էջ տարօրին։ Թրղ. Մե զԱծածինն։ Կեցո յայնժ։ Աղ. Ընկալ։

# Ծ Ն Ո Ւ Ն Դ

## Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

## ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ի Սեպտեմբերի ութն յոր օր և հանդիսիւ խոստովանութեան և պատարագ մատչի անպատճառ զի տէրունի է օրս ծննդեան սրբոյ Ծննդեան։

---

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.կ։

ՈՒՐԱԽԱՑԷՔ որդիք Սիոնի երգ նորով ի ծննդեան մօր Տն. քանզի որ ծնաւ զանժամանակն ի Հօրէ ծնեալն այսօր ծնաւ յամուլ արգանդէ. տուք օրհնութիւն տօնողին մեզ ընդ մայրն լուսոյ։ Ցնծացէք որդիք մարդկան այսօր ծննդեամբ սրբուհւոյ կուսին. քանզի որ տարաւ զանտանելին յարգանդի անսերմնապէս այսօր բղխեաց յարմատոյն Յեսսեայ. տուք օրհնութիւն տօնողին մեզ ընդ-

մայրն լուսոյ։ Ուրախութիւն աշխարհի ծնաւ զՄարիամ ամուլն Աննա աւետեօք զուարթնոյն. որ ըզտըւօղն օրինաց հընոյն ծնաւ մարմնով պարգևիչ նորոյս կտակի. տուք օրհնութիւն տուողին մեզ ըզմայրն լուսոյ։ Խընդա մայր Աննա ի Հօրէ ծնեալն նախ քան զարուսեակ. որ ըզլոյսն երկնային ծագեցեր մարդկան ըղլուծիչ մեղաց մըթութեն. մաղթեա Աննա փրկել ըզմեզ ի մեղաց մերոց։

† Այսօր լցաւ խոստումն Աստուծոյ առ նահապետսն ի զաւակի նոցին օրհնել ամենայն ազանց. զի յարմատոյ նոցին բղխեաց կոյսն նա որ ծնաւ ըզԲանն բարձօղ մեղաց նախահօրն. փառս տացուք տուողին մեզ զօրհնեալն ի կանայս։ Այսօր բուսաւ յԱննայէ մօրենին Մարիամ յոր վառեցաւ հուրն աստուածային. զոր ետես Մովսէս զօրինակ կուսին ի Սինա լցեալ լուսովն անմատոյց. փառս տացուք տուողին մեզ զօրհնեալն ի կանայս։ Այսօր գառինքն օրինականքն Յովակիմ և Աննա ետուն մեզ ըզգեղմն ընդունիչ ըզցօղն երկնային. յորմէ հոսեաց անձրևն կենաց և բղխեաց աշխարհի աղբիւրն իմաստից. փառս տացուք տուողին մեզ զօրհնեալն ի կանայս։

Ծն. Նոյնկից Հօր և Հոգւոյն անըսկիզբն Որդի. անմայր յառաջնումն անդրանիկ. եւ ընդ Հօր յաւիտեան։ Ի ծոցոյ Հօր առաքեալ եդեալ ի մըսուր յանբանից. Բանդ Աստուած յայտնեալ։ Քրիստոս ծընեալ ի քաղաքի Դաւթի. քարոզեն հովիւքն ընդ հրեշտակս. և մոգք հանդերձ աստեղըն։

Ծն. Հրաշափառ ծնունդ քո ի սուրբ կուսէն.

այսօր ցուցաւ ազգի մարդկան. անըսկըզբնակից Բանդ էակից Հօր։ Յայտնութեամբ քո Տէր ցընծացաւ երկիր. եւ նորոգեալ եղեւ Ադամ յառաջին յանցանաց ի մեղաց իւրոց։ Դասք հովուացն յերկրի փառաւորէին ընդ քո ամենակեցուցիչ գալըստդ. որ երեւեցար քո արարածոցս։

ԾՆ. Որ ըզմարմնացեալըն տիրաբար ի յորովայնի քում կրեցեր. ուրախ լեր ամենօրհնեալ մայր։ Որ զանտանելին յէից ի յարգանդի անապականաբար կրեցեր. ուրախ լեր ամենօրհնեալ մայր։ Որ զարարչակից Բանըն գոյացեալ ըստուգապէս աշխարհի ծընար. ուրախ լեր ամենօրհնեալ մայր։

ԾՆ. Այսօր յայտնեցաւ մեզ բարձրեալըն բազմեալ Բանըն յանբաւից մըսուր. գան և երկնաւոր հաց։ Այսօր ցընծան զուարթունք երկնից տեսանելով զահաւոր զահագին և զհրաշալի ծընունդն. որ լոյս աշխարհի ցուցաւ։ Ընդ իջանել զուարթնոցն ի փառաբանութիւն. տեսանէին ամպ լուսոյ սիւն գործեալ ի հրալից վիմին. դասք երջանիկ հովուացն։

ՄԾ. Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան. եւ նըստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք։ Անապական տաճար եւ մորենի անկիզելի. որ զանշէջ հուր Աստուածութեան ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ

մեծացուցանեմք։ Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտի․ որով եւ մեք յերկիր աւետեաց հորդեալ․ հոգւով ի քեզ տպաւորեալ Բանին․ վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

Ածածին սիւն լուսոյ ամպ հովանաւոր․ եւ բնակարան Բանին որ բանիւ հովուէր զիսրայէլ․ բարեխօսեա Նմա վն անձանց մերոց։ Զանապական կոյսըն Մարիամ Ածածին խոստովանիմք սբ Եկեղեցի․ ուստի տուաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ ուրախարար․ տուք օրհնութիւնք Նմա հոգեւոր երգով։ Զտաճար անապական Բանին Հօր․ բարեբանեն դասք հոգեղինացն․ գովեմք եւ մեք ձայնակցելով երկնայնոցն։

Հր․ Այսօր ցնծան դասք առաքելոցըն գալըստեամբ Հոգւոյն Այ․ զորս մխիթարեաց փոխանակ Բանին մարմնացելոյ եղեալ ընդ նս․ փառըս տացուք Նմա սրբասաց ձայնիւ։ Այսօր բղխեաց ջուր կենդանի յԵրուսաղէմ յորմէ լցան գետք ամ ծայրինք․ եւ ընթացեալ արբուցին տիեզերաց զքառավտակ աղբիւրըն Եդեմայ․ փառըս տացուք Նմա սրբասաց ձայնիւ։ Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց Հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ․ պարարտացան դաշտք արդարութե եւ գեղեցկացան անապատք մաքուր կուսութե․ փառըս տացուք Նմա սրբասաց ձայնիւ։

Հն․ Լեառնըն վիմածին աղբեւր յորդառատ․ բարունակ ծաղկեալ այգի վայելուչ սրովբէ հողեղէն․ բարունի Բանին տուն տնօրէնութեան տա-

ղաւար Հոգւոյն. որ ծնեալդ ի քէն միշտ բարեխօ-սեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն ։ փափկութեան դրախտին բացող բանալի. Քրիստոսի բարձող նմանօղ եր-կնից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ. տաճար լուսոյ մայր. որ ծնեալդ ի քէն միշտ բարեխօսեա ան-դադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն ։ փառք Հօր ։ Ցօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն. նիւթեղէն սրովբէ գեղ մարգարտափայլ հիմն եկեղեցւոյ. մաքուր աղաւ-նի անմեղ հովանաւոր որ կոյս Մարիամ. որ ծնեալդ ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայց-մամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն ։

Այժմ և միշտ ։ Այսօր ծնաւ մայրն ամուլ ըզքեզ յարմատոյն Յեսսեայ ծառ կենաց ծաղկեալ տիրուհի. որ ետուր մարդկան ի ժամու պտուղ զհացըն կենաց զիջեալն ի յերկնից. բարեխօսեա սրբուհի վասն անձանց մերոց ։

Աւետարան Ծննդեանն ՚ի յայնէն ։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Կ ։

Որ զնախագրեալսն յառաջագոյն գուշակութիւն մարգարէիցն. կատարեցեր Հայր երկնաւոր տա-լով ըզկոյսն ի յԱննայէ. ըզքեզ բարեբանեմք Աստծ հարցըն մերոց ։ Որ ի լռումն անձառ ծնընդեանն ըստ Եսայեայ քո ի կուսէն. այսօր հրաշիւք Հօր միածին յամուլ մօրէ ըզմայրըն քո պարգևեցեր.

ընդ քեզ բարեբանեմք Աճծ հարցըն մերոց։ Որ զօրինակ Մարիամու Հոգիդ ցուցեր մարգարէին. այսօր զաւակ Յովակիմայ ետուր ըղձեօրըն վիմածին. ընդ քեզ բարեբանեմք Աճծ հարցըն մերոց։

Գ.. Զտր օրհնեցէք բարձր արարէք ընդ նմա յաւիտեան։ Զօրաւորացեր Սիովնիդ հին հանդիսարան տեսանողացն. որ բազմագոյն օրինակօք գուշակեցեր ըզծնող Բանին Տն Այ. բարձր արարէք ընդ նմա յաւիտեան։ փառք Հօր։ Ուրախացեր եկեղեցի դուստր վերինըն Սիովնի. քանզի ծընաւ ի յԱննայէ մաքուր ծընող քոյն փեսայի. բարձր արարէք ընդ նմա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Քահանայք և ժողովուրդք տօնախմբօղք ծնընդեան կուսին. ընդ Յովակիմայ և Աննայի ծնողաց սըրբոյ ծնողի Բանին. բարձր արարէք ընդ նմա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ.Կ.։

Նահապետացն Աբրահամու Իսահակայ և Յակոբայ. պարգևեցար ի յԱյ կոյս Մարիամ դուստր նոցին՝. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։ փառք Հօր։ Աղախին և մայր կենաց աջոյն ծընող Հօր միածնին. որ առ ի քէն մարմնով ընկեց զամբարտաւանըն յաթոռոյ. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։ Այժմ և միշտ։ Որ բարձրացոյց զանկեալ բնութիւս ի քէն ծնընդեամբ Որդին յերկինս՝. ըզկարօտեալքս ելից հացիւ՝ և զմեծատունսն ելոյծ ունայն՝. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։

Ողորմեա ԲԿ։

Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ ըզկոյսըն սուրբ ըզծնօղ Որդւոյդ միածնի. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։ փառք Հօր։ Որ ցուցեր ի մեզ յամպոյ օրինաց Որդիդ այսօր զկոյսըն Մարիամ. յորմէ ծընար մարմնով և բարձեր նովաւ ըզմեղս նախաստեղծին Ադամայ. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ մաքրեցեր Հոգիդ Սուրբ ըզսիրտ և զարգանդ մօր քո փառակցին. այսօր ամուլ ծնողաց նորին ետուր ըզմայր Բանին զօրհնիչ Նուայի. մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա։

Տէր յերկնից ԲԿ։

Այսօր ցնծան երկնայինքն եւ պար առեալ ի բարձունս. երգեն զերգըս հոգեւորս յաւուր ծնընդեան սրբուհւոյն։ Այսօր վերինքն Սիոն գոչեն զերգըս սրովբէից. զերեքսրբեանն ասելով յաւուր ծնընդեան սրբուհւոյն։ Այսօր աստեղք և լուսին ընդ արեւու հրճուելով. գովեն ըզլոյսն Ի Հօրէ յաւուր ծնընդեան լուսոյ մօրն։ փառք Հօր։ Այսօր ծերքն օրինականք մանկամբք նորոյ Սիոնի. երիտասարդք և կուսանք խընդան ծնընդեամբ տիրուհւոյն։ Այժմ և միշտ։ Այսօր գունդք առաքելոցն եւ պարք նախատեսացն. յաւուր ծնընդեան մօր Բանին երգեն ըզփառս ի բարձունս։

Ա[illegible] Էջք. Իջցէ որպէս։ Ա.ծ զիր։ 145։

Պր. Սայր ոբ. խմ գ.անջ [illegible]։

Օղնի ԱԷ Աճէն Ամաղեա Կ։ Յայնէ—։

ԿԷ․ Տէր տացէ զբան՝ ոյք աւետարանեն զօրու֊
թեամբ բազմաւ ։

Փխ․ Յարիցէ ԱԾ և ցրուեսցին ամենայն թշնամիք
նր, փախիցեն ատելիք նր յերեսաց նր ։

Որպէս պակասէ ծուխ՝ պակասեսցին, որպէս հալի մոմ
առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք յերե֊
սաց ԱՅ։

Արդարք ուրախ եղիցին՝ և ցնծասցեն առաջի նր, և
զուարճասցին յուրախութեան իւրեանց ։

Օրհնեցէք զԱԾ՝ և սաղմոս ասացէք անուան նր․
ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նստի ընդ արև֊
մուտս․ և Տր է անուն նորա։

Ցնծասցեն առաջի նորա, և խռովեսցին յերե֊
սաց նորա ։

Որ հայրն է որբոց՝ և դատաւոր այրեաց, ԱԾ 'ի
տեղւոջ սրբութեան իւրում։

ԱԾ բնակեցուցանէ զմիակրօնս ի տան, և հանէ
զկապեալսն քաջութբ իւրով․ սոյնպէս և զդառ֊
նացողս՝ որ բնակեալ են 'ի գերեզմանս ։

ԱԾ ընդ ելանել քեզ առաջի ժողովրդեան քոյ․
ընդ անցանել քեզ ընդ անապատ, երկիր շար֊
ժեցաւ ։

Քանզի և երկինք ցօղեցին յերեսաց ԱՅ 'ի Սինէ՝
առաջի ԱՅ Իսրայելի ։

Անձրև կամաց պատրաստեսցես ԱԾ ժառանգութեան
քում․ թէպէտ հիւանդացաւ՝ սակայն դու հաստա֊
տեսցես զնա․ և գազանք քո բնակեսցեն 'ի նմա ։

Պատրաստ արարեր քաղցրութբ քով աղքա֊
տի ԱԾ․ Տր տացէ զբան, ոյք աւետարանեն զօրու֊
թեամբ բազմաւ ։

Թագաւոր զօրութեանց սիրելւոյ, գեղեցկութն
տան քոյ բաժանել յաւարի, թէպէտ և ննջես֊
ջիք 'ի մէջ վիճակաց ։

Թեւք աղաւնւոյ արծաթապատ, և թիկնամէջ նր 'ի գոյն ոսկւոյ։

Ի գումարել երկնաւորին զթագաւորս 'ի վերայ նորա, ձիւնասցին 'ի Սաղմոն։

Լեառն Ած լեառն պարարտ՝ լեառն մածեալ և լեառն պարարտ, և զինչ կարծէք լերինք հպարտացեալք։

Լեառն ընդ որ հաճեցաւ Ած բնակել 'ի նմա. քանզի և Տր իսկ բնակեսցէ 'ի նմա իսպառ։

Կառք Այ բիւրապատիկք՝ հազարք ուղղիչք և Տր 'ի նոսա 'ի Սինէ սրբութե իւրում։

Ել 'ի բարձունս և գերեաց զգերութի. էառ աւար՝ բաշխեաց պարգեւս և ետ որդւոց մարդկան. քանզի թերահաւատից եւս բնակեալ եղիցի 'ի նմա։

Տր Ած օրհնեալ, օրհնեալ է Տր զօրհանապազ, առաջնորդեսցէ մեզ Ած փրկիչ մեր։

Ած մեր՝ Ած կենարար. և 'ի Տնէ են ելք մահու։

Բայց սակայն Ած փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց, և զհերն կարճնոյն, որ գնան յանօրէնութե իւրեանց։

Ասաց Տր 'ի խորոց անդնդոց դարձուցից, և 'ի միջոյ ժանեաց զիմն 'ի դուրս կորզեցից։

Որպ թացցի ոտն քո յարեան. և լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց։

Երեւեցան գնացք քո Ած, գնացք Այ թագաւորին մերոյ սրբոյ։

Կանխեցին իշխանք հանել զօրհնութի, 'ի մէջ կուսանաց՝ և գովչաց։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱծ, և զՏր յաղբերացն Իսրայելի։

Անդ Բենիամին 'ի տղայութե զարմանալի, իշխանք Յուդայ առաջնորդք նր, իշխանք Զաբուղոնի. և իշխանք Նեփթաղիմայ։

Հրամայեա Ած զօրութե քով. զօրացո զայս՝ զոր հաստատեցեր 'ի մեզ։

Ի տաճարի քում յԵրուսաղէմ. քեզ մատուսցեն թագաւորք զպատարագս։

Սաստեա՛ 'ի գազան եղեգան. 'ի ժողովս զուարակաց՝ և 'ի գառս երնջոց։

Խոտեսցին այնոքիկ՝ որ ընտրեալ են արծաթով, ցրուեա՛ զհեթանոսս՝ և զկամին ընդ պատերազմ։

Եկեսցեն հրեշտակք յԵգիպտոսէ. Եթովպիա յառաջագոյն ձեռնտու լիցին առ Ա՟ծ։

Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք զԱ՟ծ, և սաղմոս ասացէք Տ՟ն։

Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից՝ ընդ արևելս։

Ահա տացէ զձայն իւր՝ ձայն զօրութեան, և տուք փառս Ա՟յ։

Ի վերայ Իսրայելի մեծվայելչութիւն նորա. զօրութիւն նորա մինչև յամպս երկնից։

Սքանչելի է Ա՟ծ 'ի վ՟ր սրբոց իւրոց՝ Ա՟ծ Իսրայէլի։

Նա տացէ զօրութիւն հաստատութեան ժողովրդեան իւրում. օրհնեալ է Ա՟ծ։

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ Ա. 1։

Գիրք ծննդեան Յ՟սի Ք՟սի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու։ Աբրահամ ծնաւ զԻսահակ։ Իսահակ ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅուդա, և զեղբարս նր՟ա։ Յուդա ծնաւ զփարէս և զԶարա 'ի Թամարայ. փարէս ծնաւ զԵզրոմ. Եզրոմ ծնաւ զԱրամ։ Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն. Նաասոն ծնաւ զՍաղմոն։ Սաղմոն ծնաւ զԲոոս 'ի Ռաքաբայ. Բոոս ծնաւ զՈվբէթ 'ի Հռութայ. Ովբէթ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ։ Դաւիթ արքայ ծնաւ զՍողոմոն 'ի կնոջէն Ուրիայ։ Սողոմոն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ զԱսափ։ Ասափ ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յովրամ ծնաւ զՕզիա։ Օզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ

ծնաւ զԵզեկիա։ Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅովսիա։ Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս նր առ գերութեն Բաբելացւոց։ Յետ գերութեն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ։ Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր։ Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ։ Եղիուդ ծնաւ զԵղիազար. Եղիազար ծնաւ զՄատթան. Մատթան ծնաւ զՅակովբ։ Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս. յորմէ ծնաւ Յս̃, որ անուանեցաւ Քս̃։ Արդ՝ ամ̃ ազգք յԱբրահամէ մինչև 'ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և 'ի Դաւթէ մինչև 'ի գերութին Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. և 'ի գերութէն Բաբելացւոց մինչև 'ի Քս̃ ազգք չորեքտասանք։ 17։

Յետ Աւետարանին ըստ կարգին հանդերձ, զԽորա-սահմանեալն ասա։ Եւ ըստ կարգի օր ընդ զԱւարտա-կանն ասա ընդ Խ օրն ըներ։

Զինչ Քր. Խնդր։ Կեցո յայնժ. Աղ։ Փառք ամէ։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեղեդի Նախատեան։ Մեծացուցէ։ Զի հայեցաւ։ Քար. Այսր Տր։

Համբարձի Դ.Չ։

Նոր Միոյն ծնեալ մանկունք սուրբ աւա-զանին. շնորհազարդեալք Հոգւոյն Աստուծոյ. օրհնեցէք զՀայրն երկնաւոր յաւուր ծնընդեան սրբուհւոյ կուսին. յոր օրհնեցաք յանիծից նախնոյն։ Փառք Հօր։ Արեամբ գառին անարատի փրկեալ ժողովուրդք. յաւուր ծնընդեան մօր անատանելւոյն. գովեցէք ըզմիածին որ հաճեցաւ առնուլ մարմին անսերմն ի նմանէ.

յոր օրհնեցաք յանիծից նախնոյն: Այժմ և միշտ: Յառատատուր ուղխ շնորհաց Հոգւոյն լուսազարդեալ ազգք հեթանոսաց. յաւուր ծնընդեան մօր Բանին ծնողի. ընդփառակից Որդւոյ զՀոգին բարեբանեցէք հոգեւոր երգով. որ մաքրազարդեաց զմարմնարան Որդւոյն:

Թէ. Ա՟ զԱծածինն: Կեցո յոյժ—: Աղ. Ընկալ:

---

# ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹԻ

## Պահոց:

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բկ:

Անկանցն ըղձայնն քեզ վերառաքեմք. արդա՛ր ես յամի Տէր զոր ածեր ի վր մեր. Աստուած հարցն մերոց: Վանզի ոչ պահեցաք ըզպատուիրանս քո. նուաղեցաք մեք յամի. արդ թող մեզ Տէր ըզյանցանս մեր. Աստուած հարցն մերոց: Օրհնեալ Տէր և փառաւորեալ առ քեզ պաղատիմք. այլ մի՛ խափան մատներ ըզմեզ՝ եւ մի՛ ցրեր զուխտըս քո. Աստուած հարցն մերոց:

Գ.. Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Զանըսկիզբըն Բանըն Հօր զէակն էից. որ ի Բաբելոնի ի հնոցին ըզհուրն ի ցօղ փոխարկեաց պարապրելով զերիս մանկունսըն. բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ըզլոյս փառաց ծագեալ ի մէջ հնոցին օրհնաբանիցն. ընդ նոսին համաձայնեալ երգեսցուք խոնարհ սրտիւ. զի շիջուսցէ զանտանելի հրոյն բորբոքումըն. բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ Բ․Կ։

Մայր լուսոյն Մարիամ ամենօրհնեալ. օրհնեալդ ի կանայս։ փառք Հօր։ Զլոյսն անստուեր յարգանդի կրեցեր. օրհնեալդ ի կանայս։ Այժմ և միշտ։ Մի դադարեր վասըն մեր բարեխօսել. օրհնեալդ ի կանայս։

Ողորմեա Բ․Կ։

Թ․ւոր իմ։ Մեղայ քեզ Տէր. մեղայ ողորմեա։ փառք Հօր։ Մեղայ անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէն թշնամւոյն. արդ անկեալ աղաչեմ թող ինձ Տէր։ Այժմ և միշտ։ Քան զամենեսեան առաւել մեղայ Տէր իմ գթած. քան զամենեսեան անօրինեցայ և մատնեցայ ի ձեռս անօրէն թըշնամւոյն. արդ անկեալ աղաչեմ թող ինձ Տէր։

Տէր յերկնից Բ․Կ։

Ամենայն արարածք համբառնալով ըզձեռս ձեր. օրհնեցէք ըզՏէր ըզնախկինն ի յերկինս։ փառք Հօր։ Ամենայն ժողովուրդք յօրհնութիւն ի նոր. գովեցէք ըզՏէր ըզնախկինն ի յերկինս։ Այժմ և միշտ։ Զայնիւ երգով ցընծութեան բարեբանեցէք զԱստուածածին ընդ սուրբս նորա ըզնախկինն ի յերկինս։

# ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ․Զ․ փառաւորեալ ան։ 431։

# ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ․Զ․ փառաւորեալ է։ 432։

# ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Զ:

Օրհնեալ ես Տէր եւ փառաւորեալ է անուն քո յաւիտեան. Աստուած հարցն մերոց: Զօրհներգութիւն երից մանկանցն ընդ սերովբէսն բարբառեմք. օրհնեալ ես Տէր եւ փառաւորեալ է անուն քո յաւիտեան. Աստուած հարցն մերոց: Զանյաղթելի հզօր թագաւորդ ընդ քերովբէսն բարբառեմք. օրհնեալ ես Տէր եւ փառաւորեալ է անուն քո յաւիտեան. Աստուած հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Նոցէք Զերկրպագեալն ի հրեշտակաց զփառաւորեալն անդադար. բարեպաշտութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Նոսցէ Զահաւոր զփառաւորեալ զամենասուրբ զԵրրորդութիւն. զանբաւելի զընութիւն քահանայք օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Զ:

Սուրբ լեր Աստուածածին յոյս եւ փրկութիւն մայր. ըզքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք: Փառք Հօր: Զքեզ լուսոյ մայր եւ կոյս. ըզքեզ զանձրդ կենաց աստուածային. ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Մայր սուրբ անարատ լուսոյն հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ըզքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.Զ:

Մերձեալ է որ գալըդ քո Տէր լուր ձայնի աղօթից իմոց որ կարդամս առ քեզ. և ողորմեա։ Փառք Հօր։ Բանից իմոց ունկըն դի՛ր Տէր եւ ի միտ առ զաղաչանս իմ. զառաւօտուս որ կարդամս առ քեզ. և ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ ընկըղմեալս եմ ի խորըս չարեաց. ըզգթոգիդ քո առաքեա առ իս որ կարդամս առ քեզ. և ողորմեա։

Տէր յերկնից Գ.Զ:

Օրհնեմք զքեզ Տէր ընդ սուրբըս քո ի յերկինս։ Փառք Հօր։ Տուր մեզ իմաստութիւն փառաւորել զքեզ ի տուէ և ի գիշերի. ընդ հրեշտակըս քո ի յերկինս։ Այժմ և միշտ։ Լո՛ւր ձայնի աղօթից ժողովրդեան քո. եւ լե՛ր մեր ապաւէն պահելով ի խաղաղութեան։

## ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## ՇԱԲԱԹ

Տօն Նաւակատեաց սրբոյ Խաչին:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Բ.Կ:

Ի՛ վերին վեհի հաստատոյ շինեցեր զքո սուրբ զեկեղեցի. ըզոր պահես ի խաղաղութեան։ Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանըս հրեշտակաց եւ մարդկան քաւարան. տուր սըմա զանշարժ քո զխաղաղութիւն։ Ի տաճարի փառաց սրբութեան

քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զուատ քո զողորմութիւն:

† Եկայք ժողովուրդք ի տաճարի փառաց Քրիստոսի. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս: Քանզի թագաւորըն Քրիստոս պըսակեաց ըզսա սքանչելի փառօքն իւրովք. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս:

Խաչըն կենարար որ եղև ըմեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. և գաւազան զօրութեան հաստատեցեր. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըմեզ ցուցար. ի յօգնութիւն ընդդէմ թշնամեաց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

ՅԱՐ. Որ համագոյ ես Հօր և Սբ Հոգւոյն. անբաժանելի էակ միութեան խոնարհեցար ի բարձանց. և առեր մարմին ի կուսէն, յաղագս անկելոյն. յանլուծիչ կենաց բանաւորկութիւն խորհրդոմբ: Որ դատաւորդ ես ծածկելոց գիտող. այսօր ի հողոյ դատապարտեալ բարձար ի խաչ և լեղեաւ կերակրեցար. յաղագս անկելոյն. ի ճաշակմանէ մահաբեր պտղոյն: Որ կենդանութիւն ես ամենեցուն. այսօր ըզմահ խաչի ի յանձն առեր եդար ի սիրտ երկրի և յերրորդ աւուր յարեար. շնորհեա մեզ վերածիլ ընդ քեզ յանպատում ի կեանս:

Անպատումըն կառք անքննելի խորհրդոյն ընդունարան եղ սուրբ քառաթև. ի սասանաթևից յարաթռելոց սրովբէից անհասաբար

ահիւ պատուեալն. քեզ երկրպագեմք յօգ-նութեն մեզ ժամանեա յերկնից եւ ի մուսս: Ան-յաղթելի նշան անպարտելի զօրութեն՝ ընդու-նարան ով սուրբ քահանայութե. ի յահարկութի ապստամբիցն երեւեցար. որք ի քէն ահիւ սար-սեալ դողան եւ անդընդամայղ կործանեցին. քեզ երկրպագեմք յօգնութեն մեզ ժամանեա յերկնից եւ ի մուսս: Յառաջագոյն տեսեալ ըզ-քեզ մարգարէն Զաքարիաս. աշտանակ ոսկի եօթնաջահեան լուսով պայծառացեալ յերկրի ով սուրբ քահանայութե. եւ ի վեր քո տարածեալ աննիւթ գոյին գոյացեալ ի մեր բնութիս. եւ աղբերահոս կողիւ մաքրեաց զաղտեղութի ազ-գի մարդկան. քեզ երկրպագեմք յօգնութեն մեզ ժամանեա յերկնից եւ ի մուսս:

ՅԱՐ. Որ յաթոռ փառաց նստիս Բանդ Ած. խոնարհեցար ի հայրական ծոցոյ առեր մարմին ի կուսէն. վերականգնելով ի տեղի՝ բատորան-կեալ լուսոյն զհողացեալ բնութիս: Որ կանգնեցեր ըզխաչ քո ի մէջ երկրի. եւ սովաւ ըզորովեա-փակ դուռըն դրախտին բացեր նախաստեղծին. կենագործելով ի ճաշակմանէ մահաբեր պըտղոյն: Եւ զօրութեամբ խաչի քո Քն հիմնեցուցեր զկաթողիկէ եկեղեցի՝ բընակարան որ Երրոր-դութեն. լուսաւորելով ըզհեթանոսս ի սմա կըր-կնակի ծնընդեամբ:

ՕՂԿ. Ուրախ լեր եկեղեցի սուրբ. ի գալըս-տեան սուրբ միածնին. ուրախ լեր եւ ցընծա համբերձ ամենայն սըրբովք: Խընդա յոյժ դուստըր

վերին Սիովնի. ահա Թագաւոր քո գայ նստեալ ի յաւանակի նորոյ. արդարեւ փրկիչ փրկէ եւ կեցուցանէ: Զուարճացիր եւ բերկրեաւ ժողովուրդ Աստուծոյ. մատո՛ զոստըս ծաղկեալըս համբուրել եւ ասա. օրհնեալ որ եկիրըդ Թագաւոր տիեզերաց:

ՃԳ. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգօղն էից Հօրն էջ ի նոր վերնատանն. որով նորոգեցան դասք առաքելոցն: Այսօր հողանիւթեայ բնութիւն ցընծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ եբարձ զՀօրն ի մարդկանէ մարմին եղելոց. դարձեալ վերստին ըզնոյն պարգեւէ: Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ զգալուստ նոր Հոգւոյն. որով զարդարեցան ի զգեստըս լուսափայլըս եւ գերապայծառս. երգեն ընդ սրովբէին զերեքսրբենին:

ՃՆ. Թագաւոր խաղաղութեան. որ քաղցրութեամբ խնամես զքո զարարածս. յիշեա Տէ՛ր զհոգիս ննջեցելոցն ընդ սրբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Որ կոչեցեր ի դրանց մահու ըզսիրելին քո զՂազարոս. եւ ծանուցեր զԱստուածութիւնդ ընդհանուր տիեզերաց. լուսաւորեա Տէ՛ր զհոգիս ննջեցելոցն ընդ սրբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան: Ի տաճարի քում սրբում մատուցանեմք քեզ պաղատանս արտասուալից. պայծառացո Տէ՛ր զհոգիս ննջեցելոցն ընդ սրբս քո. եւ դասաւորեա ի յաւուրն այցելութեան:

ՄՕ. Այն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բա-

րեբանեմք Աստուածածնին կուս։ Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պը-տուղն կենաց ի քէն տըւաւ մեզ. զքեզ բարե-բանեմք Աստուածածնին կոյս։ Փառք Հօր։ Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտա-նելին յէից ի գիրկըս քո բարձեր. զքեզ բա-րեբանեմք Աստուածածին կոյս։

Այժմ և միշտ։ Ընդ սմա և զօրքը հրեշտակաց դա-սաւորեալ տօնեն ցնծան. տուք ամենեքեան օր-հնութիւն ի բարձունս։

Ալէլու Ալէլէլուեայ 'ի յոյժէն։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱԶ։

Ի նորահրաշ նաւակատիսն որ յԵրուսաղէմ. պայծառազգեաց վայելչութեամբ ցուցաւ խաչ քո Տէր. Աստուած հարցըն մերոց։ Կայ դըշխոյ ընդ աջմէ քո եկեղեցի. յոսկէհուռըն պըսակեալ նըշանաւ խաչի քո. Աստուած հարցըն մերոց։ Իսկ նորածնեալքս մըկըրտութեամբ սուրբ աւազա-նին. այսօր տօնեմք ուրախութեամբ նըշանաւ խաչի քո. Աստուած հարցըն մերոց։

Գ.. ԶՏէր օրհնեցէ՛ք բարձր արարէք ընդ յաւիտեանս։ Փառք Հօր։ Քանզի գահի է հաս-տնացեալ սուրբ եկեղեցի. երկնաւո՛ր փեսային պը-սակեալ ընդ խաչիւն. եւ յաջ և յահեակ թագու-ցեալ ընդհեթանոսս ժառանգելոց. բարձր արա-րէք ընդ յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Եկայք ժողովուրդք քննեան՝ երկրպագեսցուք ամծային սուրբ

նըշանիս · բնակեալք ընդ նըմին ի սմա և ընդ նըմին թագաւորեսցուք · բարձր արարէք զնա յաւիտեան ։

Մեծացուսցէ ԱՁ ։

Մեծացուցանեմք զքեզ որ ի Հօրէ Բանդ և անճառելի ծընունդ · որ ի կուսէն մարմնացար ցուցար մեզ ։ փառք Հօր ։ Մեծացուցանեմք զքեզ որ կոխեցեր զգլուխ աստուածամարտ վիշապին և լուծեր զկնիք մահու · որ ի խաչին բարձրացար կամաւ Հօր ։ Այժմ և միշտ ։ Մեծացուցանեմք զքեզ որ թաղեցար ի նոր ի գերեզմանին · և յերրորդ աւուր յարեար · որ ի յերկինս համբարձար փառօք Հօր ։

Ողորմեա ԱՁ ։

Ի խորանի քում սրբութեան զոր ընտրեցեր գալստեամբըդ քո Քրիստոս · ի սմա միաձայնեալ աղաչեմք զքեզ · լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո զմեզ ։ փառք Հօր ։ Աստուածային լուսով քո պայծառ քան զարեգակն լուսաւորեցեր զքո նոր զեկեղեցի · ի սմա միաձայնեալ աղաչեմք զքեզ · լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո զմեզ ։ Այժմ և միշտ ։ Այսօր և հրեշտակք ուրախանան ընդ պայծառութեան քո նոր եկեղեցւոյ · ի սմա միաձայնեալ աղաչեմք զքեզ · լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո զմեզ ։

Տէր յերկնից ԱՁ ։

Ի տաճարի սրբութեան փառաց քոց Քրիստոս · զոր ի յերկնից լուսաւորեցեր աստուածային ծագմամբ · ի սմա զքեզ անդադար բարեբանեսցուք ։ փառք Հօր ։ Որ զխորհուրդս փրկական աստուածութեան ·

շնորհեցեր մեզ ի ձեռըն քահանայապետին քո և վէկայի. նորին աղաչանօք խնայեա ի մեզ: Այժմ և միշտ: Օհաւատացեալ ժողովուրդըս սուրբ Երրորդութեանդ և զապաւինեալս ի խորան փառաց քոց. պահեա անխռով ի խաղաղութեան:

Առաւօտու Երգ Սիոն: Տան քում: Տիրթա: 147:
Յոր. Ասասցուք խաղաղութեան:
Առաւօտու խորհրդականն ոչ գոն:
Մանկունք Ա. Սեղան քո Տէր զօրութեանց: 494:
Օրհն. Մանկանցն Յորդ. Մէ եկեղեցեաւս: Կեցո յայսմ: Ող. Որ զիւան ոչ տաճարիս:

---

## ՅԵՐԵԿՈՅԻ

Փառ.

Քանզի լուսաւորեաց զքեզ թագաւոր քո Քս, պատուական խաչիւ և մկրտութեամբ աւազանին. վասն որոյ երկրպագելով գոչեմք փրկիչ փառք քեզ: Լոյս զուարթ:

Մեծացուցէ Անձն իմ: Աստ օրհնեա: Որ կայք: 215:
Յոր. Դրէգորէ Նորէխնայեան. Գանձ բաղձալի խոս Ասասցուք:
Օրհն. Սուրբ Աստուածածին պաշտօնն յանձ. նայեա և յաղէանն էլանեն խաչէ և աւետարանանեն իմ և ամէնայն պարզաւ և աւէն հարամբերթէ Ա2. Որ զանարատ բազուկս քո: 781:
Օրհն. Յոր. Սուրբ խաչիւս: Կեցո յայսմ: Ող. Պահպանեա: Հայր մեր:

# Կ Ի Ւ Ր Ա Կ Է

## ԽԱՉՎԵՐԱՑ

Ի ԳԻՇԵՐԻ

Հսկումն է. և դնէ զԽաչն և այլ զարդարանսն ՚ի վերայ Սեղանոյն յառաւօտունն :

Հետևեալ Շարք. ՚ի յոյնէն ասի ձայն Դ.Զ :

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ն՚ք խաչի քո Ք՛ս որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա՛ է՛ պահեսցէ զմեզ յամ փորձութենէ: Ի խաչի ի սմա բարձրացար Աստուած. և ի սմա հեղեր զպատուական ն՚ք զարիւնդ. սա՛ է՛ պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ: Եւ զքո միւսանգամ զգալուստդ նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա՛ է՛ պահեսցէ զմեզ յամ փորձութենէ:

Օրհնութիւն Ա.Զ :

Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած. և նշան յաղթութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանս մեր պահեա: Որ զաշխարհակեցոյց բազկատարածութի խաչի քո Քրիստոս Աստուած. զաւազան զօրութե ետուր մեզ. սովաւ ըզկեանս մեր պահեա: Որ ըզմեռեալսն ի ճաշակմանէ փայտին յանցանաց. կենաց փայտիւդ կենագործեցեր. սովաւ ըզկեանս մեր պահեա:

† Ս՛բ խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Արարիչն Ա՛ծ բարձրացաւ ի խաչին և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն. ի սմա նորոգեալ կենդանացոյց: Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս.

դաւանզան զօրութեան ի յերկրի երեւեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Զոր Հրեշտակքն ծածկեալ զանթաքչելի ըզգանձըն. փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Այս է զէն յաղթութեան հաւատացելոց. ահեղեան և կնիք յաղթող ընդդէմ թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

Ընծայեալ երկնաւոր երեւեալ դըշխոյին. նըստելով յաթոռնի յԵրուսաղէմ. խնդրէր ըզպատուական փայտ խաչին. յոր ըզԱնմահն բեւեռեցին: Ամենասաստ հրամանաւըն ժողովեալ Հըրէից. ցուցանելով Նըմա ըզպատուական փայտ խաչին. յոր ելեալ բարձրացաւ Արարիչն արարածոց: Ընդ յայտնել նշան խաչին ի տեղւոջըն սըրբութեան. բուրմամբ անուշահոտ խնկոց. և լցան տիեզերըք մեծապէս պարգեւօք:

ՅԱՐ. Զթագաւորըն փառաց Քրիստոս որ վն մեր մարմնացաւ ի սըրբոյ կուսէն և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք: Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութի. միաբանութ՛ք երգով բարեբանեսցուք: Կարողապէս ըզդրունըս դըժոխոց խորտակեաց. եկեղեցւոյ իւրում զզենցոյց զմեծվայելչութի. միաբանութ՛ք երգով բարեբանեսցուք:

Ընդ որ ի Հօրէ իջեալ մարմնացար ի կուսէն. խաչեցար կամաւ Հօր վասըն մեր՝ ըզմեղս ըսպաներ. սուրբ Աւծ ողորմեա մեզ: Որ յարարածոց ես անբովանդակելի. ի խաչափայտին բեւեռելով ըզ-

մահ կոխեցեր. սուրբ Ա՟ծ ողորմեա մեզ: Որ ի նախնումըն զանկեալն ի ծառայութենէ մահու. պատուական մարմնով և արեամբըդ քո ազատեցեր. սուրբ Ա՟ծ ողորմեա մեզ:

Դու յանձն առեր Աստուած եղանել ի խաչ վասըն մեր. և ընդ նմին բևեռել ըզհըրնութիւն մեղաց մերոց. վասն որոյ երկրըպագեմք և վերօրհնեմք ըզքո զանձառ խոնարհութիւնդ: Ի խաչեալըն քո մեռուցեր զմահ և յաղբերէ կողի քո տեղերաց արբուցեր զանմահութիւն: Յայդգունոյդ անմահութեն ճաշակեցաք և տեսաք. զի քաղցր և ուղիղ ես Տր. և վն ամենեցուն փրկութեն եկիր յաշխարհս:

ՀԳ. Որ ի քերովբէական կառսըդ հանգչիս. այսօր իջեր յերկնից ի դասս առաքելոցըն ո՛վ Հոգի. օրհնեալ ես Թագաւոր անմահ: Որ գընաս ի վր թեւոց հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսըն ո՛վ Հոգի. օրհնեալ ես Թագաւոր անմահ: Որ խնամես տեսչութեամբ զքո զարարածս. այսօր եկիր ի հաստատել զեկեղեցի քո ո՛վ Հոգի. օրհնեալ ես Թագաւոր անմահ:

ՀՆ. Զհոգիս ծառայից քոց Քրիստոս. ընկալ ի դաս անդրանկաց գրելոց ի յերկինս: Ընկալ վասըն սոցա ըզբանաւոր պատարագս ի մէնջ. և շնորհեա նոցա ըզթողութիւն գտանել յաւուրն յետնում: Հաշտեա ի ձեռըն սբ մարմնոյ և արեան քո Տր. և պարգեւեա նոցա դասել յաջակողմեանըն քո:

ՄՍ. Որ զԲանն Աստուած բաւական եղեր ընդունել յորովայնի միշտ կուսի. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Որ էից լուսոյն

արժանի եղեր բառնալոյ ի գիրկըս քո մարմնով. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս: Փառք Հօր: Անարատ տաճար անօրէնութեն կոչեցար Հոգւոյն սրբոյ միշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս:

Այժմ և միշտ: Ի միասնգամ գովըստեան Աստուածորդւոյն. սուրբ խաչն երևի և լուսաւորէ. զի նա է յոյս հաւատացելոց:

Ալէլու խաչն ի յայնէն:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ:

Այսօր պատուական խաչիւ քո ամրացուցեր ըզժողովուրդըս քո. որ է գաւազան զօրութեան և փայտ կենաց. Օրծ հարցըն մերոց: Քանզի անմահացաք կենացըն փայտիւ ի ճաշակմանէ մահաբեր պըտղոյն. որ կանգնեցաւ քառակերպն ի միջակին դիտելով ընդ հարաւ. Օրծ հարցըն մերոց: Եւ համբարձար կամաւ ի խաչ քո Քրիստոս տարածեցեր ըզբազուկըս քո. ժողովել ըզհեռացեալ ազգ մարդկան առ քեզ Տէր. Օրծ հարցըն մերոց:

Գ. Ըզտէր օրհնեցէք Առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Այսօր Որդին միածին զանարատ բազուկըս իւր տարածեաց ի վերայ սուրբ խաչին. առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ. Քանզի յաղթեաց մահու հըզօր զօրութիւն. և կոչեաց ըզտեղերս ի փրկութիւն և ի կեանսըն յաւիտենից. առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Կ :

Այր և կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամ ազինք: Փառք Հօր: Անքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ. տաճար և աթոռ ԱՅ Բանին. քեզ երանեն ամ ազինք: Այժմ և միշտ: Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ երանեն ամենայն ազինք:

Գեղեցիկ խաչ. Այսօր եկեալ կամաւ: 140:

Ողորմեա Գ.Զ :

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն ըզՔրիստոս պտղաբերեցեր. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց: Փառք Հօր: Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց. ի սրովբէական պահպանութենէն. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց: Այժմ և միշտ: Քեւ արժանացաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն. եւ քեզ երկրպագեն ամ հաւատացեալք. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց:

Տէր յերկնից Գ.Զ :

Անուանեալ փայտ գիտութեան. ըզմեզ ի կենացըն հանեալ արտաքսեցոյց. որով յանցեաւ մայրն Եւա եւ պատրեաց ըզնախահայրն: Փառք Հօր: Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեն կենաց մարդկան եւ լոյս հաստատութե. առաջնորդ եղև մեզ ի կենացըն յաւիտենից: Այժմ և միշտ: Տուր մեզ նշան յաղթող սուրբ զխաչ քո. զի սովաւ մտցուք ընդ նեղ դուռն

անձկացեալ ճանապարհին. որում ցանկային եր-կրածին որդիք մարդկան:

Առաւօտու Երգ Խաղչ: Նշաւոր երկիւ: Ով փրկե: Յորում Աստուածք հով Գոչոյ Խաղչ:

Օրհնէ ՄԷ Առաւօտեան պէտնուն ժեռան ժամհայժ և Եղանէն Խաղչէն և աւետարանա, Ժողովրդիւ և ա-Ջենայն ղեղղաւ ՚ի դուռն աւելն

Շարական Ա.Չ: Որ զանարատ բազուկս: 781:

Օրհնէ Սաղմոս Դ.:

ԿՑ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ե-տուր ուրախութիւն սրտից մերոց:

Փխ. Ի կարդալ իմում լուար ինձ Ած ըստ արդա-րութեան, 'ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողոր-մեա ինձ և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան՝ մինչև յերբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութի, և խնդրէք զստութի:

Ծանիրո՛ւք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւ-րում, եւ Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք՝ և մի մեղանչէք. զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարո՛ւք:

Զոհեցէք պատարագ արդարութեան, և յուսացա-րո՛ւք 'ի Տր:

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ու-րախութի սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ իւրեանց լցու-ցեր զնս:

Խաղաղութբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զար-թիցուք. զի դու Տր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Ընթերցուած յԱռակաց: ԺԴ.. 1:

Դարձեալ եթէ 'ի նաւ. ելեալ ոք՝ ընդ ամեհի ալիս կամիցի ճանապարհորդել, առ փայտն որ քան զնա-ւափայտն տկարագոյն է՝ աղաղակէ: Զի զայն

թէպէտ և ցանկութիւն շահիցն հնարեցաւ, և ճարտարապետ իմաստութեամբ կազմեաց, սակայն քո հայր՝ վարէ տեսչութիւնդ. զի ետուր և 'ի ծովու ճանապարհ, և 'ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր: Յայտ արարեալ՝ թէ յամէ կարող ես փրկել՝ թէպէտ և առանց ճարտարուն ոք ելանիցէ 'ի վր̃: Բայց կամիս՝ զի մի դատարկասցի գործ իմաստութե̃ն. վասն այնորիկ չնչին փայտի հաւատան մարդիկ զանձինս իւրեանց. և շրջեալ ընդ ալիսն դոյզն լաստիւն ապրեցան: Քանզի և իսկզբանէ 'ի կորնչել սկայիցն ամբարտաւանից, յոյս աշխարհի 'ի լաստափայտն ապաւինեալ՝ եթող աշխարհի զաւակ լինելոյ՝ քո ձեռամբդ նաւապետեալ: Օրհնեալ է փայտն՝ որով լինի արդարութի̃: Եւ ձեռագործն անիծեալ. ինքն՝ և որ արարն զնա. զի նա արար՝ և սա եղծանելի աստուած անուանեցաւ: 8:

Ընթերցուած յԵզեկիէլէ մարգարէէ: Թ. 2:

Եւ ահա արք վեց գային ընդ ճանապարհ բարձու դրանն՝ որ հայի ընդ հիւսիսի. և իւրաքանչիւր տապար 'ի ձեռին իւրում. եւ այր մի 'ի մէջ նոցա զգեցեալ պճղնաւոր, և կամար ականակապ յականց շափիղայ ընդ մէջ իւր. և մտին կացին առ պղնձի սեղանոյն: Եւ փառք Տ̃Ն Իսրայելի վերացան 'ի քրովբէիցն յօդն որ 'ի մէջ տաճարին: Եւ կոչեաց զայրն՝ որ զգեցեալ էր զպճղնաւորն, և ունէր զկամարն ընդ մէջ իւր: Եւ ասէ ցնա Տ̃ր. անց ընդ մէջ քաղաքիդ Երուսաղէմի. և դիր զնշան 'ի ճակատ արանցդ՝ որ հեծեն և յոգոց հանեն 'ի վր̃ անօրէնութե̃ցն գործելոց 'ի մէջ դոցա: Եւ ցնո̃ ասէ՝ ինձ լու 'ի լու. գնացէք զհետ նր̃ 'ի քաղաքն՝ և կոտորեցէք. և մի խնայեսցեն աչք ձեր. և մի ողորմեսջիք ծերոյն՝ և տղայոյն, կուսին՝ և երիտասարդին. և զկանայս կոտորեսջիք 'ի սատակումն. բայց յորս վր̃ նշանն իցէ՝ մի մերձենայցէք. և սկիզբն 'ի սրբու-

թաց իմոց արտասուօք. և սկսան յարանց ծերոց՝ որ էին 'ի ներքս 'ի տաճարին։ 6։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուած։ Ա. 18։

Զի բան խաչին կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ զօրութիւն Այ։ Զի գրեալ է. կորուսից զիմաստութիւն իմաստնոց. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաստուն. ո՞ւր դպիր. ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց Ած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։ Քանզի իմաստութեամբն Այ ոչ ծանեաւ աշխարհս իմաստութեամբն զԱծ. հաճեցաւ Ած յիմարութեամբ քարոզութեանն՝ ապրեցուցանել զհաւատացեալս։ Իսկ որովհետև Հրեայք նշան հայցեն, և հեթանոսք զիմաստութիւն խնդրեն. մեք քարոզեսցուք զխաչելեալն Քս, Հրէից գայթագղութիւն և հեթանոսաց յիմարութիւն։ Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հեթանոսաց՝ զՔս, Այ զօրութիւն և Այ իմաստութիւն։ 24։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Աւետ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ ԻԴ. 27։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։ Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, և լուսինն ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք. և տեսցեն զորդի մարդոյ ե-

կեալ 'ի վր̃ ամպոց երկնից զօրութ̃բ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր̃ 'ի չորից հողմոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց̃։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նր̃ ոստքն կակղասցին և տերեւն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ̃, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ̃ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ 35։

Բր. Եւ ես խաղաղ։ Ա̃ 'ի վերուստ։ Եւ [illegible]։

Օրհնի Բր. Ամ̃ խաչիւս. Ող. Պահպանեա։ Եւ 'ի [illegible]։ Նոր դրախտին եկեղեցւոյ։ Եւ [illegible] Նորաստեղծեալ։ Բր. Խնդրես։ Կեցո [illegible]։ Ող. Հռում ամէ։

Եւ [illegible]

Շարական Բկ։

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք. և ըզթաղումն քո մեծացուցանեմք. և սբ̃ զյարութիւն քո փառաւորեմք. եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քնի Այ̃ մերոյ. վասն զի նա եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։

Ակ. փառք ս̃բ խաչին ամենօրհնեալ. ս̃բ Ածնին ամենօրհնեալ. ս̃բ յարութեան ամենօրհնեալ։ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և տուր ուրախութիւն սրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր ըզնա։ փառք ս̃բ խաչին ամենօրհնեալ։ փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յա-

ւխանից ամէն։ Փառք ք՛ր խաչելոյդ անեղելոյ, ք՛ր Միածնին անեղելոյ, ք՛ր յարութեանդ անեղ[illegible]։

Իկ. Խաչիդ կենարար որ եղեւ ըմեզ փրկութի. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։ Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. եւ գաւազան զօրութեան հաստատեցելոց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։ Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըմեզ ցուցար. ի յօգնութի ընդդէմ թշնամեաց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։

Օրհնի. Բոր. Մե խաչիւս. Աղ. Պահպանեա։

Եւ ժողովուրդն համբուրեն զխաչն։ Եւ դադարեն 'ի խաղաղութենէն։

# ԿԱՆՈՆ

## Վասն տօնի սրբոյ խաչի, յորժամ կամին խաչվերաց առնել։

Յառաջ քան զերեկոյն ժամու տօնին 'ի [illegible] տանն արծաթի սկուտեղ զխաչն. որ ունի մաս 'ի խաչափայտէն յիսուսեան, եւ զվարդերն [illegible] եւ [illegible], եւ ծածկեն պատուական քողով։ Ապա յե[illegible] ժամու ժողովին 'ի [illegible]. եւ [illegible] հանդերձ [illegible] եւ [illegible]։ Ապա [illegible] եւ [illegible] եւ [illegible] որ զխաչն պատարագեալ էն. եւ [illegible] եւ համբուրեն։ Ապա [illegible] զխաչն [illegible]. եւ [illegible] [illegible]։ Ապա [illegible] [illegible] գայ, [illegible] 'ի [illegible]. եւ [illegible]

Շարական խաչի Գ.Զ։

Որ ծագեցեր մեզ լոյս մեծ [illegible] յաղթու-

թեան խաչի քո թագաւոր յաւիտենից. եւ ետուր պարիսպ ամրութեան հաւատացելոց քոց. անշարժ հզօր յերեսաց թշնամւոյն. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Այս պսակ զարդարեալ ի շնորհաց իմանալի լուսոյն. եւ նշեալ ի գլուխ մեղուցելոյն. փայլելով երանգօք ներկեալ արեամբ եւ ջրով. ի տիգաւոր կողէդ զոր ի զինուորէն ընկալար. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Որ զանդունդս մեղաց ծովուն սովաբաժանեցեր. եւ ըզբնութիւնըն ծածկեցեր խորօքըն յաւիտենական հրով. հաներ զժողովուրդըն քո ի բնակութիւն երկնից անկեալ զօրացն. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Զողաբարձ նըպատակ օրինակեալ քառաթեւ սուրբ խաչին. ձեւացուցանէր Մովսէս իսրայէլեան բանակին զօձըն պղնձի. ապրեցուցանել զվիրաւորեալն ի խածանող օձից թունից. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Օկենդանագիր անարատ ծընողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո. յորժամ գաս փառօք յօր դատել ըզթըշնամին խաչի քո. ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Ա— Երկնային ———ջի խորանին ն ——է [illegible].

Տէր Ա.ծ մեր որ կարգե: Ա— պաշտեցեալ [illegible]

խորանն, և դնեն զս̃բ խաչն 'ի վերայ սեղանոյն. և խունկ արկանեն։ Եւ ասեն

Սաղմոս ՂԸ։

Կց. Բարձր արարէք զՏ̃ր Ա̃ծ մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի ս̃բ է։

Փխ. Տէր թագաւորեաց՝ բարկացան ժողովուրդք. որ նստի 'ի քերովբէս, սասանեցաւ երկիր։

Տէր 'ի Սիովն մեծ է. և բարձր է 'ի վ̃ր ա̃մ ժողովրդոց։

Խոստովան եղիցուք անուան քում մեծի, զի ահաւոր և ս̃բ է. և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ։

Դու պատրաստեցեր զուղղութի̃. զիրաւունս և զարդարութի̃ Յակովբայ դու արարեր։

Բարձր արարէք զՏ̃ր Ա̃ծ մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի ս̃բ է։

Մովսէս և Ահարովն երիցունք նր̃. Սամուէլ ընդ այնոսիկ, որ կարդան զանուն նր̃։

Կարդային առ Տր̃ և նա լսէր ն̃ց. և 'ի սիւն ամպոյ խօսէր ընդ ն̃ս։

Պահէին զվկայութի̃ս նր̃, և զհրամանս զոր ետ ն̃ց։

Տէր Ա̃ծ մեր դու լսէիր նոցա. Ա̃ծ դու քաւիչ լինէիր. վրէժխնդիր 'ի վերայ ա̃մ գործոց նոցա։

Բարձր արարէք զՏ̃ր Ա̃ծ մեր. երկիր պագէք 'ի լեառն ս̃բ նր̃, զի ս̃բ է Տէր Ա̃ծ մեր։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց յառաջին թղթոյն է ընթերցուածս։ Ա. 18։

Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութի̃։ 788։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութի̃ սրտից մերոց։

Որթի

Ս̃յ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ ԺԲ. 28։

Տ̃ն մեր Յ̃ս Ք̃ս ասէ.

Հայր՝ փառաւորեա զանուն քո։ Եկն բարբառ

յերկնից. և փառաւոր արարի, և դարձեալ փա- ռաւոր արարից: Եւ ժողովուրդն որ կայր և լսէր՝ ասէին, որոտումն լինել: Այլքն ասէին, Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա: Պատասխանի ետ Յս՝ և ասէ. ոչ վն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր: Արդ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժ- միկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս: Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս: Զայս ասէր, նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ: 33:

Յետ այսորիկ եպիսկոպոսն խնկարկէ. և առնու զխաչն 'ի խորանէն ամբառնով, ասելով քահանայքն զփոխեղէն 'ի ներքոյ:

Եւ երգեն 'ի խաչն հարթապոյ ասելով Շարական գ.կ:

Այսօր երեւումն մեծի ձայնագայթի. նշանի Տեառն Աստուծոյ մերոյ փառաւորեալ. ի նմանկատիպն որ յԵրուսաղէմ. ժողովուրդք բա- րեբանելով զՔրիստոս տօնեցէք ու- րախութեամբ: Քանզի նշանն յորս կենդանա- սուրբ խաչին. արեգակնակերպ փայլմամբն ընթացակցին ընդ լուսոյն. ի յարեւելից յայ- տնեցաւ. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս տօնեցէք ուրախութեամբ: Ի յերկնից ցոլացեալ. անհեղ և նորանշան հրաշիւք ցու- ցաւ առ մեզ գողգոթայ. նշանն Տէրունա- կան. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս տօնեցէք ուրախութեամբ:

Արթիւ

Աւետարանիս որ ըստ Յովհաննու: գ. 13:

Տէր մեր Յս Քս ասէ.

Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպ Մովսէս

բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ: Զի ամ որ հաւատայ 'ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի այնպէս սիրեաց Ած զաշխարհ մինչև զորդին իւր միածին ետ. զի ամ որ հաւատայ 'ի նա մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի ոչ առաքեաց Ած զորդի իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ 'ի նա, ոչ դատապարտեսցի. և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Այ: Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց չարութե: Զի ամ որ զչար գործէ՝ ատեայ զլոյս. և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նր: Իսկ որ առնէ զճշմարտութի գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նր, թէ Աստուծով գործեցան: 21:

Ա.— Սարկաւագն ձայնէ քարոզ և ասէ.

Վս խաղաղութե ամ աշխարհի, և հաստատութե սբյ Եկեղեցւոյ, և ամ քրիստոնէից յերևելի և յաներևոյթ վտանգից փրկութե, քաւութե, և թողութե, և ամենեցուն հաստատելոյ 'ի հաւատս, 'ի յոյս, 'ի սէր, և յամ գործս բարեաց և արժանաւոր լինելոյ արքայութե երկնից, և յաւիտենից կենաց զՏր աղաչեսցուք:

Ա.— Ասեն Խ Տր ողորմեա:

Ա.— Եպիսկոպոսն բարձրացուցանէ զխաչն [illegible]: Սարկաւագն ձայնէ բարձր Օրհնեա Տր: Ա.— Եպիսկոպոսն տեառնագրէ զխաչն, ասելով: Օրհնեսցի և պահպանեսցի աշխարհս և թագաւորութիւնս այս նշանաւ սբ Խաչիւս և սբ Աւետարանաւս փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ, այժմ և միշտ:

Այս 'ի հօրէ [illegible] :

Եւ դնէ [illegible] խաչն 'ի սեղանն, և [illegible] նոյն [illegible] [illegible] ասելով

Շարական խաչի ԱԶ. Որ զանապատ բազուկս : 781:

Որթն

Սբ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի : ԻԴ. 27:

Տէր մեր Յս Քս ասէ.

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից: 788:

Զկնի Աւետարանին [illegible] սարկաւագն :

Սբ հայրապետին մերոյ և ամ ուղղափառ եպիսկոպոսաց. և պատուական քահանայից և սարկաւագաց, և ամ ուխտի մանկանց սբ եկեղեցւոյ զՏր աղաչեսցուք :

Եւ ասեն Ի՛ Տր ողորմեա :

Եւ սարկաւագն ասէ Օրհնեա Տր:

Եւ [illegible] խաչն ասելով: Օրհնեսցի և պահպանեսցի զամենեսեան և անդաստանս այս նշանաւ սբ խաչիս և սբ Աւետարանաւս, առ 'ի պատարագել, և բառնալ զամ հարուածս և զամ բռնութիս չարեաց. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. այժմ և:

Եւ դնէ [illegible] խաչն 'ի սեղանն. և գնան 'ի [illegible], ասելով

Շարական Գ.Զ:

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պտղոյն ընդերկրիստոսս պտղաբերեցեր. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց: Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց. ի սրովբէափակ պահպանութենէն. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց: Քեւ ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն. եւ քեզ երկրպագեն ամ հաւատացեալք. պարըսպեալ պահեա զուխտս հաւատացելոց:

# Որթի.

Ահ Աւետարանիս որ ըստ Մարկոսի։ ԺԵ. 20։

Օ Տէրն մեր Յս Քս

Եւ ածին արտաքս զի ՚ի խաչ հանցեն զնա։ Եւ ունէին պահակ զՍիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտ նորա։ Եւ ածեն զնա ՚ի Գողգոթա՝ տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կառափելոյ։ Եւ տային նմա գինի զմռսեալ, եւ նա ոչ առ. եւ հանին զնա ՚ի խաչ։ Եւ բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ՚ի վր՝ թէ ո՛ զինչ առնուցու։ Էր ժամ երրորդ՝ եւ հանին զնա՚ի խաչ։

Զկնի Աւետարանին քարոզէ սարկաւագն։

Վն բարեպաշտ թագաւորին մերոյ, եւ զօրացն իւրոյ. եւ վն ամ թագաւորաց քրիստոնէից կարողութեն եւ յաղթութեն ՚ի վր թշնամեաց եւ զօրանալոյ յամ գործս բարեաց զՏր աղաչեսցուք։

Եւ ասեն Գ Տր ողորմեա։

Սարկաւագն ասէ Օրհնեա Տր։

Եւ եպիսկոպոսն բարձրագոյն ձայնիւ, եւ մեղմ ձայնիւ ասելով։ Օրհնեսցի եւ պահպանեսցի քաղաքս եւ բնակեալ ժողովուրդս ՚ի նմա՝ այսուհետեւ ընդ խաչիւ եւ ընդ Աւետարանաւս. փարատելով զամ հիւանդութիւնս եւ զամ խռովութիւնս ՚ի մարդկանէ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ։

Եւ դնէ զՔն խաչն ՚ի սեղանն. եւ երթեալ յարեւմտից կողմն, ասելով

Շարական Գ.Կ։

Խաչի քո Քրիստոս երկրպագեմք ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սա եղիցի մեզ պահապան յաղթօղ. պարսպեցուցանել զմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից. որ փառաւո-

բնակդ ես ընդ Հօր. ժողովե՛լ ըզհեռացեալսն կենարարի փայտիւն. միաբանեցուցանե՛լ ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ամենայն ընտանորեցա՛ն արարածք ամենայն. ամէ՜ն սպասէին արգելեալքն ի մեղանէ՛ր բանտին որ ազատեա՛ց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։

Աւետ

Սկ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ժ․Դ․ 1։

Տէրն մեր Յս Քս ասէ.

Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱծ, եւ յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ երթամ պատրաստել ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ, եւ առնում զձեզ առ իս. զի ուր եմն ես, եւ դուք անդ իցէք։ Եւ ուր երթամն՝ գիտէք, եւ զճանապարհն գիտէք։ Ասէ ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՞ երթաս, եւ զիարդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ ցնա Յս. Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա եւ զՀայր իմ գիտէիք, եւ այսուհետեւ գիտասջիք զնա։ Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր ցոյց մեզ զՀայր՝ եւ շատ է մեզ։ Ասէ ցնա Յս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ոչ ծանեար զիս Փիլիպպէ. որ ետեսն զիս՝ ետես զՀայրն. եւ դու զիարդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր։ Ոչ հաւատաս՝ եթէ ես 'ի Հայր, եւ Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն։ Հաւատայք ինձ, եթէ ես 'ի Հայր՝ եւ Հայր յիս։ Ապա թէ ոչ՝ գոնէ վս գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործսն զոր ես

*գործեմ՝ և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան ըզ-նոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։* 12։

Զկնի աւետարանին ժողովուրդն աղերսագին։ *Մի առ 'ի Քրիստոս հաստատեալ ժողովրդականաց մերոց՝ արանց և կանանց՝ ծերոց և տղայոց, որք հաստատ 'ի սէր եկեղեցւոյ ժողովեալ են. զի պահպանեալ փրկեսցէն սր խաչիւ յամ վտանգից. յերևելի և յաներևոյթ թշնամեաց. և վն քաղաքիս մերոյ և գաւառի, և ամ քաղաքաց և գաւառաց. և որ հաւատով բնակեալ են 'ի նս. զՏր աղաչ։*

Եւ ասեն Ժ Տր ողորմեա։

Սարկաւագն ասէ Օրհնեա Տր։

Եւ եպիսկոպոսն վերացուցանէ զխաչն, և դրոշմա-գրէ զխաչն ասելով. *Օրհնեսցէ և պահպանեսցէ զքահանայապետութիւն, և զքահանայսս, հանդերձ սարկաւագօք, դպրօք, և ամ ուխտիւ ըմբռնի, այս նշանաւ սր խաչիւ, և սր Աւետարանաւս. սրբու-թեամբ պաշտել զսբ եկեղեցւոյս. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։*

Եւ երթան յատեան սբ Եկեղեցւոյ. և առաջի խո-րանին ասեն Շարական ԲԿ։

*Խաչի քո Քս երկիր պագանեմք։* 789։

Եւ դնեն զխաչն 'ի վր խորանին յատենին դէմ խաչին և զԱւետարանն. և երկիր պագանեն Եպիսկոպոսն, և քահանայքն, և ամենեքեան։ Եւ 'ի կատարման Շա-րականին ժողովուրդ աղերսագին. *Սբ խաչիւ։* Եպիս-կոպոսն ասէ զաղօթս. *Պահպանեա զմեզ Քս Ած։ Հայր մեր որ յերկինս։*

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Ժողովին 'ի դուռն Եկեղեցւոյն, և չհասարակաց խորգն խաւարին։ *Եւ առ ԱԾ։* Եւ այլ ոչ երգեն 'ի Լուսոյ ձայնն 'ի Տեառնընդառաջ. և անդ 'ի Օրհնութիւն։

Մեծացի Խաչ. *Նստեալ երկինք։ Որպէս փրկե-*

ցան ։ Յաւր․ Գրիգորէ Նարեկացւոյն Կանոն անքնին․ կամ Առաւօտուք ։

Համբարձի Դ․Զ ։

Օրհնութիւն որ խաչի քո Քրիստոս ։ Տես ՚ի ճաշ ։ Յաւր․ Մի խաչիս․ Կեցո ։ Ա․Ղ․ Պահպանեա ։

---

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## Տօն խաչի ։

### Ի ԳԻՇԵՐԻ

### Օրհնութի Դ․Զ ։

ԶՕՐՈՒԹԻՒՆ որ խաչի քո Տէր որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի․ սա՛ պահեսցէ ըզմեզ յամ փորձութենէ ։ Քանզի ի սմա բարձրացար Աստուած․ եւ ի սմա հեղեր ըզպատուական արիւնդ․ սա՛ պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ ։ Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստդ նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի․ սա՛ պահեսցէ ըզմեզ յամ փորձութենէ ։

† Ի տնկագանէն Աստուծոյ ի կենդանարար ի դրախտին․ խորհրդով պատուական փայտին ծառոյն գիտութեան․ ճանաչումն պատուականքն ճաշակելով ի պտղոյն․ եւ նորա փայլմանակից մեղսաքաղաքն Երուսաղէմ ։ Աշխարհ ի դրախտին ընծայեցին ըզփայտ խաչին․ եւ եկեղեցի կատարեալ ի տօնուած կատարման․ բարձրանալ ի դէտին տիրելէն փայտակերտն․ սուրբ քահանայութեն պահապան անձանց մերոց ։

ՅԱՐ․ Թագաւոր Քրիստոս Էմմանուէլ Հօր եւ Հոգւոյն․ որ փառք մեր մարմնացար ի սուրբ կուսէն․

Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ ըզմահ մեռուցեր. և անապական յարութեամբըդ քո նորոգեցեր զաշխարհս. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կենդանարար արեամբըդ քո լուսաւորեցեր զսուրբ եկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։

Ողորմեա փրկիչ։ Որ կամաւ Հօր ըզչարչարանս յանձն առեր Տէր Աստուած. ողորմեա փրկիչ։ Որ հաւասար սուրբ Հոգւոյն ըզգերեալոցն փրկեցեր քո յարութեամբդ. ողորմեա փրկիչ։

Ի խաչ ելեր Տէր Աստուած. մարմնացեալդ ի կուսէն կամաւ Հօր և Հոգւոյն. ի փրկութիւն ազգի մարդկան։ Ի գերեզմանի եդար անապական զի զմեռելութիւնս մեր բարձցես. ըզգերեալոցն փրկեցեր ի ձեռաց մահու։ Եւ յերրորդ աւուր յարեար աստուածապէս. ի յերկինս համբարձար ընդ աջմէ Հօր նստար. փառաւորեալդ ի հրեշտակաց երկրպագեալդ ի սերովբէից։

Որ ի յերկնից ի Հօրէ իջեր անքակելին Որդի. նոյն ի կուսն ըզգրժունս առերեցեր. ողորմեա մեզ Աստուած։ Որ ըզճառագայթս Աստուածութեան երևեցուցեր փրկիչ. ըզպահապանսն զարհուրեցուցեր. ողորմեա մեզ Աստուած։ Որ ձեռօքըն Թովմայի շօշափեցար. առ աշակերտսն մտեր դրօքըն փակելովք. ողորմեա մեզ Աստուած։

Որ մահու խաչին ի վերայ կենդանացուցեր ըզմահացեալսն. և մարմնոյն իւր բևեռամամբ՝ ըզկապանս մահու եղծ. ամենեքեան երգեսցուք զի փա-

ատարեալ է։ Յորժամ սրբամաքրութեամբ քո Քրիստոս. ի խաչին կիզեր ըզամենաչարութիւն բըռնութիւն. և կենարար յարութեամբ քո զեկեղեցի քո փրկեալ. փառըս քեզ մատուցանե-ցեր։ Որ փոխանակ զանանութեան տընկոյն Եդեմայ ըղխաչ քո տնկեր մեզ Քս. և սրբուցեր ի կողաձօս աղբերէդ զանդրապատ և զանմախման ուրախութիւն։

Հգ. Կենդանարար Նշանաւ մարդացեալ Հօրի. ըզժողովեալսըս մարդանական սիրով լուսաւորեցեր Հրեղինաց ըզղունք. փառք որով և մեք այսօր տօնեմք ըզգալստեան քո սուրբ։ Օծանելեացն քո զանդամնեմին սուրբ առաքելոցն. կոչելով ի մեծամեծն ըզցրուեալսն ի միմեանց բազմամասին ըզղունք. փառք որով և մեք այսօր տօնեմք ըզգալստեան քո սուրբ։ Հօգեւորական սուրբ մկրտութեամբ զորդեգրեցեր նորոգ ըզոդեղիւս. ի զգեստըս լուսափայլս և նորափեսայս. փառք որով և մեք այսօր տօնեմք ըզգալստեան քո սուրբ։

Հն. Փառըք քեզ Հօրն որ կենարար ես մարմնոց և զգայացուցիչ հոգւոց. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։ Մարդասիրի Հօր Որդի. որ պատկերակից եղեր հողեղինացս և խաչեցար. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։ Համագոր Սբ Հոգի. որ անդորրիչ ես ննջեցելոց և մխիթարիչ հոգւոց. ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։

Մն. Մայր լուսոյ Մարիամ սբ կոյս. որ ըզլոյսն

առ ի Հօրէ ծընաւր մարմնով. եւ եղեր արեւելք արեգականն արդարութեան. Հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք: Դու քերովբէից գերագոյն էին աթոռ եւ ծառ կենաց անմահական պըտղոյն. տապանակ կտակի Բանին եւ սափոր ոսկի երկնային մանանային. Հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք: Փառք Հօր: Դու բացեր սրովբէափակ դուռըն դրախտին. եւ քեւ տըւաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի նմա զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. Հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք:

Այժմ եւ միշտ: Բանն անեղ համագոյ որ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. երեւեալ ի յերկրի պայծառացան արարածք. Հըզօրին կարողութեամբն եւ ըզմեզ վերագրեաց յորդեգրութեան շընորհս:

Ալէլու խաչէ ՚է յայտնէն:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴԶ:

Այսօր ընդ ամպըս լուսաւորս երեւեալ նըշան տէրունական խաչին. բոցանիշ փայլմամբ տեսողացն ընթացեալ ի քաղաքըն պատմէին. ըզնըշան քո Տէր Աստուած հարցըն մերոց: Յարեւելից փայլեաց ճառագայթ սբ խաչին. արեգակնակերպ ճառագայթիւք միայրանն տեսանէր ի յերրորդ ժամու. նըշան քո Տէր Աստուած հարցըն մերոց: Ապաւէն ցուցան մեզ սբ խաչըն փրկչական. զի յաղթեսցուք նովաւ անօրէն թշնամւոյն. կնիք հաստատութեան ընկալեալ ի յանձինս մեր. ըզնըշան քո Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ․ Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս: փառք հօր: Այսօր նըշան որ խաչին ի յերկնից երեւեալ. Եկայք նոր ժողովուրդք. միաբանութեամբ ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Այսօր ի սուրբ գողգոթայ ցոլացեալ երեւէր տեսիլ ահաւոր ժողովոյն. քահանայք երգով ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Դ·Ձ:

Այր լուսոյ Մարիամ որ կոյս. որ ըզլոյսն ան ի հօրէ ծընար մարմնով. եւ եղեր արեւելք արեգականն արդարութեան. հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք: փառք հօր: Քերովբէից գերագոյն էին աթոռ եւ ծառ կենաց անմահական պտղոյն. տապանակ կտակի Բանին եւ սափոր ոսկի երկնային մանանայից. հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Քեւ բացաւ սրովբէափակ դուռըն դրախտին. եւ քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի նմա ընկեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. հոգեւոր երգով ըզքեզ սըրբուհի մեծացուցանեմք:

Ողորմեա Դ·Ձ:

Ի յերկնից երեւեալ նըշաննըն յաղթութեան այսօր. հեթանոսաց ծագեաց լոյսն որդիութեան: Եւ բազմութեան ժողովրդեան տեսանէին այսօր. որ ըզխաչըն լուսոյ ճառագայթիւք զարդարեալ: Ընդ երեւմըն սըրբոյ խաչի քո Քն այսօր. Երուսաղէմ մեծապէս պանծացաւ յոյժ: փառք

Հօր։ Նո՛ւ ըղձանգամըն լուսոյ ա՛նծայրին նշանի՛ քո՛. ճառագայթիւք տեսանիմ՛ք բազմութե՛ն ժողովյն։ Այժմ և միշտ։ Ամենայաղթ զօրութի՛ խաչի՛ քո Քս՛ որ ցուցաւ ի յօգնութի ընդդէմ թըշնամեաց՛. պատերազմեա՛լ զօրութեամբ քո։

Տէր յերկնից Դ.Զ։

Պսակազան զօրութեա՛ն ընկա՛լ քո Ետուր մեզ Քրիստո՛ս. և սովա՛ւ յաղթեսցու՛ք անօրէն թըշնամեա՛ց։ Սա է զէն յաղթութե՛ սրբոյ արեամբ Որդւո՛յն Այ՛. և սովա՛ւ յաղթեսցու՛ք անօրէն թըշնամեա՛ց։ Սա է ա՛թոռ տէրունեա՛ն և ի սմա է բազմեալ Քս Որդին Այ՛. և սովա՛ւ յաղթեսցու՛ք անօրէն թըշնամեա՛ց։ Փառք Հօր։ Սա է սեղան սրբութե՛ն և ի սմա է պատարագեալ Քս՛ գառն Այ՛. և սովա՛ւ յաղթեսցու՛ք անօրէն թըշնամեա՛ց։ Այժմ և միշտ։ Սա է կարապետ յաւուր գալըստեան փըրկչի՛ն. եւ պըսակ պարծանաց հաւատացելո՛ց. և սովա՛ւ յաղթեսցու՛ք անօրէն թըշնամեա՛ց։

Առաւօտու Երգ խաչի. Նշանաւ երկնի։ Որպէս փրկեցան։ Քար. Նատացուք խաչ Պատւոյ խաչի։
Մանկանց խաչի յոր յայն ը ընթեր։
Օրհն. Քարոզ. Սուրբ խաչիս. Կեցո. Աղ. Պահպանեա։

---

ՑԵՐԵԿՈՅԻ

Մեղեդի խաչի. Նշանաւ երկնից։ Որպէս փրկեցան։
Համբարձի Բ.Կ։
Խաչն կենարար որ եղև մեզ փրկութի։ 805։
Քար. Սբ խաչիս. Կեցո։ Աղ. Պահպանեա։

# ԵՐԵՔՇԱԲԱԹԻ
## Տօն Եկեղեցւոյ:
### ԻԳԻՇԵՐԻ
Օրհնութիւն Ա:

ՈՐԶՐ՛Ն կենարար որ եղև ըստ մեզ փրկութի՛ւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Որ ի յօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. և գաւազան զօրութեան հաստատեցեր. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք: Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըստ մեզ ցուցաւ. ի յօգնութիւն ընդդէմ թշնամեաց. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Որ յաթոռ փառաց նստեալ Բանն Աստուած. խոնարհեցար ի հայրական ծոցոյ առ ի մեր մարմին ի կուսէն. վերականգնելով ի տեղի բնտրանեալ լուսոյն պէտցեալ բնութիւն: Որ կանգնեցեր ըզխաչ քո ի մէջ երկրի. և սովաւ զպարտաւորեալսն դատուրն դրախտին բացեր նախամարդոյն. կենդարձելով ի ճաշակմանէ մահաբեր պտղոյն: Եւ զօրութեամբ խաչի քո Քրիստոս հիմնեցուցեր զկաթուղիկէ եկեղեցի բերնաւ կարապն մեր Երրորդութեան. լուսաւորելով զհեթանոսս ի սմա կերկնային ծնընդեամբ:

Գ·Ձ

Սրբութի՛ւն սրբոց շնորհեցեր եկեղեցւոյ մեր ըզխաչ քո Տէր. քանզի հեղուսիւք ձրդմամբ անարատ ձեռին քո ի սմա. համահաւասարեալ աքեզ զհամօրէն սերբս բանական կենդանեաց. աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սրբոյ: Տեսի՛լ անճառելի

խորհրդո՛յն զոր յառաջագո՛յն ցուցաւ լուսածի՛ն սո՛ւրբ նըշանն՝. քանզի սերովբէն բոցեղէն հրանի՛ւթ պատրո՛ւանկէր ի՛ մէջ պանծալի՛ և վայելչո՛ւ դրախտին՝. աղաչեմք զքե՛զ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սրբոյ: Երկնաչա՛փ ցուցաւ սանդո՛ւխք իմանալի՛ ճանապա՛րհ առնելով որդւոց մարդկան՝ ընդ դուռըն կե՛նաց մըտին՝. քանզի խորհրդեամբ ցուցաւ ըսքա՛նչելւոյն Յակոբայ. երկնաւո՛ր զօրա՛ցն էջք և ե՛լք ա՛րարան. աղաչեմք զքե՛զ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սրբոյ:

† Փայտ կենա՛ց զոր Հոգւովըն վերագոչեաց դերահրաշ իմաստունն. քանզի ապարիչն արարածո՛ց բարձրացաւ ի սմա. և կողահոս շիթք անապական արեանն ըղկողածնի՛ն ջնջեաց զմեղս. աղաչեմք զքե՛զ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սրբոյ: Առաջնո՛րդ ցուցաւ սքանչելի փայլմամբ ժողովրդեանն Իսրայէլի. գաւազանաստուածն հերձմամբ զեռանացեալ զկո՛ւտա՛կումըն ջուրցն ի կարծրութի՛ւն փոխարկեալ վի՛մի. աղաչեմք զքե՛զ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սրբոյ: Ներգործեա՛լ հրաշըս խաչանի՛շ համբարձմամբ ձեռացըն Մովսէսի ընդդէմ Ամաղեկայ՝. ի մարտի պարտէր ըզԱմաղեկն՝. և ձուլադրո՛շմըն ձուլե՛ւք ե՛նթադրեալ կռո՛ցըն՝. աղաչեմք զքե՛զ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սրբոյ:

† Նըշանա՛ւ խաչի՛ քո Տէր սուրբեալ հալածեցաւ աշխարհակո՛ւլ խաւարն. քանզի զմեղուցեալ ըզ-

մարդըն յանցանօք փայտի՛ն կենաց խաչակի՛ց առ-նելով պըսակեցեր ամենայնիւք սուրբ նըշանաւդ․ աղաչեմք ըզքե՛զ Տէր պաշտպանեա՛ ըզմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։ Որ ի՛ վերջին ա՛ւ-ուր համատարի՛ լուծանէ՛ ժողովեա՛լ զե՛ւր ըզ-կա՛րծեցեա՛լ ճաճանչն․ Եւ աշխարհաշ ճառա-գայթիւք ցոլանայ յերկնի՛ց գերահրաշ նըշանն․ և հեծեալ կոծի՛ն ամենայն ջոկք անհաւատից․ աղաչեմք ըզքե՛զ Տէր պաշտպանեա՛ ըզմեզ ընդ հովանեաւ խաչի՛ քո՛ սո՛ւրբ։

Քե՛զ Քրիստոսի կաթողիկէ եկեղեցւո՛յ շնոր-հօղի․ զյաղթական ըղպատուական զաստուածըն-կալ սուրբ նըշանս․ մատուցանեմք զօրհներգու-թիւն միշտ ի բարձունս։ Սա կամաւ քո՛ Քրիստոս Եւ թեւօք ամենազօր սուրբ Հոգւոյն․ Եւ գաւուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի․ ի լեառըն Վա-րագայ բընակել ի նմա։ Եկայք ժողովուրդք եր-կըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանի՛ս․ համ-բարձէք միաբան ըզձեռըս ձեր ի սրբութի․ Եւ ըզընակեալն ի սմա մի՛շտ փառաւորեսցուք։

Անուանեալ փայտ գիտութեան ըզմեզ ի կե-նացըն հանեալ արտաքսեցոյց․ որով յանցեաւ մայրն Եւա՛ Եւ պատրեաց ըզնախահայրն։ Իսկ փայտ խաչի քո կենսատու գաւազան զօրութեան կենաց մարդկա՛ն Եւ յոյս հաստատութե․ առաջնորդ եղե մեզ ի կեանսըն յաւիտենից։ Ետուր մեզ նըշան յաղթող սուրբ զխաչ քո․ զի սովաւ մնացուք ընդ նեղ դուռն անձկացեալ ճանապարհին․ որում ցան-կայի՛ն երկրածին որդիք մարդկա՛ն։

Հգ․․ Արեգակն արդարութեան Քս ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեան․ եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց․ որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն․ վասն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին բանին որ էր յերկինս․ առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան․ մխիթարել զորս յԱդամայն որբամնացելոց եւ հրաւիրել զըն-տրեալ դասս առաքելոցն․ վն որոյ և մեք եր-կիր պագանեմք Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ։ Այսօր տէրունական և գիշերային լուծան եր-կունք ծննդեան նախամօրն․ քանզի զծնեալսն մարմնով ի մահ եւ յապականութիւն․ վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի․ վն որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ։

Հն․ Արարչագործ Աստուած․ որ յոչնչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր․ օրհնեմք զքեզ․ որ հանգուցիչդ ես ննջեցելոց Հայր ա-մենակալ։ Բանդ Ած և համագոյ փառաց Հօր պատկեր․ գոհեմք զքեզ․ որ յարութիւնդ ես նըն-ջեցելոց Որդիդ միածին։ Աղբիւր անսպառ յորմէ բաշխի տիեզերական շնորհք․ բարեբանեմք զքեզ․ որ նորոգօղդ ես ննջեցելոց Հոգիդ ճշմարիտ։

Մօ․․ Ածածին երկնային դրան Աստուծոյն ձայ-նիւն աւետարանէր հրեշտակն․ ուրախ լեր բեր-

կրեալդ Տէր ընդ քեզ: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անսպառականաւք բնակեալ հանգեաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: Փառք Հօր: Որ բոցեղէն սրովբէիւք շուրջանփակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղէնի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ:

Այժմ և միշտ: Աւրհնեա՛լ Աստուածածին բարեխօսութիւն ընկալ Տէր ողորմութեանց մեր. յորժամ յարեւելից լուսածագին անձամբ հրաշիւք. կարապետս առնելով զյաղթանակ սուրբ նշանն. աղաչեմք զքեզ Տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Ապա Ողորմեա ՚ի յայնժամ:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց պաշտօնէն ... Դ.Զ. Ուրախ լեր այսօր որ: 699: Էջ տես:

Մեծացուցէ Դ.Զ:

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի սրովբէից. ծագեալ ի քէն մեզ լոյս մայր եղեր վերածագողին. որդ և այժմ զքեզ մեծացուցանեմք: Փառք Հօր: Քեզ եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հօրգոյն սուրբ. ի հրեշտակաց սպասաւորեալ պարըրեալ քեզ անմասնեաց. որդ և այժմ զքեզ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Տեսանեմք զգասկալ զհրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Հօրգոյն սուրբ յղացեալ զԲանն Աստուած մարմնով ծնեար. որդ և այժմ զքեզ մեծացուցանեմք:

Ապա Օրհնութիւն Եկեղեցւոյ: Տան քում վայելէ սրբութիւն: Բ.հար. Աստուածուք խոր դասուն:

Մանկունք խաղէ առ 'ի յայնէն:
Օրհնէ Քար. Մի եկեղ: Կեցո յայնէա. Առ. Առ դրան:
ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուցէ Ակնեղէց. Առ օրհ. Ո կայք:
Համբարձի Գ.Զ. Ուրախ լեր որ եկեղեցի: 530:
Քար. Մի եկեղեցեաւս: Կեցո: Առ. Առ դրան:

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

### Տօն Եկեղեցւոյ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Զ. Ուրախ լեր որ եկե: 530:
Ալէլու Ակնեղէցայ 'ի յայնէն:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Այսօր պայծառ և սիւն: 534. Խոր առօրն:
Մեծացուցէ Գ.Զ. Ուրախ լեր Ածածին յոյս 773:
Առաւօտու Երգ Ակնեղէցայ: Տան քում վայելէ սրբութի: Քար. Ասասցուք կամ կանթ Ակնեղէցայ:
Մանկունք խաղէ առ 'ի յայնէն:
Օրհնէ Քարող. Մի եկեղեց: Կեցո. Առ. Առ դրան:
ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուցէ Ակնեղէ: Առ օրհն: Ո կայք:
Համբարձի Բ.Կ. Անպատուամ կաւք: Տէր 'ի կայր:
Քար. Մի եկեղեցեաւս. Կեցո. Առ. Առ դրան որ:

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Տօն Եկեղեցւոյ:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութեան Բ.Կ:

ԱՆՁԱՌ ՏՈՒՄՆ կաւք անքննելի խորհրդոյն ընդունարան ով սուրբ քահանայութե. ի սեւանութեից յարամութեալց սրբելեաց անհասաներ ա հրէ պատուեա լ. քեզ երկրպագեմք յօգնութի մեզ ժամանեա յե լս եւ ի մեւաս: Անյաղթելի նշան անպարտելի զօրութեն՝ ընդունարան ով սուրբ քահանաւթե. ի յահարկութի

ապըստամբիցն երեւեցար. որք ի՛ քէն աշխու սար-
սեալ դողան եւ անդընդամածոյղ կործանչին.
քեզ երկրպագեմք յօգնութիւն մեզ ժամանեա
յերկլ եւ ի մեռուս: Յառաջագոյն տեսեալ ըզ-
քեզ մարգարէն Զաքարիաս. աշտանակ ոսկի
եօթնաջահեան լուսով պայծառացեալ յերկրի ով
սուրբ քահանայութե. Եկեղեցի ի վերն քո տարածեալ
անճիւթ գոյին գծյացեալ ի մեր բընութիւն. եւ
աղբերահոս կողիւ մաքրեաց զաղտեղութի աղ-
գի մարդկան. քեզ երկրպագեմք յօգնութի
մեզ ժամանեա յերկլ եւ ի մեռուս:

† Ընդ երեւումն քո ի թագմանէ ով սուրբ
քահանայութե. ի յահէ քումմէ կործեան դռունքն
զօրաց բանսարկուին. եւ ընդ յառնել պատանւոյն
զնշանաձայն հաւատացեալ... լք. քեզ երկրպա-
գեմք յօգնութի մեզ ժամանեա յերկլ եւ ի մեռուս:
Ի յերկրի երկինք եւ ի յերկինս մեզ անբարբառ
բարեխօս ով սուրբ քահանայութե. ի յահաւոր
եւ ի հրացոյս փայլմանցն կարապետ գոլով եւ նա-
խագուշակ գալստեան Որդւոյն Աստուծոյ.
քեզ երկրպագեմք յօգնութիւն մեզ ժամանեա
յերկլ եւ ի մեռուս:

Որ համագոյդ ես Հօր եւ սուրբ Հոգւոյն. ան-
բաժանելի էակ միութե խոնարհեցար ի բարձանց.
եւ առեր մարմին ի կուսէն. յաղագս անկելոյն
յանդրնծիչ կենաց բանսարկուին խաբմամբ: Որ
դատաւորդ ես ծածկելոց գիտօղ. այսօր ի հողոյ
դատապարտեալ բարձար ի խաչ եւ լեղեաւ կերա-
կրեցար. յաղագս անկելոյն ի ճաշակմանէ մա-

հարբեր պղտորեալն։ Որ կենդանութիւնդ ես ամենեցուն. այսօր ըղձմամբ խաչին ի յանձն առեր. եդար ի սիրտ երկրի և յերրորդ աւուր յարեար. շնորհեա մեզ վերածիլ ընդ քեզ յանապական ի կեանս։

Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո որ զեկեղեցի. ըզսա պահեա ի խաղաղութեան։ Որ շնորհեցեր զողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց և մարդկան քաւութեան. տուր սմա զանշարժ քո զխաղաղութիւն։ Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութիւն։

Աշխարհք ժողովուրդք ի տաճարի փառաց Քրիստոսի. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս։ Գանձք թագաւորին Քրիստոսի պսակեաց ըզսա անմեկնելի փառօքն իւրովք. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս։ Ի սմա և զօրք հրեշտակաց զուարթութեամբ տօնեն ցնծան. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս։

Որ ի յերկնից իջեր Բանդ Աստուած և վասն մեր մարմնացար ի սրբոյ կուսէն. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա։ Որ ի խաչին տարածեցեր զանարատ բազուկս քո. և վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա։ Որ ի գերեզմանի եդար անապական. և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա։ Որ ի յերկինս համբարձար ամենակարօղ. և ընդ աջմէ Հօր նստար յաթոռ փառաց. ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա։

Իջեր Տէր և մարմնացար ի կուսէն. և զհողե-

զէն բընութի՛ւնս ազատեցեր ի՛ մեղաց։ Ելե՛ր Տէ՛ր բեւեռեցա՛ր ի խաչին. ընդունել յանձն առե՛ր կենդանատու մեռելո՛ց։ Եդա՛ր Տէ՛ր ի նորափո՛ր ի վիմի. եւ մատանեա՛ւ կնքեցա՛ր զանձի՛դ կենաց աշ-խարհի՛։ Յարեար Տէ՛ր աւերեցեր զդըժոխս. ի յերկինըս համբարձա՛ր եւ ը՛նդ աջմէ Հօր նստա՛ր։ Ընդէին եղեա՛լ մա՛րդ անեղեա՛լ զա՛րմանայր մար-գարէն. եւ հեղուսեալ բեւեռօք զմա՛րմին ի՛ խա-չին. ներգործեա՛լ ի՛ մէջ երկո՛ւց կենդանեա՛ց։ Պատմեցին երկինք ընդվայելչութի՛ փառաց Քնի. եւ ընկալեալ լուսանձեմ տարերցն ըղջ ի թս արեան անեղին. եւ օրհնութի՛ խաչելոյն լցան տիեզե՛րք։ Զարհուրեալ ո՛չ միայն ի վե՛ր բնակարեր արարածոյն. այլ քրովբէական կառօքն բատո՛ր իջեալ ի դըժոխս. կենագործեաց հըզօրենդապէտն զերամս արդարո՛ց։

Հ·· Ի՛ջեր Տէ՛ր ողորմութեամբ քո յաշխարհ. եւ ընդունեա՛լ բընութի՛ւնս ի կեանս վերափոխեցե՛ր։ Ելե՛ր Տէ՛ր առ Հայր փառօք ի՛ յերկինս. եւ մըխի-թարիչ առաքելոցն առաքեցեր սուրբ զՀոգի՛դ։ Ածե՛ր Տէ՛ր այսօր ըղձանձն երկնայինն. եւ բաշխե-ցեր առատապէս պարգեւս ազգաց բընութեանս։

Հն·· Գալոց է միածինըն փողո՛վ եւ փառօք Հօ՛ր. եւ ըզհողեղէն բնութի՛ւնս հրեղէն նորոգէ՛։ Լու-սաւո՛ր են ճանապարհք արդարո՛ց. եւ ի բիւրա-ւոր բանակըս հրեշտակա՛ց ամպո՛վք ընթանա՛ն։ Ի վերի՛ն Երուսաղէմ թըռչին ամպո՛վք ընդ ա-ռաջ Տեառըն յօդս. եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառըն լինի՛ն։

ՈՕ·· Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկա՛ն

Հայր երկնաւոր ընդ մարգարէին. եւ նորա բնութեանս այսօր պարգեւ ընկալաւ սուրբ ընծայող Որդւոյդ միածնի. մաղթանօք սորա Տր մեզ ողորմեա։ Որ ցուցեր ի մեզ յանմահ օրինաց Որդիդ այսօր զկոյսն Մարիամ. յորում ծնեալ մարմնով և բարձեր նովաւ զմեղս նախաստեղծին Ադամայ. մաղթանօք սորա Տր մեզ ողորմեա։ Փառք Հօր։ Որ մաքրեցեր Հոգիդ ս՛բ ըղսիրտ և զարգանդ մօր քո փառակցին. այսօր ամուլ ծնողաց նորին եսուր ընդմայր Բանին զօրհնիչ Եւայի. մաղթանօք սորա Տր մեզ ողորմեա։

Այժմ և միշտ։ Յորժամ յարեւելից փայլեաց անձառ լուսով լուսաւորեաց զհաւատացեալսն. եւ դատապարտեաց զազգն Հրէից անհաւատից որ [illegible] քահանայութեան. Եւ [illegible] զես լուսաւորեալ ըղխաւարեալս մեզ. և դասակարգեա ի դասս մանկնայգրի յանձառ երկնից արքայութեան [illegible] նդ. զի անդադար օրհնաբանիս և քո են փառք յաւիտեանս ամէն։

Ասելով Սրբոց Հայրապետաց:

---

ՅԱՌԱՋԱՒՈՏՈՒ Հարց պատարագին տաղ գ.2. Այսօր ցնծան : 605. Էջ տեսիր :

Առաւօտու Երգ. Տան քում վայելէ սրբութի։

Բարոզ. Ասացուք խաղ գանձ Սրբոց Հայրապետաց։

Մանկանց խաղէ տաղ ՚ի յայտնեն :

Օրհնի Բարոզ. Մի եկեղ։ Կեցո. Աղ. Առ դրան։

ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուսցէ Սրբոյ. Առ որս։ Մ կայք։

Համբարձի Բ.2. Անապական որ զխաչն։ 815։

Բարոզ. Մի եկեղեցեաւս. Կեցո. Աղ. Առ դրան։

# Ո Ւ Ր Բ Ա Թ

## Տօն խաչի։

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութ. Բ.Ձ։

ԶՊԱՀԱՊԱՆ սուրբ ըզխաչն օրհնեսցուք. որ եղեւ առաջնորդ մատաղակին եւ յօրինեաց մեզ ճանապարհ. որ ձեւացոյց մեզ սովոր մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։ Նմանալ արքայութեան տուեալ հողածին մարդոյն. ուստի յառաջին ճաշակմանէն արտաքս անկեալ ի յանէծ կենդանութեանն. որ ձեւացոյց մեզ սովոր մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։ Դաւանութեամբ երեւեալ եգիպտական ազգին. ցուցանելով ըզզօրութիւն սրբոյ խաչին. յաղթահարելով ըզգաւազանն դիւթականն. որ ձեւացոյց մեզ սովոր մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։ Դրոշմ ըզգայութեան օրինակեալ ի վր՟ սեմոց դրանց նոցա. աներկիւղ պահելով ըզժողովուրդն յանդրանկածին սատակմանէն. որ ձեւացոյց մեզ սովոր մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։ Երեւեալ աղխաներմին ակըն պատուական ի ձեռ խաչին. հերձանելով ըզծովըն կարմիր. առաջնորդելով ժողովրդեանըն սեամբ ամպոյ ըղըռջան աննմենելի. որ ձեւացոյց մեզ սովոր մտանել ընդ դուռն անեղաշէն դրախտին Տեառն։

† Որ նըշանաւ ամենայաղթ խաչի քո Քրիստոս. բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։

Որ շնորհեցեր մեզ յաղթանակ ընդդիմամարտութեան. վասն նենգգործութեանցս թշնամւոյն։ Այսօր խնդրի պատուական փայտ խաչին ա-նդեալն ի Գողգոթայ ի ձեռն աստուածասէր դշխոյին. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային նշանիս։ Այսօր ընծայէ Գողգոթայ զծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն երանելւոյն Յուդայի. Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային նշանիս։ Այսօր ի ձեռն փրկական նշան խաչին կենդանագործի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ զկործանումն իւր. Իսկ մեք Քնի հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս։

Ապաւինեցաք ի խաչ քո Տէր, յաւիտենից. որ Եղեւ մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամւոյն. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Բարձրեալ թագաւոր որ փառք մեր եղեր ի խաչ. եւ բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին Ադամայ. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Գլուխ եւ հաւատոյ եւ փայտ կենաց մարդկան յայտնեալ. զոր տեսեալ այսօր պղծոյ կործանեցաւ անկանգնելի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Դողացաւ թշնամին ընդ յայտնել սրբոյ խաչին. եւ ի յահէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի. աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Երկնայինք ցնծային եւ երկրաւորս ուրախանային. քանզի փրկիչ ցուցաւ նշան խաչին եւ

լուսատու տիեզերաց. աղաչեմք սուրբ փրկիչ պահպանեա զանձինս մեր:

ՑԱՐ. Իջեր յերկնից Որդի Այ ազատեցեր զարարածս. անկանիմ առաջի քո ողորմեա ինձ Աստուած: Ի խաչին բեւեռեցար Աստուած եւ ըզմարդն ի կապանաց մահու արձակեցեր. եւ զիս մի անտես առներ որ մեղօք եմ մեռեալ: Ծագումըն Հօր յանմատոյց լուսոյն որ իջեր ի գերեզման. կենդանացուցեր զարարածըս քո. եւ զիս մի անտես առներ քանզի քեզ միայնոյ մեղայ:

Որ կամաւոր խաչելոյդ քո Տէր բարձեր ըզմեղս. ըզքեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն: Որ երեքօրեայ թաղմամբ քո Տէր մեռուցեր ըզմահ. ըզքեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն: Որ լուսափայլ յարութեամբ քո Տէր կենագործեցեր զաշխարհս. ըզքեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն:

Ծանեաք ըզքեզ Քրիստոս. որ ի խաչին բեւեռեցար. եւ հեղմամբ արեանդ քո փրկեցեր ըզտիեզերս. ծանեաք ոչ այլ Աստուած բայց ի քէն: Որ զանարատ բազուկս քո տարածեցեր ի վերայ խաչին. ժողովել ըզհեռացեալսըն ամենակարող զօրութիդ. հաստատութիւն իմ լեր Տէր քով յարութեամբ: Տուօղ խաղաղութեան Քրիստոս. որ զդատակնիք մահու լուծեր ի վերայ սբ խաչին. եւ հաշտեցուցեր ըզՀայր ընդ արարածս. արարեր զխաղաղութիւն ի յերկինս եւ ի յերկրի:

ՀԳ. Սոյն եւ Նըման Հօր եւ Որդւոյ Հոգիդ անեղ

և համագոյ․ բղխումն Հօր անքննաբար առող յՈրդւոյ անճառաբար․ ի վերնատունն այսօր իջեր զՀոգիդ շնորհաց քոց առաքելոցն․ ամէն և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։ Ի՛ց ստեղծող արարածոց որ շրջէիր ի վ՛ր ջրոց․ նոյն և ի ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էա-կցին․ գըգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս նորակերպ․ ամէն և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։ Արուն վերնոցն իմանալեաց և ըստորին այսօր զգալեաց․ որ մար-գարէս տաս ի հովուաց և առաքեալս ի ձկնոր-սաց․ աւետաւոր ըզմաքսաւորս քարոզ բանի քում զհալածօղս․ ամէն և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։

Հն․ Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ հոգիք զարթիցեն կալ ի դատաստանի քում Քրիստոս Աստուած մեր։ Յորժամ հընչէ բարբառն ահա-գին․ և հարկանի փող յարութեան մերոյ․ և մեք գոչելով ասեմք փառք գալստեան քո Տէր։ Յորժամ առնես հատուցումն Տէր և սուրբք քո պարծեսցին ի քեզ․ և մեզ շնորհեսցես փրկի՛չ կալ ի յաջմէ քումմէ։

Մ․ Օ․ Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բա-րեբանեն գունդք անմարմնոց հրեշտակաց․ ձայնիւ եր-գով գոչեն և աղաղակեն․ Աստուած աստուածոց և Տէր տերանց փրկիչ գոլով։ Առաքեցեր զքո միա-ծինդ մարմնանալ ի սուրբ կուսէն․ և անարա-ծընանել յորովայնէ անապական բառնալով ըզմեր նեղութիւնս․ Աստուած աստուածոց և Տէր տերանց

փրկի՛չ գովեալ: փառք Հօր: Շնորհք բարի յԵ-
րուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց. զի արարիչն
յաւիտենից ուղղայ եղեւ յորդեգրութի՛ կենաց
կոչէ. Աստուած աստուծոց եւ Տէր տերանց փրկի՛չ
գովեալ:

Այժմ եւ միշտ: Սովաւ ընկեալներս մեր խաղա-
ղացն միայն բարեգութ. եւ փրկեա՛ յամենայն
փորձութենէ:

Ալէլու խաչէ 'ի յոյնէն:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴԶ:

Այսօր զենար գառն Աստուծոյ. վասն յանցա-
նաց նախաստեղծին ի վերայ խաչին պատարա-
գեալ հեղեր զարիւնդ ի փրկութիւն. օրհնեալ
Տէր Աստուած հարցն մերոց: Այսօր ընդ-
գխտութեան փայտին մահու. որով նախահայ-
րն մահացաւ. ընդփրկականդ քո նշան փոխա-
նակեալ կենաց փայտ մեզ շնորհեցեր. օրհնեալ
Տէր Աստուած հարցն մերոց: Այսօր ըղ-
ճանապարհ ծառոյն կենաց. զոր եւ քրովբէից
պահպանեալ պահէին ընդ զգուշութիւն. սովաւ ըղ-
բացեղէն սուրն բարձեալ բացեր որդւոց Ադա-
մայ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ.. Աղ Տէր օրհնեցէք բարձր արարէք ըղզընա յա-
ւիտեան: Որ բեւեռեցեր ի խաչին Քրիստոս.
երկու ընկալեալն եւ զթշնամին անկեալ կապեաց
կենարար խաչիւն իւրով. բարձր արարէք ըղզընա
յաւիտեան: փառք Հօր: Որ փոխանակ պղտղոյ
մահաբեր ծառոյն. կենաց պտուղն որ ի վերայ

քառամթեւին կերակրեալ զանգս որդւոց մարդկան. բարձր արարէք ընդ Նմա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Որ ընդգէր պարտեանց կողածնելին լուսոյ. հրաշխօս վկայաբերն ի տիգալեաց կողէն բղխեալ զօր արբոյց տերանըներաց. բարձր արարէք ընդ Նմա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Զ։

Ամպ լուսոյ Մարիամ սբ կոյս. որ ընկալար ան ի Հօրէ ծնունդ մարմնով. եւ եղեր արեւելք արեգականն արդարութեան. հոգեւոր երգով ըզքեզ սրբուհի մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Քերովբէից գերագոյն էին աթոռ եւ ծառ կենաց անմահական պտղոյն. տապանակ կտակի Բանին եւ սափոր ոսկի երկնային մանանային. հոգեւոր երգով ըզքեզ սրբուհի մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Քեւ բացաւ սրովբէապահ դուռն դրախտին. եւ քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի Նմա զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. հոգեւոր երգով ըզքեզ սրբուհի մեծացուցանեմք։

Ողորմեա Գ.Կ։

Ով քառաթեւ լուսածին գերապանծ նիշ կառուցող կենացն ամենից. միշտ բազկատարած առ քեզ էն։ Փառք Հօր։ Քառակուսի աղանց հողմնի եւ պահապան ի յեսս եւ ի մեւոս. փրկեա ի յայսոց եւ պարիսպ ամրութեան։ Այժմ եւ միշտ։ Դրոշմ ընդգայութեն եւ կնիք ի դէմս ամենից. զոր եւ յածայինսըն կատարեա խորհրդ յորմէ արեգակնային փայլեն ճառագայթք։

Տէր յերկնից Գ.Կ։

Ով պանծալի որ ծագեցար յԱդամայ․ նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն։ փառք Հօր։ Դու փակելոյ դրախտին բացող եւ առաջնորդ աւազակին․ որ զբոցեղէն սուրն կամ-տեանց անեղին հրամանաւ։ Այժմ եւ միշտ։ Թ․ եւ ցնծան բազմութիւնք ամենայն ի միւսանգամ քո գալստեանն․ եւ յաւէժ բղուարձանեն զանս անմարմնոցն ընդ երգս։

Առաւօտու Երգ խաչի․ Նստուր երկիւղ։ Որպէս փրկեցան։ Քար․ Ասասցուք զօր գիւտի խաչի։
Աւետարան խաչի ՚ի յայնէ։
Օրհնէ Քար․ Այս խաչիւս․ Կեցո։ Առ․ Պահպանեա։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Աւետէ խաչի․ Նստուր երկիւ։ Որպէս փրկեցան։ Համբարձէ Գ.Զ։ Որ ծագեցեր մեզ։ Տէր ՚ի վերայ։ Քար․ Այս խաչիւս․ Կեցո․ Առ․ Պահպանեա։

---

# Շ Ա Ր Ա Կ

## Տօն խաչի։

### Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնաբանէ Գ.Զ։

Որ ծագեցեր մեզ լոյս մեծ ընդերձան յաղթութեան խաչի քո թագաւոր յաւիտենից․ եւ նորաւ պարիսպ ամրութեան հաւատացելոց քոց․ անշարժ հզօր յերեւելեաց թշնամեացն․ աղաչեմք զքեզ Տէր պանծալի ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սրբոյ։ Ահա պսակ զարդարեալ ի շնորհաց իմանալի լուսոյն․ եւ եդեալ ի գլուխ մեղուցելոյն․ վայելուչ երանգօք նոր-

որ խափանեցան ըղձմանց: Յարեաւ յաւուր երրորդի. վէմք պատառեցան Երկիր շարժեցաւ սասանեցան դըժոխք. սա է կենդանին յաւիտենից Քրիստոս:

Հգ. Արեգակն արդարութեան Քո ծագեալ յաշխարհ հալածեաց զխաւարն անգիտութեան. եւ յետ մահուն եւ յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց եւ յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. վասն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ: Որ փոխանակ ծոցածին Բանին որ էր յերկինս. առաքեցաւ աւետիքըն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց եւ հրաշխնել զըն-տրեալ դասս առաքելոցն. վն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ: Այսօր տրտմական և գիշերային լուծան երկունք ծնընդեան նախամօրն. քանզի զծընեալըն մահմնով ի մահ եւ յապականութի. վերըստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վն որոյ եւ մեք Երկիր պագանեմք Հօր Հոգւով եւ ճշմարտութեամբ:

Հն. Արարչագործդ Աստուած. որ յոչընչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր. օրհնեմք զքեզ. որ հանգուցիչդ ես ննջեցելոց Հայր ամենակալ: Բանդ Ան եւ համագոյ փառաց Հօր. պատկեր. գովեմք զքեզ. որ յարութիդ ես ննջեցելոց Որդիդ միածին: Աղբիւր անըսպառ յորմէ բաշխի տիեզերական շնորհք. բարեբանեմք

ը զքեզ · որ նորոգօղդ ես նշնջեցելոց հոգւոյդ ճշմարիտ:

Մ.Օ. Ո՜ անճառելի լուսոյ մայր եւ ըղըն՝ակարան անըսկըզընակից Որդւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք: Ո՜ անհաս տընօրէնութեան մայր · եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին, օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք հօր: Ո՜ բոլորից փրկութեան մայր · որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ · ընդ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

Այժմ եւ միշտ: Ո՜ կենդանագիր անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանդ քո, յորժամ գաս փառօք հօր դատել ըզթըշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի · աղաչեմք ըզքեզ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Աչերա խաչէ ՚ի յայնէն:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Կ.:

Քրիստոս Աստուած · որ առաւել քան զարեգակն ըզնըշան քո յաղթօղ հրաշիւ ցուցեր գեր ի վերոյ նորին զօրութեայ · վասն որոյ ըզքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Քանզի պայծառ եւ սուրբ փրկական խաչ քո Տէր · զարդարեալ ի լուսոյ յերկնից ցոլացեալ երեւէր Կոստանդեայ · վասն որոյ ըզքեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Եւ բոցանմանն փայլմամբ ա-

որ խափանեցեր զգեհեն. Օրհնեալ. յաւուր երրոր-
դի. մե՛ծ մեր պատուեցան Երկիր շարժեցաւ սա-
սանեցան դժոխք. ամ է կենդանին յարուցեալ
Քրիստոս.

ԺԳ. Արեգակն արդարութեան ... ծագեաց
յաշխարհս հարածելոց ընդդէմ ամպոց ամենակալ.
եւ յետ մահու եւ յարութեան համբարձաւ առ Հայր
յաթոռ ծնողին. որ երկրպագի յերկնաւորաց և
յերկրաւորաց ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն. փառք
որոյ է մեծ. Երկիր պագանեմք Հօր Հոգւովդ եւ
Քրիստոսութեամբ. Որ փառաւոր ծագեցեր յա-
րեւ որ եւ ել յերկինս. սասանեցան աւետիքն Հօր
ի բարձանց Հօրն Քրիստոսութեան. մխիթարել
զմեզ յԱստուծոյ առաքեցելոց եւ հրաշիւք զա-
րեւել զմեզ առաքելոցն. փառք որոյ է մեծ. Եր-
կիր պագանեմք Հօր Հոգւովդ եւ Քրիստոսութեան.
Անմահ արարածոցն և գերերկրային լուսոյ եր-
կնից ծնընդեան նախամարդն. ընկալ զծնեալքն
մարմնով ի մահ եւ յարուցանեն. փրկութ
ծնունդ Հօրն յորդւոյ լուսոյ Հօրն երկնաւորի. փառք
որոյ է մեծ. Երկիր պագանեմք Հօր Հոգւովդ
եւ Քրիստոսութեամբ.

ԺԴ. Արարչագործ Որդի Աստուծոյ. որ յաշխարհ
զգայացուցեր զերկինս եւ զերկիր. օրհնեմք զքեզ
ընդ. որ հանգուցեր զմեզ ի նորոգեցելոց Հօր Որդ
մեծութեան. Ընդ Հօր և հոգւոյ փառաց Հօր
պատկեր. զօրհնեմք զքեզ. որ յարութեան նորո-
գեցելոց Որդի ամենից. Անձին արարչա-
կործ բաշխել անեղերական շնորհք. բարեբանեմք

է՛ գերեզ. որ նորոգեցեր ես նորոգեցելոց հոգիս ի՛ք
ճշմարիտ:

Մ՞Օ. Զամենակալին լուսոյ մայր եւ բովանդակարան անբովանդակելւոյ Աստուծոյ. օրհնութեամբ մեծացուցանեմք: Զամենաշնորհ ապաւինութեան մայր. եւ զանձառ ասացեալ Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք: Փառք Հօր. Զքաւչին փրկութեան մայր. որ զանսահմանն յղացար ի յարգանդի երկրի. ընդ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ա՛յժմ եւ միշտ. Զկենդանատեղիի անարատ ծնընդե՞ քո օրհնեմք առաջի անախտական տեւաթեան ընդ քո. յորժամ գաս փառօք Հօր դատել ըզմեղուցեալսն խաչի՞ քո. նշանաւ յանդիման մերոյ բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի. աղաչեմք ըզքե՞զ Տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո ամ՞ենայն:

Ողորմ խաչի ՚ի յարնեն:

---

## ՅԱՌԱՒՕՏՍՆ

### Հարց Դ.

Քրիստոս Աստուած. որ առաւել քան զերկնայինն ըզխորհրդեան քո յայտնեցեր հրամանաւ. ցուցեր զեր ի վերոյ նշան գերագոյնթեան. վասն որոյ երգելով բարեբանեմք Տէր հարցըն մերոց: Վասնզի պայծառ եւ անուր փրկական խաչ քո Տէր. զարդարեալ ի լուսոյ յերկինից ցուցեալ երեւէր Յերուսաղէմ. վասն որոյ երգելով բարեբանեմք Տէր հարցըն մերոց: Եւ՛ բազմաձայնութ փառաբանեմք զա-

րեգակնայինցըն յաղթէր ճառագայթից. և ի յաշխարհէն ընծայք և նկարք հեռաւորք ի քաւարանն ի մաղթանս. վասն որոյ ըզքեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ զահաւոր խորհուրդ միւանգամ գաղտնեանն նորոյ Բն. տըպաւորեաց այսօր փայլմամբ սբ խաչին՝ որով երկիրս պանծացաւ. Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ աչաւոր ձևով ցուցաւ ցընծացաւ Երուսաղէմ. և զարհուրեալ դողային դասք սանդարամետից. Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Կ:

Աստուածածին պայծառ քան զերկինս. որ ի մեզ ծագեցեր ըզլոյսըն մեծ և գերազանց. որով խաւարն անգիտութեան հալածեցաւ. սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք. և հոգևոր երգով մեծացուցանեմք: Փառք Հօր: Ամպ թեթև և լուսաւոր. որ զանձրևըն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովէն. զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուտ. սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք. և հոգևոր երգով մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Պարտէզ փակեալ Աստուածատունկ Եդեմ. որ և ծառըն կենաց ի մէջ դրախտի քո ի Հօրէ տընկեալ անմահական պտղովն ելից ըզտեսողս. սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք. և հոգևոր երգով մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.կ։

Այսօր նշան յաղթող երեւեալ ի յերկրի. պայծառացոյց զտիեզերս. զէ՟ն յաղթութիւն ետուր ըզխաչ քո Տէր. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն։ Փառք Հօր։ Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց. յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա՟ պահեսցէ ըզմեզ յամենայն վտանգից մերոց. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն։ Այժմ եւ միշտ։ Յաղթող զօրութիւն խաչի քո պահեա ըզմեզ Ք՟ս Ա՟ծ. որ տարածեցեր ըզձեռս քո ի նմա. եւ լուծե՟ր ըզկնիք դատապարտութեան յանցանաց մերոց. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն։

Տէր յերկնից Գ.կ։

Խաչի քո Քրիստոս երկրպագեմք արարածք ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սա՟ եղիցի մեզ պահապան յաղթող. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Փառք Հօր։ Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովե՟լ ըզհեռացեալսն կենսաբեր փայտիւն. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Այժմ եւ միշտ։ Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմա՟ սպասէին արգելեալքն ի մեղսասէր բանտին որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։

Առաւօտու Երգ Խաչի. Ետուր երկնից։ Որպէս. Քոր. Ասացուք հաս գ.ռնչ Խաչի։
Մանկանց Գ.կ. ԱՏ. Պարունակեալ պահէին։ 499։
Օրհն Քոր. Ա՟ծ խաչիւս. Կեցո։ Ա՟ղ. Պահպանեա։

ՅԵՐԵԿՈՅԻ

Փառք ։

Բարձրանալով քո՛ի խաչին դիտելով։ Զայս զու։
Ամենակալ խաչին· Նշառ երկիւղ։ Որպէս փրկեցան։

Համբարձեալ Գ.Կ ։

Այսօր երեւումն մեծի ճառագայթի. նշանի Տեառն Աստուծոյ մերոյ փառաւորելոյ. ի նմանակատիպն որ յԵրուսաղէմ. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս օրհնեցէք ուրախութեամբ։ Փառք Հօր։ Որ անդի նշանաւ յեր կենսատու սուրբ խաչին. արեգակնակերպ փայլմամբըն ընթափառաւորեցիկ ըլուսոյն. ի յարեւելից յայտնեցաւ. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս օրհնեցէք ուրախութեամբ։ Այժմ և միշտ։ Ի յերկրին ցոլացեալ. ահեղ և նորանշան հրաշալիք ցուցան առ ոք գողգոթայ. նշանըն տէրունական. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս օրհնեցէք ուրախութեամբ։

կամ զԱմենայնիւ Գ.կ. Պարունակեալ։ 499.
Քարոզ. Ամ խաչիս. Կեցո։ Ած. Պահպանեա։

# Ի· ԿԻՐԱԿԻ

## ԽԱՉԻ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ ։

Որ եկիր կամաւ Հօր ի խաչ ելանել վասն ազգի մարդկան. թագաւոր փառաց Քրիստոս ամենաքեան օրհնեսցուք։ Որ մահու խաչի համբերեցեր վասըն մեր. անմեկնելիդ ի Հօրէ. թա-

գաւոր փառաց Քրիստոս ամենեքեան օրհնե-սցուք: Որ երեքօրեայ թաղմամբ պաշնեցար կեն-դանի յարութեամբ մեր եւ կեանք. թագաւոր փա-ռաց Քրիստոս ամենեքեան օրհնեսցուք:

Գ․ ԶՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ ի վերայ խա-չին եհեղ զարիւն իւր Քրիստոս եւ փրկեաց զա-րարածս ի մեղաց. օրհնեցէք եւ բարձր արա-րէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ ըզ-մահ կոխեաց զդժոխս աւերեաց. յարուցեալ ի մեռելոց ազատեաց ըզմեզ. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Զ:

Աթոռ քրովբէական երեւեալ այսօր Սիմէոնի. զԱծորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծա-ցուցանեն: Փառք Հօր: Հոգւովն գուշէր. ցըն-ծայր ալեօքըն ծերունին ասելով սա է թագաւորն անմահ. զոր զօրք երկնից ի բարձունս հանա-պազ մեծացուցանեն: Այժմ եւ միշտ: Արտա-սուելով աղերսէր. արձակեա զիս ի խաղաղութեան. անարատ ծընողի քո բարեխօսութեամբ. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն:

Ողորմեա Գ.Զ:

Թւինս իմ Ողորմեա փրկիչ: Փառք Հօր: Որ կամաւ Հօր ըզչարչարանս յանձն առեր Բանդ Աստուած. ողորմեա փրկիչ: Այժմ եւ միշտ: Որ հաւասար սուրբ Հոգւոյն ըզգերեալըն փրկե-ցեր քո յարութեամբդ. ողորմեա փրկիչ:

Տէր յերկնից Դ․Ձ․

Փառաբանեմք զՀօր Որդի որ վասն մեր խաչեցար․ զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի․ փառք յարութեան քո Տէր։ Փառք Հօր։ Հրեշտակապետին իջմանն՝ որ ընդպահապանսն երկնաւորն․ զարհուրեցոյց առ դրանն գերեզմանին․ փառք յարութեան քո Տէր։ Այժմ և միշտ։ Ո՜ սքանչելի որ կանանցն՝ աւետարանէր ասելով․ յարեաւ Քս յարուցիչն մեռելոց․ փառք յարութեան քո Տէր։

Այս շաբաթս պահք են Վարագայ սրբոյ խաչին, որ առէ պահք սրբոյն Գէորգեայ։ Բայց թողք լինին։

# Բ․ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Ս․ Մամասայ, և Փիլիկտիմոնի, և Սիմեոնի սիւնակեցին։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ․Ձ․ Աննախական։ 352։

# Բ․ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ս․ Կուսանացն Փեբրոնեայ և Մարիանեայ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ․Ձ․ Ընդ սուրբս քո։ 353։
Մանկունք և Հարք․ Դ․Կ․ Յիշատակ Քսի։ 513։

# Բ․ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ․Ձ․ Հարցն մերոց։ 434։

# Բ․ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ս․ Հայրապետացն Անթիմոսի և Նիրանոսի։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․Ձ․ Որք հաղորդեցան։ 371։
Մանկունք Գ․Ձ․ Հանդիսացեալք ընդ։ 684։

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Ե. ՇԱԲԱԹ

Ս. Գէորգայ զօրավարին և Ադոկտոսի, և Ռոմանոսի երգեցողին:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Օրհնութիւք: 365:

Մանկանց Դ.Զ:

Ո՛վ որ Գէորգ պանծանք ազգի մարդկան՝. հրաշալի՛ ճգնութեամբ ի յերկրի՛ նահատակեալ. եւ ի յերկինս պսակեալ ընդ անմարմնոցն դասս: փառք Հօր: Քանզի դու վառեցար՝ զինու որ Հոգւոյն. եւ յաղթեցեր արիաբար անմարմին Բելիարն: Այժմ և միշտ: Մի՛ դադարիր բարեխօսել վասն մեր. առ Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգին՝. զի յաղթեսցուք հաւատով անմարմին Բելիարայ:

ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուցէ խաչէ. Նշանաւոր եր: Որպէս: Համբարձի Ա.Կ. Նշանաւ ամենայաղթ: Տէր ՚ի Հայր: Բեր. Մի խաչիւս. Կեցո: Ա.Ղ. Պահպանեա:

## Գ. ԿԻՐԱԿԷ

### Տօն Վարագայ Խաչին:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնաբանէ Ա.Կ:

ՆՇԱՆԱՒ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս. պահպանեա զմեզ մարդասէր յաներեւոյթ թշնամեաց. զի դու միայն ես Թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան: Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո. եւ հեղեր

զարթնունդ ի փրկութիւն տիեզերաց. զի դու միայն ես Թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան: Ի միաանգամ քո գալստեանն յերեւել սուրբ նշանիս. արժանի արա ընծայիս քո վերստին նորոգման. զի դու միայն ես Թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան:

† Խաչ քո եղիցի մեզ ապաւէն բացանիչ փայլմամբն իւրով. խորտակեաց ըզթշնամին եւ եղեալ ընդդատակնիք. անուանեալ փայտըն կենաց ի փրկութիւն տիեզերաց: Վեր առեալ ցընծան երկինք եւ երկիրս ուրախանայ. ընդ յայտնել սըրբոյ խաչին սեռականաձեւ քառաթեւին. որ զաշխարհըս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք: Սեղան քո Տէր զօրութեանց հաստատեալ կանգնեցաւ ի խորանի քում. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Վէմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Ի սմա մատուցաւ ճշմարիտ պատարագ եւ զենումն անապական. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք:

ՅԲ. Իջեր յերկնից Որդի Աստուծոյ եւ մարմնացար ի սրբոյ կուսէն. որ անմեկնելի ես ի Հօրէ. ողորմեա: Եկիր ի չարչարանս կամաւորապէս Աստուած եւ խաչեցար վասն ազգի մարդկան. եւ ի գերեզման իջեր անապական. ողորմեա: Օձն լուծեր եւ զաշխարհս ազատեցեր կարողապէս Տէ. եւ ի մեռելոց յարեար իշխանութեամբ. ողորմեա: Որ խոնարհեցար յերկնից ի հայրական ծոցոյ. միածին Որդի Աստուծոյ առեր մարմին ի սըր-

րոյ կուսէն. վասըն մերոյ փրկութեան. ողո՜ր-մեա՛։ Ընդ մեզ Ա՟ծ շրջեցար ընդ մեղաւորացս. Եւ կոխեցեր ըզգլուխ վիշապին և շիջան խայթո-ցք մահաբերին. և փրկեցեր ըզտիեզերս. ողո՜ր-մեա՛։ Բեւեռեցեր ըզմեղս մեր ի վերայ խաչին. Եւ համբերեալ մահու իջեր ի գերեզման. կեն-դանութիւն շնորհեցեր ննջեցելոցն ի խաւարի. Եւ զօրութ՟բ յարեար ողո՜րմեա՛։

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց. և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի. Ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։ Զգե-ցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ. քանզի շիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբով. Ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։ Յա-րեաւ Ա՟ծ և տիեզերք ամ՟ նորափետուր զարդարե-ցան. և մանկունք հաղորդեցան մարմնոյ և ա-րեան կենարարին. Ժողովուրդք ըզՔրիստոս բա-րեբանեցէք։

ԱԳ. Որ իսկզբանէ իմաստութեամբ հաստատեցեր զեկեղեցի Հօր իմաստութիւն. զոր նախանըկար տե-սութ՟բ նըշանակեաց Մովսէս խորանաւն երկնահան-գոյն ի Սինա լերին. լուսաւորելով փառօքն Աս-տուածոյ։ Որ ըզխորհուրդ անապական տնօրէնու-թեանդ քո ի սրբոյ կուսէն. տըպաւորելով տապա-նակն ածային ուխտին կտակարանաց Բանիդ Աս-տուծոյ. փառաց անեղին տեղի հանգստեան։ Որ ի կենաց վերադարձի բնութեան դարձմամբ Յորդա-նանու օրինակեցեր. Եւ ըզդառնութիւն մահու և դը-ժոխոց կործանմամբն Երիքովի տապանակաւ խա-

չէին հրաշագործեալ նոր խորհրդելի․ օրհնութի քեզ
Տէր երգեսցեն մանկունք ։

Ձգ․ Որ յերկնային զօրս անմարմինսըն նախ հեղեր,
առատապէս Հոգւոյ ճշմարտ․ զածային և զգերա-
գոյն քո խնամատութիւնդ․ լինել փառաբանիչ Եր-
րորդութեանդ․ ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միա-
ւթիւնդ ։ Որ զկերպարանն ածային սահղծեալ Եր-
րորդութեանդ խորհրդակցութեամբ․ զարդարեցեր
փրկչմամբ շնորհաց քոց կենդանարար․ և ընդ
ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք և մարգա-
րէիւք․ ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միութիւնդ ։
Որ յերկրորդի լինելութեանս յետ յարութեան քոյ
Էականցին․ միտեալ ի վերնատանն դրօքըն փակե-
լովք․ շնորհելով ըստ առաջին փրկչմանն ըզքեզ
մեծատանանիցն․ առաքելոցն ասաց առէք Հոգի Սբ․
ընդ նոսին փառաւորեմք զերրեակ միաւթիւնդ ։

Ձն․ Յորժամ յերկնից գաշէ փառք ազգեցութեան
անձնելով տեղերաց ի դատաստան ահաւոր․ յայնժամ
աւուր յահեղին յիշեա Տէր զիս և ըզմեր ըզնըն-
ջեցեալսն․ և հանգո ընդ սուրբս քո ։ Յոր-
ժամ ճառագայթք Լուսութեանըդ փայլեն ի յա-
րեւելից․ և դըպրութիւնք հրաշիւքըն բանին յայնժամ
աւուր յահեղին յիշեա Տէր զիս և ըզմեր ըզնըն-
ջեցեալսն․ և հանգո ընդ սուրբս քո ։ Զարհու-
րեալ գողան արարածք ի ձայնէ սոսկալի փո-
ղոյն․ յորժամ հարկանէ հրեշտակապետն և
կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան․
յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր զիս և ըզմեր
ըզնըննջեցեալսն․ և հանգո ընդ սուրբս քո ։

Մծ․ Որ նախիմաց իմաստութեամբ տնօրինեցեր զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ․ խորագոյն արկեալ հիմունս հաստատութեան ընդ դասս արդարոց․ աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։ Որ զօրհնութիւն նահատակեցին ծածկեալ արուաց եւ իգաց․ պայծառացեալ փայլելապէս ծագեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի յԱննա․ աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։ Փառք Հօր։ Որ ընդխոստովանութեան Երրորդութեան նահատակին մեր ըստ հոգւոյ․ քահանայական եւ թագաւորական դասադասեալքն միացեալ ցուցեր այսօր ի յԱննայէ․ աղաչանօք սոցա խնայեա ի մեզ։

Այժմ եւ միշտ։ Յընծայեալ Արուսեակ․ բերկրեցան հաւատացեալքս․ նորահրաշ զարդարեցան․ քանզի տեսին զյաղթող նշանն․ արարածք ամենայն ի լուսոյն պայծառացան։

Ալէլու խաչն 'ի յոյսն։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն ԳՁ։

Որ ընդ լոյս անճառելի Աստուածութեանդ քո Քրիստոս․ ի վերայ խաչին ծագեցեր այսօր ի լեառն Վարագայ․ օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ զահաւոր եւ զմիասնական քո գալստեան նշան երեւումն․ ծանուցեր այսօր նշանաւ խաչի քո ճառագայթելով յերկրի․ օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ եղեր նշան երկիւղածաց եւ զէն ընդդէմ թշնամեացն․ պահպանեա սովաւ զհաւատացեալս անուանեալդ քում սրբոյ․ օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. Ըզտր՝ օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւի-տեան: Որ զարդարեցան այսօր ըզնըշան խաչին. երկնային լուսով պայծառ քան զարեգակն. ըզ-Տէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ յայտնեցան այսօր ըզփրկական նըշանն. հրեշտակաց իջմամբ ի լեառըն Վարա-գայ. ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Եկայք փրկեալք կենարար խաչիւն՝ Քրիստոսի փրկչին մերոյ. ի սմա երկրպագելով. ըզՏր՝ օրհնեցէք բարձր արա-րէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Զ:

Մայր լուսոյ Մարիամ սուրբ կոյս. որ ըզլոյսն առ ի Հօրէ ծընար մարմնով. և եղեր արևելք արեգականն արդարութեան. հոգևոր երգով ըզ-քեզ սուրբ կոյս մեծացուցանեմք: Փառք Հօր: Քերովբէից գերագոյն էին աթոռ և ծառ կենաց անմահական պտղոյն. տապանակ կտակի բանին և սափոր ոսկի երկնային մանանային. հոգևոր երգով ըզքեզ սուրբ կոյս մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Քեւ բացաւ սրովբէափակ դուռըն դրախ-տին. և քեւ տուաւ մեզ փայտն անմահութեն. զոր ի նմա զենեալն անմահ այսօր յերկնից լու-սաւորեաց. հոգևոր երգով ըզքեզ սուրբ կոյս մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Քեզ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ շնոր-հողի. զյաղթական ըզպատուական զաստուածըն-կալ սուրբ նշանս. մատուցանեմք զօրհներգու-

թի միշտ ի բարձունս: Փառք Հօր: Այս կամաւ քո Քրիստոս եւ թեւօք ամենազօր սուրբ Հոգւոյն. Եւ զասուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի. ի լեառն Վարագայ բնակեալ ի նմա: Այժմ և միշտ: Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք աստուածային սուրբ Նշանիս. համբարձէք միաբան ըզձեռս ձեր ի սրբութիւն. եւ ըզընկեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:

Տէր յերկնից Գ.Զ:

Հրաշափառ տեսութիւն ի կաթուղիկէ եկեղեցւոյ տեսանի. գործարան մահու մահուամբ առիթ գոլ կենաց. և մահացուցիչ նախաստեղծին մահուամբ գոլ շնորհօղ յարութեան: Փառք Հօր: Պարգեւ գերագոյն պարգեւի այսօր հաւատացելոց. և մահացուն ի կենաց առնու իւր զօրըս վերելակս. և թռուցեալ վերագայի բնակեալ ի տեղւոջըն սրբութեան: Այժմ և միշտ: Եկայք ժողովուրդք ընդ հոգեղինացըն սպասաւորեսցուք. երկրպագեսցուք ա՛ծային նր Նշանիս. փառաւորեսցուք ըզհրաշագործ պարգեւաց տըւօղըն:

Առաւօտու Էրգ խաչի. Նստուր երկիւղ: Որպէս: Յար. Ասացուք կամ գանձ խաչի:

Օրհնէ ամէ Ածէն Սաղմոս Դ:

ԿՅ. Նշանեցաւ: Փխ. Ի կարդալ խնում: 786:

Ընթերցուած յԱռակաց. Գ. 18:

Փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին 'ի նա, և որ յենուն 'ի նա իբրև 'ի Տր հաստատունս: Այ իմաստութբ հիմնեաց արկ երկրի. պատրաստեաց զերկինս խորհրդով: Հանճարով իւրով զանդունդս պատառեաց. և ամպք հոսեցին զանձրեւ

Որդեակ՝ պահեա՛ զխորհուրդս իմ, և զիմաստութի։ Զի կեցցէ անձն քո, և շնորհք իցեն ՚ի վ͞ր պարանոցի քո․ եղիցի բժշկութի մարմնոյ քում, և դարման ոսկերաց քոց։ Զի գնասցես յուսով խաղաղութե յամ ճանապարհս քո․ և ոտն քո մի գայթագղեսցի։ Զի եթէ նստիցես՝ աներկիւղ իցես, և եթէ ննջեսցես՝ քաղցր ՚ի քուն լիցիս։ Մի երկիցես ՚ի զարհուրանաց ՚ի վ͞ր հասելոց և յարշաւանաց ամպարշտաց ՚ի վ͞ր եկելոց։ Զի Տ͞ր եղիցի ՚ի վ͞ր ա͞մ ճանապարհաց քոց․ և հաստատեսցէ զոտն քո զի մի գայթակղեսցի։ 26։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԿԲ․ 22։

Ըստ աւուրց փայտի կենաց եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ․ գործք ձեռաց ն͞ց հնասցին։ Եւ ընտրեալք իմ մի ես վաստակեսցեն ընդունայն․ և ոչ ես ծնանիցին որդիս յանէծս, զի զաւակք օրհնեալ են յԱ͞յ՝ և ծնունդք նոցա ընդ նոսա։ Եւ եղիցի՝ մինչչև կարդասցեալ իցէ նոցա՝ ես լուայց ն͞ց․ և մինչդեռ խօսեսցին, ասացից՝ եթէ զինչ խնդրէք։ Յայնժամ ժամանակի գայլք և գառինք ՚ի միասին ճարակեսցին․ և առիւծ իբրև զեզն յարդ կերիցէ, և օձ զհող իբրև զհաց կերիցէ, մի մեղիցեն, և մի վնասեսցեն ՚ի լերին սրբութե իմոյ ասէ Տ͞ր։ 25։

Պօղոսի առաքելոյն ՚ի Գաղատացւոց թղթոյն է
ընթերցուածս։ Զ․ 14։

Ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն ՚ի խաչն Տ͞ն մերոյ Յ͞ի Ք͞ի․ որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է և ես աշխարհի։ Զի ՚ի Ք͞ս Յ͞ս, ոչ թլփատութի ինչ է և ոչ անթլփատութի․ այլ նոր արարած։ Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութի ՚ի վ͞ր ն͞ց, և ողորմութի և ՚ի վ͞ր Իսրայելին Ա͞յ։ Այսուհետև աշխատ ոք զիս մի արասցէ․ զի ես զչարչարանսն Ք͞ի ՚ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տ͞ն մերոյ Յ͞ի Ք͞ի ընդ հոգւոյդ ձերում եղբարք․ ամէն։ 18։

*Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։*
*Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։*

Որթի

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ ԻԴ. 30։
Տէրն մեր Յս Քս ասէ.

*Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամ՟ ազգք երկրի. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վր՟ ամպոց երկնից զօրութ՟ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նր՟ ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նց՟։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերեւն ցուցցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ՟, գիտասջիք թէ մերձ է ՚ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ՟ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ 35։*

Երգ Նորաստեղծեալ։ Քարոզ Խնդրես. Կեցո։ Աղ. Զհամ ամէն։

---

ՅԵՐԵԿՈՅԻ Մեծացուցէ խաչէ. Նստեալ էր։ Ով փրկե։ Համբարձի ԴՁ. Հրաշափառ տեսութիւն։ 837։ Քար. Մի խաչիւս. Կեցո։ Աղ. Պահպանեա։

## Գ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Ս. Գաւթի դշխեցւոյն, և սրբոց վկայիցն Գամբէոսի և Գամբէուհւոյ։

ՅԱՌԱՒՕՏՍՆ Հարց ԲԿ. Օրհնեմք զքեզ։ 356։

Մանկանց և Համբարձի ԲԿ։

Լցեալ ա՟ծային շնորհիւ երանելի սուրբ ձըգ-նաւոր տէրըտ Գաւիթ. եւ անո՜ն քաջութեան քո եւ յերկի՟նս. յուրախութիւն հրեշտակաց.

և ընդ աշխարհս ամենայն ցընծութի մարդկան։
փառք Հօր։ Մատուցար քեզ անուն քաջութեն յաս-
պարիսի ճգնութեն ով տէրդ Դաւիթ. յաղ-
թեցեր թշնամւոյն խաչիւն Քսի. լցուցեր ու-
րախութի ըզտիեզերս ամ. եւ աղօթիւք առ Աս-
տուած եղեր մեզ զօրավիգն։ Այժմ և միշտ։
Ետուր ըզմարմինդ ընդ հոգւոյ քում փրկանս.
եւ խաչիւ և արեամբ գնեցեր զարքայութին.
առեր իշխանութի բարեխօսութեն. աղաչեա զԱծ
զի փրկեսցէ ըզմեզ ի հարաւային կործանմանէն։

## Գ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ա. Աւստաքէոսի և կնոջ նորա Թէոպիս-
տեայ և երկուց որդւոցն, և սրբոց կուսա-
նացն Արիմնեայ և Հեքտաւինեայ։

ՅԱՌԱՒՕՏՍ. Հարց ՌԿ. Ուք ՛ի մարտի։ 357։
Առանձնա ի Հանգ. ԴԿ. Յիշատակ Քսի։ 513։

## Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՍ

Հարց Գ.Չ։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։
Որ հրաշալի ձայնիւ վերնոցըն դասք զքեզ փա-
ռաւորեն. օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն
մերոց։ Աշխարհանց ձայնիւն երգեմք քեզ թա-
գաւոր փառաց. օրհնեալ ես Տէր Աստուած
հարցըն մերոց։

Գ. Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնըս-
տեալն ի քերովբէս։ փառք Հօր։ Նցէք Օրհն

անքննին ի հայրականն ծոցոյ առաքեալ. օրհնեցէք
բարձր արարէք ընդ ստեանն ի քերովբէս: Այժմ
և միշտ: Նացէ Որ զազգս որդւոց մարդկան ի
յԻսրայէլ անուն նորոգեալ. օրհնեցէք բարձր ա-
րարէք ընդ ստեանն ի քերովբէս:

Մեծացուսցէ Գ.Ձ:

Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակա-
րան. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:
փառք Հօր: Անեղծօղին մայր և հնութեն կերպի
նորոգօղին. քեզ երանիցեն ազգ եւ ազինք
ամենայն: Այժմ և միշտ: Լոյս ծագեցաւ ի քէն
նստելոցս ի խաւարի. քեզ երանիցեն ազգ եւ
ազինք ամենայն:

Ողորմեա Գ.Ձ:

Վերաւորեալ յանցանօք անձն իմ առ քեզ Տէր
համբառնի զաչս իմ. թող ինձ ըզմեղս իմ
միայն բարեգութ. Եւ ողորմեա ինձ Աստուած ըստ
մեծի ողորմութեան քում: փառք Հօր: Կործա-
նեաց զիս չարագործ թշնամին և կամի խապառ զիս
որսալ. Հայր բարեգութ բժշկեա զվիրաւո-
րեալս. Եւ ողորմեա ինձ Աստուծ ըստ մեծի ողոր-
մութեան քում: Այժմ և միշտ: Անգամնդըք մե-
ղաց պաշարեցին զիս զի բազում են քան զաւազ
ծովու. առ քեզ Տէր պաղատիմ փրկեա ի
վտանգէս. Եւ ողորմեա ինձ Աստուծ ըստ մեծի ողոր-
մութեան քում:

Տէր յերկնից Գ.Ձ:

փառաւորք թագաւորին յաւիտենից: փառք
Հօր: Որ յանմատոյց լուսոյ ծագեալ Բանդ փա-

ռակից գոլով Հօր. քեզ հրեշտակք երգեն անլռելի. փառք Թագաւորին յաւիտենից։ Այժմ և միշտ։ Քահանայք և պաշտօնեայք որ եկեղեցւոյ. անդադար քեզ ընդ հրեշտակս երգեն անլռելի. փառք Թագաւորին յաւիտենից։

# Գ. ՀԻՆԳՇԱԲԹԻ

## Ս. Իշխանացն Հայոց Սահակայ և Համազասպայ:

ՅԱՌԱՒՕՏՍ Հարց Գ.Զ. Որք զտանջանս: 360:

Անխոնջ և համբերողք Գ.Կ. ՍՏ:

Արիացեալք առ հակառակսն. քաջութեան առնուլ ըզվրէժ խաբէութեն. հանճարեղք ի հաւատացուցմն դաւանանցն. զամբարըշտացն արդարադատ չափիմամբն. զօրականք յաղթօղք. պսակեալք ի Քրիստոսէ։ Փառք Հօր։ Փոխանակեալք զունայնութիւն. ընդ ճշմարիտ յոյս անմահութեն. փափագանաց ձերոց առիք ըզկատարումն. մաքրել արեամբ յաղտոյ մեղաց որդւոյ. զօրականք յաղթօղք. պսակեալք ի Քրիստոսէ։ Այժմ և միշտ։ Հայցեցէք զխաղաղութիւն. ճշմարիտ վկայք սուրբ Երրորդութեան. նեղելոցս յանօրինաց ըմբռնութենէ. զի ցնծասցուք յաղթանակաւ մարտի ձերոյ. նահատակք յորդոյք. պսակեալք ի Քրիստոսէ։

# Գ. ՈՒՐԲԱԹ

## Պահոց։

# Գ. ՇԱԲԱԹ

## Ա. Եօթանասուն և երկու աշակերտացն Քրիստոսի:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Դ.կ:

Իմաստութիւն երկնային իջեալ ի վերուստ. ժողովել զընտրեալսն ի սկզբանէ զխմորս աշխարհի. և լցեր ի լուսով քո իմաստութեան. հալածել սոքօք ըզխաւարն անգիտութեան ի մէնջ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Ի ծովու ճանապարհորդեալ անհետ ընթացիւք. ի ծովակէ կոչեցեր զորսորդս անբանից կենդանեաց ի մահ. զի ի ծովէ աշխարհի որսասցեն ըզբանականս ի կեանս. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Տանաւոր երկրի՝ մշակդ երկնային. որ ետուր ըզսերմն կենաց ի լեզուս Տանին մշակաց. և առաքեցեր սերմանել յոգիս բանաւորաց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ:

† Որ զօրինակ երկոտասան առաքելոց քոց Քս. և զեօթանասուն ընտրելոցն աշակերտաց. յառաջագոյն ծանուցեր ի թիւ արմաւենեաց և աղբերացըն Եղիմայ. աղաչանօք սց խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Որ շինեցեր ըզտուն քո զեկեղեցի իմաստութի Հօր Յս. և կանգնեցեր ի սմա սիւնս զեօթնարփեան Հոգւոյն զօրութիւն. և առաքեցեր ըզծառայս քո ն՛ք զառաքեալսն. կոչել զհեթանոսս յարքունն ուրախութեան խառնեցելոյ բաժակին. աղաչանօք սց խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ:

ՈՐՏ. Որ էն յէութեն Որդի միշտ ընդ էն՝ անճառանելի ծնունդ Հայրական. զոր ի վերուստ հընչեցին որդիքն որոտման՝. և յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խորհուրդ: Բանն անըսկիզբն՝ ի կուսէն սկզբնաւորեալ. ի յերկրի մարմնով երևեցաւ. զոր տեսին քարոզք Բանին ճըշմարտութեան. և ծանուցին տիեզերաց Աստուած և մարդ: Իսկապէս Բանն Աստուած միացաւ ի մարմնի. անփոփոխ գոլով յէութեն. որում եղեն ականատեսք որդիքն որոտման. և ընդ հանուր քարոզեցին զԲանն մարմին եղեալ:

ՍՏՓ. Առաքեալ և նախավըկայ Քրիստոսի սուրբ Ստեփաննոս. որ ըզքարկոծումըն յանձն առեր և յանմահից բնակարանսըն վերափոխեցար. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճանս: Տունկ անմահ իմանալի դրախտին շնորհեցար ի Հօրէ. և լուսաւորեցար անճառապէս. այսօր ցընծան դասք հրեշտակաց ընդ քո մեծապայծառ ճգնութեանդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճանս: Աստուածաստեղծ մարդոյն պըտուղ ընծայեցար՝ մերձ յանմերձենալի լոյսն. Եւ Հայրենի աւանդութեան եղեր ժառանգորդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճանս: Ճանապարհ վըկայից յետ Քրիստոսի գըտար. Եւ աստուածային փառացն արժանաւոր եղեր. բանսարկուն զինու քո վիրաւորեցաւ. և նախատանօքըն պայծառացեալ բերկրեցաւ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճանս: Դասակարգեալք և մեք ընդ անմարմնական բազմութեան. վերահայցեմք ընդ հրեղէն

ընդունացն՝ աղօթանուէր մաղթանօք. հայցեմք ի քէն մարդասէր փրկիչ. խնայեա՛ ի մեզ ստեղծող մեր և կեա՛նք աշխարհի։

ՑՈԿ. Արդարէից գերագոյն եւ մեծ ի ծնունդըս կանանց. որ ընդոնօրէնութի Աստուծոյն ի յարգանդի ծանեար Հոգւովն. աղաչեա զՏ՛ր վասըն մանկանց եկեղեցւոյ։ Յորովայնէ յորովայն երկրպագօղ Բանի. որ ըզհօրն Տ՛ր մերով ընութի մկրտեցեր ի Յորդանան. աղաչեա զՏ՛ր վասըն մանկանց եկեղեցւոյ։ Կատարումն օրինաց եւ նախակիզըն շնորհաց. որ հոգւոցն ի դժոխս քարոզեցեր ըզփրկութիւն գալըստեամբըն Բանի. աղաչեա զՏ՛ր վասըն մանկանց եկեղեցւոյ։

ԳՐԻ. Այսօր զիմանալի լուսոյն ծագօղն ի խաւարի նըստելոցս. զԳրիգորիոս մեր հայրապետն. եկայք վերապատուեսցուք։ Այսօր զանապական Հոգւոյն պարգեւսն բաշխօղ որդւոց Թորգոմայ. յորդիս լուսոյ նուէր ծընեալն. եկայք վերապատուեսցուք։ Այսօր զծայրին Բանին պատմօղ ի Հայաստան աշխարհի. աշակերտեալ նըմա մանկունք. եկայք վերապատուեսցուք։ Այսօր երգէ եկեղեցի որդւովք խըմբովք ընդ հրեշտակս. յիշատակի լուսաւորչին. փառք ի բարձունս Աստուծոյ։

ՀԳ. Ի հայրաշարժ աղբերէն անհատահոսըդ վտակ. կենդանարար սբ Հոգի. օրհնեալ ես ըզյս ճըշմարիտ։ Այսօր ի սբ վերնատանն եկեալ Ած ճըշմարիտ. հրաշալարդեաց զառաքեալսն ի լոյս փառաց քոց Հոգի։ Հըրճուալականն խընդուի՝

աշակերտացն լցեալ. փառաւորելով երգէին. օրհնեալ ես լոյս գերազանց:

ՃՆ. Թագաւոր փառաց Քրիստոս անմահութեան բաշխօղ. ի փառաւորեալ գալստեանն քո. արժանաւորեա զննջեցեալսն մեր. դասակից լինել սրբոց քոց. մարդասիրապէս որ ես միշտ ի յաւիտեան փառաց: Զորս հաւասարեցեր ընդ որդս քո. հաղորդել մարմնոյ և արեան քո Տէր. այսօր ընկալեալ հանգո զհոգիս նոցա. կենագործելով ի կեանսդ յաւիտենից. մարդասիրապէս որ ես միշտ ի յաւիտեան փառաց: Յորժամ առնես զհատուցումն Տէր. և որք քո պարծեցին ի քեզ. յայնժամ խնայեա ի դաւանողս քո. դասաւորելով յաջակողմեան դասուն. մարդասիրապէս որ ես միշտ ի յաւիտեան փառաց:

ԱՕ. Այսօր զանճառելի ծնընդեան քո Տէր ըզպատմաւոր խորհրդոյ. ի հողանիւթ դոյացութեանց փոխադրեցեր ի յերկինս: Այսօր զանտանելի բանիդ բարձօղն ըզքերովբէն հողեղէն. բարձրացուցեր ի սերոբէականացս գերակայիցն կայանս: Այսօր զանապական կոյսն որ ըզքեզ մաքուր կաթամբ կերակրեաց. ի զգայականն փոխեալ բնութեանց յիմանալեացն խորանս:

ԽՁ. Այսօր միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նըմին. ձայնիւք հնչեցին սանդարամետք անդընդոց: Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի. պատմէր ցնծութիւն հաւատացեալ արքային: փառք Հօր: Եկայք շինեսցուք մեք ըզխորանն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Այժմ և միշտ: Որ տիրականդ իշխանութեն հա-
ղորդս արարեր ըզնոր զառաքեալսն՝ կապել և ար-
ձակել զորդիս մարդկան յերկինս և յերկրի. և
աթոռակիցս լինել քեզ խոստացար յորժամ նըս-
տիս յաթոռ դատողական. աղաչանօք սոցա
խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Կ:

Որ ի Հօրէ առաքեցար ի փրկութի ազգի մարդ-
կան. միածին Որդի և Բանդ Ած. ընդ քեզ բարե-
բանեմք Ած հարցըն մերոց: Որ զընտրեալսն ի
քէն յառաջ քան ըզլինելն աշխարհի. առաքեցեր
ընդ տիեզերս աւետաւոր արքայութեանդ՝ ընդ քեզ
բարեբանեմք Ած հարցըն մերոց: Որ ըստ մար-
մնոյ չարչարանացըն քոց՝ եղեն կամաւ չարչարակից.
որոց ի փառսըն հայրենի լինել նըման քեզ խոս-
տացար՝. ընդ քեզ բարեբանեմք Ած հարցըն մերոց:
Դ.. ԶՏր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա
յաւիտեան: փառք Հօր: Եկեղեցիք հեթանո-
սաց հաստատեալք առաքելովքն. զնոյն որով
երկինք հաստատեցան. օրհնեցէք եւ բարձր ա-
րարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Քա-
հանայք և ժողովուրդք միաբան ձայնիւ երգով՝
զմայրն ճշմարտին որ ծնաւ առաքելովքն.
օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Կ:

Աստուածածին ամպ լուսաւոր. որ ըզցօղըն կե-
նաց հեղեր յերկիր բանաւոր. և զնախամօրըն շի-
ջուցեր պատուհասն ըզհուր. անդադար ձայնիւ

զքեզ բարեբանեմք. եւ հզօր երգով մեծացու-
ցանեմք: Փառք հօր: Տեղի անտանելի բանին.
և երկիր վայրափայլ յորում լոյսն ադանիցի. եւ
արեւելք արեգականն արդարութե. անդադար
ձայնիւ զքեզ բարեբանեմք. եւ հզօր երգով
մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Օրհնեալ կատա-
րումն մարգարէից. կուսական քո ծննդեամբ ա-
րով բնութեան քակեցան օրէնք. հրաշքն սեռի-
ցըն փոխադրեալ ի լուսաձեւ խորանսն. անդա-
դար ձայնիւ զքեզ բարեբանեմք. եւ հզօր եր-
գով մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.Կ:

Հայր առաքող միածնին որում նոր յաշխար-
հի զընտրեալսն քո իսկըզբանէ. աղաչանօք
սոցա ողորմեա մեզ: Փառք հօր: Փառացըն
հօր ճառագայթ որ շնորհեցեր աշխարհի լուսաւո-
րիչ զառաքեալսն. աղաչանօք սոցա ողո-
րմեա մեզ: Այժմ և միշտ: Կենդանարար որ հոգի
որ ի լեզուս բաժանեալ հանգեար ի նոր առաքեալսն.
աղաչանօք սոցա ողորմեա մեզ:

Տէր յերկնից Գ.Կ:

Այսօր երկնայնոցըն վայր իջեալ տօնեն
ընդ հողեղէնս. զյիշատակ սուրբ առաքելոցն
Քրիստոսի որք դասեցին ըզմարդիկ ընդ հրեշտակս.
փառաւորելով ի նոր զերրորդութիւնըն համագոյ:
Փառք հօր: Այսօր պայծառացեալ եղեալ վերնոցն
որդիք նոր Սիոնի. ի յիշատակի լեզուացն հրե-
ղինաց. որովք եղեն ըզգեցեալք ըզՔրիստոս. փա-
ռաւորելով ի նոր զերրորդութիւնըն համագոյ: Այժմ

և միշտ ։ Այսօր քահանայք և պաշտօնեայք որ եկեղեցւոյ տօնախմբեն զյիշատակ լուսոյն ծագողաց . որով մաքրեալք ծնութեամբ որ Հոգւոյն. փառաւորելով որ զերրորդութիւնն համագոյ ։

Առաքելոց և Հայրապետաց Դ.Կ. ԱՏ ։

Առաքեալք Աստուծոյ . ընտրեալք խորհրդեանն նախ քան զաշխարհս . որք արժանի եղէք տեսանել զանհասըն հրեղինաց . բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ ։ Բարեկամք Քրիստոսի . հաղորդակիցք աստուածայնոյն խորհրդոցն . որք ի հոսանուտ մեղաց ծովէս վերածէք զմարդիկ ի կեանս անմահս . բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ ։ Փառք Հօր ։ Պերճագոյն քան զերկինս . անճառելւոյն հասէք երանութեն . որք ի գալստեան Տեառն նստիք յերկոտասան աթոռսն Քրիստոսի . բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ ։ Այժմ և միշտ ։ Պսակք անմարմնոց հրեշտակաց . քեզ երանեն ամենօրհնեալ կոյս Մարիամ . որ զէակից Բանն որ ընդ Հօր կրեցեր ի քեզ անսերմնապէս . առ նա միշտ բարեխօսեա . վասն քաւութեան մեղաց մերոց ։

## Դ. ԿԻՒՐԱԿԷ

### ԽԱՂԻ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ ։

Որ բարեբանեալդ ես ի դասուց քերովբէից անմահ թագաւոր . օրհնեալ ես և գովեալ յաւի-

տեան։ Որ խոնարհեցար յերկնից և առեր մարմին զնախաստեղծին Ադամայ. օրհնեալ ես եւ գովեալ յաւիտեան։ Որ նստիս ի վերայ չորեքկերպեան կենդանեացդ քո Աստուած. օրհնեալ ես եւ գովեալ յաւիտեան։

Դ․ Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան։ փառք Հօր։ Գիշերք ըզՏէր օրհնեցէք։ Զգնդաստեանն ի յաթոռ փառաց. ըզքերովբէականն ի հրեշտակաց. ըզնա անդադար օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան։ Այժմ և միշտ։ Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ։ Որ յաւէտ փառաց Էութեանն՝ գոհան զուարթունք երկնից. ըզնա անդադար օրհնեցէք բարձր արարէք յաւիտեան։

Մեծացուսցէ Դ·Զ։

Աստուածածին գերագոյն քերովբէից։ 896։

Ողորմեա Դ·Զ։

Ի խաչ ելեր Բանդ Աստուած. մարմնացեալդ ի կուսէն կամաւ Հօր և Հոգւոյն. ի փրկութիւն ազգի մարդկան։ փառք Հօր։ Ի գերեզմանի եդար անապական զի զմահու լուծութիւնս մեր բարձցես. ըզգերեալսն փրկեսցես ի ձեռաց մահու։ Այժմ և միշտ։ Ի յերրորդ աւուր յարեար ամենափրկիչ. ի յերկինս համբարձար ընդ աջմէ Հօր նստար. փառաւորեալդ ի հրեշտակաց. երկրպագեալդ ի սերովբէից։

Տէր յերկնից Դ·Զ։

Կանանցն կանխելով ի թաղումն կենդանւոյն. տեսին ըզվէմն ի դրացն ի բաց մերժեալ։ փառք

ձօր ։ Թամփուր ընդերկրեալմանն եւ ամենայն տեսա-
նելին. եւ տրտմութիւն լալին յուսահատանալք ։ Այժմ
եւ միշտ ։ Մայր խաչեցելոյն զի լոյս տրտմագնե-
ցեալ. քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ ։

## Դ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ա. Փոկասու հայրապետին եւ Ներսեսի
հետեւողի առաքելոցն ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Յուսացեալքն ։ 367 ։

## Դ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ա. Կուսանացն Թեկղի եւ Վառվառեայ ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Մի ես Տէր զօրութեանց ։
369 ։ կամ [illegible] Դ.Կ. Այսօր զան-
յաղթելի ։ 511 ։

Մանկանց եւ Համբ. Դ.Կ. Բ.Կ. պարծի ։ 665 ։

## Դ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Օրհնեալ ես Տր ։ 435 ։

## Դ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ա. Պանդալէոնի բժշկին եւ Երմոլեայ քա-
հանային եւ Նուպլպաքսեայ կուսին ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Կ. Ըստ քեզ Ա.Ճ. ։ 373 ։
Մանկանց եւ Համբ. Դ.Կ. Յիշատակ Քնի ։ 513 ։

## Դ. ՈՒՐԲԱԹ

Պահոց ։

## Գ. Շ Ա Բ Ա Թ

Ս. Կալիստրատոսի, և քառասուն և ինն վկայից, և Գուկիանոսի քահանայի:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Կ. Որ զհրաշափառ: 375:

## Ե. Կ Ի Ւ Ր Ա Կ Է

### Խ Ա Չ Ի

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Ձ:

Որ ի քառակերպեան նըստիս յաթոռ. անըմռնելի ձայնիւ օրհնիս ի պայծառ դասուց հոգեւոր երգով. Արդ հարցըն մերոց: Որ ի վեցթեւեան սրովբէսըն հանդիսիւ. և խնամես զքո զարարածըս. նըշանաւ խաչի քո ըզմեզ ապրեցուցեր. Արդ հարցըն մերոց: Որ նըստիս ի յաթոռ փառաց առանց բարձրեալ գովեալ. նըշանաւ խաչի քո զմեզ ապրեցուցեր. Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ըզտէր Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Այսօր փրկական որ խաչիւըն զուարճացան արարածք. ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Փառք Հօր: Այսօր մտեալ ի գերեզման աւերեաց ըզդըժոխս. ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Այժմ և միշտ: Այսօր ի յերկինս համբարձաւ ընդ աջմէ Հօր նըստաւ. ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք:

Մեծացուսցէ Դ.Ձ:

Խորանայարկ կամարանման յօրինեցար: 708:

Ողորմեա Գ.Զ.:

Թ.իւնս իմ: Ողորմեա մեզ Աստուած: Որ ի յերկնից ի Հօրէ իջեր անճառելիդ Որդի. նոյն ինքն ըզդժոխս աւերեցեր. ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Որ ըզճառագայթս Աստուածութեան երևեցուցեր փրկիչ. ըզպահապանս նորին զարհուրեցուցեր. ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Որ ձեռօքըն Յովսեփայ շօշափեցար փրկիչ. առ աշակերտսըն մտեր դրօքըն փակելովք. ողորմեա մեզ Աստուած:

Տէր յերկնից Գ.Զ.:

Ահագին ձայնիւդ քո Տէր. ի վերայ խաչին գոչացուցեր զարարածս ամ. զերկնայինս և զերկրաւոր բնութիւնս: Փառք Հօր: Ահագին երևմամբն հրեշտակին. զարհուրեցոյց ըզկանայսն ասելով. զի խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս: Այժմ և միշտ: Եւ յաւէտ զօրութեան Ածորդւոյն. զարհուրեցան կարապետքըն դժոխոցն ասելով. համբարձէք իշխանք ըզդրունս ձեր ի վեր:

## Ե. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Տօն գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի, և սրբոց հարցն Թաթլոյ և Վարոսի և Թովմասու և Անտոնի և Կրօնիդեայ, և եօթն խոտաճարակացն:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Կ. Արմատ ճշմարիտ: 524:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց. Ա.Կ. Որ զլոյս ածային: 577:
Մաղթանք Գ.Կ. Ածային հաւատոյ: 579:

ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձ Բ.Զ.:

Յաւուրց վերջին ժամանակի շինեաց իւր տուն զեկեղեցի. Հօրըն գըթած երկնաւորի խնամու-

*թիւն Բանն և Որդի. նա ընդմիջմին իւր ի ղեն-լի զգինի արեանն ի խառնելի. որ մին Հրաշից ներ-գործողի տուք օրհնութիւն յաւիտեանս։ Որ եւ զծառայս իւր առաքեաց ի խառնելի սըն Հրաւիրեաց. զքաղցեալս ի Հաց մարմնոյն կոչեաց՝ զգինի արեանն եւ ծարաւեաց. յայս կոչմանէս ապըստամբեաց՝ ազգ Հիւսիսոյ Հայաստանեայց. այն որ ըզՀրաշս այս ներգործեաց մեզ նորագոյն յոյս Հաստատեաց։ Հաւատարիմ և իմաստուն Գրիգորիոս անուն արթուն. նըման խաչի մաՀուամբ Որդւոյն չարչարանօք իւր սուրբ մարմնոյն. զազգս Հայոց կոչեաց ի նոյն գանս և Հարուածս եւ խրատագոյն. միայն Բանին Հօր իմաստուն տուք օրհնութի զօրըք Հրաբոն։ Ծնեալ մերոյ Հայրապետին՝ Գրիգորիոս լուսաւորչին. Ղեւոնդիէ պատրիարքին՝ ի Կեսարիա Հայքն առաջին. մեզ մարգարիտ բերեալ անգին՝ զնըշխար սըրբոյ Կարապետին. այսօր Հրաշից ներգործողին՝ տուք օրհնութի ազգ Հողածին։ Ըզմանուորըն փըրկական՝ ի գալ փըրկչին ի Յորդանան. Նոյն արուսեակն արեգական ծագեալ յաշխարՀըս Հայաստան՝. զրօնք զըժոխոց խորտակեցան որք յեննակնեան տեղիսըն կան՝. Հոյլքըն դիւաց Հալածեցան՝ Հրեշտակք ընդ մեզ դասակցեցան։ Ի ձեռն առեալ լուսաւորչին՝ զնըշխար սըրբոյ Կարապետին. Շուրջ պարըսպեալ զկողմ աշխարՀին՝ շնորՀօք աջոյն զԲանին օծողին. ասա թշնամիք մի զօրասցին՝ մի Հեղձուածոց աղանդ բուսցին՝. յերկնից դայր ձայն ածային՝ թէ Հայցուածք քո կատարեսցին։ Մե երջանիկ երկնաՀանդէս՝ ճգնօղ Անտոն և Կրօնիդէս.*

ի հողանիւթ ծընեալ զարմս՝ գերազանցեալ ի բնութէս․ զձեզ պարգեւեաց որ Ղեւոնդէս՝ մեզ երկնային հրեշտակ յերկրէս․ ի՟ վերջալից մարմնոյ ախտէս՝ փարատեցէք ի խոցմանէս։ Ի մէջ երկրէ տանէն Յոհնաց՝ Հայոց տուեալ պարգեւք փառաց․ վարժիչ կարգաց կրօնաւորաց՝ հոյլք միանձանց ճգնաւորաց․ ծաղիկ բուսոյ բանաւորաց՝ բըժըշկական դեղ հիւանդաց․ ի՟ դիւական այսոց չարաց՝ զմեզ փրկեցէք ի փորձանաց։ Նախ լուսոյ Հօր միածնի՝ ճշմարտութեանըն քարոզի․ պարթեւազնին Գրիգորի՝ պարգեւեցայք գանձ կենդանի․ նոյն եւ նշխարքըն հոգւոյ՝ Աթանագինեայ սուրբ վկայի․ որով մարմնոյս վէրք ողջասցի՝ յանցանք հոգւոց մեր քաւեսցի։ Եօթնաստեղեան երկնից կամարք Աստուածութեանըն կամարարք․ ճգնող մարմնով խոստաճարակք մաքուր հոգւով լուսոյ տաճարք՝․ եկեղեցւոյ բարձր աշտարակք՝ տանըս Հայոց ամուր պատուարք․ զձե՟զ աղաչեմք ճգնող սուրբ հարք՝ լինել անձանց մեր բարերարք։ Փառք Հօր։ Ամենայն զօրացըն պարսկական մարտիւ ընդ զօրըս հայաստան․ դուք մաղթեցէք աղերս հայցման՝ աղաչելով զԱստուածըն Բան՝․ վասն Յովհաննու ձայնին գոչման՝ կարապետին սըրբոյ հայցման՝․ պա՟հել զերկիրս այս անսասան՝ զտեղի արեանըն ձեր հեղման։ Այժմ եւ միշտ։ Պաշտեմք առ ձեզ սուրբ նահատակք հողանիւթեայ մարմնով հրեշտակք՝․ մարտիրոսք սուրբ եւ վըկայք՝ որ սոյդ մահուամբ կատարեցայք․ յորդոր տօնիս ձեր յիշատակ՝ արեան սրբոյդ հեղման վը-

տանկ. ա՛ռ Տէր լիցի սուրբ պատարագ պաշտել ընդ մեզ միշտ անվրդովանգ ։

# Ե. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Անանիայ առաքելոյն և սրբոց առաքելոցն Մատաթիայ և Բառնաբայ, և Փիլիպպոսի և Յովհաննու, և Շիղայի և Սիղուանոսի գործակցացն Պօղոսի, և երկոտասան վարդապետացն ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Զ. Նորանեցի որ առա ։ 659։
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Աքանչելագործ ։ 570։
ՄԱՇՏՈՑ Ա.Կ. Աշակերտք Քնի ։ 752։
ՅԵՐԵԿՈՅԻ Հարց. Ա.Զ. Ի քէն հայցեմք ։ 386։

# Ե. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ ։

Աւուրբ Աստուած Հայր անըսկիզբն. աշխարհի ողորմեա մարդասէր. Արծ հարցըն մերոց ։ Աւուրբ Արծ Որդի միածին. մեղաւորացըս թողութիւն շնորհեա մարդասէր. Արծ հարցըն մերոց ։ Աւուրբ Արծ Հոգի ճշմարիտ. ի հասեալ բարկութէ ամբարցի մարդասէր. Արծ հարցըն մերոց ։

Գ.. Զտէր օրհնեցէք բարձր արարէք ընդ յաւիտեան ։ փառք Հօր ։ Հնոցըն ցօղանալ ընդ իջանել հրեշտակին. և մանկանցն օրհնաբանեալ անէին. բարձր արարէք ընդ յաւիտեան ։ Այժմ և միշտ ։ Յարուցեալ Ազարիանք բարբառեցան. գերավեհական օրհնութիւն երգելով. բարձր արարէք ընդ յաւիտեան ։

Մեծացուսցէ Գ.Կ:

Զաստուածածինն և զմիշտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց և փրկիչ անձանց մերոց: փառք Հօր: Խըն-դա և ուրախ լեր ամենօրհնեալ մայր. քանզի որ ի քէն ծնաւ ընդ մեզ Աստուած ի փրկու-թիւն անձանց մերոց: Այժմ և միշտ: Գանձ անապական գտար սուրբ Ածածին. բարեխօսեա վասն Այ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

Ողորմեա Գ.Կ:

Փրկեաս Աստուած աստուածոց. ողորմեա: փառք Հօր: Անօրէնութեամբ ի մեղս երկնեաց զիս մայր իմ. աղաչեմ փրկիչ. ողորմեա: Այժմ և միշտ: Ախտաւորեալ մեղօք անկանիմ առ քեզ փրկիչ. մի անտես առներ. ողորմեա:

Տէր յերկնից Գ.Կ:

Զամենակիրն Աստուած զհայրն ամենակալ. բա-րեբանեցէք ընդ զուարթունս երկնից: փառք Հօր: Զայն ի Հօրէ ծնեալ զՈրդին միածին բարե-բանեցէք հրեշտակային ձայնիւ: Այժմ և միշտ: Եւ զնորոգօղ նոր զՀոգին ձայնիւ ցնծութեամբ. բարեբանեցէք անլռելի ձայնիւ:

# Ե. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Դիոնեսիոսի արիսպագացւոյն, և սրբոց առաքելոցն Տիմոթէոսի, և Տիտոսի, և այլոց աշակերտացն Պօղոսի:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Կ. Իմաստութի: 843:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Որ ՚ի Հօրէ: 847:
Մանկունք և Հարց. Գ.Կ. ՄՏ. Առաքեալք: 849:

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Ե. ՇԱԲԱԹ

Ա. Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու, և Ղուկիանոսի քահանային. և սրբոց վկայիցն Տարագոսի, Պրոբոսի, և Անդրոնիկոսի, և Պեղագեայ կուսին:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Զ. Նորանեղի որ առա: 659: ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Զ. Ճակից Բանդ: 663: Մանկունս Ա.Կ. Աշակերտք Բանի. 752: Կամ Գ.Կ. ԱՏ. Առաքեալք Ա.Յ: 840:

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Ա.Զ. Մի ես Տր: 384: Եւ Ի քեն հայցեմք: 386:

## Զ. ԿԻՒՐԱԿԷ

ԽԱԶԻ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ:

Յօրժամ ի խաչին բևեռեցար Քրիստոս Աստուած. և զԱդամ նորոգեցեր ի նախաստեղծ բընութիւնն. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց: Մի ի սպասաւորէն ապտակեցար. և ի զինուորէն գեղարդեամբըն խոցեցար. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց: Թաղեցար ի մէջ երկրի և յերրորդ աւուր յարեար ամենակարող փրկիչ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ.. Գործք Տեառն զՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս: փառք Հօր: Գիշերք

ընդ Տէր օրհնեսցէք։ Որ էիր յէութեան ի բարձունս. և ի Հօրէ առաքեցար ի յերկիր. վասըն մեր մեղաւորացս. յիշեա զմեզ Տէր։ Այժմ և միշտ։ Իսրայէլ ընդ Տէր օրհնեսցէ։ Որ բանիւ քո բարձեալ ունիս զամենայն արարածս. և ի խաչին վասըն մեր բևեռեցար. յիշեա զմեզ Տէր։

Մեծացուսցէ Դ.Զ։

Այր լուսոյ Մարիամ սուրբ կոյս. որ ընդլայն առ ի Հօրէ ծընար մարմնով. և եղեր առաւելք արեգական արդարութեան. Հոգևոր երգով ընդ քեզ սրբուհի մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Քերովբէից գերագոյն էիր աթոռ և ծառ կենաց անմահական պտղոյն. տապանակ կտակի Բանին և սափոր ոսկի երկնային մանանային. Հոգևոր երգով ընդ քեզ սրբուհի մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Քեւ բացաւ սրովբէափակ դուռըն դրախտին. և քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի նմա զենեալըն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց. Հոգևոր երգով ընդ քեզ սրբուհի մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Զ։

Անեղական Բանիդ Հօր և Հոգւոյդ պատճառ. որ ծընար ի կուսէն. ընդ քեզ ծանեաք Աստուած աղաչեմք ողորմեա ազգի մարդկան։ Փառք Հօր։ Սերովբէիցն ահաւոր և դատաւոր ի կենդանեաց և մեռելոց՝ որ ի խաչին բևեռեցար. ընդ քեզ ծանեաք Աստուած աղաչեմք ողորմեա ազգի մարդկան։ Այժմ և միշտ։ Կենդանութեան աղբիւր և պարգևատու առատ ողորմութեան. որ յարեարդ

ի մեռելոց. ընդ քեզ ծանեաք Աստուած աղաչեմք ողորմեա ազգի մարդկան :

Տէր յերկնից Դ.Զ :

Որ ի վերդ ես քան ըզմիտս և զխորհուրդս համագոյական Եղելոցս արարող. ի Հօրէ առաքեցար վասն մեր և մարմնացար ի ն՚ր ի կուսէն : փառք Հօր : Անքննին ի յէութեն Ած. տնօրինեցար յարգանդի կուսին. ապրեցուցանել զնախաստեղծին ծնունդն. և վերստին նորոգել ի փառս : Այժմ և միշտ : Ոչ չառանցար մարդ եղանիլ Ած. այլ և խաչի համբերեալ զթաղումն յանձն առեր զերեքօրեայ. և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս :

## Զ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Ղունկիանոսի հարիւրապետին, և Յովսեփայ Աստուածահօրն, և Յովսեփայ արեմաթացւոյն, և բարեկամին Քրիստոսի Ղազարու, և քերց նորա Մարթայի և Մարիամու :

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Կ. Իմաստութի երկ : 843 :
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Որ ՚ի Հօրէ առա : 847 :

Մանկանց Գ.Կ. ԱՏ :

Յովսէփ ՚ի քեզ հաւատացեալ Դիզանոսի աղերսէր. շնորհեա զտէրունեանդ մարմին : փառք Հօր : Զանապական զաստուածացեալ մարմինդ պատեալ որ կտաւովք եւ եդ ի գերեզմանի : Այժմ և միշտ : Որ արարիչդ ես արարածոց հանգուցեալ ի քերովբէս. վիմով կնքեցար յերկրի :

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Կ. ԱՏ. Խաչաբերից : 309 :

## Գ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Թէոդորիտոսի քահանային և Զենոնի զինուորին, և Մակարայ, Եւդոքսիոսի, և Ռոմելայ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Զ. Օրհնեալ արդար: 345:

## Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Ա.Ծ բարձրեալ: 436:

## Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս. Խարեթեանց տասն հազար և երկերիւր մարտիրոսացն, և Ատոմեայ վկային:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա.Կ. Տր̅ Ա.Ծ արարիչ: 348:

Մանկունք և Համբարձի Գ.Կ:

Այսօր ընդ անմարմնոցն դասակցեալ պարէ եկեղեցի. տօնելով ըղձիչատանկ բիւրաւոր վկայիցն. որք ընթացան ի վերինն Երուսաղէմ. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Այսօր բանաւոր ողջակիզաց գառանց բիւրաւորաց ի վերայ կայծականց բորբոքեալ բոցոյն զերից մանկանցն երգէին զօրհնութիւնս. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Այսօր կամաւոր քեզ պատարագ զանձինս ընծայեցին. ի վերայ սրբութեան սեղանոյ. և ընկալան ըզպըսակս անապական. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Փառք Հօր: Այսօր ընծայէ եկեղեցի զմանկունս առագաստի երկնաւոր փեսային. որք ընդ հրեշտակս երգակցեալ ցընծա-

թեամբ. փառաւորեալդ զթագաւորդ Քրիստոս,
Այժմ և միշտ: Այսօր ժողովեալ հաւատացեալ-
քըս սուրբ Երրորդութեդ ի տաճարի ծըննդութեն
վըկայիցըս. խընդրելով զթողութիւն յանցանաց.
փառաւորեալդ զթագաւորդ Քրիստոս:

## Զ. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Զ. ՇԱԲԱԹ

Ս. Դեմետրեայ վկային, և Բասիլեոսի
քահանային:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԿ. Որ բարձրեալդ: 349:
ՅԵՐԵԿՈՅԻ Մեղեդի խաչի: Նշան երկիր: Մկ.
Հարմարեալ ԱՁ. Հրաշակերտ: Տէր ի վեր:
Ողջոյն Հարմարեալն Տէր. Մի խաչիս: Կեցո. ԱՂ.
Պահպանեա:

## Է. ԿԻՒՐԱԿԷ

Տօն Գիւտի խաչին:

Օրհնութիւն ԱՁ:

ՐԱՇԱԿԱՆՔՑ և զօրեղ փայտ խաչի քո Քրիս-
տոս. դաւանեալ զօրութեան ի յերկրի երև-
եալ. Ընկալք ժողովուրդք Երկրպագեսցուք: Օր-
հնեցին ծածկեալ զանթաքչելի ընդդիմերն. փա-
փագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ.
Ընկալք ժողովուրդք Երկրպագեսցուք: Սա է զէն
յաղթութեան հաւատացելոց. ախոյեան և կնիք
յաղթող ընդդէմ թշնամւոյն. Ընկալք ժողովուրդք
Երկրպագեսցուք:

† Անճառելի երեւումն երեւեալ զըշխոյին. նշա-տելով յատենին Երուսաղէմ. խնդրէր ըզպա-տուական փայտ խաչին. յոր ըզՄեսիայն բեւե-ռեցին: Մեծասաստ հրամանաւըն ժողովեալ Հըրէից. ցուցանելով նոցա ըզպատուական փայտ խաչին. յոր ելեալ բարձրացաւ արարիչն արարա-ծոց: Ընդ յայտնել նոյն խաչին ի տեղւոջըն սըր-բութեան. բուրմամբ անուշահոտ խընկոց. եւ լըցան տիեզերըք մեծապէս պարգեւօք:

† Որ ըզնախնեացն առիթ մահու փայտ կենաց շնորհեցեր. եւ ետուր յաղթութիւն մահացու բը-նութեան. ի սմա Բանիդ Հօր Երկրպագեսցուք: Որ զանձառ լուսոյդ բարձօղըն ծածկելով Հը-րէից. ի յերկրէ ծագեցեր զերկնային ճառա-գայթ. ի սմա Բանիդ Հօր Երկրպագեսցուք:

Որ զանարատ բազուկս քո ի խաչին տարա-ծեցեր Քրիստոս Աստուած. եւ նշան յաղթու-թեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա: Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած. զաւազան զօրութեան ետուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա: Որ ըզմեռեալըն ի ճաշակմանէ փայտին յանցանաց. կենաց փայտիւըն կենագործեցեր. սովաւ ըզկեանըս մեր պահեա:

Մեր խաչըն օգնական հաստատեցելոց կանգնեցաւ ի յերկրի յաղթող թըշնամեացն. եկայք ժողո-վուրդք Երկրպագեսցուք: Արարիչն Ած բար-ձրացաւ ի խաչին եւ զմեռեալըս մեղօք փայտին ճաշակմամբն. ի սմա նորոգեալ կենդանացոյց: Ի միւսանգամ գալըստեան Աստուածորդւոյն. սուրբ

խաչին երևի և լուսաւորէ. զի՛ նա է յոյս հաւա-
տացելոց։

ՅԱՐ. Անճառելի Հօր Լուսոյ. ի խաչ ելեր կա-
մաւ Հօր ողորմեա։ Անմահութեանց տուող Քրիս-
տոս ի գերեզմանի իջեր ող մարդ. ողորմեա։ Եւ
յերրորդ աւուր յարեար յոյս յարութեան ցու-
ցար մեզ ողորմեա։

Որ խոնարհեցար ի յերկնից և իջեր ի յերկիր
միածին Որդի և Բանդ Աստուծոյ. ողորմեա բա-
նաւոր հօտի։ Որ կանգնեցեր զխաչ քո ի մէջ
երկրի. և նովաւ բարձրացար փրկեցեր զմոլե-
ղեալս. ողորմեա բանաւոր հօտի։ Թաղեցար ի
նոր ի գերեզմանի. և յարուցեալ յերրորդ ա-
ւուր ի յերկինս համբարձար. ողորմեա բա-
նաւոր հօտի։

ՀԳ. Որ ի քերովբէական կառսդ հանգչիս. այս-
օր իջեր յերկնից ի դասս առաքելոցն ո՛վ Հոգի.
օրհնեալ ես Թագաւոր անմահ։ Որ գնաս ի վե
թևոց հողմոց. այսօր ի հրեղէն լեզուս բաժա-
նեալ հանգեար յառաքեալսն ո՛վ Հոգի. օրհնեալ
ես Թագաւոր անմահ։ Որ խնամես տնօրէնութեամբ
զքո զարարածս. այսօր եկիր ի հաստատել զեկե-
ղեցի քո ո՛վ Հոգի. օրհնեալ ես Թագաւոր անմահ։

ՀՆ. Որ անճառ տնօրէնութեամբ ի փրկութիւն ազգի
մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած. այսօր
հանգոյ զննջեցեալս և զմեր զննջեցեալսն ընդ սուրբս
քո. որ միայն ես մարդասէր։ Որ անչարչարե-
լիդ մարմնով եկիր կամաւ ի չարչարանս. և ի
խաչին բևեռեցար հեղեր զարիւն ի փրկութիւն.

այսօր հանգուս և ըզմեր ըզնըննջեցեալսն ընդ սուրբըս քո. որ միայնդ ես մարդասէր։ Որ թաղմամբն երեքօրեայ ըզբըռնութի մահու լուծեր. և կոխեցեր զըշխանն մահու և վերածեր ըզնընջեցեալսն. այսօր հանգուս և ըզմեր ըզնընջեցեալսն ընդ սուրբըս քո. որ միայնդ ես մարդասէր։ Որ հրաւիրեցեր յանմահութի զազգըս մարդկան. անմահութեց բաշխօղ Քրիստոս. աղաչանօք Աստուածածնին. այսօր հանգուս և ըզմեր ըզնընջեցեալսն ընդ սուրբըս քո. որ միայնդ ես մարդասէր։

Մծ. Որ ըզհրեշտակին ըզձայնըն լըւեալ հիացեալ բերկրեցար. բարեխօսեա վասըն մեր. մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։ Որ ըզհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր անկիզելի մորենի. բարեխօսեա վասըն մեր. մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։ Փառք Հօր։ Որ զանշօշափելին յեւց ի գիրկըս քո բարձեալ դիեցուցեր կաթընասուն. բարեխօսեա վասըն մեր. մեք օրհնաբանեմք զօրհնեալդ ի կանայս։

Այժմ և միշտ։ Որ անհաւոր հրաշիւք ցուցեր ըզնըշան խաչի քո. յայտնելով աշխարհի յարութեամբ պատանւոյն. ի սմա Խանիդ Հօր երկըրպագեսցուք։

Ալէլու խաչէ 'ի յայնէն։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԲԶ։

Որ փափագելի տենչմամբ եկեալ ի քաղաքն Երուսաղէմ ծ'ծանէր դըշխոյն. խընդրէր ըզփայտ խաչին. զոր բարձեալ մարմնով յինքեան զԱս-

տըւած հայցըն մերոց։ Յորմէ զարհուրեալ դո-
ղային զաւրք բազմութեան հրեշտակացն ի յահէ Թա-
գաւորին. անդամամբ նոր հոգւոյն ցուցան պատուա-
կան փայտ խաչին. որ բարձեալ մարմնով յին-
քեան զԱստուած հայցըն մերոց։ Աւետի բուրե-
լով խնկոց անուշահոտութեան ի տեղւոջըն սրբու-
թեան. ցընծացաւ Երուսաղէմ ընդ յայտնիլ սըր-
բոյ խաչին ի տեղւոջըն Գողգոթայ. որ բարձեալ
մարմնով յինքեան զԱստուած հայցըն մերոց։

Գ․․ ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք
ըզնա յաւիտեան։ Փառք հօր։ Այսօր նշան
սուրբ խաչին ի յերկրի երևեցաւ. օրհնե-
ցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։
Այժմ և միշտ։ Այսօր ընդդէմ թշնամւոյն զէն
անպարտելի ցուցաւ մեզ. օրհնեցէք և
բարձր արարէք ըզնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Ա.Զ։

Երանելի ածասէր սուրբ դըշխոյն. եկեալ
ի քաղաքն Երուսաղէմ. խընդրէր ըզփրկական
ծագումըն մեծի փայլմանն. և քարոզէր նոցա
զմորենին վառեալ որ ոչ այրէր. մեծացուցանե-
լով ըզծընընդեանըն ի կուսէն։ Փառք հօր։ Ի
խոշտանգեալ ըզդասըս հրէիցն. խոստովանէր
Յուդա. եկեալ ի տեղին Գողգոթայ հաւատով.
և քարոզէր նոցա զխաչն ընդ որ եմուտ Բանն
Աստուած. մեծացուցանելով ըզծընընդեանըն ի կու-
սէն։ Այժմ և միշտ։ Եւ համբարձեալ ըզձայնըն
Յուդայի խընդրելով ի Տեառնէ ըզտէրունականն ան-
նեցուն որ ըզխաչն. և հաւատով գոչէր եկայք

երկրպագեսցուք ածային սուրբ նըշանիս․ մեծացուցանելով ըզծընեալըն ի կուսէն:

Գ․ Կիւրղէ խաղէն․ Այսօր եկեալ:

Ողորմեա Բ․Ձ:

Այսօր խընդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի գողգոթա․ ի ձեռն աստուածածնէր դըշխոյին․ եկայք հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս: Փառք Հօր: Այսօր ընծայէ գողգոթա ըզծածկեալն ի յերկրի․ վերաբերեալ անուշահոտ խընկովք․ ի ձեռն երանելոյն Յուդայի․ եկայք հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս: Այժմ եւ միշտ: Այսօր ի ձեռըն փրկական սուրբ խաչին կենագործի պատուանին մեռեալ․ եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր․ իսկ մեք Քրիստոսի հաւատացեալք երկըրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս:

Տէր յերկնից Բ․Ձ:

Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից․ որ եղեւ մեզ պահապան յաղթող ընդդէմ թըշնամեացն․ աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր: Բարձրեալ թագաւոր որ վասըն մեր եղեր ի խաչ․ եւ բարձեր սովաւ զյանցանս նախաստեղծին Ադամայ․ աղաչեմք սովաւ փըրկիչ պահպանեա զանձինս մեր: Գըլուխ սըբ հաւատոյ եւ փայտ կենաց մարդկան յայտնեալ․ զոր տեսեալ այսօրն պըղծոյ կործանեցաւ անկանգնելի․ աղաչեմք սովաւ փըրկիչ պահպանեա զանձինս մեր: Փառք Հօր: Գողացաւ թըշնամին ընդ յայտնել սրբոյ խաչին․ եւ ի յահէ փառաց նորա կոր-

ծանեցաւ յանդունդս երկրի· աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Այժմ և միշտ։ Երկինք ցընծայցին և երկիրս ուրախանայր· քանզի փրկիչ ցուցաւ մ՛ք խաչն և լուսատու տիեզերաց· աղաչեմք սովաւ փրկիչ պահպանեա զանձինս մեր։

Առաւօտու Երգ· Նոտուր երկնի։ Որպէս փրկե։
Զար· Առասցուք խաղ գանձ։

ՕՐՀՆԷ ԱԶ ԱՍՏԷՆ Աողջոյն Դ·։

Կց· Աշանեցաւ առ։ փխ· Ի կարգալ։ 786։

Ընթերցուած յԱռակաց։ ԺԴ· 1։

Դարձեալ նթէ 'ի նաւ ելեալ որ ընդ։ 786։

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ։ ԿԳ· 22։

Տէր հայր մեր, Տէր դատաւոր մեր, Տէր փրկիչ մեր, և նա փրկեսցէ զմեզ· խզեցան պարանք քո զի ոչ հանդարտեցին, նոյնպէս և կայմն խոնարհեցաւ և ոչ պարզեսցէ զառագաստն, և ոչ արձակեսցէ զնշանն մինչև մատնեսցի 'ի կորուստ։ Այսուհետև բազում կաղք աւար առնուցուն, և մի՛ ասասցեն թէ վաստակեցաք, ժողովուրդն որ բնակեալ իցէ 'ի նոսա, զի թողան մեղք նոցա։ Մատերո՛ւք հեթանոսք և լուարո՛ւք, ունկն դի՛ք իշխանք, լուիցէ երկիր և որ 'ի նմա տիեզերք, և ժողովուրդք որ 'ի նմա։ ԿԴ· 1։

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։ Ա· 18։

Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է· այլ փրկելոցս մեզ զօրութիւն Այ։ Զի գրեալ է· կորուսից զիմաստութիւն իմաստնոց· և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաստուն· ո՞ւր դպիր· ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ· ո՞չ ապաքէն յիմարեցոյց Ած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։ Քանզի իմաստութեանն Այ ո՛չ ծանեաւ աշխարհ

իմաստութիւն զԱծ. հաճեցաւ Ած յիմարութե քա-
րոզութեանն՝ ապրեցուցանել զհաւատացեալս։ Իսկ
որովհետև Հրեայք նշան հայցեն, և հեթանոսք ի-
մաստութիւն խնդրեն. մեք քարոզեսցուք զխաչեցեալն
Քս, Հրէից գայթագղութիւն. և հեթանոսաց յիմա-
րութիւն։ Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հե-
թանոսաց՝ զՔս, Այ զօրութիւն և Այ իմաստութիւն։ 24։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան։

Ոլթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ ԻԴ. 27։

Տէրն մեր ՅՍ ՔՍ ասէ.

Զի ոպ փայլակն որ ելանէ յարևելից և երևի
մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որ-
դւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովես-
ցին արծուիք։ Վաղվաղակի յետ նեղութեան աւ-
ուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ
տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և
զօրութիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երևեսցի
նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծես-
ցին ամենայն ազգք. և տեսցեն զորդի մարդոյ ե-
կեալ 'ի վր ամպոց երկնից զօրութե և փառօք բազ-
մօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ,
և ժողովեսցեն զընտրեալս նր 'ի չորից հողմոց՝ 'ի
ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց։ Ի թզենւոյ անտի
ուսարուք զառակն. զի յորժամ նր ոստքն կակղաս-
ցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։
Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ, գի-
տասջիք թէ մերձ է 'ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ
ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ եղիցի։ Երկինք
և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն։ Բայց
վս աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ, ոչ
հրեշտակք երկնից և ոչ Որդի, բայց միայն Հայր։ 36։

Ձյն Նորաստ. Բդ. Խնդր. Կեցո։ Աղ. Բուռն ա։

ՅԵՐԵԿՈՅԻ ժամերգութեանս ոչ գոն:
ՄԵԾԱՑՈՒՑԷ ԽԱՉԷ. Նստուր երկ: Որպէս փրկեցան:
ՔԱՐ. Ասացուք ձայն գ-անջ:
ՀԱՄԲԱՐՁԻ Բ.Ձ. Ապաւինեցաք: 867:
ՕՐՀՆԷ ՔԱՐՈԶ Մն խաչիւս. Կեցո: ԱՂ. Պահպանեա

## Ե. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Ա. Անաստասայ քահանային և Վարոսի, և կատարումն Թէոդիտեայ, և որդւոց նորա, և որոց ընդ նոսա:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Ձ. Անոխակալ: 352:

## Ե. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ա. Հիպերիքեանցն:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Ձ. Ընդ նմս քո: 353:

## Ե. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. Հարցն մերոց: 438:

## Ե. ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ա. Աւերկիանոսի սեբաստացւոյն և Բաբելայ ծերոյն և ութսուն և երեք աշակերտացն:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Կ. Օրհնեմք զքեզ: 356:

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Ե. ՇԱԲԱԹ

Ա. Բարդղամու Անաթողեայ եպիսկոպոսին և եօթն մանկանց Եփեսոսի:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Բ.Կ. Որք 'ի մարտի: 357:

# Ե. ԿԻՒՐԱԿԷ ԽԱՉԻ

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ. կ.:

Որ զամենատէր զօրութիւնդ քո ցուցեր ի Բաբելոնի. փրկելով զերիս մանկունս ի հնոցին. ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց: Որ ընդ բազմագեղ ներողութիւնդ քո ցուցեր զօրաց երկնաւորաց. տարածելով զպատուական քո ի խաչին. ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց: Որ ընդ բազմագութ ողորմութիւնդ քո ցուցեր առ ազգս մարդկան. թաղելով ի սիրտ երկրի. զի զմահու բարձցես զերկիւղ. ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց:

Գ.. Ի զՏր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեանս: Նախնի անեղական խոնարհեալ ի հողեղէն գոյացութիւս. համբերեալ չարչարանաց զմահ խաչի ի յանձն էառ. բարձր արարէք զնա յաւիտեանս: Փառք Հօր: Եւ իջեալ ի գերեզման անապական եւ նոր մարմնով. յարուցեալ յերրորդ աւուր լոյս ծագեաց տիեզերաց. բարձր արարէք զնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Նոյն հրեշտակապետն իջեալ ի գերեզմանին կենսատուին. աւետէր առ սուրբ կանայսն Տէր յարեաւ ի մեռելոց. բարձր արարէք զնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Դ. կ.:

Ածածին մայր եւ կոյս. ծագող արեգականն արդարութեան. որ լուսաւորեացն ըզմեզ. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք. եւ փառաւորեմք ըզ-

միածի՛ն քո զՈրդի՛ն ։ Փառք Հօր ։ Լուծ զօրէնս բնութեան մարդկան. Հրաշափառ քո ծնունդ. և զէութիւն բնութեան ամբողջ պահեալ. և կուսութեանդ քո ոչ խախտեցան կնիք. Հոգևոր երգով զքեզ բարեբանեմք. և փառաւորեմք զմիածին քո զՈրդին ։ Այժմ և միշտ ։ Զքեզ մորենի անկէզ լեառն վիմածին դուռն փակեալ և աղբիւր կնքեալ. նախատեսացն գուշակեալ մայր և կոյս. Հոգևոր երգով զքեզ բարեբանեմք. և փառաւորեմք զմիածին քո զՈրդին ։

Ողորմեա Դ.Կ ։

Յարեար երևեցար առաքելոցն. և մեզ փրկիչ ողորմեա ։ Փառք Հօր ։ Քեզ Քրիստոսի թագաւորիդ անմահի. երկիր պագանեմք և զյարութիւնդ քո փառաւորեմք ։ Այժմ և միշտ ։ Փառք փրկողին և միածնին անմահի. փրկեա զժողովուրդս քո զոր ընտրեցար պատուական արեամբդ քո սրբոյ ։

Տէր յերկնից Դ.Կ ։

Յորժամ եկին ի գերեզմանն իւղաբեր կանայքն. և բերին ըզխունկս ի խնկել զանապական մարմինն ։ Փառք Հօր ։ Յայնժամ հրեշտակն աւետարանէր յարեաւ Քրիստոս. պատմեցէք աշակերտացն զյարութիւնըն Տեառն ։ Այժմ և միշտ ։ Իսկ նոցա զարհուրեալ վասն ահագին տեսլեանն. պատմէին աշակերտացըն զահագին տեսիլն ։

## Ե. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Ս. Ստեփանոսի Հռովմայ հայրապետին և քահանայիցն և սարկաւագացն և ժողովրդոցն որ ընդ նմա կատարեցան։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Որք զտանջանս։ 360։
Մանկ. Գ.Զ. Յնծայ։ 750։ Կամ Գ.Զ. Հանդիս։ 684։
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Կ. Մարտիրոսք և վկայ։ 751։

## Ե. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ս. Եփիփանեայ եպիսկոպոսի և Յովսեփայ քահանային և Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վկային։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Յուսացեալք։ 367։

## Ե. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Հարցն մերոց Ը.Ճ.։ 439։

## Ե. ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ս. Հայրապետացն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի և Պօղոսի խոստովանողի, և որոց նոտարացն Մարկիանոսի և Մարտիրոնի։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Որք հաղորդք։ 371։
Մանկունք Գ.Զ. Ով հրաշալի նախահարք։ 684։
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Զ. Հանդիսացեալք։ 684։

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

# Ը. Շ Ա Բ Ա Թ

## Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայելի և ամենայն երկնային զօրաց։

---

### Ի ԳԻՇԵՐԻ

ԶՏէր ողորմեայն ողորմեա 'ի խորհրդականացն փոխէ յետոյն ասա։

Օրհնութիւն ԻԿ. ՄՏ։

Որ յանէից ստեղծեր ըզպաշտօնեայս քո ի հուր կիզելոյ. հուրդ անեղական. ընդ նոսին օրհնեմք ըզքեզ եւ մեք հողեղէնքս։ Որ բանիւ գոյացուցեր զիննեակ դասս հրեղինաց. Բանդ ի սկզբանէ. ընդ նոսին գովեմք ըզքեզ եւ մեք հողեղէնքս։ Որ արարեր յոգիս իմանալիս ըզհրեշտակըս քո Հոգի Սր. ընդ նոսին բարեբանեմք ըզքեզ եւ մեք հողեղէնքս։

† Անդադար յերկինս օրհնաբանողք Հօրն երկնաւորի զօրք լուսեղինաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս։ Քաղցրաձայն երգով գոհաբանողք Որդւոյն միածնի դասք հրեշտակաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս։ Անլռելի հնչմամբ բարեբանողք Հոգւոյն ճշմարտի հոյլք հոգեղինաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս։

Որ օրհնիս ի հրեշտակաց անդադար. Հայր երկնաւոր ընկալ զաղաչանս մեր։ Առաջի քո անկանիմք Փրկիչ. խնդրեմք զթողութիւն բազում յանցանաց մերոց։ Որ գիտակ ես գաղտնեաց մարդկան Հոգիդ Սր. Տէր եւ կենդանարար ընկալ զաղաչանս մեր։

Օրհնեցէք ըզՏէր ընդ երկնայինսն նմանեալ

դասուց. նոր ժողովուրդք ասելով. քեզ Հօր տըւողիդ մեզ ըղձանըս փառք: Երգեցէք Տն երգ նոր եկեղեցիք ընտրելոց որդիք Սիոնի ասելով. քեզ Որդւոյ շնորհողիդ մեզ ըղձանըս փառք: Բարեբանեցէք զԱծ ի պանծելիս սրբութեան նորա ձայնիւ ցնծութեան ասելով. քեզ Հոգւոյդ պարգեւողիդ մեզ ըղձանըս փառք:

Յորժամ գայցես բազում հրեշտակօք Տէր ի դատել զերկիր: Յայնժամ շարժին զօրութիւնք երկնից՝ Տէր ի յահէ քումմէ: Եւ յայնմ աւուր լեր իմ օգնական Տէր իմ և Աստուած իմ:

Այսօր ընդ հրակերպեանն դասուցն օրհնաբանէին ծերքն առաջի քո եւ տղայքն արմաւենեօք. ովսաննայ օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն: Զոր սերովբէքն ծածկաբար ընդունել ոչ բաւէին. ի վերայ յաւանակի նորոյ նըստեալ բարեբանեցան ի տղայոց. ովսաննայ օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն: Այսօր ընդ ծերոց և ընդ տղայոց օրհնաբանութեանցն վեր երգեմք նորոյ արքայիդ եկեալ յԵրուսաղէմ. ովսաննայ օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն:

Հգ. Այսօր անդրանիկ գիտութեան. բղխեալ ի մեր վերնատանն. յորմէ լուցան տիեզերք գնացին գետոցն առաքելովք: Այսօր իջեալ ի յերկնից. Հօր աւետիքն ի բարձանց. տալ աւետիս Ադամայ դանակոչ յԵդեմ վերբեալն: Այսօր խնդայ նոր Սիոն. որդւովք իւրովք զոր ծնաւ. օծմամբ Հոգւոյն նորոգեալ յորդին լուսոյ եւ տուընջեան: Այսօր ի ձայն գոհութեան. զՀոգին ընդ Հօր և

Որդւոյ· հոգւոյ ամենայն օրհնեցէք զերեքսրբեանն երգելով: Այսօր ցնծամք երկրաւորքս· ընդ զուարթութեան երկնայնոյն· եւ պարելով ընդ հրեշտակս երգեմք ըզփառս ի բարձունս:

Ձն· Սարսափելի որոտմամբ՝ եւ ահագին զօրութեամբ· գալոց է փրկիչն յաշխարհս յարուցանել զմեռեալսն: Ահեղ և մեծ բարբառով հրեշտակապետըն գոչէ· արիք ասէ մի ննջէք ահա եհաս ձեզ փրկիչ: Իմաստամիք սրբուհիք յարուցեալ՝ եւ ընթանան առաջի· եւ տեսանեն զփրկիչն եկեալ փառօք ի յաշխարհս: Դատաւորի գործոցն ծածուկք յայտնին ի մեծ հրապարակն· եւ գողալով ընթանան ի յանվախճան ի տանջանս: Ի յօթեվանս Ձօրն իւրոյ կոչէ զդասս արդարոցն· եւ յանպատում ի բարիս զոր խոստացեալ է նոցա: Սրբոյ անմահ փեսային եղեր դու մայր Մարիամ· բարեխօսեա վասն մեր ի յայնմ աւուր ահեղին:

Մծ· Այսօր ցնծան երկնայինքն եւ պար առեալ ի բարձունս· երգեն զերգս հոգեւորս յաւուր ծննդեան սրբուհւոյն: Այսօր վերինքն Սիոն գոչեն զերգս սովորէիցն· զերեքսրբեանն ասելով յաւուր ծննդեան սրբուհւոյն: Այսօր աստեղք և լուսին ընդ արեւու հրճուելով· գովեն զկոյսն ի Ձօրէ յաւուր ծննդեան լուսոյ մօրն: Այսօր ծնողքն օրինականք մանկամբք նորոյ Սիոնի· երիտասարդք և կուսանք խնդան ծննդեամբ տիրուհւոյն: Այսօր գունդք առաքելոցն եւ պարք նախատեսացն· յաւուր ծննդեան մօր Բանին երգեն զփառս ի բարձունս:

խզ. Անպատումն կարգ անքննելի խորհրդոյն ընդունարան ով սուրբ քահանայութիւն. ի՟ սուռա-նաթեւից յարաթելոց սրովբէից անհասաբար ա՟-հի պատուեալ՟ն. քեզ երկրպագեմք յօգնութիւն մեզ ժամանեա յե՟լս եւ ի մուտս : Անյաղթելի նշան անպարտելի զօրութեանն՝ ընդունարան ով սուրբ քահանայութիւն. ի՟ յահարկութի ապստամբից երեւցար. որք ի քէն ահիւ սարսեալ դողան եւ անդընդասո՟յզ կործանի՟ն. քեզ երկրպագեմք յօգնութի մեզ ժամանեա յե՟լս եւ ի մուտս : փառք հօր : Յառաջագոյն տեսեալ ըղձեց մարգարէն Զաքարիաս. աշտանակ ոսկի եօթնաջահեան լուսով պայծառացեալ յերկրի ով սուրբ քահանայութիւն. ե՟ւ ի վե՟ր քո տարածեալ աննիւթ գոյին գոյացեալ ի մե՟ր բընութի՛ս. եւ աղբերահոս կողի՝ւ մաքրեաց զաղտեղութի ա՟զգի մարդկա՟ն. քեզ երկրպագեմք յօգնութի մեզ ժամանեա յե՟լս եւ ի մուտս :

Այժմ եւ միշտ : Երեքսրբեան ձայնիւ փառաբանօղք սուրբ Երրորդութեանն գունդք սերովբէից. բարեխօս լերուք ընդ մեղաւորացս :

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա :

Արար զհրեշտակս իւր յոգիս. եւ զպաշտօնեայս իւր բոց հրոյ :

Արդնէ յամպս զգնացս իւր. եւ շրջի նա 'ի վերայ թեւոց հողմոց :

փ. Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս. ալէլուիա :

Մարդկան ազգ սաղմոսեն քեզ ալէլուիա :

փառք և։ Այժմ և։ Ալէլուիա։

Դարձեալ Թագաւոր յաւիտեան։

Երկինք և երկիր գոհանան։ 120։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Կ։

Անսկիզբըն Հայր առաջին լոյս անճառելի. որ ի լուսոյ լոյս ներգործեալ զիմանալեաց գոյակսն. ընդքեզ օրհնեմք Աստծ՝ հարցըն մերոց։ Նախկինցոլ Հօր ի լուսոյ լոյս ծագումն Որդի. որ արարեր ի պաշտօն փառաց քոց զհրեղինացըն զօրս. ընդքեզ օրհնեմք Աստծ՝ հարցըն մերոց։ Ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխումն փառակից նոցունց Հոգիդ անեղ. որ ըստեղծեր ի յոգիս կատարեալ զհոգեղինացըն դասս. ընդքեզ օրհնեմք Աստծ՝ հարցըն մերոց։

Գ. Աղտեր օրհնեցէք բարձր արարիչն զնա յաւիտեան։ Երկնային զուարթունք հրեշտակք և հրեշտակապետք. վերին պետութիւնք բարձր արարիչն ընդ Հայրն երկնաւոր։ փառք Հօր։ Անմարմնոց բազմութիւնք՝ իշխանութիւնք զօրութիւնք. անմահ աթոռութիւնք բարձր արարիչն զԲանն Թագաւորն։ Այժմ և միշտ։ Վեցթեւեան սերովբէք քառակերպեան քերովբէք. աթոռք անեղին բարձր արարիչն զՀոգին ճըշմարիտ։

Մեծացուսցէ Գ.Կ։

ԶԱստուածածինն և զմիշտ կոյսն անդադար օրհնեսցուք. քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց։ փառք Հօր։ Խըն-

դա եւ ուրախ լեր ամենօրհնեալդ մայր. քանզի որ ի քէն ծնաւ ընդ մեզ Աստուած ի փրկու-թիւն անձանց մերոց: Այժմ և միշտ: Գանձ անապական գտաւ սուրբ Ածածին. բարեխօսեա Քսի ԱՅ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

Ողորմեա Գ.Զ:

Որ ի հրեղէն զօրաց երկնից փառաբանիս Աս-տուած. որով զերկնային անապական ածային զշնորհս հեղեր յորդիս Ադամայ. աղաչանօք սրբոց ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Երեւելով հողեղինացս անհիւթականքն ի ձեւ մարմնոյ. որք եւ ծանուցին մարգարէիցն զխորհուրդ քո գա-լստեանդ բազմապատիկ տեսլեամբք օրինակե-լով. աղաչանօք սրբոց ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Անճառելի տնօրէնութեանդ քո աւետաբերք առաքեցան Գաբրիէլ եւ Միքայէլ. անմարմնական դասուքն իւրեանց յերկրի սպասա-ւորելով. աղաչանօք սրբոց ողորմեա մեզ Աստուած:

Տէր յերկնից Գ.Զ:

Անմահ արքային անապական աթոռք. բազմ-աչեայ քերովբէք սրբասաց ձայնիւ սրովբէք. ա-ռաջին յերկինս քահանայապետք. բարեխօս լերուք առ Տէր վասն եկեղեցւոյ: Փառք Հօր: Բարձրելոյն փառաց բարձող տէրութիւնք. անյաղ-թելի զօրութիւնք. վեհագոյն իշխանութիւնք. եր-կրորդին դասու քահանայապետք. բարեխօս լե-րուք առ Տէր վասն եկեղեցւոյ: Այժմ և միշտ: Գերագոյն Էին պետութիւնք վերին. հրեշտակա-պետք երկնաւորք. հրեշտակաց զինուորութիւնք.

երրորդի յերկինս քահանայապետք. ձեզ համ-ձայնեալ երգեմք ըզփառս ի բարձունս:

Առաւօտու Երգ. Օրհնեցէք զՏէր յերկինս օր-հնեցէք զնա ի բարձունս:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օր-հնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա:

Ճաշու Ա. ծ մեծ. խաղ գանձ:

Մանկունք Դ.Ձ. ԱՏ:

Երկնաւոր հօտ ընտրեալ. զոր հովիւն քաջ թողեալ յերկինս. եւ եկեալ ի խնդիր մեզ մոլորելոցս. որով լցեալ զթիւ հարիւրոցդ. ա-րար ուրախութիւն ի յերկինս երկնաւորացդ. ա-ղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ Տէր վասն քաւութեան մեղաց մերոց: Փառք Հօր: Տեսա-նօղք անտեսին. խորհրդածուք խորոցն Ա-տուծոյ. որք իջեալ ընդ միածնին՝ սպասաւորել տնօրէնութեանն. ի ծննդեանն աւետաւորք հո-վուացն. եւ կանանցն խաւարելոց կենաց քա-րոզք զկենդանութեանն. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ Տէր վասն քաւութեան մեղաց մերոց: Այժմ եւ միշտ: Պահապանք աշխարհի. բանա-կք Տեառն շուրջ զերկիւղածովք. բարեկամք ազգի մարդկան՝ միջնորդք մահու եւ յարութեան. Միքայէլ եւ Գաբրիէլ մեծք. որ կայք միշտ առաջի ամենասուրբ Երրորդութեանն. աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ Տէր վասն քաւութեան մե-ղաց մերոց:

Ողջ Ճաշու. Ա. խաղաղութեան: Ա.Ղ. Աշ եւ:
Նա զուարճացուցանէ — Միրեցի զի լուիցէ: Նա զ.

բարեխաւսն Երգէն Տէրն յետ տանեղծ : Օրհնէ Մաղթ․ · Բ․ն Ա․ծ մեր : · Բարբառ Մի՛ ձգնաւո․ Ա․ղ․ Պատկեր սրբոց · Բն :

ՅԵՐԵԿՈՅԻ Հանգստեան ԴՁ․ ՄՏ․ Նորկնաւոր հօտ : 880 : Եւ այլ ամենայն ինչ կարգաւորեալ է :

# Բ. ԿԻՒՐԱԿԷ
## ԽԱՉԻ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ
Հարց Դ․Կ։

Այսօր ցնծան երկինք եւ երկիր յարութեամբ քո Տէր Աստուած հարցն մերոց : Այսօր նորոգեցան տիեզերք ամենայն յարութեամբ քո Տէր․ Աստուած հարցն մերոց : Այսօր հրեշտակապետն աւետարանէր զյարութիւն քո Տէր․ Աստուած հարցն մերոց :

Գ․․ Ըզտէր օրհնեցէք բարձր արարէք ընդ նմա յաւիտեան : փառք հօր : Որ չարչարանօք խաչին փրկեաց զտիեզերս․ եւ հեղմամբ արեանն իւրով զթողութիւն մեզ շնորհեաց․ բարձր արարէք ընդ նմա յաւիտեան : Այժմ եւ միշտ : Որ երեքօրեայ թաղմամբ զդժոխս աւերեաց․ եւ յարութեամբն իւրով զյարութիւն մեզ պարգեւեաց․ բարձր արարէք ընդ նմա յաւիտեան :

Մեծացուցէ Դ․Կ։

Աստուածածին պայծառ քան զերկինս : 826 :

Ողորմեա Դ․Կ։

Որ ըզկերպարանըս մահացու բնութեան ազգի մարդկան․ յանձն առեր Աստուած Բանդ Էակից հօր․ եւ եկեր կամաւ ի խաչ : փառք հօր : Որ ի վերայ

նախամանկանցն ըղձեալ նմին յանձն առեր․ համբերելով չարչարանաց ի խաչին բարձրացար Բանդ գոյակից հօր․ եւ իջեր ի գերեզման։ Այժմ և միշտ։ Եւ յերրորդ աւուր յարեար զմահու լուծեր զիշխանութիւն․ արձակելով զմերդունեալսն ի նմանէ Բանդ փառակից հօր․ եւ նստար ընդ աջմէ հօր։

Տէր յերկնից Դ․Կ։

Որ հրեշտակն յերկնից աւետաւոր երջանիկ և որ կանանցն քարոզիր առնելով․ է ձեզ վերստին լոյսն ծագեալ ի յաշխարհ։ Փառք հօր։ Այսօր տեսին ահեղակերպ հրեշտակապետին մերձեալ ի գունդ զինուորացն․ այսօր սրտաբեկեալ պահապանացըն զարհուրեալ մեռանէին․ է ձեզ վերստին լոյսն ծագեալ ի յաշխարհ։ Այժմ և միշտ։ Այսօր ցընծայ Երուսաղէմն վերին․ այսօր ցնծայ Սիոն մայր եկեղեցի․ քանզի փրկիչըն մեր յարեաւ և աւերեաց ըզդըժոխս․ եւ մեզ վերստին լոյսն ծագեալ ի հօրէ։

# Թ․ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

## Ա․ Մելիտոսի Անտիոքայ հայրապետին և Մինասայ եպիսկոպոսին և Մելեայ եպիսկոպոսին և Եփրայ քահանային և Շինու սարկաւագին։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․Զ․ Սուրբ ես Տէր։ 369։

Մանկանց և Հարանցն Դ․Զ։

Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօնախմբելով զյիշատակ սուրբ վարդապետացն․ որք լուսաւորեցին զհաւատոյ մանկունս․ և ընդ հրեշտակա-

ցըն գառն վերանկարգեցան : Փառք Հօր : Այսօր առաքելոց և մարգարէիցըն դասք . տօնակից գոլով դասնր վերին Սիովնի . ի յիշատակի սուրբ վարդապետացն . որք զխմաստից նոցին զխորոց յայտնեցին զխորհուրդ : Այժմ և միշտ : Այսօր քահանայք և պաշտօնեայք սուրբ եկեղեցւոյ . զվերապատուեն զյիշատակ սուրբ վարդապետաց . որով զարդարեցան երկնային շնորհօքն . երգեն ընդ նոսին զփառըս յաւիտեան :

# Բ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

## Ս. Յովհաննու ոսկեբերանի Կոստանդնուպոլսոյ հայրապետին :

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Ա.Կ. Որք զարդարեցին : 565 :

ՅԱՌԱՒՕՏՈՒ. Հարց Գ.Զ. Սքանչելագործ : 570 :

Մանկանց և Համբարձի Գ.Կ :

Որ յանըսկիզըն ի Հօրէ ընկալար ըզհոգի գիտութեան . որով երանելի տէր սուրբ Յոհան . եւ լուսաւորեցեր ածային բանիւ զեկեղեցի սուրբ . մաղթեա փրկողին զթողութի մեղաց մերոց : Փառք Հօր : Որ անապական Բանին քարոզ կոչեցար բերան ոսկի . յորմէ աղբիւր կենաց հոսեալ . արբուցաներ քառավտակ ըղխմամբ զընդհանուր տիեզերս . մաղթեա փրկողին զթողութի մեղաց մերոց : Այժմ և միշտ : Որ յանճառելին մերձեալ ի լոյս հօւր Երրորդութեն . որով երանելի տէր վարդապետ . այսօր տօնէ եկեղեցի ըզհանգըստեան քո սուրբ զյիշատակս . մաղթեա փրկողին զթողութի մեղաց մերոց :

# Բ. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ:

Քո՛ յաւիտեան: Օրհնեալ ես յաւիտեանս: Աստուած հարցն և մեր յաւիտենից. օրհնեալ ես յաւիտեանս: Որ նստիս ի վերայ քերովբէից գովեալ. և առաւել բարձրացեալ ես յաւիտեանս:

Գ. ԱզՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս: փառք Հօր: Խնկաւոր գոլով անմահ. բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Զնստեալն յաթոռ փառաց. բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Դ.Զ:

Ածածին մայր լուսոյ սուրբ կոյս լուսեղէն տաճար. որում երկինք չէին բաւական. առ ի բնակութիւն ի քեն մարմնացաւ: փառք Հօր: Ըզքեզ ամենօրհնեալ որ միայնդ ի կանայս օրհնեալ. կրելով ի քեզ զանտանելի զբնութին. օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Ուրախ լեր աթոռ փրկութեան յոյս հաստատութեան մարդկան. միջնորդ օրինաց և շնորհաց. օրհնութեամբ անդադար գոհութեամբ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Զ:

Ած մարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր. քաւեա զիս ըզմեղաւորս: փառք Հօր: Որ քղանցի հանդերձի քո ըզմերձեցեալն ի քեզ բժշկեցեր. քաւեա զիս ըզմեղաւորս: Այժմ և միշտ: Որ բանիւ հրամանի քո զանդամալոյծն առողջացուցեր. քաւեա զիս ըզմեղաւորս:

Տէր յերկնից Դ.Զ:

*Զուարթունք երկնից հոգեւոր երգով. ի ձայն հնչման զքեզ փառաւորեն: փառք Հօր: Երկնաւոր տեսակք բանաւոր հօտի. ձայնիւ երգով զքեզ փառաւորեն: Այժմ և միշտ: Զօրութիւնդ քո հանապազ օրհնեմք. որ ի բարձունս ես փառաւորեալ:*

## Ի. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

*Ս. Գուրիասայ, Սամոնասայ և Աբիբայ սարկաւագին, և Սամոնոսի միայնակեցին և մանկանն խոստովանողի և Քրիստոսի զինուորին:*

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Կ. Առ քեզ Ա.Ծ: 373:

## Ի. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Ի. ՇԱԲԱԹ

*Ս. Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի:*

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Զ. Երանելի ես առա: 659:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց. Ա.Զ. Նակից Բանդ: 663:
Մանկանց Ա.Կ. Աշակերտք Բանի: 752:
ՅԵՐԵԿՈՅԻ Հանգ. Ա.Զ. Մի ես Տր: 384: Ի քէն հայցեմք: 386:

[illegible] Դ.Կ. *փառաւորեալ է անուն*, [illegible] Հարց Ա.Զ [illegible]

# Ժ. ԿԻՒՐԱԿԷ
## ԱՒԵԼՈՐԴԱՑ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ
Հարց Գ.Կ:

Փառաւորեալ է անուն քո ի՛ր. Տէր Ա՛ծ հարցն մերոց: Որ ի բարձունս բնակեալդ ես. եւ հայիս յարարածս քո քաղցրութեամբ. փառաւորեալ է անուն քո ի՛ր. Տէր Ա՛ծ հարցն մերոց: Որ ի յերկրի երեւեցար. եւ ընդ մարդկան շրջեցար. Թագաւոր յաւիտենից. փառաւորեալ է անուն քո ի՛ր. Տէր Ա՛ծ հարցն մերոց:

Գ. Օրհնեցէք զՏէր Ա. Ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զեկեալն ի փրկութիւն մարդկան: Որ էակիցն է Հօր եւ սուրբ Հոգւոյն. ի յերկրի երեւեցաւ. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զեկեալն ի փրկութիւն մարդկան: Որ հրեշտակաց անպարագրելին է. ի վերայ խաչին տեսաւ. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զեկեալն ի փրկութիւն մարդկան: Փառք Հօր: Որ սրովբէից անհասանելին է. ի գերեզմանի եդաւ. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զեկեալն ի փրկութիւն մարդկան: Այժմ և միշտ: Որ քրովբէից անճառելին է. ի յերրորդ աւուր յարեաւ. ամենայն արարածք օրհնեցէք. եւ բարձր արարէք զեկեալն ի փրկութիւն մարդկան

Մեծացուսցէ Դ.Կ:

Զքեզ Ա՛ծածին աղբեւր անսպառ լուսոյն. որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանական ձայ-

նիւ երգով մեծացուցանեմք : փառք Հօր : Դու պարծանք կուսութեան մարդկան . դու ուրախութիւն հրեշտակաց . դու բարձող անիծից . վն որոյ ընդքեզ Աստուածածին մեծացուցանեմք : Այժմ և միշտ : Դու ծնողմայրիս արեւելից արեգականն արդարութեան . յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց . միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք :

Ողորմեա Դ.Կ :

Ափինափիմ . Ողորմեա ինձ Աստուած : Որ ի Հօրէ առաքեցար անդրանկորդն Որդի . եւ ի սըրբոյ կուսէն ծընար . ողորմեա ինձ Աստուած : Որ ի խաչին բեւեռեցար Աստուած բանդ . եւ ի Հօրէ ոչ մեկնեցար . ողորմեա ինձ Աստուած : փառք Հօր : Որ ի գերեզմանի եդար . թագաւոր անմահ . եւ ի յերրորդ աւուր յարեար . ողորմեա ինձ Աստուած : Այժմ և միշտ : Որ ի յերկինս համբարձար ամենակարող . և ընդ աջմէ Հօր նըստար . ողորմեա ինձ Աստուած :

Տէր յերկնից Դ.Կ :

Հրեշտակացըն դասքն . յերկնից ի յերկիր վայբարբերեալ ի սպաս Որդւոյն Աստուծոյ : փառք Հօր : Հրեշտակին ձայնիւ . ցընծայր կոյսըն սուրբ եւ ընթացեալ առ աշակերտսըն պատմէր : Այժմ և միշտ : Կենդանին յարեաւ . զերկունըս մահու ելոյծ և կեանըս պարգեւեաց աշխարհի :

# Ժ. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

## Ա. Հրեշտակաց և Հրեշտակապետաց :

Զամենայն ինչ ըստ տօնի Գաբրիէլի հրեշտակապետին կատարեա : 874 :

# Ժ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

## Ս. Համօրէն Մարգարէից:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որ զանձայն : 387:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՋ. Որ յերկնային : 394:
Մանկանց Համբ. ԴՋ. Որ զյառաջագոյն : 395:

# Ժ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

## Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴՋ. Որ յամի ցուցեր : 440:

# Ժ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

## Ս. Համօրէն Առաքելոց:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԴԿ. Իմաստութիւն երկնային: 843: Էջ առօրէն:

---

### ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձէ ԱԿ:

Ի՛ յանսահման ծովէն հօր գըթութեանց բըղխմունք եւ նոր առաքեալք. անդրանիկ խորհուրդ եւ լոյս գերազանց երկոտասան ազգաց պըսակ նոր եկեղեցւոյ. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Աշխարհակիր Բանին բազկաց եղեալ հիմունք սորբոյն Սիոնի. լերինք անշարժք հովիւք ծաղկածինք հարազատք վէմ հաւատոյ պետրոս եւ Անդրէաս. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Ի բարեբուն Հոգւոյն վտակք եւ որոտմունք տիեզերաց. ցոլմունք հրեղէնք աստեղք լուսաբերք. Յիսուսի թագաւորին վակաս լանջաց նոր Յովհաննէս եւ Յակոբոս. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Հայրապետունք այգւոյն

հրեղէն պարիսպք եւ բարձր աշտարակք․ ոս-
կեղէն բաժակք եւ ժիր մատրուակք․ Հայաստա-
նեայց հայր հոգեւոր Բարթուղիմէոս եւ Թադէոս՝
բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց։
Գեղեցկան հօտին անմահ արօտ եւ ջուրք հանգըս-
տեան․ հրսկող հովիւ խաւարահալած՝ բանաւոր
փարախ սուրբըդ Թովմաս եւ Փիլիպպոս․ բարե-
խօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց։ Ի
մաքրագործ Հոգւոյն անօթ ընտրեալ եւ ձի-
նափայլ․ Թագաւորք երկրի իշխանք աշխարհի․
անպակաս գանձուց բաշխող Յակոբ ալփեան Յու-
դա յակոբեան․ բարեխօս լերուք առ Տէր վասն
անձանց մերոց։ Երկքըրբեան մի տէրութեան
խորհուրդ կամաց եւ հազարապետք փողոց հընչ-
մունք բարբառք աւետեաց․ ընդ ամենայն եր-
կիր սուրբըդ Շմաւոն եւ Մատաթիա․ բարեխօս
լերուք առ Տէր վասն անձանց մերոց։ Փառք
Հօր։ Բանին կենաց կանուխ քարոզ եւ աւետա-
րանիչ․ Երգ փրկութեան հնչուածն ահաւոր․ ազգի
մարդկան պարծանք սուրբըդ Մատթէոս՝ բարե-
խօս լեր առ Տէր վասն անձանց մերոց։ Եւ այժմ եւ
միշտ։ Ընձաւելի դրախտին մատէն տեսօղ եւ երրորդ
երկնից․ ներկատող բարձանց խորոց բանալի․ ե-
րեքտասան որ առաքեալ Պօղոս հայր համատարած՝
բարեխօս լեր առ Տէր վասն անձանց մերոց։

Կամ Համբարձի։ ԵԶ․ Ի քէն հայցեմք։ 386։

## Ժ․ ՈՒՐԲԱԹ

Պահոց։

## Ժ. ՇԱԲԱԹ

Տօն ամենայն Սրբոց հնոց և նորոց յայտնից և անյայտից:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. գձ. Նորանեալն որ առա: 659:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դկ. Ա՛ռ քեզ Ած: 373:
Մեծացուսցէ Դկ. Նահապետացն: 765:
Ողորմեա գձ. Անձայն ճառագայթ: 683:
Տէր յերկնից գձ. Հանդիսացեալք: 684:
Մանկունս մարտիրոսաց 'ի յայնէն:
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. ԱՁ. Սբ ես Տէր: 384: Նր-կնաքաղաքացին: 385:

---

Յայսմ վայրի 'ի ԻԱ. նոյեմբերի յինչ օր և հանդիպի, տօն է ընծայման Ամենօրհնեալ սբ Աստուածածնին: Ի նոյեմբերի Ի, լինի երեկոյի ժամուն նախատօնակ առնելոյ:
Շարական Ակ. Որ նախիման: 741: Իւր տեղւոջ:
Վեր. Սբ զԱծածինն. Կեցո յոյժ: Աղ. Ընկալ:

## ԸՆԾԱՅՈՒՄՆ

### Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ
### ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

---

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնաբէ գկ:

ԵՐԳԵՑԷՔ որդիք Սիոնի: 760: Իւր տեղւոջ:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Զկնի Սբ Ածին Սաղմոս կա:

կց. Տէր տացէ: փխ. Յարիցէ Ած: 767:
Ընթերցուած Երգոց երգոյն Սողոմոնի: Ա. 1:
Համբուրեսցէ զիս 'ի համբուրից բերանոյ իւրոյ. վասն զի բարի են ստինք քո քան զգինի, և հոտ իւղոց քոց քան զամենայն խունկս: Իւղ հեղեալ

է անուն քո. վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ, և ձգեցին զքեզ: Զհետ քո 'ի հոտ իւղոց քոց ընթացուք մեք: Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր: Ցնծասցուք և ուրախ լիցուք մեք ի քեզ, և սիրեսցուք զստինս քո քան զգինի: Ուղղութիւն սիրեաց զքեզ: Սևաւ եմ ես և գեղեցիկ, դըստերք Երուսաղէմի, իբրև զվրանս Կեդարու, և իբրև զխորանն Սողոմոնի: Մի հայիք ընդ իս, զի ես սևացեալ թխացայ. քան զի խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն: Որդիք մօր իմոյ մարտեան ընդ իս, և եդին զիս պահապան այգեստանի, զի զայգին իմ ոչ պահեցի: Պատմեա ինձ զոր սիրեաց անձն իմ. ուր հովուես. ուր հանգուցանես 'ի միջօրէի. գուցէ լինիցիմ իբրև զընկեցեալն յերամակս ընկերաց քոց: Եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղեցիկդ 'ի կանայս. ելեր դու զհետ գարշապարացն հօտից, և արածես զուլս քո 'ի վրանս հովուաց: Երիվարացն իմոց 'ի կառսն փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձաւորդ իմ: Քանզի գեղեցկացան ծնօտք քո իբրև զտատրակի. պարանոց քո իբրև զմանեակս: Նմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ՝ հանդերձ կիտուածովք արծաթոյ: Մինչև արքայ 'ի գիրկս իւր ընկալցի զքեզ: 11:

Ընթերցուած յԱռակաց: ԺԱ. 30:

Ի պտղոյ արդարութեան բուսանի ծառ կենաց, բարձցին տարաժամ որդիք անօրինաց: Եթէ արդարն հազիւ կեցցէ. իսկ մեղաւորն և ամբարիշտն ուր երևեսցի: Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստութիւն. և որ ատեայ զյանդիմանութիւն անմիտ է: Լաւ է որ գտանէ զշնորհս 'ի Տնէ. իսկ այր անօրէն կարկեսցի: Ոչ յաջողեսցի մարդոյ յանիրաւութենէ: Արմատք արդարոց ոչ հատցին: Կին ժրագլուխ պսակ է առն իւրում: ԺԲ. 4:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: ԾԲ. 7:

Այսպէս ասէ Տէր. իբրև զի գեղեցիկ են 'ի վր̄ լե-

րանց ոտք աւետարանչի համբաւուն խաղաղութն, իբրև աւետարանչի բարութեանց. զի լսելի արարից զփրկութի քո, ասել ցՍիոն թէ թագաւորեսցէ քեզ Ած: Զի ձայն պահապանաց քոց բարձրացաւ, և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զժամանակ՝ յորում ողորմեսցի Տր Սիոնի: Երկինք գոչեսցեն աւերակօքն հանդերձ Երուսաղէմի զցնծութի. զի ողորմեցաւ նմա Տր, և փրկեաց զԵրուսաղէմ: Եւ յայտնի արասցէ Տր զբազուկ իւր սբ առաջի ամ ազգաց. և տեսցեն ամ ծագք երկրի զփրկութի Այ մերոյ: 10:

Ընթերցուած 'ի Զաքարիայ մարգարէէ: Բ. 10:

Խնդա և ուրախ լեր դուստր Սիոնի. զի ահա ես եկից, և բնակեցայց 'ի մէջ քում, ասէ Տր: Եւ ապաւինեսցին ազգք բազումք 'ի Տր յաւուր յայնմիկ. և եղիցին նմա ժողովուրդ, և բնակեսցին 'ի մէջ քում. և ծանիցես՝ թէ Տր ամենակալ առաքեաց զիս առ քեզ: Եւ ժառանգեսցէ Տր զՅուդայ զբաժին իւր յերկրին սրբութն. և հաճեսցի միւանգամ ընդ Երմ: Եւ երկիցէ ամ մարմին յերեսաց Տն. զի զարթուցեալ է յամպոց սրբոց իւրոց: 13:

Ընթերցուած 'ի Մաղաքիայ մարգարէէ: Գ. 1:

Այսպէս ասէ Տր. ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տրն զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի՝ զոր դուք կամիք. ահաւադիկ գայ ասէ Տր ամենակալ: Եւ ո՞ ժուժկալեսցէ աւուր մտի նր, և կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութե նր: 2:

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս: Զ. 16:

Ապաքէն դուք տաճար Այ կենդանւոյ էք. որպ և ասաց Ած. թէ բնակեցայց 'ի նոսա. և գնացից 'ի նս. և եղէց նց Ած, և նոքա եղիցին իմ ժողովուրդք: Վն որոյ ելէք 'ի միջոյ նց և մեկնեցարո՛ք,

ասէ Տր. և 'ի պիղծս մի՛ մերձենայք. և ես ընկա-
լայց զձեզ. և ես եղէց ձեզ 'ի հայր, և դուք ե-
ղիջիք ինձ յուստերս, և 'ի դստերս. ասէ Տէր
ամենակալ: Իսկ որովհետև զայս աւետիս ու-
նիմք սիրելիք՝ սրբեսցուք զանձինս մեր յամ պղծու-
թէ մարմնոյ և հոգւոյ. կատարեսցուք զսրբութի
ահիւն Այ: Է. 1:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա.

Հոգին որ եկեսցէ 'ի քեզ. և զօրութի Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո:

Ոլթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա. 26:

Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ: 712:

Երգ Արարչականն ասա զինչ որ օրն բերէ:

Քարոզ խնդր. Կեցո: Աղ. Բուռն ամենազօր:

---

ՅԵՐԵԿՈՅԻ Մեսեդի Ժամուն:

Համբարձի Գ.Զ. Նոր Սիոն ծնեալ: 770:

Զինչ Քարոզ Մի զԱծածինն: Կեցո: Աղ. Ընկալ:

---

# Ա. ԿԻՒՐԱԿԷ

## ՅԻՍՆԱԿԱՑ

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱԶ:

Օրհնեալ ես Տէր Ած հարցն մերոց: Որ
բարձրացար ի խաչին վասն ազգի մարդկան. ա-
ռաքեա զքո զողորմութիւն ի պաշտօնեայս և յեր-
կրպագուս. Ած հարցն մերոց: Որ զամէն
յանձն առեր վասն մեր բարերար. խնայեա
յարարածս քո յարութեամբդ քո. Աստուած
հարցն մերոց:

Գ. Այգ Տր օրհնեցէք բարձր արարէք ըղնմ յա-
ւիտեան: փառք Հօր: Որ յանապական յղութեա

նըստի բարեբանեալն ի հրեշտակաց. կամաւոր չարչարանաց համբերէր մահու խաչի մարմնացեալ Բանն. անդադար օրհնեցէք և գովեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Եւ իջեալ ի գերեզմանն անապական մարմնով. զի նորոգեսցէ ըզհընութիւն մեռելութեան մերոյ յարութեամբն իւրով. անդադար օրհնեցէք և գովեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԱԶ:

Մեծացուցանեմք ըզքեզ որ ի Հօրէ Բանդ և անճառելի ծնունդ. որ ի կուսէն մարմնացար ցուցար մեզ: Փառք Հօր: Մեծացուցանեմք ըզքեզ որ կոխեցեր ըզմահ աստուածածիպէս և լուծեր ըզկնիք մահու. որ ի խաչին բարձրացար կամաւ Հօր: Այժմ և միշտ: Մեծացուցանեմք ըզքեզ որ թաղեցար ի նոր ի գերեզմանին. եւ յերրորդ աւուր յարեար. որ ի յերկինս համբարձար փառօք Հօր:

ՈՂՈՐՄԵԱ ԱԶ:

Անճառելի Հօր Էակից. ի խաչ ելեր կամաւ Հօր ողորմեա: Փառք Հօր: Անմահութեանց տէրդ Քրիստոս ի գերեզման իջեր ո՛պ մարդ. ողորմեա: Այժմ և միշտ: Եւ յերրորդ աւուր յարեար յոյս յարութեան ցուցար մեզ ողորմեա:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԱԶ:

Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ աղաւօթեմբք կենդանիդ յաւիտենից Քս՛ ընկալ և ըզմերս. փոխանակ խընկոցըն զօրհնաբանութիւնս: Փառք Հօր: Փոխանակ ո՛ր աւետաւոր զուարթնոյն զըթութի՛ քո մեզ հանդիպեսցի յուսով զխոստ-

թեան. մխիթարեալ զՀոգիս եւ լուսաւորեալ: Այժմ եւ միշտ: Ընդ նոսին անմարմնութեամբ քարոզեսցուք. զքո միայն զսքանչելիսդ. որ յարեարդ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ:

## Ա. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Ճշմարտապէս: 442:

## Ա. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Տէր Ա՛ծ մեր: 444:

## Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ:

Որ զերիս մանկունսն ի հրոյն փրկեցեր. ցուցանելով զզօրութիւն անեղ բնութեանդ. զքեզ օրհնեմք Աստուած: Որ նորանաւէտ ուխտին առ հարսն եղելոյ փրկեալ զմեզ յաւիտենական հրոյն. զքեզ օրհնեմք Աստուած: Զոր տեսեալ հրոյն յինքեան զարարածդ. եւ զայրեցող բնութիւն անկիզանող առնէր. զքեզ օրհնեմք Աստուած:

Գ.. Զտէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեանս: փառք Հօր: Տիւք եւ գիշեր զՏէր օրհնեցէք. բարձր արարէք զնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Իսրայէլ զՏէր օրհնես-

ցէք զՏէր։ Զօրհնեալն յաւիտենից. բարձր արարէք ըզնա յաւիտեանս։

Մեծացուսցէ Դ.Զ։

Աստուածածին գերագոյն քերովբէից Բանին բարձոյ՝ որ զամենայն կրէ զօրութիւն. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։ փառք Հօր։ Աթոռ սրբութեան բարձրագոյն սերովբէից՝ զան-հասն ինքեանց ի քեզ կրելով ծագեցեր զլոյս ան-խառնելի. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։ Այժմ և միշտ։ Մայր կենաց որ զանմահութեան պտուղն ի քէն եբեր Նախնոյ մօրն Եւայի՝ ի մահաբեր երկանցն ազատելով. բարե-խօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան։

Ողորմեա Դ.Զ։

Ողորմեա ինձ Աստուած ողորմութեամբ քո մեծաւ. զի կարօտ եմ ես շնորհի քո և ողորմութեան. ողոր-մեա և լուր ինձ բազմամեղիս։ փառք Հօր։ Լուր Տէր ձայնի ողբալւոյս և ցաւագին պաղատանացս, որ ամօթով կամ առաջի քո իմ չարաչար վարուքս. ողորմեա և լուր ինձ բազմամեղիս։ Այժմ և միշտ։ Ընկալ Տէր զաղաչանս իմ և զհառաչանս սրտի իմոյ. որ աղաղակեմ որպէս կինըն քանանա-ցի. ողորմեա և լուր ինձ բազմամեղիս։

Տէր յերկնից Դ.Զ։

Ի բարձանց։ Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած։ Որ անմարմնոցըն դասուց հաստիչ ես բա-նիւ. քեզ վայելէ օրհնութիւն Աստուած։ փառք Հօր։ Որ մարմնաւորացս ազգի, արարող ես ձե-ռօք. քեզ վայելէ օրհնութիւն Աստուած։ Այժմ

և միշտ։ Որ մեռելոցըն յուսամ յարութիւն ես ձայնիւ. քեզ վայելէ օրհնութիւն Աստուած։

---

## Ա. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՍ Հարց Դ.Կ. Ա.ծ հարցն մերոց։ 445։

---

## Ա. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

---

## Ա. ՇԱԲԱԹ

Ս. Գրիգորի սքանչելագործին, և Ակիւռոնայ եպիսկոպոսի։

Զամենայն էինչ զթարգմանչացն ասա։ 565։ Իսկ

Առաքինաց և Հայրապետին Բ.Ձ։

Որ լուսով ածային բանին զարդարեցեր զեկեղեցի եւ զհաւատսն անգիտութեն հալածեցեր յոգւոց մարդկան. ով Տէր սբ Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր։ Փառք Հօր։ Որ զհամագոյ ըսնութեն միասնական երրորդութեն. յայտնեցեր եկեղեցւոյ խոստովանել միութիւն. ով Տէր սբ Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր։ Այժմ և միշտ։ Որ ըղփրկական տնօրէնութեն մարդացելոյն վասն մեր. ուսուցեր մի յերկուց նոր միաւորութեն ըսքանչելի. ով Տէր սբ Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր։

# Ի· ԿԻՒՐԱԿԷ

## ՅԻՍՆԱԿԱՑ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Ակ։

Անըսկիզբըն Բանըդ միածնացար ի կուսէն յանձն առեր կամաւ զխաչն եւ զչարչարանս. Աստուած հարցըն մերոց։ Էակից հօր եւ հոգւոյն Բանդ Աստուած ի գերեզման իջեր մեռանելով անապական. Աստուած հարցըն մերոց։ Յարեար ի մեռելոց յաւուր երրորդի լուծանելով զիշխանութիւն ըմահու. Աստուած հարցըն մերոց։

Գ.. Ազգք օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք հօր։ Հրաշալի ըզյարութիւն Աստուածորդւոյն. ժողովուրդք բարեբանելով. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Միաբան գովեցէք ըզյարուցեալն ի մեռելոց. քահանայք հոգեւոր երգով. բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուցէ Ակ։

Նոր խորանիդ արեգականն արդարութեան նոր օրհնութիւնս տացուք. եւ անդադար բարեբանեսցուք։ Փառք հօր։ Նոր տաճարիդ անճառ լուսոյն որ ի հօրէ նոր երգս երգեսցուք. եւ անդադար բարեբանեսցուք։ Այժմ եւ միշտ։ Զնոր միաբանըդ հրաշալի նոր միաւորման Բանին եւ մարմնոյ. հոգեւոր երգով բարեբանեսցուք։

Ողորմեա Ակ։

Իջեր յերկնից Որդի Աստուծոյ եւ մարմնա-

ցար ի սրբոյ կուսէն. որ անմեկնելիդ ես ի Հօրէ. ողորմեա։ Փառք Հօր։ Եկիր ի չարչարանս կամաւորապէս Աստուած եւ խաչեցար վասն ազգի մարդկան. եւ ի գերեզմանի իջեր անապական. ողորմեա։ Այժմ և միշտ։ Զմահ լուծեր և զաշխարհս ազատեցեր կարողապէս Տր. և ի մեռելոց յարեար իշխանութեամբ. ողորմեա։

Տէր յերկնից Ակ։

Սքանչելի հրեշտակըն Տեառըն ցնծութի իջեալ ի գերեզմանըն հարկանէր. փող յարութեանըն Տեառն։ Ի հարկանել փողոյն պահապանքըն զարհուրեցան եւ եղեն. ի յահէն որպէս մեռեալ։ Փառք Հօր։ Զայն եղեւ ի հրեշտակէն բարբառ եղեւ աւետութեան Տէր յարեաւ. փառք յարութեանըն Տեառն։ Այժմ և միշտ։ Դրունքըն փակելովք երեւեալ Յս աշակերտացն եւ ասէր. խաղաղութիւն ընդ ձեզ։

## Բ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհւոյ։

ՅԱՌԱՒՕՏՍ. Հարց Գ.կ. Որ զՀրաշափառ։ 375։

Մանկանց և Հանգ. Գ.կ. Յիշատակ Քնի։ 513։

## Բ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Առաքելոյն Յակոբայ և Շմաւոնի։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Զ. Նորանեալ։ 659։ [illegible]

Մանկանց Ա.կ. Աշակերտք Քնի։ 752։

ՅԵՐԵԿՈՅԻՆ Հանգ. Ա.կ. Ի յանսահման ծո։ 888։

# Բ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ·Կ:

Օրհնեալ Տէր Ած հարցն մերոց: Ամենազօր թագաւոր յաւիտենից. օրհնեալ Տէր Ած հարցն մերոց: Որ ի հնոցին զերիս մանկունսն ապրեցուցեր. օրհնեալ Տէր Ած հարցն մերոց:

Գ.. Ազգեր օրհնեցէք. Զարարիչն Աստուած. եւ բարձր արարէք զնա յաւիտեան: փառք Հօր: Զթագաւորըն Քրիստոս. եւ բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Զնորոգօղ մեր զՀոգին. եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ·Կ:

Ածածին մայրդ կոյս ամենօրհնեալ Մարիամ. որ օրհնեալդ ես ի կանայս. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանելոյ: փառք Հօր: Անապական տաճար և առանձնացեալ լուսոյ. որ ի քեզ փեսայացեալ Բանին կենաց բնակեցաւ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանելոյ: Այժմ և միշտ: Հուրըն կենդանի որ ի մորենին վառեցաւ. զոր անկիզելի յարգանդի քում կրեցեր և ծնար Աստուած և մարդ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանելոյ:

Ողորմեա Դ·Կ:

Ողորմեա ինձ խոստովան լինիմ առ քեզ Քս. որ միայնդ ես բազմագութ թողութեան. ողորմեա ինձ Աստուած: փառք Հօր: Դու Տէր որ ճշմար-

տութեանց ես սիրող. եւ քննես ըզծածուկըս գաղտնեաց սրտի իմոյ. ողորմեա ինձ Աստուած:

Այժմ եւ միշտ: Տուր ինձ ցընծութիւն փրկութեան. եւ հոգւով տէրութեանդ քո հաստատեա զիս. եւ ողորմեա ինձ Աստուած:

Տէր յերկինս Դ.Կ:

Ըզքեզ օրհնեմք Տէր քեզ փառըս մատուցանեմք: Փառք Հօր: Ըզքեզ Տէր ամենակալ անձինքս մեր օրհնեսցեն: Այժմ եւ միշտ: Օրհնեալ ես Տէր. օրհնեմք ըզքեզ գովեմք եւ փառաւորեմք:

---

## Բ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

### Ս. Կղեմայ հայրապետին, եւ Բագարատայ Տաւրոմենայ եպիսկոպոսին, եւ Գրիգորի ակրականդացւոյն:

ՅԱՌԱՒՕՏՍ. Հարց Գ.Զ. Որ զանշարժ քո զբա: 362:

Մանկունք Գ.Զ:

Մանկունք նոր Սիոնի փառաբանիչք սուրբ Երրորդութեան. ըզյիշատակ նոյն Սրբոցն հայրապետին. տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր: Փառք Հօր: Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջ փառաբանութեան. ըզյիշատակ նոյն Սրբոցն հայրապետին. տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր: Այժմ եւ միշտ: Քահանայք եւ պաշտօնեայք՝ միաբան հաւատացեալք. ըզյիշատակ նոյն Սրբոցն հայրապետին. տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր:

ԿԱՄ Գ.Ձ. Հանգստացեալք: 684:
ՅԵՐԵԿՈՅԻ ՀԱՄԲ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՁԱՅՆ: ԿԱՄ Բ.Ձ. Որ լուսով: 897:

## Բ. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Բ. ՇԱԲԱԹ

Ս. Առաքելոյն Բարթուղիմէոսի և Յուդայի:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Գ.Ձ. Նորանեալ: 659: Խոր. աւուրն:
ԱՌԱՔԵԼՈՑ Ա.Կ. Աշակերտք Բանին: 752:

ՅԵՐԵԿՈՅԻ ՀԱՄԲ. Ա.Ձ. Մի ես Տէր: 384: Ա-ՀԵՏԵՒԱԼ ՇԱՐԱԿԱՆ. Ի քէն հայցեմք: 386:

## Գ. ԿԻՒՐԱԿԷ

ՅԻՍՆԱԿԱՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

ՀԱՐՑ Բ.Ձ:

Որ թագաւորդ ես յաւիտենից Տէր և արարիչ ամենայն լինելութեան. օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց: Որ սպասաւորեալդ ես ի սերովբէից եւ փառաւորեալ յանմարմնական բազմութեանց. այսօր ի գանձանացն մերկացեալ և ի զինուորաց բաժանեցար վասն մերոյ փրկութեան. օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց: Այսօր զկենդանարարն մեր ի բըղխմանէն օրհնեսցուք. քանզի ի վերայ նորա բաշխեցաւ մեզ պարգեւք անմահութեան. Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: փառք Հօր: Այսօր նշան սուրբ խաչին ի յերկինս երեւեցաւ. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Այսօր ընդդէմ թշնամւոյն զէն անպարտելի ցուցաւ մեզ. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Ի·Զ:

Զքեզ կոյս եւ մայր եւ բնակարան անճառին ներմարդութեան. գոհաբանեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ: Ծնունդըն Հօր եւ Հինաւուրց անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ եւ ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ: փառք Հօր: Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ եւ ի յաթոռ փառաց ընդ Հօր. անարգեալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութեան երկրպագեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ կոյս բարեբանեմք ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ: Այժմ եւ միշտ: Զքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ եւ վերին զօրութիւնք. դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց. գոհաբանեն եւ վերօրհնեն եւ փառաւորեն ըզմայր եւ զաղախին փրկչին մերոյ:

Ողորմեա Ի·Զ:

Որ կամաւոր խաչելութեամբ` քո Տէր բարձեր ըզմեղս.

ընդ քեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն։ Փառք Հօր։ Որ երեքօրեայ թաղմամբ քո Տէր մեռուցեր զմահ. ընդ քեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն։ Այժմ և միշտ։ Որ լուսափայլ յարութեամբ քո Տէր կենագործեցեր զաշխարհս. ընդ քեզ բարեբանեմք ամենեցուն յարութիւն։

Տէր յերկնից ԲՁ։

Զայն աւետաւոր հրեշտակին զուարճացոյց զաւուծանեան կանայսն. զՔրիստոսի պատմելով զյարութիւն։ Փառք Հօր։ Մի յուսահատէք տրտմութեամբ այլ ցնծացէք բերկրելով. խնկաղգեացք ածանոյն և փափաքողք յարութեանն։ Այժմ և միշտ։ Փութացարուք ի Գալիլեա աւետարանեցէք աշակերտացն. եթէ յարեաւ Քրիստոս եւ խափանեաց զմահ։

## Դ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Դիոնեսիոսի եպիսկոպոսին և Ռեոկիոսի զինուորին։

ՅԱՌԱՒՕՏՍՆ Հարց ԴԿ. Օրհնութիւնք։ 365։
Մանկանց և Հարց. ԲՁ. Օրհնաւորն Քրիստոսի։ 386։

## Դ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Յակովկայ և Իրաւափառայ։

ՅԱՌԱՒՕՏՍՆ Հարց ԲՁ. Ընդ քեզ արդար է։ 345։

## Դ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՍՆ Հարց ԴԿ. Հարցն մերոց։ 447։

## Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ա. Հարցն եգիպտացւոց Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու դրբեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սերապիոնի, Մակարիոսի, Պիմէնի, և այլոց սրբոց հարցն:

Շարականն էջ [illegible] տես : 1068:

## Գ. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Գ. ՇԱԲԱԹ

Ա. Նիկողայոսի զմիւռնացւոյ սքանչելագործ հայրապետին:

Շարականն էջ [illegible] տես : 565: իսկ Աւետարան և Հարցմունք Դ.Կ. ԱՏ:

Հիացան անմարմինքն. տեսանելով զերանելին Նիկողայոս. ծներ ի մարմնի վարս ըստացեալ անհամեմատ մարմնաւորաց. աղօթիւք սորա Տէր հայցեմք զթողութիւն մեղաց: Ուրախացիր մայր Սիոն. և զարդարեա զքո զառագաստ անճառապէս. զի անմարմին հրեշտակաց յաղթեաց մարմնով երանելին Նիկողայոս. աղօթիւք սորա Տէր հայցեմք զթողութիւն մեղաց: Փառք Հօր: Անզթանոք մեղուցելոցս. հայցեմք ի քէն ամենասուրբ Երրորդութիւն. զի ներեսցես մեղաց մերոց աղաչանօք Նիկողայոսի. աղօթիւք սորա Տէր հայցեմք զթողութիւն մեղաց: Այժմ և միշտ: Արքուհի

Մարիամ. սափոր ոսկի եւ տապանակ կտակարա-
նաց. Մայր որ զի վերուստ զՀայրն կենաց պար-
գեւեցեր քաղցրական բնութեամբ. առ նա միշտ բա-
րեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

---

Յայսմ աւուր է Դեկտեմբերի Թ., յորում օր ոչ հանդիպի տօն է ամենայն Յղութեան սրբոյ կուսին Մարիամու: Յե-րեկոյին որ է Դեկտեմբերի Ը., նախատօնակ որպէս: Շարական Ա.Կ. Որ նախնեաց: 741: էջ ասցի: Ճաշու. Այս զԱծածին. Կեցո յոյժ: Ա.Ղ. Անկալ:

---

# ՅՂՈՒԹԻՒՆ

## Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

---

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն գ.կ:

ԵՐԳԵՑԷՔ որդիք Սիոնի: 760: էջ ասցի:

---

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Օրհնի ՍԷ Ածին Սաղմոս կէ:

Կց. Տէր տացէ: փխ. Յարեցէ Ած: 767:

Ընթերցուած Երգոց երգոյն Սողոմոնի: Զ. 3:

Բարենշան ես մերձաւոր իմ իբրեւ հաճութիւն, գե-ղեցիկ իբրեւ զԵրուսաղէմ, զարմանալի յօրինեալ: Դարձո զաչս քո յինէն, զի նոքա սրարբեցուցին զիս. վարսք քո իբրեւ զերամակս այծից՝ որ երեւեցան 'ի Գաղաադէ: Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց որք ելանեն 'ի լուալեաց. ամենեքեան երկուորիք են, եւ անծնունդ ոչ գոյ 'ի նոսա: Իբրեւ զթել կարմիր շրթունք քո, եւ խօսք քո գեղեցիկք. իբրեւ կեղեւ նռան այտք քո բաց 'ի լռութենէ քումմէ: Վաթսուն են թագուհիք, եւ ութսուն հարճք. եւ օրիորդք՝ որոց ոչ գոյ թիւ:

Մի է աղաւնի իմ, կատարեալ իմ. մի է մօր իւրոյ ընտրեալ ծնողի իւրոյ. տեսին զնա դստերք և երանեցին նմա. Թագուհիքն և հարճք գովեցին զնա: 8:

Ընթերցուած 'ի Մաղաքեայ մարգարէէ: Գ. 1:

Այսպէս ասէ Տր̃. ահա ես առաքեմ զհրեշտակ իմ, և տեսցէ զճանապարհս առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տր̃ն զոր դուք խնդրէք, և հրեշտակն ուխտի՝ զոր դուք կամիք. ահաւասիկ գայ ասէ Տր̃ ամենակալ: Եւ ո՞ ժուժկալեսցէ աւուր մտի նր̃, և կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութն̃ նր̃: 2:

Պօղոսի առաքելոյն 'ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս: Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի Քս̃ Յս̃, զի 'ի հաւատոցն արդարասցուք. այլ իբրև եկին հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք, քանզի ամենեքին որդիք Այ̃ էք, հաւատովք 'ի Քս̃ Յս̃: Որք միանգամ 'ի Քս̃ մկրտեցարուք, զՔս̃ զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք 'ի Քս̃ Յս̃: Ապա եթէ դուք Քս̃ի էք ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք: 29:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ուրախ լեր բերկրեալդ Տր̃ ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո:

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա. 39:

Տէրամբ մերով Յս̃իւ Քս̃իւ

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ: 729:

Երգ զԱրարչականն տաս պէնչ որ օրն բերէ:

Քարոզ խնդրեսցուք. Կեցո: Աղ. Քոյումն:

ՅԵՐԵԿՈՅՑԻ Ժամք. Գ-Զ. Նոր Սիոն ծնեալ: 770:

# Դ. ԿԻՐԻԱԿԷ ՅԻՍՆԱԿԱՑ

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Բկ:

Որ զծառայի բղխերպարանըս յանձն առեր վասըն մեր. եւ խոնարհեալ քո կամաւ ի մեր բընութիւս. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց: Որ խաչեցար հաճութ՛բ Հօր միածին Որդի. և թաղմամբն երեքօրեայ զզօրութիւն մահու լուծեր. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց: Որ փառաւոր յարութ՛բդ քո կանգնեցեր զմահացեալսն. ի յերկինս համբարձար ընդ աջմէ Հօր նըստար. օրհնեալ ես Տէր Ած հարցըն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Հրաշալի յարութ՛բ փրկչին նորոգեցան արարածք. միաբանութեամբ օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Դողալով սարսեցին դժոխք տեսանելով զթագաւորն անմահ. միաբանութեամբ օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Բկ:

Մայր լուսոյն Մարիամ ամենօրհնեալ. օրհնեալդ ի կանայս: Փառք Հօր: Զլոյսն անըստուեր յարգանդի կրեցեր. օրհնեալդ ի կանայս: Այժմ եւ միշտ: Մի դադարեր վասըն մեր բարեխօսել. օրհնեալդ ի կանայս:

Ողորմեա Բկ:

Թ. Խնամ իմ: Որ իջեր յերկընից Բանդ Ա-

տըւած առեր մարմին ըստ մերոյ բընութեն. վասըն յանցանաց նախաստեղծին. ողորմեա մեզ Աստըւած: Փառք Հօր: Ի խաչին բեւեռեցար կամաւորապէս փըրկիչ. և զխոցումըն յանձն առեր ի զինուորէն. վասըն յանցանաց նախաստեղծին. ողորմեա մեզ Աստըւած: Այժմ և միշտ: Ի գերեզմանի եդար անապականաբար փըրկիչ. և զթաղումըն յանձն առեր զերեքօրեայ. յարուցեալ լոյս ծագեցար առաւեըրանըստացս. ողորմեա մեզ Աստըւած:

### Տէր յերկնից Բ.Կ:

Առաւօտեան սուրբ կանայքն հանդերձ իւղովք և խընկովք. եկին ի սուրբ գերեզմանն. եւ ողբալով խընդրէին զանմահ փառաց թագաւորն: Փառք Հօր: Ձայն ի ձայնէ հրեշտակին զուարթնացան տըրտմագնեացք. առաւօտեան ո՞ր կանայք զի՞ խընդրէք ըզկենդանին ընդ մեռեալս. յարեաւ փառաց թագաւորն: Այժմ և միշտ: Աստուածաւէր սուրբ կանայք փութացարուք հետևեալ. պատմող լինել Պետրոսի և Յովհաննու սիրելւոյ. յարեաւ փառաց թագաւորն:

## Դ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Անտոնայ, Նրմողինեայ և Պօղոսի, և կատարող աղքատացն Յովհաննու և Աղեքսիանոսի:

ՅԱՌԱՒՕՏՈՒ. Հարց Բ.Կ. Որ Ա.Ծ արարիչ: 348:

Մանկանց և Համբարձի Բ.Կ:

Զյիշատակ վըկայից սըրբոյն մեծին Անտոնայ.

Ս՛րմագինեայ Գրաբոսի յուսո՞վ եկայք տօնեսցուք։ փառք Հօր ։ Ո՛վ սուրբ վեհայ Քեզ քաղցրաբարբառըդ Մ՛ինաս․ մրադահայս ծգնական յուսո՞վ ըզքեզ խընդրողաց ։ Այժմ և միշտ ։ Ի՛ տաճարի հանգըստեան սըրբոյն մեծին Մ՛ինասայ․ եկայք հաւատացեալք յուսո՞վ երկրպագեսցուք ։

## Դ․ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս․ Կոռնելիոսի հարիւրապետի, և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, և Պողիկարպոսի Զմիւռնոյ հայրապետին, և արևելեան վկայիցն ։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ․ Դ․Կ․ Իմաստութի․ 843 ։ Եւ առօրհ ։

## Դ․ ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․Կ․ Օրհնեալ Տէր Ա․ծ ։ 448 ։

## Դ․ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ս․ Եւստրատիոսի, Աւքսենտիոսի, Եւգինէոսի, Որեստեսի և Մարդարիոսի ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ա․Կ․ Որ բարձրեալդ ։ 349 ։

Մաղթանս և Համբարձէ Բ․Կ ։

Ո՛ր ըզհուր սիրոյ ք՛ո Քրիստոս բորբոքեցեր յոգիս արդարոց․ որո՛վ վառեա՞լ իմաստութի՛ երանելի՛ն Եւստրատիոս․ ընծայեաց զանձն ողջակէ՛զ քե՛զ կամաւոր․ բարեխօսութի սորա շնորհեա մե՛զ տօնողաց ըզքաւութի՛ւն ։ Ո՛ր զարքայութի՛ն ք՛ո Քն տարածեցեր ըզյոյս յաշխարհի․ ո-

ըստ տենչացեալ փափագեալ հոգւով երանելին Մաքսենտիոս. ըղձաժամն արեան արբեալ ուրախութեամբ ընդ քեզ մկրտելով. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ը զքաւութիւն: Որ ըղձիւ փառացն քո Քս ծառայեցեր ընդ տիեզերս. որով զմարտեր հաւատոյ լուցեալ երանելին Եւգինէոս. հետեւեաց լուսաշաւիղ քեզ ի յերկինս արեամբ մահու. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ը զքաւութիւն: Փառք Հօր: Որ զնշան խաչին քո Քս ետուր մեզ զէն յաղթութեան. որով զինեալ ընդդէմ մահու երանելին սուրբն Ակեփսիմէս. բացակէզ պատարագաւ քեզ խաչանկեցաւ. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ը զքաւութիւն: Այժմ եւ միշտ: Որ ըղձան կենաց քոց Քրիստոս սերմանեցեր յերկիր բանաւոր. զոր ընկալեալ պտղաբերեաց յինքեան երանելին Մարգարիոս. ի մարմնի անմարմնաւոր չարչարելով պսակեցաւ. բարեխօսութեամբ սորա շնորհեա մեզ տօնողացս ը զքաւութիւն:

## Գ. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Գ. ՇԱԲԱԹ

Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, և Մարուգէի ճգնաւորին:

Ի Գ Ի Ն Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Կ.:

Յաղթող եւ սր հայրապետ նման մեծին Մովսէսի. բարձող խաչին պարծանաց ընդդիմա-

մարտ հանդիսիւ. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր: Նախամամբ որ հոգւոյն յանմատոյց կոչեցար. առեր պատիւ մեծութեն նման մեծին Յովհաննու. երգակցելով ընդ վերնոցն. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր: Կարող եղեր զօրութեն զարմանագործ նշանիւք. նման մեծին Պետրոսի. հովիւ շնորհեալ յԱՅ ընտրեալ հօտին Քնի. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր:

† Սերովբեացն զօրք երկնից ընդ քո մեծի ծննդութեն. որ ի մարմնի կատարեցար նման վերին զուարթնոցն. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր: Ընդ լսմամբ քո որ արտասուաց կենագործելիր ընդմեռեալս. նման փրկչին Քնի կենագործողին Ղազարու. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր: Նաեւ մեք ձայնիւ ցնծութեն տօնեմք զքո որ զյիշատակս. պատուեալ վկայ Քնի որ հայրապետըդ Յակոբ. ընդ որս զքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր:

ՄՏՓ. Որ ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփանոս. բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց: Որ խնդրեցեր զթողութիւն ի վերայ քո քարաձիգ ժողովրդեանն սուրբ Ստեփանոս. եւ այժմ վասն քո ուխտաւորացս աղաչեա զՏէր աջմէ Հօր նստեալն: Որ արժանի եղեր զմարտիրոսական անուն առնուլ պսակ նախ ի վկայս. առ պսակիչն որց եւ վասն մեր բարեխօսեա:

ԳՐԻ․ Հովիւ քաջ բանաւոր հօտի տէր սուրբ Գրիգոր․ հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման որ առաքելոցն։ Հովիւ բարի և առաջնորդ կենացն յաւիտենից տէր սուրբ Գրիգոր․ հաստատեա զանձինս մեր հաւատով ճշմարտութեան ի վերայ հիման որ եկեղեցւոյ։ Արդ աղաչեմք ըզքեզ հայր վարդապետ և տէր․ բարեխօսեա Քնի Այ մերոյ կեցուցանել զանձինս մեր։

ՀԱՅՐ․ Այսօր ցընծայ եկեղեցի ընդ անմարմնոցն զուարճացեալ տօնելով զյիշատակըս քո տէր սուրբ Ներսէս․ որ ի Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ իջմամբ վըկայեցար․ բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց։ Քահանայապետ ընտրեալ արժանապէս շնորհօք Հոգւոյն բաշխեցեր զփրկական մարմին և զարիւնըն Տեառն․ յորում հրեղէն սիւն ի յերկնից իջեալ․ բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց։ Արդ աղաչեմք ըզքեզ լուսաւորիչ հոգւոց մերոց նմանեալ Մովսէսի նախամարգարէին մեծի․ լուսափայլեալ դիմօք ածահրաշ տեսլեամբ․ բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց։

ՍՐԲ․ Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ուրախանան ի վերայ ծնընդութեան սրբոցն։ Այսօր ծնընդաշքեղեաց սրբոց դասքն ի յերկրի պըսակեցան երկնային ածեղէն փառօքն։ Այսօր անմարմնոց զինուորութիւնքն մեծապէս տօնեն․ քանզի երկրաւոր զինուորաց բազմութիւնքն ընծայեցան ի խորան սրբութեան երկնից։

Հգ․․ Այսօր ցնծան դասք առաքելոցն գալստեամբ Հոգւոյն Ս՟յ․ զորս մխիթարեաց փոխանակ Բանին մարմնացելոյ եղեալ ընդ նոսա․ փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ։ Այսօր բղխեաց ջուր կենդանի յԵրուսաղէմ յորմէ լցան գետք ա՟ծայինք․ եւ ընթացեալ ոռոգեցին տիեզերաց զքառավտակ աղբիւրն Եդեմայ․ փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ։ Այսօր ցօղով իմանալեաւ յամպոց Հոգւոյն զուարթացան բոյսք եկեղեցւոյ․ պարարտացան դաշտք արդարութ՟բ եւ գեղեցկացան անապատք մաքուր կուսութ՟բ․ փառս տացուք նմա սրբասաց ձայնիւ։

Հն․ Փառք քեզ Ա՟ծ փառաւորեալ յաւիտեան․ որ կենարարդ ես մարմնոց․ եւ գոյացուցիչ հոգւոց մեր ննջեցելոցն։ Որ բարձրացար ի խաչին փ՟ն Ադամայ նորոգման․ եւ իջանելով քո ի դժոխս աւար առեր զգերեալսն։ Զգինս արեան քո յիշեա կենագործող աշխարհի․ եւ հանգստեան արժանաւորեա՟ յԵրուսաղէմին վերին։

Սօ․․ Ամենագովելի եւ քան զերկինս բարձրագոյն որ զանհաս՟անելի զԲանն յորովայնի քում կրեցեր․ եւ ցնծութիւն աշխարհի ծնար․ վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։ Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս որ զանբաւ՟ելի զԲանն անճառաբար յղացար․ եւ զմարմնացեալն Ա՟ծ ծնանելով ի քէն․ վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։ Ի լեռնէ վէմ առանց ձեռին հատեալ Դանիէ՟լ գուշակեաց զանսերմն ծնունդ քո հարսն երկնաւոր․

մայր և յետ ծննդեան մնալով կոյս. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

ԽՁ. Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք։ Որ եկն ի լուսաւորել զընտրեալ իւր զեկեղեցի. եւ պսակեաց իւր խաչիւն. Նըմա ըզփառս երգեսցուք։ Փառք Հօր։

Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուսցուք փառս եւ պատիւ յաւիտեան։

Այժմ և միշտ։ Յանձն առեր զչարչարանս վասըն նոյեան տապանին. ի հրեշտակէն ընկալար զփայտ փրկութեան աշխարհի. ըզքեզ ունիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Գ.Ձ։

Սուրբ ես Տէր և ի սուրբս հանգուցեալ. բարեբանեալ ես ի վերին զօրաց և ի սրբոց քոց. Տէր Աստուած հարցն մերոց։ Զարմանահրաշ մահ տարաժամ ի ցամանէ քում հրամանի. բարձ ի մէնջ բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յակոբայ. Տէր Աստուած հարցն մերոց։ Ի քէն հայցեմք զօգնութիւն ամենասուրբ Երրորդութիւն. օգնեա մեզ ի նեղութեան մերում. բարեխօսութեամբ եւ աղօթիւք սրբոյն Յակոբայ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. ԸզՏէր օրհնեցէք զՔրիստոս թագաւորն յիշատակի սորա բարձր արարէք յաւիտեան։ Որ ընտրեաց զերանելի ըզհայրապետն. ի լուսա-

ւորն Լ զմանկունս սուրբ եկեղեցւոյ. զՔրիստոս Թագաւորն յիշատակի սորա բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Որ բազկատարած հայցմամբ խնդրելով ի Տէն զողորմութի. եւ աղբեւր բժշկութեն բղխեալ ի Հայաստան աշխարհի. զՔրիստոս Թագաւորն յիշատակի սորա բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ի հրանիւթիցն սպասաւորելով զարհուրեցոյց ըզթագաւորն. հովիւըն քաջ բանաւոր հօտի և բժիշկ ախտացելոց անձանց. զՔրիստոս Թագաւորն յիշատակի սորա բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Զ:

Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ: 922:

Ողորմեա Գ.Զ:

Երկրպագեմք առաջի տնօրինական նշխարաց. ճըգնաւորին Քրի եւ պատուական վըկային. որ է պարծանք աշխարհի եւ բարեխօս վասըն մեր: փառք Հօր: Ըզճըգնութիւնս սորա առ քեզ ունիմք բարեխօս. եւ աղաչեմք սովաւ հրաշագործեալ յերկրի ըզբըժշկութիւն հիւանդաց. որ է պարծանք աշխարհի եւ բարեխօս վասըն մեր: Այժմ և միշտ: Հընծութեամբ տօնեսցուք ըզյիշատակս սորա. հաւատացեալ ժողովուրդք ի փառս ամենազօր տէրութեն. որ է պարծանք աշխարհի եւ բարեխօս վասըն մեր:

Տէր յերկնից Գ.Զ:

Ամօլըք հաւատոյ և պարծանք որ եկեղեցւոյ. եւ հովիւ քաջընթաց երկնաւոր հօտանպետին. յառաջելական աթոռ նըստար Երանելի որ հայ-

րապետ: փառք Հօր: Մարգարիտ լուսափայլ եւ լուսաւորիչ տիեզերաց. սիւն լուսոյ սրբութեան կանգնեալ ի մէջ Հայաստանեայց. յառաքելական աթոռ նստար՝ երանելի տէր Հայրապետ: Այժմ և միշտ: Հողանիւթ բարունակ եւ բարեխօս առ Տէր վասըն մեր. բարեբանող Բանին կենաց եւ պարծանք եկեղեցւոյ. յառաքելական աթոռ նըստար՝ երանելի տէր Հայրապետ:

Մանկունք ի Հայրապետացն Գ.Ձ:

Հայրապետ սուրբ եւ անբիծ և ընտրեալ յո-րովայնէ. սքանչելագործ վըկայ եւ պարծանք ազգի մարդկան. առ Քրիստոս բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս: Հովիւ հովուէր բանաւոր հօտի. լուսաւորիչ տիեզերաց սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցւոյ. առ Քն բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս: փառք Հօր: Հաստատութի՛ հաւատոյ պըսակ ի գլուխ եկեղեցւոյ. պայծառ քարոզ տիեզերաց եւ պարծանք ազգի մարդկան. առ Քն բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս: Այժմ և միշտ: Ի տաճարի քում սրբութեան երկրպագեմք քո նշխարաց. փառաւորեմք զօր յիշատակի կատարման քո հանգստեան. առ Քն բարեխօսեա վասըն մեր քո տօնողացս:

# Ե. ԿԻՒՐԱԿԷ

## ՅԻՍՆԱԿԱՑ

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Ձ:

Որ յաւիտենից ես ԱԾ եւ Տր ամենայն կենդանութեան. խոնարհեցար ի չարչարանս՝ համբերելով

խաչի՛ և մահուն. զքե՛զ օրհնեմք Աստուած հայրցըն մերո՛ց: Որ ամենայն բարութեանց ես Տէր և ի քրովբէական աթոռ նստիս. եդար ի նորափոր վեմի անապական մարմնով. զքե՛զ օրհնեմք Աստուած հայրցըն մերո՛ց: Որ էակից ես Հօր և Սուրբ Հոգւոյն. իջեր ի դժոխս փրկեցեր զգերեալսն աւերելով ըզմահ՝. զքե՛զ օրհնեմք Աստուած հայրցըն մերո՛ց:

Գ. Ըզտէր Երգո՛վ օրհնութեան բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Որ եկեալ ըզզօրութիւնս դժոխոց խորհրդով անօրէնութեան խլեաց. Քրիստոս թագաւոր փառաց փառաւորեալ ի զօրաց զուարթնոց. եկայք ժողովուրդք երգով օրհնութեամբ բարձր արարէք յաւիտեան: Այժմ և միշտ: Որ բանիւ գոյացուցեր զարարածս էակից Բանն ի Հօրէ Քո՝. և մահու խաչի զամենայնըն վայելն մեր համբերեալ յաղթեաց մահու իշխանութեան. եկայք ժողովուրդք երգով օրհնութեամբ բարձր արարէք յաւիտեան:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Գ.Զ:

Որպէս լեր Աստուածածին յոյս և փրկութիւն մարդ. ըզքե՛զ ընդունող լուսոյ մեծացուցանեմք: փառք Հօր: Ըզքե՛զ լուսոյ մայր և կոյս. ըզքե՛զ գանձըդ կենաց ծածկեալն. ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Մայր սուրբ անարատ լուսոյն հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ըզքե՛զ մեծացուցանեմք:

ՈՂՈՐՄԵԱ Գ.Զ:

Քրիստոս Աստուած որ տարածեցեր ըզձեռս քո ի

խաչին. եւ լուծեր զկնիք դատապարտութեան մերոյ. ողորմեա։ փառք Հօր։ Ի խաչին բեւեռեցար. եւ հեղմամբ արեանդ քո փրկեցեր զգոյեղէնս ի մեղաց. ողորմեա։ Այժմ եւ միշտ։ Թաղեցար ի մէջ երկրի. եւ յերրորդ աւուր յարեար. ըզդըժոխս աւերեցեր բանիւ. ողորմեա։

Տէր յերկնից Գ.Զ։

Ի խաչանիշ փայտէն գըղըրդեցան գըժոխք. զօրութիւն որ Հոգւոյն նորոգեցաւ երկիր. ով է սա որ խափանեաց զմահ։ փառք Հօր։ Հրեշտակն աւետեր կուսին Մարիամու. սա է ի սկըզբանէ Բանն որ յառաջ քան զյաւիտեանս Որդին. սա է Թագաւորն որ խափանեաց զմահ։ Այժմ եւ միշտ Յարեաւ յաւուր երրորդի. վէմըք պատառեցան երկիր շարժեցաւ սասանեցան դըժոխք. սա է կենդանին յաւիտենից Քրիստոս։

## Ի. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

### Ս. Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետին։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ։ Որք հաղորդեցան։ 371։

Մանկունք եւ Համբարձի Գ.Զ։

Որ հրաւիրեցեր զյառաջագոյն ընտրեալսն ի սկըզբանէ աշխարհի. ի հարսանիսն անմահական. կոչելով յուրախութիւն ընդ բազմելոցն յառագաստին զաստուածազգեացն. աղաչանօք սորա կեցո զմեզ փառաց Թագաւոր։ փառք Հօր։ Որ յաթոռս քերովբէականս վերանըստեալդ հանգչէիր Որդի Աստուծոյ. հաճեցար խոնարհութեամբ

բառնալ ի գիրկս յորդւոց Ադամայ· աղաչա՛նօք սորա կեցո՛ զմեզ փառաց թագաւոր։ Այժմ և միշտ։ Ո՛ր ընդբաժակ անմահութեան սիրոյ քո ար՛բեալ երանելին ի գնատունս· որպէս ցօրեան ա՛ստուածային գաղտնեաց մանրեալ ժանեօք հա՛ց ի՛բ գիտաւ Աստուծոյ· աղաչանօք սորա կեցո՛ զմեզ փառաց թագաւոր։

## Ե. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ա· Թէոպոմպայ եպիսկոպոսին և Թէոնեայ վկային. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիքի և Բասիլիդեայ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԻԶ· Անոխակալ։ 352։

## Ե. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴԿ· Օրհնեալ ես Տր։ 449։

## Ե. ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ա· Ադդէի հայրապետին և Աբգարու թագաւորին։

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ· ԱԿ· Որ զերկնաւոր։ 1074։
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԳԶ· Որ զանչափ քո։ 362։
Մաղթ· ի Ճաշ· Ով երանելիդ ամենեցուն ։1084։

## Ե. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

# Ե․ Շ Ա Բ Ա Թ

## Ս․ Ինդոսի ներքինւոյն և Դոմնայի կուսին. և Գղիկերիոսի քահանային. և երկուց բիւրուցն:

ՅԱՌԱՒՕՏՍ․ Հարց ԻԲ․ Ընդ որս քո բա: 353:

Մանկանց և Համբարձի Գ․Կ:

Այսօր ընդ անմարմնոցըն դասակցեալ պարէ եկեղեցի. տօնելով ըզյիշատակ բիւրաւոր վըկայիցն. որք ընծայեցան ի վերինն Երուսաղէմ. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Այսօր բանաւոր ողջակիզաց դասուց բիւրաւորաց ի վերայ կայծականց բորբոքեալ բոցոյն զերից մանկանց երգելին զօրհնութիւնս. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Այսօր կամաւոր քեզ պատարագ զանձինս ընծայեցին. ի վերայ սրբութեան սեղանոյ. և ընկալան ըզպըսակս անապական. փառաւորելով զթագաւորըն Քրիստոս: Փառք Հօր: Այսօր ընծայէ եկեղեցի զմանկունս առագաստի երկնաւոր փեսային. որք ընդ հրեշտակս երգակցեալ ցընծութեամբ. փառաւորելով զթագաւորն Քրիստոս: Այժմ և միշտ: Այսօր ժողովեալ հաւատացեալքըս սուրբ Երրորդութեն ի տաճարի ճըգնութեն վըկայիցըս. խնդրելով զթողութիւն յանցանաց. փառաւորելով զթագաւորն Քրիստոս:

# Դ. ԿԻՒՐԱԿԷ

## ՅԻՍՆԱԿԱՑ

որ խոտորի աւուր ի գալն Ծննդեան։

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Զ։

Կամաւորութեամբ եկիր ի չարչարանս Տէր. և ի վերայ նախաստեղծին ընդմեռանել յանձն առեր. Տէր Ած հարցն մերոց։ Անպարտական մահու ոչ մահապարտ. դատապարտեալ ի խաչ ելեր վասն ազգի մարդկան. Տէր Ած հարցն մերոց։ Անմահութեան տուող Քս Ած. ի գերեզմանս իջեր յարուցիչ մեռելոց. Տէր Ած հարցն մերոց։

Գ.. ԶՏր՝ օրհնեցէք բարձր արարէք զբազմեալն ի վերայ խաչին։ փառք Հօր։ Որ կանգնեցան ըզքառանկիւն սեղան խաչին. յաղագս քառակողմ աշխարհի պատարագեալ. յորմէ սեղանոյ բուրեաց անուշահոտ հոգի. բարձր արարէք զբազմեալն ի վերայ խաչին։ Այժմ և միշտ։ Որ փոխանակ մեղսաբեր մահացու պտղոյն. պարգևեաց մեզ կենարար արդարութեան. ի կեանս յաւիտենից նորոգելով ըզմեզ. բարձր արարէք զբազմեալն ի վերայ խաչին։

Մեծացուսցէ Գ.Զ։

Սուրբ զԱստուածածինն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր. ըզծնեալ փրկիչն ի սուրբ կուսէն։ Այժմ և միշտ։ Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

### Ողորմեա Գ․Զ․

Լոյս ճշմարիտ որ ի Հօրէ առաքեցար առեր մարմին պարագրել ի կուսէն․ ոչ մեկնելով յանքըննին յէութենէ Բանդ Ա՛ծ․ ողորմեա։ Փառք Հօր։ Որ անճառ ես յարարածոց և քան զմիտս գերազանց․ զոր երկինք ոչ բաւէին տանել յարգանդի կուսին կրեցար․ Բանդ Ա՛ծ․ ողորմեա։ Այժմ և միշտ։ Զչարչարանըս յանձն առեր՝ ախտակիր հողեղինացս եղեր․ վասըն մերոյ փրկութեան ի գերեզմանի եդար․ անկորուստ պահելով զարարածըս․ Բանդ Ա՛ծ․ ողորմեա։

### Տէր յերկնից Գ․Զ․

Փառաւորեալ է քո յարութիւնդ։ Որ յարեարդ ի մեռելոց յաւուր երրորդի՝ Քրիստոս Որդի Աստուծոյ․ փառաւորեալ է քո յարութիւնդ։ Որ յահեղ բարբառոյ յարութեան քո Տր երկիր շարժեցաւ․ վէմք պատառեցան Քրիստոս Որդի Աստուծոյ․ փառաւորեալ է քո յարութիւնդ։

Ի ձայն ահեղ յարութեան քո Տէր զարհուրեցան զինուորացըն դամբանքն․ յարփիափայլ հրեշտակին իջմանն․ և դողալով շարժեցաւ երկիր։ Փառք Հօր։ Առաւօտեան որ կանանցըն դիմելով ըզվիմափոր գերեզմանն․ բերելով զիւղս անոյշս ի յօծումըն կենարար մարմնոյն․ անպարագրելի էականութեան։ Այժմ և միշտ։ Նու-տեսեալ ըզքերովբէն վերանըստեալ ի վիմին․ տարփողելով սըրբուհւոյն․ ասէ դարձիր ողջոյն տուր փողոցն․ քանզի յարեաւ որ յառաջըն ասաց։

## Զ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Աբրահամու և Խորենայ. և անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Օրհնեմք զքեզ։ 356։

## Զ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Ստուածատրոյ վկային։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Որք 'ի մարտի։ 357։

Ի Դեկտեմբերի [illegible] [illegible] պահք Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

## Ա. ՕՐ ՊԱՀՈՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Նորգէին մանկունք։ 563։

## Բ. ՕՐ ՊԱՀՈՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԿ. Փառաւորեալ։ 669։

## Գ. ՕՐ ՊԱՀՈՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲՁ. Որ ապրեցուցեր։ 690։

## Դ. ՕՐ ՊԱՀՈՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲՁ. Որ ահաւոր։ 692։

## Ե. ՕՐ ՊԱՀՈՑ

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Հարցն մերոց։ 694։

Բայց յոր օր ուրբաթ հանդիպի 'ի մէջ պահոց, Հարց հանգստեան ասա ըստ ձայնին, որպէս և յամենայն ուրբաթս։

925.



Ոչ արասցէ տր ած իրս ինչ. եթէ ոչ յայտնեսցէ ծա-
ռայից իւրոց մարգարէից:

# ԱՒԱԳ ՏՕՆՔ

## Վկայք Ծննդեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

---

# ԱՌԱՋԻՆ ՏՕՆ

## Ս. Դաւթի Մարգարէին և Յակովբայ Առաքելոյն, եղբօր Տեառն։

Ի նախընթացն երեկոյին նախատօնակ ասասցեն, և [illegible] շարականն ՚ի լման տաղ երգ ասօրն։ Օրհնէ Սաղմոսն․ Բն Ած մեր։ Քար․ Սբ ճգնաւորքն աղաչեսցուք։ Աղ․ Որ ընտրեցեր։ Հայր մեր։

---

### Ի ԳԻՇԵՐԻ

### Օրհնութ Գ.Ձ։

Յաղթող քնարաւ յօրհնաբանութեան երանելին Դաւիթ․ որ զօրացաւ ի վերայ այլազգեացն և հալածեաց պարտեաց զանօրէնն ըզԳողիաթ զմարգարէն արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Ուսարուք զարդարութ բնակիչք երկրի․ նայեցարուք ընդ արդարըն Յակոբ որ հաճոյ եղեւ Այ վարուքն խորովք․ ըզնա արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Սա եղեւ վիճակակից առաքելոց նրց և կոչեցաւ եղբայր Տեառն ի տանէ Դաւթի․ ըզնա արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։

† Որ երջանիկ լուսովըն զուարճանայր մարգարէն Դաւիթ և հոգւովըն վերանայր ի կատարըս լուսեղէնս․ ըզնա արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Որ հողանիւթ բնութեամ-

րըն զուգակցեալ ընդ նր Հոգւոյն. և աղաչէր ընթացաւորն ի դիւական ախտէն. ընդ նորա-ցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց:

ՌԹ.. Ամոլք հաւատոյ այսօր փայլեն Հայր սուրբ ի քո նր եկեղեցւոջ. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա: Բարեխօսութեամբ Պետրոսի և Պօղոսի քո սուրբ առաքելոցն. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա: Լուսաւորեալք ի սոցա դպրութենէս փառաւորեմք զերրորդութիւնդ. երկրպագանչիւրոցն. աղօթիւք տօնողացս ողորմեա:

Որ ի հրեղէն զօրաց երկնից փառաբանիս Աս-տուած. որով զերկնային անապական ածային ըզշնորհս հեղեր յորդիս Ադամայ. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած: Երեւելով հողեղինացս անհիւթականքն ի ձեւ մարմնոյ. որք եւ ծանու-ցին մարգարէիցն ընդխոնարհութ քո գալստեանդ բազմապատիկ տեսլեամբք օրինակելով. աղա-չանօք սոցա ողորմեա մեզ Աստուած: Անճառելի տնօրէնութեանդ քո աւետաբերք առաքեցան Գաբրիէլ եւ Միքայէլ. անմարմնական դասքն իւրեանց յերկրի սպասաւորելով. աղաչանօք սոցա ողորմեա մեզ Աստուած:

ՄՐԳ.. Որ աւետաւոր քում գալստեանդ առաքե-ցեր յաշխարհ զդասս մարգարէսն. եւ եկեալ խո-նարհութ նոր օրինօք զթերին լցեր ի գիրս օրի-նաց եւ մարգարէից. բարեխօսութ սոցա Քրիստոս ողորմեա մեզ: Որ կոչեցեր մարգարէիւք յառա-ջագոյն զհեթանոսս քեզ նոր ժողովուրդ. եւ ընդունեցեր Միքայէլի զեկեղեցի հեթանոսաց հար-

ցըն սիրելի անմահ փեսային. բարեխօսութեամբ սոցա Քրիստո՛ս ողորմեա մեզ: Որ ըղձանօք տածարիս զոր շինեցեր շինօղդ էից ի վերայ վիմի. բարձրագոյն քան զառաջինն. և գերազարդ վայելչութեամբ տեսանողքըն ծանուցին նմանութիւնք Հոգւոյն. բարեխօսութեամբ նոցա Քրիստո՛ս ողորմեա մեզ:

ՀԱՅՐ. Որ ասացեր ողորմութիւն շինել զաշխարհս իսկզբանէ. ողորմելով որդւոց Ադամայ եւ առ յազգէն Արշակունեաց հովիւ ընտրեալ զսուրբն Ներսէս. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Որ ի ստունգանել թագաւորացն զձայն քո օրինաց. ընդպատուհաս բարկութեան մերոյ յառաջագոյն ժամանակօք յայտնեալ ցուցեր սրբոյն Ներսեսի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած: Որ պատուական արեամբըդ քո ազատեցեր զաշխարհս յանիծիցն. փրկեա ըզմեզ ի նեղութեանց մերոց և ազատեա յանօրինաց. բարեխօսութեամբ սրբոյն Ներսեսի. աղօթիւք սորա ողորմեա մեզ Աստուած:

ՀԳ. Որ ի վերայ բըղխեալ գաւազանին Յեսսեայ հանգեար եօթնարփեան շնորհօք. Հոգի Աստուծոյ եւ խորհրդոյ. հոգի հեզութեան և զօրութեան. հոգի իմաստութեան և գիտութեան. հոգի երկիւղի Աստուածպաշտութեան. աղաչեմք շնորհեա և մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւացդ: Որ զգուշակեալըն քո Եսայեաւ ելից օծեալն ի քէն մարմնով. ասէ Հոգի Տեառն ի վերայ իմ. զոր ի տնօրէնութեանըն խոնարհութեան ընթերցեալ որ վասն իւր զբան մարգարէին. աղաչեմք շնորհեա և մեզ ողորմութեամբ ի քոց պարգեւացդ: Որ

զառաքումն առ ի Հօրէ և ի Հոգւոյդ Սրբոյն յաշխարհ. մարգարէիւքն ծանուցեր. զոր ի դիմաց մարդացելոյն քարոզանէր առ մարդկութիւն. Տէր Տէր առաքելոց զքո և Հոգւոյ Նորա. աղաչեմք շնորհեա և մեզ ողորմութիւն ի քոց պարգևացդ:

Հն. Բանդի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից թագաւոր փառաց. ամենակալ ամենակարող թող ըզմեղս մեր ննջեցելոցն. և հանգո ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան: Որ ի նախնումն ըզմարգարէն Մովսէս լուսաւորեցեր աստուածային փառօք տեսլեամբ Աստուածութեանդ քո. լուսաւորեա և ըզմեր ըզննջեցեալսն և հանգո ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան: Բարեխօսութեամբ որ Աստուածածնի ծնողի և մօր քո յիշեա զգլուխս արեան քո Տէր. և դասաւորեա յերանաւէտ յանթառամ և յանտրտում ի կեանս. ի յարքայական ի հանգստեան:

Մօ. Թագաւոր փառաց Տէր Հոգիդ կենդանարար. ի շնորհաբաշխ աւուր մեծի ծննդեան Մարիամու. զգեստեր Դաւթի թագաւորին. Ներեգեա զկենդանութին մերոյ թագաւորին. զի օրհնեսցուք ըզքեզ Տէր այժմ և յաւիտեան: Աղբիւր կենաց և փրկութին մերոյ Հոգի Հօր և Որդւոյ. ի յարմանալոյն Յեսսեայ բըղխման գաւազանի հասեալ ժամու. շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ հայրապետին. զի օրհնեսցուք ըզքեզ Տէր այժմ և յաւիտեան: Լրումն աշխարհի և ճառագայթ իմանալի Հօ-

գի սուրբ Աստուծոյ. ի ցնծութեան աւուր լըր-
ման ուրախութեան Յովակիմայ եւ Աննայի.
աղօթիւք սորա լցո զպէտս կարեաց Հայաստա-
նեայց եկեղեցւոյ. զի օրհնեսցուք ընդ քեզ Տէր
այժմ և յաւիտեան:

ԽԶ. Գաւազան զօրութեան ընկալաք քո ետուր մեզ
Քրիստոս. և սովաւ յաղթեսցուք անօրէն թըշ-
նամեաց: Այս է զէն յաղթութեան սրբեալ արեամբ
Որդւոյն Այ. և սովաւ յաղթեսցուք անօրէն
թշնամեաց: Այս է աթոռ տէրունեան և ի սմա
է բազմեալ Քն Որդին Այ. և սովաւ յաղթեսցուք
անօրէն թշնամեաց: Այս է սեղան սրբութեան
եւ ի սմա է պատարագեալ Քն՝ գառն Այ. և սո-
վաւ յաղթեսցուք անօրէն թշնամեաց: Փառք
Հօր: Այս է կարապետ յաւուր գալստեան փըր-
կչին. եւ պսակ պարծանաց հաւատացելոց. և
սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամեաց:

Այժմ և միշտ: Որ հրաշազարդեալ գտար ի
կարգըս թագաւորաց. և միմեանկից եղեւ ընդ ա-
ռաքելոցն. ընդնմա աղաչեսցուք բարեխօս առ Տէր
վն անձանց մերոց:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Ձայն ԴՁ:

Մեղաք յամի՝ և ընդպատուիրանըս քո ոչ պահե-
ցաք այլ խոստովանիմք առ քեզ. մի՛ անտես
առներ այլ գթա ի մեզ Աստուած հարցն մե-
րոց: Մարն Դաւթի սիրելոյն քո և Յակովբայ
որդւոյ աղաչեմք ընդ քեզ. մի՛ անտես առներ

այլ գըթա՛ ի մեզ Աստուած հարցըն մերոց: Որ նըստիս ի քրովբէս եւ հայիս յանդունդս. յիշեա՛ ողորմութեամբ քո զԴաւիթ. եւ աղօթիւք սըրբոյն Յակովբայ խընայեա ի մեզ Աստուած հարցըն մերոց:

Գ.. Ա՛զՏր օրհնեցէ՛ք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ ընտրեաց զերանելին ըզԴաւիթ. յառաջնորդութիւն Իսրայէլի. օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ կացոյց ըզքանչելին ըզՅակովբ. պարիսպ շըրջապատ եկեղեցւոյ իւրոյ. օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Դ.Ձ:

Թագաւոր փառաց Ած Հոգիդ կենդա: 747:

Ողորմեա Դ.Ձ:

Անըսկիզբն Ած լոյս ի լուսոյ. որ ծագեցեր մեզ եղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի. աղօթիւք սորա Աստուած ողորմեա մեզ: Փառք Հօր: Անմարմնոց վերնոց Թագաւոր յաւիտենից. որ մարմնով երեւեցար յերկրի ի զաւակէ Դաւթի. աղօթիւք սորա Աստուած ողորմեա մեզ: Այժմ եւ միշտ: Յառաջնումն Ածահայր անուանեցաւ մարգարէն Դաւիթ. եւ ի վերջինս եղբայր Տեառն կոչեցաւ ըսքանչելին Յակովբ. աղօթիւք սորա Աստուած ողորմեա մեզ:

Տէր յերկնից Դ.Ձ:

Երդուաւ Տր Դաւթի ճշմարտութբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել ի յաթոռ նր. օրհնեցէք ըզտէրութին նորա ամենայն

երկիր։ փառք Հօր։ Ծագեաց մեզ Տէր զեղջիւր
ի Դաւիթ. պատրաստեաց ընծրայ օծելոյ իւրոյ.
գովեցէք ըզտէրութին նորա ամենայն երկիր։ Այժմ
և միշտ։ Զյակովբ ընտրեաց իւր Տէր ժառանգել
նովաւ ըզնոր ժողովուրդ ըզհոգևորն Իսրայէլ. բա-
րեբանեցէք զԱծութին նորա ամենայն երկիր։

Առաւօտու Երգ. Ով են բանք։ Գձն. Այժմ մեծ.
խմ գոհ ....։

Մանկանց և Հայրերն Դ.Զ։

Օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր. քան-
զի ծագեաց մեզ եղջիւր փրկութեան ի տանէ
Դաւթի կեցուցանել ըզմեզ կամեցաւ. օրհնե-
ցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։ փառք Հօր։
Գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ. Դա-
ւիթ մարգարէն. և ի նորին շառաւիղէ առաքեա-
լըն Յակոբոս ականատես եւ սպասաւոր Բանին
Աստուծոյ. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։
Այժմ և միշտ։ Յեկեղեցիս օրհնեցէք ըզՏր. որ
երկոքեամբք ընտրելովք՝ առաքելոյն Յակոբու
և մարգարէին Դաւթի՝ հաստատեաց զհի-
մունս սուրբ եկեղեցւոյ. օրհնեցէք ըզՏէր
յօրհնութիւն ի նոր։

# ԵՐԿՐՈՐԴ ՏՕ.Ն

## Ս. Ստեփանոսի Նախավկային։

Ի Խնկարկութեանն Երեկոյեան Նախատօնակ ասասցի, և
շարականն 'ի կէսն .... էր ....։ Զինչ
Աւետման Հր Աւ մեր։ Գձն. Ամ ճգնաւորքն։
Ող. Որ ընտրեցեր։

### Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնու—Ե Գ.Կ:

Նահատակ բարի Քրիստոսի եղեր այսօր ի միջի մերում. եւ մտեր ի վերնատունն խորհրդոյ յաւիտենականին: Որ ընտրեցար ի դասս երկնաւոր զօրացն. պսակեցար ի Թագաւորէն. զանթառամ ընդ պսակն. և մկրտեցար արեամբդ քո նորոյ. առաջին վկայ Քրիստոսի սուրբ Ստեփանոս. նախասարկաւագդ ըմբեծ: Ամրացեալ ընդդէմ Թշնամւոյն այսօր և գնեցեր արեամբդ քո զարքայութիւնն. ի պարծանս ազգի մարդկան. ճգնաւոր Քրիստոսի. գոհութիւն երեքսրբեանն. որ ընկալաւ ըզվկայդ իւր զսուրբ Ստեփանոս. ի վերինն Երուսաղէմ:

† Որ ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփանոս. բարեխօսեա մեզ Քրիստոսի վասն անձանց մերոց: Որ խնդրեցեր զթողութիւն ի վերայ քո քարանձիգ ժողովրդեանն սուրբ Ստեփանոս. եւ այժմ վասն քո ուխտաւորացս աղաչեա զընդ աջմէ Հօր նստեալն: Որ արժանի եղեր զմարտիրոսականն առնուլ պսակ նախ ի վկայս. առ պսակիչն նոցա և վասն մեր բարեխօսեա:

Գ.Կ

Առաքելոց և նախավկայ Քրիստոսի սուրբ Ստեփանոս. որ ըզքարկոծումն յանձն առեր և յանմահից բնակարանսն վերափոխեցար. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճանս: Տէր անմահ ի մանական գրախտին շնորհեցար ի Հօրէ.

և լուսաւորեցար անճառապէս. այսօր ցնծան դասք հրեշտակաց ընդ քո մեծապայծառ ճգնութեանդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Նախաստեղծ մարդոյն պտուղ ընծայեցար մերձ յանմերձենալի լոյսն. և հայրենի աւանդութեանն եղեր ժառանգորդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Ճանապարհ վկայից յառաջնի գտար. և ածային փառացն արժանաւոր եղեր. բանաւորական զենու քո վիրաւորեցաւ. և նախաստեղծըն պայծառացեալ բերկրեցաւ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան:

ՈՐՏ. Որ էն յէութեան Որդի միշտ յէն՝ անճառելի ծնընդեամբ հայրական. զոր ի վերուստ հընչեցին որդիքն որոտման. և յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խորհուրդ: Բանն անըսկիզբն՝ ի կուսէն սկզբնաւորեալ. ի յերկրի մարմնով երևեցաւ. զոր տեսին քարոզք Բանին ճշմարտութեան. և ծանուցին տիեզերաց Աստուած և մարդ: Նոյնպէս Բանն Աստուած միացաւ ի մարմնի. անփոփոխ գոլով յէութեան. որում եղեն ականատեսք որդիքն որոտման. և ընդ հանուր քարոզեցին զԲանն մարմին եղեալ:

ՄԱ. Իմաստութիւն երկնային իջեալ ի վերուստ. ժողովել զընտրեալսն ի սկզբանէ զյիմարս աշխարհի. և լըցեր ի լուսով քո իմաստութեան. հալածել սոքօք ըզխաւարն անգիտութեան ի մէնջ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Ի ծովու ճանապարհորդեալ անհետ ընթացիւք. ի ծովակէ կոչեցեր զորսորդս անբանից կենդանեացն ի մահ. զի ի

ծովէ աշխարհի որսայցեն ըզբանականս ի կեանս. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փըրկիչ: Բանաւոր երկրի մըշակք երկնային. որ ետուր ըզսերմըն կենաց ի լեզուս բանին մըշակաց. եւ առաքեցեր սերմանել յոգիս բանաւորաց. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փըրկիչ:

ՄՐՏ. Երրորդութեանըն սիրող անձինք յաղթող վըկայիցն. արժանաւորք ընդունելոյ ի յառագաստըն լուսոյ: Զի զառաջին մեղացն ըզզօրս արեամբըն իւրեանց շիջուցին. եւ ըզտիեզերս հրաւիրեցին յօրհնաբանութիւն: Զնըմանս արեանն իւրեանց մեզ ճանապարհ հորդեցին. եւ առ Քրիստոս մեզ դուռըն կենաց բացին ի յերկինս:

ԶԳ. Աղբեւր կենաց բըղխող շնորհաց Հոգւոյդ իջեալ ի բարձանց. զանապականն պարգեւս քո բաժանեցեր յառաքելսն: Որ ի վերայ ջուրցըն գոլով ստեղծանէիր զարարածս. իջեալ ի ջուրս աւազանին ծընանիս որդիս Աստուծոյ: Որ զարդարեալ նորոգես մըշտ ըզնոր քո զեկեղեցի. պէսպէս շնորհաց քոց պարգեւօք փայլեն մանկունք սորա:

ԶՆ. Ես անսացի Տէր ողորմեա հոգւոյ իմոյ բազմամեղի. որ բնակեալդ ես ի յերկինս և յանմարմնոց փառաբանիս. յիս մարդասիրեա բազմագութ փըրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Պակասեցայ յազգատոհմէ. լըքեալ թողի զկեանս աշխարհի. և մարմին ունայնութեան դարձաւ ի հող ուստի ստեղծաւ. յիս մարդասիրեա բազմագութ փըրկիչ եւ փարատեցո զցաւս անձին իմոյ:

Յաւուր յայնմիկ մատնեցայ ի ձեռս ահեղ հրապարակին. և առ քեզ ապաւինիմ ստեղծող բնաւից Տէր բոլորից. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ եւ փարատեցո ըզցաւս անձին իմոյ:

Ծ՛Ն. Որ անհաս և անքնին՝ քառակերպիցըն վեհագոյն. ի փրկել ըզմեզ եկեալ անմահից թագաւորն օրհնութեն առաքողին: Ռուաքի հրեշտակապետն առ սերովբէն հողեղէն. ասէ Տէրն և արարօղն առաքեալ ի Հօրէ մարմնանալ ի քէն փրկօղն: Ակըլոտի ի Յորդանան՝ վըկայելով Հօր և Հոգւոյ. ավսաննայ ի բարձունս երգէին մանկունք օրհնութի որդւոյ Դաւթի:

ԽԶ. Խաչի քո Քրիստոս երկրպագեն արարածք ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սուրբ եղիցի մեզ պահապան յաղթօղ. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին: Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովել ըզհեռացեալսըն կենաբեր փայտիւն. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին: Փառք Հօր: Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմա սպասէին որդեկեալքն ի մեղսասէր բանտին որ աղատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին:

Այժմ և միշտ: Պասակարդեալք և մեք ընդ անմարմնական բազմութիւն. վերահայցեմք ընդ հրեղէն լեզուացն՝ աղօթանուէր մաղթանօք. հայցեմք ի քէն մարդասէր փրկիչ. խնայեա ի մեզ ստեղծող մեր և կեանք աշխարհի:

Թագաւոր յաւիտեանն :

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ծը-
գնութե սրբոյն Ստեփանոսի նախավկային։
Քանզի գովէ եւ կենդանեցին քո Քրիստոս. ընդ-
յաղթանակ մարտ հեղման արեան սորա ի
վերայ ընծայի անուանելոյն քո Տէր :

Բազում համարձակութի է սորա առաջի Այ ի
ձեռն հեղման սուրբ արեանն իւրոյ. քանզի յօ-
ժարութեն մատնեաց զանձն իւր չարաչար եւ դառըն
տանջանաց՝ վս մեծի անուանն Տն : Քանզի
արհամարհելով անարգեաց զանցաւոր ընդ կեանս
աշխարհիս եւ փափագեաց յաւիտենական կենացն.
եւ միշտ եւ հանապազ ուրախանայ ընդ Տն ի երկ
յանմահական յուրախութիւնս: Քանզի գովէ եւ կեն-
դանեցի քո Քրիստոս. ընդ յաղթանակ մարտ հեղ-
ման արեան որ ի վերայ ընծայի անուանն քո Տէր:

Փառք Հօրն էականի Որդւոյն միածնի եւ ա-
զատիչ որ Հոգւոյն ընծայելէ: Փառք պատիւ
եւ իշխանութիւն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից ամէն:

Եւ յորժամ շարժին երկինք եւ երկիր ի յահէ
փառաց Բանին Տն Աստուծոյ: Յայնժամ նը-
տուցանէ ընդ աջմէ իւրմէ ըզսիրելիս անուան իւ-
րոյ ի լուսեղէն խորանսն զուգաւոր ընդ իւր:

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Դ.Զ:

Ընդ երկնայինն հոգեղինաց դասուցն. այսօր տօ-
նեմք ըզյիշատակ սրբոյն Ստեփանոսի. բարեբանե-

ռով ընդ քեզ Տէր Աստուած հարցն մերոց։ Որ հրեշտակակերպ տեսլեամբ արիաբար պատերազմեալ զքարկոծումն յանձն էառ. խոստովանելով ընդ քեզ Քրիստոս Աստուած հարցն մերոց։ Որ անպարագրելի Աստուածութեանդ տեսող՝ և բարեխօս իւր ուխտաւորացս. այսօր յիշատակաւ նորին Ստեփանոսի. գովեմք ընդ քեզ Քրիստոս Աստուած հարցն մերոց։

Գ. Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ փառք Հօր։ Որ յերկնային զօրացըն միշտ օրհնի Քրիստոս Աստուած. այսօր յիշատակաւ նորին Ստեփանոսի. ըզՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Հրաշալի աստուածաբանութիւն սրբոյն Ստեփանոսի. քահանայք ընդ վերին զօրացն երկնից՝ զՔրիստոս գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Գ. Զ։

Աստուածածին երկնային դուռն աստուածային ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ փառք Հօր։ Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակեալ հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Այժմ և միշտ։ Որ բոցեղէն սրովբէիւք շրջափակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկս հողեղինի յայտնեալ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։

Ողորմեա Գ. Կ։

Առաքեա ի մեզ Տէր ըզողորմումն գթութեան քո ողորմութիւն. բարեխօսութեամբ սրբոյն Նախավկային քո և ողորմեա։ փառք Հօր։ Որում

զերկնայինըն բացեր ըզդրունս. ցուցանելով զանճառելի զխորհուրդ. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Տէր և ողորմեա: Այժմ և միշտ: Որ աղօթանուէր հայցմամբ ըզթողութիւն խնդրելով ի քէն. անօրէն ըսպանողաց իւրոց. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Տէր և ողորմեա:

Տէր յերկնից Գ.Կ:

Ով երջանիկ ճառագայթ՝ առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփանոս՝ հաստատութիւն ի Քսէ հայցեա մեզ եկեղեցւոյ: Փառք Հօր: Որ քոյին յօժարական համբերութեամբ ըզքարկոծումն յանձն առեր՝. շնորհեաց քեզ յԱյ լինել չարչարակից Քսի. զի և մեզ ուսուսցես փառաւորել սուրբ զնորոգութիւնն: Այժմ և միշտ: Աղօթէիր որ քարաձիգքն լինէին ի քեզ՝ նախոդ ի վկայս. զի առցես ըզհատուցումն բարի յարարչէն ամենեցուն. և այժմ աղաչեմք ըզքեզ և վասըն մեր բարեխօսեա:

Առաւօտու երգ. Պարծեսցին սրբքն փառօք. Հարուստ Ածն մեծ. Խաչ գանձ ———:

Մանկունք և համբերողք Գ.Կ:

Նախասարկաւագ և առաջին մարտիրոս՝ որ ի Քսէ պսակեցար և յերկնաձեմ յառագաստին պայծառացեալ բերկրեցար՝. աղաչեա զՏր շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Փառք Հօր: Որ քոյին համբերութեամբ ըզդրունս երկնից բացեալ տեսեր և զՈրդի ընդ աջմէ Հօր՝. աղօթէիր ի վերայ քո քարաձգողացն՝. աղաչեա զՏր շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Այժմ և միշտ: Եկեղեցիք

արդարոց՝ և ժողովք ուղղափառաց. այսօր ընդ-
յիշատակըս քո տօնեմք՝. և արտասուօք հայ-
ցեմք ի քէն ճշմարիտ վկայ Քրիստոսի. աղաչեա
զՏր՛ շնորհել մեզ ըզկեանս անվախճանս։

# ԵՐՐՈՐԴ ՏՕՆ

## Ս. Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։

Ի նախընթացի երեկոյին նախատօնակ առնիցէր, և ընդունիլէրն 'ի լման սաղ, Եւր ասորեն ։ օրհնեալ Սաղմոսն · Քն Ած մեր · Քար · Սրբ ճգնաւորքն · Աղ · Որ ընտրեցեր ։ Հայր մեր ։

ԻԳԻՇԵՐԻ Օրհ · Դ·Զ · Յնծայ ։ 580 ։ Եւր ասորեն ։

# ՉՈՐՐՈՐԴ ՏՕՆ

## Ս. Որդւոցն որոտման Յակովբայ Առաքելոյ և Յովհաննու Աւետարանչին։

Ի նախընթացի երեկոյին նախատօնակ առնիցէր, և ընդունիլէրն 'ի լման սաղ, Եւր ասորեն ։ օրհնեալ Սաղմոսն · Քն Ած · Քար · Սրբ ճգնաւորքն · Աղ · Որ ընտրեցեր ։

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Դ·Կ ։

Որ էն յէութեան Որդի միշտ ընդ Հօրն՝ անեղանելի ծընունդ հայրական. զոր ի վերուստ հընչեցին որդիքն որոտման՝. և յայտնեցին որդւոց մարդկան զծածկեալս խորհրդոյ. Բանն անըսկիզբն՝ ի կուսէն սկըզբնաւորեալ. ի յերկրի մարմնով երեւեցաւ. զոր տեսին քարոզք Բանին

ճըշմարտութեն. և ծանուցին տիեզերաց Աստ-ուած և մարդ: Իսկապէս Բանն Ած միացաւ ի մարմնի. անփոփոխ գոլով յէութեն. որում ե-ղեն ականատեսք որդիքն որոտման. և ընդ հա-նուր քարոզեցին զԱստուածն մարմին եղեալ:

† Որ անմարմին ի Հօրէ մարմնացար ի կուսէն Թանձրացեալ Բանդ անըմբռնելի. զոր ի մարմնի շօշափեցին որդիքն որոտման. և հնչեցին ընդ տիեզերս զԱստուածախօս կենաց: Որ զանհաս յէից զլոյսդ անտանելի պարագրեալ մարմնով ծածկե-ցեր. զոր ի լերինն արտափայլեալ տեսին որդիքն որոտման. և մաքրեցան անձամբ տեսլեամբ գե-րապանծ լուսոյն:

Առաքեալ և նախավկայ Քրիստոսի սուրբ Ստե-փանոս. որ ըզքարկոծումն յանձն առեր և յան-մահից բնակարանսն վերափոխեցար. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Տունկ անմահ իմանալի դրախտին շնորհեցար ի Հօրէ. և լուսաւորեցար անճառապէս. այսօր ցնծան դասք հրեշտակաց ընդ քո մեծապայծառ ճգնու-թիդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս ան-վախճան: Ածաստեղծ մարդոյն պտուղ ընծայե-ցար մերձ յանմերձենալի լոյսն. և հայրենի աւան-դութենն եղեր ժառանգորդ. աղաչեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան: Ճանապարհ վկայից յետ Քնի գլուխ եր. և Ածային փառացն արժանաւոր եղեր. բանսարկուն զինու քո վիրաւորեցաւ. և նախաստեղծքն պայծառացեալ բերկրեցան. աղա-չեա զՔրիստոս շնորհել մեզ ըզկեանս անվախճան:

ՐՁ·· Որ զօրինակ երկոտասան առաքելոց քոց Քս· եւ զեօթանասուն ընտրելոցն աշակերտաց· յառաջագոյն ծանուցեր ի Թիւ արմաւենեաց և աղբերացն Յաղեմայ· աղաչանօք սց խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Որ շինեցեր ըզտուն քո զեկեղեցի իմաստութի Հօր Յս· և կանգնեցեր ի սմա սիւնս զեօթնարփեան ոգւոյն զօրութին· եւ առաքեցեր ըզծառայս քո նր զառաքեալսն· կոչել զհեթանոսս յարքայութն խառնեցելոյ բաժակին· աղաչանօք սց խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ: Որ տիրականդ իշխանութն հաղորդս արարեր ըզսբ զառաքեալսն· կապել և արձակել զյանցանս մարդկան յերկինս եւ յերկրի· եւ աթոռակիցս լինել քեզ խոստացար յորժամ նստիս յաթոռ դատողական· աղաչանօք սոցա խնայեա ի մեզ մարդասէր փրկիչ:

ՀՐՂ·· Այսօր ուրախացեալ սբ եկեղեցի Քսի· տօնէ խնդութեամբ զտօն վերինն Երուսաղէմի· սրբասաց ձայնիւ փառաւորելով ըզՔրիստոս: Այսօր համաձայնեալ որդիք Սիովնի երկրայնոյ· տօնիւ զուարճանան որդւոց անդրանկաց վերին Սիովնի· սրբասաց ձայնիւ փառաւորելով ըզՔրիստոս: Այսօր դասք անմարմնոցն երգս առեալ պարեն ընդ մարդկան զերգըս հոգեւորս յանմահ փեսայրն յառագաստ· սրբասաց ձայնիւ փառաւորելով ըզՔրիստոս:

ՅՈՎ· Այսօր ցնծայ եկեղեցի ի հոգեւոր հարսանիս· զոր պատրաստեաց ձայն բարբառոյն հար-

սրն մաքուր փեսայի՛ն ։ Ա՛յսօր փեսաւէրն և բա-
րեկամն ընդ երկնաւոր փեսայի՛ն․ միաւորեա՛ց զե-
կեղեցի՛ փոխադրելո՛վ ի յերկի՛նս ։ Ա՛յսօր շնոր-
հեցաւ մեզ դեղ կենա՛ց նշխարք սորին ոսկերաց․
ի ձեռըն ո՛ր լուսաւորչի՛ն Հայաստանեայց աշ-
խարհի ։

Հգ․ Հօգի՛ք հրեղինա՛ցն․ այսօր տօնեն ընդ մեզ ըղ-
գալուստ Հօգւո՛յն Աստուծո՛յ ։ Տեսանողն յառաջ․
նշանակէր զառատաբուղխ վտակ իմաստից ի մեզ
հեղեալ ի Հօգւո՛յն ։ Ը՛մբըն հաւատոյ․ զմայլեալ
անմահական բաժակաւն այսօր բաշխէր ծարաւ-
եաց ։ Գետոցս այս գնացի՛ւք․ ցընծայ քաղաքն
Ա՛յ Սի՛ովն մայր եկեղեցի ։ Ը՛նդ որոյ և մեք․ եր-
րեակ և մի Աստուծոյ երգեմք ընդփառս ի բարձունս ։

Հն․ Հայեցա՛յ ի բարձունս առ քեզ կարօղ յամի․
ընկալ զի՛ս յարկս ա՛րդարոց ամրածածուկ աշը-
վեղ քո՛․ յի՛ս մարդասիրեա՛ բազմագութ փըր-
կի՛չ եւ փարատեցո՛ զցաւս ա՛նձին իմո՛յ ։ Ա՛հա ի խա-
ղաղութի՛ դա՛րձայ ի հօղ յորմէ ստեղծայ․ նորո-
գօղ ճարտարապետ պարգեւատու ողորմութե՛․
յի՛ս մարդասիրեա՛ բազմագութ փըրկի՛չ եւ փա-
րատեցո՛ զցաւս ա՛նձին իմո՛յ ։ Ա՛յլ կենդանի՛քս օր-
հնեմք զքեզ Քրիստո՛ս Թագաւո՛ր յաւիտենից․ որ
փառօք փառաւորիս ի յե՛րկնայնոց և յե՛րկրայնոց․
յի՛ս մարդասիրեա՛ բազմագութ փըրկի՛չ եւ փա-
րատեցո՛ զցաւս ա՛նձին իմո՛յ ։

ԱՕ․ Խ՛ւսեալ բամից դասուց որց զըղձանօքն եղ-
բօրըն վըճարեալ․ բացեա՛լ զտապանն ամենօր-
հնեալ և զղա՛ղձալին իւր ո՛չ գըտեալ․ քանզի ե-

զեւ վերափոխեալ ի փառս անճառ նախ պատրաստեալ: Փառք Հօրն էական՝ պատիւ Որդւոյն իւր էակցի՝. ընդ Հոգւոյն համագոյի՝ որ զարդարեաց զկոյսն ի յերկրի՝. ժառանգել զանճառ բարին զոր պատրաստեաց իւր միածինն: Քանզի անճառ է խորհուրդ՝ փառաց կուսին յանմարմնոց. զոր ի դարուցս վերջնոց եհեղ մարդկան ըստորայնոց. զոր այժմ յուսով բերկրելոց՝ յայնժամ շնորհէ յուսացելոց:

ԽԶ. Որ յանըսկիզբն յէէն անսեղապէս ծընեալ. եւ սրովբէականըն ծածկէիր թեւօք. այսօր ըղպարագրեալըն մարմնով ցուցեր զԱ՟ծութեան քո զփառս աշակերտաց քոց Տէր. քո՜ ամենապայծառ ծագմամբդ ողորմեա մեզ Աստուած: Որ զըստուերական օրէնս մովսիսական տառիցն ի սինէականըն խօսէիր լերին. այսօր ըզՄովսէս և զԵղիաս ածեալ ի մեռելոց և կենդանեաց ի տեսիլ փառաց քոց. քո՜ ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա մեզ Աստուած: Փառք Հօր: Որ զօրինակ մեծի գալըստեան քո Տր. ի Թաբորականըն ծանուցեր լերին. քանզի տեսին դասք առաքելոցն ըզնախահարսն եկեալ փառօք խօսէին զելիցն յերուսաղէմ զխորհուրդ. քո՜ ամենապայծառ ծագմամբդ. ողորմեա մեզ Աստուած:

Այժմ և միշտ: Որ կենարար բանիւ քո անմահացեալք և մահու եղեն գերազանց. յանձն առին ըմպել զբաժակ չարչարանաց ընդ քեզ. զի ընկալցին ի քէն ըզփառս անվախճան կենացն:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Գ. կ:

Որ զամենայնն յոչընչէ արարեր և ըստեղծեր
ըզմարդն ի յանմահութի. ի պատկեր Աստուածութեանդ
քո. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց:
Որ զանկեալն ի մահ պատրանօք բանսարկուին.
կանգնեցեր ի փառս առաջին գթըստեամբըդ քո
յաշխարհս. ըզքեզ օրհնեմք Աստուած հար-
ցըն մերոց: Որ կոչեցեր ըզտիեզերս ի հաւատըս
ճշմարիտս ընտրելովք քո առաքելովք. եւ ցուցեր
աւետարանիչ զորդիսն որոտման. ըզքեզ օր-
հնեմք Աստուած հարցըն մերոց:

Գ. Ըզտէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա
յաւիտեանս: Փառք Հօր: Որ ըստ կամաւոր յօ-
ժարութեան խորհրդոց զօրացոյց սբ զառաքեալսն.
և հրաւիրեաց յերկնից արքայութիւն. օրհնեցէք
եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ
և միշտ: Որ ընկալաւ ի կեանս անապականըս զեր-
ջանիկ սբ զառաքեալսն. և զասնեցոյց ի խորանըս
լուսեղէնս. օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա
յաւիտեանս:

### Մեծացուսցէ Գ. կ:

Աստուածածին Մայր լուսաւոր. որ ըզցօղըն կե-
նաց հեղեր յերկիր բանաւոր. եւ զնախամօրըն շի-
ջուցեր պարտեացն ըզհուր. անդադար ձայնիւ
զքեզ բարեբանեմք. եւ հոգւոր երգով մեծացու-
ցանեմք: Փառք Հօր: Տեղի անտանելի հրոյն.
և երկիր վայրափակ յորում լոյսն ագանիցի. եւ
արեւելք արեգականն արդարութեան. անդադար

ձայնիւ զքեզ բարեբանեմք . եւ հոգւոր երգով մեծացուցանեմք : Այժմ եւ միշտ : Զքեզ կատարումն մարգարէից՝ . կուսական քո ծննդեամբ որով բնութեանս քակեցան օրէնք . հրաշքուն սեռիցըն փոխադրեալ ի լուսաձեւ խորանսն՝ . անդադար ձայնիւ զքեզ բարեբանեմք . եւ հոգւոր երգով մեծացուցանեմք :

Ողորմեա Դ·Կ :

Որդիքն որոտման՝ որք ի վերուստ հնչեցին ըզԲանըդ կենաց ծագեալ ի Հօրէ . եւ ըզտիեզերս հրաւիրեցին յորհնաբանութիւն Երրորդութեանդ . բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ Որդի Աստուծոյ : փառք Հօր : Բանըդ մարմնացար ի կուսէն քարոզըն տեսին . աւետարանեցին յաշխարհի զգալուստ միածնիդ . բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ Որդի Աստուծոյ : Այժմ եւ միշտ : Զչարչարանս եւ ըզմահ ընդ քեզ յանձն առին՝ . հաղորդել փառաց քոց Տէր ի քում գալստեանն . բարեխօսութեամբ նց ողորմեա մեզ Որդի Աստուծոյ :

Տէր յերկնից Դ·Կ :

Հոգի իմ կանխէ առ քեզ Տէր որ ծագեցեր ըզլոյս հրամանի քո յաշխարհ . ընտրելովք քո առաքելովք . վասըն սոցա կեցո ըզմեզ : փառք Հօր : Լցեալ շնորհօք Հոգւոյդ սրբոյ՝ . եւ բարձրացեալ ի վերն խորանաց երկնից . տեղեկացեալ եղեն անճառ էութեան միածնի քո . աւետարանեցին յաշխարհի՝ . վասըն սոցա կեցո ըզմեզ : Այժմ եւ միշտ : Կարօղք եղեն ամ զօրութեամբ . ընդունել ըզդաժանակ չարչարանաց միածնի քո որդիքն ո-

րոտման. և ընդ այժմ դասել. վասն սորա կեցո ըզմեզ։

Մանկունք ի Համբարձին Գ. Կ. ԱՏ։

Որ յանըստուեր ի լուսոյն ընկալար ըզծագումըն շնորհաց. ծիլ նրանելի տէր Յովհաննէս. Եւ հրաշազարդ գըտար յերջանիկ դասս առաքելոցն. հայցեա ի Տեառնէ զթողութիւն յանցանաց։ Փառք Հօր։ Որ փարեցար ըզսարսափելին պարանոցաւն զանմատոյց ըզլուսոյն. Եւ մաքրեցար որպէս զոսկի ի հուր. լուսազարդեալ Երևեցար ի մէջ սըրբոցն որպէս յաստեղս արեգակն. հայցեա ի Տեառնէ զթողութիւն յանցանաց։ Այժմ և միշտ։ Որ ի կենդանի աղբերէն արբեր ըզբըղխումըն շնորհաց. և ի թեւս հոգւոյն հասեր յանհասանելին. աւետարանեցեր մշտընջենաւորական Հօր զէակից Որդին. հայցեա ի Տեառնէ զթողութիւն յանցանաց։

# ՃՐԱԳԱԼՈՅՑ
## ԾՆՆԴԵԱՆ
### ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
### Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՈՒՉՈՐՍ

Ի Գիշերին Ճրագալուցին Ծննդեան Յայտնութեան, և յետ ընթերցուածոցն ի յետոյ Աւետարանին. և յաւելեալ երգեն, և ասեն

Օրհնութիւն Բ. Ձ.։

ՈՒՐԱԽԱՑԻՐ սըրբուհի Գաբրիէլի աւետեօքն. որ քարոզեացն ըզգալուստ արքային Տն ի յերկնից։ Աղջիկն ընդ քեզ Մարիամ

ի քեզ Տէր Հոգին եկեաց. եւ զօրութիւն Բարձրելոյն ի վերայ քո հովանացի: Որ ծնանելովդ է ի քէն Իսրայէլի առաջնորդ. եւ ընդ համօրէն քարոզելոյն ընդ Հզօր անմահ Բանին:

† Ուրախ լեր բերկրեալ ամենասուրբ կոյս՝ որ ծնար աշխարհի զարդարութեան արեգակն. որ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան: Ուրախ լեր բերկրեալ դուռըն կնքեալ. որ ծնար աշխարհի զԹագաւորըն Քս. որ նստի ի վերայ անարուեստ աթոռոյ:

Ծն. Խոնարհեցար ի բարձանց եւ մարմնացար ի կուսէն. որ նստէիրդ ի քրովբէս վերաբերդ արարածոց: Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ որովայնդ կուսին ժուժկալել. ընդունել ըզգանձդ երկնային: Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ. ի խանձարուրս պատեցար եւ եդար ի մսուր անբանից:

Ծն. Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով գոչեն եւ աղաղակեն. Աստուած աստուածոց եւ Տէր տէրանց փրկիչ գոլով: Ուղարկեցեր զքո միածինդ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ անարատ ծընանել յորովայնէ անապական. բառնալով ըզմեր նեղութիւնս. Աստուած աստուածոց եւ Տէր տէրանց փրկիչ գոլով: Շնորհք բարի յԵրուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ. Աստուած աստուածոց եւ Տէր տէրանց փրկիչ գոլով:

Ծն. Ըզքեզ կոյս եւ մայր եւ բնակարան Ածային

ներմարդութե՟ն. գոհաբանեմք և վերօրհնեմք զհե-ղեալ փրկող կենդանութե՟ն ազգի մարդկա՟ն. վ՟ս որոյ ըզքեզ Ա՟ծածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչի՟ն մերոյ: Ծնունդըն հօր և հինաւուրց անժամանակն յաւիտենից. ժամանա-կաւ յորովայնի քում բնակեցաւ և ի հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկ-չի՟ն մերոյ: Ծնեալն ի քէն ի խաչ ելեալ և ի յաթոռ փառաց ընդ հօր. անարգեալ ի մարդկանէ փառաւորութեամբ էութե՟ երկրպագեալ. վ՟ս որոյ ըզքեզ Ա՟ծածին և կոյս բարեբանեմք ըզմայր և զաղախին փրկչի՟ն մերոյ: Ըզքեզ ոչ միայն որ-դիք մարդկան այլև վերի՟ն զօրութիւնք. դասք ան-մարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց և հրեշտակաց. գոհաբանեն և վերօրհնեն և փառա-ւորեն ըզմայր և զաղախին փրկչի՟ն մերոյ:

Ծ՟ն. Բանն առաքեալ ի հօրէ. որ վասն մեր մարմնացաւ. և ծննդեանն աշխարհի յայտնե-ցաւ. ըզքեզ բարեբանեմք Ա՟ծածին կոյս: Զի որում ոչ էին հանդուրժել. բոցանըշոյլ սե-րովբէքն. նա բնակեցաւ ի քում յորովայնի. ըզքեզ բարեբանեմք Ա՟ծածին կոյս: Յորմէ սարսեալ դողային. փայլակնացայտ ի լուսոյն ի գիրկըս քո ըզնա ընկալար. ըզքեզ բարեբա-նեմք Ա՟ծածին կոյս:

Ծ՟ն. Ըզկուսութի՟ւնդ քո Ա՟ծածի՟ն անարատ զոր ոչ բոցանկիզեաց հուր Ա՟ծութե՟ն մեծացուցանեմք: Որ յարգանդի քում անապականաբար բնակեցաւ

Քրիստոս Աստուած. եւ փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք: Անհասանելի տէրունական յայտնութիւն աշխարհի ծագեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

ԾՆ. Ի քեզ եմք ապաւինեալ. որ մայրդ ես և աղախին Քնի. լեր բարեխօս վասն մեր՝. զի զանուն Տն կարդասցուք և զքեզ մեծարեալ պատուեսցուք: Որ զթագաւորն ամենեցուն յորովայնի քում կրեցեր. սրբուհի մայր եւ կոյս. և աղախին Քնի՝. բարեխօսեա՞ առ Տէր վասն մերոյ փրկութեան: Այս մեր և ապաւէն մայր Տն եւ կոյս դու. որ հուր Աստուծոյն ոչ բոցակիզեաց զքո դու զորովայն. բարեխօսեա՞ առ Տէր վասն մերոյ փրկութեան:

ԱԴ. Ըստ աւետեաց մարգարէին որ առ փրկեալքս արեամբ գառինդ. ցընծամք եւ մեք ծառք անտառի ընդ գալուստ Տեառնդ կրկնակի. շնորհեա մեզ Տէր ընդ արդարոցն ընդ առ ի քէն տընկեալ ծառոցն. աճել յուսով ըղուարճանալ եւ յերկրորդին ընդ քեզ ցընծալ: Այմին նըման տայ աւետիս Զաքարիաս նոր Սիովնի. եթէ ուրախ լեր ահա գայ առ քեզ խոնարհ եւ հեզ արքայ. նըստեալ ի յէշ և յաւանակ կըրկին ազանց գոլ օրինակ. նըստեալդ յաթոռ քերովբէից նիստ գըթութեամբ ի մեր հոգիս: Զահեղ փառաց քոց Երեւումն որ լինելոց է յերկրորդումն. եւտես Դաւիթ յառաջագոյն ծանեաց կանխաւ ազդմամբ Հոգւոյն. թէ յայտնապէս Աստուած գայցէ հուր առաջի իւր բորբոքէ. յա-

ժամ Յիսուս ի մեզ խնայեաց գթած Քրիստոս եւ ողորմած։ Աստուածածին ամենօրհնեալ յերկրէ երկնից հարսն ընծայեալ. յորժամ բազմիս լուսոյ նըման քո միածնիդ յաջակողման. յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն փրկել ըզմեզ յահեղ բոցոյն. համագամեալ ընդ արդարոցն երգել ըզփառս ընդ երկնայնոցն։

Հգ. Նոյն եւ նըման Հօր եւ Որդւոյ Հոգիդ անեղ և համագոյ. բըղխումըն Հօր անքըննաբար առող յՈրդւոյ անճառաբար. ի վերնատունըն այսօր իջեր զՀոգիդ շնորհաց քոց արբուցեր. արբո և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։ Էից ստեղծող արարածոց որ շրջէիր ի վերայ ջրոց. նոյն և ի ջուրսն աւազանին ի շնորհել մեզ քում էակցին. գգուես սիրով աղաւնակերպ զմարդիկ ծնանիս աստուածակերպ. արբո և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։ Դասուն վերնոցն իմանալեաց և ըստորին այսըր զգալեաց. որ մարգարէս տաս ի հովուաց և առաքելոց ի ձըկնորսաց. աւետաւոր ըզմաքսաւորս քարոզ բանի քում զհալածողս. արբո և մեզ ողորմութեամբ ի բաժակէդ իմաստութեան։

Հն. Հրեշտակային ձայնիւն օրհնեսցուք զամենասուրբ զԵրրորդութիւնըն. փառաւորելով ըզՀայր որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն։ Երգեսցէք Տեառն երգ նոր եկեղեցիք սըրբեցելոց. Քրիստոսի երկըրպագելով. որ վերակոչեաց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն։ Փառք Հօր։ Սըրբասաց ձայնիւն օրհնեսցուք. հոգեւորա-

կան հընչմամբ գովեսցուք․ սուրբ զԾնօղին փառաւորելով․ որ վերահանգոյց զամենեսեան ի մահուանէ յանմահութիւն։

Այժմ և միշտ։ Գեղմն իմանալի զոր ետես Գեդէոն յառաջ քան զայս հաւատացեալ իմանամք զանճառելի ըզծընունդ՝․ եւ երկիրպագեմք որ ի կուսէդ մարմնացար Աստուած։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Առաքեաց զբան իւր, և բժշկեաց զնոսա, և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։

Խոստովան եղիցին Տեառն ողորմութիւնք նորա, սքանչելեաց նորա որդւոց մարդկան։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Փ․ Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման․ որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն․ բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին։

փառք և․ Այժմ և․ ալէլուիա։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Դ։

Որդւոց երկնաւորաց անպարագրելի․ այսօր հողեղինաց յայտնեցեր ըզծածկեալ խորհուրդ՝․ օրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ բազմաչեայ քրովբէից անհասանելի․ կերպացեալ ըզմերս ի սուրբ կուսէն տընօրինաբար՝․ օրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ առաւել բարձրացեալդ ես յաւիտենից․ մշտընջենաւոր լուցուցիչ և աղբիւր կենդանարար՝․ օրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ․ Ըզ Տէր օրհնեցէք բա՛րձր արարէք ըզնա յա-
ւիտեան։ Որ ըզկերպարանըս ծառայի էառ․ և
ըզմեղս ի մարմնի իւրում դատապարտեաց․ ան-
դադար գովելով բա՛րձր արարէք ըզնա յաւի-
տեան։ Փառք Հօր։ Որ այսօր մարմնացաւ ի սրբոյ
կուսէն յաղագս անիծիցն․ և եբարձ ըզպատուհաս
նախաստեղծին․ ժողովուրդք առաւել բա՛րձր
արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Որ
ելն ի բարձունըս գերեալ ըզզօրութիւն մահու՝
այսօր բաշխէ անապականութեան պարգևս մարդ-
կան․ քահանայք հոգևոր երգով առաւել
բա՛րձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ․Զ։

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի սրովբէից․
ծագեցելով ի քէն մեզ լոյս մայր եղեր վերածնողին․
ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք։ Փառք
Հօր։ Հիմն եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հո-
գւոյն սրբոյ․ ի հրեշտակաց սպասաւորեալ Գաբ-
րիէլ քեզ աւետեաց․ ազգ և ազինք ըզքեզ մե-
ծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Տեսանեմք ըզսքան-
չելի զհրաշալի խորհուրդ յայտնեալ․ ի Հոգւոյն
սրբոյ յղացեալ ըզԲանն Աստուած մարմնով ծնար․
ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք։

Ողորմեա Բ․Զ։

Անկանիմք առաջի քո Աստուածածին․ և աղաչեմք
զանարատ ըզկոյսդ։ Փառք Հօր։ Բարեխօսեա
վասն անձանց մերոց․ և աղաչեա զմիածին Որ-
դին։ Այժմ և միշտ։ Փրկել ըզմեզ ի փորձու-
թէ․ և յամենայն վտանգից մերոց։

Տէր յերկնից Բ.Զ։

Օրհնեմք զՔեզ Տէր ընդ անմարմնոցն դասուց. որ ի բարձունս ես բնակեալ խնամօք ՚ի քո արարածս։ փառք Հօր։ Գովեմք զՔեզ միածին Որդի եւ Բանդ Տէր. որ ի կուսէն մարմնացար՝ խնամօք ի քո արարածս։ Այժմ եւ միշտ։ Բարեբանեմք զսբ զՀոգիդ՝ որ նորոգող ես եւ կեանք՝. եւ միաբան ասասցուք փառք ի բարձունս Աստուծոյ։

Առաջադասն Երգ. Խիցէ որպէս։
Քար. փառաւորեսցուք. հմ գանձ։

Մանկանց Գ.Զ։

Զանգումըն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ. եւ Բանըն հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ. անմընաս պահելով զարարածս ամենայն։ փառք Հօր։ Զանգումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ. ճառագայթելով զարարածս ամենայն. երկինք ցընծային եւ երկիր ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ։ Այժմ եւ միշտ։ Առ քեզ ապաւինիմք ամենասըրբուհի. գեղանգոյն եւ հրաշալի եւ բազմօղ բարութեանց. աղերս ես ծառայից եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ աստուածային Բանին։

Զկնի Մանկանցն Քար. Ա ի խաղաղ. Ող. Մի ես։

Աղս Սաղմոս ՀԱ։

կց. Իջցէ որպէս անձրեւ ՚ի վր գեղմոյն. որպէս ցօղ, որ ցօղէ յերկիր։

փխ. Ած զիրաւունս քո արքայի տուր, եւ զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Դատել զժողովուրդ քո արդարութ՟բ, եւ զաղ-
քատս քո իրաւամբք:

Առցեն լերինք զխաղաղութ՟ի ժողովրդեան. եւ
բլուրք զարդարութ՟ի:

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, եւ կե-
ցուսցէ զորդիս տնանկաց, եւ խոնարհեցուսցէ զամ-
բաստանս:

Կացցէ եւ մնասցէ ընդ արեւու, յառաջ քան զլուսին
յազգէ մինչեւ յազգ:

Իջցէ որպէս անձրեւ 'ի վ՟ր գեղման, ո՟պ ցօղ զի
ցօղէ յերկիր:

Ծագեսցէ յաւուրս Ն՟ր արդարութ՟ի՝ բազում
խաղաղութ՟ի մինչեւ կատարեսցի լուսին:

Տիրեսցէ նա 'ի ծովէ մինչեւ 'ի ծով, 'ի գետոց
մինչեւ 'ի ծագս աշխարհի:

Առաջի նորա նախ Հնդիկք անկցին, եւ թշնամիք
նորա հող կերիցեն:

Թագաւորք Թարսսի եւ կղզեաց պատարագս մա-
տուսցեն նմա. Թագաւորք Արաբայ եւ Սաբայ պա-
տարագս բերցեն նմա:

Երկիր պագցեն նմա ա՟մ թագաւորք երկրի, եւ
ա՟մ ազգք ծառայեսցեն նմա:

Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ, զաղքատ եւ
զտնանկ որոյ ոչ է իւր օգնական:

Խնայեսցէ նա յաղքատն եւ 'ի տնանկ, եւ զան-
ձինս տնանկաց կեցուսցէ. 'ի վաշխից չարաց փրկես-
ցէ զանձինս նոցա:

Պատուական է անուն նոցա առաջի նոցա, կեց-
ցէ եւ տացի նմա յոսկւոյն արաբացւոց:

Յաղօթս կացցեն առ նա յա՟մ ժամ, եւ զօրհ-
նապաշ օրհնեսցեն զնա:

Եղիցի հաստատութ՟ի ընդ ա՟մ երկիր, եւ 'ի վ՟ր
գլխոց լերանց:

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ Ն՟ր. ծաղկեսցի
'ի քաղաքի Տ՟ն ո՟պ խոտ երկրի:

Եղիցի անուն Տն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն Նորա։

Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի եւ ամենայն ազինք երանիցեն նմա։

Օրհնեալ Տէր Ած Իսրայելի որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն սր փառաց նր յաւիտեան. լցցի փառօք նր ամ երկիր. եղիցի եղիցի։

## Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Ա. 26։

### Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱյ 'ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ 'ի տանէ Դաւթի. եւ անուն կուսին Մարիամ։ Եւ եկեալ առ նա՛ ասէ. ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ։ Եւ նա ընդ բանսն խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ Եւ ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յԱյ։ Եւ ահա յղասջիր՝ եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նորա Յս։ Նա եղիցի մեծ եւ որդի Բարձրելոյ կոչեսցի. եւ տացէ նմա Տր Ած զաթոռն Դաւթի հօր նորա. եւ թագաւորեսցէ 'ի վր տանն Յակովբայ 'ի յաւիտեանս, եւ թագաւորութն նորա վախճան մի լիցի։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի Սբ եկեսցէ 'ի քեզ, եւ զօրութի Բարձրելոյն հովանի լիցի 'ի վր քո. քանզի եւ որ ծնանելոցն է 'ի քէն՝ Սբ է, եւ որդի Այ կոչեսցի։ Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՛ եւ նա յղի է 'ի ծերութն իւրում. եւ այս վեցերորդ ամիս է նորա որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ յԱյ ամենայն բան։ Եւ ասէ Մարիամ. ահաւասիկ կամ աղա-

խին Տն, եղիցի ինձ ըստ բանի քում. և գնաց 'ի նմանէ հրեշտակն : 38 :

Օ՛նէ աւետարանէն զԱրարչականն ... զէնշ և ... բէրէ. Պաղատ խնդրեա. Կեցո յայսնէ. Աղ. Ամ մշտնջենաւոր : 180 :

---

Նա ըստ նկարի հանդերձ, տալ զԱստուածն Որա- գումն՝ Մեծացուցէ ... Ի հեղաբերելոց աւետարան կարդա 'ի յայտնէն զհոգին. Գիշերն. Օրհնեալ է ... յոր յայտ և ըննէ : Պար. Նասսցուք կամ գանէ :

Յետ ԱՅ Ըստին Սաղմոս ՃԺ. :

ԿՑ. Փրկութիւն առաքեաց Տր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից 'զուխտ իւր. որ և ահեղ է անուն նորա :

Փխ. Խոստովան եղէց քեզ Տր բոլորով սրտիւ իմով. 'ի խորհուրդս ուղղոց 'ի ժողովուրդս մեծ են գործք Տն՝ և քննեալ են յամի կամք նորա :

Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք նր. արդարութիւն նր մնայ յաւիտեանս յաւիտենից :

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց. ողորմած՝ գթած է Տր կերակուր տայ երկիւղածաց իւրոց :

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր, զզօրութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժողովրդեան իւրոյ :

Տալ նց զժառանգութիւն հեթանոսաց, և գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են :

Հաւատարիմ են յամի պատուիրանք նորա, հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից, արարեալ են ճշմարտութբ և ուղղութբ :

Փրկութիւն առաքեաց Տր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր. որ և ահեղ է անուն նորա :

Սկիզբն զգօնութեան երկիւղ Տն. իմաստութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն զնա, օրհնութիւն նր մնայ յաւիտեանս յաւիտենից :

Սուրբ Աւետարանն որ ըստ Յովհաննու : Ա. 1 :

Ի Հօրէն լուսոյ

Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Ած. և Ած էր Բանն : Նա էր 'ի սկզբանէ առ Ած : Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն : Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. և լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու : Եղև այր մի առաքեալ յԱյ. անուն նմա Յովհաննէս : Սա եկն 'ի վկայութի՝ զի վկայեսցէ վն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ : Ոչ էր նա լոյսն. այլ զի վկայեսցէ վն լուսոյն : Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամ մարդ՝ որ գալոց է յաշխարհ : Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ : Յիւրսն եկն. և իւրքն զնա ոչ ընկալան : Իսկ որք ընկալան զնա, ետ նց իշխանութի որդիս Այ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նր. դք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն, այլ յԱյ ծնան : Եւ Բանն մարմին եղև՝ և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նր՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեմբ : Յովհաննէս վկայէ վն նր, աղաղակեաց և ասէ. սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղև. զի նախ քան զիս էր : Զի 'ի լրմէ անտի նր՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց : Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան. շնորհքն և ճշմարտութի 'ի ձեռն Յսի Քսի եղեն : 17 :

Օրինակ առեւտրականին Երգ Նորաստեղծ : Թուղթ. Խոշոր : Ա.Ղ. Ա.Ծ մշտնջենի : 180 : կամ Բ.ուժ ամենազօր :

Ս. առաքելին Ներսէսի :

Իսկ 'ի յետին ժամս այն ճշմարտութեան, և ...

Սաղմոս ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցէ:
Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:
Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութե՛ն վն՛ անուան իւրոյ:
Թէպէտ և գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես:
Յուպ քո և գաւազան, նոքա մխիթարեցին զիս:
Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:
Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպ անապակ արբեցոյց զիս:
Ողորմութի քո Տր զհետ իմ եկեսցէ զա՛մ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ 'ի տան Տն ընդ երկայն աւուրս:
Ջքնչ Ալէլուիա ալէլուիա: Նաւ եւս խա: Օրհնեա Տր:
Նշանակողութի կամ առագերէցն ասէ Օրհնութի և փառք:

Դարձեալ Սաղմոս ՂԹ:

Որ հովուես զԻսրայէլ նայեաց, որ առաջնորդես որպէս խաշին զՅովսէփ:
Որ նստիս 'ի քրովբէս յայտնեա առաջի Եփրեմի Բենիամինի և Մանասէի:
Զարթո զզօրութի քո և եկ կեցուցանել զմեզ:
Ած զօրութեց դարձո զմեզ, երևեցո զերեսս քո 'ի մեզ և կեցցուք:
Տր Ած զօրութեց մինչև յերբ բարկանաս յաղօթս ծառայից քոց:
Ջամբեցեր մեզ զհաց արտասուաց, և արբուցեր մեզ արտասուս չափով:
Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց այպն կատականաց թշնամեաց մերոց:
Ած զօրութեց դարձո զմեզ, երևեցո զերեսս քո 'ի մեզ և կեցցուք:
Այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս և զնա տնկեցեր, և առաջնորդեցեր նմա:

Հաստատեցեր զարմատս նորա՝ և ելից զերկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա և բարունակ նր զմայր Այ:

Ձգեաց զորթ իւր մինչև 'ի ծով, մինչև 'ի գետս են շառաւեղք նորա:

Ընդէ՞ր քակեցեր զցանգ նր, կթեն զնա անցաւորք ճանապարհի:

Ապականեաց զնա խոզ անտառի, և երէ վայրի արածեցաւ 'ի նմա:

Այ զօրութեց դարձ՝ հայեաց յերկնից և տես, այց արա այգւոյս այսմիկ, զարման տար սմա զոր տնկեաց աջ քո,

Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա 'ի քեզ, այրեցեալ 'ի հուր՝ աւերեալ, և 'ի սաստէ քումմէ կորիցէ:

Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն, աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա 'ի քեզ:

Ոչ ևս 'ի բացէ եղիցուք մեք 'ի քէն. կեցուսցես դու զմեզ, և զանուն քո Տր կարդասցուք:

Այ զօրութեց դարձո զմեզ, երևեցո զերեսս քո 'ի մեզ և կեցցուք:

Առաջին աւետարանն աւագերիցու տուան է:

Որթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու: Բ. 8:

Մ̃ ծննդեան Տն մերոյ Յսի Քսի.

Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեագք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց: Եւ հրեշտակ Տն երևեցաւ նոցա, և փառք Տն ծագեցին առ նոսա. և երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութի մեծ, որ եղիցի ամ ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տր 'ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, և եդեալ 'ի մսուր: Եւ յանկար-

ծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմու-
թիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զՔ͞Ծ և ա-
սէին: Փառք 'ի բարձունս Ա͞Յ, և յերկիր խաղա-
ղութի՛, 'ի մարդիկ հաճութի՛: Եւ եղև իբրև վե-
րացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմի-
մեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչև ցԲեթ-
ղէհէմ, և տեսցուք զի՞նչ է բանս այս որ եղև.
զոր Տէր եցոյց մեզ: Եւ եկին փութանակի, և
գտին զՄարիամ և զՅովսէփ և զմանուկն եդեալ
'ի մսուր: Եւ ծանեան վ͞ս բանին՝ որ ասացաւ նոցա
զմանկանէն: Եւ ամենեքեան որ լսէին, զարմա-
նային վ͞ս բանիցն՝ զոր խօսեցան ընդ ն͞ս հովիւքն:
Եւ Մարիամ զա͞մ զբանս զայսոսիկ պահէր, և
խելամուտ լինէր 'ի սրտի իւրում: Եւ դարձան
հովիւքն, փառաւոր առնէին և օրհնէին զՔ͞Ծ վ͞ս
ա͞մի՝ զոր լուան և տեսին. ո͞րպ պատմեցաւ ն͞ց: 20:

Դարձեալ Սաղմոս Բ:

ԿԳ. Տ͞Ր ասաց ցիս, որդի իմ ես դու. և ես այսօր
ծնայ զքեզ:

Փխ. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժողո-
վուրդք խորհեցան 'ի սնոտիս:

Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք
ժողովեցան 'ի միասին՝ վասն Տ͞Ն և վ͞ս օծելոյ ն͞ր:

Խզեսցուք զկապանս ն͞ց. և ընկեսցուք 'ի մէնջ
զլուծ ն͞ց:

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք, և Տ͞Ր
արհամարհեսցէ զն͞ս:

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութ͞բ իւրով.
և սրտմտութ͞բ իւրով խռովեսցուսցէ զն͞ս:

Ես կացի թագաւոր 'ի նմանէ 'ի վերայ Սիոնի լե-
րին սրբոյ նորա, պատմել իմն զհրամանս Տ͞Ն:

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. և ես այսօր
ծնայ զքեզ:

Խնդրեա յինէն՝ և տաց քեզ զհեթանոսս 'ի ժա-
ռանգութի՛, և իշխանութի՛ քեզ զա͞մ ծագս երկրի:

Հովուեսցես զնոսա դաւազանաւ երկաթեաւ. որպ զանօթ բրտի փշրեսցես զնս:

Արդ թագաւորք, զայս 'ի միտ առէք. խրատեցարուք ամենեքեան՝ որք դատէք զերկիր:

Ծառայեցէք Տն երկիւղիւ, և ցնծացէք առաջինր դողութի:

Ընկալարուք զխրատ նորա. զի մի բարկասցի Տէր և կորնչիցիք 'ի ճանապարհացն արդարութեն:

Ի ժամանակի որպ բորբոքեսցի բարկութի նր:

Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են 'ի Տր:

Ալէլ. ալէլ. Նու եւ խաղ. Օրհնութի և փառք:

Դարձուածոյ Սաղմոս ՃԹ.:

Կց. Ի վայելչութի սրբց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Փխ. Ասաց Տր ցՏր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:

Գաւազան զօրութեն առաքեսցէ քեզ Տր 'ի Սիովնէ. և տիրեսցես դու 'ի մէջ թշնամեաց քոց:

Ընդ քեզ է սկիզբն աւուրց զօրութեն. 'ի վայելչութի սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Երդուաւ Տր և ոչ եւս զղջասցի, թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի և Տր ընդ աջմէ քումմէ:

Խորտակեսցէ յաւուր բարկութեն զթագաւորս. դատի զհեթանոսս՝ և բազում առնէ զհարուածս, և խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրի:

Զուղխս 'ի ճանապարհի արբուսցէ. վն այնորիկ և բարձր արասցէ զգլուխս:

Ընթեր.

Սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի Ա. 18:

Տեառն մերոյ

Յսի Քսի ծնունդն էր այսպէս: Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչև եկեալ առ մի-

մեանս՝ գտաւ յղացեալ 'ի Հոգւոյն սբյ։ Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր՝ և ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա։ Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տն 'ի տեսլեան երևեցաւ նմա և ասէ. Յովսէփ որդի Դաւթի մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է 'ի Հոգւոյն սբյ է։ Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց։ Այլ այս ամ եղև, զի լցցի որ ասացաւն 'ի Տնէ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի։ Ահա կոյս յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. որ թարգմանի ընդ մեզ Այ։ Եւ զարթուցեալ Յովսէփ 'ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, և առ յինքն զկինն իւր։ Եւ ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ. և կոչեաց զանուն նորա Յս։ 25։

Եւ ետ խաղ. Օրհնութի և փառք։

Եւ ապա [illegible] Խոնարհեցո. և Ապրեցո։

Հասարակաց ճաշու.

Մարգարէութեանց մայր եղև Բեթղեհէմ, և օթևան կուսին Մարիամու։ Ընդ զՔն ծնեալ յայրին տեսաք բազմեալ 'ի մսուր։ Եւ յառաջեալ մոգուցն երկրպագելով նմա պատարագօք՝ աստեղըն գուշակելով. ընդ նոսին և հովիւքն փառօք փառաւորէին, զայս ասելով. օրհնեալ է քո ծնունդդ։

Եւ ըստ [illegible], [illegible]։

[illegible]. Տէր ասաց ցիս։ Ընդէր խռովեցան։

[illegible]. Աղաչեսցուք զամենակալն։ Եւ ըստ [illegible], Ասասցուք [illegible], [illegible]։

[illegible] Բ2։

Ընկալնիմք առաջի քո Աստուածածին։ 952։

Օրհնէ համբարձմանց Դաւթի Վ̃ խաղաղութիւն: Ըղ. համր գծած:

Ըղ. Սաղմոս ՃԼԱ:

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, եւ զամենայն հեզութիւն նր:

Որպէս երդուաւ Տն, եւ ուխտեաց ԱՅ Յակոբայ:

Եթէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ, եթէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակովբայ:

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ, եւ գտաք զնա 'ի դաշտս մայրեաց:

Մտցուք 'ի յարկս նորա, երկիր պագցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա:

Արի՛ Տէր 'ի հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վ̃ Դաւթի ծառայի քոյ, մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութիւն՝ եւ ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի քո նստուցից յաթոռ քո:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, եւ զվկայութիւնս իմ, զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիովն, եւ ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, 'ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Զորս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:

Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն. եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից զեղջիւր 'ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց նր̃ զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցէ սրբութի̃ իմ:

Եւ ընթեռնուն [illegible] [illegible], և այլ [illegible], Ժ.Ա. [illegible]: Եւ [illegible] [illegible]:

Ընթերցուած 'ի Ծննդոց: Ա. 1:

Ի սկզբանէ արար Ա̃Ծ զերկին և զերկիր: Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խաւար 'ի վր̃ անդնդոց, և Հոգի Ա̃Յ շրջէր 'ի վր̃ ջրոց: Եւ ասաց Ա̃Ծ. եղիցի լոյս. և եղև լոյս: Եւ ետես Ա̃Ծ զլոյսն զի բարի է. և մեկնեաց Ա̃Ծ 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին: Եւ կոչեաց Ա̃Ծ զլոյսն տիւ. և զխաւարն կոչեաց գիշեր: Եւ եղև երեկոյ՝ և եղև վաղորդայն՝ օր մի: Եւ ասաց Ա̃Ծ, եղիցի հաստատութի̃ 'ի մէջ ջրոցդ. և եղիցի մեկնել 'ի մէջ ջուրցդ և ջուրց: Եւ եղև այնպէս: Եւ արար Ա̃Ծ զհաստատութիւն. և անջրպետեաց Ա̃Ծ 'ի մէջ ջրոյն, որ էր 'ի ներքոյ հաստատութե̃ն, և 'ի մէջ ջրոյն, որ 'ի վերայ հաստատութե̃ն: Եւ կոչեաց Ա̃Ծ զհաստատութի̃ն երկին. և ետես Ա̃Ծ զի բարի է: Եւ եղև երեկոյ. և եղև վաղորդայն՝ օր երկրորդ: Եւ ասաց Ա̃Ծ, ժողովեսցին ջուրքդ որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողով մի. և երևեսցի ցամաքն: Եւ եղև այնպ. և ժողովեցան ջուրքն, որ 'ի ներքոյ երկնից 'ի ժողովս իւրեանց. և երևեցաւ ցամաքն: Եւ կոչեաց Ա̃Ծ զցամաքն երկիր, և զժողովս ջուրցն կոչեաց ծովս. և ետես Ա̃Ծ զի բարի է: Եւ ասաց Ա̃Ծ. բղխեսցէ երկիր բանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութե̃. և ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ ազգի իւրում. որոյ սերմն իւր 'ի նմին ըստ ազգի 'ի նմանութի̃ 'ի վր̃ երկրի: Եւ եղև այնպէս: Եւ եհան երկիր բանջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութե̃. որ է 'ի վր̃ ամ̃ երկրի. և փայտ պտղաբեր առնել պտուղ. որոյ սերմն իւր 'ի նմին ըստ ազգի 'ի վր̃ երկրի. և ետես Ա̃Ծ զի

բարի է։ Եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, օր
երրորդ։ Եւ ասաց Ա՟Ծ. եղիցին լուսաւորք 'ի հաս-
տատութեան երկնից 'ի լուսաւորութիւն 'ի վ՟ր երկրի եւ
մեկնել 'ի մէջ տուընջեան եւ 'ի մէջ գիշերոյ. եւ ե-
ղիցին 'ի նշանս, եւ 'ի ժամանակս, եւ յաւուրս, եւ 'ի
տարիս։ Եւ եղիցին 'ի լուսաւորութիւն 'ի հաստա-
տութեան երկնից ծագել յերկիր։ Եւ եղեւ այնպէս։
Եւ արար Ա՟Ծ զերկուս լուսաւորսն զմեծամեծս.
զլուսաւորն մեծ՝ յիշխանութիւն տուընջեան. եւ զլու-
սաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ. եւ զաստեղս։
Եւ եդ զն՟ա Ա՟Ծ 'ի հաստատութեան երկնից. լուսատու
լինել յերկիր։ Եւ իշխել տուընջեան եւ գիշերոյ։
Եւ մեկնել 'ի մէջ լուսոյն եւ 'ի մէջ խաւարին. եւ ե-
տես Ա՟Ծ զի բարի է։ Եւ եղեւ երեկոյ. եւ եղեւ վա-
ղորդայն, օր չորրորդ։ Եւ ասաց Ա՟Ծ. հանցեն
ջուրք զեռունս շնչոց կենդանեաց. եւ թռչունս
թեւաւորս 'ի վ՟ր երկրի ըստ հաստատութեան երկնից։
Եւ եղեւ այնպէս։ Եւ արար Ա՟Ծ կէտս մեծամեծս.
եւ զա՟մ շունչ զեռնոց կենդանեաց, զոր հանին ջուրք
ըստ ազգի իւրեանց, եւ զա՟մ թռչունս թեւաւորս ըստ
ազգի. եւ ետես Ա՟Ծ զի բարի են։ Եւ օրհնեաց զն՟ա
Ա՟Ծ եւ ասէ. աճեցէք, եւ բազմացարուք, եւ լցէք զջուրս՝
որ 'ի ծովս. եւ թռչունքդ բազմասցին 'ի վ՟ր եր-
կրի։ Եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, օր հին-
գերորդ։ Եւ ասաց Ա՟Ծ. հանցէ երկիր շունչ կեն-
դանի ըստ ազգի չորքոտանի, եւ սողունս, եւ գազանս
երկրի ըստ ազգի։ Եւ եղեւ այնպէս։ Եւ արար Ա՟Ծ զգա-
զանս երկրի ըստ ազգի, եւ զանասունս ըստ ազգի, եւ
զա՟մ սողունս երկրի ըստ ազգի իւրեանց. եւ ետես Ա՟Ծ
զի բարի են։ Եւ ասաց Ա՟Ծ. արասցուք մարդ ըստ
պատկերի մերում եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցէ ձկանց
ծովու, եւ թռչնոց երկնից, եւ անասնոց, եւ ա՟մ եր-
կրի, եւ ա՟մ սողնոց՝ որ սողին 'ի վ՟ր երկրի։ Եւ
արար Ա՟Ծ զմարդն 'ի պատկեր իւր. ըստ պատկերի Ա՟Յ
արար զնա. արու եւ էգ արար զն՟ա։ Եւ օրհնեաց

զնն Ած՝ և ասէ. աճեցէք՝ և բազմացարուք և լցէք զերկիր. և տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամ անասնոց, և ամ երկրի, և ամ սողնոց՝ որ սողեն 'ի վր երկրի: Եւ ասաց Ած. ահաւասիկ ետու ձեզ զամ խոտ սերմանեղի սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, որ է 'ի վր ամ երկրի. և ամ փայտ որ ունիցի յինքեան պտուղ սերման սերմանելոյ, ձեզ լիցի 'ի կերակուր: Եւ ամ գազանաց երկրի, և ամ թռչնոց երկնից, և ամ սողնոց՝ որ սողեն 'ի վր երկրի՝ որ ունիցի շունչ կենդանի. և ամ խոտ դալար 'ի կերակուր: Եւ եղև այնպէս: Եւ ետես Ած զամ զոր արար, և ահա բարի էին յոյժ: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդայն, օր վեցերորդ: Եւ կատարեցան երկինք և երկիր և ամ զարդ նց: Եւ կատարեաց Ած յաւուրն վեցերորդի զամ գործս իւր՝ զոր արար. և հանգեաւ յաւուրն եօթներորդի յամ գործոց իւրոց՝ զոր արար: Եւ օրհնեաց Ած զօրն եօթներորդ, և սրբեաց զնա. զի 'ի նմա հանգեաւ յամ գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել Ած: Այս է գիր արարածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար Ած զերկին և զերկիր: Եւ զամ բանջար վայրի՝ մինչչև լեալ էր 'ի վր երկրի. և զամ խոտ վայրի՝ մինչչև բուսեալ էր, զի չև ևս էր տեղացեալ Տն Ած 'ի վերայ երկրի. և մարդ չէր՝ որ գործէր զերկիր: Բայց աղբիւր ելանէր յերկրէ՝ և ոռոգանէր զամ երեսս երկրի: Եւ ստեղծ Տր Ած զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նր շունչ կենդանի. և եղև մարդն յոգի կենդանի: Եւ տնկեաց Ած դրախտն յԵդեմ ընդ արևելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ: Եւ բուսոյց ևս Տր Ած յերկրէ զամ ծառ գեղեցիկ 'ի տեսանել՝ և քաղցր 'ի կերակուր. և զծառն կենաց 'ի մէջ դրախտին. և զծառն գիտելոյ զգիտութիւն բարւոյ և չարի: Եւ գետ ելանէր յԵդեմայ ոռոգանել

գետախառն. և անտի բաժանի 'ի չորս առաջս: Ա-
նուն միոյն Փիսոն. նա է որ պատէ զամենայն եր-
կիրն Եւիլատայ. անդ ուր ոսկին է: Եւ ոսկի եր-
կրին այնորիկ աղնիւ. և անդ է սուտակն և ակն
դաՀանակ: Եւ անուն գետոյն երկրորդի Գեհոն.
նա պատէ զամ երկիրն Եթեովպացւոց: Եւ գետն
երրորդ՝ Տիգրիս. նա է որ երթայ յանդիման Ա-
սորեստանի: Եւ գետն չորրորդ՝ Եփրատէս: Եւ
առ Տր Ած զմարդն, զոր արար. և եդ զնա 'ի
դրախտին փափկութե, գործել զնա և պաՀել: Եւ
պատուիրեաց Տր Ած Ադամայ՝ և ասէ. յամ ծառոց որ
է 'ի դրախտիդ՝ ուտելով կերիջիս: Բայց 'ի ծա-
ռոյն գիտութե բարւոյ և չարի մի ուտիջիք. զի յո-
րում աւուր ուտիջիք 'ի նմանէ մաՀու մեռանիջիք:
Եւ ասաց Տր Ած. ոչ է բարւոք մարդոյդ միայն
լինել. արասցուք դմա օգնական ըստ դմա: Եւ
ստեղծ ևս Տր Ած զամ գազանս վայրի, և զամ
թռչունս երկնից. և ած զնս առ Ադամ, տեսանել
զինչ կոչեսցէ զնս. և ամ շնչոյ կենդանւոյ, զինչ
և անուանեաց Ադամ այն անուն է նր: Եւ կոչեաց
Ադամ անուանս ամ անասնոց, և ամ թռչնոց եր-
կնից, և ամ գազանաց վայրի, բայց Ադամայ ոչ
գտաւ օգնական նմանն նմա: Եւ արկ Տր Ած թմբր-
րուի 'ի վր Ադամայ, և ննջեաց. և առ մի 'ի կո-
ղից նր և ելից ընդ այնր մարմին: Եւ շինեաց Տր
Ած զկողն զոր առ յԱդամայ 'ի կին. և ած զնա առ
Ադամ: Եւ ասէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոս-
կերաց իմոց. և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչես-
ցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: Վս այնորիկ թող-
ցէ այր զՀայր իւր՝ և զմայր իւր. և երթիցէ զՀետ
կնոջ իւրոյ. և եղիցին երկոքեան 'ի մարմին մի: Եւ
էին երկոքեան մերկ՝ Ադամ և կին իւր. և ոչ ա-
մաչէին: Եւ օձն էր իմաստնագոյն քան զամ գա-
զանս որ 'ի վր երկրի, զոր արար Տր Ած. և ասէ
օձն ցկինն. զի՞ է զի ասաց Ած թէ յամ ծառոց որ

իցեն 'ի ներքս 'ի դրախտի այդր՝ մի՛ ուտիցէք· Եւ ասէ կինն ցօձն· 'ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք· բայց 'ի պտղոյ ծառոյն, որ է 'ի մէջ դրախտին, ասաց Ա՟ծ, մի՛ ուտիցէք 'ի նմանէ· և մի՛ հուպ լինիցիք՝ զի մի՛ մեռանիցիք։ Եւ ասէ օձն ցկինն· ոչ եթէ մահու մեռանիցիք· զի գիտէր Ա՟ծ, թէ յօրում աւուր ուտիցէք 'ի նմանէ, բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զԱ՟ծս· ճանաչել զբարի և զչար։ Եւ ետես կինն, զի բարի էր ծառն 'ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ 'ի տեսանել· և առ 'ի պտղոյ նո՟ր և եկեր· և ետ առն իւրում ընդ իւր, և կերան։ Եւ բացան աչք երկոցունց· և գիտացին զի մերկ էին· և կարեցին տերևս թզենւոյ· և արարին իւրեանց սփածանելիս։ Եւ լուան զձայն զգնալոյ Տ՟ն Ա՟յ 'ի դրախտի անդ ընդ երեկս· և թագեան Ադամ և կին իւր յերեսաց Տ՟ն Ա՟յ՝ 'ի մէջ ծառոց դրախտին։ Եւ կոչեաց Տ՟ր Ա՟ծ զԱդամ· և ասէ ցնա· ո՞ւր ես։ Եւ ասէ· լուայ զձայն քո 'ի դրախտի աստ՝ և երկեայ· քանզի մերկ էի՝ և թագեայ։ Եւ ասէ ցնա· ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես· բայց թէ 'ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի և եթ չուտել, կերա՞ր արդեօք 'ի նմանէ։ Եւ ասէ Ադամ· կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ 'ի ծառոյ անտի և կերայ։ Եւ ասէ Տ՟ր Ա՟ծ ցկինն· զինչ գործեցեր զայդ։ Եւ ասէ կինն· օձն խաբեաց զիս, և կերայ։ Եւ ասէ Տ՟ր Ա՟ծ ցօձն· փոխանակ զի արարեր դու զայդ, անիծեալ լիջիր դու յա՟մ անասնոց և յա՟մ գազանաց երկրի· 'ի վ՟ր լանջաց և որովայնի քո գնասցես· և հող կերիցես զա՟մ աւուրս կենաց քոց։ Եւ եդից թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ· և 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի դորա· նա սպասեսցէ քում գլխոյ· և դու սպասեսցես նո՟ր գարշապարի։ Եւ ցկինն ասէ· բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիս քո և զհեծութիս քո·

տրտմութեամբ ծնցես որդիս. և առ այր քո դարձ քո. և նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քո. և կերար 'ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել. և կերար 'ի նմանէ՝ անիծեալ լիցի երկիր 'ի գործս քո. տրտմութ̄բ կերիցես զնա զա̄մ աւուրս կենաց քոց: փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. և կերիցես զբանջար վայրի: Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո. մինչև դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող էիր և 'ի հող դարձցիս: Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա է մայր ա̄մ կենդանեաց: Եւ արար Ա̄Ծ Ադամայ և կնոջ նր հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զնոսա: Եւ ասէ Տր Ա̄Ծ. ահա Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ՝ գիտել զբարի և զչար. և արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու 'ի ծառոյն կենաց. ուտիցէ, և կեցցէ յաւիտեան: Եւ եհան արձակեաց զնա Տր Ա̄Ծ 'ի դրախտէ անտի փափկութե̄ գործել զերկիր՝ ուստի առաւ: Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութե̄: Եւ հրամայեաց քրովբէից, և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց: Գ.. 24:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: Է. 10:

Եւ յաւել Տր խօսել ընդ Աքազու՝ և ասէ. խնդրեա դու քեզ նշան 'ի Տեառնէ Ա̄Յ քումմէ 'ի խորութե̄ կամ 'ի բարձրութե̄: Եւ ասէ Աքազ, ոչ խնդրեցից, և ոչ փորձեցից զՏր: Եւ ասէ, արդ լուարուք տուն Դաւթի. թեթեւ ինչ թուիցի ձեզ աշխատութի̄ հասուցանել մարդկան. և զիարդ հասուցանէք աշխատութի̄ Այ: Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին նշան. ահա կոյսն յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նր Էմմանուէլ: Իւղ և մեղր կերիցէ. մինչչև ինչ իցէ ծանուցեալ նր. կամ

ախորժեալ յառաջագոյն զչարութի, ընտրեսցէ զբարին։ Զի այնորիկ մինչև ծանուցեալ իցէ մանկանն զբարի կամ զչար, անարգեսցէ զչարն՝ և ընտրեսցէ զբարին. և մնասցէ երկիրդ՝ յորմէ դուդ կասկածես յերեսաց երկուց թագաւորացն։ 16։

## Ընթերցուած յԵլից։ ԺԴ. 24։

Եւ եղև յառաւօտին պահու հայեցաւ Տէր՚ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյ և ամպոյ. և խռովեաց զբանակն Եգիպտացւոց։ Եւ կապեաց զանիւս կառաց նց̃. և վարէր զն̃ս բռնութ̃բ։ Ասեն Եգիպտացիքն, փախիցուք յերեսաց Իսրայէլի. զի Տ̃ր պատերազմի վ̃ն նց̃ ընդ Եգիպտացիս։ Եւ ասէ Տ̃ր ցՄովսէս. ձգեա զձեռն քո ՚ի վ̃ր ծովուդ. և կարկառեսցի անդրէն ջուրդ. և ծածկեսցէ զԵգիպտացիսդ. զկառս դոցա և զհեծեալս իւրեանց։ Եւ ձգեաց Մովսէս զձեռն իւր ՚ի վ̃ր ծովուն. և դարձաւ ջուրն ընդ առաւօտն ՚ի տեղի իւր և Եգիպտացիքն փախեան յերեսաց ջրոյն. և թօթափեաց Տ̃ր զԵգիպտացիսն ՚ի մէջ ծովուն։ Եւ դարձուցեալ զջուրսն, ծածկեաց զկառս և զհեծեալս և զա̃մ զօրութիւն փարաւոնի, որ մտեալ էին զհետ նոցա՚ի ծով անդր և ոչ մնաց ՚ի նոցանէ և ոչ մի։ Եւ որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն. և ջուրն պարիսպ էր ընդ աջմէ նոցա, և ընդ ահեկէ իւրեանց։ Եւ ապրեցոյց Տ̃ր զԻսրայէլ յաւուր յայնմիկ ՚ի ձեռաց Եգիպտացւոցն։ Եւ ետես Իսրայէլ զԵգիպտացիսն մեռեալս առ ափն ծովուն. և ետես Իսրայէլ զձեռն մեծ, զոր արար Տ̃ր ընդ Եգիպտացիսն, և երկեաւ ժողովուրդն ՚ի Տ̃նէ. և հաւատացին յԱ̃Ծ և ՚ի Մովսէս ծառայ նորա։ Յայնժամ երգեաց Մովսէս՝ և որդիքն Իսրայէլի զօրհնութիս զայս Ա̃Յ և ասեն։ Օրհնեսցուք զՏ̃ր, զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս նց̃ ընկէց ՚ի ծով։ Օգնական ընդունելի իմ Տ̃ր, և եղև

ինձ ՚ի փրկութիւն. սա է իմ Ած և փառաւոր արարից զսա: Աստուած հօր իմոյ և բարձր արարից զսա: Տէր խորտակէ զպատերազմունս՝ Տէր անուն նորա: Զկառս փարաւոնի՝ և զզօրութիւս նր ընկէց ՚ի ծով. զընտիրս հեծելոց՝ և զպառագէնս ընկղմեաց ՚ի ծով կարմիր: Խորք ծածկեցին զնս. ընկլան յանդունդս իբրև զվէմն: Աջ քո Տր փառաւորեալ է զօրութբ իւրով, աջ քո Տր խորտակեաց զթշնամին: Եւ բազմութբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս, առաքեցեր զբարկութի քո՝ և եկեր զնոսա իբրև զեղէգն: Եւ հողմով սրտմտութե քո բաժանեցան ջուրք. պաղեցան որպ պարիսպ ջուրք. պաղեցան ալիք ՚ի մէջ ծովու: Ասաց թշնամին, հալածեցից, և հասից. բաժանեցից զաւար, և լցուցից ՚ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով. տիրեսցէ նց ձեռն իմ: Առաքեցեր զհողմ քո. և ծածկեաց զնս ծով՝ ընկղմեցան որպ կապար ՚ի ջուրս սաստիկս: Ո՞վ իցէ նման քեզ յածս Տր. և կամ ո՞վ նմանիցի քեզ փառաւորեալդ ՚ի սրբս սքանչելի փառօք՝ որ առնես զնշանս: Ձգեցեր զաջ քո՝ և եկուլ զնս երկիր: Առաջնորդեցեր արդարութբ ժողովրդեան քում այսմ, զոր փրկեցեր. մխիթարեցեր զօրութեամբ քով ՚ի բանակետղ սրբութե քոյ: Լուան ազգք և բարկացան և երկունք կալան զբնակիչս Քանանացւոց: Յայնժամ տագնապեցան դատաւորք Եդովմայ, և իշխանք Մովաբացւոց: Կալաւ զնս դողումն, հալեցան ամ բնակիչք Քանանացւոց: Անկցի ՚ի վր նց ահ և երկիւղ. մեծութբ բազկի քո քարացցին. մինչև անցցէ ժողովուրդ քո Տր. մինչև անցցէ ժողովուրդ քո այս, զոր ստացար: Տարեալ տնկեսցես զնս ՚ի լեառն ժառանգութե քո, ՚ի պատրաստութի բնակութե քո. զոր արարեր Տր սրբութիւն. Տր զոր պատրաստեցին ձեռք քո: Տր թագաւոր յաւիտեան՝ և յաւիտեանս և ևս: Զի մտին երիվարք

փարաւոնի կառօք և հեծելովք նո՛ր 'ի ծով. և ած 'ի վե՛ր նո՛ց Տէ՛ր զջուրս ծովուն, և որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն: Եւ առ Մարիամ մարգարէ քոյր Ահարոնի զթմբուկն 'ի ձեռն իւր. և ելին ամ կանայք զհետ նո՛ր թմբկօք, և պարուք: Եւ յառաջէր Մարիամ, և ասէր օրհնեսցուք զՏէ՛ զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց 'ի ծով: Ժ.Ե. 21:

Ընթերցուած 'ի Միքիէ մարգարէէ: Ե. 2:

Եւ դու Բեթղեհէմ տուն Եփրաթայ սակաւաւոր իցես լինել 'ի հազարաւորս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի. և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի: Վ՟ն այնորիկ տացէ զնս մինչև 'ի ժամանակ ծննդականին. ծնցի, և մնացորդք եղբարց նորա դարձցին առ որդիսն Իսրայէլի: Եւ կացցէ, և տեսցէ, և հովուեսցէ հօտի իւրո՟ զօրութ՟բ Տ՟ն, և 'ի փառս անուան Տ՟ն Ա՟Յ իւրեանց հաստատեսցին: Զի այժմ մեծասցին մինչև 'ի ծագս երկրի. և եղիցի 'ի նմա խաղաղութի. յորժամ եկեսցէ ասորեստանեայն յերկիր ձեր՝ և յորժամ հասցէ յաշխարհ ձեր՝ յարուսցէ 'ի վե՟ր նո՟ր եօթն հովիւ և ութ վարիչ մարդկան. եւ հովուեսցեն զասորեստանեայն սրով. և զերկիրն Ներրովթայ 'ի պատնիշի իւրում. և փրկեսցէ զքեզ յասորեստանեայն յորժամ եկեսցէ յերկիր ձեր. և յորժամ հասցէ 'ի վերայ սահմանաց ձերոց: Եւ եղիցի մնացորդն Յակովբայ 'ի հեթանոսս 'ի մէջ ազգաց բազմաց իբրև ցօղ անկեալ 'ի Տ՟նէ. և իբրև կաթիլ 'ի վե՟ր սիզո՟ որպէս զի մի ժողովեսցի 'ի մի. և մի մնասցէ 'ի մէջ որդւոց մարդկան: 7:

Ընթերցուած յԱռակաց: Ա. 1:

Ճանաչել զիմաստութի և զխրատ. իմանալ զբանս հանճարոյ: Ընդունել զդարձուածս բանից, 'ի միտ առնուլ զարդարութի ճշմարիտ, և ուղղել զիրաւունս. Զի տացէ անմեղաց զխորագիտութի. մանկանց

տղայոց զմիտս և զհանճար: Որոց իբրև լուիցէ իմաստունն, իմաստնագոյն լիցի. իսկ որ հանճարեղն իցէ. զառաջնորդութի՟ւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս ն՟ց: Սկիզբն իմաստութեան երկիւղ Տ՟ն. հանճար բարի ամենեցուն՝ որ առնեն զնա. պաշտօն բարի առ Ա՟ծ սկիզբն զգօնութեան. զիմաստութի՟ւն և զխրատ ամպարիշտք անգոսնեն: Լուր որդեակ խրատու հօր քո, և մի մերժեր զօրէնս մօր քո: Զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո. և մանեակ ոսկի ՚ի պարանոցի քում: 9:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: Թ. 5:

Այլ նոքա կամէին թէ հրձիգ լեալ էին: Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ. որոյ իշխանութի՟ն իւր եղև ՚ի վերայ ուսոց իւրոց. և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ. սքանչելի խորհրդակից. Ա՟ծ. հզօր. իշխան. հայր հանդերձելոյ աշխարհին: Զի ես ածից զխաղաղութի՟ն ՚ի վ՟ն իշխանաց ն՟ց, և առողջութի՟ւն նմա. մեծ է իշխանութի՟ւն ն՟ր, և խաղաղութե՟ան ն՟ր չիք սահման: Յաթոռն Դաւթի նստցի, և զարքայութի՟ւն ն՟ր յաջողեսցէ. և զօրացուսցէ զնա իրաւամբք և արդարութ՟բ, յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց. Նախանձ Տ՟ն զօրութե՟ց արասցէ զայս: 7:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: ԺԱ. 1:

Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ. և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի: Եւ հանգիցէ ՚ի վ՟ն ն՟ր հոգի Ա՟յ. հոգի իմաստութե՟ն և հանճարոյ. հոգի խորհրդոյ և զօրութե՟ն, հոգի գիտութե՟ն և ա՟ծպաշտութե՟ն. և լցցէ զնա հոգի երկիւղի Ա՟յ: Ոչ ՚ի կարծ դատեսցի. և ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ: Այլ արասցէ իրաւունս տնանկին. և յանդիմանեսցէ զխոնարհս երկրի և հարցէ զերկիր բանիւ բերանոյ իւրոյ. և հոգւով շրթանց իւրոց սատա-

կեսցէ զամպարիշտս: Եւ եղիցի արդարութի ա-
ծեալ ընդ մէջ իւր, և ճշմարտութ՟ի պատեալ զկողս իւր: Եւ ճարակեսցէ գայլ ընդ գառին. և ինձ առ ուլու մակաղեսցի. և որթ, և ցուլ, և առիւծ 'ի միասին ճարակեսցին. և մանուկ մատաղ ածցէ զնոսա: Եզն՝ և արջ 'ի միասին ճարակեսցին. և որդեակք նոցա խառն շրջեսցին և առիւծ իբրև զեզն յարդ կերիցէ: Եւ մանուկ մատաղ 'ի ծակ իժից և 'ի բոյն կորեանց իժից արկցէ զձեռն իւր. և ոչ մեղիցեն, և ոչ կարասցեն հարկանել զոք 'ի լերին սրբութ՟ն իմոյ. զի լցաւ երկիր ա՟մ գիտութ՟ի Տ՟ն իբրև զջուրս բազումս որք ծածկեն զծովս: 9:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: ԼԵ. 3:

Զօրացարո՛ւք ձեռք լքեալք՝ և ծունկք կթուցեալք, մխիթարեցարո՛ւք կարճամիտք սրտիւք. զօրացարո՛ւք և մի՛ երկնչիք: Ահաւասիկ Ա՟ծ մեր հատուցանէ դատաստան՝ և հատուսցէ, ինքնին եկեսցէ՝ և փրկեսցէ զմեզ: Յայնժամ աչք կուրաց բացցին՝ և ականջք խլից լուիցեն: Յայնժամ վազեսցէ կաղն իբրև զեղջերու, և պարզ լիցի լեզու ծանրախօսաց: Զի ջուր բղխեաց յանապատի, և գետ 'ի ծարաւուտ երկրի: Եւ եղիցի անջրդին յեղտեւրս և աղբիւր ջուրց 'ի ծարաւուտ երկրի: Անդ եղիցի ուրախութ՟ի հաւուց, և մակաղատեղք խաշանց. անդ մարգագետինք և խաղք: Անդ եղիցին ճանապարհ մաքրեալ, և ճանապարհ սուրբ կոչեսցի. մի՛ անցցէ ընդ նա պիղծ, և մի՛ եղիցի անդ ճանապարհ պղծոյ. այլ ցրուեալքն գնասցեն ընդ նա՝ և մի՛ մոլորեսցին: 8:

Ընթերցուած յԵսայեայ մարգարէէ: Խ. 10:

Ահաւասիկ Ա՟ծ ձեր՝ ահաւասիկ Տ՟ր, Տ՟ր գայ զօրութ՟ի և բազուկն տէրութ՟ի իւրով. ահաւասիկ վարձք իւր ընդ իւր, և գործք առաջի ն՟ր: Իբրև հովիւ

մի հովուեսցէ զխաշինս իւր. և բազկաւ իւրով ժո-
ղովեսցէ զգառինս, և 'ի ծոց իւր կրեսցէ զնոսա,
և մխիթար լիցի յղեաց: Ո՞ չափեաց ափով իւրով
զջուրս. և զերկինս թզաւ, և զերկիր ա̃մ քլաւ.
ո՞ կշռեաց զլերինս կշռով, և զդաշտս կշռորդօք:
Ո՞ գիտաց զմիտս Տ̃ն, և ո՞ եղև նմա խորհրդակից՝
եթէ խելամուտ արասցէ զնա: Կամ ընդ ո՞ւմ խոր-
հեցաւ և արար զնա խելամուտ. կամ ո՞ եցոյց նմա
զդատաստան՝ և զճանապարհ իմաստութե̃ն, կամ ո՞
ետ նմա փոխ յառաջագոյն՝ և հատուցանիցէ նմա:
Եթէ ա̃մ հեթանոսք իբրև զկաթիլ մի՛ 'ի դուղէ
են, և իբրև զմէտ մի 'ի կշռոց համարեցան, և իբրև
չիթք 'ի բերանոյ համարեսցին: Եթէ լիբանան
չէ բաւական յայրումն, և ա̃մ չորքոտանիք չեն
բաւական յողջակէզս. և ա̃մ հեթանոսք ոչինչ են,
և յոչինչ համարեցան նմա: 17:

Ընթերցուած յեսայեայ մարգարէէ: Խ̃Բ. 1:

Յակոբ ծառայ իմ, օգնական եղէց նմա. Իսրայէլ
ընտրեալ իմ զոր ընկալաւ անձն իմ. ետու զոգի իմ
'ի վ̃ր ն̃ր, և իրաւունս հեթանոսաց հանցէ: Ո՛չ ա-
ղաղակեսցէ և մի՛ վճեսցի և մի ոք լուիցէ արտաքոյ
զբարբառ ն̃ր: Զեղէգն ջաղջախեալ մի՛ բեկցէ, և
զպատրոյկն առկայծեալ մի՛ շիջուսցէ: Այլ հան-
ցէ 'ի ճշմարտութի̃ զիրաւունս. ծագեսցէ և մի՛
խորտակեսցի. մինչև դիցէ յերկրի զդատաստան,
և յանուն ն̃ր հեթանոսք յուսասցին: Այսպէս ա-
սէ Տ̃ր Ա̃Ծ՝ որ արար զերկինս, և կանգնեաց զնա, որ
հաստատեաց զերկիր և որ 'ի նմա են շունչ մարդ-
կան որ 'ի վ̃ր ն̃ր. ոգի ամենեցուն որ կոխեն զնա:
Ես Տ̃ր Ա̃Ծ կոչեցի զքեզ արդարութե̃, կալայ զա-
ջոյ ձեռանէ քումմէ և զօրացուցի զքեզ, և ետու
զքեզ յուխտ ազգի և 'ի լոյս հեթանոսաց: Բա-
նալ զաչս կուրաց. հանել զկապեալս 'ի բանտէ և
'ի տանէ կապանաց որ նստէին 'ի խաւարի: Ես Տ̃ր

ԵԾ՝ այս է անուն իմ, զփառս իմ այլում ոչ տաց,
և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց : 8 :

Յայս վայր 'ի ժամատունն խորդուն. և ալին ընթեր-
ցուածոյս մատենէն յեկեղեցւոյն. և խորդուն պղամկէն
'ի բեմն. և յանէն պճառյն յանձն փոխի խոանկ ածէն,

Ընթերցուած 'ի Դանիէլէ մարգարէէ : Գ. 1 :

Յամին ութուտասներորդի Նաբուգոդոնոսորայ
արքայի, արար պատկեր ոսկի, բարձրութիւն նորա
վաթսուն կանգուն, և լայնութիւն նորա կանգուն վեց.
և կանգնեաց զնա 'ի դաշտին Դէերայ յաշխարհին
Բաբելացւոց : Եւ արձակեաց ժողովել զզօրա-
վարս՝ և զզօրագլուխս, և զկուսակալս, զպետս, և
զբռնաւորս՝ և զգործակալս՝ և զա̃մ իշխանս աշ-
խարհաց, գալ 'ի նաւակատիս պատկերին՝ զոր կան-
գնեաց արքայն Նաբուգոդոնոսոր : Եւ ժողովեցան
կուսակալք, զօրավարք և զօրագլուխք, պետք և
բռնաւորք, մեծամեծք գործակալք և ա̃մ իշխանք
աշխարհաց՝ գալ 'ի նաւակատիս պատկերին՝ զոր
կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր. և կային ա-
ռաջի պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Նաբու-
գոդոնոսոր : Եւ քարոզ կարդայր զօրութ̃բ և ասէր.
ձեզ ասի ազգք և ազինք և լեզուք : Յորժամ լսիցէք
զձայն փողոյ, սրնգի, թմբկի և քնարի և տաւղի և
զերգոց միաբանութ̃ն և զա̃մ ազգաց արուեստակա-
նաց, անկանիջիք՝ և երկիր պագանիջիք պատկերին՝
զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր արքայ : Եւ որ ոչ
անկեալ երկիր պագանիցէ 'ի նմին ժամու ընկես-
ցի 'ի հնոց հրոյն բորբոքելոյ : Եւ եղև իբրև լուան
ազգքն զձայն փողոյն, սրնգի, զտաւղի և զնուա-
գարանաց և զա̃մ ազգաց արուեստականաց, ան-
կանէին ա̃մ ազգք և ազինք և լեզուք և երկիր պա-
գանէին պատկերին ոսկւոյ, զոր կանգնեաց արքայն
Նաբուգոդոնոսոր : Յայնժամ մատեան արք քաղ-
դէացիք և եղեն չարախօս զհրէից առ Նաբուգո-

գոնոսորայ: Եւ ասեն. արքայ, յաւիտեան կեաց: Դու հրաման ետուր ամ՟ մարդոյ՝ որ լուիցէ զձայն փողոյ զսրնգի՝ զքնարի և զտաւղի և նուագարանաց և զամենայն ազգաց արուեստականաց: Եւ որ ոչն անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ: Արդ՝ են աստ արք հրեայք, զորս կացուցեր ՚ի վր՟ գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, որ ոչ հնազանդեցան հրամանի քում արքայ, և զդիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն: Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրտմտութբ՟ և բարկութբ՟ հրամայեաց ածել զՍեդրաք, զՄիսաք և զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին: Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր և ասէ, թէ արդարև՝ Սեդրաք՝ Միսաք և Աբեդնագով, զդիս իմ ո՞չ պաշտիցէք՝ և պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեցի, երկիր ո՞չ պագանիցէք: Բայց արդ՝ եթէ պատրաստք լինիցիք. զի յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ և թմբկի՝ և քնարի և զմիաբանութիւն ամ՟ ազգաց արուեստականաց, անկանիցիք՝ և երկիր պագանիցէք պատկերին՝ զոր արարի. ապա թէ ոչ պագանիցէք երկիր՝ ՚ի նմին ժամու անկանիցիք ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ է Ած՟ որ փրկեսցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց: Պատասխանի ետուն՝ Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով, և ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր. ոչինչ է պիտոյ վն՟ բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի: Զի է մեր Ած՟ յերկինս՝ զոր մեքն պաշտեմք. կարող է փրկել զմեզ ՚ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ. և ՚ի ձեռաց քոց արքայ՝ ապրեցուցանել զմեզ: Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի լիցի քեզ արքայ. զի զդիս քո մեք ոչ պաշտեմք. և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք: Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև սրտմտութբ՟. և գոյն երեսացն՟ շրջեցաւ՝ ՚ի վր՟ Սեդրաքայ՝ Միսաքայ և Ա-

բեդնագովի. և ասէ՛ ջեռուցէ՛ք զհնոցն եօթնապա-
տիկ՝ զի մինչև 'ի վախճան այրեսցին: Եւ արք հինգ
զօրաւորք զօրութեամբ կապեցին զՍեդրաք՝ զՄիսաք և
զԱբեդնագով՝ արկանել 'ի հնոց հրոյն բորբոքելոյ:
Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմուճանօք՝
և վարտեօք, արտախուրակօք՝ և զանկապանօք
իւրեանց. և ընկեցան 'ի մէջ հնոցի հրոյն բորբո-
քելոյ: Զի հրամանն թագաւորին սաստկանայր.
և հնոցն բորբոքէր եօթնպատիկ առաւել յոյժ: Եւ
երեքին նոքա Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով ան-
կան 'ի մէջ հնոցին կապեալք: Եւ գնային 'ի մէջ
հրոյն, օրհնէին՝ և գովէին զՏ̄ր Ա̄ծ: Յարեաւ Ա-
զարիա, և եկաց յաղօթս այսպէս. եբաց զբերան
իւր 'ի մէջ հրոյն՝ և ասէ: Օրհնեալ ես Տ̄ր Ա̄ծ
հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն
քո յաւիտեանս: Զի արդար ես յա̄մի զոր ածեր
'ի վ̄ր մեր, և ա̄մ գործք քո ճշմարիտ են. և ուղիղ
են ճանապարհք քո՝ և ա̄մ դատաստան քո ճշմար-
տութիւն: Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր՝ ըստ
ա̄մի զոր արարեր մեզ և քաղաքին ս̄ր հարցն մերոց
Ե̄էմի. զի ճշմարտութեամբ և իրաւի ածեր զայս ա̄մ
վ̄ս մեղաց մերոց: Զի մեղաք և անօրինեցաք՝ յա-
պստամբ լինել 'ի քէն. և առաւել մեղաք յա̄մի:
Եւ պատուիրանաց քոց ոչ անսացաք. ոչ պահե-
ցաք և ոչ արարաք՝ ո̄պ պատուիրեցեր մեզ, զի
բարի լինիցի մեզ: Եւ զա̄մ՝ զոր ածեր 'ի վ̄ր մեր,
և զա̄մ՝ զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ
արարեր: Եւ մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց
մերոց, անօրինաց, խստաց և ապստամբողաց, և թա-
գաւորի անիրաւի և չարի քան զա̄մ երկիր: Եւ
արդ՝ ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր, զի ամօթ և
նախատինք եղեւ ծառայից քոց պաշտօնէից: Այլ
մի մատներ զմեզ իսպառ վ̄ս անուան քո. և մի
ցրեր զուխտ քո: Եւ մի 'ի բացէ առներ զողոր-
մութիւն քո 'ի մէնջ. վ̄ս Աբրահամու սիրելւոյ քո

և վն̃ Իսահակայ ծառայի քո՛ և վն̃ Իսրայելի սր̃յ քո։ Որոց խօսեցար բազմացուցանել զզաւակ նց̃ իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու։ Եւ արդ Տր̃ նուաղեցաք քան զա̃մ ազգս, և եմք տառապեալք յա̃մ երկրի, այսօր վն̃ մեղաց մերոց։ Եւ ոչ գոյ 'ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարէ, և առաջնորդ. ոչ ողջակէզք՝ և ոչ զոհք՝ և ոչ պատարագք՝ և ոչ խունկք, և ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո. և գտանել զողորմութի̃ այլ անձամբք բեկելովք՝ և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք։ Իբրև զողջակէզս խոյոց՝ և զուարակաց՝ և իբրև զբիւրաւորս գառանց պարարտաց, այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո. լինել կատարեալ զկնի քո. զի չիք ամօթ յուսացելոցս 'ի քեզ։ Եւ արդ՝ գամք զհետ քո ա̃մ սրտիւք մերովք. երկնչիմք 'ի քէն. և խնդրեմք զերեսս քո։ Մի՛ յամօթ առներ զմեզ. այլ արա ընդ մեզ ըստ հեզութե̃ քում. և ըստ բազում ողորմութե̃ քում։ Եւ փրկեա՛ զմեզ վն̃ սքանչելեաց քոց. և տուր փառս անուան քում Տր̃։ Եւ յամօթ լիցին ամենեքեան՝ որք ցուցանեն չարիս ծառայից քոց. և ամաչեսցեն յա̃մ բռնութե̃ իւրեանց. և զօրութի̃ նց̃ խորտակեսցի։ Եւ ծանիցեն՝ զի դու ես Տր̃ Ա̃ծ միայն. և փառաւորեալ 'ի վր̃ ա̃մ տիեզերաց։ Եւ ոչ դադարէին՝ որք արկին զնս̃ սպասաւորք թագաւորին՝ 'ի հնոցն բորբոքելոյ, նաւթիւ, և ձիւթով, և վշով և որթով։ Եւ ելանէր՝ գիզանայր բոցն 'ի վերոյ քան զհնոցն 'ի քառասուն և յինն կանգուն։ Եւ շրջէր՝ պատէր շուրջ զհնոցաւն, և այրէր՝ զորս գտանէր 'ի Քաղդէացւոց անտի։ Եւ հրեշտակ Ա̃յ էջ եկաց ընդ Ազարիանս 'ի հնոցի անդ. և թօթափեաց զբոց հրոյն 'ի հնոցէ անտի։ Եւ արար 'ի մէջ հնոցին իբրև զհողմ՝ որ ցօղագին շնչիցէ. և ոչ մերձենայր ամենևին հուրն 'ի նս̃, ոչ տրտմեցուցանէր և ոչ

նեղէր զնոսա։ Յայնժամ երեքեանն իբրեւ 'ի միոջէ բերանոյ օրհնէին և գովէին և փառաւոր առնէին զՏր 'ի մէջ հնոցին և ասէին։ Օրհնեալ ես ՏրԾ հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս. և օրհնեալ է անուն սրբ փառաց քոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութե քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեալ ես 'ի վր աթոռոյ արքայութե քո. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեալ ես որ հայիս յանդունդս և նստիս 'ի քերովբէս. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեալ ես որ նստիս 'ի հաստատութե երկնից. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Օրհնեցէք ամ գործք Տն զՏր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Օրհնեցէք երկինք զՏր. օրհնեցէք։ Օրհնեցէք հրեշտակք Տն զՏր. օրհնե։ Օրհնեցէք ջուրք ամ, որ 'ի վերոյ քան զերկինս. օրհնեցէք և բարձր։ Օրհնեցէք ամ զօրութիք Տն զՏր. օրհնե։ Օրհնեցէք արեւ և լուսին զՏր. օրհնե։ Օրհնեցէք ամ աստեղք երկնից զՏր. օրհնե։ Օրհնեցէք ամ անձրեւք և ցօղք զՏր օրհնե։ Օրհնեցէք ամ հողմք զՏր. օրհնե։ Օրհնեցէք հուր և տապ զՏր. օրհնե։ Օրհնեցէք ցուրտ և սառն զՏր. օրհնե։ Օրհնեցէք եղեամն և ձիւն զՏր. օրհնե։ Օրհնեցէք տիւք և գիշերք զՏր. օրհնե։ Օրհնեցէք լոյս և խաւար զՏր. օրհնե։ Օրհնեցէք ամպք և փայլատակունք զՏր. օրհնե։ Օրհնեսցէ երկիր զՏր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան։ Օրհնեցէք լերինք և բարձունք զՏր. օրհն։ Օրհնեցէք ամ բոյսք երկրի զՏր. օրհնե։ Օրհնեցէք աղբերք զՏր. օրհնե։ Օրհնեցէք ծով և գետք զՏր. օրհնե։ Օրհնեցէք կէտք և ամ կայտառք՝ որ 'ի ջուրս զՏր. օրհնե։ Օրհնեցէք թռչունք երկնից զՏր. օրհնե։ Օրհնեցէք ամ

գաղանք և անասուն զՏր․ օրհնե։ Օրհնեցէք որդիք մարդկան զՏր․ օրհնե։ Օրհնեսցէ Իսրայէլ զՏր․ օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան։ Օրհնեցէք քահանայք զՏր․ օրհնեցէք ծառայք Տն զՏր․ օրհնե։ Օրհնեցէք հոգիք և շունչք արդարոց զՏր․ օրհ։ Օրհնեցէք սուրբք և խոնարհք սըրտիւք զՏր․ օրհնեցէք։ Օրհնեցէք Անանիա, Ազարիա և Միսայէլ զՏր․ օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։ Զի փրկեաց զմեզ 'ի դժոխոց, և 'ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ․ և փրկեաց զմեզ 'ի հնոցէս, և 'ի միջոյ բորբոքեալ բոցոյս, և 'ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ։ Գոհացարուք զՏնէ զի քաղցր է զի յաւիտեան է ողորմ նորա։ 90։

[illegible] զՕրհնեցէք ամ գործքն [illegible] Օրհնեցէք գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Ի կատարման [illegible] Օրհնեա Տր․ [illegible]

Զկնի [illegible] Ծննդեան Տեառն և այլն

Շարական [illegible]

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ։ 982։

Զկնի Սրբոյ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Բ․ 8։

Մ ը Ծննդեան Տն մերոյ Յսի Քսի։

Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ։ 959։

Ա[illegible] Քար․ Մր զԱծածինն։ Աղ․ Ընկալ Տէր։

Հայր մեր։

# Ծ Ն Ո Ւ Ն Դ

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
## Ի Դեկտեմբերի քսան եւ հինգ:

---

Ի գիշերին հսկումն է առաւօտեան եւ ընթերցուածք Ս. Գրոց:

Օրհնաբանէ Գ. Կ.:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. Հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

† Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ. եւ հրեղինաց բազմութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ: Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան աւետիսն. եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:

† Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ: Ծնար ի յայրին ընծայեցար Բեթղեհէմ. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ: Հովուաց յայտնեցար երկրպագեալ ի մոգուց. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ:

Ծ. Ն. Այսօր Բանն ի Հօրէ անմեկնելի եւ անճա-

անեղ խորհրդով. ի ձեռն որդւոյն կուսական որո-
վայնի անօրինաբար յերկրի երեւեալ: Նոյն անժամանակ ի Հօրէ անսերմն ի կուսէ. ի գիրկս մօր գգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ երկրի: Որ մարդկանց ըղձողացն եւ լուսոյ ըղձեղս աշխարհի. զոր օրհնեմքն անդադար արարածք ամենայն. զէակիցն Հօր եւ Հոգւոյն:

Ծն. Ածածին որ Կոյս անապական տաճար. անպարագիծ Էին բոլորից բնութեանց լինածուալ տեղի. այսօր ընդ բերկրական զուարթնոյն կրեցեր աւետեօք զՏէրըն տերանց ի քեզ. ով որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ: Յիմանալի փոակաց տանն Աստուծոյ հօրմանց. վիճակեալ տեսանողացըն ձայնիւ որբմամբ ըղձմայլեցար. այսօր զանթառամըն ծաղկեցար ըղծաղիկ ի ժամու տալով զպտուղ. ով որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ: Այսօր ի քեզ լցեալ ամենախօսնին բարբառ. որ ի փրկութի հասարակաց տուեալ նշան բնութեն ազգի մարդկան. ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի զընդ մեզ յայտնեալն Ած. ով որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ:

Ծն. Ա[illegible] Ածածին աղբեւր անըսպառ լուսոյն. որ լուսաւորէ զհաւատացեալս. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք: Դու պարծանք կուսութե մարդկան. դու ուրախութի հրեշտակաց. դու բարձօղ անիծիցն. վն որոյ ըզքեզ Ածածին մեծացուցանեմք: Դու ճշմարիտ արեւելք

արեգականն արդարութեան. յորմէ ծագեաց փըրկութիւն տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:

Օ.Ն. Աստուածածին եւ սրբուհի. որ ըզԲանն Հօր անսերմն յղութեամբ յարգանդի կրեցեր. անդադա՛ր երգով մեծացուցանեմք: Զքեզ մա՛յր կուսութեան եւ յղութեան լուսոյ. եւ առագաստ անճառելոյ ըզնախկողին ի քեզ փեսայացեալ Բանին. անդադա՛ր երգով մեծացուցանեմք: Քեզ լուծո՛ն կնիք դատապարտութեան. եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ կոյս. անդադա՛ր երգով մեծացուցանեմք:

Օ.Ն. Միայնոյ քեզ ի կանայս կոյս յետ ծըննըդեան երգեմք զօրհնութիւն. զի լոյս ի լուսոյ քեւ յայտնեցաւ աշխարհի. եւ զնախամօրն եբարձ զանէծս՝ անճառ ծընընդեամբըն ի քէն: Քեզ միայնոյ մարմնացելոյդ ի նոյն կուսէն՝ օրհնութիւն ի բարձունս՝ վերերգեմք ասելով. փառք քեզ Քս. որ երկիր կամաւ Հօր կեցուցանել ըզմեզ: Խընդա Մարիամ որ եղեր մայր Քսի. եւ աղաչեա զառ ի քէն ըզմարմնացեալ Բանն Հօր. զի փրկեսցէ ըզմեզ ի փորձութենէ:

Հ.Գ.. Հոգիք հրեղինաց. այսօր տօնեն ընդ մեզ ըզգալուստ Հոգւոյն Աստուծոյ: Տեսանողն յառաջ. նըշանակէր զառատաբուղխ վտակ իմաստից ի մեզ հեղեալ ի Հոգւոյն: Մէմըն հաւատոյ. զմայլեալ անմահական բաժակաւն այսօր բաշխէր ծարաւեաց: Գիտողս այս գնացիւք. ցընծայ քաղաքն

Ընդ Սիովն մայր եկեղեցի։ Մե՛նք որդիք և մեք. Երրեակ և մի Էութեան երգեմք ըզփառս ի բարձունս։

Հն. Որ ի Հօրէ առաքեցար մարդասէր կարող փրկիչ. և ըզմեղուցեալ ըզմարդըն ըժըշկեցեր. ողորմեա Տէր Հրաժարեցելոյս. զոր Հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Որ ի խաչին բևեռեցար մարդասէր կարող փրկիչ. և ըզցօղ անապական արեանըդ ցօղեցեր տիեզերաց. ողորմեա Տէր Հրաժարեցելոյս. զոր Հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։ Փառք Հօր։ Որ ըզդըժոխս աւերեցեր և ըզգերեալսըն փրկեցեր. և զարդարեալսըն վերածեր ի յոյս կենացըն յաւիտենից. ողորմեա Տէր Հրաժարեցելոյս. զոր Հրաւիրեալ առ քեզ կոչեցեր։

Այժմ և միշտ։ Նա մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար. արդարութեան արեգակըն Տէր փառք քեզ։

Ըմբռնեա Ծննդեան ՚ի յայնէն։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Յառաջ քան զՕրհնութիւն ասասցեն յեկեղեցին, և զՕրհնութիւնն զհայրապետին, և զայս շարականս. և զառ Նոյնն ՚ի յետս ասասցեն. և զասացածն զեան, և ձայն. և ապա զՕրհնութիւն յեկեղեցին։

Հարց Գ.Ձ։

Անըսկիզբըն էակից Բանըդ Հօր. որ էիր յառաջ քան զյաւիտեանս. և եկիր ի փրկութիւն ըստեղծուածոց քոց. ըզքեզ օրհնեմք Ած հարցըն մերոց։ Ծնար ի կուսէ անձառ միութեան. անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի Հայրական ծոցոյ. ըզքեզ օրհնեմք Ած հարցըն մերոց։

Ցընծութեամբ տօնեսցուք ըզծընունդ քո Տր՝. որ յայտնեցար մեզ լոյս ի լուսոյ՝. և լուսով քո լուսաւորեցեր ըզտիեզերս՝. ըզքեզ օրհնեմք Աստծ հարցըն մերոց։
Գ.. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք. օրհ. և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: փառք Հօր: Զծընեալն ի՝ սրբոյ կուսէն օրհնեցէք. օրհ. և բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Զանճառելի ծընունդ փրկչին գովեցէք. և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

Մեծացուսցէ Գ.Ձ:

Որպէս լեր Աստծին լոյս և փրկութեան մայր. ըզքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք: փառք Հօր: Զքեզ լուսոյ մայր և կոյս. ըզքեզ գանձըդ կենաց անծայրին. ձայնիւ ցընծութեամբ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Մայր սուրբ անարատ լուսոյն հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ըզքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.Ձ:

Ամենիմաստ ամենից Հայր բազմագթեղ խնամօղ ստեղծօղ և Տր բոլորից՝. անեղ և էից էակ. զոր միշտ օրհնեն դասք անմարմնականացն յաւէժաբար հնչմամբ: փառք Հօր: Որ կերպարան և կնիք Հօր՝ առեալ վասըն մեր ծառայի կերպ ի կուսէն. որ էն ի յաթոռ փառաց անհաս վերնոցն. ի յայրին իջեալ նի և ի մսուր յանբանից բազմեալ: Այժմ և միշտ: Զի կուսէն մարմնացեալ Բանն՝ եկայք ընդ հովիւսըն բարեբանեսցուք եւ ընդ մոգուցն երկրպագեսցուք. ընդ երկնային զօրսն երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ:

## Տէր յերկնից Գ-Ձ:

Ճ՛առագայթ և կերպարա՛ն էութե՛ Հօր Բա՛նդ Ա՛ծ. ընդ քե՛զ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ: փառք Հօր: Ո՛ր միացար ի մարմնի անճառապէս ճշմարիտ Ա՛ծ. ընդ քե՛զ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ: Այժմ և միշտ: Ո՛ր զանիծիցըն բարձեր ընդդատապարտութի Քրիստոս Աստուած. ընդ քե՛զ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ:

Ի Տէր յերկնիցէ կցրդ տանին երգեն առաջներգեցն ՚ի բեմն, և ՚ի ձայնս տաղն առնեն

### Որթիւ

Աւետարանն որ ըստ Ղուկասու: Բ. 8:

Ս. Ծննդեան Տն մերոյ Յսի Քսի.

Եւ հովիւք էին ՚ի տեղւոջն յայնմիկ բացօթեագք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց: Եւ հրեշտակ Տն երեւեցաւ նոցա, և փառք Տն ծագեցին առ նոսա. և երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութի մեծ, որ եղիցի ամ ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տր ՚ի քաղաքի Դաւթի: Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ ՚ի խանձարուրս, և եդեալ ՚ի մսուր: Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱծ՝ և ասէին: փառք ՚ի բարձունս Այ, և յերկիր խաղաղութի, ՚ի մարդիկ հաճութի:

Եւ ապա ասեն զփառք ՚ի բարձունսն, Տէր յայսմ ... ՚ի մէջ ...: Եւ ժամահար, և զանդաստան ... ասեն:

Եւ ապա զՃաշու Աւետարանին քարոզն.

Եւ եղև իբրև վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ, և տեսցուք զինչ է բանս այս որ եղև. զոր Տէր եցոյց մեզ: Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ և զմանուկն եդեալ 'ի մսուր: Եւ ծանեան վս՟ բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն: Եւ ամենեքեան որ լսէին, զարմանային վս՟ բանիցն՝ զոր խօսեցան ընդ նս՟ հովիւքն: Եւ Մարիամ զա՟մ զբանս զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր 'ի սրտի իւրում: Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած վասն ա՟մի՝ զոր լուան և տեսին. ո՟պ պատմեցաւ նց՟: 20:

Եւ ապա [illegible] 'ի Բարձրագոյնին երգեն. Եւ յա՟մ ժամ:

Իսկ [illegible] հանդերձ, [illegible] խորհրդն: Եւ [illegible]. Հայր հօգեղէնք. 140. Եւ [illegible]:

Աւետարան Երգ Իզգէ: Քար. Ժողովեալքս 'ի տաճար. [illegible], [illegible] Մայր [illegible]: Եւ [illegible] 'ի [illegible]. Եւ [illegible] Կոչնումն զբէն:

[illegible]

Կց. Ի վայելչութի՟ նրց: փխ. Լոյս Տր՟: 961:

Եւ [illegible] 'ի [illegible]: Եւ [illegible]:

Արթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Ա. 1:

Քանզի բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւն վասն իրացն հաստատելոց 'ի մեզ, որպէս աւանդեցին մեզ՝ որ 'ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն Բանին: Կամ եղև և ինձ, որ 'ի սկզբանէ զհետ երթեալ էի ա՟մի ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝ քաջդ Թէոփիլէ. զի

ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար, զճշմար-
տութիւն։ Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքայի Հրէ-
աստանի, քահանայ ոմն անուն Զաքարիա 'ի դա-
սակարգէ Աբիայ. եւ կին նր 'ի դստերաց Ահարոնի
եւ անուն նր Եղիսաբեթ։ Եւ էին արդարք երկո-
քին առաջի Այ, գնային յամ պատուիրանս եւ
յիրաւունս Տն անարատք։ Եւ ոչ գոյր նոցա որ-
դեակ, քանզի Եղիսաբեթ ամուլ էր. եւ երկոքեան
անցեալ էին զաւուրբք իւրեանց։ Եւ եղեւ 'ի քա-
հանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ
առաջի Այ, ըստ օրինի քահանայութեանն՝ եհաս նմա
խունկ արկանել մտեալ 'ի տաճարն Տն. եւ ամ
բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտա-
քոյ՝ 'ի ժամ խնկոցն։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տն. զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն։ Եւ խռո-
վեցաւ Զաքարիա՝ իբրեւ ետես, եւ անկաւ ահ 'ի վե-
րայ նորա։ Ասէ ցնա հրեշտակն Տն. մի՛ երկնչիր
Զաքարիա՛ զի լուեալ եղեն աղօթք քո. եւ կին քո
Եղիսաբեթ ծնցի քեզ որդի՝ եւ կոչեսցես զանուն
նր Յովհաննէս։ Եւ եղիցի քեզ ուրախութի եւ
ցնծութի. եւ բազումք 'ի ծննդեան նորա խնդա-
սցեն. զի եղիցի մեծ առաջի Տն. եւ գինի եւ օղի մի՛
արբցէ. եւ Հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ
մօր իւրոյ։ Եւ զբազումս յորդւոցն Իսրայելի դար-
ձուսցէ 'ի Տէր Ած իւրեանց։ Եւ ինքն եկեսցէ առա-
ջի նորա հոգւով եւ զօրութեամբ Եղիայի, դարձու-
ցանել զսիրտս հարց յորդիս, եւ զանհաւանս յի-
մաստութիւն արդարոց, պատրաստել Տն ժողովուրդ
կազմեալ։ Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն, եւ իւ-
գիտացից զայդ. զի ես ծեր եմ, եւ կին իմ անցեալ
զաւուրբք իւրովք։ Պատասխանի ետ հրեշտակն եւ
ասէ ցնա. ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Այ.
եւ առաքեցայ խօսել ընդ քեզ՝ եւ աւետարանել քեզ
զայդ։ Եւ ահա եղիցիս համր, եւ մի՛ կարասցես
խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի. փոխա-

նակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին 'ի ժամանակի իւրեանց։ Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիայ, և զարմանային ընդ յամելն նորա 'ի տաճարին։ Եւ իբրև ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա. և իմացան թէ տեսիլ ետես 'ի տաճարին։ Եւ նա նշանացի խօսէր ընդ նս, և կայր պապանձեալ։ Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր. և յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբէթ կինն նորա, և թագուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր։ Օ՜ինչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ 'ի մարդկանէ։ 25։

Եւ օխտանին զառաջին Շարական Դ.Կ։

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ։ 982։

Իջանեն 'ի խորանէն, և երգեն յառաջեան յեկեղեցին. և ասեն

## Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Ա. 26։

Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ։ 955։

Ի կճորն օխտանին երկրորդ Շարական Դ.Կ։

Այսօր ցնծան երկինք ի վերուստ։ 982։

Եւ երգեն 'ի համբառնալոյն եկեղեցւոյն։

## Զկնի Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Ա. 39։

Տն մերոյ Յսի Քսի

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց 'ի լեռնակողմն փութապէս 'ի քաղաքն Յուդայ։ Եւ եմուտ 'ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբէթի։ Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբէթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. և լցաւ Եղիսաբէթ Հոգւով սրբով. և 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. օրհնեալ ես դու 'ի կանայս

և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Եւ ուստի՞ է ինձ այս զի եկեսցէ մայր Տն իմոյ առ իս: Զի ահաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում: Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատարումն ասացելոցս նմա 'ի Տնէ: Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏր. և ցնծացաւ հոգի իմ յԱծ փրկիչ իմ: Զի հայեցաւ 'ի խոնարհութին աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամ ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն. և սր է անուն նորա: Եւ ողորմութի նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութի բազկաւ իւրով ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Քակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան: Եկաց Մարիամ առ նմա իբրև ամիսս երիս, և դարձաւ 'ի տուն իւր: Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, և ծնաւ որդի: Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝ և ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմութի իւր ընդ նմա. և խնդային ընդ նմա: Եւ եղև յաւուրն ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն, և կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա: Պատասխանի ետ մայր նորա և ասէ. ոչ՝ այլ կոչեսցի Յովհաննէս: Եւ ասեն ցնա. քանզի ոչոք է յազգի քում, որոյ կոչի անուն Յովհաննէս: Ակնարկէին հօրն նր թէ զի՞նչ կամիցի կոչել զնա: Եւ խնդրեաց տախտակ, գրեաց և ասէ. Յովհաննէս է անուն դորա. և զարմացան ամենեքին: Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի՝ և լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱծ: Եւ եղև ահ 'ի վերայ ամենեցուն որ լսէին զայս, և որ շուրջ բնակեալ էին զնոքօք.

և ընդ ամ լեռնակողմն Հրէաստանի պատմէին զամ բանս այսոքիկ: Եւ եդին ամենեքեան որ լսէին՝ ՚ի սիրտ իւրեանց, և ասէին. զի՞նչ լինիցի մանուկս այս. և ձեռն Տն էր ընդ նմա: Եւ Զաքարիա հայր նր լցաւ Հոգւով սրբով, մարգարէացաւ և ասէ: Օրհնեալ Տէր Ած Իսրայելի, զի յայց ել մեզ, և արար փրկութի ժողովրդեան իւրում: Եւ յարոյց եղջիւր փրկութն մեզ ՚ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ: Որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէք նորա էին: փրկութի ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամ ատելեաց մերոց: Առնել ողորմութի ընդ հարս մեր, և յիշել զուխտ իւր սուրբ: Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերում՝ տալ մեզ, առանց երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս: Պաշտել զնա սրբութբ և արդարութբ առաջի նորա զամ աւուրս կենաց մերոց: Եւ դու մանուկ մարգարէ բարձրելոյ կոչեսցիս. զի երթիցես առաջի երեսաց Տն պատրաստել զճանապարհս նորա: Տալ գիտութի փրկութն ժողովրդեան նորա, ՚ի թողութի մեղաց նոցա: Վասն գթութեանց ողորմութն Այ մերոյ, որովք այց արասցէ մեզ արեգակն ՚ի բարձանց: Երևել՝ որոց ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու նստէին. ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութն: Եւ մանուկն աճէր՝ և զօրանայր Հոգւով. և էր յանապատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայելի: 80:

Եւ սկսանին Երրորդ Շարականն Դկ:

Այսօր Բանն ՚ի Հօրէ անմեկնելի և անճառ: 995:

Եւ Երգեան ՚ի հնաւանդականն Եկեղեցւոյն:

Զկնէ Որթիւ

ԱՒՄ Աւետարանին որ ըստ Ղուկասու: Բ. 1:

Վասն ծննդեան Տն մերոյ Յսի Քսի:

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամ

տիեզերս: Այս առաջին աշխարհագիր եղեւ 'ի դատաւորութն Ասորւոց Կիւրենեայ: Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի: Ել և Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ Նազարեթէ 'ի Հրէաստան 'ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նր 'ի տանէ և յազգէ Դաւթի, մտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ զոր խօսեալն էր նմա, և էր յղի: Եւ եղեւ 'ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծննելոյ նր: Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և պատեաց 'ի խանձարուրս՝ և եդ զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջավանին: 7:

Ս— Երգէ Ժամարարն այս շարս աւետարանին, ապա սկսանին

Շարական Գ.Կ:

Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս: 982:

Ս— Եւ անդէն 'ի դրան եկեղեցւոյն. Ի վերի շարականին

## Որթիւ

Ըստ Աւետարանին որ ըստ Մատթէոսի: Ա. 1:

Գիրք ծննդեան Յսի Քսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու: Աբրահամ ծնաւ զԻսահակ: Իսահակ ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅուդա, և զեղբարս նր: Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա 'ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզրովն. Եզրովն ծնաւ զԱրամ: Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասովն. Նաասովն ծնաւ զՍաղմովն: Սաղմովն ծնաւ զԲոոս 'ի Հռեքաբայ. Բոոս ծնաւ զՈվբէթ 'ի Հռութայ. Ովբէթ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ: Դաւիթ արքայ ծնաւ զՍողոմովն 'ի կնոջէն Ուրիայ: Սողոմովն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ զԱսափ: Ասափ ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յովրամ ծնաւ զՈզիա: Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զԵզեկիա: Եզեկիա ծնաւ զՄանասէ.

Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅովսիա. Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս նորա առ գերութե՟ն Բաբելացւոց: Յետ գերութե՟ն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ: Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր: Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ: Եղիուդ ծնաւ զԵղիազար. Եղիազար ծնաւ զՄատթան. Մատթան ծնաւ զՅակովբ: Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս. յորմէ ծնաւ Յ՟ս, որ անուանեցաւ Ք՟ս: Արդ՝ ա՟մ ազգք յԱբրահամէ մինչև 'ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և 'ի Դաւթէ մինչև 'ի գերութին Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. և 'ի գերութէն Բաբելացւոց մինչև 'ի Ք՟ս ազգք չորեքտասանք: 17:

Յետ աւետարանին ըսէ կերպն է, զՆորաստեղծեալն ասա. եթէ չէ, զինչ որ օրն բերէ, զՄարմնականն ասա: Զկնի Քար. Խնդրեսցուք: Կեցո Տր: Աղ. Քում ամենազօր: Ես այս ժամէն 'ի պատարագ:

ՅԵՐԵԿՈՅԻ

Ես առ Ք՟ս կարդացի: Խոնարհեցո, և Լուրեցո: Մեղեդի ծննդեան. Իջցէ որպէս զանձրև. Քար. Այսր սր, խոր գանձ:

Համբարձի ԴԿ:

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ: 982:
Քար. Մ՟ե խաղաղութն: Աղ. Հայր գթած:
Զկնի Հայր գթածին մաղթան յաւելեան ընդհէն. և տան մաղթանս 'ի յետոյ ամենեցուն. և պատարագէնյ առաւօր շարական ասեն 'ի մահ:

Շարական ԴԿ:

Այսօր Բանն 'ի Հօրէ անմեկնելի և անճառ: 995:
Քար. Մ՟ե զԱծածինն: Կեցո: Աղ. Ընկալ Տր:

# Բ. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնու—էջ Դ․կ։

ԱՅՍՕՐ Բանն ի Հօրէ անմեկնելի և անճառելի խորհրդով․ ի ձեռըն կուսական ծըրավայնի անօրինակաբար յերկրի երևեցաւ ։ Անանուկ անժամանակ ի Հօրէ անսերմն ի կուսէ․ ի գիրկս մօր գրգուեցաւ այսօր աթոռակիցն Երկնի և երկրի ։ Որ մաքրեացն ըզՅորդանան և լուաց ըզմեղս աշխարհի․ զոր օրհնեմն անդադար աթոռանիք ամենայն․ զէակիցըն Հօր և Հոգւոյն ։

Լոյս ի լուսոյ ծագեցաւ ի Հօրէ և լուսաւորեաց ըզտիեզերս․ ծընընդ անապական յանըստուեր լուսոյն՝․ զոր միշտ փառաւորեն դասք անմարմնոցն ։ Յայտնի է ի Հրեշտակաստանի Աստծ՝ և ի Բեթղեհեմ ծընեալ յայրին՝․ Մանուկ անժամանակ ի Հօրէ․ և ժամանակաւ գոյացեալ ծնեալ լինի Աստուած և մարդ ։ Եւ հովուացըն տեսեալ ըզհրաշալի ծագումն աստեղն․ փութապէս եկեալ տեսին․ մանուկ եդեալ յանբանից մըսուր՝․ զոր միշտ փառաւորեն դասք անմարմնոցն ։

Ծն․ Քս ծընեալ այսօր ի Բեթղեհեմ ի յայրին՝․ Եւ դասք վերին զուարթնոցըն սոսկացեալ զարմացեալ կային․ զի տեսին մարմնով ծընեալ ըզԲանն Աստուած ։ Նոր ըսքանչելիք եղեն այսօր ի Բեթղեհեմ ի յայրին՝․ կուսի ծընանիլ Աստծ և մարդ՝․ անապական մընալով կուսական որովայ-

նի՛ն. զի տեսին մարմնով ծնեալ ըզՄիածինն Աստուած Աստղըն գուշակէր մոգուցն առ ի բերել զընծայս Աստուածութեանն. եւ հովիւքն ընդ հրեշտակս երգէին ասելով. փառք ի բարձունս Այ՝ որ առաքեաց ի փրկութիւն մեզ ըզՄիածինն Աստուած։

Օ. Ն. Որ ի հրեղէն աթոռ ընդ Հօր ես բնակեալ եւ ի հրեշտակաց սպասաւորեալ. այսօր կամաւ Հօր ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծնըն-դեամբ. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք։ Յորժամ զարհուրեալ դողան սրովբէադունդ ջոկք աթոռոցն. թեւաքօղելով ծածկեն զերեսս իւրեանց. այսօր աղաչաւոր ի կուսական ի ստեանցըն կերակրեցար մարդասիրապէս. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք։ Որ յանպատում փառաց խոնարհեցար յերկիր. աղքատակեր եղեր հողեղէն բնութեամբ. այսօր զգեղուցեալ զընախահայրըն կենագործեցեր ի կեանսըդ յաւիտենից. մարդասիրապէս. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք։

Օ. Ն. Որ անհաս ես անքնին՝ քառակերպիցըն վեհագոյն. ի փրկել զմեզ եկեալ անմահից թագաւորըն օրհնութեան տաճարօղին։ Առաքէ հրեշտակապետն առ սերովբէն հողեղէն. ասէ Տէրն եւ արարողն առաքեալ ի Հօրէ մարմնանալ ի քէն փրկողն։ Մկրտի ի Յորդանան՝ վկայելով Հօր եւ Հոգւոյն. ովսաննայ ի բարձունս երգեն մանկունք օրհնութի որդւոյ Դաւթի։

Օ. Ն. Որ կերպարան Հօր եւ պարզականդ Բանդ. վա-

սըն փրկութեան ազգի մարդկան. այսօր ի կուսէ ըզ-
կերպարանըս ծառայի ըզգեցար մարդասիրապէս.
քո ամենակեցոյց գալըստեամբդ ողորմեա մեզ
Աստուած: Որ յանմատոյց լուսոյ ծագեալ ընդ
Հօր և որ Հոգւոյն ի քրովբէականըն հանգչէիր
յաթոռ. այսօր խանձարրօք պատեցար՝ և յան-
բանից մըսուր եդար մարդասիրապէս. քո ա-
մենակեցոյց գալըստեամբդ ողորմեա մեզ Աստուած:
Որ եկիր ի փրկութիւն ազգի մարդկան՝ թագաւոր
փառաց քո անճառ խոնարհութեամբդ. այսօր ըզմե-
ղօք դատապարտեալ անձն իմ ի մահ՝ նորոգեալ ի
կեանսըն յաւիտենից մարդասիրապէս. քո ա-
մենակեցոյց գալըստեամբդ ողորմեա մեզ Աստուած:
Ծն. Որ էրն ի սկըզբանէ առ Աստուած և Աստուած
Բանն՝. կերպարան անեղին և համագոյ ընդ Հոգւոյն՝.
ի վերջին աւուրըս ծանուցեալ մարմնանալ յանձն
առնու ի կուսական յարգանդէ. վասըն փրկու-
թեան ազգի մարդկան: Յառաջ քան զյաւիտեանս
Որդի նախայաւիտենական. այսօր յերկրի երևեալ
Աստուած և մարդ կատարեալ խանձարրօք պատի ե-
ղանի և դընի յանբանից մըսուր. վասըն փրկու-
թեան ազգի մարդկան: Ի Բեթղեհէմ Հրէաստա-
նի երևի արդարութեան արեգակն՝. այսօր երկըր-
պագի ամենեցուն յարևելից եկեալ մոգուց. և փա-
ռաբանի յերջանիկ ի բազմութենէ հովուաց. վասըն
փրկութեան ազգի մարդկան:

Ծն. Նախախնամութեամբ ծընողի քո և միշտ կուսի.
հայցեմք ի քէն Քս փրկիչ աշխարհի. վասըն զի
բայց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր Տէր:

Ամենօրհնեալ ածամայր Մարիամ. քերովբէական անթառամ արարչին մերոյ տնօրէնութեան. զոր երանեն ամ ազինք հանապազ: Բարեխօսութեամբ որ Աստուածածնի եւ միշտ կուսի. աղաչեմ Տէ՛ր փրկեա՛ զմեզ ի յորոգայթէ յանհրեւոյթ թշնամւոյն:

ԺԳ. Աղբեւր կենաց բաշխող շնորհաց Հոգիդ Իջեալ ի բարձանց. զանապականն պարգեւըս քո բաժանեցեր յառաքեալսն: Որ ի վերն ջուրցըն գոլով ստեղծանէիր զարարածս. իջեալ ի ջուրս աւազանին ծնանիս որդիս Աստուծոյ: Որ զօրգարեալ նորոգես միշտ ըզնոր քո զեկեղեցի. պէսպէս շնորհաց քոց պարգեւօք փայլեն մանկունք սորա:

ԺԴ. Որ արարիչդ ես արարածոց հանգուցեալդ ի հրեղէն կառս. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. եւ հանգո ընդ սրբըս քո: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան. եւ ներող յանցանաց մերոց. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. եւ հանգո ընդ սրբըս քո: Փառք Հօր: Որ միւսանգամ գալոցդ ես հայրենի փառօք նորոգել զնախաստեղծին ծընունդ. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց. եւ հանգո ընդ սուրբըս քո:

Այժմ եւ միշտ: Խընդա եւ ուրախ լեր ամենօրհնեալ Մարիամ. քանզի որ ի քէն ծընաւ փրկիչ Տէր է օծեալ ի քաղաքի Դաւթի. զոր միշտ փառաւորեն զաւրք երջանիկ հոգւոցն:

Առաւօտու Օրհնութեան ՚ի յայնժամ:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Գ.Ձ:

Ի կուսական որովայնէ ծնեալ մարմնով որ յառաջ քան զյաւիտեանս Բանդ ի Հօրէ երգեսցուք. Տէր Ած փառաւորեալ է անուն քո: Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անընկերելին Որդի. անճառաբար տղայացեալ ի խանձարուրս պատեցար՝ երգեսցուք. Տէր Ած փառաւորեալ է անուն քո: Ամենայն բարութեանց տուող ազգի մարդկան՝ և ի մոգուցն այսօր ընծայեցար՝ երգեսցուք. Տէր Ած փառաւորեալ է անուն քո:

Գ.. Ըզ Տէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ յանճառելի աթոռ ընդ Հօր փառակից Բանդ ի յերկրի երևեցար՝ օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ի կուսէ անապական Թագաւոր ծնաւ Քս. և ի հրեշտակաց անդադար փառաբանի Ած՝ քահանայք օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան:

### Մեծացուսցէ Գ.Ձ:

Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակարան. քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայն: Փառք Հօր: Սանդղծողին մայր և հընութեն կերպի նորոգողին. քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայն: Այժմ և միշտ: Լոյս ծագեցաւ ի քէն նստելոցս ի խաւարի. քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայն:

### Ողորմեա Գ.Ձ:

Զահաւոր բարբառս վերնոցն հոգևոր հըն-

մամբ երգով ընկալեալ հովուացն օրհնէին․ ըզ-
ծննդեանդ եւ ընծայումն յանմեկնելի լուսոյն․
փառք Հօր։ Հրեշտակապետին աւետեօքն ընթա-
ցեալք ի յայրն․ տեսին զի նուաստացեալ էր ան-
հասն սերովբէիւք․ մանուկ եղեալ յանբանից
մսուր։ Այժմ և միշտ։ Գոհանալով մոգուցն ըզ-
փայլումն աստեղն․ սա զՔս գուշակեալ լինի․ զի
ի տեսիլ մարմնացելոյն ժամանեալ նորա մա-
տուցանելով զերկրպագութիւն։

Տէր յերկնից Գ․Զ։

Գոչմամբ անմարմնականք երկնաւոր զօրացն ի
մէջ հովուացն օրհնէին ըզծնընդեանն լուսոյ․
մեծին ի Հօրէ մեզ ի փրկութիւն։ փառք Հօր։
Նոր մոգքն աստեղը նշանաւ եկին ի Բեթղէ-
հէմ երկիր պագին Տեառն․ եւ ի յայրին մա-
տուցին զընծայս խորհրդոյ։ Այժմ և միշտ։ Նո-
րոգութեամբ երգեն ընդ հրեշտակս փառք ի բար-
ձունս մեծին Ած․ որ եկիր և փրկեցեր ըզ-
տիեզերս քոյով յայտնութեամբդ։

Առաւօտու Երգ․ Իջցէ որպէս անձրև։

Օրհ․ ԱԷ Ըմբ․ Սաղմոս Բ։

ԿՑ․ Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այ-
սօր ծնայ զքեզ։

Փխ․ Ընդէր խռովեցան հեթանոսք։ 960։

Օրհ․ Որթիւ

Արբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Բ․ 1։

Ա ծննդեան Տն մերոյ Յսի Քսի։

Նա եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ։ 992։

Օրհ․ Վարդապետական ․․․ ․․․ ․․․

Քար․ Խնդրեսցուք։ Կեցո․ Աշ․ Քուն ամէ։

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեղեդի ծննդեան։ Մեծացուսցէ անձն իմ։ Քարոզ. Այր որ, կամ գանձ։

Համբարձէ ԳԿ։

Այսօր Բանն ՚ի Հօրէ անմեկնելի և անճառ 995։ Նախատօնակ ԳԿ. Էակից Հօր և Հոգ։ Տէր ՚ի Հայր։ Քարոզ. Այր զԸնծայեն։ Աղ. Ընկալ Տր։

# Գ. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԳԿ։

Էակից Հօր և Հոգւոյն անըսկիզբն Որդի. անմայր յառաջնումն անդրանիկ. Եւ ընդ Հօր յաւիտեանն։ Ի ծոցոյ Հօր առաքեալ եղեալ ի մըսուր յանբանից. Բանդ Աստ յայտնեալ։ Քրիստոս ծնեալ ի քաղաքի Դաւթի. քարոզեն հովիւքն ընդ հրեշտակս. և մոգք հանդերձ աստեղբն։

† Որ ըզմարմնացեալըն տիրաբար ի յորովայնի քում կրեցեր. ուրախ լեր ամենօրհնեալ մայր։ Որ զանտանելին յէից ի յարգանդի անապականաբար կրեցեր. ուրախ լեր ամենօրհնեալ մայր։

Ծն. Հրաշափառ ծննդեամբ քո ի սուրբ կուսէն. այսօր ցուցաւ ազգի մարդկան. անըսկըզբնակից Բանդ էակից Հօր։ Յայտնութեամբ քո Տէր ցընծացաւ երկիր. եւ նորոգեալ եղեւ Ադամ յառաջին յանցանաց ի մեղաց իւրոց։ Դասք հովուացն յերկրի փառաւորէին ըզքեզ ամենակեցոյց գալըստդ. որ երևեցար քո արարածոց։

Ծն. Ծառ կենաց տընկեալ յԵդեմն նոր կոյս. որ ըղձայրածինն ըղխեցեր զծաղիկ. եւ ետուր ի ժամու զԱրդին պտուղ մարդկան. զորոյ զմարմինն ճաշակեալ անմահացան յուսով. վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քո ծննդեան։ Խաւսաւոր երկիր տիրուհի. եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց. որ ըզբոյն երկնային առանց սերման ծընար. որով զկենացն ետուր ըղձաց սովեալ բնութեանս. վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քո ծննդեան։ Ամպ թեթեւ յերկրային ցանկութեանց նոր կոյս. եւ վառարան ածային բոցոյն. որ ըզցօղն հայրաբուղխ անձրեւեցեր ի բանական երկիր. որով բնութեանս բուսան արդարութեան նոր բոյսք. վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քո ծննդեան.

Ծն. Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան. եւ նստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։ Անապական տաճար եւ մաքրենի անկիզելի. որ զանշէջ հուր Աստուածութեան ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջուցեր բոց. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։ Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս. որով եղեւ յերկիր անետեաց Հօրդեան. Ծածկեալ ի քեզ տըպաւորեալ Բանին. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք։

Ծն. Օ Աստուածածինն եւ զմիշտ կոյսն անդադար

օրհնեսցուք · քանզի ծագեաց մեզ լոյս երեսաց եւ փրկիչ անձանց մերոց: Խնդա եւ ուրախ լեր ամենօրհնեալ մայր · քանզի որ ի քէն ծընաւ ըմեզ Աստուած ի փրկութիւն անձանց մերոց: Գանձ անապական գտար սուրբ Ածածին · բարեխօսեա Քսի ԱՅ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

ԾՆ· Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի · որ բարեխօսդ ես միշտ աշխարհի · քեզ երանեն ամ ազինք: Անքուր աղաւնի եւ հարսն երկնից Մարիամ · տաճար եւ աթոռ ԱՅ Բանին · քեզ երանեն ամ ազինք: Դ.Եւ հանեցան ի մանալեքն ընդ հողեղենքս · եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց · քեզ երանեն ամենայն ազինք:

ԱԳ· Աղբիւր կենաց բղխեալ յԵդեմայ ոք Ածածին · որով արբեցաւ երկիր ծարաւեալ հոգւոյն իմաստից · տալ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց · մաքրել զմեղս ի մեղաց մերոց: Ածածին սուրբ լուսոյ ամպ հովանաւոր · եւ բնակարան Բանին · որ բանիւ հովուէր զաշխարհ · բարեխօսեա Նմա վն անձանց մերոց: Զանապական կոյսն Մարիամ Ածածին խոստովանիմք ոք եկեղեցի · ուստի ծագեաց հացն անմահութեան եւ բաժանի մեզ ուրախաբար · տուք օրհնութիւն Նմա հոգեւոր երգով:

ՀԳ· · Զամենակալեալն բղխեալ ի Հօրէ եւ յՈրդւոյ զՀոգին ճշմարիտ · որ հրեշտակաց ձայնիւ էջ ի վերնատունն այսօր Նմա սուրբ հողմով · զոր փառաւորեմք հոգեւոր երգով: Զհամագոյակիցն Հօր եւ Որդւոյ զլուսաւորիչն շնոր-

հայց. որ ի հրեղէն լեզուս բաժանեալ զբանն ընտրութեան լեզուաց շնորհեաց սուրբ առաքելոցն. զոր փառաւորեմք հոգեւոր երգով: Զաղբեւրն իմաստութեան ըզկատարեալն անձնաւորութեամբ. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս. զոր փառաւորեմք հոգեւոր երգով:

Հն. Լեառըն վիմածին աղբեւր յորդառատ. բարունակ ծաղկեալ այգի վայելուչ սրովբէ հողեղէն. բարբառնեալ Բանին տուն տնօրէնութեան տաղաւար Հոգւոյն. առ ծընեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն: Փափկութեան դրախտին բացօղ բանալի. Քրիստոսի բարձօղ նըմանող երկնից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ տաճար լուսոյ մայր. առ ծընեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն: Փառք Հօր: Ցօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն. Նիւթեղէն սրովբէ գեղմարգարտափայլ հիմն Եկեղեցւոյ. մաքուր աղաւնի անմեղ հովանաւոր ս՝բ կոյս Մարիամ. առ ծընեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն:

Այժմ և միշտ: Որ զարարչակից Բանըն գըյացեալ ըստուգապէս աշխարհի ծընար. ուրախ լեր ամենօրհնեալ մայր:

Ալէլուիա Օրհնութեան ՚ի յայտնէն :

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Դ.կ:

Սքանչելագործ Աստուած զքեզ բարեբանեմք. որ ի քերովբէական աթոռըդ նստիս. Աստուած հարցըն մերոց: Որում ոչ բաւեն երկինք ընդունել զանբաւելի զընութիդ յարգանդի կուսին բնակեցար ծընար անճառապէս. Աստուած հարցըն մերոց: Զոր վեցթեւեանն սրովբէքն ոչ իշխէին հայել ի քո Աստուածութիդ. տեսանելով ի գիրկս կուսին զարմացեալք. օրհնէին ըզքեզ Աստուած հարցըն մերոց:

Գ.. Աստ օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Փառք Հօր: Որ ի կուսէ անապական թագաւոր ծընաւ Քրիստոս Աստուած. յորմէ գերագոյն իմանալի զօրութիւնք. օրհնեցէք ժողովուրդք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ մկըրտեցաւ ի Յորդանան և լուաց ըզտիեզերս ի մեղաց. վկայեալ ձայնիւ Հօր. և երեւմամբ Հոգւոյն. օրհնեցէք քահանայք առաւել բարձրացուցէք ըզնա յաւիտեան:

### Մեծացուսցէ Դ.կ:

Ածածին սուրբ կոյս ամենօրհնեալ Մարիամ. որ օրհնեալդ ես ի կանանս. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք: Փառք Հօր: Անապական տաճար և առանձնատ լուսոյ. որ ի քեզ փեսայացեալ Բանն կենաց բնակեցաւ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Հուրըն կենդանի որ ի մորենին

վառեցաւ. զոր անմերձենալի յարգանդի քում կրեցեր և ծնար Աստուած և մարդ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Կ:

Որ կերպարան Հօր ես և պարզեալ Բանդ. վասն փրկութեան ազգի մարդկան. այսօր ի կուսէ ըզկերպարանս ծառայի ըզգեցար մարդասիրապէս. քո ամենակեցոյց գալստեամբդ ողորմեա մեզ Աստուած: փառք Հօր: Որ յանմատոյց լուսոյ ծագեալ ընդ Հօր և Սուրբ Հոգւոյն ի քրովբէականըն հանգչէիր յաթոռ. այսօր խանձարրովք պատեցար՝ և յանբանից մսուր եդար մարդասիրապէս. քո ամենակեցոյց գալստեամբդ ողորմեա մեզ Աստուած: Այժմ և միշտ: Որ եկիր ի փրկութիւն ազգի մարդկան՝ թագաւոր փառաց քո անճառ խոնարհութեամբդ. այսօր ըզմեղօք դատապարտեալ անձն իմ ի մահ՝ նորոգեալ ի կեանսըն յաւիտենից մարդասիրապէս. քո ամենակեցոյց գալստեամբդ ողորմեա մեզ Աստուած:

Տէր յերկնից Դ.Կ:

Բան ծնեալ այսօր ի Բեթղեհէմ ի յայրին. և դասք վերին զուարթնոցըն սոսկացեալ զարմացեալ կային. զի տեսին մարմնով ծնեալ ըզԲանն Աստուած: փառք Հօր: Նոր ըսքանչելիք եղեն այսօր ի Բեթղեհէմ ի յայրին. կուսի ծընանի Աստուած և մարդ. անապական մնալով կուսական որովայնին. զի տեսին մարմնով ծնեալ ըզԲանն Աստուած: Այժմ և միշտ: Աստղըն գուշակէր մոգուցն առ ի բերել զընծայս Աստուածութեանն.

եւ հովիւքն ընդ հրեշտակս երգելին ասելով. փառք ի բարձունս Այ՝ որ առաքեաց ի փրկութիւն մեզ զՄիածինն Աստուած։

Առաւօտու Երգ Իջցէ ով անձրեւ։

Սաղմոս ՀԱ։

Կց. Իջցէ որպէս։ Փխ. Ած զիրաւունս։ 953։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ա. 1։

Ի Հօրէն լուսոյ

Իսկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Ած։ 957։

Քոզ. Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Փառս ամե։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեծացէ Տր ասաց։ Քոզ. Անուր զքո, Խոս գանձ։

Համբարձէք ԳԿ։

Էակից Հօր եւ Հոգւոյն անսկիզբն Որդի։ 1001։

Նախատօնակ ԳՁ. Այսօր գաբրիէլ։ Տէր ՚ի ձայր։

Քարոզ Սբ զԱծածինն։ Աղ. Ընկալ Տր։

---

# Դ. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնաբանէ ԳՁ։

ԱՅՍՕՐ գաբրիէլ ցնծութիւն երգեաց սրբոյ կուսին աւետիս բերկրեաց ասելով. որ ծնաւ ըզփրկիչ անձանց մերոց։ Անրաւելին երկնի եւ երկրի. ի կուսական արգանդէ մեզ կենաց յայտնեցաւ. Աստուած այցելու մարդկան։ Յաւազընթաց փայլումն լուսատեսիլ աստեղն. մոգուցն հետեւելով նշանին ի ծնունդն Աստուծոյն։

† Այսօր գաբրիէլ հրեշտակըն ցնծութիւն երգեաց առ կոյսըն սուրբ. ասէ ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Այսօր աւետիք հրեշտակապետին՝

ցընծութեամբ լըցին ըզեկեղեցին սուրբ · քանզի էջ մի-
ածինըն յարգանդ կուսին ։

Օ·Ն· Այսօր որ յաթոռ փառաց ընդ Հօր ծընանի ի
սըրբոյ կուսէ մարդացեալն · մարմնացեալ Բանն ծնանելով
ըզտօնիցերս յորդեգրութեան շնորհս ։ Այսօր ան-
պարագրելի Բանըն Հօր բազմի ի մըսուր յան-
բանից · բոլորից Տէրն՝ և ի վերայ քերովբէից
հանգչի ։ Որ նոյն ինքն է ճառագայթ փառացըն
Հօր · ի Յովհաննէ հայցէր մըկըրտութիւն ի Յոր-
դանանու յորձանսն · առաքելական կոչմամբ ըզ-
տօնիցերս հրաւիրելով ։

Օ·Ն· Անըսկըզբնական տեսիլ փառաց քոց տըւող ·
որ ի մեզ հրաշագործեցաւ երևելով անճառաբար
ծընընդ · այսօր ցնծութեամբ յայտնեցաւ տօն-
զերաց ։ Անմարմնական հոգեղինացն երգակցելով
բոցեղէն փայլմամբ թափանցիկ հրածին ամպոյն
սիւն գործեալ յայրին · այսօր դասակից եղեն
հովիւքըն հանդիսի վերընծայցն ։ Ընդ հանուր ծա-
ւալեցաւ ծագումըն լուսոյ · մոգուցըն հետևելով
աստեղըն գուշակեալ ըզծննդեան յայրին · անդ
մատուցանէին ըզընծայս [illegible] ծնընդեանն ։

Օ·Ն· Ճառագայթ և կերպարան էութեան Հօր
Բանդ Աստուած · ըզքեզ բարեբանեմք ասելով
փառք ի բարձունս Աստուծոյ ։ Որ միացար ի մար-
մնի անճառապէս ճըշմարիտդ Աստուած · ըզքեզ բա-
րեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ ։
Որ զանիծիցըն բարձեր ըզդատապարտութիւն Քրիս-
տոս Աստուած · ըզքեզ բարեբանեմք ասելով
փառք ի բարձունս Աստուծոյ ։

Ծն· Գանք անմարմնականք երկնաւոր զօրացն ի մի հոլովացն օրհնելին ըզծագումըն լուսոյ. ծնելին ի Հօրէ մեզ ի փրկութիւն։ Եւ մոգքն աստեղը նշանաւ եկին ի Բեթղեհէմ երկիր պագին Տեառն. Եւ ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյն։ Եւ հովիւքն երգեն ընդ հրեշտակս փառք ի բարձունս մեծիդ ՔՍ. որ եկիր և փրկեցեր զաղտեղեալս քոյով յայտնութեամբդ։

Ծն· Զանճառելի լուսոյ մայր և զբնակարան անսկզբնակից Որդւոյն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զանհաս տնօրէնութեան մայր. և զանձեռագործ տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զբոլորից փրկութեան մայր. որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ. ընդ ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։

ԱԳ· Անտանելւոյն տաղաւար բարձող էիցս բարձողին. որ ծընար զԱծ մարմնով զանմարմնաբար ծընեալն Հօր. բարեխօսեա վասըն մեր Ածածին Մարիամ։ Որ վառեցար ի յարփւոյն և ոչ կիզար ըստ մորենւոյն. այլ եղեր զհացըն կենաց կերակուր բանաւորաց. բարեխօսեա առ ՔՍ ջնջել ըզգիր մեղաց մերոց։ Ածածին դու ես յոյս և ապաւէն. խոստովանողացս ըզքեզ. որդւոյ քո և ՔՍ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ։

ՀԳ· Արեգակն արդարութեան ՔՍ ծագեալ յաշխարհ հալածեաց ըզխաւարն անգիտութեան. և յետ մահու և յարութեն համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց. որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. վասն

որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին Բանին որ ել յերկինս. առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան. մխիթարել զորս յԱդամայ տրտմեցելոց և հրաւիրել զընտրեալ դասս առաքելոցն. վս որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճշմարտութբ։ Այսօր տրտմական և գիշերային լուծան երկունք ծնընդեան նախամօրն. քանզի զծնեալըն մարմնով ի մահ և յապականութի. վերստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վս որոյ և մեք երկիր պագանեմք Հօր հոգւով և ճշմարտութեամբ։

Հն. Որ խոնարհեցար յերկնից Բանդ Աստուած և առեր մարմին ի սրբոյ կուսէն. յիշեա ըզնըն-ջեցեալըն ըմեր յորժամ գայցես անձառ փառօք. զի դու ես Տէր ամենայն երկրի։ Որ ունիս իշխանութի մահու և կենաց. և խաչիւդ քո լուծեր զերկունս մահու. յիշեա ըզնընջեցեալըն ըմեր յորժամ գայցես անձառ փառօք. զի դու ես Տէր ամենայն երկրի։ Փառք Հօր։ Ի նստել քո յատենի դատաստանի ահեղ. աղաչանօք սր Աստուածածնին յիշեա ըզնընջեցեալըն ըմեր. յորժամ գայցես անձառ փառօք. քանզի քո են փառք յաւիտեանս ամէն։

Այժմ և միշտ։ Այսօր տօնեղեբք պայծառացան աւետեօք սրբոյ կուսին. քանզի Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ։

Աւետարան Յովհաննու ի յոյնէն։

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Դ.Կ:

Որ ի ծոցմ Հօր Բանդ Աստուած անըսկիզբըն. յար-գանդի կուսին բընակել յանձն առեր. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց: Որ յան-պատմելի աթոռ նըստիս և ընդ Հօր ես յէութե. յանբանից մըտօք եկար Թագաւոր փառաց. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց: Որ ի քառակերպից երեքսրբեան ձայնիւ անդադար օրհնաբանիս. ի մոգուց պատարագօք պատուեցար յայրին. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց:

Գ. Ազգեր օրհնեցէք զՏէր և բարձր արարէք զնա յաւիտեան: Փառք Հօր: Զթագաւորն անմահ Քրիստոս զէակից Հօր և Հոգւոյն, որ տը-գիւյացաւն այսօր յանարատ ի սուրբ կուսէն՝ փըր-կելով զմեզ. ժողովուրդք օրհնեցէք զՏէր և բարձր արարէք զնա յաւիտեան: Այժմ և միշտ: Զ-բարին արարածոց Քրիստոս փառակից Հօր և Հոգւոյն, այսօր մըկըրտել ի յանձն էառ ի ձե-ռաց հողեղինի, սրբելով զմեզ. քահանայք օրհնեցէք զՏէր և բարձր արարէք զնա յաւիտեան:

### Մեծացուսցէ Գ.Կ:

Զքեզ Աստուածածին մայր անըսպառ լուսոյն, որ լուսաւորեր զհաւատացեալս. միաբանական ձայ-նիւ երգով մեծացուցանեմք: Փառք Հօր: Դու պարծանք կուսանաց մարդկան. դու ուրախութիւն հրեշտակաց. դու բարձօղ անիծիցն. վն որոյ զքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Դու ճշմարիտ արեւելք արեգականն արդա-

րութեն. յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց. միաբանական ձայնիւ երգով մեծացուցանեմք:

Ողորմեա Գ.Կ:

Զքեզ աղաչեմք անսկիզբն էակից Հօր Որդի. որ այսօր նախատեսեցին ընութեամբ ի կուսէն ծնար. Աստուած եւ մարդ ողորմեա մեզ: Փառք Հօր: Առ քեզ պաղատիմք էակից Հօր Որդի. որ այսօր ի մսուր եդար և ի հրեշտակաց պատուեցար. Աստուած եւ մարդ ողորմեա մեզ: Այժմ և միշտ: Ի քէն հայցեմք ճշմարիտ սուրբ Հոգի. որ այսօր աղաւնակերպ երեւմամբ ըյայտնեցար աշխարհի. Աստուած ողորմեա մեզ:

Տէր յերկնից Գ.Կ:

Որ ի հրեղէն աթոռ ընդ Հօր ես բնակեալ՝ եւ ի հրեշտակաց սպասաւորեալ. այսօր կամաւ Հօր ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծննդեամբ. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք: Փառք Հօր: Յորմէ զարհուրեալ դողան սրովբէական ջոկք աթոռոցն՝. թեւաքողելով ծածկեն զերեսս իւրեանց՝. այսօր տղայաբար ի կուսական ի ստեանցըն կերակրեցար մարդասիրապէս՝. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք: Այժմ և միշտ: Որ յանպատում փառաց խոնարհեցար յերկիր՝. ախտակիր եղեր հողեղէն բնութեամբ՝. այսօր ըզմեղուցեալ ըզնախահայրըն կենագործեցեր ի կեանըն յաւիտենից՝. մարդասիրապէս՝. զքեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք:

Առաւօտու Երգ Իջցէ որպէս անձրև ։

Սաղմոս ՃԹ ։

ԿՑ. Ի վայելչութիւն որց ։ Փխ. Ասաց Տէր ։ 961 ։

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի ։ Ա. 1 ։

Գիրք ծննդեան Յսի Քսի որդւոյ Դաւթի ։ 993 ։

Քար. Խնդր. Կեցո ։ Աղ. Քում ամենազօր ։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեսեդի. Իջցէ որպէս ։ Քար. Մնայր որ, Խաղաղական ։

Համբարձի Գ.Ձ. Այսօր Գաբրիէլ ցնծութիւ ։ 1007 ։

Նախատօնակ Գ.Ձ. Այսօր որ յաթոռ ։ Տէր ՚ի կայր ։

Քարոզ Սբ զԱծածինն ։ Կեցո. Աղ. Ընկալ Տր ։

---

# Ե. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

ԻԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Ձ ։

ԱՅՍՕՐ որ յաթոռ փառաց ընդ Հօր ծնեալն ի նոյն կուսէն. մարմնացեալ Բանն ծնանելով ըղտինջերս յորդեգրութեան շնորհս ։ Այսօր անպարագրելի Բանըն Հօր բազմի ի մսուր յանբանից. բոլորից Տէրն՝ և ի վերայ քերովբէիցն հանգչի ։ Որ նոյն ինքն է ճառագայթ փառացըն Հօր. ի Յովհաննէ հայցէր մկրտութիւն ի Յորդանան յորձանսն. առաքելական կոչմամբ ըզտինջերս հրաւիրելով ։

† Ըզծնեալն ի սրբոյ կուսէն ընկալցուք ի սիրտըս մեր հաւատով. որպէս երբեմն ի գիրկըն Սիմէոն ։ Օրհնեսցուք զառաքեալն ի Հօրէ որ ի խանձարուրըս պատեցաւ. փառըն մեր. և փրկեաց ըզմեզ յանիծիցն Ադամայ ։

Օ.Ն. Որ յէութենդ ես ընդ Հօր և ընդ Հոգւոյն անըսկիզբն Որդի. խոնարհեցար ի հայրական ծոցոյ. մարդ եղեալ մարմնացար ի կուսէն բառնալով զպատժումն մահու յանցանաց նախահօրն. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակաց ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ: Այսօր ծնեալ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի. ճառագայթ փառաց և ծագումն յանմեկնելի լուսոյն. աստղագուշակ տեղեամբն յայրին իջեւանի և ի մսուր յանբանից բազմեալ. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակաց ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ: Թագաւոր փառաց Քս եւ արարիչ բոլորից Տր հզօր իշխան հայր հանդերձեալ լուսոյն. մանուկ երևեալ այսօր անփոփոխելիդ ի յէութեան. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակաց ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ:

Օ.Ն. Ամենիմաստ ամենից Հայր բազմաղեղ խնամօղ ստեղծօղ և Տր բոլորից. անեղ և էից էակ. զոր միշտ օրհնեն դասք անմարմնականացն յաւէժաբար հնչմամբ: Որ կերպարան և կնիք Հօր առեալ վասն մեր ծառայի կերպ ի կուսէն. որ էն ի յաթոռ փառաց անհաս վերնոցն. ի յայրին իջեւանի և ի մսուր յանբանից բազմեալ: Զի կուսէն մարմնացեալ Բանն՝ եկայք ընդ հովուացն բարբառնեսցուք. եւ ընդ մոգուցն երկրպագեսցուք. ընդ երկնային զօրսն երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ:

Ծն. Օհ հաւա՜ր բարբառըս վերնոցըն հոգևոր հրճը-ւամբ երգով ընկալեալ հովուացն օրհնէին. ընդ-ծընեալ ընդ և ընծայութըն յանմեկնելի լուսոյն. Հրեշտակապետին աւետեօքն ընթացեալք ի յայրն. տեսին զի Նուաստացեալ էր անհասըն սերովբէից. մանուկ եղեալ յանբանից մըսուր: Դիտելով մո-գուցն ըզփայլումն աստեղըն. սա զԱստուած գուշակեալ լինի. զի ի տեսիլ մարմնացելոյն ժամանեալ նըմա մատուցանելով զերկըրպագութիւն:

Ծն. Ուրախ լեր Աստուածածին յոյս և փրկութիւն մայր. ընդ քեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք: Ընդ քեզ լուսոյ մայր և կոյս. ընդ քեզ գանձըդ կենաց ածային. ձայնիւ ցընծութեան մեծացուցանեմք: Մայր սուրբ անարատ լուսոյն հրեշտակային օր-հնութիւ պատուեալ ընդ քեզ մեծացուցանեմք:

Ծն. Մի զԱստուածածինն. օրհնութեամբ մե-ծացուցանեմք: Աւետաւոր հրեշտակն աւետա-բանէր. ընծըննեալ փրկիչն ի սըրբոյ կուսէն: Ուստի ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տե-րանց է ընդ քեզ:

Ծն. Բարեխօսեա անդադար առ որդիդ քո և Աս-տուած ըմեր. ծընօղ և աղախին Տեառն: Ի բա-րեխօսութիւ փութացիր մեզ որ Աստուածածին. առ ի փրկել ըզժողովուրդս ի մեղաց և յապականու-թենէ: Ապաւինիմք ի քո բարեխօսութիւն ածա-ծին Մարիամ. մայր Տեառն և կոյս որ. հարսն եր-կնից և դուռըն կընքեալ. զոր մարգարէն ետես:

Հգ. Որ համագոյդ ես Հօր և Որդւոյ. անձնաւորաբար բըղխումն ի միշտ Էէն անճառ յաւօր. բըղխեցեր ջուր

կենդանին Յերուսաղէմ. Հոգի Աստուածոյ ողոր-մեա։ Որ արարչակից ես Հօր և Որդւոյ. որով կենդանածնեալք ի ջուրս մարմրածք. այսօր որդիս Աստուածոյ ծնանիս ի ջուրց. Հոգի Աս-տուածոյ ողորմեա։ Որ փառակից ես Հօր և Որդւոյ. և քննես զխորս Աստուածոյ. այսօր խօրագէտս իմաստից զյիմարս աշխարհի արարեր. Հոգի Աստուածոյ ողորմեա։

Հն. Արարչագործ Ած. զարարածս քո մի ան-տես առներ այլ գթա ի ննջեցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սի-րողաց։ Արարչակից Հօր Որդի. ի միւսանգամ քո գալստեանն անդատապարտ պահեա ըզննջե-ցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սիրողաց։ Փառք Հօր։ Կենդանարար սուրբ Հոգի. յորժամ նորոգես զերեսս երկրի. նորափետուր զարդարեա ըզննջեցեալսն մեր. և հանգո ընդ սուրբս քո ի խորան քում սիրողաց։

Այժմ և միշտ։ Որպէս լեր անապակ ծաղիկ և ծաղկեալ հաստատով երանութեամբ մի յայսմ հետէ. քանզի Քրիստոս յոյս յայտնեցաւ հե-թանոսաց։

Ալէլուիա Ծննդեան ՚ի Յայտնէն։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒՆ

Հարց Դ·կ։

Որ յանճառելի ծոցոյ Հօր յէութենէ ծագեցեր արեգակն արդարութեան անսկզբն Աստուած. զքեզ ընդ հրեշտակս բարեբանեմք Աստուած հարցըն մե-րոց։ Որ խոնարհեցար յերկնից փրկել զարարածս

անյեղապէս ծա. մարմնացար ի կուսէն էակից Բա-նըդ Հօր. զքեզ ընդ հրեշտակըս բարեբանեմք Աս-տուած հարցըն մերոց: Որ ի խանձարուրըս պա-տեցար անեղանելիդ ոչ մեկնելով. յանքընին փառաց Հօր եսկակից ընդ Հոգւոյն. զքեզ ընդ հրեշ-տակըս բարեբանեմք Աստուած հարցըն մերոց:

Գ.. Կցորդ Միաբանութեամբ օրհնեցէք եւ ա-ռաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Զառաքեալըն ի Հօրէ զԲանն եւ զմարմնացեալըն ի կու-սէն զանքըննելին. միաբանութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւի-տեանս: Փառք Հօր: Զծնեալըն ի սուրբ կուսէն եւ յանբանից մըսուր եդեալ ըզհաց կենաց. միա-բանութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ եւ միշտ: Զեր-կըրպագեալըն ի մոգուց եւ զմըկըրտեալըն ի Յորդանան ի Յովհաննէ. միաբանութեամբ օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

ՄԵԾԱՑՈՒՑԷ Դ.Կ:

Աստուածածին եւ սըրբուհի. որ ըզԲանն Աստուած անսերմն յղութեամբ յարգանդի կրեցեր. անդադար եր-գով մեծացուցանեմք: Փառք Հօր: Զքեզ մայր կուսութեան եւ յղութեան լուսոյ. եւ առագաստ ան-ճառելոյ բընակողին ի քեզ փեսայացեալ Բա-նին. անդադար երգով մեծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Քեւ լուծան կնիք դատապարտութեան. եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ կոյս. անդադար եր-գով մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Կ։

Որ էրն յանսկզբանէ առ Աստուած և Աստուած Բանն՝ կերպարան անեղին և համագոյն ընդ Հոգւոյն. ի վերջին աւուրս ծանուցեալ մարմնանալ յանձն առնու ի կուսական յարգանդէ. վասն փրկութեան ազգի մարդկան։ Փառք Հօր։ Յառաջ քան զյաւիտենանս Որդի Նախայաւիտենական. այսօր յերկրի երեւեալ Աստուած եւ մարդ կատարեալ խանձարրովք պատի եզանի եւ դնի յանասնոց մսուր. վասն փրկութեան ազգի մարդկան։ Այժմ և միշտ։ Ի Բեթղեհէմ Հրէաստանի երեւի արդարութեան արեգակն. այսօր երկրպագի անեղն յարեւելից եկեալ մոգուց. եւ փառաբանի յերջանիկ ի բազմութեանց հովուաց. վասն փրկութեան ազգի մարդկան։

Տէր յերկնից Դ.Կ։

Որ անհաս և անքննին քառակերպիցըն վեհագոյն. ի փրկել ըզմեզ եկեալ անմահից թագաւորն օրհնութեամբ առաքողին։ Փառք Հօր։ Առաքի հրեշտակապետն առ սերովբէն հոգեղէն. ասէ Տէրն և արարողն առաքեալ ի Հօրէ մարմնանայ ի քէն փրկողն։ Այժմ և միշտ։ Մկրտի ի Յորդանան՝ վկայելով Հօր և Հոգւոյն. ովսաննայ ի բարձունս երգէին մանկունք օրհնութիւն որդւոյ Դաւթի։

Առաւօտու Երգ Իջցէ որպէս անձրեւ։

Սաղմոս Ի։

ԿՅ. Տէր ասաց։ փխ. Ընդէր խռովեցան։ 960։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ Ա. 8։

Տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ 961։

Քար. Խնդրեսցուք։ Կեցո. Աղ։ Քաւ ամեն։

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեղեդի. Մեծացուցէ: Քաղ. Այր սբ, կամ գանձ:

Համբարձի գԶ:

Այսօր որ յաթոռ փառաց ընդ Հօր: 1013:
Նախատօնակ գԶ. Անսկզբնական տեսիլ: Տէր 'ի վայր:
Քարոզ. Սբ զԱծածինն: Կեցո. Աղ. Ընկալ Տր:

# Գ. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնաբանէ գԶ:

ԱՆՐԱԿԱՐԾԵԼՆԱԿԱՆ տեսիլ փառաց քոց տըւօղ. որ ի մէջ հրաշագործեցաւ երևելով անճառաբար ծննդեանդ. այսօր ցնծութեամբն յայտնեցաւ տիեզերաց: Անմարմնական հոգեղինացն երգակցելով բոցեղէն փայլմամբ թափանցեալ հրածին ամպոյն սուն գործեալ յայրին. այսօր դասակից եղեն հովիւքն հանդիսի վերնոցն: Ընդ հանուր ծաւալեցաւ ծագումն լուսոյ. մոգուցն հետևելով աստեղըն գուշակեալ ըզծննդեանդ յայրին. անդ մատուցանէին զընծայս ածային ծնընդեանն:

† Որ յէութենէ ես ընդ Հօր և ընդ Հոգւոյն անըսկիզբն Որդի. խոնարհեցար ի հայրական ծոցոյ. մարդ եղեալ մարմնացար ի կուսէն բառնալով զյաղթումըն մահու յանցանաց նախահօրն. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ: Այսօր ծընար որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի. ճառագայթ փառաց և ծա-

գունդն յանմեկնելի լուսոյն. աստղագուշակ տես-լեամբըն յայրին իջևանի՝ և ի մըսուր յանբանից բազմեալ. քեզ երգեմք ընդ զօրըս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախա-յաւիտեան Բանդ:

Ծ. Ն. Ածընեալն ի սուրբ կուսէն ընկալցուք ի սիրտըս մեր հաւատով. որպէս երբեմն ի գիրկսն Սիմէոն: Օրհնեսցուք զառաքեալն ի Հօրէ որ ի խանձարուրըս պատեցաւ վասըն մեր. և փրկեաց ըզմեզ յանիծիցն Ադամայ: Ուրախ լեր անապական ծնարանի և ծաղկեան հաւատով երա-նութեամբ յայսօր հետէ. քանզի Քրիստոս յոյս յայտնեցաւ հեթանոսաց:

Ծ. Ն. Ածածին երկնային գունդն ամենայն ձայ-նիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լեր բեր-կրեալդ Տէր ընդ քեզ: Ի քերովբէս բազմեալն ընդ Հօր անապականաբար բնակեալ հանգեաւ ի քում յորովայնի. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ: Որ բոցեղէն սրովբէիւք շըրջափակեալ պահէր. այսօր ի մէջ մարդկան ի գիրկըս հողեղէնի յայ-տնեցաւ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ:

Ծ. Ն. Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին բնակա-րան. քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայն: Ստեղծողին մայր և հընուն կերպի նորոգողին. քեզ երանիցեն ազգ և ազինք ամենայն: Լոյս ծագեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի. քեզ ե-րանիցեն ազգ և ազինք ամենայն:

Ծ. Ն. Անսկզբնական Բանին Հօր բնակարան. տաճար և առագաստ տեղի անտանելի լու-

ոյն. զքեզ մեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածամայր եւ կոյս։ Այսօր կենդանաստեղծեալք յանեղէն հաստեցան ամենայն Եղականք. անսերմնապէս տղայացաւ յորովայնի քում. եւ ծնեալ առ ի քէն մարմնացեալ Աստուածըն յոլորից. զքեզ մեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածամայր եւ կոյս։ Այսօր զարհուրեալ դողային գունդք վերին զօրութեանց. տղայապէս ընկալեալ բարձեր ի գիրկս. եւ արբուցեր ուղ մայր ըստացողին ըզքեզ ըզկուսական քո սուրբ ըզկաթն. զքեզ մեծացուցանեմք արժանապէս Երգով Աստուածամայր եւ կոյս։

Ծն. Որ տարար ըզԲանն Աստուծոյ յարգանդի քում. եւ ծնար ըզնա մարմնով ապրեցուցէք Աստուածածին բարեխօսեա կեցուցանել զմեզ։ Հոգւոյն սրբոյ հովանացեալ զքեզ Աստուածածին. մարմնացեալ Հօր հաճութեամբ զԲանն միածին մեզ ի փրկութիւն։ Զանարատ տուն օրհնեսցուք զԱստուածածինն. որ կոյս մնաց յետ ծննդեան. եւ տարաւ յորովայնի զանտանելին ամենեցուն. զհամաբնակիցն Հօր եւ ամենասուրբ Հոգւոյն։

Ծն. Բարեխօսութեամբ որ Աստուածածնին պահեա զեկեղեցի իւր սուրբ եւ ի միւսանգամ գալստեան իւրոյ նորոգեսցէ ի փառս։ Ահա մեք ձայնիւ վերնոց փառաբանեսցուք ըզքեզ Տէր. որ համագոյ ես Հօր եւ նմին Հոգւոյն. զի միաբանեսցես զեկեղեցի քո սուրբ պահելով ի խաղաղութիւն։ Զի ի քէն ցնծութիւն ծնեալ տիեզերաց նախայաւիտենական Բանն

փառակից Հօր և Որդւոյ Հոգւոյդ. ընդ նմին անդադար աղաչեմ վասն անձանց մերոց։

Հգ. Հոգիդ ճշմարիտ. որ զանձայլին ընդհրամանըն քո զառածըն գալթեան լցեր. առբուցանելով աշակերտացն զպայծառութիւն քո ի սուրբ վերնատանն. ողորմեա։ Որ առաքեցար ի Հօրէ եւ յՈրդւոյ. կենդանարար վտակ և լոյս ճշմարիտ. առբուցանելով զնորոգ որդւոց Սիոնի գեղեցիկ փափկութեն. ողորմեա։ Որ կատարեցեր ընդփափագ ցանկութեն սրբոց նոցա. որք ըսպասեալ մնային մեծի գալստեան քո ի սուրբ վերնատանն. ողորմեա։

Հն. Արարչագործդ Աստուած. որ յոչընչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր. օրհնեմք զքեզ. որ հանգուցիչդ ես ննջեցելոց Հայր ամենակալ։ Բանդ Աստուած և համագոյ փառաց Հօր պատկեր. գովեմք զքեզ. որ յարութիւնդ ես ննջեցելոց Որդիդ միածին։ Փառք Հօր։ Աղբիւր անըսպառ յորմէ բաշխի տնօրինական շնորհք. բարեբանեմք զքեզ. որ նորոգօղդ ես ննջեցելոց Հոգիդ ճշմարիտ։

Այժմ և միշտ։ Թագաւոր փառաց Քրիստոս եւ արարիչ բոլորից Աստուած հզօր իշխան հայր հանդերձեալ լուսոյն. մանուկ երևեալ այսօր անփոփոխելիդ ի յէութեան. քեզ երգեմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հովուացն. օրհնեալ ես Քրիստոս նախայաւիտեան Բանդ։

Աւետարան ծննդեան 'ի յայնժամ։

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց Դ.Կ.

Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ բնակել յարգանդի կուսին. Աստուած հարցն մերոց։ Որ գթացար յերկիր՝ և ծնար անճառ տղա-տեղով զաւակի ծննդս. Աստուած հարցն մերոց։ Բարեբանեմք զէակիցդ Հօր և Հոգւոյն անդադար հոգևոր երգով. Աստուած հարցն մերոց։

Գ. Ազդեր Զուարթնոցն ի Հօրէ՝ լոյս իմաստութիւն և Բան. զէակիցըն Հօր և Հոգւոյն օրհնեցէք և բարձր արարէք։ Փառք Հօր։ Ազծնեալն ի նոյն կուսէն. ընդ խոստովանեալ թագաւորն. զերկրպագեալն ի մոգուց. օրհնեցէք և բարձր արարէք։ Այժմ և միշտ։ Որ իջանելով ի ջուրսն՝ սրբեաց զՅորդանան. և զմկրտեալն ի Յովհաննէսէ. օրհնեցէք և բարձր արարէք։

### Մեծացուսցէ Դ.Կ.

Որ զանճառելին ծնար սուրբ Աստուածածին կոյս. օրհնեալ ես յաւիտեան։ Փառք Հօր։ Որ զարարչակիցն Հօր. զանսկզբնականն Բանն Աստծ. յորովայնի քում կրեցեր. օրհնեալ ես յաւիտեան։ Այժմ և միշտ։ Զքեզ նշեկեղ եսու երկնային գունդն և հարսն անփորձ. օրհնեալ ես յաւիտեան։

### Ողորմեա Գ.Կ.

Հրաշափառ ծննդեամբ քո ի սբ կուսէն. այսօր ցուցաւ ազգի մարդկան. անսկզբնակից Բանդ էակից Հօր։ Փառք Հօր։ Յայտնութեամբ քո

Տէ՛ր ցընծացաւ երկիր. եւ նորոգեալ եղեւ Ադամ յառաջին յանցանաց ի մեղաց իւրոց։ Այժմ և միշտ։ Դասք հովուացն յերկրի փառաւորեն ըզքո՛ ամենակեցոյց գալուստդ. որ երեւեցար քո արարածոց։

Տէր յերկնից Գ.Կ։

Այսօր յայտնեցաւ մեզ բարձրեալըն բազմեալ Բանըն յանբանից մըսուր. գառն և երկնաւոր հա՛ց։ Փառք Հօր։ Այսօր ցընծան զուարթունք երկնից. տեսանելով զահաւոր զահագին և զհրաշալի ծը-նունդն. որ լոյս աշխարհի ցուցաւ։ Այժմ և միշտ։ Ընդ իջանել զուարթնոցն ի փառաբանու-թիւն. տեսանէին ամպ լուսոյ սիւն գործեալ ի հրալից վիմին. դասք երջանիկ հովուացն։

Առաւօտուն Երգ Իջցէ որպէս անձրեւ։

Սաղմոս ՀԱ։

ԿՑ. Իջցէ որպէս։ Փխ. Ա՛ծ զիրաւունս։ 953։

Որթիւ

ԱԾ Աւետարանիս որ ըստ Ղուկասու։ Բ. 1։

Ա՛ռ ծննդեան Տն մերոյ Յսի Քսի։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ։ 992։

Քար. Խնդր։ Կեցո։ Աղ. Բռում ամենազօր։

ՅԵՐԵԿՈՅԻ

Ս.Ե.Ե.Է Տէր ասաց։ Քար. Մայր ծը քամ գան։

Համբարձի Գ.Ձ։

Անսկզբնական տեսիլ փառաց քոյ տուող։ 1019։

Նախատօնակ Բ.Ձ. Անեղանելի բնութի։ 1025։

Քար. Մի զԱծածին. Կեցո. Աղ. Ընկալ Տէր։

# Ե. ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

### Օրհնութիւն ԲՁ:

Անեղանելի բնութեան որ յէութենէ ես ընդ Հօր, ծնար ի սրբոյ կուսէն. օրհնեալ բարեբանեմք արարչակից Հօր: Անեղանելի արաբանիդ որ փառքն մեր մարմնացար, եւ ցնծութիւն աշխարհի յայտնեցար. օրհնեալ բարեբանեմք արարչակից Հօր: Մկրտեցար ի Յորդանան ի Յովհաննէսէ, աղաւնակերպ որ Հոգւոյն վըկայեալ երկնային ձայնիւն. օրհնեալ բարեբանեմք արարչակից Հօր:

† Բանն առաքեալ ի Հօրէ որ փառքն մեր մարմնացաւ, եւ ցնծութի աշխարհի յայտնեցաւ. օրհնեալ բարեբանեմք Աստուածածին կոյս: Զի որում ոչըն հանդուրժէին, բոցանըշոյլ սերովբէիցն, նա բնակեցաւ ի քում որովայնի. օրհնեալ բարեբանեմք Աստուածածին կոյս: Զորմէ սարսեալ դողային, փայլակնացայտ ի լուսոյն, ի գիրկըս քո ընդունս ընկալար. օրհնեալ բարեբանեմք Աստուածածին կոյս:

† Այսօր որ ի Հօրէ առաքեցար յորժամ իջեր ի յերկնից եւ մարմնացար ի սրբոյ կուսէն. դու ես գառն Ա.Ծ եւ Որդի Հօր: Այսօր յայրին ընծայեցար փրկիչ եւ ի մոգուցն երկրպագեցար. եւ հովուացըն տեսեալ անէին. դու ես գառն Ա.Ծ եւ Որդի Հօր: 7

Ծն. Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բա-

բերանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ եր-
գով գոչեն և աղաղակեն. Աստուած աստուածոց և
Տէր տերանց փրկիչ գովեալ: Նուաճեցեր զքո մա-
ծինդ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ անարատ
ծնանել յորովայնէ անապականն. բառնալով զմեր
նեղութիւնս. Աստուած աստուածոց և Տէր տերանց
փրկիչ գովեալ: Տնօրէնք բարի յԵրուսաղէմ
երևեցան հեթանոսաց. զի արարիչն յախտե-
նից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ.
Աստուած աստուածոց և Տէր տերանց փրկիչ գովեալ:

Ծն. Որ վառեցեր սրբոհի գերբերէլ ա-
ւետեօքն. որ քարոզեացն ըզգալուստ աշ-
խարհին ՏՆ ի յերկնից: Ողջոյն ընդ քեզ Մարիամ
ի քեզ որ ծագին եկեսցէ. եւ զօրութիւն Բարձրե-
լոյն ի վերոյ քո հովանացի: Որ ծնանելոցն է
ի քէն Իշխանն առաջնորդ. եւ ընդ հանուր քա-
րոզելոյն Ած հզօր անմահ Բանն:

Ծն. Անկանիմք առաջի քո Աստուածածին. և աղա-
չեմք զանարատ ըզկոյսդ: Բարեխօսեա վասն
անձանց մերոց. և աղաչեաց զմիածին Որդին.
Փրկել զմեզ ի փորձութենէ. և յամենայն
վտանգից մերոց:

Ծն. Մի եւ Աստուածածին Մարիամ ցանկալի կուսին
և պարծանք ազգի մարդկան. մայր և աղախին
մեծացուցանեմք: Անկեղ մորենի և տապոր ընդ-
հանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութի.
մայր և աղախին մեծացուցանեմք: Խորհուրդ
կենաց եւ մայր կենդանութեան. և առաջնորդ հրա-
փայլ ծագմանն. մայր և աղախին մեծացուցանեմք:

Ծն. Խորհրդաւոր վարդն մեր Ածածին Մարիամ. որ
ծնար զՏր Ած որ հովուերն գիտացեալ. ամե-
նազօր և սքանչելի փառօքն խորհրդ: Ի քեզ եմք
ապաւինեալ որ մայր ես և աղախին Քի. Լեր
բարեխօս վասն մեր. զի զանուն Տն կարդասցուք
և զքեզ մեծարեալ պատուեսցուք: Որ ընդհօրն
Ածն յորովայնի քում ընկալար. և ծնար անճա-
ռապէս զկենդանագործօղն ամենեցուն. բարեխօս զ-
քեզ ունիմք՝ որ երանեալդ ես ի կանայս:

Հգ. Սարսափելի հողմոյ նման ահեղագոչ սաս-
տիկ հնչմամբ. երևեցար ի վերնատանն՝ Հոգիդ
դասուն երկոտասան. որք առ ի քէն մկրտեցան
որպէս զոսկի հրով մաքրեցան. մաքրեա ի մէնջ
ըզմէգ մեղաց և ըզգեցո ըզլոյս փառաց: Եկիր
յերկիր աստուածաբար դատել զաշխարհս իշխա-
նաբար. ընդ արդարութեան և ընդ մեղաց՝ և ընդ
չարին դատաստանաց. բացեր ըզգանձս անհու-
թական՝ պարգևս ետուր որդւոց մարդկան. մաք-
րեա ի մէնջ ըզմէգ մեղաց և ըզգեցո ըզլոյս փա-
ռաց: Սէրն ի սիրոյ զեկերդ առաքեաց յինքն
զանդամս իւր ըզքև յօդեաց. զեկեղեցի իւր զոր
շինեաց եօթըն սեամբ քո հաստատեաց. տըն-
տես ի նմա եդ զառաքեալսն եօթնեակ շնորհօք
քո զարդարեաց. մաքրեա ի մէնջ ըզմէգ մեղաց
և ըզգեցո ըզլոյս փառաց:

Հն. Ի ձայն փողոյ գալստեան քո Տէր ամ հոգիք
զարթիցեն կալ ի դատաստանի քում Քրիստոս
Աստուած մեր: Յորժամ հընչէ բարբառն ահա-
գին. և հարկանի փող յարութեան մերոյ. եւ մեք

գոչելով ասեմըք փառըք գալըստեան քո Տէր,
փառք Հօր: Յորժամ առնես հատուցումըն Տէր
և որըք քո պարծեցին ի քեզ. եւ մեզ շնորհես-
ցես փրկիչ կալ ի յաջմէ քումմէ:

Այժմ և միշտ: Ի նմանութիւն աղաւնոյ տեսեալ
զՀոգին սուրբ Յովհաննէս՝. աղաղակէր ասելով.
սա է գառն Այ և Որդի Հօր:

Ալէլուիա ծննդեան ՚ի յայտնեն:

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԲԶ:

Փառաւորեալ Աստուած պաշտելի մեծագոր-
ծութիւ. եկիր ի փրկել զարարածըս քո՝. Աստը-
ւած հարցըն մերոց: Ծնար ի կուսէ անճառելի
Բանդ՝ ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք ըզքեզ
անհասանելի լոյս. Աստուած հարցըն մերոց: Ի-
րեւեցար յաշխարհի որ իջեր ի Յորդանան մըկըր-
տիլ ի Յովհաննէ՝. որ ըզջուրսըն սըրբեցեր՝ սըր-
բեա զմեզ ի մեղաց մերոց. Աստուած հարցըն մերոց,

Գ. Իգտ Ամենայն գործըք Տեառն օրհնեն ըզ-
նա ամենադար. զանըսկիզբըն Այ զանյաղթելի զԹա-
գաւորն՝. օրհնեցէք գովեցէք և բարձր արա-
րէք ըզնա յաւիտեան: Որ էն փառօք ի յերկինս
անըսկզբնակից Որդին. և իջեալ ի յերկնից
մարմնացաւ ի կուսէն՝. օրհնեցէք գովեցէք և
բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք Հօր,
Ծնեալն ի սուրբ ի կուսէն՝ զեդեալըն յանըա-
նից մըտաւ. և զմկըրտեալըն ի ջր Յորդանան՝. օր-
հնեցէք գովեցէք և բարձր արարէք ըզնա յա-
ւիտեան: Այժմ և միշտ: Զէակիցըն Հօր և Որ-

գուն ըզքեր Հոգին զնորոգօղ և զանըսպառ աղբիւ-րըն լուսոյ՝ որ լուսաւորեաց ըզմեզ. օրհնեցէք զովեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ ԻԶ։

Զկուսութիւնդ քո Ածածին անարատ զոր ոչ բո-ցակիզեաց հուր Ածունըն մեծացուցանեմք։ փառք Հօր։ Որ յարգանդի քում անապականաբար բնա-կեցաւ Քրիստոս Աստուած. և փրկիչ անձանց մերոց. մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Անհա-սանելի տէրունական յայտնութիւն աշխարհի ծա-գեցաւ. անմատոյց լուսոյն երկրպագեսցուք։

ՈՂՈՐՄԵԱ ԻԶ։

Խոնարհեցար ի բարձանց և մարմնացար ի կուսէն. որ նստէիրդ ի քրովբէս արարիչդ ա-րարածոց։ փառք Հօր։ Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղին որդւոյդ կուսին ժամա-կալեալ. ընդունել ըզգանձդ երկնային։ Այժմ և միշտ։ Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ. ի խանձարուրս պատեցար և ե-դար ի մսուր անբանից։

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ ԻԶ։

Հրաշալի բարբառք երկնաւոր զօրացն. հրեշտակք օրհնէին զանմահ թագաւորութիւնն։ փառք Հօր։ Անճառ ծնունդըն փառօք երեւեալ. և աստ-ղըն լուսապայծառ հովանի էր յայրին։ Այժմ և միշտ։ Բանըն բազմեալ յանբանից մսուր. և մոգքըն հետեւէին ծագմամբ լուսափայլ աստեղն։

ԱՌԱՒՕՏՈՒՆ ԵՐԳ. Իջցէ որպէս անձրեւ։

Սաղմոս Ճ՟Թ․

ԿՑ․ Ի վայելչութի՛։ Փխ․ Ասաց Տէր ։ 961։

Ողթիւ

Ս՟ր Աւետարանիս որ ըստ Ղուկասու ։ Բ․ 8։

Վ՝ ծննդեան Տն՟ մերոյ Յն՟ի Քն՟ի։

Եւ հովիւք էին ՚ի տեղւոջն յայնմիկ։ 959։

Քար․ Խնդրեսցուք ։ Կեցո ։ Աղ․ Բ՟ում ամենա։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեսեդի․ Իջցէ որպէս ։ Քար․ Անյր զօ․ խաչ գտնի։

Համբարձի ԲԶ։

Անեղանելի բնութի որ յէութեանդ։ 1025։

Նախատօնակ Գ․Զ․ Անսկզբնական տեսիլ ։ 1019։

Քար․ Ար զԱծածին ։ Կեցո․ Աղ․ Ընկալ Տր։

---

# Ե․ ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

## ՏՕՆ

## ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՒԱՆ

### ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի Յունուարի 1։

---

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութի՟ Դ․Կ։

ԱՆՍԿԶԲՆԱԿԱՆ տեսիլ փառաց քոց։ 1019։ Ողորմեա պ՟յ ոյս ՚ի լուսոյ ամէն։ 1038 ։ Իսկ ողորմեա յարա- Հարանցն ամէն։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։

Եղիցի անուն Տն՟ օրհնեալ, զի յառաջ քան զարև է անուն Նորա։

Ի Նմ օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամ ազինք երանեսցեն Նմա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

փ. Օրհնեցէք մանկունք զՏր, և օրհնեցէք զա-նունըն Տեառն։

Եղիցի անուն Տն օրհնեալ յայսմհետէ մինչև յա-ւիտեան։

փառք և։ Այժմ և։ Ալէլուիա։

---

Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

Հարց պետերըն Օրհնութեան Հարցն ասա էոր առօտն։ Ի Տէ յերկնիցէ թէքէ տասնն եղանէ առաջերեցն 'ի բեմ, և 'ի ձեռս տալ ընթեռնուն Առաքելոյն, և ասացուեն զփառք 'ի բարձունս, մինչև 'ի վերն, և յետ աւետարանին ասացողն Առաքելոյն կարդան, և երգեն զձայնեալ փառք 'ի բարձունսն, որպէս 'ի Ծննդեան։ 987։

Առաջնորդ երգ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ. զի յաւէտ քան զարեւ է անուն նորա։

Ամ զիրաւունս քո արքային տուր, եւ զար-դարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Կարգս Ամսր Եր։

Օրհնի Ասմին Ա՛ժմ։

43. Եղիցի անուն Տն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։

փխ. Օրհնեցէք մանկունք զՏէր։ 161։

Ալթիւ

Աւետարանին որ ըստ Ղուկասու։ Բ. 21։

Ալ թ. անօրէնութեն և անուան Տն մերոյ Յսի Քսի։

Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատելոյ զնա, և կոչեցաւ անուն նր Յս որ կոչեցեալն էր 'ի հրեշ-տակէն, մինչչև յղացեալ էր զնա յորովայնի։ 21։

Կարգս Խնդրեսցուք։ Կեցո։ Աղ. Բանիւ ամեն։

ՅԵՐԵԿՈՅԻ

Մեսեդի Իջցէ որպ զանձրև։ Քարոզ. Այր որ։ Համբարձի. Կցորդ Օրհնութիւնն ։ Աղօթք. Ամ զԱստուածն։ Կեցո։ Աղ. Խնկալ Տէր։

# ԿԻՐԱԿԷ

որ լինի առօրէից ծննդեան հանդէպ։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴՁ։

Միածին Որդի Աստուծոյ զաւետարանութիւնն սըրբոց մարգարէիցն. աստանօր լուսափայլեալ պայծառացուցեր. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Կամաւորութեամբ եկիր ի չարչարանս. և ըզմահաբեր փայտն բարձեր ի վերայ կենսաբեր ուսոյդ. և ըզնոյն կենաց փայտ մեզ շնորհեցեր. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Քանզի կողիւն վիրաւորեալ ըզնախահայրն. ի քո յանարատ ի կողդ ընկալեալ ըզխոցումն գեղարդեանն. և անապական արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ.. Զտէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Միածին Որդին ի խաչին բևեռեալ. արեամբ մարմնով դընի ի գերեզմանի. ամենայն գործք օրհնելով բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Փառք Հօր։ Լուեալ երանելի կանանցն. զաւետիս ըզ յարութեանն պատմէին աշակերտացն եթէ յարեաւ Տէր. ամենայն գործք օրհնելով բարձր արարէք ըզնա յաւիտեանս։

Այժմ և միշտ։ Ընթացեալք ի միասին. պե-տրոս եւ յովհաննէս. տեսանէին՝ ըզգերեզ-մանն. յաստուածային մարմնոյն ունայն. ա-մենայն գործք օրհնելով բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Զ.

Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ ի սրովբէից. ծագելով ի քէն մեզ լոյս մայր եղեր վերածագողին. ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Հիմն եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հո-գւոյն սրբոյ. ի հրեշտակաց սպասաւորեալ գա-բրիէլ քեզ աւետեաց. ազգ և ազինք ըզքեզ մե-ծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Տեսանեմք ըզսոս-կալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Հոգւոյն սրբոյ յղացեալ զԲանն Աստուած մարմնով ծընար. ազգ և ազինք ըզքեզ մեծացուցանեմք։

Ողորմեա Դ.Զ.

Եկիր ի փրկութիւն թագաւոր անմահ. եւ ըզ-մահ ճաշակեցեր փրկիչ աշխարհի. ողորմեա։ Փառք Հօր։ Խաչի համբերեցեր Աստուած վասն մարդ-կան. և զթաղումն յանձն առեր զերեքօրեայ. ողորմեա։ Այժմ և միշտ։ Որ ի մեռելոց յա-րեար իշխանութեամբ որպէս Տէր. զիս զմեղօք ըզ-մեռեալըս նորոգեա և կեցո։

Տէր յերկնից Դ.Զ.

Զյարութիւն Աստուածորդւոյն. հրեշտակապետն այսօր աւետէր կանանցն ասելով. յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն։ Փառք Հօր։ Ընթացեալ կանանցըն խնդութեամբ պատմէին աշակերտացն

տանելով. յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն. Այժմ և միշտ: Վասն որոյ և մեք ընդ հրեշտակին գոչեսցուք զյարութիւնն Քրիստոսի. որ փրկեաց զմարդն ի ձեռաց մահու:

# ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԻԳ. Տէր Ած հարցն: 755:

# ՈՒՐԲԱԹ

Պահոց:

Հարց հանգստեան տաղ ըստ պատշաճին:

ԶԿՆԻ ՍՈՒԹՕՐԷԻՑ

## ԾՆՆԴԵԱՆ

Ս. Բարսղի Կեսարու հայրապետին, և եղբօր նորա Գրիգորի Նիւսացւոյն: Եւ Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապետին: Եւ Սրբոյ Եփրեմի խորին ասորւոյ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որք զարդարեցին: 565: Խաղ Որ համանման: 1035:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԳՁ. Աքանչելագործ: 570:

Մանկանց ԴԿ. ԱՏ:

Լուսապայծառ Սրբոց ի մանկութեանց. ընդ եղելոց աշխարհի համանման ծաղկօղ գոլով. ըստ ... սուրբբեաց զեկեղեցի ամենայն բանիւ երանելի Բարսղղիոս. մաղթանօք սորա ... խնդրեսցուք զթողութիւն մեղաց: փառք Հօր: Գրիգո

սաղմոսեր զինուորաց· համախմբող ի հրեղինաց պատերազմին· որ յերկինս հաւատոյ հաստատութեն եւ առաջնորդ մարդկան ի կեանս՝ երանելին Լոնկինոս՝ մաղթանօք սորա խնդրեսցուք զթողութիւն մեղաց: Այժմ և միշտ: Որ ըստ անմարմնոցն ի մարմնի· քաղաքավարեալ առաքինութեամբ ի մանկութենէ· այսօր վերափոխեալ ի յերկնային խորանս երանելին Լոնկինոս՝ մաղթանօք սորա խնդրեսցուք զթողութիւն մեղաց:

---

### ՑԵՐԵԿՈՅԻ

Համբարձի Գ.Զ:

Որ համանման մեծին Եղիայի եւ Յովհաննու մկրտչին· յանապատի բնակեցար հրեշտակական վարուք ծաղկեալ· ի փշաբեր ծառոյ ծաղիկ վարդից զանուշահոտութիւն Քնի բուրեալ կենաց ի կեանս փրկելոց· ով երանելի տր Եփրեմ առ Քս բարեխօսեա վասն քո տօնողացս: Որ յերկնային վտակաց Հոգւոյն արբեր ըղձանս շնորհաց· որպէս ի վերնատունն դասք առաքելոցն ի հրեղէն լեզուացն· զոր առատապէս մատուցեալ ծաւալեցեր ընդ տիեզերս յորբուխ ջրոց ծարաւեաց՝ ով երանելի տր Եփրեմ առ Քս բարեխօսեա վասն քո տօնողացս: Որ Աստուածատունկ իմանալի ծառոյն կենաց ողկոյզն· ի քեզ պտղաբերեցաւ· որով կերակրեցեր եւ կերակրես միշտ ըզմանկունս եկեղեցւոյ· արքայութեն երկնից դըպիր· և վարդապետ հին եւ

նոր կտակարանաց՝. ով երանելի դու Եփրեմ. Ե՟ր՟մ ան․վ․՝ բարեխօսեա վասն քո տօնողացս։ փառք Հօր։ Ցնծացէք լուսաւորեալ մանկունք առագաստի. աշակերտեալք սովաւ բանին ճշմարտութեան. ցնծութեամբ կատարեսցուք զյիշատակ վարդապետին եկեղեցւոյ՝. որ զընթացս իւր կատարեալ այսօր վերափոխեցաւ յանձեռակերտ խորանն՝ ի յանդրանկաց հօգւոցն դասս. վասն մեր առ Տէր միշտ բարեխօսել. տալ զքաւութիւն յանցանաց։ Այժմ և միշտ։ Պատուութեամբ փառաւորեսցուք զքեզ Քրիստոսի փառաց թագաւոր՝. որ ընտրեցեր անձին քո օրինաց քարոզ զերանելին Եփրեմ. որ զհաստատեալ արծաթ բանին ի քէն՝ առեալ ի սեղանաւորս յոգնեբեղուց մարդկան. մաղթանօք սորա միշտ անձանաւորեալ զմեզ փառաւորել սուրբ զերրորդութիւնդ յաւիտեանս ամէն։

Եւ ասէ Որ համանման Օրհնութեան ասել, Հաւատովք զԱստուածածին ասեմ։

---

Ըստ ասէ Երգս ասացեալ տօնից հայրապետաց որ ընթերցին ընթերցուածս և յասացն գիրք ասելոց, զոր և տօնից որ յասացն գիր ընթերցուածս են, ասա և տօնս։

# ՃՐԱԳԱԼՈՅՑ

## ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

### ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի Յունուարի 5։

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Բ.Ձ։

ՈՒՐԱԽԱՑԻՐ *սրբուհի Գաբրիէլի*։ 946։ Եւր առաւօտն։

Առաւօտու երգ. *Արեգակն արդարութեան*։ 145։ Քարոզ. *Փառաւորեսցուք*. Կամ գանձ։

Զկնի Սբ Աստուծոյ Սաղմոս ՀԱ։

ԿՑ. *Իջցէ որպէս*։ Փխ. *Ած զիրաւունս*։ 953։

*Ոտիւ*

*Սբ Աւետարանիս որ ըստ Յովհաննու*։ Ա. 1։

*Ի Հօրէն լուսոյ*

Ի *սկզբանէ էր Բանն. եւ Բանն էր առ Ած*։ 957։

Զկնի Աւետարանին զԱրարչականն առա զենս եւ օրհնեալ։ Քարոզ *Խնդրեսցուք*։ *Կեցո յայսմ*։ Աղ. Ած *մշտնջենաւոր*։ 180։

---

Եւ ըստ կիրակէի հանգստեան, փոխ զՍ.Աստուածածինն *Նորա-գուլ* Ստեփանոսի առա. եւ Խաղողօրհնէքն Աւետարան կարդա 'ի յայնմ գիշերին։ Գ.Ժողովէ. զԽաղողօրհնէք առա յոր յայն եւ զկնի։ Քարոզ *Լսասցուք* կամ գանձ։

Իսկ յետ Սբ Աստուծոյ Սաղմոս եւ Աւետարան այն է զոր Աստուածայն Եղաւ։ Աղա երգ *Նորաստեղծեալ*։ Քար. *Խնդրեսցուք*։ Աղ. Ած *մշտնջեն*։ 180։ Կամ Քրիստ *ամենազօր*։

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Սեղեդէ Ննջեցեալ։ Քարոզ *Անյաղթ*։

Համբարձի Դ.Ձ։

Լոյս 'ի լուսոյ 'ի Հօրէ առաքեցար։ Տէր 'ի ձայ։ Օրհնի Համբարձեայն Գոր․ Մի զԱծածինն։ Ըղ․ Ընկալ Տէր։

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
# ՄԿՐՏՈՒԹԻՒՆ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Ի Յունուարի 6։

### Ի ԳԻՇԵՐԻ

Հսկումն է առաջնոյն և ընթերցմամբք որք կայ։

Օրհնութիւն Դ.Ձ։

ԼՈՅՍ ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն. զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ։ Դու Ած ի յերկրի երեւեցար և ընդ մարդկան շրջեցար. եւ փրկեցեր զգործեալսն յանիծիցն Ադամայ։ Գոչեաց ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն. ասէ դա է իմ Որդի. եւ որ Հոգին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ։

† Ըզքեզ որ հոգւով և հրով մաքրեցեր ըզմարդկան աղտեղութիւ. որպէս զԱծ և ըզփրկիչ ամենեքեան օրհնեսցուք։ Փրկիչն երեւեցաւ և զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն. որդեգրութիւ շնորհելով ի ձեռն մկրտութեան։ Ջրով կենդանւով ըզմեղս մեր այսօր. երեւեալ ապրեցուցիչն. և զովացուցանէ զաշխարհս ածային ջրովն։

† Զգըլուխ վիշապին փըրկիչըն ջախջախեաց ի Յորդանան ի գետ. և ինքեան իշխանութեամբ զանձնեան ապրեցոյց: Զհին մարդըն նորոգելով փըրկիչն ի մըկըրտութիւն գայ այսօր. զի զապականեալ ըզբնութիւնս՝ ջրով նորոգս գործեսցէ. անապական ըզգեստ փոխարէն տալով մեզ:

Ծ.Ն. Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ. եւ բանըն հայրական անըմբըռնելի. հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ. անվընաս պահելով զարարածս ամենայն: Ծագումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ. ճառագայթելով զարարածս ամենայն. երկինք ցնծային և երկիր ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ: Առ քեզ աղաչենիմք ամենասըրբուհի. գերագոյն և հրաշալի եւ բաշխօղ բարութեանց. աղբեւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ աստուածային բանին:

Ծ.Ն. Առաւօտ խաղաղութեան եւ արուսեակ զըւարթարար. այսօր Մարիամ սըրբուհին՝ ի փառս քո Քն ծագեցոյց մեզ լոյս յորդւոյն օրինաց. անդադար երգով սոքօք ըզքեզ ըմի շտ մեծացուցանեմք: Դրախտ անծայրին և արեւելք իմանալի. այսօր Մարիամ հրաշագեղ՝ ծնեալ ի յԱննայէ ի մայրութիւն քո հրաւիրեալ Քրիստոս Որդի Աստուծոյ. անդադար երգով սոքօք ըզքեզ ըմի շտ մեծացուցանեմք: Տապանակ ապրեցուցիչ և տաղաւար աբրահամեան աստուածընկալ. այսօր Մարիամ լուսապայծառ միածին ծընունդ յայտնեալ ծնողաց

ի ծնողութիւն քո կոչեցեալ միածին Որդի Աստուծոյ. անդադար երգով սոքօք ըզքեզ ընդ նոսա մեծացուցանեմք:

Ծ. Ն. Ուրախ լեր Մարիամ սուրբ Աստուածածին. զի ի տաճարին մաքրեցելոյ յանկարծակի եկն Տէր. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Ուրախ լեր դուռըն փակեալ ընդ որ ոչ ոք մտանել. բայց Տէր Աստուած Իսրայէլի. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Ուրախ լեր աղբիւր կնքեալ ջրոյն կենդանութեան. զոր ծարաւելոյ բնութեանս ետուր ի յարբումն. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ծ. Ն. Ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Որ ըզԲանն Աստուած յարգանդի կրեցեր սրբուհի անարատ. և անճառապէս ծնար ըզվերաձգօղն երկնից. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Որ Էին լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկս. և արեգականն արդարութեան եղեր արեւելք. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ծ. Ն. Որ տարար յորովայնի զանտանելին ամենեցուն. և ծնար անճառապէս զԲանն յոյս ազգի մարդկան. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ: Տեսին դասք իմանալի զօրութեանց զԱստուած մարմնով առ ի քէն ծնընեալ. իսկ եկեղեցի որդւոյ քո Աստուածածին ըզքեզ խոստովանի. որ միայն կուսութեամբ ես մայր: Աստուածածին ապաւէն մեր և յոյս. բարեխօսեա առ Որդին քո միածին. զի փրկեսցէ ըզմեզ ի հրոյն տանջանաց. և պարգեւեսցէ մեզ զերկնից արքայութիւն:

Հգ. Առաքելոյ աղաւնոյ. իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրաշալինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն: Աննիւթական աղաւնի. անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զհամայնն և ըզմիասնագամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական: Օրհնութիւն ի բարձունս. Եկողին ի Հօրէ և յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակին. եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Հն. Անըսկիզբն Ա. Ծ սկիզբն արարչութեան ի հողոյ ստեղծեր ըզմարդն առաջին. գործել եւ պահել յանպատում ի կեանս. իսկ ի սահմանազանց հրամանի քո Տէր. ըզվճիռ մահու ի վերայ եղեալ. հող էիր անդրէն և ի հող դարձցիս. և այժմ աղաչեմք զստեղծող ամենից. ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս. յաւիտենական լուսեղէն խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեամբ յերկնից բարութեան: Ոսկի եղեալքս անպիտանացան գեղեցկայարմար շինուածոյս քակտումն. իմաստունքս յիմարեցաք ի յալեաց մեղաց յոր ընկղմեցաք. և այժմ աղաչեմք զստեղծող ամենից. ընկալ եւ հանգո զհրաժարեալ հոգիս. յաւիտենական լուսեղէն խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեամբ յերկնից բարութեան: փառք Հօր: Կոչողն եհաս վերին կոչողին. կոչնատէրն ահեղ կոչողն ահաւոր. դա-

տուրն անաչառ դատաստանին արդար. հրեշ-
տակք անողորմ դատին զմեղաւորս. և այժմ ա-
ղաչեմք զստեղծօղդ ամենից. ընկալ և հանգո
զհրաժարեալ հոգիս. յեօթնամասնեան լուսեղէն
խորանս. ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութն.
հոգւով հեզութեամբ յերկնից բարութեանն:

Այժմ և միշտ: Աղերսիւ Քրիստոս և սրբին
ամ արարածք. և տուր մեզ թողութիւն մեղաց.
ջրով և հոգւով վերաստեղծելով զմեզ:

Ալէլուիա 'ծննդեան ի յայնէն:

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ

[illegible]

Հարց ԱՁ:

Տընօրինեցաւ յարգանդի կուսին ի սկզբնից հօր
և սուրբ հոգւոյն. բանն անսպառ ի հօրէ.
յաղագս նախամարդոյն մարդոյն. բառնալով
ըզյանցանս. ժողովուրդք օրհնեցէք զանա-
պական ի հօրէ զՔրիստոս հարցըն ըմբռնոց:
Նախայայտնեալն Որդին փառակից հօր և սուրբ
հոգւոյն. ի Յորդանան եկըն ամս ո մկրտիլ ի
Յովհաննէ. կերպացեալ իմն որ յաղագս իմ
զնախահօրն երարծ ըզմեզս. ժողովուրդք օրհնե-
ցէք զանապական ի հօրէ զՔրիստոս հարցըն
ըմբռնոց: Առաքելական պարգևեցան շնորհք աղա-
նակերպ իջմամբ սուրբ հոգւոյն զուրցըն սրբու-
թն. և հայր ի վերուստ վկայեաց. կերկնակի

ծնընդեամբ դա է Որդի իմ սիրելի. միաբան եւ մեք օրհնեսցուք. զառաքեալն ի Հօրէ զԱս-տուած հարցըն մերոց:

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յա-ւիտեան: Փառք Հօր: Արարիչն երկնի եւ երկրի Աստուած եւ մարդ գոլով. եկեալ ի հո-սանսըն Յորդանանու ծառայական մարմնով. լը-ւաց ըզաղտեղըս ի մեղաց. բարձր արարէք ըզը-նա յաւիտեան: Այժմ և միշտ: Միաբանու-թեամբ օրհնեսցուք քահանայք եւ ժողովուրդք զամենասուրբ զԵրրորդութիւն. ըզհամագոյ և ըզմի Աստուածութիւն. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Ա.Զ:

Յանձառ փառաց խոնարհեցար ի մեր բընութիւ-նըս. Բանդ Աստծ եւ մարմնացար ի սրբոյ Կուսէն: Փառք Հօր: Եւ ծնար ի սուրբ Կուսէն անապական մարմնով. ըզքեզ անդադար բարեբանեալ մեծա-ցուցանեմք: Այժմ և միշտ: Այսօր զենկեալդ ի փըրկութիւն ազգի մարդկան. միաբանութեամբ ամենեքեան մեծացուցանեմք:

Ողորմեա Ա.Զ:

Պատկերակից եղեր հողեղէն բընութեանս տընօրի-նեցար յարգանդի կուսին Բանդ Աստծ. ըզմերըս վերանորոգել պատկեր: Փառք Հօր: Մերկացեալդ ի ճաշակմանէ նախաստեղծին ըզփառս. միւսան-գամ վերըստին շնորհելով. ըզմերըս վերանորո-գել ի փառս: Այժմ և միշտ: Մըկրտեալդ ի Յորդանան ի Յովհաննէ. ածային բնութ մարմնո-

վրն զոր ի մէնջն եան. ըղմ..զ լուսաւորելով ածայինն ծնգմամբն :

Տէր յերկնից Ա.Զ:

Զանբաժանելի ըղխմանըն Հօր՝ և զանըսկիզբըն Նորա զՈրդին՝. որ ի Յորդանան այսօր ըղմ զըս մեղաւոյց և զաշխարհըս լուսաւորեաց՝. բարեբանելով ըմիշտ յաւիտեան: փառք Հօր: Որ ի Հօրէ վերկայեալ Որդի յայտնեալ Հոգին՝ իջեալ ձևանմ-գրէր կարապետն՝. զի և մեք օրհնեսցուք զերրոր-դութիւն միասնական՝. բարեբանելով ըմիշտ յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ի հրեշտակաց օրհնաբանեալ Արծ՝. ի հոսանսըն Յորդանանու տեսեալ Յովհաննու ասէր. ահա գառն Այ որ վկայի ի ձը Հոգւոյն. զոր օրհնեսցուք ըմիշտ յաւիտեան:

Առաւօտու Երգ Արեգակն արդարութեան: 145:
Քարոզ Ամպր ձը խոյ գ.նջ:

Սաղմոս ՀԱ.:

ԿՑ. Իջցէ որպէս: Փխ. Ած զիրաւունս: 953:

Որթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի: Բ. 1:

Տն մերոյ Յսի Քսի

Եւ ՚ի ծնանելն (Յսի) ՚ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ, և ասեն. ուր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նր յարևելս, և եկաք երկիր պագանել նմա: Եւ իբրև լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամ Երուսաղէմ ընդ նմա: Եւ ժողովեալ զամ զքահանայապետս և զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ՚ի նոցանէ՝ թէ ուր ծնանիցի Քսն: Եւ նոքա ասեն ցնա ՚ի Բեթղեհեմ Հրէ-

առատանի. զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մարգարէին: Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ: Եւ արձակեալ զնոսա 'ի Բեթղեհէմ, ասէ, գնացէք ստուգեցէք վն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա: Եւ նոքա իբրև լուան 'ի թագաւորէն՝ գնացին. և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նց, մինչև եկեալ եկաց 'ի վր՝ ուր էր մանուկն: Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութի մեծ: Եւ իբրև մտին 'ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս: Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց: 12:

Քարոզ Խնդրեսցուք: Կեցո: Աղ. Փառաւ ամէ:

---

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի

Մեսեդէ Ծննդեան: Քարոզ Այսր որ կամ գ.ձայն:

Համբարձի Դ.Զ:

Լոյս 'ի լուսոյ 'ի Հօրէ առաքեցար և: 1038:

Քար. Մն խաղաղութն: Աղ. Հայր գթած:

Առդ Քրիստոս յարեան եղանեն, և տան Խաչէլն 'ի ջեռ ամենեցուն և զատապարտեալ առաւ շարաշն ուէն 'ի լուսն. Այսօր Բանն 'ի Հօրէ: 995:

Քարոզ Մե զԱծածինն: Կեցո: Աղ. Անկալ Տէր:

Եւ այս խարհ ղաէ յայս առաւօտս օրհնեա 'ի ծննդեան:

# Բ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—ըն Գ·կ:

Այսօր Խառն ՚ի Հօրէ անմեկ: 995: Ճաշ ստեղծ:
Իսկ զկնի ՍԷ ԸՖԷՆ Սաղմոս ԻԸ:

ԿՅ. Ձայն Տն ՚ի վր ջուրց, և Այծ փառաց որոտաց, և Տր ինքն ՚ի վր ջուրց բազմաց:

Փխ. Մատուցէք Տն որդիք Այծ. մատուցէք Տն զորդիս խոյոց:

Մատուցէք Տն զփառս և զպատիւ. մատուցէք Տն զփառս անուան նորա. և երկիր պագէք Տն ՚ի սրահ սրբութեան նր:

Ձայն Տն ՚ի վերայ ջուրց՝ և Այծ փառաց որոտաց. և Տր ինքն ՚ի վերայ ջուրց բազմաց:

Ձայն Տն զօրութեամբ, և ձայն Տն մեծվայելչութեամբ:

Ձայն Տն փշրէ զմայրս. և մանրէ Տր զմայրսն Լիբանանու:

Մանրեսցէ զնս որպէս մատաղատունկն Լիբանանու. որ սիրելին է որպէս զորդիս միեղջերոյ:

Ձայն Տն հատանէ զբոց ՚ի հրոյ. ձայն Տն շարժէ զանապատ, և խռովեցուցանէ Տր զանապատն կադէս:

Ձայն Տն հաստատէ զեղջերուս. և յայտնի առնէ զանտառս:

Ի տաճարի նր ամենեքեան ասասցեն զփառս նմա:

Տր զջրհեղեղս նստուցանէ և ցածուցանէ. թագաւորեսցէ Տր յաւիտեան:

Տր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ՚ի խաղաղութեան:

Որթիւ

ԱԻՄ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: Ա. 1:

Սկիզբն աւետարանի Յսի Քսի Որդւոյ Այծ: Ոպ և գրեալ է ՚ի մարգարէս. աՀաւասիկ ես առաքեմ

զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճա-
նապարհ քո առաջի քո: Ձայն բարբառոյ յանա-
պատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն,
և ուղիղ արարէք զշաւիղս նորա: Եւ եղև՝ զի
Յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր
մկրտութիւն ապաշխարութեան 'ի թողութիւն մեղաց:
Եւ երթայր առ նա ամ աշխարհն Հրէաստանի, և
Երուսաղէմացիք ամենեքեան. և մկրտէին 'ի նմանէ
'ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց:
Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստև ուղտու, և
գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նր
մարախ՝ և մեղր վայրենի: Քարոզէր և ասէր. գայ
զօրագոյն քան զիս զկնի իմ, որում չեմ բաւա-
կան խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նորա:
Ես մկրտեցի զձեզ ջրով, և նա մկրտեսցէ զձեզ
Հոգւովն սրբով: Եւ եղև՝ յաւուրսն յայնոսիկ
եկն Յս 'ի Նազարեթէ Գալիլեացւոց, և մկրտեցաւ
'ի Յովհաննէ 'ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ
վերանալ 'ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս, և
զՀոգին Ած իբրև զաղաւնի՝ զի իջանէր 'ի վր նր:
Ձայն եղև յերկնից՝ և ասէ. դու ես Որդի իմ սի-
րելի, ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժամայն Հոգին
հանէ զնա յանապատ: Եւ էր նա անդ զաւուրս
քառասուն փորձեալ 'ի սատանայէ, և էր ընդ գա-
զանս. և հրեշտակք պաշտէին զնա: 13:

# Գ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն գ.կ:

Էակից Հօր և Հոգւոյն: 1001: Եւր սուրբն:

Իսկ ըստ ԱԾ ՇԺՆ Սաղմոս ՀԱ:

կՑ. Իջցէ որպէս: փխ. Ա՛ծ զկրաունս: 953:

## Ուրթիւ

Ա՜յ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի: Գ. 1:

Վ՟ մկրտութ՟ն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի:

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, և ասէ. ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից: Զի սա է վ՟ն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տ՟ն, և ուղիղ արարէք զշաւիղս ն՟ր: Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ 'ի ստեւոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ա՟մ Երուսաղէմացիք՝ և ա՟մ Հրէաստան՝ և ա՟մ կողմն Յորդանանու, և մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան, և խոստովան լինէին զմեղս իւրեանց: Եւ տեսեալ զբազումս 'ի սադուկեցւոցն և 'ի փարիսեցւոց եկեալս 'ի մկրտութ՟ի ն՟ր, ասէ ցն՟ս. ծնունդք իժից ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն որ գալոցն է: Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութ՟ե: Եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ, ասեմ ձեզ, զի կարող է Ա՟ծ 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու: Զի ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի: Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութ՟ի. բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս ն՟ր. նա մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին ս՟ր և 'ի հուր: Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում. և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով: Յայնժամ գայ Յ՟ս 'ի Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմանէ: Եւ Յովհաննէս

արգելու զնա՝ և ասէ. ինձ պիտոյ է 'ի քէն մկըրտել՝ և դու առ իս գաս: Պատասխանի ետ Յս՟՝ և ասէ ցնա. թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զա՟մ արդարութի. և ապա թոյլ ետ նմա: Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զհոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր 'ի վե՟ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ: Յայնժամ վարեցաւ Յս՟ յանապատ 'ի հոգւոյն՝ փորձել 'ի սատանայէ: Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ որդի ես Այ՟ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին: Նա պատասխանի ետ և ասէ. գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ա՟մ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Այ՟: Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 'ի քաղաքն ս՟բ, և կացուցանէ զնա 'ի վե՟ աշտարակի տաճարին, և ասէ ցնա. եթէ որդի ես Այ՟՝ արկ զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է՝ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վս՟ քո, և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո: Ասէ ցնա դարձեալ Յս՟. գրեալ է՝ թէ ոչ փորձեսցես զՏր՟ Աձ՟ քո: Դարձեալ առնու ածէ զնա սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զա՟մ թագաւորութիս աշխարհի. և զփառս նոցա. և ասէ ցնա. զայս ա՟մ քեզ տաց՝ եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ: Յայնժամ ասէ ցնա Յս՟. երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է՝ Տեառն Այ՟ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեսցես: Ապա եթող զնա սատանայ. և ահա հրեշտակք մատեան՝ և պաշտէին զնա: Դ. **11**:

# Դ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Ձ:

Այսօր Գաբրիէլ ցնծութիւ: 1007: Խառն ապրօքն:

Խոչ վկնէ ՄԷ Ըձին Սաղմոս ԻԸ.:

Կց. Ձայն Տն: փխ. Մատուցէք Տն: 1046:

Սկ՟ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ա. 1:

Ի Հօրէն լուսոյ

Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Ած: 957:

# Ե. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Ձ:

Այսօր որ յաթոռ փառաց: 1013: Խառն ապրօքն:

Խոչ ւլինէ. ՄԷ Ըձին Սաղմոս ՀԸ.:

Կց. Ինչք որպէս: փխ. Ած զիրաւունս: 953:

Ուրթի

Սկ՟ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ա. 18:

Մ՟ Տն մերոյ Յսի Քսի:

Զ Այ ոչ ոք ետես երբէք, բայց միածինն որդի որ է 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց: Եւ այս է վկայութիւն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրեայքն յԵմէ քահանայս և ղևտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞վ ես: Եւ խոստովան եղև, և ոչ ուրացաւ. խոստովան եղև, եթէ ես ոչ եմ Քսն: Եւ հարցին ցնա. իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես. և ասէ. ոչ եմ: Իսկ մարգարէ՞ն ես դու. պատասխանի ետ՝ թէ ոչ: Իսկ ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վն քո: Ասէ. ես՝ ձայն բարբառոյ յանապատի, ուղիղ արարէք զճանապարհս Տն որպ ասաց Եսայի

մարգարէ: Եւ որք առաքեցեալն 'ի փարիսեցւոց անտի էին: Հարցին ցնա՝ և ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քն՟, և ոչ Եղիա, և ոչ մարգարէն: Պատասխանի ետ նց՟ Յովհաննէս՝ և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. 'ի մէջ ձերում կայ, զոր դուք ոչ գիտէք: Որ զկնի իմ գալոցն է, որում չեմ արժանի եթէ լուծից զխրացս կօշկաց նր՟: Այս 'ի Բեթաբրա եղև յայնկոյս Յորդանանու, ուր էր Յովհաննէս՝ և մկրտէր: 28:

# Գ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Զ:

Անսկզբնական տեսիլ փառաց: 1019: Եւ սաղմոսն:

Իսկ զկնի Մե՟ Աւետ՟ն Սաղմոս ԻԸ.:

ԿԳ. Ձայն Տեառն: Փխ. Մատուցէք Տն՟: 1046:

Ա՟ծ Աւետարանիս որ ըստ Յովհաննու: Ա. 29:

Վասն մկրտութեն՟ Տն՟ մերոյ Յսի՟ Քսի՟:

Ի վաղիւ անդր տեսանէ զՅս՟ զի գայր առ նա, և ասէ. ահաւասիկ գառն Այ՟ որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է՝ վս՟ որոյ ես ասէի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղև, զի յառաջ քան զիս էր: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայելի, վս՟ այնորիկ եկի ես ջրով մկրտել: Վկայեաց Յովհաննէս և ասէ. թէ տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր 'ի վր՟ նր՟: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով նա ասաց ցիս. յոր վր՟ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ և հանգչիցի 'ի վերայ նր՟, նա է որ մկրտէ Հոգւովն սրբով: Եւ ես տեսի և վկայեցի՝ եթէ սա է Որդին Այ՟: 34:

# Է. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԻԶ:

Անեղանելի բնութիւն : 1025 : Եւ որ առօրն :

Խաղ Չինի ՍԷ Ազէն Առաքել ՀԱ:

ԿՅ. Իջցէ որպէս : Փխ. Աճ զերաւունս : 953 :

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու : Ա. 35 :

Ս ն մկրտութեան Տն մերոյ Յսի Քսի :

Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս և յաշակերտաց անտի նր երկու: Եւ հայեցեալ ընդ Յսի՝ զի գնայր, ասէ. աՀաւասիկ Գառն Այ: Լուան 'ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, և գնացին զհետ Յսի: Իբրև դարձաւ Յս՝ և ետես զնոսա՝ զի երթային զհետ նր, ասէ ցնս. զի՞նչ խնդրէք: Նոքա ասեն ցնա. ռաբբի, որ թարգմանեալ կոչի վարդապետ, ո՞ւր ես օթեվանք քո: Ասէ ցնս. եկայք և տեսէք: Եկին և տեսին՝ ուր էին օթեվանք նր. և առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրև տասներորդ: Էր Անդրէաս եղբայր Սիմոնի վիմի, մի յերկուց անտի, որ լուանն 'ի Յովհաննէ՝ և գնացին զկնի նր: Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոն, և ասէ ցնա. գտաք զՄեսիայն՝ որ թարգմանի Քս: Եւ ած զնա առ Յս. հայեցեալ ընդ նա Յսի՝ ասէ. դու ես Սիմոն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգմանի Պետրոս: Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յս. եկ զկնի իմ: Եւ էր Փիլիպպոս 'ի Բեթսայիդայ, 'ի քաղաքէ Անդրեայ և Պետրոսի: Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ և ասէ ցնա. զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ և մարգարէքն. գտաք զՅս զորդի Յովսեփայ 'ի Նազարեթէ: Ասէ ցնա Նաթանայէլ. իսկ 'ի Նազարեթէ մարթ ի՞նչ իցէ բարւոյ իմիք

լինել: Ասէ ցնա Փիլիպպոս. եկ և տես: Իբրև ետես Յս զՆաթանայէլ զի գայր առ Նա, ասէ, վն Նր. ահա արդարև Իսրայելացի՝ յորում նենգութի ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յս և ասէ ցնա. մինչչև էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր 'ի ներքոյ թզենւոյ, տեսի զքեզ: Պատասխանի ետ Նմա Նաթանայէլ և ասէ. ռաբբի՝ դու ես որդի Այ. դու ես թագաւորն Իսրայելի: Պատասխանի ետ Նմ Յս և ասէ. փոխանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզենւոյն, հաւատաս, մեծամեծս եւս քան զայս տեսցես: Եւ ասէ ցնա, ամէն ամէն ասեմ ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ՝ և զհրեշտակս Այ՝ զի ելանիցեն և իջանիցեն 'ի վր որդւոյ մարդոյ: 51:

# Ը. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Զ:

Այս 'ի լուսոյ 'ի Հօրէ առա: 1038: Եւր աւուրն:

Զինչ ՍԷ Ընծէն Սաղմոս ԻԲ.:

ԿՑ. Ձայն Տն: Փխ. Մատուցէք Տեառն: 1046:

Ալթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Գ. 1:

Առ մկրտութն Տն մերոյ Յսի Քսի:

Ի հնգետասաներորդի ամի տէրութեան Տիբերեայ կայսեր, 'ի դատաւորութեան Հրէաստանի Պիղատոսի Պոնտացւոյ, և 'ի չորրորդապետութեն Գալիլեացւոց Հերովդի, և 'ի Փիլիպպոսի եղբօր Նր չորրորդապետութեան Իտուրացւոց և Տրաքոնացւոց աշխարհին, և 'ի չորրորդապետութեն Լիւսանեայ Աբիլենացւոյ, և 'ի քահանայապետութեան Աննայի և Կայիափայ. եղև բան Այ 'ի վր Յովհաննու որդւոյ Զաքարեայ՝ յանապատի անդ: Եւ եկն յամ

կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան 'ի թողութիւն մեղաց. որպէս և գրեալ է 'ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի. ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհ Տն, և ուղիղ արարէք զշաւիղս նր: Ամենայն ձորք լցցին, և ամ լերինք և բլուրք խոնարհեսցին. և եղիցին դժուարինքն 'ի դիւրինս, և առապարքն 'ի հարթ ճանապարհս. և տեսցէ ամ մարմին զփրկութի Այ: Եւ ասէ ցժողովուրդսն ելեալս մկրտել 'ի նմանէ. ծնունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի բարկութէն՝ որ գալոց է: Արարէք այսուհետև պտուղս արժանի ապաշխարութն. և մի սկսանիցիք ասել՝ եթէ ունիմք հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Ած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու: Բայց ահաւասիկ տապար առ արմին ծառոց կայ. ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարւոք, հատանի և 'ի հուր արկանի: Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք: Պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ որ ոչն գուցէ. և որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Եկին և մաքսաւորք մկրտել, և ասեն ցնա. վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք: Եւ նա ասէ ցնոսա. մի ինչ աւելի քան զհրամայեալսն ձեզ առնիցէք: Հարցանէին զնա և զինուորքն և ասէին. և մեք զի՞նչ գործեսցուք: Ասէ ցնս. մի զոք խռովիցէք՝ և մի զոք զրպարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն ձեր: Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ և խորհէին ամենեքեան 'ի սիրտս իւրեանց վս Յովհաննու՝ մի թէ սա իցէ Քսն: Պատասխանի ետ ամենեցուն և ասէ. ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս. նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով և հրով: Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում սրբել

զկալ իւր՝ և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով: Բազում և այլ ինչ մխիթարութի̃ աւետարանէր ժողովրդեանն: Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ՝ և վն̃ ամ̃ չարեացն զոր գործեաց Հերովդէս, յաւել և զայն ևս 'ի վն̃ ամ̃. և եդ 'ի բանտի զՅովհաննէս: Եւ եղև 'ի մկրտել ամ̃ ժողովրդեանն, և ընդ Յս̃ի մկրտելոյ՝ և կալ յաղօթս, բանալ երկնից, և իջանել Հոգւոյն սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրև զաղաւնի 'ի վն̃ նր̃. և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. դու ես որդի իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ: Եւ ինքն Յս̃ էր ամաց իբրև երեսնից՝ սկսեալ՝ որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ: Որ Յակովբայն. որ Հեղեայն. որ Մատաթեայն: Որ Ղևեայն. որ Մելքեայն. որ Յաննեայն. որ Յովսեփայն: Որ Մատաթեայն. որ Ամովսայն. որ Նաւումայն. որ Եսղեայն. որ Նանգեայն: Որ Մաաթեայն. որ Մատաթեայն. որ Սեմեայն. որ Յովսեքեայն. որ Յովդայն: Որ Յովնանայն. որ Ռեսայն. որ Զօրաբաբելին. որ Սաղաթիէլին. որ Ներեայն: Որ Մելքեայն. որ Ադդեայն. որ Կովսամայն. որ Եղմովդադայն. որ Էրայն: Որ Յեսուայն. որ Եղիազարայն. որ Յովրամայն. որ Մատթայն. որ Ղևեայն: Որ Սիմէովնին. որ Յուդային, որ Յովսեփայն. որ Յովնամայն. որ Եղիակիմայն: Որ Մեղեայն. որ Մեննայն. որ Մատաթայն. որ Նաթանայն. որ Դաւթին: Որ Յեսսեայն. որ Ովբեդայն. որ Բոոսայն. որ Սաղմովնայն. որ Նաասովնին: Որ Ամինադաբայն. որ Արամայն. որ Ադմեայն. որ Առնեայն. որ Եսրովմայն. որ Փարեսին. որ Յուդային: Որ Յակովբայն. որ Իսահակայն. որ Աբրահամուն. որ Թարային, որ Նաքովրայն: Որ Սերուքայն. որ Ռագաւայն. որ Փաղեկայն. որ Եբերայն. որ Սա-

ղայէն։ Որ Կայնանայն. որ Արփաքսադայն. որ Սեմայն. որ Նոյին. որ Ղամեքայն։ Որ Մաթուսաղային. որ Ենովքայն. որ Յարեդին, որ Մաղաղայելին. որ Կայնանայն։ Որ Ենովսայն. որ Սեթայն. որ Ադամայն. որ Աստուծոյն։ Իսկ Յիսուս լի Հոգւով սրբով դարձաւ 'ի Յորդանանէ և վարէր Հոգւովն յանապատ, յաւուրս քառասուն փորձեալ 'ի սատանայէ. և ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայնոսիկ. և 'ի կատարելն նոցա՝ քաղցեաւ։ Եւ ասէ ցնա սատանայ. եթէ որդի ես Աստուծոյ, ասա՛ քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի։ Պատասխանի ետ նմա Յս̃ և ասէ. գրեալ է, եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ա̃մ բանիւ Այ̃։ Իսկ հանեալ զնա 'ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա զա̃մ թագաւորութի̃ս աշխարհի 'ի վայրկեան ժամանակի։ Եւ ասէ ցնա սատանայ. քեզ տաց զայս ա̃մ իշխանութի̃ և զփառս սոցա, զի ինձ տուեալ է՝ և ում կամիմ՝ տամ զսա։ Արդ՝ դու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, քեզ եղիցի ա̃մ։ Պատասխանի ետ նմա Յս̃ և ասէ. գրեալ է, երկիր պագցես Տ̃ն Աստուծոյ քում, և զնա միայն պաշտեսցես։ Իսկ ած զնա յԵրուսաղէմ, և կացոյց 'ի վ̃ր աշտարակի տաճարին, և ասէ ցնա. եթէ որդի ես Այ̃, արկ զքեզ աստի 'ի վայր։ Զի գրեալ է եթէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վ̃ս քո՝ պահել զքեզ։ Զի 'ի վ̃ր ձեռաց բարձցեն զքեզ. մի երբեք հարցես զքարի զոտն քո։ Պատասխանի ետ նմա Յս̃ և ասէ. ասացեալ է, թէ ոչ փորձեսցես զՏ̃ր Ա̃ծ քո։ Եւ կատարեալ զա̃մ փորձութի̃ս սատանայի, 'ի բաց եկաց 'ի նմանէ առ ժամանակ մի։ Դ. 13։

---

Բա՛ն յերեկոյին նախատօնակ ոչ գոյ, և այլ շարական ոչ ասի յաւուրսն. այլ 'ի վերջին ժամերգութեան սարկաւագն քարոզէ Սր̃ զԱծածինն։ Կեցո։ Առ. Ընկալ Տր̃ Եւ աղօթքին խաղաղութեամբ։

# Ա. ԿԻՒՐԱԿԷ

## ԶԿՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.Զ։

Ծագումն միածնի Որդւոյ քո յերկնից անըս-կիզբն անեղ. մարմնացաւ ի սրբոյ կուսէն տըն-օրինաբար. օրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ փառըն յանցանացն Ադամայ նախաստեղծին ի վերայ խաչին. զինուորըն գեղարդեամբն բանայր ընկողահոս աղբիւրն. օրհնեալ Տր Աստուած հար-ցըն մերոց։ Որ ըղձմամբ կոխեաց Քրիստոս Աստ-ուած եւ մեզ կենանըս պարգեւեաց. հրաշալի յա-րութեամբն իւրով. օրհնեալ Տր Աստուած հարցըն մերոց։

Գ. Ըզ Տէր Ա. Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք։ Այսօր խոցեալն ի անիգա-ղէն համեղ մարմնովն քաղցրացոյց ըղձաշակացն ըզդառնութի. Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք։ փառք Հօր։ Այսօր անդ-ըստին սուրբ գործեալ ի հրալից վիմին. պահա-պանքն պակուցեալ ի հրակիզմանէ լուսոյն. Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնե-ցէք։ Այժմ եւ միշտ։ Այսօր հրաշեալ փայլա-կնացայտ լոյսն ազգեաց. ըզգաստիցն ի հրաշ-ալիտ բյարութեանն. Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք։

Ողորմեա Դ.Զ։

Ծագումն հրաշալի որ անպատում էր ի մէնջ. եւ բանըն հայրական անըմբռնելի. հուր փայ-

յանկանցեալ եւ ի մարմնի բնակեցար․ անվր-
նաս պաշտելով զգործարանս ամենայն։ Փառք Հօր։
Ծննդեամբն Հրաշագործ որ ի կուսէն ծագեցար․
ճառագայթելով զգործարանս ամենայն․ երկինք
ցնծային եւ երկիր ուրախանայր․ եւ Քրիստոս
Աստուած ընդ մարդկան շրջեցաւ։ Այժմ եւ
միշտ։ Առ քեզ ապաւինիմք ամենասրբուհի․
զերանգոյն եւ Հրաշալի եւ բաշխօղ բարութեանց․
աղբեւր ես ծարաւեաց եւ Հանգիստ աշխատելոց․
եւ եղեր վերընկալ աստուածային Բանին։

Ողորմեա Դ․Ձ։

Ըզքեզ աղաչեմք ողորմեա մարդասէր։ Փառք
Հօր։ Որ էիցդ էակ փառակից ընդ Հօր եւ արար-
չակից Հոգւոյն․ խոնարհեցար ի մերս վեր առեր
մարմին․ Ըզքեզ աղաչեմք ողորմեա մարդասէր։
Այժմ եւ միշտ։ Որ զվաղուեան աւուր դառնու-
թին լեզուոյն քաղցրացուցեր ըղձաշակ․ դաւանեալ
ըզքեզ Տէր առաքելին․ եւ մեք աղաչեմք ողոր-
մեա մարդասէր։

Տէր յերկնից Դ․Ձ։

Փառաւորեալ անճառելի յարութեամբն Քրիստոսի։
Փառք Հօր։ Որ կամաւ Հօր եւ Հոգւոյն ի վերայ
քառաթեւին պատուարագեալ գահն Ա․Յ․ փառաւո-
րեալ անճառելի յարութեամբն Քրիստոսի։ Այժմ
եւ միշտ։ Քրիստոս անմահ թագաւորն Հետաղօ-
տեալ ի դժոխս․ կապեաց զիշխանն մեղասէր․
զմահու գերեալսն Ա․դամայ կենդանագործեաց ի
կեանս անմահս․ փառաւորեալ անճառելի յարու-
թեամբն Քրիստոսի։

ԶԿՆԻ ՍԷ ԱՃԻՆ ՍԱՂՄՈՍ ՃԺԲ:

ԿԶ. Եղիցի անուն: փխ. Օրհնեցէք մանկ: 161:

[illegible]

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Դ. 14:

Տէրն մեր Յս͞ Ք͞ս

Եւ դարձաւ (Յս͞) զօրութեամբ Հոգւոյն 'ի Գալիլեա. և ել համբաւ զնմանէ ընդ ա͞մ կողմանս գաւառին: Եւ նա ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց: Եւ եկն 'ի Նազարեթ՝ ուր սնեալն էր. և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուրն շաբաթուց 'ի ժողովուրդն: Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, և յարեաւ ընթեռնուլ. և իբրև եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն էր: Հոգի Տ͞ն 'ի վերայ իմ, վ͞ս որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք. քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել. արձակել զվիրաւորս 'ի թողութիւն. քարոզել զտարեկան Տ͞ն ընդունելի: Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, և նստաւ. և ամենեցուն որ 'ի ժողովրդեանն էին աչք՝ 'ի նա հայէին: Եւ սկսաւ ասել ց͞ն. այսօր լցան գիրքս այս յականջս ձեր: Եւ ամենեքին վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին 'ի բերանոյ ն͞ր. և ասէին. ո՞չ սա է որդին Յովսեփայ: Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս. բժիշկ՝ բժշկեա զանձն քո. որչափ լուաք զոր արարեր 'ի Կափառնաում, արա և աստ 'ի քում գաւառի: Եւ ասէ, ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի 'ի քաղաքի իւրում: Արդարև ասեմ ձեզ. զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի 'ի մէջ Իսրայելի յորժամ փակեցանն եր-

կինք զերիս ամս և զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ ամ երկիր: Եւ ոչ առ մի 'ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն 'ի Սարեփթայ Սիդովնացւոց՝ առ կին մի այրի: Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ. և ոչ ոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման Ասորի: Եւ լցան ամենեքին բարկութեամբ 'ի ժողովրդեանն՝ իբրև լուէին զայս: Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարտևան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր գահավէժ առնել զնա: Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր: 30:

## Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ՃԿ. Մանկանցն զձայնն: 771:

## Ա. ՈՒՐԲԱԹ

Պահոց:

## Բ. ԿԻՒՐԱԿԷ

ԶԿՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

### ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ՃԿ:

Կամաւորութեամբ եկիր ի չարչարանս և ի ծառայէ ապտակեցար. օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց: Տարածեցեր զձեռս քո ի վերայ խաչին եւ ընդ անօրէնս համարեցար՝. օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց: Որ զմեռանել յանձն առեր վն արարածոց.. և ի զինուորէն գեղարդեամբն խոցեցար՝. օրհնեմք զքեզ Ած հարցն մերոց:

գ. ԸզՏր Ըզնա՛ հոգևոր երգո՛վ բա՜րձր ա՛րա՛րէք: փառք Հօր: Որ ճոխաբար յօժարութի՛ն ե՛կեալ 'ի նորոգումն եղծեալ մա՛րդոյն՝ և խաչի՛ն յանձն ա՛ռնու ըզմահ. ը՛զնա՛ հոգևոր երգո՛վ բա՜րձր ա՛րա՛րէք: Այժմ և միշտ: Որ էջն ի ստորին կողմ երկրի՛ և դողալո՛վ սասանեցան դըժո՛խք. ա՛յսօր յարուցեա՛լ վերածեա՛ց ըզննջեցեալսն՝. ը՛զնա՛ հոգևոր երգո՛վ բա՜րձր ա՛րա՛րէք:

Մեծացուսցէ ԲԿ:

Մա՛յր լո՜ւսոյն Մա՛րիամ ամենօրհնեա՜լ. օրհնեա՛լդ ի կանա՛յս: փառք Հօր: Զլո՛յսն ա՛նս՜տուեր յա՛րգա՛նդի կրեցե՜ր. օրհնեա՛լդ ի կանա՛յս: Այժմ և միշտ: Մի՛ դադա՜րեր վա՛սըն մեր բարեխօսե՜լ. օրհնեա՛լդ ի կանա՛յս:

Ողորմեա ԲԿ:

Որ յաթոռ փառաց նըստիս Բանդ Աստըւած. խոնարհեցա՛ր ի հայրա՛կան ծոցո՛յ ա՛ռեր մա՛րմին ի կուսէն՝. վերականգնելով ի՛ տեղի ըստորա՛նկեալ լուսո՜յն զհողա՛ցեալ բնութի՛ս: փառք Հօր: Որ կանգնեցեր ըզխա՛չ քո ի՛ մէջ երկրի՛. և սովա՛ ըզշրովբէափա՛կ դուռըն դրախտին՝ բա՛ցեր նախաստեղծին՝. կե՛նագործելով ի ճա՛շակմանէ՜ մա՛հաբեր պըտղո՜յն: Այժմ և միշտ: Ի՛ւ զօրութի՛ խաչի՛ քո Քրիստոս հիմնեցուցեր զկաթուղիկէ եկեղեցի՝ բը՛նա՛կարան սբ Երրո՛րդութենդ՝. լուսաւորելո՛վ ըզհեթանոսս ի սմա՜ կըրկնա՛կի ծնընդեամբ:

Տէր յերկնից ԲԿ:

Ըզյա՛րութի՛ն Քրի ա՛մենեքեան օրհնեսցո՛ւք. զի նա՜ միայն Աստ փա՛ռաւորեալ յա՛րեաւն: Ըզ-

ճառագայթ յարութեանն տեսանելով հրեշտակին. նա զօրանայր ի պատմել ընկերացն նորա զյարութիւնն։ Զայն ուսեալ լուսէին՝ առաւօտեանն որ կանայքն՝ ի հրեշտակէն՝ դառնային ուրախութեամբ յառաքեալսն։

Զաւետիսաբերական խնդութեանցն ուսուցիչք եղանել կանանցն ուսեալք ի հրեշտակէն. աներկիւղ խնդութեամբ և բերկրալից ուրախութեամբ ընթանային պատմել աշակերտացն ամենեցուն յարուցելոյն։ Փառք Հօր։

Զօր մահուան երկիւղին՝ ընդ մեռեալս համարեալ կարծէաք նա ինքն իշխանութեամբ յարուցեալ. զմահու եղեալ զիշխանութիւն և կենդանութիւն պարգևեաց ազգի մարդկան։ Այժմ և միշտ։

Այլ ի բաց եդեալ ըզհրեշտական երկիւղն ըզկարծիսն. նախանձաժամանեցին ի պատիւ այնորիկ որ մահուամբն եղեալ ըզմահ և անմահութիւն պարգևեաց ազգի մարդկան։

# Ի. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ․Զ․ Օրհնեալ ես Տր՝ 773։

# Ի. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

# Դ. ԿԻՒՐԱԿԷ

ԶԿՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ․Զ։

Արարիչ արարածոց Քս՝ ամենայնի յայտնեցար ի խաւարին բնութեանս. և զլինելութիւնս գեղեցկագործեալ յար-

ձայնկեալ ըղձիւ քո խնդրեմ. Տէր Աստուած հարցըն մերոց: Կենդանիդ յաւիտենից Քրիստոս աստուածայնոյն ի գերեզմանի եղար. եւ պահապանքըն պահէին ըզգուշութեամբ ըզգերեզմանն քո. Տէր Աստուած հարցըն մերոց: Յարեար ի մեռելոց Քրիստոս աստուածայնոյն ըզդժոխս աւերեալ. եւ կենդանութիւն պարգեւեցեր արարածոց քով յարութեամբդ. Տէր Աստուած հարցըն մերոց:

Գ. Ըղտ. Ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: Զոր կարապետըն Յովհաննէս մարգարէիցն ի դըժոխս. աւետարանէր ըզգալըստ արեգականն արդարութեան. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: փառք Հօր: Որում ըսպասէին արդարեալքն ի մեղսամէր բանտին. աւետեցուցեր յուսոյ գալըստեան Աստուածորդւոյն ի յերկնից. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որոյ եկեալ կատարեաց զմարգարէիցն ըզտեսութիւն. աւերելով զդրունս դըժոխոց եւ ըզզօրութիւն մահու. ըզնա օրհնելով բարձր արարէք յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Զ:

Այսօր լուսոյ մայր եւ կենարար Բանին բնակարան. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն: փառք Հօր: Անեղծողին մայր եւ հընութեան կերպի նորոգողին. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն: Այժմ եւ միշտ: Այսօր ծաղկեցաւ ի քէն նըստելոցս ի խաւարի. քեզ երանիցեն ազգ եւ ազինք ամենայն:

Ողորմեա Գ·Ձ։

Իջեր յերկնից ի Հօրէ և մարմնացար ի կուսէն. համբերող փրկիչ վասն մեր զմահ ճաշակեցեր։ Փառք Հօր։ Եկիր ի չարչարանս չարչարանացն լուծիչ. խաչեցար թաղեցար՝ եղար ի գերեզմանի Քրիստոս Աստուած մեր։ Այժմ և միշտ։ Եւ յերրորդ աւուր յարեար ամենակարող Տէր՝ պարգևելով աշխարհի զխաղաղութիւն եւ զմեծ ողորմութիւն։

Տէր յերկնից Գ·Ձ։

Հրաշալի՝ յարութիւն ընդպահանջմանն զարհուրեցոյց. եւ հրեշտակն ի յերկնից իջեալ ի ձայն ահեղ յարութեն Ածորդւոյն. կանանց աւետէր յարեաւ Աստուած։ Ի ձայնէ հրեշտակին զուարճացան տրտմագնեալ կանայքն. եւ դարձան խնդութեամբ ետուն աւետիս առաքելոցն. եթէ յարեաւ նախապատմելին։ Եկայք լուսազգեցուք յօրհնութիւն նոր օրհնեսցուք զՏէր. քանզի մարմինն որ ի մէնջ էառ ի հրեշտակաց երկրպագութիւն առնու ի սրովբէից և ի քրովբէից։

Տուք զփառս ի բարձունս թագաւորին յաւիտենից. որ փրկեաց զազգս որդւոց մարդկան ի ծառայութենէ թշնամւոյն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։ Նա ինքն իշխանութեամբ բազմեցաւ ի վերայ խաչին. կապեաց զիշխանսն մեղսասէր. զմահու գերեալսն յԱդամայ կենագործեաց ի կեանս անմահս. օրհնութիւն առաքողին ի բարձունս։ Նախայաւիտեան Որդին փառակից Հօր և Սբ Հոգւոյն. դնի ի նոր գերեզմանի.

նոր նորոգել զմեզ ըզհինացեալս մեղօք. օրհնու-
թիւն առաքողին ի բարձունս։ Փառք Հօր։ Հա-
լութենեաւն սերովբէն նըստելով ի վերայ վիմին.
հարկանէր փող յարութեանն Տն. պակուցեալ
պահապանացն յահէն եղեն որպէս մեռեալ. օրհ-
նութիւն առաքողին ի բարձունս։ Այժմ և
միշտ։ Հաղորդս արա և ըզմեզ Տէր ընդ սրբոց
քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել ըզ-
քեզ ի յարութեան քո. արժանաւորեա Տէր զմեզ
տեսանել ըզքեզ ի միւսանգամ քո գալըստեանն.
օրհնութիւն առաքողին ի բարձունս։

## Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Օրհնեալ ես Տր։ 840.

## Գ. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

## Գ. ԿԻՒՐԱԿԷ

ԶԿՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ։

Այսօր զենաւ մեզ պատարագ անարատ գառն
Այ. ի վերայ խաչին Էակից Հօր և սուրբ Հո-
գւոյն. Ածն հարցըն մերոց։ Այսօր բացաւ մեզ
սրովբէափակ դուռըն դրախտին հրաւիրելոցս ի
կոչումն արքայական սեղանոյ. տէրունեան մարմնոյ

Եւ որդւոյն. Աստուած հարցըն մերոց: Իւ հրաշալի յա-րութեամբ քո Քրիստոս տիեզերք ամ նորափետուր զարդարեալ. մըտանեն ի յառագաստ ընդ փե-սային Քրիստոսի. Աստուած հարցըն մերոց:

Գ. Ուղղափառք օրհնեցէք առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: փառք հօր: Զաստուածամայրն ըզ-գեցեալ մարմին ի քառանկին սեղան խաչին բարձրացելոյ. սերովբէք սարսելով դողային. ա-ռաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այժմ եւ միշտ: Որ ըզգեցող անապական որդեանն ի կողմանց աղբերէն արբոյց տիեզերաց. ժողովուրդք հեթա-նոսաց. առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ Գ.Կ:

Այր եւ կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամենայն ա-զգք: փառք հօր: Անքոյր աղաւնի եւ հարսն եր-կնից Մարիամ. տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին. քեզ երանեն ամենայն ազգք: Այժմ եւ միշտ: Վերինք հաճեցան ի մանալէք ընդ հողեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ երա-նեն ամենայն ազգք:

Ողորմեա Գ.Կ:

Որ տէրամահաղորդ քո չարչարանօք խաչին. ազատեցեր ըզմարդն ի տէրամազգեաց փայտէն եւ ի մեղսաճաշակ պտղոյն. Քրիստոս Աստուած եւ մեզ ողորմեա: փառք հօր: Որ մահուամբ քո կենդանի եւ մեռելութեամբըն յերկրի. նորոգեցեր դարձեալ զաշխարհս եւ ըզհողացեալ բնութիւս. Քրիստոս Աստուած եւ մեզ ողորմեա: Այժմ եւ

*միշտ։ Որ Երէքօրեայ յարութեամբ քո և համ-
բարձմամբըդ յերկինս. վերածեր ըզմարդն առ
կենաց փայտն եւ անմահական ճաշակն. Քրիս-
տոս Աստուած եւ մեր ողորմեա։*

Տէր յերկնից Գ.Կ։

*Տեսիլ փայլակնաձեւ զուարթնոյն ի վիմին հըն-
չեցեալ առ խնկաբերս կանանյսն. փարա-
տեցոյց զերկիւղալից տրտմութիւնն։ փառք Հօր։
Պահապանքըն պակուցեալ ահարեկ լինէին. և
կանանցն աւետարանեալ մահ մահու յաղթեաց
և ծնունդն մահ։ Այժմ և միշտ։ Բարբառ ա-
ռաքելով առ երջանիկ առաքեալսն. փութացա-
րուք ի Գալիլեա և տեսանիցէք զկենդանագործօղն
ըզՔրիստոս։*

## Դ. ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Կ. Սուրբ Ած Հայր։ 856։

## Դ. ՈՒՐԲԱԹ

Պահոց։

## ԽՐԱՏՔ

Յաղագս տօնից որ զկնի աւագօրէից Յայտնութեան։

Գիտելի է այս միջոց յաւագօրէից Յայտնութեան մինչեւ յԱ-
ռաջաւորաց Բարեկենդան յաւելու և նուազէ, զա-
հաշուեալ ըստ զատկին։ Թէ շատ է, զի յետագոյ
տօնին մի մի տօնեա, և լինի աւելի ԲԲ, և ԳԳ, կամ-
րէ աւելին։ Եւ լինի լինի որ Բանն աստէր չհանդիպի,

կոչ ատենից փոխելոյ մի Եղիայէ, յետ փոխելոյն ոչ լինի Վարդավառին և յաւուր յոտն զտօն Հայրապետացն փոխել կարգաւ։

Ա

Յովհաննու կաթողիկոսին։

Զամենայն ինչ զՅովհաննու առ։ 588։

Բ

Պետրոսի Աղեքսանդրիայ հայրապետին և Արիստողոմայ սարկաւագին։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Որք հաւորդք։ 371։

Մանկունս Գ.Զ. Մանկունք նոր Սիոնի։ 901։

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Զ. Հանդիսացեալք։ 684։

Գ

Ս. Անտոնի անապատականի։

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնաբանէ Ա.Զ։

Որ գերազանցեալ գտար առաւել քան զըղ-բնութիւն մարդկան երանելիդ ի հարցս որ Անտոն՝. առ Քս բարեխօսեա վասն անձանց մերոց։ Որ ան-ճաշակ լինելով զաւազմամանակեայ աւուրբք. յօժարութեամբ բարձեր զըղկարիս մարմնոյ. առ Քս բարեխօսեա վասն անձանց մերոց։ Անմոռաց յիշմամբ առաջի Քնի. օրինակ լեր տօնողացս ըզյիշատակիս քո. զի և ըզմերս ընկալցի զօրհ-նաբանութիւն։

† Որ ի հանդէս քո ճգնութեան երկնային զուարթունքըն նայեցեալ զարմանային. ի մարմնի տն-

տանելով զանմարմին երեանց ըղձալոյս. ով սուրբ Հայր Անտոն՝. բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց: Որ գերագոյն քան ըզբնութիւն հողեղինաց ժուժկալեալ. զանազան տանջանաց համբերելով յանճառելի թշնամւոյն. ով սուրբ Հայր Անտոն՝. բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց:

ՅՈՎ. Կարապետն արքայութեն երկնից նր Յովհաննէս մկրտողիչ՝. որ եղեւ աշխարհի քարոզ փրկութեն յաւիտենից՝. աղօթիւք սորա Տր լուր մեզ եւ ողորմեա: Որ առաւել քան ըզմարգարէս մեծ ի ծնունդըս կանանց. որ ըզքեզ մեզ յայտնեաց Ած և մարդ յերկրի երեւեալ. աղօթիւք սորա Տր լուր մեզ եւ ողորմեա: Զայն բարբառոյ յանապատի և կատարիչ խորհրդոյ. գլխատեալ այսօր ի Հերովդեայ. վերափոխեցաւ ի դասս անմարմնոց. աղօթիւք սորա Տր լուր մեզ եւ ողորմեա:

ԵՌ. Որք ի սկզբանէ պատուեալ եղեն ի սէր բոլորից Աօր. առաքելական կոչմամբ ըզտիեզերս հրաւիրեցին յուսով հաւատալ մաին. վարդապետութեամբ սոցա ամենեքեան օրհնեսցուք ըզՏէր: Որք ականատեսք և սպասաւորք եղեն մարմնացելոյ Բանին. գեր ի վերոյ անմարմնոց դասուցն հանդիպելով շնորհի՝. վարդապետութեբ սոցա ամենեքեան օրհնեսցուք ըզՏէր: Որոց գառանձական աթոռ ահեղ ատենին հանդերձեալ մնայ. կատարել ի մեզ դատաստան ըստ գործոյն. առ սոսա անկցուք զողորմեցեալ անձամբ պաղատելով. հաշտեցուցանել աղօթք ընդ ըմղ զահաւոր [illegible] ր դատաւորն:

ՄՐԳ. Երգս առեալ մարգարէիցն հրաշալի ձայնիւ անդադար օրհնաբանեն ընդմարմնացեալն ի սուրբ կուսէն. որ երեւեցար մեզ ի փրկութիւն։ Զնեղութի եւ զչարչարանս յանձն առին կամաւորապէս. ժուժկալեալ համբերեցին վասն անուանդ քո. որ երեւեցար մեզ ի փրկութիւն։ Ընկերակիւղ քարոզեցին յաշխարհի ըզճշմարիտ մարդեղութի մարմնացելոյն ի սուրբ կուսէն. որ երեւեցար մեզ ի փրկութիւն։

ՄՐՏ. Նահատակեր վարուք հաճոյացան Տր վկայքն. եւ ընտրեցան կամաւոր մահուամբն իւրեանց. եւ հրաւիրեցան ի կոչումն արքայութեն երկնից։ Սրբք մատնեցին զանձինս իւրեանց ի փորձ սրոյ եւ հրոյ. եւ հեղմամբ արեանն իւրեանց եղեն վկայք Քնի. եւ հրաւիրեցան ի կոչումն արքայութեանն երկնից։ Աղօթիւք սոցա եւ բարեխօսութեամբ պարգեւեա մեզ Քս մասն եւ բաժին. ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեն երկնից։

ՀԳ. Որ յանմ ես Երրորդութի. եւ ի ձայն հընչման իջեր յերկնից Տր Հոգի. ողորմեա մեզ։ Որ զանմ լինուս զօրութ ի քո. եւ ի դաս առաքելոցն իջեր բնակել Տր Հոգի. ողորմեա մեզ։ Որ անբաժանելի ես յԵրրորդութեն. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն Տր Հոգի. ողորմեա մեզ։

ՀՆ. Զայն առեալ կենդանարարին աստուածային բարբառոյն. ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ. ժառանգեցէք պատրաստեալ ձեզ ըզկեանսն ի հանդերձեալ երկրին։ Ընդ առաջ ելանել քեզ

հաստատեալ ի յօդըս վերինս. աստուածազգեաց լուսով պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի լոյսն ըղձային երանաւէտ կոչմանն: Ընդ աջմէ քումմէ կայցո ընդ իմաստունսն որք կուսանսն. ի լուսեղէն առագաստին պայծառացեալ ի դասս անմարմնոցն. ի ժողովս անդրանկաց գրելոց ի յերկինս:

Մծ. Որ զաւետիս Հօրն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար որպէս լեր. բերկրեալդ Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Անըսկիզըբն Բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբն ըսկիզըն ի կուսէդ. Գերիմաստ Աստուած թագաւորն յաւիտենից: Աղաչեմք ըզքեզ ո՛վ Ածածին առ Քն բարեխօսեա փրկել զժողովուրդս քո զոր գնեաց արեամբն իւրով:

Խղ. Ի խորանի քում սրբութեան զոր ընտրեցեր գալստեամբդ քո Քն. ի սմա միաձայնեալ աղաչեմք ըզքեզ. լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո ըզմեզ: Ածային լուսով քո պայծառ քան զարեգակն լուսաւորեցեր զքո նր զեկեղեցի. ի սմա միաձայնեալ աղաչեմք ըզքեզ. լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո ըզմեզ: Փառք Հօր: Այսօր և հրեշտակք ուրախանան ընդ պայծառութի քո նր եկեղեցւոյ. ի սմա միաձայնեալ աղաչեմք ըզքեզ. լուր ձայնի աղաչանաց մերոց ընկալ և կեցո ըզմեզ:

Այժմ և միշտ: Աստի և մեք տօնելով ըզծնընդնութեն քո նր զյիշատակս. որ եղեր նախընթաց բարեաց՝ կենաց ճանապարհին՝. փոխեցար յեր-

կրայնոցս յանմահից դասակցութիւն. ով սուրբ Հայր Անտոն. բարեխօսեա առ Քրիստոս վս անձանց մերոց։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Ձայն Ա.Զ։

Նախասկիզբն միանձանց երանելի ես Հայր Անտոնիոս. վերնական յուսոյն ակն ունելով զերկրաւորս արհամարհեաց. եւ զենուորեցաւ քեզ Քրիստոս Ած հարցըն մերոց։ Անձամարտեալ ընդդէմ չարին բազմահնար վիշապին. ժուժկալեալ համբերեաց ազգի ազգի վշտաց քարակէծ կոչկոճման. եւ զենուորեցաւ քեզ Քրիստոս Ած հարցըն մերոց։ Յանապատի բնակելով աղօթանուէր թեւօքըն հալածեաց ըզբազմութիւն լեգէոն զօրացն. եւ քաջալերեալ յորդորեաց ըզմիանձունս ամ. եւ զենուորեցաւ քեզ Քրիստոս Ած հարցըն մերոց։

Գ.. ԶՏէր օրհնեցէք՝ փառաբանիչք Այ յիշատակի սորա բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ փառք Հօր։ Ի փապարըս լերանց բնակելով խաղաղնազգեաց ճգնութբ ի յայրս և ի ծերպըս քարանձաւաց. փառաբանիչք Այ յիշատակի սորա բարձր արարէք ըզնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Համանմանեալ մեծին Եղիայի և Յովհաննու մկրտչի. վերաթեւեալ ընդ առաջ Քնի. փառաբանիչք Այ՝ յիշատակի սորա բարձր արարէք ըզնա յաւիտեանս։

### Մեծացուսցէ Ա.Զ։

Որ ըզԲանն Աստուած բաւական եղեր ընդունել յորովայնի միշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ

օրհնեալդ ես ի կանայս։ փառք Հօր։ Որ էից լուսոյն արժանի եղեր բանալոյ ի գիրկս քո մարմնով. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։ Այժմ և միշտ։ Անարատ տաճար տնօրէնութեան կոչեցար Հոգւոյն սրբոյ միշտ կոյս. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ի կանայս։

Ողորմեա Ա.Զ։

Որ անմարմնական վարուք պայծառացեալ ի մարմնի զօրացեալ տեսրամբ. ով սուրբ հայր Անտոնիոս. եղեր օրինակ բազմաց եղեր դուռն մտից կենաց ճանապարհին. յիշեսջիր ըզմեզ առաջի Քրիստոսի քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։ փառք Հօր։ Որ առեր ըզլուծ խոնարհութեան համբերող խըստամբերութեամբ. և պարակցեալ օրհնութեամբ ընդ հրեշտակս. եւ խաչակրօն անդադար սաղմոսերգութեամբ. յիշեսջիր ըզմեզ առաջի Քրիստոսի քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։ Այժմ և միշտ։ Մ̃ որոյ և մեք այսօր տօնեմք ըզհանգըստեան որ յիշատակի քո. անմոռաց յիշմամբ հայցեսցես ի Քրիստոսէ ըզմեծ զողորմութիւն. քո սուրբ և արժանընդունակ աղօթիւք։

Տէր յերկնից Ա.Զ։

Որ շնորհօք սուրբ Հոգւոյն բարձեր ըզգլխաւորն փրկչական յորդէգրութեան շնորհս. ով սուրբ հայր Անտոնիոս. արժանաւոր երկնային կոչմանն ի հրեշտակական դասակցութիւն. օրհնեմք միշտ սուրբ զ[illegible]որդութիւնն։ փառք Հօր։ Այսօր և մանկունք սուրբ եկեղեցւոյ տօնեն զխաչանկրօն քո սուրբ զյիշատակս. ով սուրբ հայր ճըգնաւորաց. զի ընկալցին զանա-

պահպան պարգևեալ ի Քրիստոսէ Այ մերմէ. օրհնե-
մք միշտ սուրբ զԵրրորդութիւնն: Այժմ և
միշտ: Զամենապարգևս վերընկալեալ ընդփառս
յաջակողմն Քնի ընդ իմաստուն կուսանսն. հայ-
ցեսցես ի Քէ զթողուլ մեղուցելոցս. ի լսել
զձայնն եթէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժա-
ռանգեցէք զկեանսն յաւիտենից:

Սանխանի ե Համբարձի ՐՁ:

Պարծանք եկեղեցւոյ և ուրախութի հրեշտա-
կաց. ով սուրբ հայր Նոտոն. զաղաչանս մեր
հանապազ մատո սուրբ Երրորդութեն: փառք
Հօր: Որ ի մարմնի կառուցեալ և զանմարմնոցն
բերելով ի քեզ զվարս. ով սուրբ հայր Նոտոն.
զաղաչանս մեր հանապազ մատո սուրբ Երրոր-
դութեն: Այժմ և միշտ: Նաժամ հոգևորական
լցեալ ածային ուրախութեամբն. ով սուրբ հայր
Նոտոն. զաղաչանս մեր հանապազ մատո սուրբ
Երրորդութեն:

Դ

## Ս. Թէոդոսի թագաւորին և մանկանցն Եփեսոսի:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Ա.Կ:

Որ զերկնաւոր թագաւորութեն ընդ քո զօրինակ
ցուցեր ի յերկրի. հաստատելով զաթոռ թագա-
ւորութեն Թէոդոսի թագաւորին յարդարութի
և յիրաւունս. բարեպաշտութեամբ սորա Քրիստոս
խոնարհեալ ի մեզ: Որ զօրութեամբ նշանի խաչի

քո Տէր պատերազմելով. խորտակեաց զընդդիմամարտ ըմբռնութի՛ւն հեթանոսաց եւ հաստատեաց խաղաղութեամբ զեկեղեցի. բարեպաշտութի՛ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։ Որ ետուր զիրաւունս արդարութե՛ քո արքային. դատելով զժողովուրդս քո արդարութե՛ ըստ հրամանի սրբոց քոց պատուիրանաց. բարեպաշտութե՛ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։

† Որ զարդարեալ զեղապանծ վայելչութեամբ սուրբ զեկեղեցի. պսակեցեր առաքելովք եւ մարգարէիւք. և հաստատեալ ամրացուցեր զնա թագաւորօք. բարեպաշտութեամբ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։ Որք զինու զօրութե՛ Հոգւոյն վառեալք ի պատերազմի. վանեցին զըմբոստութի՛ հերձուածողաց. և ի հաւատս ճշմարիտս հաստատեցին զեկեղեցիս. բարեպաշտութե՛ սորա Քրիստոս խնայեա ի մեզ։

ՑՄԿ. Թագաւորըն բոլորից պարածածկեալ յարգանօք կուսին. զոր ծնաւ յետ հաւատարիմ տեսեան Հոգւովըն սրբով եւ բերանով մօր քո օրհնաբանեցիր. առ Քեզ բարեխօսեա վասն անձանց մերոց։ Քահանագաւոր հին օրինացն արդարութե՛ ընդ մարգարէիցն. և նախաշաւիղ հետեւողաց անձանց ճանապարհին նոր օրինացս ընդ առաքելոցն. առ Քեզ բարեխօսեա վասն անձանց մերոց։ Ի յանապատի հրեշտակական վարուք բնակեցար ըստ Եղիայի. կերակրելով մարախ եւ մեղր վայրենի հին և նոր պատուիրանաց օրինակաւ. առ Քեզ բարեխօսեա վասն անձանց մերոց։

ՐՕ·· Ի՛ մաքրագործ Հոգւոյն անօթ ընտրեալ եւ ձիւնափայլ. Թագաւորք երկրի իշխանք աշխարհի. անպակաս գանձուց բաշխող Յակոբ ալփեան Յու-դա յակոբեան. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Երկքսըրբեան մի տէրութեան խորհրդոյ կամաց եւ հազարապետք փողոց հընչ-մունք բարբառք աւետեաց. ընդ ամենայն եր-կիր սուրբքդ Շմաւոն եւ Մատաթիա. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Նանին կենաց կանոնս քարոզ եւ աւետարանիչ. երգ փրկութեան հնչումն ահաւոր. ազգի մարդկան պար-ծանք սուրբքդ Մատթէոս. բարեխօս լեր առ Քրիս-տոս վասն անձանց մերոց:

ՍՐԲ· Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ եւ մենամարտիկ. սիրով անմահին խաչեալ յաշխար-հի. երագահաս սըրբդ Սարգիս խաչիւ պըսակեալ. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց: Արեգականն արդարութեան մեծ կարապետ պայծառ արուսեակ. ցոլացեալ յարեւմըտից ի յելս արեւ-ու. երագահաս սուրբքդ Սարգիս անշէջ ճառա-գայթ. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց: Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ ի մէջ երկրի ի Հիւսիսոյ. հողմըն հարաւոյ ի դաշտ ծաղ-կածին. երագահաս սուրբքդ Սարգիս տունկ ան-մահութեան. բարեխօս լեր առ Քրիստոս վն ան-ձանց մերոց:

ՍՐՏ· Ի տաճարի հանգըստեան սըրբոց վըկայիցն. զողջաչանիս մեր մի անտես առնէր որ կարդամք առ քեզ Տր՝. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ:

Որք վասն անուանդ քո հեղին ըզպատուական սուրբ զարիւնս իւրեանց. արիաբար մարտեան ընդդէմ թըշնամւոյն եւ զօրացան ի պատերազմի. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ: Պարծեացին՝ սուրբքդ քո Տէր ի հանդիստ իւրեանց. որք տանջանաց անօրինացըն համբերեցին. և անթառամ պսակացն արժանի եղեն. սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ:

ՀԳ.. Որ յերկնային զօրս անմարմնոցըն նախ հեղեր առատապէս Հոգիդ ճըշմարիտ. զածային և զգերագոյն քո իմաստութիւնդ. լինել փառաւորիչ սուրբ Երրորդութեանդ. ընդ նոսին փառաւորեմք զԵրրեակ միութիւնդ: Որ զկերպարանն ածային ստեղծեալ Երրորդութեանդ՝ խորհրդակցութեամբ. զարդարեցեր փըրկմամբ շնորհաց քոց կենդանարար. եւ ընդ ծնեալսն առ ի նմանէ խօսեցար օրինօք եւ մարգարէիւք. ընդ նոսին փառաւորեմք զԵրրեակ միութիւնդ: Որ յերկրորդ լինելութեան յետ յարութեան քում եկեղեցին. մըտեալ ի վերնատունն դրօքըն փակելովք շնորհելով ըստ առաջին փըրկմանն ըզքեզ մետասանիցն. առաքելոցն ասաց առէք Հոգի սուրբ՝ ընդ նոսին փառաւորեմք զԵրրեակ միութիւնդ:

ՀՆ. Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութեան ածելով ամենեցուն ի դատաստանն ահաւոր. յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Յորժամ ճառագայթք Ածութեանդ փայլեն ի յարեւելից. եւ դըպրութիւնք հրաշիցըն բանին յայնժամ

աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզնըն-ջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Զարհու-րեալ դողան արարածք ի ձայնէ սոսկալագոյն փո-ղոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնմ աւուր յահեղին յիշեա Տէր եւ ըզմեր ըզնըննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

Մ.Օ. Որ նախնեաց իմաստութիւն անօրինեցեր զխորհուրդ սուրբ եկեղեցւոյ՝ խորանօքն արկեալ հիմունս հաստատութեան ըզգաստ արդարոց. աղա-չանօք սոցա խնայեա ի մեզ: Որ զօրհնութիւն նախաստեղծիցն ածագոյց արուաց եւ իգաց պայ-ծառացեալ վայելչապէս ծաղկեցուցեր այսօր ի Յովակիմ եւ ի Աննա աղաչանօք սոցա խնայեա ի մեզ: Որ ըզխոստումն Աբրահամու նահապետին մեր ըստ հոգւոյ՝. քահանայական և թագաւորա-կան զաւազանացըն միացեալ ցուցեր այսօր ի Աննայէ. աղաչանօք սոցա խնայեա ի մեզ:

ԽԶ. Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց եւ մարգարէից. շինեցեր ըզքո սուրբ զեկեղեցի. և ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ հրեշ-տակս. փառաւորելով ըզերրորդութիւնդ: Տե-ղի ապաւինի և ժողովարան բանաւոր հօտի. ըն-դունարան հրեշտակաց նաւահանգիստ արդարոց եւ մեղաւորաց քաւարան. զարդարեալ առաքելովք եւ մարգարէիւք: փառք Հօր: Նաւն Ա.Ծ և ծած-կեալ խորհրդովն յաւիտենից. իջեալ ի յերկ-նից մարմնացեալ ի կուսէն խաչեալ յերկրի և թաղեալ ի նոր ի գերեզմանի. եւ յարուցեալ

յերրորդ աւուր . զի զմարգարէիցն ըղձանսըն կատարեսցէ :

Այժմ և միշտ : Որ շնորհեցեր յաշխարհի թագաւորել Մեծին Թէոդոսի . և կատարեալ ըզկեանս հաւատով ուղղափառութեամբ . փոխեցեր այսօր յերկնից թագաւորութիւնդ . բարեպաշտութեամբ սորա Քրիստոս խնայեա ի մեզ :

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Ձայն ԱԶ:

Օրհնեմք ըզքեզ Քրիստոս Թագաւոր . որ յաղթող խաչիւ քո պըսակես ըզսըրբըս քո սքանչելի փառօք քո . Ած հարցըն մերոց : Այսօր ցընծան զըւարթունք երկնից ընդ ծըդնութեն թագաւորին . քանզի երգէ բարեպաշտութեամբ Թէոդոս մեծ թագաւորըն ընդ վերջնեան զօրսն երկնից . Ած հարցըն մերոց : Այ նորածնեալ եկեղեցիք հեթանոսաց . ընդ սըրբոյն Թէոդոսի բարեպաշտ թագաւորի . երգեսցուք քեզ երգ նոր . Ած հարցըն մերոց :

Գ . Ազգք օրհնեցէք Ընդ սըրբոյն բարձր աթոռրէք զԱստուած Բանըն Հօր յաւիտենական : փառք Հօր : Որ ի յերկրի է պըսակեալ ի հրեշտակաց . եւ ի յերկինըս բարձրացեալ բարեպաշտութեամբն իւրով . ընդ սըրբոյն բարձր աթոռէք զԱստուած Բանըն Հօր յաւիտենական : Այժմ և միշտ : Որ հաւատով պարտեաց ըզթըշնամին . եւ աղօթիւք զարդարեաց որ զեկեղեցի . ընդ սըրբոյն բարձր աթոռէք զԱստուած Բանըն Հօր յաւիտենական :

### Մեծացուսցէ ԲԶ:

Երանելին ծառայէր որ՝ դրն հոյն. եկեալ ի քաղաքն Երուսաղէմ. խնդրէր ըզփրկական ծագումըն մեծի փայլմանն. եւ քարոզէր ի նոցա զմորենին վառեալ որ ոչ այրէր. մեծացուցանելով ըզծնեալըն ի կուսէն: Փառք Հօր: Իսկ խոշտանգեալ ըզգայարս հրէիցն՝. խոստովանէր ի Յուդայ. եկեալ ի տեղին գողգոթայ հաւատով. եւ քարոզէր ի նոցա զդուռն ընդ որ եմուտ Բանն Աստուած. մեծացուցանելով ըզծնեալըն ի կուսէն: Այժմ եւ միշտ: Իսկ համբարձեալ ըզձայնըն Յուդայի. խնդրելով ի Տեառնէ ըզտենչալին ամենեցուն որ ըզխաչն. եւ հաւատով գոչէր եկայք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս. մեծացուցանելով ըզծնեալըն ի կուսէն:

### Ողորմեա ԲԶ:

Թագաւորս իմ: Աստուած փրկիչ մեր լուր մեզ որ կարդամք առ քեզ. բարեխօսութեամբ սուրբ թագաւորին: Փառք Հօր: Որ բարեպաշտութեամբ զարդարեաց զեկեղեցի քո. եւ կարգաւորեաց ուղղափառութեամբ ըզքո ժողովուրդս: Այժմ եւ միշտ: Արդ անկեալ աղաչեմք ըզքեզ մարդասէր Տէր՝. յիշատակի սորա պարգեւեա մեզ՝. զերկնային քո զխաղաղութիւնդ:

### Տէր յերկնից ԲԶ:

Ով երանելի եւ բարեպաշտ Թէոդոս մեծ թագաւոր. բարեխօս լեր վասն մեր առ թագաւորն երկնաւոր. թողուլ մեզ՝ ըզմեղս մեր: Փառք Հօր: Որ երկրպագօղդ ես Քրիստոսի եւ ջատագով որ հա-

ւառոյ բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր. Թողուլ մեզ՝ ըզմեղըս մեր։ Այժմ և միշտ։ Որ Թագաւորաց ես ի յերկրի պարծանք եւ ի յերկինըս պըսակեալ. բարեխօս լեր վասն մեր առ Թագաւորն երկնաւոր. Թողուլ մեզ՝ ըզմեղըս մեր։

Մանկունք ն Համբարձին ԲԿ։

Ով երանելիդ ամենեցուն տիեզերական իշխանութեամբ ընկալար ի Քէ ըզԹագ պարծանաց. ով Թէոդոս մեծ Թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։ Փառք Հօր։ Որ քոյին սբ աղօթիւքըդ վանեցեր ըզԹշնամին. կոխելով ըզստամբակ ընդ երկնայինսըն դասեցար. ով Թէոդոս մեծ Թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։ Այժմ և միշտ։ Աստի և մեք հաւատացեալքս տօնեմք զքո յիշատակս. օրհնութի առաքելով ըզքեզ պըսակողին. ով Թէոդոս մեծ Թագաւոր վասն մեր բարեխօսեա առ Թագաւորն երկնաւոր։

---

Ե

Ս. Կիւրակոսի և մօր նորա Յուղիտայ։

ՅՈՒՂԻՏՈՍԻ Հարց ԴԿ. Որ զհրաշափառ։ 375։

Մանկունք ԲԿ։

Յարմատոյ բարեաց քաղցրը շառաւիղ վերաբուսեալ ծաղիկ հաւատոյ. զեղ վայելչութեան զարդ եկեղեցւոյ պըտղաբերեալ ըզքեզ ով սուրբ Կիւրակոս. տընկողըն ըզքեզ Քրիստոսի. բարեխօսեա վասն անձանց մերոց։ Փառք Հօր։ Աստուածանօր մօր բարեպաշտի որդի. և երկնաւոր

հանդիսադրի նահատակ. քաջ ըսպառազէն. զի նուիրեալ հոգւով տըղայ գոլով մարմնով. մարտ ընդ անօրէնսն եդեալ պսակեցար ով սուրբ Կիրակոս՝ տընկողին ըղձեց Քրիստոսի՝ բարեխօսեա վասն անձանց մերոց։ Այժմ և միշտ։ Ցօղ քաղցրութեան ծաւալեցաւ յանդաստանս ձեր. յորժամ պատուական արիւնքըդ ձեր հեղան յերկիր. երկնայինքն ուրախացան ըզձեզ յինքեանս ընդունելով. մայր որդւով բերկրեալ ով սուրբ Յուղիտա. ստեղծողին ըղձեց Քրիստոսի՝ բարեխօսեցէք վասն անձանց մերոց։

---

### ՑԵՐԵԿՈՅԻ
#### Համբարձէ ԲԿ։

Մարդամարդոյն վառեալ ծաղիկ ի Նորատունկ բուրաստանի. լուսազարդեալ երեւեցար՝ ով երանեալդ սուրբ Կիրակոս՝ վասն մեր բարեխօսեա Քրիստոսի փրկչին մերոյ։ Աղաւնի քաղցրաբարբառ հնչմարանեալ ըզՏէր Յիսուս՝ վկայական արեամբ ներկեալ. ոսկեբողբոջ դեռաբուսիկ. վասն մեր բարեխօսեա Քրիստոսի փրկչին մերոյ։ Փառք Հօր։ Մարտնչողդ վարդամպետին՝ համեղ ողկոյզ արեամբ ծըմլեալ. պսակեցար ի Քրիստոսէ՝ ընդ երջանիկ մարտիրոսացն. վասն մեր բարեխօսեա Քրիստոսի փրկչին մերոյ։ Այժմ և միշտ։ Դուք պարծանք սուրբ հաւատոյ՝ լուսոյ պսակ եկեղեցւոյ՝ մայր որդւով բերկրեալ այսօր ով երանեալդ սուրբ Յուղիտա. վասն մեր բարեխօսեցէք Քրիստոսի փրկչին մերոյ։

# Ձ

## Ս. Վահանայ գողթնացւոյն։

ՅԱՌԱՒՕՏՈՒ ձայն Ա.Զ. Զքեզ արդար և. 345։

Մանկանց եւ Հարսնաց Բ.Զ։

Զարմանալի է ինձ քան զխորհուրդս երամբըշտա-
կանացն ձայնս. ողբոց քոց հնչեր-
մունք՝ որ երանելի տէրն զՎահան ընտրեալ
յԱստուածոյ։ Նախանձու յորդորեալ սոյն ըզ-
հօգւոյս ըմբռունս. յորինեալ քեզ երգս ոչ
ընդդիմականս. այլ հոգեւորս եւ ուրախարարս.
յորդորականս եւ նորաբղխեանս. որ երանե-
լի տէրն զՎահան ծառայ Քրիստոսի։
Զարհուրեցուցանէ քո ծնընդութեանդ ըզմի-
մընոյս ըննութիւն. Իսկ գովելով անա-
ւել գրոցս. որ երանելի տէրն ըզՎահան. սի-
րով Քրիստոսի։ փառք Հօր։ Նորոգ-
նոցն ըզգաստքն սահեծիչ բանք սնոտեացն ի
պատրութիւն. Իսկ քոյդ սիրայնոյ
ծարեալ եւ ոգեշահ. որ երանելի տէրն ըզ-
Վահան. ընտրեալդ յամ գաւառաց։ Այժմ և
միշտ։ Որպէս ըզքաջ նահատակ պատրաստեալ
ի պատերազմ. կատարեցեր զընթացըս քո
արեամբ յաղթացըն հարաւայնոյ. դասաւո-
րեալ ընդ անմարմնականս. որ երանելի
տէրն ըզՎահան. գողթնեացն իշխեցող։

---

## ԺԸ

### Ս. Աթանասի և Կիւրղի հայրապետացն Աղեքսանդրիայ:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որք զարդարեցին: 565:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Որ զանճառ քո: 362:
Սանճ. Ի Համբ. Գ.Զ. Մանկունք նոր Սիոնի: 901:

## ԺԹ

### Ս. Գրիգորի աստուածաբանին:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որք զարդարեցին: 565:
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Սքանչելագործ: 570:

Սանճաւոր Ի Համբերէն ԲԶ:

Որ լուսով ածային Բանին զարդարեցեր զեկեղեցի և զխաւարն անգիտութեան հալածեցեր յորդւոց մարդկան. ով Տէր տր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր: Փառք Հօր: Որ զհամագոյ բնութիւն միասնական Երրորդութեանն. յայտնեցեր եկեղեցւոյ խոստովանել միութիւն. ով Տէր տր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր: Այժմ և միշտ: Որ ըզերկական տնօրէնութիւն մարդացելոյն վասն մեր. ուսուցեր մեզ յերկուց նոր միաւորութեամբ ըսքանչելի. ով Տէր տր Գրիգոր. բարեխօս լեր վասն մեր առ միածին Բանն Հօր:

## Ի

### Ս. Տրիփոնի վկային:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱԿ. Սուրբ Աստուած: 348:

## Ժ.

Ս. Վլասայ եպիսկոպոսին և Ոնեսիմեայ աշակերտին Պօղոսի:

ՅԱՐՈՒԹԵԱՆ Ձայն ԱԿ. Որ բարձրեալդ: 349:
Մանկունք ԱԿ. Աշակերտք Քնի: 752:
ՅԵՐԵԿՈՅԻ Համբարձի մարտիրոսաց ՚ի կարգէն:

## ԺԱ.

Ս. Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին. և Յիշատակ Կոստանդիանոսի Թագաւորին:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. ԱԿ. Որ զերկնաւոր: 1074:
ՅԱՐՈՒԹԵԱՆ Ձայն ԴԶ. Որք հաղորդեցան: 371:
Մանկունք և Համբարձի ԲԿ. ՈՎ երանելիդ: 1081:

## ԺԲ.

Ս. Գորդիոսի վկային և Պօղիքտոսի և Գրիգորիսի:

ՅԱՐՈՒԹԵԱՆ Ձայն ԲԶ. Անոխակալ և: 352:

## ԺԳ.

Ս. Նուգինեայ կուսին, և հօր նորա Փիլիպպոսի, և մօր նորա Կղոդեայ, և երկուց եղբարցն նորա Սերգեայ և Ապիոնի, և երկուց ներքինեացն:

ՅԱՐՈՒԹԵԱՆ Ձայն ԲԶ. Ընդ սուրբս քո: 353:

## ԺԴ.

Ս. Մարութայի եպիսկոպոսին:

ՅԱՐՈՒԹԵԱՆ Ձայն ԳԶ. Որ զմնչաւի: 362:

Մանկունք և Համբարձի Գ.Զ. Հանդիսացեալք:
684: Կամ մարտիրոսաց 'ի յայնմն:

ԺԸ

Ս. Եւգինէոսի, Մակարիոսի: Եւ Վաղե-րիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ. Որք 'ի մարտի: 357:

Իսկ 'ի գալստեան Առաջնորդին շարականօրէնս 'ի տա-ճարն, երկիրպագանեն 'ի ճեմարանէ 1 նախատօնակ ասելով. Եւոյց նա Խոնարհեցո և Աշխրեցո:

Կերպակամսք փառք:

Որ եկիր 'ի փրկութիւն ազգի մարդկան Տր փառք քեզ: Այս զուարթ:

Մեծէտէ գալստեան. Օրհնեալ որ գաս յանուն Տեառն. օրհնեալ որ գալոց ես:

Տէր ԱԾ մեր երևեցաւ մեզ արարէք տօն ուրա-խութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:

Քարոզ Ասասցուք կամ Գանձ:

Համբարձի ԱԶ:

Անմահացեալդ 'ի կուսէն նախայաւիտեան: 1091:

Զնէ Քար. Մն խաղաղութն. ԱՂ. Հայր գթած:
Եւ դպրաց ձեռան յանձնայն, և յարեան եր-կինս խաչն և Առաքելոյն և մարգարէք, և ամենայն զօրքոք մինչև այլ Հայր գթածն: Եւ երկինս նոյն դպրապետն 'ի դասս 'ի Բարձրագոյնպատ յերկրորդ ակումբ, ամենեցուն 'ի յետս մոմ լուցեալ ամենայն. և ասեն Շարական ԴԶ. Այսօր անսկզբնա: 1092:
Զայս շարական ասասցեն և ապա 'ի դասս երկինս:

Եւ ասեն զինէ շարականին Սաղմոս ԴԱ:

ԿԸ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն ԱՅ մերոյ:

փխ. Օրհնեցէք զՏր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:
փրկեաց նմա աջ իւր. և բազուկ սբ իւր:
Ծանոյց Տր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:
Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ. ճշմարտութբ իւրով զտունն Իսրայէլի. և տեսին ամ ծագք երկրի զփրկութիւն Այ մերոյ:
Աղաղակեցէք առ Տր ամ երկիր. օրհնեցէք՝ ցնծացէք և սաղմոս ասացէք:
Սաղմոս ասացէք Այ մերում օրհնութեամբ. օրհնութբ՝ և 'ի ձայն սաղմոսաց:
Ի ձայն օրհնութեան կառաց փողոյ. օրհնութբ ցնծութբ և 'ի ձայն եղջեր փողոյ. աղաղակեցէք առաջի թագաւորին Տեառն:
Խռովեսցի ծով լրիւ իւրով՝ տիեզերք և ամ բնակիչք նր. և գետք ծափս հարցեն 'ի միասին ձեռամբ:
Լերինք ցնծասցեն առաջի Տն զի գայ, և հասեալ է Տր 'ի դատել զերկիր:
Դատէ զաշխարհս արդարութբ. և զժողովուրդս իւր ուղղութբ:

Ընթերցուած ի Ղևտացւոց: ԺԲ. 6:

Եւ ասէ Տէր ցՄովսէս յորժամ լնուցուն աւուրք սրբութեան նորա 'ի վերայ ուստերն՝ կամ դստերն, ածցէ գառն տարևոր յողջակէզս. և զոյգս աղաւնոյ կամ տատրակի վն մեղաց 'ի դուռն խորանին վկայութեան առ քահանայն, և մատուսցէ առաջի Տեառն, և քաւեսցէ վասն նորա քահանայն, և սրբեսցէ զնա յաղբերէ արեան նորա: Այս օրէն իցէ այնորիկ՝ որ ծնանիցին արու կամ էգ: Ապա թէ ոչ գտանիցէ ձեռն նորա բաւական լինել գառամբ՝ առցէ երկու տատրակս կամ երկուս ձագս աղաւնեաց, զմին յողջակէզ՝ և զմիւսն վն մեղաց. և քաւեսցէ վն նորա քահանայն, և սրբեսցի: 8:

Ընթերցուած յԱռակաց: Ը. 22:

Տէր հաստատեաց զիս 'ի սկիզբն ճանապարհաց
իւրոց 'ի գործս իւր, յառաջ քան զյաւիտեանս
հաստատեաց զիս: Ի սկզբանէ յառաջ քան զեր-
կիր առնել. և նախ քան զանդունդս գործել. և
նախ քան զբղխել աղբերանց ջրոց. յառաջ քան
զլերինս հաստատել. յառաջ քան զամ բլուրս
ծնաւ զիս: Տր արար զշէնս՝ և զանշէնս. և զեզերս
բնակեալս 'ի ներքոյ երկնից: Մինչդեռ պատրաս-
տէր զերկինս՝ ընդ նմա էի. և մինչ զատուցանէր
զաթոռ իւր 'ի վերայ հողմոց: Եւ յորժամ զօրա-
ցուցանէր զամպս վերինս. և յորժամ հաստատուն
դնէր զաղբիւրս 'ի ներքոյ երկնից: Ի դնել ծովու
զհաստատութիւն իւր. զի ջուրք մի անցցեն ըստ
ափն նր. 'ի ժամանակի՝ յորժամ հաստատուն դնէր
զհիմունս երկրի. ես էի առ նմա պատշաճեալ:
Ես էի՝ որով ուրախ լինէր Տր հանապազ և ցնծայի
առաջի նր յամ ժամ: Յորժամ ուրախ լինէր ընդ
աշխարհին բովանդակել և ցնծայր յորդիս մարդ-
կան: Արդ՝ որդեակ լուր ինձ. և երանելի են՝ որք
զճանապարհս իմ պահեն: Լուարուք զիմաստութի
և իմաստունք լերուք, և մի պաշարիցիք: Երա-
նեալ է այր, որ լուիցէ ինձ, և մարդ որ զճանա-
պարհս իմ պահիցէ, տքնիցի առ դրունս իմ հա-
նապազ, և պահիցէ զսեամս մտից իմոց: 34:

Ընթերցուած յԵզեկիելէ մարգարէէ: ԽԴ. 1:

Եւ դարձոյց զիս ընդ ճանապարհ արտաքին դրան
սրբութեանցն որ հայէր յարևելս. և այն էր փակեալ:
Եւ ասէ ցիս Տէր, այդ դուռն փակեալ կացցէ՝ և
մի բացցի՝ և մի ոք անցցէ ընդ դա. զի Տէր Ած
Իսրայելի մտցէ ընդ դա. և եղիցի փակեալ: 2:

Ընթերցուած 'ի Մաղաքիայ մարգարէէ: Գ. 1:

Այսպէս ասէ Տէր. ահա ես առաքեմ զհրեշ-
տակ իմ, և տեսցէ զճանապարհս իմ առաջի իմ.

և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տէրն զոր դուք խնդրէք. և հրեշտակն ուխտի զոր դուք կամիք: Ահաւասիկ գայ ասէ Տէր ամենակալ. և ո՞վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա. և կամ ո՞ հանդարտեսցէ յայտնութեան նորա. զի նա մտցէ իբրև զբոց հալոցի, և իբրև զաճառ լուալեաց: Եւ նստցի որբել և ձուլել իբրև զարծաթ և իբրև զոսկի, և սրբեսցէ զորդիս Ղևեայ. և հալեսցէ զնոսա իբրև զոսկի և իբրև զարծաթ. և եղիցի Տեառն մատուցանել զպատարագս արդարութեամբ: Եւ հաճոյ եղիցի Տն պատարագն Յուդայ և Երուսաղէմի, ըստ յաւուրսն յաւիտենից. և ըստ յամսն առաջինս: 4:

Պօղոսի առաքելոյն 'ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս: Գ.. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի Քն Յն. զի 'ի հաւատոյն արդարասցուք. այլ իբրև եկին հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք, քանզի ամենեքին որդիք Այ էք, հաւատովք 'ի Քն Յն: Որք միանգամ 'ի Քն մկրտեցարուք, զՔն զգեցեալ էք. չիք խտիր, ոչ հրէի, և ոչ հեթանոսի, ոչ ծառայի, և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի Քն Յն: Ապա եթէ դուք Քնի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք ըստ աւետեացն՝ ժառանգ: 29:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Օրհնեալ որ գալոց ես անուամբ Տեառն. և օրհնեցաք զքեզ 'ի տանէ Տեառն:

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Բ. 22:

Տեառն մերոյ Յնի Քնի

Եւ իբրև լցան աւուրք սրբութե՛ նց ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդիման առնել Տն. որպէս և գրեալ է յօրէնս Տն, թէ ա՛մ արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տն կոչեսցի: Եւ

տալ պատարագ՝ ըստ ասացելոյն յօրէնս Տն, զոյգս տատրակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց: Եւ ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէօն. եւ էր այրն այն արդար եւ երկիւղած, եւ ակն ունէր մխիթարութեանն Իսրայելի, եւ Հոգի Սբ էր 'ի նմա: Եւ էր նր հրաման առեալ 'ի Հոգւոյն Սբյ մի տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զօծեալն Տն: Եւ եկն Հոգւովն 'ի տաճարն. եւ իբրեւ ածին ծնօղքն զմանուկն Յս՝ առնել նց ըստ սովորութե օրինացն 'ի վերայ նր. եւ նա առ ընկալաւ զնա 'ի գիրկս իւր, եւ օրհնեաց զԱծ, եւ ասէ: Արդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութի. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո. զոր պատրաստեցեր առաջի ամ ժողովրդոց: Լոյս 'ի յայտնութի հեթանոսաց, եւ փառս ժողովրդեան քում Իսրայելի: Եւ էին հայրն եւ մայրն նորա զարմացեալ 'ի վերայ բանիցն, որ խօսէին զնմանէ: Եւ օրհնեաց զնոսա Սիմէօն, եւ ասէ ցՄարիամ մայր նորա. ահա սա կայ 'ի գլորումն եւ 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայելի, եւ 'ի նշան հակառակութե: Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. զի յայտնեսցին 'ի բազում սրտից խորհուրդք: Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուէլի յազգէ Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ընդ առն ամս եօթն 'ի կուսութէ իւրմէ: Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն եւ չորից. որ ոչ մեկնէր 'ի տաճարէն, այլ պահօք եւ աղօթիւք պաշտէր զցայգ եւ զցերեկ: Եւ սա 'ի նմին ժամու յարուցեալ գոհանայր զՏնէ, եւ խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակնունէին փրկութեան Երուսաղեմի: Եւ իբրեւ կատարեցին զամ ըստ օրինացն Տն, դարձան անդրէն 'ի Գալիլեա 'ի քաղաքն իւրեանց Նազարէթ: Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութբ. եւ շնորհք Այ էին 'ի վր նորա: 40:

Յընթերցանումն զԱւետարանն ձայնէն վերջին: Օրհնէ

Աւետարանին· Քարոզ· Մն ՚ի վերուստ խաղաղ: Եւ վերաբերեալ զանդրանիկն և զերը կողմն աշխարհին: Քարոզ· Մի խաչիւ· Աղ· Պահպանեա:

Եւ ապա սկսանին զմաղթանս շարականն Դ.Կ· Այսօր ՚ի տաճարին: 1098: Եւ ասեն զսաղմոսն Դ.Զ· Օրհնեմք զքեզ: 1099· Իւր սուրբ: Զկնի ասեն գանձ և Տաղ· Վն փառաց թագաւոր· կամ Այսօր ցնծայ Երուսաղէմ: Քարոզ· Մի զԱծածինն· Կեցո յոյժն· Աղ· Ընկալ Տէր: Հայր մեր:

Եւ արձակի խաղաղութեամբ:

Իսկ ըստ յաւուր հանգստեան և կամ յառաւօտուն, դա զճաշու աղօթեալ յառաջ ասա, և զաղօթսն: Եւ զխաղաղականն ծնունդն, և զՇնորհեա մեզ Տէր: Եւ յորժամ զՏէր լոյսն ասեն, որ զառաջ գիրքն կարդա զաղօթսն· զկնի Նայեաց սիրով: Ի քէն հայցեմք և Հայր մեր: Եւ ապա ընթանայ հայ ճաշոցին: Եւ երեկոյն զերեկոյեան ժամերգն կատարեն:

Պարտ է գիտել զի այս առաւօտուն երեկոյին ամէն զաղօթսն կատարեն: Այլ զի երեկոյն ասացեն աղօթս, պարտ է ամենեցուն ՚ի յետոյ մի լուցանել ամէն: Եւ յորժամ ընթերցեալ զԱւետարանն, և լուցանեն զկերոնն, և վերաբերեն խաչն զաշխարհն, պարտ է ամենեցուն զառաջին երեկոյին լուցեալ լապտերօքն:

# ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Ի փետրուարի 2:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԶ:

ՄԱՐԴԱՑԵԱԼ ի կուսէն նախայաւիտենան Բանդ. այսօր ի տաճարին եկեր կատարել զօրէնս. վասն փրկութեան հեթանոսաց: Մր

յանարատամօր աթոռ նըստիս բարեբանեալդ ի հրեշ-
տակաց. այսօր ի Սիմէոնէ բառնայիր ի գիրկս. որ
ընծայեցեր ըզմեզ ի կենդանութիւն յաւիտենից։ Որ
արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենե-
ցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և
զիս ըզբաղձամեղս ի կապանաց մահու ի կեան-
սըդ յաւիտենից։

Դ.Զ

Այսօր անըսկըզբնական ծընունդ հայրական ծո-
ցոյ Բանն եկաւորեալ ի տաճարն. ընծայէ զարա-
րածըս Հօր ի յերկինս։ Այսօր բարձեալ եղև
ի գիրկըս ծերունւոյն. որ բանիւ զարարածըս բար-
ձեալ ունի օրհնաբանեսցուք։ Այսօր և մեք հա-
ւատացեալքս ընդ ծերունւոյն Սիմէոնի. ըզԲանն
համագոյ Հօր և սուրբ Հոգւոյն օրհնաբանեսցուք։

† Այսօր ի տաճարն եկեալ կենարարն և ի գիրկ-
սըն Սիմէոնի գըգուեցաւ. զոր խընդութեամբ մի ըն-
կալաւ Երուսաղէմ։ Այսօր երկիրս երկինք ա-
նուանեցաւ. զի Տէրըն տերանց իջեալ յերկնից ի
յերկիր. և ընծայիւ յանձն առնու ի գործոց ձե-
ռաց իւրոց։

Գ.ԻԱ. Դու ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և մար-
մնացար ի սուրբ կուսէն. զի վերըստին նորո-
գեսցես զանապականութիւնն Ադամայ։ Դու Տէր ծ ի յերկրի
երևեցար և ընդ մարդկան շըրջեցար. և փրկե-
ցեր ըզտիեզերըս յանիծիցն Ադամայ։ Քեզ ի
յերկնից վերնայեալ Հօր քո ձայն. ասէ դա է իմ
Որդի. և որ Հոգին ըզքեզ յայտնեաց աղաւ-
նակերպ երևմամբ։

փխ. Որ ունէիս խոնարհութեամբ մարմնոյ և կենաց. Քրիստոս թագաւոր փառաց. օրհնեալ ես Տէր Աստուած: Տօնելով ըղձալի շառաւիղ կուսի Աստուածորդւոյ մօր. հրճուելով հրեշտակք ի յերկինս և ցնծան զասք առաքելոց և մարգարէից ընդ կուսական տօնս. օրհնեալ ես Տէր Աստուած: Ընդ միայնոյ մօր և կուսի մանկութեամբ հայցելով ի քէն. բարեխօսեալ անդադար առ Որդիդ քո և Աստուած մեր. փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ՁՂ. Զգալուստ քո Քն այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի որ. յաղթական երգով բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նստեալ յանձն առեր. ընդ մանկունսն բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քո պահեա ի խաղաղութեան:

ՇՈՂ. Լուսաւորեա Երուսաղէմ զարդարեա զառագաստ քո. քանզի մերձեցաւ առ քեզ փեսայն երկնաւոր. փրկութիւն քեզ շնորհելով պսակելոց սքանչելի փառօքն իւրովք: Այսօր ծագեաց քեզ դշխոյ դուստր Սիոնի արդարութեան արեգակն Քրիստոս. և սփռեցան ընդ քեզ շնորհք որ Հոգւոյն մեծապէս պարգևօք: Այսօր ցնծա որ Սիոն մայր եկեղեցի. փայլեցո զմանկունս քո որպէս զարեգակն. զի անճառ խնդութիւն լցոյց ընդ քեզ Քրիստոս թագաւորն:

ՄՕ. Անարատ կոյս ածածին Մարիամ սրբուհի

և մօր Քրիստոսի. յարգանդի տարար զանտանելին ամենեցուն. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Զքեզ երկնային դուռըն զոր ետես Եզեկիէլ. և ասրըն զոր ծանեաւ Գեդէոն. սերովբէ հողեղէն վեհագոյն քերովբէից. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Զորս խորհուրդըս սոսկալիս ի քեզ տեսանի Աստուածածին. յղութիւն անսերմնական ծնունդ անարատ. կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք:

Հգ. Կենդանարար Աստուած մարդասէր Հոգի. ըզժողովեալսըն միաբանական սիրով լուսաւորեցեր հրեղէն նոր լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ: Զօրացուցան քո գալստեամբ մերըն սուրբ առաքեալքըն. կոչելով ի միասին ըզցրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ: Հոգեւորական սուրբ մկրտութեամբ զարդարեցեր նոքօք ըզտիեզերս. ի զգեստըս լուսափայլս և նորափետուրս. վասն որոյ և մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ:

Հն. Նախամեծարանք վեհագունիցըն հայրըն յոգնախոնումբս Եղանակէին. Երգս առեալ մատուցանեն զերաժըշտականաց զերանաւէտ զհոգեղէն հրեշտակս. քեզ Էմմանուէլ. որ ծընար տըղայաբար և վերածեր զազգըս մարդկան Հօր յորդէգրութիւն. աղաչանօք հայցեմք ի քեն

զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հան-
գո: Գեղգեղեալ գովեն զքեզ գերապայծառա-
գունդք հոգեղինացն. հեզաբար թեւամպարել
պարունակեալ ծածկեն զդէմս յահէ փառա-
ցդ. քեզ Քրիստոսդ Էմմանուէլ. որ ծնար տղա-
յաբար. և վերածեր զազգս մարդկան ի Հօր
յորդէգրութիւն. աղաչանօք հայցեմք ի քէն
զննջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո:
Փառք Հօր: Ընդ նոյն և մեք երգեմք քեզ բա-
բանական ձայնիւ զերգս հոգեւորս. առբե-
րելով քեզ պատարագ ոսկի կնդրուկ զմուռ
ս և զհաւատս. քեզ Քրիստոսդ Էմմանուէլ. որ ծնար
տղայաբար և վերածեր զազգս մարդկան ի Հօր
յորդէգրութիւն. աղաչանօք հայցեմք ի քէն զն-
նջեցեալսն մեր ընդ սուրբս քո հանգո:
Այժմ և միշտ: Այսօր հեթանոսաց լոյս ծագե-
ցաւ Քրիստոս Աստուած. և փառք իւրում ժո-
ղովրդեանն Իսրայէլի:
Ապա [illegible] ՚ի յայտնէն:
Որպէս յառաջ [illegible] երգեան յեկեղեցին [illegible]
[illegible]
[illegible] Տէ [illegible]:
Եւ ասեն Սաղմոս Դ. Ա.:
43. Տեսին ամ ծագք: փխ. Օրհնեցէք զՏր: 1086:
[illegible] եկեղեցին [illegible] եկեղեցի է, ՚ի
[illegible]:
[illegible] , [illegible]
[illegible] եկեղեցւոյն [illegible] Ա.Զ. Մարմնացեալ
՚ի կուսէն: 1091:
Որ նախ էիր յոյժ դասուրբ Միածին. պայծառա-
ցիր Երուսաղէմ զարդարեալ ըզգեստիւ քո քա-

ղաքդ Աստուծոյ ։ Քանզի Քս որ էնն ի յաթոռ փառաց ․ այսօր մըտանէ ի քեզ ննջեալ ի վերայ յաւանակի նորոյ ։ Ծերք և տղայք ոստովք ձիթենեօք միաբանութեամբ երգէին ․ օրհնութիւն որդւոյ Դաւթի օրհնեալ եկեալ անուամբ Տեառն ։

Պատկերակից եղեր հողեղէն բընութեանս տընօրինեցար յարգանդի կուսին Բանդ Աստծ ․ ըզմարդս վերանորոգել պատկեր ։ Մերկացեալ ի ճաշակմանէ նախաստեղծին ըզփառս ․ միւսանգամ վերըստին շնորհելով ․ ըզմարդս վերանորոգել ի փառս ։ Մըկրտեալ ի Յորդանան ի Յովհաննէ ․ ածային բնութ մարմնովըն զոր ի մէնջն էառ ․ ըզմարդս լուսաւորելով ածային ծագմամբն ։

Զկնէ Աւետ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի ։ Ե․ 17։

Տէրն մեր Յս Քս ասէ․

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս ․ ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ ։ Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր յովտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ՚ի մարգարէից՝ մինչև ամ եղիցի ։ Որ ոք լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքունց ․ և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից ․ իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից ։ Բայց ասեմ ձեզ ․ զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։ 20 ։

Ա։— Գտանի յարեւմտից կողմն, նոյն ՚ի գտանի Եկեղեցւոյն ։

Շարական Դ․Զ ։

Այսօր անսկզբնա ։ Այսօր ՚ի տաճարն ։ 1092 ։

Զ՟ՀՆԷ Որթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի. ԺԳ. 32։

Տէրն մեր ՅՍ ՔՍ ասէ.

Այլ վն աւուրն այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք գիտէ
ոչ հրեշտակք յերկինս՝ եւ ոչ Որդի, բայց Հայր
միայն։ Զգոյշ եղերուք. սկեսջիք եւ կացէք յա-
ղօթս. զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։ Որ-
պէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ՝ թողուցու
զտուն իւր. եւ տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն,
եւ իւրաքանչիւր զգործս իւր. եւ դռնապանին պա-
տուէր տայցէ, զի արթուն լինիցի։ Արդ՝ արթուն
կացէք, զի ոչ գիտէք երբ Տէր տանն գայցէ՝ յե-
րեկորեայ եթէ 'ի մէջ գիշերի եթէ 'ի հաւախօսի
եթէ ընդ առաւօտս։ Գուցէ եկեալ յանկարծակի
գտանիցէ զձեզ 'ի քուն։ Բայց զոր ձեզդ ասեմ,
ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք։ 37։

Եւ գան 'ի հարաւային խորանն Եկեղեցւոյն։

Առաջին Դ.Ձ։

Լոյս 'ի լուսոյ։ Զքեզ որ հոգւով։ 1038։

Որթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու. ԺԲ. 49։

Տէրն մեր ՅՍ ՔՍ ասէ.

Հուր եկի արկանել յերկիր. եւ զի՞նչ կամիմ
թէ արդէն բորբոքէր։ Այլ մկրտութիւն մի
ունիմ մկրտել. եւ զիա՞րդ փութամ մինչեւ կատա-
րեսցի։ Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ
յերկիր, ո՛չ ասեմ ձեզ, այլ բաժինս։ Զի եղի-
ցին յայսմ հետէ հինգ 'ի տան միում բաժա-
նեալք, երեքն յերկուց, եւ երկուքն յերից։ Բա-
ժանեսցի հայր յորդւոյ՝ եւ որդի 'ի հօրէ, մայր 'ի
դստերէ եւ դուստր 'ի մօրէ, սկեսուր 'ի հարսնէ
եւ հարսն 'ի սկեսրէ իւրմէ։ Ասաց եւ ժողովրդեանն.
յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից,
խկոյն ասէք՝ թէ անձրեւ գայ, եւ լինի այնպէս.

և յորժամ հարաւ շնչեսցէ, ասէք՝ թէ խորշակ լինի, և լինի այնպէս։ Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։ Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, ՚ի ճանապարհի տուր զջան զերծանել ՚ի նմանէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ ՚ի բանտ։ Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչև հատուցանիցես զյետին բնիոնն։ 59։

Ե— Տօն ՚ի Յովհաննու Աւետարանչին։

Շարական Դ.Կ։

Այսօր ի տաճարն եկիր փրկիչ. և ծերունոյն ի գիրկս ընկալեալ, մեծէր արդ արձակես զծառայս քո Տէր։ Այսօր աշխարհի ցուցար լոյս և փրկութիւն տնօրէնութեամբ Քրիստոս Աստուած որ մարդասէրդ ես կեցո զմեզ։ Այսօր խնամողն արեգակն. որ ծագեցար տնօրէնութեամբ Քրիստոս Աստուած. որ մարդասէրդ ես կեցո զմեզ։

Ի սկզբանէ Բանն Աստուած մարմնացեալ ի կուսէն. այսօր գրկաբերեալ ի տաճարին։ Խայտայր ալեօքն ծերունին Սիմէոն ի գիրկս իւր. եւ օրհնէր զԱստուած ասելով։ Արդ արձակես զծառայս քո Տէր՝ ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն Աստուած։

Որթիւ

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհաննու։ Ա. 1։

Ի Հօրէն լուսոյ.

Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած։ 957։

Շարական Բ.Կ։

Ի գալստեան Տեառն զօրք երկնից բանին.

եւ ճառագայթիւք անճառ լուսովդ որ խաչն երեւի։ Յերեւմանդ Տեառըն լերինք հալին. եւ ի յահէ փառաց նորա շարժին զօրութիւնք։ Աւետաւոք Տեառըն մեռեալք յառնեն. եւ սուրբք ամենայն անճառ փառօք զարդարին։

Կամ Շարական Դ.Զ. Զգալուստ քո Քս։ 1093։

---

Եւ ապա եկեղեցականն ասասցեն. Լցայք առաւօտու. Ն աէրն

Հարց Դ.Զ։

Օրհնեմք զքեզ որ առաքեցար ի Հօրէ անճառելի Բանդ Աձ. յանձն առեր մարմնանալ ի սրբոյ կուսէն. Աստուած հարցն մերոց։ Այսօր եկիր ի տաճարն անհասանելի փրկիչ. եւ ի գիրկսն Սիմէոնի գգուեցար. Աստուած հարցն մերոց։ Աննա եւ Սիմէոն հոգեւոր հրճուանօքն աղաղակէր. արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում ի խաղաղութիւն. Աստուած հարցն մերոց։

Գ.. ԶՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ փառք Հօր։ Օրհնեցէք։ Զծնեալն յամենասուրբ յորովայնէ յանարատ ի կուսէն. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Օրհնեցէք։ Զնկեալն այսօր ի տաճարն. զընկալեալն ի գիրկսն Սիմէոնի. օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Զ։

Աթոռ քրովբէական երեւեալ այսօր Սիմէոնի. զԱծորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով.

զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն։ փառք Հօր։ Հոգւոյն գոչէր. ցնծայր ալեօքըն ծերունին ասելով սա է Թագաւորն անմահ՝. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն։ Այժմ և միշտ։ Արտասուելով աղերսէր. արձակեա զիս ի խաղաղութիւն. անարատ ծնողի քո բարեխօսութեամբ՝. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն։

Եւ թէ կիրակէ հանդիպի, խառնելոց Աւետարան կարդա, և Պատարագին Գործածանս ասա։

Քառասնօրեայ տղայ և Տէրն օրինադիր տնօրինաբար եկն ի տաճարն։ Եւ Սիմէոն գրգուէր գրկօքն. և յօրինաց կապից լուծումն հայցէր ի կենաց աւետարանին։

Ողորմեա Դ.Զ։

Ծերդ առեալ հրաման ի սր Հոգւոյն. ոչ տեսանել ըղձանաց մինչև տեսցէ զծնեալդ՝. Տէր աղօթից ծերոյն ողորմեա։ փառք Հօր։ Ծերդ ընկալեալ ի գիրկս իւր զծնեալդ. և հայցէր ի կենացդ ըղձանաց և արձակել ի խաղաղութիւն՝. Տէր աղօթից ծերոյն ողորմեա։ Այժմ և միշտ։ Ծերոյ այսօր ի գիրկսըն գգուեցար. և կատարեցեր ըղձափափագումն ընծայելոյ քո ի տաճարին՝. Տէր աղօթից ծերոյն ողորմեա։

Տէր յերկնից Դ.Զ։

Զօր փառաբանեն ի բարձունս՝ իմանալի զօրութիւնքն. այսօր ի տաճարն եկիր յընծայումն Քրիստոս՝. որ ընծայես զարարածս բարձրելոյ քում Հօր։ փառք Հօր։ Ի գիրկս մարմնով բար-

ձեռս եղեր ի ծերունւոյն. որ բանիւ զարարածըս
բարձեալ ունիս Քրիստոս. որ վասն մեր մար-
մնացար ի սրբոյ կուսէն: Այժմ և միշտ:
Վասն որոյ և մեք ընդ Սիմէոնի գոչեսցուք. որ ի
Հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ և կեանք.
փառք գալըստեան քո Տէր:

Առաւօտու Երգ. Արեգակն արդարութեան: 145:
Քարոզ կանոնի ասա. Խաղ Մայր որ:
Սաղմոս և գիրք Երեկոյի նախատօնակին է: 1086:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Տր՚ի տաճար ոբ իւրում. Տր յերկինս յաթոռ իւրում:

Որթիւ

Աւ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Բ. 22:

Տն մերոյ Յսի Քսի

Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նորա: 1089:
Օրհնի Աւետարանին զԱրարչականն ասա, զհոգ և օրն
բերէ:

---

Յ Ե Ր Ե Կ Ո Յ Ի

Մեղեդի ծննդեան: Քարոզ. Մայր որ. Խաղ կանոն:
Համբարձէք Դ.Կ. Այսօր ՚ի տաճարն: 1098. Պէր-
կո շարականն այլ ասա: Օրհնի Քարոզ. Մի զԱծա-
ծինն: Կեցո: Աղ. Ընկալ Տր: Հայր մեր:

---

# Կ Ի Ւ Ր Ա Կ Է

## ԱՌԱՋԱՒՈՐԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

---

### Յ Ա Ռ Ա Ւ Օ Տ Ո Ւ

Հարց Դ.Զ:

Փառաւորելով զանուն քո սուրբ. Ընդ հայրցն
մերոց: Որ յանըսկզբնական ի Հօրէ առաքեցար.
և առեր մարմին ի սրբոյ կուսէն. Ընդ հար-
ցըն մերոց: Որ չարչարեցար մարմնով վասն մեր.

եւ բարձեր զմեղս մեր ի խաչափայտն. Ած
հարցն մերոց:

Գ.. Աղ Տր̄ օրհնեցէք բարձր արարէք զնա յա-
ւիտեան: Որ ի խաչին բեւեռելով Քս՝ զմեղս կո-
խեաց. եւ զնախաստեղծն ի ծառայութէ՝ մահու
ազատեցոյց. բարձր արարէք զնա յաւիտեան:
փառք Հօր: Որ ի գերեզմանի եղաւ որպէս մարդ.
եւ ի հրեշտակաց մշտնջենաւորակից Հօր քա-
րոզեցաւ. բարձր արարէք զնա յաւիտեան:
Այժմ եւ միշտ: Որ սոսկալի հիացմամբ զպա-
հապանսն զարհուրեցոյց. եւ զտրտմութի՝ իւղա-
բերիցն փարատեցոյց. բարձր արարէք զնա յա-
ւիտեան:

Մեծացուսցէ Դ.Ձ:

Ուրախացիր Ածածին վերօրհնեալդ ի սրովբէից.
ծագելով ի քէն մեզ լոյս մայր եղեր վերածնողին.
ազգ եւ ազինք զքեզ մեծացուցանեմք: փառք
Հօր: Հիմն եղեր եկեղեցւոյ՝ խորան եղեր Հո-
գւոյն սրբոյ. ի հրեշտակաց սպասաւորեալ Գաբ-
րիէլ քեզ աւետեաց. ազգ եւ ազինք զքեզ մե-
ծացուցանեմք: Այժմ եւ միշտ: Տեսանեմք զսոս-
կալի զհրաշալի խորհուրդ յայտնեալ. ի Հոգւոյն
սրբոյ յղացեալ զԲանն Ած մարմնով ծնար. ազգ
եւ ազինք զքեզ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ.Ձ:

Անժամանակ կդ Ած անսկզբեանն եւ անճառելի.
անհաս սրովբէից. որ միշտ ընդ Հօր օրհնաբա-
նիս ի յանմարմնից. զգաստացեալ օրհնաբա-
նիչք եղաք. Որդի Աստուծոյ ողորմեա: Որ

խոնարհեցար ի Հօրէ և մարմնացար անճառապէս. ի սրբոյ ի կուսէն. համբերեցեր ընդ մեզ խաչին ի յանձն առնուլ. փոխանակ դատապարտութեան ընտ-խանեղծին. Որդի Աստուծոյ ողորմեա մեզ: Փառք Հօր: Որ բեւեռեցար ի խաչին յաղագս մերոյ յանցանաց. փրկիչ բոլորից. ահաւոր գոչմամբ ձայնին զարարածս դողացուցեր. եւ ըզլուսաւորսըն խաւարեցուցեր. Որդի Աստուծոյ ողորմեա: Այժմ և միշտ: Որ ընդ մեռեալս համարեալդ զթագաւորութիւն ընկալար. բովանդակելով մարմնով. յարուցեալ յերրորդ աւուր հրեշտակացն աւետարանութեամբ. քարոզեցար յաշակերտեալ կանանցն. Որդի Աստուծոյ ողորմեա մեզ:

Տէր յերկնից Դ.Զ:

Զանճառելի յարութիւնն հրաշացեալ հրեշտակն գուշակէր առ կանայսն ասելով. յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն: Փառք Հօր: Որ էակիցդ ես ընդ Հօր զահաւոր յարութիւն քո ի գերեզմանէն. սրբասնեալ կանայքն խնդութեամբ քարոզէին: Այժմ և միշտ: Յարեաւ Տէրն ի մեռելոց. եւ զզօրութիւնս դժոխոց խորտակեաց. եւ զարգելեալսն ի նմա կորզեաց ըսքանչելի յարութեամբն իւրով:

---

Ի տօնս պահոց առաջաւորին և պահոց ոչ լինին:

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Զ. Օրհնեալ ես: 884:

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴԶ. Որ զերկիս մանկ: 895:

## ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԴԿ. Օրհնեալ Տր Ած: 900:

## ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴԿ:

Աստուած հարցն մերոց. բարեբանեալ ես յաւիտեանս: Զի արդար ես յամենայնի. Տէր կեցո զմեզ: Առաւել փառաւորեալ. Տէր կեցո զմեզ:

Գ. Զտէր օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեանս: փառք Հօր: Տիւք և գիշերք զՏէր օրհնեցէք եւ առաւել բարձր արարէք զնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Խորայեծմ լամ զՏէր օրհնելի ՁՁմ սցէմ: Զի Աստուած. Տէր և արարիչ ամենայնի. ամ գործք օրհնեցէք. եւ բարձրացուցէք զնա յաւիտեանս:

Մեծացուսցէ ԴԿ:

Ի քեզ եմք ապաւինեալ. Քնի մայր Աստուծոյ մերոյ: փառք Հօր: Որ քան զերկինս բարձրագոյն Մարիամ. պարծանք եկեղեցւոյ. Քնի մայր Աստուծոյ մերոյ: Այժմ և միշտ: Որ քան զարեգակն պայծառագոյն Մարիամ մի դադարեր բարեխօսել վասն մեր. Քնի մայր Աստուծոյ մերոյ:

Ողորմեա ԴԿ։

Մեղայ քեզ Տէր քաւեա զիս. եւ ողորմեա ինձ Աստուած։ փառք Հօր։ Ոչխար եմ բանաւոր հօտի քո. եւ առ քեզ ապաւինիմ Հովիւ բարի. խնդրեա զիս ըզմոլորեալս. եւ ողորմեա ինձ Աստուած։ Այժմ եւ միշտ։ Ի ծովու մեղաց ալէկոծեալ եմ եւ առ քեզ աղաղակեմ Նաւապետ բարի. փրկեա զիս ի վտանգէս. եւ ողորմեա ինձ Աստուած։

Տէր յերկնից ԴԿ։

Օրհնեմք ըզքեզ մարդասէր Տէր. խնամեալ յարարածըս քո։ փառք Հօր։ Հօրդ երկնաւորի եւ մարդասիրի օրհնութիւն եւ փառըս մատուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Զի առ քեզ Տէր Տէր են աչք մեր. ի քեզ յուսացաք պահեա եւ կեցո ըզմեզ։

# ՈՒՐԲԱԹ

Յիշատակ Յովնանու մարգարէին։

Ի ԳՈՐԾՍ Օրհնութեան Առաջաւորութեան ըստ յոյնին։

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԴԿ. ԱՏ։

Որ զանճառելի ծածկապէս խորհուրդ տնօրէնութեանդ քո. մարգարէիւք տըպաւորեալ ցուցեր. Ած հարցըն մերոց։ Որ զանապական թաղումըն քո յերկրի նշանակեաց Յովնան. ի փոր կիտին. պահելով կենդանի. Ած հարցըն մերոց։ Որ ըզփրկական քո աւետարանի գուշակելով զխորհուրդ. Նինուէի քարոզէր ապաշխարութիւն. Ած հարցըն մերոց։

Դ. Գործք. Տեառն ըզՏէր օրհնեցէք. քաղ-

ցրածոյն երգով բարձր արարէք յաւիտեան: Գի-
շերք զՏէր օրհնեցէք: Որ առաքեաց ողորմութի
զմարգարէն Յովնան. քարոզել Նինուէացւոցն
ապաշխարութի. օրհնեցէք ընդ զուարթնոյս ամե-
նայն ժողովուրդք. և բարձր արարէք ըղձայրն
երկնաւոր: Փառք Հօր: Աղբերք զՏէր օրհնե-
ցէք: Որ ըմբռնեաց ի փոր կիտին ըզփախուցեալ
մարգարէն. եւ ծանեաց ըզգթութիւն անարատ
պահելով. գովեցէք ընդ սերովբէսն պաշտօնեայք
Քնի. և բարձր արարէք զէակից Բանին Հօր:
Այժմ և միշտ: Իսրայէլ զՏէր օրհնեսցէ: Որ
ըզլուռ մարգարէին ի խորոց անդնդոց. եւ փրկեաց
ի դժոխոց ապականութենէ. բարեբանեցէք ընդ
քերովբէսն քահանայք Քնի. եւ բարձր արարէք
զփառակից որ զՀօրն:

Մեծացուսցէ Գ.Կ:

Մարգարէն ի փորին կիտին աղաղակէր եւ
ասէր. Տէր մեր նախնեաց յիս եւ մի տար զիս
հըղօրիս այս: Փառք Հօր: Զայն բարձի ի խորոց
անդընդոց առ Աստուած ողորմած. Եւ ձայն
աղաղակի իմոյ հասցէ ի լսելիս քո Տէր: Այժմ
և միշտ: Բարեխօսութեամբ որ Աստուածածնի եւ
միշտ կուսի անդամ չեմ. Տէր մեր փրկեա
զիս ի յորոգայթէ յանհերեւոյթ թշնամւոյն:

Ողորմեա Գ.Կ:

Ողորմութեանց բաշխող Քրիստոս որ գթա-
ցար ի քո յարարածս. գթա յիս ի մեղաւորս
որ ողորմած ես յամենայնի: Փառք Հօր: Որ
ի բարկութեան զողորմութիւն յիշեցեր առ քո

ստեղծուածս. յիշեա՛ զիս ընդ մեղաւորս. որ ողոր-մածդ ես յամենայնի: Այժմ և միշտ: Որ ի ժամանակեան մերձեալ մահուն փրկեցեր զ-Նինուէացիսն. փրկեա՛ զմեզ ի հրոյն յաւիտենից. որ ողորմածդ ես յամենայնի:

## ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Դ.Կ:

Կանխեալ Յովհաննու աւետելով յանմահու-թեանց պարգեւօքն. Նինուէի մահաբեր քարոզ: Յահեղ բարբառոյ մարգարէին զար-հուրեալ թագաւորին. խոնարհեալ զիջանէր ի սուգ: Պահօք պատուիրէր ժողովրդեանն պա-ղատիլ առ Տէր. խնդրելով զթողութիւն մեղաց: Ողագեալ առաւօտ խաղաղութեն յանմահապար Տեառնէն. և զմահու փարատեաց զերկիւղ: Աստի օրհնութիւն նոր երգէին քեզ թագաւոր անմահ. փրկողիդ ի ձեռաց մահու: Ընդ որս և զփրկեալքըս պատուական արեամբդ քո սրբոյ. փրկեա՛ Քրիստոս ի հրոյն յաւիտենից: Յովնան մարգարէն աղաղակէր Նինուէ ա-ցուցն. ահա երեք աւուրք և այլ ոչ եւս իցէ Նինուէ: Զայնիւ հառաչմամբ պաղատէին առ քեզ գթած. փրկեա՛ զմեզ ի մահաբերթ հրաւիրմանէս եւկեցո: Փառք Հօր: Բացաւ ընդ լուսոյ առաւօտուն ողորմութեան քո դուռն եւ լուար ձայնի աղաղակոց անմեղաց բիւրաւորաց փրկելով ի մահուանէն: Այժմ և միշտ: Եւ մեք ընդ նոսին հայցեմք ի քէն փրկիչ ո-ղորմած. փրկեա՛ զմեզ ի սպառնալեաց գեհե-նոյն. եւ քեզ փառք յաւիտեանս ամէն:

Սանխան Դ.Ձ:

Որ առաքեցեր զՅովնան. քարոզել մեծի քաղաքին Նինուէի՝ յայտնելով զառատ քո զմարդասիրութիւնդ. ընկալ եւ զիմս ապաշխարութիւնս: Փառք Հօր: Կլեալ ի կիտէն. երեքօրեայ թաղմամբ պահելով կենդանի՝ յօրինակ թաղման քո եւ յարութեանն. կեցո եւ զիս զմեղօք ըմբռնեալս: Այժմ եւ միշտ: Որ լուար ձայնի աղօթից. երկոտասան բիւրուց եւ մանկանց տղայոց. ներող գթած եւ երկայնամիտ. լուր այժմ եւ ինձ որ կարդամ առ քեզ:

ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձի ԲԿ:

Ապաշխարութեամբ ապրեցաւ քաղաքն Նինուէացւոց. ի լսել ձայնի մարգարէին եղեւ թողութիւն մեղաց: Փառք Հօր: Իսկ համբաւ բանին առ թագաւորն. պատուէր տայր ժողովրդեանն. լսել ձայնի մարգարէին. եղեւ թողութիւն մեղաց: Այժմ եւ միշտ: Ի բերանոց մանկանց տղայոց. զարքայն երկնից յօգնութիւն կոչէին. ի լսել ձայնի մարգարէին եղեւ թողութիւն մեղաց:

# Շ Ա Բ Ա Թ

## Ս. Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսի եւ չորեքտասան զինուորացն:

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԱԿ:

Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ. յաղթող սպառազէն եւ քաջ նահա-

տակ. երագահաս օ՛րըդ Սարգի՛ս՝ շնո՛րհաց օթեւա՛ն՝. բարեխօս լե՛ր առ Քրիստոս վասն անձա՛նց մե՛րոց: Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ եւ մենամարտիկ՝. սիրով անմահին խաչեալ յաշխարհի. երագահաս օ՛րըդ Սարգիս խաչիւ պըսակեալ՝. բարեխօս լե՛ր առ Քրիստոս վն անձանց մերոց: Արեգական արդարութեն մեծ կարապետ պայծառ արշալուսակ. ցոլացեալ յարեւմըտից ի յելս արեւու՝. երագահաս սուրբըդ Սարգիս անշէջ ճառագայթ՝. բարեխօս լե՛ր առ Քրիստոս վն անձանց մերոց: Աւետաւոր Հայոց մեծաց դիմեալ ի մէջ երկրի ի Հիւսիսոյ. հոգւմբն հարաւոյ ի դաշտ ծաղկածին. երագահաս որըդ Սարգիս տունկ անմահութեն. բարեխօս լե՛ր առ Քրիստոս վն անձանց մերոց: Առաքելական զինու վառեալ՝ մըտեր ի մեծ հանդէս քաջութեն՝. Մարտիրոս որդւովդ ի Պարս վերկայեալ՝. երագահաս սուրբըդ Սարգիս եւ Մարտիրոս մեծ պըսակաւորք՝. բարեխօս լերուք առ Քրիստոս վն անձանց մերոց: Գերագոյն պատիւ առեր ի բարձրելոյն Տեառնէն բարեխօս՝. կատարիչ խնդրուածաց լսող աղօթից՝. երագահաս սուրբըդ Սարգիս գերեաց գերեհան՝. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց: Յաւալից կենաց մարդկան զօրեղ բըժիշկ սրբիչ ախտամասանց. նեղելոց դիւրիչ վշտաց մխիթար. երագահաս սուրբըդ Սարգիս դիւաց հալածիչ՝. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց: Գեղեցիկ անուն բարի քաղցր և անուշ պըտուղ շըթանց հաւատացելոց. ի գիշերի եւ ի տուընջեան յուսով կոչեցեալ՝. ընդ

ամ տեղիս յիշեալ եւ փառաւորեալ. Երագահաս սուրբքդ Սարգիս գերեաց զպատիժ. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց: Սաղաւարտ յուսոյ անմահ Բանին եդեալ ի գլուխ մերոյ իշխանին. սուսեր աջոյ վահան հաւատոյ՝ քնասէր զօրաց եւ զօրապետաց՝. Երագահաս սուրբքդ Սարգիս ամուր պարիսպ ընտիր հեծելոց՝. բարեխօս լեր առ Քրիստոս վն անձանց մերոց:

ՅՈՎ. Էակից Բանն ի Հօրէ իջեալ յերկնից ընկենի ձայնիդ. ուստի Գաբրիէլ վերառաքէր զկոյսն Մարիամ առ ամլութե յղացեալն ընքեղ յորդվոյնի. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց: Ընդ ժամանել ձայնի ողջունին Մարիամու առ Եղիսաբեթ. խայտացեր ձայնդ ընդ առաջ Բանին Աստուծոյ՝ յորովայնէ ամլոյն երկրպագելով. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց: Թագաւորըն բոլորից՝ պարածածկեալ յորդանդի կուսին. զոր ծառայդ հաւատարիմ տեսեալ Հոգւովն սրբով և բերանով մոր քո օրհնաբանէիր. առ Քն բարեխօսեա վն անձանց մերոց:

Ը.Ո.. Ի մաքրագործ Հոգւոյն անօթ ընտրեալ եւ ձիւնափայլ. Թագաւորք երկրի՝ իշխանք աշխարհի. անպակաս գանձուց բաշխող Յակոբ ալփեան Յուդա յակոբեան. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Երեքսրբեան մի տէրութեան խորհուրդ կամաց եւ հազարապետք փողոց հնչմունք բարբառք ամենեանց. ընդ ամենայն երկիր սուրբքդ Շմաւոն եւ Մատաթիա. բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց: Բանին կենաց կանոնս քարոզ եւ

աւետարանիչ. երգ փրկութեան հնչումն ահաւոր ազգի մարդկան պարծանք սուրբըդ Մատթէոս. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Ա.ՏՈՎ: Աղաչեմք զքեզ Տէր բարեխօսութեամբ սրբոց Առաքելոց. որք նահատակեցան ի ճակատամարտ պատերազմի. յաղթող գտան ընդդէմ թշնամւոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Որք առին ըզսպառազինութիւն զզրահս հաւատոյ սրբութեան իւրեանց. եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փրկութեան ըզնշան խաչին. սուսեր ընդ մէջ ածեալ ըզճշմարիտ բանն Հոգւոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանոյդ քում սրբոյ. եւ բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իւրեանց. ի տեղւոջ հեղման սուրբ արեան իւրեանց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ:

ՀԳ.· Որ առաքեցար ի Հօրէ Հոգիդ անեղ եւ համագոյ. աղաչանօք տնօրինաբար քում Առաքելոցն. լինել մխիթարիչ սուրբ առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա: Որ իջեր տիրաբար յերկնից սաստիկ հողմոյ նման Ա՛Ծ յայտնապէս. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի գլուխս առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա: Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն. որք արբուցին տրտմեցելոց որդւոց Ադամայ ըզբաժակն ուրախարար յայտնոյն Եդեմայ. աղաչեմք զքեզ ողորմեա:

ՀՆ.· Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութի անձեռնլուլ տիեզերաց ի դատաստան ահաւոր. յայնժամ

աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըղձեր ըղձըն-
ջեցեալսն. եւ հանգո՛ ընդ սուրբս քո: Յոր-
ժամ ճառագայթք Ածութեանըդ փայլէն ի յա-
րեւելից. եւ դըպրուիլք հրաշեցըն բանին յայնմ
աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըղձեր ըղձըն-
ջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո: Զարհու-
րեալ դողան արարածք ի ձայնէ սոսկալագոյն փո-
ղոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ
կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան.
յայնմ աւուր յահեղին մինչեւ Տէր եւ ըղձեր
ըղձընջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո:

ԱՕ. Անսկիզբն Ած անճառելի աներաւ զօրութի.
որ յիսկզբանց յաւիտենից խնամարկեցեր զոր-
դիս Ադամայ. գերագոյն այսօր շնորհիւ փայլեալ
ցուցեր ծընընդեամբ զմայր միածնիդ քո ընտրե-
լոյ. աղաչանօք սորա խընայեա ի մեզ: Որ յա-
նէից բանիւ գոյացուցեր զաշխարհս ամենայն. այ-
սօր մարդասիրեալ տնօրինաբար ի յԱննայէ ար-
կեր հիմունս նորոյ աշխարհի. աղաչանօք սորա խը-
նայեա ի մեզ: Ի յամուլ երկրէ այսօր բուսաւ մեզ
բարերեր բոյսն բարի. շուշան հովտաց ծաղկեն
դաշտաց. միամայրն Մարիամ արմատ ընկոյն ան-
մահութեան. աղաչանօք սորա խընայեա ի մեզ:

ԽԳ. Որ իսկզբանէ իմաստութբ հաստատեցեր զե-
կեղեցի քո իմաստութբ. զոր նախանըկար տե-
սութբ նըշանակեաց Մովսէս խորանաւն երկնահան-
գոյն ի Սինա լերին. լուսաւորեալ փառօքն Աստու-
ծոյ: Որ ըղխորհուրդ անապական տնօրէնութեանդ
քո ի սըրբոյ կուսէն. տըպաւորեալ տապանակն

ծայրին ուխտին կատարանաց Քրիստոսիդ Աստուծոյ. փառաց անեղին տեղի հանգստեան։ Փառք Քեզ։

Որ ի կեանս վերագոյնն բնութեան դարձմամբ Յորդանանու օրինակեցեր. և ընդրութեան մաքրու և զմոլեաց կործանմամբն Երիքովի տապանակաւ խաչին հրաշագործեալ նոր Յեսուէլի. օրհնութիւն քեզ Տէր երգեսցեն մանկունք։

Այժմ և միշտ։ Խաչաչարչար որ դիտապետ նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի. առաւել պայծառ ի գլուխըն Գագկայ ի գագաթան տեղւոյն օրհնեալ սրբոյն Աստուածայ. երագահաս սուրբըդ Սարգիս բանգնաց կործանիչ. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ձայն գկ. Օրհնութիւնք։ 365։

ՄԱՆԿՈՒՆՔ և Ձայնք. ԱՁ. Օրհնաւորն Քսի։ 386։

---

# ԿԻՒՐԱԿԷ

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Ձայն գկ։

Անըսկիզբըն Բանդ որ յանձառ աթոռ նըստիս զքեզ տեսաք ի խաչին. վասն արարածոց քոց փրկութեան. Աստուած հարցըն մերոց։ Զքեզ որ անքննին ես յէութեանդ. ըսպասաւորին ապականեալ. և զինուորըն գեղարդեամբըն խոցեալ զանարատ կողն քո ի խաչին. Աստուած հարցըն մերոց։ Որ թագաւորդ ես անմահ զմեռանիլ յանձն առեր. և ընթաղումն Երեքօրեայ. վասն արարածոց քոց փրկութեան. Աստուած հարցըն մերոց։

Գ․ Իջեր՝ օրհնեցէք Առաւել բարձր ա-րարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Օ թագա-ւորըն Մեսիա և ըզխաչեալն ի մէջ ի յանօրինաց․ Եւ ըզլեղի զառնութեան ճաշակեալ վասըն մեր․ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Անարատ գառն Այ պատարագեալ․ Եւ ըզխոցումըն գեղարդեամբն առեալ ի կողն․ և ըզփրկական արիւնն եհեղ ի վն ամ տիեզերաց․ առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ․Կ։

Ածածին պայծառ քան զերկինս՝ որ ի մէջ ծա-գեցեր ըզլոյսըն մեծ և գերազանց․ որով խաւարն անգիտութեան հալածեցաւ․ սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք․ Եւ հոգևոր երգով մեծա-ցուցանեմք։ փառք Հօր։ Ամպ թեթև և լու-սաւոր՝ որ զանձրեւըն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովէն․ զոր հոսեցեր ի յերկիր ծա-րաւուտ․ սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք․ Եւ հոգևոր երգով մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Պարտէզ փակեալ ածատունկ Եդեմ․ որ և ծառըն կենաց ի մէջ դրախտի քո ի հօգւոյն տընկեալ․ անմահական պըտղովն ելից ըզտիեզերս․ սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք․ Եւ հո-գևոր երգով մեծացուցանեմք։

Ողորմեա Դ․Կ։

Վասըն մերոյ փրկութեան խոնարհեցար ի յերկ-նից․ և ի կուսէն մարմնացար․ Աստուած Բանդ ողորմեա մեզ։ փառք Հօր։ Ճըշ-մարտապէս մարմնացար և ընդ մարդկան շըրջե-

ցար կատարեցեր զամենայն. և օրհնեցեր յա-
ռաջին անիծիցն. Աստուածդ հարցն մերոց ողոր-
մեա մեզ: Այժմ և միշտ: Քրիստոս Որդի Աս-
տուծոյ ի մեռելոց յարուցեալ. և ի … յերկի-
նըս համբարձար. Աստուածդ հարցն մերոց ողոր-
մեա մեզ:

Տէր յերկնից Դ.Կ:

Փառք յարութեանն քո Տէր: Խաչիւ ի յանձն
առեր զ…թած. եւ ըզմահ ճաշակեցեր. զամե-
նեսեան յարուցեր զհաւատացեալսն ի քեզ. որք
աղաղակէին ասելով. փառք յարութեանն քո
Տէր: Մեք պատուեցաք ի խաչելութեանն քո
Տէր. եւ գերեզմանք բացան. զինուորք զարհուրե-
ցան. և մեռեալք յարուցեալ աղաղակէին ասե-
լով. փառք յարութեանն քո Տէր:

Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ահեղակերպ
փայլմամբ. պատմեցաւ … լեզուք. եւ երկիր
սասանեցաւ. ի յահեղ բարբառոյ մեծ կարա-
պետին: Փառք Հօր: Մի հրեշտակն ի յերկնից
ի գերեզմանին Տն. հռչակեցուցանէր. ըզ-
ձայն ահեղ գոչման փողոյն. ի վերայ գե-
րեզմանին: Այժմ և միշտ: Ընդ եկեալ սուրբ
կանանցն ի խնդրել ըզմարմինն Տեառն. եւ լու-
եալ ի հրեշտակէն. եթէ յարեաւ ի մե-
ռելոց. կենդանին յանիրաւենից:

---

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Ատովմեանց զօրավարաց:

ՅԱՌԱՒՕՏՍ Հարց Գ.Կ. Օրհնութիւնք: 365:

Մանկունք և Համբարձէք Ը.Կ:

Աղաչեմք զքեզ Տէր բարեխօսութեամբ սրբոց Ատովմանց. որք նահատակեցան ի ճակատամարտ պատերազմի. յաղթող գտան ընդդէմ թշնամւոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: փառք Հօր: Որք առին զսպառազինութիւն զզրահս հաւատոյ սրբոյ իւրեանց. եւ ընկալան ի գլուխ սաղաւարտ փրկութեան զնշան խաչին. սուսեր ընդ մէջ ածեալ զճշմարիտ սուրբ Հոգին. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Այժմ և միշտ: Որք մաքրեցին զանձինս իւրեանց տաճար անուանելոց քում սրբոյ. եւ բուրեցին հոտ անուշութեան զաղօթս իւրեանց. ի տեղւոջ հեղման սրբոյ արեան իւրեանց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ:

# ԵՐԵՔՇԱԲԹԻ

## Ա. Սուքիասեանց քաջացն:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Ձ. Որք զտանջանս: 360:

Մանկունք և Համբարձէք Բ.Ձ:

Սուրբգրութեամբ տեղեկացեալ. հարցանելով զմարգարէն. ով ելցէ ի լեառն Տեառն. կամ ով կեցցէ ի տեղւոջ սրբութեան: Նահատակք զգուշացան. լեառն գիտակ եւ բնակարան. վկայեցն որոց առեալ զողորմութիւն յԱստուծոյ փրկչէն իւրեանց: Որք բարձին զխաչս իւրեանց. խաչեցելոյն խաչակցեցան. դիմելով յօժարութեամբ առ սատանի չար որպէս զգառինս ի մէջ գայլոց: փառք Հօր: Նոյն եւ զինքն իսկ տեսանեմք. Պրոբատիկէ աւազանին. յորում դը-

նին բազմութիւնք անպատմելեաց. որ կին ունելով վերստին ջուրցն յուղման: Այժմ և միշտ: Աստանօր նորոգեցաւ. մեզ աւազանին Սելովմայ. ի բանալ զաչըս սըրտից. որ և ի մերժել զախտս հոգւոց եւ մարմնոց:

## ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Ձ. Օրհնեմք զքեզ: 470:

## ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ս. Ոսկեանց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. Յուսացեալքն: 367:

Մանկունս ի Համբարձի Գ.Ձ.:

Որք արժանաւորեցայք կոչել յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի. եւ ածայինն հրով մաքրուեալ ոսկի փորձեալ գըտայք ի բնակարանըս հրեշտակաց. ով երանելի սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց: Փառք Հօր:

Որք անհրաժեշտ դաւանութիւն քարոզեցէք ըզՔս ի դրունըս Թագուհւոյն. մըկըրտելով ըզքաջ նահատակսն. ի յակունսն Եփրատայ ի ծաղկազարդ վայելչութիւն. ով երանելիք սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց: Այժմ և միշտ: Որք անպարտելի մնացէք ի հրապուրանաց որդւոյն Թագաւորին. չարչարեալք վասն Քրիստոսի. արագապէս խողխողեցայք պատարագ ընդունելի. ով երանելիք սուրբ Ոսկեանք. բարեխօսեցէք առ Տր մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց:

## Ո Ւ Ր Բ Ա Թ

Պահոց:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.կ. Ընդ Աստուած: 473:

## Շ Ա Բ Ա Թ

Ա. Սահակայ Պարթեւի Հայոց հայրապետին:

Ի ԳԻՇԵՐԻ Օրհ. Դ.կ. Արմատ ճշմարիտ: 524: կամ ի Թարգմանչացն ——— Ա.կ. Որք զարդարեն: 565:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Ղեւոնդեանցն ——— Ա.կ. Որ զլոյս անծայրին: 577: կամ ի Թարգմանչացն ——— Դ.Զ. Սքանչելագործ Ա.ծ. 570:

Մանկանց ի Համբարձէ Դ.կ. Որ յարմատոց հարցն սրբոց: 572:

## Կ Ի Ւ Ր Ա Կ Է

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Դ.կ.

Ո՛ր յահեղակերպ աթոռ նըստիս և ընդ Հօր ես յէութեան. խոնարհեցար յերկնից վասն մերոյ փրկութեան. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Աստի սերովբէքն ի խոնարհ ունելով ընդդէմն յարփիահրաշ փառաց քոց Քրիստոս. իսկ Յուդայի լրբութիւն մերձեալ ի համբոյր նշանակ և առիթ մատնութեան. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Որ ի բարձրութիւնս երկնից էիր ի սկզբանէ Հօր և ընդ Հոգւոյն. և ի դատուց Եբրայեցւոց դըպրաց և փարիսեցւոց բարձար ի խաչ վասն մեր. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց:

Գ. ԱզՏր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեանս։ փառք Հօր։ Համբարձման Ած օրհնութիւն և զօրք երկնից երգէին. ով է սա թագաւոր փառաց. բարձր արարէք զնա յաւիտեանս։ Այժմ և միշտ։ Սա է նա որ ի հովանաւոր և ի լուսեղէն ամպոյն. ձայն եղև դա է Որդի իմ սիրելի. բարձր արարէք զնա յաւիտեանս։

Մեծացուսցէ Գ.Կ.

Աստուածածին մայր լուսոյ. որեգական արդարութեան արեւելք. որ ի խաւար աշխարհի ծագեցեր զլոյսն զերազանց. օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։ փառք Հօր։ Ամպ թեթեւ լուսաւոր անընդունակ խոնաւութեան. որ զցօղըն կենաց ի յամաքեալ բնութիւս ցօղեր. օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Աներովբէ հողեղէն եւ մարմնաւոր քերովբէ. որ զանհասն ի նոցունց յորովայնի քում կրեցեր. օրհնութեամբ զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք։

Ողորմեա Գ.Կ.

Որ վասն մեր յերկնից խոնարհեցար. նորոգել զաղտեղեալս. ծնեալ և ի նա փրկիչ. ողորմութեամբ քո կեցո։ փառք Հօր։ Որ ըստ հողեղէն բնութեան մարդկան զգեցար մարմին. զվիրաւորեալս մեղօք. զանձն իմ մխիթարեա. ողորմութեամբ քո կեցո։ Այժմ և միշտ։ Որ զգաստակնիք մահու լուծեր զնախաստեղծին. զանապարտեալս մեղօք. զհոգիս իմ նորոգեա. ողորմութեամբ քո կեցո։

Տէր յերկնից Դ.կ ։

Փառըք Քրիստոսի ամենազօր յարութեանն ։ Քրիստոսի ամենազօր յարութեանն երկրպագեն քերովբէքն. և վեցթեւեան սերովբէքըն հոգեւորական հընչմամբ երգեն ասելով. փառըք Քրիստոսի ամենազօր յարութեանն ։ Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային որ կանայքն. տեսանելով ըզհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ ի վէմ վիմին գոչէր ասելով. փառըք Քրիստոսի ամենազօր յարութեանն ։ Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն. և վերըստին նորոգմամբ յաւիտենական կենացն եղաք ժառանգորդք. փառըք Քրիստոսի ամենազօր յարութեանն ։

Իւղաբերից կանանցն եկեալ. ի սուրբ գերեզմանն. երեւեցաւ զահաւոր ըզհրեշտակապետն ըզձայնըն լուեալ. ուրախ լերուք զխաչեցեալըն խընդրողք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն ։ Փառք Հօր ։ Արփիահրաշն լոյս մեծ ծագեալ. ի սուրբ գերեզմանն. երեւեցաւ զարհուրեալ պահապանացն երկիւղալից ըմբռնեցին. այլ քարոզ հրեշտակապետին որ գոչէր առ կանայսն. ուրախ լերուք զխաչեցեալըն խընդրողք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն ։ Այժմ և միշտ ։ Ընթացեալ պետրոս եւ Յովհաննէս. ի սուրբ գերեզմանն. երեւեցաւ հանդիպեալ վարշամակին և սուրբ կտաւուցն. այլ քարոզ հրեշտակապետին որ գոչէր առ նոսա. ուրախ լերուք զխաչեցեալըն խընդրողք յարեաւ Քրիստոս անմահ թագաւորն ։

# ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Ս. Պիոնի քահանային և Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսին. և Կիւրղի սարկաւագին. և Աբդեայ եպիսկոպոսին և Որմզդանայ և Սայենի և Բենիամինի սարկաւագին։

ՅԱՌԱՒՕՏՍՆ Հարցն ԴԶ. Սուրբ ես Տէր ։ 369 ։

# ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Ս. Ղեւոնդեանց քահանայից։

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԴԶ։

Որ յառաջագոյն սահմանեցեր ըզփրկութիւն հայաստանեայց. շնորհելով մեզ հրաւիրակ զե-րանելին ըզսուրբ Գրիգոր՝. օրհնեմք ըզքեզ ընդ զօրս անմարմնականացն՝ Հայր ամենակալ։ Որ նորին դաւանութիւն խաչակից քեզ ընտրեցեր ըզդասս քահանայիցն. շնորհաբաշխ ծնութիւն կարգեալ հոգւով եւ վարդապետս՝. գովեմք ըզքեզ ընդ զօրս անմարմնականացն՝ Որդի՛դ միածին։ Որ մաքրութիւն աւազանին և փրկական հաղոր-դութիւն՝. ըզզինուորեալսն անուանեցեր քո. պայ-ծառացեալ արեամբն իւրեանց՝ յաղթող մարտի-րոսանեցեր՝. բարեբանեմք ըզքեզ ընդ զօրս ան-մարմնականացն Հոգի՛դ ճշմարիտ։

† Օրհնեմք ըզքեզ շնորհատու բարեաց. որ ընտրեցեր յորովայնէ ըզհրաւիրեալսն իսկըզբա-նէ փառաց քոց հաղորդս՝ խնայեա՛ ի մեզ մաղթանօք սոցա։ Սահակայ և Յովսեփայ սուրբ հայրապետացն. Ղեւոնդեայ սուրբ վարդապետըն

Հրամանաւ լուսաւորեալ զարփիականն քաջ ըստառաջէնան․ խնամեա ի մեզ մաղթանօք սոցա։

Յայծառացան այսօր սուրբ եկեղեցիք․ լուսաւորչօք կենդանեօք․ որք ի գործոց իւրեանց ծաւալեցին ընդլայն անդաստանս․ հայելի աշխարհաց ընդ Տէր սիրողաց։ Գաւազանայք պատուեալք օծմամբ սուրբ Հոգւոյն․ նախակարգեալք յառաջնորդութիւն փափագողաց վերնոյ յարկին և անպատմելի պատրաստեալ բարեացն․ այսօր փութացան եղանել ի նոյն։ Զուարթնոց երկնից եղեւ ցնծութիւն․ տեսանելով զարեամբ զարդարեալսն կոչելով յուրախութիւն ծայրին և լուսաւոր սուրբ առագաստին․ պատրաստեալ նոցա զյաղթանակ մարտին։ Ամբարշտաց և անօրէնաց մատուցան ձեռօք․ նուիրակաւն պատարագ ընծայից թագաւորին երկնաւորի․ որ հրաւիրեաց արեամբն իւրով լինել կցորդ խաչին սեղանոյ․ կամակար մտօք զինքեան սիրողաց։ Աշտարակ ընծայ Հօր ազգի մարդկան Քրիստոս Աստուած․ զեկեղեցի քո հաստատեա խնդրուածովք նահատակաց ի քէն ընտրելոց․ բարերար փրկիչ միայն մարդասէր։ Որ խոստացար լինել ընդ մեզ մինչ ի կատարած․ անանջրպետ [illegible] ի քէն վարժողաց․ և այցելու մեղաւորաց որսացելոց ի բանսարկուէն ի խաւարային նորա կամս․ քաղցրութեամբ քո Տէր խնամեա ի մեզ։ Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց․ զեկեղեցւոյ քո ցրուեալ մանկունս ժողովեա յուրախութի․ ընդվարատեալս

տրտմութիւն և արտասուաց յորդահոսս բղխմամբ. փրկութեան մերոյ պարգևաց բաշխող: Աղօթանօք սոցա գթասցիս ի մեզ. անոխակալդ և ամենառատ. որ ընտրեցեր ի մարդկանէ չարչարանաց քոց զուգակիցս և գերագունից բարեաց ժառանգորդս. օրհնութիւն քեզ Տէր երգեսցեն մանկունք:

ՑՈԿ. Այսօր ցնծան հրեշտակք ի յերկինս. յիշատակաւ հողանիւթ հրեշտակիդ. որք համագասեալք ձայնիւն բարբառոյ երգեն զօրհնութիւնս Հօր ի բարձունս: Այսօր ցնծան հոգիք արդարոց. նահապետաց և մարգարէից. ձայնակից լինել մեծին ի ծնընդոց կանանց. երգեն զօրհնութիւնս Որդւոյն միածնի: Այսօր ցնծան դասք առաքելոց. տօնախմբելով զյիշատակ մեծի մկրտչին. որ առաքելոցն է սկիզբն և մարգարէից լրումն. ընդ նոսին և մեք բղխեսցուք ի Հօրէ և յՈրդւոյ երգեմք ըզփառս ի բարձունս:

ԳՐԻ. Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող. որ յառաջագիտութեամբ ըզփրկութիւն Հայաստանեայց ըսկըզբնաւորեալ. ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկեա կեցո ըզմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն: Հրաշալի զարմացմամբ երանելին սր Գրիգոր. զանտանելի ըզչարչարանս ի յանձն էառ. և երիւք հնգօք ամօք ի մէջ թունաւորացն բնակէր անդընդային տանջանօքն ի վիրապին. վասն որոյ բարեխօսութեամբ սորա

փրկիչ կեցո զմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն: Հրաշագործ քո բանիւդ և մեծ ողորմութեամբդ. ելեալ բժշկէր զհարուածեալսն ի դիւահարս սատանիցն. երկրպագուս առնելով զամենասուրբ Երրորդութեանդ. վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո զմեզ. այժմ և ի քո յահաւոր գալստեանն:

ԽԴ.Ն. Որ հրաւիրեցեր զյառաջագոյն ընտրեալսն ի սկզբանէ աշխարհի. ի հարսանիսն անմահական. կոչելով յուրախութիւն ընդ բազմելոցն յառագաստին զաստուածազգեացն. աղաչանօք սորա կեցո զմեզ փառաց թագաւոր: Որ յաթոռս քերովբէականս վերանստեալ հանգչէիր Որդի Աստուծոյ. հաճեցար խոնարհութեամբ բառնալ ի գիրկս յորդւոյ Ադամայ. աղաչանօք սորա կեցո զմեզ փառաց թագաւոր: Որ ըզբաժակն անմահութեան սիրոյ քո արբեալ երանելին Իգնատիոս. որպէս ցորեան աստուածային գազանաց մանրեալ ժանեօք հաց մի գտաւ Աստուծոյ. աղաչանօք սորա կեցո զմեզ փառաց թագաւոր:

ՄՐԳ. Այսօր ժողովեցարուք որք ի հեթանոսաց. հրաւիրեալք յառաջագոյն մարգարէիւք. գալ առ Աստուածն Աբրահամու յերկրպագութիւն. օրհնեցէք ըզՏէր յերկինս ընդ երկնաւորացն: Այսօր որդիք դստերք վերին Սիովնի. շինեալք ի վէմ հիման առաքելոց և մարգարէից. որք և ըմպէք զառատաբուղխ վտակ Հոգւոյն ի յաղբերացն խաբայելի յեկեղեցիս սրբոց. օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր: Այսօր վերին զօրացըն հա-

ձայնիւք. զոր նահապետացն եւ մարգարէիցն.
երգեն Ա.Յ զերգս հոգեւորս. ի յիշատակի
սորա երգեմք եւ մեք ընդ փառս ի բարձունս:

Հգ. Առաքելոյ աղաւնոյ. իջանելովդ մեծաձայն
հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ
փայլման հրաշէկեալ անկիզելի զլեզուակերպութեան.
մինչեւ նստէին ի վերայ վերնատանն: Անճառ-
թական աղաւնի. անքննելի որ քննէ զխորս Աս-
տուծոյ. զոր առաքեալ ի Հօրէ պատմէ զհաճոյս եւ ըզ-
միասնակամ գալուստն. զոր քարոզեցին հա-
մագոյական: Օրհնութիւն ի բարձունս. եղելին ի
Հօրէ եւ յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ. որով առա-
քեալքն արբեցան անմահական բաժակաւն.
եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Հն. Ժամանակ դարձի իմոյ եհաս ի յերկիր.
արդ Տէր ընկալ ըզծառայս քո. եւ Հոգի քո բարի
առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ: Խոս-
տովանող հոգիս. որ ելից զունայնութիւն ըն-
թացս աշխարհի. արդ Տէր ընկալ ըզծառայս քո. եւ
Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր
ուղիղ: Ի վերջնումն աւուր մեծի. յորժամ անձնես
զպսակելութի քոյոց սիրողաց. յայնժամ խնայեա
ի ծառայս քո. եւ Հոգի քո բարի առաջնորդես-
ցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Մն.. Ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:
Որ ըզԲանն Աստուած յարգանդի կրեցեր սրբու-
հի անարատ. եւ անճառապէս ծնար ըզվերա-
ձգօղն երկնից. ըզքեզ օրհնութեամբ մեծացու-
ցանեմք: Որ էիր լուսոյն արժանի եղեր բանաւոր

ի քո գիրկս. եւ արեգականն արդարութեան եղեր արեւելք. ընդ քեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

ԽԶ. Որ հաստատեցեր բանիւ զեկեղեցի քո Քրիստոս ի վերայ առաքելական վիմի. երգել ի սմա զերգըս հոգեւորս։ Կանգնեալ ի սմա սեղան սրբութեան, բաշխէ զմարմին իւր եւ զարիւն. եւ տայ ի սմանէ մեզ նորոգումն ի թողութիւն մեղաց մերոց։ Փառք Հօր։ Խնկեալ Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ երեւմամբ. ի վերայ մարմնոյ եւ արեանցն Տեառն. ի բժշկութիւն հոգւոց մերոց։

Այժմ եւ միշտ։ Որ ըզմերկացեալ լոյսն յանձառ լուսոյն. ըզսեւացեալսն ի գոյն այծեաց. որոշելով ի նոր հօտէն ընտրեալ ըզքոյին հաւաքեցեր. խնայեա ի մեզ մաղթանօք սրբոց։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ.Կ։

Որ անդադար փառաբանիս յանմարմնոցն. քահանայք որ լուսածնունդ զաւակօք. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։ Որ ի շառաւիղէ քոց սրբոց քարոզչացն. պսակեալ ցուցեր զհայաստան աշխարհս. ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։ Որք արբին ըզհուրըն կենդանի ընդ հրաբորբոքեալսն ի վերնատանն. յորդաբուղխ բանիւ շնորհաց լուսաւորեցին մանկանցն. արեամբ մըկըրտելով ընդ քեզ. Աստուած հարցըն մերոց։

Գ.. Աղ Տէր Ամենայն ազգ եւ ազինք. ամենայն գործք ԱՅ. զթագաւորն ամենեցուն. օրհնեցէք

զՀայրն երկնաւոր. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Փառք Հօր: Որ հալածեաց զխաւար մեգաց ի տանէ Թորգոմական. զհանդիսադիրն ամենեցուն գովեցէք զԱստուածորդին. Եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Որ պսակեաց ըզՀայաստան նորասքանչ լուսաւորչօք. բարեբանեցէք ըզսուրբ Հոգին որդիք լուսոյ նոր Իսրայէլ. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեանս:

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ Գ.Կ:

Ազգեղ Աստուածածին աղբիւր անըսպառ: **1011**:

ՈՂՈՐՄԵԱ Գ.Կ:

Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ. պայծառացուցեր որ զեկեղեցի հեղմամբ արեան սրբոցն. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարերար. Եւ ողորմեա քո արարածոց: Փառք Հօր: Պանծալի որ զաւակօք հովուեցըն զեարթնուք. հրով Հոգւոյն շիջուցին ըզբոցն ըզկրակապաշտ Պարսից. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարերար. Եւ ողորմեա քո արարածոց: Այժմ և միշտ: Պարթեւական տանն ողջոյն յառաջագոյն աղբերցութիւն. զհաւատոյ որդիս սուրբըն Գրիգորի պսակազարդ տեսեալ. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ պարգեւատու բարերար. Եւ ողորմեա քո արարածոց:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Գ.Կ:

Երկնային հրաւիրակօք կոչեցեալք խնդրանէք. փրկական բանին պատմօղք եւ պարծանք Հայաստանեայց. դասակցեալք ընդ զօրս անմարմնականաց: Ո՛վ զիլիշխայն անդընդային նըմանեալ փա-

բաւոնի․ զգազանացեալ ըղթագաւորըն գործակ-
ցօք չարին սաղեալ․ զայդթականն երգեն զօր-
հնութիւն Տեառն։ Փառք Հօր։ Հաւատոյ զինուք
վառեալ մամիկոնեան զօրավարին․ յաշխարհօրէն
պատերազմին անօրինն եկեղեցւոյ․ անձանցն
եղեւ ժառանգորդ բարեաց։ Այժմ և միշտ։ Ախ-
տակցարար արտասուեսցուք զուրացօղըն հաւա-
տոյ․ ընդ սըրբոց հայրապետացն երգելով զփառս
ի բարձունս․ փըրկողին ըզմեզ մաղթանօք սոցա։

Մանկունք ԻԶ։

Երգեմք ձեզ երգս ըզհրեշտակական ըմբղ-
ձայնս․ յաւէժս եւ վայելուչս մըտերիմս եւ
ներբողեանս․ ով սուրբ Ղեւոնդեանք։
Առաւել պարծիմք ձեօք․ սուրբ հօտապետք
Քրիստոսի․ յօրինեալք․ եւ յարդարեալք․ տա-
ճարք են մաքրեալք օծեալք տէրունեան երկնա-
ւոր թագաւորին․ ով սուրբ Ղեւոն-
դեանք։ Որք եկեալ համեալք ընդ նէին սեւագունդ
զօրըն Պարսից․ զի յափշտակեսցեն զառաջնորդ-
սըն Հայաստանեայց․ ըզսուրբ Ղեւոն-
դեանսն։ Որք չուեալ գնացեալք ընդ նէին․ ի պա-
լատն անօրէն թագաւորին․ զի վըկայեսցեն ճըշմա-
րիտ զի Երրորդութեան․ սուրբ Ղեւոն-
դեանքն։ Նորանելեացն ի մարտ մըտեալ․ նորանե-
լեացն ի մարտ մըտեալ․ զի վիրաւորեսցեն ի մահ ըզ-
Ներսեհար․ եւ կոխեսցեն ըզզօրութիւն թըշնա-
մւոյն․ սուրբ Ղեւոնդեանքն։ Որ խնդալից-
ըրն յափշտակեալ պարտեան․ որ խնդալիցըրն յափշտակեալ
պարտեան․ ընդ մեծ մաքառումըն սրբոց ճըգնա-

եղբարցն. ընդ սուրբ Ղեւոնդեանսն: փառք Հօր: Իսկ ի հեղմանէ արեան ձերոյ հոտ անոյշ բուրեաց ի յերկինս. եւ հաստատեցաւ Տէր ի հօտ անուշից. ընդ կամաւոր պատարագս ձեր. որով սուրբ Ղեւոնդեանք: Այժմ եւ միշտ: Որք համբարձայք ի կաճառս սերովբէից եւ ի դասս քերովբէից. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մեղաւորաց. որով սուրբ Ղեւոնդեանք:

---

ՅԵՐԵԿՈՅԻ

Համբարձի Դ. Կ:

Ընծայեալն Բանդ Աստուած. որ վասն մեր եղեր ի խաչ. բարձրացար ի մէջ երկրի՝ բարձեր զյանցանս նախաստեղծին՝. զերահրաշ զօրութեամբ յաղթեցեր մահու. յարուցեալ երեքօրեայ՝ լոյս ծագեցար տիեզերաց: Դասակարգեալ հողեղինացս ընդ հրեղինաց աննիւթ գոյից. երջանիկ արիութեամբ կատարեցան յանօրինաց՝. զի ընկալցին ի քէն Քրիստոս զանապական փառաց պսակն՝. երեւեալք լուսազգեացք՝ յաւուր մեծի քում գալստեանն: Ընդ հանուր քարոզեցին՝ զԲանդ կենաց ընդ տիեզերս. թօթափեալ ըզքուն մահու՝ զուարթնոց երկնից հետեւեցան՝. ժուժկալեալք արիաբար՝ զմանիս մահու խորտակեցին. իմաստուն երեւելով՝ ընդ փեսային մտին յառագաստն: Լուսաւորիչն ամենեցուն՝ Ղեւոնդիւ նոր վարդապետօքն. խոհական մեծ՝ խորհրդով՝ խրատեալ լեզուս զաշակերտեալսն. ծաւալեալ զլոյս գիտութեան յոգիս արանց կա-

տարելոց. կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով փրկչին: Զուր սիրոյ կենարարին բորբոքեցաւ յոգիս սրբոցն. ձայն տուեալ խրախուսեցին՝ դիմեալք ի մահ յօժարութեամբ. զենաւորք հոգւորք՝ զալիս մեղաց խորտակեցին. ճանապարհ մեզ հորդեցին՝ ի յերկնային նաւահանգիստն: Մշտնջենաւորեալք արեամբն իւրեանց՝ արբին զբաժակ մահու փրկչին. յառաջեալ յամենեցունց՝ Յովսէփ ընտրեալ աշակերտացն. նորահրաշ սիրով լցեալ և նահատակ բարի ցուցաւ. շինեցաւ տաճար փառաց սրբութեան անմահ բանին: Մատուցին ամենեցուն՝ երկրպագել քում տէրութեանդ. չարչարեալք արիաբար ընդդէմ մահաչար իշխանին. պատրաստեալք ի պատերազմ զպատրանս չարին խափանեցին. ջուր կենաց մեզ արբուցին՝ ընդհուր մեղացն շիջուցին: Ահ լուսոյ մեզ ծանուցեալ՝ զանգիտութեան խաւարն եղծ. Ահակ որ՝ հօտապետ սրովբէական բարեացն հաղորդ. վերբերիչ վարուց բարեաց՝ վանիչ չարին պաշտօնէից. տարփացեալ անճառ լուսոյն՝ վերասլացաւ ի կեանս անմահ: Փառք Զօր: Յոհաննեանցն ճշմարտից՝ եկայք և մեք հետևեսցուք. ցնծութեամբ կատարեսցուք՝ ըղձալիշատակ հայրապետացն. ուսեսցուք յարմարութիւն և միութիւն մարմնոյ փրկչին. փայլեսցուք գործովք բարեաց՝ ի յերկնային առագաստին: Այժմ և միշտ: Քրիստոսի թագաւորին՝ սրովբէական ձայնիւ հնչմամբ. երգեսցուք զերգս՝ օրհնութեան փըրկեալք արեամբն իւրով սրբով, զի գթութեամբ

խոնարհեալ ընկալցի զաղաչանս․ Թողութիւն շնորհեսցէ մեր բազում յանցանաց։

Այլ ձայնս ըստ ճառելոյն Սահմանս ասեն, և ըստ երգեմքն համեմատեն։

# ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․Զ․ Որ փառօք Հօր։ 477։

# ՀԻՆԳՇԱԲԹԻ

## Ս․ Վարդանանց զօրավարաց և այլոց զօրականաց Հայոց։

Օրհնութիւն Դ․Կ։

Արահրաշ պսակաւոր՝ և զօրագլուխ առաքինեաց․ փառեցար զինու Հոգւոյն արիաբար ընդդէմ մահու․ Վարդան քաջ նահատակ որ վանեցեր զԹշնամին․ վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի։ Երկնաւոր Թագաւորին զինու յաղթեալ պատերազմին․ խոհական իմաստութբ խոհեմացեալ անձառապէս․ Խորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի․ խաչելոյն վէրս եղեալ հեզմամբ արեան պսակեցաւ։ Առնական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ․ Թաթաւեալ ի կարմրութի՝ բոսորային բղխեալ աղբերն․ զփրկականն ըմպեալ զբաժակ՝ և մկրտեալ արեամբն իւրով․ դասակցեալ ընդ անմարմնոցն՝ Երրորդութեան երգել ըզփառս։ Արփափայլ զգեստուք պճնեալք՝ ի յերկնաւոր հանդիսադրէն․ Երրորդութեամբն զօրացեալ՝ վանեալ զամուրըս

բանաւորութիւն՝. Հրմնայեան Հօր ընծայեալ Որդւոյ գոլով չարչարակից՝. Հոգւովն յաղթեալ պատերազմին՝ և չարասէր թագաւորին։ Ազատն բարւոյն գիտմամբ՝ ընդդէմ մեղացն վառեցաւ. տարագնաց նշանք յերկինըս պարակցեալ ընդ անմարմնոցն. Տաճար զարմանալի տաճար նշեալ Երրորդութեան՝. տէրունեան տը՛ խորհրդոյն տուն եւ տեղի արժանացեալ։ Ստացեալ ըղձանաւոյ վաճառ յուսոյն զըաշխիք ծածկեալ. զփրկականըն սադաւարտ՝ ի գլուխ եդեալ զնշան խաչին՝. Վահան վեհ նշանաւն՝ որ մանկութեամբ նահատակեալ. խաչելոյն վկայ եղեալ՝ պըսակեցաւ արեամբն իւրով։ Իսկ հօտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր զինքըն նըւէր. բանաւոր պատարագաւ՝ ընծայելով Հօր ի յերկինս՝. Արուէնըն ցանկալի արդարութեամբըն ճոխացեալ. իմաստութե՛ պայծառացեալ յեօթնարփեան շնորհաց Հոգւոյն։ Երկոքումբք հարազատովք՝ ընտրելագոյն նահատակօք. յառաջեալ յամենեցունց՝ գլուխ և աւագ մարտիրոսաց. նախաշաւիղ գոլով բարեաց յառաջադէմըն Գարեգին՝. ընկալեալ ըզբրաբիոնըն յաղթանակ նահատակացն։ Իմաստական խումբ հաւաքեալ՝ և երեսնից թիւ ընդ վեցից՝. որք ընդ նոսին նահատակեալ արիաբար պատերազմաւ. Եւ հեղին զարիւնս իւրեանց՝ ի նորոգումն եկեղեցւոյ՝. ընդ նոսին պըսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն։

Ողորմեալ 'ի հէգոն ——։ 1129։

Հգ.. Աղբեւր կենաց բաշխող շնորհաց Հոգիդ իջեալ ի բարձանց. զառաքելական պարգեւըս քո"

բաժանեցեր յառաջնեալսն։ Որ ի վէ՛ ջուրցն գո-լով ստեղծանելի զարարածս. իջեալ ի ջուրս ա-ւազանի՛ն ծնանի՛ս որդի՛ս Աստուծո՛յ։ Որ զծո՛ր-գարեալ նորոգես միշտ ըզնոր քո զեկեղեցի. պէս-պէս շնորհաց քոց պարգեւօք փայլեն մանկունք սորա։

ՀՆ. Խնդրեմք ի քէն Թագաւոր փառաց փա-ռաւորեալդ ի զուարթնոց. ըզնընջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։ Յորժամ գաս փառօք Հօր դատել զերկիր արդարութեան արեգակն. ըզնընջեցեալսըն մեր ընկալ մարդասէր Տէր. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։ Ի նստել քո յաթոռնի դատաւոր անհեղ Քրիստոս փրկիչ մեր եւ յոյս. ըզնընջեցեալսըն մեր ընկալ մար-դասէր Տէր. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։

ՄԹ. Ածածին սուրբ կոյս ամենօրհնեալ Մա-րիամ. որ օրհնեալդ ես ի կանանց. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ Ան-ապական տաճար եւ առագաստ լուսոյ. որ ի քեզ փեսայացեալ Բանըն կենաց բնակեցաւ. զքեզ օր-հնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ Հուրըն կենդանի որ ի մորենին վառեցաւ. զոր անվնաս յարգանդի քում կրեցեր եւ ծնար Աս-տուած եւ մարդ. զքեզ օրհնեմք միշտ որ ար-ժանիդ ես մեծացուցանեմք։

ԽԶ. Խաչի քո Քրիստոս երկրպագեմք արարիչդ ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ. սա եղիցի մեզ պահապան յաղթող. ապրեցու-ցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա

բարձրացար բարձօղդ անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովեալն զՀեռացեալսըն կենաբեր փայտիւն. ապրեցուցանել զմեզ ի պատրանաց բանսարկուին: փառք Հօր: Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. սմին սպասէին ննջեալքն ի մեղսամածէր բանտին որ ազատեաց զմեզ ի պատրանաց բանսարկուին:

Այժմ և միշտ: Գոհութեամբ փառաւորութիւն Երրորդութեանդ նուագեմք. բազմութիւն պսակելոցս ընդ մեօք մանկանց առաքինեացս. եկեղեցիք Հայաստանեայց՝ պայծառապէս զարդարեցան. ունելով միշտ բարեխօս՝ զՏէրընտրութիւն մարտիրոսացն:

---

Հարցն Ղեւոնդեանց — Դ.Կ. Որ անդադար: 1126:

Սահակայ և Համազասպայ Դ.Կ. 118:

Արիացեալքդ առ հակառակսն. քաջութեամբ առնուլ զվրէժ խաչէութեան. Հանճարեղքդ ի Հաստատութիւն գնդին. զամբարշտացն արդարադատ չափով. զօրականք յաղթողք. պսակեալք ի Քրիստոսէ: փառք Հօր: Փոխանակեալք զունայնութիւն. ընդ ճշմարիտ յաւիտենական անմահութեան. փափագանօք ձերոց առիք զկատարումն. մաքրել արեամբ յաղագս մեղաց մերոց. զօրականք յաղթողք. պսակեալք ի Քրիստոսէ: Այժմ և միշտ: Հայցեցէք զխաղաղութիւն. ճշմարիտ վկայք սրբոյ Երրորդութեան. նեղելոցս յանօրինաց բռնութենէ. զի ցնծասցուք յաղթանակի մարտի ձերով. նահատակք արդարք. պսակեալք ի Քրիստոսէ:

## ՈՒՐԲԱԹ

Պահոց։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Կ. Յաւիտենից Ա.Ճ.։ 486։

---

## ՇԱԲԱԹ

Կոստանդնուպոլսի Ս. Ժողովոյն հարիւր և յիսուն հայրապետաց։

Ի ԺԱՄԱՏՈՒՐԻ Օրհ. Գ.Զ. Այսօր սրբոց հայրա 678։
ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Զ. Որ էիր յառաջ։ 682։
Մանկանց Գ.Զ. Ով հրաշալի նախահարք։ 684։
ՅԵՐԵԿՈՅԻ Համբարձի Դ.Կ. Բանն որ ընդ։ 1138։

Եւ յորժամ զՀամբարձին աւանին, յետին զվարդավառն ընդդէմ կոչանին, յորինակ տարադարձելոյն Աստուծոյ ՚ի դրախտէն, և ձայն անգամ մինչև ՚ի Դատաստան յարութեան շաբաթ երեկոյն։ Եւ ոչ համբառնին այսու թեան զանդրադարձն, և ոչ Բարեյիշատակեն ՚ի հանգստեան և ՚ի կիւրակէն ՚ի տէր Ժողովրդեանն մինչև ՚ի Ծաղկազարդն։

Յայս Կիրակամտին մինչև ՚ի զատիկ, Համբարձի զաւագիկեայ գերշերոյ Օրհնութիւն զերկնա շարականն ասա։

---

## ԿԻՐԱԿԷ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ։ Դ.Կ։

---

Ի ԳԻՇԵՐԻ

Փոխեա զձայնն ՚ի վերջ։ Բայց զԵ կանոնագլուխն աւագն կանոն զխոստովանն ասա։

Եւ կանոնագլուխ Դ.Կ. Սաղմոս ՃԽԵ։

ՕՐՀՆԵԱ անձն իմ զՏր. օրհնեցից զՏր ՚ի կեանս իմ. սաղմոս ասացից Այ իմոյ մինչև եմ ես։ Մի յուսայք յիշխանս, և մի յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութի ՚ի նս։

Ելցէ հոգի 'ի նոցանէ և դարձցին անդրէն 'ի հող. և յայնմ աւուր՝ կորիցեն ամ խորհուրդք նց:

Երանի ազգի՝ որոյ Տր Աստուած Յակովբայ օգնական է նմա. և յոյս նր 'ի Տր Ած է:

Ո արար զերկինս և զերկիր, զծով և զամ որ է 'ի նս:

Ո պահէ զճշմարտութի յաւիտեան, և առնէ իրաւունս զրկելոց:

Տայ հաց քաղցելոց. և արձակէ զկապեալս Տր:

Տր բանայ զաչս կուրաց, և կանգնէ զգլորեալս Տր:

Տէր սիրէ զարդարս, Տէր պահէ զպանդուխտս. զորբս և զայրիս ընդունի Տէր. և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ:

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Ած քո Սիոն ազգէ մինչև յազգ:

Փոխ՝ յոյժ—:

Օրհնեցից ըզքեզ՝ գոհութի ի կեանս իմ. սաղմոս ասացից քեզ Քրիստոս Թագաւոր յաղթական նոր Երգով օրհնութեամբ:

Սաղմոս ՃԽԶ. 'ի ԼԷ—:

Օրհնեցէք զՏր, զի բարի է սաղմոս. Այ մերոյ քաղցր եղիցի օրհնութի:

Շինէ զԵրուսաղէմ Տր. և զցրուեալսն Իսրայէլի ժողովէ:

Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ զամենայն վէրս նոցա:

Ո թուէ զբազմութի աստեղաց. և զամենեսեան զնս յանուանէ կոչէ:

Մեծ է Տր մեր, և մեծ է զօրութի նր, և իմաստութե նր ոչ գոյ բաւ:

Ընդունի զհեզս Տր, և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր:

Օրհնեցէք զՏր խոստովանութբ. սաղմոս ասացէք նմա օրհնութբ:

Ո զգեցուց զերկինս ամպովք. պատրաստ արար զանձրեւ իւր յերկիր.

Բուսոյց զխոտ 'ի լերինս. զդալարի 'ի ծառայութիւն մարդկան:

Ետալ անասնոց զկերակուր իւրեանց. ձագուց ագռաւուց՝ որ կարդան առ նա:

Ոչ թէ ընդ զօրութիւն ձիոյ կամեցաւ Տր. եւ ոչ ընդ իրանս առն սկայի հաճեցաւ:

Այլ հաճեցաւ Տր ընդ երկիւղածս իւր, եւ ընդ այնոսիկ՝ որք յուսան յողորմութի նր:

փոխ՝ յոյնէ—:

Վաղցրանցին քեզ Քս՝ գոհութիւնք երկիւղածաց անուան քո, զոր յուսացուցեր ողորմութի քո. ի խորհուրդս կենսաբեր գալստեան քո:

Սաղմոս ճխէ. 'է Բէ—:

Գովեա Երուսաղէմ զՏէր:

Եւ օրհնեա զԱծ քո Սիոն:

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. եւ օրհնեաց զորդիս քո 'ի քեզ:

Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութի. պարարտութի ցորենոյ լցոյց զքեզ:

Որ առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նր:

Դնէ զձիւն ոպ զասր. եւ զմէգ ոպ փոշի ցանեաց:

Արկանէ զսառն ոպ պատառս. առաջի ցրտոյ նր ո՞ կարէ կեալ:

Առաքէ զբան իւր եւ հալէ զնս. շնչեսցեն հողմք, եւ գնասցեն ջուրք:

Ապատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութի եւ զիրաւունս Իսրայելի:

Ոչ այսպէս արար ամ ազգաց Տր. եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:

փոխ՝ յոյնէ—:

Զքեզ Քն գովէ եկեղեցի փրկեալ քո սուրբ,

ցընծալո՛վ տեսանէ զքե՛զ ընդփրկօղդ նե՛կեա՛լ հայ-
րական իշխանութի ի պըսակե՛լ ըզորս քո՛։

Զկնի ժամերգին տօնականին. Այլ եւ խաղաղութե։

Քանոնայն. Օրհնութի և փառք։

Այլ հանգստեան շարական որ ասի մինչեւ ի Դաղար-
յարութեան շաբաթն օրն։

Օրհնութեանց ԳԿ։

ԲԱՆԻՆ որ ընդ Հօր յէութեան եւ համագո՛յ նոր Հոգւո՛յն. ըզպատկե՛րն եւրական խառնեա՛լ ընդ հո՛ղանիւթ բընութեանս. զո՛ր զարդարեա՛լ փառօք եդ ի դրա՛խտին փափկութեան։ Յո՛րում ցընծա՛յր զուա՛րճացեալ անտըխրական խընդութեամբ. քանզի զԱստուա՛ծ տեսանէր միշտ խօնարհեա՛լ ի դրախտի՛ն. յո՛րմէ զլուսո՛յն ճառագայթ տըպաւո՛րէր ի յինքեա՛ն։ Նման որո՛յ աղաչեա՛մ մա՛յր Աստուծո՛յ Մարիամ զմիածի՛ն քո՛ զԱդամին զի՛ շնո՛րհեսցէ ստացաղակի՛ն. ժառանգե՛լ վերըստի՛ն մեզ ըզդրախտին վայելչութիւն։

† Այսօր յօրինակ նախաստեղծի՛ն Ադամայ. որ ի դրախտի՛ն փափկութեան ուրախանա՛յր ընդ հրեշտակս. ցընծասցո՛ւք եւ մեք ի յօրհնութի՛ս հոգևո՛րս։ Այսօր ի խորհուրդ ածաստեղծ նախահօրն. որ ի պըտղո՛յն Անինայ ճաշա՛կելով զուարճանա՛յր. ճա՛շակեսցո՛ւք եւ մեք ըզպա՛տուիրանս Աստուծո՛յ։ Այսօր ի տիպ պատմուճանի՛ն առաջնոյ՝. որով պըճնեա՛լ զա՛րդարէր ի փա՛ռս մարդն առաջին՝. զա՛րդարեսցո՛ւք եւ մեք ածայի՛ն օրինօք։

Որ ողորմութեա՛մբ զգե՛ցա՛ր մարմի՛ն՝. եւ նո՛րոգեցեր ըզհնացեա՛լս. նորոգեա՛ եւ զմե՛զ հո՛գւո՛վ

Քրիստոս եւ ողորմեա։ Որ ի խաչին մեռար մարմնով. եւ զմեռեալքս դարձուցեր ի կեանս. կեցո եւ զմեզ հոգւով Քրիստոս եւ ողորմեա։ Որ յարեար ի մեռելոց՝ եւ յարուցեր զբնութիւնս մեր յուսով. յարո եւ զմեզ հոգւով Քրիստոս եւ ողորմեա։ Որ ըզսիրելին քո զՂազարոս կոչեցեր ի գերեզմանէն. կոչեա եւ զմեզ հոգւով ի կեանս եւ ողորմեա։

Նորահրաշ տեսլեամբ յարութեն քո Տր՝. ամհեղակերպ փայլմամբ՝. զարհուրեցան դղրդմամբ ժողովք. եւ մեռեալք ընդ կենդանութեան յարեան. ի հաւատս համօրէն յարութեանն։ Յորժամ փառօք հայրենի գալ ծագիս ի յերկնից՝. եւ յարուցանես զմեռեալսն. յայնժամ դասեա ընդ աջմէ քումմէ եւ կոչեա զմեզ ի փառս քո։ Յորժամ հեծանոցաւ դատողութեան քո Տր՝. սրբես ըզկալ աշխարհս. յշտեմարան արքայութեանդ. ժողովեա զմեզ ընդ արդարոցն։ Յորժամ եկեղեցի հարսնացեալ միանայ ընդ փեսային՝. ընդ իմաստուն ոք կուսանացն. արժանացո առագաստին զմեզ ընդ նոսին երգել ըզփառս ի բարձունս։

Երեւեա զմեզ Տէր յորժամ գաս թագաւորութեամբդ քո։ Շնորհեա մեզ Տէր զթողութիւն բազում յանցանաց մերոց։ Ուսո մեզ Տէր փառս տալ մեծի տէրութեանդ քո։

Օրհնեմք ըզքեզ անսկիզբն Հայր՝. որ յամժամ օրհնիս ի դասուց քերովբէից։ Գովեմք ըզքեզ միածին Որդի. որ անդադար փառաբանիս ի

դասուց սերովբէից: Անդադար բերանովք ան-
հանգիստ բարբառով. բարեբանեմք սբ զՀոգիդ
որ փառակիցդ ես Հօր եւ Որդւոյ:

Մի Ածութի Երրորդութի անբաժանելի. որ
ի հրեշտակաց անդադար օրհնաբանիս: Անմար-
մնոց զինուորութիւնք. փառաբանեն զքեզ իշխան
Հայր Ած: Չորեքկերպեան կենդանիքն վայե-
լուչ աղաղակեն. առ քեզ իշխանակից Որդի եւ
Բանդ Ած: Իշխանութիւնք աթոռոց գովեն ըզ-
քեզ. ամենասուրբ Հոգի եւ բոլորից Աստուած:

Օրհնեմք զքեզ անեղ անսկիզբն Հայր.
անհասանելի եւ փառաւորեալ յանմարմնոց զի-
նուորութեանց: Գովեմք զքեզ Որդի Հօր արար-
չակից Բանդ. նորոգող եւ կեանք ազգի մարդկան.
թագաւոր յաւիտենից: Զքեզ բարեբանեն ա-
մենայն ազինք. մշտընջենաբուղխ անսպառ աղ-
բեւր սբ Հոգիդ ճշմարտութեան:

Մօ. Աստուածին եւ սրբուհի. որ ըզԲանն Ած ան-
սերմն յղութեամբ յարգանդի կրեցեր. անդա-
դար երգով մեծացուցանեմք: Զքեզ մայր կու-
սութեան եւ յղութեան լուսոյ. եւ առաւել ան-
ճառելւոյ ընձիւղին ի քեզ փեսայացեալ Բա-
նին. անդադար երգով մեծացուցանեմք: Քեւ
լուծան կնիք դատապարտութեան. եւ քեւ կան-
գնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վն որոյ ըզ-
քեզ Աստուածին եւ կոյս. անդադար երգով մեծա-
ցուցանեմք:

ԽԶ. Խաչի քո Քրիստոս երկրպագեն արարածք
ամենայն. որ ի փրկութիւն մեզ կանգնեցաւ.

սամ եղիցի մեզ պաշտպան յաղթօղ. ապրեցու-ցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա բարձրացար բարձօղդ անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովեալ ըզհեռացեալսըն կենա-բեր փայտիւն. ապրեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Փառք Հօր։ Մօրն լուսաւորեցան արարածք ամենայն. սմա սպասէին որդեգրեալքն ի մեղսասէր բանտին որ ազատեաց ըզմեզ ի պա-տրանաց բանսարկուին։

Այժմ և միշտ։ Ծընեալ Մարիամ արեգականն արդարութեան արեւելք. եւ աղաչեա զնա ի քէն ըծնեալն Աստուած վասն մեր. զի դարձուսցէ վերըստին զմեզ ի դրախտին ժառանգութիւն։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԱԶ։

Ուրախացի՛ր եկեղեցի Քրիստոսի. փըրկական անօրէնութենէ. մարմնացելոյն ի կուսէն վասն քո. Աստուծոյ հարցըն մերոց։ Այսօր ցընծան որդիք Ադամայ. քանզի որ խըլըղեանն օրինադիր պահոցն ի դրախտին. ըն մեր պահել մարմնով յանձն առ-նու. Ած հարցըն մերոց։ Այսօր երկրորդ Ադամ վասն առաջնոյն անճաշակ լինելով ըզճաշակից պըտղոյն քաւել ըզպարտիս. Ած հարցըն մերոց։

Գ. Ադէեր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Փառք Հօր։ Որ ըստ պահոց քա-ռասնօրեայ փրկողին պահելով հարսնացեալ եկե-ղեցի. զի մտցէ ի յառագաստ ընդ փեսայն յա-րուցելոյ. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Եկայք հաւատացեալըք Քրիս-

տամբ. ցնծութեամբ պահեսցուք. ընդ անմահին մահու մեռանելով մեղաց. զի յարութիւն նորին կենդանասցուք արդարութեամբ. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Մեծացուսցէ ԱՁ:

Որ ընտրեցար ի սկզբանէ անապական կոյս Մարիամ. լինել տաճար սրբութեան. անձառ լուսոյն որ ի Հօրէ. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ: Փառք Հօր: Որ առ ի քէն երկրորդ Ադամ վասն առաջնոյն յանցանաց. բնութիւ մերով պահելով. զմահաբեր պտղոյն լուծեալ զպատուհասն. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ: Այժմ և միշտ: Արդ աղաչեա մայր ԱՅ զծնեալն ի քէն վասն մեր. զի ընդ նմին պահելով. որ յարութիւն նորա նորոգեսցուք. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

[illegible] 1:
[illegible] յերեկոյի շաբաթուն: 134: [illegible]
[illegible]. Զամ աւուրս կենաց: [illegible]
[illegible]
[illegible]:

Ողորմեա ԱՁ:

[illegible]: Ողորմեա ինձ ԱԾ: Փառք Հօր: Որ զառաջինն ոչ պահելով զպատուիրանըն մեռաք. շնորհեցեր քու օրինակ մեզ պատուիրան կենաց. զի պահելով կենդանասցուք. ողորմեա ինձ Աստուած: Այժմ և միշտ: Որ ի խորհուրդ քո կամաւոր մահուամբն եկեղեցի քո Քրիստոս մեռանելով օրինաց մեղաց. զի յարուցեալ ընդ քեզ նորոգեսցի ի փառս. ողորմեա ինձ Աստուած:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Ա.Զ.

Ի բարձանց։ փա՜ռք յարութեան քո Տէր։ փառք Հօր։ Որ տրտմական չարչարանաց խաչի քո Քրիստոս. ննջեցեր՝ հեթանոսաց. չարչարակից գոլով քեզ սրբութիւն պահօք. փա՜ռք յարութեան քո Տէր։ Այժմ և միշտ։ Տո՛ւր մեզ Տէր մահու քո նըմանել մեռելութիւն մեղաց. զի և կենա՛ց քոց հաղորդել արժանասցո՛ւք կենդանարար արքայութեանդ. փա՜ռք յարութեան քո Տէր։

Առաւօտու Սաղմոս ՃԺԸ։

Կց. Եղիցի անուն։ փխ. Օրհնեցէք մանկ։ 161։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։ Զ. 22։

Տէրն մեր Յս̄ Քս̄ ասէ.

Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամ̄ մարմինդ լուսաւոր եղիցի։ Ապա թէ ակն քո չար է ամ̄ մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ 'ի քեզ է խաւար է, խաւարն ո՞րչափ ևս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Այ̄ ծառայել և մամոնայի։ Վս̄ այդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք վս̄ ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և մի վս̄ մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտեմարանս, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնս̄. ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնս̄։ Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վս̄ հանդերձի զի՞ հոգայք. Հայ-

եցարուք 'ի շուշանն վայրենի ոյց աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ: Ասեմ ձեզ՝ զի և ոչ Սողոմոն յա̃մ 'ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ: Իսկ եթէ զխոտն 'ի վայրի որ այսօր է և վաղիւ 'ի հնոց արկանի, Ա̃ծ այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ ևս առաւել զձեզ թերահաւատք: Մ՛ի այսուհետև հոգայցէք՝ և ասիցէք. զի՞նչ կերիցուք՝ կամ զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեցցուք: Զի զայդ ա̃մ հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ա̃մ: Խնդրեցէք նախ զարքայութի̃ն Ա̃յ և զարդարութի̃ նր. և այդ ա̃մ յաւելցի ձեզ: Մ՛ի այսուհետև հոգայցէք վ̃ն վաղուին զի վաղին վ̃ն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր: Մ՛ի դատէք՝ զի մի դատիցիք: Զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք. և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ: Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և 'ի քում ական զգերանդ ոչ տեսանես: Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւասիկ 'ի քում ական գերան կայ: Կեղծաւոր՝ հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցես հանել զշիւղն յականէ եղբօր քո: Մ՛ի տայք զսրբութի̃ շանց. և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեսցեն զն̃ս. և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ: Խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջիք, բախեցէ՛ք՝ և բացցի ձեզ: Զի ա̃մ որ խնդրէ՛ առնու, և որ հայցէ՛ գտանէ, և որ բախէ՛ բացցի նմա: Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ̃ձ տայցէ նմա: Արդ՝ եթէ դուք որ չար էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է, տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա: Զա̃մ որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ

մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք։ Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռնն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա։ Զգո՛յշ լերուք 'ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք։ Ի պտղոյ նց ծանիջիք զնս. միթէ քաղիցե՞ն 'ի փշոց խաղող կամ 'ի տատասկէ թուզ։ Այնպէս ամ ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։ Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի։ Ապա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնս։ Ոչ ամ որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է։ Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դևս հանաք, և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն։ Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զնոսա, նմանեսցի առն իմաստնոյ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի։ Իջին անձրևք՝ և խաղացին գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ. քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ամ որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զնոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ։ Իջին անձրևք՝ յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ։ Է. 27։

Երգ ՚Նորաստեղծեալ : Բար. Խնդրեսցուք : Կե-ցո : Ող. Բռում ամենազօր :

---

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. ԳԿ. Այսօր յօրինակ : 1138 :

# Ա. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԱՁ :

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Որ Հայրն քաղցր : 412 :

# Ա. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ԱԿ :

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Որ Համագոյից : 413 :

# Ա. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԲՁ :

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Որ յամենայնի : 414 :

Յայսմ չորեքշաբաթի [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] ՏԷ ամենակալին և [illegible] [illegible] [illegible] : Նոյնպէս [illegible] [illegible] շնորհօքն և [illegible] [illegible] : Ա– Եկեղեցին [illegible] զի կարգաւն ամենայն :

# Ա. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԲԿ :

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Բարեբանեալ ես : 416 :

# Ա. ՈՒՐԲԱԹ

ԳՁ :

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԱՁ. Բարեբանեալ ես՚ի : 417 :

# Ա. ՇԱԲԱԹ

## Յիշատակ Ս. Թէոդորոսի զինաւորին: Գ.Կ:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Կ:

Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ուրախանան ի վերայ ճգնութեան սրբոցն: Այսօր ճգնազգեաց սրբոց դասքն ի յերկրի պըսակեցան երկնային անձեղէն փառօքն: Այսօր անմարմնոց զինուորութիւնքըն մեծապէս տօնեն. քանզի երկրաւոր զինաւորաց բազմութիւնքն ընծայեցան ի խորանն սրբութեան երկնից:

Սուրբ Տէր Հայր անսկիզբն՝ որ փառաւորեալդ ես ի մէջ սրբոց քոց՝ օրհնեմք ըզքեզ ընդ զուարթունս երկնից: Սուրբ Տէր Որդի միածին. որ պահեցեր՝ յաղթող ըզճգնութիւն սրբոց քոց. գովեմք ըզքեզ ընդ զուարթունս երկնից: Սուրբ Տէր Հոգի ճշմարիտ որ նորոգեցեր՝ ըզտիեզերըս ճշմարիտ երկրպագութեամբ քո՝ Սրբոյ Երրորդութեանդ. բարեբանեմք ըզքեզ անլռելի ձայնիւ:

Ճգնաւորականն աշխատութեանց համբերեցին նոր մարտիրոսքն. եւ ըզպատերազմըն չարին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Որք հեղին զարիւնս իւրեանց փոխանակ արեան քո Տէր. եւ ըզըմբռնութիւն հրապուրողին վանեցին ժուժկալութեամբ. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Եւ ըզպըսակս անապականս ընկալան ի քէն Քրիստոս. եւ դասաւորեցան ի դասս վերին զուարթնոցն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ:

Նահատակք յաղթօղք քաջք ի մարտի երանելի սուրբ մարտիրոսք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցիք: Հրեշտակացըն դասքըն տօնակից են մեզ. եւ ջոկք աթոռոցըն զուարճացեալ բերկրին. ընդ վարդագոյն ձեր հեղումն արեան. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցիք: Անթառամ պըսակըն ձեզ աւանդեալ մնայ. քան զականըս պատուականըս գերագոյն հրաշիւք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցիք:

Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ բերկրին ընդ առաջ Տեա՟ռն Քնի որդւոյն Աստուծոյ: Ձայն ի յերկնից վկայեալ ասէ եկայք օրհնեալք Հօր իմո՟յ ժառանգորդք երկնից խորանացն:

ՍՏԵ. Որ ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով ս՟ր Ստեփանոս. բարեխօսեա առ Քրիստոս վն անձանց մերոց: Որ խընդրեցեր զթողութիւն ի վերայ քո քարաձիգ ժողովրդեան սուրբ Ստեփանոս եւ այժըմ վասըն քո ուխտաւորացս աղաչեա զընդաջմէ Հօր նըստեալըն: Որ արժանի եղեր զմարտիրոսականըն առնուլ պըսակ նախ ի վըկայս. առ պըսակիչըն սըրբոց եւ վասըն մեր բարեխօսեա:

ԳՐԻ. Նահատակ բարի Քնի ընտրեալ. արքային զինուոր տէր Գրիգորիոս. ստորագլուխ կախմամբ դառնահոտ շընչմամբն արիաբար տարար. զի ուղղեսցես ըզգնացս ոտից մեր յերկինս: Ճառաւիղ լուսաղարդ ճանապարհին կենաց. երկրին աւետեաց հետեւօղ տէր Գրիգորիոս. մոխրաշունչ եղեր քացախ ընկալեալ հոգեւաշունչ ըմպամբք. պար-

գեղեցկով ուրախութեան մեզ օծումն։ Ոսկիաձոյլ գե-
րագոյն պատուական գրչաւորն՝ համանմանեալ հոգ-
ւոյ հայր Գրիգորիոս՝ կրկնեալ հայրութեամբ ե-
ղեալ ի մանուկս ամենազարդ գլուխ քո. որով բար-
ձրացան զգլխաւորք կորացեալ մեղօք։

ՀԱՅՐ․ Սուրբախմբեցան զօրք երկնից ընդ քո մեծի
ծննդութեան. որ ի մարմնի կատարեցար նման վերին
զուարթնոցն. ընդ քեզ զ անիմք բարեխօս առ
Հայր յերկինս վասն մեր։ Սրբախմբեմք քո նր
արտասուաց կենդանագործեալ ընդունելս. նման
փրկչին Յնի կենդանագործողին Ղազարու. ընդ քեզ զ
անիմք բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր։
Սաղ մեք ձայնիւ ցնծութեան տօնեմք զքո նր զվի-
շատակս. պատուեալ վերկայ Քնի նր հայրապետըդ
Յակոբ՝. ընդ քեզ զ անիմք բարեխօս առ Հայր յեր-
կինս վասն մեր։ Յանձն առեր զչարչարանս վա-
սըն նոյեան տապանին. ի հրեշտակէն ընկալար
զփայտ փրկութեան աշխարհի՝. ընդ քեզ զ անիմք
բարեխօս առ Հայր յերկինս վասն մեր։

ԹՈ․ Այսօր զանյաղթելի մարտիրոսացն՝ եկեղեցի
տօնէ ըզյիշատակ ճգնութեան. որք ի Սեբաստիա պա-
տերազմեալք ընդ թշնամոյն յաղթեցին քաջու-
թեամբ՝. սոցին աղաչանօք Քրիստոս խնայեա ի
մեզ։ Այսօր անտանելի չարչարանօք նահատա-
կեալք ի լճին սառուցելոյ երանելի քառասունքն.
որք ի բարձանց անճառելի ճառագայթիցն նը-
շոյլիւք տապացեալք լինէին. որ իջեր ի մէջ սրբոց
քոց Քրիստոս խնայեա ի մեզ։ Այսօր ի լրումն
ձայնիւն երգոյն սնուցանէին ընդ ջուր. մերժեալք

որպէս զոսկի փորձելով ի հուր. և համբարձեալք ի յերկնային՝ զինուորութիւնսն դասելով ընդ անմարմին զուարթունսն. որ ես փառաւորեալ ի մէջ սրբոց քոց Քրիստոս խնայեա ի մեզ:

Մօ. Ամենագովելի ես քան զերկինս բարձրագոյն. որ զանհասանելի ըզՏէրն յորովայնի քում կրեցեր. և ցնծութիւն աշխարհի ծնար. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Ամենապայծառ բերկրեալ միշտ կոյս որ զանբովանդակելի ըզԲանն անճառաբար յղացար. և ըզմարմնացեալն Աստուած ծնանելով ի քէն. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ դանիէլ գուշակեաց զանսերմն ըզծնունդ քո հարսն երկնաւոր. մայր և յետ ծննդեան մնալով կոյս. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք:

Խջ. Ով քառաթև լուսածին գերապանծ նշ կառուցող կենացն ամենից. միշտ բազկատարած առ քեզ էն: Քառակուսի ազանց հովանի և պահապան ի յելս և ի մուտս. փրկութիւն ի յայսոց և պարիսպ ամրութեան: Փառք Հօր: Դրոշմ ըն-գայութեն և կնիք ի դէմս ամենից. դու և յատուածայինսն կատարես խորհրդոց. յորում արեգակնային փայլեն ճառագայթք:

Այժմ և միշտ: Լըցէք ըզտեղի անկելոցն ապըստամբողական թըշնամեացն. որ ի յերկնից վայր անկեալ:

---

Մանկունք Դ.Զ:

Որ ընտրեցեր ի սկզբանէ զհաճոյ եղեալս ի մարդկանէ. որ եւ զինուորեալ քեզ Թէոդորոս. զոր խառնեցեր ի դասս երկնաւոր զօրացդ. աղաչանօք սորա կեցո ըզմեզ Քրիստոս Թագաւոր: Փառք Հօր: Որ յօրինակ աներևոյթ վիշապ օձին զոր և կոխել հրամայեցեր. արիաբար Թէոդորոս զերևելի զգլուխ վիշապին խորտակեաց քոյով զօրութեամբդ. աղաչանօք սորա կեցո ըզմեզ Քրիստոս Թագաւոր: Այժմ և միշտ: Որ ըզհուրն արկեալ յերկիր բորբոքեցեր յոգիս սրբոյն Թէոդորոսի. որ եւ ըզտաճարն լուցեալ ըզկռոցն. և մատոյց զանձն ողջակէզ քեզ պատարագ ընդունելի. աղաչանօք սորա կեցո ըզմեզ Քրիստոս Թագաւոր:

ՅԵՐԵԿՈՅԻ Ժամու. Դ.Զ. Որ զօրէնս: Տէր է Հայր:

# Բ. ԿԻՒՐԱԿԷ

## ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: Դ.Զ:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Դ.Զ:

Որ զօրէնըս սրբութեան պահոց՝ նախ ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցըն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին ըզդառնութիւն մեղաց եւ մահու. վասն որոյ շնորհեա մեզ Տէր ճաշակել ըզքաղցրութիւն քոց պատուիրանաց: Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի Թշնամւոյն. եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս. կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ ըզցաւոցս մեր. վասն որոյ բժշկեա ըզմեզ

Քրիստո՛ս որպէս մարդասէր: Որ եկիր ի փըրկութիւն մարդկան ծնընդեամբ կուսին Մարիամու. եւ կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր ըզմահացեալքս ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ փրկիչ:

† Որ գերագոյն փառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ քո Քրիստոս. խոնարհութեամբ քո ճանապարհաւ. առաջնորդելով ի յերկնային փառս հրեշտակաց. աղաչեմք առաջնորդեա մեզ Տէր ի յարդարութիւն: Որ զդառնութիւն պտղոյն ճաշակին որով մեռաք արդարութեան պահելով քո քառասնօրեայ փոխեցեր ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն. աղաչեմք արբո մեզ Տէր զուրախարար սիրոյ քո զբաժակն:

ԿՑՐ. Ի Թաբօր ի լերին ձեւացուցեր ըզքո բնութիդ անտանելի գոյացութեամբ. ընդ որս եւ մեք ցընծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր: Աշակերտօքդ հիացեալ բարբառէին ըզխորհուրդս ի տագնապել սըրտից իւրեանց. ընդ որս եւ մեք ցընծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր: Սքանչելի մեծ խորհուրդ զերրորդութեդ. քոց նոց առաքելոցըն ծանուցեր բարերար. ընդ որս եւ մեք ցընծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր: Սոսկալի հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր. առաքելոցըն տեսեալ յօրինէին քեզ տաղաւար. ընդ որս եւ մեք ցընծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մարդասէր: Հովանացեալ ամպ լուսեղէն եւ ըզհայրականըն լուեալ ըզձայն. եթէ դա է Որդի իմ սիրելի. ընդ որս եւ մեք

ցնծութեամբ երգեմք քեզ ողորմեա մեզ մար-
դասէր:

Քրիստոս Աստուած մեր շնորհեա մեզ ընդ գն-
դասի և ընդ որդւոցն ջերմեռանդեայ. արժանաւո-
րել քում անձայրին տեսլեանդ: Համբարձեալս
զմեզ Տէր առաւել քան զզգալի զթափօրական
զլեառն. յերկնաւորն քո և յիմանալի խորանդ:
Յայն որոյ ե՛ւ մեք զգաստացեալս մեր յարմարեա-
ցուք քեզ հոգևորական տաղիւք. ոչ միայնոյ
մարդկանցն և փրկչի:

Այսօր զխորհուրդ քո կերկնակի գալստեանն
աշակերտաց քոց յայտնեցեր Քրիստոս ի Թաբօր
լերին: Այսօր զփրկական քո վն աշխարհի
զմահ վկայեալ. քեզ երևեցան Մովսէս և Ե-
ղիա: Սրբեա Տէր զմեղուցեալս քո ծառայիցս զզ-
գայարանս. և շնորհեա տեսանել զքեզ և լսել
զհայրական զձայն. եթէ դա է Որդի իմ սիրելի:

Եգ. Դատաւոր արդար որ հատուցանես ի մեզ
դատող բնութեն զմիտս մեր. շնորհեա սիմա
գտանել զանձինս խրատիւք և արդարութեամբ.
խնայեա ի մեզ Տր ողորմութեամբ: Փեսայ երկ-
նաւոր հարսին քո եկեղեցւոյ. զայրի եղեալ ի քեն
ըհոգիս մեղօք. մաքրեա զբժութիւ և յօդեա ի
քեզ միութեամբ. խնայեա ի մեզ Տր ողորմու-
թե: Որ մարմնովս մարմնոյ քո մեռուցեր զմեղու-
թի. և յարութեամբ քո յարուցեր ի մեզ զարդարութիւն.
և յարութեամբ քո յարուցեր ի մեզ զարդարութեան. զզգե-
տուր զօրութի հոգւոյս կամաց հնազանդել զզգա-
միս մարմնոյս. խնայեա ի մեզ Տր ողորմութեամբ:
Որ փառաւորեալ ի հրեշտակաց ընդ Հօր և

++

Հօրդւոյն. Քրիստոս Որդի Աստուծոյ. խոնարհեցար ի հողեղէն բնութիւն՝ համբերելով խաչի վասն մեր. վասն որոյ գթա ի մեզ մարդասէր փրկիչ: Որ ըզհին մարդըն մեր մեղաց ի խաչին սպաներ. նորոգելով ըզնոր մարդն արդարութեան. յուսով կենացն անվախճանից ի նորոգումըն նոր Ադամայ. վասն որոյ գթա ի մեզ մարդասէր փրկիչ: Կենդանարար քո յարութեամբդ անմահ թագաւոր. կենդանացո զմեռեալս մեղօք. կենդանական գործովք բարեաց ըստ լուսաւոր քոց պատուիրանաց. վասն որոյ գթա ի մեզ մարդասէր փրկիչ: Շնորհեա մեզ Տէր ըզգաստութիւն արթուն լինել ըստ դռնապանին. զի ի բախել սուրբ փեսայիդ բացցուք ըզսիրտըս քոց մտից ընդ քեզ և Հօր քո և Հոգւոյդ լինել օթեվան. եւ երգեսցուք Երրորդութեանդ ըզփառս ի բարձունս:

Քեզ վայել է օրհնութիւն Աստուած: Որ անմարմնոցն դասուց հաստիչ ես բանիւ. քեզ վայել է օրհնութիւն Աստուած: Որ մարմնաւորացս ազգի՝ արարող ես ձեռօք. քեզ վայել է օրհնութիւն Աստուած: Որ մեռելոցն յուսով յարութեան ես ձայնիւ. քեզ վայել է օրհնութիւն Աստուած:

ՄՕ.. Անարատ կոյս ածածին Մարիամ սրբուհի և մայր Քրիստոսի՝. յարգանդի տարար զանտանելին ամենեցուն. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք: Զքեզ երկնային դուռըն զոր ետես Եզեկիէլ. եւ ասրըն զոր ծանեաւ Գեդէոն. սերովբէ հողեղէն վեհագոյն քերով-

բէից. օրհնութեամբ ըզքեզ Աստուածածին մեծացուցանեմք։ Երբեմն խորհուրդըս սոսկալիս ի քեզ տեսանի Աստուածածին. յղութիւն անմերձենական ծնունդ անարատ. կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. օրհնութեամբ ըզքեզ Ածածին մեծացուցանեմք։

ԽԶ. Ի յերկնից երեւեալ նշանըն յաղթութեան այսօր. հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան։ Եւ բազմութեան ժողովրդեան տեսանէին այսօր. որ ըղձային լուսոյ ճառագայթիւք զարդարեալ։ Ընդ երեւումն սորին խաչին քո Քս այսօր. Երուսաղէմ մեծապէս պանծացեալ յոյժ։ Եւ ըղձագումն լուսոյ աստուածային նշանի քո. ճառագայթիւք տեսանէին բազմութեան ժողովրդեան։ փառք Հօր։ Ամենայաղթ զօրութիւն խաչի քո Քրիստոս՝ որ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թըշնամւոյն. պատերազմեալ զօրութեամբ քո։

Այժմ եւ միշտ։ Որ անապական ծննդեամբըդ քո լուծեր զերկուորս նախամօրն Մարիամ մայր Աստուծոյ. բարեխօսեա առ միածին Որդին լուծանել զկապանըս մեղաց մերոց. եւ աղաչեա փըրկել զանձինըս մեր ի փորձութենէ։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Ա։

Որ յառաջ քան զյաւիտեանս անժամանակ ծընեալ ի Հօրէ. անճառելի Բանդ Աստուած. որով եղեն երկինք եւ երկիր. օրհնեմք ըզքեզ Աստուած հարցըն մերոց։ Որ ի պատկեր Ածութեանդ քո

զարդարեցեր զմարդն առաջին․ եւ զպատուիրանն ոչ պահելով դարձաւ ի հող ընդ մահու անկեալ թագաւորութենէ․ օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։ Որ զգթութիւն արարչական սիրոյ քո ոչ դարձուցեր յորդւոց Ադամայ․ այլ շնորհեցեր զգայս անդրէն դառնալոյ ի կեանս․ որով գտնումք յանմահութիւն վերափոխեցեր․ օրհնեմք զքեզ Աստուած հարցն մերոց։

Գ․ ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։ Փառք հօր։ Ընդ նախահօրն տրտմութեան որ վա եղեւն ի դրախտէն կենաց․ ընկալցուք եւ մեք զուրախութիւն ապաշխարութեան․ զի յարութիւն Քրիստոսի արժանացուք մտից դրախտին նշենեցուք․ բարձր արարէք զնա յաւիտեան։ Այժմ եւ միշտ։ Ընդ Ենովսայ նահապետին որ յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ․ յուսացուք եւ մեք յարութեամբն Քրիստոսի յառնել նովաւ ի կեանսն յաւիտենից․ բարձր արարէք զնա յաւիտեան։

Մեծացուսցէ Ա․

Որ զգեստուքն անմահարար մահկանացու բնութիւ ի քեզ կրեցեր ՚ի կոյս Մարիամ․ որով մեռեալք որք յԱդամայ կենդանացաք յուսով յարութեն․ առ նա միշտ բարեխօսեա վա անձանց մերոց։ Փառք հօր։ Որ զլուսոյն անեղական զէակն էից գոյացութեանց․ անճառապար ծնար մարմին եղեալ ի փրկութիւն եղականացս․ առ նա միշտ բարեխօսեա վա անձանց մերոց։ Այժմ եւ միշտ։ Որ զպատուովն ի քէն կենաց ընծայեցեր մեռեալն Ադամայ․ զո-

րդ պաշտօք քառասնօրեայ քահանայց զպտղոյն ճա-
շակումն և յանմահական ըղձոյն վերածեաց ի կեանս·
ա Նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց:

ՅՈՒՇԵՐԵԼԻՑ ԱՆՏՈՆԻ ՄԵԾԻ․ Եւ իբրև երեկոյ․
136․ Ադ․ Օճամ աւուրս:

ՈՂՈՐՄԵԱ Ա․Կ:

Որ առաքեցար ի հայրական ծոցոյ ծածկեալ խորհրդով ընդ Հօր յաւիտեան․ և առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանապական կուսէն անճառ միութբ․ վասն մերոյ փրկութե ողորմեա: փառք Հօր: Որ փոխանակ ճաշակմանցն պտղոյն․ անճաշակ լինելով քո քառասնօրեայ քաղցրացուցեր յուսով ըղձոցն նոր քո օրինաց․ վասն մերոյ փրկութեան ողորմեա: Այժմ և միշտ: Որ աջակողմ աւազակին բացեր ըղդրունսն դրախտին կենաց․ բաց և մեզ մեղաւորացս ողորմութբ որք ընդ նմին զքեզ դաւանեմք Տէր և Թագաւոր․ աղաչեմք ըզքեզ ողորմեա:

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ Ա․Կ:

Որ անմարմնոց հոգեղինաց դասակցեցեր ·ՃՕ ս՛ր եկեղեցի․ որք ընդ նոսին համաձայնեալ փառաւորեմք զեր՛ գերրորդութիւն սրովբէական սրբասացութբ․ երգելով ըզփառս ի բարձունս: փառք Հօր: Որ յաղթեցեր մերով բնութբ ի փորձութեան կամակոր օձին․ որով ետուր իշխանութիւն որդւոց Ադամայ կոխել ըզգլուխ չար վիշապին․ և ընդ երկնայնոցն երգել ըզփառս ի բարձունս: Այժմ և միշտ: Որ գալստեամբ քո վերածեր

ըզմեզ յա՛շխարհակա՛ն մե՛ղա՛ց ծո՛վէս. տը՛պաւորեալ լըրմամբ ուռկանի՛ վե՛մին հա՛ւատո՛յ զո՛ր ի ծովո՛ւն հրա՛շագո՛րծեցե՛ր. երգեմը՛ք քե՛զ ըզփառս ի՛ բա՛րձո՛ւնս։

Առաւօտու Սաղմոս ՃԺԹ. Զայնին։

ԿԳ. Նշեցի անուան։ փխ. Օրհնեցէք մանկ։ 161։

Արթիւ

Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու։ Գ. 43։

Տէր մեր Յս Քս

Եւ իբրեւ տիւ եղեւ. ել գնաց յանապատ տեղի. և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա՛ և արգելուին զնա. զի մի գնասցէ 'ի նոցանէ։ Եւ նա ասէ ցնոսա. և այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւն Այ, զի յայն իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր 'ի ժողովուրդսն Գալիլեացւոց։ Եւ եղեւ 'ի խռնել զնովաւ ժողովրդեանն և լսել զբանն Այ, և ինքն կայր առ ծովակին Գեննեսարեթայ։ Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ 'ի նոցանէ լուանային զգործիսն։ Եւ ել նա 'ի մի նաւուցն՝ որ էր Սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել 'ի ներքս 'ի ցամաքէն. նստաւ՝ և ուսուցանէր 'ի նաւէ անտի զժողովուրդսն։ Եւ իբրեւ լռեաց 'ի խօսիցն, ասէ ցՍիմոն. խաղացո 'ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս։ Պատասխանի ետ Սիմոն և ասէ ցնա. վարդապետ՝ զամենայն գիշերս աշխատ եղեաք՝ և ոչինչ կալաք, բայց վս քո բանիդ արկցուք զգործիսս։ Զայս իբրեւ արարին՝ փակեցին 'ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչեւ պատառէին ուռկանք նոցա։ Եւ ակնարկէին որսակցացն 'ի միւս նաւն՝ գալ օգնել նց. և եկին և լցան երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ ընկղմել նց։ Իբրեւ ետես Սիմոն Պետրոս՝ անկաւ առ ծունկսն Յսի և ասէ. 'ի բաց գնա յինէն Տր,

զի այր մեղաւոր եմ ես։ Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնեցին. նոյնպէս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք Սիմոնի։ Եւ ասէ ցՍիմոն Յ̃ս. մի երկնչիր՝ յայսմ հետէ զմարդիկ որսայցես 'ի կեանս։ Եւ հանեալ զնաւն 'ի ցամաք, թողին զա̃մ, և գնացին զհետ նր։ Ղ. 11։

---

ՅԵՐԵԿՈՅԻ Հ̃մբ· Դ·Ձ· Որ գերագոյն փա։ 1152։

---

## Բ. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Դ·Կ·

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հ̃րց Ա·Կ· Օանուն քո։ 418։

---

## Բ. ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ա·Ձ·

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հ̃րց Ա·Կ· Որ խոնարհեն։ 420։

---

## Բ. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Ա·Կ·

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հ̃րց Ա·Կ· Ա̃ծ հարցն մերոց։ 421։

---

## Բ. ՀԻՆԳՇԱԲԹԻ

Բ·Ձ·

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հ̃րց Ա·Կ· Օրհնեալ և փա։ 423։

---

## Բ. ՈՒՐԲԱԹ

Բ·Կ·

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հ̃րց Ա·Կ· Օանճառ էութի։ 424։

# Բ· Շ Ա Բ Ա Թ

Ս· Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին. և միւս Կիւրղի եպիսկոպոսին և մօրն նորա Աննայի: Գ.Ձ:

## Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն Գ.Ձ:

Զարիւնական մահ սրբոց քոց Քս. ընդ երկնային զօրսն այսօր երգակցեալ տօնեմք. որ հանդիսացան ընդդէմ բռնութեան թշնամւոյն: Անմարմինք ի մարմնի ցուցան գեր ի վերոյ սրոյ և հրոյ տանջանաց. զպատուական մահս իւրեանց ընծայեցին քեզ Քրիստոս բանաւոր զենմունք: Նահատակեալք ճգնութեամբ ի փորձ զանազան տանջանաց. համբերութեամբ վանեալ զթշնամւոյն պատերազմ. փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն:

Երանելի դուք հայրապետք չարչարեալք վասն Քի համբերեցէք. յաղթելով բռնաւորին դասակից եղէք վերնոցն: Ճգնեալ նահատակեցայք յերկրի. յաղթօղք ի պատերազմի. կոխելով ըզսատանայ դասակից եղէք վերնոցն: Լուսաւորեալք երկնային լուսովն պայծառացեալք ի Հոգւոյն սըրբոյ. բարեխօսեցէք առ Տէր վս անձանց մերոց:

Երանելի դուք հայրապետք. որք կամաւ չարչարեցայք յանձն առէք զհամբերութի. յարժանաւոր աղօթըս ձեր յիշեսջիք զանձինըս մեր: փոխանակ արեանըն Տն ձեր արիւնդ հեղաւ յերկրի. Եւ հոտ անոյշ բուրեաց յաշխարհ. յարժանաւոր աղօթըս ձեր յիշեսջիք զանձինըս մեր: փոխանակ անցաւորիս ձեզ անանցն է պատրաստեալ պըսակ

փառաց ի Քնէ. յարժանաւոր աղօթըս ձեր յիշեսջիք զանձինըս մեր:

Ընդ վերին զուարթունսըն բարեբանեմք ըզքեզ Տէր. սուրբ սուրբ սբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ: Յիշատակաւ սրբոց մարտիրոսաց գոհաբանեմք ըզքեզ Տէր. սուրբ սուրբ սբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ: Երեքսըրբեան ձայնիւն աղաչեմք առ քեզ Տէր. սուրբ սուրբ սբ ես Տէր զօրութեանց կեցո ըզմեզ:

Զանյաղթելի ճըգնաւորացն ըզյիշատակս. եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք: Քանզի մարմին ունելով զտանջանս արհամարհեցին. նըմանօղըք լինելով չարչարանաց փրկչին. Եկայք հաւատացեալք ամենեքեան պատուեսցուք: Քանզի տեսարան եղեն հրեշտակաց եւ մարդկան. զյաղթութեան պըսակն ի Քնէ ընկալան. եւ բարեխօսեն առ Տէր վն անձանց մերոց:

Ըզպըսակիչըն սրբոց եւ զհանգուցեալըն ի քերովբէս. անդադար ձայնիւ երգելով օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր: Այսօր տօնէ եկեղեցի ըզյիշատակ սրբոց մարտիրոսացն. ընդ որս եւ մեք ձայնիւ երգելով. օրհնեսցուք ըզՏէր յօրհնութիւն ի նոր:

ՅՈՎ. Ճրագ ճըշմարտութեան սբ Յովհաննէս մըկըրտիչ. որ ծագեցար ի յերկրի. աղօթիւք սորա Տր լուր մեզ եւ ողորմեա: Մարգարէ եւ առաքեալ Ածորդւոյ. եւ ձայն բարբառոյ ազդ արարող տիեզերաց. աղօթիւք սորա Տր լուր մեզ եւ ողորմեա: Ոպ արուսեակըն ծագեալ ի յերկրի. եղեւ

կարապետ արեգականդ արդարութեան. աղօթիւք սորա Տէր լուր մեզ և ողորմեա:

Գ.ՐԻ. Այսօր տօնէ եկեղեցի ուրախութեամբ ընդ յիշատակ սրբոյն Գրիգորի. որով լուսաւորեալ պայծառացաւ վայելչապէս. ի հանդերձս ամենահաւատս զարդարեալ եւ պճնեալ. օրհնեցէք մանկունք զՔրիստոս թագաւորն: Այսօր ցնծան նորածնեալ որդիք լուսոյ յիշատակաւ սուրբ լուսաւորչին. որով հրաժարեցան ի հարսանիսն ամենապղծական. մտանել ընդ փեսային երկնաւորի ի յառագաստն լուսեղէն. օրհնեցէք մանկունք զՔրիստոս թագաւորն: Այսօր քահանայք հոգևոր պատարագին ըսպասաւորք վերապատուեն ընդ քահանայապետին նոր. որով երկնայնոց քահանայութեանցն հաղորդեալք. յոր վերափոխեալ այսօր մտանէ ի սրբութիւն սրբոց միշտ բարեխօսել առ Տէր փառացն մեր. օրհնեցէք մանկունք զՔրիստոս թագաւորն:

Մ.Օ. Ուրախ լեր Աստուածածին յոյս և փրկութիւն մեր. ընդ քեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք: Ընդ քեզ լուսոյ մայր և կոյս. ընդ քեզ գանձդ կենաց աստուածային. ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք: Զմայր սուրբ անարատ լուսոյն հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ընդ քեզ մեծացուցանեմք:

ԽԶ. Այսօր ուրախացեալ ցնծան երկնային զօրութիւնքն. ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ. քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից. ի լուսաւորել զկաթուղիկէ սուրբ զեկեղեցի. փառս ուրք գալստեան քո Տէր: Այսօր սրբոյն լու-

ով հովանի եղեւ ըմեղ ի բարձանց․ քանզի Թա-
գաւորն երկնաւոր եկաւորի ի սուրբ եկեղեցի եւ
զօրք հրեշտակաց ծառայելով տօնեն ընդ մար-
դկան․ փառաւորք գալըստեան քո Տէր։ Փառք․ Օր։
Այսօր քահանայապետն ճշմարիտ ի ծայրին օրինօ-
քըն պատուեալ․ կանգնէ ըզքահանայսն սեղան
խաչին․ արժանապէս պատարագեալ բաշխէ զմար-
մին և զարիւնըն Տէր․ մաքրապէս մերձեցարուք
փըրկեալըքն որ ժողովուրդք․ եւ հայցեցէք ի Քրիստոսէ
զի շնորհեսցէ ըզսա մեզ ընդ երկայն աւուրս։
Այժմ և միշտ։ Որ անթառամ փառօք պըսակէ
ըզսուրբս իւր․ եւ ի գալստեան լուսեղէնըս վերա-
ցոյց․ օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ․Զ․ Որք հաղորդեն։ 371։

Մանկունք Գ․Զ։

Մանկունքն նորոգ Սիովնի փառաբանիչք սուրբ
Երրորդութեան․ ըզյիշատակ նորին Կիւրղի հայրապե-
տին․ տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն․
օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։ Փառք․
Օր։ Ի յարկի սրբութեան և ի տեղւոջ փառաբա-
նութեան․ ըզյիշատակ նորին Կիւրղի հայրապետին․
տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն․ օրհնե-
ցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։ Այժմ և միշտ։
Քահանայք և պաշտօնեայք՝ միաբան հաւա-
տացեալք․ ըզյիշատակ նորին Կիւրղի հայրապետին․
տօնելով այսօր ընդ զօրս անմարմնոցն․ օրհնե-
ցէք ըզՏէր յօրհնութիւն ի նոր։

ՅԵՐԵԿՈՅԻ Համբ․ Գ․Կ․ Օրհնեմք զքեզ։ 1164։

# Դ. ԿԻՐԱԿԷ

## ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԳԿ.

---

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԳԿ։

ՕՐՀՆԵՆ ՄԻՇՏ ընդ քեզ անլռելի զօրքն Հօր Աստուծոյ միածնի. զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ աշխարհին. դարձո եւ զմեզ ի մեղաց Աստուծոյ քո չարչարանօք։ Գովեմք ընդ քեզ Բան եւ լոյս որ զխաւարական քո պատկեր. լուսով ծրագի քո գթութեան վերականգնեցեր. կանգնեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօք։ Երկրպագեմք զփառակիցդ հօր զհոգիդ ճշմարիտ. որ նորոգեցեր ըզհնացեալքս մեղօք հնոյն Ադամայ. նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց։ Ուրախացիր Բարձրելոյն հովանացեալդ զօրութեամբ. եւ բնակարան սուրբ հոգւոյն որով ծնար զԲանն Աստուած. բարեխօսեա վասն մեր Աստուածածին Մարիամ։

† Լոյս ի լուսոյ ծնունդ եւ ծագումն. որ եկիր ի խնդիր մոլորեալ աշխարհի բնութեանս. զոր ընդ խաչին բարձեր ի վեր ուսոյդ. մաքրեա ըզմեզ ի մեղաց մերոց։ Սուրբդ սրբոց էից մաքրութիւն. որ ածեր տան քո աւել ի մեղաց զաշխարհս մաքրելով. ի նմին գտեալ զպատկեր քո նորոգեցեր. նորոգեա զմեզ ի հնութենէ մեղաց։ Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ Հայրդ գթած. մեղաք յերկինս եւ առաջի քո քաւիչ յանցանաց. Եւ ընդ

տանջ սիրով գըրկեալ համբուրեն․ մեջբեան ըղ-
մեզ ի մեղաց մերոց։

ԸԳ․ Շնորհեա մեզ Տէր ընդ աղքատաց օրինա-կին Ղազարու ժուժկալութի․ զի կամաւոր աղ-քատութեամբ աղքատութեամբ երկնից ընդ նմին լիցուք արժանի լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստ-ուած։ Որ փոխանակ հացին կարօտութե ըղձայն ան-մահութեան նըման շնորհեցեր և ընդ մեծատանն անզգամութեան ի գոգն Աբրահամու ըզնա ընկալար․ լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։ Լուսա-ւորեա զանձըս սըրտից տառապեալ մեզ ողորմութեամբ ի քէն Տէր զողորմութիւն․ զի մի ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին ծարաւի մատին ջուր ի զովացուցանել․ լուր մեզ և ողորմեա Քս Աստուած։

Որ ըզլոյս աստուածային քո բանի․ ծագեցեր յաշ-խարհամած խաւարն անգիտութեան․ լուսաւո-րեա և զմեզ շնորհ իմաստութե։ Որ զհամօրէն դատաստանին օրինակ․ նըշանակեցեր առ մեծա-տանն եւ Ղազարու․ ներհակաբար առնուլ զոր-ման ընկալան։ Առ որս աղաչեսցուք ըզքեզ Տէր․ փըրկել ըզմեզ ի հրոյ մեղաց և տանջանաց․ հանգ-չել ի գոգ նահապետին Աբրահամու։ Որով և մեք ընդ հրեշտակացն դասուց․ անբաժանելի որ Եր-րորդութեանդ․ համաձայնեալ երգեսցուք ըզփառս ի բարձունս։

Զանըսկիզըն Աստուած զշնորհն անմահական․ բա-րեբանեցէք ընդ զուարթունս երկնից։ Զոր ի հօրէ ծընեալ զԱրդին միածին բարեբանեցէք հրեշտակային ձայնիւ։ Եւ զներգործող որ զհոգին

ձայնիւ ցնծութեամբ. բարեբանեցէք անլռելի ձայնիւ:

Անըսկիզբդ Որդի և Թագաւոր երկնաւոր. բարեբանեալ ի զօրաց անմահից երկնաւորաց. ընդ քեզ օրհնեմք Հայր անըսկիզբդ: Խոնարհեցար ի բարձանց վասն մերոյ փրկութեան. արձակիչ կապելոց և բժիշկ հոգւոց մերոց. ընդ քեզ գովեմք Որդիդ միածին: Որ էակիցդ ես ընդ Հօր և փառակից միածնիդ. բաշխօղ պարգևաց և տուօղ ողորմութեան. ընդ քեզ բարեբանեմք սուրբ Հոգիդ ճշմարիտ:

ՄՕ. Ծառատունկ խնկաբեր ծառ յանուշահոտ բուրաստանէն. որ ի գնացս Հոգւոյն վտակաց տնկեցար. և զանմահութեան պտուղն ի ժամու ետուր մեզ. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք: Զանապական բողբոջն յանծայրն դրախտէն յորովայն քո տնկեաց. բղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծաղիկ. վայելուչ կուսական ծննդեամբ. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք: Յարփւոյն լուսոյ ծագումն ի քեզ վառեալ ըղձրոց մարմնոյն լոյս աշխարհի. որով գտեալ զպատկերն իւրական. զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն. վասն որոյ բարեխօսեա նորոգել զմեզ ի հնութէ մեղաց:

ԽՁ. Ով քառաթև լուսածին գերապանծ նիշ կառուցող կենացն ամենից. միշտ բազկատարած առ քեզ էին: Դրախտականի ազգաց հովանի և պահապան ի յելս և ի մուտս. փրկութիւն ի յայսոց եւ պարիսպ ամրութեան: Փառք Հօր: Դրօշմ ըն-

գայութն եւ կնիք ի դէմս ամենից. դու եւ յան-
տուածային կատարես խորհրդոց. յորմէ ա-
բնգակնային փայլեն ճառագայթք:

Այժմ և միշտ: Աղբիւր կենաց բղխեալ յԱստուա-
ծնէ որ Ածածին. որով արբեցաւ երկիր ծարա-
ւոտ հոգւոյն իմաստութք տալ մեզ մաղթեա աղ-
բիւրս արտասուաց. մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց ԲԿ:

Որ զտիրականն զդ կերպարան ըզգեցուցեր ծառա-
յին. և զարդարեալ փառօք եղեր ի դրախտին.
օրհնեալ ես Տր Աած հարցն մերոց: Որ ճաշակ-
մամբ պտղոյն մահու յանմահից կենաց մեռաք.
իսկ գալստեամբ քո վերստին փակեալ դրախտին
դուռն բացաւ. օրհնեալ ես Տէր Աած հարցն
մերոց: Որ փոխանակ մահաբերին որով անէծքն
տրտմագին. մեզ փայտ կենաց հատուր զխաչ քո
լուծեր նովաւ ըզկապ մահու. օրհնեալ ես Տէր Աած
հարցն մերոց:

Գ. Զտէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւ-
իտեանս: Փառք Հօր: Որ ապրեցոյց զՆոյ տա-
պանաւն պահելով հայր աշխարհի. և զհեղեղ
մեղաց մարդկան հեղեղաւ ջրոց դադարեցոյց. և
բարձր արարէք զնա յաւիտեանս: Այժմ և միշտ:
Որ ի ծով այս աշխարհի շինեաց տապան զեկե-
ղեցի. և ի սմա զօժանդակեալ հոգիս փրկեաց ի
ջրոց մեղաց. եւ բարձր արարէք զնա յաւիտեանս:

### Մեծացուսցէ ԲԿ:

Անուանի լեր մայր լուսոյ Մարիամ. երկիր բա-

նաւուր արեգականն օթարան․ լեր բարեխօս վասն անձանց մերոց։ Փառք Հօր։ Խորհրդա տաճար Բանին Աստուածոյ․ բարձող արարածութեանն նախամօրն Եւայի․ լեր բարեխօս վասն անձանց մերոց։ Այժմ և միշտ։ Ցնծա իմանալի արեւելք․ քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեւաց Քրիստոս․ լեր բարեխօս վասն անձանց մերոց։

Խաղաղական Աւետարան․ Ղուկաս Ի․ ահա այր մի։ 137։ Այլ Օրհն ասա։

Ողորմեա ԻԿ։

Թուինս իմ։ Որ խոնարհեցար ի բարձանց հովուեդ քաջ թողեալ յերկինս զհօտ քո անմոլար․ վս մոլորեալ ոչխարին ողորմեա մեզ Աստուած։ Փառք Հօր։ Որ լուսով Աստուածութեան քո լուցեր ըզճրագ մարմնոյդ․ ածեր աւել տան քո աշխարհի․ վասն պատկերի քո զոր նորոգեցեր ողորմեա մեզ Աստուած։ Այժմ և միշտ։ Որ գործմամբ անապակ մարդկութեան եգներդ պարարակ Հօր հաճութեամբ զնոր պատարագ․ վասն հաշտութեան երկնաւորաց եւ երկրաւորաց ողորմեա մեզ Աստուած։

Տէր յերկնից ԻԿ։

Ընդ լուսափայլ զուարթնոյն ըզյարուցեալն օրհնեսցուք․ եւ մաղթելով խնդրեսցուք․ մաքրել ըզմեզ ի մեղաց։ Ընդ խունկաբեր որ կանանցն՝ անմահ բուրմանն անուշից՝․ խունկս աղօթից մատուցուք՝․ մաքրել ըզմեզ ի մեղաց։ Փառք Հօր։ Ընդ իւղաբերիցն արտասուօ՝ զմարդկայն բարձող արտասուաց․ պաղատես-

ցուք արտասուօք՝. մաքրե՜լ ըզմեզ ի մեղաց:
Այժմ և միշտ: Ընդ Քրիստոսի պահելով յաղ-
թօ՜ղ լիցուք փորձողին. և ընդ հրեշտակս եր-
գեսցուք՝ փառք ի բարձունս Աստուծոյ:

Առաւօտու Աւագ ՃԺԳ:

ԿՑ. Եղիցի անուն: փխ. Օրհնեցէք: 161:

Որթիւ

Արդ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: Զ. 12:

Տէրն մեր ՅՍ ՔՍ

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեառն կալ
յաղօթս, և հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն
ԱՅ: Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր,
և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս. զորս և առա-
քեալս անուանեաց. զՍիմովն՝ զոր և Պետրոս անուա-
նեաց, և զԱնդրէաս զեղբայր նորին, և զՅակովբոս
և զՅովհաննէս, և զՓիլիպպոս և զԲարթողիմէոս,
և զՄատթէոս և զԹովմաս, և զՅակովբոս Աղ-
փեայ, և զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյզ, և
զՅուդա Յակովբեայ, և զՅուդա Իսկարիովտացի՝ որ
եղեւ իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի
տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նո-
րա և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամ
Հրէաստանէ և յԵրուսաղեմէ՝ և յայնմ կողմանէ
և 'ի ծովեզերէն Տիւրոսի և Սիդովնի. որ եկին
լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց.
և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ ամ
ժողովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա, զի զօրու-
թիւն բազում ելանէր 'ի նմանէ և բժշկէր զամե-
նեսին: Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն
իւր՝ և ասէ: Երանի աղքատացդ հոգւով, զի
ձեր է արքայութիւն ԱՅ: Երանի՝ որ քաղցեալ են
այժմ, զի յագեսցին: Երանի որ լան այժմ, զի
ծիծաղեսցին: Երանի է ձեզ յորժամ նախատի-

ցեն զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն անուն չար զձէնջ վասն որդւոյ մարդոյ։ Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ նմին օրինակի առնէին մարգարէիցն հարքն իւրեանց։ Բայց վա՜յ ձեզ մեծատանցդ՝ զի ընկալայք զմխիթարութի̃ ձեր։ Վա՜յ ձեզ որ յագեալդ էք այժմ՝ զի քաղցիցէք. վա՜յ ձեզ որ ծիծաղէքդ այժմ, զի սգայցէք և լայցէք։ Վա՜յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ա̃մ մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարքն նոցա։ Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց։ Օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց։ Որ հարկանէ զծնօտ քո̀ մատո նմա և զմիւսն, և որ հանէ 'ի քէն զբաճկոն քո̀ մի արգելուր 'ի նմանէ և զշապիկս։ Ամենայնի որ խնդրէ 'ի քէն՝ տուր, և զոր ինչ հանէ ոք 'ի քէն՝ մի պահանջեր։ Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա։ Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր, զի և մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց։ Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի և մեղաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր, քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն։ Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք ատելեաց ձերոց. և տո՛ւք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղիցին վարձք ձեր բազում, և եղիջիք որդիք բարձրելոյ. զի նա քաղցր է 'ի վերայ չարաց և ապաշնորհաց։ Եղերո՛ւք գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է։ Մի դատէք՝ և ոչ դատիցիք. մի՛ պարտէք՝ և ոչ պարտիցիք, արձակեցէք և արձակիցիք։ Տո՛ւք և տացի ձեզ. չափ

բարւոք՝ թաթաղուն շարժուն զեղուն՝ տացեն 'ի գոգս ձեր. Նովին չափով որով չափէք չափեսցի ձեզ։ Ասաց և առակ մի առ նս. միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ ապաքէն երկոքին 'ի խորխորատ անկանիցին։ Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամ կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր։ Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո. և 'ի քում ական զգերանդ ոչ նշմարես։ Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. եղբայր՝ թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ, և դու 'ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո։ Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի. զի իւրաքանչիւր ծառ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Զի ոչ եթէ 'ի փշոց քաղեն թուզ, և ոչ 'ի մորենւոյ կթեն խաղող։ Մարդ բարի 'ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար՝ 'ի չարէն բղխէ զչար. քանզի 'ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա։ Զի՞ կոչէք զիս՝ Տէր Տէր, և զոր ասեմ ոչ առնէք։ Ամենայն որ գայ առ իս, և լսէ զբանս իմ՝ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ում նման է։ Նման է առն, որ շինիցէ տուն. որ փորեաց և խորեաց, և եդ հիմն 'ի վերայ վիմի. և 'ի յառնել հեղեղաց՝ բաղխեաց գետ զտունն, և ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն 'ի վերայ վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ՝ և ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն 'ի վր հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ, և վաղվաղակի անկաւ. և եղև կործանումն տանն այնորիկ մեծ։ 49։

ՅԵՐԵԿՈՅԻ ժամէջ. Գ.Կ. Լոյս 'ի լուսոյ։ 1164։

## Գ․ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ԴՁ․

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲՁ․ Օրհնեալ Տր Ա․ 425։

## Գ․ ԵՐԵՔՇԱԲԹԻ

ԴԿ․

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲՁ․ Ուղիղ են ճանա։ 427։

## Գ․ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

ԱՁ․

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ․ Որ հարցն մերոց։ 428։

## Գ․ ՀԻՆԳՇԱԲԹԻ

ԱԿ․

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց ԲԿ․ Մանկունքն գեր։ 429։

## Գ․ ՈՒՐԲԱԹ

ԲՁ․

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց ԲԿ․ ՍՏ։

Անուն քո յաւիտենան։ Աստուած հըզօր թագաւոր ամենայն․ արարիչ յաւիտենից․ Աստուած հարցըն մերոց։ Որ զերիս մանկունսն փրկեցեր ի հնոցէն․ փրկեա ըզմեզ ի հրոյն յաւիտենից․ Աստուած հարցըն մերոց։ Ապաւինելոցս ի քեզ ծնողական լեր Տէր․ զի դու միայն ես մարդասէր․ Աստուած հարցըն մերոց։

Գ․․ Գործըք Տեառն ըզՏէր օրհնեցէք եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Գիշերք

ըզՏէր օրհնեսցէք եւ բարձր արա-րէք ըզնա յաւիտեան: Այժմ և միշտ: Իսրայէլ զՏր օրհնեսցէ և բարձր արարէք ըզնա յաւիտեան. ալէլուիա ալէլուիա:

Մեծացուսցէ Բ.Կ:

Զքեզ Ածածին որ վերօրհնեալ ի զօրաց հրեշ-տակաց. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցա-նեմք: Փառք Հօր: Զքեզ բնակ հրեղէն Ածու-թեն յիմանալի զօրացն երանեալ. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Զքեզ մայր Էմմանուէլի մարգարէին յառաջ գու-շակեալ. ազգ մարդկան կենդանեաց մեծացուցա-նեմք:

Ողորմեա Բ.Կ:

Եկեսցէ Տր ի վր մեր ողորմութի քո. եւ բան փրկութեան քո պահեսցէ զանձինս մեր ի մե-ղաց: Ողորմութի քո եւ ճշմարտութի քո եւ լոյս երեսաց քոց. առաջնորդեսցէ մեզ ի յարդարութի: Որ ողորմած ես գթած և երկայնամիտ Տէր ըն-կալ զաղաչանս մեր. բարեխօսութեամբ սուրբ Ածածնին:

Տէր ըզլուր միւսանգամ քո գալստեանդ լուայ և երկեայ. զի ուսայ ի նրց պատուիրանաց եթէ գամս գաս ի դատել զերկիր: Փառք Հօր: Տէր յի-շեցի ըզչար ըզգործս իմ և զարհուրեցայ. զի ծանեայ ճշմարտութեամբ զահաւոր եւ զանաչառ ըզքո դատաստանն: Այժմ և միշտ: Տէր յի-շեցի և ըզգութ արարչական սիրոյ քո առ քո ապականեալ աղա-բարածս. եւ ի քո գթութիդ

չեմ. աղօթմամբ ինձ յաւուր յայնմիկ Քրիստոս ար-
գար դատաւոր:

Տէր յերկնից ԲԿ:

Որ օրհնիս ի հրեշտակաց անդադար. Հայր եր-
կնաւոր ընկալ զաղաչանս մեր: Առաջի քո ան-
կանիմք փրկիչ. խնդրեմք զթողութիւն բազում
յանցանաց մերոց: Որ գիտակդ ես գաղտնեաց
մարդկան Հոգիդ որ. Տէր եւ կենդանարար ընկալ
զաղաչանս մեր:

Օրհնեցէք զՏէր ընդ երկնայինսն նմանեալ
դասուց. նոր ժողովուրդք ամենայն. քեզ Հօր տո-
ւողիդ մեզ ըզկեանս փառք: փառք Հօր: Եր-
գեցէք Տն երգ նոր եկեղեցիք ընտրելոց որդիք Սի-
ոնի ամենայն. քեզ Որդւոյ շնորհողիդ մեզ ըզ-
կեանս փառք: Այժմ եւ միշտ: Բարեբանեցէք
զՏէր ի պաշտելիս սրբութեան նորա ձայնիւ ցըն-
ծութեան ամենայն. քեզ Հոգւոյդ պարգեւողիդ մեզ
ըզկեանս փառք:

# Գ. Շ Ա Բ Ա Թ

## Ս. Յովհաննու Երուսաղեմայ հայրապե-տին: ԲԿ:

Ի Գ Ի Շ Ե Ր Ի

Օրհնութիւն ԲԿ:

Շնորհեա մեզ Քն թագաւոր. կատարել ի հա-
ճոյս քո զյիշատակ սրբոցն. եւ օրհնել զանուն
քո սուրբ: Որք հեղման քո սուրբ արեան. եւ
չարչարանաց քոց եղեն հաղորդ որք վկայքն. եւ
լուսաւորիչք աշխարհի: Որոց միշտ աղաչեմք

և փառաւորեմք անդադար երգով օրհնութեամբ սուրբ զԵրրորդութիւնդ համագոյ:

Միաբան ամենեքեան զՏէր ծն աստուծոյ. օրհնեցէք ձայնիւ սրբասացութբ ըզպսակիչն սրբոց: Զթագաւորըն փառաց Քրիստոս զէակից հօր և հոգւոյն. գովեցէք ձայնիւ սրբասացութբ ըզպսակիչն սրբոց: Զբաշխօղըն պարգևաց որ զհոգին ճշմարտութն. բարեբանեցէք ձայնիւ սրբասացութբ ըզպսակիչն սրբոց:

Այսօր տօնեմք ըզտօն սրբոց վկայիցն. որ արեամբ նահատակեալք. փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն: Արիաբար մարտեան ընդդէմ խռովաթագաւորաց. զյաղթողական ընկալեալ ըզպսակ. փոխեցան ի զօրս վերին զուարթնոցն: Եղեն օթևանք որ Երրորդութեն. զանձառական ընկալեալ ըզկեանսն. և բարեխօսեն առ Տէր վս անձանց մերոց:

Ով երանեալ որ վկայք. որք արժանի եղէք. մարմնով և արեամբ դասակից լինել զուարթնոց երկնից: Քաղաքավարեալք ի մարմնի և հետևողք Որդւոյն Աստուծոյ. մարմնով և արեամբ դասակից լինել զուարթնոց երկնից: Լուսաւորեալք ի հօրէ պայծառացեալք ի հոգւոյն սրբոյ. բարեխօսեցէք առ Տէր վս անձանց մերոց:

Որ պսակիչդ ես ամենայն մարտիրոսաց. և յաղթօղ պահեցեր ըզյուսացեալսն ի քեզ Քրիստոս փառաց թագաւոր. բարեխօսութեամբ որց մարտիրոսաց պարգևեա զխաղաղութիւնդ երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ: Որք

մատնեցին զանձինս իւրեանց տանջանաց և մահու․ և հեղմամբ արեանն իւրեանց եղեն վկայք քո կամաւոր մահուամբն․ բարեխօսութեամբ նոցա մարտիրոսաց պարգևեա զխաղաղութիւն երկրպագուաց ամենասուրբ Երրորդութեանդ։ Որք զխաւարն կռապաշտութեանցն վանեցին յաշխարհէ․ և ենթարկեալ կործանեցին զբելիար պատերազմեալք ի հանդիսի․ բարեխօսութեամբ նոցա մարտիրոսաց պարգևեա զխաղաղութիւն երկրպագուաց ամենասուրբ Երրորդութեանդ։

Հրաշափառ ճգնութեամբ՝ պատերազմեալք ընդդէմ թշնամւոյն․ և արիաբար վառեալք զինու սուրբ Հոգւոյն․ յաղթեցիք անօրինացն․ ով սուրբ վկայք․ ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Անտանելի չարչարանացն եղէք վկայք ճշմարտութեան․ և խաչակից եղէք Որդւոյն Աստուծոյ ըզբաժակ մահու արբէք ուրախութեամբ․ ով սուրբ վկայք․ ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Յաղթանակ համբերութեամբ կատարեցիք զընթացս ձեր՝․ և փոխեցայք յերկրայնոցս ի յերկինս․ ընկալայք ի Քրիստոսէ զպսակս անապականս․ ով սուրբ վկայք․ ըզձեզ ունիմք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։

ՄՐԳ․ Ապաշխարութեամբ մաքրեցաւ քաղաքն Նինուէացւոց․ ի լսել ձայնի մարգարէին եղև թողութիւն մեղաց։ Եհաս բանն առ թագաւորն․ պատուէր տայր ժողովրդեանն․ լսել ձայնի մարգարէին․ եղև թողութիւն մեղաց։ Ի բե-

բանից մանկանց տղայոց. զօրքն երկնից յօգնութիւն կոչէին. ի լրումն ձայնի մարգարէին եղեւ թողութիւն մեղաց։

ՀԱՑՐ. Որ ըղձիւս ամենայն շնորհաց՝ անձայրին քո գիտութեանդ. ծագեցեր յաշխարհս Հայաստանեայց. գթած հայր երկնաւոր՝ գթա ի մեզ մեղուցեալքս։ Որ ընտրեցեր յորովայնէ զմաքրեալն հոգւով սուրբն Ներսէս. ժառանգել ըղ-վիճակ հայրենիս. հովուել որդեգրութեամբ եւ իմաստութեամբ։ Որ օրհնեաք ձրիաշնորհութեանն զարդարեալ զեկեղեցի. կարգաւորեալ բարեպաշտութեամբ. սորին աղաչանօք խնայեա ի մեզ Քրիստոս։

Մ.օ. Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս. որ ցուցեր ի մեզ զցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։ Անձից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս։

ԽԶ. Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր ըզքո նոր զեկեղեցի. ըզսա պահեա ի խաղաղութեան։ Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց եւ մարդկան քաւարան. տուր սմա զանշարժ քո զխաղաղութիւն։ փառք հօր։ Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա զառատ քո զողորմութիւն։



††

Արժան և միշտ։ Արդ եկայք հաւատացեալք՝ կատարեսցուք ըղձալիշատակ սրբոց վերկայիցն. զի ի ձեռն սոցա բացցէ մեզ դուռն ողորմութեան նունելով միշտ բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։

---

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Գ.Ձ. Որ զանչափ քո։ 362։
Մանկունս Գ.Ձ. Մանկունք նոր Սիոնի։ 1163։
ՅԵՐԵԿՈՅԻ Համբ. Գ.Ձ. Որ արարեր։ Տէր երկ.

---

# Դ. ԿԻՐԱԿԷ
## ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ։ Գ.Ձ։

---

### Ի ԳԻՇԵՐԻ
Օրհնութիւն Գ.Ձ։

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհս վերին. եւ ի նմա հաստատեցեր տընտես ըզպետս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհս զգալի. եւ ի դրախտն որ յԵդենի տընտես եդեալ զմարդն առաջին. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. եւ ի սմա կարգեալ տընտես զքահանայս Նորին ճըշմարտութ. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։ Անտանելւոյն տաղաւար բարձօղ էիցըս բարձողին. որ ծընար զԱծ մարմնով զանմարմնաբար ծընունդըն Հօր. բարեխօսեա վասն մեր Աստուածածին Մարիամ։

† Որ տիրականս առ ի քէն կարգեալ տընտես բնութեան մերոյ. իմաստութեամբ ըզպարտս եթող քոյոց պարտապանաց. թող և ըզմեր ըզ-

յանցանս ողորմութեանդ քո Քս՛ ։ Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեր օծմամբ Հոգւոյն. մերկացաք մեղօք ըստ Նախահօրըն պատրանաց. զգեցո ըզնոյն վերըստին ողորմութեանդ քո Քս՛ ։ Յածային կայծակունն ի սրովբէիցն անհըպելին. անմաքրապէս մերձեցաք գող պատարագան քում խորհրդոյն. շնորհեա ըզնոյն մաքրութիւն ի թողութիւն մեղաց մերոց ։

ԿԱԲ· Այսօր որ էին ի յերկինս Բան եւ ծընունդ Հօր միածին. ըզծածկեալըն ի յէից խորհուրդ յայտնեաց աշակերտացն. ծառայի ըզկերպարանըն ծածկելով Աստուածութեամբն։ Այսօր հընչեաց յառաքեալըն հայրական բարբառն յերկնից. ասէ դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ. որ ըզբնութիւնն աստուածային կերպիւ ծածկեալ ծառայական ։ Այսօր վեմին հաւատոյ յայտնեաց զխորհուրդ Երրորդութեան. երրակի յօրինմամբ տաղաւարացըն խորհըրդոյ. որում ըզմեզ մաքրեսցես լինել տաճար Երրորդութեանն ։

Որ յանարատ ի յաթոռ բազմեալ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն. անըսկիզբըն Աստուած Բանդ ի Հօրէ առաքեցար. ծառայի զգեցար ըզկերպարան ծածկելով զԱստուածութիւնդ ։ Այսօր ցուցեր ի Թաբօր զանտանելի լուսոյդ փայլումն. ծագեցեր աշխարհի արդարութեան արեգակն. յայտնելով աշակերտացն ըզպարագրեալ Աստուածութիւնդ ։ Յորմէ ահիւ զարհուրեալ ընկեալ դասուց առաքելոցն. երրակի խորհրդով յօրինէին քեզ տաղաւար. որով ըզմեզ սըրբեսցես լինել տաճար քեզ հոգեւոր ։

ԱԳ. Աղաչա՛յքն երկնաւո՛ր օրհնեցէք ընդ հրեշ-
տա՛կս որ միայն է թագաւոր փառաց: Զորդի՛ն
միածի՛ն գոհութիւն բարեբանեցէք որ Ե՛կն և փրկ-
եաց զմե՛զ: Զմխիթարի՛չ [illegible] զՀոգի՛ն ամենայն
շունչք բարեբանեցէ՛ք որ լուսաւորեաց զմե՛զ:

Օրհնե՛մք զքեզ անսկիզբն Հայր ընդ հրեշտակս
քո ի յերկի՛նս: Զքեզ հանապազ օրհնեսցուք զմի-
ա՛յն օրհնեալ թագաւորդ. զի դու միայն ես փա-
ռաւորեալ Տէր յարարածո՜ց քոց: Ըստ արժանի
սրբութեան քում հանապա՛զ քեզ վայելէ օրհնու-
թի. զի դու միա՛յն ես փառաւորեալ փա՛ռօք քեզ
Աստուած:

Օրհնե՛մք զքեզ Աստուած ընդ սուրբս քո
ի յերկի՛նս: Տո՛ւր մեզ խոնարհութե՛ան փառա-
ւորել զքեզ ի տուէ և ի գիշերի. ընդ հրեշտա-
կըս քո ի յերկի՛նս: Լո՛ւր ձայնի աղօթից ժողո-
վըրդեան քում. և լե՛ր մեր ապաւէն պահելով ի
խաղաղութե՛ան:

Առաւօտ խաղաղութե՛ան ծագեա՛ ի մե՛զ մարդա-
սէր և կեցո՛: Խնամա՛լի լուսովդ քո փրկիչ՝
լուսաւորեա՛ զմեր ըզհոգիս՝ և կեցո՛: Եւ յամ
ի վըտանգէ ամրացո ըզմեզ ընդ հովանեաւ աջո-
վդ քո սրբոյ և կեցո՛:

ՄԾ. Ամենիմաստ ամենից Հա՛յր բազմագե՛ղ խնամ-
ծող ստեղծող և Տէ՛ր բոլորից՝ անե՛ղ և էից էակ.
զո՛ր միշտ օրհնեն դասք անմարմնականացն յաւե-
ժաբար հնչմամբ: Որ կերպարան և կնիք Հօր՝
առեալ վասըն մեր ծառայի կերպ ի կուսէն. որ էն
ի յաթոռ փառաց անհաս վերնոցն. ի յսերին ի-

քեանի եւ ի մսուր յանբանից բազմեալ։ Զի կուսէն մարմնացեալ Բանն՝ նկայք ժողովուրդք ընդ հովիւսըն բարեբանեսցուք. եւ ընդ մոգուցն երկըրպագեսցուք. ընդ երկնային զօրսն երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ։

ԽԴ. Զորս ըստ պատկերի քում ստեղծեր. նորոգելով քեզ տաճարս ցուցեր. զնորոգեալս ի մէնջ ըզտաճա...րս ընկալ քեզ ի բնակութիւն։ Որ շնորհես մեզ կենաց տուող զկենդանարար քո ծառայական կերպի. բերելով ըզզօրութեան ըզմեր...ղդ ի փառս սուրբ Երրորդութեան։ Կեցո զորդիս ծառայից քո զոր ի Հովմայ գահէիցըն վերապատուեցեր. որ եդին ըզդեմըն հաստա...յ հիման որ եկեղեցւոյ։ փառք Հօր։ Որ ըզվերջինըս զայս հրաշափառեցեր. քեւ շաւ բնակցութի ըզհիմըն փակեցեր. ըզպանծալի եւ ըզփայլեալ ըզփառս տանս ...յս վերջինըս քան զառաջինն։

Այժմ եւ միշտ։ Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ մարմնոյն. այլ եւս ... զհացըն կենաց կերակուր բանաւորաց. բարեխօսեա առ Քս ըզընջել ըզգիր մեղաց մերոց։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Գ.Կ:

Սրբարարակիցըդ Հօր համագոյ Հոգւոյդ Որդի եւ Բան. որ ըզխորհուրդ տնօրէնութեանդ քո ծանուցեր առաքելոցն. ըզքեզ օրհնեմք Տէր հար-

ցըն մերոց։ Որ զփրկական քո օր՝ զանարատ պատարագին զենումն. ցանկացան տեսանել Աբրահամ. ետես Աստուածն եւ ցնծացաւ. ընդ որ օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։ Որ ըղձնաւոր խաչ քո գուշակէր. սանդուղքըն Յակոբայ. որով հրեշտակք ի յերկիր իջեալ՝ եւ մարդիկ յերկին ելին. ընդ որ օրհնեալ ես Տէր Աստուած հարցըն մերոց։

Գ. ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։ Նախանձաւորք ճգնութեան մեծ նահատակին Յոբայ արդարոյ. հոյլք ճգնաւորաց՝ բարձր արարէք ընդ այրն երկնաւոր։ Փառք Հօր։ Ընդ ողջախոհին Յովսեփայ՝ որ յաղթեաց մեղաց ցանկութեան. մանկունք Սիոնի բարձր արարէք զՔս թագաւորն։ Այժմ եւ միշտ։ Ընդ օրհնեալն Քեզ՝ Մելքիսեդեկի քահանայապետին. դասք քահանայից՝ բարձր արարէք զՀոգին ճշմարիտ։

Մեծացուսցէ Գ. Կ.

Ծառատունկ խնկաբեր ծառոյ յանուշահոտ բուրաստանէն. որ ի գնացս Հօրն վառակաց ընծկեցար. եւ զանմահութեան պտուղն ի ժամու ետուր մեզ. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Զանապական բողբոջն յանծային դրախտէն յորովայն քո տնկեալ. բղխեցեր յարմատոյն Յեսսեայ ծաղիկ. վայելուչ կուսական ծնընդեամբ. վասն որոյ ամենեքեան ընդ քեզ միշտ մեծացուցանեմք։ Այժմ եւ միշտ։ Յարփիայն լուսոյ ծագումն ի քեզ վառեաց ըղձրանգ մարմնոյն լոյս աշխարհի. որով գտեալ զպատկերն իւրական.

զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն. փառն որոյ բարեխօսեաւ նորոգել զմեզ ի հնութենէն մեղաց։

[illegible]։ Ժ.Թ.. 38։ Ձեռ պատարիկ։ 138։ Ատր Օ՞ք ատուրս։

Ողորմեա Գ.Կ։

Շնորհեա մեզ Տէր ընդ աղքատաց որբնակին ղազարու ժուժկալութի. զի կամաւոր աղքատութբ արքայութեան երկնից ընդ նմին լիցուք արժանի. լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։ Փառք Հօր։ Որ փոխանակ հայցին կարօտութ զհայցն անմահակ նմա շնորհեցեր եւ ընդ մեծատանն անգթութեն ի գոգն Աբրահամու ըզնա ընկալար. լուր մեզ և ողորմեա Քն Աստուած։ Այժմ և միշտ։ Լուսաւորեա զաչս սրտից ատանին մեզ ողորմութեանց ի քէն Տէր զողորմութիւն. զի մի ընդ մեծատանն հայցեսցուք ի բոց հնոցին ծագիլ մատին ջուր ի զովացումն. լուր մեզ և ողորմեա Քրիստոս Աստուած։

Տէր յերկնից Գ.Կ։

Որ ըզլոյս ծագման քո բանի. ծագեցեր յաշխարհամած խաւարին անգիտութեան. լուսաւորեա և զմեզ Հօր իմաստութի։ Փառք Հօր։ Որ զհամօրէն դատաստանին օրինակ. նշանակեցեր առ մեծատունն եւ Ղազարու. ներհակաբար տալով զոր աստ ընկալան։ Այժմ և միշտ։ Մ որոյ աղաչեսցուք ըզքեզ Տի. փրկել ըզմեզ ի հրոյ մեղաց և տանջանաց. հանգչել ի գոգ նահապետին արդարոյ. անբաժանելով և մեք ընդ հրեշտակացըն դասուց.

նելի սուրբ Երրորդութեանն որ. համաձայնեալ եր-
գեմք ընդ փառս ի բարձունս:

Ճաշոց Սաղմոս ՃԺԲ:

ԿՑ. Նշխարի անուն: փխ. Օրհնեցէք մանկ: 161:

Որթիւ

Արդ Աւետարանիս որ ըստ Ղուկասու: ԺԺԲ. 32:

Տէրն մեր Յս Քս ասէ.

Մի երկնչիր հօտ փոքրիկ զի հաճեցաւ: 56:

---

ՅԵՐԵԿՈՅԻ Ժամք. Գ.Զ. Որ տիրական: 1178:

---

# Դ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Գ.Կ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամուն Գ.Զ. փառաւորեալ ան: 431:

---

# Դ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Զ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամուն Գ.Զ. փառաւորեալ է: 432:

---

# Դ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Կ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամուն Գ.Զ. Հարցն մերոց Ած: 434:

---

# Դ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԱԶ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամուն Գ.Զ. Օրհնեալ ես Տր: 435:

---

# Դ. ՈՒՐԲԱԹ

ԱԿ:

ՅԱՌԱՒՕՏՈՒ Ժամուն Գ.Կ. Ած բարձրեալ: 436:

# Կ. ՇԱՐԱԿ

## Ս. Քառասնիցն Սեբաստիոյ։ ԲՁ։

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհն—Էն գ.կ։

Այսօր ընդ անմարմնոցըն դասս պարեն. որք ի Սեբաստիա ճըգնութեամբ պատերազմեալք յաղթեցին թշնամւոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ։ Ն՛ ըզմոլութիւն անօրէն բռնաւորին. ամայրին արիութեամբ վանեալ. տարեալ ժուժկալութեամբ համբերեցին տանջանաց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ։ Ի ձուլեալ պատուական մարմնոցն ի գըժընդակ օդոյն. տագնապէին ի լըճին սառուցելոյ անտանելի տանջանացն. զանչս ի յերկինս համբարձեալ եւ զօգնութիւն ի քէն խնդրէին. որ յոյս և ապաւէնդ ես քոց սրբոց խնայեա ի մեզ։

† Այսօր զանյաղթելի մարտիրոսացն՝ եկեղեցի տօնէ ըզայրիշատակ ճգնութեն. որք ի Սեբաստիա պատերազմեալք ընդ թըշնամւոյն յաղթեցին քաջութեամբ. սոցին աղաչանօք Քրիստոս խնայեա ի մեզ։ Այսօր անտանելի չարչարանօք նահատակեալք ի լըճին սառուցելոյ երանելի քառասունքն. որք ի բարձանց անճառելի ճառագայթիցըն նըշողիւք տպացեալք լինէին. որ իջեր ի մէջ սրբոց քոց Քրիստոս խնայեա ի մեզ։

ՍՏԻ· Ով երջանիկ ճառագայթ՝ առաքելական քա-
րոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփանոս՝.
հաստատութիւն ի Քէն հայցեա՛ որ եկեղեցւոյ։
Որ քոյին յօժարական համբերութեամբ ըզքարկոծու-

մըն յանձն առեր․ շնորհեա՛լ քեզ ԱՅ լինել
չարչարակից Քի․ զի և՛ մեզ ուսուցես փառաւորել
որ զնորոգութի՛ն։ Աղօթեիր որ քարաձիգըն լի-
նէին ի քեզ՝ նմա՛ն ի վկայս․ զի առցեն ըղձա-
ւորացն մըն բարի յարմարչէն ամենեցուն․ և այժմ
աղաչեմք ըզքեզ և վասըն մեր բարեխօսեա՛։

ԳՐԻ․ Խոստովանօղ Քի ճըշմարիտ վկայ․ բազ-
մաչարչար նահատակ տէր Գրիգորիս․ զպակասու-
թի չարչարանաց Տե՛ ի մարմնի քում կրեցեր․ ա-
րամ ցընծայ եկեղեցի ի փառս որդւո՛ց Սիոնի։
Օ՛նօղ հօգևոր ծնանման սիրով․ զորովագութ
հայր պարծանաց տէր Գրիգորիս չարչարանօք մար-
մնոյդ մաքրեցեր ըզմեզ ի յաղտոյ մեղաց․ և ծը-
նար որդիս լուսափայլ բանիւդ։ Կերպարան փա-
ռաց՝ միածնի Որդւոյն մարտիրոս յաղթօղ տէր
Գրիգորիոս․ բեւեռս երկաթիս ընկալան երկնա-
գնացդ թամթք ոտից քոց սուրբ․ զի բևեռեսցես
ըզմեզ յերկիւղն Աստուծոյ։

ՀԱՅՐ․ Այսօր ցընծայ եկեղեցի ընդ անմարմնո-
ցըն դասակցեա՛լ տօնելո՛վ զյիշատակըս քո
տէր սուրբ Ներսէս․ որ ի Հոգւոյն սըրբոյ աղաւ-
նակերպ իջմամբ վըկայեցար․ բարեխօսեա՛ առ
Քրիստոս վն անձանց մերո՛ց։ Քահանայապետ
ընտրեալ արժանապէս շնորհօք Հոգւոյն բաշխե-
ցե՛ր զփրկական մարմին և զարիւնըն Տեառն․
յորում հրեղէն սեան ի յերկնից իջեալ․ բարե-
խօսեա՛ առ Քրիստոս վն անձանց մերո՛ց։ Արդ ա-
ղաչեմք ըզքեզ լուսաւորիչ հօգւո՛ց մերո՛ց նըմա-
նեա՛լ Մովսէսի նախամարգարէին մեծի․ լուսա-

փայլեալ զիմացք անձահրաշ տեսլեամբ. բարեխօ-
սեա առ Քրիստոս վ՟ս անձանց մերոց:

ՄՐՏ. Այսօր հրեշտակաց դասքն ի յերկինս ու-
րախանան ի վերայ ճգնութեան սրբոցն:
Այսօր ճգնազգեաց սրբոց դասքն ի յերկրի պը-
սակեցան երկնային անձեղէն փառօքն: Այսօր
անմարմնոց զինուորութիւնքն մեծապէս տօնեն.
քանզի երկրաւոր զինուորաց բազմութիւնքն ըն-
ծայեցան ի խորան սրբութեան երկնից:

Նահատակք յաղթօղք քաջք ի մարտի երանե-
լի սուրբ մարտիրոսք. որք վանեալ ըզթըշնամին
խորտակեցիք: Հրեշտակացն դասքն տօնակից
են մեզ. եւ ջոկք աթոռոցն զուարճացեալ եր-
կրին. ընդ վարդագոյն ձեր հեղուածս արեան. որք
վանեալ ըզթըշնամին խորտակեցիք: Անթառամ
պըսակըն ձեզ աւանդեալ մնայ. քան զականս
պատուականս գերագոյն հրաշիւք. որք վանեալ
ըզթըշնամին խորտակեցիք:

Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ եր-
կրին ընդ առաջ Տեառն Քնի որդւոյն Աստուծոյ:
Ձայն ի յերկնից վըկայեալ ասէ եկայք օրհնեա-
լըք զօր խնդ ժառանգորդք երկնից խորանացն:
Լըցէք ըզտեղի անկելոցն ապստամբողական թըշ-
նամւոյն. որ ի յերկնից վայր անկեալ:

Ս՟Օ. Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ
արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգա-
կանն արդարութեան. եւ նստելոցս ի խաւարի լոյս
ծագեցեր. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ
մեծացուցանեմք: Անապական տաճար եւ մորենի

անկիզելի. որ զանշէջ հուր Աստուածութեան ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջա-կրից բոց. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Կենդանի տապանակ կտակա-րանաց Նորոյ ուխտի. որով Ելք յերկիր ա-նտեաց հորդեալ. Հոգւով ի քեզ տըպաւորեալ Բանին. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մե-ծացուցանեմք:

Խ2. Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բար-ձունս երգեսցուք. թագաւորին Քրիստոսի հաւատա-ցեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսաւորել զըն-տրեալ նոր զեկեղեցի. եւ պըսակեաց նոր խա-չիւն. Նըմա ըզփառս երգեսցուք: Փառք Հօր: Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խա-չին. եւ Փրկողին մատուսցուք փառք եւ պա-տիւ յաւիտեան:

Այժմ եւ միշտ: Այսօր ի լոյսն աստուածային երգոյն անցանէին ընդ ջուր. մաքրեալք որպէս զոսկի փորձելով ի հուր. եւ համբարձեալք ի յեր-կնային զինուորութիւնսն դասելով ընդ անմար-մին զուարթունսն. որ ես փառաւորեալ ի մէջ սըրբոց քոց Քրիստոս խնայեա ի մեզ:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Հարց Գ2:

Այսօր տօնելով ըզյիշատակ քաջ եւ յաղթող վկայիցն. որք ի Սեբաստիա արիաբար ընդդիմա-մարտեալ հերքեցին ըզմոլորութիւն անօրէն կռապաշ-տութեանն. բարեպաշտութեամբ զքեզ դաւանեալ միանձնական ի Երրորդութիւն. օրհնեալ Տէր Աս-

տուած հարցն մերոց։ Սրբք հանդիսացեալք խրախուսելով ընդ երկնային զինուորութեանցն բոլորեցին հօյլն. և միաբանութեամբ յակնարկելն խուռեանց ընդ քեզ վերակարգային յօգնութի. ամենակարօղ զօրութիւնդ միշտ թագաւոր յաւիտենից. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։ Իսկ բղխումն յորդաբուղխ սուրբ արեանցն. ի ձուլել պատուական մարմնոցն ի դժընդակ օդոյն. և վերնականամ տեսչութեամբ ճառագայթաձև փայլմամբ բոլորեալ պսակս յանմատոյց լուսոյն. քեզ յաւէժաբար հընչմամբ ընդ հոգեղինացըն գասուց վերերգեցուք. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Գ. Զտէր օրհնեցէք բարձր արարէք յաղթողական ձայնիւ ընդունակեալն ի մէջ սրբոց։ Փառք Հօր։ Այսօր հրաշափառ ծագմամբ Որդին միածին զճառագայթս Աստուածութեան երևեցուցեալ ի մէջ լերին. արփիահրաշ փայլմամբ լուծանելով ըզպաղումն դառնաշունչ դժընդակ օդոյն. Եւ բարձր արարէք յաղթողական ձայնիւ ընդունակեալն ի մէջ սրբոց։ Այժմ և միշտ։ Այսօր վերանորոգօղ սուրբ Հոգին ճըշմարիտ. նախագուշակ տեսլեամբ հօտապետին. յայտնեալ ըզգանձս հոգևորս. և բոցաձաձանչ հրաշալիք ի փայլումըն նշուլիցըն համահաւասարեալ ի հոսանս ջուրցն. Եւ բարձր արարէք յաղթողական ձայնիւ ընդունակեալն ի մէջ սրբոց։

Մեծացուսցէ Դ.Զ։

[illegible] հրաշալի որ անլոյծ էր ի մէնջ.

եւ Բանըն հայրական անըմբռնելի․ հուր փայ-
լակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ․ անվը-
նաս պահելով զարարածս ամենայն։ Փառք Հօր։
Ծագումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ․
ճառագայթելով զարարածս ամենայն․ երկինք
ցնծային և երկիրս ուրախանայր․ եւ Քրիստոս
Աստուած ընդ մարդկան շրջեցաւ։ Այժմ և
միշտ։ Առ քեզ ապաւինիմք ամենասըրբուհի․
գերագոյն և հրաշալի եւ բաշխօղ բարութեանց․
աղբեւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց․
Եւ եղեր վերընկալ աստուածային Բանին։

Ողորմեա Դ. Ձ։

Հրաշափառ է ծագումըն լուսոյ քո Քրիստոս․
որ ի մէջ լըճին․ զուարճացոյց նոր ըզքառա-
սունսն․ ողորմեա մեզ Աստուած։ Փառք Հօր։
Լուսափայլ է ողորմութեան քո շնորհք․ ծագեալ
ի մէջ քառասնեայն․ զուարճացոյց սուրբ ըզ-
մանկունսն․ ողորմեա մեզ Աստուած։ Այժմ և
միշտ։ Աղաչելի վըկայք քո Քրիստոս․ նահատակեալք ի
պատերազմի․ եւ ընկալան զանապական պըսակն․
ողորմեա մեզ Աստուած։

Տէր յերկնից Դ. Ձ։

Այսօր ցնծան դասք հրեշտակաց․ քանզի ա-
նուանք ձեր գրեցան ի դըպրութին կենաց ով
սուրբ քառասունք․ ընդ որս և մեք երգեսցուք
Քրիստոսի օրհնութիւն։ Փառք Հօր։ Ով երջանիկ
ճառագայթք որք զօրութեամբ ամենայնին ըզպա-
ղումըն լըճին եղկանցուցիք․ եւ աղօթիւք ըզպակա-
սումըն չորրորդ տասինըն լըցուցիք։ Այժմ և

միշտ: Մարդիք եւ սիրեցեալք ի Քրիստոսէ. լուսաւորիչք աշխարհի. պարծանք սուրբ եկեղեցւոյ. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Մանկունք Դ. ԱՏ:

Օրհնութիւն Տեառն առաքելական ցեղն տօնիւս. պայծառացեալ հաստատեցեալք պսակօքն որք ի Սեբաստիա. ծածկեալ զծովածուփ կենդանւոյս լուծին ըղձանօք. Ճգնութիւն սոցա մաղթեսցուք զհաշտութիւն անձանց: Փառք Հօր: Քրիստոսածիր երկնահամ ճառագայթիւք տապանաւոր ծովըն սառնապատ լըճին. վասըն զի պատուական արեանցըն հեղման. զկապուտակ ըղձովըն վարդագոյն ներկէր. Ճգնութիւն սոցա մաղթեսցուք զհաշտութիւն անձանց: Այժմ եւ միշտ: Թագաւոր երկնաւոր. որ ըզգեթիւ սրբոց քոց բարեգթութիւն ընծայեր զխաղաղութիւն նոյն մեր ճրհնեաւ. զի մի՛ որք ծցեալ ի բանսարկուէն նըցէ տրտաքս ի կորուստական բաղանիսն. Ճգնութիւն սոցա մաղթեսցուք զհաշտութիւն անձանց:

---

ՅԵՐԵԿՈՅԻ ԺամԷ. ԻԳ. Որ պատուի: Տէր ի՞ կոչ:

# Ե. ԿԻՐԱԿԷ

## ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԻԿ:

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն ԻԿ:

Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս. անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ Աստուած հոգւով եւ մտօք: Որ ըզքան քո օրինաց հա-

տանտեցեր գործով մեզ օրինակ. հանելով ըղ-
ձիչերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ. բնութի՛
մերով անօրինաբար որում կրկնէ ծառայք ա-
մենայն: Վասն որոյ եւ մեք պաղատեսցուք առ
քեզ Քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ
լինել քեզ յանդիման. մաքուր աղօթիւք ըստ
անմարմնոցն որ յերկինս: Աղաչանօք Աս-
տուածածնին անապական քում ծննդեան. զհա-
նգիստ անշէջ սրբոցն մերոց. բացցես ողորմութի
հայել ի լոյս քո Քրիստոս:

† Պատուեր արդարութեն հաստատեցեր ի մեզ
ըղձիւքն մեր՝. դատել զհոգի եւ ըզմարմին՝. ար-
դարապէս դատաստան ըստ օրինացդ քոց Քրիստոս:
Նոյն անիրաւ դատաւորին որ ի քաղաքն բնութեան
մերոյ՝. ոչ ունելով զերկիւղ քո սուրբ. եւ ան-
պատկառ ի մարդկանէ՝ ոչ առնելով դատ զըրկե-
լոյն: Այլ անմահ սուրբ փեսայիդ այրի հոգի իմ
պաղատի. ուսո զիրաւունս քո խնդրում դատաւո-
րիս. առնել ինձ դատաստան արդար ընդ ոսո-
խի մարմնոյ իմոյ:

ՎԱՐ. Զնաւագայթ փառաց Տէր Որդիդ միածին.
որ ըզլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ.
այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր: Որ ան-
նիւթ սրովբէից անհաս ի վեր քան ըզբան.
ծառայի կերպիւ պարածածկեալ ըզլոյսդ անըս-
տուեր. այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր: Որ
հրեղինացն անմերձենալի հօր Աստուածդ. ի հո-
ղեղէնս խոնարհեալ լոյսդ արփիական. այսօր ի
Թաբօր փառօք փայլեցեր:

Որ գերագոյն փառօք պայծառացոյց զԱդամ առաջին. որ ճառագայթմամբ պերճագոյն մերկացաւ ըզփառս անպատումս. այսօր վերստին փառօք զարդարեաց: Որ ի Նախնումն երևեալ Մովսէսի ամպովքն ի Սինա. այսօր լուսափայլ ամպովք ի Թաբօր յայտնեալ վերկայեաց դա է իմ Որդի դը-մա լուարուք: Որ ի յերկինս վերացոյց հրե-ղէն կառօք զԵղիա. այսօր վայրաբերեալ ի Թաբօր հանդերձ Մովսէսիւ. խօսէին զելիցն որ յԵրուսաղէմ:

Ա.Գ. Ընդ լուսափայլ զուարթնոյն ըզյարուցեալն օրհնեսցուք. և մաղթելով խնդրեսցուք. մաք-րեա զմեզ ի մեղաց: Ընդ խնկաբեր որ կա-նանցն՝ անմահ բուրմանն անուշից՝. խունկս աղօթից մատուցցուք՝. մաքրեա զմեզ ի մե-ղաց: Ընդ խուզարկելիցն արտասուօք՝ զմարդկան բարձողն արտասուաց. պաղատեսցուք արտա-սուօք՝. մաքրեա զմեզ ի մեղաց: Ընդ Քրիս-տոսի պահելով յաղթողն լցուք փորձողին՝. և ընդ հրեշտակս երգեսցուք՝ փառք ի բարձունս Աստուծոյ:

Յորժամ գայցես բազում հրեշտակօք Տէր ի դատել զերկիր: Յայնժամ շարժին զօրութիւնք երկնից՝ Տէր ի յահէ քումմէ: Եւ յայնմ աւուր լեր իմ օգնական Տէր իմ և Աստուած իմ:

Որ օրհնիս ի հրեշտակաց անդադար. Հայր եր-կնաւոր ընկալ զաղաչանս մեր: Առաջի քո ան-կանիմք փրկիչ. խնդրեմք զթողութիւն բազում յանցանաց մերոց: Որ գիտակդ ես գաղտնեաց

մարդկան հօգիդ որ. Տր եւ կենդանարար ընկալ զաղաչանըս մեր:

Օրհնեցէք զՏր ընդ երկնայինսըն նըմանեալ դասուց. նոր ժողովուրդք ասելով. քեզ հօր տըւողիդ մեզ ըզկեանըս փառք: Երգեցէք Տն երգ նոր եկեղեցիք ընտրելոց որդիք Սիոնի ասելով. քեզ Որդւոյ շնորհողիդ մեզ ըզկեանըս փառք: Բարեբանեցէք զԱծ ի պաշտելըս սըրբուն նորա ձայնիւ ցընծութեան ասելով. քեզ հոգւոյդ պարգեւողիդ մեզ ըզկեանըս փառք:

Մծ. Սիւն լուսոյ եւ ամպ հովանի սուրբ կոյս. որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս: Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ կոյս. քանզի պըտուղըն կենաց ի քէն տըւաւ մեզ. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս: Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց սուրբ կոյս. որ զանտանելին յէից ի գիրկըս քո բարձեր. զքեզ բարեբանեմք Աստուածածին կոյս:

ԽԶ. Նըկատք ժողովուրդք ի տաճարի փառաց Քրիստոսի. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս: Քանզի թագաւորըն Քրիստոս պըսակեաց ըզսա սքանչելի փառօքն իւրովք. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս: Փառք հօր: Ի սմա եւ զօրքըս հրեշտակաց դասաւորեալ տօնեն Տեառն. տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս:

Յաժմ եւ միշտ: Մարիամ կոյս անարատ՝ զանապական փեսայդ աղաչեա. զի հաշտեսցի ընդ այրի

նղեալ հոգիս. եւ միաւորեցի գործեալ սի-
րով ընդ հնացեալս ի նմանէ:

---

## ՑԱՌԱՒՕՏՈՒ

### Ձայն ԴՁ:

Որ ի սկզբանէ փրկութեն մերոյ օրինակի երեւ-ցար մարգարէին Մովսէսի. աստուածային վառ-եալ բոցով. ընդմորենին անկիզելի ի նմանու-թիւն կուսական ծննդեանն. օրհնեալ Տէր Աս-տուած հարցն մերոց: Որ յօրինակ քո գա-լստեան յաշխարհ առաքեցեր զՄովսէս ի յԵ-գիպտոս. ազատելով զհինն Իսրայէլ արեամբ գառինն խորհրդոյ. որպէս եւ դու գառն Աստուծոյ՝ քո կենարար արեամբդ ըզնորս Իսրայէլ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց: Որ ի նմանութիւն կարմիր ծովուն՝ բաժանեցեր խաչիւն ըզծով աշ-խարհական. խորտակելով զիմանեալն գլուխ վի-շապին ի վերայ ջուրց. եւ առաջնորդեցեր ամպով Հոգւոյն ժողովրդեան քո ի յերկինս. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ. Օրհնեցէք Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Այսօր մաքրեսցուք պահօք քառասնօրեայ ըստ Մովսէսի. զի ելցուք ի լեառն խնամալի առ Աստուած. Ամենայն գոր-ծք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Փառք Հօր: Այսօր ընդ մեծին Եղիայի սրբեալ պահովք. զի տեսլեան աստուածային լուսոյն արժանասցուք հոգւով. Ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք: Այժմ եւ միշտ: Այսօր պահովք ճշմարտութե

Ելցուք ի լեառն փորձութեան ընդ Քրիստոսի. պատերազմել ընդ թշնամւոյն. զի յաղթեսցուք նմա. ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք:

Մեծացուսցէ Դ.Ձ:

Աստուածածին գերագոյն քերովբէից Բանին բարձրոյ՝ որ զամենայն կրէ զօրութեամբ. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան: Փառք Հօր: Անճառ սրբութեան բարձրագոյն սերովբէից՝ զանհասն լինելոյն ի քեզ կրելով ծածկեցեր զլոյս աշխարհի. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան: Այժմ և միշտ: Ոստ կենաց որ զանմահութեան պտուղն ի քեն ետուր նախնեաց մերն Եւայի՝ ի մահաբեր երկանց ազատելով. բարեխօսեա առ Տէր վասն մերոյ փրկութեան:

Խաչվերացի Կիւրակէն Սահմանէ: Եր. 1: Նա յերեկոյի: 134: Ըստ Օրէն աւուրս:

Ողորմեա Դ.Ձ:

Դատաւոր արդար. որ հաստատեցեր ի մեզ դատօղ բնութեան ըզմիտըս մեր. շնորհեա սըմա դատել զանձինս իրաւամբք և արդարութեամբ. խնայեա ի մեզ Տէր ողորմութեամբ: Փառք Հօր: Փեսայ երկնաւոր հարսին քո եկեղեցւոյ. զոր եղեալ ի քեն զհոգիս մեղօք. մաքրեա զմթութիւն և յօդեա ի քեզ միութեամբ. խնայեա ի մեզ Տէր ողորմութեամբ: Այժմ և միշտ: Որ մահուամբ մարմնոյ քո մեռուցեր ըզմեղս. և յարութեամբ քո յարուցեր ի մեզ զարդարութիւն. տուր զօրութիւն հոգւոյս կամաց հնազանդել ըղձանաց մարմնոյս. խնայեա ի մեզ Տէր ողորմութեամբ:

Տէր յերկնից Դ.Զ:

Որ փառաբանիս ի հրեշտակաց ընդ Հօր եւ Հոգւոյդ. Քրիստոս Որդի Աստուծոյ. խոնարհեցար ի հողեղէն բնութիւն՝ համբերելով խաչի վասըն մեր. վասն որոյ գըթա ի մեզ մարդասէր փըրկիչ: Որ ըզհին մարդըն մեր մեղաց ի խաչին սպաներ. նորոգելով ըզնոր մարդըն արդարութեան. յուսով կենացն անվախճանից ի նորոգումըն նոր Ադամայ. վասն որոյ գըթա ի մեզ մարդասէր փըրկիչ: Փառք Հօր: Կենդանարար քո յարութեամբդ անմահ թագաւոր. կենդանացո զմեռեալըս մեղօք՝ կենդանական գործովք բարեաց ըստ լուսաւոր քոց պատուիրանաց. վասն որոյ գըթա ի մեզ մարդասէր փըրկիչ: Այժմ եւ միշտ: Շնորհեա մեզ՝ Տէր ըզգաստութիւն արթուն լինելոյ ըստ դըռնապանին՝. զի ի բախել սուրբ փեսայիդ բացցուք ըզդուռըս քոց մըտից ընդ քեզ եւ Հօր քո եւ Հոգւոյդ լինել օթեւան՝. եւ երգեսցուք Երրորդութեանդ ըզփառս ի բարձունս:

Առաւօտու Սաղմոս ՃԺԴ:

ԿՑ. Նշխցի անուն: փխ. Օրհնեցէք մանկ: 161:

Ողթիւ

Ամ Աւետարանիս որ ըստ Մարկոսի: ԺԳ.. 1:

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ յելանելըն նորա 'ի տաճարէ անտի: 61:

---

ՅԵՐԵԿՈՅԻ Հանգ. ԲԿ. Պատուաւոր արդ: 1192:

## Ե. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Գ.Ձ.

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. *Հարցն մերոց Ա̃Ծ* : 438 :

## Ե. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Կ.

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. *Հարցն մերոց Ա̃Ծ* : 439 :

## Ե. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Գ.Ձ.

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. *Որ յամի ցուցեր* : 440 :

## Ե. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Գ.Կ.

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. *Ճշմարտապէս* : 442 :

## Ե. ՈՒՐԲԱԹ

ԱՁ.

ՅԱՌԱՒՕՏՈՒ Հարց Դ.Ձ. *Տէր Ա̃Ծ մեր* : 444 :

## Ե. ՇԱԲԱԹ

*Ս. Գրիգորի լուսաւորչին մերոյ մուտն ՚ի վիրապն :* ԱԿ :

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Գ.Կ :

*Այսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի. զքանս անսասանելի ծաղկեալ՝. յորում տեսա մեզ տունկն անմահութեան տէր Գրիգորիոս՝. և պտղովն իւրով ելից ընտանեցելս ամենայն : Նահատակութեան զարդ ճշմարտի որդոյն՝. մշակեալ Հայրական անդաստ-*

ին աջով. յորմէ բղխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազինս. որով արբեալ ըղձմայլեցաք յուրախութի հոգևոր: Պայծառանայրէր հընչումն հարաւային հողմոյն. ճառագայթեալ հրով ածային հոգւոյն. որով հալեցաւ սառն կապաշտութեան հիւսիսայնոյ ազանց. և եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբն: Դրախտ նորաբուսարձ տնկեալ յաշխարհիս Հայոց. բազմաջան քրտամբք տէր Գրիգորիոսի. արբեալ ի վտակաց հոսման քաղցր ճշմարիտ Բանին. ծաղկաւէտ լցեալ հրաշագեղ տնկօք: Երկնային լոյս ծագեալ ի յերկրի ցուցայ. պայծառացեալ փայլմամբ ի յարփւոյն կենաց. որով հերքեցաւ խաւար թանձրամած հայաստանեայց ազգի. և տեսին ըղձիս շնորհաց որ հոգւոյն: Զօրաց հրեղինաց անմարմնական դասուց. պարակցեալ ցնծան ընդ հողանիւթ բնութեամբս. որ ընծայեաց տն ԱՅ զտէր Գրիգորիոս. որով նուիրեն ի փառս ուղղափառ հաւատոյ մանկունք: Նկան բարւոյն կերպարան բարեաց. հովուապետ բարի տէր Գրիգորիոս. քաղցրաձայն հընչմամբ դարձուցիչ մոլորեալ հօտին. ժողովեալ ի հօտ ճշմարիտ հովուին: Ընտրեալ յԱՅ քահանայապետ անբիծ. քարոզող ճշմարիտ Աստուծոյ Բանին. ընծայեցեր տն ԱՅ նոր ժողովուրդ մաքրեալ. հրաւիրեալ ի փառս վերնոյն Սիովնի: Թագ պարծանաց արշակունեաց կազմեալ. առաքելական վարուք տէր Գրիգորիոս. յօրինեցար բազմագոյն ակամբք հանդիսից նահատակութեան. փայլեալ պսակ հիւսեալ

որ եկեղեցւոյ։ Ժառանգորդ եղեր հայրենի սե-
փական հօտին․ վիճակեալ Թադէոսի որ առա-
քելոյն․ պարգեւական զաւակ կենդանի նշխարաց
Նորին․ շառաւիղ շնորհաց աղօթիւք հայցեալ։
Ի փշաբեր արմատոյ վարդ կարմրերփեան ծաղ-
կեալ․ առաքելաշնորհ տէր Գրիգորիոս․ անու-
շահոտ բուրմամբ լցեր ըզՀայաստան աշխարհս․
յայտնելով ի մեզ ըզհոտ գիտութեան։ Լուսապայ-
ծառ ծաղիկ ի յերկրի ցուցար․ բըժիշկ հոգւոց
մերոց տէր Գրիգորիոս․ քաղցրաճաշակ արմաւենի
ի տանն Աստուծոյ տնկեալ․ պարարտացեալ
պըտղով հաւատոյ մանկամբք։ Խոստովանող
Քրիստոսի ճըշմարիտ վկայ․ բազմաչարչար նահատակ
տէր Գրիգորիոս․ զպակասութիւն չարչարանաց Տեառն
ի մարմնի քում կրեցեր․ որով ցընծայ եկեղեցի
ի փառս որդւոց Սիովնի։ Սնօղ հոգւոր Աստուածա-
նման սիրով․ գործավարութ հայր պարծանաց տէր
Գրիգորիոս․ չարչարանօք մարմնոյդ մաքրեցեր
ըզմեզ ի յաղտոյ մեղաց․ և ծընար որդիս լուսա-
փայլ բանիւդ։ Կերպարան փառաց միածնի Որ-
դւոյն․ մարտիրոս յաղթօղ տէր Գրիգորիոս․ բեւեռս
երկաթիս ընկալեալ երկնայնաց թաթք ոտից քոց
նր․ զի բեւեռեսցես ըզմեզ յերկիւղն Աստուծոյ։
Հայաստանեայց հայր հաւատոյ՝ հեղինակ ըն-
տրեալ․ ճըգնողական վարուք տէր Գրիգորիոս․
ի կոճեղս ոլորեալ հասեալ յարենէ սրունք սըր-
բանեալ մարմնոյդ․ հաստատելով ըզմեզ ի վէմ
հաւատոյ։ Զայնիւ մաղթանօք ըզյիշատակըս քո
տօնեմք․ լուսաւորիչ հոգւոց մերոց հայր Գրիգո-

րիոս՝. կայլիճս երկաթիս՝ ծանրանս և դառնակըս-
կիծ կախաղանօք ընկալեալ՝. գետնամածեալ ծըն-
ծաղութեամբ ծունկք մարմնոյ քո սուրբ: Դեկօք
հաւատոյ ընդ ծով աշխարհիս անցեր՝. վշտակիր
մարմնով տէր Գրիգորիոս. տանջեալ ջարդեցան
ծակլիր բարձք անդամոց քոց նը՝. զի զլուծեալ
անդամք հոգւոյս հաստատեցես վերըստին:
Ջ'ըրմարբիտ Հոգւոյն հանճարով լըցեալ՝. աղբե-
րաբար շնորհիւ տէր Գրիգորիոս՝. սորբագլուխ
եղեր ջրաշարշար պարպատմամբ և ուռուցմամբ
ծըրգնեալ՝. զի լուացես ըզմեզ ի յաղտոյ մեղաց:
Անքրողական աղ համեմիչ Հայաստանեայց եղեր.
արիաբար հսկող հայր Գրիգորիոս. ծայրին օրի-
նացըն բեռնաբարձ ողամբ կրեցեր ըզծանրութիւն
աղին՝. որով բարձեր ի մէնջ զբեռինըս մեղաց:
Յեռեալ ընդ ոսկւոյ ակամբք պատուական մար-
գարտաշար հիւսեմք՝. զչարչարանաց քոց թիւ տէր
Գրիգորիոս. գեղարանօք անրօք և առասանօք չա-
րաչնար տանջեալ՝. գանդամնաւանդս և գեղս աս-
տուածարան բերանոյդ: Նահատակ բարի Քնի ըն-
տրեալ՝. արքային զինուոր տէր Գրիգորիոս՝. սորբա-
գլուխ կախմամբ գառնահոտ շընչմանն արիաբար
տարար՝. զի ուղղեսցես ըզգնացս ոտից մեր յեր-
կինս: Շառաւիղ լուսաղարդ ճանապարհին կենաց՝.
երկրին աւետեաց հետևող տէր Գրիգորիոս. մոխ-
րաշունչ եղեր քացախ ընկալեալ հոգեաշունչ
ռընգամբք՝. պարգևելով ուրախութիւն մեզ օծման:
Ոսկեաձոյլ գերագոյն պատուական գըլխոյն՝. հա-
մանմանեալ հոգւով հայր Գրիգորիոս՝. կըռփեալ

հարուածովք եղեալ ի մամուլս ածաղորդ գլուխ քո· որով բարձրացան գլուխք կորացեալ մեղօք։ Չնաշխարհիկ պարծանք հողեղէն բնութեան· չարչարանօք ժուժկալեալ տէր Գրիգորիոս· տատասկան տանջեալ քերանօք քերեալ և կապարաւ հալեալ· խանձողեցան նշխարք քո սուրբ ոսկերացդ։ Պարակից հոգեղինաց երկնային զօրացն· սրբափայլ զգեստուք տէր Գրիգորիոս· ի խոր վիրապին իջեր ի տղմին ի մէջ դառնաշունչ օձիցն· զի փրկեսցես ըզմեզ ի չար վիշապէն։ Զերմեռանդն աղօթիւք և հոգեւոր սիրով· վաստակեալ յուսով տէր Գրիգորիոս· զանկեալքս ի յերկնից՝ ի խորս անդընդոց զվիրաւորեալքս մեղօք· վերաբերեա ընդ քեզ յերկնային խորանն։ Աւետին քաղցրութեան մեզ ի վերուստ շնորհեալ· երեք հնգօք ամօք ի վիրապին ճգնեալ· անձայլին տեսլեամբն եղեալ բըժըշկեր ըզհարուածեալսն ի դիւաբախ ախտիցն· և լուսափայլ բանիւ բըղխմամբ հաստատեցեր ի հաւատս։ Աթոռակալ տեսլեանն ի վերուստ յայտնեալ· մարգարէահրաշ հոգւով տեսանօղ եղեր· բացման խորանին վերնական յարկին և երկնային լուսոյն· խառնելով մարդկան ընդ հրաշուն զօրացն։ Ա արդարոյն արեամբ վկայիցըն Տեառն· մաքրեցաւ երկիր ի յաղտոյ մեղաց· որ և հիմնեցեր խորան խորհըրդոյ տաճար տէրունի շինեալ· յորմէ բըղխեաց աղբիւր քաւութեան մերոյ։ Տանն ԱՅ տեսանօղ բարի· արժանացեալ շնորհիւ տէր Գրիգորիոս· կործանիչ բագնեաց քակիչ մեհենաց զօրու-

թեամբ խաչին. քաջանայապետ ընտրեալդ աս-տուածային յայտնութեամբն։ Լուսաւորչին հրա-մանաւն ի վերուստ կոչեալ. յառաքելական յա-թոռ տէր Գրիգորիոս. յորդառատ բանիւ հոգե-ւոր ծննդեամբ լուսաւորեցեր զգաւառս աշ-խարհս. ընդ նմ սնեղս շինեալ խորան փառացն Աստուծոյ։ Յանկարծ սրովբէից անմարմնական փառօք. մաքրափայլ մարմնով տէր Գրիգորիոս. յանապատի բնակեցար հանդոյն Յովհաննու և Ե-ղիայի ճգնեալ. օրէնսդիր նմային պատգամաց նման մեծին Մովսէսի։ Խնծեղցս մեղք տա-ռապեալ որդեացս. նմագութ ծննող հայր Գրի-գորիոս. հայցմամբ աղօթիւք առ Հայրն երկնա-ւոր խնդրեա. կատարել զխնդիրս մեր ուղղա-փառութեամբ։

Մծ. Ամենագովելի և քան զերկինս բարձրա-գոյն. որ զանհասանելի զԱստուածն յորովայնի քում կրեցեր. և զծնունդն աշխարհի ծնար. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։ Ամենապայծառ երկրեալ միշտ կոյս որ զան-բաւելի զԲանն անձառաբար յղացար. և զմարմնացեալն Ած ծննանելով ի քէն. վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։ Ի լեռ-նէ վէմ առանց ձեռին հատեալ Դանիէլ գծ-շակեաց զանսերմն ծննդեանդ քո հարսն երկնաւոր. մայր և կոյս ծննդեան մնալով կոյս. վն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք։

Խղ. Յաղթող և զնոր օրհնութիւն միշտ ի բար-ձունս երգեսցուք. թագաւորին Քսի հաստա-

ցեալ ժողովուրդք։ Որ եկն ի լուսաւորել զըն-
տրեալ որ զընկեցի. և պըսակեաց որ խա-
չին. Նորին ըզփառս երգեսցուք։ Այսօր և
մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. և
փրկողին մատուսցուք փառք և պատիւ յա-
ւիտեան։

Փառք Հօր։ Փրկաւէտ մաշուան կենարար Տա-
նին. կենդանի վըկայ տէր Գրիգորիոս. առ ծը-
նեալն ի Հօրէ Որդին միածին լոյսն ճշմարիտ հայ-
ցեաց. լուսաւորել զանձինըս մեր աստուածային
գիտութեամբն։ Այժմ և միշտ։ Բնար քաղ-
ցրախօս ածային Հոգւոյն. յօրինեալ մարմնով
և մասամբք Հոգւոյդ. առ բըղխեալն ի Հօրէ
փառակից Որդւոյ սուրբ Հոգին մաղթեաց. զի մաք-
րեսցէ ըզմեզ ի մեղաց մերոց։

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձյն Դ.Կ։

Որ ի Հօրէ առաքեալ արեգակն արդար. ծա-
գեցեր ընդ տիեզերս ըզլոյս քո առաքելովքն. ըզքեզ
բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։ Որ փո-
խանակ առաքելոցն առաքեալ և քարոզ. առա-
քեցեր Հայաստանեայց ըզսուրբն Գրիգոր. ըզքեզ
բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։ Որ ըզ-
խաւարն անգիտութեան հիւսիսականնացս. հալա-
ծեցեր լուսափայլ բանիւ սրբոյն Գրիգորի. ըզքեզ
բարեբանեմք Աստուած հարցըն մերոց։

Գ.. ԱղՏէր Ընդ լուսաւորչին լուսաւորեալք. Նո-
վաւ բարձր արարէք ըզլոյսն անըստուեր։ Այ-
սօր ժողովուրդք Հայաստանեայց. աշակերտեալք

ճշմարտութեան ի ձեռն սրբոյն Գրիգորի. օրհնեցէք ըզլոյսն անըսկիզբն. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք հօր։ Այսօր նորածնեալք աւազանաւն լուսաւորեալք իմաստութեամբ ի ձեռն որ լուսաւորչին. գովեցէք ըզլոյսն ի հօրէ. բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Այսօր երկնաւոր պատարագին կատարողք քահանայութեան ի ձեռն որ քահանայապետին. բարեբանեցէք զպաշխօղն շնորհաց. բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ.Կ։

Նախահայրապետացն Աբրահամու Իսահակայ և Յակոբայ. պարգևեցար ի յԱ՟յ կոյս Մարիամ դուստր նոցին. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։ փառք հօր։ Անախին և մայր կենաց աջոյն ծընօղ հօր միածնին. որ առ ի քէն մարմնով ընկէց զամբարտաւանըն յաթոռոյ. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։ Այժմ և միշտ։ Որ բարձրացոյց զանկեալ բնութիս ի քէն ծնընդեամբ Որդին յերկինս. ըզկարօտեալքս ելից հացիւ՝ և զմեծատունսն եհան ունայն. երանեն ազգ և ազինք այսօր ըզծնեալդ ի յԱննայէ։

Ողորմեա Դ.Կ։

Որ կոչեցեր ըզհեռացեալքս ի հարսանիս քո Միածնին. ըմպել զբաժակն իմաստութեան ի ձեռն սրբոյն Գրիգորի. բարեխօսութեամբ սորա ողորմեա մեզ Աստուած։ փառք հօր։ Որ գերագոյն քան ըզբնութիւն չարչարանօք քո ընտրելոյն. դարձուցեր

ըզմոլորեալքս ի գիտութիւն ճշմարտութեան. բարեխօսութեամբ սորա աղաչեմք զՔեզ Աստուած: Այժմ և միշտ: Որ ի վերայ անդնդային ջաղջախեր նովաւ զգլուխ վիշապին. ի դրի ներքնումն իջման նորին բարձրացուցեր զմեզ ի յերկինս. բարեխօսութեամբ սորա աղաչեմք զՔեզ Աստուած:

Տէր յերկնից Դ.Կ:

Այսօր զիմանալի լուսոյն ծագողն ի խաւարի նստելոցս. զՔրիստոսի սուրբ Հայրապետն. Եկայք վերապատուեսցուք: Այսօր զանապական Հոգւոյն պարգևս բաշխօղ որդւոց Թորգոմայ. յորդիս լուսոյ նովաւ ծնեալք. Եկայք վերապատուեսցուք: Փառք Հօր: Այսօր զաստուածային Բանին պատմօղ ի Հայաստան աշխարհի. աշակերտեալ նորա մանկունք. Եկայք վերապատուեսցուք: Այժմ և միշտ: Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք ընդ հրեշտակս. յիշատակի լուսաւորչին. փառք ի բարձունս Աստուծոյ:

Մանկունք Գ.Զ:

Այսօր տօնէ եկեղեցի ուրախութեամբ ըզյիշատակ սրբոյն Գրիգորի. որով լուսաւորեալ պայծառացաւ վայելչապէս. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պճնեալ. օրհնեցէք մանկունք զՔրիստոս Թագաւորն: Փառք Հօր: Այսօր ցնծան նորածնեալ որդիք լուսոյ յիշատակաւ սուրբ լուսաւորչին. որով հրաւիրեցան ի հարսանիսն անմահական. միացեալ ընդ փեսային երկնաւորի ի յառագաստն լուսեղէն. օրհնեցէք

մանկունք զԵրիսսուրբ թագաւորն ։ Այժմ և միշտ ։
Այսօր քահանայք հոգևոր պատարագին ըզդա-
սաւորք վերապատուեն ըզքահանայապետ տէրն նո-
րոյ երկնայնոց քահանայութեանցըն հանգըր-
գեալք ։ յոր վերափոխեալ այսօր մըտանէ ի սըր-
բութի՛ սըրբոց միշտ բարեխօսել առ Տէ՛ր վասըն
մեր ։ օրհնեցէք մանկունք զԵրիսսուրբ թագաւորն ։

ՅԵՐԵԿՈՅԻ Հ—նգ. ԻԴ. Որ զխորհուրդ ։ Տէ— Ն կոչ ։

## Գ. ԿԻՐԱԿԷ
### ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ ։ ԻԴ ։

### Ի ԳԻՇԵՐԻ
Օրհն—ըէ ԻԴ ։

ՈՐ ըզխորհուրդ քո գալըստեանդ՝ յառաջա-
գոյն գուշակեցին ։ մարգարէիւքն ի սրբայէն
զօրս ընտրեցեր յետ Մովսեսի ։ որ խօսեցան Հո-
գւով սրբով բազմապատիկ օրինակօք ։ տէ՛ր մեզ
փրկիչ ողորմութիւն՝ և ըզմեղաց ըզթողութիւն ։
Ի մերձենալ աւուրց վերջին՝ զոր տնօրինօղքըն
ծանուցին ։ ըզհասանել մեր փրկողին՝ առ ի վախ-
ճան ժամանակին ։ երևեցար ի մէջ մարդկան՝
զգեցեալ ըզկերպ ծառայական ։ տէ՛ր մեզ փըր-
կիչ ողորմութի և ըզմեղաց ըզթողութիւն ։ Ի
վեցերորդ աւուր զԱդամ՝ ստեղծեր ի տիպ քո
տիրական ։ որ ոչ պահեալ ըզպատուիրանըն մե-
կացաւ ըզպատմուճանն ։ իսկ նոր Ադամդ ի վեց
ժամուն՝ այց արարեր կորուսելոյն ։ տէ՛ր մեզ
փրկիչ ողորմութի և ըզմեղաց ըզթողութիւն ։

Տաճար լուսոյ անըստուերին՝ և առագաստ անճառ բանին․ որ ըղձախնդրոյ մօրն Եւայի բարձեր զա-նէծսըն տրտմալի․ Հայցեմ յՈրդւոյ քո միածնի Հօր հաշտութեանըն միջնորդի․ բառնալ ի մէնջ ըզխռովութի՝ և տալ զոգւոց զխաղաղութիւն։

† Ըստ աւետեաց մարգարէին որ սա փըր-կեալքս արեամբ զառինդ․ ցընծամք Եւ մէք ծառք անտառի ընդ գալըստ Տեառնըդ կըրկնակի․ շնորհեա մեզ Տէր ընդ որդւորոցն ընդ առ ի քէն տընկեալ ծառոցն․ այժըմ յուսով բըղուար-ձանալ Եւ յերկրորդին ընդ քեզ ցընծալ։ Ամ-մին նըման տայ աւետիս Զաքարիա նոր Աւետի․ Եթէ ծերան լեր ո՞հա գայ առ քեզ խոնարհ Եւ հեզ արքայ․ նըստեալ ի յէշ և յաւանակ կըր-կին ածանց զոլ օրինակ․ նըստեալըդ յաթոռ քե-րովբէից նիստ գըթութեամբ ի մեր հոգիս։ Ող-հեռց փառաց քոց Երեւումն որ լինելոց է յերկրոր-դումն․ եմեմ Դաւիթ յառաջագոյն ծանուց կան-խաւ աղաղակմամբ Հոգւոյն․ թէ յայտնապէս Աս-տուած գայցէ հուր առաջի իւր բորբոքէ․ յայն-ժամ Յն ի մեզ խնայեա գըթա Քն Եւ ողորմեա։

Յաստուածային ձայնէ զօրմանըն սարսեցին զողալով կայրապետըք զըժոխոցն․ Եւ մեռեալըն Եկն արտաքս անապական։ Կայցեալ ի գերս այ-րին և ձայնէր ազդ արարող բարբառովն ի գե-րեզմանն․ Դաւզարէ եկ արտաքս անապական։ Ելեալ ի գերեզմանէն երիզապինդ պատանօքըն մեռեալըն․ հրամայեաց լուծանել ի կեանըն յա-ւիտենից։

Անեղն ի Հօրէ ծնեալ Որդի յանէից գոյացուց զեղեալսս. զերկնայինս և զերկրաւորս էութի. ամբարձէք ամենայն տունք փառս արարչին յաւիտենից: Պատկեր աներեւոյթ փառացն Հօր ի պատկեր բարերարուն իւրոյ. որով ըզմարդկային բընութիս. ամբարձէք ամենայն տունք փառս արարչին յաւիտենից: Լոյսն ի Հօրէ լուսոյ ծագեալ լուսափայլ զարդարեաց զԱդամ. ի դրախտին եդեալ անմահ տընկոցն երկրագործ. ամբարձէք ամենայն տունք փառս արարչին յաւիտենից:

Որ նըստիս ի քրովբէս Աստուած Բանդ. այսօր փառըն մեր խոնարհութեամբ նըստար ի լերինըն ձիթենեաց. օրհնեմք ըզքեզ անդադար երգով: Որ համագոյդ ես խորհրդոցըդ Հայրենի. աշակերտաց քոց ծանուցեր ըզխորհուրդ քո գալըստեանն. օրհնեմք ըզքեզ անդադար երգով: Որ ամենայնց ես արարիչ և ըստեղծիչ կենդանութեան. այսօր ըզծածկեալ խորհուրդ Երրորդութեանըդ յայտնեցեր եկեղեցւոյ սըրբոյ քո. օրհնեմք ըզքեզ անդադար երգով:

Որ ի վերդ ես քան զամ ըզմիտս և զխորհուրդս. փառաց թագաւոր խընայեա ի մեզ: Որ միայն ունիս զանմահութիւն և զանեղութիւն. փառաց թագաւոր խընայեա ի մեզ: Որ նըստիս ի քրովբէս Երրորդութիւ անբաժանելի. փառաց թագաւոր խընայեա ի մեզ: Որ երկըրպագեալդ ես ի հրեշտակաց և ի մարդկանէ. փառաց թագաւոր խընայեա ի մեզ:

Օրհնեմք ըզքեզ անըսկիզբըն Հայր. յամենայն ժամ օրհնութիւն ի բարձունս: Գովեմք ըզքեզ

միածին Որդի յամենայն ժամ գոհութիւն ի բար-
ձունս: Բարեբանեմք ընդ քեզ սուրբ Հոգի. յա-
մենայն ժամ փառըք քեզ Աստուած:

Օրհնեսցուք և գովեսցուք առաւել բարձր ա-
բարացուք՝ եւ բարեբանեսցուք զանուն քո. փրկիչ
քեզ վայել է փառք: Հրեշտակք և մարդիկ և ամ
արարածոց լեզուք. ընդ քեզ միայն օրհնեն. փրկիչ
քեզ վայել է փառք: Երկնային զօրութիւնք անդա-
դար օրհնութի մատուցանեն քեզ. փրկիչ քեզ
վայել է փառք:

Մօ. Զ. քեզ Հայր յաւէժ քան զյաւիտեանս բա-
րեբանեն զասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ եր-
գով գոչեն և աղաղակեն. Աստուած աստուծոց և
Տէր տերանց փրկիչ գոլով: Առաքեցեր զքո միա-
ծինըդ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ անարատ
ծընանել յորովայնէ անապական. բանանալով ըզմեր
նեղութիւնս. Աստուած աստուծոց և Տէր տերանց
փրկիչ գոլով: Շնորհք բարի յԱրուսաղէմ
երևեցաւ հեթանոսաց. զի արարիչն յախտե-
նից տըղայ եղեալ յորդեգրութի կենաց կոչէ.
Աստուած աստուծոց և Տէր տերանց փրկիչ գոլով:

Խօ Զ. Անպատկան սուրբ ընդխաչն օրհնեսցուք. որ
եղեւ առաջնորդ առաքելին և յօրինեաց մեզ
ճանապարհ. որ ձեւացոյց մեզ սովաւ միտա-
նել ընդ դրան անեղաշէն դրախտին Տեառն:
Բանալի արքայութեան տեառն հօղածին մարդոյն.
հաստի յառաջին ճաշակմանէն արտաքս անկեալ
ի յաւէժ կենդանութեանն. որ ձեւացոյց
մեզ սովաւ միտանել ընդ դրան անեղաշէն

դրախտին Տեառն: Պատուիրանաձեւ երեւեալ ե-
գիպտական ազգին՝. ցուցանելով ըզզօրութիւն
սրբոյ խաչին՝. յափշտակելով ըզգաւազանըն
դիւթականն. որ ձեւացոյց մեզ սովաւ մըտա-
նել ընդ դուռն անճղաշէն դրախտին Տեառն:
Դրոշմ ըզգայութեան օրինակեալ ի վր՝ սեմոց
դրանց նոցա. աններկիւղ պահելով ըզժողովուրդն
յանդրանկածախ սատակմանէն. որ ձեւա-
ցոյց մեզ սովաւ մըտանել ընդ դուռն անճղա-
շէն դրախտին Տեառն: Փառք Հօր: Երեւեալ
այլասանըման ակըն պատուական ի ձեւ խաչին՝.
հերձանելով ըզծովըն կարմիր. առաջնորդելով
ժողովըրդեանըն սեամբ ամպոյ ըլոյսն անմեկնե-
լի. որ ձեւացոյց մեզ սովաւ մըտանել ընդ
դուռնս նեղաշէն դրախտին Տեառն:

Այժմ և միշտ: Աստուածածին ամենօրհնեալ՝
յերկրէ երկնից հարսն ընծայեալ. յորժամ բազ-
միս լուսոյ նըման քո միածնիդ յաջակողման.
յայնժամ մաղթեա ընդ մեր ըզնոյն՝ փրկել ըզ-
մեզ յահեղ բոցոյն. համադասել ընդ արդա-
րոցն երգել ըզփառս ընդ երկնայնոցն:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ձայն Դ·Կ:

Որ յանճառելի ծոց Հօր ծածկեալ անքըննին
ծընունդ և Բան. եւ ի հրեշտակաց երկրպագեալ
փառաբանեիր՝. ըզքեզ բարեբանեմք Աստուած
հարցըն մերոց: Որ խոնարհութեամբ իջեալ յաշ-
խարհ շիջուցեր ըզբոց մեղաց. որպէս երբեմն ի

Բաբելոն ի մէջ հնոցին՝․ ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: Որ ըստ նախաձայն մարգարէից եկիր ի լրումն խորհրդոյ․ զոր տնօրինաբար կատարեցեր վասն մերոյ փրկութեան․ ընդ քեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց:

Գ․ Այսօր օրհնեցէք բարձր արարէք ընդ նմա յաւիտեան: Որ յայտնեաց Հոգին տեսլեամբ Դանիէլի մարգարէին․ զմիւսանգամ գալստեանն Քրիստոսի զխորհուրդ․ բարձր արարէք ընդ նմա յաւիտեան: Փառք Հօր: Որ ըզչորրորդ գազանն ահեղ զապստամբեալն յԱստուծոյ․ ծանոյց բարձեալ զօրութեամբ Որդւոյն․ բարձր արարէք ընդ նմա յաւիտեան: Այժմ և միշտ: Որ ընդ հինաւուրցն Աստուած եւս նստեալ յաթոռ քերոբէական․ և զՈրդի ընդ ամպս երկնից եկեալ․ բարձր արարէք ընդ նմա յաւիտեան:

Մեծացուսցէ ԴԿ:

Անծախին պայծառ քան զերկինս՝ որ ի մէջ ծագեցեր զլոյսն մեծ և գերազանց․ որով խաւարն անգիտութեան հալածեցաւ․ սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք․ և հոգևոր երգով մեծացուցանեմք: Փառք Հօր: Ամպ թեթև և լուսաւոր՝ որ զանձրևըն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովէն․ զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուտ․ սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք․ և հոգևոր երգով մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Պարտէզ փակեալ տնկատունկ Եդեմ․ որ և ծառըն կենաց ի մէջ դրախտի քո ի Հոգւոյն տնկեալ․ անմահական պտղովն ելից ըզտիեզերս․

սրովբէական ձայնիւ զօրեղ բարեբանեմք. եւ հո-
գւոր երգով մեծացուցանեմք:

Խաղաղութեան Քառասնորդաց Մաշտոցէ: Ձ.Ա. 42:

Նա իբրեւ երեկոյ եղեւ: 136: Օրհն. Օրհնեալ ես.
Ն. այլ ող. առէ:

Ողորմեա Դ.Կ:

Որ ողորմութեամբ զգեցար մարմին. եւ նո-
րոգեցեր զզննեալսս. նորոգեա եւ զմեզ հոգով
Քրիստոս եւ ողորմեա: Որ ի խաչին մեռար
մարմնով. եւ զմեռեալսս դարձուցեր ի կեանս.
կեցո եւ զմեզ հոգով Քրիստոս եւ ողորմեա:
Փառք Հօր: Որ յարեար ի մեռելոց եւ յա-
րուցեր զբնութիւնս մեր յաւով. յարո եւ զմեզ
հոգով Քրիստոս եւ ողորմեա: Այժմ եւ միշտ:
Որ ընտրեցեր զքո զաւազակն. կոչեցեր ի գե-
րեզմանէն. կոչեա եւ զմեզ հոգով ի կեանս եւ
ողորմեա:

Տէր յերկնից Դ.Կ:

Նորահրաշ տեսլեամբ յարութեն քո Տէր. անհե-
ղակերպ փայլմամբ. զարհուրեցան դիք ժողովք.
եւ մեռեալք ընդ կենդանեաց յարեան. ի հա-
սարակ համօրէն յարութեանն: Յայնժամ փառօք
հայրենի գաս ծագիս ի յերկնից. եւ յարուցանես
զմեռեալսն. յայնժամ դասեա ընդ աջմէ քում-
մէ եւ կոչեա զմեզ ի փառս քո: Փառք Հօր:
Յայնժամ հեծանեցան դատողութեան քո Տէր.
սրբեա զմեզ անշէջ հրոյն. յարտաքին
արքայութեան. ժողովեա զմեզ ընդ արդա-
րոցն: Այժմ եւ միշտ: Յայնժամ եկեղեցի հար-
սնացեալ միանայ ընդ փեսային. ընդ իմաստունս

կուսամ՛՛մա՛նայն. արժանացո՛ ատագաւորի՛ն ընդ-մե՛՛ղ ընդ նոսին երգել ըզփառս ի բարձունս։

Առաւօտու Աւագ ՃԺԲ։

ԿՑ. Նշլեցի անուան։ փխ. Օրհնեցէք մանկ։ 161։

Որթիւ

Սրբոյ Առաքեալսն որ ըստ Պօղոսու։ ԽԱ. 5։

Տէրն մեր ՅՍ ՔՍ

Նա յաւել ամենց զատամարէն թէ գեղեցիկ։ 63։

ՅԱՐԱԿՈՅՑ Հանգ. ԲՁ. Բստ աւետեաց։ 1208։

# Գ. ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

ԲԿ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ Հարց ԴԿ. Աճ հարցն մերոց։ 445։

# Գ. ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

ԳՋ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ Հարց ԴԿ. Հարցն մերոց օրհ։ 447։

# Գ. ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

ԳԿ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ Հարց ԴԿ. Օրհնեալ Տէր։ 448։

# Գ. ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԴՋ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ Հարց ԴԿ. Օրհնեալ ես։ 449։

# Գ. ՈՒՐԲԱԹ

ԳԿ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հարց ԴԿ. ԱՏ։

Աննման քո՛ յարութեա՛ն։ Օ՛րհնեա՛լ Տէ՛ր Աս-տուած հա՛րցըն մերո՛ց։ Ասան Աբրահամու սերնդ-

ւոյ քո մի՛ մերժեր ըզմեզ. Աստուած հարցըն մերոց։ Որ տուեալ բարձրացեալդ ես յաւիտենից. գովեալ և փառաւորեալ. Ընդ հարցըն մերոց։

Գ. Գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ փառք Հօր։ Գնդերք ըզՏէր օրհնեցէք։ Զարարիչն արարածոց ամենայն ազինք. օրհնեցէք և գովեցէք անդադար ձայնիւ. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Այժմ և միշտ։ Իսրայէլ ըզՏէր օրհնեսցէ։ Զթագաւորն թագաւորաց եւ զՏէրըն տերանց. քահանայք և ժողովուրդ որ եկեղեցւոյ. օրհնեցէք և գովեցէք հոգւով երգով. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Մեծացուսցէ Դ. Կ։

Ծածկին սուրբ կոյս ամենօրհնեալ Մարիամ. որ օրհնեալդ ես ի կանայս. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ փառք Հօր։ Անապական տաճար և առագաստ լուսոյ. որ ի քեզ փեսայացեալ Բանըն կենաց բնակեցաւ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։ Այժմ և միշտ։ Հուրըն կենդանի որ ի մորենին վառեցաւ. զոր անվլնաս յարգանդի քում կրեցեր և ծընար Աստուած և մարդ. զքեզ օրհնեմք միշտ որ արժանիդ ես մեծացուցանեմք։

Ողորմեա Դ. Կ։

Զարհուրեալ դողացայ ամենամեղ անձն իմ. յահեղ քոյ դատաստանացդ յանհնարելի տանջանացըն։ Քանզի կամաւ մերձեցայ ի մեղս մեծամեծս. որդ կայ եւ մնայ ինձ անհնարելի պա-

տուչամն: Որդ անկեալ աղաչեմ փրկիչ և բարերար. խնայեա յիս ի մեղուցեալս. և ողորմեա ինձ բազմամեղիս:

Ամենակալդ քաւեա զմեղս իմ. զի Ած ես ապաշխարողաց: Փառք Հօր: Եւ զՈրդին որ մի հատեալ յինէն. զի Աստուած ես ապաշխարողաց: Այժմ և միշտ: Եւ փրկեա զիս յահագին հրոյն. զի Ած ես ապաշխարողաց:

Տէր յերկնից Դ.Կ:

Զանազանութեան զաղօթս. և զբանաւոր պաշտօնս. մատուցանեմք քեզ մարդասէր: Ընդ ի բարձանց երկիր. և լուսաւորեցեր. զարարածս քո փրկիչ: Եւ համատարածութիւն արարեր զեկեղեցի խաչիւ քո. փառք գալստեան քո Տէր:

Կանխեալ կամք ի ժամ առաւօտու. օրհնեմք զքեզ Տէր ընդ զուարթունս երկնից: Փառք Հօր: Արդ զմեզ արժանի արարեր ողորմութեան քում. զի օրհնեսցուք զքեզ Տէր ընդ զուարթունս երկնից: Այժմ և միշտ: Քրիստոս փրկիչ մեր փրկեա զմեզ. յորժամ գաս ի նորոգել զերկիր:

Համբարձի Դ.Կ:

Յոյս իմ ի մանկութենէ իմմէ. մի թողուր զիս Տէր Աստուած իմ: Փառք Հօր: Յոյս իմ ի ժամանակի ծերութեան իմոյ. մի թողուր զիս Տէր Աստուած իմ: Այժմ և միշտ: Յոյս իմ ի միւսանգամ գալստեանն քո. մի անտես առներ զիս Տէր Աստուած իմ:



Մի՛ երկնչիր մարիամ զի գտեր շնորհս յԱյ

Ի քսան և հինգերորդում ամսոյն Մարտի տօն է Ա-ւետեաց ամենօրհնեալ սբ Աստուածածնին, յերեկոյն նա-խատօնակ ասենք։

Շարական Ակ։

Խորհուրդն անճառ։ Նոր օրհն. Տէր ի վեր։ Օրհնել Բար. Մի զԱծածինն. Կեցո։ Աւ. Փրկալ Տր։

# ԱՒԵՏՈՒՄՆ

## Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄԱՅ

## ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

### Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնութիւն Ակ։

ԽՈՐՀՈՒՐԴՆ անճառ ծածկեալն յազգաց և յաւիտենից. յայտնեցաւ իշխանին հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ. զոր առ Տր ունիմք բարեխօս վն անձանց մերոց։ Անժամանակն առ ի Հօրէ եւ անմարմինն ծնեալն ծնունդ. այսօր աւետեօքն Գաբրիէլի մարմին զգենու ի սրբոյ կուսէն. զոր առ Տր ունիմք բարեխօս վն անձանց մերոց։ Անտանելին ի համայնից բովանդակիչ բնութեանց բոլորից. պարագրի այսօր մարդասիրապէս յորովայնի անարատ կուսին. զոր առ Տր ունիմք բարեխօս վն անձանց մերոց։ Աներևոյթ փառացն Հօր նկարագիր աննեղապէս. ի ծառայական խոնարհի պատկեր ի յարգանդի հոգւով մաքրելոյ. զոր առ Տր ունիմք բարեխօս վն անձանց մերոց։ Անսահմանելին յէութեան սահմանելեաց էակացուցիչ. ի վեր քան զբան սահմանի այսօր յորովայնի սրբուհւոյ կուսին. զոր առ Տր

ունիմք բարեխօս վ՟ն անձանց մերոց։ Ուրա-
խութեն տրտմեցելոյ բնութենս բերկրեալ կոյս Մա-
րիամ․ զոր ողջունաբերն աւետեօք կրեցեր զոյ-
ւօղն ի քեզ զօրէնս ողջունին․ առ նա միշտ բա-
րեխօսեա վասն անձանց մերոց։

† Որ առաքեցեր զՄիածինդ ի փրկութիւն տիե-
զերաց․ ընդ էութեամբ ծնանիլ մարմնի ի սուրբ
կուսէն հայր երկնաւոր․ զոր առ քեզ ունիմք
բարեխօս վ՟ն անձանց մերոց։ Որ զնախագրեալսն
առ ի քէն մարգարէիւք եկիր կատարել․ անմայր
ի հօրէ անըսկըզբնաբար լինել անհայր ի սրբոյ
կուսէն․ զոր առ քեզ ունիմք բարեխօս վ՟ն ան-
ձանց մերոց։ Որ ի լուսն անճառից՝ ի քէն
յայտնեալ ծածկեալ խորհրդոյ․ ի քէն մաքրե-
լոյ երջանիկ կուսին՝ հօր զօրութիւնն հովանա-
ւորեալ․ զոր առ քեզ ունիմք բարեխօս վասն
անձանց մերոց։

Ա․օ․ Անըսկիզբն Ա՟ծ անճառելի անբաւ զօրութի․
որ յիսկզբանց յաւիտենից խնամարկեցեր զոր-
դիս Ա՟դամայ․ գերագոյն այսօր շնորհիւ փայլեալ
ցուցեր ծընընդեամբ զմայր միածնիդ քո ընտրե-
լոյ․ աղաչանօք սորա խընայեա ի՟ մեզ։ Որ յա-
նէից բանիւ գոյացուցեր զաշխարհս ամենայն․ այ-
սօր մարգարէական տնօրինաբար ի յԱննայէ ար-
կեր հիմունս նորոյ աշխարհի․ աղաչանօք սորա խը-
նայեա ի՟ մեզ։ Ի յամուլ երկրէ այսօր բուսաւ մեզ
բարերեր բոյսըն բարի․ շուշան հովտաց ծաղկըն
դաշտաց․ միամայրըն Մարիամ արմատ տընկոյն ան-
մահութեան․ աղաչանօք սորա խընայեա ի մեզ։

ԿՑՐ. Զանճառելի ըղձիւ Աստուածածնին. տնօ-րինաբար կրեցեր ի քում որովայնի Մարիամ մայր եւ կոյս. օրհնութբ ըզքեզ մեծացուցանեմք: Ի մանաւոր լուսոյն զարհուրեցան դասք առա-քելոցն. այլ ի քեզ բովանդակ կրեցեր ըզհօր Աստուածութիւնն Մարիամ մայր եւ կոյս. օրհնութբ ըզքեզ մեծացուցանեմք: Առաքելոցըն հովանա-ցեալ ամպ լուսեղէն. գերագոյն քեզ Հոգւոյն սրբոյ. եւ զօրութիւն Բարձրելոյն հովանաւորեաց զք Աստուածածին. օրհնութբ ըզքեզ մեծացու-ցանեմք:

ԾՆ. Որ ըզկեանքն անմահարար մահկանացու բնութեան ի քեզ կրեցեր ո՛վ կոյս Մարիամ. որով մեռեալք որք յԱդամայ կենդանացաք յուսով յարութեան. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց: Որ ըզԲանն անեղական ըզէականն էից գոյացութեանց. անճառաբար ծընար մարմին եղեալ ի փըրկու-թիւն եղականացս. առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց: Որ ըզպտուղն ի քէն կենաց ըն-ծայեցեր մեռելոյն Ադամայ. զորոյ պահօք քա-ռասնօրեայ քաւեաց ըզպըտղոյն ճաշակումն եւ յան-վախճան ըզնոյն վերածեաց ի կեանս. առ նա միշտ բարեխօսեա վն անձանց մերոց:

ԾՆ. Ըզքեզ աղաչեմք հանապազ որ Ածածին՝ բարեխօսեա Քնի Աստուծոյ մերոյ փրկել ըզմեզ ի փորձութենէ. եւ յամենայն վտանգից մերոց: Ուրախ լեր մայր անճառ լուսոյ Մարիամ սուրբ Աս-տուածածին. քանզի ի քեզ կրեցեր ըզհօր Աս-տուածութիւնն լուսեղէն տաճար Աստուծոյ Բա-

նէն. առ նա միշտ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։ Ծանուցար տիեզերաց Տէրդ եւ մարդ գոլով. մարմնացար ի նոր կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան. միշտ փառաւորեալ յանմարմնոց զինուորութեանց։

ՀԳ. Որ առաքեցար ի Հօրէ Հոգիդ անեղ եւ համագոյ. աղաչանօք տնօրինաւոր քում Եկեղեցին. լինել մխիթարիչ սուրբ առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա՛։ Որ իջեր տեսարար յերկնից սաստիկ հողմով նման Տէրդ յայտնապէս. եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար ի դասս առաքելոցն. աղաչեմք զքեզ ողորմեա՛։ Որ արբուցեր երկնաւոր գինեաւն իմաստութեան զհոգիս սրբոց քոց առաքելոցն. որք արբուցին տրտմեցելոց որդւոց Ադամայ ըմպելեօքն ուրախարար յայգւոյն Եդեմայ. աղաչեմք զքեզ ողորմեա՛։

ՀԴ. Յորժամ յերկնից գոչէ փողն ազդեցութի առնելով տիեզերաց ի դատաստան ահաւոր. յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէ՛ր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։ Յորժամ ճառագայթք Աստուածութեանդ փայլեն ի յարեւելից. եւ դըպրութիւնք հրաշիցըն բանին յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէ՛ր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո ընդ սուրբս քո։ Զարհուրեալ դողան արարածք ի ձայնէ սոսկալագոչ փողոյն. յորժամ հարկանէ հրեշտակապետն եւ կոչէ ի դատաստան զազգս որդւոց մարդկան. յայնժամ աւուր յահեղին յիշեա Տէ՛ր եւ զմեր զննջեցեալսն. եւ հանգո՛ ընդ սուրբս քո։

Ագ· Որ խոկմամբն իմաստութեան հաստատեցեր զե-
կեղեցի Հօր իմաստութեն. զոր նախանըկարր տե-
սութեն նըշանակեաց Մովսէս խորանաւն երկնահան-
գոյն ի Սինա լերին. լուսաւորեալ փառօքն Աստու-
ծոյ: Որ ըզխորհուրդ անապական տնօրէնութեանըդ
քո ի սըրբոյ կուսէն. տըպաւորեալ տապանակն
ածայլին ուխտին կտակարանաց Բանին Աստուծոյ.
փառաց անեղին տեղի հանգըստեան: Փառք Հօր:
Որ ի կեանս վերադարձի բնութեն դարձմամբ Յոր-
դանանու օրինակեցեր. և ըզըղանութեն մահու և
գըժոխոց կործանմամբն Երիքովի տապանակաւ
խաչին հրաշագործեալ նոր Իսրայէլի. օրհնութի
քեզ Տէր երգեսցեն մանկունք:

Այժմ և միշտ: Որ զնախամօրն անիծից երկանց
լուծեր ըզդատակնիք. որ ըզտըրտմական սահմա-
նեաց ծընունդ անախտաբար ծնանելով ի քէն.
առ նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց:

Ասեղանուի Օծնութեան ի յոյակէն:

---

## ՅԱՌԱՒՕՏՈՒ

### Հարց ԴԶ:

Որ անհասանելիդ ես յէութեն Հայր անըսկիզբն և
անպատճառ. ի փըրկութեան մերոյ սկըզբան. ա-
ռաքեցեր ըզմիածինըդ մարմնանալ ի սըրբոյ կուսէն.
օրհնեալ Տէր Աստուած հարցըն ըմերոց: Որ ի
Հօրէ անմեկնելի անեղակից Բանդ Աստուած.
ըզդասապետ զօրութեանց վերնոցըն նախընթաց
քում գալըստեանդ առաքեցեր յառաջագոյն.
օրհնեալ Տէր Աստուած հարցըն ըմերոց: Բըղխումն

անճառ և անքննին Հօրդ անեղ եւ համագոյ․ զանօրէնութեան քում էակցին․ մաքրագործեալ ըզբնակարան նկատրութեանն․ օրհնեալ Տէր Աստուած հարցըն մերոց:

Դ․ ԸզՏր օրհնեցէք բարձր ամբարձէք զնա յաւիտեանս: Նշկայք փրկեալք կենարար իջմամբ Բանին Հօր ի յարգանդ կուսին․ ընդ երկնայնոց դասուցն երգով ըզՏր օրհնեցէք բարձր ամբարձէք զնա յաւիտեանս: փառք Հօր: Որ զանէծս երկանց ծննդեան նախամօրն եղյծ․ անսերմնապէս ծնանելով յանապական կուսէն․ երգով ըզՏր օրհնեցէք բարձր ամբարձէք զնա յաւիտեանս: Այժմ և միշտ: Որք վերըստին նորոգեալք եղէք ի հնութենէ մեղաց․ զնորոգօղ բնութենս երգով ըզՏր օրհնեցէք բարձր ամբարձէք զնա յաւիտեանս:

Մեծացուցէ Դ․Զ:

Որպէս լեր Մարիամ որ Ածածին․ զի ի տաճարին մաքրեցելոյ յանկարծակի եկըն Տէր․ ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: փառք Հօր: Որպէս լեր դուռըն փակեալ ընդ որ ոչ ոք մըտեալ․ բայց Տէր Աստ Իսրայէլի․ ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք: Այժմ և միշտ: Որպէս լեր աղբիւր կընքեալ ջրոյն կենդանութեն․ զոր ծարաւելոյ բնութեանս եւտուր ի յորովայնի․ ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ողորմեա Դ․Զ:

Որ յանէից անմարմնական զօրաց էակ Հայր անըսկիզըն․ ըզզօրավարս խմբից նոցա աւետարեր այսօր առաքեցեր առ Բանին քո խորան սրբութե․

աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած։ Փառք Հօր։ Որ ի կառս քերոբէից բազմեալ լոյս քան զարեւ յառաջ. ի հողանիւթեանց հանեցար այսօր տաճարի բազմիլ փառաց՝ մաքրագործեալ որովայնի՝. աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած։ Այժմ եւ միշտ։ Որ ի ստուեր ճշմարտութեան խօսեալ յօրէնս տեսանողք՝. այսօր ի գլուխ գրելոց նոցին հովանացեալ նոյն կուսին՝ ի բնակութեն քում էանցին՝. աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած։

### Տէր յերկնից Դ.Ձ.։

Ուրախ լեր Մարիամ կոյս անապական՝. զի ի հայրական ծոցոյ անմեկնելի Որդին ի քո յանձն առնու բնակիլ յորովայնի։ Ուրախ լեր երկին վեհագոյն քերոբէ հողեղէն. որ զանտանելին երկնից եւ հրեղինաց դասուցն ի քո ընկալար մաքրական որովայնի։ Ուրախ լեր ոսկի հրեղէն լուսոյն աշտանակ. որ զարարչական եղականաց լուսոյն. ի քեզ տանելով ծագեցեր խաւարելոցս։ Ուրախ լեր սափոր ոսկի երկնային հացին. որ զառ ի վերուստ իջեալ զմանանայն կենաց. նորոյս պարգեւեալ կերակուր Իսրայէլի։ Փառք Հօր։ Ուրախ լեր ամպ թեթեւ գեղմն իմանալի. որ ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց՝ որդւոցս ընդ գործոց հաւատոյ պտղաբերեալ։ Այժմ եւ միշտ։ Ուրախ լեր դուստր լուսոյ մայր ամենօրհնեալ՝. քանզի յղացելոյն ի քէն համախմբեալ վերինոցն որդիք Ադամի երգեն ընդ փառս ի բարձունս։

Ա———օ——— Էրգ Իջցէ ով։ Քոյ. Մայր նր խ—ն դ.—նյ։

Օրհնի ՈՒ Ը.Ծ̃ին Աողմ, Ընդունեցաւ և Աւետա-րան պնդմայնան առ. 890:

Նոր զԱրարչականն առ զինչ որ օրն բերէ:

---

## ՅԵՐԵԿՈՅԻ

Մեղեդի Օծման Մեծացուսցէ: Կար. Անոր նր:

Համբարձի Գ.Կ:

Ածածին որ կոյս անմատական տաճար. անպարագիծ էին բոլորից բնութեանց լնուածուալ տեղի. այսօր ընդ երկրական զուարթնոյն կրեցեր աւետիք զՏէրըն տերանց ի քեզ. ա՜ռ որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անլռելի ձայնիւ: Փառք Հօր: Յիմանալի վտակաց տանն Այ հոսմանց. վիճակեալ տեսանողացըն ձայնիւ արբմամբ ըզմայլեցար. այսօր զանթառամըն ծաղկեցար ըզծաղիկ ի ժամու տալով զպտուղ. ա՜ռ որ մաղթեմք բարեխօսել վասըն մեր անլռելի ձայնիւ: Այժմ և միշտ: Այսօր ի քեզ լցեալ ամենայնին բարբառ. որ ի փրկութեան համարակաց տուեալ նշան բնութեան ազգի մարդկան. ահա կոյս յղացի և ծընցի որդի զԸնդ մեզ յայտնեալն Աճ. ա՜ռ որ մաղթեմք բարեխօսել վասըն մեր անլռելի ձայնիւ:

Օրհնի Համբարձման Կար. Մե զԱծածինն: Աղ. Ընկալ:

# ՑԱՆԿ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐԱԿԱՆԱՑ


Քաղուած հանգստեան շարականաց . . . . 21
Աւետարանք Հանգստեան 54
Աւետարանք Տօնարի . 58
Այսօր անձառ . . . . 78
Աւետարանք խաչելութեան . . . . . . 85
Նորոգող . . . . . . 97
Աւագ Օրհնութիւնք Յարութեան . . . 267
Համբարձիք Կիւրակէից Յարութեան . . . 295
Օրհնութիւնք Մարտիրոսաց . . . . . . 310
Հարցք Մարտիրոսաց . 345
Մանկունք եւ Համբարձիք Մարտիրոսաց . . 378
Համբարձիք կիրակամտից 384
Կանոն Մարգարէից . . 387
Օրհնութիւնք Պահոց . 396
Հարցք Պահոց . . . 412
Մանկունք եւ Համբարձիք Պահոց . . . . 451
Հարցք Հանգստեան . 457
Մանկունք խաչի . . . 492


# ՑԱՆԿ

## ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ


Տօն Եկեղեցւոյ . . . 530
Տօն Տապանակի Տեառն 601
Գիւտ տփոյ Ս. Աստուածածնի . . . . 608
Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. կամ Վարդավառ . . . . 608
Տօն Շողակաթին . . . 695
Փոխումն Ս. Աստուածածնի . . . . . . 702
Գիւտ գօտւոյ Ս. Աստուածածնի. . . . 748
Ծնունդ Ս. Աստուածածնի . . . . . . 760
Տօն Նաւակատեաց սրբոյ խաչին . . . . . 774
Խաչվերաց . . . . . 781
Վարագայ խաչ . . . 831
Ընծայումն Ս. Աստուածածնի . . . . . . 890
Անարատ Յղութիւն Ս. Աստուածածնի. . . 906
Ճրագալոյց Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . 946
Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . 982
Տօն Տնօրէնութեան եւ Անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . 1030
Ճրագալոյց Յայտնութեան եւ Մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . 1037
Յայտնութիւն եւ Մկրտութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . 1038
Տեառնընդառաջ . . . 1091
Բուն Բարեկենդան . . 1135
Աւետումն Ս. Աստուածածնի . . . . . 1217

# ՅԱՆԿ

## ՏՕՆԻՑ ՍՐԲՈՑ

### Ա


Աբգար . . . . . . 920
Աբդիսա . . . . . . 1121
Աբդիու . . . . . . 674
Աբդլմսեհ . . . . . . 750
Աբէլ . . . . . . 671
Աբիբոս . . . . . . 885
Աբիսողոմ . . . . . 1068
Աբրահամ նահապետ . 671
Աբրահամ սարկաւագ . 924
Ագապէ . . . . . . 677
Ադամ . . . . . . 671
Ադդէ . . . . . . 920
Ադոկտոս . . . . . . 831
Ադրիանոս . . . . . . 752
Աթանագինէս . 516, 674
Աթանաս . . . . . . 1084
Ալէքսիանոս . . . . . 909
Ակակիոս . . . . . . 545
Ակիւլինէ . . . . . . 677
Ակիւղաս . . . . . . 1086
Ակիփսիմոս . . . . . . 873
Ահարոն . . . . . . 671
Աղէքսանդրոս . . . . . 873
Ամբակում . . . . . . 674
Ամովս . . . . . . 674
Այիթալաս . . . . . 873
Անանիա . . . . . . 856
Անաստասիա . . . . . 870
Անատոլիա . . . . . . 752
Անդրէաս . . . . . . 674
Անդրէաս առաքեալ . . 885
Անդրէաս զօրավար . . 751
Անդրոնիկոս . . . . . 858
Անթիմոս . . . . . . 830
Անիկտոս . . . . . . 674
Աննա մայր Ս. Աստուածածնի . . . . . . 741
Աննա մայր Կիւրղի . . 1160
Անտոն անապատական . 1068
Անտոն ճգնաւոր . . . 853
Անտոնինոս . . . . . 674
Աշխէն . . . . . . 576
Ապփիոն . . . . . . 1085
Առաքեալք Համօրէն . . 888
Աստուածատուր . . . 924
Ատոմեանք . . . . . 1115
Արեւելեան վկայք . . 910
Արիստակէս . . . . . 577
Արսէն . . . . . . 905
Արտեմիս . . . . . . 861
Աւքսենտիոս . . . . . 910


### Բ


Բարսեղ Հայրապետ . 748
Բարսեղ դպիր . . . . 870
Բագարատ . . . . . 901
Բագոս . . . . . . 548
Բառնաբաս . . . . . 856
Բասիլիդէս . . . . . 920
Բասիլիսկոս . . . . . 862
Բասոս . . . . . . 920
Բարաղամ . . . . . 870
Բարթուղիմէոս . . . . 902
Բարսեղ . . . . . 1034
Բենիամին . . . . . 1121


### Գ


Գաբրիէլ . . . . . . 874
Գայիանեանք . . . . 516
Գենարիոս . . . . . . 904
Գէորգ . . . . . . 831
Գղերիկոս . . . . . . 921
Գորդիոս . . . . . . 1085
Գուրիաս . . . . . . 885
Գրատոս . . . . . . 909
Գրիգորի լուսաւորչի Մուտն 'ի վիրապն . 1198
Գրիգորի լուսաւորչի Ելն 'ի վիրապէն . . 523
Գրիգորի լուսաւորչի Գիւտ նշխարաց . . 552

Գրիգոր Ակրականդացի . 961
Գրիգոր Աստուածաբան 1084
Գրիգոր Նարեկացի . . 755
Գրիգոր Նիւսացի . . . 1034
Գրիգոր Սքանչելագործ . 897
Գրիգոր Աղուանից կաթուղիկոս . . . . 853
Գրիգորիս Հայրապետ . 577
Գրիգորիս վկայ . . . 1085

Դ

Դամիանոս . . . . 924
Դանիէլ մարգարէ . . 563
Դանիէլ եպիսկոպոս . 577
Դանիէլ երէց ճգնաւոր 905
Դաւիթ դունեցի . . . 839
Դաւիթ մարգարէ . . 925
Դաւիթ անյաղթ . . . 755
Դեմետրիոս . . . . 862
Դիոմիդէս . . . . . 751
Դիոնեսիոս . . . . . 857
Դոմնա . . . . . . 921

Ե

Եբրորա քահանայ . . 882
Եզեկիէլ . . . . . . 755
Եզր . . . . . . . 755
Եղիա . . . . . . 677
Եղիազար քահանայ . . 671
Եղիազար վկայ . . . 677
Եղիշէ վարդապետ . . 755
Եղիսէ մարգարէ . . . 580
Ենովս . . . . . . 671
Ենովք . . . . . . 671
Եպիփան . . . . . 551
Եսայի . . . . . . 659
Երանոս եպիսկոպոս . . 830
Երանոս հետեւող առաքելոցն . . . . . 850
Երեմիա . . . . . . 748
Երեք աշակերտք Բարսեղայ . . . . . . 748
Երեք մանկունքն 'ի Բաբելոն . . . . . . 563
Երկնային զօրք . . . 874
Երկոտասան առաքեալք Քրիստոսի . . . . 580
Երկոտասան փոքր մարգարէք . . . . . 674
Երկոտասան վարդապետք 856
Երկու բիւրք . . . . 921
Երկու որդիք Եւստաքէոսի . . . . . 840
Երմոգինէս . . . . . 909
Երմողայոս . . . . . 851
Երմինէ . . . . . . 840
Եւագր . . . . . . 905
Եւգինէ . . . . . . 1085
Եւգինէս վկայ ընդ Եւստրատիոսի . . . . 910
Եւգինէս վկայ ընդ Մակարիոսի . . . . . 1086
Եւղոգիոս . . . . . 861
Եւպրաքսիա . . . . 851
Եւսեբիոս . . . . . 920
Եւստաթէոս . . . . 840
Եւստրատիոսեանք . . 910
Եւտիքիոս . . . . . 920
Եւփիմիա . . . . . 670
Եփեսոսի Ա. ժողով . 678
Եփրեմ . . . . . . 1034
Եօթանասուն եւ երկու աշակերտացն Քրիստոսի 843
Եօթն եղբարք մակաբայեցիք . . . . . . 677
Եօթն խոստովանողք . 853
Եօթն կուսանք . . . 551
Եօթն մանկունք Եփեսոսի . . . . . . . 870

Զ

Զաքարիա մարգարէ 573. 674
Զաքարիա քահանայ . 755
Զենոն . . . . . . . 861

Թ

Թադէոս . . . . . 659
Թաթուլ . . . . . 853
Թալիլէոս . . . . . 551
Թեկղ . . . . . . 851
Թէոդիտէ . . . . . 870
Թէոդիտոն . . . . . 551
Թէոդոս . . . . . . 1074
Թէոդորիտոն . . . . 861
Թէոդորոս զինուոր . . 1147
Թէոդորոս ստրատելատ 752
Թէոպիստէ . . . . 840
Թէոպոմպոս . . . . 920

52 *

Թէոփիստա . . . . . . 920
Թէոփիլոս . . . . . . 674
Թիւրսոս . . . . . . 752
Թովմաս առաքեալ . . . 752
Թովմաս Ճգնաւոր . . . 853

## Ի

Իգնատիոս . . . . . . 919
Ինդոս . . . . . . 921
Իրաւախոհ . . . . . 904
Իւղաբեր կանայք . . . 741

## Խ

Խազ . . . . . . 556
Խարիթեանք . . . . 861
Խոսրովիդուխտ . . . . 576
Խոռէն . . . . . . 924

## Կ

Կալինիկէ . . . . . . 677
Կալինիկոս . . . . . . 751
Կալիստրատոս . . . . . 852
Կանդիդոս . . . . . . 1086
Կիպրիանոս . . . . . 669
Կիրակոս . . . . . . 1081
Կիւրեղ Հայրապետ Աղեքսանդրիոյ . . . 1084
Կիւրեղ Հայրապետ Երուսաղեմի . . . . 1160
Կիւրեղ եպիսկոպոս եւ մայր նորա Աննա . . 1160
Կիւրեղ սարկաւագ . . 1121
Կղեմէս . . . . . . 901
Կղոդիէ . . . . . . 1085
Կոդրատոս . . . . . 549
Կոզմաս . . . . . . 924
Կոստանդիանոս . 551, 1085
Կոստանդնուպօլսոյ Ս. Ժողովն . . . . . 1135
Կոռնելիոս . . . . . 910
Կրոնիդէս . . . . . . 853

## Հ

Համազասպ . . . . . 842
Հեղինէ . . . . . . 551
Հինգ վկայք . . . . . 674
Հիպերիքեանք . . . . 870
Հիւսիկոս . . . . . . 885
Հռիփսիմեանք . . . . 505
Հրեշտակք եւ Հրեշտակապետք . . . . . 887

## Ղ

Ղազար . . . . . . . 860
Ղամբէոս եւ Ղամբէուհի 839
Ղեւոնդեանք . . . . 1121
Ղուկաս . . . . . . . 858
Ղուկիանոս քահանայ 852, 858
Ղունկիանոս Հարիւրապետ . . . . . . 860

## Մ

Մակար Ճգնաւոր . . . 905
Մակար վկայ . . . . . 861
Մակարիոս Աղեքսանդրացի . . . . . . 905
Մակարիոս վկայ . . . 1086
Մաղաքիա . . . . . 674
Մամաս . . . . . . 830
Մանէ . . . . . . 548
Մանուկն խոստովանող . 885
Մանկունք Բեթղեհեմի . 545
Մանկունք Եփեսոսի . . 1074
Մատաթիա . . . . . 856
Մատթէոս . . . . . 858
Մարգարէք Համօրէն . 888
Մարգարիտա . . . . 910
Մարթա . . . . . . 860
Մարիամ մագդաղենացի 860
Մարիանէ . . . . . 830
Մարկիանոս . . . . 873
Մարկոս աւետարանիչ . 858
Մարկոս եպիսկոպոս . . 1121
Մարուգէ . . . . . 911
Մարութա . . . . . 1085
Մարտիրոն . . . . . 873
Մարտիրոս . . . . . 1108
Մելի . . . . . . . 882
Մելիտոս . . . . . . 882
Մելքիսեդեկ . . . . 671
Մեռկուրիոս . . . . 904
Մերոպ . . . . 565, 755
Մետրոփանոս . . . . 873
Մինաս եգիպտացի . . 882
Մինաս վկայ . . . . 909
Միւռոն . . . . . . 897
Միքայէլ . . . . . . 874
Միքիաս . . . . . . 674
Մովկիմոս . . . . . 549
Մովսէս նախամարգարէ 671
Մովսէս քերթող . . . 755

## Յ

Յակոբ Նահապետ . . . 671
Յակոբ Մծբնայ Հայրապետ . . . . . . . 911
Յակոբոս առաքեալ եղբայր Յովհաննու . . 939
Յակոբոս առաքեալ եղբայր Տեառն . . . 925
Յակոբոս առաքեալ որդի Ալփեայ . . . . 899
Յակովբիկ . . . . . . 904
Յեսու . . . . . . 671
Յովակիմ . . . . . . 741
Յովբ . . . . . . . 757
Յովէլ . . . . . . . 674
Յովհաննու Կարապետին տօն մկրտութեան եւ ծնունդ նորա յԵղիսաբեթէ . . . 588, 1068
Փոխադրութիւն նշխարաց նորա ի Հայաստան . . . . . 516
Գիւտ գլխոյ նորա յԵրուսաղէմ . . . 757
Յովհաննէս առաքեալ 858, 939
Յովհաննէս գրեցի . . 905
Յովհաննէս հայրապետ . 1174
Յովհաննէս կամաւոր աղքատ . . . . . . . 909
Յովհաննէս կարճահասակ 905
Յովհաննէս ոսկեբերան . 883
Յովհաննէս աշակերտ . 856
Յովնան . . . . . . . 674
Յիշատակ քարոզութեան նորա առ Նինուէացիս . . . . 1105
Յովսէփ Աստուածահայր 860
Յովսէփ Արիմաթացի . 860
Յովսէփ Նահապետ . . 671
Յովսէփ քահանայ . . 873
Յովսէփ վկայ . . . . 673
Յուդա . . . . . . . 902
Յուլիանէ . . . . . . 899
Յուղիտա . . . . . . 1081
Յուսիկ . . . . . . 577
Յուստիանէ . . . . . 669

## Ն

Նաւում . . . . . . 674
Նեղոս . . . . . . . 905
Ներսէս Մեծ Հայրապետ 556
Ներսէս Կլայեցի . . . 755
Ներսէս Լամբրոնացի . . 755
Նեկտարինէ . . . 840
Նիկիայ Ս. Ժողովն . . 757
Նիկողայոս . . . . . 905
Նոյ . . . . . . . 671
Նունէ . . . . . . . 548

## Շ

Շամունէ . . . . . . 677
Շիրա . . . . . . . 856
Շինու . . . . . . . 882
Շմաւոն . . . . . . 899
Շմաւոն ազգական Քրիստոսի . . . . . . . 910
Շուշան . . . . . . . 668

## Ո

Ոնեսիմոս . . . . . 1085
Ոնոփրիոս . . . . . 573
Ոսկեանք . . . . . 1117
Ովսէէ . . . . . . 674
Ովրեստէս . . . . . 910
Որմզդան . . . . . 1121

## Չ

Չորեքտասան զինաւորք 1108

## Պ

Պանդալէոն . . . . 851
Պեղագիա . . . . . . 858
Պետրոս Հայրապետ . . 1068
Պետրոս առաքեալ 580, 939
Պիմէն . . . . . . . 905
Պիոն . . . . . 750, 1121
Պիստիս . . . . . . 677
Պղատոն . . . . . . 873
Պրոբոս . . . . . . 858
Պօղ . . . . . . . 905
Պօղիկարպոս . . . . 910
Պօղիկտոս . . . . . 1085
Պօղոս առաքեալ . 580, 939
Պօղոս խոստովանող . 873
Պօղոս անապատական . 905

## Ռ

Ռոմանոս միայնակեաց 885
Ռոմանոս երգեցող . . 831
Ռոմիլոս . . . . . . 861

## Ս

Սահակ Նահապետ . . . 671
Սահակ պարթեւ հայրապետ . . . 565, 1118
Սահակ իշխան . . . . . 842
Սահակ վկայ . . . . . 673
Սամոնաս . . . . . . 885
Սամուէլ . . . . . . 671
Սային . . . . . . . 1121
Սանդուխտ . . . . . . 659
Սարգիս վկայ . . . . . 548
Սարգիս զօրավար . . . 1108
Սեղբեստրոս . . 1034, 1085
Սերգիոս . . . . . . 1085
Սեւերիանոս . . . . . 870
Սէթ . . . . . . . . 671
Սիմէոն սիւնակեաց . . . 830
Սիսինիոս . . . . . . 905
Սիւզիանոս . . . . . . 856
Սուրբք ամենայն . . . . 890
Սուքիասեանք . . . . . 1116
Սոփիա . . . . . . . 677
Սոփոնիա . . . . . . 674
Ստեփաննոս նախավկայ . 931
Ստեփաննոս հայրապետ . 873
Ստեփաննոս ուռհեցի . . 750
Սրապիոն . . . . . . 905

## Վ

Վահան . . . . . . 1083
Վաղերիոս . . . . . 1086
Վառվառիա . . . . . 851
Վասիլուհի . . . . . 899
Վարդանանք . . . . . 1131
Վարոս . . . . . . . 853
Վարոս զօրական . . . 870
Վլաս . . . . . . . 1085
Վրթանէս . . . . . . 577

## Տ

Տասն աշակերտք Աթանագինեայ . . . . 674
Տարագոս . . . . . . 858
Տիմոթէոս . . . . . 857
Տիտոս . . . . . . . 857
Տրդատ . . . . . . . 576
Տրիփոն . . . . . . 1084

## Փ

Փերրոնիա . . . . . 830
Փիլիկտիմոն . . . . 830
Փիլիպպոս առաքեալ . 885
Փիլիպպոս մին յեօթանց սարկաւագաց . . . 856
Փիլիպպոս եպիսկոպոս . 1085
Փոկաս . . . . . . 851
Փաւինոս . . . . . 674

## Ք

Քառասուն մանկունք Սեբաստիոյ . . . 1185
Քառասուն եւ հինգ վկայք 670
Քառասուն եւ ինն վկայք 852
Քրիստափոր . . . . 677
Քրիստինէ . . . . . 670

Թ. Ա.
№ 8494